Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

ԵՐԿԵՐ

ԵՐԿՈՒ ԳՐՔՈՎ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

„Հայաստան" հրատարակչություն
Երևան 1971

ԱԲ1
Շ-66

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՎԻՊԱԿՆԵՐ



Շ—3—3

Александр Ширванзаде

Сочинения в 2-х книгах

Книга I

(На армянском языке)

Издательство «Айастан»
Ереван, 1971

ՀՐԴԵՀ ՆԱՎԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

(Մի պատկեր Բաքվի մշակների կյանքից)

— Աղա՛, զավոդն այրվում է։

Իվան Գրիգորիչ Մարությանցը մի միջահասակ, չաղ և բավական ջահել մարդ էր եվրոպական սև հագուստով։ Նրա լիք, կոլորակ և մաքուր սափրած երեսի կարմիր գույնը մի վայրկյանում թռավ դժբախտ լուրը լսելու ժամանակ։

— Ե՞րբ, ո՞ր ժամին, զավոդի ո՞ր կողմից է սկսվել հրդեհը,— վերին աստիճանի անհամբերությամբ և հրամայաբար հարցնում էր նա, երկու փոքրիկ և խորամանկ աչքերի բիբերը արագությամբ շուռ տալով և ձեռները տարածելով դեպի առաջ։ Կարծես նա ուզում էր կատաղաբար հարձակվել չարագուշակ լրաբերի վրա և տեղն ու տեղը խեղդել նրան։

— Կրակը երևացել է մոտ երեք քառորդ ժամ սրանից առաջ,— դողդոջուն ձայնով պատասխանեց լրաբերը, երկյուղածությամբ հետ ու հետ քաշվելով։ Ես նոր գործս վերջացրել և պատրաստվում էի քնելու, երբ ականջիս հասավ մի տրաքոցի ձայն։ Ձայնը սաստիկ էր, կարծես թե ամբողջ զավոդը քարուքանդ էր լինում... Ես մի քանի րոպե մնացի շվարած... չգիտեի ի՛նչ անեմ, ո՛ւր վազեմ։ Մի կերպ խելքս գլուխս հավաքեցի և դուրս թռա. հենց այն է ուզում էի առաջ վազել, մեկ էլ տեսնեմ աջ կողմից, կաթսաների բաժնից, բոցախառն ծուխը դուրս է փչում... Հասկացա, որ մեծ նավթա-

կաթսաներից մեկը պատռվել է։ Կրակը դիմում էր դեպի յուղ մաքրելու բաժինը։ Մշակները զարթնել էին, և որը տրկլոր, որը հագուստով, ամենքը դիմում էին կրակ երևացող տեղը՝ հրդեհի առաջն առնելու։ Ես իսկույն վազեցի քաղաք, որ ձեզ հայտնեմ։

Իվան Գրիգորիչի կուրծքը անհամբեր շնչառությունից արագությամբ բարձրանում և ցածրանում էր։ Մի քանի վայրկյան լուռ մտածելով, նա դիմեց ծառաներից մեկին, որոնք բերանները բաց արած ուշադրությամբ լսում էին լրաբերի խոսքերը։

— Այս վայրկյանիս լծվի իմ կառքը, ես առանց բոպե ուշանալու պիտի գործարան հասնեմ։

Ծառաները վազեցին աղայի հրամանը կատարելու։

— Վերջը տունս կքանդեն, ինձ կսնանկացնեն, հետին աղքատության մեջ կձգեն, օրվա հացին կարոտ կդարձնեն այդ անիծվածները... այդ անպիտանները... մարդու կերպարանք ունեցող անխիղճ գազանները... այդ... այդ... այդ...

Թող աստված պատժի այն չար մարդուն, որը համարձակվել է այս վնասը ձեզ հասցնել... աստուծո կամքն է, աղա, մենք ինչ անենք, մենք խո չենք կրակ գցում ու այրում ձեր գործարանը։

Լրաբերը այս ասելով, գդակը ձեռքին հեռացավ պատի տակ։ Ընդարձակ նախասենյակի պատից քաշ տված կանթեղի ճառագայթները, մի բոպե տարածվելով նրա նավթաներն մուրի մեջ կորած բարձր հասակի վրա, լուսավորեցին նրա սև և կեղտոտ դեմքը։

Խիտաբույս հոնքերի տակից փայլեցին անսովոր վիշտ արտահայտող սև աչքերը։ Բաց գլխի ալեխառն մազերի բնական գույնը կորել էր թանձր կեղտի և նավթային մուրի տակ։

— Մշակն ո՞վ է, որ նրա աստվածը ո՞վ լինի,— գոչում էր Իվան Գրիգորիչը կատաղի առյուծի նման։ Մշակն աստված չունի, նրա աստվածը փայտն է։ Եթե դուք աստված ունենայիք, մի տարվա մեջ իմ գործարանը երկու անգամ չէր այրվի։ Եթե դուք խիղճ և հոգի ունենայիք, ձեր կյանքը կզոհեիք և չէիք թողնի, որ ձեր աղին, ձեզ կերակրողին վնաս հասներ։

Լրաբերը լուռ էր, նա գիտեր, որ Իվան Գրիգորիչի ինքնահավան բնավորությունը սաստիկ թշնամի է ուրիշների հակախոսության, նամանավանդ այսպիսի դժբախտության բոպեներում։

— Աղա, ֆայտոնը պատրաստ է,— ներս վազեց ծառան։

— Ես գնում եմ, դու էլ վազիր այս բոպեիս գործարան,— դարձավ աղան դեպի լրաբերը։

Մի քանի բոպեից հետո սևագույն նժույգներով լծված փառավոր կառքը, թանկագին, տաք մուշտակի մեջ փաթաթված Իվան Գրիգորիչին տանում էր գործարան։

Հյուսիսային քամին փչում էր, անձրևի կաթիլները, բռնի զորությունով զարկվելով կառքի պատուհաններին, կրկնապատկում էին Իվան Գրիգորիչի հուզումը։ Կարծես բավական չէր մարդկանց չարամտությունը, մշակների անիրազեությունը, բնությունն էլ մի կողմից էր գործ դնում յուր խրատությունը, հակառակի նման հենց այս գիշեր բարձրացնելով ներհակ քամի հրդեհին ավելի ուժ տալու համար։

Այս բոլորի մասին Իվան Գրիգորիչը կառքի մեջ մտածելով այնչափ կատաղած էր, որ, կարծես, ահա-ահա բարկությունից պիտի տրաքվի յուր գործարանի նավթակաթսայի պես։ Ժամանակ-ժամանակ, կառքի պատուհանից գլուխը դուրս բերելով, մտիկ էր անում հեռավոր կրակի լուսավորության և անհամբերությամբ հրամայում կառապանին քառորդ ժամում գործ դնել երկու կշտակեր և առույգ ձիերի մի ամբողջ շաբաթվա հանդստությունից ստացած ուժն ու զորությունը։

Հասնելով քաղաքի ծայրը, կառապանը մի անգամ ևս մտրակեց ձիերին, և կառքն անհետացավ գիշերային խավարի մեջ։ Իսկ լրաբերը, դուրս վազելով փողոց, առանց վայրկյան հապաղելու, ճանապարհվեց դեպի գործարան։ Նա չպիտի ուշադրություն դարձնի ո՞չ քամու, ո՞չ անձրևի վրա. նրան հրամայված է ինչպեսևիցե շուտ տեղ հասնել։ Նա չի կարող ուշանալ. այսպիսի բոպեներում ամենաչնչին թուլությունը մշակի կողմից աղայի աչքում մեծ հանցանքի է փոխվում։

Այրվող գործարանը քաղաքից երեք վերստ հեռու էր գտնվում։ Լրաբերը ճանապարհը կարճելու համար ծուռի ափով

էր գնում։ Լայնատարած ծովի ալիքների շփշփոցը գիշերվա խավար մթնոլորտի մեջ տարածվելով, անախորժ, երկյուղալի տպավորություն էր անում մարդու վրա։ Ո՛չ մի շնչավոր արարած, ո՛չ մի կենդանի առարկա չէր երևում ծովափում, բացի այդ սև և վիթխարի մարդուց, որ գիշերվա ուրվականի նման հսկայական քայլերով շտապում էր դեպի առաջ, խորը ավազի մեջ թաղելով յուր ոտները։ Հանկարծ նա կանգնեց, կարծես, մի բան մտաբերելով և, երկու ձեռները մեքենաբար խփելով ճակատին, մի րոպե անշարժ մնաց։

— Տեր աստված, եղբայրս և փոքր որդիս հրդեհից քիչ առաջ պառկել էին քնելու... բայց ո՞րտեղ... այո՛, այո՛... հիշում եմ, հենց այն կողմում... ուր որ կաթսան տրաքվել էր... Նրանք, չդիմանալով մեր ընդհանուր սենյակի ցրտին, այս գիշեր տեղափոխվել էին կաթսաների բաժինը՝ վառարանի մոտ քնելու։ Տեր աստված, ի՞նչ կպատահի նրանց, եթե ժամանակին չեն զարթնել... այրվող նավթի ուղղակի նրանց կողմն էր դիմում... նրանք աչքովս շընկան։

Երկնակամարը կրակի լուսից շառագունել էր, քամու զորությունից բոցը կատաղաբար այս ու այն կողմ էր տարածվում... ամբողջ Սև քաղաքը ծխի մեջ թաղվել էր։ Լրաբերը սկսեց յուր հոգնած ոտներին ուժ տալ։

Տեղ հասնելով, Իվան Գրիգորիչի առաջին հայացքը հազիվ կարողացավ ճանաչել կրակի և ծխի մեջ կորած գործարանը։ Սև քաղաքի հասարակությունը պատել էր հրդեհը, շուրջը կազմելով մի օղաձև շրջան, որի մեջտեղը այրվում էր մի ընդարձակ խարույկ։ Այս ու այն կողմերից վազում էին մարդիկ, որոնց մրոտ դեմքերի վրա ոչինչ զարմացման նշաններ չէին նկատվում։ Այդպիսի և սրանից ավելի զորեղ հրդեհներ նրանց համար սովորական դեպքեր են։

— Աստված սիրեք... մոտեցեք... օգնեցեք... մի՛ վախենաք... ես փող կտամ, կվարձատրեմ օգնողներին,— եղավ Իվան Գրիգորիչի առաջին բացականչումը, որ գլխակոր վազելով ամբոխի միջից ձգտում էր դեպի կրակը։

— Մի՛ մոտենաք, աղա՛... առաջ մի՛ վազեք, վտանգալի է,— գոչեցին այս ու այն կողմից ամբոխի միջից, հետ մղելով նրան։

Բոցը երկու զորեղ մասերի էր բաժանվել։ Մեկը դուրս էր գալիս միհարկանի տան փլատակված կտուրից, դռներից ու պատուհաններից։ Այրվում էր յուղ մաքրելու բաժինը։ Մյուսը— տասնուհինգ քայլ հեռավորությունում մի գետնափոր շինության միջից դուրս ձգվելով, սրընթաց բարձրանում էր ամբողջ շինության տարածության չափով։ Բոցավառվել էր նավթային մնացորդի պահեստը։ Իսկ այս երկու բոցաշտարակների մեջտեղը ներկայացնում էր կատարյալ իրական դժոխք։ Այս—կաթսաների բաժինն էր, որտեղից առաջին անգամ կրակը սկսվելով տարածվել էր. ո՛չ մի առարկա կրակի ճանկերից չէր ազատվել։ Բացի մի քանի երկաթե կաթսաներից, որոնք իրանց միջի դյուրաբորբոք, կիսապատրաստ-ֆոտոգենի հանկարծակի բոցավառության ճայթումից պատռվելով այս ու այն կողմ էին գլորվել — ամեն ինչ մոխիր դառնալու վրա էր։

Խորտակված պատերի ճեղքերից թանձր ու սև ծուխը դուրս գալով, ոլոր-մոլոր պտուտներով միանում էր բոցի լայնաշրջան աշտարակի հետ, ինչպես փոքրիկ գետակները հոսում են ընդարձակ գետի մեջ, զորացնելով նրա կատաղի ընթացքը։

Գործարանի բակը ծածկված էր խառնիճաղանջ ամբոխով... ոտ դնելու տեղ չկար։ Իվան Գրիգորիչը բազմության առաջ կանգնած կարգադրություններ էր անում։ Ամբոխի միջից մի քանիսը զանազան խորհուրդներ էին տալիս նրան։

— Այդ միջոցներով անհնարին է բան առաջացնել, հարկավոր է Նոբելի գործարանից հրաշեջ նասոսներ բերել տալ,— ասում էր մեկը։

—Այո՛, այո՛, միայն Նոբելի գործիքները կարող են այդ կրակին հաղթել,— ավելացնում էր մի ուրիշը։

Սրանք հարևան գործարանատերերն էին, որոնք ոչ այնքան Իվան Գրիգորիչի մասին էին հոգում, որքան վախենում էին, որ միգուցե հրդեհը մինչև իրենց գործարանները հասնի։

Իվան Գրիգորիչը չէր լսում նրանց։

— Օգնեցեք... շտապեցեք... ես փող կտամ... ջուր հասցրեք, ի՞նչ եք սառել... անպիտաններ... քանդեցիք դուք իմ տունը, սրիկաներ... գողեր... ավազակներ,— անդադար հայ-

հոյում էր նա մշակներին, շվարած այս ու այն կողմ վազվըզելով։

Հրդեհի հանգցնելուն, բացի Իվան Գրիգորիչի գործարանի մշակներից, օգնում էին և՛ ուրիշ գործարանների մշակներ ու կողմնակի մարդիկ։ Միայն առաջինները գործում էին ուղղակի կրակի դեմուդեմ, ամենավտանգավոր տեղում, իսկ մյուսները աշխատում էին որքան կարելի է հեռվից գործել, խույս տալով կատաղի բոցի ալիքներից։ Առաջինները հրաշեջ նասոսների խողովակների ծայրերից բռնած շփում էին ջուրը կրակի դեպի զորեղ կենտրոնը, որտեղից բոցը ջրի ամեն մի զարկին խուլ արձագանքներ էր տալիս, իսկ մյուսների մի մասը հեռվից նասոսների կոնակներն էին պտտեցնում, մընացյալները ջուր էին ավելացնում նասոսներին։ Մշակների մի ուրիշ խումբ թիերով հող էր սփռում երկու կողմերից նավթային մնացորդների բոցավառված պահեստի վրա։

Մի քանիսը Իվան Գրիգորիչի մշակներից անգիտակցաբար այն աստիճան մոտեցել էին կրակին, որ ամբոխը նրանց փոխարեն սարսափում էր։ Տոթը խեղդում էր նրանց, կրակի տաքությունը կիզում էր նրանց կիսամերկ մարմինները, խոշոր կայծերը անձրևի նման հեղեղվում էին նրանց գլխին, բայց խորասուզված իրանց գործի մեջ, կարծես, նրանք ոչինչ չէին զգում։ Ամեն վայրկյան նրանց նավթաթաթախ ցնցոտիները սպառնում էին բոցավառվել թափվող կայծերից։ Մի քանի ուրիշ բանվորներ այդ թշվառներին վերջին վտանգից ապահովելու համար բավական հեռվից մի փոքրիկ նասոսով ջուր էին սրսկում նրանց վրա։

Թեթևամիտ ամբոխը շատ ժամանակ յուր աչքի առաջ կատարվող ամենաողբալի տեսարանների մեջ անգամ բընազդաբար ձգտում է գտնել որևիցե նյութ յուր վայրենի զըվարճության համար։

— Մենք էլ գնանք ու այս վերջինների վրա ջուր ածենք,— ասում էին մի քանիսը, անամոթաբար ծիծաղելով։

— Գնացե՛ք... իսկ մենք էլ այստեղից ձեզ վրա հող կածենք,— ավելացնում էին ուրիշները, նույնպես ծիծաղելով։

— Ինչ շաղ կրակ է, տղերք, խորոված՝ համար,— ասում էր մեկը, բեղերը շփելով։

Բոցը զորանում էր... ամբոխը, չդիմանալով շոգին, սկսեց աստիճանաբար հեռու ու հեռու խույս տալ։

— Փախե՛ք... փախե՛ք... հեռացեք... պատը քանդվում է,— գոռաց հանկարծ միաբերան ամբոխը, սեղմելով միմյանց և ավելի հետ մղվելով։

Բարձրացավ մի խուլ որոտաձայն, մի ձայն, որ նմանվում էր հարյուրավոր թնդանոթների պայթյունին։ Մի վայրկյանում մթնեց բոլորը, և ամբոխի առաջ ամեն ինչ կորավ թանձր խավարի մեջ։ Բոցը, ծուխը, կրակը, մուրը և խորտակված պատի հողափոշին, խառնվելով քարու, անեքութացրին հրաշեջ մշակներին։

— Վա՛յ գլո՛ւխս... վա՛յ մեջքս կոտրվեց... աստված սիրեք... օգնեցե՛ք... մեռա ...— լսվում է խավար գեհենի միջից։

— Ոտներս փշրվեցին... վա՛յ... վա՛յ... ա՛հ, խեղդվեցի, աստված... օգնեցեք, դուրս բերե՛ք ինձ այստեղից, ոչինչ չեմ տեսնում,— գոռում էին մի ուրիշ կողմից։

— Ձեռքս... ձեռքս... ա՛յ... ա՛յ... ա՛յ... ա՛յ... մի՛ մոտենաք, այրվում է ձեռքս... ո՛ւֆ... ո՛ւֆ։

Ամբոխը մոռացավ ծիծաղն ու կատակը. ամենքի երեսների վրա երևացին հուսահատության նշաններ... ո՞ւր անհետացան առաջին կարգի հրաշեջ մշակները։ Լսվում էին միայն աղերսանքի, ցավի հառաչանքներ, օգնություն խնդրող ձայներ, բայց հայտնի չէր ո՞ր կողմից էին գալիս նրանք, ինչպես էին աղերսողները։

Հովհաննու երևակայության տարտարոսն անգամ չէր կարող մրցել այս իրական դժոխքի հետ։ Իվան Գրիգորիչի բարկությունն ու շփոթությունը փոխվել էին անորոշ սարսափի, մի վայրկյան առաջ նրա կատաղի դեմքն այժմ արտահայտում էր ներքին ահ ու դող։ Անշարժ արձանի նման նա մի տեղում սառել էր և չգիտեր ինչ անի. նա կամեցավ առաջ վազել, բայց չկարողացավ, որովհետև անհնարին էր։ Ծուխն ու փոշին խառնվելով մուրի, մոխրի և բոցի հետ, կազմել էին նրա առաջ մի անթափանցելի խավար տարածություն։

Հանկարծ ամեն ինչ պարզվեց, և նրա առաջ բացվեցավ

մի սոսկալի տեսարան։ Այս ու այն կողմ թավալվել էին թվով մինչև վեց մշակների դիակներ։ Երևում էին նույնպես և ոտքի վրա մի քանի ուրվականանման պատկերներ, որոնցից մեկը բոցավառված, խելագարի պես այս ու այն կողմ էր վազվըզում, բացականչելով.

— Օգնեցեք... հայ քրիստոնյաներ... օգնեցեք... խղճացեք... մարմինս այրվում է... շո՛ւտ... շուտ հող ածեք վրաս... ջուր... ջուր... ջուր... ո՛ւֆ... ո՛ւֆ... աստված, այրվում եմ...

Սա—տարիքը անցկացրած մի ծերունի էր, որի դյուրաբորբոք ցնցոտիները բոցավառվել էին և խաշում էին նրա մարմինը կենդանի-կենդանի, ինչպես միջնադարյան ինկվիզիցիայի թշվառ զոհերից մեկին։

Իվան Գրիգորիչը երեսը շուռ տվեց. նրա նրբացած նյարդերը անզոր էին դիմանալ մի այդպիսի այլանդակ պատկերի։ Ամբոխի միջից շատերը սիրտ առնելով վազեցին առաջ։ Ուժեղներից մեկը ոտի մի զորեղ հարվածով բոցավառված ծերունուն գլորեց գետին, մնացյալները սկսեցին այս ու այն կողմից հողով ծածկել նրա մարմինը, կիսակենդան թաղելով ողորմելի զառամյալին։ Այս միակ միջոցն էր, որով միայն հնարավոր էր հանգցնել նրա այրվող ցնցոտիները։

— Խաշվեցի... ո՛ւֆ... ո՛ւֆ... այրվեցի... խուլ ձայնով հառաչում էր ծերունին հողի տակից։ Նրա դեմքն այնչափ այլանդակվել էր, որ ներկա եղողներից շատերը կես սարսափով և կես զզվանքով ծածկում էին իրանց աչքերը նրան չտեսնելու համար։

— Ուֆ... ա՛խ աստված, շո՛ւտ առ հոգիս... ազատիր տանջվելուց... մի՛ չարչարիր,— շարունակում էր ծերունին, թավալվելով հողի տակ։ Բայց որդիս... ո՞ւր է որդիս... կինը... որդիքս, աղջկերքս... ջուր... ո՛ւֆ, սիրտս...

Վերջին խոսքերն արտասանելիս ծերունու ձայնն աստիճանաբար փոխվում էր, հետզհետե թուլանալով։

— Այստեղ եմ, այստեղ...— գոռաց մի տասնևութ-քսան տարեկան երիտասարդ, ձախ ձեռքի վրա հենած յուր աջ թևը, որի այրված կաշին պլոկվելով մերկացրել էր կարմիր միսը... Ա՛խ... կծկծում է սիրտս... ո՛ւֆ, աստված սիրեք, մի մոտենաք թևիս... նա այրվում է... կծկծում է։

— Հեռացի՛ր, թշվառ, մի՛ մոտենար հորդ, քեզ տեսնելով խեղճ ծերունին կսկծից կմեռնի,— բացականչեցին ամբոխի միջից։

— Բեյբութ... Բեյբութ... եկ, այստեղ եմ... մոտեցիր, մեռնում եմ... օ՛հ... օ՛հ... պապակվեցի,— բացականչեց ծերունին, կամենալով ոտքի կանգնել։

Մի քանի վայրկյան հայր ու որդի չկարողացան ճանաչել իրարու։ Ծերունու ալևոր միրուքը խանձվել էր և երեսում կուչկուչվել։

— Ամա՛ն... այդ ինչ օրի ես ընկել, ափի,— ասաց որդին, խելագարի պես արձակվելով ծունկերի վրա թավալվող ծերունու վրա։

Մի վայրկյան ծերունին մոռացավ յուր այրված մարմնի կսկիծը և երկու ձեռներով մեքենաբար փաթաթվեց որդու վզին։

Մինչդեռ սրանք հայր ու որդի հեծեծելով, գրկած իրարու, խմում էին ցավի և կսկծանքի լեղին, մի քանի քայլ նրանցից հեռու կատարվում էր ուրիշ տեսարան։

Իբրև դժոխային անդունդի հատակից, վեց դիաթավալ մշակների միջից լսվում էին սիրտ պատռող մորմոքաձայներ, և այս չէին նմանվում մարդկային ձայների, այլ մորթվող անասունների վերջին բառաչումներին և հուսահատ թառանչքին։ Թավալվածներից երկուսն արդեն անշնչացած էին. նրանց այրված ու այլանդակված դեմքերն այլևս չէին կրում իրանց վրա մարդկային դեմքի ոչ մի նշան, նրանց աչքերի բիբերը դուրս էին ցցվել ինչպես խորոված շագանակներ մոխրի մեջ։ Գլխի ու երեսի մազերի ու հոնքերի հետքեր անգամ չկային. նրանց գլուխները նմանվում էին թեժ կրակի միջից դուրս բերած մսի կտորների։ Չորս մարդիկ աշխատում էին նրանց դիակները մի կողմ քաշել։

Մի քանի քայլ հեռու այդ դիակներից, մի երիտասարդ մշակ, նստած գետնի վրա, ձեռները հողի մեջ տրորելով, բացականչում էր.

— Ձեռներս... ո՛ւֆ... ո՛ւֆ... խաշվեցին... պապակվեցին... տեր աստված... բայց իզուր... նա այրվեց... մեռավ... չկարողացա ազատել հորեղբորս...

Նրա թեժացած աչքերից գլորվեցին արտասուքի մի քանի կաթիլներ, և նա ձեռները տանելով դեպի աչքերը, թրջեց յուր պլոկված մատների ծայրերը։ Կարծես այդ աղի կաթիլները կարող էին զովացնել նրա սիրտը։

Սրանից մի փոքր հեռու լսվում էին խուլ աղոթքի ձայներ։

— Ո՛վ միակ աստված և դու, Մուհամմեդ, նրա մեծ մարգարեն, տեսնում եք ձեր սուրբ աչքերով, որ մենք ինչ սարսափելի կերպով ենք տալիս մեր հոգին։ Լա... լա, Իլլալլահ, Մուհամմեդ Բասուլ Ալլահ... Ռուհի ջյաննաթ...

Այդ— պարսիկ մշակներն էին, որոնցից մեկի գլուխը ջարդվելով, գրեթե երկու կտոր էր եղել. նա փչում էր իր վերջին շունչը, իսկ երկուսի ոտներն ու կոներն էին ջարդվել։

Ամբոխը խառնվել էր այնպես, որ ոչ ոք այլևս ուշադրություն չէր դարձնում հրդեհի վրա, որն այդ ժամանակ սկսել էր փոքր առ փոքր մեղմանալ։

Իվան Գրիգորիչը գոռում էր.

— Աստված սիրեք... հրդեհը... հրդեհը, մի՛ մոռանաք նրան... այդ վիրավորվածներին հետո էլ կարելի է ժողովել, բայց գործարանս, գործարանս, նա ձեռքից գնում է. նա այրվեց. վերջացավ, տունս քանդվում է, ի սեր աստուծո, խրդճացեք։

Բայց Իվան Գրիգորիչի գոռոցների վրա ուշադրություն դարձնողներ քիչ եղան. աշխատում էին նրա հարևան գործարանատերերի մշակները, որոնց տերերը ստիպում էին չհեռանալ գործից, մինչև որ բոցը չի դադարիլ իրանց գործարաններին վտանգ սպառնալ։

— Մենք չենք կարող այդ թշվառներին անտեր, անօգնական թողնել ու հրդեհի մասին աշխատել,— գոռում էին ամբոխի միջից դեպի Իվան Գրիգորիչը,— այսքան մարդ է կորչում մի բոպեում, թող կորչի գործարանդ, դու էլ...

— Այո՛, այո՛, դու ես դրանց այրվելու պատճառը. եթե ժամանակին քո անիծյալ նավթակաթսաները և վառարանը չինել տայիր, այդ դժբախտությունը չէր պատահիլ ո՛չ քեզ, ո՛չ այդ խեղճերին։

Գործակատարը, որ Իվան Գրիգորիչին շվաքի նման հետևում էր ուր նա վազում էր, մոտեցավ նրան և ասաց.

— Իվան Գրիգորիչ, խորհուրդ եմ տալիս հեռու կենալ այդ չարամիտներից, ո՛վ գիտե, ձեզ ինչ վնաս կհասցնեն, նրանք մեր մշակների ընկերներն են, նրանք այժմ գաղանացած են և աստված գիտե ինչեր են մտածում...

Բայց Իվան Գրիգորիչը բանի տեղ չէր դնում ո՛չ ամբոխի սպառնալիքը և ո՛չ էլ յուր գործակատարի խորհուրդը։ Նրա ուշքն ու միտքը կենտրոնացած էին միայն և միայն հրդեհի վրա, և նա ամբողջ մարմնով դողում էր, թե ահա կրակը հասնելու է ֆոտոգենով լի տակառների պահեստին, ուր մոտ հաղար լի տակառներ կային։ Սակայն այս երկյուղն ավելորդ էր։ հրդեհն այլևս այնպես սաստիկ չէր, ինչպես տասը բոպե առաջ։ Կարծես նա յուր վրեժն արդեն հանելով, կամենում էր հանգստանալ։

Քամին դադարել էր, բոցն այլևս կատաղաբար այս ու այն կողմ չէր տարածվում, այլ հանդարտ ու ուղիղ գծով բարձրանալով վեր, լուսավորում էր ներկա եղող ամբոխը, որը այրվածների շուրջը հավաքված, գանազան օգնություն էր հասցնում այդ խեղճերին։

Այդ ժամանակ վազելով ամբոխին մոտեցավ հանկարծ մի բարձրահասակ մարդ, որի դեմքի վրա նկատելի էին խորին հուսահատության և անորոշ երկյուղի նշաններ։ Նրա ծունկերը ծալվում էին և դժվարությամբ հնազանդվում նրա գընացքին։

Սա արդեն մեզ հայտնի լրաբերն էր։

— Թողեք... թողեք, տեսնեմ ո՞ւր են... ո՛ւր են որդիս... եղբայրս... աստված իմ... նրանք ո՞ւր են...

Ամբոխը ճանապարհ տվեց նրան, և նա շտապով մտավ մեջտեղ։

— Ո՞ւր եք, որտե՞ղ եք, խոսեցեք... Սարգիս... Գասպար... Ա՛խ, Բեյբութն է, եղբորս որդին...

— Ե՞ս... այո՛... բայց իմը ոչինչ, խեղճ հայրս, ծերունին... նա մեռավ... ահա նա... մեռավ նա մինչև վերջը, յուր ընտանիքի անունը հիշելով... նա վերջին շունչը փչեց, քո

անունը տալով... «գոնե մինչև եղբորս գալը ապրեմ»,— ասում էր նա հոգին վիշելով։

— Ո՞րտեղ է, ցույց տուր ինձ նրա դիակը, բայց որդիս որտե՞ղ է, Սարգիսը...

— Մի՛ մոտենար, աղաչում եմ, ձեռս, նա այրվում է... կծկծում է... մի՛ կպչիր ձեռներիս... ուֆ։

Մի բոպե Մեհրաբը մնաց քարացած, նրա արտասուքից չոր ու ցամաքած աչքերը մեքենաբար դառնում էին մերթ յուր ծերունի եղբոր, մերթ որդու, Գասպարի այրված ու կուչ եկած ձեռներին, մերթ յուր եղբորորդի Բեյբութի կաշվից մերկացած աջ թևի վրա։ Իսկ ամբոխի զայրացած ուշադրությունը նրա վրա էր։

Այս տարօրինակ դիրքում նրա ածխագույն դեմքն ու բարձրը ու բարակ հասակը պատկերացնում էր մի մռայլ մարմարոնյա արձան, որի միայն բոցավառ աչքերն էին խանգարում ընդհանուր անշարժությունը։ Երեք սուր դաշույններ միաժամանակ ցցվել էին նրա կրծքի մեջ, որոնցից մեկը — եղբոր մահը թափանցել էր մինչև սրտի խորքը, խփելով արյունը գլուխը։

Հանկարծ նա սկսեց երկու ձեռներով ուժգին հարվածներ տալ յուր բաց, ալեխառն մազերով ծածկված գլխին։ Ամբոխի մեջ շատերի աչքերից արտասուքի կաթիլներ էին թափվում։

— Վայ... բաս ես ի՞նչ պատասխան տանեմ քո ընտանիքին... ես ի՞նչ պիտի ասեմ կնոջդ։

Իվան Գրիգորիչը, լսելով այդ գոռոցը, մոտեցավ մի բոպե ամբոխին։

— Ի՞նչ ես այստեղ գոռգոռոց բարձրացրել, խելագար... ի՞նչ բղավելու ժամանակ է... գործարանս ձեռքից գնում է, դու այստեղ զո՞ւմ ես. վազիր, ասում եմ, օգնիր այնտեղ։

Մեհրաբը ոչինչ չէր լսում. նա երեսնիվայր ընկած յուր եղբոր դիակի վրա բառաչում էր։ Ամբոխը մնաց զայրացած Իվան Գրիգորիչի անտեղի հրամանի վրա։

— Նրա եղբայրն այրվել, մոխիր է դարձել, նրա որդու ձեռները այրվել են և կուչ եկել, իսկ դու այժմ այդ դժբախտից օգնություն ե՞ս պահանջում։ Անխիղճ, անաստված. նա

այդ թշվառությունում ի՞նչպես կարող է օգնել քո անիծված գործարանին,— գոռացին ամբոխի միջից մի քանի տաք գլուխներ։

— Միևնույն է, էլ այսուհետև նրա գոռալը օգուտ չի տա։

Մեհրաբը մեքենաբար գլուխը բարձրացրեց. դառն տանջանքի կնիքը դրոշմվել էր նրա ճակատի վրա, աչքերը փայլում էին հոգեկան կսկիծից։ Դեմքն արտահայտում էր խելագար կատաղություն։ Նա նմանվում էր այդ դրության մեջ մի կատաղի և հուսահատված առյուծի, որ պատրաստվում էր հարձակվել յուր թշնամու վրա։

Մի վայրկյան նա այդ անշարժության մեջ մնաց։ Իվան Գրիգորիչը կես բարկացած և կես երկյուղալի դեմքով շվարած նայում էր նրա վրա։

Հանկարծ Մեհրաբը կայծակի արագությամբ վեր թռավ տեղից...

— Հա... ճշմարիտ է ասում աղան, պետք է նրա հրամանը կատարել, պետք է օգնել, ես պարտավոր եմ աշխատել։

Նա կամեցավ առաջ շարժվել, բայց ծունկերը չհնազանդվեցին, գլուխը ծանրություն արավ, և նրա վիթխարի մարմինը կայծակահարի նման անշնչացած թավալվեց Իվան Գրիգորիչի ոտների առաջ, յուր եղբոր սևացած դիակի վրա։

— Գործարանս, գործարանս... աստված սիրեք, տունս քանդվեց։

Բաքու, 1883 թ. մարտ։

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Պատմվածք

(Նվեր Բաֆֆիի գրականական գործունեության 25-ամյակին)

I

Հազար ութ հարյուր վաթսունութ թվականի գարնան պարզ և գեղեցիկ օրերից մեկն էր, երբ ես Շ. քաղաքում ավարտեցի իմ ուսման ընթացքը հռչակավոր տեր-Վահակի ուսումնարանում։ Այդ օրն ինձ համար այնքան նշանավոր էր, ես ինձ այնքան ուրախ և բախտավոր էի զգում, որ անշուշտ նրա ամեն մի ժամը պիտի տպավորված մնա հիշողության մեջ մինչև կյանքիս վերջը։ Չորս տարի շարունակ տեր-Վահակի ձեռքում տանջվելուց հետո, չորս տարի նրա բարբարոսական ֆալախկայի տակ շարչարվելուց հետո, բնական է, որ ինձ անսահման բախտավոր պիտի համարեի այդ օրն, երբ, վերջապես, ազատվել էի անխիղճ տերտերի ձեռքից։ Էլ ինչ երկարացնեմ, ես թևեր չունեի, որ ուրախությունիցս թռչեի, երբ հորս գնած մի ֆունտ թեյն հանձնելով տեր հորն իբր շնորհակալության նշան ինձ տված կրթության համար, վերջին անգամ համբուրեցի նրա կոշտ ու զարհուրելի ձեռքը և դուրս թռա ուսումնարանից։

Ես մեր տան հերոսն էի այդ օրը, ոչ ոք իմ եղբայրներից կամ քույրերից իրավունք չուներ որևէ կերպով դիպչել իմ քեֆին։ Ամենքը դեպի ինձ սիրով ու հարգանքով էին վերաբերվում։ Եվ ինչպես կարող էին չհարգել, քանի որ նրանց մեջ ամենակրթվածը և ամենագիտունն ես էի։ Քանի որ ամբողջ ճարտասանությունը և նարեկը գլխից մինչև վերջն անցել էի։ Բոլորը, հավաքված իմ շուրջը, փայփայում էին ինձ։ Մայրս իսկույն ինձ համար սկսեց պատրաստել իմ սիրած կերակուրը, հայրս խոստացավ հենց այն օրը գնել ինձ համար մի նոր արխալուղ։ Մի խոսքով, մեր ընտանիքի մեջ այդ օրն անխտիր ամենքի սիրո և փաղաքշանքի առարկան ես էի։ Ամենքը ինձնով էին զբաղված, ամենքը աշխատում էին ինձ հաճոյանալ ամեն կերպ։ Իսկ ես, ինչպես վայելում է հերոսին, աշխատում էի պահել ինձ խիստ լուրջ և վեհանձն, սեփական արժանավորության զգացմունքով լեցված։

Հայրս, չնայելով յուր աղքատությանը, այդ օրը խիստ առատաձեռն էր դառել։ Նա հրամայեց մորս, բացի իմ սիրելյալ կերակրից, պատրաստել և մի ուրիշ տեսակ կերակուր։ Նա մտադիր էր այդ օրը հրավիրել մեր բարեկամներից մի քանիսին՝ յուր անդրանիկ որդու ուսման առիթով կատարվող ուրախության մասնակից լինելու, միևնույն ժամանակ, խորհրդակցելու նրա ապագայի վերաբերմամբ։

— Հարկավոր է, ա՛յ կնիկ, հենց այսօր որոշել, թե այսուհետև ինչով պիտի պարապի խաչին։ «Ծեծիր երկաթը, քանի որ նա տաք է»,— ասում է առածը։ Պետք չէ թույլ տալ, որ նա մի օր անգամ անդործ մնա, կարող է ծուլանալ ու այնուհետև դժվար կլինի նրա համար մի գործի կպչել։

Մայրս համաձայն չէր հորս մտքի հետ։ Նա ուզում էր, որ ես գոնե մի ամիս տանը հանգիստ ապրեի, և փորձեց հակառակել նրա կամքին, բայց ի՞նչպես կարող էր իմ հոր նման մարդու ասածին կինը հակառակել։ Նա այնպես գոռաց խեղճ կնոջ վրա, որ սա տեղն ու տեղը լռեց ստրկությամբ, ինչպես ամեն ժամանակ։ Իսկ ինչ վերաբերում էր ինձ, ես այդ օրն ուրախությունից այնքան շվարած էի, որ չգիտեի, թե ինչ մտածեմ։ Ես բավական էի միայն նրանով, որ վերջապես, ազատվել էի տեր-Վահակի ֆալախկայից։

Այսպես թե այնպես, մոտեցավ կեսօրվա ժամանակը։ Ճաշը արդեն պատրաստ էր։ Այն ժամանակ մեր քաղաքում միմիայն հարուստների տներումն էին գտնվում աթոռներ, սեղաններ և ուրիշ եվրոպական կահ-կարասիք, իսկ մեզ նման չունևորները դեռ ապրում էին հին, ասիական եղանակով։ Մայրս մեր բավական ընդարձակ սենյակի հատակի վրա տարածելով կապտագույն սփռոցը, ծածկեց նրան զանազան տեսակ համեստ, էժանագին, բայց համեղ ուտելիքներով և մրգեղեններով։ Հայրս սպասում էր հյուրերին, իսկ ես անհամբերությունից քիչ էր մնում, որ տրաքեի։ Այդ օրն ուրախությունից շատ դեսուդեն վազվզելով, հոգնել էի և սաստիկ քաղցել։ Ես գայլի ախորժակով սպասում էի այն րոպեին, երբ պիտի ձեռքս հասցնեի իմ սիրած կերակրին։

Վերջապես, հյուրերն եկան և ամենքը, առանց երկարացնելու, ծալապատիկ շարվեցին փափուկ մինդարների վրա, սեղանի շուրջը։ Հայրս ինձ հրամայեց ոտքի վրա ծառայություններ անել։

Նշանավոր էր այդ օրը։ Ես այն ժամանակից մինչև այսօր էլ չեմ մտաբերում իմ կյանքում մի այնպիսի զվարճալի օր, չնայելով, որ այժմ բազմապատիկ բախտավոր հանգամանքներում եմ ապրում։ Հյուրերը մի-մի բաժակ օղիով շնորհավորեցին հորս, իսկ ինձ օրհնեցին հաղար տեսակ օրհնանքներով։ Մի քանիսը նրանցից ինձ շատ խրատներ տվեցին իմ ապագա կյանքի խելոքությամբ և խոհեմությամբ վարելու մասին։ Ես այդ խրատներից միայն մեկն եմ հիշում. նա ինձ վրա խիստ խորը տպավորություն արավ, և ես երբեք չեմ մոռանա այդ խրատը։ Նա մինչև այսօր եղել է իմ կյանքի ղեկավարը, նույնը պիտի մնա և մինչև իմ մահը։ Խրատողը մեր հարևան մանրավաճառ Թորոսն էր, մի, ինչպես պատմում էին, խելոք մարդ։

— Ո՞ւր որ լինես, ինչ գործի որ կպչես,— ասաց նա,— աշխատիր քեզանից մեծերի հավատարմությունը գրավել դեպի քեզ խոնարհությամբ, լռությամբ։ Առաջին քո հոգսն լինի մեծերիդ աչքում սիրելի դառնալ, փաղաքշելով, կեղծավորելով, շողոքորթելով։ Չթույլ տաս, որ քեզ խաբեն, բայց աշխատիր, որ ամեն ժամանակ ինքդ ուրիշներին խաբես քո

խելքով։ Այնտեղ, ուր տեսնես, թե մի կոպեկի անգամ շահ ունիս, ամեն միջոց գործ դիր այդ շահը չկորցնելու։ Վնաս չունի, հարկավոր եղած ժամանակ սուտ էլ ասա, միայն թե մեջտեղ շահ ունենաս։ Վերջապես, միշտ մտաբերիր Քրիստոսի պատվերը. «Եղեք խորամանկ, ինչպես օձ, իսկ միամիտ՝ ինչպես աղավնի»։

Այս խրատը խիստ երկար ու բարակ էր, զարդարված զանազան առակներով։ Բայց ավելորդ եմ համարում նրան ամբողջովին բերել այստեղ, որովհետև ես գործնական մարդ եմ և ժամանակ չունիմ հիշատակարանս լցնելու զանազան մանրամասնություններով։

Ճաշը վերջանալուց հետո հայրս իսկույն ևթ առանց երկարացնելու խոսք բաց արավ հյուրերի հետ իմ ապագայի մասին։ Սկսվեց երկար ու բարակ խորհրդակցություն։ Որովհետև հյուրերի գլուխները մի փոքր տաքացել էին, այս պատճառով իմ ապագայի հարցը դառավ նրանց համար խիստ վիճաբանության առարկա։ Ես, մի կողմ քաշված, լուռ ու մունջ, խորին ուշադրությամբ ականջ էի դնում նրանց խոսակցությանը։ Հայրս հայտնեց այն միտքը, թե մտադիր է ինձ որևիցե արհեստի տալ, բայց չգիտե ո՞րն է արհեստներից ավելի մաքուրը և, միևնույն ժամանակ, արդյունավետը։ Մեր հյուրերի թվում կար մի դարբին, որի որդին ինձանից մի տարի առաջ ավարտելով ուսումը նույն տեր-Վահակի մոտ, պարապում էր յուր հոր արհեստով։ Այդ մարդը խորհուրդ էր տալիս հորս, որ ինձ նույնպես տա երկաթագործության որևիցե ճյուղը սովորելու։ Բայց մանրավաճառ Թորոսը, որի տված խորհուրդը վերը բերեցի, խիստ ընդդիմացավ դարբնի այդ մտքին։ Նա ասաց, թե արհեստը դատարկ բան է, թե նա փոր չի կշտացնում, բայց միայն մարդու կյանքը մաշում է և օրինակ բերեց նույնիսկ յուր արհեստի նշանակությունը պաշտպանող դարբնին։

— Դու ինքդ, պ. Մարութ,— դարձավ նա դարբնին,— մեր քաղաքի ամենաառաջին արհեստավորն ես համարվում, բայց ինչ ես առաջացրել մինչև այսօր, երբ կյանքիդ մեծ մասն արդեն անցել է։ Ի՞նչ ես առաջացրել, ասա տեսնեմ, որ ուրիշներին էլ խորհուրդ ես տալիս արհեստ սովորելու,— շա-

ռունակեց նա տաքացած։ Զնայելով, որ անդադար ծանր մուրճը ձեռքումդ, կրակի առաջ, արյուն քրտնքի մեջ, տաք երկաթը ծեծելով գիշեր ցերեկ շարշարվում ես—ընտանիքդ շաբաթական մի անգամ տաք կերակրի երես չի տեսնում։ Չէ՛, ես հակառակ եմ ամեն տեսակ արհեստներին և եթե ես որդի ունենայի, թեկուզ ինձ սպանեին, նրան չէի թողնի, որ արհեստավոր դառնա։ Արհեստը, բացի նրանից, որ նյութապես չի ապահովում մարդուս, մինչև անգամ բթացնում էլ է նրան։ Ի՞նչի է նմանում արհեստավորը մի հասարակության կամ հանդեսի մեջ, հը՞ը... դարմանով լցրած տոպրակի։ Նա ոչ կանոնավոր կերպով խոսել գիտե, ոչ էլ յուր անձը մաքուր պահել։ Արհեստը մարդուս չի կրթում, այլ մի տեսակ կենդանի է դարձնում։

Այդ կծու նկատողությունը արհեստի վերաբերությամբ մանրավաճառ Թորոսը, կարծես, հենց դիտմամբ էր անում, որ խեղճ դարբնին վիրավորի։ Դարբինը խիստ ամոթխած մարդ էր։ Լսելով այդ կոշտ խոսքերը, կարմրեց և ոչինչ չկարողացավ պատասխանել։

Երևում էր, որ ինքն ևս զգում էր յուր ոչնչությունը հրապարտ հակառակորդի առաջ։

Հայրս երկար վիճաբանությանը վերջ դնելու և հարցը միանգամից վճռելու համար հարցրեց.

— Այժմ, պարոններ, ասացեք, ինչ խորհուրդ եք տալիս Խաչիի համար, ինչ պարապմունքի տամ նրան, որ մարդ դառնա։

— Վաճառականության,— պատասխանեց ամենից առաջ մանրավաճառ Թորոսը։

— Բայց վաճառականության համար ախար փող է հարկավոր, իսկ ես, ինչպես գիտեք, աղքատ մարդ եմ։

— Տուր նրան մի հարուստ վաճառականի խանութ գործակատարի պաշտոնով, նա այնտեղ առևտուրը քիչ թե շատ սովորելուց հետո, ինքը կարող է վերջ ի վերջո սովորել փող ձեռք բերելու հնարը և ժամանակով վաճառական դառնալ։ Միայն հարկավոր է համբերություն ունենալ, ուրիշ ոչինչ...

— Այդ ինչպե՞ս կարելի է, էլի ես չեմ հասկանում, թե գատարկ ձեռքով մարդ ի՞նչ կարող է անել,— հետաքրքրվեց

հայրս, իսկ որ չկարողանալով Թորոսի խոսքերից բան հասկանալ։

— Աշխարհում անկարելի բան չկա,— հակառակեց մանրավաճառը։— Ես ինքս տասը տարի մի մանրավաճառի մոտ գործակատար եմ եղել դատարկ ձեռքով. ինչպես տեսնում եք, ինքս այսօր մանրավաճառ եմ և, փառք աստուծո, մոտ տասը հազարի կարողություն ունիմ։ Բայց ես դեռ ոչի՛նչ, համեմատելով ուրիշների հետ։ Մտիկ տվեք մեր քաղաքի ամենաերևելի վաճառականներին, նրանցից ո՞ր մեկն է լիք գրպանով եղել առաջ։ Ամենքն էլ իրենց ժամանակին գործակատարներ կամ խանութի ծառաներ են եղել. իսկ այժմ ամեն մեկը հարյուր հազարների առուտուր է անում։ Վաճառականությունը մի այնպիսի գործ է, որ ինքն է սովորեցնում սիրողին փող աշխատելու հնարը. հարկավոր է միայն գտնել նրա գաղտնիքը, այնուհետև ամեն ինչ ինքնըստինքյան հեշտանում է։

— Ի՞նչ գաղտնիք է այդ, պարոն Թորոս,— հարցրին բոլորը գրեթե միաբերան։

— Ձեզ համար արդեն ուշ է հասկանալ այդ գաղտնիքը, ձեր ժամանակն արդեն անցել է, իսկ Խաչին կարող է շուտով հասկանալ։ Թող միայն սիրով դիպչի գործին և թող սրանից առաջ իմ տված խրատներն յուր ականջում միշտ պահի, երբեք չմոռանա, այնուհետև գաղտնիքը հեշտությամբ կըպարզվի։

Մինչդեռ նրանք այս վիճաբանության մեջ էին, ես ևս ըսկըսել էի արդեն մտքումս խորհել իմ ապագայի մասին։ Մանրավաճառ Թորոսի խոսքերն ինձ համար խիստ խորհրդավոր էին. ես չէի հասկանում այդ խոսքերի նշանակությունը։ «Այն ինչ գաղտնիք է, որ կարող եմ գտնել վաճառականության մեջ»,— մտածում էի ինքս ինձ։ Այդ գաղտնիքը սկսեց ինձ խիստ, հետաքրքրել, այնպես որ փոքր էր մնում, որ ես համարձակվեի բերան բանալ և խնդրել հորս, որ նա հետևի Թորոսի խորհրդին և թույլ տա ինձ մտնել գործակատար մի վաճառականի մոտ, որպեսզի իմանամ, թե ինչումն է կայանում փող ձեռք բերելու գաղտնիքը։ Բայց ես ինչպես կարող էի բերան բանալ իմ մեծերի մոտ։ Այդ կլիներ իմ կողմից մի աններելի հանդգնություն, և ես հեշտ չէի պրծնիլ հորս ձեռքից։ Բարե-

բախտաբար, առանց իմ միջամտության, բանը փոխվեց իմ ցանկացածի համաձայն։ Երկար վիճաբանություններից հետո ամենքը, իհարկե, բացի դարբին Մարութից— որը մինչև վերջը լռություն էր պահում — համաձայնվեցին, որ ինձ համար լավ կլինի մտնել վաճառականական ասպարեզ, քան թե որևիցե արհեստ սովորել։ Հայրս վճռեց հանձնել ինձ մեր քաղաքի այդ ժամանակվա ամենահայտնի վաճառական աղա Գուլամյանցների մանուֆակտուրայի մագազինը գործակատարի պաշտոնով։

Թեև ես չգիտեի այն ժամանակ, թե ինչ ասել է վաճառականի գործակատար և ինչումն է կայանում նրա պարապմունքը, բայց խիստ ուրախացա հորս այդ վճռով։ Առաջինը, ինձ հետաքրքրում էր մանրավաճառ Թորոսի ասած գաղտնիքը և երկրորդ, ճշմարիտը խոստովանած, երբեք ես հակումն չունեի դեպի որևիցե արհեստ։ Ճշմարիտ է, ես այն ժամանակ խիստ տհաս էի, որ կարողանայի ճիշտ գաղափար ունենալ արհեստների նշանակության մասին, որովհետև իմ տասնեյոթ տարին դեռ չէր լրացել, սակայն ուղեղս այնքան էլ անզարգացած չէր, որ չկարողանար գեթ հասարակ համեմատություններ անել։ Ես նույն րոպեին սկսեցի մտքումս համեմատել դարբին Մարութին մանրավաճառ Թորոսի հետ, ակամա երևակայելով իմ ապագան իրականացած այդ երկու մարդկանց մեջ։ Մեկը սրանցից իմ աչքի առաջ կանգնած էր առողջ, շաղ, ինքը մաքուր, հագուստը նույնպես մաքուր և նոր, փորը կուշտ, գրպանը միշտ լիք, հարգանքը և պատիվը հասարակության մեջ համեմատաբար ավելի, որին ամենքը ուշադրությամբ ականջ էին դնում, թեև խոսեր հիմարություն, որը հանդեսներում յուր ընկերների մեջ առաջին տեղն էր նստում, ինչպես և նույն օրը մեր տանը։ Մյուսը— նրա մոտ կոշտ ու կոպիտ, միշտ տխուր, դեմքը նիհար, և ժամանակից առաջ պշկած, վիզն և երեսը սևացած, ձեռները քարի նըման կոպտացած, միշտ կեղտոտ և անվայելուչ հագուստի մեջ, որը հասարակության մեջ, ինչպես և նույն օրը մեր տանը, ոչ մի հարգանք կամ համակրություն չէր վայելում։ Որին խոսելու ժամանակ ոչ ոք չէր կամենում լսել, որ շատ անգամ ծիծաղի առարկա էր դառնում։ Նա գիշեր ու ցերեկ ֆիզիկա-

պես աշխատում էր տնային կենդանուց ավելի, բայց և այնպես, հազիվհազ կարողանում յուր ընտանիքը կերակրել։ Որքա՜ն զանազանություն սրա և առաջինի մեջ։

Հասկանալի էր, որ այդ երկուսից առաջինի կյանքը նախանձելի էր, և եթե մեկը նույն րոպեին ինձ հարցներ. «Խաչի, ո՛րը կկամենաս լինել. մանրավաճառ Թորոս, թե՞ դարբին Մարութ», պարզ է, որ առանց երկար մտածելու կցանկանայի լինել Թորոս։ Այս պատճառով ես խիստ ուրախացա, երբ հայրս ինձ դիմեց.

— Խաչի՛, վաղը ես քեզ կտանեմ վաճառական աղա Գուլամյանցների մագազինը։ Այնտեղ դու գործակատար պիտի լինես։ Արի՛, Թորոս աղայի և մյուսների ձեռը համբուրիր, նրանց բարի և անկեղծ խորհրդի փոխարեն։

Ես խոնարհությամբ կատարեցի հորս կամքը, բոլորի ձեռքը մի առ մի հերթով համբուրելով։ Խոստովանում եմ, երբ հերթը հասավ դարբին Մարութին, հազիվհազ կարողացա զսպել զզվանքս, տեսնելով նրա կեղտի ծալքերով ծածկված ձեռքը։ Ես դժվարությամբ իմ շրթունքների ծայրերը հասցրի նրա կոպիտ մատներին։ Մանրավաճառ Թորոսը ճակատս համբուրելով և օրհնելով, մի անգամ ևս կրկնեց յուր խրատը։

— Խոնարհ և հլու հպատակ կլինիս աղա Գուլամյանցներին, կկատարես բոլորը, ինչ որ կհրամայեն։ Թեքվիր և ծռվիր ինչպես օձ, բայց պահիր քեզ խեղճ ինչպես մի ոչխար և դու շուտով կմտնես աղա Գուլամյանցների դրպանը։ Ապրե՛ս, որդիս, ու զորանաս։

II

Ուրախությունից գրեթե ամբողջ գիշեր շարունակ անկողնիս մեջ տրորվում էի այս ու այն կողմ, ստեղծելով երևակայությանս մեջ հազար տեսակ պատկերներ իմ ապագա կյանքից և հորինելով զանազան տեսակ ծրագիրներ... Լուսադեմին քունը հաղթեց ինձ, և ես մի երկու ժամ քնեցի։

Արեգակը բավական բարձրացել էր, երբ զարթնեցի։ Շտապով վեր թռա անկողնից. երեսս լվացի և սկսեցի շորերս

հագնել, որպեսզի պատրաստ լինեմ հորս առաջին հրավերին, որի հետ ես այն օրը պիտի գնայի աղա Գուլամյանցների մագազինը։ Հայրս հենց առաջին երեկո, մեր հյուրերի ցրվելուց հետո, արդեն գնացել էր մագազին և այնտեղ իմ մասին խոսել։

Թե ինչ պայմաններով ես պիտի ծառայեի աղա Գուլամյանցների մոտ, որքան ոռնիկ պիտի ստանայի— այս ինձ չհայտնեց հայրս։ Միայն, երբ մենք հասանք մագազին, և նա ձեռս բռնելով հանձնեց Մակար աղային, այսքանը լսեցի նրա բերանից իմ մասին.

— Այսուհետև, Մակար աղա, էլ սա իմ որդին չէ, այլ քոնը, հանձնում եմ նրան ամբողջ գլխով բեզ։ Վարվի՛ր նրա հետ, ինչպես դու գիտես, միայն թե ժամանակով մարդ դառնա քո ձեռքում։

— Մարդ դառնալը կախված է իրանից. եթե խոնարհ, զուշաղ, խոսք լսող կլինի, իհարկե, ժամանակով մի կտոր հացի տեր կդարձնեմ, իսկ եթե չէ— մնդքն յուր վզին։ Իմ ձեռքում շատերն են մարդ դառել և շատերն էլ մարդ դառնալու մոտիկ են, եթե քո որդին էլ լավ կծառայի ինձ, իմ հրամանները խոնարհությամբ կկատարի, կարող է ժամանակով նրանց նման լինել։

Աղա Գուլամյանցը այս խոսքերն արտասանեց մի այնպիսի անզոր ինքնավստահությամբ և աներկբա եղանակով, որ ես ակամա զգացի, թե կանգնած եմ մի գերբնական ուժի առջև, որը, հիրավի, եթե ուզենա, կարող է ամեն ինչ անել ինձ համար։

Հայրս գլուխ տվեց ու հեռացավ. ես մնացի մագազինում։

Մագազին ասված բանը մի լայն և ընդարձակ խանութ էր չորս մեծ դռներով և մի քանի պատուհաններով։ Նա լիքն էր զանազան տեսակի թանկագին և էժանագին ապրանքներով, սկսած ամենաքնտիր արտասահմանյան նուրբ գործվածներից, մինչև Ռուսաստանի ամենահասարակ կտորները։ Դեռ մինչև այն օրը կյանքումս տեսած չլինելով այդչափ հարստություն միատեղ, ես բերանս բաց, շվարածի նման, նայում էի այս ու այն կողմ, ինչպես մի գյուղական մանուկ, որ առաջին անգամ մտնելով քաղաք, աչքերը հելգած չգիտե

բարձրաշեն տներից որ մեկի վրա դադարեցնե յուր ուշադրությունը։ Բայց ամենից ավելի գրավեցին իմ ուշադրությունը դաստոյկայի վրա շարած ապակյա պահարանների մեջ կանոնավոր կերպով դասավորված զանազան տեսակի ոսկեղենները և թանկագին քարեղենները, որոնց գրավիչ փայլը, կարծես մի տեսակ կախարդական զորությունով, կաշկանդում էր իմ ուշքն ու միտքը։ Առաջին անգամ այստեղ գրգռվեցին իմ մեջ շահասիրական զգացումներ, և ես սկսեցի հոգով նախանձել աղա Գուլամյանցներին, որոնց բախտը պարգևել էր այդչափ հարստություն։ «Ախ, եթե իմը լիներ այդ հարստությունը,— սկսեցի մտածել ինքս ինձ, նայելով ագահ աչքերով թանկագին իրեղեններով լի պահարանների վրա,— որքա՜ն բախտավոր կարող էի լինել ես։ Գոնե միայն այսքան ոսկեղենների կեսն ունենայի, ինչեր չէի կարող անել նրանցով։ Ամենից առաջ ձեռք կբերեի մի քանի ձեռք լավ հագուստներ թե՛ ինձ համար և թե՛ մեր տնեցիների համար։ Կարող էի մինչև անգամ խանութ բաց անել և ինքս էլ վաճառական դառնալ, տարեկան մի անգամ ուրիշների պես Ռուսաստան գնալ, լավ-լավ քաղաքներ տեսնել։

Մինչդեռ այս մտածմունքների մեջ իմ պատանեկական երևակայության մեջ կառուցանում էի շքեղ օդային ամրոցներ, հանկարծ մեկը շինքիս ապտակ տվեց։ Հետ նայեցի, տեսնեմ Մակար աղան է։

Ի՞նչ ես հայվանի պես ռեխդ ծռել ու նայում, արի այստեղ։

Այս ասելով, նա կոպտությամբ բռնեց թևիցս և քաշեց դաստոյկի ներսի կողմը, ուր շարված էին մի քանի գործակատարներ մաքուր հագնված։

— Գրիգոր, այս աղան այսօրվանից մտել է ինձ մոտ ծառայելու։ Լավ մտիկ արա սրան, տե՛ս, մագազինում ինչ նրա անելու գործ կա, հանձնիր, որ կատարի։ Կարդալ-գրել գիտե, կարող է հաշիվներ արտագրել, բայց առայժմ հարկավոր չէ նրան այսպիսի գործեր հանձնել, թող մի քանի ժամանակ ուրիշ բաներով պարապի, մինչև որ տեսնենք ինչ պտուղ է։

Աղա Գուլամյանցն այս ասում էր գործակատարներից մեկին, մի կարճահասակ, 22-24 տարեկան երիտասարդի։

Մագազինի առջև, մայթի վրա գործակատարներից մի քանիսը զբաղված էին Ռուսաստանից նոր ստացված ապրանքների հակերը բանալով։ Գրիգորն ինձ պատվիրեց մի ուրիշ փոքրիկ տղայի հետ— որը, ինչպես երևում էր, մագազինում մանր գործեր էր կատարում — բացված կտորները ներս բերել և հավաքել մագազինի մի անկյունում։ Ես մի կողմ ձգեցի գդակս և սկսեցի կատարել այս առաջին պատվերը։ Որպեսզի իմ զոչաղությունը ցույց տամ Մակար աղային, որն այդ ժամանակ մտիկ էր անում ապրանքներին, սկսեցի որքան կարող էի եռանդով գործել։ Մինչդեռ ինձ հետ կրող մյուս տղան ամեն անգամ վերցնում էր երկու կամ երեք կտոր ապրանք, ես աշխատում էի երկու անգամ նրանից ավելի բարձրացնել և երկու անգամ արագ վազել։ Ես կարծում էի, թե շուտով Մակար աղայի բերանից կլսեմ մի գովասանական խոսք իմ աշխատասիրության մասին, բայց սխալվեցի։ Մակար աղան ոչ միայն ինձ չգովեց, այլ մինչև անգամ ուշադրություն էլ չէր դարձնում ինձ վրա։ Ես, մտաբերելով մանրավաճառ Թորոսի խրատը, թե «համբերիր», չդադարեցի և շարունակեցի ավելի ու ավելի եռանդով գործել։

Կեսօրվա ժամանակ էր։ Զնայելով, որ եղանակը գարնանային էր, շոգն ուղղակի անտանելի էր։ Քրտինքը, շատ վազվզելուց, սկսեց երեսովս աղբյուրի նման թափվել։ Ձեռներս, որ մինչև այն օրը սովորած չէին երկար աշխատության, շատ ապրանք կրելուց բոլորովին թուլացան, ոտներս շատ գնալ ու գալուց հոգնեցին և ծալծլվում էին։ Բայց ես ուշադրություն չէի դարձնում և որքան կարելի էր աշխատում էի մինչև վերջը քաջությամբ կատարել ինձ հանձնված գործը։ Առաջին օրն էր, հարկավոր էր աշխատասիրություն ցույց տալ։

Վերջապես, ապրանքները վերջացան։ Ես Գրիգորի պատվերով կանացի զգուշությամբ հավաքելով հակերից մնացած թոկերի կտորտանքը, փսիաթները մի կողմ դնելով և ավելով մագազինի առաջը, ձեռներս ու երեսս լվացի ու իմ տեղը կանգնեցի։

Մագազինում գործակատարներից յուրաքանչյուրն ուներ

յուր որոշ տեղը։ Գրիգորը ինչպես ավագ գործակատար, բրոնած ուներ ամենաառաջին տեղը, այն է դրամարկղի մոտ։ Նա աղա Գուլամյանցների խանութի գանձապահն էր։ Նա էր ըստանում փողը մուշտարիներից և նշանակում հաշվեմատյաններում, նույնպես նրա ձեռքին էր մագազինի բոլոր ծախքը։ Գրիգորից հեռու աստիճանաբար կանգնած էին մնացյալ գործակատարները թվով չորս հոգի. մեկը ոսկեղենների մոտ, մյուսը մի քանի քայլ հեռու սրանից, մանուֆակտուրայի ապրանքների թանկագին կտորների մոտ, երրորդն ու չորրորդը համեմատաբար էժանագին ապրանքների կողմ։ Աղա Մակարն ինձ հրամայեց տեղ բռնել սրանց բոլորի վերջում և պատվիրեց ամենավերջին գործակատարին, որ ինձ սովորեցնի առուտուրի եղանակը, այսինքն՝ մուշտարիների հետ խոսելու և վարվելու ձևը, չիթ կամ ուրիշ կտորներ չափելու արվեստը և այլն։

Ինչ վերաբերում է այն պատանուն, որն ինձ հետ միասին դրսից ներս ապրանք էր կրում, կանգնած էր զաստոյկայից դուրս դեպի դռան կողմը։ «Ուրեմն մի բան տեսել է իմ մեջ Մակար աղան, որ հենց առաջին օրն ինձ իրավունք է տալիս մտնել զաստոյկայի ներսը»— մտածեցի ես։ Ես նկատեցի դռան մոտ կանգնող պատանու դեմքի վրա դժգոհության ժպիտ և իսկույն հասկացա, որ նա ինձ նախանձում է։

Իրիկնադեմին աղա Գուլամյանցը, վերադառնալով շուկայից, հրամայեց մագազինը կողպել։ Գործակատարները կատվի արագությամբ կատարեցին նրա հրամանը, և մի բոպեում բոլորս դրսում շարվեցինք նրա շուրջը։ Ես ամեն կերպ աշխատում էի աղա Գուլամյանցի աչքին երևալ, նրա ուշադրությունն ինձ վրա դարձնել։ Մի քանի պատվերներ տալով, նա արձակեց բոլորին, ինձ հրամայեց յուր հետ տուն գնալ։

Օրը դեռ այքան չէր մթնել։ Ցերեկվա շոգից հետո երեկոյան զովարար օդը թափանցելով իմ թոքերի մեջ, կարծես, մի տեսակ դուրեկան և թմրեցուցիչ հեղուկ էր տարածում հոգնածությունից թուլացած նյարդերիս մեջ։ Ես գնում էի աղա Գուլամյանցի հետևից, ի նշան խոնարհության, մի քանի քայլ հեռու պահելով ինձ նրանից։ Ոտներս հազիվհազ էի առաջ շարժում ամբողջ օրն ոտքի վրա անցկացնելուց հետո։

ժամանակ առ ժամանակ աղա Գուլամյանցը յուր գլուխը բարձրացնելով և երեսը շուռ տալով, հետ էր մտիկ տալիս։ Մեր անցած փողոցը քաղաքի գլխավոր շուկան էր, որին տեղացիները անվանում էին Գուրջի-բազար։ Այստեղ տիրում էր սաստիկ աղմուկ և դղրդոց։ Մրգավաճառ Թուրք խանութպանները, որ անկանոն կերպով պաշարել էին խանութների առաջը վանական տեսակ մրգեղեններով, իրանց երկարաձիգ արխալուղների փեշերը դեպի հետ ծալած, թևերը հավաքած մինչև արմունկները, կիսավայրենի ձայներով գոռում ու բղավում էին, հրավիրելով անցորդներին էժան գներով գնել թարմ մրգեղեններ։

— Եկե՛ք, ա՛յ անցնող աղաներ, էժան եմ ծախում Ախսուի թարմ սալորը, գրվանքան երկու կոպեկ, գրվանքան երկու կոպեկ,— լսվում էր մի կողմից։

— Այստեղ եկեք, ինձ մոտ վաղեք, ա՛յ էժանագին ապրանք սիրող աղքատներ, հասած թութ, համեղ թութ, հինգ գրվանքան երկու կոպեկով եմ ծախում, եկեք, թառաշ արեք, այ խելք ունեցող աղքատներ,— գոռում էր մյուսը։

Թութ ծախողի գոռոցն անհետևանք չմնաց։ Ես նկատեցի, որ փայտի վրա հենվելով մոտենում էր նրան մի միջահասակ մարդ, որի բոլորովին ճերմակած մազերն և դանդաղ քայլափոխությունը հաստատում էին, որ ահա այսօր-վաղը նա կմտնի գերեզման։ Ներունու երկայն և դեպի ցած բուսած բեղերը, խառնվելով բամբակագույն միրուքի հետ, բոլորովին ծածկել էին նրա ատամնազուրկ բերանը։ Նրա դեմքը գունատ էր ինչպես անշունչ դիակի կերպարանքը, աչքերը պշկած էին և խորը փոսերի մեջ թաղված. Ես նկատեցի այդ մարդու կերպարանքի վրա մի տեսակ մռայլ ժպիտ. մի ժպիտ, որ բացի ծերունական դառն կյանքի ծանրութենից, արտահայտում էր և մի ուրիշ անբացատրելի վիշտ։ Ես վերջերում շատ անգամ եմ առիթ ունեցել այդ տեսակ ժպիտներ նկատել միայն այն մարդկանց դեմքերի վրա, որոնք իրանց կրծքի տակ թաքցրած ունին անզոր ոխ կյանքի դեմ։ Որոնք տարիների ընթացքում տանջվում, հալվում են այդ ցավերի ճնշման ներքո, չունենալով հնար, գեթ երբեմն թեթևացնել իրանց կուրծքը, դուրս թափելով նրանց՝ լեզվի արտահայտությամբ։

Ներունին գալիս էր մեր աջ կողմից և, որպեսզի մրգավաճառ Թուրքին մոտենար, հարկադրված էր անցնել ուղիղ աղա Գուլամյանցի առջևով, որը գնում էր, ինչպես ասացի, ինձանից մի քանի քայլ առաջ։ Ներունին մոտեցավ։ Աղա Գուլամյանցը, նկատելով նրան, երեսը շուռ տվեց հակառակ կողմ և ճանապարհից քիչ շեղվեց։ կարծես կամենալով, որ ծերունին իրան չնկատե։ Ես նրա դեմքի վրա, երեսը շուռ տալու ժամանակ, նկատեցի մի անախորժ ժպիտ։ Պարզ էր, որ նա խույս էր տալիս ծերունուց, որն այդ ժամանակ մի խորը, թափանցող հայացք ձգեց նրա վրա։

Մենք մի քանի վայրկյանում առաջ անցանք, իսկ ծերունին հետ մնալով շարունակում էր մրգավաճառի առջև կանգնած նայել մեր հետևից, երբեմն շարժելով յուր գողդոջուն գլուխն տնքավական ձևով։ Մենք հեռացանք. ծերունին յուր հնամաշ արխալուղի գրպանից հանեց մի մեծ թաշկինակ և սփռեց գետնի վրա։ Մրգավաճառը կշռի թևը լցնելով թութով, կշռեց և շուռ տվեց թաշկինակի մեջ։

Ինձ սկսեց ակամա հետաքրքրել ծերունու աղա Գուլամյանցի վրա ձգած խորհրդավոր հայացքը։ Ես մտածեցի, որ նրանց մեջ անշուշտ մի որևիցե գաղտնիք կա։

Փողոցի ծայրում գտնվում էր հայոց եկեղեցին։ Ես առաջուց գիտեի, որ աղա Գուլամյանցը խիստ աստվածապաշտ և եկեղեցասեր քրիստոնյա է համարվում մեր քաղաքում և, լսելով զանգահարության ձայնը, գիտեի, որ անշուշտ կմտնի եկեղեցի։

Եկեղեցու դռանը մենք հանդիպեցինք տեր-Վահակին, որը շրջապատված մի քանի տիրացուներով ու բարեպաշտ ծերունիներով, ինչ-որ բանի մասին տաքացած խոսում էր։

— Օրհնյա տեր,— ասաց Գուլամյանցը, ձեռները պարսկական ձևով գնելով կրծքին։

— Աստված օրհնի, աղա Մակար,— պատասխանեց քահանան, խաղացնելով յուր դեմքի վրա մի կեղծ ժպիտ և մոտենալով մեզ։

— Հը՛մ, շո՞ւտ կօրհնես ժամը. թե՞ չէ։

— Հենց ձեր հրամանոցն էի սպասում. աղա Մակար, այս բոպեիս կսկսեմ։ Ա՛յ տղա. Խաչի, այդ ի՞նչ է, չլինի թե

Մակար աղայի մոտ ես մտել ծառայելու,— հարցրեց ինձ տեր-Վահակը։

— Այո՛,— պատասխանեցի ես։

— Շատ լավ ես արել, խոնարհ և հնազանդ եղիր, լավ ծառայիր։ Մակար աղան շատ ազնիվ աղա է, նա կարող է քեզ ժամանակով մարդ դարձնել։ Վատ տղա չէ Խաչին,— դարձավ տերտերը Մակար աղային,— ղոչաղ ու խելոք է, միայն երբեմն ականջները հարկավոր է քաշել, որ մեծերի խրատը չմոռանա։

— Այդ թողնենք, տեր-հայր, ես քեզ հետ հարկավոր գործ ունիմ, նրա մասին խոսենք,— դարձավ հանկարծ աղան տեր-Վահակին ու, թևից բռնելով, տարեց նրան մի կողմ։

Ես քաշվեցի մի կողմ. նրանք սկսեցին խոսել։

Երբեմն նրանց խոսակցութենից իմ ականջին հասնում էին հատուկտուր դարձվածներ կամ ընդմիջյալ խոսքեր, օրինակ, «աղջիկը չի ուզում, թարսվել է» կամ «քսան հատ կանաչ կարմիրանոց» և այլն։

Վերջապես, նրանք ավարտեցին խոսակցությունը, և մի քանի րոպեից հետո ժամասացությունն արդեն սկսված էր։ Աղա Գուլամյանցն ամենից առաջ սեղանի հանդեպ կանգնած ջերմեռանդությամբ ծունր էր դնում ու աղոթում։ Ես ևս սկսեցի աղոթել, նախ և առաջ կրկնելով մի անգամ տերունական աղոթքը, «Հայր մերը», նույն եղանակով, ինչպես ուսումնարանում սովորեցրել էր ինձ տեր-Վահակը։

Ճշմարիտն ասած, ես չբավականացա միայն այդ պաշտոնական «Հայր մերով». ինձ թվում էր, որ նրանով աստծուց շատ քիչ բան է խնդրվում առհասարակ։ Ես կարծում էի, եթե բոլորը, ինչ որ ասված է այս աղոթքի մեջ, աստված կատարի— ես մի շատ էլ մեծ մարդ չեմ դառնա, իսկ ես ուզում էի, ինչպես և այժմ էլ ուզում եմ, մեծ մարդ դառնալ։ Օրինակ։ Նրա մեջ ասված է. «Մեր ամեն օրվա հացը տուր մեզ այսօր»։ Մի՞թե այս մի մեծ բան է, մտածում էի ես, եթե աստված ամեն օր կերակրե ինձ այնպես, ինչպես մինչև այսօր է կերակրել։ Չէ, հարկավոր է ուրիշ բաներ էլ խնդրել աստծուց, միևնույնն է խնդրում եմ, ավելի լավ է շատ բաներ կխնդրեմ, կկատարվի խնդիրս — լավ, չի կատարվի — խոմ ինձանից մի բան չի պակսիլ»։ Եվ ես սկսեցի հազար տեսակ բաներ մուրալ աստծուց, ձեռներս պարզելով և աչքերս համեստությամբ բարձրացնելով դեպի վեր։

Առաջին իմ բաղձանքն էր, որ աստված ինձ այնքան շնորհ տա, որ ես աղա Մակարի աչքում սիրելի դառնամ, օրեցօր նրա մոտ առաջանամ, հասնեմ Գրիգորի աստիճանին, այսինքն՝ մինչև մագազինի դրամարկղը։ Այնուհետև, ավելի ու ավելի առաջանալով, վերջապես, ինքս էլ մի օր աղա Գուլամյանց դառնամ, նրա նման հարստություն դիզեմ, փառավոր տներ շինել տամ, կառքեր, ծառաներ, գործակատարներ պահեմ և, վերջապես, մեր քաղաքի մեջ աղա Գուլամյանցի պես ամենքի համար նախանձի առարկա լինիմ։ Այս տեսակ և հազար ու մի ուրիշ բաներ էի խնդրում աստծուց, վերջումն էլ խոստանում էի, որ եկեղեցի շինել կտամ, եթե նա իմ աղոթքը կատարի, երբ պատահմամբ, երեսս դեպի աջ շուռ տալով, տեսնեմ մի ծերունի եկեղեցու սանդուղքով դժվարությամբ ցած է իջնում։ Ես իսկույն ճանաչեցի— դա այն ծերունին էր, որին պատահել էինք մի փոքր առաջ շուկայում։ Իջնելով եկեղեցու հատակը, ծերունին երեք անգամ համբուրեց դռան մոտի առաջին սյունը և, զգուշությամբ փայտը դնելով պատի մոտ, բուխարայի մորթուց կարած երկայն ու սրածայր գդակը ձեռքին, գնաց եկեղեցու մեջտեղը։ Ես մոռացա իմ աղոթքը և նայում էի ծերունուն։ Մի բան, կարծես, քաշում էր իմ հայացքը դեպի նա։

Վաղեմի տաճարի հնամաշ և մրոտած սյուները, վերևից գրկելով իրարու, տարածել էին եկեղեցու պատառոտված փսիաթներով ծածկված խոնավ հատակի վրա իրանց մութ շվաքը։ Իսկ պատուհաններից զուրկ, մաշված պատերը մռայլ և տխուր կերպարանք էին ստացել։ Նայելով ծերունու թառամած ու գունատ երեսին և կնճռոտված ճակատին, ինձ թվում էր, որ նրա հոգեկան տրամադրությունը բոլորովին համապատասխանում էր եկեղեցու մռայլ տեսքին։ Մոտենալով մեջտեղի սյուներից մեկին, նա գդակը, կարծես անզգայաբար, ձգեց հատակի վրա և երկու դողդոջուն ձեռները բարձրացնելով դեպի վեր, սկսեց աղոթել։ Նա կանգնած էր աղա Գուլամյանցից ոչ այնքան հեռու, հետևի կողմում, այնպես որ, եթե

աղան երեսը հետ դարձներ, հայացքը պիտի ընկներ ուղղակի ծերունու դեմքին։ Մի քանի րոպե ծերունին, երեսը դեպի վեր բարձրացրած, աղոթում էր, անշարժ արձանի նման, ժամանակ-ժամանակ յուր ցամաքած շրթունքները դողդողացնելով։ Ես ապուշի նման նայում էի նրա երեսին, երբեմն երեսս անդիտակցաբար դարձնելով և դեպի աղա Գուլամյանցը։ Անցան առաջին րոպեները. ծերունին, խոնարհեցնելով գլուխը, մի քանի անգամ խաչակնքեց երեսը և սկսեց ծունր դնել։ Այդ ժամանակ ես մի բան նկատեցի։ Ամեն անգամ երբ ծերունին եկեղեցու հատակը համբուրելուց հետո բարձրանում էր, մի տեսակ սուր և սպառնալի հայացք էր ձգում աղա Գուլամյանցի կողմը և երկու ձեռքերով յուր նիհար կրծքին խփում։ Թե ինչ էր արտահայտում ծերունու այդ շարժումները, ինձ համար անհասկանալի էր, միայն պարզ էր, որ նրա աղոթքի մեջ խառն էր և աղա Գուլամյանցի անունը։

Ժամասացությունը վերջացավ։ Տեր-Վահակը, ավարտելով վերջին «յերթայք խաղաղութեամբ և տէր յեղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեան ամենը», սուրբ ավետարանը պահեց, որ բարեպաշտ ժողովուրդը համբուրե։ Ես վերցրի գդակս ու բանալիները և եկեղեցուց դուրս գալով, դռանը սպասում էի աղա Գուլամյանցին։

Մի քանի րոպեից հետո մենք «խաղաղությամբ և տերը մեզ հետ» ճանապարհվեցինք տուն։ Ծերունին ինձ խիստ հետաքրքրում էր, իմ միտքն այնքան զբաղված էր նրանով, որ բոլորովին չիմացա, թե ինչպես հասանք տուն։

III

Փառավոր և շքեղ էր այն տունը, ուր բնակվում էին Գուլամյանցները։ Բարձր, երեքհարկանի, սպիտակ քարից կառուցած շինության առջև բացվում էր մի ընդարձակ այգի բազմատեսակ մրգատու ծառերով և գեղեցիկ ծառուղիներով, որոնք ավարտվում էին մի մաքուր և լայն հրապարակի շուրջը։ Այս հրապարակի վրա շինված էր մի մեծ ավազան, որի մեջտեղում գտնվող բարձր շատրվանից անդադար բաբբանում էին մաքուր ջրի պարզ և փայլուն շերտեր։ Ես առաջին անգամ էի տեսնում մի այդպիսի զմայլեցուցիչ տեսարան և այս պատճառով մինչև տուն հասնելը մի փոքր կանգ առա և հիացած նայում էի։

Նախանձի ոգին դարձյալ գրգռվեց իմ մեջ։ «Երանի քեզ, աղա Գուլամյանց,— ասացի մտքումս,— որ կյանքդ անց ես կացնում այդ շքեղ և զվարճալի տեսարաններով շրջապատված տան մեջ։ Մարդիկ ասում են, թե դժոխք և արքայություն կան մյուս կյանքում, բայց ողորմելիները կույր են, նույն դժոխքն ու արքայությունը չեն կարողանում տեսնել հենց այս աշխարհում։ Ահա դրախտը, ուր ապրում են աղա Գուլամյանցները։ Մի տեղ խոնավ բնակարան, տկլոր ընտանիք, մերկ զավակներ, վիշտ, տանջանք, դառնություն, մի կտոր հացի համար գիշեր-ցերեկ պատերազմ հաղար տեսակ խոչընդոտների հետ, քաղցածություն, սով, հիվանդություն և կեղտոտություն։ Մյուս տեղ շքեղ տներ, հարուստ այգի, կուշտ և առողջ ընտանիք, ուրախություն, հարստություն, զվարճություն, անհոգ կյանք և շռայլ ապրուստ— ահա՛ ինչ տեղ է դժոխքն ու արքայությունը։ Այս աշխարհում ով որ փող ունե, նա արքայության մեջ է, ով որ փող չունե, նա դժոխքի մեջ է։ Փողը գերբնական ուժ է, նա ամեն բան տալիս է մարդուն, ուրեմն հարկավոր է ամեն կերպ աշխատել այս ուժը ձեռք բերելու համար»...

Մինչդեռ ես դարձյալ իմ պատանեկական երևակայության մեջ թաղված զվարճանում էի գրավիչ տեսարաններով, հանկարծ ականջիս հասավ աղա Գուլամյանցի հրամայողական ձայնը.

— Խաչի, բարձրացի՛ր վերև։

Ես բարձրացա վերև։ Աղա Գուլամյանցը ծառային հրամայեց ինձ թեյ խմեցնել։

Թեյ խմելուց հետո ինձ աղա Գուլամյանցը կանչեց յուր առանձնասենյակը։ Ճիշտ չեմ կարողանում մտաբերել, թե ինչ էի զգում այն րոպեին, երբ աղա Գուլամյանցի առանձնասենյակը հասնելու համար անցնում էի նրա ընդարձակ և զարդարուն դահլիճով։ Բայց շատ լավ հիշում եմ, որ այդ ժամանակ նախանձը քանի գնում ավելի ու ավելի զարգանում էր

իմ մեջ, ամեն մի քայլափոխում հանդիպելով այնպիսի առարկաների, որոնք վկայում էին աղա Գուլամյանցների հարստությունը և պատկերացնում ինձ նրա ապրուստի շքեղությունը։

— Խաչի՛,— դարձավ ինձ Մակար աղան, դժվարությամբ բարձրացնելով յուր ծանր ու հաստլիկ մարմինը, կարմիր մետաքսով ծածկված բազկաթոռից և սկսելով ման գալ սենյակում,— հայրդ այսօրվանից քեզ հանձնել է ինձ գործակատար։ Ես մանկությունից ճանաչելով քո հորը, չմերժեցի նրա աղաչանքը և համաձայնեցի քեզ ընդունել ինձ մոտ, չնայելով որ ես գործակատարներ ունեմ և ավելորդ մարդ ինձ հարկավոր չէր։ Հայրդ ինձ հետ պայմանավորվեց, և ես ընդունեցի, որ դու ինձ մոտ մնաս ոչ թե մի կամ մի քանի տարի ժամանակով, այլ մշտական, որքան որ մենք իրարու հարկավոր կլինենք։ Ուրեմն, այսօրվանից ոտով-գլխով ինձ ես պատկանում և իմացիր, որ պարտավոր ես այսօրվանից մոռանալ քո ծնողներին և բոլորովին հպատակվել ինձ և իմ կամքին։ Շաբաթական մի անգամ իրավունք եմ տալիս քեզ տեսնել ծնողներիդ, այն էլ կիրակի օրերը, երբ գործ չես ունենալ, կգնաս կարճ ժամանակով և էլի շուտով կվերադառնաս։ Մի խոսքով, այսօրվանից դու կատարելապես ինձ ես պատկանում հոգով և մարմնով։ Ես դառնում եմ քո տերը, ծնողը, գլխավորը, աղան և ամեն ինչ։ Դու պիտի կատարես այն, ինչ որ ես կհրամայեմ և ինչպես ես կկարգադրեմ։ Եթե ասեմ մածունը սև է— չհամարձակվես հակառակել, թե նա սպիտակ է։ Եթե ասեմ նստի՛ր— պիտի նստես, ասեմ վեր կա՛ց— վեր կենաս, կե՛ր— ուտես, ծիծաղի՛ր— ծիծաղես, լացի՛ր— լաց լինես։ Ինչ երկարացնեմ, եթե կրակի մեջ էլ ուղարկեմ, պիտի գնաս։— Լսո՞ւմ ես։

— Լսում եմ, աղա։

— Զգուշացնում եմ քեզ, եթե այդ բոլորը կկատարես, խոնարհ, խոսք լսող, աշխույժ, գործ կատարող և հավատարիմ կլինիս— ես շուտով քեզ կառաջացնեմ և ժամանակով մի կտոր հացի տեր կլինես, իսկ եթե ոչ— այն ժամանակ մեղքը քո վզին, քեզ կարձակեմ դատարկ ձեռքով։ Գլխավոր պարտքդ պիտի լինի ամեն ժամ ու բոպե իմ շահերն աչքի առջև ունենալ և աշխատել նրանց միշտ պաշտպանել։ Ես առևտրական մարդ եմ, գաղտնի գործեր ունիմ, դու պարտավոր ես նրանց մասին ոչ ոքի, նույնիսկ քո ծնողների մոտ չխոսել։ Լեզուդ թող համր լինի ուրիշների մոտ իմ գործերի վերաբերությամբ, իսկ ուրիշների գործերի մասին ինձ մոտ ազատ և արձակ։ Եթե մի տեղ կամ մի մարդուց իմ մասին լավ կամ վատ խոսք լսես, պարտավոր ես իսկույն գալ և ինձ հայտնել։

— Ես կաշխատեմ բոլոր ձեր պատվերները կատարել ամենայն զգուշությամբ,— ասացի ես, խոնարհությամբ գլուխս տալով։

— Եթե կկատարես— քեզ համար լավ կլինի, եթե ոչ— ինձ շատ էլ վնաս տալ չես կարող։ Դե՛հ, գնա և խոսքերս ականջումդ լա՛վ պահիր։ Իմացիր, որ ես բարկացող մարդ եմ և սովորություն չունիմ ասածներս երկրորդ անգամ կրկնել։ Եթե մի անգամ սխալվեցիր կամ իմ տված պատվերները մոռացար — այն ժամանակ վա՛յ քեզ։

Կրկին անգամ գլուխ տվեցի և հեռացա։

Այդ երեկո ես անցկացրի ծառաների հետ, որոնցից, շընորհիվ իմ հետաքրքիր բնավորության, տեղեկացա աղա Գուլամյանցների ընտանեկան և առևտրական մի քանի գործերին։

Աղա Գուլամյանցները երեք եղբայրներ էին։ Ամենամեծը նրանցից աղա Ստեփանն էր, որ տարվա գրեթե մեծ մասը անց էր կացնում Շ... գավառի զանազան գյուղերում։ Աղա Գուլամյանցների վաճառականության գլխավոր տարրը կազմում էր գինու առուտուրը։ Ամեն տարի նրանք ուղարկում էին Ռուսաստանի զանազան կենտրոնական քաղաքները մեծ քանակությամբ գինի։ Շրջակա գլխավոր գյուղերի այգեգործությունը մեծ կապ ուներ նրանց հետ։ Չկար խաղողի այգի ունեցող մի գյուղացի, որն այսպես թե այնպես կապված չլիներ Գուլամյանց առևտրական տան հետ։ Ամբողջ Շ... գավառի գինու արտահանությունը չնչին բացառությամբ գտնվում էր նրանց ձեռքում և, ինչպես պատմում էին, նրանց հարստության մեծ մասը գոյացել էր գինու առուտուրից։ Օգտվելով

այն հանգամանքով, որ գյուղացիները առհասարակ գարնան ժամանակը փողի մեծ պակասություն են զգում և ունենալով միշտ պատրաստի դրամագլուխ, աղա Գուլամյանցներն ամեն տարվա այդ ժամանակին գյուղացիներին կանխիկ վճարում էին ահագին տոկոսներով փողեր և պարտավորեցնում նրանց գրավոր կապակցություններով, որ նրանք աշնանն այգիներից գոյացած խաղողը կամ պատրաստի գինիները ծախեն իրանց վրա։ Որովհետև չկար մի ուրիշ դրամատեր, որ կարողանար մրցել աղա Գուլամյանցների հետ, այս պատճառով վերջինները գյուղացիների հետ վարվում էին այնպես, ինչպես կամենում էին։

Նրանք նախ փոխ տալու ժամանակ դրամագլխի վրա բարդում էին պատկառելի տոկոս, օրինակ, 40—50, շատ անգամ 60—70, ապա գինու կամ խաղողի գինը նշանակում էին իրանց ցանկացածի համեմատ։ Գյուղացին չէր կարող չհամաձայնվել աղա Գուլամյանցների առաջարկած պայմանների հետ, որքան ևս նրանք դժվար իրագործելի և ծանր լինեին։ Գյուղացին ուրիշ ելք չուներ։ Նա կամ պիտի յուր այգու բերքը ծախեր աղա Գուլամյանցներին, կամ թե չէ ինքը պիտի վաճառահաներ Ռուսաստան։ Վերջինն ավելի դժվար իրագործելի էր, քան թե աղա Գուլամյանցների ճնշող պայմաններին ենթարկվելը։ Գինին Ռուսաստան վաճառահանելու համար հարկավոր էր նախ ունենալ տակառներ գնելու, ճանապարհածախք վճարելու և ուրիշ զանազան պատրաստությունների համար ազատ դրամ և երկրորդ, գեթ մի երկու ամիս ազատ ժամանակ Ռուսաստան գնալ գալու համար։ Այս երկուսից ոչ մեկը չուներ գյուղացին. ճարահատյալ ստիպված էր աղա Գուլամյանցների հարստահարող ճանկերում ճնշված մնալ տարին տասներկու ամիս։ Կար մի ուրիշ ճանապարհ գյուղացիների համար, որը կարող էր նրանց ազատ պահել այդ ճանկերից։ Բայց նրանք այնքան տգետ էին, որ այդ ելքի մասին մտածել անգամ չգիտեին։ Գյուղացիները կարող էին, հավաքվելով միասին, ընդհանուր ուժերով իրարու օգնել և իրանց գինիները վաճառահանել առանց աղա Գուլամյանցների միջնորդության։ Սակայն եթե գյուղացիներն այդ հասկանային էլ, դարձյալ ընդունակ չէին կատարելու, այն փոխադարձ ան-

հավատարմության շնորհով, որով հայտնի են առհասարակ գյուղացիները։

Աղա Գուլամյանցների երկրորդ եղբայրն— աղա Աբրահամը, մշտապես յուր ընտանիքով ապրում էր Ռուսաստանում և շատ հազիվ էր պատահում, որ վերադառնար յուր հայրենիքը, այն էլ շատ կարճ ժամանակով։ Ես գոնե մանկությունից սկսած երբեք չէի տեսել նրան։ Ինչպես պատմում էին, աղա Գուլամյանցների մեջ նա ամենախելոքն և ամենաճարպիկն էր առուտուրի մեջ և իբր թե նրա շնորհիվ էր դիզվել նրանց հարստությունը։

Իսկ ամենից կրտսերն էր աղա Մակարը։ Ծառան ինձ պատմեց, թե աղա Մակարը մի ինչ-որ հարսանիքում տեսել է մի խիստ գեղեցիկ օրիորդ և շատ հավանել։ Այն օրվանից նա աշխատում է այդ օրիորդի հետ նշանվել։ Օրիորդի ծնողները թեև շատ աղքատ են, բայց Մակար աղան հավանել է նրան այնչափ, որ այդ պակասությունը նրա աչքին բոլորովին չի երևում։ Սակայն, չնայելով յուր դիրքին, աղա Մակարը չի կարողանում նպատակին հասնել, որովհետև օրիորդը, սիրահարված լինելով քաղաքում մի տղայի հետ, չի ուզում ուրիշ մարդու հետ պսակվել։ Ծնողներն առաջին անգամ հափշտակվելով աղա Մակարի առաջարկությունով, շատ են աշխատում համոզել աղջկան, բայց չեն հաջողում։ Ամեն անգամ, երբ օրիորդի մոտ Մակար աղայի մասին խոսում են, նա երեսը ծածկում է ու լաց լինում, ասելով, թե շուտով կը-ցանկանա մեռնել, քան թե թողնելով յուր սիրած տղային, պսակվել Մակար աղայի հետ։ Հայրը հայհոյում է, ծեծում է, քաղցած է պահում օրերով խեղճ աղջկան, բայց ոչինչ չի օգնում. նա համառում է յուր ասածի վրա և մինչև անգամ մի օր փորձ է արել իրեն թունավորելու։ Այդ օրից մայրը, տեսնելով, որ հնար չկա աղջկան համոզելու, անցել է նրա կողմ, և խնայելով յուր միակ զավակին, նույնպես չի համաձայնվում տալ նրան աղա Մակարին։ Այս հանգամանքն, իբրև արտաքո կարգի երևույթ, Շ... քաղաքի մեջ մեծ աղմուկ է բարձրացրել և շատերն սկսել են ծիծաղել աղա Մակարի վրա, որ նա, յուր հարստությամբ լինելով քաղաքի առաջին մարդկանցից մեկը, չի կարողանում մի աղքատ ընտանիքից մի

աղջիկ ուզել։ Մակար աղան յուր անսահման ինքնասիրությունը վիրավորված զգալով, երդվել է անպատճառ պսակվել այդ աղջկա հետ, որ այդպիսով դադարի քաղաքի մեջ ծիծաղի առարկա լինելուց։ Նա նպատակին հասնելու համար գործ է դնում ամեն տեսակի ներելի և աններելի միջոցներ։ Մեծ դեր է կատարում այդ գործում տեր-Վահակը, որի ձեռքից շատ էին անցել մեր քաղաքում այդպիսի գործեր։ Տեր-Վահակն ամեն մի անհնարին բան յուր խորամանկությունով հնարավոր է դարձնում, չնայելով, որ յուր բռնած գործերի համար տարեն երկու անգամ տեղային առաջնորդը նրան փիլոնից զրկում է։ Սակայն այս անգամ նա երկյուղ չունի և գործում է շատ համարձակ։

Ես այս բոլոր մանրամասնություններին իմ չափազանց հետաքրքիր բնավորության շնորհիվ տեղեկացա նույնիսկ հենց առաջին գիշերը Գալուստ անունով ծառայից, որը, չգիտեմ ինչ էր տեսել ինձանում, հենց առաջին օրից սկսեց խիստ հավատարմությամբ վերաբերվել դեպի ինձ։ Օգտվելով այդ հավատարմությունից, հետաքրքրությանս բավականություն տալու համար, ես փորձեցի հարց ու փորձ անել շուկայում և հետո եկեղեցում մեզ պատահած ծերունու մասին։ Բայց հենց իմ առաջին հարցը ծառային զարմացրեց։ Նա ինձ վրա ձգեց մի կասկածավոր հայացք։ Իսկույն հասկացա, թե այստեղ անշուշտ մի նշանավոր գաղտնիք կա, որ շատախոս Գալուստն անգամ լռություն է ուզում պահել։ Ես առայժմ բարվոք համարեցի լռել...

IV

Առավոտը դեռ ամենքը քնած էին, երբ ես զարթեցի, որ պատրաստվեմ մագազին գնալու։ Գլխավոր գործակատար Գրիգորը սովորականին համեմատ, եկել էր մագազինի բանալիներն աղա Մակարից վերցնելու։ Ինչպես գործնական մարդ, աղա Մակարը շատ վաղ էր զարթնում առավոտները։ Նա բանալիները տվեց Գրիգորին, իսկ ինձ հրամայեց թեյ խմել և սպասել յուր հրամանին։

Որովհետև աղա Գուլամյանցների ընտանիքը, բացի մի քանի արտաքին աննշան փոփոխություններից, դեռ ապրում էր հին, ասիական եղանակով, այս պատճառով կանայք միշտ քաշվում էին տղամարդկանցից։ Պատճառը Մակար աղան էր, որ այս կողմից շատ խիստ էր վարվում և հրամայել էր կանանց օտար տղամարդկանց չերևալ։ Նույնիսկ իրանից, աղա Մակարից քաշվում էին կանայք։ Ծառան պատմում էր, որ մինչև այն օրը աղա Մակարը մի անգամ կարգին չի տեսել յուր եղբոր— աղա Ստեփանի— կնոջ կերպարանքը, չնայելով որ մի քանի տասնյակ տարիներ է, որ մի տան մեջ են ապրում։

Աղա Ստեփանն ուներ երկու աղջիկ— մեկը մոտավորապես 12, մյուսը 14 տարեկան։ Միայն սրանք չէին քաշվում ոչ ոքից, հետևաբար և՛ ինձանից։ Թամարը— մեծ քույրը— թեև այնքան գեղեցիկ չէր, որ տեսնողին հենց առաջին անգամից գրավեր, բայց և այնքան էլ տգեղ չէր, որի վրա անտարբեր աչքով մտիկ տալ լիներ։ Մյուս քույրը— Թագուհին— թեև յուր դեմքի գծագրությամբ շատ չէր զանազանվում Թամարից, բայց նրանից ավելի գրավիչ էր, ծառա Գալուստի կարծիքով։ Սակայն այս — ծառայի կարծիքն էր, իսկ եթե ինձ հարցնեք, Թամարն անհամեմատ ավելի դուրեկան էր, քան Թագուհին։ Նրա երկայն և մի կերպ հյուսած շագանակագույն մազերը, փայլուն և կրակոտ սև աչքերը, սև հոնքերը, ինչ թաքցնեմ, ինձ ավելի էին հիացնում, քան Թագուհու ավելի բարձր և ավելի հպարտ ու նուրբ կազմվածքը։ Թամարն ու Թագուհին այն ժամանակ ուսանում էին Շ... քաղաքի նոր բացված հայոց օրիորդաց ուսումնարանում։ Այս պատճառով նրանք ևս շուտ էին զարթնել, որ պատրաստվեն ուսումնարան գնալու։

Մակար աղան ինձ հրամայեց ուղեկցել նրանց մինչև ուսումնարան և հետո այնտեղից ուղղակի գնալ մագազին։ Ճանապարհին, կարծես, սատանան հենց խթում էր ինձ, որ ես անպատճառ խոսեմ իմ աղայի սիրուն աղջկերանց հետ։ Բայց ինչպես խոսք բանալ— ինքս էլ չէի իմանում։

— Թամար խանում, ձեր ուսումնարանում ի՞նչ են սո-

զորեցնում,— վերջապես, համարձակվեցի արտասանել ա-մոթխածությամբ։

— Հայոց լեզու, ռուսաց լեզու, վայելչագրություն, թվաբանություն,— շարեց կրակոտ Թամարն իրարու հետևից արագ։

— Թանաբանությո՞ւն, ի՞նչ ասել է թանաբանություն, Թամար խանում,— հարցրի ես, դիտմամբ ինձ չհասկացող ձևացնելով, թեև գոնե անունն էլ գիտեի։

— Ախչի, Թագուհի, լիսիմ ե՞ս, թվաբանությունը թանաբանություն ա ասում, հա՛, հա՛, հա՛,— կչկչաց Թամարը, յուր քրոջ ուսին խփելով։

— Ի՞նչ ես ծիծաղում, Թամար խանում, չեմ իմանում, հարցնում եմ էլի,— խոսեցի ես, նեղացած ձևանալով։

— Թանաբանություն չան ասիլ, թվաբանություն կասան, ա՛յ էրվես, էլ քո տերտերից հի՞նչ ես սորվալ, որ թվաբանությունը չես իմանում,— պատասխանեց Թամարը կատարյալ տեղային բարբառով, աջ ձեռքի հինգ մատները բաց անելով և ինձ ճանկ անելով։

— Ի՞նչ տերտեր, Թամար խանում,— կրկին հարցրի ես, կամենալով խոսակցությունը շարունակել։

— Ա՛յ, էն տերտերը, որ ամուիս համար ուզում ա զոռով աղջիկ ուզի։

— Սաղմոս, ավետարան, նարեկ, ճարտասանություն,— շարեցի ես էլ իմ ստացած գիտությունները։

— Բաս շեյթանություն չի սովորացուրա՞լ,— հարցրէց ուրախ Թամարը դարձյալ կչկչալով։

— Ի՞նչ շեյթանություն։

— Ա՛յ, ուրիշների տներում գիշեր-ցերեկ հավայի հաց ուտել, բազարներում պապիրոս ծխել, էլ չեմ իմանում ինչ։

Ես վարժապետիս— տեր-Վահակի— թուլությունները վաղուց գիտեի, այդ պատճառով բոլորովին չզարմացա Թամարի խոսքերի վրա։

Մենք հասանք ուսումնարան։ Ես, գրքերը հանձնելով Թամարին, գնացի մագազին։ Բոլոր գործակատարներն եկել էին, առուտուրն արդեն սկսվել էր։ Ես խսկույն բռնեցի ինձ համար նշանակված տեղը։ Օրը շաբաթ էր։ Շ... քաղաքի վաճառականական խանութներում այդ օրն առուտուրը համեմատաբար շատ կենդանանում է, որովհետև մոտակա գյուղերի բնակիչները քաղաք բերում են զանազան կենսական պիտույքներ — յուղ, պանիր, կաթ, հավ, ձու և այլն, վաճառում են և գոյացած փողերով առնում այն, ինչ որ իրանց հարկավոր է։ Աղա Գուլամյանցների մագազինը, ունենալով գյուղացիներից բազմաթիվ ծանոթներ, այդ օրը մի առանձին կերպարանք էր ստանում։ Ոչ մի մագազին, ոչ մի խանութ շաբաթ օրերն այնպես չէր լեցվում մուշտարիներով։ Գործակատարները շատ կտորներ չափելուց հոգնում էին։

Քիչ ժամանակից հետո Մակար աղան ֆսֆստալով եկավ։ Գործակատարներն, ինչպես սովոր էին, վեր թռան իրանց տեղերից և ամեն մեկը, խորը գլուխ տալով, բևեռվեց յուր տեղում արձանի պես։ Փոքր առ փոքր մուշտարիներն եկան, առուտուրը տաքացավ։ Ես ամեն կերպ աշխատում էի անգործ չմնալ, թեև, գործերին անտեղյակ լինելով, ոչինչ չգիտեի կատարել։ Այն գործակատարը, որի մոտ ես կանգնած էի, պատվիրեց ինձ ծախած ու չափած կտորները ծալել և թղթերի մեջ փաթաթելով, հանձնել մուշտարիներին։ Այդ գործը մի առանձին հմտություն չէր պահանջում. ես մի երկու կտորներ փաթաթելուց հետո իսկույն ընտելացա նրան։ Ես բթամիտ տղա չէի, ունեի քիչ թե շատ ընդունակություն շուտ բան սովորելու, բայց այդ զահրումար «արշին բանացնելը», այսինքն՝ կտորները չափելը մի փոքր դժվար էր, և ես առաջին օրը շատ աշխատեցի, չկարողացա սովորել։ Մոտս կանգնած գործակատարի ձեռների ճարպիկությունը նախանձս շարժում էր։ Նա այնպիսի արագությամբ էր ձեռքում պտտեցնում արշինն, որ ես բոլորովին զարմացած էի։ «Ախ, երբ կլինի, որ ես էլ այդպես չափել կարողանամ»,— մտածում էի, աչքիս տակով մտիկ տալով նրա ձեռներին։

Մակար աղան նույնպես զբաղված էր։ Նա մոտենում էր այս ու այն գործակատարին, մտիկ էր անում, սովորեցնում էր այս այսպես անել, այն այնպես չափել կամ ծախել և այլն։ Երբեմն մոտենում էր մուշտարիներին և նրանց հետ զանազան հանաքներ անելով զբաղեցնում էր, «որ չփախչեն»։ Մի խոսքով, այն օրն ես նրան շատ ուրախ, շարժուն և զվարթ

տեսա։ Պետք է ասած, որ աղա Մակարը մի քանի ինքնուրույն շարժողություններ ուներ, որոնցով կարելի էր իմանալ նրա հոգեկան տրամադրությունը։ Ուրախ և գոհ ժամանակը նա սովորություն ուներ յուր մսալի և կլորիկ երեսի վրա խաղացնել մի տեսակ ինքնուրույն ժպիտ։ Այդ ժամանակ նրա աչքերը կուշտ և ուրախ կատվի աչքերի նման փայլում էին, հոնքերը բարձրանում, հաստլիկ շրթունքները ստեպ-ստեպ բաժանվում իրարուց, և նրանց տակից երևում էին սպիտակ ատամները։ Նա քայլում էր շուտ-շուտ ըմբշամարտության հրապարակի վրա խաղացող փահլևանի նման, թևերը օդի մեջ շարժելով և լրխլխացնելով յուր շաղ մարմինը։ Նրա մարմինն այնքան հաստ էր, որ քիչ էր մնում երկայնությունն ու լայնությունը հավասարվեին։ Նա խոսում էր գործակատարների հետ ուրախ և մեղմ, պարգևելով նրանցից յուրաքանչյուրին մի-մի պայծառ ժպիտ։ Իսկ երբ տխուր էր լինում, խիտ հոնքերը գցում էր ցած, նեղ ճակատը կնճռոտում, աչքերը փոքրացնում, ձեռները մեջքին դնում և գլուխը քաշ գցելով սկսում էր արագ քայլերով ման գալ։ Մարդ եմ ասում, որ կարողանար այդ միջոցներին կանդնել նրա առջև, եթե որևէ սխալ էր գործել այդ ժամանակ։ Մակար աղան բաց կաներ յուր բերանը և տեղային բոլոր փողոցային հիշոցները կթափեր նրա գլխին թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն լեզվով։

Այդ օրը Մակար աղան շատ զվարթ տրամադրության մեջ էր։ Նա խոսում էր ամենքի հետ քաղցրությամբ, մինչև անգամ ես ևս այդ օրն արժանացա նրա առանձին ուշադրության։ Շուտ-շուտ նա մոտենում էր ինձ և տեսնելով, որ ես լավ չեմ ծալում կտորները կամ կարգին չեմ փաթաթում թղթերի մեջ, առնում էր ձեռիցս կտորը և ինքը կապում, քաղցրությամբ սովորեցնելով ինձ։ Մակար աղայի ուրախության պատճառը հայտնի էր. առուտուրն այնքան հաջող էր այդ օրն, որ մենք գյուղացի մուշտարիների ձեռքից հանգստություն չունեինք։

Բայց մի դեպք, որ ինձ համար ծիծաղելի էր և այդ ժամանակ անհասկանալի, փոխեց Մակար աղայի հոգեկան ուրախ տրամադրությունը։ Մի, ինչպես մեզանում ասում էին, «աշխարհ տեսած» գյուղացի, որը մի քանի տարի գյուղում տանուտերի պաշտոն կատարելով և շփվելով չինովնիկների

հետ մի փոքր ինքն էլ մտավորապես տաշվել էր և ռուսերեն էլ կոտրատում էր, հինգ արշին մահուդ էր առնում։ Մահուդը չափելուց հետո գործակատարը կտրեց և ուզում էր ծալել։ Հանկարծ գյուղացին բռնեց նրա ձեռը։

— Պոժոլստա,— ասաց նա,— մի անգամ էլ չափիր մահուդը։

Գործակատարը տրտնջալով երկրորդ անգամ չափեց— ուղիղ դուրս եկավ, և սկսեց գյուղացուն պախարակել նրա կասկածի համար։ Սակայն գյուղացին չբավականացավ։

— Պոժոլստա, գոսպոդին փրկաշիք, տուր ես չափեմ,— ասաց չարաճճի գյուղացին կես ռուսերեն և կես հայերեն լեզվով, կարծես, կամենալով ցույց տալ, թե շատ էլ բռի չինականներից չէ ինքը։

Գործակատարը տվեց նրան արշինն ու մահուդը։ Գյուղացին չափեց։ Դուրս եկավ ուղիղ չորս ու կես արշին։

— Տեսնո՞ւմ ես, հենց ասում ես, «ստուտ ես ասում»։ Աղբեր, էսպես ժուլիկություն կլինի՞, որ դուք եք անում,— ասաց գյուղացին ձայնը բարձրացնելով։

Մակար աղան, հեռվից տեսնելով, իմացավ բանն ինչումն է և մոտեցավ գյուղացուն։

— Հը՛մ, ի՞նչ է, ապեր, ինչի՞ ես ղալմաղալ բարձրացրել։

— Ինչ անեմ, որ ղալմաղալ չանեմ, աղա, գործակատարդ մահուդս պակաս է կտրել, հինգ արշինի տեղ չորս ու կես է տալիս։

— Իմ գործակատարն այդպիսի ղալաթներ չի անիլ մտածիր ինչ ես ասում։

— Աղա՛, չես հավատում, առ ինքդ չափիր։

— Տուր տեսնեմ։

Մակար աղան առավ մահուդն ու արշինը և գործակատարի երեսին մի տեսակ խորհրդավոր հայացք ձգեց։ Վերջինը նույն տեսակ հայացքով պատասխանեց նրան։

— Մեկ, երկու, երեք, չորս, հինգ, սա էլ քեզ փեշքեշ,— ասաց Մակար աղան, չափելով մահուդը և մի քառորդ արշինի չափ էլ հինգ արշինից ավելի ցույց տալով գյուղացուն, մո-

տեցրեց մինչև նրա քիթը։— Չե՞ս ամաչում, որ սուտ ես ասում, ապեր։

Բայց «ապերն» այն ապերներից չէր, որ հեշտությամբ ձեռք քաշեր Մակար աղայից։ Նա կրկին վերցրեց արշինն և սկսեց չափել մահուդը։

— Մեկ, երկու, երեք, չորս, էս էլ քեզ ավելի, աղա, մրափիկ տո՛ւր, չե՞ս ամաչում, որ սուտ ես ասում։

Մակար աղան բարկացավ։ Գյուղացու հանդգնությունը նրան խիստ վիրավորեց։ Բայց այս անգամ զսպեց իրան։

— Ուրեմն դու քո էդ տրեխներով ուզում ես ինձ խաբեբա շինել էլի,— ասաց նա, աչքերը չռելով։

— Տրեխներով եմ, թե շաքմեքով,— էդ քո բանը չէ, ես հախս եմ ուզում։

— Հախիցդ էլ ավելի են տալիս քեզ, էլ ի՞նչ ես բղավում։

— Ավելը քեզ լինի, իմը տուր։

— Ա՛յ տղա, մեկ էլ չափիր,— դարձավ Մակար աղան մահուդ կտրող գործակատարին։

Գործակատարը չափեց։

— Մեկ, երկու, երեք, չորս, այս էլ ուղիղ հինգ, էլ ի՞նչ ես ուզում, ապեր։

— Ինձ տո՛ւր,— ասաց գյուղացին և մի անգամ էլ չափեց մահուդը։— Մեկ, երկու, երեք, չորս, էս էլ դրուստ կես— էլ ի՞նչ ես ուզում, աղա,— ծաղրեց նա։

Մի անգամ էլ Մակար աղան չափեց և դարձյալ դուրս բերեց հինգ արշին ու մի չաթեք։

— Ա՛յ մարդ, այսքանն էլ ավելի է, էլ ի՞նչ ես զահլես տանում։

Մի ծաղս եկավ։ Զարաբախտ մահուդի երեք մարդու ձեռքում երեք զանազան երկայնություն ստանալն ինձ կախարդություն թվաց։ Վերջապես, երկար վիճաբանելուց հետո, Մակար աղան մի կերպ ճանապարհ դրեց գլխացավ գյուղացուն, մահուդը հետ վերցնելով։

Հենց որ վերջինն ոտը մագազինի դռներից դուրս դրեց, Մակար աղայի կատաղությունը սաստկացավ։ Նա բաց արավ յուր հիշողների տոպրակը և սկսեց թափել միմյանց հետևից մահուդ չափող գործակատարի գլխին։

— Տասն անգամ քեզ ասել եմ, իմացիր ի՞նչ մարդու հետ գործ ունիս։ Ամեն մուշտարու հետ չի կարելի այդպես անել։ Աշխարհում միամիտները քիչ չեն, որ դու հետ եկածներին ես ուզում խաբել։ Մի անգամ էլ քո անզգուշությունով ինձ խաթաբալի մեջ կգցես, այն ժամանակ աստված ազատի, խայտառակ կլինիմ ամբողջ քաղաքում։

Լավ էր, որ շուտ-շուտ մուշտարիներ էին ներս մտնում, եթե ոչ գուցե Մակար աղան մինչև երեկո յուր գուռնան փչեր խեղճ գործակատարի ականջներին, որն երկյուղից սառել էր ու պատի տակ բևեռվել։ Իրիկնադեմին մագազինը կողպելու ժամանակ Մակար աղայի դեմքը կրկին փոխվեց, երբ գործակատար Գրիգորը բաց անելով դրամարկղը և նույն օրվա ծախսից առաջացած փողերը համարելով դարսեց նրա առջև։ Նրա աչքերը կրկին սկսեցին փայլել, մի վայրկյանում անհետացավ նրա դեմքի մռայլությունը, ինչպես քամու շարժումից ցրվում են թեթև ամպերն երկնքի երեսից։ Նա միանգամ ևս ինքը համարելով փողերը, ագահությամբ և շտապով դրեց գրպանը, կարծես, վախենալով, որ միգուցե մեկը խլի նրա ձեռքից։

Կիրակի երեկոները Մակար աղան սովորություն ուներ եկեղեցու ջահերից մեկն յուր հաշվով վառել տալ, գանձանակի թասերը, փոխանակ սովորական հինգ կոպեկանոցի, ձգել մի-մի աբասի և, վերջապես, եկեղեցու դռանը կանգնած բոլոր աղքատների ձեռքին մի-մի սև փող դնել։ Այս բոլորը կատարելուց հետո, դռներից դուրս գալով, նա միշտ մի տեսակ խորը հոգոց էր հանում, երեսը խաչակնքելով։ Կարծես նրա ուսերից ընկնում էր մի ահագին ծանրություն։ Ինձ թվում էր, որ նա այդ ժամանակ զգում էր թեթևություն։ Եկեղեցուց մինչև տուն հասնելը նրա դեմքը փայլում էր մի տեսակ պայծառ, ուրախ ժպիտով։ Եվ ինձ համար շատ անգամ հաճելի էր այդ րոպեներում նայել նրա երեսին։ Նրա մշտական թթված դեմքի վրա ժամանակ առ ժամանակ երևացող ուրախ ժպիտը, ճշմարիտն ասած, ինձ շատ քաղցր էր թվում։ Իսկապես շատ էլ մելամաղձոտ մարդ չէր Մակար աղան։ Ընդհակառակը, կարելի էր ասել, ուրախ բնավորություն ուներ։ Բայց այդ հայտնի էր միայն նրա մոտիկ ընկերակիցների շրջանում,

որոնց հետ սովորություն ուներ շատ հաճախ զանազան տեսակ զվարճություններ սարքելու։ Իսկ մագազինում և տանը շատ հազիվ էր պատահում տեսնել նրան հոգեկան ուրախ տրամադրության մեջ և այն էլ այն ժամանակ միայն, երբ առուտուրը հաջող էր անցել կամ մի որևիցե նյութական շահ էր ստացել մի տեղից։ Տանը տխուր ժամանակը նա շատ անգամ օրերով չէր խոսում ոչ ոքի հետ և ոչ ոք էլ չէր կարող նրան խոսեցնել, հավատացած լինելով, որ սրանով ավելի կգրգռեն նրա բարկությունը։ Տնացիներն այնքան հպատակվել էին Մակար աղայի կամակոր բնավորությանը, որ նրա տխուր եղած ժամանակ իրանք ևս տխրում էին, իսկ ուրախ ժամանակ իրանք ևս ուրախանում էին, այնպես որ կարծում էիր ամբողջ ընտանիքի հոգեկան տրամադրությունը կախված լիներ միակ այդ մարդու հոգեկան տրամադրությունից։ Ամենքը Մակար աղայի տուն գալու ժամանակ նայում էին նրա երեսին և նրա դեմքի այս կամ այն արտահայտության համապատասխան սկսում շարժվել, խոսել և այլն։ Միևնույնն անում էին և մագազինի գործակատարները։ Օրինակ, երբ այն օրը գյուղացու մահուդի մասին նա բարկացած գոռում էր գործակատարներից մեկի վրա, ամենքը սկսեցին նույնպես իրանց դեմքերը թթվեցնել։ Ինչո՞ւ։ Որովհետև Մակար աղան չէր սիրում ուրախ ժամանակը տեսնել յուր հպատակներից որևէ մեկի դեմքը թթված կամ, սրա հակառակ, տխուր ժամանակը տեսնել նրանց ուրախ դեմքով։ Սկզբում գործակատարների այս կապկությունն ինձ շատ խորթ էր թվում, բայց հետո փոքր առ փոքր սովորեցի և այնուհետև ինձ համար սովորական բան դարձավ, և ես ամեն անգամ Մակար աղայի երեսին նայելիս անգիտակցաբար դեմքս իսկույն փոխում էի նրա դեմքի արտահայտության համապատասխան։

V

Անցել էր մի քանի ամիս։ Ես շարունակում էի ամեն առավոտ վաղ գնալ մագազին և երեկոյին վերադառնալ Մակար աղայի հետ տուն։ Բավական ընտելացել էի իմ պաշտոնին,

արշինով չափելը, մուշտարիների հետ քաղաքավարությամբ խոսելու, կամ, ինչպես Մակար աղան ասում էր, «նրանց պուչից բռնելու ու բաց չթողնելու» հնարը և ուրիշ իմ պաշտոնին վերաբերյալ հարկավոր բաներն ես բոլորովին սովորել էի։ Գրիգորն ինձ վրա մինչև անգամ զարմացել էր։ Նա գովում էր իմ աշխատասիրությունն և ընդունակությունն ու ասում, թե շատ բաներ, որ ինքը սովորել է տարիների ընթացքում, ես սովորում եմ մի քանի ամիսներում։ Մյուս գործակատարները նույնպես հավանում էին ինձ, նամանավանդ գովում էին իմ արագաշարժությունը, որի պատճառով անունս դրել էին «յորղա խաչի», այսինքն՝ արագընթաց խաչի։ Այս մականունը մինչև այսօր էլ վրես է մնացել, և ես իսկի էլ չեմ վշտանում, որովհետև այդ նշանակում է, որ ես ծույլ մարդ չեմ։

Բայց ամենից ավելի ես աշխատում էի Մակար աղայի ուշադրությունը գրավել ինձ վրա, ձեռք բերել նրա կողմից քիչ թե շատ համակրություն։ Այս նպատակով ես ամեն չանք գործ էի դնում, որ ոչ մի սխալով չգրգռեմ նրա բարկությունը դեպի ինձ, այլ ընդհակառակը, որքան կարելի է սիրելի դառնամ նրա աչքում։ Ես ուսումնասիրում էի նրա բոլոր հատկությունները, որպեսզի նրանց համեմատ վարվեմ նրա հետ։ Ինչ տեսակ խոսակցություն, ինչ տեսակ շարժողություն, մինչև անգամ ինչպես ուտել, խմել, նստել, վեր կենալ, որ նրան հավանելի էին, նույն տեսակ էլ ես էի աշխատում խոսել, շարժվել, նստել, վեր կենալ և այլն։ Ես այս ամենը աչքի առջև ունեի, որովհետև ամեն օր տեսնում էի, թե ինչպես Մակար աղան բարկանում էր գործակատարների վրա ամենաչնչին սխալների համար և շատ անգամ սպառնում արձակել պաշտոնից այն գործակատարին, որը գործել էր այս կամ այն չնչին սխալը։ Օրինակ, մի օր նա մեկին մի քանի ապտակներ տալուց հետո քիչ մնաց, որ դուրս աներ մագազինից միայն նրա համար, որ խեղճը սխալմամբ մահուդի մի կտորը դրել էր չիթերի շարքում։ Մի խոսքով, չափազանց մանրակրկիտ և բարկացկոտ մարդ էր Մակար աղան։ Հարկավոր էր շատ մեծ զգուշություն նրան դուր գալու համար։ Եվ ես ամեն կերպ աշխատում էի զգույշ վարվել։

Այսպիսով փոքր առ փոքր ինձ հաջողվեց Մակար աղայի

ուշադրությունը գրավել ինձ վրա, և օրեցօր հավանելի դառնալ նրա աչքում։ Նա հետզհետե սկսեց ինձ հանձնել այնպիսի գործեր կատարել, որոնք գործակատարի կողմից պահանջում էին քիչ թե շատ հավատարմություն։ Օրինակ, փող էր տալիս այս կամ այն վաճառականի մոտ տանելու կամ փոստ ձգելու, ուղարկում էր զանազան տեղերից ապառիկներ ստանալու և այլն։

Մակար աղան ինձ համար մի ձեռք նոր հագուստ էր առել, որովհետև իմը շափազանց պատառոտված էր։ Նա յուր անվան լայաղ չէր համարում այդ ցնցոտիների մեջ տեսնել ինձ։ Բավական փոխվել էի ես այդ նոր հագուստի մեջ. էլ առաջվա խաչին չէի, ամեն անգամ մագազինում գրած ահագին հայելուն մտիկ տալիս ինքս ինձնով հիանում էի և գարմանում։ «Ահա ինչ ասել է փող, մտածում էի, մարդուս բոլորովին փոխում է, ինչպես էի առաջ և ինչպես եմ այժմ։ Հիմա ո՞վ կարող է ասել, որ ես կոշկակար Մարգսի տղան եմ։ Չէ, ով ինչ ուզում է թող ասե, իսկ ես կասեմ, փողը շատ լավ բան է և նրան ձեռք բերելու համար ամեն տեսակի միջոցներ գործադրել արժե։ Բայց ի՞նչպես ձեռք բերել փող աշխատելու հնարը, ինչպես։ Մակար աղան յուր խելքով չի աշխատում փող, այլ հենց փողի միջոցով։ Ուղիղ էր ասում հայրս, թե «փողը փող է աշխատում, իսկ ղոչաղ տղան գլուխն է քորում»։ Բայց, ինչևիցե, շտապել հարկավոր չէ, ես դեռ փոքր եմ, ժամանակ շատ կա, կարող եմ մի օր ես էլ մարդ դառնալ։

Մակար աղան սովորություն ուներ մագազինում բացված հակերից մնացած թոկերի կտորտանքը, փսիաթները կամ կտրտված արկղները էժան գներով տալ գործակատարներին, որպեսզի սրանք, աշխատանքով ծախելով, շահվեն։ Սովորաբար այս շահը Մակար աղան հանձնում էր այն գործակատարներին, որոնք երկար տարիներ հավատարմաբար ծառայել էին։ Այդ բանը շատ շահավետ էր։ Պատմում էին, որ շատ գործակատարներ այսպիսով զանազան մեծ մագազիններում բավական գումար են վաստակում։ Մակար աղայի մագազինում այդ արտոնությունն ունեին Գրիգորն և մի ուրիշ գործակատար, որն ամենից հինն էր։ Հույս դնել եկամտի այդ աղբյուրի վրա— իմ կողմից ապարդյուն կլիներ։ Բայց և այնպես, պակաս չէի մտածում նրա մասին, և նախանձում էի Գրիգորին ու այն մյուս գործակատարին։ Պետք է ասած, որ այն օրից, երբ ես մտել էի աղա Գուլամյանցների մագազինը, մի անգամ իմ մեջ կենդանություն ստանալով շահասիրության ոգին, օրեցօր քանի գնում՝ այնքան զորեղանում էր, այնպես որ մի քանի ամիսներում ինձ այնտեղ հասցրեց, որ ես պատրաստ էի գիմել ամեն տեսակ միջոցների, միայն թե այդ միջոցներն ինձ համար արդյունավետ հետևանք ունենային։ Շատ անգամ ես պատրաստ էի մինչև անգամ մատնել գործակատարներին Մակար աղայի մոտ, եթե հավատացած լինեի, որ մատնությունը կարող էր ինձ օգուտ բերել գեթ նրանով, որ իմ վարկը քիչ թե շատ բարձրացներ Մակար աղայի աչքում և գրավեր նրա վստահությունը դեպի ինձ։ Ես ամեն օր մտածում էի այս կամ այն գործակատարի մեջ գտնել որևէ անհավատարմության նշույլ դեպի աղա Գուլամյանցների շահերը, հետևում էի նրանց, որպեսզի մի որևիցե պակասություն տեսնեմ և իսկույն հայտնեմ Մակար աղային։ Մի անգամ պատահեց մի այնպիսի դեպք, որն առիթ տվեց ինձ այնուհետև գրավել Մակար աղայի վստահությունը։ Մի առավոտ, չգիտեմ ինչու, Մակար աղան մագազին չեկավ։ Մուշտարիներ էլ չկային։ Այդպիսի ժամանակներում գործակատարները, թողնելով իրենց սովորական տեղերը, խմբվում էին միասին և խոսում, ծիծաղում ու զվարճանում։ Խոսակցության առարկան գլխավորապես լինում էր Մակար աղան, որի մասին գործակատարները հազար տեսակ դատողություններ էին անում, քննելով նրա բնավորությունը, կյանքը, վարվողությունն և այլն։ Մեկը գովում էր Մակար աղայի մի հատկությունը, մյուսը, պախարակելով այդ հատկությունը, ցույց էր տալիս նրա մի ուրիշ լավ կամ վատ հատկությունը, բայց վերջ ի վերջո ամենքն էլ միշտ գալիս էին այն եզրակացության, թե նա շատ էլ համակրելի մարդ չէ։

Ես գործակատարների խոսակցության չէի մասնակցում, այլ մի կողմ քաշված ականջ էի դնում։ Չնայելով, որ մագազինում ոչ ոք չկար, նրանք խոսում էին շատ ցածր ձայնով, գրեթե շշնջյունով։

— Գրիգոր, Մակար աղան ի՞նչպես վերջացրեց յուր հա-

ՀԻՎՆԵՐԸ այն ծերունու հետ,— հարցնում էր գործակատարներից մեկը։

— Ի՞նչ ծերունու։

— Այ, այն Թոթովյանցի, որի հետ քանի ժամանակ է քաշքշվում են երեք եղբայր աղա Գուլամյանցները մուրհակների մասին։

— Ի՞նչպես պիտի վերջացնեին, մուրհակները Մակար աղան հետ առավ և մի կոպեկ էլ նրան չտվեց։ Այժմ խեղճ ծերունին ընկել է աղքատության մեջ և, ինչպես ասում են, մինչև անգամ օրվա մի կտոր շոր հացին էլ կարոտ է մնացել։ Խեղճը կաչաղակ է դառել և գիշեր-ցերեկ, այստեղ-այնտեղ նստած, խոսում է՝ու խոսում, ոչ ոք նրա խոսքին չի հավատում։ Ասում են, կարելի է շատ հոգսից ծերության օրերում խելքից էլ զրկվի։

— Հախն է, ինչո՞ւ էր կյանքի այդ ժամանակը, մի ոտը գերեզմանի մեջ, այնպիսի կեղտոտ բաների մեջ խառնվում։

— Ի՞նչպես կարող էր չխառնվել, քանի որ ամբողջ կյանքն այդպիսի խաբեբայություններով է անցկացրել։ Ասում է. «Կուժը ջրի ճանապարհին կկոտրվի»։ Աթոյանցի տունը քանդեցին քանի կենդանի էր, փողերը ձեռքից խլեցին և փոխարենը կեղծ մուրհակներ տվեցին մեռնելու ժամանակ, այն էլ բարձի տակից գողացան և ողորմելու ընտանիքը ձգեցին մուրացկանության մեջ։

— Ասում են, մեծ գումարի են հասնում Աթոյանցի փոզերը— մոտ մինչև 75 հազարի։

— Այո, 75 հազար։ Մուրհակներ գրողն էլ Ռուսաստանի գործակատար Համբարձումն է եղել,— ասաց Գրիգորը։— Նա ինձ պատմել է, թե ինչպես են ստորագրել այդ մուրհակները աղա Գուլամյանցները և պառավ Թոթովյանցը։

— Հետաքրքրական է,— ասացին բոլորը։

— Մակար աղան վերցրել է գրիչն և, յուր ձեռագիրը փոխելով, ամենքի փոխարեն ինքը ստորագրել է ջոկ-ջոկ ձեռագրով այնպիսի խորամանկությամբ, որ յուր իսկական ձեռքի հետքն անգամ չի կարելի եղել նշմարել։ Աթոյանցն, ինչպես հին վաճառական և չափազանց միամիտ մարդ, տեղեկություն էլ չի ունեցել մուրհակներ գրելու կարգ ու կանոններից։

Համբարձումը հավատացնում էր, որ երբ ինքը մուրհակները մի առ մի տանում էր և տալիս, Աթոյանցը մինչև անգամ նրանց ստորագրությանն էլ մտիկ չէր անում, միշտ կրկնելով, թե աղա Գուլամյանցներն ազնիվ մարդիկ են, նրանք ուրիշի փողին թամահ չեն անիլ, կարելի է նրանց հավատալ առանց մուրհակների էլ։

— Իսկ պառավ Թոթովյանցի մուրհակները ի՞նչ մուրհակներ են, որ նա ստացած է եղել աղա Գուլամյանցներից,— հարցրեց գործակատարներից մեկը։

— Աղա Գուլամյանցները միշտ Աթոյանցից փողերը վերցնելիս են եղել ծերունի Թոթովյանցի միջոցով։ Նա է իբրև միջնորդ գնացել Աթոյանցի մոտ և փողերը ստացել և նրա շնորհիվ է իսկապես Աթոյանցը հավատացել աղա Գուլամյանցներին այդչափ մեծ գումար։ Մի անգամ արդեն մոլորվելով թե Գուլամյանցներն ազնիվ վաճառականներ են և երբեք իրանց թույլ չեն տալ ուրիշի փողերն ուտել, Թոթովյանցն աղա Գուլամյանցների հետ առաջուց մտածած է եղել Աթոյանցից դուրս կորզել բոլոր սրա փողերը և փոխարենը մուրհակներ տալ, պայմանով, որ գումարի մի մասը Գուլամյանցները տան Թոթովյանցին։ Թոթովյանցն իրան հասանելի մասը, նաև յուր սեփական փողերը— ընդամենը երեսուն հազար մանեթ— հանձնել է աղա Գուլամյանցներին տարեկան 20 տոկոսիքով և փոխարենը նրանից մուրհակներ վերցրել։ Երբ ամեն ինչ վերջացել է, այսինքն՝ Աթոյանցը մեռել է, և ծերունին նրա բարձի տակից աղա Գուլամյանցների և յուր անունով 75 հազար մանեթի մուրհակները գողացել է ու տվել աղա Գուլամյանցներին, այն ժամանակ սրանց ոտք ու ձեռքը բոլորովին բացվել են։ Այս անգամ աղա Գուլամյանցները սկսել են մտածել Թոթովյանցի պարտքից մի կերպ ազատվելու մասին։ Բայց Թոթովյանցն այնպիսի պտուղ չի եղել, որից հեշտությամբ ազատվել կարողանային։ Աղա Գուլամյանցները շատ են աշխատել պառավի ձեռքից մի կերպ դուրս բերել իրանց 30 հազար մանեթի մուրհակը, բայց չի հաջողվել. ծերունին նրանց հետ զգուշությամբ է վարվել։ Վերջապես, Մակար աղայի համբերությունը հատել է, և նա մի օր խոսք է

տվել յուր եղբայրներին շուտով, ինչպեսևիցե, Թոթովյանցից վերցնել մուրհակները։

Այդ վճռից հետո Մակար աղան մի օր շուկայում պատահել է Թոթովյանցին, ասել է, թե մտադիր է այն օրն յուր պարտքը վճարել և խնդրել է նրան, որ երեկոյին տանը սպասի, ինքը կբերի փողը և մուրհակները կստանա։ Երեկոյին Մակար աղան վերցնում է իսկապես 30 հազար մանեթ փող և գնում է Թոթովյանցի տունը։ Նա թաշկինակի մեջ կապած փողերը գրպանից հանում է և դնում սեղանի վրա, խնդրելով պառավին, որ մուրհակները հետ տա, փողերն ստանա։ Թոթովյանցի աչքերը փողի կապոցից շլանում են, և նա շվարած, դողդողալով հանում է սնդուկից մուրհակն ու դնում Մակար աղայի առջև։ Օգտվելով ծերունու շփոթությունից և հարմար վայրկյանից, Մակար աղան խլում է մուրհակն ու փողի կապոցն և հայդա... Թոթովյանցը սկսում է գոռալ, թե իրան կողոպտեցին և ուշաթափվելով ընկնում է հատակի վրա։

— Բրավո՛, բրավո՛, Մակար աղա, լավ խորամանկություն է բանեցրել, ես իմ ասածը,— բղավեց գործակատարներից մեկը, հափշտակված Գրիգորի պատմությունով։

— Ահա ինչպես է վերջացրել բանը Մակար աղան ծերունի Թոթովյանցի հետ,— ավարտեց Գրիգորն յուր պատմությունը։ Այժմ խեղճը մնացել է չոր տափի վրա, չգիտե ինչ անե. դատարան գնալ չի կարող, որովհետև ոչինչ փաստ չունի, որ Գուլամյանցների վրա հաստատե յուր պարտքը, իսկ առանց փաստերի ոչ ոք չի հավատում նրա խոսքերին։ Հասարակության մեջ գանգատվելու ժամանակ ամենքը ծիծաղում են նրա վրա և չեն հավատում, որ աղա Գուլամյանցները նրան այդքան փող պարտ լինին և չվճարեն։ Եվ ի՞նչպես հավատան, քանի որ շատ լավ ճանաչում են նրան և գիտեն, որ նա յուր կյանքում այդքան փող երբեք չի ունեցել։ Իսկ ճշմարիտը խոստովանվել— ծերունի Թոթովյանցը նույնպես չի կարող, որովհետև գիտե, որ եթե ճշմարիտը պատմի, թե որտեղից և ինչպես է այդ պարտքը գոյացել աղա Գուլամյանցների վրա— կարող է կյանքի վերջին օրերում խայտառակվել, հայտնել յուր մասնակցությունը Աթոյանցին կողոպտելու մեջ։ Այժմ մարդը մնացել է տանջվելով և գիշեր ու

ցերեկ մաշվում է յուր գաղտնի ցավերից և ոչ ոքի չի կարողանում հայտնել։ Ճարահատյալ ամեն օր գնում է եկեղեցի և աստծուն աղաչում, պաղատում, որ գոնե նա պատժի աղա Գուլամյանցներին։

— Գիտեք ինչ,— մեջ մտավ մի ուրիշ գործակատար,— ինչ որ վաճառականն է անում, նույնը սովորում ենք անել և՛ մենք։ Ո՞ր մեկը մեզանից կարող է պարծենալ, թե ինքը իսկապես ճշմարիտ մարդ է։— Ոչ մեկը։ Ամենքս էլ ոտքից մինչև գլուխ թաթախված ենք կեղտի մեջ։ Օրը հարյուր անգամ սուտ ենք ասում, մուշտարիներին խաբում ենք, կտորները պակաս ենք չափում, արժողությունից ավելի գներով ենք ծախում, մի խոսքով, հազար տեսակ սատանայություններ ենք անում, թե ինչ է մեր աղան պիտի օգտվի։ Բայց աղան սրա փոխարեն ի՞նչ է տալիս մեզ։ Նա մեզ ավելի ու ավելի է սովորեցնում խաբել ու կեղծավորել։ Մինչև այսօր մեզանից ո՞ր մեկն է մաքուր սրտից խոսել Մակար աղայի հետ։ Ամենքս խոսում ենք մի տեսակ, մտածում ենք ուրիշ տեսակ, ամենքս շողոքորթում ենք նրան, փեշերը լիզում դուր գալու համար։ Մեր ստրկությունն այն տեղն է հասել, որ եթե Մակար աղան ասի, թե այսօր ուրբաթ չէ, այլ կիրակի է, մենք կհամաձայնվենք, թե նա սուտ չի ասում։ Եթե ասե, որ արեգակը լույս չունե, մենք կասենք, թե ճշմարիտ է։ Ինչո՞ւ համար ենք այս բոլորն անում։ Ձեզ եմ հարցնում։— Նրա համար, որ մենք նրա քեֆին չդիպչենք, որ դրանով մենք ցույց տանք նրան մեր հնազանդությունը, խոնարհությունը, որպեսզի գրավենք նրա հավատարմությունը։ Միթե այս բոլորը խաբեբայություն չէ՞, միթե պակաս հանցա՞նք է, քան թե աղա Գուլամյանցների և ծերունի Թոթովյանցի ավազակությունը։

Այս ասում էր մի գործակատար, որ ընդամենը մի տարի էր ծառայել աղա Գուլամյանցների մոտ։ Մակար աղան նրան չէր սիրում և շատ վատ էր վարվում հետը։ Ես կարծեցի, որ հենց այս էր պատճառը նրա անբավականության։ Սակայն ես զգում էի նրա բոլոր խոսքերի ճշմարտությունը։ Ես գիտեի, որ իսկապես այն ամենը, ինչ որ նա ասում էր գործակատարների մասին, իրավացի է և արդար։

— Ուրիշ կերպ անկարելի է,— պատասխանեց Գրիգորը

յուր դրութենից դժգոհ գործակատարին։ Եթե չխոնարհվենք, չհնազանդվենք աղա Գուլամյանցներին, եթե նրանց սրտի ուզածը չկատարենք— այս աշխարհում իսկի ապրել չենք կարող։ Նրանք սիրում են կեղծավորություն— մենք էլ պիտի կեղծավորենք, սիրում են շողոքորթություն— մենք էլ պետք է շողոքորթենք, սիրում են սուտ ասել— մենք էլ պիտի սուտ ասենք։ Մի խոսքով, ինչպես նրանք են ուզում— պիտի այնպես էլ պահենք մեզ, եթե ոչ՝ քաղցած կմնանք։ Տեսնո՞ւմ ես, այն օրվանից, երբ դու մի փոքր հակառակություն ցույց տվեցիր Մակար աղային— աչքից ընկար՝ չնայելով, որ դու ճշմարիտն էիր խոսում։ Չէ, եղբայր, հարկավոր է անել այն, ինչ որ քեզանից պահանջում են աղա Գուլամյանցները և ոչ թե այն, ինչ որ դու ես ցանկանում։ Ուրիշ ճար չկա, եթե ուզում ես նրանց աչքում հավանելի լինել։ Ես էլ առաջ շատ էի նեղանում իմ պաշտոնից և շատ անգամ ինքս ինձ ասում էի, ինչ հարկավոր է սուտ խոսել, կեղծավորել, երբ որ առանց այն կարելի է վարվել, բայց հետո տեսա, որ չէ, անկարելի է։ Այժմ ինձ համար միևնույն է, իսկի չեմ էլ մտածում, թե օրական քանի անգամ եմ սուտ ասում և քանի անգամ խաբում մարդկանց, որովհետև հենց իմ ամբողջ օրվա խոսակցությունը սուտ է։ Եվ ինչո՞ւ չատեմ։ Ինձանից խում սրանով մի բան չի պակասում։ Այսպես չեմ խոսիլ, այնպես կխոսեմ, այս չեմ ասիլ, այն կասեմ, այս բոլորն, իմ կարծիքով, միևնույնն է, միայն հարկավոր է աչքի առջև ունենալ, թե որն է շահավետ գրպանի համար։ Աղա Գուլամյանցներն եթե իրանց ամբողջ կյանքը սուտ ասելով, կեղծավորելով, խաբելով և սրա ու նրա ոտները լզելով չանցկացնեին, հավատացնում եմ ձեզ, այսօր այնքան հարստության տեր չէին կարող լինել։ Փողը, եղբայր, ամեն բան ուժով ստիպում է մարդուս անել։ Այսպես չէ՞։

Բոլոր գործակատարները դրական պատասխան տվեցին Գրիգորին, հավանելով նրա ասածները, բացի այն մեկից, որ յուր պաշտոնից անբավական էր։ Ինչ վերաբերվում էր ինձ, համաձայն էի, որ մենք գործակատարներս, թաղված ենք այդ բոլոր կեղտոտությունների մեջ։ Բայց ինչպես անել. չհամաձայնվել Գրիգորի հետ, որ մի կտոր հացի տեր լինելու համար

անհրաժեշտ է լինել Մակար աղայի առջև կեղծավոր և շողոքորթ— չէի կարող, քանի որ արդեն ճանաչում էի վերջինին և գիտեի, որ առանց սրանց անհնար է նրա մոտ երկար մնալ։ Իսկ ես ուզում էի նրա մոտ ծառայել, աչքի առջև ունենալով իմ ապագան։ Ես չէի ուզում հորս պես աղքատության մեջ ապրել։ Ես ցանկանում էի իմ ապագան նյութապես ապահովված տեսնել։ Ո՞վ է աղա Գուլամյանցներին այսօր մեղադրում, ո՞վ է նրանց պախարակում Աթոյանցի փողերն ուտելու մասին։— Ոչ ոք. ընդհակառակը, ամենքն էլ նրան պատվում են, հարգում են, փողոցով անցնելիս գլուխ են տալիս հեռվից։ Իսկ իրանք՝ հպարտ ու գոռոզ՝ ոչ ոքի հետ չեն ուզում խոսել։ Եվ ի՞նչ կարիք ունին ուշադրություն դարձնելու, քանի որ առանց ուրիշների էլ կարողանում են ապրել։

— Այսքան տարի ծառայելով,— շարունակեց Գրիգորը,— ես, վերջապես, հասկացել եմ, որ վաճառականության մեջ մարդ չի կարող մնալ ազնիվ, մաքուր, ճշմարտախոս։ Չի կարող, որովհետև վաճառականությունն այդպիսի մարդկանց չի սիրում։ Եթե կամենում եք, ես իսկի չեմ էլ մեղադրում վաճառականին, երբ նա խորամանկություն է անում, ստախոսում է, խաբում է, որովհետև դիտեմ, որ նա կամա ակամա ստիպված է այդպես անել։ Անիրավ ոսկին ամեն բան մարդուս մոռացնել է տալիս, ամեն բան — խիղճ, հոգի, հավատ։ Բաց արեք աչքերդ և լավ մտիկ արեք ձեր շուրջը։ Տեսեք ո՞վ է կարող պարծենալ, թե ազնիվ, առաքինի և ճշմարտասեր մարդ է։ Ոչ ոք, ամենքն իրարու խաբում են, կողոպտում են։ Աթոյանցին խաբում է ու կողոպտում Թոթովյանցը, աղա Գուլամյանցները խաբում են ու կողոպտում Թոթովյանցներին, վաղը մի ուրիշը դուրս կգա — նույնը կանե աղա Գուլամյանցների հետ և այսպես կշարունակվի անվերջ։ Ես ինքս, եթե դեպք պատահի, եթե ձեռքս ուրիշի փողեր ընկնեն, առանց խղճալու կկլանեմ, և այս բոլորովին խղճիս դեմ չեմ համարիլ, որովհետև հավատացած եմ, որ այդ ուրիշն էլ անշուշտ մեկ մարդուց գողացած է այդ փողերը։

Գրիգորը չկարողացավ շարունակել յուր խոսքը, որովհե-

ու այդ ժամանակ ներս մտավ մի մուշտարի։ Մենք ցրվեցինք մեր տեղերը։

Այս խոսակցությունն ինձ համար խիստ հետաքրքրական էր։ Շատ ափսոսեցի, որ նա ընդհատվեց։ Նա ինձ համար հետաքրքրական էր նախ, որ ես իմացա այն ծերունու գաղտնիքը, երկրորդ, որ առիթ էր տալիս ինձ ծանոթանալու գործակատարների հետ։

Երեկոյին, սովորականին համեմատ, ես աղա Գուլամյանցների տանն էի։ Մակար աղան յուր առանձնատեսակությունն էր։ Սատանան հենց բոթում էր ինձ, որ անպատճառ գնամ նրա մոտ և պատմեմ գործակատարների այն օրվա խոսակցությունն և ցույց տամ իմ հավատարմությունը։ Մի քանի րոպե ես տատանման մեջ էի. «գնալ, թե չգնալ»։ Մի կողմից չէի ուզում գնալ, որովհետև վախենում էի, որ Մակար աղան իմ խոսքերին չհավատա, և մի փոքր էլ խիղճս թույլ չէր տալիս, մյուս կողմից, ցանկանում էի գնալ, մտաբերելով, որ ինձ վարձելու օրը Մակար աղան ինքը պատվիրել էր հայտնել իրան այն ամենը, ինչ որ կլսեմ ուրիշներից յուր վերաբերմամբ։

Մինչ ես տատանվում էի, Մակար աղան ծառայի միջոցով կանչեց ինձ յուր մոտ։ Վերջին ժամանակները նա սովորություն էր արել երբեմն ինձ կանչել յուր մոտ և զանազան բաների մասին հարց ու փորձ անել։ Լինելով կասկածավոր բնավորության տեր, նա ուզում էր, որ ամեն բան իրան հայտնի լինի և այս պատճառով ինձանից շատ անգամ այնպիսի չնչին բաների մասին էր տեղեկություններ պահանջում, որ ես զարմանում էի։ Օրինակ, նա հարցնում էր, թե գիշերներն այս կամ այն ծառան ինչ է անում յուր սենյակում, վաղ է պառկում քնելու թե ուշ, քանի բաժակ թեյ է խմում, ինչքան անգամ է օրը հաց ուտում և այլ այսպիսի մանր-մունր բաներ։

Մակար աղան թեյ էր խմում։ Ես գլուխ տվեցի նրան և կանգնեցի դռների մոտ, ձեռներս դաբսելով կրծքիս։

— Հըմ, ի՞նչ կա, ինչ չկա, պարոն Խաչի։

Վերջին ժամանակները Մակար աղան սովորություն էր արել ուրախ ժամանակին ինձ հետ խոսելիս «պարոնը» կրպցընել իմ անվանը մի տեսակ մեղմ հեգնությամբ։

— Ձեր հրամանոց առողջությունը, Մակար աղա,— պատասխանեցի ես, գլուխս համեստությամբ խոնարհեցնելով։

— Այսօր ես մինչև երեկո մագազինում չեմ եղել, ի՞նչ են արել գործակատարները։

— Ինչ պետք է անեին, մի՞թե չգիտեք, թե ձեր հրամանքը մագազինում չեղած ժամանակը ինչ են անում նրանք։

— Հըմ, խոսիր տեսնենք...

— Մի այնպիսի բան չկա։ Ուզում եմ միայն ասել, որ երբ դուք մագազինում չեք լինում, առհասարակ գործակատարները շատ էլ խելոք չեն պահում իրանց,— պատասխանեցի ես, գլուխս ավելի քաշ դցելով, իբրև թե խիստ ամաչում եմ Մակար աղայից։

— Գիտեմ ինչպես են պահում իրանց։ Երբ ես այնտեղ չեմ լինում, հավաքվում են միասին և ոչխարները ծռած սովբաթ անում, իսկ մուշտարիները գալիս են ու դատարկ հետ գնում։

— Դատողություններ են անում, աղա, խելքներին զուռ են տալիս։

— Հա՞ա, հապա ասա տեսնենք, ինչի՞ մասին են դատողություններ անում,— ասաց Մակար աղան տեղից բարձրանալով։

Ես մի փոքր հետ քաշվեցի, ցույց տալու համար, թե իբր վախենում եմ նրանից։

— Ձեր գործերի մասին էին խոսում, աղա...

Մակար աղայի հետաքրքրությունը գրգռվեց։ Ես միամիտ ձևացա. իբրև թե իմ ասածին ինքս այնքան էլ նշանակություն չեմ տալիս։

— Ի՞նչ են խոսում իմ վերաբերմամբ, պատմիր շուտով,— կրկնեց նա։

— Ասում են, դուք լավ մարդ եք, խաբող, սուտ ասող չեք, է՛հ, ինչ գիտեմ, ուրիշ այսպիսի շատ բաներ են ասում։

— Հանաք մի արա, այ տղա,— գոռաց Մակար աղան տաքացած։

— Ասում են, թե դուք ձեզանից մեծերին և ուժեղներին կեղծավորում եք ու շողոքորթում, իսկ փոքրերի առջև հպարտ ու գոռող եք պահում ձեզ։ Թե դուք գողությենով և խաբեբայությենով եք այդքան հարստություն դիզել։ Գրիգորը պատ-

մում էր, թե դուք իբրև թե խաբել եք ինչ-որ Աթոյանց ազգանունով վաճառականի, նրա 75 հազար մանեթը կուլ եք տվել, հետո խաբել եք ծերունի Թոթովյանցին և նրա 30 հազար մանեթը կերել։ Այսպիսի և սրա նման շատ բաներ էին ասում, Մակար աղա։ Ես չէի ուզում լսել նրանց, որովհետև ինձ շատ վատ էր թվում, որ իմ աղայիս մասին ստեր են հընարում և այն էլ այնպիսի մարդիկ, որոնք նրա հացով են ապրում։ Բայց ի՞նչ պիտի անեի. մագազինից դուրս գալ չէի կարող, նրանք խոսում էին, ես էլ ակամա լսում էի։

Մակար աղան բարկությունից գունատվեց։ Ես իսկապես սկսեցի նրանից վախենալ։ Բայց շուտով էլի ուղղեցի ինձ։

— Հետո՞, էլ ի՞նչ էին խոսում շան զարմերը։

— Է՛հ, Մակար աղա, շատ բաներ կասեն, բայց ո՞վ է հավատում նրանց ասածներին։

— Հավատում են թե չեն հավատում, քո բանը չէ։ Դու պատասխանիր այն, ինչ որ ես եմ քեզանից հարցնում։ Ասա տեսնեմ, է՞լ ինչ էին խոսում,— շարունակեց Մակար աղան կատաղած, այնպես որ ես սկսեցի փոշմանել իմ ասածների վրա։

— Միայն ձեր մասին չէին խոսում, այլ բոլոր վաճառականների մասին։ Ասում էին թե նրանք ամենքն էլ սուտ ասողներ, խաբողներ, գողեր են, թե նրանց մոտ ծառայողներն էլ պետք է այդպես լինեն, որովհետև ուրիշ կերպ չեն կարող լինել։

— Այդ ո՞ր գործակատարն էր ասում։

Ես հիշեցի Գրիգորի և մեկ էլ յուր պաշտոնից անբավական գործակատարի անունները։

— Այդ էլ իմ լավության պտուղը... փողոցներում ոտաբոբիկ լակոտներ էին, հավաքել եմ, բերել, մի կտոր հացի տեր շինել, այժմ ինձ էլ չեն հավանում։ Արի այժմ աղքատներին ողորմություն արա, խղճա նրանց վրա, Մակար։

— Գրիգորն ասում էր, թե մինչև անգամ ինքն էլ պատրաստ է ուրիշի փողերն ուտել, եթե ձեռքն ընկնի։ Նա այսպիսի մի բան էլ ասաց. «Գողից գողություն անելը մեղք չէ»։

Այս անգամ Մակար աղայի կատաղությունը սահմանից

դուրս եկավ։ Նա սկսեց արագ-արագ քայլել։ Իմ խոսքերն ասեղների նման ցցվում էին նրա սրտի մեջ։

— Լա՛վ, գնա՛,— դարձավ նա, վերջապես, ինձ։

— Բայց, աղա, մի բան եմ խնդրում ձեզանից։

— Ի՞նչ։

— Որ դուք գործակատարներին չասեք, թե ես եմ այս ամենը ձեզ պատմել, առանց այն էլ նրանք ինձ հետ լավ չեն վարվում։ Ինձ ծեծելով կսպանեն։ Խեղճ մարդու տղա եմ, մտել եմ ձեզ մոտ մի կտոր հաց ուտելու, պարտավոր եմ կիրածիս փոխարեն ձեզ հավատարմությամբ ծառայելու։ Ես պարտքս եմ կատարում։

— Լավ է, դուրս եկ, կորի՛ր։

Ես, իհարկե, դուրս եկա իսկույն, բայց չկորա, մտա սենյակս։

Հետևյալ առավոտ Մակար աղան վռնդեց Գրիգորին և այն գործակատարին, որ յուր դրությունից անբավական էր։

Վերջինի պաշտոնը Մակար աղան հանձնեց ինձ։

VI

Արդեն երեք տարի էր, որ ես ծառայում էի աղա Գուլամյանցների մագազինում։ Գործերս վատ չէին գնում։ Ես արդեն դրավել էի Մակար աղայի հավատարմությունն և օրեցօր ավելի ու ավելի բարձրանում էի նրա աչքում։ Մանրավաճառ Թորոսի խոսքերի նշանակությունը փոքր առ փոքր սկսում էի հասկանալ, նրա տված խրատն ինձ օգնում էր։ Այնտեղ, ուր հարկավոր էր խորամանկություն— ես խորամանկ էի, ուր հարկավոր էր միամտություն— ես միամիտ էի։ Ուր հարկավոր էր կեղծավորություն և շողոքորթություն— ես կեղծավորող և շողոքորթող էի, ինչպես պարսիկ, ուր հարկավոր էր ստախոսություն— ես սուտ էի ասում, ինչպես մի հմայող։ Մի խոսքով, ես հնազանդվում էի ամեն մի դեպքում հանգամանքներին և իմ ամեն մի քայլն անում էի վերջիններիր համեմատ, միայն թե կարողանայի առաջանալ Մակար աղայի մոտ, միայն թե ձեռք բերեի նրա վստահությունը։

Հասել էին այն ուրախ օրերն, երբ Մակար աղան պիտի ամուսնանար։ Մի քանի ամիս առաջ արդեն սկսել էինք պատրաստություններ տեսնել այդ նշանավոր օրվա համար։ Այդ օրերն ես այնքան զբաղված էի, որ, ինչպես ասում են, քիթ սրբելու ժամանակ չունեի։ Իմ գործերը շատացել էին թե՛ տանը և թե՛ մագազինում։ Ամենքն ինձ էին հանձնարարություններ անում, և ես կատարելապես թևեր էի առել և թռչում էի ամեն կողմ, ուր ուղարկում էին ինձ։ «Խաչի, գնա բազար, այսինչ բանը գնիր»։— «Այս րոպեիս, աղա», և Խաչին մի վայրկյանում անհետանում էր աղայի հրամանն անհապաղ կատարելու։ «Խաչի, վազ տուր մագազինից այսինչ կտորը բեր»։— Մակար աղան դեռ խոսքը չավարտած, Խաչին արդեն ճանապարհ է ընկել։

Այդ միջոցներին Մակար աղան գտնվում էր ուրախ տրամադրության մեջ։ Նա ամենքի հետ քաղցրությամբ էր վարվում, ամենքի հետ խոսում էր կակղությամբ, նամանավանդ ինձ հետ։ Մյուս գործակատարների դեպի ինձ ունեցած նախանձին չափ չկար. ես դառել էի մի փուշ և ծակում էի նրանց աչքերը։ Ամենքը նախանձում էին մանավանդ նրա համար, որ ես աղա Գուլամյանցների ընտանիքում ընդունվում էի ինչպես նրա անդամներից մեկը, իսկ նրանք ամենքը մի անգամ հազիվ ոտք էին դնում այնտեղ։

Մակար աղան պիտի պսակվեր Շ... քաղաքի մի հարուստ դրամատիրոջ աղջկա հետ։ Այն աղքատ աղջիկը, որի հետ նա առաջ ուզում էր նշանվել և որի մասին միջնորդություն էր անում տեր-Վահանը, մեռել էր։

Թե ինչ էր Մակար աղայի հարսանիքը, որքան շքեղ էր և ինչքան ծախս եղավ— այս մասին ես ավելորդ եմ համարում գրել իմ հիշատակարանում։ Բավական է միայն ասել, որ խրախճանքը շարունակվեց ուղիղ հինգ օր, և քաղաքում մարդ չմնաց, որ չհրավիրվեր հարսանիք։ Մի օր Մակար աղան ճաշկերույթ տվեց առանձնապես հասարակության բարձր դասակարգին, երկրորդ օրը— միջին և ստորին դասակարգերին, երրորդ օրը— ռուսներին, չորրորդ օրը— յուր ընկերակիցներին։ Եվ այդ հինգ օրվա ընթացքում ես այնքան աշխատել էի, այնքան այս ու այն կողմն էի վազվզել, որ հետո երկու օր հոգնածությունից սենյակից դուրս գալ չկարողացա։

Այսպես թե այնպես, ինձ համար խիստ ուրախ անցան հարսանիքի օրերը։ Ես մինչև անգամ զգում էի ինձ հարսանիքի հերոսներից մեկը։ Մի անձն, որով իմ ուշք ու միտքն այդ օրերը չափազանց զբաղված էին— Թամարն էր, որի հետ ամեն օր և ամեն ժամ առիթ ունեի խոսալու։ Թամարը, հասակ առնելով, կրկնապատիկ գեղեցկացել էր։ Մարդ եմ ասում, այն էլ ինձ նման 20—21 տարեկան թարմ երիտասարդ, որ անտարբեր լիներ։ Նայելով նրա առույգ և կարմրախայտ թշերին, սև ու կրակոտ աչքերին, նայելով շագանակագույն խիտ մազերին, որոնք թափվելով նրա բարձր ուսերի վրա, հասնում էին մինչև մանիշակագույն ատլասյա հագստի վրա կապած ոսկե գոտին, նայելով նրա գեղեցիկ ոսկե մեդալյոնով զարդարված բարձր կրծքին — խոստովանում եմ, ամեն անգամ սիրտս ժամացույցի նման չխչխկում էր։ Ես հազիվ-հազ կարողանում էի զսպել ինձ, որպեսզի չհարձակվեմ նրա վրեն և չգրկեմ։

Հարսանիքի օրերը կանանց դասակարգը, ինչպես ընդունված էր տեղական հասարակության մեջ, չէր խառնվում տղամարդկանց հետ։ Նա, բոլորովին անջատված, շարունակում էր զվարճությունը առանձին սենյակներում, ուր ոչ մի տղամարդ չէր համարձակվիլ ոտք դնել։ Սակայն աղա Գուլամյանցների ընտանիքի վստահությունն ես այնքան գրավել էի, որ առանց որևէ արգելքի, համարձակորեն, իբրև մեկն ընտանիքի անդամներից, մտնում էի կանանց դասի մեջ։ Օգտվելով այս արտոնությունից, որ կրկնապատկում էր մյուս գործակատարների նախանձն, ես ամեն րոպե կարողանում էի հանդիպել Թամարին։ Պետք է ասամ, որ Թամարը չնայելով մեր դիրքերի տարբերությանը, բոլորովին գոռոզ չէր նայում ինձ վրա։ Իսկ ես, իհարկե, օգուտ քաղելով նրա պարզ բնավորությունից, ստեպ-ստեպ մոտենում էի նրան և խոսեցնում, ամենաչնչին առիթներ գտնելով։

Երբ մտիկ էի անում նրա գրավիչ դեմքին, իմ գլխում հազար տեսակի մտքեր էին ծագում, իմ ֆանտազիան զրգռվում էր, և ես դարձյալ իմ երևակայության մեջ սկսում էի կառու-

ցանել օդային ամրոցներ։ «Երանի այն բախտավոր մարդուն, մտածում էի, որը պիտի դառնա քո տերը, Թամար։ Բայց ո՞վ պետք է լինի այդ մարդը։ Իհարկե, քաղաքի հարուստներից մեկը կամ ծերացած և մազերը սպիտակած մի տգեղ դրամատեր, որը կտանի քեզ նման գեղեցիկ և թարմ օրիորդին, որպեսզի մի քանի տարում քեզ էլ իրան պես պառավեցնի։ Աչքոսկի, ոսկի, ինչե՞ր չես անում դու, քո ձեռքովդ ի՞նչ հնարներ չեն անցնում։ Ինչ կլիներ, որ ես էլ ունենայի քեզ, որ այսօր կարողանայի համարձակորեն մտածել Թամարի նման օրիորդի մասին։ Բայց մի՞թե առանց հարստության չի կարելի հույս դնել, միթե աղա Գուլամյանցները, եթե ուզենան, չե՞ն կարող ինձ բախտավորեցնել։ Միթե, եթե ուզենան, չե՞ն կարող ինձ մի օրում հարստացնել։ Ի՞նչ կպակասի նրանց, եթե իրանց ահագին հարստության մի մասը տան ինձ և Թամարին էլ պսակեն ինձ հետ, ասելով. «տար, Խաչի, ապրիր և գվարճացիր»։ Այո, եթե ուզենան, կարող են անել, իսկ ես Թամարի համար ուրիշներից վատ ամուսին չէի լինի։ Փառք աստուծո, ի՞նչ բան է պակաս ինձ, բացի հարստութենից։ Ինքս ջահել, խելոք տղա, դեմքով գեղեցիկ, մարմնով առողջ, գործ կատարելում աշխույժ և ժիր։ Թող ինձ մի գումար տան և կտեսնեն, թե ես ինչպես կշահեցնեմ նրան և ինչպիսի վաճառական կդառնամ։ Մի տարում կկրկնապատկեմ, կեռապատկեմ այդ գումարը, կգրավեմ Ռուսաստանի բոլոր վաճառականների հավատարմությունն և, մեծ քանակությամբ նրանցից ապառիկ ապրանքներ բերելով այստեղ, օրեցօր կընդարձակեմ իմ առուտուրի շրջանն և այնուհետև թող մի հատ վաճառական դուրս գա և ինձ հետ համարձակվի մրցել։ Կըփախցնեմ մի քանի տարում վաճառականական ասպարեզից նրանց ամենքին և ինքս միայն կմնամ այնտեղ։ Իսկ Թամարը կապրի ինչպես թագուհի...

Այս երևակայությունից հետո, սթափվելով, սկսում էի մտածել, թե հիրավի չի՞ կարելի արդյոք մի կերպ Թամարին տիրանալ։ Չկա՞ն, արդյոք, այնպիսի խորամանկություններ, որոնց միջոցով հնար լիներ այդ թեև դժվար, բայց ոչ անիրագործելի նպատակին հասնել։

Իմ գլուխն ողորմելի զլուխներից չէր։ Ես հավատացած

էի, որ նա ընդունակ է ստեղծել հազար տեսակի ծրագրներ իմ հանդուգն ցանկությանը կատարումն տալու համար։ Բայց ժամանակը շատ կարճ էր։ Թամարի 17 տարին լրացած էր. նրա մարդու գնալու ժամանակը հասել էր, այսօր կամ վաղը կարող էր մեկը նշանվել նրա հետ։ Արդեն քաղաքում խոսում էին նրա մասին։ Այս միտքը սկսեց ինձ խիստ զբաղեցնել, և ես գիշեր-ցերեկ տանջվում էի։ Աշխատում էի հնարել զանազան մեքենայություններ, որոնց միջոցով կարողանայի կողմնակի կերպով արգելել Թամարի մարդու գնալը, մինչև որ տեսնեի թե իմ վերջն աղա Գուլամյանների մոտ ինչպես է լինում։ Հարսանիքից հետո, երբ Թամարը բոլորովին գրավել էր իմ սիրտը, ես բոպե անգամ չէի դադարում նրա մասին մըտածելուց։ Վերջապես, գլխումս հղացավ մի միտք, որ և ըսկըսեց ընդդիմադրել իմ հուսահատության։

Հանդուգն և հանցավոր էր այդ միտքը. իմ կողմից հարկավոր էր մեծ զգուշություն և համարձակություն նրան իրագործելու համար, սակայն ինձ համար այդ միևնույնն էր։ Ես երբեք ինձ նեղություն չտվեցի մտածելու, թե որքան չար և սատանայական էր այդ միտքը, ըստ որում ես արդեն հասել էի այն աստիճանին, որ իմ նպատակն արդարացնում էր ամեն տեսակի միջոցներ, թեկուզ այդ միջոցները լինեին ստոր և անազնիվ։ Ես տեսնում էի, որ ուղիղ ճանապարհով դժվար է հասնել այն նպատակին, որի իրագործումը մի անգամ ընդմիշտ պիտի ապահովեր իմ կյանքը, ուրեմն, ինչո՞ւ չգնալ ծուռ ճանապարհով, քանի որ կարող եմ հասնել բախտավոր և նախանձելի ապագայի։ Գործի՛ր, Խաչի...

VII

Անցան մի քանի ամիսներ հիշյալ միտքն իմ մեջ հղանալու օրից։ Մի օր Մակար աղան ինձ կանչեց դարձյալ յուր առանձնասենյակը։

— Խաչի, —դարձավ նա ինձ,— դու պիտի վաղը ճանապարհ ընկնես Բաքու և այսուհետև կծառայես այնտեղ, իհարկե, էլի մեր գործերում։ Կգնա՞ս։

— Ինչպես կարող եմ համարձակվել ձեր հրամանը չկատարելու. թեկուզ դժոխք էլ ուղարկեք, դարձյալ պատրաստ եմ գնալու, միայն թե ձեր հրամանը կատարվի։

— Շատ ապրես, որդի, վատ ադա չես, խաչի, և հենց դրա համար էլ ուզում եմ քեզ և ոչ ուրիշին ուղարկել։ Դու այնտեղ կլինես իմ եղբոր— Աբրահամ աղայի— ձեռքի տակ և պիտի կառավարես այնտեղի բոլոր մեր գործերը. մյուս գործակատարները քո ձեռքի տակ կլինեն։ Լսո՞ւմ ես։

— Շատ շնորհակալ եմ, աստված ձեր հարստությունը հազար անգամ ավելացնի։

— Այդ պաշտոնը մեծ պաշտոն է հա, դու պետք է շատ զգույշ լինես նրանում։ Բաքվի գործերն այստեղի գործերի նման չեն։ Դու պետք է կառավարես նավթային հանքերը, ֆոտոգենի գործարանը, գրասենյակն և, բացի դրանից, մեր նոր շինություններին էլ հսկես։

— Կաշխատեմ ամոթալի չմնալ։

— Մտիկ արա, լավ ծառայիր. եղբայրս էլ ինձ նման բարկացող և խստաբարո մարդ է, նա էլ, ինչպես ես, չի սիրում յուր ասածը կրկնել։ Դու պիտի այնպես վարվես նրա հետ, որ նրան չբարկացնես, եթե ոչ քեզ մի օր անգամ չի պահիլ։ Դու չպիտի մագի չափ նրա հրամաններից շեղվես։ Լսո՞ւմ ես։

— Ես կլինեմ Աբրահամ աղայի ստրուկը, ինչպես նա կհրամայի, այնպես էլ կվարվեմ։ Ես ձեր ծառան եմ, ձեր հացն եմ ուտում. ստրուկն ի՞նչ իրավունք ունի յուր տիրոջ հրամաններից շեղվել։

Մակար աղան մի քանի րոպե լռեց, մտածողության մեջ ընկնելով։

— Խաչի,— շարունակեց նա հանկարծ, կարծես, ծանր քնից սթափվելով։

— Հրամայեցե՛ք, աղա։

— Դու ինձ շա՞տ ես սիրում։

— Ավելի, քան թե ծնողներիս, ես վերև աստծուն եմ պաշտում, ներքև՝ ձեզ։

— Ինչ որ հրամայեմ կկատարե՞ս։

— Հրամայեցեք խեղդվել — նույն րոպեին կխեղդվեմ,

հրամայեցեք ջուրն ընկնել— նույն րոպեին ջուրը կընկնեմ, միայն թե ձեր հրամանը կատարվի։

— Մի բան հարցնեմ, ճշմարիտը կպատասխանես։

— Աղա, այդ ինչ խոսք է, որ դուք հրամայում եք։ Մինթե երբևիցե ես ձեր ասածներին սուտ պատասխաններ տվե՞լ եմ, որ դուք այժմ կասկածում եք։

— Շատ լավ. բայց վախենում եմ, որ այս անգամ սուտ ասես։

— Էլ ինչ ասեմ, աղա, հարցրեք ու փորձեք։

— Խաչի, դու մեր Թամարի հետ խոսո՞ւմ ես։

— Ինչո՞ւ չէ, չորս տարի ձեր տանը ծառայում եմ, ինչպես կարելի էր, որ այդքան ժամանակ նրա հետ չխոսեի։

— Ի՞նչ ես խոսում նրա հետ։

— Ի՞նչ պետք է խոսի ծառան խանումի հետ. նա ինձ հրամաններ և պատվերներ է տալիս, իսկ ես կատարում եմ։

— Բացի դրանից, ձեր մեջ ուրիշ խոսակցություն չի՞ եղել։

— Ծառայի և նրա խանումի մեջ չգիտեմ էլ ուրիշ ինչ խոսակցություն կարող է լինել։

— Շուտ-շո՞ւտ ես տեսնվել Թամարի հետ։

— Տեսնվել ենք երբ որ նրան հարկավոր է եղել ինձ մի հրաման տալու։

— Այդ ժամանակները նա քեզ հետ երկա՞ր է խոսել, թե՞ միայն հրամաններ է տվել։

— Բացի հրամաններից ուրիշ ոչինչ բանի մասին ինձ հետ չի խոսել։

— Ճշմարի՞տն ես ասում։

— Թող աստուծո կրակն իմ գլխին թափվի, եթե ես ձեր առջև սուտ եմ խոսում։ Բայց, աղա, ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ համար եք այդպիսի հարցեր տալիս ինձ։

— Ոչինչ, այդ քո գործը չէ։

Մակար աղան լռեց և կրկին մտածողության մեջ ընկավ։ Նա ձեռները դարսեց մեջքին, ճակատը դարձյալ կնճռոտեց, հոնքերը քաշ արավ։ Պարզ էր, որ մի միտք էլի նրան հուզում էր։ Նա բարկացած էր։

— Գնա՛, շորերդ կապիր և պատրաստվիր, որ առավոտը վաղ ճանապարհ ընկնես։

Ես գլուխ տվեցի և հեռացա իմ սենյակը։ Թե ինչ պատճառով էր Մակար աղան ինձ Բաքու ուղարկում և ինչու համար էր այդ հարցն ու փորձն անում — այս մասին երկար չմտածեցի։ Հենց նրա առաջին խոսքերից ես իսկույն հասկացա, թե բանն ինչումն է։ Իմ սատանայական միտքն արդեն յուր հետևանքները ցույց էր տալիս։

Շորերս կապկպելու համար բավական եղավ միայն մի ժամ, հետո ես ընկա անկողին քնելու, որ առավոտը վաղ զարթնեմ, բայց քունը փախավ աչքերիցս։ Ես երկար ժամանակ անկողնիս մեջ տրորվում էի այս ու այն կողմ, չկարողանալով աչքերս անգամ փակել։ Ինձ շարչարում էր այն միտքը, որ Շ... քաղաքից հեռանալով այլևս չպիտի տեսնեի Թամարին։

Այն սենյակը, ուր գիշերում էի, ծառաների սենյակից բաժանված էր մի բարակ տախտակյա միջնապատով։ Իմ մահճակալը դրած էր այդ միջնապատի տակ։ Ծառաները սովորություն ունեին առհասարակ գիշերները ուշ քնել։ Նրանք իրանց գործերը վերջացնելուց հետո հավաքվում էին միասին և սկսում զրույց անել գրեթե մինչև գիշերվա կեսը։ Սովորաբար նրանց խոսակցության նյութը լինում էին աղա Գուլամյանցների ընտանեկան և առևտրական գործերը։ Ճրագը հանգցրել էի, որ գոնե մութ տեղը կարողանամ քնել, բայց իզուր— քունը ինձանից փախչում էր։ Ճարահատյալ, ժամանակս անցկացնելու համար, ականջս դեմ տվեցի տախտակի միջնապատի ճեղքերից մեկին և սկսեցի լսել ծառաների խոսակցությունը։ Անօգուտ բան չէր։

— Ինչ ուզում ես, ասա, Գալուստ, Խաչին շատ խորամանկ տղա է։

Լսելով անունս, շատ հետաքրքրվեցի և, ականջս ավելի մոտ սեղմելով ճեղքին, շունչս հավաքած, սպասում էի, թե ինչ են խոսելու իմ մասին։

— Բայց Թամար խանումը այնպիսի աղջիկ չէ, որ շուտ խաբվի,— ասաց ծառաներից մեկը։

— Ինչքան էլ խելոք լինի, Խաչիի ձեռքից չի կարող պրծնել։

— Ես էլ չեմ հավատում, որ դրուստ է ասածդ։

— Չես ուզում, մի հավատար, բայց ամբողջ քաղաքն է խոսում այժմ։ Մի քանի ամիս սրանից առաջ դու ինքդ տեսնում էիր, թե քանի տեղերից էին առաջարկություններ անում, այժմ ոչ ոք չի ուզում մոտենալ։ Հենց սրանից կարող ես իմանալ, որ ամենը, ինչ որ խոսում են, ճշմարիտ է։ Չէ, անիրավը խեղճ աղջկա անունը լավ խայտառակեց քաղաքում։

— Թեկուզ ամբողջ աշխարհը խոսի, ես էլի չեմ կարող հավատալ։ Թամարին ես լավ եմ ճանաչում, նա այնքան զգույշ աղջիկ է, որ հազար Խաչիներ միասին հավաքվելով, չեն կարող նրան խելքից հանել։ Ես կարծում եմ, որ այդ սուտ լուրն ինքը Խաչին է տարածել։

— Ի՞նչ օգուտ ունի Խաչին այդպիսի սուտ լուրեր տարածելուց։

— Ինչ օգո՞ւտ։ Այ լսի՛ր. Խաչին Թամարի համար հոգի է տալիս, բայց շատ լավ գիտե, որ ուրիշը բան չի ընկնիլ։ Ահա նա լուր է տարածել, թե իբրև Թամարը սիրահարված է յուր վրա, իբր վաղուց արդեն պաշպշվում են և այլն, հասկանո՞ւմ ես։ Էհ, քաղաքը կիմանա այս բանը, էլ ո՞վ կմոտենա խեղճ աղջկան։ Ադա Գուլամյանցները կտեսնեն, որ իրանց աղջկա անունը կոտրվել է, ճարահատված կվերցնեն ու կտան Խաչիին։

— Օհո, օհո, տես որտեղից է բռնել անիրավը,— գոչեցին միաբերան մյուս ծառաները։

— Այ թե ինչու համար է Մակար աղան նրան այստեղից հեռացնում։

— Ուշ է, բանը վերջացած է։ Թամարի քարն արդեն հորի մեջ է ընկել և միայն Խաչին կարող է հանել նրան։

Ծառաները լռեցին։

«Կեցցե՛ս, յորդա Խաչի, կեցցե՛ս,— գոչեցի ես մտքումս,— տնկած ծառդ սկսում է պտուղ տալ։ Վնաս չունի, որ Թամարից հեռացնում են քեզ։ Ուշ է։ Այժմ այլևս ոչ ոք չի

կամենալ Թամարին մոտենալ և յուր անունը խայտառակել։ Ո՞վ կհամաձայնվի թքած պատառը կուլ տալ»։

Վերմակը քաշեցի գլխիս և հանգիստ քնեցի մինչև առավոտ։

VIII

Բաքուն, ծովեզրյա այդ նորածաղկ արդյունաբերական քաղաքը, նավթային արդյունաբերության շնորհիվ, այն ժամանակ արդեն Անդրկովկասյան երկրի առևտրական կենտրոններից մեկն էր։ Իհարկե, զարմանալի կլիներ, եթե աղա Գուլամյանցների նման ճարպիկ վաճառականները գործ չըսկըսեին այնտեղ։

Աբրահամ աղան այն թմրած հայ վաճառականներից չէր, որոնք իրանց քթի տակ եղած հարստությունները չեն նկատում։ Նա մի քիչ ավելի բարձր էր իր հեռատեսությամբ, քան ասիացի, թեև ոչ այնքան զարգացած, որչափ նույնիսկ մի միջակ եվրոպացի վաճառական։

Այս պատճառով բնավ չզարմացա, երբ, հասնելով Բաքու, հանդիպեցի աղա Գուլամյանցների այնպիսի գործերին, որոնց համեմատ Շ... քաղաքի առուտուրը խաղալիք էր։

Այստեղ նրանք ունեին բավական մեծ քանակությամբ նավթահողեր, երկու հանք, մի ահագին նավթագործարան, մի տակառագործարան և մի քանի նոր շինություններ, որոնք Բաքվի մեջ առաջնակարգ տեղ պիտի բռնեին։ Ճշմարիտը խոստովանած, առաջին անգամ մտնելով այդպիսի մեծ գործերի մեջ, մի տեսակ երկյուղ զգացի, որ միգուցե չկարողանամ կառավարել և Աբրահամ աղան, տեսնելով իմ անընդունակությունը, արտաքսի, թողնելով ինձ, ինչպես ասում են, շոր տափի վրա։ Բայց մտաբերելով իմ մինչև այդ ժամանակ ունեցած հաջողությունները, շվհատվեցի և աստուծո անունը տալով (նեղ ընկած ժամանակ ես դիմում էի նրան), սկսեցի գործել։

Սկզբում Աբրահամ աղան ինձ հետ վարվում էր մի փոքր մեղմ, այնպես, որ ես կարծեցի, թե նա ավելի հմտերող մարդ պիտի լինի, քան Մատար աղան։ Բայց հետո մի քանում

նկատելով մի չնչին սխալ, նա այնպես փոխվեց և կատաղեցինձ վրա, որ ես իսկույն հասկացա, թե ինչ տեսակ մարդու հետ գործ ունիմ։

Քանի որ Աբրահամ աղան Բաքու էր գտնվում, ես գործերի կառավարության մեջ կատարում էի երկրորդական դեր, իսկ երբ նա ճանապարհվում էր Ռուսաստան ,իմ գործերը բաղմապատկվում էին, ես դառնում էի լիակատար կառավարիչ։ Հարկավոր էր մեծ հավատարմություն գործակատարի կողմից, որ աղա Գուլամյանցների նման զգույշ և խորատես մարդիկ հանձնեին նրան այդ գործերի կառավարությունը, ուր գործակատարը, եթե ուզենար, կարող էր նրանց գլխին լավ օյիններ բերել։

Ես ընդունում էի Ռուսաստանից եկած փողերը և հանձնում բանկը, կառավարում էի ֆոտոգենի գործարանը, հանքերը, տները և այլն։ Բաժանում էի գործակատարների, մշակների և արհեստավորների ռոճիկներն ու վարձերը։ Մի խոսքով, ամեն ինչ իմ ձեռքումն էր։

Նավթային առուտուրի հաջող տարիներն էին։ Աղա Գուլամյանցները ճանապարհում էին Ռուսաստան մեծ քանակությամբ ֆոտոգեն։ Իմ շահասիրական ծարավը հագեցնելու համար պաշտոնս մի շատ հարմար ասպարեզ էր։

«Շատ հիմար մարդ կլինես, Խաչի, եթե բաց թողնես այսպիսի հաջող հանգամանքները։ Մի պատրաստի, քանդված, ոսկե հոր է աղա Գուլամյանցների գործը քեզ համար, օգտվիր դեպքով և քանի որ այս հորի մեջ ես, աշխատիր որքան կարելի է գրպանդ ամուր լեցնել»։ Բայց ինչպես լեցնեի գրպանս, որ աղա Գուլամյանցները չիմանային։ Մեծ անհեռատեսություն կլիներ իմ կողմից, եթե ես, հափշտակվելով հարմար առիթից, բանս դրստեի միանգամից, որովհետև աչքի առաջ ունեի մի ուրիշ նպատակ ևս. ես ցանկանում էի Թամարին ձեռքից բաց չթողնել։ Աղա Գուլամյանցներին փեսա լինելը խիստ գրգռում էր իմ ինքնասիրությունը։ «Լավն այն է ոչխարին այնպես կոտել, որ նրան զգալի չլինի. հարկավոր է մկրատը զգուշությամբ բանեցնել և թույլ չտալ, որ նա հասնի մինչև կաշին, եթե ոչ, Խաչի, անզգուշությունը կհասցնե քեզ վատ հետևանքների»,— ասացի ինքս ինձ։

Միջոցներ շատ կային. ես նրանցից ընտրեցի այնպիսիները, որոնք հեշտ ու ձեռնտու էին։ Ամսական մի անգամ ես բաժանում էի տակառագործների վարձն և մշակների ռոճիկները։ Ոչինչ այնքան հեշտ չէր, որքան սրանց հաշիվների մեջ խառնակություն մտցնելը։ Ես աղա Գուլամյանցների տված իմ ամսական հաշիվների մեջ ցույց էի տալիս մի մշակի փոխարեն երկուսը, ավելացնում էի տակառների գինը։ Գործակատարական բարբառով հաշիվների մեջ այդ կոչվում է «վերադիր», և ես, ամեն անգամ «վերադիր» անելով, երկու տարուց հետո հաշվեցի և տեսա, որ ինձ մոտ գոյացել է մի նշանավոր դրամագլուխ, որով կարող էի բոլորովին հեռանալ աղա Գուլամյանցներից և ինքնուրույն վաճառական դառնալ։ Սակայն ես չշտապեցի։ Հարկավոր էր առաջ գնալ, մի անգամ արդեն սկսել էի, այլևս հետ կանգնելն ինձ համար անհնարին էր։ Մանրավաճառ Թորոսի ասած գաղտնիքն այլևս ինձ համար պարզվել էր։

Բայց հանկարծ իմ վիճակը դարձյալ փոխվեց. մի օր Աբրահամ աղան ինձ հրավիրեց յուր մոտ և հայտնեց, թե ես պիտի գնամ նրա հետ Ռուսաստան։ Այս տեղափոխության պատճառը գիտեի ինչն էր։ Աղա Գուլամյանցների ընտանիքն եկել էր Բաքու։ Ինձ հեռացնում էին Թամարից, որի մասին իմ տարածած լուրը քանի գնում այնքան զորություն էր ստանում, չնայելով, որ երկու տարի էր նրան չէի տեսնում։ Այս անգամ ևս ես հնազանդվեցի Աբրահամ աղայի հրամանին և մի գեղեցիկ օր ճանապարհվեցի նրա հետ Ռուսաստան։ Փույթ չէ,— ասացի ինքս ինձ,— ես Թամարի վարկն այնպես չեմ գցել, նրա անունն այնպես չեմ խայտառակել, որ մեկը վստահանա նրան մոտենալ։ Ինչ կուզեն, թող անեն Գուլամյանցները, վերջ ի վերջո Թամարն իմն է։

IX

— Խաչի,— ասաց ինձ Մոսկվայում Աբրահամ աղան ուրախ ժամանակը,— քանի՞ տարի է, որ մեզ մոտ ծառայում ես։

— Արդեն յոթերորդ տարին է։

— Այդ յոթ տարում դու քանի՞ անգամ ես մեզանից փող ստացել։

— Չորս անգամ Մակար աղայից եմ ստացել՝ երկու երկու հարյուրական ռուբլի, երկու անգամ էլ ձեզանից՝ հինգ հարյուր ռուբլի, ընդամենը հազար երեք հարյուր ռուբլի։

— Ի՞նչ ես արել այդ փողերը։

— Ուղարկել եմ հորս։

— Այդ յոթ տարում ուրեմն այդքա՞ն ռոճիկ ես ստացել մեզանից։

— Այո՛։

— Քո ծնողները աղքա՞տ են։

— Իմ ռոճիկն է միայն նրանց եկամուտը։

— Ուրեմն շա՞տ աղքատ են ապրում։

— Շատ աղքատ։ Ծերության հասակում շատ օրեր քաղցած են անցկացնում։ Բայց ի՞նչ պետք է արած, աղա, աստուծո կամքն է, երևի՛, նրանց ճակատին լավ ապրուստ չի գրված։

Աբրահամ աղան ձեռը տարեց գրպանն և ահագին պորտմոնեն հանեց։

— Առ այս հազար մանեթը,— ասաց նա, հանելով տասը հատ կանաչ կարմիրանոցներ և դնելով իմ առջև, սեղանի վրա։

— Նախ և առաջ քեզ համար մի երկու ձեռք լավ հագուստ գնիր։ Քո այժմյան հագուստը շատ հին է և կեղտոտ. մեր անվան համար լավ չէ, որ դու այդպես վատ ես հագնվում։ Իսկ մնացյալն ուղարկիր հորդ։

— Աստված ձեր կարողությունը տասն անգամ ավելացնի, թող նա ձեզ միշտ իմ գլխին տեր պահի, որ ես էլ ձեզ շվաքում ապրել կարողանամ։

— Բայց լավ ծառայիր, խարդախություն չանե՛ս իմ գործերում։

— Թո՛ղ ձեր հացն իմ աչքերը կուրացնի, թե ես մինչև օրս մտածել եմ կամ այսուհետև պիտի մտածեմ ձեր կամ ձեր շահերի դեմ։ Երկնքում աստված, ներքև դուք եք ինձ համար. իմ խիղճը ինչպե՞ս թույլ կտա ձեր դեմ խարդախություն անել։

— Լա՛վ, գնա՛։

— Որպեսզի իմ շնորհակալությունն ավելի զգալի կերպով արտահայտեմ Աբրահամ աղային, ես շոքեցի նրա առջև և մի բանի անգամ համբուրեցի նրա սերտուկի փեշերն և կոշիկների ծայրը։ Աբրահամ աղան չընդդիմացավ այս բանին։

— Ձեր ոտը դրած տեղը թող իմ գլուխը լինի,— ասացի ես ճիշտ արևելյան կեղծավորությամբ, ձայնս դողացնելով, որպես թե զգացմունքից հուզված եմ։

— Շա՛տ ապրես, լավ է, վե՛ր կաց, միշտ այդպես երախտագետ եղիր աղաներիդ։ Իսկի չմոռանաս այն մարդկանց լավությունը, որոնք քեզ պահպանում են և պաշտպանում։

— Թող աստված ինձ մոռանա և իմ գլխին կրակ թափի, եթե ես երբևիցե մոռանամ ձեր լավությունները։

— Բավական է, գնա այժմ գործիդ։

Ես կրկին անգամ շոքեցի Աբրահամ աղայի առջև և կոշիկները համբուրեցի, հետո, վեր կենալով ու հետուհետ գնալով, դուրս եկա նրա սենյակից։

— «Խաչի,— ասացի ինքս ինձ, պառկելով անկողնում այդ երեկո,— բախտն երևսիդ ծիծաղում է։ Աղա Գուլամյանցներին կուրացրել ես, մանրավաճառ Թորոսի խոսքերը կատարվում են, դու արդեն մտել ես նրանց գրպանը։ Այժմ քեզ պակաս է միայն Թամարը. եթե նրան էլ ճանկես, այն ժամանակ քո մի քանի տարի առաջ երևակայած փառավոր ապագան այլևս իրականացած է։ Ուրեմն, շարունակիր։ Խորամանկությունը և շողոքորթությունը զորեղ միջոցներ են, նրանք օգնել են քեզ մինչև այսօր, կօգնեն այսուհետև էլ, մի՛ բաց թողնիր ձեռքիցդ այդ միջոցները»։

X

Արդեն երեք տարի էր, որ ես Ռուսաստան էի գտնվում։ Թե ինչպես անցկացրի իմ ժամանակը այդ երեք տարվա ընթացքում— այս կլիներ մի երկար պատմություն, եթե գրեի իմ հիշատակարանում։ Այսքանը միայն կասեմ, որ իմ կյանքը շատ ուրախ և զվարճալի էր անցնում Ռուսաստանում, երբ Աբրահամ աղան այնտեղ չէր լինում։ Այդ ժամանակ ես ո՛ր

քաղաք որ գնում էի, ամենաառաջին հյուրանոցումն էի իջնում, ամենաթանկագին և ամենաընտիր կերակուրներն էի ուտում, ամենանուրբ եվրոպական խմիչքներն էի խմում։ Գիշերները մինչև լույս անց էի կացնում զանազան զվարճատեղերում — թատրոնում, օպերայում, ցիրկերում, իսկ մեծ մասամբ կոֆեշանտաններում։ Քիչ փող չեմ ծախսել այդ միջոցներին կանանց վրա։ Պատահել է, որ այս կամ այն ինձ նման գործակատարի ձեռքից նրա սիրելյալ տարփածուին ցգրու խլելու համար չեմ խնայել հազարներ։ Մի խոսքով, այդ երեք տարին ես անց եմ կացրել իմ կյանքում շատ շքեղ և շատ ուրախ, իմ օրերը սահում էին աննկատելի կերպով, ես ինձ ըզգում էի դրախտի մեջ։ Փողի մասին մտածել չկար, աղա Գուլամյանցների գրպանն ինձ համար բաց էր։

Իսկ երբ Աբրահամ աղան գալիս էր, ես իսկույն հագուստս էլ, բնակարանս էլ, ուտել-խմելս էլ փոխում էի և սկսում էի չափավոր կյանք վարել, որպեսզի համեստությունս ցույց տամ նրան։

Այսպես անցան առաջին երեք տարիները, մինչև որ պատահեց մի անսպասելի դեպք, որը դարձյալ փոփոխության ենթարկեց իմ վիճակը։ Առուտուրի խառը ժամանակն էր. ես գտնվում էի Նիժնի-Նովգորոդյան տոնավաճառում, իսկ Աբրահամ աղան՝ Մոսկվայում։ Մի օր հանկարծ ստացա Մոսկվայից մի հեռագիր, թե Աբրահամ աղան մահամերձ հիվանդ է և պահանջում է ինձ։ Ես նույն օրն ևեթ ճանապարհվեցի, թողնելով բոլոր գործերը տակն ու վրա։

Աբրահամ աղային ես իսկապես գտա մահամերձ դրության մեջ։

— Այդ ի՞նչ է պատահել ձեզ, աղա, ի՞նչ քամբախտություն հասցրեց ինձ աստված,— գոռացի ես լացի ձայնով. ընկնելով նրա մահճակալի վրա և համբուրելով նրա ճակատը։

— Խաչի, մեռնում եմ,— պատասխանեց նա թույլ ձայնով։

«Ջհաննամը որ մեռնում ես, մի քիչ էլ վաղ պիտի մեռնեիր»,— ասացի ես մտքումս։

— Աստված ոչ անի, ի՞նչ ես ասում, աղա։

— Չէ, մեռնում եմ, Խաչի, այն անխղճմտանքը տունս քանդեց,— շարունակեց Աբրահամ աղան տնքտնքալով, գլուխը բարձրացնելով բարձի վրայից։

— Ո՞վ է ձեր տունը քանդել, աղա, ի՞նչ եք հրամայում,— հարցրի ես զարմացած։

— Հրեա Շաբաթը տունս քանդեց, նա՛... քառասուն հազար... քառասուն հազար... ա՜խ...

Աբրահամ աղան չկարողացավ ավարտել յուր խոսքը, նրա թուլացած գլուխն ընկավ կրկին բարձի վրա։ Ես նկատեցի նրա աչքերում արտասուք։

— Ի՞նչ քառասուն հազար, աղա, ասացեք, տեսնեմ ի՞նչ է արել անիրավ Շաբաթը։

— Փողերս կուլ է տալիս... հաշա է անում... ասում է պարտական չեմ։

— Ի՞նչ փողեր։

— Այս տարվա ֆոտոգենի փողերը, ասում է տվել եմ Խաչիին, կերավ այն անխղճմտանքը... էն, էն...

Մի փոքր միջոցից հետո եկավ բժիշկը. ես նրանից հարցրի ինչ է Աբրահամ աղայի հանկարծակի հիվանդության պատճառը

— Կաթված,— պատասխանեց բժիշկը կարճ ու կտրական։

— Հույս կա՞, որ առողջանա։

— Հազիվ թե մինչև երեկո ապրի։

«Աստված տա, որ չապրի»,— ասացի մտքումս խորը հառաչելով։ Բժիշկը, իհարկե, այնպես իմացավ, որ ես ցավալուց եմ հառաչում։

— Խաչի,— դարձավ ինձ Աբրահամ աղան բժշկի հեռանալուց հետո։

— Հրամայեցե՛ք, աղա։

— Ես մեռնում եմ, ների՛ր ինձ, ես քեզ շատ եմ նեղացրել, շատ եմ չարչարել, զուր տեղը շատ եմ հայհոյել, հիշոցներ տվել, ես մեղավոր եմ, ների՛ր...

— Ի՞նչ եք հրամայում, աղա, ես ինչ մարդ եմ, որ դուք ինձանից ներողություն եք խնդրում։

— Չէ՛, ներիր... ներիր. ես քեզ կենդանու նման չարչարել եմ, ես քեզ երբեք մարդու տեղ չեմ դրել, միշտ քեզ իմ կոշիկներից ստոր եմ համարել, ների՛ր, ես մեղավոր եմ։ Բա՛ց արա սնդուկը, նրա մեջ հինգ հազար մանեթ փող կա, վերցրո՛ւ, քեզ եմ բաշխում մեղքերիս փոխարեն։

— Ինձ փող հարկավոր չէ, ինձ ձեր կյանքն է հարկավոր, աղա,— ասացի ես և իսկապես արտասվեցի։

— Հեռագրիր Մակար աղային, որ շուտով ճանապարհվի, գոնե գա դիակիս հասնի։

— Այս րոպեիս կկատարեմ ձեր հրամանը։

Իրիկնադեմին Աբրահամ աղայի լեզուն կապվեց, իսկ գիշերվա կեսին նա հոգին ավանդեց։ Առավոտյան ես հեռագրեցի Մակար աղային նրա մահվան մասին։ Ես քրքրեցի Աբրահամ աղայի սնդուկն և, բացի հինգ հազարից, ոչինչ չգտա։

«Այս էլ մի բան է»,— ասացի և դրեցի հինգ հազարը գրպանս։

XI

Աբրահամ աղայի թաղումից անցել էր մի տարի։ Ես գտնվում էի Բաքվում։

Թամարը դեռ տանը նստած էր. նա սպասում էր փեսացուի, բայց փեսացու չկար ու չկար, աշխարհը շորացել էր, իսկ ժամանակը վաղուց էր անցել։ Աղա Գուլամյանցների համար Թամարը մի ծանր բեռն էր դարձել, հարկավոր էր այդ բեռնից մի կերպ ազատվել։

Մի օր Մակար աղան հրավիրեց ինձ յուր առանձնասենյակը։ Հրավիրեց եմ ասում, որովհետև այլևս ինձ ոչ ոք հրամայել չէր կարող, իմ լեզուն երկարել էր, և աղա Գուլամյանցներն այլևս չէին կարող առաջվա նման ինձ հետ վարվել ինչպես մի ստրուկի, մի տնային կենդանու հետ։

— Խրիստաֆոր Սերգեյիչ, համեցեք, նստեք,— դարձավ ինձ Մակար աղան, առաջարկելով ինձ աթոռ։

Տեսնո՞ւմ եք. կոշկակար Սարգսի տղա «յորդա Խաչին» այժմ Խրիստաֆոր Սերգեյիչ է դառել, և գոռող աղա Մակար Գուլամյանցը նրան աթոռ է առաջարկում։ Դե՛հ, լվվի՛ր, Խաչի, ինչպես ձուկը ջրի մեջ։

— Ի՞նչ եք կամենում ասել, Մակար Պետրովիչ,— ասացի ես համարձակորեն, «աղայի» փոխարեն Մակարի պոչին կպցնելով «Պետրովիչը»։

— Ոչինչ, մի փոքր ուզում եմ քեզ հետ ժամանակ անցկացնել։ Ա՜յ տղա, Գալուստ, շուտ արա, սուրճ բեր,— դարձավ նա ծառային։

Ես չհավատացի Մակար աղային, թե նա ինձ հրավիրել է լոկ ժամանակ անցկացնելու համար։ Նայելով նրա դեմքին, իսկույն հասկացա, որ անշուշտ մի կարևոր գործ ունի հետս։

Ծառան երկու բաժակ սուրճ բերեց։

— Համեցեք, Խրիստաֆոր Սերգեյիչ, վերցրեք ձեր բաժակը,— դարձավ Մակար աղան հրամանոցս վերին աստիճանի քաղաքավարությամբ։

Որովհետև մինչև այն օրը սովոր չէի Մակար աղայի այդ տեսակ հարաբերության, ուստի խիստ խորթ թվաց ինձ նրա վարմունքը։ Ես շփոթվեցի։ Թեև այլևս ոչինչ կախումն չունեի ոչ ոքից, որովհետև արդեն ապահով էի, բայց, ինը տարի ծառայելով աղա Գուլամյանցներին, ինը տարի ուրիշների հրամանները կատարելով, ինը տարի նրանց ձեռքում հասարակ մեքենայի դեր կատարելով, ես կամա-ակամա կորցրել էի ինքնուրույնությունը, մեռցրել էի իմ սեփական զգացմունքները։

Ընտանեկան և առևտրական զանազան գործերի վրա խոսելուց հետո Մակար աղան կամաց-կամաց խոսակցության նյութը փոխեց։

— Խրիստաֆոր Սերգեյիչ, քանի՞ տարի է, որ դու մեր գործերում ծառայում ես,— հարցրեց նա հանկարծ։

— Անցյալ գարնան ինը տարին լրացավ, այժմ տասներորդն է,— պատասխանեցի ես։

— Քանի՞ տարեկան կլինեիր մեզ մոտ մտնելու ժամանակ։

— Տասնհինգ տարեկան։

— Ուրեմն այժմ քսանվեց տարեկան ես։

— Տասնհինգ, այն էլ ինը, այո, ուղիղ քսանվեց տարեկան եմ։

— Բավական մեծացել ես,— ասաց Մակար աղան ժըպտալով։

— Այո՛, սկսում եմ ծերանալ։

— Այժմյան ջահելները մեզանից շուտ են ծերանում,— ասաց Մակար Պետրովիչը կատակով։— Բայց գիտե՞ս ինչիցը է այդ։

— Ինչի՞ց է, Մակար Պետրովիչ,— հարցրի ես հետաքրքրությամբ։

— Նրանից, որ այժմյան ջահելները չեն պսակվում և իրենց կյանքն անց են կացնում շռայլությունով։

— Պսակվողները մի՞թե չեն ծերանում։

— Ծերանում են, բայց ժամանակին և ոչ թե չպսակվողների նման ժամանակից քսան տարի առաջ։ Ես պսակվելիս երեսունյոթ տարեկան էի, բայց այս վեց տարում ես բավական զանազանություն եմ գտնում իմ առաջվա ու այժմյան առողջության մեջ և շատ ափսոսում եմ, որ տասը տարի առաջ չեմ պսակվել։ Ես այժմ եմ հասկանում, թե ամուսնությունն ինչքան օգտավետ է մարդուս։ Սխալված եմ համարում այն մարդուն, որը ժամանակին չի պսակվում։

— Լավ կիներ, եթե ամեն մարդ կարողություն ունենար ամուսնանալու, բայց չէ՞ որ շատերը իրանց չոր գլուխը չեն կարողանում պահել, ինչպե՞ս կարող են ընտանիք պահել։

— Ով որ ուզենա պսակվել, կարողություն էլ կգտնի։

— Որտեղի՞ց կարող է գտնել։ Օրինակ, ինձ նման մարդ ի՞նչպես կարող է ծառայելով ընտանիք պահել,— ասացի ես, հասկանալով մասամբ Մակար աղայի միտքը։

— Քանի որ մարդ մենակ է, աստված էլ նրան մեկի ապրուստ է տալիս, բայց երբ ամուսնանում է, աստված ինքը նրա ընտանիքի հոգսն էլ է տեսնում։ Օրինակ, դու այժմ մենակ ես, նա քեզ քո ապրուստը տալիս է, բայց երբ պսակվես, քո ընտանիքի հոգսն էլ կանե։

— Եթե իմանամ, որ աստված կարողություն կտա ապրելու, հենց վաղը կպսակվեմ։

— Փորձիր և տես կտա թե չէ։ Արի՛, ճշմարիտ, Խրիստաֆոր Սերգեյիչ, քեզ պսակենք։ Վաղուց եմ մտածում, որ հարկավոր է քեզ պսակել և շատ ժամանակ է, որ մի լավ, սիրուն

աղջիկ աչքի առջև ունիմ քեզ համար,— ասաց Մակար աղան, դարձյալ ժպտալով։

— Ո՞վ է այդ աղջիկը, Մակար Պետրովիչ, ես գիտեմ, որ ձեր հավանածն անպատճառ լավը կլինի,— հարցրի ես, միամիտ ձևանալով։

— Մի երևելի, հարուստ և աղնիվ ընտանիքի աղջիկ, որի վրա շատերն աչք ունին։

— Ո՞վ է այդ ընտանիքը։

— Մեր ընտանիքի նման մեկը։

— Ես այս քաղաքում ձեր ընտանիքի նման ուրիշը չեմ ճանաչում։

Մակար աղան դռանը զարկեց, և նույն րոպեին իմ առջև ներկայացավ աղա Գուլամյանցների ամբողջ ընտանիքը։

Ես նկատեցի նրանց մեջ գլուխը քաշ ձգած և ամոթից կարմրած Թամարին, որի ձեռքից բռնած ներս բերեց Մակար աղայի ամուսինը։

— Այ քեզ այն ընտանիքը, սա էլ իմ ասած աղջիկը։ Հը՛մ, այժմ ճանաչո՞ւմ ես, թե ոչ, լավ մտիկ արա,— ասաց Մակար աղան, բռնելով Թամարի ձեռքից և առաջ քաշելով։

Ես ամոթից կարմրեցի և չկարողացա ոչինչ խոսել։

— Ձեռ ձեռի տվեք, ես ձեզ վաղուց եմ մտքումս նշանել։

Ես անզգայաբար ձեռս մեկնեցի Թամարին։ Գործողությունն այնքան հանկարծակի եղավ, որ ես, ճշմարիտն ասած, մնացել էի շվարած։

— Ի՞նչ ես սառել, այ կնիկ, Գալուստին հրամայի շամպանսկի բերի։

Անցան առաջին վայրկյանները, և ես, փոքր առ փոքր ուշքի գալով, սկսեցի ուշադրությամբ քննել իմ դրությունը։

— Աստված շնորհավոր անի, բարով շուտով պսակենք,— ասաց Մակար աղան, դատարկելով շամպանիայով լի բաժակը։

— Ամեն, ամեն, աստված շնորհավոր անի,— կրկնեց ամբողջ ընտանիքը միաբերան։

— Ես իմ կողմից նշանեցի, վաղը քահանա կկանչենք, որ «պահպանիչն» ասի, բանը վերջանա,— ասաց Մակար

աղան մի մեծ ադամանդյա մատանի անցկացնելով իմ մատին, մյուսը Թամարի մատին։

«Ցորդա խաչի, բանդ շինվեց, բայց մի հափշտակվի՛ր, ոտդ ամուր դիր»,— մտածեցի ես իսկույն։

— Մակար Պետրովիչ, ես արժանի չեմ այս փառքին։

— Ամենից արժանավորը դու ես, ես հենց մինչև այսօր Թամարին քեզ համար եմ պահել։

— Չէ՛, Մակար Պետրովիչ, ինձ նման աղքատ մարդը անարժան է ձեր նման հարուստ ընտանիքի փեսա դառնալուն։

— Սո՛ւս արա, դատարկ, դատարկ մի՛ դուրս տուր, աղքատին հարստացնելը Գուլամյանցների ձեռքում մի դժվար բան չէ։ Քսանուհինգ հազար մանեթ օժիտը Թամարի գլխին է։

«Փառք աստուծո, ես էլ հենց այդ էի ուզում լսել քո բերանից»,— ասացի մտքումս և մատանին քաշեցի մատիս։

Պետք է ասած, որ այն օրվանից, երբ Թամարը գրավել էր ուշադրությունս, երբեք մի անգամ էլ ինձ չեմ տվել այն հարցը, թե արդյոք ինքը Թամարը կհամաձայնվի իմ ամուսինը դառնալ։ Ես այս հարցով գլուխ ցավացնելն ավելորդ էի համարում, որովհետև գիտեի, որ Թամարի կամքը ոչինչ նշանակություն չէր կարող ունենալ։ Աղա Գուլամյանցների ընտանիքում, ինչպես վերը հիշել եմ, դեռ տիրում էր ասիական բռնակալության ոգին։ Այնտեղ Թամարի համակրությունը դեպի յուր նշանածն ոչինչ նշանակություն չէր կարող ունենալ։ Այնտեղ ամեն ինչ կախված էր ընտանիքի գլխավորներից։ Ահա ինչու սկզբից մինչև վերջը աշխատում էի միայն Մակար աղայի վրա ազդել։

XII

Յոթ տարի՞ է, որ ես, Խրիստաֆոր Սերգեյիչ աղա Առուշանովս, աղա Գուլամյանցների փեսան եմ։ Նստած երկհարկանի սեփական տանս մեջ, իմ առանձնասենյակում, գործերից ազատ ժամանակ, ես երբեմն-երբեմն մտաբերում եմ անցյալը և համեմատում նրան ներկայի հետ։ Հիշում եմ այն աղքատ

ընտանիքը, այն պատառոտված ցնցոտիները, ծակ կոշիկները, որ ես հագնում էի այն ժամանակ, հիշում եմ, համեմատում եմ այժմյան դրության հետ և ինքս ինձ վրա զարմանում։ Հիշում եմ այն օրը, երբ հայրս հրավիրեց յուր բարեկամներին մեր տուն, տեր-Վահակի մոտ ուսումս ավարտելուց հետո իմ ապագայի մասին խորհրդակցելու։ Հիշում եմ դարբին Մարութի տված հիմար խորհուրդը, որ ես արհեստավոր դառնամ, հիշում եմ և իմ այժմյան դրությունը համեմատում Մարութի որդու դրության հետ, որն յուր հոր պես պարապում է դարբնությամբ և կեղտի ու մրի մեջ հագիվհագ քաշքշում է յուր կյանքը։ Հիշում եմ այս բոլորն և փառք տալիս աստծուն, որ չթողեց հորս հետևել դարբնի խորհրդին։ Իսկ ինչ վերաբերվում է մանրավաճառ Թորոսին, որն այսօր մեր քաղաքում առաջին դրամատերն է, նրա խրատներն երբեք չեմ մոռացել և չպիտի մոռանամ։ Մտաբերում եմ նրա հորս ասած խոսքերը. «Տուր խաչիին մի վաճառականի մոտ գործակատար, և նա շուտով կգտնի փող աշխատելու գաղտնիքը»։

Ես գաղտնիքը գտա, գրավելով ազա Գուլամյանցներիս հավատարմությունը ներելի և աններելի միջոցներով։

Շատ բաներ եմ արել և արել եմ առանց ինքս ինձ հաշիվ տալու, առանց դիմելու իմ խղճին և նրանից թույլտվություն խնդրելու։ Կեղծավորել եմ, շողոքորթել և ստորացել այն մարդկանց առջև, որոնք ինձանից զորեղ են եղել և որոնցից ակնկալություն եմ ունեցել։ Խաբել, մոլորեցրել եմ ինձանից թույլերին և պակաս խորամանկներին։ Եվ այժմ ոչ ոք չի կարող երես առ երես ինձ հանդիմանել, որովհետև ես փող ունիմ, հարուստ եմ։ Իսկ հետևիցս ով ուզում է և ինչ ուզում է թող խոսե, փույթ չէ։ Առերես ես այժմ ամենից հարգվում եմ, և այսքանը բավական է։

Երեկ տեր-Վահակից նամակ ստացա, որով նախկին ուսուցիչս խնդրում էր Շ... քաղաքի կիսախարխուլ եկեղեցու համար մի զանգ բերել տալ Ռուսաստանից։ Ես պատասխանեցի, թե ուրախությամբ կկատարեմ նրա խնդիրը։ Այժմ կարող եմ և միջոց ունիմ բարեգործություններ անելու, ես խրիստաֆոր Սերգեյիչ ազա Առուշանովս...

ԽՆԱՄԱՏԱՐ

Վիպակ

I

Հունիսի սկիզբն էր։ Բաքվի նավահանգստի առաջնակարգ կայարաններից մեկի վրա եռում էր ծովեզրյա և արդյունաբերական քաղաքին հատուկ աշխատավոր կյանքը։ Եղանակը սաստիկ շոգ էր։ Միջօրեի արեգակը պայծառ հորիզոնից յուր այրող ճառագայթները սփռել էր խաղաղ ծովի հայելանման մակերևույթի վրա։ Քամու նշույլ չկար։ Օդը պլպլում էր այնպես, ինչպես պլպլում է թոնրի երեսին կրակի զորությունից։ Երբեմն-երբեմն այս կամ այն տեղում ծովի հարթ մակերևույթը սոսափվում էր դեսուդեն լողացող փոքրիկ մակույկների թիերի հարվածներից։ Այդ ժամանակ պարզ ջրի մեղմ ալիքները մի առանձին հրճվանքով խաղում էին արեգակի հետ, փշրելով նրա լույսը բյուրավոր գոհարափայլ ճառագայթների։ Մակույկներն անցնում էին, անջատված ջուրը միանում էր և ծովի մակերևույթը կրկին հարթվում։

Կայարանն երեք կողմից շրջապատված էր բազմաթիվ փոքր ու մեծ շոգենավերով և առագաստանավերով։ Մի քանիսը շոգենավերից լիքն էին զանազան տեսակի ապրանքներով և սպասում էին դատարկվելու կամ ճանապարհ ընկնելու։

Իսկ շատերն արդեն դատարկվել էին և պատրաստվում էին նորից բարձվելու։ Դրանք այն նավերն էին, որոնք գլխավորապես պտտում են Բաքվի և Հաշտարխանի միջև, առաջինից տանելով զանազան նավթային մթերքներ, իսկ վերջինից դեպի Բաքու բերելով Ռուսաստանի ապրանքները։ Առագաստավոր նավերն իրենց խառնիճաղանջ առագաստներով, անթիվ, դեպի այս ու այն կողմեր ճյուղավորված պարաններով, իրանց կեղտոտ տախտակամածներով և փայտապատ կեղևներով՝ վիթխարի, ամրաշեն և երկաթապատ հպարտ շոգենավերի մոտ նմանվում էին գյուղական խրճիթների՝ քաղաքի բարձրաշեն տների դիմաց։ Այդ հասարակ նավերը ճանապարհորդում են Պարսկաստանի և Բաքվի մեջտեղ։ Պարսկաստանի գրեթե ամբողջ արդյունաբերությունը, որ մեծ մասամբ մրգեղեններից է բաղկացած, տեղափոխվում է այդ նավերով։

Աշխատանքը կայարանի շուրջը, ծովի երեսում, եղերքի մոտ բորբոքման մեջ էր։ Ահա մի կողմում նավերից մինը բեռան ծանրությունից մինչև տասներկու-տասներեք կանգնաչափ խրված ջրի մեջ, հանդարտությամբ օրորվում է այս կողմ այն կողմ։ Ամրակազմ և առողջադեմ թուրք նավաստիները դուրս են կրում ապրանքների ահագին հակերը։ Արեգակի տաքությունից և աշխատանքի ծանրությունից քրտինքը նրանց ծովային բամիներից այրված ու սևացած դեմքերից թափվում է այն առատությամբ, ինչպես բաղնիսի ներսի պատերից թափվում են շոգու գոլորշիները։ Ամեն անգամ, երկար պարանների միջոցով նավի ներքնահարկից հակերը դուրս քաշելու ժամանակ նրանց հաստ բրդյա շալով գոտևորված մեջքերը թեքվում են, ողնաշարները դուրս ցցվում, բայց նրանց համար կարծես այդ անզգալի էր։ Ո՛չ կիզիչ արեգակը, ո՛չ ծանր աշխատանքը նրանց դեմքերից չի հեռացնում այն սովորական ուրախ ու զվարթ ժպիտը, որ հատուկ է միայն նավաստիներին, երբ սրանք գտնվում են չորությունում։ Նրանք երգում են, ծիծաղում, կատակներ անում իրարու հետ, և ամեն անգամ հակը մշակի մեջքին դնելիս մի-մի աքացի ևս ավելացնում են հետևից, որ մշակը շուտ տեղ հասցնի։ Սակայն մշակը, որ ապրանքի հակերը նավի տախտակամածից տեղափոխում է դեպի կայարան, դանդաղ է շարժվում տե-

ղից։ Տասը-տասներկու փութանոց բեռան ծանրության տակ նրա ծնկները ծալվում են, կոկորդը դուրս է ցցվում, շլինքն երկարանում է, բերանը ակամա բացվում է, և ամեն անգամ յուր բոբիկ ոտերը փոխելու ժամանակ մի տնքոց է արձակում կրծքից։ Երբեմն դժվարությամբ և երկյուղով, որ միգուցե հակը մեջքից թավալվի, նա յուր ոսկրացած ձեռքը տանում է ճակատին և դուրս սլում քրտինքի խոշոր, կեղտոտ կաթիլները։ Նավի մի անկյունում կանգնած է ապրանքի տերը։ Սա մի պարսիկ առևտրական է, բարձր և կլորակ մահուդյա գլխարկով, երկայն փեշավոր արխալուղով, որի վրա մեջքին կապած է մետաքսյա կապտագույն գոտին։ Նրա թեթև, սպիտակ ամառային մետաքսյա կապայի փեշերը հասնում են մինչև կանաչագույն պարսկական քոշերի կրունկները։ Մի ձեռում պահած հովանու կոթը և մի փոքրիկ ձեռատետր, իսկ մյուս ձեռում մատիտը բռնած, յուր երկայն ու բարակ մատներով զգուշությամբ նշանակում է ապրանքի հակերի թիվը, կշիռն և համարը, դեմքի վրա անդադար խաղացնելով մի խորհրդավոր ժպիտ։ Ստեպ-ստեպ նա գլուխը թեքում է դեպի մեջքը, հինայով ներկած միրուքը փասյանի պոչի նման ցցում է օդի մեջ և գոռում մշակների կամ նավաստիների վրա, հրամայելով, որ նրանք զգուշությամբ և շտապով կատարեն իրանց գործը։ Այն ժամանակ բարեպաշտ մուսուլմանի բերանից առատությամբ դուրս են հոսում հիշոցներն այն արագությամբ, ինչպես երևի արտասանում են նրա շրթունքները նամազի ժամանակ մեծ մարգարեի սրբազան աղոթքը։

Մի փոքր հեռու այստեղից կանգնած է մի ուրիշ նավ։ Սրա նավաստիները բոլորը ռուսներ են։ Խմբովին հավաքված նավի ծայրը, նրանք նավապետի կառավարությամբ, բռնած մի հաստ պարանի ծայրից, որը մյուս ծայրով կապված է կայարանի սյուներից մեկին, միահամուռ ուժով քաշում են պարանը, որպեսզի նավը մոտեցնեն կայարանին։ Ամենից առաջ կանգնած է կարմիր շապկով մի հաղթանդամ և երգում է ռուս մուժիկի սովորական «Դուբինուշկան»։ Ստեպ-ստեպ նրան ձայնակցում են և մնացյալ նավաստիները, կրկնելով երեք անգամ միաբերան ухнем, ухнем, ухнем, և պարանը քաշում։ Եվ այդ ծովային որդիների բերանից դուրս թռչող բա-

ցականչումները տարածվելով խաղաղ ծովի մակերևույթի վրա, թաղվում են աղի ջրի անդունդի մեջ, տանելով իրանց հետ մարդկային աշխատավորների կրծքից արձակված դառն հառաչանքները։

Մի ուրիշ կողմում մշակների մի խումբ թավալում է ֆոտոգենով լի տակառները կայարանից դեպի շոգենավը և դարսում այնտեղ։ Ահա ֆոտոգենի տերը, կարմրերես և շաղ մարմնով հայը, ժամացույցի երկու մատնաչափ լայնությամբ ոսկե շղթայի հետ ձեռներով խաղալով, ինքնաբավական նայում է ֆոտոգենի տակառներին։ Նա դանդաղ հրամաններ է տալիս յուր մոտ կանգնած գործակատարին, որ որսորդական շան պես պտտվում է յուր աղայի չորս կողմը և ամեն անգամ, երբ աղան խոսում է, համեստությամբ բարձրացնում է գլուխն և ուշադրությամբ լսում նրա հրամանները, կարծես կամենալով նրա ամեն մի խոսքը ներս կլանել ոչ միայն ականջներով, այլև աչքերով, քթի պնչերով, բերանով։

Վերջապես, այդտեղ տիրում էր մի հափշտակիչ կենդանություն, որին միայն արդյունաբերական ծովեզրյա քաղաքում կարելի է հանդիպել։

Կայարանի ծայրում խռնվում է ամբոխի մի մեծ բազմություն։ Ամենքն, իրարու հրելով այս ու այն կողմ, աշխատում են առաջ շարժվել և, որքան հնարավոր է, ավելի մոտենալ կայարանի ծայրին։ Բոլորի հայացքներն ուղղված են ծովի հեռավոր հորիզոնին, ուր հազիվհազ նշմարվում է ծխի մի փոքրիկ խողովակ, որը հանդարտությամբ բարձրանում է վեր, կարծես ջրի խորքից դուրս գալով։ Այս—Հաշտարխանից եկող շոգենավն է։ Ամենքն անհամբերությամբ սպասում են նրան կայարանի վրա։ Մեկն եկել է դիմավորելու յուր բարեկամին, մյուսը— նամակներ ստանալու, երրորդը— լոկ յուր հետաքրքրությանը բավականություն տալու։

Ամենից առաջ կայարանի ծայրում հավաքված են մի խումբ հայ վաճառականներ թվով վեց հոգի։ Չնայելով տեղի ոգությանը, սրանք կայարանի վրա բավական ընդարձակ տեղ են բռնում։ Ամբոխը, կարծես ճանաչելով այդ արտոնությունը, չի համարձակվում սեղմելու նրանց, այլ, ընդհակառակը, մի քանի քայլ հեռու է պահում իրան, թողնելով մեջտեղ մի

բավական ընդարձակ տարածություն։ Սրանք քաղաքի ամենահարուստ հայ նավթային արդյունաբերներն են, որոնք նույնպես սպասում են շոգենավին։ Իրարու դեմ շրջանաձև կանգնած, նրանք մեջտեղ գոյացնում են մի օղաձև տարածություն, ուր, կարծես, դրած լիներ մի բան, որն արգելում էր նրանց առաջ շարժվելու։ Եվ, հիրավի, կար մի արգելք, որ չէր թույլ տալիս նրանց ծածկել այդ տարածությունը։ Այդ— նրանց տակառաձև փորերն էին, որոնք բոլորն էլ, կարծես, մի կաղապարով ձուլված լինեին։ Մի քանիսն, երկու ձեռներով հետևից իրանց ձեռնափայտերի վրա հենված և ոտներն իրարից հեռու դրած, այնպիսի դիրք էին ստացել, որ նրանց մարմինները, մի արշին դուրս ցցված փորերի և կարճլիկ ոտների շնորհիվ, կանգնեցրած տիկերի ձև էին ընդունել։ Բոլորը հագնված էին հարուստ և եվրոպական տարազով, բայց ոչ այնքան մաքուր։ Մեկի շապկի կրծքի վրա երևում էին գինու կաթիլներից մնացած մանիշակագույն կոլորակ բծեր։ Նրանց ամենքի փորերի վրա արեգակի ճառագայթների տակ պսպղում էին ժամացույցի ոսկե շղթաները։

Բացառություն էր կազմում յուր մարմնի կազմվածքով միայն մի երիտասարդ։ Սա բարձրահասակ, նիհար և դեղնած մի մարդ էր, սև ու նոսր միրուքով և տափակ կրծքով։ Նայելով երիտասարդի դեմքին, կարելի էր ասել, որ նա գոնե քառասուն տարեկան է, բայց իսկապես նրա տարիքը քսանուչորսից չէր անցնում։ Անցյալի զեխ և շռայլ կենցաղն այդ դեմքի վրա դրոշմել էր արդեն ծերության կնիքը։ Նրա թուխ ու լղար երեսի կաշին, եփած խնձորի կճեպի պես, մի քանի ծալք կուչկուչվել էր և հավաքվել քթի երկու կողմերում։ Թերթերունքներից զուրկ աչքերի տակ նույնպես գոյացել էին մի քանի կապտագույն կնճիռներ։ Աչքերից վեր երկու դժվար նշմարելի գծեր, շնորհիվ դեռ պահպանվող մի քանի մազերի, հազիվհազ համոզում էին, թե մի ժամանակ այդ մարդը զուրկ չի եղել հոնքերից—մարդկային կերպարանքի այդ գեղեցիկ զարդից, առանց որի մարդ կատարելապես կապիկի է նմանվում։ Իսկ նրա ամբողջ դեմքն արտահայտում էր խորին վավաշոտություն։ Նրա փոքրիկ սևագույն աչքերի մեջ փայլում էր անսանձական կիրք։ Նա հագած էր սպիտակ մետաք-

այս կտորից կարած ամառային հագուստ, որ ավելի մաքուր էր և ավելի նուրբ ձևով կարված, քան նրա ընկերակիցներինը։ Դեղնագույն հարդյա գլխարկի լայն ծայրը սքողել էր նրա ճակատը, որ ծածկված էր բազմաթիվ մանր ելունդներով։ Մի նշան, որ հետևանք էր նրա անբարոյական կենցաղավարության։ Երիտասարդի ժիլետի վրա նույնպես փայլում էր մի ահագին ոսկե շղթա։ Իսկ շղթայից քաշ էր ընկած հինգկոպեկանոցի չափ ոսկե մեդալիոնը՝ զարդարված մանրիկ ադամանդներով։ Նրա բարակ դեղնագույն ձեռնոցներից մեկի տակից, աջ ձեռքի միջամատի վրա ցցված էր մատանու մեծ փիրուզեն։ Ճերմակ ատլասյա փողպատի վրա մեխված էր մի մեծ ոսկե գնդասեղ նույնպես ադամանդներով զարդարված։ «Պետր Ստեփանիչ Դոլմագով»— այսպես էր փորագրված երիտասարդի անունը նրա ձեռնափայտի շորս մատնաչափ ոսկեպատ կոթի վրա։

II

Խումբը տաքացած խոսում էր ու վիճաբանում հանքերի, գործարանների, նավթի և ուրիշ այսպիսի հետաքրքրական նյութերի մասին։ Մի քանիսը խոսողներից այնքան ոգևորվել էին, որ քիչ էր մնում փոխեին իրանց կանգնած դիրքն և քանդեին մեջտեղի օղաձև տարածությունը։ Մեկը կամենալով համոզել ինչ-որ բանում յուր դեմուդեմ կանգնողին, մի փոքր առաջ շարժվեց, և երկուսի փորները մի քիչ ընդհարվեցին։

Խոսակցությանը չէր մասնակցում միայն երիտասարդը։ Նա երեսը դարձրել էր դեպի ծովն և հեռադիտակով անդադար նայում էր եկող շոգենավին, որն այդ ժամանակ այնչափ մոտեցել էր կայարանին, որ պարզ նշմարվում էին տախտակամածի վրա խմբված ճանապարհորդները։

— Պետր Ստեփանիչ, ինչո՞ւ ես այդպես անհամբեր մրտիկ անում, երևի, մարդի ես սպասում,— դիմեց երիտասարդին հաստափորներից մեկը, աջ ձեռը դնելով նրա ուսին, երբ խոսակցությունը մի քանի վայրկյան ընդհատվեց։

Պետր Ստեփանիչը չպատասխանեց։ Նա խորասուզված շարունակ նայում էր դեպի շոգենավը։

— Պետր Ստեփանիչ, ախար քեզ հետ են խոսում,— կրկնեց հետաքրքիր հաստափորը, կանգնելով նրա դեմուդեմ և ձեռով ծածկելով հեռադիտակի բերանը, որպեսզի Պետր Ստեփանիչի ուշադրությունը յուր վրա դարձնի։

— Հը՛մ,— ասաց միայն Պետր Ստեփանիչն և, հեռադիտակն ազատելով նրա ձեռից, կրկին սկսեց նայել։

— Ումի՞ն ես սպասում, ասա տեսնեմ,— շարունակեց հաստափորն, այս անգամ Պետր Ստեփանիչի ձեռից խլելով հեռադիտակն և թաքցնելով յուր մեջքում։

— Սպասում եմ։

— Ո՞ւմին։

— Կարլ Մարկիչի ընտանիքին։

— Ո՞րտեղից։

— Հաշտարխանից։

— Ի՞նչ ասացիր, Կարլ Մարկի՞չ, ո՞վ է Կարլ Մարկիչը։

— Իմ կառավարիչը։

— Նեմե՞ց է։

— Հայ է, հաշտարխանցի։

— Կարլ Մարկիչ,— կրկնեց Սերգեյ Իվանիչը (այսպես էր հաստափորի անունը), աչքերը չռելով և յուր դեմքի վրա խաղացնելով զարմացական ժպիտ։

— Գասպարն է, ծերունին, ճանաչո՞ւմ ես խո նրան։

— Գասպարը... հը՛մ... ես էլ ասում եմ այդ ինչ Կարլ է,— ասաց Սերգեյ Իվանիչը հառաչելով, կարծես մի ծանրությունից ազատված։— Ինչո՞ւ է բերել տալիս Գասպարը յուր ընտանիքը։

— Ես եմ ասել, խեղճն առանց կնոջ տխրում է, ասացի մի լավություն անեմ։ Տներիցս մեկում նրա համար մի լավ բնակարան եմ նշանակել, թող ապրեն, քեֆ քաշեն։ Արժե Կարլ Մարկիչը. նա շատ լավ գործակատար է։

— Արժե, արժե, շատ ճշմարտասեր մարդ է, դալբություն չգիտե։ Ես նրան լավ եմ ճանաչում։ Առաջ նա Հաշտարխանի ամենաառաջին վաճառականներից մեկն էր, բայց ընկերները խաբեցին, փողերը ձեռքից խլեցին և շոր տափի վրա

թողեցին։ Նրա ընտանիքն էլ եմ ճանաչում։ Ռուսաստանից գալիս ես Հաշտարխանում նրանց մոտ դնացի, ինձ սուրճով հյուրասիրեցին։ Մի լավ տղա ունի և մի լավ աղջիկ։ Նրանք էլ գալի՞ս են։

— Գալիս են։ Որդուն ես շատ եմ հավանել, ուզում եմ Բալախանիի նավթահանքերից մեկի վրա գործակատար նշանակել։

— Շատ լավ կանես, շատ լավ կանես, Պետր Ստեփանիչ, լավ տղա է, հոր նման ղոչաղ է։ Բայց ուրիշ բան է նրա աղջիկը, հրեշտակի գեղեցկություն ունի, Պետր Ստեփանիչ, ամբողջ Հաշտարխանի մեջ հատը չկա։

Այս ասելով, Սերգեյ Իվանիչն յուր յուղալի աչքերի բիբերը ոլորեց ու ատամների վերին շարքով ներքին պռոշի ծայրը թերևությամբ կծեց, նայելով ուղղակի Պետր Ստեփանիչի աչքերին։ Սա նույնպես մի վայրկյան նայեց նրա երեսին, ոչինչ չասաց և, կրկին հեռադիտակը մոտեցնելով աչքերին, սկսեց նայել շոգենավին։

— Առաջին անգամ, երբ ես նրան տեսա, քիչ մնաց որ խելքս կորցնեի,— շարունակեց շատախոսել Սերգեյ Իվանիչը։— Ասացի, այ սրա նման կնիկ ունենա մարդ, որ պարկեր ես կարողանա հասարակության մեջ դուրս գալ։ Ինչ ֆորտեպիանի վրա ածել, ինչ պար գալ, ինչ խոսել թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն, մի խոսքով, ոսկի է ոտքից մինչև գլուխ։ Ա՛յ նրա նման կնիկ ունենաս, հետդ տանես Ռուսաստան և բոլորին զարմացնես։ Բայց ափսոս, որ հայրն աղքատ է, Պետր Ստեփանիչ, թե չէ քեզ համար շատ լավ հարսնացու կլիներ։

Պետր Ստեփանիչը հեռադիտակի տակից ժպտաց և ոչինչ չպատասխանեց։

— Բավական հասակավոր աղջիկ է, բայց մինչև օրս ուզող չկա հոր աղքատության պատճառով։ Անիրավ Հաշտարխանում առանց օժիտի ոչ մի տղա աղջիկ չի վերցնում։

Պետր Ստեփանիչը հեռադիտակը հեռացրեց և, սպիտակ ու մաքուր թաշկինակով աչքերը սրբելով, միայն արտասանեց «հը՞մ», կարծես հարցնելով յուր խոսակցի միտքը։

— Ասում եմ մի մեծ ողորմություն կանես,— շարունակեց Սերգեյ Իվանիչը,— եթե նրան այստեղ մի լավ տղի տաս։

Պետր Ստեփանիչը, հեռադիտակը դնելով գրպանը, պատասխանեց.

— Նրա հայրը հարուստ եղած ժամանակ շատ անգամ է օգնել հորս... իհարկե, ես էլ պարտավոր եմ փոխարենը վճարել լավությունով։

— Ապրե՛ս, Պետր Ստեփանիչ, Գասպարն արժե, նա խեղճ, կորած, մոլորված մարդ է։

Լսվեց կայարանին մոտեցող շոգենավի սուլոցը։ Ամբոխը սկսեց հրելով մոտենալ կայարանի եզրին։ Շոգենավը, շվշըվալով, շոգին կողքերից բաց թողնելով և խարիսխների շղթաները զրնգացնելով, մեղմիկ սահում էր առաջ։

Պետր Ստեփանիչը յուր որոնող հայացքը ձգեց տախտակամածի վրա, բարձրանալով ոտների ծայրերի վրա։ Այնտեղ նա նկատեց ճամփորդների մի խմբակ, բաղկացած երեք հոգուց։ Մեկը միջահասակ, մոտ քառասունհինգ տարեկան կին էր եվրոպական հագուստով, գլուխը սև շալով փաթաթված։ Մյուսը 23—24 տարեկան մի երիտասարդ էր բարձր հասակով, սև, փոքրիկ միրուքով, համակրելի դեմքով և բավական մեծ քթով։ Երրորդը մի օրիորդ էր ամառային բաց գույնի հագուստով և հարդյա դեղնագույն լայնեզր գլխարկով։ Սա կլիներ մոտ 25 տարեկան, բարձրահասակ էր, դեմքի բավական նուրբ գծերով, ոչ այնքան գեղեցիկ, որքան սիրուն և համակրելի։

Պետր Ստեփանիչը Սերգեյ Իվանիչի ուղեկցությամբ դիմավորեց նրանց։ Երկուսն էլ, հերթով նորեկներին բարևելուց հետո, շտապով վերցրին մի-մի կտոր ճանապարհային իրեղեններից և իջան կայարան։

— Բաս ի՞նչտեղ է Կարլ Մարկիչը,— հարցրեց պառավ կինը։

— Գործարանումն է, շուտով կգա, ես ցույց կտամ բնակարանը, կառքս սպասում է ձեզ,— պատասխանեց Պետր Ստեփանիչը քաղաքավարությամբ, մի դիտող հայացք ձգելով օրիորդի վրա։

Սերգեյ Իվանիչն արմունկով բոթեց նրան և զգուշությամբ շշնջաց նրա ականջին.

— Լուսնյակ է։ Մուշտարու աչքով մտիկ արա։

— Կատերինա Կարլովնա, շա՞տ է նեղացրել ձեզ ծովը,— դիմեց Պետր Ստեփանիչն օրիորդին։

— Օ՛խ, օխ, էլ մի հարցնիր, ցավդ առնեմ, մեր ոսկորները փշրտել է,— պատասխանեց մայրն աղջկա փոխարեն։

— Մամա, ի՛նչ ես ասում, ինձ չի նեղացրել ծովը, նա շատ խաղաղ էր,— հակառակեց Կատերինա Կարլովնան, բռնելով յուր եղբոր թևից։

— Դո՞ւք ինչպես եք, Արտեմ Կարլիչ,— քաղաքավարության համար հարցրեց Պետր Ստեփանիչն երիտասարդին։

— Ինձ համար շատ ուրախ անցավ ժամանակը,— պատասխանեց Արտեմ Կարլիչը համեստությամբ, գլուխը քիչ թեքելով կրծքին։

Այսպես խոսելով հասան փողոց, ուր Պետր Ստեփանիչի շքեղ կառքն երկու առույգ ձիերով լծված սպասում էր նրանց։ Պետր Ստեփանիչն օգնեց օրիորդին և մորը կառք նստել, իսկ ինքն Արտեմ Կարլիչի հետ տեղավորվեց նրանց դեմ։ Մի քանի րոպեում արագընթաց ձիերը կառքը սլացրին դեպի ծովեզրյա ընդարձակ փողոցի ծայրը, ուր նա անհետացավ։ Սերգեյ Իվանիչը մնաց նրանց հետևից նայելով։

— Շառլատան, անառակ Դոլմազով, ես քո միտքը հասկացա,— արտասանեց նա։

Հետո, գլուխը խորհրդավոր կերպով շարժելով, կրկին վերադարձավ շրջելու։

III

Կառքը կանգնեց քաղաքի լայն փողոցներից մեկի վրա գտնվող երկհարկանի նորաշեն տան առջև։ Դյուրաշարժ Պետր Ստեփանիչն արագապես ցած թռավ կառքից և օգնեց ցած իջնելու Կատերինա Կարլովնային ու նրա մորը։ Նա, առաջնորդելով, տարավ նրանց ներս և ցույց տվեց բակի ներսի շինության ներքին հարկում մի բնակարան, որ բաղկացած էր երեք սենյակներից։

— Այ, այս եմ պատրաստել տվել ձեզ համար։ Բավա՞կան է ձեզ, Մարիա Իվանովնա, երեք սենյակ, թե՞ չէ,—

հարցրեց Պետր Ստեփանիչը պառավից, միևնույն ժամանակ նայելով աղջկա երեսին։

— Ցավդ առնեմ, ինչ կանենք այդքանը, չորս հոգուս համար երկուսն էլ բավական էր,— պատասխանեց Մարիա Իվանովնան, թեև հոգով շատ ուրախ կլիներ, եթե բնակարանն ավելի ընդարձակ լիներ։

— Կարլ Մարկիչը գիշերները գործարանումն է լինում։ Արտեմ Կարլիչին էլ նշանակել եմ կառավարիչ Բալախանի, ուրեմն քաղաքում մնալու եք դուք և Կատերինա Կարլովնան և ոչ թե չորս հոգի։ Բայց վնաս չունի, թող ձեր տեղը լայն լինի, ես խոմ վարձով չեմ տալիս։ Տունն իմն է, ինչպես ուզում եմ, այնպես էլ անում եմ։

— Ցավդ առնեմ, շատ ապրես, բայց, Պետր Ստեփանիչ, Արտեմիս համար քաղաքում որ տեղ տաք— լավ կլինի։ Առանց նրան սիրտս կնեղանա։

— Հեշտ բան է, թող մի քիչ այնտեղ գործերի հետ ծանոթանա, հետո նրան քաղաքում մի լավ պաշտոն կտամ։

— Չէ, մամա, Բալախանին լավ է, ասում են այնտեղ զարմանալի բաներ կան,— մեջ մտավ Արտեմ Կարլիչը։

— Իհարկե, ինչ որ կա այնտեղ է, օդն էլ ավելի առողջարար է, քան թե այստեղ, քաղաքում, ուր փոշու և ծխի մեջ խեղդվում ենք։

— Ինչպես ձեր քեֆն է, այնպես արեք, մենք էլ ձերն ենք, Պետր Ստեփանիչ,— ասաց Մարիա Իվանովնան և սկսեց դիտել բնակարանը։

Քառորդ ժամ նորեկները Պետր Ստեփանիչի հետ միասին պտտեցին սենյակները, հետո խոհանոցը, ուշադրությամբ զննելով ամեն մի անկյուն։

— Այ, մամա, այս իմ սենյակը կլինի,— ասաց օրիորդը,— կանգնելով սենյակներից մեկում։ Ես այս պատուհանի տակ կդնեմ իմ դաշնամուրը։ Իսկ դու և պապան մյուս սենյակում կապրեք, այն կողմինն էլ Արտեմի համար կսարքենք։

Բոլոր ժամանակ Պետր Ստեփանիչն յուր հայացքը չէր հեռացնում Կատերինա Կարլովնայից։ Նա հափշտակված էր օրիորդի իրանի նուրբ կազմվածքով, պարզ և հրապուրիչ դեմքով, փայլուն աչքերով, նազելի շարժվածքով։ Ամեն անգամ

օրիորդը խոսելիս, նա աչքերը հառում էր նրա երեսին և ագահությամբ նայում։ Այդ ժամանակ նրա ամբողջ մարմնով, կարծես, անցնում էր էլեկտրական ցնցում, և նրա փոքրիկ կապկային աչքերի մեջ փայլում էր անասնական կիրքն յուր բոլոր ուժով։ Նա անդադար աչքերը կուչ բերելով, քաղցրությամբ ժպտում էր օրիորդի երեսին, և այդ ժամանակ նրա դեմքը մի ինչ-որ անախորժ, ինչ-որ զզվելի, վավաշոտ արտահայտություն էր ստանում։ Օրիորդը, կարծես, այդ չէր նկատում և անտարբերությամբ խոսում էր նրա հետ։ Սակայն երբ մի անգամ Պետր Ստեփանիչը շարունակ նայեց նրա երեսին և բոլորովին անտեղի և անժամանակ ժպտաց, գլուխը թեքեց դեպի կուրծքը, և նրա դեմքը թեթև կարմրեց։

Մարիա Իվանովնան դիմեց յուր որդուն.

— Վազի՛ր, Արտեմ, շուտով ապրանքը հավաքիր շոգենավից ու բեր։

— Իսկ դուք, Կատերինա Կարլովնայի հետ գնանք ինձ մոտ ճաշելու,— մեջ մտավ Պետր Ստեփանիչը։

Մարիա Իվանովնան համաձայնվեց, և Դոլմազովը, յուր տան հասցեն տալով Արտեմ Կարլիչին և նրանց հետ միասին կառք նստելով, շտապեց տուն։

Իրիկնադեմ էր, երբ նորեկները ճաշելուց հետո կրկին վերադարձան իրանց բնակարանը։ Արտեմ Կարլիչը բոլոր իրեղենները արդեն բերել էր։ Նրանք սկսեցին կարգի բերել իրանց բնակարանը։ Մարիա Իվանովնան յուր որդու հետ պատրաստում էր վերջին սենյակը, իսկ Կատերինա Կարլովնան նույնպես պատրաստում էր յուր սենյակը Պետր Ստեփանիչի օգնությամբ։ Չնայելով օրիորդի թախանձանքին, որ նա նեղություն չքաշի աշխատելու ու գնա հանգստանալու, հոգատար Պետր Ստեփանիչը քայլ անգամ չէր ուզում հեռանալ օրիորդից և ոտքի-ձեռքի ընկած մեծ պատրաստակամությամբ օգնում էր նրան։ Հետզհետե Կատերինա Կարլովնան սկսեց ձանձրանալ նրա օգնությունից։ Պետր Ստեփանիչն այնքան չէր օգնում, որքան յուր ծանր ու խոր հայացքներով և անտեղի քաղցրախոսությունով ձանձրացնում էր օրիորդին։

Կատերինան այդ հայացքներն ընդունում էր իբրև սովորական քաղաքավարության արտահայտություն երիտասարդի

կողմից դեպի մի օրիորդ, բայց երբ Պետր Ստեփանիչը սկսեց անցնել սովորական շափավորության սահմանը, այն որպեսից օրիորդի սրտում ծագեց ինչ-որ կասկած։ Պետր Ստեփանիչի ներկայությունը սկսեց նրան ճնշել, և նա աշխատում էր խուսափել նրա հայացքներից։

Պատահեց մի դեպք։ Կատերինա Կարլովնան յուր հագուստեղենները տեղավորում էր պահարանի մեջ։ Նրա մայրն ու եղբայրը մյուս սենյակումն էին։ Պետր Ստեփանիչն անշարժ կանգնած, նայում էր օրիորդին։ Երբ Կատերինան, վերջացնելով գործը, կամենում էր կողպել պահարանը, բանալին մի քանի անգամ շուռ տվեց ու չկարողացավ կողպել։ Պետր Ստեփանիչի սուր հայացքն խսկույն այդ նկատեց։ Նա շտապով մոտեցավ օրիորդին։

— Թույլ տվեք, որ ես կողպեմ, Կատերինա Կարլովնա, դուք ուժ չունեք, ափսոս է, ձեր քնքուշ ու գեղեցիկ մատները կցավեն։

— Ոչ, խնդրեմ նեղություն մի՛ քաշեք, այդ պահարանը բացի ինձանից ոչ ոք չի կարողանում կողպել և բանալ։

— Ես կարող եմ, այ, տեսնո՞ւմ եք, ձեր ձեռները ինչպես կարմրեցին։

Այս ասելով, Պետր Ստեփանիչը ձախ ձեռքով սիրալիր հեռացրեց օրիորդի ձեռը բանալիից, իսկ աջով սկսեց պտտեցնել բանալին, միևնույն ժամանակ մյուս ձեռում սեղմած պահելով օրիորդի աջը։ Օրիորդն աշխատեց զգուշությամբ ազատել յուր ձեռը, բայց չհաջողվեց։ Պետր Ստեփանիչը նրան շատ ամուր էր սեղմել։ Օրիորդը չգիտեր ինչ աներ։ Նա մի անգամ ևս փորձեց դուրս բերել ձեռը նրա ձեռից, բայց, չկարողանալով, սկսեց դողալ։ Պետր Ստեփանիչի մեջ եռաց բուռն կիրքը։ Նա, շարունակելով բանալին ոլորել կողպեքի մեջ, յուր շրթունքները զգուշությամբ մոտեցրեց օրիորդի երեսին և կամենում էր... Բայց զսպեց իրան։

Այդ վայրկյանին ներս մտավ Մարիա Իվանովնան։ Փոքր անցած՝ գնդակի նման ներս գլորվեց մի լզար, կարճահասակ մարդ ճերմակ մազերով։

— Պա՛պա, պա՛պա,— գոչեց Կատերինա Կարլովնան և, առաջ վազելով, ընկավ ծերունու գիրկը։

IV

Ներս վազողը Կարլ Մարկիչ Պոպովն էր, Կատերինայի հայրը։ Մի քանի բոպե հայր ու աղջիկ իրարու գրկած համբուրվում էին։ Վերջապես, Կարլ Մարկիչն ազատեց աղջկան յուր գրկից և նույն կարոտությամբ ընկավ որդու, Արտեմ Կարլիչի գիրկն ու մի քանի համբույրներ դրոշմեց նրա ճակատին։ Հետո բարևեց ամուսնուն, մի անգամ միայն համբուրելով նրա բերանի անկյունը։ Պետր Ստեփանիչն ինչևիցե օտար էր, համեստությունը Կարլ Մարկիչին ստիպեց չափավորել յուր ամուսնական զգացմունքները։

— Ես պարտավոր եմ հազար անգամ շնորհակալություն հայտնել ձեզ սեմեյստվոյիս խաթրու,— դարձավ Կարլ Մարկիչը Պետր Ստեփանիչին, որը մի կողմ քաշված նայում էր այդ ընտանեկան տեսարանին։

Կարլ Մարկիչը քիչ մոտեցավ նրան, ձեռները քարշ ձգեց կողքերին, ոտները կպցրեց իրարու և, մեջքից երկու ծալ թեքվելով, երիտասարդական աշխուժությամբ մի քանի անգամ գլուխ տվեց նրան։

— Չարժե, չարժե,— արտասանեց անտարբերությամբ Պետր Ստեփանիչն, յուր հայացքը չհեռացնելով Կատերինա Կարլովնայից, որն այդ ժամանակ ինչ-որ բանի մասին խոսում էր յուր եղբոր հետ։

— Մարիա, Կատյա, Արտեմ, մոտեցեք, շնորհակալություն արեք Պետր Ստեփանիչին, էնդուր, որ նա է բասպորյաժենիյե արել ձեզ Բաքու բերելու։

Կարլ Մարկիչի ընտանիքը սեղմեց Պետր Ստեփանիչի ձեռը։ Դա առաջին շնորհակալությունն էր, որ ստացավ բարեսիրտ խնամատարն երախտագետ ընտանիքից։

— Տեսնում ես, Մարիա, ինչ աղավարի քվարթիրա է,— շարունակեց Կարլ Մարկիչը, պտույտ գալով Պետր Ստեփանիչի առջև։ Ես Պետր Ստեփանիչից շատ շնորհակալ եմ, շա՛տ. իմ պարտքս է ստարայացա իլիլ նրան չեսնո, բլագորոդնո ծառայելու, էնդուր որ նրա պես խոզյային ես գրանիցայումն էլ չեմ կարող գտնել։

Կարլ Մարկիչը խոսելու ժամանակ ձեռներով, գլխով և

ուսերով այնպիսի շարժումներ էր անում, որ, կարծես քսանուհինգ տարեկան երիտասարդ լիներ, այնինչ մոտ վաթսուն տարեկան էր։

Պետր Ստեփանիչն ուշադրություն չէր դարձնում յուր կառավարչի շատախոսության վրա։ Նա խորասուզված էր ինչ-որ մտածողության մեջ։ Սակայն այդ երկար չտևեց, հանկարծ նա դիմեց Մարկիչին լուրջ ձայնով.

— Գործարանն այսօր բանե՞լ է։

— Ի՛նչպես չէ, ի՛նչպես չէ, աղա ջան։

— Ո՞վ կա այնտեղ այժմ։

— Ամենքն այնտեղ են։ Ես, աղա ջան, զավոդը պորուչիյտ արի գլավնի պրիկաշչիկին մինչև էգուց առավոտը։

— Հը՞մ,— արտասանեց միայն Պետր Ստեփանիչը, կրկին մտածողության մեջ ընկնելով և բեղերը կրծոտելով։

Կարլ Մարկիչը քիչ շփոթվեց։

— Բեզպոկոյիտցա մի՛ լինեք, աղա ջան, ամեն ինչ պորյադկայով կգնա։

— Առավոտը շուտով գնացեք, որ գործարանը չդադարի, եթե ոչ, գիտեք, որ մի օրվա դադարելն ինձ կզրկի հազար մանեթ աշխատանքից,— ասաց Պետր Ստեփանիչը քիչ հրամայական եղանակով, աշխատելով յուր դեմքի հպարտությունը պահել։

Պետք է ասած, որ Պետր Ստեփանիչը մի քիչ սուտ ասաց։ Գործարանն առանց Կարլ Մարկիչի ևս կարող էր վաղը գործել և եթե դադարեր էլ, մի օրվա վնասը երբեք հազար մանեթ չէր կարող լինել։ Բայց նա այդ ասաց առաջինը նրա համար, որ Կարլ Մարկիչի վրա ունեցած յուր իշխանությունը ցույց տա նրա ընտանիքին և երկրորդ, մի օրվա վնասը քսան անգամ ավելի ցույց տալով, յուր հարստությունով մի փոքր փոշի փչի այդ ընտանիքի աչքերին։ Այս պարզ էր, ըստ որում, յուր հրամանը կրկնելուց հետո, նա մի առանձին ինքնաբավականությամբ նայեց բոլորին հերթով, որ տեսնի, ինչ ազդեցություն արին յուր խոսքերը լսողների վրա, իսկ նամանավանդ Կատերինա Կարլովնայի վրա։ Եվ հիրավի նա մասամբ չսխալվեց։

Լսելով նրա խոսքերը, Մարիա Իվանովնան այնպես զարմացավ, որ աչքերը ճլզեց և բերանը բաց մնաց։ «Օրական հազար մանեթ փող է աշխատում. երանի նրան, որ սրա նման փեսա կունենա»,— անցավ իսկույն նրա մտքով, և գլուխը թեքեց կրծքին, ձեռները խաչաձև ծալեց ծոցում և սկսեց ագահությամբ նայել Պետր Ստեփանիչին։ Պակաս չզարմացավ և Արտեմ Կարլիչը։ «Օրական հազար մանեթով կարելի է թագավորի պես ապրել արտասահմանում, այն էլ Փարիզի մեջտեղում. ախմախն ինչո՞ւ է այստեղ քամու ու փոշու մեջ խեղդվում»,— այսպես մտածեց նա և սկսեց նույնպես նայել Պետր Ստեփանիչի երեսին։

Միայն Կատերինա Կարլովնան էր, որի վրա կարծես ոչինչ ազդեցություն չարին Պետր Ստեփանիչի փքուն խոսքերը։ Նա երեսը շուռ տվեց և անցավ մյուս սենյակը։

— Առավոտը, խորոզը կանչելիս, ես զավոդում կլինեմ, աղա ջան, ես չեմ թողնիլ, որ ձեզ ուբիտկա լինի,— միամիտացրեց Կարլ Մարկիչը Պետր Ստեփանիչին։

Կատերինա Կարլովնան մյուս սենյակ անցնելուց հետո Պետր Ստեփանիչի դեմքն ավելի փոխվեց։ Սովորական ուրախ ու կեղծ ժպիտը նրա դեմքից անհետացավ։ Նա կնճռեց ճակատն և առանց այն ևս քացախած երեսն ավելի թթվեցրեց։

— Նստեցե՛ք, պոժալուստա, Պետր Ստեփանիչ, այսօր շատ եք նեղացել,— առաջարկեց Կարլ Մարկիչը, վերին աստիճանի խոնարհությամբ և երկյուղով մոտեցնելով աթոռներից մեկն և ոտները սենյակի հատակին քսքսելով։

— Ո՛չ, ես գնում եմ, դուք կարգի դրեցեք բնակարանը, ես վաղը դարձյալ կգամ։ Թո՛ղ Արտեմն առավոտն ինձ մոտ գա, որ ճանապարհեմ Բալախանի. իսկ դուք, Կարլ Մարկիչ, շուտ կզարթնեք և կգնաք գործարան։

— Նեպրեմեննո, նեպրեմեննո, ի՛նչ ասել կուզի, աղա ջան, բաս չայ անուշ չե՞ք անում։ Կատյա, Պետր Ստեփանիչի համար չայ զալ՝ֆարիտ արա բեր։

— Շնորհակալ եմ, ես գործ ունիմ, գնում եմ, մնաք բարով։

Պետր Ստեփանիչը ձեռ տվեց միայն Մարիա Իվանովնային, իսկ Կարլ Մարկիչին և նրա որդուն միայն թեթև գլուխ տվեց։

— Ցտեսություն, Կատերինա Կարլովնա,— ասաց նա, մոտենալով մյուս սենյակի դռներին և այնտեղից ձեռն ուղղելով օրիորդին։

— Գնաք բարով,— սառնությամբ պատասխանեց վերջինն, յուր մատների ծայրերը տալով նրան։

Պետր Ստեփանիչը զգաց այդ սառնությունը։ Նկատեց նույնպես և՛ Կարլ Մարկիչը, նկատեց և մի խոշոր հանդիմանական հայացք ձգեց յուր աղջկա վրա։

Վերջապես, Պետր Ստեփանիչը Կարլ Մարկիչի ուղեկցությամբ դուրս եկավ փողոց և հեռացավ, վրդովված առաջին անհաջողությունից։ Կատերինա Կարլովնան վիրավորել էր նրա սահմանափակ ինքնասիրությունը։ Այդ նա զգում էր և չէր կարող անտարբերությամբ տանել։ Նրա համար դժվար էր մարսել օրիորդի կոշտ վարմունքը։ «Աղքատ լինիս ու այդքան հպա՛ռտ,— մտածում էր նա, անցնելով փողոցով։— Արժան չհամարեց մինչև անգամ կարգին ձեռ տալու ինձ, միայն մատների ծայրերը մոտեցրեց։ Այ գոռոզություն։ Հարցնող լինի, ինչո՞վ ես պարծենում, այն էլ ինձ մոտ, որ, եթե ուզենամ, կարող եմ քաղցած սպանել։ Բայց սպասենք, կարծեմ, երկար չի տևիլ այդ հպարտությունը, սպասենք...»։

— Բայց ի՛նչ հասակ, ի՛նչ կազմվածք... ի՛նչ դեմք... Վատ չէր լինիլ, եթե Կարլ Մարկիչը մի հարուստ վաճառական լիներ և ոչ թե այսօրվա նման մի չնչին գործակատար, դատարկ գրպանով և անհայտ անունով։ Այն ժամանակ ես մինչև անգամ չէի հրաժարվիլ Կատերինայի հետ օրինավոր կերպով պսակվելուց, թեև բժիշկները... Հը՞մ, բժիշկնե՞րը... է՞հ, թքել եմ նրանց գիտության վրա...

Պետր Ստեփանիչը մեկ փողոց անցավ ոտով և հետո, նստելով առաջին պատահած կառքը, գնաց կլուբ։

V

— Մաշա, դուշա մոյա, առա տեսնեմ, ի՛նչպես ես, քանի ժամանակ է առանց քեզ մենակ էի,— սկսեց նորից Կարլ

Մարկիչը, փաթաթվելով յուր ամուսնու վզին, երբ, Պետր Ստեփանիչին ճանապարհ դնելով, վերադարձավ սենյակ։

— Հեռու գնա՛, հեռու գնա՛, շորերիցդ նավթի հոտ է փչում, սիրտս խառնում է,— պատասխանեց Մարիա Իվանովնան, հրելով նրա կրծքին։

— Մաշա ջան, ի՛նչ ես ասում, դա իմ պարադնի կոստյումն է, նոր եմ կարել տվել։

— Լավ է, բավական է, ձեռ քաշիր, ամաչի՛ր երեխեքից,— հակառակեց կրկին Մարիա Իվանովնան, երբ Կարլ Մարկիչը կամեցավ համբուրել նրան։

— Ումի՞ց ամաչեմ, Արտեմի՞ց, հե՛յ, սպասի՛ր, նա էլ ժենիյտցա կլինի, էն վախտը կիմանա, թե ինչ քաղցր բան է սուպրուգան։ Տեսա՞ր, Մարիա, ինչ լավ խոզյային ունիմ, պրոստո զոլոտո։ Ինձ շատ է ուվաժայտ անում, ամեն կիրակի կոֆեով ուգաստյիտ է անում, մի խոսքով, շատ լավ խոզյային է։ Հենց այս մոտերս ինձ զավոդի ուպրավլյայուշչի շինեց։ Կատյա, քե՞զ ինչպես դուր եկավ Պետր Ստեփանիչը, շատ լյուբեզնի տղա է, չէ՞,— դարձավ Կարլ Մարկիչն աղջկան, որն այդ ժամանակ թեյ էր ածում։

Կատերինա Կարլովնան ոչինչ չպատասխանեց։

— Շատ լավ մարդ է երևում,— պատասխանեցին նրա փոխարեն միաբերան մայր և որդի։

— Շատ օբրազովաննի տղա է,— շարունակեց գովաբանել Կարլ Մարկիչը։— Քանի տարի է Ռուսիայում պուտեշեստվովայտ է անում, ռուերեն խոսում է մոսկվիչի պես, քո քեֆն էլ կգա, Կատյա ջան։ Ամեն ջուռայի գազեթներ է կարդում, իրան նման պրեֆերանս խաղացող չիմանաս կլուբում։ Պրեֆերանսը օբրազովաննի խաղ է, Մարիա, ուրիշ բան չըմտածես, ամեն մարդ չի կարողանում խաղալ։ Բարիշնաների համար այն տեսակ կավալերություն է անում, այն տեսակ նեժնի խոսում է, որ հենց իմանաս ախտյոր իլի։ Օօ՛օ՛, չէ, շատ աղավարի, շատ աբրազովաննի տղա է։ Ես զարմանում եմ, որ Կավկազում այդպես տղա եմ տեսնում, էնդուր որ Կավկազը դիկիյ է, մեր կողմերի պես ցիվիլիզովաննի չէ։ Ամա դու, Կատյա ջան, նրա հետ դելիկատնի պոստուպիտցա չիլար հա՛ա, էտի, իմանում ես, լավ չի հա՛ա։

— Ինչպես հարկն էր, այնպես վարվեցի, խո քեզ պես մինչև փողոց ճանապարհ չէի դնելու,— ընդհատեց նրան Կատերինա Կարլովնան բավական սառն ու խիստ եղանակով։

— Օ՜հո՛, ինչ ես ասո՞ւմ։ Ես պարտավոր եմ նրա հետ լյուբեզնի լինել, էնդուր որ ես նրա պոդչինյոննին եմ, նա իմ խոզյայինն է,— տաքացավ Կարլ Մարկիչը, փողպատն ուղղելով և գլխի կարճլիկ ճերմակ մազերն երկու ձեռներով հարթելով։

— Դու պարտավոր ես, բայց ես— ոչ։ Դու կարող ես նրա շորս կողմով պտույտ գալ, իսկ ինձանից մի պահանջիր նույնը,— պատասխանեց Կատերինա Կարլովնան ավելի սառնությամբ։

— Մամա ջան, ինչե՞ր ես խոսում, սկուշնա ես, քեֆդ լավ չէ, լիխորադկա ունիս,— փոխեց յուր խոսքը Կարլ Մարկիչը, իսկապես կասկածելով աղջկա առողջության մասին։

— Շկապը կողպելիս ձեռը ցավեցրել է,— պատասխանեց Մարիա Իվանովնան աղջկա փոխարեն։

Կարլ Մարկիչի մարմնին կարծես էլեկտրական թելի ծայր դիպցրին։ Նա այնպես վեր թռավ տեղից, որ աթոռն ընկավ, սեղանը սաստիկ շարժվեց, թեյի բաժակը շուռ եկավ, և թեյը սեղանի երեսով սկսեց հոսել սենյակի հատակը։ Մարիա Իվանովնան և Արտեմը, շփոթվելով Կարլի այդ արագ շարժումից, նույնպես բարձրացան իրանց տեղերից։

— Դուշա մոյա, աբա, աբա, աբա տեսնեմ,— գոչեց Կարլ Մարկիչը, հարձակվելով յուր աղջկա վրա։

Կատերինա Կարլովնան, բավական վախեցած յուր հոր տարօրինակ շարժումից, անգիտակցաբար մի քայլ հետ գընաց։

— Կարլ, այդ ինչե՞ր ես անում, գժվել խո չե՞ս, վախեցրիր մեզ,— բացականչեց Մարիա Իվանովնան ծիծաղելով։

Սակայն Կարլ Մարկիչն ուշադրություն չդարձրեց նրա վրա։

— Ցույց տո՛ւր, աբա, տեսնեմ, դուշա։

— Հանգստացիր, պապա, ոչինչ չկա, ցավը վաղուց է անցել,— խոսեց, վերջապես, Կատերինա Կարլովնան շփոթված։

Կարլ Մարկիչը քիչ հանգստացավ և բաց թողեց աղջիկ թևը։ Նա հետ նայեց և, տեսնելով յուր տարօրինակ շարժման հետևանքը, կարծես ամաչեց յուր արարմունքից։

— Ինչպե՛ս վախեցրիր ինձ, Մարիա, հենց իմացա, որ մատը ռազդավիյտ է արել Կատյան,— ասաց նա կրկին յուր տեղը նստելով։

— Քիչ էր մնում, որ դու մեզ ռազդավիյտ աներիր սեղանով, այնպես վեր թռար տեղիցդ,— պատասխանեց Մարիա Իվանովնան ծիծաղելով։

Ընթրիքի ժամանակ նորեկները մանրամասը պատմեցին Կարլ Մարկիչին իրանց կյանքի մասին նրա բացակայության ժամանակ ու ստիպեցին նույնն անել և՛ Մարկիչին։ Կարլ Մարկիչը, կարծես, հենց մի այդպիսի հարմար առիթ էր որոնում։ Նա, մի քանի բաժակ գինով գլուխը տաքացնելով, ըսկըսեց երկար ու բարակ պատմել յուր մի տարվա կյանքը։ Նա նկարագրեց գործարանը, նավթահանքերը, ծանոթացրեց նրանց նավթային արդյունաբերության հետ։ Պատմեց, թե ինչպիսի գանձ է Բաքուն, թե ինչպես հեշտ են հարստանում այնտեղ մարդիկ և ինչպես շուտ, թե ինչպես է Պետր Ստեփանիչը հարստացել, առաջ ուրիշի մոտ գործակատար լինելով։ Կրկին սկսեց գովաբանել վերջինին, ավելացնելով, թե հույս կա, որ ինքը, Կարլ Մարկիչը, նրա օգնությամբ, մի օր գործարանատեր դառնա և օրինակ բերեց շատերին, որոնք մի քանի տարվա ընթացքում, ոչինչ չունենալով, հարստացել են։ Ասաց նույնպես, որ Պետր Ստեփանիչին ինքը մի քանի անգամ այս մասին ակնարկել է։ Պետր Ստեփանիչը հույս է տվել ժամանակով անկախ գործարանատեր դարձնել նրան, եթե միայն լավ կծառայի։ Այժմ Կարլ Մարկիչն ինքն աշխատում է լավ ծառայել Պետր Ստեփանիչին, որպեսզի օրեցօր ավելի գրավի նրա սերն ու հովանավորությունը։ Այնուհետև Կարլ Մարկիչը, ավելի ու ավելի տաքացնելով գլուխն և հափշտակվելով յուր պատմությունով, սկսեց նկարագրել յուր մոտիկ ապագան խիստ գեղեցիկ գույներով։ Ասաց, որ շատ ժամանակ չի քաշիլ և ինքը կրկին կդառնա առաջվա «պերվոյ գիլդի կուպեց Պոպովը» և գուցե մի քիչ էլ ավելի։ Այն ժամանակ թող մտիկ անեն «Հաշխանի» թշնամիներն ու նախան-

ձից սիրտները տրաքի։ Վերջապես, Կարլ Մարկիչն ասաց, թե այսուհետև ինքը նյութապես ապահովված է և ոչինչ հոգս չունի։ Հարկավոր է միայն մտածել առողջության մասին, ուրիշ ոչինչ։ Նա սկսեց խրատել յուր ընտանիքին, որ պահպանեն իրենց առողջությունը։ Խոսելով Կատերինա Կարլովնայի վերաբերությամբ, նա կողմնակի կերպով ակնարկեց, թե Բաքվում կարելի է լավ փեսացու ճարել նրա համար, որովհետև ազափ տղերք շատ կան, բոլորն էլ հարուստներ, իսկ գեղեցիկ, լուսավորված և շնորհքով աղջկերք— շատ քիչ։ Սրա պատճառն այն է,— ասաց Կարլ Մարկիչը, որ Կովկասը դեռ «դիկիյ ստրանա» է, կանայք մեծ մասամբ շարասվի մեջ փաթաթված են, «օբրազովայտցա» չեն եղել և այլն։ Ի վերջո Կարլ Մարկիչի երևակայությունը այնքան բորբոքվեց Կատերինա Կարլովնայի վերաբերությամբ, որ նա վստահացավ մի հանդուգն հույս ևս արտահայտել։ Բայց իսկույն շտապեց ավելացնել, որ այդ հույսը իրագործումը կախված է Կատերինա Կարլովնայից, թե ինչպես սա իրան ցույց կտա և ինչպես կվարվի Պետր Ստեփանիչի հետ և թե վերջինն ինչպես կնայի Կատյայի վրա... Պատվիրեց Մարիա Իվանովնային, որ Պետր Ստեփանիչին միշտ պատվով ու հարգանքով ընդունի և ամեն անգամ «կոֆեով ուգաստիյտ անի»։ Խնդրեց նույնպես Կատերինա Կարլովնային, որ սա ևս յուր կողմից շատ քաղաքավարությամբ վերաբերվի Պետր Ստեփանիչին, հետը ռուսերեն խոսի, «դելիկատնիյ պոստուպիյտցա» անի, «էնդուր, որ Պետր Ստեփանիչն ինքը ցիվիլիզովաննիյ կավալեր է և սիրում է նեժնի մանիերնեք»։

Մի խոսքով, Կարլ Մարկիչը բան չմնաց, որ չպատմի և պատվերներ ու խրատներ չմնաց, որ չտար Մարիա Իվանովնային, նամանավանդ Կատերինա Կարլովնային։

Ընթրիքն ավարտվեց։ Կարլ Մարկիչ Պոպովը բորբոքված երևակայությամբ հեռացավ յուր սենյակը։ Արտեմը, Մարիա Իվանովնան և Կատերինան նույնպես գնացին իրանց սենյակները քնելու։

Առավոտը Կարլ Մարկիչը հիշտ որ, ինչպես ինքը խոսք էր տվել Պետր Ստեփանիչին, «խորոզը կանչելիս» գործարան գնաց։ Իսկ Արտեմ Կարլիչը տաքը ժամին ներկայացավ Պե-

տրր Ստեփանիչին և մի քանի անհրաժեշտ պատվերներ ըստանալով նրանից, իսկույն ճանապարհվեց Բալախանի՝ գործակատարի պաշտոնով։

VI

Հետևյալ օրը, կեսօրվա դեմ, Պետր Ստեփանիչը կրկին ներկայացավ Կարլ Մարկիչի ընտանիքին, այս անգամ ուրիշ և ավելի շքեղ հագուստով։ Մարիա Իվանովնան խոհանոցում կերակուր էր պատրաստում ճաշի համար։ Կատերինա Կարլովնան մեքենայի վրա ինչ-որ բան էր կարում։

Լսելով յուր հետևից Պետր Ստեփանիչի բարևի ձայնը, նա իսկույն ընդհատեց գործը, բարձրացավ տեղից և, սառն քաղաքավարությամբ պատասխանելով նրա բարևին, ձեռ տվեց և դիմեց խոհանոց, որ մորը հայտնի։

— Ոչինչ, ոչինչ, նեղություն մի՛ քաշեք, Կատերինա Կարլովնա,— ասաց Պետր Ստեփանիչը, կտրելով օրիորդի ճանապարհը, որ դուրս չգնա։

Բայց օրիորդը լսեց նրան։ Մի վայրկյանից ներկայացավ Մարիա Իվանովնան, թևերը մինչև արմունկները ծալած։ Պետր Ստեփանիչը թռավ տեղից և քաղաքավարությամբ բարևեց նրան։

— Երեկ, երբ Կատերինա Կարլովնան իրեղենները դարսում էր, ես նկատեցի, որ նրա ճերմակեղենի կամոդը շատ հնացած է և անպետք։ Չնեղանաք, Մարիա Իվանովնա, ես առանց ձեր թույլտվության, մի լավ կամոդ եմ առել նրա համար, որն այս րոպեիս գործակատարս կբերի։

— Իզուր եք առել, ես շնորհակալ եմ, իմ կամոդը շատ լավն է,— պատասխանեց Կատերինա Կարլովնան, մի նշանավոր հայացք ձգելով յուր մոր երեսին, որ սա ևս հրաժարվի նվերն ընդունելուց։ Մարիա Իվանովնան հասկացավ աղջկա միտքը, բայց և այնպես կամոդը խիստ հետաքրքրեց նրան։

— Ցավդ առնեմ, մեզ համար ինչու ավելորդ խարշեր եք անում, որ առաջուց ինձ ասեիք ես չէի թողնի,— ասաց նա,

սիրալիր նայելով Պետր Ստեփանիչի երեսին, որ տեսնի ինչպես հասկացավ նա յուր անորոշ խոսքերը։

— Մեծ գումար չեմ տվել, հարյուր մանեթն ինչ բան է, որ նրա համար մտածեմ,— պատասխանեց Պետր Ստեփանիչը, ժպտալով Կատերինա Կարլովնայի երեսին։

Վերջինը երեսը դարձրեց դեպի մորն և սկսեց հանդիմանորեն նայել նրա երեսին։

— Կատյա, իսկ որ հենց քեզ հարկավոր է մի կամոդ, վնաս չունի, որ Պետր Ստեփանիչը առանց մեզ հարցնելու առել է։ Հորդ կասեմ, որ յուր ռոճիկից հարյուր մանեթ թողնի Պետր Ստեփանիչի մոտ։

— Մամա, ի՞նչ ես ասում, հարյուր մանեթը պապայի մի ամսվա ռոճիկն է, ես ինչ եմ անում այդքան թանկ կամոդը,— կրկին հակառակեց օրիորդը։

— Դուք ինձ վիրավորում եք, Մարիա Իվանովնա, ես փողի կարոտություն չունիմ. ես այդ իբրև մի չնչին նվեր եմ տալիս և ոչ թե ծախում,— պատասխանեց Պետր Ստեփանիչը, կեղծորեն իրան վիրավորված ձևացնելով։

Այդ ժամանակ մի մշակ, Պետր Ստեփանիչի գործակատարի առաջնորդությամբ, ներս բերեց բավական մեծ կամոդ ընկույզի փայտից շինած։

Կամոդը դրեցին պատշգամբի վրա։ Պետր Ստեփանիչը բանալին շուռ տվեց և բաց արավ, որ պահարանը ցույց տա Կատերինա Կարլովնային և Մարիա Իվանովնային։

— Շատ գեղեցիկ բան է, շատ էժան եմ առել։

Այսպես թե այնպես, կամոդն այնքան գեղեցիկ էր, որ միանգամից գրավեց Մարիա Իվանովնային։ Երկար ժամանակ նա նայում էր կամոդի ներսին, դրսին, վերևին և չէր կարողանում կշտանալ նայելուց։ «Ի՜նչ լավն է, ի՜նչ մեծն է, Կատյա, շորերդ կտեղավորվեն»,— կրկնում էր նա անդադար, ուրախությունից պտույտ գալով պահարանի շորս կողմը։

Վերջապես ավելորդ ժամանակ չկորցնելու համար Պետր Ստեփանիչը կողպեց պահարանը և բանալին առաջարկեց Կատերինա Կարլովնային, ուղղակի նրա դեմ կանգնելով և մեջքից թեքվելով։

— Թանկ չէ նվերը, բայց թանկ է իմ սերը, ասում են

ռուսները,— ասաց Պետր Ստեփանիչը ռուսերեն լեզվով, բանալին բռնելով ուղիղ օրիորդի քթի առջև։

Այս խոսքերն օրիորդին ավելի շփոթեցրին։ Նրա երեսը կաքմրեց, և նա չկարողացավ թե ինչ պատասխանի, միևնույն ժամանակ, բանալին չընդունելով Պետր Ստեփանիչից։

Պետր Ստեփանիչի դեմքով մի վայրկյան սահեց անբավականության ժպիտ, բայց նա զսպելով յուր վրդովմունքը, կրկին առաջարկեց։

— Ի՞նչ ես մեխված մնացել, Կատյա, ախար քեզ է առաջարկում Պետր Ստեփանիչը։

Կատյան լուռ էր տակավին։ Պետր Ստեփանիչը բանալին հանձնեց Մարիա Իվանովնային, յուր դեմքը քիչ թթվացնելով։

— Շնորհակալ ենք, շատ շնորհակալ ենք։ Աստված ձեր միները հազար անի, Պետր Ստեփանիչ, ձեր լավությունը հավիտյան չենք մոռանալ։ Կատյա, դու հրավիրիր Պետր Ստեփանիչին սենյակ, քիչ խոսեցեք, ես գնամ կոֆե պատրաստեմ այս րոպեիս։

— Դու մնացիր, մամա, ես կպատրաստեմ։

— Չէ, չէ, ի՞նչ ես խոսում, դու ե՞րբ ես կոֆե եփել, որ հիմի թողնեմ. նստիր այստեղ, ես այս րոպեիս...

Կատերինա Կարլովնան ակամա համաձայնվեց և Պետր Ստեփանիչին հրավիրեց ներս։ Նա մոտեցավ կարի մեքենային և սկսեց շարունակել յուր ընդհատված գործը, առաջարկելով Պետր Ստեփանիչին նստել։

Պետր Ստեփանիչը նստեց լուռ ու մունջ, ագահությամբ նայում էր օրիորդին, որը գլուխը խոնարհեցրած, գործում էր նույնպես լուռ ու մունջ։ Նա կամենում էր խոսել, բայց չգիտեր ինչի մասին խոսեր և ինչպես սկսեր։ Այդ տեսեց մի քանի րոպե։ Վերջապես, նա յուր աթոռը վերցնելով, մոտեցավ օրիորդի սեղանին և վստահացավ ընդհատել անտանելի լռությանը։

— Կատերինա Կարլովնա, այս գիշեր կլուբում լավ կոնցերտ է լինելու, ես եկել եմ ձեզ հրավիրելու։ Կհամաձայնե՞ք ինձ հետ միասին գնալ, տոմսակներ էլ վերցրել եմ։

— Ոչ, ներեցեք, չեմ կարող, շատ հոգնած եմ, մի ուրիշ

անգամ կգամ,— պատասխանեց Կատերինա Կարլովնան այս անգամ բավական մեղմությամբ։

— Այժմ ուշ է հրաժարվելը։ տոմսակները գնված են,— ասաց սիրտ առնելով Պետր Ստեփանիչը, թեև դաթ՛ալ սուտ, որովհետև նա տոմսակներ դեռ չէր գնել...

— Առանց ինձ հայտնելու զուր եք առել։

— Հիմա ինչևիցե, երկուսը առել եմ, մեկը ինձ, մյուսը ձեզ համար, անպատճառ պիտի գաք։

— Ո՛չ, ես գալ չեմ կարող։

— Բաս տոմսակնե՞րը,— ասաց Պետր Ստեփանիչը կատակով։

— Տվեք ձեր ընկերներին։

— Ընկերներ չունիմ, Կատերինա Կարլովնա, ես մենակ մարդ եմ այս աշխարհում, նոր եմ ուզում ընկեր ձեռք բերել,— ասաց Պետր Ստեփանիչը, կեղծությամբ փոխելով յուր ձայնն ու դեմքը, որպեսզի օրիորդի գութը շարժի դեպի ինքը։

Սակայն Կատերինա Կարլովնայի դեմքի վրա նա չնկատեց ոչինչ փոփոխություն։ Նա տեսավ նույն անտարբերությունը, նույն սառնությունը, ինչ որ առաջ էր։

— Այսպիսի քաղաքում ձեզ նման հարուստ մարդը շատ հեշտությամբ կարող էր ընկերներ ունենալ,— պատասխանեց օրիորդը, չնայելով նրա երեսին։

— Մենակ եմ, մենակ, Կատերինա Կարլովնա, ա՛խ, եթե իմանաք իմ ցավը։ Ես ունեմ շատ ծանոթներ, բայց ոչ ոքի հետ բարեկամություն անել չեմ կարող։

— Ինչո՞ւ։

— Որովհետև այստեղի մարդիկ անքաղաքավարի են. նրանց հետ ես չեմ ուզում ընկերանալ։

— Դուք ի՞նչ տեղացի եք. ներեցեք հարցնել։

— Ես կովկասցի եմ, Շուշումն եմ ծնվել։ Բայց շատ երկար ժամանակ ապրելով Մոսկվայում, Պետերբուրգում, մոռացել եմ Կովկասի կյանքը։ Ես սովորել եմ ընկերություն անել կրթված, լուսավորված, թատրոններ, օպերաներ գնացող մարդկանց հետ։ Այստեղ չկան այնպիսի մարդիկ, այստեղ ամենքը միայն մի բանի վրա են մտածում, այն է՝ փող աշխատել, և սրա համար փչացնում են իրանց կյանքը։ Գոր-

ծարաններում, հորերի վրա, նավթի և կեղտի մեջ կորած, մագազիններում չթի ու կտորի փոշու մեջ խեղդվում են, տրքնում են գիշեր ու ցերեկ, որ ինչ է իրանց գրպանները լեցնեն։ Լեցնում են և չեն իմանում ինչպես ծախսեն փողերը, ինչպես ապրեն, որովհետև լուսավորություն ասած բանը չեն հասկանում, որովհետև կրթված չեն։ Աշխարհ են շրջել, բայց ոչինչ չեն կարողացել սովորել։ Ամիսներով, տարիներով մայրաքաղաքներում ապրել են, բայց բացի իրանց ապրած հյուրանոցից և մի քանի փողոցներից, ոչինչ չեն տեսել։ Ռուսաստանում այդ մարդիկ ո՛չ թատրոն են գնում, ո՛չ օպերա, ո՛չ կլուբներ։ Իսկ եթե գնում էլ են, ոչինչ չեն կարողանում սովորել, թատրոնում կամ օպերայում ամենավերջին աթոռներն են վարձում, որ էժան նստի։ Շատերը գնում են, ներկայացումը չվերջացած, կիսատ են թողնում ու դուրս գալիս, որովհետև ճաշակ ասած բանը չունին։ Նրանց համար զուռնա-բալաբանի ձայնը քաղցր է, քան թե Պատտիի երգելը։ Մոսկվայում ինձ վրա զարմանում էին, որ ես ամեն անգամ քսանուհինգ ռուբլի էի տալիս Պատտիին կամ Նիլսոնին լսելու կամ Սալվինիի խաղը տեսնելու, բայց ես սրտանց ծիծաղում էի նրանց անհասկացողության վրա։ Ինձ համար փողը մի միջոց է շքեղ ապրելու համար, իսկ նրանց համար նպատակ։ Ես ատում եմ նրանց, ատում եմ, որովհետև նրանք բոլորը թեև երիտասարդներ են, բայց հին հոգով և մաշված սրտով։ Ահա ինչու համար, ես, Կատերինա Կարլովնա, չեմ ընկերանում նրանց հետ։ Ա՛խ, եթե գիտենայիք, թե որքան ինձ համար դժվար է նրանց հետ խոսելն անգամ։ Ես մենա՛կ եմ, Կատերինա Կարլովնա, մենակ եմ, և ինձ համար շատ ու շատ դժվար է անցկենում այստեղ։

Պետր Ստեփանիչն ատենաբանում էր ոգևորված և զանազան թատրոնական շարժվածքներ անելով։

— Գնացեք, ուրիշ քաղաքում ապրեցեք,— ասաց Կատերինա Կարլովնան, երբ Պետր Ստեփանիչը դադարեց խոսելուց։

— Չեմ կարող, Կատերինա Կարլովնա, գործերս այստեղ են, թողնել անհնարին է։ Բայց ես, Կատերինա Կարլովնա, բախտավոր կլինիմ, եթե... եթե... է՛հ...

Այստեղ Պետր Ստեփանիչի լեզուն շփոթվեց, և նա, չկարողացավ վերջացնել յուր խոսքը, մի խորը հառաչանք արձակեց կրծքից։

Կատերինա Կարլովնան հոնքերի տակից նրա վրա նայեց և, գլուխը խոնարհեցնելով, քիչ կարմրեց։

Այդ ժամանակ դուռը բացվեց, Մարիա Իվանովնայի գլուխը երևաց և նույն վայրկյանին կրկին անհետացավ։ Այդ նկատեց միայն Պետր Ստեփանիչը։

— Շատերը կարծում են, որ մարդը փողով է բախտավոր,— շարունակեց Պետր Ստեփանիչը Մարիա Իվանովնայի գլուխն անհետանալուց մի քանի րոպե անցած։ Ես այդ չեմ հասկանում։ Ահա, ես հարուստ եմ, փառք աստծո, էլ ինչս է պակաս, մի միլիոնի չափ կարողություն ունիմ։ (Պետր Ստեփանիչի կարողությունը երկու հարյուր հազարից ավելի չէր լինի)։ Տուն, տեղ, ոսկի-արծաթ, ծառաներ, կառքեր ամեն բան ունիմ, ինքս էլ մեն-մենակ, ո՛չ ծնողներ ունիմ, ո՛չ եղբայր, ո՛չ քույր, ո՛չ էլ պարտք, մի խոսքով, ես իմ գլխի ու կարողության կատարյալ տերն եմ։ Բայց մի թող գան սրտիցս հարցնեն, թե նա ինչ է ասում, մտնեն դրությունս և տեսնեն, թե այսքան հարստության մեջ ինչպես եմ ես զգում ինձ... Տխուր, տխուր, մահու չափ տխուր...

Եվ Պետր Ստեփանիչը կրկին կրծքից արձակեց մի սուտ հառաչանք և կրկին նայեց օրիորդի երեսին։

— Պսակվեցե՛ք, գուցե այն ժամանակ ուրախ կլինեք,— ասաց Կատերինա Կարլովնան, փորձելով ավելի պարզ հասկանալ նրա միտքը։

— Պսակվե՛լ, բայց ո՛ւր է իմ սիրած աղջիկը,— պատասխանեց Պետր Ստեփանիչը, մեկ էլ հառաչելով։

— Ինչո՛ւ, ասում են, որ Բաքվում շատերը կան։

Պետր Ստեփանիչը ոգևորվեց, նրա դեմքը այլայլվեց, աչքերը կարմրեցին, և նա հանկարծ արագությամբ բարձրացավ աթոռից։

— Չկա, չկա, Կատերինա Կարլովնա, չկա, բացի ձեզանից. թույլ տվեք...

Եվ նա, հարձակվելով օրիորդի վրա, կամեցավ համբու-

րել։ Օրիորդը սարսափած վեր թռավ տեղից, հրելով Պետր Ստեփանիչի կրծքին։

— Ի՞նչ եք անում, հեռո՛ւ, կանգնեցեք,— ասաց նա սըփրթնելով։

— Ես ձեզ սիրում եմ...

— Սուտ եք ասում։

— Երդվում եմ աստուծով, Կատերինա Կարլովնա, հավատացեք և թույլ տվեք,— ասաց նա, կրկին մոտենալով օրիորդին։

— Հեռո՛ւ գնացեք, եթե ոչ՝ կբղավեմ...

Պետր Ստեփանիչը մնաց արձանացած տեղն ու տեղը։ Մի քանի վայրկյան այս դրության մեջ մնալուց հետո, նա մոտեցավ օրիորդին և ասաց խոնարհությամբ.

— Ներեցե՛ք, Կատերինա Կարլովնա, ես հանաք էի անում, ներեցե՛ք...

— Այդ տեսակ հանաքներ չեն անում օրիորդի հետ։

— Լավ է, մոռացե՛ք, մոռացե՛ք, խնդրեմ, մյուս անգամ չեմ անիլ։

Ներս մտավ Մարիա Իվանովնան, մի ձեռքում սրճամանը, մյուսում՝ կաթնամանը։

Կատերինա Կարլովնան ուղղեց իրան, Դոլմազովը նույնպես, և միամիտ Մարիա Իվանովնան ոչինչ չկարողացավ նըկատել։

Նստեցին սուրճ խմելու։ Փոքր առ փոքր Կատերինա Կարլովնան ուշքի եկավ և սկսեց խոսել, նույնիսկ զվարճախոսել։ Կարծես ոչինչ չէր պատահել։ Պետր Ստեփանիչը նույնպես սիրտ առավ։ Սուրճը խմելուց հետո նա հանդգնեց կրկին առաջարկել Կատերինա Կարլովնային երեկոյան միասին կոնցերտ գնալու։ Օրիորդը վճռաբար մերժեց։ Բայց և այնպես, վերջումը Պետր Ստեփանիչին, երկար թախանձանքներից հետո, Մարիա Իվանովնայի միջնորդությամբ, հաջողվեց Կատերինա Կարլովնայից հաստատ խոսք առնելու, որ սա մյուս անգամ կգնա յուր հետ կոնցերտ, որը պիտի լինի մի շաբաթ հետո։

Պետր Ստեփանիչը հեռացավ փոքր-ինչ թեթևացած սըրտով։

VII

Մինչև կոնցերտի օրը Պետր Ստեփանիչն օրական երկու անգամ այցելում էր Կարլ Մարկիչի ընտանիքը։ Թե Մարիա Իվանովնան որքան գոհ էր այդ այցելությունից, թե ինչ ուրախություններով էր ընդունում Պետր Ստեփանիչին ամեն անգամ, թե ինչ շարժվածներ, ինչ պտույտներ էր անում խեղճ կինը նրան հաճոյանալու համար—անհնարին է նկարագրել։ Եվ ինչպես կարող էր ուրիշ կերպ վարվել Մարիա Իվանովնան, քանի որ նա տեսնում էր, թե որքան ուշադիր է Դոլմազովի նման մի նշանավոր հարուստ դեպի յուր մի չնչին գործակատարի չնչին ընտանիքը և ինչպես նա հոգում էր այդ ընտանիքի բախտավորության համար։ Բայց մի առանձին ուրախություն էր զգում Մարիա Իվանովնան յուր աղջկա վերաբերմամբ, նկատելով այն ուշադրությունը, որին արժանացել էր Կատերինա Կարլովնան Դոլմազովի կողմից։ Շատ անգամ նա, լուռ ու մունջ, ձեռները ծոցում ծալած, քաշվում էր սենյակի մի անկյունը, մտիկ անում յուր աղջկան և Պետր Ստեփանիչին, որոնք իրարու դեմ նստած խոսում էին, մտիկ էր անում և խորասուզվում մտածողության մեջ։ Այդպիսի րոպեներում նրա ծնողական զգայուն սիրտը սկսում էր բաբախել յուր սիրեցյալ զավակի բախտավորությամբ։

Մարիա Իվանովնայի առաջ պատկերանում էին փառավոր կառքեր, բազմաթիվ ծառաներ, զարդարուն սենյակներ մի բարձրաշեն շքեղ տան մեջ։ Տունը Դոլմազովինն է, իսկ նրա մեջ իշխում է նրա աղջիկը։ Կատերինա Կարլովնան ամբողջ օրը պտտում է զարդարուն սենյակների մեջ, կարգադրություններ է անում, հյուրեր է ընդունում և ճանապարհ դնում։ Իսկ երեկոները Պետր Ստեփանիչի հետ նստում է կառք և գնում ծովափը զբոսնելու։ Զբոսանքից վերադառնում է տուն, թեյ խմում, հագուստը փոխում, ավելի շքեղը հագնում և Պետր Ստեփանիչի հետ թև-թևի տված գնում թատրոն, պարահանդես և այլն։ Նրանց հետ գնում է նույնպես և՛ Արտեմը։ Իսկ ինքը, Մարիա Իվանովնան, Կարլ Մարկիչի հետ մնում են տանը, խոսում են, զվարճանում են, սպասելով երիտասարդ ամուսինների վերադառնալուն, որ միասին ընթրեն։

Եվ այսպես, ուրեմն Մարիա Իվանովնան երևակայում էր ոչ միայն Կատերինա Կարլովնայի, այլև ամբողջ ընտանիքի մոտիկ ապագան բախտավորված, եթե միայն Դոլմազովի սիրտն այնքան բարի է, որ նա ուշադրություն չի դարձնիլ նրանց աղքատության վրա, եթե նա աչքի առջև կունենա Կատյայի անձնավորությունը, նրա գեղեցկությունը, շնորհքը, բնավորությունն և եթե Կատյան նույնպես, լավ կշռադատելով յուր ապագան, կաշխատեր այդ հատկություններն ավելի գեղեցիկ, ավելի հրապուրիչ գույներով ներկայացնել Դոլմազովին, որպեսզի անդառնալի կերպով գրավի նրա սիրտը։ Բայց ավա՜ղ, Կատյան այդ չէր հասկանում, որովհետև, Մարիա Իվանովնայի կարծիքով, նա հիմար էր և փոխանակ Դոլմազովին գրավելու, աշխատում էր, կարծես, զզվեցնել նրան։ Նա առաջվա պես սառն և երբեմն կոպիտ էր վարվում Դոլմազովի հետ։ Մարիա Իվանովնան այդ տեսնում էր և մինչև յուր հոգու խորքը վրդովվում, բայց չէր կարողանում Դոլմազովի ներկայությամբ արտահայտել յուր վրդովմունքը Կատյային։ Նա, ջսպելով յուր բարկությունը, սպասում էր Դոլմազովի հրաժարվելուն։ Երբ խնամատարը ոտը դռներից դուրս էր դնում, մայրը սկսում էր թափել աղջկա գլխին անթիվ նախատինքներ և երբեմն հիշոցներ։

— Հազար անգամ ասել եմ, որ գիժ ես, խելք չունիս. դու ո՛չ քեզ և ո՛չ մեզ համար չես մտածում։ Աղքատ ու հպարտ, աչքերդ բաց արա և լավ տես, թե դու ինքդ ո՛վ ես, ի՞նչ ես, իսկ Դոլմազովն ո՛վ է։ Գիտես, որ մեր ապրուստը նրանից է կախված, ինչպես ուզենա, այպես էլ կարող է անել, կարող է մեզ հարստացնել, կարող էլ է քաղցած թողնել, բայց դու էլի գոռոզ ու գոռոզ։ Ի՞նչ ես մտածում, որ քինթդ այդքան բարձր ես պահում։ Խելքի եկ, Կատյա, տե՛ս, մեկ էլ եմ ասում, մեր օրը քեզանից է կախված...

Եվ այսպես, Մարիա Իվանովնան երկար նախատում էր յուր աղջկան։ Սակայն աղջիկը շարունակում էր յուր «հիմարությունը»։ Մի օր նրա հանդգնությունն այնտեղը հասավ, որ նա պատասխանեց յուր ծնողի հանդիմանությանը, թե ինքը դիտմամբ է սառն վարվում Դոլմազովի հետ, որպեսզի վերջինը դադարի իրանց այցելելուց։ Մարիա Իվանովնան փրր-

փրրեց, կատաղեց յուր աղջկա այդ հանդգնության վրա, բայց... դարձյալ անօգուտ։

Գալով Դոլմազովին, պետք է ասած, որ նա սկսել էր մեծ զգուշությունով վարվել Կատերինա Կարլովնայի հետ, նույնիսկ Մարիա Իվանովնայի բացակայության ժամանակ։ Նա պահում էր իրեն համեստ, չէր համարձակվում որևէ ավելորդ խոսք թոցնել բերանից։ Նա այնպես էր իրան ձևացնում օրիորդի առջև, որ իբր թե սաստիկ փոշմանել է յուր նախկին վարմունքի մասին։ Սակայն Կատերինա Կարլովնան որքան զգույշ էր, այնքան դիտող, դարձյալ չէր կարողանում հասկանալ այդ խորամանկությունն և լիովին թափանցել Դոլմազովի հոգին։

Հասավ կոնցերտի երեկոն։ Պետր Ստեփանիչը ժամանակից մի ժամ առաջ զուգվեց և, յուր սեփական կառքը նստելով, եկավ Կատերինա Կարլովնայի մոտ։ Օրիորդը դեռ հագնված չէր։ Նա մոռացել էր յուր խոստումը, փորձեց հրաժարվել։ Մարիա Իվանովնան ուղղակի կատաղեց։ Ի՞նչպես կարող է հրաժարվել Դոլմազովի պես մարդու հետ մի որևէ հանդես գնալուց։ Դոլմազովն, օրիորդի կասկածը փարատելու համար, ասաց.

— Մարիա Իվանովնա, դուք էլ հագնվեցեք մեզ հետ գընալու։

Մարիա Իվանովնան հոգով ուրախ էր նրանց ուղեկցելու, քիչ մնաց համաձայնվեր անգամ, բայց հիշեց, որ օրինավոր հագուստ չունի։

— Ուրիշ անգամ,— ասաց նա,— ուրիշ անգամ։— Կատյա, գնա պատրաստվիր։

Ապագայում օրիորդը շատ անգամ իրեն հարցնում էր, ինչպես եղավ, որ նա մոլորվեց և կամքի ուժ չունեցավ տանը մնալու։ Նա անցավ մոր հետ յուր սենյակը։

Դոլմազովը մնաց մենակ, կանգնեց հայելու առջև և ըսկըսեց դիտել իրան ոտից մինչև գլուխ։

— Թո՛ւ, իսկ որ շատ եմ տգեղացել... ի՞նչ անճոռնի է լինում մարդ առանց հոնքերի ու թերթերունքների,— խոսում էր նա, ուղղելով յուր սպիտակ փողկապը։ Փարիզից բերել տված ճարն էլ չի օգնում մազեր բուսնելուն... Ասում են, որ

Վիեննայում կարող են բժշկել. հարկավոր է անպատճառ գընալ, եթե ոչ խայտառակություն է, կանայք ինձանից փախչում են։

— Էհե՛, այ մի ուրիշ ցավ, այս ի՞նչ է դուրս գալիս քընթիս վրա,— շարունակեց նա, շոշափելով քթի ծայրն, ուր գոյացել էր մի կարմիր բշտիկ։— Ցավում է, այդ լավ նշան չէ, հարկավոր է անպատճառ բժշկին ցույց տալ...

Ներս մտավ Կատերինա Կարլովնան։ Դոլմազովը շտապեց հեռանալ հայելուց։

Օրն արդեն մթնել էր։ Քաղաքային ժողովարանի դահլիճը, ուր պիտի կայանար կոնցերտը, լուսավորվում էր առաստաղից քաշ տված երեք ահագին ջահերով և պատերին խփած բազմաթիվ կանթեղներով։ Օրիորդը, Դոլմազովի ուղեկցությամբ, բարձրացավ ընդարձակ սանդխտով դեպի դահլիճը։ Ներկայացումը դեռ չէր սկսվել։ Հանդիսականները, այս ու այն կողմ ցրված, զբոսնում էին։ Երիտասարդ վաճառականների մի խումբ նախասենյակի մի անկյունում պատրաստած բուֆետի առջև, մի սեղանի շուրջը հավաքված, կոնծում էր... Խմբի մեջ երևում էր և՛ Սերգեյ Իվանիչը, որի հետ մենք ծանոթացանք կայարանի վրա։

Պետր Ստեփանիչն աշխատեց դահլիճ մտնել Կատերինա Կարլովնայի հետ այնպես, որ խումբը չնկատի։ Բայց այս չըհաջողվեց նրան։

— Օհո՛, Պետո, լույսը քեզ տեսնողին,— գոչեց բարձր ձայնով խմբի միջից երեսը սափրած մի երիտասարդ կարմրած աչքերով։

Նա, իսկույն բաժանվելով խմբից, մոտեցավ Դոլմազովին։

— Բարև, Սիմոն Լազրիչ, քե՞ֆդ,— հարցրեց Պետր Ստեփանիչը, մի քիչ շփոթվելով և արագությամբ սեղմելով երիտասարդի ձեռը։

— Կա՛ց, ո՞ւր ես փախչում, կա՛ց... տեսնեմ այդ ով է քեզ հետ,— ասաց երիտասարդը, բռնելով Դոլմազովի թևից։

— Օհո՛, Պետո՛, շնորհավորում եմ, ի՞նչ աեղից ես ճանկել այդ լուսնյակին։

Բայց Պետոն աշխատում էր խույս տալ։ Նա, մի կերպ յուր թևն ազատելով երիտասարդի ձեռքից, շտապեց դեպի Կատերինա Կարլովնան, որն այդ ժամանակ այնչափ հեռու էր, որ չէր լսում նրա խոսակցությունը։

— Տղերք, նոր խաբար, Դոլմազովը, ղոշազը նոր որա է արել,— ասաց երիտասարդը, վերադառնալով և կրկին խառնվելով խմբին։

— Ո՞վ է, ո՞վ,— հարցրին միաբերան մի քանիսը խմբի միջից։

— Հայի էր նմանվում, բայց չճանաչեցի, լուսնյակ է, ըսպասեցեք, մի բաժակ էլ կոնծեմ և գնամ ես էլ ծանոթանամ։

Սիմոն Լազրիչը դատարկեց մի բաժակ ևս։

— Իզուր նեղություն մի՛ քաշիր, Սիմոն Լազրիչ, Դոլմազովը քո ասած մարդը չէ, ռեխդ թիքա չի գցիլ։ Ես աղջկան էլ ճանաչում եմ և գիտեմ ինչ բան է։

— Ո՞վ է, ո՞վ է, Սերգեյ Իվանիչ,— կրկնեց դարձյալ միաբերան հետաքրքիր խումբը, շրջապատելով Սերգեյ Իվանիչին։

— Յուր գործակատարի աղջիկն է։

— Հաշտարխանցի՞ն, հա՛, ես էլ եմ տեսել, ես էլ եմ տեսել, շատ գեղեցիկ է,— ասացին միմյանց հետևից մի քանիսը։

— Գեղեցիկ լինելը գեղեցիկ է, բայց ինչ անես, որ...

Եվ Սերգեյ Իվանիչը, խոսքը չավարտելով, կրծքից մի հոգոց հանեց և գլուխը խորհրդավոր կերպով շարժեց։

— Ինչպե՞ս։

— Այնպես,— պատասխանեց Սերգեյ Իվանիչը, աչքի մեկը խփելով և շրթունքները կրծելով։— Տուն, տեղ, ամեն օր նվերներ, հորն և եղբորը պաշտոն լավ ոոճիկներով։

— Փա՛հ, քո վիզը կոտրվի Դոլմազով, օտարներից կշտացար, հիմա էլ հային ես ձեռք գցե՞լ,— բացականչեց Սիմոն Լազրիչը, ձեռների ափերը իրարու խփելով։

— Չեմ հավատում, ես Պոպովի աղջկան ճանաչում եմ, նա շատ հպարտ և խելոք աղջիկ է։ Դոլմազովը չի կարող նրա հետ խաղալ,— մեջ մտավ մի ուրիշը, որը մինչև այդ ժամանակ լուռ էր։

— Էհե՛, եբևի, դու լավ չես ճանաչում Դոլմազովին,— պատասխանեց թերահավատին Սերգեյ Իվանիչը, գլուխը շարժելով,— նա այնպիսի մարդ չէ, որ մեկի համար անօգուտ մի

կոպեկ ծախսի, ուր մնաց այնքան բաներ բաշխի, ինչ որ բաշխում է Գասպարի աղջկան։ Տունը լեցրել հազար տեսակ բաներով, էլի օր չի անցնում, որ մի նվեր չտանի հյուր գնալիս։

— Չէ, եղբայր, ես լավ եմ ճանաչում Դոլմազովին, գիտեմ ինչ հոգի ունի...

Զանգակը հնչեցրին, ներկայացումը սկսվեց, ամենքը մըտան դահլիճ։

Պետր Ստեփանիչն և Կատերինա Կարլովնան նստած էին երկրորդ կարգում։ Օրիորդը հագնված էր թեև ոչ շքեղ, բայց բավական նուրբ ճաշակով։ Բազմաթիվ լապտերների լուսավորության ներքո նրա կրծքի վրա պսպղում էր ոսկյա մեդալիոնի ադամանդը։

Դահլիճը լիքն էր հանդիսականներով։ Այս ու այն կողմերից մի քանի երիտասարդներ և կանայք, ներկայացումը մոռացած, իրանց հեռադիտակներն ուղղել էին անծանոթ օրիորդի վրա։ Պետր Ստեփանիչն այս տեսնում էր և ինքնաբավականությամբ ժպտում։ Նա պարծենում էր, որ ինքն այդ երեկո շատ երիտասարդների նախանձի առարկա է։ Նա ստեպստեպ թեքվում էր Կատերինայի ականջին և շշնջալով խոսում։ Օրիորդը չէր խոսում. նա ուշադրությամբ լսում էր երաժշտությունը. միայն երբեմն Պետր Ստեփանիչի հարցերին պատասխանում էր գլխի շարժումով «այո» կամ «ոչ» և ուրիշ ոչինչ։

Վերջապես կոնցերտն ավարտվեց, հանդիսականները ցրվեցին, և օրիորդը դուրս եկավ։ Դոլմազովը հետևում էր նրան, յուր գլխարկը ձեռում շուռ տալով և չորս կողմ անդադար հաղթական հայացքներ ձգելով։ Նրա ժղժղված դեմքն ուրախ էր ու փոքրիկ աչքերի սևագույն բիբերն արագությամբ խաղում էին, փայլելով։ Կառքը փողոցի դռանը սպասում էր։ Նա, օրիորդի հետ նստելով, շշնջաց կառապանի ականջին, և կառքը մի րոպեում սլացավ։

— Տա՛ր, տա՛ր, բայց տեսնենք երբ ես փախչելու կերածդդ,— ասաց կառքի հետևից մի մարդ, որն ամբողջ ժամանակ, կլուբի դռների հետևում թաքնված, սուր աչքերով հետևվում էր մեր հերոսին։

Դա Սերգեյ Իվանիչն էր։

VIII

Գիշերից բավականին անցել էր։ Երկինքը պարզել էր։ Լուսինը չկար։ Նավթային լապտերները թույլ կերպով լուսավորում էին փողոցները։

— Ո՞ւր ենք գնում, կարծեմ մեր տունը մնաց այն կողմ,— հարցրեց հանկարծ օրիորդն, երբ տեսավ, որ կառքը մտավ մի բոլորովին անծանոթ փողոց։

— Մեր տուն,— պատասխանեց Դոլմազովը համառոտ։

— Ինձ մեր տուն հասցրեք, հետո դուք գնացեք։

— Ձեզ էլ հետս տանում եմ։

— Ես ի՞նչ գործ ունիմ ձեր տանը։

— Պետք է միասին ընթրենք։

— Շնորհակալ եմ, Պետր Ստեփանիչ, ախորժակ չունեմ, խնդրեմ, ինձ մեր տուն ճանապարհ դրեք։

— Անկարելի է։

— Ո՛չ, ո՛չ, ուշ է, մայրս անքուն սպասում է ինձ...

— Շուտ կվերջացնենք ընթրիքը, իսկույն կուղեկցեմ ձեզ ձեր տուն։

— Հոգնած եմ, Պետր Ստեփանիչ, թույլ տվեք ուրիշ անգամ ձեզ մոտ հյուր կգամ այսօրվա փոխարեն,— շարունակեց օրիորդն այս անգամ աղերսալի ձայնով։

— Աչքիս վրա տեղ ունեք ամեն օր, բայց այժմ զուր եք հակառակում, անպատճառ տանելու եմ,— պատասխանեց Դոլմազովը վճռաբար։

Մինչ Կատերինա Կարլովնան այսպես հակառակում էր, կառքը հասավ և կանգնեց Դոլմազովի տան դռների առջև։ Մի քանի րոպե օրիորդը չէր համաձայնվում իջնել կառքից։ Պետր Ստեփանիչը համոզում էր նրան, աղաչելով, խնդրելով, սակայն իզուր. օրիորդը համառությամբ կպել էր կառքին և պոկ չէր գալիս։ Դոլմազովի համբերությունը հասավ յուր վերջնակետին. նա, բեղերը կրծոտելով, զսպեց իրան և սկսեց կրկին հորդորել օրիորդին։ Օրիորդը նույնպես դուրս եկավ համբերությունից և բարկացած հրամայեց կառապանին կառքը քըշել, բայց կառապանը մի շարժում անգամ չարավ օրիորդի հրամանը կատարելու։ Դոլմազովին վիրավորեց Կատերինա-

յի վարմունքը, նրա ինքնասիրության նեղ զգացմունքները բորբոքվեցին։ Փողոցում տիրում էր լռություն։ Դոլմազովը նայեց յուր շորս կողմը և բացի կառապանից չտեսավ ոչ մի մարդ, որ վկա լիներ այդ տեսարանին։ Կառապանն առույգ ձիերի սանձը ձեռքում սեղմած, լուռ ու մունջ մեխված էր յուր տեղում, միայն երբեմն, սանձը շարժելով, նա հարվածում էր այս կամ այն ձիուն և յուր քնաթաթախ ձայնով կրկնում. «տուբր, ստո՛...ո՛...ո՛յ, պոկլյատայա»... Դոլմազովը մեկ ոտը դրեց կառքի վրա և, երկու ձեռներով բռնելով օրիորդի մեջքից, գրկեց ու մի վայրկյանում ցած բերեց ուժով։

Երկու ելք կար Կատերինա Կարլովնայի առջև. նա կամ պիտի հնազանդվեր, կամ պիտի փախչեր...

Նրանք մտան ներս և մի ընդարձակ սանդխտով բարձրացան վերև, Պետր Ստեփանիչը պատշգամբից օրիորդին ուղղակի առաջնորդեց մի ոչ այնքան ընդարձակ սենյակ։ Իսկ ինքը, մի րոպե բաժանվելով նրանից, յուր սպասավորին տվեց ինչ որ պատվերներ և կրկին վերադարձավ։

Առաստաղից քաշ արած փոքրիկ կոլորակ կանթեղը լուսավորում էր սենյակի մոխրագույն պաստառով ծածկված պատերը, ուր քաշ արած էին մի քանի մեծ ու փոքր պատկերներ կասկածելի բովանդակությամբ։ Մի անկյունում դրած էր մի բարձր մահճակալ փափուկ անկողնով, մյուսում գտնվում էր մի ահագին հայելի, երրորդում մի կոլորակ սեղան, իսկ չորրորդում մարմարոնյա լվացարանն յուր բոլոր պատկանելիքներով։ Պետր Ստեփանիչը շտապեց նախազգուշացնելու, որ գահլիճի և մյուս սենյակների դռներն ու պատուհանները նոր են ներկված, այնպես որ ներկի հոտից անկարելի է այնտեղ մտնել և հրավիրեց օրիորդին ներս։ Մի սարսուռ անցավ Կատերինա Կարլովնայի մարմնով, երբ նա հայացքը ձգեց սենյակի կահ-կարասիքի վրա։ Նա ակամա սկսեց դողալ, գրեթե անզգայաբար մոտեցավ մեջտեղ դրած քառանկյունի սեղանին և նստեց նրա շուրջը, աթոռներից մեկի վրա։

Մի քանի րոպեում սպասավորը սեղանի երեսը ծածկեց սպիտակ մաքուր սփռոցով, և մեջտեղ եկան մի քանի տեսակ ուտելեղեններ և ըմպելիքներ։ Դոլմազովն անմիջապես յուր

համար մի բաժակ օղի ածեց, իսկ օրիորդի համար մի ուրիշ ինչ-որ արտասահմանյան ըմպելիք։

— Խմեցե՛ք, շատ քաղցր խմիչք է, վնաս չի տալ ձեր սրտին,— ասաց նա, բաժակը դնելով Կատերինա Կարլովնայի առջև։

Օրիորդը բաժակի ծայրը գրեթե անգիտակցաբար կպցրեց շրթունքներին և իսկույն վայր դրեց։

— Ձեր կենացը, Կատերինա Կարլովնա,— շարունակեց Դոլմազովն և, օղու բաժակը զարկելով նրա բաժակին, խմեց մինչև կեսը։

Օրիորդն աշխատելով ուշքը ժողովել, գլուխը շարժեց, առանց մի խոսք ասելու։ Դոլմազովը սկսեց ընթրել։ Օրիորդը չէր ուտում, բայց երբ Դոլմազովը նրան ստիպեց, նա մի երկու կտոր բան դրեց բերանը և, դարձյալ հետ քաշվելով, ըսկըսեց երկյուղածությամբ նայել յուր շորս կողմը։ Ինչպես որսորդներից հալածված եղջերու, նա զգում էր, որ անտառի խորքում ընկել է մի այնպիսի նեղ տեղ, որտեղից ազատվելն անհնարին է։ Անհանդիստ դեմքով և դողդողալով նա յուր հայացքը մերթ ձգում էր սենյակի պատերին, մերթ Դոլմազովի վրա։

— Ինչո՞ւ չեք ուտում, Կատերինա Կարլովնա,— կրկնում էր Դոլմազովն անդադար։

— Ախորժակ չունիմ, խնդրեմ, Պետր Ստեփանիչ ինձ շուտ ճանապարհ դրեք։

— Մի՛ շտապեք, դեռ շատ վաղ է, տասներկու ժամը չի լրացել։ Գոնե, Կատերինա Կարլովնա, մի երկու բաժակ այս քաղցր ըմպելիքից խմեցեք, շատ համեղ բան է, փորձեցեք։

Դոլմազովը կրկին լցրեց մի բաժակ և դրեց Կատերինայի առջև։ Օրիորդը գլուխը շուռ տվեց և բաժակը հեռացրեց իրանից։

— Ինչո՞ւ եք այդպես անում, Կատերինա Կարլովնա. դուք ինձ վիրավորում եք։

— Մայրս, խեղճը հիմա սպասում է,— պատասխանեց օրիորդը, փորձելով տեղից բարձրանալ։

— Ո՞ւր եք գնում, սպասեցե՛ք,— ասաց Դոլմազովը, բռնելով նրա թևից մեղմիկ և նորից նստեցնելով յուր տեղը։

Օրիորդն ակամա հնազանդվեց նրա կամքին։ Պետր Ստեփանիչը լիք բաժակը կրկին մոտեցրեց նրան ասելով.

— Եթե այս անգամ.ևս մերժեք իմ խոնարհ խնդիրն և մինչ հատակը չի դատարկեք այս բաժակը, իմացեք, որ դուք ինձ մինչև սրտիս խորքը վիրավորած կլինեք։ Վերցրեք, Կատերինա Կարլովնա, և սրտով խմեցեք. դա ձեր եղբոր, Արտեմ Կարլիչի կենացն է։

Այս ասելով, Դոլմազովը յուր համար մի բաժակ գինի ածեց և առավ ձեռքը, սպասելով օրիորդին։ Կատերինա Կարլովնան ճարահատյալ առավ բաժակը և, դարձյալ մի քիչ կում անելով, տեղը դրեց։

— Ես զարմանում եմ, դուք ինչ քարասիրտն եք, որ ձեր միակ եղբոր կենացն էլ չեք խմում,— ասաց Դոլմազովն և նույնպես լիք բաժակը դրեց սեղանի վրա։

Օրիորդը ոչինչ չպատասխանեց։ Պետր Ստեփանիչը շարունակեց խոսել, փոքր առ փոքր ոգևորվելով։ Նա ասաց, թե բախտավոր է այն մարդը, որ եղբայր ունի և հետզհետե խոսքը դարձնելով յուր վրա (դա նրա սաստիկ ցանկությունն էր), ավելացրեց, որ ինքը նախանձում է եղբայր ունեցողներին։ Նա սկսեց գանգատվել յուր՝ իբր թե տխուր ճակատագրի դեմ։ Նկարագրեց յուր վիճակն ամենատխուր գույներով, աշխատելով համոզել օրիորդին, թե որքան ինքն անբախտ մարդ է և ինչպես ճակատագիրն անգթությամբ հալածում է իրան։ Կրկնեց նույնպես, թե համոզված է, որ կարող է բախտավորվել միայն այն ժամանակ, երբ յուր կյանքը կկապի մի սիրեցյալ էակի հետ, որ կարող լիներ մասնակից լինել նրա դառնություններին և ուրախություններին։ Նա ավելացրեց, թե հենց յուր դժբախտությունը կայանում է նրանում, որ մինչև օրս դեռ չի գտնում մի այդպիսի էակ, իսկ նա, որի վրա հույս ունի, շատ անգութ է վերաբերվում դեպի իրան...

Եվ այս միտքը հայտնելու ժամանակ Դոլմազովն յուր վավաշոտ աչքերը հառեց օրիորդի երեսին, որ տեսնի գոնե այս անգամ նրա վրա գոհացուցիչ ազդեցություն արի՞ն յուր խոսքերը, թե ոչ։

Կատերինան թեև ուշադրությամբ չէր լսում, բայց հասկացավ, թե Դոլմազովը ում մասին է ակնարկում, հասկացավ և ոչինչ չասաց։

— Երբ գլուխս խառն է գործերով, էլի մի կերպ օրերս անցնում են, իսկ երբ գործերից ազատվելով գալիս եմ տուն, դարձյալ մի ինչ-որ ծանրություն նստում է սրտիս վրա։ Մտիկ եմ անում չորս կողմ— ոչինչ մխիթարություն, ոչինչ թեթևություն չեմ գտնում։ Տանս պատերը, կարծես, ինձ թշնամի լինեն։ Այո՛, Կատերինա Կարլովնա, չկա մեկը, որ թեթևացնի իմ հոգին, չկա մեկը, որ կարողանա յուր քաղցր հայացքներով, յուր դուրեկան խոսակցությունով մխիթարել իմ վշտացած սիրտը։ Ճարահատյալ պառկում եմ անկողին և սենյակի առաստաղին նայում։ Կհավատաք, որ շատ անգամ փոքրիկ երեխայի պես լաց եմ լինում իմ սենյակում։ Լաց եմ լինում և հետո հագնվում ու դուրս փախչում տնից, ինչպես բանտից։ Գնում եմ դուրս — այնտեղ միևնույն տիրությունը, միևնույն դառնությունը։ Թե մինչև երբ պիտի շարունակվի իմ այս անտանելի դրությունը, ինքս էլ չգիտեմ։ Բայց, Կատերինա Կարլովնա, ես այժմ զգում եմ, թե կա մեկը, որ կարող է վերջ դնել իմ ցավերին. այդ մեկը... է՛հ...

Եվ Դոլմազովի կրծքից կրկին դուրս թռավ մի կեղծ հառաչանք։

Արդեն անցել էր բավական ժամանակ։ Կատերինա Կարլովնան, օգտվելով Դոլմազովի բոպեական լռությունից, բարձրացավ յուր տեղից։

— Սպասեցեք, — ասաց Դոլմազովը։

— Ո՛չ, բավական է, ինչքան պահեցիք, թույլ տվեք։

— Մի քիչ էլ նստեցեք, խնդրեմ։

Սակայն օրիորդը այս անգամ չհամաձայնվեց նստելու։ Նա երեսը շուռ տվեց և վճռական քայլերով դիմեց դեպի դռները։

— Ո՞ւր եք փախչում,— բացականչեց Դոլմազովն և, վազելով օրիորդի հետևից, բռնեց նրա ձեռքը։

— Հերիք է, Պետր Ստեփանիչ, գնանք։

— Հերիք է, հերիք չէ, ա՛յ թե հերիք է։

Եվ այս անորոշ խոսքերն արտասանելով, Դոլմազովը դռները փակեց, բանալին շուռ տվեց և կողպեց։

— Տեսնո՞ւմ եք, հա, հա, հա, —գոչեց նա, չարախնդությամբ ծիծաղելով։

Նա բանալին ցույց տալով օրիորդին, ձգեց գրպանը։ Նրա ծիծաղն օրիորդի վրա վերին աստիճանի զզվելի տպավորություն արավ։ Մի քանի վայրկյան սա ապշած նայում էր։ Պետրը Ստեփանիչը նույնպես նայում էր օրիորդին։ Եվ այդ հայացքն արտահայտում էր նրա զազրելի ձգտումը։ Նրա բարակ և սեղմված շրթունքների վրա խաղաց մի հանդուգն ու լկտի ժպիտ, և այդ վայրկյանին նրա քրքրված ու մաշված դեմքն ընդունեց զարշելի արտահայտություն։ Կատերինա Կարլովնան սարսափեց այդ արտահայտությունից։ Մի տենդային սաստիկ դողոց սկսեց ցնցել նրա ամբողջ մարմինը ոտից մինչև գլխի մազերի արմատները։

— Ի սեր աստուծո, Պետր Ստեփանիչ, բա՛ց արեք,— արտասանեց, վերջապես, հուսահատ ձայնով։

Դոլմազովը նայեց նրան և ասաց.

— Ձրի չեմ բաց անիլ...

— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց օրիորդը, բոլորովին գունաթափվելով։

— Ի՞նչ եմ ուզում, հը՛մ, ոչինչ...

Դոլմազովը չկարողացավ ավարտել յուր խոսքերը։ Մի ինչ-որ ներքին ուժ այդ վայրկյանին կաշկանդեց նրա լեզուն։ Նա մի քանի վայրկյան գլուխը թեքեց կրծքին։ Բայց հանկարծ կրկին բարձրացրեց գլուխն և, ձեռները տարածելով առաջ, մի ոստումով թռավ դեպի օրիորդը։ Վերջինն արագությամբ հետ մղվեց և մեջքը տվեց պատին, կարծես պաշտպանողական դիրք բռնելով։ Դոլմազովը մի ոստում ևս արավ, և այս անգամ նրա տարածված թևերն ունելիքի պես ձգտեցին ճանկելու պատի տակ սեղմված օրիորդին։

— Հեռո՛ւ, եթե ոչ...

Դոլմազովի կուրծքը ստացավ երկու ձեռների մի սաստիկ հարված, և նրա մարմինը մի քանի քայլ հետ մղվեց։ Մի վայրկյանում նրա փոքրիկ սատանայական աչքերն արյունով լցվեցին, ճակատի կնճիռները բացվեցին, տափակ կուրծքը դուրս ցցվեց, և նա կատաղի առյուծի նման կրկին առաջ թռավ, բացականչելով. «Բավական է, ինչքան համբերեցի»։

Բարձրացավ մի զարհուրելի ճիչ. մի ճիչ, որ միայն հուսահատված կրծքից կարող էր դուրս թռչել։ Այնուհետև ոենյակում տիրեց անթափանցելի խավար...

IX

Անցել էր երկու ամիս։ Պետր Ստեփանիչ Դոլմազովը մի առավոտ խալաթը հագին նստած էր յուր առանձնասենյակում, դեպի փողոց նայող լուսամուտներից մեկի մոտ։ Նա տխուր էր։ Նրա կնճռված ճակատը և սեղմված շրթունքներն արտահայտում էին հոգեկան անհանգստություն։ Երբեմն նա աջ ձեռքի ափով սեղմում էր ճակատը, գլուխը թեքում դեպի կուրծքը և ընկնում մտածողության մեջ։ Այդ տևում էր մի քանի րոպե։ Այնուհետև, ծանր հառաչանք արձակելով և շրթունքները կրծոտելով, կրկին գլուխը բարձրացնում էր և յուր մոլոր հայացքը լուսամուտի ապակիների միջով ձգում հեռավոր տեղեր։

Պարզ էր, որ Պետր Ստեփանիչին մի միտք չարաչար տանջում էր։ Ժամանակ-ժամանակ սենյակի դռները զգուշությամբ բացվում էին և մի երիտասարդական մաքուր սանրած գլուխ ներս էր ցցվում ու նույն վայրկյանին կրկին անհետանում։ Դա Պետր Ստեփանիչի սպասավորն էր, որ անդադար նայում էր՝ տեսնելու, արդյոք, աղան դատարկել է թեյի բաժակը, որ վաղուց սառել էր սեղանի վրա։ Բայց աղան ուշադրություն չէր դարձնում ո՛չ թեյի և ո՛չ էլ ծառայի վրա։ Նա խորասուզված էր յուր մտածմունքի մեջ։ Վերջապես, ծառան համարձակվեց ասելու.

— Աղա, չայը սառել է։

— Գնա՛, կո՛րիր։

Ծառան անհայտացավ։

Պետր Ստեփանիչը ձեռը զարկեց ճակատին, բարձրացավ տեղից և սկսեց անհաստատ քայլերով շրջել սենյակի երկայնությամբ։

Այո, դժվար խնդիր է։ Շատ որոգայթներից է նա պրծել, շատ անգամ է այդպիսի դրության մեջ ընկել և ազատվել,

բայց այս անգամ բախտը խռովել է նրանից։ Իսկ դանել մի ելք, հնարել մի միջոց այդ դրությունից դուրս գալու, այդ ցավից ազատվելու համար,— անշուշտ հարկավոր է։ Հարկավոր է և այն էլ շատ շուտ, այս քանի օրերս, եթե ոչ...

Պետր Ստեփանիչը ձեռները տարածեց աջ ու ձախ և մի քանի վայրկյան նայեց յուր հողաթափների ծայրերին։

Կատարյալ, կատարյալ խայտառակություն։ Երեկ նա գարձյալ այնտեղ էր. ճշմարիտ որ «նրա» դրությունը խղճալի էր։ Ողորմելին այն գիշերվանից դեսը ինչպես փոխվել է, ո՛րքան մաշվել ու դեղնել հոգսից։ Ինչո՞ւ. հը՛մ, ինչո՛ւ, ա՛յ հիմար հարց... ինչո՛ւ։ Այսօր թե վաղը կպարզվեն բաները, և այն ժամանակ նա փչացավ, կենդանի թաղվեց։ Իսկ Մարիա Իվանովնա՞ն... հը՛մ... միամիտ կին։ Նա դեռ ոչինչ տեղեկություն չունի, կարծում է, որ յուր աղջիկը մրսել է, հիվանդ է և ուրիշ ոչինչ։ Ցանցառ պառավը դեռ ուրախ է, դեռ հավատացած է, թե պիտի գա մի երջանիկ օր, երբ Դոլմազովը նրա աղջկա հետ թև-թևի տված կկանգնի եկեղեցու սեղանի առջև։ Հը՛մ, այդ էր պակասում Դոլմազովին — լիներ մի չնչին, անհայտ գործակատարի փեսա։ Ի՞նչ կասեն տեսնողները։ Չէ, այդ ցնորք է, Մարիա Իվանովնա։ Դեռ փառք աստուծո, Դոլմազովը մինչև այն աստիճան չի հիմարացել, թեթևամիտ հաշտարխանցի մամա։

Երեկ ինքն օրիորդն ևս առաջին անգամ ակնարկություն արավ, արտասուքն աչքերին։ Ողորմելի, միամիտ արարած, ասում է, որ թեև նրան չի սիրում, բայց ստիպված է՝ կեղտը ծածկելու համար։ Ծիծաղելի խոսք, չի սիրում, Պետր Ստեփանիչ Դոլմազովին, և ո՞վ, ո՞վ... Կարլ Մարկիչ Պոպովի աղջիկը։

Այսպես թե այնպես, Դոլմազովի անունը կարող է քաղաքի բերանում մի մատ մեղր դառնալ, արդեն բամբասանքները սկսել են։ Սերգեյ Իվանիչն, այդ անպիտանը, որ նրան հազար տեսակ կեղծավորություններ է անում, բարեկամ է ձևացնում իրան, հենց նա ինքն է ամենից առաջ սկսել լուրեր տարածել նախանձելուց։ Ասենք թե այդ ոչինչ։ Պետր Ստեփանիչը բամբասանքներից շատ էլ վախեցողը չի, բայց կա մի ուրիշ բան, որ ավելի նշանավոր է։ Եթե այժմյանից այդ գործի առաջը

չառնի, վաղը կամ մյուս օրը ամեն ինչ կպարզվի, և բանը կհասնի մինչև դատաստան։ Այն ժամանակ կամա ակամա ստիպված կլինի կապել յուր կյանքը Կարլ Մարկիչի աղջկա հետ։ Կարլ Մարկիչը, օհ՛օ, Կարլ Մարկիչը պրաշենիեն ծոցում պատրաստ հաշտարխանցի է, կարող է նրան նեղը գցել... Ինչպե՞ս ազատվել, տեր աստված, ինչպե՞ս։

Եվ Պետր Ստեփանիչը, կրկին նստելով աթոռի վրա, սկսեց անդադար հառաչանքներ արձակել կրծքից։ Վերջապես, նա մտաբերեց թեյն և, մոտենալով սեղանին, վերցրեց բաժակն ու միանգամից դարտկեց ինչպես սառը ջուր և, մի ծրխախոտ վառելով, կրկին նստեց լուսամուտի առջև ու սկսեց նայել դեպի դուրս։

Լուսամուտը նայում էր դեպի արևելյան կողմ, ուր գրտնվում էր Սև քաղաքը։ Հեռավոր հորիզոնը մթնել էր նավթային գործարաններից բարձրացող թանձր ծխից։ Հանկարծ, ո՛վ բախտ, Դոլմազովի գլխում ծագեց մի միտք։ Նրա դեմքը փոխվեց, աչքերը փայլեցին, ճակատի կնճիռները մի վայրկյանում բացվեցին։ Նա արագությամբ մոտեցավ սեղանին, վերցրեց գրիչը, մի կտոր թղթի վրա մի քանի տող բան գրեց և շտապով դրեց ծրարի մեջ։

— Այս նամակը, առանց բոպե ուշացնելու, ուղարկիր գործարան,— ասաց նա գանգակի հնչյունին ներս մտնող սպասավորին։

Սպասավորն անհետացավ։ Պետր Ստեփանիչը խալաթը հանեց, շորերը հագավ և դուրս եկավ փողոց։

Երկու ժամ չանցավ, նա կրկին վերադարձավ, հոգնած և շունչը հազիվհազ քաշելով։

— Չի՞ եկել,— հարցրեց նա սպասավորին նախասենյակում։

— Ո՛չ։

Պետր Ստեփանիչի դեմքն արտահայտեց անհամբերություն։ Նա մտավ յուր առանձնասենյակը, կրկին հանեց շորերը, խալաթը հագավ և ընկղմվեց բազկաթոռի մեջ։ Քառորդ ժամից հետո էլի ներս մտավ սպասավորը։

— Եկել է, կհրամայե՞ք ներս թողնել։

— Հենց այս վայրկյանին։

Պետր Ստեփանիչը բեղերը և միրուքը շփեց, ավելի խորը թաղվելով բազկաթոռի մեջ։ Նա յուր դեմքին խաղաղ և հանգիստ արտահայտություն տվեց։

Դռները զգուշությամբ բացվեցին, ներս մտավ մի միջահասակ թխահեր երիտասարդ, որից իսկույն սենյակի մեջ տարածվեց նավթի սուր հոտ։ Նա հագած էր մոխրագույն, բայց նավթային թանձր մուրից յուր բնական գույնը կորցրած, կարճ պիդժակ և նույն գույնի նեղ վարտիք, որը մինչև ծնկները ծածկված էր կեղտոտ կոշիկների երկայն անկարուրդի մեջ։ Երիտասարդը կլիներ մոտ քսանհինգ տարեկան։ Զնայելով, որ նրա դեմքը կեղտոտված էր մուրով, բայց և այնպես նրա երեսի նուրբ գծագրությունն արտահայտում էր յուր բընական նուրբ գեղեցկությունը։ Երիտասարդը գլուխ տվեց Պետր Ստեփանիչին և, ձեռները կողքերին քաշ գցելով, արձանացավ դռների մոտ։

— Առաջ ե՛կ, նստիր,— ասաց Դոլմազովը։

Երիտասարդը չհամարձակվեց նստելու։ Նա միայն գլուխ տվեց։ Դոլմազովը կրկնեց յուր առաջարկությունն այս անգամ ավելի քաղաքավարի ձևով։ Երիտասարդն, ամաչելով ու քաշվելով, մոտեցավ և գդակը ձեռին մի կողքով նստեց աթոռի վրա։

— Հը՛մ, Սմբատ, ասիր, տեսնենք ի՞նչ նոր բան կա,— հարցրեց Պետր Ստեփանիչը, մի նոր ծխախոտ վառելով։

— Ձեր առողջությունը,— պատասխանեց Սմբատը, գլուխը հազիվ բարձրացնելով։

Նրա ձայնը խիստ դուրեկան էր։

— Այսօր նավթ ստացե՞լ եք Բալախանուց։

— Այո՛։

— Ո՞վ է ընդունել։

— Կարլ Մարկիչը։

— Հա՞, ի՞նչ է անում Կարլը, լա՞վ է, ուրա՞խ է։

— Լավ է, ուրախ է։

— Հը՛մ... այդպես, ուրիշ ի՞նչ կա, գործարանն այսօր բանո՞ւմ է։

— Այո՛, հենց առաջին կաթսաները նոր էինք սկսել դա-

տարկելու, երբ ձեր հրամանոց նամակը ստացա, իսկույն ձի նստելով, ճանապարհ ընկա։

— Շա՛տ լավ ես արել, շա՛տ լավ ես արել։ Գիտե՞ս ինչ, Սմբատ, ես քեզ մի գործի համար եմ կանչել, որը միայն քեզ է վերաբերվում։

— Հրամայեցե՛ք,— ասաց երիտասարդը զարմանալով։

Պետր Ստեփանիչի խոսքերը նրան մի փոքր վախեցրին։ «Չլինի՞ թե ուզում է ինձ դուրս անել»,—մտածեց նա իսկույն։

— Գիտե՞ս ինչ, Սմբատ, դու վաղուց ինձ խնդրել ես, որ ռոճիկդ ավելացնեմ, այնպես չէ՞։

— Այո՞։

— Եվ ես խոսք եմ տվել, բայց մինչև օրս չեմ կատարել խոսքս։

— Այո՛։

— Դու ընտանիք ունի՞ս։

— Հայր, մայր և երկու քույր։

— Ինչտե՞ղ են։

— Շուշում։

— Հը՛, ինքդ խոմ պսակված չե՞ս։

— Ո՛չ։

— Նշանված ե՞ս։

— Ո՛չ։

— Հը՛մ... ուրեմն էլի մի ահագին բեռ կա մեջքիդ վրա,— ասաց Պետր Ստեփանիչը կարեկցաբար։

— Այո՛, ես էլ հենց այդ պատճառով էի ձեր հրամանոց խնդրել ռոճիկս ավելացնել։

— Այո՛, գիտեմ որ ամսական քառասուն մանեթով դժվար է ընտանիք կառավարել։ Բայց գիտե՞ս, Սմբատ, ինչու չեմ մինչև այժմ խնդիրդ կատարել։

— Ո՛չ, չգիտեմ։

— Որովհետև քեզ համար ես ուրիշ բան եմ մտածում։

Սմբատը ոտից գլուխ լսողություն դառավ։

— Ես ուզում եմ այնպես անել, որ դու ժամանակով օրինավոր մարդ դառնաս և ոչ թե ամսական հինգ կամ տասը մանեթով ռոճիկդ ավելացնել։

— Շատ շնորհակալ եմ, Պետր Ստեփանիչ, շատ շնորհակալ եմ...

Երիտասարդը բարձրացավ տեղից, գլուխ տվեց Դոլմազովին և կրկին նստեց։

— Թեև, Սմբատ, երբեմն դու էլ ինձ բարկացնում ես, բայց վատ տղա չես։ Չորս տարի է, որ ինձ մոտ ծառայում ես, ես մի վատություն չեմ տեսել քեզանից։ Ես էլ, իհարկե, մարդ եմ, աչքեր ունիմ, տեսնում եմ, որ հիմա հասել է ժամանակը, որ ծառայությանդ փոխարեն մի լավություն անեմ քեզ։

Երիտասարդը կրկին բարձրացավ տեղից և կրկին անգամ գլուխ տվեց։ Նրա սիրտը սկսեց ուրախությունից սաստիկ բաբախել։

— Ինչպես Կարլ Մարկիչին եմ տվել, քեզ համար էլ ուզում եմ մի բնակարան պատրաստել ծովեզրում գտնվող տանս մեջ։ Դու, եթե ուզում ես, կարող ես գրել Շուշի հորդ, որ ընտանիքը բերի այստեղ քեզ հետ միասին ապրելու։ Մեկ էլ գըրիր, որ ես, Դոլմազովս, ուզում եմ քեզ իմ ձեռքով պսակել։

Երիտասարդի ականջներն ամաչելուց կարմրեցին։ Նա գլուխը քաշ գցեց։

— Հը՛մ, ուզում ե՞ս պսակվել, թե՞ չէ։

— Ո՛չ, Պետր Ստեփանիչ,— պատասխանեց Սմբատը, ճակատի տակից ամոթխածությամբ նայելով Պետր Ստեփանիչին և գդակը ձեռքում պտտեցնելով։

— Հասկանում եմ, դեն գցիր, ծոցս գցիր, այնպես չէ՞։

— Ո՞րտեղից է այնքան կարողություն, որ համ գլուխս պահեմ, համ ծնողներիս ու քույրերիս, համ էլ պսակվեմ։

— Այդ լավ ես ասում, խելոք ես, Սմբատ։ Բայց աստված ողորմած է, դու միայն լավ ծառայիր ինձ, ես շուտով, շատ շուտով քեզ կօգնեմ։

Սմբատը մի քանի անգամ ևս գլուխ տվեց։

— Բաս ինչո՞ւ չես հարցնում, թե ով է հարսնացուդ։ Հը՛մ, մի աղջիկ է, Սմբատ, մի աղջիկ, որ տեսնես — աչքերդ չորս կդառնան։ Բաքվի մեջ հատը չկա։

Սմբատը մի հարցական հայացք ձգեց յուր պարոնի վրա։

— Աբա, եթե խելոք ես, իմացիր, թե ով է, հապա՛, գըտի՛ր, հը՛մ...

Սմբատը գլուխը շարժեց բացասաբար։

— Գիտեմ, որ չես կարող գտնել, որովհետև մտածել անգամ չես կարող, թե մի այնպիսի աղջիկ պիտի ձեռք բերես։

Սմբատը կարծեց, թե Պետր Ստեփանիչը հանաք է անում և ժպտալով նայեց նրա երեսին։

— Ճանաչո՞ւմ ես իմ գործարանի կառավարիչ հաշտարարանցի Կարլ Մարկիչ Պոպովին,— հարցրեց Դոլմազովն, ամեն մի բառն արտասանելով ծանր և շեշտելով մանավանդ վերջին բառերը։

Սմբատը պատասխանեց, թե ճանաչում է Կարլ Մարկիչին։

— Նրա աղջկան, Կատերինա Կարլովնայի՞ն էլ ես ճանաչում։

— Ճանաչում եմ։

— Ա՛յ, նրան եմ նշանում քեզ հետ։

Որովհետև Սմբատը հավատացած էր, որ Պետր Ստեփանիչը հանաք է անում, այս պատճառով մի առանձին նշանակություն չտվեց նրա խոսքերին և ոչինչ չասաց։

— Տեսել ե՞ս ինքդ Կարլ Մարկիչի աղջկան։

— Տեսել եմ։

— Ի՞նչպեսն է, հավանո՞ւմ ես։

Սմբատը չպատասխանեց։

— Լավն է, չէ՞։

— Շա՛տ լավն է։

— Օհո՜, ինչ զոչաղ ես, իսկ ես կարծեցի, որ չես հավանիլ,— ասաց Պետր Ստեփանիչը, ծաղրածությամբ ժպտալով։

Սմբատն ամոթից կրկին կարմրեց և գլուխը բոլորովին թեքեց կրծքին։

— Դե՛հ, ուրեմն, պատրաստվի՛ր,— շարունակեց Պետր Ստեփանիչը, այս անգամ յուր դեմքին լրջություն տալով։

— Ի՞նչ եք հրամայում։

— Խոսք եմ ասում, իսկ դու դեռ ասում ես՝ ինչ եք հրամայում,— ասաց Պետր Ստեփանիչը, տաքանալով։ Հեռագրիր, որ ձեր ընտանիքը շուտով ճանապարհվի այստեղ։ Ես

երկու շաբաթից հետո գնալու եմ Նիժնի-Նովգորոդ, յարմարկա և ուզում եմ իմ ձեռքով բանը վերջացնել։ Այնտեղից քեզ համար երկու խաղարկու տոմսակներ եմ բերելու ընծա, մեկը քո բախտին, մյուսն էլ հարսնացվիդ բախտին։

Սմբատը բոլորովին զարմացավ։ Նա դեռ չէր հավատում, թե Պետր Ստեփանիչը խոսում է լրջորեն։

— Դե՛հ, լսեցիր խոմ, գնա, հոգիս, գնա՛, պատրաստվիր,— կրկնեց Պետր Ստեփանիչը վճռողական եղանակով։

Սմբատը տեղից չշարժվեց։

— Ա՛ռ, այս էլ ծախսիր, հետո, եթե բավականություն չի անիլ, էլի կտամ։

Այս ասելով, Պետր Ստեփանիչը բաց արավ սեղանի պահարանը, երեք հատ հարյուրանոց հանեց և դրեց սեղանի վրա։ Սմբատը, փողերը տեսնելով, կարծես քնից սթափվեց։ Նա փոքր առ փոքր սկսեց ուշքի գալ։ Այն բանն, որ մինչև այդ վայրկյան ցնորք էր թվում, հետզհետե սկսում էր իրականանալ։ Սակայն նա չվստահացավ շարժվել տեղից և, մի հայացք ձգելով փողերի վրա, կրկին զարմացած նայեց Պետր Ստեփանիչի երեսին։

— Ի՞նչ ես տավարի պես նայում, վե՛ր առ, քեզ ասում եմ ու վեր կաց։

Սմբատը բարձրացավ տեղից։

— Հենց այժմ գնա, քեզ համար շորեր պատվիրիր,— կրկնեց Պետր Ստեփանիչը։

Սմբատը փողերը վերցրեց։

— Դի՛ր գրպանդ և մի՛ ուշանար։ Կեսօրին ինձ մոտ կըգաս ճաշելու, ես քեզ մանրամասնորեն կբացատրեմ, թե ինչ կարգադրություններ եմ անելու քեզ համար։

Սմբատը, մեջքից երկու ծալ թեքվելով, գլուխ տվեց, առանց մի խոսք արտասանելու։ Հետո հետ ու հետ մոտեցավ դռներին և, այնտեղ կանգնելով, մի քանի անգամ ևս գլուխ տվեց ու դուրս եկավ։ Միաժամանակ Պետր Ստեփանիչի կրծքից դուրս թռավ մի խոր հառաչանք։

— Ո՛ւֆ, փառք քեզ աստված, չէի կարծում, որ այդպես հեշտ կպրծնեմ։ Ինչ ուրախ է հիմա Սմբատը, թևեր չունի, որ երկինք թռչի։ Բայց տեսնենք, հարկավոր է դեռ օրիորդի ծնողներին էլ համոզել։ Է՛հ, դա այնքան էլ դժվար չէ, ինչևիցե, պետք է զգույշ լինել, զգուշություն, զգուշություն ամենից առաջ։

— Կխոստանամ, կխոստանամ Կարլին էլ, Մարիա Իվանովնային էլ, Սմբատին էլ, հետո... տեսնենք... այդ հեշտ է։

Եվ Դոլմազովն, այս ասելով, ձեռները ուրախությունից շփեց միմյանց և վեր թռավ բազկաթոռից։ Նա կանչեց սպասավորին և հրամայեց սուրճ բերել։

X

— Մամա ջան, ինչե՞ր ես ասում, շառլատան չէ, Սմբատը աղավարի տղա է։

— Աղավարի է, թե աղավարի չէ, Կատյային մի մազին չարժի։ Ո՞վ կարող էր մտածել, թե Կատյան պիտի գնա մի կեղտոտ ու մուրոտ գործակատարի։

— Քեզի ասում են կեղտոտ չի մնալ, չէ՞, չէ՞ ու չէ՞։ Փի-ե՞ե՞... Պետր Ստեփանիչը մաղազիա է բաց անելու, հասկանո՞ւմ ես թե չէ, Սմբատին, ինձ և Արտեմին կոմպանիա է շինելու։ Համեցե՛ք, գնա տես ինչ քվարթիրա է ուստուպիյտ արել նրան, ինչ մեբիլներ։ Մի գնա է, հետո կիմանաս, թե Սմբատն ինչպիսի ժենիխացու է Կատյային համար։ Մարիա ջան, այսօր ես նրան տեսա, է՛հ, է՛հ, է՛հ, ինչպես ֆռանտ է հագնվել ու սիրունացել, էտո պռոստո կավկազսկիյ կրասավեց։

— Է՛հ, փառք քեզ աստված, ես ինչ էի մտածում, ինչ է դուրս գալիս...

— Չիլավ, դեհ ինչ անենք։ Իմանում ես Մարիա, ասում են դոկտորները նրան սավետովայտ են արել ժենիյտցա չլնի, էնդուր, որ տկար է։

— Տկար է, տկար, այս քանի օրերս նշանվելու է Փիրզադովի աղջկա հետ, տկար է...

— Նո՞ւ-ու-ու, ի՞նչ ես ասում, դաա՞... ոտ, ոտ, ոտ, տեսնո՞ւմ ես, Մարիա, բաս Պետր Ստեփանիչը Փիրզադովի նման

բաղաչին թող կանի ու ինձ նման կոկոյ նիբուդ պռիկաշչիկի աղջկան կուզի՞, ինչ է...

— Ինչո՞վ է պակաս Կատյան Փիրզադովի աղջկանից, խելքով, գեղեցկությունով, թե՞ շնորհով։

— Սուս, սուս, ոտ, ոտ, ոտ, ոտ ինչով է պակաս, դրամ դրամ, պրիդանոյե, պրիդանոյե։

Դոլմազովի համար, ինչպես և կանխապես հավատացած էր, մի մեծ դժվարություն չէր Կարլ Մարկիչին համոզելը։ Բավական էր նրա կողմից մի քանի խոստումներ, և միամիտ մարդն իսկույն շլացած այդ խոստումներից, առանց երկար մտածելու, վճռեց յուր աղջկան տալ Սմբատին։

Բայց այդքան հեշտ չէր համոզել Մարիա Իվանովնային։ Մարիա Իվանովնան ուրիշ տեսակ էր մտածում յուր աղջկա մասին։ Երբ Դոլմազովը մի գեղեցիկ առավոտ, գալով նրա մոտ, հայտնեց, թե Կատյայի համար մի լավ փեսացու է գըտել — Մարիա Իվանովնան նախ կարծեց, թե Պետր Ստեփանիչը մի պարզ ակնարկություն է անում սեփական անձնավորության մասին։ Մի քանի վայրկյան նրա սիրտը սկսեց բաբախել ուրախությունից։ Բայց ավա՛ղ, անցան այդ երջանիկ վայրկյանները, Դոլմազովն ավելի պարզորեն հասկացրեց նրան յուր միտքը, և խեղճ ծնողի ուրախությունն իսկույն փոխվեց տրտմության։ Մարիա Իվանովնան աչքունքը քաշ գցեց, դեմքը թթվեցրեց և ոչինչ չկարողացավ պատասխանել, միայն մի խորը հառաչանք արձակելով յուր կրծքից, ձգեց Դոլմազովի երեսին նշանավոր հայացք։

Պետր Ստեփանիչը հասկացավ Մարիա Իվանովնայի միտքը, բայց ոչինչ նշանակություն չտվեց նրան։ Մարիա Իվանովնայի այդ նշանավոր հայացքն ու այդ խորհրդավոր լռությունն ավելի զորեղ և գուցե կծու ազդեցություն անեին Դոլմազովի վրա, եթե սա հավատացած լիներ, որ միամիտ մորը հայտնի է յուր թշվառ աղջկա գլխին եկած ծանր փորձանքն և այդ փորձանքից առաջացած վշտալի և անարգ հետևանքը։

Դոլմազովը գովեց ու գովաբանեց Սմբատին։ Նկարագրեց նրա խելքը, կրթությունը, եռանդը, գեղեցկությունն ամենագեղեցիկ գույներով։ Նա կրկնեց, թե պսակվելուց հետո

Սմբատի համար կբացի մի լավ մագազին և Կարլ Մարկիչին և Արտեմին կընկերացնի նրա հետ։ Սակայն Մարիա Իվանովնան մնաց անտարբեր։ Նրա վրա այդ խոստումները չունեցան այնպիսի ազդեցություն, ինչպես Կարլ Մարկիչի վրա։ Նա չհափշտակվեց, չտվեց յուր համաձայնությունը, բայց և այնպես խնդրեց Դոլմազովին՝ մի քիչ միջոց տալ այդ մասին մտածելու և յուր ամուսնու հետ խորհրդակցելու։ Դոլմազովը հեռացավ, հուսալով, որ Կարլ Մարկիչը անշուշտ կհամոզի Մարիա Իվանովնային, և այդ դժվար խնդիրը, որն իրան այդքան անհանգստացնում էր, շուտով կվճռվի։

Բայց ի՞նչ էր մտածում ինքը, Կատերինա Կարլովնան. համաձա՞յն էր նա, արդյոք, Սմբատին գնալու։ Դոլմազովը, պետք է ասած, այդ մասին սկզբում շատ էր անհանգստանում։ Սակայն երբ նա մի անգամ ներկայացավ օրիորդին և, մի ժամու չափ առանձնանալով վերջինի հետ, խոսեց այդ մասին և իմացավ օրիորդի միտքն, այնուհետև հանգստացավ և բավական ուրախ դեմքով վերադարձավ տուն։ Այո՛, Կատերինա Կարլովնայի պատասխանը շատ մխիթարական էր Պետր Ստեփանիչի համար և ուրիշ կերպ չէր կարող լինել։ Օրիորդի առջև, յուր անմխիթար դրությունից դուրս գալու համար, երկու ելք կար։ Նա կամ պիտի համաձայնվեր Պետր Ստեփանիչի առաջարկության հետ՝ պսակվելու Սմբատի հետ, կամ թե ոչ՝ պիտի մնար յուր ծնողների մոտ և հայտնելով յուր գաղտնիքը վերջիններին, սպասեր այն նշավակության, որը սպառնում էր նրան մոտիկ ապագայում։

Վերջին միտքը սարսափեցնում էր Կատերինա Կարլովնային. համեստության, ամոթի և վերջապես ինքնասիրության զգացմունքները չէին թույլատրում նրան հայտնել իր անջնջելի արատը ծնողներին։ Բացի այն նախատինքից, որը պիտի կրեր ինքը օրիորդը, դա կլիներ և մի անսպասելի զորեղ հարված, որին չէին կարող դիմանալ ո՛չ Կարլ Մարկիչը և ոչ Մարիա Իվանովնան։ Իսկ դիմել այն անբնական և հանցավոր միջոցին, որին դիմում են շատերն այդ տեսակ դրության մեջ, վտանգավոր էր և երկյուղալի։ Կատերինան խորշում էր այդ միջոցից և վախենում։

Նա ցանկանում էր ապրել, բայց ապրել առանց գաղտնի-

քը ծնողներին հայտնելու, առանց հասարակության բամբասանքի և ատելության առարկա դառնալու։ Եվ այս նպատակին հասնելու համար նա չէր խորշում այնպիսի միջոցից, որ ատելի և զզվելի էր նրա համար, ինչպես նույն ինքն ատելությունն ու զզվանքը։ Նա համբերում էր Դոլմազովի ներկայությունը, նրա հետ ժամերով առանձնանում էր և խորհրդակցում յուր ապագայի մասին, լսում էր նրա խորհուրդները։ Նա մինչև անգամ համաձայն էր պսակվել վերջինի հետ, միայն թե կարողանար ծածկել յուր ամոթը։ Եվ Դոլմազովն օգտվում էր օրիորդի անտանելի դրությունից և կամաց-կամաց հաշտեցնում նրան յուր կեղտոտ պայմանների հետ...

Այսպես թե այնպես, օրիորդը համաձայն էր պսակվել Սմբատի հետ։ Համաձայն էր նույնպես և միամիտ Կարլ Մարկիչը։ Համաձայն չէր միայն Մարիա Իվանովնան։ Եվ ահա երկու ամուսինները տաք-տաք վիճաբանում էին ննջարանում առանձնացած։ Կատերինա Կարլովնան և Արտեմ Կարլիչն իրենց սենյակներում էին։ Վերջինը զբաղված էր ինչ-որ հաշիվներով, որոնց պիտի ներկայացներ Պետր Ստեփանիչին։

— Քեզ ասում եմ, բանը մի՛ երկարացնի, ետը լավ չի դա հա՞ա՛,— շարունակում էր համոզել յուր ամուսնուն Կարլ Մարկիչը։— Կատյան ինքը սոգլասնի է, էլ ի՞նչ ես ուզում։ Նո՛ւ, բանը պրծած է, էգուց պիտի օբրուչիյտցա անենք, հինգ օրից հետո էլ պսակենք, էնդուր, որ Պետր Ստեփանիչը վռազում է. եկող շաբաթ օտպրավիյտցա է լինելու Հաշխան, էնդից էլ յարմարկա։

— Դու ինչ գիտես, որ Կատյան հոժար է, ես հարցնում եմ ոչինչ չի պատասխանում, լաց է լինում։ Ջեմ իմանում խեղճ երեխես ցավն ինչ է. ամսից ավելի է, որ արյուն արտասուքի մեջ է, օրից օր հալվում, մաշվում է։

— Տկար է, տկար է. ինձի Պետր Ստեփանիչն ասավ, որ այն երեկո պրոստուդիյցա իլել։ Ես էլ պուլլսը տեսա երեկ, լիխորադկա ունի։ Աբա ինքն ի՞նչտեղ է։

— Նստած է յուր սենյակում տխուր ու տրտում, խոսեցնում եմ— չի խոսում։

— Կատյա, Կատյուշկա, դուշեչկա, մին եկ այստեղ,— գոչեց Կարլ Մարկիչը։

Ներս մտավ Կատերինա Կարլովնան։ Ո՞րքան փոխվել էր խեղճ օրիորդն այն շարագուշակ երեկոյից, ինչպե՞ս դեղնել ու մաշվել էր երկու ամսվա ընթացքում։ Նրա դեմքի նախկին թարմության և կայտառության հետքը նշմարվում էր միայն երկու փոքրիկ կարմիր բծերով, որոնք հազիվհազ պահպանվել էին սփրթնած այտերի վրա։ Նրա երեսի ոսկորները ցցվել էին, աչքերը թաղվել խոր փոսերի մեջ, շրթունքներն արյունաքամվել։ Փոխվել էին նույնպես նրա նախկին խրոխտ ու հպարտ գնացքն ու շարժվածքը։

Ներս մտնելով, նա թույլ և անլսելի քայլերով մոտեցավ պատի տակ դրած աթոռներից մեկին, վհատված և ուժաթափ ոչ թե նստեց, այլ միանգամից ընկավ նրա վրա։

— Այո՛, այդպես, Կատյա, ախար մի քանի օրից հետո պսակվելու ես, մեզ մոտ նստիր, որ քեզանից կշտանանք։ Ի՞նչ էիր անում այնտեղ։

— Կարդում էի,— պատասխանեց օրիորդը նվաղած ձայնով, որի մեջ զգացվում էր նրա ներքին վիշտը։

— Էլի ռոմա՞ն, քեզի քանի անգամ ասել եմ, որ ռոմաններ կարդալը վնաս է, տես, ախար ինչպես բլեդնիացել ես։

— Ռոման չէ, պապա, Կատյան տերտեր է դառել, ավետարան է կարդում,— մեջ մտավ Արտեմ Կարլիչը, որ նույնպես եկել էր ներս քրոջ հետ, յուր հոր ձայնին։

— Ավետարան, հա՛, լավ ես անում, բայց ի՞նչ կարդալու վախտ է, կիրակի օրը պսակդ է, տվալետդ պատրաստիր։ Հա՛, Կատյա, դուշա մայա, ժենիխիդ տեսե՞լ ես, հավանո՞ւմ ես։

Օրիորդը ոչինչ չպատասխանեց, միայն գլուխը թեքելով կրծքին, մի խորը հառաչանք արձակեց։

— Լավ է, մի՛ ամանչիր, մի կարմրիր, իմացա, հավանում ես. ո՛վ չի հավանի Սմբատին։

— Ես էլ եմ հավանում, պապա,— դարձյալ մեջ մտավ Արտեմը։ Երեկ ծովի վրա նրա հետ նավակով ման եկանք։ Շատ լավ տղա է։

— Լսո՞ւմ ես, նո՞ւ, լսո՞ւմ ես, Մարիա, Արտեմն էլ է հավանում, դո՞ւ ինչ ես ֆորսիյտ անում։

— Ինչու չի հավանիլ, չէ որ Արտեմն ինքն էլ Սմբատի նման մեկն է։

— Ինձ չե՞ս հավանում, մամա, ես ի՞նչ վատ տղա եմ։

— Վատ չես, բայց մի մեծ բան էլ չես։

— Նու, նու, նու, հերիք է, քիչ երկարացրեք, ինքը Կատյան հավանում է յուր ժենիխին, պրծավ ու գնաց, այնպե՞ս չէ, Կատյա։

— Ինչպես կամենում եք, այնպես արեք,—պատասխանեց Կատերինա Կարլովնան։

— Այդպես, շատ ապրես, շատ ապրես, Կատյա։ Նո՛ւ, Մարիա, ինչ որ հարկավոր է, էգուց ասիր, որ առնեմ, էնդուր որ Պետր Ստեփանիչը վռազում է։ Երեկ ինձ երկու հարյուր մանեթ փող տվեց պոկուպկաներ անելու։

Մարիա Իվանովնան կրկին սկսեց հակառակել։ Նա ասաց, թե այդքան շտապել հարկավոր չէ, թե ավելի լավ է սպասել, գուցե Կատյայի համար մի ուրիշ ավելի լավ փեսացու է ճարվելու, թե Կատյայի անունն արդեն տարածվել է և ամենքը գովում են, թե շատ հարուստ տղերք կցանկանան առաջարկություն անել և այլն, և այլն։

Գիշերից բավական անցել էր։ Կատերինա Կարլովնան հեռացավ յուր սենյակը։ Արտեմ Կարլիչն արդեն քնած էր։ Երկու ամուսինները շարունակում էին վիճաբանել։ Վերջապես, Կարլ Մարկիչը տեսնելով, որ Մարիան համառություն է անում, դուրս եկավ համբերությունից և ասաց.

— Թե խեղդվիս, Մարիա, ես Կատյային տալիս եմ Սմբատին, էնդուր որ Պետր Ստեփանիչի քեֆին դիպչել չեմ կարող։

Մարիա Իվանովնան կատաղեց, փրփրեց, բայց, վերջը Կարլից մի փափուկ ապտակ ստանալով, հեռացավ, գնաց քնելու վիրավորված սրտով և վշտացած հոգով։

Հետևյալ առավոտ Դոլմազովը կրկին այցելեց Պոպովի ընտանիքն և մի ժամ մնալուց հետո, հեռացավ բոլորովին միամտացած։ Նա կոտրել էր Մարիա Իվանովնայի համառությունը։

Հինգ օր անցած, մի գեղեցիկ երեկո քաղաքի կենտրոնում գտնվող փոքրաշեն եկեղեցում կատարվեց Կատերինա Կարլովնայի և Սմբատի պսակը։ Դոլմազովը յուր խնամատարությունն այնտեղը հասցրեց, որ մինչև անգամ Սմբատի խաչեղբոր պաշտոնն ինքը կատարեց։

XI

Սմբատը շուշեցի աղքատ ծնողների զավակ էր։ Տասներկու տարեկան հասակում նրան տվեցին քաղաքային ուսումնարան։ Երեք տարի մնաց այնտեղ Սմբատն և հազիվ ռուսերեն ու հայերեն գրել ու կարդալը սովորել էր, երբ հայրը դուրս բերեց նրան և հանձնեց մի վաճառականի խանութ։ Բավական ընդունակ և աշխատասեր տղա էր, բնավորությունով համեստ, խաղաղ և իրանից մեծերի խոսքը լսող ու կատարող։ Նա չափազանց հարգում ու պատվում էր յուր ծնողներին, սիրում էր յուր երկու քույրերին, որոնք տարիքով իրանից փոքր էին։ Հարգում ու պատվում էր նա նույնպես և՛ այն վաճառականին, որի մոտ գործակատար էր, խոնարհությամբ կատարում էր նրա պատվերները։ Բայց երբեք նրա խոնարհությունը ստրկության չէր հասնում. նա յուր գործերը կատարում էր ինչպես մի պարտաճանաչ գործակատար, ուրիշ ոչինչ։ Նա ինքնասեր տղա էր և տեղն եկած ժամանակ կարող էր պաշտպանել յուր պատիվը։ Որովհետև նրա հայրը, ծերացած լինելով, ոչնչով չէր պարապում, այս պատճառով ընտանիքի հոգսն ընկել էր որդու վրա։ Հինգ տարի ծառայեց Սմբատը վաճառականի խանութում, նրա չնչին ռոճիկն անբավական էր հինգ հոգուց բաղկացած ընտանիքի գոյությունը պահպանելու համար։ Տեսնելով, որ աղքատությունը շատ է ճնշում, նա յուր հոր համաձայնությամբ, թողեց Շուշին և եկավ Բաքու՝ այստեղ բախտ որոնելու։ Նա մբտավ գործակատար Դոլմազովի մոտ ամսական քառասուն մանեթով։ Յուր համեստ ռոճիկի մի չնչին մասով կեսկուշտ կեսքաղցած ապրում էր ինքն, իսկ մնացյալն ուղարկում ընտանիքին, որի ապահովության խնդիրը նրա միակ հոգսն էր։ Հայրն անդադար գանգատվում էր աղքատության վրա,

և Սմբատն, ամեն անգամ նրանից նամակ ստանալիս, քաշվում էր գործաբանի մի անկյունն և դառն արտասուք թափում։ Չարա տարի էր, որ նա Դոլմազովի մոտ ծառայում էր միևնույն ռոճիկով։ Վերջին ժամանակ մի քանի անգամ նա խնդրեց Դոլմազովին փոքր-ինչ ավելացնել ռոճիկը, բայց վերջինն ուշադրություն չէր դարձնում։ Իսկ երբ Սմբատը մի անգամ ևս այդ մասին ակնարկեց, Դոլմազովը բարկացավ։

— Եթե մեկ էլ գլուխս ցավեցնես, շորերդ հավաքիր ու կորիր։

Սմբատը լռեց։ Բայց հազիվ անցել էր երկու ամիս այդ օրից, և ահա նույն Դոլմազովը հրավիրում է Սմբատին յուր մոտ և հանկարծ հայտնում, թե այսուհետև նրան ընդունում է յուր առանձին հավանավորության տակ։ Նա առաջարկում է Սմբատին պսակվել Կատերինա Կարլովնայի նման գեղեցկուհու հետ, խոստանում է անկախ ապրուստի միջոց, մագազին և, իբրև ապացույց, տալիս է երեք հատ հարյուրանոց։

Որպիսի՜ բախտավորություն, որպիսի՜ անսպասելի երջանկություն մանուկ հասակից աղքատության դառն լծի տակ ճնշված մի երիտասարդի համար։ Երբ Սմբատն երեք հատ հարյուրանոցները գրպանում դուրս եկավ Դոլմազովի մոտից, հանկարծակի ուրախության բուռն զգացմունքների ներքո միանգամայն շվարված էր։ Նա չէր հավատում, թե այդ բոլորը կատարվում է իրականության մեջ, նրան երազ էր թվում Դոլմազովի առաջարկությունը։ Բայց ի՞նչ երազ, ի՞նչ հրաշք, ահա երեք հատ կանաչ-կարմիրանոցները։ Սմբատը փոքացում անդադար հանում էր հարյուրանոցները, նայում նրանց այս երեսին, այն երեսին, շոշափում, հետո ծալում այս կողմ, այն կողմ և կրկին դնում գրպանը, կրկին հանում ու կրկին նայում և կրկին դնում գրպանը։ Վերջապես, նա հետզհետե ուշքի է գալիս և նրա սիրտը նորից սկսում է բաբախել ուրախությունից։

— Վերջապես, վերջապես, աղքատության քարը միանգամից գեն կգցեմ,—կրկնում էր նա ինքն իրան անդադար։— Վերջապես, խեղճ ծնողներս ու քույրերս մի լավ օր կտեսնեն։ Կատերինա Կարլովնան... հը՛մ... կարո՞ղ էի, արդյոք, երբևիցե երևակայել, որ այդ գեղեցկուհին իմ ամուսինը պիտի դառնա...

Շարունակ մի շաբաթ Սմբատն ուրախությունից շվարած պտտվում է այս կողմ, այն կողմ, զանազան բաներ է պատվիրում և այլն։

Վերջապես, հասնում է հարսանիքի երեկոն։ Սմբատը զուգված, զարդարված կանգնած է եկեղեցու սեղանի առջև, Կատերինա Կարլովնայի հետ ձեռք-ձեռքի տված։ Նա ուրախությունից ոտից գլուխ դողում է, նրա սևագույն խոշոր աչքերը փայլում են երջանկության փայլով, նրա սիրտը թրթռում է։ Պսակն ավարտվում է, և Սմբատը թև-թևի տված Կատերինա Կարլովնայի հետ, մտնում է յուր սեփական բնակարանը։ Նրա ուրախությունը սահման չունի, նա ոտքի ձեռքի ընկած թռչում է այս կողմ, այն կողմ, ինքն անձամբ ծառայություններ անում հանդիսականներին։ Նրան թվում է թե ոչ միայն ինքն է երջանիկ, այլև բոլորն և ամենքն ուրախ են յուր բախտավորությամբ։ Նա տասն անգամ, հարյուր անգամ գլուխ է տալիս Դոլմազովին, անդադար շնորհակալություններ հայտնում յուր բարեսիրտ խնամատարին նրա այդչափ լավություններին փոխարեն։

Բայց, ավա՛ղ, Սմբատի երջանկությունն երկար չի տևում։ Անգութ ճակատագիրը շտապում է ողորմելի երիտասարդի կարծեցյալ բախտավորությունը վերափոխել դժբախտության։

Հարսանիքի չորրորդ օրն է։ Առավոտ է։ Արեգակը, նորնոր դուրս գալով, շառագունում է երկնակամարը, և ահա Սմբատը գիշերային շորերով նստած է յուր սենյակում։ Նրա դեմքը տխուր է և գունաթափ, շրթունքները սեղմված, ճակատը կնճռված։ Նա անդադար կրծքից խորը հառաչանքներ է արձակում և երբեմն գլուխն երկու ձեռներով սեղմում է կամ մազերը փետում։

Ուղիղ երկու ժամ Սմբատը միայնակ մնում է այդ դրության մեջ՝ փակված յուր սենյակում։ Հետո նա հանկարծ բարձրանում է տեղից, շորերը հագնում և խելագարի պես զգզգված մազերով, անլվա երեսով, վազում փողոց։ Նա ամբող օրը չի վերադառնում տուն, մյուս օրը նույնպես։ Սկսում են փնտրել այստեղ ու այնտեղ, չկա ու չկա...

Ո՞ւր է Սմբատը։

XII

Մի հիանալի, մի դյութական տեսարան է ներկայացնում ծովեզրյա քաղաքը լուսնյակ գիշեր, երբ եղանակը բոլորովին խաղաղ է։ Կանգնելով ծովափում և բազմաթիվ նավերի անտառախիտ կայմերի միջով նայելով ջրի անհուն տարածությանը, որի հարթ մակերևույթն արծաթափայլում է պայծառ երկնքի երեսին սահող լրացած լուսնի կաթնագույն լուսով, մարդ ակամա հափշտակվում է։ Կա մի անհասկանալի զորություն, մի անբացատրելի ուժ, որն այստեղ բոպեաբար մոռացնել է տալիս մարդուն այն ամենն, ինչ որ պատկանում է նյութական աշխարհին, և նա, կարծես, կախարդվում է։ Մարդ հոգով ու մտքով այդ անհասանելի զորության ուժից մղվում է հեռո՜ւ-հեռո՜ւ, դեպի երկնքի անհուն խորությունը, ուր չկան այն դառնություններն, առօրյա մանր հոգսերն ու վշտերը, որոնց ներքո գիշեր ու ցերեկ ճնշված է մահկանացուն։ Այդպիսի բոպեներում մարդ ոչինչ չի կարողանում մտածել, ոչ մի միտք կանգ չի առնում նրա գլխում։ Այդպիսի բոպեներում միտքը կաշկանդվում է, երևակայությունը բորբոքվում է, և մարդ կարծես լողում է ինչ-որ վերացական աշխարհի մեջ, ուր նա հետզհետե հալվում է, ինչպես մի կտոր սառույց եռացող ջրի կաթսայում։

Ահա մի այդպիսի հրաշալի երեկո էր, երբ, Կատերինա Կարլովնայի հարսանիքից հինգ օր անցած, ծովային կայարաններից մեկի ծայրում, ոլոր-մոլոր քայլերով անցուդարձ էր անում մի երիտասարդ։ Եղանակը, ամառային լինելով, բավական տաք էր։ Երիտասարդը հագած էր սևագույն մահդյա հագուստ առանց վերարկվի։ Նա գլխաբաց էր, ձեռները ծոցում խաչաձև ծալած և սպիտակ ամառային գդակը կոնատակին պահած։ Ժամանակ-ժամանակ նա կանգ էր առնում և, գլուխը բարձրացնելով, նայում լուսնին, որը կամ մտնում էր բամբակագույն նոսր ամպերի տակ և քողարկվում, ինչպես մի գեղատեսիլ, նազելի օրիորդ, կամ կրկին դուրս սահում։

Մի ամբողջ ժամ էր, որ Սմբատն այդպես անցուդարձ էր անում այստեղ։ Կայարանի մի անկյունում, ծովի երեսում

կանգնած էր մի փոքրիկ բեռնակիր շոգենավ, որ պատրաստվում էր ճանապարհ ընկնելու։ Նավաստիները տախտակամածների վրա ապրանքներ էին դարսում։ Շոգենավի վրա կային միայն մի քանի պարսիկ ճանապարհորդներ։ Կարճլիկ, կարմրերես և հաստ շվեդացի նավապետը, ձեռները գրպանում դրած, տախտակամածի ծայրից յուր սուր հայացքը ձգել էր ծովի հեռավոր հորիզոնին։ Սմբատը բարձրացավ շոգենավի վրա և մոտեցավ նավապետին։

— Ե՞րբ կճանապարհվենք։

— Մի ժամից հետո,— պատասխանեց նավապետը, յուր հայացքը չհեռացնելով ծովից։

— Կնշանակե տասնումեկ ժամի՛ն։

— Ուղիղ։

Սմբատը ցած եկավ և նստեց կայարանի սյուներից մեկի վրա։ Փախչել ու հեռանալ— ահա այն միակ միջոցը, որ կարող է նրան ազատել խայտառակությունից։ Իսկ մյուսը... օ՛օ՛օ... նա չի կարող դիմել այդ միջոցին, սարսափելի է։ Սարսափելի է ո՛չ միայն նրա, այլև չորս հոգուց բաղկացած մի ընտանիքի համար, որի գոյության միակ պաշտպանն ինքն է։ Դա կլինի մի անսպասելի մահացու վերք նրա ծերունի ծնողների համար։ Այո՛, որդիական սերը նրան իրավունք չի տալիս դիմել ինքնասպանության։ Միակ ելքն այս անիծյալ քաղաքից հեռանալն է։ Ի՛նչ խայտառակություն, տեր աստված, և ո՛վ կարող է սպասել, թե Դոլմազովը մի այդպիսի դև է։ Ի՛նչպես խելագարվեց և գլխապատառ ընկավ այդ մարդու որոգայթը։ Դոլմազով, օ՛օ՛օ՛ Դոլմազով, հիմա հասկանալի է, թե ինչ միտք ուներ քո բարերարությունը։ Զզվելի, կեղտոտ մարդ, մի՞թե բավական չէր քեզ, որ անբախտացրել էիր մի ամբողջ ընտանիք, որ դու երկրորդին ևս թշվառացրիր։ Օ՛օ՛օ՛... եթե մի օր քեզ կհանդիպի Սմբատը... Բայց այժմ ուշ է, այժմ միայն մի բան է մնում անել. շուտով այստեղից հեռանալ։ Արդեն ամբողջ քաղաքը խոսում է, ամենքի բամբասանքի առարկան է նա, էլ ի՛նչ երեսով կարող է մնալ այստեղ։

Այս մտածողության մեջ խորասուզված, Սմբատը բարձրացավ և սկսեց նայել ծովի հեռավոր հորիզոնին։ Կես ժամու չափ նա այդ դրության մեջ անշարժ կանգնած էր։ Հանկարծ

նրա ականջներին հասավ բարակ սուլոցի ձայն։ Սմբատը արագ քայլերով դիմեց դեպի շոգենավն և բարձրացավ տախտակամածի վրա։

Շոգենավը բաժանվեց կայարանից և հանդարտությամբ սկսեց լողալ դեպի ծովի խորքը։ Սմբատը, երեսը դարձրած, քաղաքին էր նայում։ Անցավ քառորդ ժամ, և քաղաքը սկսեց հետզհետե անհետանալ նրա աչքերից։ Վերջին անգամ նայելով դեպի հետ, նա մի խորը հառաչանք արձակեց կրծքից։

— Մնաս բարյավ կարծեցյալ բախտավորություն — ասաց, և արտասուքի երկու խոշոր կաթիլներ, գլորվելով նրա աչքերից, ընկան տախտակամածի վրա։

XIII

Մոտ երեք տարի անցած Սմբատի Պարսկաստան հեռանալու երեկոյից՝ Հաշտարխանի նեղ փողոցներից մեկում, մի փոքրիկ սենյակում ապրում էր երեք հոգուց բաղկացած մի ընտանիք։ Սրանցից մեկը մի պառավ կին էր մեջքից ծռված, մյուսը մի դեղնած, մաշված, բայց գեղեցկությունը տակավին չկորցրած երիտասարդ կին, իսկ երրորդն երկու տարեկան մանուկ, հիվանդոտ դեմքով։

Պառավ կինը Մարիա Իվանովնան էր, երիտասարդը—Կատերինա Կարլովնան, իսկ հիվանդոտ մանուկը — վերջինի երեխան։ Կարլ Մարկիչը չկար։ Երբ Սմբատի Պարսկաստան փախչելու գաղտնիքը պարզվեց, Կարլ Մարկիչն իսկույն, վրշտացած սրտով, դուրս եկավ Դոլմազովի մոտից յուր որդու հետ։ Նա երկար ժամանակ գործ չգտավ։ Մի կողմից աղջկա խայտառակությունը, մյուս կողմից՝ անտանելի աղքատությունը հետզհետե բոլորովին ճնշեցին խեղճ ծերունուն, և նա երկու տարի չանցած մեռավ։ Արտեմ Կաթիչը դեռ Բաքվումն էր։ Նա մի գործարանում գործակատար էր և յուր ստացած աննշան ռոճիկով պահում էր մորը, քրոջն ու սրա զավակին։

1884 թ., Թիֆլիս

ՕԲԻՈՐԴ ԼԻԶԱ

Նվեր NN...-ին

Մի անգամ Թիֆլիսի կենտրոնում գտնվող մի տան պատշգամբի վրա երկու բարեկամ նստած գարեջուր էին խմում։ Մեկը վառ աչքերով, պարզ ճակատով և գանգուր մազերով քսանհինգ տարեկան երիտասարդ էր։ Մյուսը մոտ երեսունհինգ տարեկան տղամարդ էր, միջահասակ, սև միրուքով, քիչ նիհար դեմքով և բավական բարձր ճակատով։ Երիտասարդի հագուստը ավելի շքեղ էր և աչքի ընկնող։

Օրը վերջանում էր։ Գարնանային արևի վերջին ճառագայթները փայլեցնում էին եկեղեցիների արծաթագույն գրմբեթները։ Գավթում, կանաչազարդ ծառերի վրա, ճլվլում էին ճնճղուկները։ Իսկ թեթև իրիկնային զեփյուռը սոսափում էր ծառերի տերևները։ Հայտնի չէր ո՛ր կողմից, լսվում էր նույնպես և՛ դաշնամուրի ձայն։— Դա պարսկական մի քաղցր «մոդամմաթ» էր «հեյրաթիի» հետ խառն։ Ուրեմն՝ երաժշտության մի անծանոթ արտիստ, այդ երկու եղանակները աղավաղելով և զարդարելով մի հայ երգի եղանակով, դրել էր եվրոպական նոտաների վրա և անունը կնքել «բայաթի»։ Ո՛չինչ նմանություն ատրպատականի վշտահնչյուն բայաթիի հետ։

— Նայի՛ր,— ասաց միջահասակ տղամարդը, գարեջրի բաժակը յուր շրթունքներին տանելով և ձախ ձեռով խփելով երիտասարդի ուսին։

— Ո՞ւր,— հարցրեց երիտասարդը։

— Երկնքին, տես ո՛րքան գեղեցիկ է։

Երիտասարդը նայեց դեպի արևելք։ Երկինքը պարզ էր, բայց ցած հորիզոնից ուռչելով բարձրանում էր մայիսյան բամբակագույն ամպերի մի ահագին սար։ Սարը բարձրանում էր, հանդարտությամբ լողալով։ Նրա կլորակ, թանձր կտորները, խառնվելով և ձուլվելով իրարու հետ, երբեմն հորիզոնում գոյացնում էին տեսակ-տեսակ հրաշալի պատկերներ, որ նմանվում էին մերթ գեղեցիկ շինությունների, մերթ զանազան վիթխարի կենդանիների։ Արևի վերջին շողքերի տակ այդ պատկերները ներկվում էին բազմատեսակ նուրբ գույներով, որոնց նմանը հանճարեղ նկարչի վրձինն անգամ չի կարող ստեղծագործել։

Երիտասարդը հիացած նայում էր երկնային տեսարանին, բայց նրա միտքը, կարծես, զբաղված էր ուրիշ բանով։

— Ես շատ եմ սիրում այդպիսի տեսարաններ,— կրկին խոսեց տղամարդը, բաժակը նորից լեցնելով։— Նրանք ինձ հիշեցնում են մարդկային կյանքի այն հիմար շրջանը, որի խաղալիքն ես դու այժմ։

Երիտասարդը նայեց նրան և, գլուխը հանդիմանորեն շարժելով, բաժակը մոտեցրեց շրթունքներին։

— Շարժի՛ր գլուխդ, բայց մի հինգ տարի ևս, և հետո ինքդ քեզ վրա կծիծաղես, Գևորգ։ Նայի՛ր երկնքին։

Գևորգը դարձյալ նայեց երկնքին։ Ամպերի վիթխարի սարը հետզհետե բարձրանում էր, ավելի ու ավելի ուռչելով և մեծանալով։ Սակայն, նույն րոպեին, երբ տղամարդը ցույց տվեց, պատահեց մի փոփոխություն։ Սարի ստորոտից արագությամբ բարձրացան ամպի ուրիշ ալիքներ, բայց ոչ սպիտակ, այլ մուգ մոխրագույն։ Նրանք սահեցին վերև, և մի քանի րոպեում բամբակագույն սարը ծածկվեց մութ քողով։ Անհետացան սքանչելի տեսարանները, և հորիզոնը ծածկվեց տխուր վարագույրով։

— Տեսա՞ր ինչպես փոխվեց, —դիմեց տղամարդը Գևորգին,— ո՞ւր են այն բազմագույն հրաշալի նկարները։ Չկան, սև թուխպը պատեց, գուցե և անձրև էլ գա։

— Ասե՛լդ ինչ է,— հարցրեց Գևորգը ժպտալով։

— Այդպես է և երիտասարդական փայլուն կյանքը, շատ-շատ մինչև երեսուն տարի։ Հասավ երեսունը, մի ճեղք բացվեց, և նրա միջից դուրս եկած մութ ամպերը պատեցին տխուր քողով մարդու կյանքը։ Բայց դառնանք մեր վեճին։ Ինչպես ասացի, Գևորգ, սերը բնական պահանջ է, առանց նրան մարդ չի կարող ապրել ինչպես ձուկը առանց ջրի։ Սերը, այսպես ասած, մարդկային գոյության խարիսխն է։ Բայց նա ցանցառ զգացմունք է դառնում, երբ կնոջն է վերաբերվում։ Կնոջ սիրել ներելի է, ինչպես և ներելի է սիրել՝ Ղազանի գարեջուր, Թիֆլիսի խորոված, թառ-թառ, բիֆշտեկս։ Հասկացա՞ր։ Բայց նրա համար գիշերները նստել և սրտի խորքից «ախ»-եր քերելով դուրս թափել օդի մեջ— դա խելագարություն է։ Կինը հիմար արարած է, Գևորգ, և ստեղծված է կյանքում հիմար դեր կատարելու, թեկուզ նա խորին փիլիսոփայի քղամիդ հագնի։ Ապա, խորը քննիր, տես ճիշտ եմ ասում, թե չէ։ Իսկ տղամարդը, օ՜օ՜օ՜, տղամարդը ուրիշ բան է, օրինակ, ես ու դու։ Կեցցե տղամարդը։

Արզաս Պետրովիչը— այսպես էր խոսողի անունը— այս ասելով, դատարկեց գարեջրի բաժակը։ Հետո նա մի կտոր հաց ու խավիար դրեց բերանը և շարունակեց։

— Տղամարդի նշանաբանն է՝ կնոջը նայել իբրև մի առօրյա կենսական պիտույքի վրա։ Այո՛, Գևորգ, նայել բարձրից և հետը արժան չհամարել երկար խոսելու։ Համաձա՞յն ես իմ մտքին։

— Ամենևին,— պատասխանեց Գևորգը,— դա Պրուդոնի միակողմանի սխալ գաղափարն է, որ երևի քեզ վրա շատ է ազդել։

Արզաս Պետրովիչը ներողամտաբար ժպտաց։

— Պրուդոն, հըմ, Պրուդոն, ես նրան իսկի չեմ էլ կարդացել, եթե ուզում ես իմանալ։ Ես ասում եմ այն, ինչ որ կարողացել եմ նկատել մինչև այսօր։ Բայց թողնենք փիլիսոփայությունը։ Դու այժմ սիրահարված ես և կնոջ կոշիկներին երկրպագություն ես տալիս։ Ես էլ մի ժամանակ սիրահարված եմ եղել, թույլ տուր ինձ պատմել քեզ իմ ռոմանը, է՜հ, բան է, գուցե կարողանաս օգուտ քաղել իմ պատմությունից։ Համաձա՞յն ես։

— Համաձայն եմ։

— Միայն թե դու ինձ չընդհատես։

— Հարկավոր եղած ժամանակ չեմ կարող չընդհատել։

— Գեղեցիկ։ Բայց նախ թույլ տուր, որ կոկորդս թրջեմ, որպեսզի լավ խոսեմ։

Արզաս Պետրովիչը մի բաժակ ևս դատարկեց և, թաշկինակով բեղերը սրբելով, ասաց.

— Լսի՛ր։

Գեորգը արմունկները դրեց սեղանի ծայրին, գլուխը թեքեց ձեռքերի ափերին և աչքերը հառեց Արզաս Պետրովիչի երեսին։

Արզաս Պետրովիչը այսպես սկսեց իր պատմությունը։

— Հազար ութ հարյուր յոթանասուն և ֆլան թվականին, քսանուվեց տարեկան հասակում, ուսումս ավարտեցի և վերադարձա հայրենիք։ Իհարկե, իբրև նորավարտ, թարմ երիտասարդ, ես գլխումս դարսած բերեցի գեղեցիկ գաղափարների մի շարք, որ մտադիր էի իրագործել հասարակության օգտին։ Այդ գաղափարների շարքին ես կին ասված էակի մասին ևս ունեի որոշ հայացքներ, որոնք սկզբունքով հակառակ էին ներկա հայացքներիս։ Խոսք չկա, Գեորգ, գիտես, թե որքան առաջադեմ և ազատամիտ պիտի լինեին այդ գաղափարները։ Ճիշտ նույնը, ինչ որ դու ունես այժմ, այսինքն՝ ազատ սեր, հավասար իրավունքներ, իդեալ, ֆլան-ֆստան։ Մի խոսքով, պատանեկական վարդագույն երևակայություն, որ այժմ մի փոքր մթնեցնում է քո ուղեղը, իմ սիրելի Գեորգ։

Գեորգի շրթունքներով սահեց մի դժգոհ ժպիտ։

— Դե լավ, մի՛ վիրավորվիլ, մյուս անգամ չեմ կրկնիլ,— շտապեց հանգստացնել նրան Արզաս Պետրովիչը և շարունակեց։— Այսպես, Գեորգ ջան, ես եկա հայրենիքս հայտնի գաղափարներով։ Ներիր, որ այդպես մանրամասնորեն եմ սկսում պատմությունս. մի քանի հանգամանքների հետ հարկավոր է քեզ ծանոթացնել, որպեսզի չկարծես, թե ես բոլորովին զուրկ եմ եղել գաղափարական կյանքից։ Ինչպես գիտես,

իմ մասնագիտությունը բժշկականությունն է։ Բախտի բերմունքով, ինձ շուտով հաջողվեց պաշտոն գտնել հենց այն քաքաղում, ուր այս բոպեին քո խոնարհ ծառան պատիվ ունի նկարագրել յուր կյանքից մի կտոր։ Այդ առաջին հաջողությունն ինձ խրախուսեց, բառի բուն նշանակությամբ, ես մտա կյանքի մեջ։ Ես սկսեցի քարոզել իմ նոր գաղափարները։ Շատերն արհամարհեցին, շատերն էլ համակրեցին և մի հայ ընկերության մեջ, մի թեթև ճառից հետո, անմիջապես ընդունեցին ինձ գործող անդամ (շա՛տ մեծ օգուտներ տվեցի այդ ընկերության)։ Բայց ինձ ավելի զբաղեցնում էին կանայք, ինչ մեղքս թաքցնեմ։ Ես ձգտում էի ծանոթանալ այդ քնքուշ կոչված սեռի հետ։ Իհարկե, իբրև հայ և ազգասեր հայ (ես մի փոքր լայնամիտներից էի), ավելի մոտ էի հայ ընտանիքներին։ Ես ծանոթացա շատերի հետ։ Դու գիտես, որ բժիշկն այդ կողմից ավելի դյուրություններ ունի, քանի մի ուրիշը։ Ինձ վրա խորթ աչքով չէին նայում ընտանիքներում, մինչև անգամ տեղ-տեղ ընդունում էին հաճությամբ։ Պիտի ավելացնել, որ ես այդ ժամանակ դեմքով էլ վատ չէի։ Հիմա քիչ խունացել եմ, դե ութ տարի հետո է միայն բերանով ասել։ Մի տիկին մինչև անգամ մի տեղ ասել էր, որ իբրև թե իմ շրթունքների վրա միշտ խաղում է չգիտեմ ինչ մի հրապուրիչ ժպիտ, որ կանանց համար վտանգավոր է։ Բայց դա ինձ այնքան չէր հետաքրքրում։ Ես կնոջ վրա նայում էի ուրիշ աչքով և երբեք թույլ չէի տալիս ինձ ստորանալ նրան դուր գալու միայն արտաքուստ։ Գիտե՞ս ինչու, հրմ, որովհետև գաղափարասեր էի։ Հա՛յ գիդի հիմար եբքասարդություն։ Քո, կենացը, Գեորգ։

— Ինչպես ասացի,— շարունակեց Արզաս Պետրովիչը, գարեջուրը խմելուց հետո, բաժակը իրանից հեռու դնելով,— ես դեռ ուսումնարանական նստարանի վրա ունեի կազմած որոշ գաղափար կնոջ մասին, ի միջի այլոց, և հայ կնոջ մասին։ Հայ կնոջն ես երևակայում էի իբրև գեղեցիկ, թարմ, առողջ, բայց անմշակ նյութ, որից կարելի է պատրաստել մի հրաշալի բան։ Բայց կարող ես զգալ, թե որքան ես խաբված համարեցի ինձ, երբ հակառակը գտա, առաջին անգամ՝ գոնե ֆիզիկական կողմից։ Ո՞ր տունը, ո՞ր ընտանիք մտնում էի, ինձ հանդիպում էին կարճահասակ, պշկած, թառամած, քիթը

երկայն, մեջքը ծուռ, կուրծքը ներս ընկած էակներ։ Դրանք հայ օրիորդներն էին, որոնց դեմքերից, կարծես մի չար ձեռք ջնջել էր բնորոշ շարժումը, աշխուժությունը, այսինքն՝ այն, ինչ գրավում է երիտասարդին։ Այդ երևույթն ինձ խիստ ցավեցրեց։ Այսպես, Գևորգ, ես տեսա, որ հայ կինն առողջ չէ։ Դա, թեթև բան չիմանաս, Գևորգ, նամանավանդ մի բժշկի համար, որ դատում էր. «Առողջ հոգին առողջ մարմնի մեջ»։ Բայց ես չվհատվեցի և աշխատում էի գտնել այդ սփրթնած, ժահրաբեմ էակների մեջ կենդանություն։ Դա ինձ համար մի քիչ դժվար եղավ։ Պիտի ասել, որ այդ կողմից ինձ չափազանց վրդովում էին հայ մայրերը։ Ախ, այդ ատելի թասակրավները, այդ թթված Կեկել-Փեփելները, ինչ տուն որ մտնում էի, ինձ կատարելապես հալածում էին իրանց միատեսակ «վի՞ն արիս» և «կտո՞ տակոյ»-ներով։ Բայց չգիտեմ ինչու, երբ այդ «վի՞ն արիս»-ների և «կտո՞ տակոյ»-ների փոխարեն լսում էի «ո՞վ է», սակավ էի վրդովվում։ Գուցե դա իմ ազգասիրությունից էր։ Բայց, այսուամենայնիվ, ինձ դարձյալ զայրացնում էին այդ հարցերը։ Ես տեսնում էի, որ ամեն տեղ ինձ վրա նայում էին իբրև մի փեսացուի վրա։ Այս պատճառով անկարելի էր ինձ՝ հայ օրիորդին տեսնել յուր բնական և ըստացածին լավ ու վատ առանձնահատկություններով։ Ինձ թվում էր, թե հայ օրիորդներն այն չեն, ինչ աշխատում են ձևանալ։

— Մի օր, սիրելի Գևորգ, իմ բարկությունը հասավ իր գագաթնակետին։ Առավոտ էր, ես նստած թեյ էի խմում և մի նոր դուրս եկած հայերեն գիրք թերթում։ Հանկարծ ծառաս ներս մտավ և քաղաքային փոստայով ստացված մի նամակ տվեց ինձ։ Ես կարդացի։ Նամակի մեջ մեկն ինձ խոստովանում էր յուր «սերը»։ Դու, երևի, գիտես, թե ինչպես են գրվում այդ հիմար նամակները, հարկ չկա ուրեմն նրա մասին խոսելու։ Օրիորդի հետ ես նոր էի ծանոթացել, նա վատ չէր, բայց սիրե՞լ — է՛հ, բան չունի՛ս։ Նամակը սկզբում ուզեցի այրել, բայց հետո մտածելով, դրեցի մի կողմ։ Ես թեև խիստ բարկացա, բայց խոստովանում եմ, Գևորգ, որ միևնույն ժամանակ ինչ-որ հաճույք էլ զգացի։ Այսուամենայնիվ, ես բար-

կացա և, որպեսզի մի քիչ թուլացնեմ բարկությունս, մի ծխախոտ վառեցի, որ ծխեմ։ Ահա՛, այսպես։

Արզաս Պետրովիչը ծոցից հանեց տուփը և նրա միջից դուրս բերեց մի ծխախոտ։ Նա ծխախոտի ծայրը նախ մի քանի անգամ խփեց սեղանին և հետո, վառելով, նայեց ժամացույցին։

— Օհո՛, դեռ վաղ է, ժամանակ շատ ունենք, բայց պատմությունս դեռ չեմ սկսել։ Նայի՛ր, Գևորգ, երկնքին, ամպերը կուվում են. եղանակը ցրտանում է։ Գնանք ներս, անձրև կգա։

Արզաս Պետրովիչը մտավ ներս։ Գևորգը հրամայեց ծառային գարեջրի շիշը ներս բերել։

Ծառան շշի հետ կոլորակ սեղանի վրա դրեց և վառած կանթեղը։

Երկու բարեկամները տեղավորվեցին սեղանի շուրջը, միմյանց հանդեպ, փափուկ բազկաթոռի վրա։ Մի քանի վայրկյան նրանք լուռ մնացին։ Ծխախոտի ծուխը, թանձր քուլանելով դուրս գալով նրանց բերանից, բարձրանում էր դեպի սենյակի առաստաղը։ Վերջապես, Արզաս Պետրովիչը ծխախոտը հանեց բերանից, մի քիչ գարեջուր խմեց և շարունակեց.

— Այսպես, Գևորգ, ես բարկացա և դադարեցի այցելել օրիորդին։ Ի՞նչ պատահեց սիրահարված օրիորդին— ես չգիտեմ, բայց համոզված եմ, որ նա ինքն իրան Քուռ գետը չի ձգել իմ պատճառով։ Անցել է ուղիղ մի տարի։ Մի գեղեցիկ օր, աչքիս լույս, իմ աղաս դու ես, բանաստեղծացած Գևորգ Մինասիչ Շանաբանդյան, ես քո համեստ ծառա Արզաս Պետրովիչ Մագուտյանս պատիվ ունեցա կլուբում ծանոթանալ մի հին պաշտոնաթող հայ չինովնիկի հետ։ Դա մոտ վաթսուն տարեկան, ալեխառն մազերով, մի առողջ թիֆլիսեցի էր, անունը Մարտին Բուղդանիչ Բագամով։ Լսում ե՞ս, «ով» և ոչ թե «յան»։ Հակառակ իմ սպասածին, Բագամովը ոչ թուղթ էր խաղում և ոչ Կախեթի գինի խմում, ինչպես առհասարակ անում են թիֆլիսեցի ծերունիները։ Նա միայն սիրում էր լրագիրներ կարդալ և երկար վիճաբանել Բիսմարկի քաղաքականության մասին, որին նա պաշտպանում էր այնպես, ինչպես գուցե կպաշտպաներ միայն իր հարազատ եղբորը, որից զուրկ

էր ինքը։ Բադամովը խոսում էր ռուսերեն և, ինչպես Թիֆլիսեցի, բաղաձայն տառերն արտասանում էր զարմանալի կոշտ։ Ինչևիցե, մենք ծանոթացանք և, մի քանի անգամ խոսելուց հետո, իրարու դուր եկանք։ Նա ինձ հաճելի եղավ իր պարզ, ինքնուրույն հայացքներով և համակրելի ծերուկական դեմքով, իսկ ես նրան — իբրև քիչ թե շատ լուրջ երիտասարդ։ Մի անգամ իրարուց բաժանվելիս ծերունին, հասցեն տալով, հայտնեց, թե շատ ուրախ կլինի ինձ հյուր ընդունելու իր տանը, թեկուզ հենց հետևյալ օրը։ Հետևյալ օրը, իհարկե, չգնացի, գնացի մի շաբաթից հետո, առավոտյան տասներկու ժամին։ Ես ասացի, որ պատիվ ունեցա ծանոթանալ Բադամովի հետ, բայց, իսկապես, պիտի ասեմ, տարաբախտություն ունեցա։ Դա, Գևորգ, մի նշանավոր ծանոթություն էր, որի հետևանքը, ինչպես իսկույն կպատմեմ, եղավ կյանքիս մեջ մի արմատական փոփոխություն։

Ծերունին ինձ ընդունեց մի ուրախ և անկեղծ ժպիտ երեսին։ Նրա բնակարանը բավական ընդարձակ էր և թեև ոչ շքեղ, բայց ճաշակով կահավորված։ Նա ինձ հրավիրեց իր ընդունարանը, և մենք այստեղ տեղավորվեցինք թավշյա բազկաթոռների վրա։ Քառորդ ժամու չափ դեսից-դենից խոսելուց հետո հանկարծ ծերունին ցուցամատը դրեց սեղանի վրա գտնվող զանգակի գլխին։ Զանգակը սև թիթեռնիկի պես հնչեց մի քանի վայրկյան։ Դռները բացվեցին, և ես զարմացա, երբ, ծառայի փոխարեն, ներս մտավ մի օրիորդ թեթև տնային շքյա հագուստով։ Օրիորդը ձախ ձեռքում պահած էր մի գիրք, որի մեջ նա մտցրել էր իր միջին մատը։

— Դո՞ւ ես, Լիզա, ծառան ո՞ւր է,— հարցրեց ծերունին իր մեղմ և հանգիստ ձայնով։

Ըստ երևույթին օրիորդը չէր կարծում, թե անծանոթ հյուր կա նստած։ Ինձ տեսնելով, նա մի քիչ շփոթվեց և կամենում էր հենց շեմքից հետ դառնալ, բայց Մարտին Բուղդանիչի հարցը նրան պահեց։

— Ծառան խոհանոցումն է, ի՞նչ եք կամենում,— պատասխանեց և հարցրեց օրիորդը, մի քանի վայրկյան երեսը դեպի մեզ շուռ տալով։

Այդ մի քանի վայրկյանները բավական էին, որ ես ծանոթանայի Լիզայի կերպարանքի հետ։ Դա, սիրելի Գևորգ, գեղեցիկ չէր, բայց մի սքանչելի արարած էր, և գիտե՞ս ինչով— յուր խոշոր, խելացի աչքերով, որոնց մեջ փայլում էր այն կանացի կախարդական հուրը, որ ընդունակ է միանգամից թափանցել տղամարդի սիրտը։ Նա սքանչելի էր, մի ուրիշ բանով ևս, որ ավելի նշանավոր էր ինձ համար այդ ժամանակ։ Դա նրա բարձր, նուրբ և, ըստ երևույթին, առողջ կազմվածքն էր, որ այդքան հազվագյուտ է մեր կանանց դասում։ Բացի դրանից, ես Լիզայի դեմքի վրա նկատեցի մի տեսակ մեղմ ստվեր, որ, հովանավորելով այդ դեմքը, գրավիչ կենդանություն էր տալիս նրան։ Չգիտեմ ինչու, նույն վայրկյանին ես իսկույն մտաբերեցի Պուշկինի Տատյանային։ Բայց, դո՛ւ, իմ արևը, չկարծես, որ ես ինձ Օնեգին համարեցի։ Ամենևին։

— Հրամայիր սուրճ բերեն շուտով,— պատասխանեց Բադամովը և հետո, երբ Լիզան երեսը շուռ էր տվել հեռանալու, ավելացրեց.

— Դու էլ Ժենյայի հետ այստեղ եկ։

Լիզան դուրս եկավ։ Բադամովն ինձ պատմեց, թե Լիզան և Ժենյան իր աղջկերքն են և բացի նրանցից չունի ուրիշ զավակներ, իսկ կինը տասը տարի է, որ մեռել է։

Մի քանի րոպեից հետո ծառան ներս բերեց արծաթե մատուցարանի վրա չորս բաժակ սուրճ։ Անմիջապես ներս մտան Լիզան և Ժենյան։ Բադամովն անունս հիշեց, և ես վեր թռա ու, մոտենալով, սեղմեցի Լիզայի, հետո Ժենյայի ձեռը։ Ժենյան կամ ճիշտն ասեմ Եվգենյան, կլիներ մոտ քսաներկու տարեկան, իսկ Լիզան—ավելի քան քսանուհինգ։ Բացի միաչափ հասակից, ուրիշ ոչինչ նմանություն չկար երկու քույրերի մեջ։ Եվգենյայի դեմքը կլորակ էր, քիչ սև և մի փոքր դեղնախառն, ճակատը նեղ, աչքերը սև, փոքրիկ ու խորամանկ։ Հենց առաջին հայացքից նա ինձ դուր չեկավ, և ես նրա մթին դեմքի վրա նկատեցի շնչին ինքնասիրություն և գոռոզություն։ Փոքր առ փոքր, սովորական հարցերից հետո, մեր խոսակցությունը տաքացավ։ Մարտին Բուղդանիչը կրկին մեջտեղ բերեց Բիսմարկին և նրա՝ սոցիալականության դեմ խոսած՝ վերջին ճառը։ Ես լսում էի նրա գովասանությունը և չէի

վիճաբանում, թեև նա շատ էր հափշտակվում։ Եվգենյան խոսում էր և տաքացած վիճաբանում։ Նա երբեմն, տեղի-անտեղի, զանազան լուրջ հեղինակների անուններ էր հիշում, իբրև թե յուր հոր ասածը հերքելու համար։ Բայց ես, չգիտեմ ինչու, զգում էի, որ նա այդ հեղինակներից ոչ մեկի հետ լավ ծանոթ չէ և նրանց անունը տալիս է լոկ էֆեկտի համար։ Լիզան լուռ էր և լսում էր։ Հոր հայացքներից ազատ վայրկյաններ որսալով, ես մերթ ընդ մերթ նայում էի այն օրիորդի երեսին և նկատում էի, որ նա նույնպես աչքի տակով երբեմն ինձ է նայում։ Այդ ժամանակ ես զգում էի մի տեսակ հոգեկան հաճույք, որի հետ մինչև այն ժամանակ ծանոթ չէի։ Է՛հ, Գևորգ։

Արզաս Պետրովիչը գարեջրի շիշը վերցրեց, պահեց կանթեղի դեմ և շարժելով, ասաց.

— Փիե՛, ո՞վ ծակեց այս շշի տակը։ Հրամայիր, Գևորգ, որ այդպիսի անկարգություններ չլինեն իմ ներկայությամբ։

Գևորգը հրամայեց, և ծառան ներս բերեց մի նոր լիքը շիշ։

— Իմ կենացը, Գևորգ, կոնծի՛ր,— ասաց Արզաս Պետրովիչը, բաժակը միանգամից պարպելով։— Չի՞ ձանձրացնում քեզ իմ պատմությունը։

— Խոստովանում եմ, մեծ ախորժակով եմ լսում. Լիզան ինձ հետաքրքրում է,— պատասխանեց Գևորգը։

— Հասկանում եմ, հասկանում եմ։ Հա՛, արդեն անցել էր երկու ժամ։ Ես ողջունեցի Բաղամովներին և դուրս եկա։ Վերջին անգամ նայեցի Լիզայի երեսին և նրա խոշոր, պարզագույն աչքերն ինձ վրա հառած տեսա։ Նույն օրն ես գործ շատ ունեի, վերջացրի և ճաշից հետո, իրիկնադեմին քիչ հանդըստացա ու դուրս եկա զբոսնելու։ Ամառ էր, փողոցի օդը թարմացրեց ինձ, և ես, սովորությանս համեմատ, սկսեցի այն օրվա տպավորություններս քննել։ Երևակայիր, Գևորգ, որքան գլխիս զոռ տվեցի Բաղամովի ընտանիքի մասին հիշել մի առ մի այն, ինչ որ նկատելի էր այդ օրը — ոչինչ չկարողացա մտաբերել, բացի մի բանից։ Դա Լիզայի խոհուն աչքերն էին, որ բարձր ճակատի և կակուղ ունքերի տակից նայում էին ինձ վրա։ Ինչո՞ւ, մի՞թե ուրիշ ոչինչ հետաքրքիր բան

չկար այդ ընտանիքում, որ ինձ վրա ազդեր, բացի այդ երկու աչքերից։ Կար, թե չկար, բայց ես ուրիշ ոչինչ չկարողացա հիշել։

Մի օր, սովորությանս հակառակ, փոխանակ շուտով տուն վերադառնալու, գնացի այգի։ Լուսինը նոր-նոր բարձրանում էր, խտատերև ծառերի միջից տարածելով իր շողերն այգու մութ ճեմելիքների վրա։ Տեսնո՞ւմ ես, ինչպես բանաստեղծորեն գիտեմ բարբառել, Գևորգ, էլ չասես, թե միայն քեզ է տված։ Նստեցի կանաչ նստարաններից մեկի վրա և սկսեցի նայել դեսուդեն — ծառերին, երկնքին, լուսնին, ամենից շատ լուսնին։ Կյանքումս գուցե հազարավոր այդպիսի գեղեցիկ երեկոներ էի տեսել, բայց երբեք այնքան չէի հետաքրքրվել բնության գեղեցկություններով, որքան այդ երեկո առաջին անգամ։ Ես սիրում էի հրաշալի, մեղմ, լուսին գիշերներ, բայց նրանց ազդեցության ենթարկված չկայի այնչափ, որչափ այժմ։ Մի տեսակ ծանր, սակայն խիստ ախորժելի մելամաղձություն էր տիրել ինձ։ Ինչո՞ւ, մի՞թե պատճառը Լիզայի աչքերն էին, որ ծառերի ճյուղերի արանքով նայում էին ինձ վրա։ «Սատանան տանի ձեզ»,— ասացի ինքս ինձ և, կարծես քնից զարթնելով, բարձրացա նստարանից։ Այդ ժամանակ ես սովորություն չունեի երեկոները ընթրելու, վերադարձա տուն, որ պարապեմ։ Չկարողացա պարապել, Գևորգ, ինչ ուզում ես ասիր, չկարողացա, թեև երկու ժամի չափ աշխատեցի։ Պառկեցի քնելու, քունս չտարավ, և ես տրորվում էի անկողնումս փորացավ ընկածի պես։ Տեսնելով, որ գիշերն անցնում է, սկսեցի թվել մտքումս մեկից մինչև հազար և հետ։ Այսպիսով, մոռացության մեջ ընկա, և քունը, վերջապես, ինձ հաղթեց։

Առավոտը զարթնեցի զվարթ և առ... ռ... փի... քրհը, քրհը, փիե։

Արզաս Պետրովիչը չկարողացավ շարունակել, գարեջուրը թռավ կատկին և ստիպեց նրան մի քանի վայրկյան հազել և կմկմալ։ Վերջապես, նա քիչ հանդարտվեց և թաշկինակը հանելով, սրբեց աչքերի ջուրը։

— Ճանճ մտավ բողազս ի՞նչ է,— շարունակեց նա, թաշկինակը դնելով գրպանը։— Այո, Գևորգ, առավոտը զարթնեցի

զվարթ և առողջ, ամեն ինչ մոռացած։ Այն օրն ես անցկացրի հոգու ուրախ տրամադրության մեջ։ Մի քանի հիվանդներ ունեի, այցելեցի նրանց և սովորականից մի քանի բոպեներ ավելի մնացի ամեն մեկի մոտ։ Մի խոսքով, ես մի առանձին կենդանություն էի ստացել այդ օրը։ Բայց մթնելուն պես մելամաղձությունը տիրեց ինձ։ Լիզայի աչքերը դարձյալ եկան ներկայացան իմ առջև։ Մի կերպ անցկացրի այդ գիշերը։ Հետևյալ օրը կիրակի էր։ Ես մոռացա քեզ ասելու, որ այդ օրվա համար Մարտին Բուղդանիչն ինձ հրավիրել էր ճաշի։ Առավոտը թեյ խմելիս, ես մտածում էի, «գնա՞լ, թե՞ չգնալ»։ Վճռեցի չգնալ։ «Ի՞նչ մի հետաքրքրելի բան է ներկայացնում մի հին չինովնիկի ընտանիքը», ասացի և վճռեցի կամ նամակ գրել կամ ծառային ուղարկել՝ Բաղամովից ներողություն խնդրելու։ Բայց ի՞նչ ես կարծում, Գևորգ, ես ոչ մեկն արեցի, ոչ էլ մյուսը, այլ... գնացի սափրավիրի մոտ, մազերս ուղղել տվեցի, եկա տուն, զուգվեցի և հրավիրված ժամանակից էլ կես ժամով առաջ գնացի Բաղամովի տուն։

Գևորգը ժպտաց։

— Ի՞նչ է, երևի մի փոքր նման է քո ռոմանին.— նկատեց Արզաս Պետրովիչը,— ծիծաղիր, ծիծաղիր, բայց տես, թե վերջն ինչ եղավ։

— Էհ, ինչ երկարացնեմ, Գևորգ, մենք նստեցինք ճաշելու,— շարունակեց Արզաս Պետրովիչը, մի ծխախոտ վառելով։— Չգիտեմ ինչու, այս անգամ Լիզան ավելի ուրախ էր և շատ էր խոսում, քան առաջին օրը։ Մենք խոսում էինք դեսից դենից, շատ հասարակ բաների մասին, բայց Լիզան այնպես տաքացած վիճաբանում էր, որ ես փոքր-ինչ զարմացա։ Կրտսեր քույրը մի տեսակ կծու եղանակով նկատեց.

— Օրը մինչև երեկո, աչքունդ թթվացրած, գրքեր ես կարդում, ոչ խոսում ես, ոչ էլ ծիծաղում, հիմա ի՞նչ եղավ, որ սոխակ դառար։

Լիզան պատասխանելու փոխարեն, փոքր-ինչ կարմրեց։

Ես հարցրի, ինչ գրքեր է կարդում նա։

— Ինչ որ ասեք,— պատասխանեց Մարտին Բուղդանիչն իր աղջկա փոխարեն։

— Պապա, մի՞թե դուք կարծում եք, որ բոլոր ձեր բերած գրքերը կարդում է Լիզան,— կրկին մեջ մտավ Եվգենյան, հեգնորեն ժպտալով։— Ռոմանների մասին խոսք չունիմ, Լիզան նրանց կլանում է, մյուս գրքերը միայն թերթում է, որ ասի, թե հա՛, ինքն էլ այս ինչ լուրջ գրքերի հետ ծանոթ է։

Մարդս, շատ ժամանակ, Գևորգ, իր սեփական պակասություններն անգիտակցաբար ուրիշների մեջ է գտնում։ Վերջերում ես իմացա, թե Եվգենյան սուտ է ասում, թե Լիզան, բացի ռոմաններից, ուրիշ լուրջ հեղինակություններ ևս կարդացել է։ Իր քրոջ նկատողության՝ նա ոչինչ չպատասխանեց։ Ճաշից հետո մենք անցանք դահլիճ՝ քիչ զվարճանալու։ Մարտին Բուղդանիչն առաջարկեց Եվգենյային մի բան նվագել։ Օրիորդը հրաժարվեց, պատճառ բերելով, թե գլուխը ցավում է (կանանց գլխացավին, Գևորգ, շատ էլ հավատ չընծայես)։ Հայրն առաջարկեց մեծ աղջկան, և Լիզան, առանց հակառակելու, նստեց դաշնամուրի մոտ։ Ես այդ ժամանակ, և հենց հիմա էլ, երաժշտություն չգիտեի, բայց լսել շատ էի սիրում։ Երբ Լիզան, իր երկայն ու նուրբ մատներով մի քանի անգամ զարնելով դաշնամուրի կլավիշներին, անցավ առաջին ակորդը— դահլիճի մեջ տարածվեցին մեղմ և քաղցր հնչյուններ։ Դա Շոպենի այն մելամաղձոտ հյուսվածքներից մեկն էր, որոնք շարժում են մարդկային սրտի հիվանդ թելերը։ Դահլիճի լուսամուտները բաց էին։ Ամառային մանիշակագույն երկնքի երեսում այս ու այն կողմ սահում էին թեթևաշարժ ամպերը։ Ես, դաշնամուրի քաղցր ձայնով հափշտակված, նայում էի երկնքին։ Ինձ թվում էր, թե այդ հնչյուններն արձակում են հեռու բարձրությունում լողացող սպիտակ ամպերը, և ես հոգով ձգտում էի դեպի վեր, բայց չէի կարողանում հասնել։ Չգիտեմ որքան ժամանակ մնացի այդ կախարդված դրության մեջ, միայն, երբ աչքերս դարձրի դեպի դահլիճ— Լիզան արդեն չկար։ Մարտին Բուղդանիչը ճերմակ բեղերի տակից դուրս էր թողնում ծխախոտի կապույտ ծուխը։ Եվգենյան, նրա մոտ նստած, նայում էր երեսիս։

— Ո՞ւր գնաց Ելիզավետա Մարտինովնան,— հարցրի ես, մի փոքր շփոթվելով Եվգենյայի սուր հայացքից։

— Դուրս եկավ,— պատասխանեց Մարտին Բուղդանիչը, երեսիս նայելով։

Եվգենյան գնաց դուրս և, մի քանի վայրկյանից հետո

վերադառնալով, հայտնեց, թե Լիզայի գլուխը ցավում է։ Այս ասելով, Եվգենյան իր սուր և խորամանկ հայացքը ձգեց ինձ վրա, և ես նրա դեմքի վրա նկատեցի մի կծու հանդիմանություն։ Ինչո՞ւ, ես ի՞նչ էի արել։ Բայց հետո իմացա, որ շատ բան եմ արել։ Արդեն երեկո էր, երբ ես դուրս եկա։ Լիզան չդուրս եկավ ինձ հրաժարական տալու, և ես հեռացա ինչ-որ ծանրություն ոչ կծքիս վրա, այլ կրծքիս տակ։ Է՛հ, Գևորգ, ես չեմ պատմիլ, թե դա ինչ ծանրություն էր, դու այժմ ինձանից լավ ես զգում։ Բայց դու չձանձրացա՞ր։

— Ամենևին,— պատասխանեց Գևորգը, մի ծխախոտ վառելով,— կարող ես մինչև լույս խոսել։

— Դեռ իմ պատմության սկիզբն է դա, լսիր մինչև վերջը, մոտենում եմ նրա ծուծին։

Հետևյալ օրը չհամբերեցի և կեսօրից հետո, գործերս ավարտելով, գնացի Բաղամովի տուն։ Դա իմ կողմից մեծ համարձակություն էր, սակայն ես չմտածեցի և գնացի։ Որքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ Լիզային հանդիպեցի դահլիճում, դաշնամուրի դեմ նստած, նոտաների տետրը դեսուդեն թերթելիս։ Մարտին Բուղդանիչն այս անգամ ինձ ընդունեց ավելի քաղաքավարի, բայց ես նրա դեմքի վրա նկատեցի մի տեսակ ճնշում։ Իսկ Եվգենյան սառնությամբ ձեռը մեկնեց ինձ և դուրս եկավ։

— Ներեցեք, որ ես երեկ անքաղաքավարությամբ ձեզ թողեցի դահլիճում և հանկարծ դուրս եկա,— դիմեց ինձ Լիզան, տեղից բարձրանալով։

— Անքաղաքավարությունն իմ կողմից էր, օրիորդ,— պատասխանեցի ես, համարձակորեն նայելով Լիզայի երեսին։

— Ինչո՞ւ։

— Դուք հիվանդացաք, իսկ ես իբրև բժիշկ, չառաջարկեցի իմ ծառայությունը։

— Շատ էլ սաստիկ չէր ցավում գլուխս, որ բժշկի դիմելու կարևորություն զգայի,— պատասխանեց Լիզան և հետո, դառնալով Հորը, հարցրեց.— պապա, կկամենա՞ք, որ ձեր սիրած եղանակներից մինը ածեմ։

— Միայն երեկվա պես կիսատ չթողնես ու փախչես։— պատասխանեց Մարտին Բուղդանիչը լրջորեն։

Լիզան նստեց դաշնամուրի դեմ և, ճակատից մազերը հետ դարսելով, սկսեց մի ուրախ եղանակ։ Բայց ուրախ եղանակն այս անգամ ինձ վրա տխուր տպավորություն գործեց։ Ես նայում էի Լիզայի արագաշարժ մատներին, որոնք թեթեւությամբ բարձրանալով վեր և կրկին իջնելով, դուրս էին մղում դաշնամուրից քնքուշ հնչյուններ։ Ես զգում էի, թե Լիզայի մատները իմ սրտին են դիպչում, և այդ հնչյուններն արձակում է իմ սիրտը։ Չէ՛, Գևորգ, աննկարագրելի են այդ րոպեները։ Ես մտիկ էի անում Լիզայի մատներին, մտիկ էի անում նրա կոներին, իրանին, գլխին, պարանոցին, ուսերի վրա թափված շագանակագույն մազերին, և դրանք ինձ մագնիսի զորությամբ մղում էին դեպի այդ էակը։ Ոչ մի բան նույն րոպեներում ինձ համար գոյություն չուներ, ոչ մի բան— բացի Լիզայից։ Նույնիսկ դաշնամուրի ձայնն ես Լիզայի մեջ էի տեսնում մարմնացած, և ես վայրկյան առ վայրկյան հաղթվում էի Լիզայի առջև։ Վերջապես, նա դադարեցրեց և, դաշնամուրի կափարիչը հետ ձգելով հարցրեց ինձ, արդյոք հավանեցի նրա խաղը։ Գուցե Լիզան լավ չէր ածում դաշնամուրի վրա, միայն ես հիացած էի և նույն րոպեին չըկարողացա գտնել խոսքեր, որոնցով արտահայտեի իմ հիացումը։ Նա նայեց իմ դեմքին և իսկույն հասկացավ, թե որքան ազդել է յուր խաղն ինձ վրա։

Երկու ժամի չափ մնացի Բաղամովի տանն և շատ ուրախացա, որ Մարտին Բուղդանիչն ինձ այս անգամ ազատ թողեց քաղաքական հարցերից։ Զարմանալի բան. մի քանի օր առաջ ինքս գուցե մեծ բավականությամբ պատրաստ էի վիճել նրա հետ այդ հարցերի վերաբերմամբ։ Իսկ նույն օրը, եթե նա սկսեր վիճել, համոզված եմ, որ առանց այլևայլի կհամաձայնվեի նրա մտքերի հետ, միայն թե նա դադարեր լուրջ վիճաբանություն անելուց։ Այս անգամ վերադարձա տուն բոլորովին հաղթված։

Անցավ մի ամիս։ Ես ստեպ-ստեպ այցելում էի Բաղամովներին։ Ես գնում էի երեք օրը մի անգամ, եթե չամաչեի, Գևորգ, կգնայի ամեն օր։ Բնական է, որ այդպիսի հաճախ այցելության պատճառը վաղ թե ուշ պիտի հայտնվեր Մարտին Բուղդանիչին, և հայտնվեց էլ։ Բայց նրանից առաջ իմա-

ցավ Եվգենյան։ Այդ խորամանկ օձն իր սուր հայացքներով և հեգնական ժպիտներով կատարելապես հալածում էր ինձ։ Ինչ վերաբերում է Լիզային — դու պիտի հասկացած լինես, Գևորգ, որ նա հենց առաջին օրից էր նկատել իմ զգացումները։ Այդ կողմից և միայն այդ կողմից կինն ունի դիտողություն, և զարմանալի ճիշտ դիտողություն։ Նա շատ անգամ հենց առաջին հայացքից կարող է նկատել, թե ինչ է զգում տղամարդը դեպի ինքը։ Երբ մարդու ուղեղը, ուշ ու միտքը կենտրոնացած են լինում մի բանի վրա, մանավանդ, երբ նա այդ բանումն է տեսնում իր գոյության խնդիրը, ոչ մի հոգեբան չի կարող այստեղ նրա հետ հավասարվել։ Դա իմ խորին համոզմունքս է, և հավատի եմ, որ չեմ սխալվում։ Դու ժպտում ես, Գևորգ, դու ծիծաղում ես, որ ես այդպես շուտ եզրակացություններ եմ անում, բայց համբերիր, և ինքդ սեփական փորձերով կգաս նույն եզրակացության։ Ինչևիցե։ Որտեղ մնացի՞, հա՛, ես գիտեի, որ Լիզան գուշակում է իմ զգացումները։ Բայց ինչ է զգում ինքը, Լիզան դեպի ինձ— դա ինձ համար առաջին ամիսը թեև պարզ էր, այնուամենայնիվ, ես չէի համարձակվում հավատալ, թե հիրավի նա անտարբեր չէ դեպի ինձ։ Ես կասկածում էի. մի՞գուցե ինձ պարեցնում է, մի՞գուցե կամենում է հաղթել ինձ, դուրս մղել ինձանից խոստովանություն և հետո, մերժելով, զվարճանալ իր կանացի հերոսական հաղթությունով։ Բայց այն ժամանակ ես դեռ հավատ ունեի դեպի կնոջ անկեղծությունը։

— Իսկ ա՞յժմ,— ընդհատեց հանկարծ Գևորգը։

— Մեռել է և երբեք հարություն չի առնիլ,— պատասխանեց Արզաս Պետրովիչը։— Այսպես ,Գևորգ, ես հավատում էի կնոջ անկեղծությանը և հավաստի էի, որ Լիզան թեթևամիտ կոկետուհիներից չէ, որ ուզենա ինձ խաղալիք դարձնել իր ձեռքում։ Ինչպես ասացի, մի ամիս էր արդեն, որ ես այցելում էի Բաղամովներին։ Այդ մի ամսվա ընթացքում ես բավական մոտիկ ծանոթացա այդ ընտանիքի պատմությանը։ Ահա նա՛։— Մարտին Բուղդանիչի հայրը թողել էր ժառանգություն մի տուն և մի թեթև զուտ գումար։ Ապրելով բավական համեստ, Մարտին Բուղդանիչն այդ գումարի վրա տարեցտարի ավելացրել էր և յուր ոռճիկի մի մասը։ Քսանուհինգ

տարվա ընթացքում, թեթև գումարը, շահվելով, դարձել էր մի պատկառելի թվանշան։ Թե ինչպես էր աշխատել նրա հայրն այդ գումարը և տունը— ես չիմացա, բայց իմացա, որ Մարտին Բուղդանիչն ինքը ծառայության ժամանակ իր պաշտոնը վարել էր բարեխղճաբար (ուզում եմ ասել, կաշառք չէր կերել)։ Նա պաշտոնը թողել էր ինքնակամ, անմիջապես կնոջ մահից հետո։ Մարտին Բուղդանիչը, այդ շլուսավորված հոր լուսավորված զավակը, իր աղջկերանց կրթության համար ոչինչ չէր խնայել։ Նրանք անցել էին գիմնազիական կրթությունն և տնային ուսուցիչների միջոցով սովորել էին երաժշտություն, պար և ֆրանսերեն, մի խոսքով, ինչ որ հարկավոր է ժամանակակից օրիորդներին։ Կնոջ մահից հետո Մարտին Բուղդանիչը յուր փողը վաղօրոք բաժանել էր աղջկերանց իբրև ապագա ամուսնական օժիտ։ Իսկ տունը թողել էր, որ, ինչպես ինքն ասում էր, մեռնելու ժամանակ կնոջ և յուր հիշատակին նվիրի մի բարեգործական նպատակով։ Երբ այս բոլոր մանրամասնություններն իմացա պարզասիրտ Մարտին Բուղդանիչից, զգացի այնուհետև ինձ նրա ընտանիքին ամենամոտ անձ։ Կարծես, կար մի աներևույթ կապ իմ և նրա մեջ։ Ի սեր աստծո, Գևորգ, չկարծես, թե ես բոպե անգամ մտածում եմ օժիտի մասին։ Կրկնում եմ, այն ժամանակ ուրիշ մարդ էի, իսկ այժմ ուրիշ մարդ եմ։ Այն ժամանակ մի փոքր պակաս էր այստեղ, իսկ այստեղ շատ վառ (Արզաս Պետրովիչը ձեռը խփեց նախ ճակատին, հետո ձախ կողքին)։ Ինչևիցե, ես չափազանց ընտելացա Բաղամովի ընտանիքին։ Իսկ թե Եվգենյան ինձ ատում էր— դա ինձ համար այս կանթեղի նման պարզ էր։ Այս հանգամանքն ինձ մի փոքր նեղն էր դնում, որովհետև, ինչևիցե, այդ աղջիկը, եթե կամենար, կարող էր խոշընդոտ լինել, բայց մյուս կողմից Լիզայի և Մարտին Բուղդանիչի համակրությունն ինձ խրախուսում էր։ Անտանելի օրեր էին ինձ համար այդ օրերը, Գևորգ։ Ես ինձ կորցրել էի, ոչ մի միտք գլխումս եփել չէի կարողանում։ Գնում էի ծառայության, պաշտոնիս փոխարեն Լիզան էր կանգնած իմ առջև, գնում էի հիվանդի մոտ, հիվանդի փոխարեն Լիզային էի տեսնում իմ դեմ։ Գլխավորիցս մի քանի անգամ հանդիմանություն ստացա, հիվանդներիցս

մի քանիսի տերերն ինձ քաղաքավարությամբ մերժեցին։ Իսկ հասարակական գործերը տակահան մոռացել էի։ Ընկերներս ինձ ծաղրում էին, թե ինչպես առաջ տաք-տաք կպա գործին և ինչպես շուտ սառա։ «Որովհետև բոլոր քո եռանդը կեղծ էր»,— ասում էին նրանք։ Բայց ես ուշադրություն չէի դարձնում ոչ ոքի խոսքի վրա և շարունակում էի օրեցօր ավելի ու ավելի թուլանալ։

Մի գիշեր, վերջապես խելքս գլուխս ժողովեցի և սկսեցի լուրջ քննել իմ դրությունը։ Շատ անմխիթար գտա նրան, Գևորգ, և տեսա, որ եթե այդպես երկար շարունակվի, ես միանգամայն կդառնամ մի անպետք լաթ։ Վռճեցի այլևս շայցելել Բաղամովներին և դուրս բերել գլխիցս ու սրտիցս Լիզա ասված էակին։ Եվ ի՞նչ ես կարծում, Գևորգ, միայն տասն օր կարողացա չտեսնել Լիզայի երեսը։ Թե որքան թանկ նստեց ինձ այդ տասն օրը, ես հրաժարվում եմ պատմել, որովհետև շատ կերկարի պատմությունս։ Ծանր և վշտալի օրեր էին ինձ համար այդ օրերը։ Բայց մի բան պիտի ավելացնեմ Գևորգ. թեև վեպերում ես շատ էի կարդացել, թե այդպիսի դրության մեջ սիրահարվածի ախորժակն ու քունը փախչում են, իմ ախորժակը երբեք չէր կապվում, ես ուտում էի առաջվա պես և քնում էլ էի։ Միայն գործել չէի կարող, ոտանավորներ էի գրում. «իմ սիրելի»— ֆլան-ֆստան։ Գիտես էլի... Տասնումեկերորդ օրն էլ չկարողացա համբերել։ «Ինչ որ լինելու է, թող լինի», —ասացի ինքս ինձ,— կգնամ և բացարձակապես կպարզեմ իմ սիրտը Լիզայի առջև, կընդունի — լավ, չի ընդունիլ— այսուհետև հողը գլուխս, մի կերպ կտանեմ ցավս»։

Այս ասացի, ցիլինդրս դրեցի գլխիս և գնացի։

Արզաս Պետրովիչը մի փոքր լռեց, դարձյալ մի քիչ գարեջուր խմեց և, մի ծխախոտ վառելով, շարունակեց.

— Իրիկնադեմ էր։ Մարտին Բուդդանիչը տանը չէր բարեբախտաբար։ Եվգենյան մրափում էր։ Լիզան, պատշգամքի վ ա նստած, նայում էր քաղաքի շրջակայքի սարերին։ Ինձ տեսավ թե չէ, իսկույն վեր թռավ տեղից և ձեռը մեկնեց։ Ես նրա դեմքի վրա նկատեցի անսպասելի ուրախության մի արտահայտություն, որ նա իզուր աշխատում էր թաքցնել։ Մի

քանի վայրկյան մենք չկարողացանք խոսել։ Ես սեղմեցի նրա ձեռը և նստեցի դեմուդեմ։

— Որտե՞ղ եք մնացել,— հարցրեց, վերջապես, Լիզան։

— Սաստիկ զբաղված էի գործերով,— սուտ ասացի ես։

— Իսկ մենք կարծում էինք, որ հիվանդացել եք։

— Մի՞թե։

— Քանի անգամ ծառային ուղարկել ենք, բայց ձեր բնակարանը չի գտել։

— Շնորհակալ եմ ձեր հոգացողության համար։

— Հայրս է ձեր մասին շատ հարցնում,— շտապեց ավելացնել Լիզան։

— Շնորհակալ եմ, ի՞նչպես է Մարտին Բուդդանիչը։

— Լավ է։ Երեկ այգումը երկու ժամու չափ ես և ժենյան պտրեցինք ձեզ և ոչ մի տեղ չտեսանք։

Այս անգամ չկարողացա ինչպես հայտնեմ իմ շնորհակալությունը։ Մի քանի անգամ «շնորհակալ եմ» բառը իրարու հետևից կրկնելը ինձ անհամ էր թվում։

— Դո՞ւք ինչպես եք,— վերջապես, հարցրի ես, հանկարծ մտաբերելով իմ սխալը։

— Շատ տխուր, մի շաբաթ է չգիտեմ ինչ է պատահել ինձ, գիշերները չեմ կարողանում քնել։

Այս ասելով, Լիզան գլուխը թեքեց կրծքին և մատներով սկսեց ուղղել հանդերձի փեշերը։ Նայեցի վերևից ցած նրա երեսին և նկատեցի ոչ թե անքնության, այլ մի ինչ-որ ծանր մտածողությունից առաջացած փոփոխություն։ Ոչ նրա աչքերի կոպերն էին ուռած և ոչ էլ նրանց սպիտակուցն էր դեղնած։ Անքնության այս հետքերը չկային Լիզայի դեմքի վրա, կար միայն մի թեթև դեղնություն։ «Հը՛մ, իմ բացակայությունը իզուր չի՛ անցել»,— մտածեցի ես, ուրախանալով։

— Գուցե հիվա՞նդ եք, թույլ տվեք շոշափել ձեր երակը,— ասացի ես։

Լիզան զգուշությամբ մեկնեց ինձ յուր բազուկը։ Ես անհապաղ ոչ թե բռնեցի, այլ խելագարի պես ճանկեցի այդ բազուկը։ Մի վայրկյանում նա դողաց իմ ձեռի ափում, և Լիզան դուրս խլեց նրան արագությամբ։

— Թողեք, ես առողջ եմ,— ասաց նա կարմրելով և երեսը ինձանից շուռ տալով։

Ես զգացի մի ինչ-որ ցնցում, ամբողջ մարմնովս անցավ հաճելի դողոց։ Ես շփոթվեցի և կամենում էի բերանս բանալ չգիտեմ ինչ ասելու։ Բայց այդ վայրկյանին ներս մտավ Մարտին Բուղդանիչը։ Լիզան շփոթվեց և վեր կացավ տեղից։

— Օ՜օ, Առզաս Պետրովիչ, Առզաս Պետրովիչ,— դիմեց ինձ Մարտին Բուղդանիչը, չգիտեմ ինչու, այս անգամ անունս սովորականից ավելի կոշտ արտասանելով։ Նա մոտեցավ և ձեռքս սեղմեց։

— Բարով, բարով, քանի՞ ամառ է, քամի՞ ձմեռ է, որ մեզ մոռացել եք,— շարունակեց նա անխնա քերելով յուր կոկորդը СКОЛЬКО բառը ասելիս, որ չորս անգամ դուրս բերի Х տառը։

Մենք գնացինք ներս։ Ներկայացավ և զուգված, զարդարված Եվգենյան՝ անփոփոխ հեգնական ժպիտը յուր խորամանկ երեսին։ Մենք սկսեցինք խոսել Մարտին Բուղդանիչի սիրեցյալ քաղաքական հարցերի մասին։ Բայց, զարմանալի բան, որքան աշխատում էի, այս անգամ ծերունին բանը չէր երկարացնում։ Իսկ Եվգենյան երեսիս անգամ չէր նայում։ Լիզան աչքերի տակով նայում էր ինձ ու ժպտում, երբեմն էլ ծածուկ ծիծաղում։ Երբ նա ժպտում էր, ես ևս ժպտում էի, իսկ երբ ծիծաղում էր, չէի համարձակվում ծիծաղել։ Նա մերթ ընդ մերթ նայում էր յուր քրոջ և հոր երեսին և հետո ինձ վրա ձգում թափանցող հայացքներ։ Պարզ էր, որ նա կամենում էր իմանալ, ինչ տպավորություն է անում ինձ վրա հոր և քրոջ այն օրվա սառնությունը և միևնույն ժամանակ, կարծես, նրանց փոխարեն ամաչում էր ինքը։ Տեսնելով, որ բանս մի քիչ լավ չէ, ես շտապեցի դուրս գնալ։ Եվ դուրս եկա թեթևացած։ Լիզայի սերը այս անգամ ինձ համար անկասկածելի էր։ Փա՜հ, ի՜նչ շուտ է չորանում կոկորդս։

Արզաս Պետրովիչը գարեջրից մի փոքր կում արեց։

— Այսպես, Գեորգ,— շարունակեց նա, բերանը սրբելով,— ինձ հոմար մասամբ պարզվեց Լիզան։ Մնում էր միայն մի բան, դա էլ շուտով կատարվեց։ Մյուս օրն երեկոյան ես գնացի կլուբ։ Ընտանեկան երեկո էր։ Ես ի բնե չէի սիրում

պարել, այս պատճառով, մի անկյուն քաշված, ականջ էի դրնում երաժշտության։ Հանկարծ հետ նայեցի և տեսնեմ— Լիզան, հովհարը ձեռին, կանգնած։

— Հայրս ընթերցարանում կարդում է, Ժենյան էլ պարում է, ես մենակ եմ,— ասաց նա։

Հայտնի բան է, ես իսկույն ուրախությամբ ընկերացա Լիզային։ Երաժշտական խումբը նվագում էր։ Լիզայի առաջարկությամբ մենք գնացինք այգի զբոսնելու։ Այստեղ ոչ ոք չկար. ամենքը ռոտոնդայում ժողովված, մտիկ էին անում պարողներին։ Խաղաղ և զով երեկո էր։ Մի քանի շրջաններ անելուց հետո, չգիտեմ ինչպես, հանկարծ ինձ Լիզայի հետ տեսա մի մութ ծառուղիում, ուր ոչ ոք չէր երևում։ Մենք նստեցինք կանաչ նստարաններից մեկի վրա, իրարու քով։ Նա լուռ էր, ես էլ լուռ էի։ Նա ասում էր, թե երաժշտություն է լսում, ես հավատացնում էի, թե հափշտակված եմ գեղեցիկ երկնքով։ (Ո՛վ գիտե, այն րոպեին գուցե երկինքը իսկի գեղեցիկ էլ չէր)։ Երկուսս էլ իրարու խաբում էինք, և երկուսս էլ գիտեինք, որ սուտ ենք ասում։ Իմ միտքը զբաղված էր նրանով, նրա միտքը զբաղված էր ինձանով։ Ուրիշ ոչինչ. ո՛չ երաժշտություն և ոչ էլ երկինք։ Ավելի հարմար ժամանակ չէի կարող գտնել իմ սիրտը պարզելու համար (թեև տեղը այնչան էլ հարմար չէր)։ Ես շտապեցի օգտվել դեպքից։ Եվ գիտես ինչպես, ո՛չ խոսակցություն, ո՛չ բանաստեղծական ճարտարաբանություն, ոչինչ։ Ահա ինչպես։— Լիզայի ձեռքում կար մի վարդ։ Եվ ես խնդրեցի այդ վարդը նրանից։ Նա առաջարկեց ինձ և կրկին հետ քաշեց իր ձեռը։ Ես բռնեցի նրա ձեռից, որ ուժով խլեմ վարդը։ Նա ընդդիմացավ, բայց վարդը մոտեցրեց քթիս, որ ես հոտ առնեմ։ Ես բռնեցի նրա բազկից և, մի տաք համբույր կպցրի նրա մատներին։ Նա ձեռը արագությամբ հետ խլեց։ Ես աջ ձեռքով գրկելով նրա մեջքը, այս անգամ համբուրեցի երեսը։ «Ի՞նչ եք անում, խելագարվել եք, ի՜նչ է»,— ասաց նա, իբրև թե աշխատելով ձեռքիցս դուրս պրծնել, մինչդեռ ինքը մոտենում էր ինձ։ Ես ուզեցի խոսքերով արտահայտել իմ զգացումը։ Լիզան ձեռը դրեց բերանիս, որ լռեմ։ «Սո՛ւս,— ասաց նա,— գիտեմ ինչ ես ուզում ասել, գուցե ռոմանների մեջ հազար անգամ գրված միատեսակ բա-

ռեր»։ Ես լռեցի և սկսեցի իրարու հետևից Համբույրներ դրրոշմել նրա ձեռներին, թշերին, վզին, գլխին և մինչև անգամ հագուստին։ Այս բոլորը կատարվում էր լուռ։ Նա քիչ դողում էր, իսկ իմ շրթունքները ցուրտ կտրածի պես կպչում էին ատամներիս։ Գրազ կգամ, որ նույն ժամին իմ դիմքը շատ հիմար պիտի լիներ։ Անցել էր մի ժամու չափ, մենք ուրախությամբ այդ դրության մեջ կմնայինք մինչև լույս։ Բայց այդ չէր կարելի, և Լիզան առաջինը հիշեցրեց, թե հարկավոր է գնալ, եթե ոչ՝ հայրը կկասկածի։ Ես հարցրի, ե՞րբ կարող ենք տեսնվել։ Պատասխան ստացա, թե կարող եմ ամեն օր այցելել իրանց տունը։

— Միայն առավոտները ժամը տասնումեկից հետո,— ասաց Լիզան,— այդ ժամանակ հայրս կլուր լրագիրներ կարդալու է գնում մինչև երկու ժամ։

— Իսկ Եվգենյա Մարտինովնա՞ն,— հարցրի ես։

— Հեշտ է, նրա գաղտնիքն էլ իմ ձեռքում է,— պատասխանեց Լիզան, ծիծաղելով, և մենք բաժանվեցինք։

Արդարև, Եվգենյան մի հիմար ռոման ուներ մի ինչ-որ լպստված ֆրանտի հետ, որին ես մինչև այդ ժամանակ մի անգամ տեսել էի Բաղամովի տանը։

Հետևյալ օրը, նշանակյալ ժամին, ես Լիզայի մոտն էի։

Մարտին Բուղդանիչը իսկապես տանը չէր։ Եվգենյան տանն էր, ինչպես հետո Լիզան ասաց, բայց իմ ներկայությամբ չերևաց։ Լիզան նստած էր դահլիճում, մի հայերեն գիրք ձեռքում բռնած։ Երբ ես ներս մտա, նա շփոթված, գիրքը մի կողմ ձգեց։

— Մի՞թե հայերեն գիտես,— եղավ իմ առաջին հարցը։

— Շատ քիչ, բայց ուզում եմ սովորել։

— Չէի սպասում։

Մենք նայեցինք իրարու և հասկացանք միմյանց միտքը։ Կես րոպեի չափ մենք լռեցինք։

— Արշակ,— ընդհատեց նա լռությունը, առաջին անգամ արտասանելով իմ հայերեն անունը։

Եվ այդ Արշակ բառը նա արտասանեց այնպիսի լուրջ եղանակով, որ ես մի քիչ վախեցա։

— Արշակ,— շարունակեց նա,— ես կարծում եմ, որ

այսուհետև կարող ենք դեն ձգել մեր դիմակները և խոսել պարզ ու անկեղծ։

— Մի՞թե մինչև հիմա մենք դիմակներ ունեինք,— հարցրի ես զարմացած։

— Ո՛չ դիմակ, այլ մի թեթև քող, որի տակից շատ պարզ երևում էր մեր իսկական դեմքը։ Մենք վաղուց էինք իրարու սիրում, դա դու էլ գիտեիր, ես էլ, բայց դարձյալ այդ քողը պահում էինք։ Նա անհրաժեշտ է սիրահարվածներին մինչև երեկվա ժամը, այնուհետև ավելորդ է։ Լսի՛ր, ես կամենում եմ քեզ ծանոթացնել Լիզայի հետ, որին դու սիրում ես, հետո պահանջելու եմ քեզանից, որ դու էլ ծանոթացնես ինձ Արշակի հետ, որին ես սիրում եմ։

Մենք համբուրվեցինք։ Լիզան շարունակեց։

— Երեկ տուն վերադառնալով, ես մինչև գիշերվա կեսը մտածում էի քո մասին։ Մտածում էի, արդյոք, քո սերը հաստատ է, թե ոչ։ Չկարծես, որ վայրկյան անգամ մտածել եմ, թե միգուցե դու ևս պատկանում ես այն թեթևամիտների շարքին, որոնք հարուստ հարսնացվի առջև դիմակ հագած ծաղրածվի դեր են կատարում փափուկ օժիտի համար։ Ամենևին։ Ես միայն մտածում էի, արդյոք սիրում ես ինձ, թե դա մի ժամանակավոր հափշտակություն է քո կողմից, որ շուտով պիտի անցնի։ Բայց վերցրի այս ամիսուկեսվա մեր ծանոթությունը, քննեցի առաջին օրից մինչև այժմ քո վերաբերությունը դեպի ինձ և զգացի, որ քո սերը հաստատ է և անկեղծ։ «Զգացի» եմ ասում, որովհետև ես մեծ հավատ ունիմ դեպի իմ զգացումների անսխալությունը։ Քո խորհրդավոր հայացքները, քո գույնի փոփոխությունը, վերջապես, տասն օրվա քո բացակայությունն, իբրև զորեղ վկաներ, կենդանացան իմ առջև, և վերջը վճռեցի այն, որ ահա ես քեզ հետ եմ։

Ես Լիզայի խոսքն ընդհատեցի ջերմ համբույրով։

— Սպասիր, մի՛ տաքանար,— շարունակեց նա։— Չեմ թաքցնում, որ հենց առաջին անգամից, երբ քեզ տեսա, մի ինչ-որ զգացում ծագեց իմ մեջ։ Ես զգացի քո մեջ մի ուժ, որ ինձ մղում է դեպի քեզ։ Դաշնամուրից փախչելուս, քո բացակայության ժամանակ տխրելուս (ես սուտ էի ասում, թե հիվանդ եմ) պատճառը դու չէիր, այլ այն ուժը, պարզ

չգիտեմ։ Մինչև այն օրը իմ ծանոթ տղամարդիկ բոլորն էլ ինձ համար մի-մի աննշան էակներ էին, որոնց մեջ չէի գտնում այդ գրավիչ զորությունը, որ միանգամից հպատակեցրեց իմ սիրտը։ Արշակ, շատերն են ինձանով գրավվել։ Ես չեմ ասիլ, իհարկե, որ ամենքն էլ իմ հիսուն հազարի օժիտը դրել են կշռի մի թաթում, իսկ ինձ— մյուս թաթում։— Ո՛չ, եղել են և՛ անկեղծ սիրողներ, բայց ոչ մեկը նրանցից չի կարողացել հպատակեցնել ինձ։ Կրկնում եմ, Արշակ, չգիտեմ ինչ է այդ զորությունը, ես նրան գտնում էի միայն վիպական հերոսների մեջ։— Բայց այժմ համոզված եմ, որ կպարզվի, երբ դու կպատմես ինձ քո անցյալը, ներկան, քո գաղափարները, նպատակները, մի խոսքով, բոլորը, բոլորը, առանց մի որևէ մանր կետ թաքցնելու։ Խոսում ես, դու պիտի բոլորն ինձ համար պարզես։

Այս խոսքերից հետո, Լիզան աչքերը հառեց աչքերիս։ Նա սպասում էր, որ ես մի քանի բոպեում պատմեմ բոլոր իմ, ինչպես ինքն էր ասում, «անցյալը, ներկան, ապագան, գաղափարները, նպատակները»։ Հեշտ է ասել։

Ես պատասխանեցի, թե առաջներիս ժամանակ շատ կա և ես պատրաստ եմ պարզել իմ կյանքը։

— Հենց այսօրվանից,— հրամայեց նա։

— Հենց այսօրվանից,— համառձայնվեցի ես։

Հետո սկսեցի պատմել, թե ովքեր են իմ ծնողները, ինչ կրթություն եմ ստացել, և այլն, և այլն։

— Իսկ ի՞նչ գաղափարական նպատակներ ունես,— հարցրեց Լիզան, երբ ես ավարտեցի իմ պատմությունը։

Ես ասացի, թե դժվար է միանգամից պատասխանել այդ հարցին, քանի որ շատ խնդիրներ դեռ ինձ համար մութ են։

— Քանի՞ տարեկան ես,— հարցրեց նա հանկարծ։

— Քսաներեքերորդն եմ։

— Մի՞թե այդ հասակում դեռ քեզ համար մութ խնդիրներ են մնում։

— Կյանքը շատ բարդ բան է, Լիզա, նրան ուսումնասիրելու համար տասնյակ տարիներ են հարկավոր։

— Որոշ նպատակներ և գաղափարներ ունեցող մարդը կյանքը շուտ է ըմբռնում։ Պետք է միայն տեսակետ ունենալ։

Ես սկսեցի մանրամասն բացատրել, թե դրա համար հարկավոր է ունենալ ձիրք, այսինքն՝ գիտողական ձիրք։ Խոստովանեցի, թե ինձ նման հասարակ մահկանացուները գեռ շատ պիտի ապրեն, որ ճանաչեն կյանքը, թե նույնիսկ տաղանդավոր մարդիկ մեծ մասամբ սխալվում են, երբ շտապ եզրակացություններ են անում կյանքի երևույթների մասին, մի խոսքով, երկու ամբողջ ժամեր ես տաքացած բացատրեցի իմ միտքը Լիզային։ Արդեն ուշ էր, Մարտին Բուզդանիչի ճաշին վերադառնալու ժամանակը մոտեցել էր։ Բարձրացա տեղիցս, որ հրաժարական տամ։ Լիզան պահեց։

— Լսի՛ր,— ասաց նա,— դու չե՞ս նեզանում, որ քեզ գաղտագողի եմ ընդունում ինձ մոտ։

— Ամենևին, եթե քաշվում ես հորից։

— Ես նրանից չեմ քաշվում, միայն հարգում եմ նրան, և առժամանակ պիտի այդպես տեսնվենք։ Հայրս կորցրել է իր հավատը դեպի մեր երիտասարդները։ Նրան հայտնի է մեր փոխադարձ համակրությունը։ Բայց նա կասկածում է, միգուցե դու էլ ինձ վրա օժիտի կողմից ես նայում։ Սակայն նա քեզ գովում է, և դու կարող ես երեք-չորս օրը մի անգամ նրան այցելել։

Մենք բաժանվեցինք։ Ես սկսեցի մտածել Լիզայի ասածների մասին։ Այն ի՞նչ մի զորություն է իմ մեջ, որ հպատակեցնում է նրան։ Ո՞րտեղ է սովորել Լիզան այդպես դատել, գրքերի՞ց, թե՞ կյանքի փորձն է նրա մեջ հղացրել այդ ամենը։ Ո՞վ է Լիզան, ի՞նչ տեսակ էակ է, որ մինչև այժմ ոչ ոքի չի հպատակվել և այժմ յուր սիրտը տալիս է ինձ, ոչ թե ինձ, այլ այն զորությանը, որ իմ մեջ զգում է։ Քանի այդ հարցերն ինձ զբաղեցնում էին, այնքան Լիզան իմ աչքում բարձրանում էր և դառնում մի անհասկանալի էակ։

Ես ամեն օր տեսնում էի իմ սիրեցյալին, իսկ երեք-չորս օրը մի անգամ, նրա պատվերով, Մարտին Բուզդանիչին։ Ծերունին, երևի զգալով իմ կողմից ևս թեթև սառնություն դեպի ինքն, այս անգամ ինքը սկսեց նորից մոտենալ ինձ։ Նրա խոսակցության և վիճաբանության համար մի ահագին և հետաքրքրելի ասպարեզ էր բացվել։ Դա ռուս-տաճկական պատերազմն էր, որ այն ժամանակ նոր էր ծագել։ Իսկ Եվ-

գենյան շարունակում էր ինձ հալածել իր ծաղրող հայացքներով։ Այդ օրիորդը քանի գնում, այնքան աչքիս ընկնում էր, նամանավանդ այն օրից, երբ ես տեսա նրա հավանած փեսացվին։ Դա մի լպստած ֆրանտ տղա էր, փոքրիկ շամամաձև գլխով, որից միշտ Violet do parme-ի հոտ էր գալիս։ Ի՞նչ գործի էր այդ տղան, և ով էր— ես չգիտեի և չէի էլ հետաքրքրվում, բայց հագստից-բանից երևում էր, որ հարուստ մարդու որդի էր։ Կարճահասակ, աչքերը նեղ և երկայնաձև, ճակատը տափակ, երեսը սափրած ու ականջների առջև միմի մատնաչափ մազեր թողած, յուղած սև մազերը նեղ ճակատի վրա երկու կտոր ոլորած և գլխի կաշին կպցրած— ահա նրա կերպարանքը։ Մի բան, որ ինձ ամենից ավելի էր վրդովեցնում, այն նրա նեղ պատրիպատրի վարտիքն էր։ Ամեն անգամ, երբ նստում էր բազկաթոռի վրա, ես ակամա նայում էի նրա ծնկներին, սպասելով որ ահա վարտիքը կպատռվի։ Խոսակցության ժամանակ, նա սովորություն ուներ ձեռներով զանազան բեմական շարժումներ անել, կրծքին խփել և ստեպ-ստեպ մազերն ուղղել և այլն։ Մի խոսքով, ես այդ տղին չէի սիրում։ Նա էլ ինձ չէր սիրում։ Բայց ուրախ էի, որ Եվգենյան զբաղված լինելով այդ զարդարուն խաղալիքով, չէր խանգարում մեզ, և ես ամեն օր կարողանում էի Լիզայի հետ առանձնանալ դահլիճում և երկար խոսել։ Օրեցօր իմ սերը տաքանում էր դեպի Լիզան, և ես ավելի ու ավելի սերտ կերպով էի կապվում նրա հետ։ Է՛հ, երեխայություն, երեխայություն։ Մի ծխախոտ տուր, Գևորգ, իմս վերջացել է։

Քանի մի վայրկյան լուռ ծխելուց հետո, Արզաս Պետրովիչը շարունակեց։

— Առաջ ես, Գևորգ, այնքան էլ չէի սիրում խոսել և ավելի լուռ, մռայլ մարդ էի, քան թե զվարճախոս և ուրախ։ Բայց Լիզայի հետ բացատրվելուց հետո դառել էի շատախոս կաչաղակ։ Չկարծես ամենքի հետ։ Ո՛չ, միայն և միայն Լիզայի հետ։ Եվ ոչ թե այն պատճառով, որ իմ սիրեցյալն ինձ պատվիրել էր պարզել իմ մտքերը, այլ հենց ինքս զգում էի մի տեսակ ներքին պահանջ։ Ես անհնարին էի համարում Լիզայից թաքցնել մինչև անգամ մի աննշան կետ իմ իմացածից։ Այս պատճառով, ոգևորված, ժամերով խոսում էի և չէի

հոգնում։ Այսպես թե այնպես, մի ամսվա ընթացքում Լիզան բոլորովին ծանոթացավ ինձ հետ։ Այլևս չունեի գաղտնիք, որ նրան հայտնի չլիներ։ Բայց անցավ առաջին ամիսը մեր սիրահարության, և այնուհետև, սիրելի Գևորգ, սկսեց ամեն ինչ փոխվել, տակնուվրա լինել։ Ահա թե ինչպես։

Արզաս Պետրովիչը դատարկ շիշը վերցրեց և գլխիվայր պահեց։ Հետո նա շիշը դրեց սեղանի վրա, մի քանի վայրկյան լռեց և ծիծաղելով ասաց.

— Գևորգ, պարսկական դերվիշները հիանալի սովորություն ունեն։ Հեքիաթ ասելիս, հանկարծ նրանք ամենահետաքրքիր տեղում լռում են։ Ժողովուրդն անհամբերությամբ նայում է նրանց բերանին, իսկ դերվիշը իր քյաշկուլը պահելով ունկնդիրների առջև, ասում է. «Նաղլը մի սովան շախս հաղրաթի Աբբաս յոլընդա գոյ բիր զաթ սալսուն բուրա»։ Դու թուրքերեն գիտե՞ս։

— Ոչ,— պատասխանեց Գևորգը։

— Ասում է. «Պատմությունս հավանող անձը, մարգարե Աբբասի անունով թող մի բան ձգե այստեղ»։ Եվ դերվիշը չի շարունակում հեքիաթը, մինչև յուր գումարի ստանալը։ Հասկացա՞ր։

Արզաս Պետրովիչը, ժպտալով, ցույց տվեց գարեջրի դատարկ շիշը։ Գևորգը, ծառային կանչելով, հրամայեց մի շիշ ևս գարեջուր բերել։ Ծառան բերեց շիշը, և Արզաս Պետրովիչը մի բաժակ լցրեց ու միանգամից դատարկեց։

— Hy-c, իմ սիրելի Գևորգ,— շարունակեց նա, բերանը սրբելով մետաքսյա թաշկինակով,— ինչպես ասացի, ես պարզեցի իմ գլուխն ու սիրտը Լիզայի առջև, այսինքն՝ արեցի մի աններելի հիմարություն, որ ինձ շատ վնասեց, բայց շատ էլ օգուտներ տվեց վերջը։ Թե ինչ օգուտներ— այդ հետո կիմանաս ինքդ, ես կպատմեմ միայն թե ինչպես վնասեց։ Երբ Լիզան, մինչև, այսպես ասած, ոսկորներիս ուղեղն ինձ ճանաչեց, այնուհետև ես նկատեցի նրա մեջ ինչ-որ փոփոխություն։ Դա սառնություն չէր դեպի ինձ, այլ ինչ-որ անորոշ վերաբերություն։ Թվում էր, որ Լիզան ինձ առաջվա պես սիրում է, բայց առաջվա պես այլևս չի հրճվում ինձանով։ Շատ անգամ, խոսակցելու ժամանակ, նկատում էի նրա դեմքի վրա մի ժը-

պիտ, որ արտահայտում էր մի տեսակ կասկած դեպի իմ խոսքերի ճշմարտությունը։ Այդպիսի բոպեներին ես շարունակ նայում էի նրա երեսին, որ հասկանամ միտքը և կարծում էի, որ նա կշփոթվի այդ հայացքից և ինքը կզղջա իմ առջև յուր կասկածի մասին։ Բայց ոչ ես էի նրա միտքը լավ հասկանում և ոչ էլ իմ սուր հայացքներն էին նրա վրա ազդում։ Այս նկատելով, ես ինքս էի սկսում զղջալ։ «Ի՞նչ մանրակրկիտ մարդ եմ»,— կրկնում էի ինքս ինձ և, միևնույն ժամանակ դարձյալ սկսում էի կասկածել։ Պիտի ասեմ, Գևորգ, որ մինչև այդ կասկածանքն իմ մեջ հղանալը, մեր բացատրությունից հետո, ես էլ փոքր առ փոքր փոխվում էի դեպի Լիզան։ Միայն այդ փոփոխությունն այն չէր, ինչ որ Լիզայինը։ Մի փոքր առաջ նկարագրեցի Լիզայի կերպարանքը, և դու տեսար, որ նա, թեև ոչ շատ գեղեցիկ, բայց հրաշալի էակ էր։ Նա հափշտակեց ինձ, կուրացրեց միանգամայն, և ես, հիացած, չգտա ոչ մի պակասություն նրա մեջ։ Առաջին անգամ իմ մեջ ծագեց մի ցանկություն. «Երանի թե քեզ հետ խոսեմ»,— ասացի մտքումս։ Երբ Լիզան երկրորդ անգամ դաշնամուրի վրա ածում էր, իսկ ես նայում էի նրա մատներին՝ մտածեցի. «Երանի թե կարողանամ գրավել քեզ, Լիզա»։ Երբ մի փոքր համոզվեցի, որ գրավել եմ Լիզային, «Երանի թե կարողանամ համբուրել քո ձեռը», ասացի ինքս ինձ։ Իսկ երբ ստացա իրավունք նրա ձեռներն էլ, թշերն էլ, շրթունքներն էլ անթիվ անգամ համբուրել, այն ժամանակ միայն սկսեցի զննել Լիզայի դեմքն և շատ պակասություններ գտա այդ դեմքի վրա։ Մի օր ինձ թվաց, թե նրա քիթը կարճ է, մյուս օրն ես նկատեցի, որ նրա ծնոտը մի փոքր մեծ է և չի համապատասխանում դեմքի ուրիշ մասերին։ Եվ այսպես, ես ամեն օր մի ֆիզիկական պակասություն էի գտնում Լիզայի մեջ։ Այս ամենն ես հայտնում էի իրան, միևնույն ժամանակ, իմ սերը դրանով չէր պակասում, ընդհակառակը, օրըստօրե նա զորեղանում էր։ Բայց մի զարմանալի բան, Գևորգ, որի վրա արժե մտածել — երբ իմ մեջ ծագեց կասկած, թե Լիզան մի քիչ փոխվել է դեպի ինձ, նրա դեմքի այդ բոլոր պակասություններն իսկույն անհետացան իմ աչքում, և դարձյալ Լիզան թվաց ինձ

աննման հրեշտակ։ Թե ինչու և ինչ պատճառներից էին առաջանում այդ փոփոխությունները— չեմ կարող բացատրել։

Այսպես, Գևորգ, ես Լիզայի մեջ նկատեցի մի տեսակ փոփոխություն դեպի ինձ։ Կարո՞ղ էի գուշակել, որ այդ փոփոխությունն արմատապես պիտի փոխեր իմ կյանքը, հիմնահատակ աներ կնոջ վրա կազմած բոլոր իմ գաղափարներն, այնպես, որ այսօր ես նրա վրա նայեի բոլորովին թշնամական աչքով։ Բայց այսպես եղավ, Գևորգ, և ուրիշ կերպ չէր կարող լինել։ Իմ նշանակությունը թուլացավ Լիզայի աչքում այն ժամից, երբ նա ճանաչեց ինձ, նրա համար պարզվեց իմ, հասարակ մահկանացվիս կյանքը։ Ազատասիրական գաղափարներով հափշտակված, ես աշխատում էի նայել Լիզայի վրա իբրև ինձ հետ հավասար մի էակի վրա։ Ես չէի օգտվում իմ մտավոր զարգացման առավելությունից և չէի ձգտում բարձրից նայել նրա մտավոր կարողության վրա։ Թեև մենք շատ բաներում համաձայն չէինք իրարու մտքերով, և ես շատ անգամ հերքում էի նրա հայացքները կյանքի վերաբերմամբ, բայց հարգում էի այդ հայացքները և երբեք, երբեք չէի արհամարհում նրան։ Եվ, հավատացի՛ր, Գևորգ, որքան հարգում էի և որքան խոնարհվում էի Լիզայի առջև, նույնքան նա աշխատում էր ինձ վրա բռնանալ և նույնքան ձգտում էր արհամարհել իմ մտքերը։ Այս բոլորը ես Արգոսի աչքերով տեսնում էի և ոչ մի կետ բաց չէի թողնում, տեսնում էի և, միևնույն ժամանակ, չէի կարողանում պատճառը գտնել։ Որպեսզի վերջ տամ Լիզայի այս անախորժ վարմունքին դեպի ինձ, վճռեցի մի համարձակ քայլ անել։ Կամենում էի միանգամից իմանալ նրա միտքը։

— Լիզա,— հարցրի մի օր, երկար վիճաբանությունից հետո,— ե՞րբ պիտի վերջնականապես վճռվի մեր վիճակը։

Այս հարցն առաջարկեցի հանկարծ։ Լիզան չհասկացավ նրա միտքը։ Նա զարմացած նայեց երեսիս և հարցրեց, ի՞նչ ես ուզում ասել։

— Կամենում եմ իմանալ, թե ե՞րբ պիտի պսակվենք,— պատասխանեցի ես համարձակորեն և շտապով, որպեսզի չըվրհատվեմ և չփոշմանեմ։

Լիզան աչքերը խոնարհեցրեց և պատասխանեց.

— Չգիտեմ։

— Իսկ ես կարծում եմ, որ միայն դու գիտես։ Մ՞թե հորդ կողմից արգելք կա։

— Ես հանձնված եմ իմ իրավունքին, ոչ ոք չի կարող իմ կամքին հակառակել։

— Ուրեմն էլ ի՞նչ պատճառ կա սպասելու։

— Դեհ համբերիր,— կրկնեց Լիզան մի այնպիսի հրամայողական եղանակով, որ ես այլևս չհամարձակվեցի երկարացնել։

Նույն օրը ես բաժանվեցի Լիզայից տխուր և աչք-ունքս թափած։ Եկա տուն։ Լիզայի անորոշ պատասխանն ինձ սկսեց տանջել։ Այո, Գևորգ, տանջել։ Ինչ տեսակ էակ է Լիզան, մտածում էի ես։ Ինձ թվում էր, Գևորգ, թե նա ինձանից հեռանում է, ինչպես երկնքի երեսին շարժվող ամպերի ստվերը։ Ես ձգտում էի հասնել ստվերին, պահել նրան, չթողնել առաջ շարժվելու։ Սակայն չէի կարողանում, հարկավոր էր նախ ամպերը պահել, որպեսզի նրանց ստվերը կանգնի, իսկ ես շատ հեռու էի ամպերից։ Նրանք երկնքումն էին, իսկ ես երկրի երեսին։— Դա Լիզայի անգութ սիրտն էր։ «Ի՞նչ պիտի անեմ, ի՞նչ կարող եմ անել»,— կրկնում էի անդադար, գլխիս մազերը փետելով։ Երկար ժամերով մտածում էի այդ մասին և ոչ մի իմ սրտին նպաստավոր եզրակացության չէի հասնում։ Օրըստօրե ինձ համար ավելի ու ավելի պարզվում էր, որ Լիզայի սերը թուլանում է դեպի ինձ։ Ինչո՞ւ, ի՞նչ էր պատահել, ի՞նչ մի չար զորություն հանկարծ փոխեց Լիզայի սիրտը կամ ինչ մի աներևույթ ուժ ինձ կերպարանափոխեց Լիզայի աչքում։ Մի՞թե ես նախկին Արշակը չէի, որի մեջ նա զգում էր ինչ-որ ձգող զորություն։ Ճշմարի՞տ էր ասում նա, թե նա կեղծավորում էր կամ գուցե դա մի ժամանակավոր հափշտակություն էր նրա կողմից։ Բայց չէ՛, մի՞թե Լիզան կարող է հափշտակվել, այն Լիզան, որի սիրտը մինչև քսանուվեց տարեկան հասակը, ոչ մի երիտասարդի համար չէր բաբախել։ Էհ, գուցե բաբախել էր, բայց Լիզան դիմակ էր հագնում իմ առջև, սուտ էր ասում, որ իմ աչքում իրան ցույց տա իբրև մի հերոսուհի։ Կարո՞ղ ես զգալ, Գևորգ, թե որքան ինձ տրորում էին, շարշարում էին այդ շարագուշակ հարցերը։ Ես չեմ կանգնել երկարորեն քեզ նկարագրելու, թե ինչ էի զգում այդ օրերում։ Այսքանը կասեմ, որ իմ աչքում ամեն ինչ անհետացել էր, բացի Լիզայից։ Իմ ուղեղը կաշկանդված էր նրանով։ Ես սկսեցի ատել ամեն ինչ, նույնիսկ ինքս ինձ, բացի Լիզայից։ Ես ատում էի մինչև անգամ անմեղ բնությունն և նրա գեղեցկությունը։ Լուսին երեկոներին ես, հակառակ իմ սովորության, չէի դուրս գալիս փողոց։ Առաջ, այդ երեկոները ինձ վրա թեև ծանր, բայց ախորժելի տպավորություն էին անում, իսկ այժմ աննկարագրելի դառն ազդեցություն էին գործում։ Այդպիսի երեկոներին ես փախչում էի տուն, փակվում սենյակում, որ չտեսնեմ լուսնի երեսը։

Այսպես անցավ, Գևորգ, մոտ մինչև երեք շաբաթ,— շարունակեց Արզաս Պետրովիչը, հառաչելով։— Ես շարունակում էի տեսնվել Լիզայի հետ, բայց միշտ նրա դեմքին նկատում էի նույն կասկածավոր ժպիտը, միշտ նա իմ հարցերին տալիս էր անորոշ պատասխաններ կամ ամենևին չէր տալիս։ Վերջապես մի օր... Բայց թույլ տուր, Գևորգ, մի քիչ հանգստանալ։

Անցան մի քանի րոպեներ, Արզաս Պետրովիչը հանգցրեց ծխախոտը և շարունակեց.

— Մի օր, իրիկնադեմին, ես գնացի Բաղամովների տուն։ Այդ այցելությունը պատկանում էր Մարտին Բուղդանիչին։ Քանի ժամանակ էր նրա երեսը չէի տեսել։ Ես ծառային հրամայեցի հայտնել իմ մասին, և քանի մի վայրկյանից հետո, նա վերադառնալով, մի հեգնական ժպիտ երեսին (գուցե ինձ այնպես թվաց) հրավիրեց ինձ դահլիճ։ Մարտին Բուղդանիչը, մեջքը բազկաթոռին տված, ծխում էր իր երկայն չիբուխը։ Նրա աջ կողքին նստած էր Եվգենյան իր լպստածի հետ, որ մի ինչ-որ գիրք էր թերթում ձեռքում։ Լիզան նստած դաշնամուրի դեմ, շտապով դեսուդեն էր թերթում նոտաների տետրը։ Մարտին Բուղդանիչի դեմուդեմ նստած էր մի ինձ համար անծանոթ հյուր։ Երբ ես ներս մտա, Մարտին Բուղդանիչը բարձրացավ տեղից՝ ինձ բարևելու։ Լիզան կես պաշտոնական քաղաքավարությամբ մոտեցավ և հարցրեց շտապով. «Ինչպե՞ս եք»։ Ես ամենին ձեռ տվեցի։ Երբ հերթը հասավ Եվգենյային, նա ինձ վրա ձգեց առաջվանից ավելի հեգնական և,

կարող եմ ասել, անպատկառ մի հայացք։ Իսկ նրա ֆրանտը յուր հիմար լեղերքը բաց արավ և նեղ ճակատի տակից նեղ աչքերն ինձ վրա հառեց։

— Սերգեյ Միխայլովիչ, ներկայացնում եմ ձեզ բարեկամիս, բժիշկ Արզաս Պետրովիչ Մազուտյանին,— ասաց Մարտին Բուղդանիշը։

Բազկաթոռը ճռճռաց, Գևորգ, և նրա միջից բարձրացավ մի վիթխարի։ Նա, մի փոքր իմ կողմ շուռ գալով, քթի տակ մրթմրթաց յուր ազգանունը և լայն ու երկայն ձեռը մեկնեց դեպի ինձ։ Ես սեղմեցի այդ հսկայական ամուր ձեռը և հազիվհազ լսելով նրա ազգանունը «Սեթյան», տեղավորվեցի բազկաթոռներից մեկի վրա։ Վիթխարին ուղղելով յուր սև սյուրտուկի երկայն փեշերը, կրկին թաղվեց բազկաթոռի մեջ։ Դա մոտ երեսունհինգ տարեկան, պարթև հասակով, լայն թիկունքով, երկայն բազուկներով, խոշոր աչքերով և գեղեցիկ, բայց մռայլ դեմքով մի տղամարդ էր։ Ես նայեցի նրա կարճ խուզած սև մազերին ու միրուքին, թանձր բեղերին, որ հովանավորում էին նրա սեղմված շրթունքները, նայեցի նրա հայկական արծվանման քթին և, չգիտեմ ինչու, մտքումս ասացի «լավ է»։ Լիզան դաշնամուրը թողեց, որի վրա մինչև իմ գալը պատրաստվում էր ածելու, և եկավ նստեց մեր շարքում, հսկայի դեմուդեմ։ «Ինչո՞ւ իմ դեմ չնստեց», անցավ իսկույն մտքովս, բայց ես իսկույն էլ մոռացա այդ։

Մարտին Բուղդանիշը համառոտ ծանոթացրեց ինձ և նոր հյուրին իրարու հետ։ Ես նրա հատ ու կտոր բացատրություններից իմացա, որ Սեթյանն յուր ամենահին բարեկամներից մեկի որդին է, նոր է վերադարձել Գերմանիայից ուր ուսումնասիրել է ինչ-որ մասնագիտություն և այժմ մտադիր է Թիֆլիսի շրջակայքում գործարան բանալ։ Թե ինչ էր նրա մասնագիտությունն և ինչ գործարան պիտի բանար— չիմացա։ Ինքը Սեթյանն էլ ոչինչ չասաց։ Փոքր առ փոքր խոսակցությունը տաքացավ։

Սեթյանը լուռ էր, միայն երբեմն Մարտին Բուղդանիշի այս կամ այն հարցին պատասխանում էր «այո» կամ «ոչ» և ուրիշ ոչինչ։ Նա ոչ ոքի երեսին չէր նայում։ Բայց երբ թանձը բեղերը բարձրացնում էր, որ արտասանի իր «այո»-ն կամ

«ոչ»-ը, ամենը նայում էին նրա երեսին։ Որովհետև ամենի հայացքների կենտրոնը նա էր, ուստի ես էլ բնազդաբար նրան էի մտիկ անում։ Իրավ, Գևորգ, արժեր նայել այդ առնական, գեղեցիկ, մռայլ և գրավիչ դեմքին։ Բայց ես այնքան հավատ չէի ընծայում այդ դեմքին և զգում էի, որ նրա զորությունը լռության մեջ է և եթե Սեթյանը սկսի շատ խոսել, իսկույն կկորցնի բոլոր յուր նշանակությունը։ Ես ներում էի ամենին և նույնիսկ ինձ, որ այդպես ստրկաբար հպատակվում էինք այդ մարդուն, բայց չէի կարողանում ներել միայն Լիզային։ Ինչո՞ւ է նա այդպես խոր մտիկ անում այդ նոր հյուրին, մինչդեռ սա արժանի էլ չի համարում երեսը շուռ տալ նրա կողմը։ Դեռ այս ոչինչ. ինչո՞ւ Լիզան ինձ վրա չի ուզում նայել։ Ինչո՞ւ, երբ նա մեզ մի հարց է առաջարկում և երբ ես եմ պատասխանում այդ հարցին, ուշադրություն չի դարձնում ինձ վրա։

Կասկածը դարձյալ սկսեց որդի նման ուտել իմ սիրտը, ծագեց իմ մեջ մի նոր, մինչև այդ ժամանակ անծանոթ զգացում, որ ավելի վտանգավոր էր, քան թե հասարակ կասկածը։ Դա այն զգացումն է, Գևորգ, որ մի քանի իմաստասերներ հերքում են զարգացած մարդու մեջ։ Չհավատաս, Գևորգ, սուտ է, այդ մարդիկ, իրանք երևի չեն սիրահարվել և այդ պատճառով չգիտեն, որ ինչ տեղ կա սեր, այնտեղ կա նույնպես և խանդ։ Մեկն առանց մյուսի անհասկանալի է և որքան զորեղ է մեկը, նույնքան զորեղ է և մյուսը։ Է՛հ, ինչ երկարացնեմ, ես տանջվում էի, բարկանում էի Լիզայի վրա, տաքանում էի ինքս իմ մեջ, շփոթվում էի։ Լիզան հասկանում էր այդ, բայց, միևնույն ժամանակ, կարծես, իմ մեջ այդ նոր զգացումն ավելի զորեղացնելու համար, չէր փոխում իր վարմունքը։ Վերջապես, մեր խոսակցությունը դարձավ բժշկականության վրա։ Այդ տարի Թիֆլիսում կար մի ինչ-որ վարակիչ հիվանդություն, որ ընդհանուր խոսակցության առարկա էր։ «Ահա, վերջապես, իմ ասպարեզը,— մտածեցի ես.— այժմ ես կդառնամ ամենքի ուշադրության կենտրոնը, բոլորն ինձ կլսեն, իսկ քեզ, Լիզա, ցույց կտամ, թե ո՞վ է հաղթողը»։

— Արզաս Պետրովիչ,— դիմեց ինձ, վերջապես, Մարտին Բուղդանիշը,— ինչպես եք կարծում, ինչո՞ւ բժշկականու-

թյունն անկարող է այդպիսի հիվանդությունների առաջն առնել։

— Դա առողջապահության գործն է և ոչ թե բժշկականության,— պատասխանեցի ես, ամեն մի բառն առանձին շեշտելով, որպեսզի ունենամ իմ ցանկացած ազդեցությունը։

Ես նայեցի Լիզային, բայց նա երեսը շուռ տվեց ինձանից։ Դա ինձ շփոթեց, բարկացրեց և հուզեց։

— Մինչև հիվանդության երևալը, բայց երբ նա երևո՞ւմ է,— կրկին հարցրեց Մարտին Բուղդանիչը։

— Այնուհետև, իհարկե, բժշկականության գործն է,— պատասխանեցի ես տաքացած,— իսկ թե ինչու չի կարողանում բժշկականությունը վերջ տալ այդպիսի հիվանդություններին, դա նրանից է, որ այդ հիվանդությունների մասին դեռ շատ մութ խնդիրներ կան նրա համար չպարզված։

Այս ասելով, անգիտակցաբար նայեցի Սեթյանի երեսին։ Ինչո՞ւ — ինքս էլ չգիտեի։ Իսկ նա դարձյալ ոչ ոքին չէր նայում, դարձյալ լուռ էր և կարծես վճռել էր բնավ չխոսել։

Մարտին Բուղդանիչը չբավականանալով իմ պատասխանով, դիմեց նոր հյուրին.

— Ձե՞ր կարծիքն ինչ է, Սերգեյ Միխայլովիչ։

Սերգեյ Միխայլովիչ Սեթյանը գլուխը թեքեց բազկաթոռի մեջքին, ձեռքերը տարածեց աջ ու ձախ, բեղերը դանդաղությամբ շարժեց և խորհրդավոր եղանակով պատասխանեց չորս խոսք։

— Բժշկականությունը դրական գիտություն չէ։

Այնուհետև նա կրկին գլուխը թեքեց կրծքին, բեղերը հավաքեց և լռեց։ Ամենքն իրանց հայացքները բևեռեցին նրա բերանին, կարծես, սպասելով, որ նա շարունակի։ Բայց նա լռեց։ Ես մտիկ արեցի նրա երեսին, և նա այս անգամ ինձ վրա մի ահագին ժայռի տպավորություն գործեց։ Թվում էր, թե ոչ մի ուժ չի կարող նրանից ավելի խոսք դուրս քաշել։ Բայց ինչ ասաց նա, ոչինչ,— գրեթե միևնույնը, ինչ-որ ես ասացի մի քիչ առաջ։ Ինչո՞ւ ոչ ոք չնայեց ինձ վրա, ոչ ոք նշանակություն չտվեց իմ պատասխանին։ Ինչո՞ւ այժմ Լիզան ստրկաբար նայում է նրա երեսին, կարծես, սպասելով, որ այդ ժայռը գոնե մի թեթև հայացք ձգի յուր վրա։

— Իհարկե,— շարունակեցի ես Սեթյանի փոխարեն,— բժշկականությունը մաթեմատիկական գիտություն չէ, նա չունի որոշ և անսխալ ֆորմուլներ, որոնց հիման վրա կարողանար անհերքելի եզրակացություններ անել։ Բայց նա, այնուամենայնիվ, գիտություն է և շատ օգտավետ գիտություն...

Այս վերջին խոսքերն ավելացրի տաքացած և ձայնս բարձրացնելով։ Ինչպես տեսնում ես, Գևորգ, անտեղի էին այդ խոսքերը, բայց ես չհամբերեցի և, զգալով, որ Սեթյանը ծաղրում է իմ մասնագիտությունն, ուզեցի ինձ պաշտպանել։

— Այն ինչ գիտություն է, որ որոշ եզրակացություններ չգիտե անել,— մեջ մտավ Լիզան, մի սպանող հայացք ձգելով ինձ վրա, որն իսկույն մեղմացնելով, դարձրեց դեպի Սեթյանը։

Արյունս գլխովս տվեց։

— Բժշկականությունը ես չեմ սիրում,— ավելացրեց լրպլստած ֆրանտն, իր կարմիր լնդերքը ցույց տալով ինձ։

— Շատ շահասեր մարդիկ են բժիշկները, նամանավանդ հայ բժիշկները,— ներս պրծավ ատելի Եվգենյան, յուր արհամարհական հայացքը ձգելով ինձ վրա։

Գուցե, եթե զսպեի ինձ, կարողանայի տանել այդ ինկվիզիցիան, բայց ես, Գևորգ, չզսպեցի, և ոչ թե այդ կոպիտ նկատողությունների պատճառով։— Ո՛չ, ես կարող էի Եվգենյայի և ֆրանտի նման իդիոտների կարծիքն արհամարհել, բայց չկարողացա մարսել Լիզայի նկատողությունը։ Ամենից առավել ես նրա դեմ վրդովվեցի։

— Զարմանում եմ,— ասացի ես, բարկությունիցս կարմրելով և շրթունքներս կրծոտելով,— զարմանում եմ, ինչպես են համարձակվում մարդիկ դատողություն անել այնպիսի բաների վրա, որոնց մասին գրոշի հասկացողություն չունին։

Լիզան ժպտաց։ Սեթյանն աչքի տակով սառնությամբ նայեց երեսիս։ Եվգենյան քրոքրոք անամոթ սկսեց ծիծաղել։ Լրպլստած ֆրանտը հետևից նրան։ Մարտին Բուղդանիչը դարձավ ինձ և ասաց մեղմությամբ.

— Արդաս Պետրովիչ, ներեցե՛ք, ես կարծում եմ, որ Եվգենյան և Իվան Տարասիչը (լպլստածի անունն այսպես էր) ձեզ վիրավորելու նպատակով չասացին այդ։

Ավելի հիմար դրություն չէր կարող լիներ։ Եթե մարդն իմ տեղն իսկույն գդակը կվերցներ և դուրս կգար։ Այնինչ ես կես ժամու չափ ևս նստեցի, որպեսզի մի կերպ կարողանամ վրեժս հանել ինձ վիրավորողներից։ Բայց այլևս ոչ ոք չխոսեց։ Մարտին Բուղդանիչն, այդ անախորժ դեպքի տպավորությունը չնչելու նպատակով, խնդրեց Լիդային դաշնամուր նվագել։ Այս անգամ Եվգենյան կտրեց քրոջ առաջը, որ ինքը խաղա։ Ես մի փոքր լսեցի և հետո գլխարկս վերցրի ու ջախջախված սրտով դուրս եկա, չնայելով Մարտին Բուղդանիչի հրավերին՝ թեյի սպասելու։

Թե ինչպես անցկացրի մնացյալ օրն ու գիշերը, ես չեմ պատմիլ քեզ, Գևորգ։ Հետևյալ առավոտ վճռեցի գնալ և Լիզայից բացատրություն պահանջել։

Սովորական ժամանակն էր, երբ ես մտա նրա մոտ։ Բարեբախտաբար, նա մենակ էր։ Մարտին Բուղդանիչը կլուբում լրագրեր էր կարդում, իսկ Եվգենյան իր լպստածի հետ չգիտեմ ինչ տեղ էր կորել։ Լիզան ընդունեց ինձ սառնությամբ և, հազիվ իր մատների ծայրերը շփելով ձեռիս, հրավիրեց նստել։ Ես վճռեցի իսկույն ևեթ սկսել։

— Լիզա, ես եկել եմ քեզանից բացատրություն խնդրելու,— ասացի ես։

— Ասա՛։

— Ի՞նչ էր նշանակում երեկվա քո վարմունքը։

— Ես չեմ հասկանում, ինչ ես ուզում ասել։

— Մի՛ թաքցնիլ, Լիզա, ուղիղն ասա, ինձ սիրո՞ւմ ես։

Լիզան լռեց։

— Չե՞ս սիրում, նրա՞ն ես սիրում։

Լիզայի դեմքը շառագունեց։ Ես այնքան հուզված էի, որ Սեթյանի անունը չէի կարող հիշել։

— Սիրո՞ւմ ես, սիրո՞ւմ ես նրան,— հարցրի ես, բռնելով նրա թևը։

— Ո՞ւմ համար ես ասում,— հարցրեց, վերջապես, Լիզան, թևը վրդովված խլելով ինձանից։

— Սեթյանի,— պատասխանեցի, հազիվհազ կարողանալով արտասանել այդ չարագուշակ անունը։

— Չգիտեմ ինչ հիման վրա ես դու այդպես կարծում։

— Հիմնվելով երեկվա քո վարմունքի վրա։

— Օրինա՞կ։

— Դու ամբողջ ժամանակ նայում էիր նրա երեսին։

— Մի՞թե արգելված է մարդուն՝ նայել մարդու երեսին։

— Բայց ինչո՞ւ ինձ վրա չէիր նայում։

— Հա՛ հա՛ հա՛,— ծիծաղեց Լիզան։

Ես ավելի վրդովվեցի։

— Դու ծիծաղո՞ւմ ես ինձ վրա, Լիզա, դու ծաղրո՞ւմ ես ինձ,— ասացի ես, կրկին բռնելով նրա թևը։

— Կան հարցեր, որոնց պատասխանը միայն ծիծաղն է,— պատասխանեց նա, կրկին թևը խլելով ձեռիցս։

— Ուրեմն իմ հարցը շա՞տ հիմար հարց է քո կարծիքով։

— Չգիտեմ, ինքդ դատիր։

Մի քանի վայրկյան ես լռեցի։ Չգիտեի ինչ ասել։

— Լիզա, պարզի՛ր ինձ քո միտքը,— խոսեցի ես վերջապես։

— Ի՞նչ ես ուզում։

— Ինձ սիրո՞ւմ ես։

Լիզան գլուխը թեքեց կրծքին, մի քանի վայրկյան մտածեց և հանկարծ, կրկին բարձրացնելով, վճռողական եղանակով ասաց.

— Չեմ սիրում։

— Պատճա՞ռը։

— Պատճառը... չգիտեմ,— պատասխանեց Լիզան...

— Բայց ես քեզանից բացատրություն եմ պահանջում։

— Ես ասացի քեզ, որ չեմ սիրում։

— Պատճառն եմ հարցնում։

— Լսի՛ր... լսեցե՛ք։ Ես քո, ներողություն... ես ձեր մեջ այլևս չեմ տեսնում այն ուժը, որ ինձ հափշտակեց, ինձ, որ մինչև քսանուվեց տարեկան հասակս ոչ ոքով չէի հափշտակվել։

— Ինչո՞ւ, մի՞թե ես փոխվել եմ։

— Չգիտեմ, գուցե դուք միևնույնն եք, բայց այն օրից, երբ ձեզ բոլորովին ճանաչեցի, դուք իմ աչքում հավասարվեցիք հասարակ մարդկանց հետ։

— Մի՞թե դու կարծում էիր, որ ես հասարակ մահկանացու չեմ։

— Այնքան էլ թեթևամիտ չեմ, որ ձեզ անմահի տեղ ընդունեի։ Բայց ես ձեր մեջ չեմ տեսնում այն զորությունը, որ հպատակեցնում է կնոջը, որ ստրկացնում է նրան։ Տղամարդը պետք է ունենա այդ ուժը։

— Ախար դա ի՞նչ զորություն է, Լիզա, որ դու ինքդ էլ բացատրել չես կարողանում,— հարցրի ես խեղդված ձայնով։

— Առաջ չգիտեի ինչ զորություն է, այժմ պարզվեց ինձ համար։ Դա այն զորությունն է, որ տղամարդին պահում է կնոջ համար մի անհասանելի բարձրության վրա։ Կինը միշտ պիտի ձգտի մոտենալ այդ բարձրությանը, բայց չկարողանա հասնել։ Հենց որ հասավ, այն օրվանից տղամարդը կրնկնի նրա աչքում, և նա այլևս չի կարող սիրել տղամարդին, ինչպես այժմ ես չեմ կարող սիրել ձեզ, պարոն Մագուտյան։

— Լիզա, դու հերոս ես որոնում, ախ, ո՛չ, ներողություն, դուք, դուք հերոս եք որոնում։

— Դիցուք, թե հերոս եմ որոնում, մի՞թե չի կարելի գտնել։

— Հերոսները գոյություն ունին միայն վեպերում։ Վիպասանի երևակայությունն է ստեղծում նրանց։ Դո՛ւրս բերեք ձեր գլխից այդ ցնորքը։

— Քաղաքավարության սահմանից մի՛ դուրս գաք,— ընդհատեց ինձ հանկարծ Լիզան հրամայողական ձայնով։— Ես ցնորված չեմ, ոչ էլ հափշտակված վիպասանների երևակայության պտուղներով։ Լսեցե՛ք։ Մարդը բնությունից ծնված է կամ ստրուկ լինելու կամ ստրկացնելու ձգտումներով։ Երբ երկու էակներ, դիցուք, այր և կին միանում են բախտավոր ապրելու համար, նրանցից մեկը պիտի լինի ստրուկ, մյուսը՝ նրա տերը։ Ուրիշ կերպ անհնարին է, որ նրանք բախտավոր լինին։ Նրանց միացնող կապը չի կարող առանց դրան ամուր լինել։

— Այսինքն՝ այնպես, ինչպես ասիական ընտանիքներո՞ւմ, ուր մարդը կնոջ տերն է,— հարցրի ես, ավելի ու ավելի զարմանալով։

— Ամենևին,— պատասխանեց Լիզան,— ամենևին։ Այնտեղ տիրում է բռնակալություն և ոչ թե ստրկություն։ Այնտեղ կինը հպատակվում է մարդու արտաքին իրավունքներին։ Ես

խոսում եմ այն բարոյական և հոգեկան առանձնահատկությունների մասին, որոնք մի էակին անգիտակցաբար հպատակեցնում են մյուսին։ Լա՛վ լսեցեք, անգիտակցաբար եմ ասում և ոչ թե գիտակցաբար։

Այս խոսքերից հետո Լիզան լռեց։

— Բայց ինչո՞ւ պիտի միայն տղամարդն ունենա իր մեջ այդ ձեր ասած հոգեկան զորությունը,— հարցրի ես։

— Ես զգում եմ, որ կնոջ համար ավելի դյուրին է և քաղցր հպատակվե՛լ, քան թե հպատակեցնել։ Հենց այդ հպատակությունն է, որին մարդիկ անվանում են կնոջ սեր։ Ես այսպես եմ հասկանում։

— Դա սխալ գաղափար է, օրիորդ,— ընդհատեցի ես։

— Սխալ թե ուղիղ, բայց իմ համոզմունքն է։

— Եվ դուք երբեք չե՞ք փոխելու։

— Երբե՛ք։

— Ուրեմն իմ մեջ չկա՞ այդ զորությունը։

— Չգիտեմ, բայց, ո՛վ գիտե, գուցե կա — ես չեմ զգում։ Սակայն ինձ թվում է, որ եթե զգայի, այս խոսակցությունը մեր մեջ չէր լինիլ և ես կհետևեի ձեզ անգիտակցաբար, ուր որ գնայիք։

— Բայց ո՞ւմ մեջ եք զգում,— հարցրի ես։

— Բավական է,— պատասխանեց Լիզան խստությամբ։

— Ուրեմն ձեր սերը դեպի ինձ...

— Ես պատասխանեցի արդեն այդ հարցին,— ընդհատեց խոսքս Լիզան և ձեռով մի վճռողական շարժում անելով, բարձրացավ տեղից։

Ես ոչխարի պես մի բոպե ապշած նայեցի նրա երեսին, հետո կոկորդիս մեջ զգացի մի ճնշում։ Կարծես մեկը խեղդում էր ինձ։

Լիզան նայեց ինձ և ասաց.

— Դուք արտասվո՞ւմ եք, դա թուլություն է...

Իրավ, որ ես հիմարս արտասվում էի, Գևորգ, և շատ դառն էի արտասվում։ Բայց Լիզայի հանդիմանությունը մի բոպե իմ մեջ վառեց առնական ինքնասիրությունս։ Ես գլխարկս վերցրի և ասացի.

— Մնացեք բարով։

— Գնացեք բարով, կարող եք այցելել, եթե ուզում եք,— պատասխանեց Լիզան, ձեռը մեկնելով ինձ։

— Ոչ, հավիտյան, հավիտյան,— կրկնեցի ես և շտապով դուրս եկա։

Այստեղ Արզաս Պետրովիչը հանկարծ լռեց և, գրպանից թաշկինակը հանելով, սրբեց ճակատը, ուր քրտինքի նշույլ անգամ չկար։ Նա այնպիսի արագությամբ և ամուր էր քսում թաշկինակը, որ, կարծես, այդպիսով ուզում էր հեռացնել իրենից անցյալի վշտալի հիշատակները։ Գևորգը, որ մինչև այդ ժամանակ լուռ ու մունջ, աչքերը հառած իր բարեկամի երեսին, խորին ուշադրությամբ լսում էր նրա պատմությունը, անհամբերությամբ հարցրեց.

— Հետո՞։

— Հետո, էլ ինչ հետո,—պատասխանեց Արզաս Պետրովիչը, խոր հառաչելով։— Հետո, բարեկամս, ընկա այն դրության մեջ, որից դուրս գալու համար միայն երկու ելք ունեի— կամ ինքնասպանություն, կամ մոռացություն։ Բարեբախտաբար, կարողացա դիմել երկրորդ միջոցին։ Հանգամանքների բերմամբ կառավարությունն ինձ պաշտոնով փոխադրեց ուրիշ քաղաք։ Այստեղ ինձ հաջողվեց մի տարվա ընթացքում դուրս բերել սրտիցս Լիզային։ Լիզայի հետ իմ մեջ մեռան և՛ սիրո զգացումը, և հավատը դեպի կին ասված էակը։ Իսկ թե որքան ծանր և տաժանելի էր ինձ համար այդ մի տարին, ես չեմ պատմիլ, Գևորգ, որովհետև առանց այն էլ պատմությունս խիստ երկարացավ։

Արզաս Պետրովիչն արագությամբ բարձրացավ տեղից, ժամացույցին նայեց և ասաց.

— Բարի գիշեր։

— Սպասի՛ր,— պահեց նրան Գևորգը,— դու դեռ չես ավարտել քո պատմությունը, ո՞ւր ես շտապում։

— Ես ավարտեցի,- ասաց Արզաս Պետրովիչը, գլխարկը դնելով։

— Իսկ Լիզա՞ն։

— Մի՞թե այդ հետաքրքրելի է։

— Գոնե ինձ համար խիստ հետաքրքրելի է։

— Հիշո՞ւմ ես այն երեկոն, երբ Մուշտայիդում ես ու դու զբոսնում էինք։

Հիշում եմ,— պատասխանեց Գևորգը, նույնպես բարձրանալով տեղից։

— Հիշո՞ւմ ես, երբ մենք նստած թեյ էինք խմում, մեր առջևով անցավ մի առողջ գույգ, որին ես բարևեցի։

— Այն գեղեցիկ կինն և այն բարձրահասակ տղամա՞րդը,— հարցրեց Գևորգը հետաքրքրվելով։

— Գեղեցիկ կինը Լիզան էր, բարձրահասակ տղամարդը — մռայլ Սեթյանը։

— Ուրե՞մն...

— Պսակվել են վաղուց։

— Բայց ի՞նչպես են ապրում։

— Չգիտեմ, միայն համոզված եմ, որ Սեթյանն այժմ էլ լռում է և Լիզայի տասը հարցին մի պատասխան չի տալիս։ Տասը հարցին մի պատասխան չի տալիս և յուր գլուխն ու սիրտը չի պարզում նրան, ինչպես ես արեցի հիմարաբար։

— Տասին մեկ պատասխան չի տալիս,— կրկնեց Գևորգը։

— Տասին մեկ։

— Ուրիշ ոչինչ։

— Ուրիշ ոչինչ։ Բարի գիշեր, արդեն տասներկու ժամն է։

— Սպասիր, իսկ Եվգե՞նյան, լպստա՞ծը, Մարտին Բուղդա՞նիչը,— հարցրեց իրարու հետևից Գևորգը։

— Ну, դա հետաքրքիր չէ։ Բարի գիշեր, քունս տանում է։

Արզաս Պետրովիչը հեռացավ։ Գևորգը մնաց մենակ։

— Ողորմելի՛ մարդ,— ասաց նա,— միայն մի փորձով կնոջ վրա այդպիսի գաղափար է կազմել։

Այնուհետև նա մի քանի վայրկյան ընկավ մտածման մեջ և հետո, ձեռը ճակատին խփելով, ավելացրեց.

— Բայց արժե մտածել Լիզայի փիլիսոփայության մասին։

1864 թ., Թիֆլիս

ՆՈՐԵՐԻՑ ՄԵԿԸ

Պատկեր

Օրը մթնեց։ Ծանր, վշտալի օր. նա անցավ... Գիշեր է, կլուսանա, արեգակը դուրս կգա, և դարձյալ կսկսվի նույն տաղտկությունը, նույն ձանձրալի կյանքը, որն ահա ուղիղ հինգ տարի է նրան մաշում է։ Անհնարին է այդպես շարունակել, այդ արդեն չափազանցություն է, ստորություն է և, վերջապես, անբարոյականություն է։ Դառն է այդ ճշմարտությունը, բայց ճշմարտություն է, և, վերջապես, ժամանակն է ուղիղ նայել այդ ճշմարտության երեսին։ Հարց. ի՞նչ է անում նա, ո՞ւր է գնում, ինչո՞ւ համար է ապրում։ Գտել է. խնդիրը հենց այդ չորս բառերի մեջ է կայանում։ «Ինչո՞ւ համար է ապրում», այսինքն, ի՞նչ է նրա գոյության նպատակը։ Մի՞թե միայն ապրելը։ Բայց լոկ ապրելն, արդյոք, կարո՞ղ է բարոյական մարդու կյանքի նպատակ լինել։— Ոչ։ Ապրել միայն ապրելու համար — այդ ստոր և զզվելի կյանքն է, որ արժանի է միայն անբան կենդանուն։ Բայց ի՞նչ ասել է կյանքի նպատակ։— Նա մարդկային գոյության հենարանն է։ Սուտ է, որ ասում են, թե կան մարդիկ առանց նպատակի։ Նա չի հավատում։ Աննպատակ կյանքը մահ է։ Հարուստի և աղքատի, տգետի և իմաստունի, բարոյական մարդու և անբարոյականի կյանքն ունի որևէ հենարան։ Ամեն մարդ ձգտում է հասնել

յուր ցանկացածին, և ահա այդ ցանկացածին հասնելու հույսն է, որ պահում է յուրաքանչյուրի գոյությունը։ Հակառակ դեպքում, նա չի կարող ապրել, կանհետանա, կշոգիանա յուր անբովանդակ կյանքի անբովանդակ տարածության մեջ։ Բայց ի՞նչ է նա։— Ոչինչ. դատարկ տարածություն, եթերական էություն։

Քամալյանը բարձրացավ աթոռից, որ դրած էր փոքրիկ, հնամաշ գրասեղանի քով։ Այդ սեղանի վրա դարսված էին անկանոն կերպով զանազան բովանդակության, մեծ ու պրստիկ, կազմած ու անկազմ գրքեր, լրագրերի թերթեր, մի քանի գրչակոթեր, մի հայելի և ուրիշ հարկավոր ու անպետք իրեղեններ։ Իսկ սեղանի առաջի կողմում, աթոռի դեմ ընկած էր մի բաց ձեռատետր։

Այս — Քամալյանի հիշատակարանն էր։

Փոքրիկ ապակյա հասարակ կանթեղն աղոտ կերպով լուսավորում էր նեղ և ցածր առաստաղով սենյակը։ Ջեռները դնելով վարտիքի գրպանները, գլուխը թեքելով դեպի կուրծքը, Քամալյանը սկսեց քայլել սենյակի մի անկյունից դեպի մյուսը, հետ ու առաջ։ Նրա դեմքը գունատ էր. նրա պայծառ ճակատը կորցրել էր յուր պարզությունը և ծածկվել այնպիսի կնճիռներով, որոնք երևում են միայն տարիքն առած մարդկանց ճակատի վրա։ Բարակ սևագույն հոնքերի տակից նայող մուգ աչքերը, զրկվելով իրանց նախկին կրակոտ փայլից, ընկել էին խոր խորշերի մեջ։ Երկու խոշոր գծեր այդ աչքերը բաժանում էին սփրթնած երեսի մյուս մասից։

Մի քանի րոպե լուռ ու մունջ շրջելուց հետո, Քամալյանը կրկին մոտեցավ սեղանին։ Նա սկսեց թերթել սեղանի վրա դրած ձեռատետրը, երբեմն ձեռը տանելով ճակատին և հետ դարսելով երկայն, փայլուն ու կակուղ մազերը, որոնք շուտ-շուտ ցրվում էին առաջ։

— Հեռացի՛ր աչքիցս,— գոչեց նա հանկարծ, հիշատակարանը ձգելով սեղանի մյուս անկյունը։

Այն ավելի կրկնապատկում էր նրա վշտերը, երբ աչքի առջև էր։ Այն հիշեցնում էր նրան յուր պախարակելի անցյալը, պատկերացնում էր նրա առջև մի դատարկ, մի հիմար կյանք, և ինքն իսկ քննադատում այդ կյանքը։ Պիտի չորա-

նար այն ձեռք, որ գրել էր այդ թերթերը. այն ձեռք, որ անշունչ առարկայիդ բերանը լեզու է դրել, որպեսզի այսօր այդ լեզվով անեծք կարդացվի նույն այդ ձեռը բանացնողի դեմ։ Եվ ի՞նչ ես դու, զզվելի թղթի կտոր։ Ի՞նչ ես դու և ի՛նչ են ահա սրանք (Քամալյանը ձեռքը մեկնեց դեպի մեծակազմ գրքերը), որոնք խաբում են մարդկությանը, բախտավորություն են խոստանում, իսկ հետո դառնություն և կսկիծ են տալիս այդ բախտավորության փոխարեն։ Բայց ո՛չ, դուք, թղթեր, մեղավոր չեք. մեղավոր են դարձյալ նրա նման զզվելի կենդանիները, մեղավոր է մարդ կոչված ստոր արարածը։ Այո՛, մեղավոր են նրանք, որոնք սևացնելով իրանց կկղտոտ մատներով ձեր լուսնի նման մաքուր երեսը,— հավաքում են ձեզ միասին, սփռում են աշխարհի չորս կողմերը — նրա նման անօգուտ արարածների թիվը ավելացնելու և մարդկության թշվառությունը բազմապատկելու համար։

Մտաբերում է նա, երբ յուր պատանեկության օրերում, վարակված ընկերակիցների սովորությունից, ահա այդ սևացրած թերթերից մի կապ դրած առչևը, ժամերով կարդում էր, մայրը միշտ կրկնում էր. «Որդի, խնայի՛ր քեզ, սիրտդ մի՛ մաշիր այս գիր ու գրյանքով»։ Այն ժամանակ մոր այդ խոսքերը նրան ծիծաղեցնում էին։ Նա զվարճանում էր այդ կնոջ միամտությամբ, որ չգիտեր «գիր ու գրյանքի» արժանավորությունը, նրանց օգտակարությունը։ Տասը տարի է անցել այդ ժամանակից, նրա մայրն արդեն մեռած է, և այժմ Քամալյանն ուրիշ կերպ է հասկանում նրա խոսքերը։ Նրա մայրը միամիտ չէր, ոչ, այլ ինքն էր հիմարը, որը նրա տգետ խոսքերի մեջ թաքնված խոր իմաստությունը չգիտեր։ Այո՛, չգիտեր, խորասուզված ընթերցանության մեջ, ոչինչ ուրիշ բան չէր ուզում հասկանալ, ոչնչի և ոչ ոքի չէր հավատում, բացի նրանից, ինչ որ ասում էին այս «գիր ու գրյանքը»։ Այսօր ամեն ինչ անցած է, այլևս մայրը նրա կողքին նստած չէ, և նա չի կարող, նրա խրատը կատարելով, մխիթարել նրան։ Այժմ ուշ է, ամեն բան վերջացած է, և նա...

Մի ուժգին ապտակ տալով ճակատին՝ Քամալյանը վեր թռավ աթոռից և սեղանից վերցնելով մի ծխախոտ, վառեց ու սկսեց ծխելով հետ ու առաջ շրջել։ Նա ավելի ու ավելի գու-

նատվում էր, մտաբերելով յուր անցյալը, յուր մանկությունը, այն օրերը, որոնց նա վերադարձնել կցանկանար, բայց չէր կարող։ Այդ օրերը նրա համար մի-մի ասեղներ էին, որոնք ցցվելով նրա ուղեղի մեջ, բորբոքում էին նրան։

Նա ծխում էր անսովոր կերպով։ Վառելով ծխախոտը, նա մի քանի անգամ այնպիսի ագահությամբ քաշեց, որ պապիրոսի կեսը ծուխ դառնալով, անհետացավ։ Ինչպես մի մարդ, որ երկար շնչարգելությունից հետո, լիքը բերանով կլանում է թոքերը միանգամից օդի ահագին քանակություն, Քամալյանը ծխախոտի ծուխը յուր շնչի բոլոր զորությունով ծծում էր ներս։ Կարծես, կամենում էր այդ դառն ծխով թունավորել և սպանել այն վշտերը, որոնք դարսվել էին նրա ճնշված սրտի վրա, և արմատախիլ անել այն մտածմունքները, որոնցով ծանրաբեռնվել էր նրա ուղեղը։ Բայց չէր լինում, ծխախոտը չէր օգնում, նրա վշտերը և մտածմունքները մնում էին միևնույնը. նրանք չէին թուլանում, չէին պակասում, միայն ավելի գրգռվում էին։ Եվ Քամալյանը հաղթված, ճնշված նրանց նեքը, չգիտեր ինչ անեք, ինչպես կրեք նրանց ծանրությունը։ Նա կրկին մոտեցավ սեղանին և կրկին սկսեց յուր անգութ դատաստանը յուր անցյալի և ներկայի վրա։

— Համեմատե՞լ եմ, արդյոք, ինձ ուրիշ ինձ նման արարածների հետ, գտե՞լ եմ, արդյոք իմ մեջ այն հատկությունները, որոնցով ես նմանվեի այժմյան մարդկանց, որոնք իմ կյանքը կապրեին այդ մարդկանց հետ։ Կա՞ն, վերջապես, ինձ նման ուրիշ մարդիկ։— Այո՛ և ոչ։ Այո՛, որովհետև բոլոր իմ ճանաչած մարդիկ առանձնապես վերցրած ունին իմ հատկություններից որևէ մեկը։ Ո՛չ, որովհետև չկա մի մարդ, որ պարունակեր յուր մեջ այն բոլորը, ինչ որ ես եմ պարունակում իմ մեջ։ Ինձ նման չկա մի ուրիշը, և ի՞նչ եմ ես։— Ամենայն ինչ և ոչինչ։ Այդ հաստատում է այս անոգոմ, անգութ վկան, իմ նախատելի անցյալի այս արհամարհելի նկարագիրը։

Քամալյանն, այս ասելով, ձեռը դարձյալ մեկնեց հիշատակարանին, վերցրեց նրան և, դնելով յուր առչև, կրկին սկսեց թերթել։ Կանթեղի աղոտ լույսը բնկավ հիշատակարանի մանր ատառերով գրված տողերի վրա։ Նա շարունակում էր

թերթել, երբեմն կանգ առնելով այս ու այն երեսի վրա և կարդալով։ Այդ ժամանակ նրա դեմքն ավելի այլայլվում էր, նրա ճակատի կնճիռները մոտենում էին իրարու և սեղմվում, երեսի գծերն ավելի ու ավելի խոշորանում։ Այդ նրա հոգեկան խորին հուզումը, նրա ներքին ալեկոծությունն էր։ Հիրավի, հիշատակարանի ամեն մի երեսը, մտաբերելով նրան յուր կյանքի այս կամ այն ժամանակամիջոցը, գրգռում, եռապատկում էր նրա վրդովմունքը, լեցնում էր նրա դառնության բաժակը։ Կարծես այս լուռ ու մունջ սև տողերը մի-մի թունավոր սողուններ լինեին, որոնք սողալով նրա մարմնի վրա, ծակծկում էին նրան իրանց թունավոր ասեղներով։

Հինգ տարի է, որ նա մտել է կյանքի մեջ։ Ի՞նչ է արել այդ հինգ տարվա ընթացքում հասարակության համար, ի՞նչ օգուտ է տվել նրան։— Ո՛չինչ, բացի վնասից։ Բայց չէ՞ որ նա կամենում էր օգտակար լինել և դեռ ուսումնարանի նստարանի վրա, յուր երևակայության մեջ ստեղծում էր յուր ապագա «հասարակական գործունեության» համար հարյուրավոր ծրագիրներ։ Ո՞ւր են այդ ծրագիրները։ Չկան նրանք, շոգիացել են։ Ինչո՞ւ։ Որովհետև... այո՛, որովհետև նա այդպես չէր հասկանում կյանքը, որովհետև նա թափանցելի օդի մեջ կամենում էր ամրոց կառուցանել։ Նա կարծում էր, թե կարող է կյանքը ծառայեցնել յուր նպատակներին։ Պատանեկական երևակայություն, ի՛նչեր չես ստեղծում դու, ի՛նչ հսկայական խոչընդոտներ չեն փշրտվում, խորտակվում քո առջև։ Ա՛խ. տեր աստված, գլուխը պտտում է, աչքերը մթնում են, երբ նա մտածում է այդ մասին։ Ի՛նչ անի, գիշերն անցնում է. լույսը մոտենում է, ամենքը քնած են անդորր հոգով, ամենքը ցերեկվա իրենց աշխատությունից հոգնած, հանգստանում են։ Իսկ նա ինչ է արել, որ այդքան հոգնել, թուլացել է, և ի՞նչ պիտի անի վաղը։ Դարձյալ պիտի նստի այստեղ, այս տաղտկալի, ձանձրացուցիչ սենյակում, կարդա, կարդա ու կարդա տակն ու վեր, մի հինգ տող այս գրքից, հինգը մյուսից։ Տեր աստված, համբերություն էլ չունի մի գիրք մինչև վերջը կարդալու...

Քամալյանը կրկին բարձրացավ տեղից և սկսեց շվարված շրջել հետ ու առաջ, ինքն իրեն անդադար կրկնելով. «մի՞թե մի՞թե չկա մի ելք»։ Հետո նա հուզված մոտեցավ վառարանին և մեջքը տալով պատին, դարձյալ խորասուզվեց յուր դառն մտածողության մեջ։

— Հարկավոր է, հարկավոր է անպատճառ դուրս գալ այդ ծանր մտքերի լաբիրինթոսից,— դարձյալ սկսեց խոսել նա ինքն իրան։— Այո՛, հեշտ է ասել, հարկավոր է ազատվել այդ ծանր մտքերից, բայց կատարել... հըմ... Թշվառ արարած, զգացիր քո ոչնչությունը, անիծի՛ր ինքդ քեզ, ուրիշ մբխիթարություն չունիս։ Չէ՞ որ դու ամեն ինչ փորձեցիր, և ի՞նչ հաջողություն գտար։ Գրականություն, ուսուցչություն և ուրիշ սույնանման շավիղներ դու ոտք ես կոխել, ինչո՞ւ ուրեմն չըկարողացար այդ շավիղներից մեկի վրա երկար շարունակել քո ընթացքը։ Չէ՞ որ դու մինչև անգամ ուզում էիր արհեստավոր, նույնիսկ հասարակ բանվոր դառնալ, ինչո՞ւ այստեղ ես չկարողացար երկար մնալ։ Ո՞վ էր քեզ արգելում, ի՞նչն էր խոչընդոտ դնում քո առջև։

— Ո՞վ էր արգելում, ի՞նչն էր խոչընդոտ դնում իմ առջև,— կրկնեց Քամալյանն ինքն իրան։

— Ինքդ և ուրիշ ոչ ոք, քո խոչընդոտը պարունակվում է հենց քո մեջ,— շշնջաց նրան նույն ներքին ձայնը։— Որոնիր և կգտնես, հարցրո՛ւ քո հիվանդ նյարդերից, քո դյուրագրգիռ զգացմունքներից, հարցրու քո թույլ կամքից, անհիմն ու անհաստատ բանականությունից, և նրանք կասեն քեզ։ Դու ամեն տեղ որոնում էիր այն, ինչ որ քեզ համար հնարավոր չէր գտնելու, և, որոնածդ չգտնելով, հուսահատվում էիր ու թողնում քո ընտրած ճանապարհը։ Դու դեռ գործը չսկսած, նրա վերջի, նրա հետևանքի մասին էիր դողում, և այդպես անում էիր դու ամեն անգամ, բոլոր ասպարեզներում։ Քո խելքի և զգացմունքների մեջ երբեք ներդաշնակություն չի եղել — ահա՛ քո ցավը, քո խոչընդոտը, քո արգելքը։ Դու չգիտեիր և այժմ իսկ չգիտես այն նշանավոր իմաստասերի խոսքերը, թե «կյանքը կոմեդիա է մտածողի համար, իսկ դրամա —զգացողի համար»։ Քեզ համար նա դրամա է եղել, ուրեմն թող կատարվի այդ դրաման մինչև վերջը։

— Ճշմարիտ է։

— Խմի՛ր, ուրեմն, քո դառնությունը մինչև բաժակի հատակը։

— Խմե՞լ. այո՛, կխմեմ և մի կաթիլ անգամ չեմ թողնիլ նրա մեջ։

Եվ Քամալյանը կրկին սկսեց շրջել։

Փոքրիկ սենյակը լցվեց մի ծխախոտի ծխով։ Վառարանի մեջ այրվում էին փայտի վերջին կտորտանքը։

— Հույս,—ահա ի՞նչ է հարկավոր ինձ, ահա ինչի բացակայությունն է թունավորում իմ կյանքը։ Բայց ո՞րտեղից գտներ հույս, և ո՞ւր է նա, ի՞նչպես կարող է նա նորից վերադառնալ իմ մեջ, քանի որ նա միանգամայն, այո՛, միանգամայն մեռած է...

Այս խոսքերը Քամալյանն արտասանեց ավելի բարձր ձայնով։ Հետո նա յոթ ժապավեն, ցրված հայացքը ուղղեց դեպի վառարան և սկսեց անթարթ աչքերով նայել երակին։ Մի տեսակ դառն ժպիտ էր խաղում նրա շրթունքների վրա այդ ժամանակ։

Ահա վառարանի մեջ այրվում է անտառից բերված փայտը։ Սրանք ևս, այդ անշունչ փայտի կտորտանքն ևս, տեսնում չեն։ Քանի որ լուռ անտառի մեջ էին, այնտեղ նրանք կազմում էին ահագին կանաչազարդ ծառեր բազմաթիվ ճյուղերով և անհամար տերևներով։ Այդ մի բախտավորություն է։ Նրա ճյուղերի շվաքի տակ հանգստանում էր հոգնած հովիվն յուր փոքրիկ գառնուկների հետ, նրա դագաթում ուրախուրախ թռչկոտում և զվարճանում էին անթիվ թռչնակներ։ Որքա՜ն, երևի բախտավոր էր զգում իրան ծառն այդ ժամանակ, որչա՜փ նա հպարտանում էր, զգալով յուր օգտակարությունը թե՛ մարդուն և թե կենդանիներին։ Սակայն, ապերախտ է մարդը։ Ի՞նչ վճարեց նա բարեսիրտ և օգտավետ ծառին նրա վեհանձնության փոխարեն։ Նա, այդ երախտամոռ արարածը, կացնի սուր բերանն յուր կեղտոտ և զզվելի ձեռներով ուղղեց ծառի ամուր և հաստ բունին։ Տնքաց այդ վեհանձն մարդասերը, յուր սրտի խորքից անիծեց ապերախտ մարդուն, ճռճռաց և, մի դառն հառաչանք արձակելով, թափվեց գետին։ Ծառը մեռավ, բայց մահից հետո ևս նա չդադարեցրեց յուր օգտակարությունը։ Նրա մարմնի փշրանքներն

ահա այսօր ամենուրեք պաշտպանում են մի զզվելի մարմին։ Գյուղական խրճիթում նրանք տաքացնում են աղքատ չինականի և նրա փոքրիկ դավակների ձյունից ու ցրտից քարացած մարմինները։ Հարուստի պալատում նրանք գուրեկան ջերմություն են պարգևում փարթամներին։ Իսկ նա, անբախտը, նա է միայն ավելորդ մարմին աշխարհի երեսին։ Որքա՜ն դժբախտություն, որպիսի՜ ցավ է զգալ ինքդ քեզ մինչև անգամ այդ անշունչ առարկայի, փայտի առջև քո ստորությունը, քո ոչնչությունը։ Այդ մի անտանելի վիշտ է...

Քամալյանը մոտեցավ սեղանին և կրկին սկսեց թերթել հիշատակարանը։

Այնտեղ նկարագրված է նրա կյանքը 187... թվականից մինչև այսօր. այսինքն՝ սկսած այն օրից, երբ ավարտեց գիմնազիայում յուր ուսման ընթացքը։ Նա արհամարհեց բարձրը կրթությունը և ինչո՞ւ։ Նրա համար, որ ավելի շուտ մտնի հասարակական գործունեության ասպարեզը։ Այն ժամանակ շտապում էր և, կարծելով, թե բավական է յուր ստացած մրտավոր պաշարն այդ ասպարեզում յուր համար հարմար տեղ բռնելու։ Նա մտածում էր, որ կարող է ընթերցանությամբ լրացնել այն պակասը, որ պիտի լրացներ համալսարանն, և սկսեց այդ օրվանից անդադար և անընդհատ փարդալ, կարդալ ու կարդալ։ Ահա այստեղ գրված է նրա կարդացած գրքերի անունները։ Տկր աստված, ո՞րպի՜ սանկտոն և անեպ ընթերցանություն։ Բայց նա միևնույն ատյսոր էլ շարունակում է։ Ի՜հ ցնորք, մի ժամանակ նա հավատացած էր, թե մեծ բանաստեղծական ձիրք ունի, և այդ ցնորքով որոշված՝ ուսումնասիրում էր Շեքսպիրին, Շիլլերին, Բայրոնին, Գյոթեին։ Վա՜վ ուսումնասիրեց։ Համբերություն չունենալով սրանց գրվածքներից գոնե մեկը կանոնավոր կերպով կարդալու։ Ինչ ծաղրելի մի բան էր այն, որ այդ ժամանակ նրան զբաղեցրել էր։ Նա հավատացած էր, թե յուր մեջ կա թաքնված ընդարձակ տաղանդ և կարծում էր, որ ընթերցանությունը կդարձնի այդ տաղանդի ինքնուրույնությունը։ Բայց ահա՛ նրա բանաստեղծական տաղանդի գրառուղը, ահա այն հիմար, անհամ ոտանավորները, որոնք նույնիսկ Թառումյանի ամենն տիմարին էլ չի ծաղել էին դատապարտում։ Փարթեց մի դրամատիկական գրեթե

գրել. կարծում էր, որ պրոզան ավելի կհաջողվի։ Բայց, դեռ առաջին երկու երեսը չավարտած, թողեց։ Այն արդեն չափից դուրս անհամ էր։ Փորձեց վեպիկներ գրել... Թյո՛ւ, ի՞նչ անտանելի էին այդ օրերը։ Ուղիղ երկու շաբաթ մտածել միայն մի վեպիկի վերնագրի մասին և վերջ ի վերջո հորինել «Դանդաղություն» վերնագիր — այդ արդեն չափից դուրս է, խելագարություն է։ Եվ ո՞ր մեկը թվի, նրա հիմարություններն անթիվ, անհամար են, նրա ամեն քայլը եղել է սխալ։ Բայց ինչի՞ցն է ծագել այդ սխալը։— Թուլությունից, հաստատ կամքի բացակայությունից, որոնք նրա անբնական կյանքի հետևանքներն են։ Նույն անբնական կյանքը շարունակվում է և՛ այսօր։ Նրա ուղեղը ծանրաբեռնվել է հազար տեսակ տարբեր գաղափարներով, իրարու հակառակ մտքերով, և այդ բոլորն անորոշ ու անկանոն կերպով այս բոպեին դասավորված նրա գլխումը, դժդժում են այնտեղ, ինչպես անթիվ որդեր։ Ի՞նչ է արել... ի՞նչ է անում և ի՞նչ պիտի անի... է՞լի ոչինչ։ Ոչի՞նչ...

Նա հանեց ժիլետի գրպանից ժամացույցն և նայեց։

— Արդեն գիշերվա երկու ժամն է, քունս չի տանում, գլուխս ցավում է... ականջներումս, կարծես, թմբուկներ են ածում, գլխիս գանգը ուզում է տրաքվել։ Ինչպե՞ս տաք է ճակատս. աչքերս մթնում են... այդ ինչի՞ցն է... Անքնությունից կլինի, երեկ գիշեր էլ մինչև լույս չեմ քնել։ Բայց ի՞նչ անեմ, որ քունս չի տանում։ Զարմանալի բան... այսօր չեմ ճաշել, երեկոյան էլ թեյ չեմ խմել, բայց քաղց ամենևին չեմ զգում, ախորժակս մեռել է...

Նա կրկին բարձրացավ տեղից և կրկին սկսեց քայլել։ Այս անգամ նրա երեսին բոլորովին դույն չէր մնացել, աչքերը վառվել էին, ցամաքած շրթունքները ցնցողաբար դողդողում էին։ Նա մտածում էր, բայց ինչ էր մտածում— այդ ինքն էլ չգիտեր։ Նրա գլխում տիրում էր կատարյալ քաոս։ Սակայն մտքերի այդ խառնաշփոթության մեջ որոշվում էին հետևյալ գծերը։

— Հոգու անդորրությունը մարդկային կյանքի երջանկությունն է։ Երանելի է այն մարդը, որ վայելում է այդ երջանկությունը։ Ես մինչև այսօր զուրկ եմ եղել նրանից, նամանավանդ — այժմ։ Իմ անցյալը լիքն է վշտերով, ապագան պատկերանում է իմ առջև սև գույներով, իսկ ներկան անտանելի է։ Անտանելի՞ է, հեշտ է ասել, թե կյանքն անտանելի է, բայց զգա՞լ այդ անտանելիությունը, օհ՛ օ՛... Մուրացկանի, անդամալույծի դառն, դժնդակ կյանքի հարվածների ներքո թշվառացած արարածների ողբալի դրությունը կարող է հասկանալի լինել ամենի համար։ Բայց թե որքան ծանր է այս դրությունը, որքան վշտալի է — այդ զգալի է միմիայն իրան, միմիայն թշվառին։ Ամենազորեղ երևակայությունը, ամենազգայուն սիրտ ունեցող մարդն անգամ չի կարող զգալ ուրիշի թշվառությունների տասներորդ մասը։ Ո՞վ կարող է զգալ իմ դրությունը, բացի ինձանից։— Ո՛չ ոք։ Ինչպես կարող եմ ես հասկացնել ուրիշներին այն, ինչ որ ես եմ զգում։ Ոչ մի կերպ, դա անհնարին է։

Քամալյանը կրկին թաղվեց մտածողության մեջ։ Անցան մի քանի բոպեներ և կրկին սկսեց խոսել բարձր ձայնով։

— Այո՛, անտանելի է կյանքը, այս աշխարհում ինձ համար տեղ չկա։ Անօգուտ եմ եղել մինչև օրս... անօգուտ եմ այժմ... անօգուտ կլինի և՛ իմ ապագան։ Անօգուտ ինձ համար, վնասակար ուրիշների համար։ Եվ ով կարող է ասել, որ ես հասարակության ավելորդ անդամ չեմ։ Ա՛խ, կյանքի բեմի վրա ես դեր չունիմ։ Իսկ մի մարդ, որ դեր չունի, նա պիտի հեռանա բեմից, որպեսզի չխանգարի խաղացողներին։ Այդ պարզ է, և ոչ ոք չի կարող հակառակել։ Ի՞նչ միտք ունի, ուրեմն, իմ գոյությունը։— Ոչինչ։ Չկա մի բան, որի հետ կապված լիներ իմ կյանքը։ Ես ավելորդ մարմին եմ, որ սխալմամբ ընկել եմ այս աշխարհ։ Ես իսկի մարմին էլ չեմ... թափանցելի օդ... Այդ էլ չեմ... օդը օգտավետ է... Բաս ի՞նչ եմ... ոչինչ։ Սխալվում են ֆիզիկոսները, ասելով թե աշխարհում «ոչինչ» ասված բան չկա։ Ի՞նչպես թե չկա, բաս ես ի՞նչ եմ։ Սխալվում են. երևի, նրանք ինձ չեն ճանաչում, ապա թող ինձ իրանց գիտնական հետազոտության ենթարկեն, այն ժամանակ կտեսնեն, թե ինչպես կոչնչանա իրանց թեորիան։

Դրսում սաստիկ ձյուն էր գալիս։ Քամալյանը բարձրացավ տեղից և, պատուհանի վարագույրը մի կողմ ծալելով, սկսեց նայել դեպի փողոց։ Երկար ժամանակ նա անշարժ դրության

մեջ նայում էր քրտնած ապակիների միջով ձյունալի մթնոլորտին։ Հանկարծ նա, կարծես մի բան մտաբերելով, աջ ձեռը խփեց ճակատին և պատուհանի վարագույրը շտապով ծածկեց։

— Վճռված է, վճռված է,— արտասանեց նա բարձր ձայնով և կրկին դիմեց սեղանին։

Նա չարդված սրտով, թուլացած մարմնով ընկավ աթոռի վրա և երկու ձեռներով պինդ սեղմելով գլուխը, սկսեց անթարթ աչքերով նայել հիշատակարանին։ Նրա հայացքն անմիտ էր, նրա շրթունքները ժպտում էին վայրենի կերպով, աչքերը փայլում էին մի տեսակ կատաղի փայլով։ Մի քանի րոպե նա այս դրության մեջ մնաց, հետո կրկին սկսեց քայլել։ Նրա ծնկները թուլացել էին, հարբածի նման չէր կարողանում ուղիղ ման գալ։ Այդպես շարունակեց մոտ կես ժամ։ Հետո նա, շուռումուռ գալով, գարձյալ մոտեցավ սեղանին և հանկարծակի, խելագարի պես, հարձակվեց հիշատակարանի վրա, վերցրեց նրան և սկսեց ձեռներով ճմռտել և ատամներով կրծոտել...

Վառարանը հանգչելու վրա էր, կրակի երեսն արդեն ծածկված էր մոխրով։ Քամալյանը, հիշատակարանը կրծոտելով և վայրենաբար բղավելով, մոտեցավ վառարանին, վերցրեց ունելիքը և կրակը խառնեց։ Անցան մի քանի վայրկյաններ, հանկարծ կրակը վառվեց, և վառարանի մեջ բարձրացավ պայծառ բոց։

— Հա՛, հա՛, հա՛, քսանուհինգ տարվա կյանք... ահա՛ ինչ է քո վարձը, ահա ինչի ես արժանի դու,— գոռաց նա վայրենի զվարճությամբ, նայելով հիշատակարանի բոցավառված թերթերին։

Մի րոպեում կրակը լափեց երեսուն թերթերից բաղկացած ձեռատետրը։ Բոցը դադարեց, և կրկին մոխիրը ծածկեց կրակի երեսը։

— Վերջացավ, վերջացավ ամենայն ինչ, քսանուհինգ տարվա կյանքս մոխիր դարձավ, մոխիր դարձավ իմ բոլոր անցյալը... Ազատվեցի, ուֆ, ազատվեցի... գնա կորիր հին կյանք, էլ քեզ հետ ես գործ չունիմ։

— Ամեն ինչ կորավ, կորավ ամբողջ կյանքս, անհետացավ։ Չկա այն։ Իսկ ապագա՞ն. հը՛մ, երեխա եմ, նորից պիտի մեծանամ, հա՛, հա՛, հա՛, քսանուհինգ տարեկան երեխա, ինչ ասել կուզի, շատ փոքր եմ դեռ։ Սպասիր, կրակ, ես քեզ համար դեռ կերակուր շատ ունիմ պատրաստած, տեսնում եմ խիստ ես քաղցած... սպասի՛ր։ Դա ի՞նչ է, հա՛...

Նա սեղանի վրայից վերցրեց մի մեծ հաստակազմ գիրք։

— Առաջ, առաջ այս ցնորամիտին, հետո,— ասաց նա ձգելով գիրքը վառարանը։ Բարձրացավ մի թանձր ծուխ, որից հետո գիրքը բոցավառվեց, և նրա կազմի վրա փայլեց ոսկեզօծ տառերով տպված «Философия безсознательного» վերնագիրը։ Բոցը չդադարած, վառարանի մեջ ընկավ մի ուրիշ գիրք, որին հետևեց երրորդը, չորրորդը, թվով մինչև տասը։

— Հիմարներ, ամբողջ ձեր դատարկ կյանքը նվիրել եք այդ թերթերը սևացնելուն, տեսեք կրակը ինչ շուտ է լափում ձեր խելքը... Ի՞նչպես է, լա՞վ է, կովեցեք իրարու հետ, բայց տեսեք, ես ձեզ ինչպես հաշտեցրի...

Բոցը կրկին դադարեց, և մոխիրը ծածկեց կրակի երեսը։ Քամալյանը հեռացավ վառարանից, կանգնեց սեղանի առջև, մտիկ տվավ այրված գրքերի դատարկված տեղին, հետո հայացքը դարձրեց վառարանին և ձեռները բարձրացնելով, մի ուժգին հարված տվավ գլխին։

— Ի՞նչ արի ես, ի՞նչ արի, ի՞նչ արի այդ,— գոռաց նա այնպիսի զորեղ ձայնով, որ հարևան սենյակում քնից զարթնեց նրա տանտիրուհին, պառավ Քեթևանը։

— Այժմ ես նոր մարդ եմ, հա, հա, հա, — կրկնեց Քամալյանը, կատաղաբար ծիծաղելով։ Շեմքի մեջ երևեցավ Քեթևանի սարսափած դեմքը։

Քամալյանը, ինքն էլ չգիտեր թե ինչու, հարձակվեց պառավի վրա և, բռնելով նրա թևերից, ներս քաշեց։

— Ե՛կ այստեղ, ցանցառ պառավ։

Պառավը սարսափած, դողդողալով, մեջքից ծռված, ակամա հետևեց նրան։

— Քանի՞ տարեկան ես։

— Խելքդ դրուստ տիղը չէ, երազ ես տեհի։

— Ասիր տեսնեմ, յոթանասուն տարեկան կենդանի, ի՞նչպես ես ապրել այդքան ժամանակ, հը՛մ, չե՞ս զզվել կյան-

քից, հը՛մ, ասի՛ր,— կրկնեց Քամալյանը, բոլոր ուժով թափահարելով պառավին։

— Իծանիրդ...

— Սուս, սուս, դուրս եկ, գնա, քունս տանում է, դո՛ւրս։

Նա պառավին հրեց սենյակից դուրս և դուռը փակելով, պառկեց երեսի վրա անկողնում։

— Ի՞նչ եմ անում, ի՛նչ եմ անում,— կրկնում էր նա անդադար։ Եվ մի ամբողջ ժամ նա մնաց այդպես պառկած։ Վերջապես, քունը հաղթեց նրան։

Առավոտյան պառավ Քեթևանը, վախվխելով դուռը բաց արավ և մի ոտը սենյակի ներսումը, մյուսը դրսում, հարցրեց.

— Վո՞ւնց իս։

— Գլուխս ցավում է, տաքացրել եմ, դեդի, մի հաքիմ կանչել տուր,— պատասխանեց Քամալյանը, վերմակով ծածկելով իր գունաթափ դեմքը և երեսը շուռ տալով պատին...

ՖԱԹՄԱՆ ԵՎ ԱՍԱԴԸ

Պատկեր

I

Շահարի-Շիրվանի ցերեկվա հեղձուցիչ տոթից թմրած կյանքն իրիկնադեմին կենդանություն էր ստացել։ Բազարում տիրում էր անասելի աղմուկ։ Մրգավաճառները, կանաչեղեն և կաթ ու պանիր ծախողները, ձայն ձայնի տված, արևելյան զարդարուն խոսքերով գովաբանում էին իրենց ապրանքը։ Վաճառականների և արհեստավորների խանութները փակվում էին, հայ ու թուրք վերադառնում էին տուն։

Հեռվում ղողանջում էին քրիստոնեական եկեղեցիների զանգերը, իսկ Ջումա-մասճիթի մինարեթի գագաթից մոլլա Խալիլի աղանի[1] սուր ելևէջները քարասիրտ մուսուլմանի սիրտն անգամ բորբոքում էին աստվածային հրով։ Բարեպաշտները խորին ջերմեռանդությամբ սալավաթ[2] էին քաշում իրենց երեսին, նամազ[3] էին անում և, մասճիթների ավազան-

---

[1] Մոլլայի կոչը—մուսուլմաններին աղոթքի հրավիրելը։

[2] Սալավաթ նշանակում է այն, երբ մուսուլմանները Մահամմեդին հիշելիս, իրենց երեսը աջ ձեռքով շփում են։

[3] Աղոթք։

ների մոտ կկոչած, դեաստամազ[1] էին անում։ Ամենքը փառաբանում էին մեն մի ալլահին և նրա մեն մի մարգարեին։

Մոայլ և անտարբեր էր նույն ժամին մի երիտասարդ անցորդ։ Եվ նրա մոայլությունը չէր նմանվում ոչ տաժանակյաց մուրացկանի թշվառությանը, ոչ նավը խորտակված վաճառականի թախծությանը և ոչ հինգ նամազից մեկն էլ չկատարած մուսուլմանի անձկությանը։

Նա անցնում էր միջին բազարով, բարձրանում էր դեպի քաղաքի Իմամլու կոչված թաղը։ Ոչ ոք և ոչինչ չէր գրավում նրա ուշադրությունը։ Եվ նրա ուղղափառ մուսուլմանական կգացումները չէին վրդովվում երևելի դարվիշ Ահադի դեմ, որ, հայերին շողոքորթելու համար, իր ոգևորիչ ձայնով երգում էր.

«Հիսուսն իջավ վայր — երկնքից, նա լուր բերեց — այն աշխարհից... (Իսա գյալդի — սամավաթտան, խաբար վերդի — գիամաթտան)...

Երիտասարդը գնում էր մոլոր քայլերով, գլուխը կրծքին թեքած և աջ ձեռը խրած մեջքի արծաթյա գոտիի մեջ։ Կասես նա անբախտ Մյաջնունն էր, որ իր հոր տունը թողած, դիմում էր Արաբիայի ամայի և հրակեզ դաշտերը, երգելով իր սերը Լեյլիին։ Նա նման էր և՛ մեծ մարգարեի սիրեցյալ Քեյբին, որ երևակայության օվկիանոսը խորասուզված, հորինում էր մինն այն դրախտային երգերից, որոնցով արաբ շահիրը[2] ախորժանք էր նվիրում մարգարեից մարգարեի սրբազան լսելիքին։

Անցավ նա բազարը, անցավ Իմամլուի կեսը և, ծռվելով մի նեղ փողոց, կանգ առեց մի կիսավեր տան առջև։ Փողոցում մարդ չկար, միայն հեռվում խաղում էին մի խումբ երեխաներ և մի ոտաբոբիկ, կիսամերկ մարդ հավաքում էր բաղնիսի պատերից քաշ արած ճերմակեղենը։

Նա հանեց աջ ձեռքը գոտիի միջից, ուղղեց ուղտագույն շուխայի և մահուդյա մեխակագույն կարմիր արխալուղի լայն փեշերը, շփեց նորաբույս, սևաթույր ընչացքը։ Դա մի հսկայատիպ տղամարդ էր։ Շիրվանի հայտնի տղամարդկանցից մեկը, հայտնի իր առնական դեմքով, իր բարձր հասակով, իր

[1] Կվացում։ Մուսուլմանները աղոթելուց առաջ լվանում են իրենց երեսը, բազուկները, ոտները։ Այս արարողությունը անվանում են «դեաստամազ»։

[2] Բանաստեղծ։

վայելուչ կազմվածքով, իր անվեհեր սրտով։ Մի խոսքով, դա սարի-թորփաղցի Ասադն էր։

Ձեռները շուխայի տակ մեջքին դրած, նա երկար ժամանակ մտիկ էր անում դեմուդեմ, դեպի մի փոքրիկ նորաշեն տան մուգ-մոխրագույն դռները։ Նրա մերթ ընդ մերթ հառաչելը, կրակոտ աչքերի արտասվոր փայլն և անհամբեր շարժումները ցույց էին տալիս, որ նա մեկին սպասում է։

Հանկարծ նրա տխրամած դեմքի վրա փայլեց մի ուրախ ժպիտ։ Մուգ-մոխրագույն դռներից մեկը հանդարտ բացվեց, երևաց մի երիտասարդ կնոջ գլուխ, ծածկած մետաքսյա ճութխիով (գլխնոց) և ճակատը զարդարած տաճկական ոսկիների շարքով։

Ասադը թռավ առաջ, մոտեցավ նորաշեն տանը։

Մարդ շատ նուրբ լսելիք պիտի ունենար, որ կարողանար ըմբռնել երիտասարդ կնոջ շշնջյունը։ Այնքան թույլ էր նա, երկչոտ և կցկտուր։

Եվ Ասադի լսելիքն ուներ այդ նրբությունը, ուներ լոկ այդ վարդագույն շրթունքների համար, որ սփռում էին դեպի նա երկնային երջանկության բուրմունքը։ Նա կանգնած էր մուգ-մոխրագույն դռներից հինգ քայլաչափ հեռու, մեջքը տված պատին՝ պատահական անցորդի անհամեստ հայացքից անանկատելի մնալու համար։

Ի՞նչ էին շշնջում նրանք, գիտե միայն Նա, որ քննում է մահկանացուների սիրտն և որի համար գաղտնիք չկա։ Իսկ մենք մեղանչած կլինենք ճշմարտության դեմ, եթե ասենք, թե շշնջյունը տևեց հինգ րոպեից ավելի։

Մուգ-մոխրագույն դռները կրկին փակվեցին, և տաճկական ոսկիներով զարդարված գլուխն անհայտացավ, տանելով իր հետ Ասադի խորին հառաչանքը։ Նա դարձյալ մնաց միայնակ։ Այժմ նրա դեմքն այլայլված է, աչքերն արյունի հոսանքից կարմրած, իսկ առնական լայն կուրծքը հորդոր շնչառությունից ուժգին բաբախում է։

— Ամենակարող աստված, տո՛ւր ինձ համբերություն,— արտասանեց նա ինքն իրեն։

Եվ այս խոսքերը չկարողացան թափանցել ամուր փակված դռներից ներս։

Նա դարձյալ սպասում էր, բայց, ավա՛ղ, մուգ-մոխրագույն դոները հետզհետե մթնանում էին և ոչ բացվում։ Նա, քաղցած գայլի պես, քթի տակ խուլ մռնչալով, ամայի փողոցում շրջում էր ետ ու առաջ։

Մութը թանձրանում էր, կապտագույն երկնքում փայլում էին պայծառ աստղերը, տիրում էր թախծալի լռություն, բազարը խաղաղվել էր։

Հեռվից լսվեց քայլերի ձայն, փողոցի անկյունում երևաց մի մթին պատկեր։ Ասադը շարունակ անցուդարձ էր անում։

Պատկերը փողոցի մեջտեղով դանդաղությամբ շարժվում էր առաջ։ Ասադը չէր լսում նրա ոտների ձայնը։ Պատկերը բոլորովին մոտեցավ։ Նույն վայրկյանին, երբ Ասադը ետ դարձավ, նրա ծխախոտի կրակի աղոտ ճառագայթը լուսավորեց... միջահասակ, գեր մարմնով, կարճ և հինայած միրուքով մի մարդու։ Մարդը, Ասադին ճանաչելով, զայրացավ և տեղն ու տեղը մնաց բևեռված։

Ո՞վ էր նա...

II

Յոթն անգամ լուսինը շրջան էր գործել այն օրից, երբ Ասադի աչքը կպավ իմամլուցի մոլլա Ղանիի աղջկան, Ֆաթմային։ Առաջին անգամ նա տեսել էր նրան Սարի-Թորփաղ թաղում։ Ֆաթման հյուր էր իր Բագիմ անունով քրոջ մոտ, որ սարի-թորփաղցի խալիլ աղայի կինն էր։

Նույն պահին, երբ Ֆաթման իր քրոջ տան բակում առանց շալի նստած էր, Ասադն իրանց տան կտրում աղավնի էր թոցնում։ Նա տեսավ Ֆաթմային, և իսկույն նրա սիրտը կրակ ընկավ։

Եվ ո՞ր պարսիկը անտարբեր կմնար, եթե մի վայրկյան տեսներ Ֆաթմային — նրա սաթի պես սև աչքերը, կամարակապ ունքերը, ճակատի կոլորիկ խալը, երկայն թերթերունքները, կարմիր թշերը, սպիտակ, լիք-լիք կոկորդը, մանավանդ բարակ ղանաուզ շապկի տակ թաքնված այն երկու նոները, որ շախ-շախ դողդողում էին, երբ Ֆաթման սիգաճեմ քայլում էր։

Այդ օրից սկսած Ասադը գիշեր ու ցերեկ տանջում էր իր մորը, որ սա անպատճառ հարսնախոս գնա Ֆաթմայի մոր մոտ։ Պառավ Նուրջրհանը մի անգամ փորձեց Բագիմի մոտ ակնարկություն անել, բայց մի այնպիսի պատասխան ստացավ, որ ստիպվեց այլևս չխոսել այդ մասին։

Ֆաթման գեղեցիկ էր և բավական հարուստ. շատ բեկեր ու հաջիներ կկամենային նրան կին ունենալ։ Բայց, իբրև վճռված բան, խոսում էին Հաջի-Ալեաքպարի մասին։ Հաջին Իմամլու թաղի ամենաառաջին մարդն էր։ Իսկ ո՞վ էր Ասադը։— Մի հասարակ արծաթագործ...

Բայց նա չհուսահատվեց։ Հաջի-Ալեաքպարի երեք ահագին քարվանսարաների և մեծ անվան դեմ միայն մի զենք ուներ — իր առնական գեղեցկությունն և քաջասրտությունը։ Եվ նա վճռեց այդ զենքի բոլոր ուժով մրցել Հաջիի հետ։

Մի անգամ Ֆաթման դարձյալ իր քրոջ տանն էր։ Ասադը դարանամուտ եղավ իրենց տան կտրում և այնտեղից աչքունքով սկսեց նետեր արձակել գեղեցկուհու սրտին։ Ֆաթման լսել էր նրա անունը, գիտեր, որ նա գեղեցիկ տղամարդ է, քաջասիրտ է և Սարի-Թորփաղի երիտասարդների պարագլուխն — ջահիլբաշին — է։ Ֆաթման տեսավ Ասադին, ծիծաղեց, կարմրեց և փախավ ու մտավ տուն։

Դա բարեգուշակ նշան էր։ Ասադի հույսերն ամրացան։ Բորբոքված սրտով նա շատ անգամ, երբ Ֆաթման երկար միջոց յուր քրոջ տանը չէր երևում, գալիս էր Իմամլու թաղը։ Գալիս էր՝ գեթ հեռվից տեսնելու իր սիրածին, որ գիշերը կարողանա խաղաղ քնել։ Բայց այդ նրան հաջողվում էր ոչ ամեն անգամ. միշտ փողոցը դատարկ չէր լինում և միշտ Ֆաթման — անզգույշ, որ իր գլուխը դոներից դուրս հանի։

Հաջի-Ալեաքպարը Ֆաթմայի և Ասադի այս գաղտնի և առայժմ անմեղ հարաբերությունն իմացավ, մի անգամ էլ ինքն իր աչքով տեսավ Ասադին իրիկնադեմին Ֆաթմայի տան դոների դեմուդեմ։

Նա երդվեց Ասադի հիմար այցելություններին վերջ տալ։ Եվ ահա իրիկնային մթան մեջ պատահմամբ երկու ախոյանները կանգնած էին դեմ հանդիման։

— Քեա՜ֆր,— արտասանեց Հաջի-Ալեաքպարը, աջ ձեռը տանելով չուխայի տակ դեպի մեջքը։

Ասադը լուռ էր։ Եթե մի փոքր լույս լիներ, կարելի էր նկատել այն խորին արհամարհական հայացքը, որ նա ձգեց Հաջիի վրա։ Այնինչ Հաջին, ավելի ու ավելի մոտենալով, վերջապես, բոլորովին կտրեց նրա ճանապարհը։

— Սալեամ մեալիքում[1],— ասաց Ասադը, զսպելով իր հուզմունքը։

Առանց նրա ողջույնին «ալիքիմի սալեամ» պատասխանելու, Հաջին մի քանի քայլ հետ դրեց և խրոխտ ձայնով արտասանեց.

— Վկա է ասված, ես քեզ ճանապարհ չեմ տալ, մինչև չես երդվիլ այսուհետև ոտ չդնել այս փողոցները։

Ասադը հեգնորեն ծիծաղեց։

— Երդվի՜ր, քյա՜ֆր,— կրկնեց Հաջին,— այնուհետև ճանապարհը բաց է, և դու մի անառակ բած։

— Հաջի,— պատասխանեց Ասադը հանդարտ ձայնով,— Ասադն իր կյանքում արյուն չի թափել, չի էլ ուզում թափել։

— Արյո՜ւն,— գոչեց Հաջին կատաղած,— դու ի՛նչ մարդ ես, որ արյուն թափես։ Ի սեր աստծո, նայեցե՜ք,—շարունակեց նա, երեսը մի կողմ դարձնելով, չնայելով, որ փողոցում բացի երկու հակառակորդներից ոչ ոք չկար, —սարի-թորփաղցի մի լկտի երեխա հանդգնում է Հաջի-Ալեաքպարի ձեռքից աղջիկ խլել։ Էյ, ինքն ալլահն իմ ձեռքից մոլլա Ղանիի աղջկան առնել չի կարող, իսկ քեզ պես... շները...

Ասադի արյունը գլխովը տվեց։ Բայց նա տակավին ուժ ունեցավ զսպելու իր կատաղությունն և ասաց.

— Ֆաթման նրան կգնա, ում սիրում է։

— Հա, հա, հա, Ֆաթման սիրում է արծաթագործ Ասադին, հա, հա, հա...

— Աստծուն է հայտնի ... բավական է, Հաջի, երկուսն արդեն ունիս, բավական է, ագահությունը տուն է քանդում, Հաջի։

[1] Մուսուլմանների բարևը։

— Քառասուն կնիկ էլ ունենամ, էլի չեմ թողնիլ, որ Ֆաթմային քեզ նման լրբերը տանեն։

Ասադի համբերությունը հատավ։ Այլևս նա անկարող էր տանել իր հակառակորդի անվայել հիշոցները։

— Հարա՜մ լինի քո գլխին հաջիությունդ, աննամուս,— գոչեց նա կատաղած։

— Ձայնդ կտրի՛ր, քյաֆր... քեռ...

Վերջին բառը չավարտած, Հաջի-Ալեաքպարը մի քայլ ևս ետ դրեց և չուխայի տակից արագությամբ մի ինչ-որ սև բան հանեց։ Ասադը մթան մեջ նշմարեց նրա շարագուշակ շարժումը։ Նա հարձակվեց Հաջիի վրա, բռնեց նրա թևերից և այնպես սաստիկ հրեց, որ նա, տասը քայլ հեռու մղվելով թավալվեց գետնին։ Մինչ նրա ուշքի գալը, մինչ «օգնեցե՛ք, օգնեցե՛ք» գոռալով բարձրանալը, Ասադը վերցրեց գետնից ատրճանակը, ձգեց դիմացի տան կտուրը և, քայլերն ուղղելով դեպի վերև, անհայտացավ խավարի մեջ։

III

Դարձյալ երեկո էր, դարձյալ մուեզինները աղան էին տալիս և քրիստոնյաների զանգերը հրավիրում էին աստծո տուն հավատացյալներին։ Քաղաքի արևմտյան կողմից փչում էր մի հով զեփյուռ։ Եվ որքան դուրեկան լիներ այդ զեփյուռը, կարծես, նա գաբրիստաններից[1], մեռելների այդ մռայլ աշխարհից, հիշեցնում էր մահու սոսկալի ձայնը.

«Մի՛ հպարտանար, ո՛վ ինսան[2], վասն զի քո վերջին ապաստարանը այստեղ է»։

Իսկ ինսանը հպարտանում էր, իմամլուցիները — նամանավանդ։

Հաջի-Ալեաքպարի բարձրաշեն տան առջև խմբվել էին թվով մոտ տասը պարագլուխ — երիտասարդներ։ Մեջտեղ կանգնած էր ինքը Հաջին, ուսերին ձգած դեղնագույն մեռաք-

[1] Գերեզմանատուն։
[2] Մարդ։

այս աբան և ձեռին բռնած մի երկայն կարմրակեղև չիբուխ։ Երիտասարդները, ձեռները գոտիների վրա դրած, խորին պատկառանքով լսում էին Հաջիի հետևյալ տրամաբանությունը.

— Ամեն մի մարդ յուր թաղի պատվի նախանձախնդիրը պիտի լինի։ Մենք, իմամլուցիներս, մեր պապերի պապերից սկսած, հպարտ և պատվախնդիր ենք եղել, այժմ նամանավանդ պիտի լինենք։ Հայտնի է աստծուն, որ արյունս երակներիս մեջ բորբոքվում է, երբ հիշում եմ այն քյաֆրի տղա քյաֆրի այս փողոցներն այցելելը։ Թքեցեք Հաջի-Քյարիմի որդի Հաջի-Ալեսքպարի երեսին, որ նա՝ այն երեկո լրբի փորը ծխով լցրեց։ Բայց ի՞նչ անեմ, անիրավը նապաստակի նման փախավ ձեռքիցս։ Ես, բարկացած, ատրճանակս ձգեցի կտուրը։ Վերջապես, անցածն անցել է, «ետևից արձակողը գարշապարին կխփե»,— ասում է առածը։ Այժմ պատիվը ձերն է, սարի-Թորփախցի տղայի մեկը հանդգնում է ձեր թաղի անունը խայտառակել, ձեր պարտքն է նրա ոտը կտրել այստեղից։ Վալլահ, բիլլահ, Հաջի չլինեի, այս բոպեիս, մետաքսյա աբաս դեն ձգելով, մի փայտ վերցնելով, մեն միայնակ կգնայի ամբողջ Սարի-Թորփաղի դեմ։ Բայց ամոթ է, ձեզ պես երիտասարդները կանգնած, ինձ չպիտի թողնեք, որ միրուքս անպատվեն։ Ճշմարի՞տ եմ ասում։

— Այո, այո՛, Հաջի, ինչ ասել կուզի, որ իստակ ճշմարիտ եք հրամայում,— ասաց խորոված ծխող Հեյբաթը, որի մի աչքը դուրս էր եկել Մահառամի կռվի ժամանակ։

— Լսո՞ւմ եք, ջահիլներ, ամո՞թ մեր շիր ու շնորհքին,— մեջ բերեց Մեյթին, Իմամլուի ամենալավ փայտ խփողներից մեկը։

Թռչնորս Ասկյարը, որ երևելի քար գցող էր և երկու մարդու աչք էր հանել, մեկի էլ ոտը գոսացրել, ասաց, թե հետաձգելը երկչոտություն է, թե հենց այսօր իսկ պիտի թաղակռիվ սկսել Սարի-Թորփաղի հետ։ Այս միտքը բոլորն ընդունեցին։ Բայց Հաջին չէր շտապում. նա, պարագլուխ երիտասարդներին մեկ-մեկ ծխախոտ նվիրելով, ասաց.

— Մի՛ վռազեք, բոլորովին մի վռազեք, այսօր չլինի— վաղը լինի, զանազանություն չունի։ Բայց մի բան կա։

— Հրամայեցե՛ք, Հաջի, հրամայեցե՛ք,— ասացին միաբերան բոլոր պարագլուխները, ձեռները կրծքներին դրած, գլուխ տալով նորին հաջիությանն։

— Դիցուք հենց հիմա թաղակռիվ է,— շարունակեց Հաջին, չիբուխը բերնից հանելով և միրուքը շփելով,— իմ կարծիքով, մեր կռիվը մի կոպեկի արժեք չի ունենալ, եթե այդ կռվից անվնաս դուրս կգա ինքը, սկզբնապատճառը։

— Ասա՞դը,— հարցրին միաբերան բոլորը։

— Այո՛, Ասադը,— պատասխանեց Հաջին,— երդվում եմ Ալիի սուրբ անունով, որ ձեր սրբազան պարտքն է նրան ոչընչացնել, ինչպես լինի, ոչնչացնել։ Հեյբա՛թ, նախ և առաջ փայտդ նրա գլուխը պիտի ջարդ ու փշուր անի։ Ասկյա՛ր, քար ձգելիս, նշանակ պիտի վերցնես նրան, նույնպես և ձեզանից յուրաքանչյուրը։ Լսո՞ւմ եք։

— Բա՛ր չեշմա, բա՛ր չեշմա (աչքիս վրա), — ասացին ամենը մի առ մի, ձեռները դնելով իրենց աչքերի վրա և գլուխ տալով Հաջիին։

— Կեցցե՛ք, ջահիլներ, կեցցե՛ք, դուք իսկական տղամարդիկ եք,— հավանեց Հաջին գոհ սրտով։— Հիմա շնորհ արեք գնանք մեր տուն չայ խմելու։ Այնտեղ մենք կխորհրդակցենք կռվի մասին։

Պարագլուխները ամաչելով, քաշքշվելով, միմյանց երեսին նայելով, հետևեցին Հաջի-Ալեսքպարին և մտան նրա տունը։

IV

Առավոտ էր։ Սարի-Թորփախցի ինը-մատնանի Մահմուդը, իր խանութի առջև կանգնած, Շիրազի պիսակավոր մորթուց կարած մի գդակ էր թրջում և ճիպոտով ծեծում։ Այդ միջոցին իմամլուցի գդակ կարող Մեյթին դիտմամբ անցավ նրա առջևով։ Մահմուդն անգիտակցաբար մի քանի կաթիլ ջուր սրսկեց նրա վրա։ Մեյթին կանգնեց և բերանից բաց թողեց մի շատ անվայել հիշոց։ Մահմուդը ներողություն խնդրեց։ Մեյթին, որ երեկոյան Հաջի-Ալեսքպարին և իր ընկերներին

խոսք էր տվել կռվի առիթ տալու, մի ավելի սուր հիշոց արտասանեց Մահմուդի երեսին։ Մահմուդը նամուսով մարդ էր, Մեյթիին պատասխանեց ըստ կարգին և փոխարենը վերջինից ստացավ մի պինդ ապտակ։

Իմամլուցիները պատրաստ էին, մի վայրկյանում թափվեցին Մահմուդի վրա։ Մյուս կողմից եկան մի քանի սարի-Թորփաղցիներ, և սկսվեց մի թեթև կռիվ։ Իսկույն գդակ կարողների խանութները փակվեցին։ Ծեծված, ջարդ ու փշուր եղած սարի-Թորփաղցիները շտապեցին իրենց թաղը։ Ճանապարհին նրանք անցքը պատմեցին արծաթագործ Ասադին, որ կռվի սկզբնապատճառն էր։

Ասադը կռվելու տրամադրություն չուներ, բայց պարագլուխ էր, պարտավոր էր միջամտել յուր ընկերների վիրավորված պատիվը վերականգնելու համար։

Կայծակի արագությամբ ամբողջ բազարում լուր տարածվեց, թե քաղաքի Իմամլու և Սարի-Թորփաղ թաղերը ոտքի են կանգնել միմյանց դեմ, տեղի պիտի ունենա կատաղի կռիվ։ Ոչ միայն կռվող թաղերի բնակիչները, այլև շատերը մյուս թաղերից կողպեցին իրենց խանութները եթե ոչ կռվին, գոնե հանդեսին մասնակցելու համար։ Դա շամախեցիների հնավանդ սովորությունն է։

Հաջի-Ալեաքպարը, մեծ փողոցի անկյունում կանգնած, խրախուսում էր երիտասարդներին, որոնց թվումն էր և՛ Ֆաթմայի եղբայր Հաշիմը։ Նախ, իրենց չուխաները հանած և թևերի վրա իբրև վահան փաթաթած, երկու կողմերից ասպարեզ մտան պատանիները։ Շատ չանցած՝ մեջ մտան մեծերը, և թաղակռիվը սկսվեց։

Քաղաքի միջին շերտը ծածկվեց խուռն ամբոխով։ Ներկա էին և՛ քրիստոնյաները. հեռվում հավաքված կամ բարձր կտուրների վրա կանգնած, նրանք ականատես էին, թե ինչպես երկու արյունակից և կրոնակից համայքներ աշխատում են միմյանց արյունը թափել։

Կռիվը տեղի ուներ միջին, ամենաընդարձակ փողոցում։ Հազարավոր քարեր երկու կողմից տեղում էին կռվողների գլխին։ Բոլորը զինված էին երկայն փայտերով, բայց «փայտակռիվը» դեռ չի սկսվել, որովհետև ախոյանները տակավին

հեռու էին միմյանցից։ Կոտրատվող ապակիների ղրնգոցը, ոտների տրոփյունը, կանանց և մանուկների ճիչը, ջահիլների վայրենի աղաղակները քանի գնում սաստկանում էին և ահռելի դառնում։

Մի քանի պոլիցիականներ միջամտեցին, որ կռվողներին բաժանեն, բայց, փայտի մի քանի հարվածներ ստանալով, ետ մղվեցան և փախան, մտան հանդիսականների մեջ։ Անզոր անցավ և ազատախալների (ծերունիների) խրատն ու սպառնալիքը։

Թոչնորս Ասկյաբն իր գնդակի նման արձակած քարերով արդեն երկուսի կուռը թուլացրել էր և փայտը ձեռից գցել։

Խորոված ծախող Հեյբաթը կատաղի դռռում էր, փայտը գարկելով գետնին, չուխա վահանը բարձրացնելով և վեր ու վար թռչկոտելով։

Հանկարծ Իմամլուն թնդաց, գդակ կարող Մեյթին, Շիրազի փափախը աչքերին քաշելով, կարկտի պես թափվող քարերի տակ վազեց առաջ։ Նրան հետևեցին Հեյբաթն ու Ֆաթմայի եղբայր Հաշիմը։ Հակառակ կողմից, ավելի կատաղի գոռալով, վազեց ընդառաջ գդակ կարող Մահմուդը, որ Մեյթիից ապտակ էր ստացել։

Փայտի կռիվը սկսվեց։

Օդի մեջ ֆոֆռում էր մի կարմիր աստառով չուխա։ Ամենի հայացքները հառված էին նրա վրա, ամենի ուշադրության կենտրոնը նա էր։ Նա գոռում էր առյուծի պես, և նրա ձայնի դղրդոցը տարածվում էր հեռու ու հեռու։

Իմամլուն գրոհ տվեց, Սարի-Թորփաղը ետ մղվեց։ Ընկան մի քանի վիրավորվածներ։ Կանանց ճիչը տատակացավ. մայրերը ողբում էին, հայրերը անիծում իրենց փուչ զավակներին։ Թիֆա՛ն էր։

Եվ այս բոլորն ինչո՞ւ։— Մի աղջկա համար։ Բայց ո՞ւր էր նա, ի՞նչ էր անում այդ սարսափելի բոպեին։

Ահմադ աղայի բաղնիսի կտրում հավաքված էին մի խումբ կանայք և, զմբեթների հետևում կուչ եկած, դիտում էին կռիվը։ Ամենից առաջ, կտուրի ծայրում, աներկյուղ, համարձակ կանգնած էր Ֆաթման, այո՛, ինքը Ֆաթման։ Ախ, լավ է, որ մայրերը չգիտեին, թե նա է կռվի բուն պատճառը,

եթե ոչ պատառ-պատառ կանեին նրան իրենց սիրեցյալ որդիների համար։ Աշխատում էին Ֆաթմային հետ քաշել, չէին կարողանում։ Եվ ո՞վ կարող էր, քանի-որ անհաղթելի գոյությամբ նրա ուշք ու միտքը, հոգին ու սիրտը բևեռված էին մի կետի վրա... կարմիր չուխան։

Ահա ամենը փախան, ասպարեզ բացվեց և մենմենակ մնաց կարմիր չուխան։ Իմամլուցիները սրընթալով վազեցին դեպի նա, ամենից առաջ Հեյբաթը, Մեյթին ու Հաշիմը։ Արդյոք, կփախչի՞ կարմիր չուխան, թե՞ կդիմանա միայնակ այդ կատաղած ամբոխին. արդյոք, Հաշիմը կենդանի դուրս կգա՞ այդ կռվից։ Ինչո՞ւ Ֆաթմայի եղբայրն էլ է մասնակցում. եթե նա չլիներ, այն ժամանակ թող բոլոր իմամլուցիները կոտորվեին և մատաղ դառնային կարմիր չուխայի մի մազին։

Մինչ գեղեցիկ Ֆաթման տանջվում էր այս մտքերից, կռիվը սաստկանում էր ու սաստկանում։ Սարի-Թորփաղցիները, օգնություն ստանալով, հարյուրավոր բազմությամբ վազում էին առաջ։ Հեյբաթը, Մեյթին և Հաշիմը շրջապատեցին կարմիր չուխային։ Ֆաթման ակամա ճչաց, որպեն վտանգավոր էր։ Նա տեսնում էր, թե ինչպես իր եղբայրը, Հաշիմը փայտի հարվածներ է տալիս կարմիր չուխայավորի գլխին։ Մյուս կողմից խփում էին Հեյբաթն և Մեյթին։ Ֆաթման նկատեց, որ կարմիր չուխան ուշադրություն չի դարձնում Հաշիմի վրա և միայն պատասխանում է մյուս երկու ախոյանների հարվածներին։ Անշուշտ նա խնայում է Հաշիմին։ Ֆաթմայի սիրտը թրթռաց. այսպիսի վեհանձնություն միայն Ասադը կարող է ունենալ, ուրիշ ոչ ոք։

Մեյթիի ձեռից փայտը վայր ընկավ, և նա ինքը փռվեց Ասադի ոտների տակ. նույն վիճակին արժանացավ և՛ Հեյբաթը։ Կեցցե՛ կարմիր չուխան։ Նույն վայրկյանին Ասադի ճակատում փայլեց մի կարմիր գիծ, որ, վայր իջնելով, արագարագ ծածկեց նրա ամբողջ երեսն ու կուրծքը։ Դա թռչնորս Ասկյարի քարի հետքն էր։ Ֆաթմայի ոտները թուլացան։ Բայց ահա Ասադը, մի քիչ տատանվելուց հետո, գրպանից հանեց մի սպիտակ բան, փաթաթեց ճակատին և արյունաշաղախ երեսով, ավելի կատաղի զորությամբ թռավ առաջ։

Իմամլուն փախավ։ Ֆաթման բնազդմամբ հետ նայեց.

բաղնիսի կտուրը դատարկվել էր, կանայք փախել էին։ Նա մտիկ արեց ներքև. սարի-Թորփաղցիները մոտենում էին ու մոտենում։ Ասադի փայտը որին դիպչում էր՝ նա թավալվում էր գետին։ Հանկարծ նա չքացավ։ Ֆաթմայի աչքերը մթնեցին. սպանեցի՞ն, արդյոք, նրան։ Նա բարձր ձայնով օգնություն կանչեց և նստեց կտուրի ծայրում։

Մի քանի մարդիկ փողոցից մի երկայն սանդուղք դրեցին բաղնիսի պատին։ Ֆաթման տեսավ, որ ներքևից Հաջի-Ալեաքպարի ծառաները բարձրանում են վերև։ Նրանք արդեն հասել էին սանդուղքի ծայրին և աղաչում էին Ֆաթմային, որ մոտենա, բայց նույն վայրկյանին սանդուղքը նրանց ոտների տակ դողաց և ճռճռալով ընկավ փողոց, իր հետ տանելով Հաջիի ծառաներին։

Այդ պահին Ֆաթման զգաց, որ հետևից երկու ձեռներ գրկեցին իրան։ Ինչպես հանկարծակի որսված մի ճնճղուկ, նա մի վայրկյան ճիգն արեց դուրս պրծնելու երկաթե ունելիքի պես ամուր սեղմած ձեռներից։ Սակայն ուժերը դավաճանեցին նրան, և նա, թուլացած, անձնատուր եղավ անհայտ ձեռների զորությանը...

V

Եթե ոչ ոստիկանությունն և աղասխկալները, գոնե բնությունը կարողացավ կռիվը ընդհատել։ Վրա հասավ իրիկնային մութը, ջահիլների կատաղությունը շիջավ։ Փոքր առ փոքր կռվին անմասնակից հանդիսականների բազմությունը ցրվեց, կռվողները հոգնած, ջարդուփշուր եղած, հետ քաշվեցին։

Հաղթող հանդիսացավ Սարի-Թորփաղը, բայց Իմամլուն պարծենում էր արծաթագործ Ասադի կռվի ասպարիզից անհայտանալու լուրով։ Երկու կողմից վիրավորվել էին քսանուհինգ մարդ, որոնցից երեքի դրությունն անհուսալի էր։

Ջահիլները խումբ-խումբ փողոցների անկյուններում հավաքված, միմյանց հաղորդում էին կռվի մանրամասնությունները։ Հաջի-Ալեաքպարին հավատացրին, թե արծաթագործ

Ասադը սպանվել է կամ գոնե վիրավորվել։ Հաջին հրամայեց ջահիլներին շարքաթ բաժանել։

Մինչ նրանք խմում էին շաքարախառն ըմպելիքը, մալլա Ղանիի տնից լսվեց հուսահատ աղաղակների ձայն, և մի կին, մազերը փետելով, ոտաբաց, գլխաբաց վազեց փողոց։

Դա Ֆաթմայի մայրն էր։

— Մարդի՜կ, աղջիկս չկա, մարդի՜կ, աղջկաս փախցրել են,— գոռում էր խեղճ Զեյնաբը, ողբալով յուր գեղեցիկ գլուխը կորուստը։

Այժմ միայն պարզվեց կռվի ասպարեզից Ասադի անհայտանալու պատճառը։ Ուրիշ ո՞վ կարող էր Ֆաթմային փախցրնել, եթե ոչ նա։

Իմամլուցիների գլխին սառն ջուր մաղվեց, ամենքն ամոթից չիմացան ուր թաքցնեն իրենց գլուխը։

Իսկույն ջահիլների միջից քսանի չափ կամավորներ առաջ եկան, խոստացան անպատճառ գտնել Ֆաթմային և տուն բերել։ Բայց դրա համար անհրաժեշտ էր մուտք ունենալ Սարի-Թորփաղ։

Մի քանի աղասախկալներ գնացին և Թշնամի բանտի աղասախկալների հետ ժամանակավոր հաշտության դաշն կապեցին, որ հակառակորդները իրավունք ունենան անարգել անցնել միմյանց փողոցները։

Մեծ պետությունների պատերազմն յուր կանոններն ունե, Թուրքերի Թաղակռիվն էլ ունե յուր կանոնները, չգրված, այլ պապերից ավանդաբեն հարգված և պահպանված։ Թշնամությունը նրանց մեջ գործով երևան է գալիս միայն կռվի ասպարիզում, խաղաղության և զինադուլի ժամանակ հակառակորդները գեթ արտաքուստ հարգում են միմյանց։

Սակայն որոնող ջահիլները Ֆաթմային Ասադի տանը չըգտան և ոչ էլ իրան, Ասադին։ Որտեղ էին նրանք,— իմացողները չասացին, չիմացողները ուրախացան, լսելով իրանց պարագլխի նոր հերոսությունը։ Իմամլուցիների պատիվը պահանջում էր, ինչպես և իցե, այն գիշեր ևեթ գտնել Ֆաթմային։

— Ով ինձ սիրում է, թող հետևի ինձ, — գոչեց գունաթափված Հաշիմը։

Նա իսկույն վազեց տուն, իր ձին թամքեց, գցեց ուսովը հրացանը, կապեց մեջքին ատրճանակն ու խանչալը և դուրս եկավ։ Քսան կամավորներից նրան հետևեցին միայն տասնուչորսը։

— Ադա, դուք էլ գնացե՛ք,— հրամայեց Հաջի-Ալեաքպարը յուր երկու արաբ ծառաներին։

Սևամորթ խափշիկները ոստոստալով վազեցին տուն, մի-մի ահագին փայտ վերցրին՝ կոլորակ, գնդականման, բևեռոտ ծայրերով և մտան կամավորների շարքը։ Խումբը բաժանվեց երկու մասի. մեկին պիտի առաջնորդեր Հաշիմը, մյուսին՝ ղումարբազ[1] Հասանը։ Վերջինը քաղաքի բոլոր խուլ ու մթին անկյունները լավ ուսումնասիրած էր, քսան տարի շարունակ «երեք-վեգ» (ուչ-աշրդ) ասված խաղը խաղալով Շամախու բոլոր սրիկաների հետ։

Ամեն ինչ պատրաստ էր։ Ղումարբազ Հասանն իր խումբն առաջնորդեց քաղաքի դեպի ստորին մասը —Սարդարի այգու կողմը, իսկ Հաշիմը համոզված էր, որ Ասադը Ֆաթմային տարել է կամ խաների գմբեթաշեն շիրիմների կողմը, կամ թթենիների այգիները։

Ամբողջ գիշերը Իմամլու թաղում տիրում էր մի խուլ աղմուկ։ Շատերն անքուն նստեցին փողոցում, իրենց տան դռների առջև, որ տեսնեն՝ ջահիլների արշավանքն ինչ ելք կունենա։

Անքուն էր և Հաջի-Ալեաքպարը։ Եվ նրա անքնությունը միայն մի պատճառ ուներ. նրա պատիվը և անունը չարաչար վիրավորված էին. նա ամբողջ թաղի դժգոհության և խուլ տրտունջների առարկան էր դարձել։ Գործի էությունն ամենին հայտնվել էր, ամենը գիտեին, որ կռիվ հորդորողը նա է եղել և ինչից դրդված։

— Անե՛ծք քեզ, չար Սադայել, անե՛ծք քեզ, չար Սադայել։ Լահ իլլահ, իլլալլահ, Մահամմադի Ռասուլ Ալլահ,— կրկնում էր նա անդադար, հուզված անցուդարձ անելով իր տան պատշգամբի վրա։

Հաջիի տվագ կիները, Գյուլնիզարը, ամուսնուց թույլտվու-

[1] Խաղորդ. խաղամոլ — игрок։

թյուն ստացած, գնացել էր յուր ծնողների մոտ գիշերելու։ Նա սառնարյուն չէր կարող այդ գիշեր մի հարկի տակ մնալ այն մարդու հետ, որ երկրորդը բավական չհամարելով, ուզում էր երրորդին ևս բերել և այն էլ այդպիսի խայտառակությամբ։

Կեսգիշերից անց լուր տարածվեց, թե Ֆաթմային գտել են և բերում են։ Արթունները քնածներին ևս արթնացրին, և ամենը, դուրս թափվելով, դիմեցին մոլլա Ղանիի տան կողմը։ Լուրը սուտ էր։ Վերադարձել էր ղումարբաղ Հասանն յուր խմբով և պատմում էր, թե քաղաքի ստորին կիսի բոլոր անկյունները պտտել է, Ասադի և Ֆաթմայի հետքն էլ չկա։

Հաշիմի խումբը դեռ չեր վերադարձել։ Նրա մայրն ընկավ Հասանի ոտներին, աղերսեց, որ սա յուր խմբով օգնություն հասնի յուր որդուն։ Ջահիլներից մի քանիսը, սաստիկ հոգնած լինելով, գնացին քնելու։ Նրանց փոխարեն դուրս եկան ուրիշ կամավորներ, և Հասանը ուղեկիցների մեկուկես անգամ ավելի թվով արշավեց վերին կողմը։

VI

Վաղուց Ասադի գլխում միտք էր ծագել Ֆաթմային փախցընելու, եթե խաղաղ միջոցով ձեռք բերելը չհաջողվեր։ Անակնկալ կռիվը խորտակեց նրա վերջին հույսը. նա գիտեր, որ կռվից հետո այլևս անկարելի էր սպասել, որ Ֆաթմայի մայրն ու եղբայրն և մանավանդ Հաջի-Ալեաքպարը որևէ զիջողություն անեն։

Ուրեմն պետք էր դիմել ծայրահեղ միջոցի։ Հենց որ կռիվը սկսվեց, Ասադը թամքեց յուր նժույգն և վերցրեց երկփող հրացանը, ղարաբինա ատրճանակը և դաղստանցի Թեյմուրի շինած «յափունջի կիսող» խանչալը։ Այս բոլորը նա հանձնեց գիժ Բեանդալիին և, մի մանեթ բաշխելով, պատվիրեց, որ հեռվից հետու հետևե նրան կռվի ժամանակ։

— Եթե հարցնող լինի, ոչինչ չպատասխանես, գիտե՞ս,— հրամայեց նա գիժ Բեանդալիին, որ իսկապես պատասխանելու ընդունակություն էլ չուներ։

Յուր հանդուգն մտադրությունը նա հայտնեց ամենամոտիկ ընկերներին և խնդրեց, որ օգնեն ձեռնարկությանը։

— Ուրախությամբ կյանքներս կտանք,— ասացին հավատարիմ ընկերները, գովելով Ասադի հերոսությունը։

— Դուք միայն կռվի ժամանակ,— պատվիրեց Ասադը,— աչք գցեցեք կտուրներին և Ֆաթմային ցույց տվեք ինձ։ Մնացյալն իմ գործն է։ Դուք խոմ ճանաչո՞ւմ եք, տեսել եք նրան քրոջ տունը գալիս։ Նա անպատճառ դրսում կլինի...

Այս պայմանադրությունից հետո Ասադը թռավ կռվի ասպարեզը։ Նա ինքն ամենից առաջ տեսավ Ֆաթմային։ Հենց որ սարի-թորփաղցիները գրոհ տվեցին, հենց որ Մեյթին ու Հեյբաթը հաղթվեցին, նա, կռիվը տարած համարելով, վազեց Ահմադ աղայի բաղնիսի ետևը, գտավ ճանապարհն և բարձրացավ կտուր։ Նա հրեց և ձգեց մի կտուրից մյուս կտուր ընդդիմադրող բաղնիսապանին, վազեց և... գիտենք ինչ արավ։

Օրն արդեն մթնել էր, երբ Ասադը, յուր թանկագին կողոպուտը ձիու վրա դրած, հասավ սարի-թորփաղցի Հաջի Բախիշի այգին։

Այդեպան քեալբալահի Աբդուլլան շատ շար ու բարի տեսած, կյանքի բովով անցած մի փորձառու ծերունի էր։ Նա ճանաչում էր Ասադին և միշտ տեսնելիս մտաբերում էր նրա հորը, որի հետ էր անցուցել յուր փոթորկալից երիտասարդությունը։

— Տղա, այդ ի՞նչ է,— հարցրեց նա զարմացած, տեսնելով Ասադի երեսն արյունոտ, գլուխը փաթաթած և գրկում մի անշնչացած աղջիկ բռնած։

Ասադը համառոտ պատմեց եղելությունը, հինավուրց «իգիթը» (քաջը) հրավիրեց նրան իջնել ձիուց ու յուր թանկագին կողոպուտի հետ թաքնվել նրա խրճիթում։

Մինչ այդեպանի ջուր բերելը, Ֆաթման ուշքի եկավ, սթափվեց, աչքերը բաց արեց և կրծքից արձակեց մի խորին հառաչանք։

— Ես եմ, Ֆաթմա, մի՛ վախենար, — խրախուսեց Ասադը մեղմ և քնքուշ եղանակով, որքան թույլ էր տալիս նրա կոշտ ձայնը։

Ֆաթման սարսափած ոտքի կանգնեց և զզզված մազերով, գունաթափ, ձեռները գլխին խփելով, բացականչեց.

— Վա՛յ մայր, վա՛յ եղբայր...

Նա վազեց դեպի դուրս։ Ասադը հառաչեց նրան և ձեռներից բռնեց։

— Իզուր մի՛ տանջիր ինքդ քեզ. մայրդ էլ կենդանի է, եղբայրդ էլ, քույրերդ էլ։

— Ինչո՞ւ ես ինձ բերել այստեղ,— գոչեց Ֆաթման։

Ինչո՞ւ, մի՞թե Ֆաթման չգիտե ինչու, մի՞թե կարծում էր, որ Ասադը թույլ կտար նրան ուրիշի կին դառնալու, մի՞թե...

Ֆաթման փոքր առ փոքր հանգստացավ և սկսեց անխոս մնալ։ Իսկապես նրա հուսահատ աղաղակները կիսով չափ արվեստական էին։ Նա հոգով ուրախ էր կատարված անցքին. նրա երևակայությունը վաղուց ստեղծել էր մի այդպիսի հերոսություն Ասադի կողմից, և նա ցանկանում էր իրագործված տեսնել յուր երևակայածը։ Միայն ծերունի այգեպանի ներկայությունը դրդեց նրան մի փոքր աղմուկ բարձրացնել, որպեսզի պատկառելի քեալբալահին չկարծե, թե երիտասարդ մուսուլմանուհին զուրկ է ամոթխածությունից։

Այսպես է Շիրվանի թրքուհու բնավորությունը։

Այգեպանը նրանց համար ընթրիք պատրաստեց — հաց, պանիր, վալունգ և կանաչեղեն։ Ամբողջ օրը թե՛ Ֆաթման և թե Ասադն անոթի էին անցուցել, ուստի այգեպանի համեստ իրիկնահացը նրանց համար Օրուջ-բայրամի «կաթնով փլավից» համեղ էր։

Փոքրիկ խրճիթը լուսավորված էր հնադարյան չիրաղի (ճրագի) աղոտ լույսով։ Ծերունի քեալբալահին աշխատում էր յուր հյուրերին զվարճացնել, պատմելով օրվա եղելությանը համանման դեպքեր յուր կյանքից։ Ասադը սփրթնած էր։ Գլխի վերքը սաստիկ ցավ էր պատճառում, բայց նա աշխատում էր զսպել իրան, թեև մեծ դժվարությամբ։

— Տղա՛, ինչո՞ւ շրթունքներդ դողդողում են,— հարցրեց այգեպանը,— չլինի վերքդ նեղացնում է քեզ։ Սպասի՛ր, սպասի՛ր, թաշկինակի տակից արյուն է հոսում։ Պետք է դեղ դնել, որ դադարի։

Այս ասելով, ծերունին իսկույն յուր հնամաշ արխալուղի աստառից մի կտոր պատռեց, վառեց ճրագի բոցի վրա և ձրգեց գետնին։ Երբ կտորը բոլորովին այրվեց, նա սև մուրը հավաքեց, ստիպեց Ասադին բաց անել ճակատն և մուրը թաշկինակով կապեց վերքի վրա։

Արյունն արդարև դադարեց։

Այս գործողության ժամանակ Ֆաթման օգնում էր ծերունուն, անդադար պատվելով վիրավորյալի շուրջը։

— Այժմ քնիր։— ասաց այգեպանը հայրական խնամքով,— ինչ վերաբերվում է ապագային—վաղը կմտածենք։ «Երեկոյան բարիքից առավոտյան չարիքը լավ է»,— ասում է մեր պապերի խոսքը։

Գիշերը խաղաղ էր, մուգ կապտագույն երկնքում պայծառ փայլում էին աստղերը, հեռվից ժամանակ-ժամանակ լսվում էին քաղաքային գիշերապահների աղաղակները։ Նրանց ձայնակցում էին Սարի-Թորփաղի շները, դունչները դեպի երկինք բարձրացրած, աստղերի վրա պոռալով։ Ծերունի այգեպանը, սնահավատությունից դրդված, վճռեց արթուն մնալ և ամբողջ գիշեր դրսից խրճիթը պահպանել. շների պոռալը վատ բան էր գուշակում։

Ֆաթման շորերը հագին, Ասադի չուխայի մեջ փաթաթված, քնած էր խրճիթի մի անկյունում։

Մյուս անկյունում, այգեպանի անկողնում պառկած էր Ասադը։ Մի ձեռը հենած հրացանի վրա, մյուս ձեռը գլխատակին դրած, նա ոչ քնած էր, ոչ արթուն, այլ մի տեսակ թմրած դրության մեջ էր։ Նրա վերքը դարձյալ ցավում էր և ցավում էր ավելի սաստիկ։ Բայց նա աշխատում էր ոչ հառաչել և ոչ տնքալ Ֆաթմային չզարթեցնելու համար։ Նրա գլխում պտտվում էին ցերեկվա անցքերը։ Մերթ նա երևակայում էր իրան կովի ասպարեզում, աջ ու ձախ շրջապատված թշնամաներից. անձրևի նման տեղացող քարերի տակ, մերթ բաղնիսի կտրում, Ֆաթմային հափշտակելիս և մերթ ձիու վրա, յուր կողոպուտը գրկած, ապշած ամբոխի միջով արշավելիս։

Հետո նա սկսեց խորհել ներկայի և ապագայի մասին։

Ի՞նչ պիտի անե նա վաղը, այգեպանի խրճիթում երկար թաքնվել անկարելի է, անշուշտ իմամլուցիները հանգիստ չեն մնալու, անշուշտ նրանք ամեն ջանք գործ կդնեն Ֆաթմային գտնելու, որ Ասադի արյունի գնով իրենց թաղի պատիվը վերականգնեն։

Նա մտքում վճռեց լուսաբացին վերցնել Ֆաթմային, գնալ մոտակա թուրք գյուղերից մինը, այնտեղ մի մոլլա գտնել և քեաբին անել (պսակվել)։

Շուտով նրա ամբողջ մարմինը սկսեց դողալ։ Նրա ատամներն ակամա զարնվում էին միմյանց, նա ցուրտ էր զգում։ Ցուրտն անցավ, և նրա մարմնին տիրեց թմրեցուցիչ տաքություն։ Նրա միտքը պղտորվեց. նա քնեց կամ, ուղիղն ասած, սկսեց գառանցել։ Ահա Ֆաթման, գլխաբաց, ոտաբաց, ձի է նստում, Ասադին ևս հրամայում է նստել։ Նրանք արշավում են հեռու ու հեռու, անծանոթ տեղեր։ Մի ամայի դաշտում, գետնից երկայն և ձյունի պես ճերմակ միրուքով մի մարդ է դուրս գալիս, մոտենում է, յուր ձեռում բռնած մի կարճ, սև փայտով խփում է նրանց ուսին։ Ֆաթման և Ասադը մի ակնթարթում տեղափոխվում են մի փառաշեն տուն։ Այստեղ սկսվում է նրանց հարսանիքը։ Հյուրերը զվարճանում են, երաժիշտները նվագում են, պարիչները պարում են, ծառաները շարքաթ են բաժանում։

Այդ միջոցին ներս է մտնում մի ոստիկան, հետո երկրորդը, և բոլոր բարեկամ հյուրերը դառնում են թշնամի իմամլուցիներ։ Ֆաթմային հափշտակում են, Ասադի ոտներն ու ձեռները կապում են, երեսը դեպի հետ դնում են մի ավանակի վրա և երեսին մուր քսում։ Նրան տանում են Իմամլու։ Թշնամիները, շրջապատելով քարեր են արձակում նրա վրա, ծաղրում են, շվացնում, թքում են երեսին։ Մոտենում է Ֆաթմայի եղբայր Հաշիմը, հետո գդակ կարող Մեյթին և մի քանի ապտակ են տալիս։ Օհ, սարսափելի անպատվություն, ա՛խ, եթե նրա ձեռները բաց լինեին, բոլորի պատասխանը կտար։ Բայց ահա ոստիկանապետը խփում է նրա ուսին մտրակով, խփում է մեկ, երկու, երեք անգամ...

Ասադն աչքերը բաց է անում...

VII

Խրճիթը տակավին մութն է, բայց դռներից երևում է, որ արևելքը շառագունել է։ Ծանրացած գլուխը մի կերպ բարձրացնելով, Ասադն իր դեմուդեմ տեսնում է մի մարդ։

— Ո՞վ ես դու,— հարցնում է նա։

— Շտապի՛ր, տղա, վե՛ր կաց, գալիս են,— պատասխանում է մի ծանոթ ձայն։

Ասադը ոտքի է թռչում հրացանը ձեռին, վազում է խրճիթի մյուս անկյունը և տեսնում է, որ Ֆաթման դեռ քնած է։

— Ո՞վ է գալիս,— հարցնում է նա։

Ծերունի այգեպանը նրա ձեռից բռնում է և խրճիթի դռների մոտ տանում։ Առավոտյան աղոտ լույսով Ասադը հեռվում, այգու գրեթե մյուս ծայրում նկատում է ինչ-որ մարդիկ. լսում է ինչ-որ խուլ սպառնալիքներ։ Մարդիկ ավելի ու ավելի մոտենում են, ձայներն ավելի ու ավելի պարզ են լսվում։ Ահա ծառերի բների հետևից փոքր առ փոքր որոշվում են եկողների դեմքերը. մի մասը ձիավոր է, մյուս մասը հետևակ, բոլորն էլ թրքեր են և իմամլուցիներ։ Մեկը ոտով շտապում է ամենից առաջ։

Ասադը ճանաչում է Հաշիմին։

Մի ակնթարթում նա թռչում է ներս, հավաքում է մնացյալ զենքերն և, Ֆաթմային քնած թողնելով, դուրս է գալիս. խրճիթը կողպում է, թիկն է տալիս դռներին և կանգնած՝ սպասում է եկողներին։ Փախչել և Ֆաթմային փախցնել անկարելի է. թշնամիները մոտիկ են, պետք է պաշտպանվել։ Բայց ո՞ր մեկի դեմ պաշտպանվել. նրանք մոտ տասնուհինգ հոգի են, իսկ Ասադը միայն մի ծերունի օգնական ունի, որի միակ զենքը հինանմյա ժանգոտված խանչալն է։ Փույթ չէ, թող գա, ոչ ոք չի կարող Ասադի ձեռքից Ֆաթմային խլել, քանի նրա շունչը բերանումն է։

Վերջապես, իմամլուցիները դուրս եկան ծառերի հետևից և կանգ առեցին, խրճիթի դեմուդեմ կիսաշրջան կազմելով։ Հաշիմն արագությամբ հանեց ուսով գցած հրացանը և, նշանակ դնելով Ասադի կուրծքը, գոչեց։

— Անշա՛րժ կաց։

Նրա օրինակին հետևեցին զումարբաշ Հասանը, ինը-մատանի Սեյֆուլլան, շեկ Հեյդարը, սև Բաղիրը, քոռ Միթալլիմը և մի քանի ուրիշներ։ Եվ Ասադն յուր դեմուդեմ տեսավ տասնից ավելի սև խողովակներ, որոնց մթին, մահաբեր ծակերը նայում էին ահռելի կերպով, ինչպես տարտարոսից վոնդված դևերի աչքեր։

Ծերունի այդպանը վազեց առաջ, սկսեց կատաղած իմամլուցիներին խրատել, հաշտության հրավիրել, բացատրելով, մրենույն ժամանակ, թե տղամարդություն չէ մեկի դեմ քսան հոգով դուրս գալը։

Մեկը մի քար ձգեց նրա վրա և հայհոյելով ասաց, որ չխառնվի գործին։

— Հեռո՛ւ, քեաֆթառ շուն,— գոչեց շիլ Նուրուլլան,— եթե ոչ — հոգիդ սատանայի բաժին կդարձնեմ։

Ծերունին ետ քաշվեց, ափսոսալով, որ ձեռին հրացան չունի, եթե ոչ ցույց կտար հանդուգն «երեխաներին», թե ով է քեալբլահի Արդուլլան։

Հաշիմը պահանջում էր, որ Ասադն իր ձեռքով Ֆաթմային խրճիթից դուրս բերի և հանձնի նրան։ Ասադը սկզբում փորձեց ազդել նրա խելքի, սրտի և մուսուլմանական զգացմունքների վրա։ Նա հիշեցրեց կրոնի միությունն և Ղուրանի պատգամները, որ արգելում են ուղղափառին՝ ուղղափառի արյուն թափել։ Բայց Հաշիմը ոչինչ չէր ուզում լսել։ Նա մի բերան պահանջում էր, որ Ասադը կամավ վերադարձնե նրա քրոջը։

— Իսկ եթե չտա՞մ,— գոչեց Ասադը, վերջապես հուսահատված։

— Դիակդ ոտնատակ անելով կանցնեմ և կվերցնեմ,— պատասխանեց Հաշիմը վճռողաբար։

Այս ասելիս հրացանը նրա ձեռին դողաց։

Այդպանը հորդորում էր Ասադին խնայել յուր երիտասարդ կյանքն և Ֆաթմային կամով հանձնել եղբորը։ Ասադը չէր լսում նրան։ Ճակատը թաշկինակով փաթաթած, երեսն արյունի շորացած կաթիլներով, կուրծքը կիսով չափ բաց, մի ձեռը հրացանին կրթնած, մյուսը կողքին հենած, մեջքը խրճի-

թի դռներին թեքած, նա կանգնած էր միևնույն տեղը և, կարծես, սպասում էր վերջին վճռական րոպեին։ Նրա աչքերը կարմրած էին, գլուխը ծանրացել էր, ոտներն ու ձեռները դողում էին սաստիկ տաքությունից։

— Էյ անխիղճ, խնայի՛ր ինքդ քեզ, ափսոս է քո երիտասարդությունը,— գոչեց իմամլուցիներից մեկը, որ, ակամա հիացած հանդուգն սարի-թորփաղցու առնական գեղեցկությունից, չկարողացավ զսպել յուր ներքին ձայնը։

— Նրա ի՞նչն է ափսոսալի, ապա՛, լեցրո՛ւ շան բերանը ծխով,— ընդհատեց նրա խոսքը մի խռպոտ ձայն։

Խսկույն ինը-մատանի Սեյֆուլլայի հրացանը պայթեց։ Գնդակը, դռների ճեղքից փչող աշնանային քամու պես, վրզզալով անցավ Ասադի գլխի վրայով և մտավ խրճիթի հետևի թթենիներից մեկի բունի մեջ։ Իմամլուցին դրանով կամենում էր համառ սարի-թորփաղցուն վախեցնել։ Սակայն, իզո՞ւր. Ասադը պատրաստվել էր պաշտպանվել մինչև վերջին շունչը։

VIII

Հրացանի ձայնը Ֆաթմային զարթեցրեց։ Դռներն ուժով բացվեցին, երիտասարդ աղջիկը դուրս վազեց, խիտ ու երկայն մազերն ուսերի վրա անկանոն թափված, կուրծքն եղունգներով անխնա պատռտելով և բարձրաձայն գոռալով։ Նա վազեց և կանգնեց Ասադի առջև, երեսը դեպի իմամլուցիները։

— Զգո՛ւյշ,— հրամայեց Հաշիմն յուր ընկերակիցներին, հրացանը ցած դնելով։

— Կոտորվե՛ք դուք, կոտորվե՛ք դուք,— աղաղակում էր Ֆաթման, արդեն մոռացած յուր սովորական ամոթխածությունը։

— Վազի՛ր այս կողմը,— գոչեց Հաշիմն, առաջ գիմելով, որ քրոջը առևանգի։

Բայց Ֆաթման, ավելի մոտեցավ Ասադին, պաշտպանելու մտքով, կանգնեց նրա առջև և պատասխանեց եղբորը։

— Մի՛ մոտենար, մի՛ մոտենար, ես չեմ թողնիլ, որ նրա մի մազն էլ վնասվի։ Նա մեղավոր չէ, ես ինքս եմ փախել նրա հետ, այո, ես ինքս, իմ կամքով։ Հաշիմ, մի՛ մոտենար, ես չեմ թողնիլ, չեմ թողնիլ...

Տեսարանը սրատաշարժ էր։ Երկու թշնամիների մեջտեղ կանգնած էր մի անհաղթելի պատնեշ, առանց որին խորտակելու, անկարելի էր որևէ հակատամարտ։

Երբեք Հաշիմը չէր կարող երևակայել, թե Ֆաթման այդչափ պաշտպան կհանդիսանա յուր առևանգողին։ Նա հավատացած էր, որ յուր քույրն ակամա է ընկել Ասադի ձեռքը, թե նա մի տկար զոհ է, որին փրկելու համար պիտի թշնամու արյունը խմել։ Այժմ, տեսնելով Ֆաթմայի համառությունը, տեսնելով նրա հուսահատ պաշտպանությունը, մնաց ապշած։ Մի վայրկյանում վրեժխնդրության կիրքը նրա սրտում տեղի տվեց ակամա խղճահարության։ Նա, որ մի բոպե առաջ պատրաստ էր ամենայն սառնությամբ մահաբեր գնդակն ուղղել հանդուգն առևանգողի կրծքին, այժմ երեսը ետ դարձրած, երկմտության մեջ լուռ նայում էր յուր ընկերակիցների երեսին։

Ինքը, զոհ համարվածը ներում է հանցավորին, և հանցավորն այնքան վեհանձն է, այնքան անվեհեր, որ պատրաստ է մինչև վերջին շունչ պաշտպանել իր փախցրած աղջկան։ Ուրեմն տմարդություն չի՞ լինիլ, արդյոք, ձեռք բարձրացնել մի այդպիսի երիտասարդի վրա և սպանել նրան յուր սիրեցյալի աչքի առջև։ Այս էր արտահայտում Հաշիմի դեմքը։ Եվ լուռ ակնարկություններ հասկացող շիրվանցիները, իսկույն գուշակելով նրա միտքը, մտիկ արեցին միմյանց երեսին։

Շիլ Նուրուլլան առաջինը վստահացավ հայտնել ամբոխի լուռ վճիռը։ Նա քաշեց ձին և բարձրաձայն արտասանեց.

— Հաշի՛մ, նամուսդ մի՛ մոռանար։

Իմամլուցիների մեջ բարձրացավ մի խուլ աղմուկ։ Նրանք վրդովված էին Հաշիմի մեղմանալուց։ Ի՞նչպես կարելի է նեռրել մի հանդուգն թշնամու, մի մարդու, որ անպատվել է ամբողջ Իմամլուի անունը, փախցնելով թաղի ամենագեղեցիկ

աղջիկներից մեկին։ Ի՞նչ կասեն իմամլուցիները, ի՞նչ կասեն ուրիշ թաղեցիները։— Ո՛չ, ո՛չ, երբեք չի կարելի գործը հաշտությամբ վերջացնել։ Միթե այս նպատակո՞վ են իմամլուցիները երեկ ամբողջ օրը կռվել, մի՞թե դրա համար են քսան մարդ ամբողջ գիշերն անքուն թափառել քաղաքի շրջակայքում։ Պետք է թշնամուն պատժել, պետք է վրեժ հանել, առանց արյունի անկարելի է Իմամլուի պատիվը վերականգնել։

— Արյո՛ւն, արյո՛ւն,— գոռացին բոլոր կիսավայրենիները միաբերան։

Հաշիմը հասկացավ այդ կատաղի ամբոխի տրամադրությունը։ Նա զգաց, որ եթե Ասադին ինքը ների, մյուսները չեն ներիլ, չեն ներիլ գուցե և իրան։ Բայց ինչպես հեռացնի Ասադից Ֆաթմային, որ միանգամայն կտել է նրան անքաժան, այնպես որ թշնամուն ուղղած ամեն մի հարված նախ կարող է նրան հասնել։

Մինչ նա այս բոպեական տատանման մեջ էր, իմամլուցիներից երեք հոգի աննկատելի կերպով բաժանվեցին խմբից և, ծառերի տակ թաքնվելով, շրջան տալով, հետևի կողմից մոտեցան Ասադին։

Այդ նկատեց այդպեսանն և, յուր ժանգոտած խանչալը հանելով, կանգնեց վերջինի հետևում, վճռելով պաշտպանել նրան յուր կյանքի գնով։

Այնինչ Ասադն աշխատում էր ասպարեզից անվնաս հեռացնել Ֆաթմային, որ ինքը միայն կռվի թշնամիների հետ։

Ծերունու և երեք իմամլուցիների մեջ կռիվ բացվեց։ Ասադն երեսը հետ դարձրեց և իսկույն հրացանը արձակեց։ Լսվեց մի արաբական հիշոց, և Հաջի-Ալեաքպարի սև խափշիկներից մեկը, աջ ձեռով ծունկը բռնած, գոռալով նստեց գետնի վրա։ Ասադն արձակեց երկրորդ անգամ, բայց— անօգուտ։

Նույն վայրկյանին նա յուր մեջքի վրա զգաց մի սաստիկ սառնություն, որ թափանցեց ներս։ Նա ամբողջ մարմնով դողաց, ակամա գոռաց և ընկավ ուղիղ Ֆաթմայի ոտների տակ։

— Ալլա՜հ, ալլա՜հ,— լսվեց նրա խուլ ձայնը, և նրա աչ-

քերի բիբերը, տարօրինակ կերպով պտտելով շրջանակների մեջ, դարձան Ֆաթմայի վրա։

Այսքանը միայն կարողացավ լսել և տեսնել խեղճ աղջիկը, ուրիշ՝ Ասադը ոչինչ չասաց և ոչ մի շարժում չարավ։

Երբ իմամլուցիները, վայրենի կերպով գոռալով, առաջ վազեցին, որ իրենց վրիժառության արդյունքը մոտիկից տեսնեն, երբ Հաշիմը մոտեցավ յուր քրոջը վերցնելու, Ֆաթման ընկած էր Ասադի վրա և դառն ողբում էր...։

1889 թ., Թիֆլիս

ԹԱՆԿԱԳԻՆ ԿԱՊԱՆՔ

Պատկեր

Օրն ամառային էր և իրիկնադեմ։ Այրի Հռիփսիմեն իր ամուսնուց ժառանգած սեփական տան պատշգամբի վրա թեյ էր պատրաստում։ Սմբատը, նրա միակ որդին, մի կողմ նըստած, նայում էր դեպի գավիթ, որ զարդարված էր փոքրիկ գեղեցիկ պարտեզով։

Որդին տխուր էր և, կարծես, ինչ-որ մտատանջության մեջ. մի բան, որ հազիվ էր պատահում։ Ժամանակ առ ժամանակ նա հառաչում էր և իր անորոշ հայացքը դարձնում դեպի պարզ մանիշակագույն երկինքը, ուր դանդաղորեն սահում էին ամառային նոսր ամպերը։

Մայրն արդեն նկատել էր որդու տխրությունը, բայց ինչ էր պատճառը— չգիտեր։ Թեյի բաժակը դնելով նրա առջև, ինքն էլ նստեց դեմուդեմ և յուր հայացքը հառեց որդու կիսադեմքին։ Որքա՜ն երկյուղ, ակնկալություն և, միևնույն ժամանակ, քնքուշ սեր էր արտահայտում այդ հայացքը։ Թվում էր, և այդ ճիշտ էր, որ մայրն ամեն վայրկյան պատրաստ էր յուր կյանքը զոհելու, միայն թե որդու տխրությունն որևէ ծանր պատճառ չունենա, միայն թե այդ լինի բոպեական անցողիկ տրամադրություն։

Սմբատը դատարկեց թեյի բաժակը, բարձրացավ տեղից և, շարունակ լռելով, դիմեց դեպի յուր սենյակը։

— Սմբատ,— դարձավ նրան մայրն անվստահ եղանակով։

Սմբատը հետ նայեց և կանգնեց։ Դավթում ոչ ոք չկար, բացի ծառայից, որ հեռվում ցնցուղով ջրում էր պարտիզի ծաղիկները։ Մայր և որդի կարող էին խոսել վստահ, որ ոչ ոք չի լսիլ նրանց։

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց որդին։

Որքան ևս աշխատեր մեղմ արտասանել յուր հարցը, այսուամենայնիվ, նրա ձայնի մեջ մայրն զգաց անսովոր խրստություն։

— Ուզում եմ տխրությանդ պատճառն ինձ էլ հայտնես։

— Ես տխուր չեմ։

Ասաց որդին և անմիջապես շուռ եկավ, որ գնա, բայց մայրը խնդրեց սպասել։

— Դու ինձանից թաքցնո՞ւմ ես միտքդ,— հանդիմանեց Հռիփսիմեն,— միթե չե՞ս իմանում, որ ինձ վշտացնում ես։

— Շատ հետաքրքիրն ես,— պատասխանեց որդին տրհաճությամբ, և այս անգամ նրա ձայնի կոշտությունն ավելի զգալի էր։

— Սմբա՛տ...

Մի անսովոր դառն ժպիտ աղավաղեց որդու շրթունքներն, երբ մայրը կասկածելի հայացքով չափեց նրան ոտից մինչև գլուխ։

— Այդ, վերջապես, անտանելի է,— գոչեց նա, նստելով յուր աթոռի վրա,— այդ կյանք չէ, մայր, որ ես քաշում եմ։ Քո կասկածներն ինձ հալածում են։ «Սմբա՛տ, ինչո՞ւ ես տրխուր, Սմբա՛տ, ինչո՞ւ ես լուռ, Սմբա՛տ, ինչո՞ւ չես ուտում, ինչո՞ւ չես խմում»։ Խոստովանվում եմ, այդ բոլորն ինձ արդեն ձանձրացրել է։

Մայրը աթոռը առաջ քաշեց և, աչքերը լայն բանալով, հառեց որդու երեսին։ Նա սպասում էր, որ վերջինը շարունակի։

— Ես տխուր եմ, որովհետև դու ինքդ ես ինձ ստիպում տխրել,— շարունակեց որդին սրտմտությամբ,— ամեն քայլափոխում խնամք, խնամք ու խնամք, մինչև ե՞րբ։ Գիշերն ուշ եմ վերադառնում— լաց ես լինում, մի տեղ զբոսնելու եմ

գնում— խրատներով ես ճանապարհ դնում։ Չեմ ուտում— ստիպում ես ուտել, չեմ ուզում քնել, պահանջում ես որ քնեմ, մի գիրք եմ վերցնում կարդալու— խլում ես ձեռքիցս, թե «աչքերիդ վնաս է», ընկերներիս նամակ եմ ուզում գրել— չես թողնում, թե «կուրծքդ կցավի»։ Ահա, այդ քո հիվանդոտ սերն է, որ, վերջապես, ինձ տխրեցնում է։ Դու ինձ ստրուկի պես ճնշում ես քո սիրով, դու քո կյանքը կապել ես իմ կյանքի հետ, դու ուզում ես, որ քսանուչորս տարեկան երիտասարդը ծծկեր երեխայի պես ապրի։ Դա մայրական սեր չէ, դա բռնություն է։

Այս խոսքերը Սմբատն արտասանում էր ակնհայտնի դառնությամբ և հետզհետե ավելի ու ավելի հուզվող ձայնով։ Պարզ էր, որ վաղուց նրա մեջ եռում էր այդ դառնությունը և վաղուց նրա սրտում պատրաստվել էր մի թույն, որ ձգտում էր դուրս հոսելու։

Մայրը զարմացած, երկյուղած և լուռ մտիկ էր անում նրա երեսին, աշխատելով մի բառ անգամ բաց չթողնել նրա ասածից։

— Կարո՞ղ եմ մայրական սեր անվանել այն, որ ամեն րոպե ճնշում է իմ ազատությունն ու խոշընդոտ դառնում ինձ,— շարունակեց Սմբատը, ավելի գրգռվելով մոր լռությունից։ Դու ինձ չթողիր Ռուսաստան գնալու, որ ուսումս շարունակեմ, կարծում էիր, որ այնտեղ հասա թե չէ— իսկույն պիտի մեռնեմ։ (Մայրը մի ցնցում գործեց)։ Դու ինձ հեռացրիր իմ ընկերների շրջանից և աքսորականի պես դատապարտել ես հավիտյան մի քաղաքում ապրել քո աչքի առջև։ Կրկնում եմ, այդ մայրական սեր չէ. թո՛ղ ինձ մի փոքր ազատ շունչ քաշեմ, բավական է, որքան խանձարուրի մեջ պահեցիր ինձ։

Նա լռեց և, տեղից բարձրանալով, սկսեց հուզված անցուդարձ անել. ձեռները վարտիքի գրպանները դրած։

— Որդի՛,— խոսեց մայրը, վերջապես ուշքը վրեն հավաքելով,— ե՞րբ եմ ես քեզ արգելք եղել։ Ինչ ուզում ես— արա, ինչպես կամենում ես— ապրիր, ահա քեզ տուն, տեղ, հարստություն. քո՞նը չէ։ Էլ ի՞նչ ես ուզում.— հոգի՞ս... Կըտամ, չեմ խնայիլ։ Աստծուն է հայտնի։

Սմբատը դառնությամբ ժպտաց։

— Հոգի՛դ,— կրկնեց նա, կանգնելով մոր առջև։— Հենց այդ է, որ ես չեմ ուզում, ինչի՞ս է պետք քո հոգին։ Ավելի լավ կլիներ ինձ համար, որ դու խնայեիր ինքդ քեզ և իմ մասին քիչ մտածեիր։ Հավատացի՛ր, մայր, որ ես ավելի բախտավոր կլինեի, եթե դու ինձ պակաս սիրեիր կամ չսիրեիր միանգամայն։ Այո, մի՛ սիրիր ինձ։

— Քեզ չսիրե՞մ, ե՞ս քե՞զ չսիրեմ,— կրկնեց այրին զայրացած այս անհնարին և անբնական առաջարկությունից։

— Գոնե, փոխի՛ր սիրելուդ ձևը։

Հռիփսիմեն այլևս չկարողացավ զսպել իր արտասուքը, որ քանի որպե արդեն խեղդում էր նրա կոկորդը։ Նա սկսեց բարձրաձայն հեկեկալ։

Սմբատը ճնշված սրտով մտավ յուր սենյակը և սկսեց հագնվել։ Նա զգաց, որ իր հանդիմանությունը ավելի խիստ ձևով արտահայտեց, քան թե հարկավոր էր և խղճաց մորը, տեսնելով նրա բուռն հեկեկանքը։ Միևնույն ժամանակ նա արդարացի էր համարում իրեն. ծանր էր թվում նրան սիրո այն կապանքը, որով մայրը կաշկանդել էր նրա անհատականությունը։ Այդ սերը նա համարում էր մի տեսակ եսասիրություն մոր կողմից, թեկուզ այն արտահայտվեր անձնազոհությամբ։

Հանկարծ նա լսեց մի ձայն, հետ նայեց և տեսավ մորը, որ գաղտնի դիտում էր որդու շարժվածքը դռների արանքից։ Խե՜ղճ կին, նրա սերը և կասկածանքն այն աստիճանին էին հասել, որ վախենում էր, միգուցե որդին հուզված դրության մեջ մի բան անե... Այդ պարզ էր Սմբատի համար։ Նա արագարագ հագավ շորերը և շտապով դուրս գնաց, առանց սովորական բարևն ասելու։ Սակայն, գավթից դուրս գալիս, նա չհամբերեց, հետ նայեց։ Մայրը, պատուհանի առջև կանգնած, նայում էր նրա հետևից, ձեռները ծոցին դրած և գլուխն ուսերին թեքած։ Նրա հայացքն այնքան տխուր էր, երկյուղած և ազդու, որ գրոշմվեց Սմբատի սրտին, թեև չստիպեց նրան հետ դառնալ և ներումն խնդրել. մի բան, որ հոգով ցանկանում էր։

Երբ նա հեռացավ, Հռիփսիմեն անմիջապես կանչեց ծառային։

— Գասպա՛ր,— ասաց նա շնչասպառ, որպես թե մի մեծ անբախտություն պատահած լիներ,— այս բոպեիս պարոնդ դուրս եկավ շատ չարացած, չգիտեմ ում վրա։ Իսկույն վազիր հետևից, բայց չմոտենաս, հետն ու հետը գնա, այնպես, որ դու նրան տեսնես, նա քեզ չտեսնի։ Աչքդ չհեռացնես, հասկանո՞ւմ ես...

— Աչքիս վրա,— ասաց Գասպարը, որ Բարսամյանների տան վաղեմի հավատարիմ ծառան էր։

— Կաց, այս լավ է. ծխախոտամանը թողել է, եթե քեզ տեսավ, կասես, որ դրա համար ես եկել։ Դեհ, գնա՛, թե չէ չես գտնիլ։

Ծառան վազեց։ Հռիփսիմեն նստեց սեղանի մոտ, գլուխը դրեց կոների վրա և դարձյալ սկսեց լաց լինել։ Հետո նա, թաշկինակով սրբելով աչքերը, վերկացավ և գնաց հարևան Մարիամի մոտ՝ մի կերպ ժամանակը մոռանալու։ Փոքր- ինչ անցած նա վերադարձավ և երկար ժամանակ լարված դրության մեջ, հառաչելով, անցուդարձ էր անում մի սենյակից դեպի մյուսը, անդադար նայելով սեղանատան պատի ժամացույցին։ Յուրաքանչյուր մի անցնող բոպե ավելացնում էր նրա վիշտը և սպառում համբերությունը։ Գտա՞վ, արդյոք, Գասպարը նրան, կվերադառնա՞, արդյոք, նա այս գիշեր, թե՞...

Նա հանդիմանում էր ինքն իրեն, որ առիթ տվեց իր միակ որդուն բարկանալու։ Նա իրան համարում էր անպայման մեղավոր. նա չպիտի հակաճառեր, չպիտի լար, չպիտի զարմանար, չպիտի խոսեր անգամ։

Նա նայում էր մերթ դեպի փողոց, մերթ դեպի գավիթ, ականջները լարում էր լսելու դրսից մի ձայն, և երբեմն սրտի սաստիկ բաբախումը խաբում էր նրան։ Հետզհետե փողոցում անցորդների ձայները ընդհատվեցին, կառքերի դղրդյունը դադարեց, հարևանների ճրագները մի առ մի սկսեց հանգչիլ, իսկ Սմբատը չկա ու չկա և ոչ էլ ծառան։

Մի վայրկյան Հռիփսիմեի մեջ ցանկություն ծագեց՝ գնալ և փնտրել որդուն, բայց ո՞րտեղ... Նա փակեց դռները, շալը ձգեց գլխին, դուրս եկավ փողոց և կանգնեց դռների մոտ։

Արդեն կեսգիշերից անց էր, երբ, վերջապես, մի կառք

երևաց փողոցի ծայրում։ Հռիփսիմեն շտապեց ներս և մտավ յուր սենյակը։ Նա գիտեր, որ եթե որդին տեսնե իրեն ոտքի վրա անհանգիստ— կբարկանա։ Թող չկարծի, թե մայրը ըսպասում էր իրեն...

Եկողն արդարև Սմբատն էր։ Նա մտավ ներս թե չէ, իսկույն դիմեց մոր սենյակը. նա նկատել էր նրան գավթից ներս մտնելիս։

— Դու քնած չե՞ս,— ասաց նա,— հավատացի՛ր, մայր, լավ բան չես անում, որ ետևիցս լրտես ես ուղարկում։

Ինչ ուզում է, թող ասի Սմբատը, միայն թե թույլ տա Հռիփսիմեին յուր ուրախությունն արտահայտելու մի համբույրով։ Եվ որդին թույլ տվեց. նա տրամադրված չէր բարկանալու։

— Բայց լրտեսդ ճարպիկ չէ,— ասաց նա, հեգնելով,— հիմարը կարծում էր ես նրան չեմ տեսնում։ Այգու դռների մոտ նկատեցի և իսկույն հասկացա, որ դու ես ուղարկել։ Թաքուն հրամայեցի դռնապանին ներս թողնել։ Ծիծաղելի էր։ Խեղճ մարդ, ամբողջ երեկո, մութ ծառուղիում նստած, դիտում էր ինձ կարծելով, որ շատ հաջող է կատարում յուր դերը։ Բայց եթե դու ինձ ստիպեցիր շուտ վերադառնալ, ես էլ Գասպարին պատժեցի։ Ես կառքով եկա, նրան չհրամայեցի նստել, ստիպվեց հետևիցս վազել խելագարի պես։ Չէի ուզում ամաչացնել նրան, թե նրա լրտեսությունը նկատել եմ...

Պատշգամբի վրա երևաց Գասպարը, քրտնած, շնչասպառ և փոշոտ։

— Ահա, եկավ առաքյալդ,— հեգնեց Սմբատը,— է՛հ, Գասպար, ես քեզ խելոք մարդ էի համարում, բայց դու ինձ երկու տարեկան երեխայի տեղ ես դնում։ Ամոթ է... Բայց դու մեղավոր չես, ես քեզ կվարձատրեմ մորս փոխարեն։

Այս ասելով, նա պատուհանից ձգեց ծառային մի հատ երեք ռուբլիանոց և իսկույն սկսեց հագուստը հանել։

Հետևյալ օրը նա զարթնեց ուրախ, զվարթ ու սկսեց մոր հետ կատակ անել։

— Քնած ժամանակս էլ հանգիստ չես թողնում ինձ,— ասաց նա, ծիծաղելով,— գիշերը շոգից ես վերմակս դեն էի

գցել, առավոտ զարթնում եմ ու տեսնում, որ էլի գցել ես վրես ու այնպես փաթաթել, որ տաքից խեղդվում էի։

Նա վճռել էր միայն այս ձևով ազդել մոր վրա, որ գուցե կարողանա մի կերպ զսպել նրա «քնքուշ բռնակալությունը», ինչպես անվանում էր ինքը։ Հռիփսիմեն հասկացավ նրա միտքը. որոշեց զգաստ լինել և, միևնույն ժամանակ, աշխատել ոչ մի կերպ չընդդիմանալ որդու կամքին։ Բայց և այնպես, ճաշի ժամանակ նա չկարողացավ զսպել յուր կիրք դարձած հոգատարությունը։ Նա ինքն յուր՝ձեռքով նրա ափսեի մեջ դրեց «կոտլետի» մի լավ կտոր։

— Իսկ եթե չկամենամ ուտել այդ կտորը,— ասաց Սմբատը, ծիծաղելով։

— Դո՛ւ գիտես,— պատասխանեց մայրը,— ես քեզ չեմ զոռում։ Շատ քիչ ես ուտում, սիրտս... Լա՛վ, էլ չեմ խոսիլ...

Եվ մինչև ճաշի վերջը նա լռեց, աչքի տակով գաղտնի դիտելով որդուն, ուտո՞ւմ է արդյոք նա։

Երեկոյան, յուր կատակները շարունակելով, Սմբատը, տնից դուրս գալիս, հայտնեց թե դարձյալ ուշանալու է։

— Գասպարին չուղարկես ետևիցս, թե չէ մտադրություն չունիմ նրա համար թատրոնի տոմսակ գնելու, որ ինձ լրտեսի։

— Դո՛ւ գիտես,— պատասխանեց մայրն անսահման խոնարհությամբ,— բայց...

— Հը՞մ...

— Լավ կանես, որ վերարկուդ վերցնես, երեկոները ցուրտ է։

Այս անգամ Սմբատը վերադարձավ ավելի ուշ, քան նախընթաց երեկո։ Երբ նա եկավ, մայրը, սև շալն ուսերին գցած, անցուդարձ էր անում գավթում անլսելի քայլերով, անշունչ ուրվականի պես։ Սմբատը զգաց խղճի սուր խայթոց և, միևնույն ժամանակ, դարձյալ բարկությունից խառնվեց նրա արյունը։ Նա վրդովվեց յուր դեմ, որ առիթ էր տալիս մորն՝ այդքան տանջվելու, վրդովվեց և մոր դեմ, որ այդքան զգայուն էր։

Այդ օրից մայրը լուռ էր, անտրտունջ և համբերությամբ խոնարհ իր ճակատագրին։ Նա ոչ մի հանդիմանություն չէր

անում, ոչ մի անգամ չէր հարցնում որդու կամքը և ոչ մի ցանկություն չէր հայտնում։ Նա միայն աշխատում էր լուռ ու մունջ գուշակել որդու ամեն մի շնչին հաճույքը և անվրեպ կատարել։ Բայց որքա՜ն թանկ է նստում նրան այդ համառ լռությունը։ Սմբատը նկատում էր, որ անքուն գիշերները և անխոս մտատանջությունը օրից-օր մաշում են մորը և օրից-օր փութացնում նրա ծերությունը։ Այդ ավելի անտանելի էր նրա համար, քան եթե հանդիպեր մոր կողմից բուռն և բացարձակ հանդիմանության։

Նա փոխեց յուր վարմունքը, սկսեց երեկոները տանը անցկացնել, աշխատելով զվարճացնել մորն առաջվա պես։ Այդ ևս չօգնեց։

Մի օր նա տուն եկավ սաստիկ վրդովված և գույնը թռած։ Հռիփսիմեն, դողդողալով, ձեռները ծոցին դրեց, գլուխը թեքեց դեպի ուսը, կանգնեց ու նայեց որդու աչքերին։ Այնտեղ նա ձգտում էր կարդալ նրա գունատության պատճառը, առանց խոսել համարձակվելու։

— Դու ուրեմն չե՞ս հասկանում, թե ինչ ես արել,— գոչեց որդին, չկարողանալով զսպել իր կատաղությունը։ Դու ինձ բոլոր ընկերներիս մեջ խայտառակել ես և չե՞ս իմանում, չե՞ս իմանում։

— Սմբա՜տ...— կարողացավ միայն արտասանել մայրը։

— Ոչ, այդ արդեն չափազանցություն է, դու ամեն կողմից ինձ թշնամու պես պաշարել ես, ամեն ճանապարհ կապել իմ առջև։ Բավական չէր ծառան, այժմ դու ընկերներիս ես ինձ վրա լրտես նշանակել...

— Ես... ես...— ոչինչ...— տատանվեց մայրը և չկարողացավ շարունակել, երկյուղածությամբ ետ ու ետ քաշվելով։

— Այո, Սերգո Քեթխուդյանին դո՞ւ չես խնդրել, որ քեզ պատմի այն ամենը, ինչ որ ես անում եմ դրսում։ Քրոջդ որդուն, Աբգարին, դո՞ւ չես պահապան դրել վրես, որ ես մի քայլ անգամ չանեմ առանց Նրան։ Ասենք թե Սերգոն և Աբգարն ինձ լավ են ճանաչում, գիտեն, որ իմ կյանքը դրսում մի վատ կողմ չունի, բայց ինչո՞ւ ես ինձ ամաչացնում։ Այդ դեռ ոչինչ. ասա՛, խնդրեմ, ես ի՞նչպես չգրգռվեմ, որ դու շրջմոլիկների պարագլուխ Մեփիսովին անգամ ինձ համար լրրտես ես նշանակել։ Բայց արդեն բավական է, չափը լրացավ։ Լսի՛ր, ինչ եմ ասում, մայր, դու գիտես, որ վաղուց ես մտադիր էի Ռուսաստան գնալու, գիտես, որ ես ուզում եմ համալսարան մտնել։

Մայրը գլխով մի շարժումն արավ, լուռ հառաչելով, առանց տեղից շարժվելու։

— Ուրեմն չզարմանաս— ես երկու շաբաթից հետո ուղևորվում եմ... Պետերբուրգ։

Հռիփսիմեն մի ճիչ արձակեց և ուժասպառ, թուլացած, նստեց պատի մոտ գտնվող թախտի վրա։ Այո, նա վաղուց գիտեր որդու մտադրությունը։ Դեռ երկու տարի առաջ, երբ ավարտեց գիմնազիոնը, նա անմիջապես պատրաստվեց ուղևորվելու։ Բայց Հռիփսիմեն ընկավ նրա ոտներին, աղերսեց, որ թողնի յուր մտադրությունն և ապրի մոր հետ։ Ի՞նչ է անում նա բարձր ուսումը, քանի որ նրա առողջությանը վնասակար է։ Եթե ուսումն առնում են նրա համար, որ աշխարհում ապրելու միջոց ունենան, Սմբատն այդ կողմից ամենից բախտավորն է։ Հայրն այնքան թողել է, որ որդուց որդի բավական է։ Ոչ միայն ուսում, այլև ոչ մի գործով չպիտի պարապվի. նա միայն պիտի ապրի ու ապրի... այս էր Հռիփսիմեի ուզածը։ Եվ հանկարծ Սմբատը վճռողաբար հայտնում է, թե երկու շաբաթից հետո գնում է։ Հռիփսիմեն կարո՞ղ է ապրել առանց տարիներով որդու երեսը տեսնելու, նա՛, որ երկու ժամ որդուն չտեսնելիս տանջվում է այնքան։

Հռիփսիմեն անցավ յուր սենյակը, դռները փակեց և երկար ժամանակ լաց եղավ, հիշելով անցյալը, յուր հանգուցյալ ամուսնուն և հանգուցյալ որդիներին։ Այն ժամանակ նա երջանիկ էր, այն ժամանակ նա կհամաձայնվեր մեկից բաժանվել, մյուսով մխիթարվել։ Իսկ այժմ... Երբեք, նա կըսպանի ինքն իրեն և չի համաձայնվիլ միակ որդուց բաժանվել։ Իսկ եթե Սմբատը համառություն անե, այն ժամանա՞կ...

— Կթողնեմ տուն ու տեղ, ամուսնուս ու որդիներիս գերեզմանները և կգնամ նրա հետևից,— ասաց Հռիփսիմեն ինքը իրեն լսելի ձայնով,— կգնամ, թեկուզ աշխարհի մյուս ծայրը։

Սակայն մի բոպե չանցած, այս միտքը նրան սարսա-

փեցրեց։ Ի՞նչ, միթե նա կարո՞ղ է իր սիրեցյալների գերեզմանները մոռանալ, թողնել և հեռանալ օտար աշխարհ։ Ո՛չ, այդ անտանելի կլինի։

Ամբողջ օրը նա ոչինչ չասաց որդուն, միայն հետևյալ առավոտը դարձավ նրան.

— Որդի, երեկ հանաք էիր անում, չէ՞...

— Ի՞նչ հանաք։

— Թե պիտի գնաս։

— Բարեբախտաբար, ոչ։ Ամսույս վերջին ինձ բարի ճանապարհ մաղթիր։

— Այդ ինչպես կլինի,— արտասանեց Հռիփսիմեն, կըմկըմալով։

— Այնպես կլինի, որ կնստեմ կառք, կգնամ և ամեն ամառ կգամ մորս տեսնելու, ինչպես ուրիշներն են անում։

— Ուրիշները շատ որդիք ունին, ես մեկն ունիմ։

— Մեր հարևան այն աղքատ կինը քանի՞սն ունի. չէ՞ որ մեկը, ինչո՞ւ է թողնում նրան գնալու։ Քեզ նման շատերը կան, մայր, հավատացիր։ Ես մի ռուս ընկեր ունեմ, նրա մայրն հինգ որդի ունի, հինգն էլ նրանից հեռու են ապրում, նա կին չէ՞ քեզ պես...

— Ես չեմ կարող... չեմ կարող...— կրկնեց մի քանի անգամ Հռիփսիմեն փղձկալով։

Սմբատի պարզ-մեխակագույն աչքերը փայլեցին տհաճությամբ։ Նա մի ծխախոտ վառեց, որ յուր՝ մի վայրկյանում լարված ջղերը փոքր-ինչ թմրեցնի։ Այդ մի սովորական միջոց էր, որին դիմում էր բարկության րոպեներին։ Նա թուլացած նստեց աթոռի վրա. նա տեսնում էր, որ դժվար է ազատվել այդ կապանքից, որ ծերունի կինն առանց իրեն անկարող է շարունակել իր գոյությունը... այնքան հոգով ու սրտով ձուլվել է նա յուր զավակի հետ։

— Լավ,— ասաց նա,— եթե անպատճառ ուզում ես ոտներս ու ձեռներս շղթայած ունենալ, արի, քեզ էլ տանեմ հետս, ուր որ գնում եմ։ Միայն թե մի ոչնչացնիր իմ ապագան։

Հռիփսիմեն ոչինչ չպատասխանեց. նա լալիս էր, արտասանելով յուր հանգուցյալ որդիներից մերթ մեկի, մերթ մը-

յուսի անունը։ Սմբատը չկարողացավ երկար կրել այդ դառն տեսարանի ծանրությունը, թողեց և հեռացավ մյուս սենյակ։

Այնուհետև նա մի քանի օր աշխատում էր համոզել մորը, թե յուր գնալն անհրաժեշտ է, թե Թիֆլիսի կյանքը և անգործությունը նրան ձանձրացրել են, թե նա մտավորապես բթանում է, բարոյապես աղավաղվում, միշտ միատեսակ կյանք վարելով. թե վերջապես, անգործությունը պատիվ չի բերում տղամարդին։ Նա օրինակ էր բերում յուր նախկին ընկերներին, համեմատում էր իրեն նրանց հետ և ամաչում այդ համեմատությունից։ Ամեն մեկը մի անհատ է, մի ազատ մարդ յուր ուժով, կամքով, խելքով, յուր սեփական ձգտումներով։ Իսկ ի՞նչ է ինքը. համարյա թե ոչինչ. փողով ապրող, փայփայված մի երեխա, որին եթե վաղն ազատություն տաս իր ոտքով շրջելու, ով գիտե, չկարողանա շրջել։ Ո՛չ, այսպես չի կարելի, նա արդեն ծիծաղելի է դարձել յուր ընկերների աչքում, նրանք ծաղրում են նրան, արժանի չեն համարում մի լուրջ բանի վրա հետը խոսելու։ Իսկ ով անկեղծ է, խորհուրդ է տալիս ուսումը շարունակելու։

— Խնդրում եմ, մայրիկ, արգելք մի՛ լինիր ինձ, մի՛ կապիր ճանապարհս...

Բայց բոլոր այս պատճառաբանություններն ակներև ապարդյուն էին անցնում։ Ճշմարիտ է, Հռիփսիմեն լսում էր որդու ասածները խորին ուշադրությամբ, չէր հակառակում, համաձայնվում էր, բայց, միևնույն ժամանակ, միշտ կըրկնում էր.

— Առանց քեզ մի օր չեմ ապրիլ։

Սմբատը շվարված էր մնացել, չգիտեր ինչ աներ։

«Վերջապես, մի կերպ պետք է լուծել այդ կապանքը, թե՞ չէ»,— մտածում էր նա։

Նա վճռեց փոխել իր վարվողության ձևը։ Մինչև այժմ նա դեռ շարունակում էր մեղմ վարվել մոր հետ, որին թե՛ սիրում էր և թե խղճում։ Այժմ նա սկսեց ցույց տալ, որ ատում է նրան և մտադրությամբ իր հարաբերությունները կոշտացրեց։ Նա չէր պատասխանում մոր ոչ մի հարցին, ճաշում էր առանձին, քնում էր յուր առանձնասենյակում, ուր չէր թույլ տալիս մորը ոտք դնելու, տեղի ու անտեղի ծառայի վրա բար-

կանում էր, մուրացկաններին վանգում էր դռներից, թափառաշրջիկ երաժիշտներին ու երգիչներին չէր թողնում երգել և նվագել գավթում։ Մի խոսքով, անում էր այն, ինչ որ գիտեր, թե դուր չի գալիս մորը։ Այսպիսով, նա կամենում էր մոր սրտում ատելություն հղացնել դեպի ինքը, մի ծայրահեղ ըզգացմունքի տեղ —հակառակը ներշնչել։ Այն ժամանակ մայրը, վերջապես, կձանձրանա որդուց և բարվոք կհամարի, գեթ միառժամանակ, բաժանվել նրանից։

Սակայն զուր, բոլոր այս միջոցները հակառակ արդյունք ունեցան Սմբատի համար։ Որքան նա բռնի ատելություն էր ցույց տալիս, նույնքան մոր սերը զարգանում էր, կույր հնազանդությունը ամրանում։ Նա շարունակ լուռ ու մունջ դիմանում էր որդու քմահաճություններին, առանց գեթ մի անգամ թեթև հանդիմանություն անելու։

Մի օր Սմբատը նկատեց, որ մայրը գաղտնի մի արծաթե դրամ տվեց մեկ կույր երգչի, որին նա վռնդել էր։ Հետևյալ օրը նա պատահմամբ, դռների մոտով անցնելիս, տեսավ որ մայրը նստած լաց է լինում յուր ամուսնու սենյակում։ Այդ ստիպեց նրան մի կողմ ձգել կեղծ ատելության դիմակը, որ այնքան ծանր էր նրա համար։

Այժմ մնում էր մի վերջին միջոց — լինել անզգա, թողնել անուշադիր մոր լացն ու հառաչանքները և գնալ ու հեռանալ։ Նա լաց կլինի, լաց կլինի և գուցե վերջը կամա-ակամա կըհնազանդվի յուր ճակատագրին։

Ամառվա վերջերին մի օր նա սառն եղանակով հայտնեց մորը, թե վաղը չէ մյուս օրը ճանապարհ է ընկնելու։

— Ո՞ր քաղաքը...— հարցրեց մայրը։

— Դու նամակ կստանաս Ռուսաստանից կամ, ով գիտե, արտասահմանից։

Հռիփսիմեն ոչինչ չասաց, մի հառաչանք անգամ չարձակեց, նրա դեմքի մկանունքներն անգամ չշարժվեցին։ Այդ օրերը նա նիհարել էր, աչքերը խորն էին ընկել, այտերի ոսկորները դուրս էին ցցվել երեսի թառամած կաշվի տակ։ Նա լուռ ու խոնարհ երեսը շուռ տվեց, գնաց յուր սենյակն և ամբողջ օրն այնտեղ մնաց։

Մյուս օրն երեկոյան Սմբատը սովորականից վաղ տուն

վերադարձավ, հրամայեց Գասպարին յուր հագուստեղենը կապել, ասաց թե վաղը իրիկնադեմին ճանապարհ է ընկնելու, թե արդեն կառքի տոմսակ է վերցրել։

— Բաս աղջիկ պարո՞նը,—հարցրեց ծառան զարմացած։

— Ի՞նչ կա։

— Նա հիվանդ է։

— Հիվա՞նդ է, գոչեց Սմբատը, զուր աշխատելով չըկորցնել սառնասրտությունը։

Այսօր մինչև երեկո պառկած է եղել. ասացի, աղջիկ պարոն, թո՛ղ գնամ, Սմբատին գտնեմ, բժիշկ կանչենք։ Չուդեց ու չուզեց... Պառկած է ու լաց է լինում... գնում եք այնտե՞ղ. աստված սիրեք, չասեք Գասպարն ասաց։ Նա կբարկանա վրես, եթե իմանա, որ ես եմ ձեզ հայտնել։

Հռիփսիմեն արդարև հիվանդ էր և ծանր հառաչում էր, պառկած խավար սենյակում, երբ Սմբատը ներս մտավ։

— Ի՞նչ է պատահել, հիվա՞նդ ես, ինչու՞ ես մթնում պառկել,— կրկնեց միմյանց հետևից յուր հարցերը Սմբատը։

Գասպարը նրա հրամանով խսկույն ներս բերեց վառած կանթեղը։ Հռիփսիմեն պառկած էր, երեսը պատին դարձրած, գլուխը սև շալով ծածկած, առանց վերմակի, ձեռում սեղմած մի բան։

Սմբատը զգուշությամբ մոտեցավ նրան։

— Նայիր՛, մայրի՛կ, ես եմ...

Նրա ձայնը դողում էր, դողում էին և նրա ձեռները երկյուղից և խղճի հարվածից։ Հռիփսիմեն արագությամբ, որքան, իհարկե, ուժ ուներ, բարձրացավ և նստեց անկողնի վրա։

— Դո՞ւ ես,— արտասանեց նա քնից նոր սթափվողի պես,— էհ, ոչինչ գլուխս քիչ ցավում էր, անցավ։

Այս ասելով, նա շտապով և գաղտնի թաքցրեց բարձի տակ մի բան։

— Այդ ի՞նչ ես թաքցնում, ցո՛ւյց տուր...

Որդին կասկածանքով ձեռը մեկնեց և բարձի տակից հանեց թաքցրած բանը։ Դա նրա հանգուցյալ եղբայրների և հոր լուսանկարներն էին։ Նայեց նրանց վրա Սմբատը, հիշեց այն երջանիկ օրերը, երբ նրանք կենդանի էին, հիշեց մեկի

որդիական և մյուսի ամուսնական սերը։ Չէ՞ որ այժմ չկան նրանք և մոր միակ սփոփանքն ինքն է այսօր։ Չէ՞ որ ինչպես մայրն է յուր բոլոր սերը նվիրել որդուն, նա ևս պարտավոր է յուր հոր և եղբոր փոխարեն սիրել նրան...

Նա ուշադրությամբ նայեց մոր երեսին։ Որքա՜ն նա փոխվել է վերջին ժամանակ, թառամել, գալկացել և գրեթե կմախք դարձել։ Մի վայրկյանում բուռն զորությամբ զրգռվեց նրա որդիական սերը, խառն խղճահարության և ցավակցության հետ։ Ճնշված սրտով, խոր զգացված, նա բռնեց մոր աջը, հպեց յուր շրթունքներին և հուզված ձայնով արտասանեց.

— Ների՛ր, մայրիկ, գիտեմ ինձ համար ես այդքան վրշտանում. քո տկարության պատճառն ես եմ միայն... Բայց ահա քո մոտն եմ և չեմ... հեռանալ... Չե՞ս հավատում...

Նա վազեց յուր սենյակն և իսկույն հետ դարձավ ճանապարհի տոմսակը ձեռին։

— Տե՛ս, ահա, պատռում եմ տոմսակս և չեմ գնում...

Մայրը թռավ ոտքի և բռնեց նրա ձեռը։

— Ոչ, սպասի՛ր, եթե ինձ սիրում ես, մի՛ պատռիր, շատ լավ ես արել որ վերցրել ես։ Գնա՛, որդի, գնա՛, ես ինքս եմ խնդրում, գնա՛, աշխարհ տես, մարդ տես, թող միտքդ բացվի։ Լսո՞ւմ ես, ես քեզ խնդրում եմ, գնա՛։ Էհ, ես հիմար կին եմ, չէի հասկանում, հակառակում էի։ Հիմա հանգիստ կաց, առանց քեզ կարող եմ համբերել, ինչու չէ, կարող եմ...

Նա խոսում էր հաստատ ձայնով և համոզված մարդու եղանակով։ Ոչ մի կեղծ հնչյուն կամ թաքցրած դժգոհություն չէր զգացվում նրա ասածի մեջ։ Սմբատը հակառակեց, նա ըսկըսեց հավատացնել, որ այժմ այլևս ինքը չունի ոչ ուսման ցանկություն և ոչ Թիֆլիսից դուրս գալու միտք։ Բայց դժվար էր համոզել Հռիփսիմեին։ Նա անհոդդոդդ կրկնում էր, թե շատ կվշտացնի Սմբատը նրան, եթե չկամենա գնալ, թե այդ յուր ջերմ ցանկությունն է և այլն։

Հետևյալ օրը Սմբատը պատրաստվեց ճանապարհ ընկնելու։ Հռիփսիմեն ուրախ էր և աշխույժ։ Նա Սմբատի աչքում բավական փոխվել էր ու անհամեմատ առողջ և զվարթ էր երևում, քան նախընթաց երեկո։ Նա օգնում էր Սմբատին, աշխատելով որքան կարելի է, նրա բեռը ծանրացնել զանա-

գան պիտանի ու ավելորդ հագուստներով և ստիպելով անպատճառ յուր հետ վերցնել տեսակ-տեսակ ուտելեղեն ճանապարհի համար։

Սմբատը մեծ հաճությամբ կատարում էր նրա ամենաչնչին ցանկությունն անգամ։ Բայց, զբաղված լինելով յուր նոր սկսվող կյանքի մտքով, չէր նկատում այն խորին և տարօրինակ թախծությունը, որ թաքնված էր մոր զվարթության ներքո և որ մերթ ընդ մերթ փայլում էր նրա աչքերի մեջ կամ արտահայտվում ձեռների դողոցով։

Հռիփսիմեն մի փառավոր ճաշ պատրաստել տվեց յուր որդու համար։ Ներկա էին նրա քույրը, քեռորդին և ուրիշ մի քանի ազգականներ, որ եկել էին ճանապարհ դնելու Սմբատին։ Մայրերը բացարձակ, Սմբատի ներկայությամբ, հանդիմանում էին Հռիփսիմեին, որ նա թողնում է յուր միակ որդուն օտար աշխարհ գնալու։ Հռիփսիմեն, ծիծաղելով և կատակներ անելով, պատասխանում էր, թե Թիֆլիսում արժանավոր հարսնացու չկա Սմբատի համար, թե նա գնում է ուրիշ երկրում պսակվելու և թե շուտով կվերադառնա մի գեղեցիկ կնոջ հետ։

Ճաշն ավարտվեց ուրախ, անթիվ անգամ խմեցին Սմբատի կենացն և բարի ճանապարհ մաղթեցին։ Մոտեցավ ուղևորության ժամը։ Գասպարն իրեղենները տարեց փոստային կայարան։ Սմբատը մոր հետ մի կառքով գնաց։ Նրանց հետևից գնացին բարեկամները։ Եղանակը սաստիկ շոգ էր, անհնարին էր արեգակի տակ մնալ։ Հռիփսիմեն ստեպ-ստեպ սրբում էր յուր ճակատի քրտինքը, ծանր հառաչելով...

Կայարանում նա ուշադրությամբ դիտեց այն կառքը, որ պիտի տաներ նրա որդուն, մտքում ցավեց, որ Սմբատը պիտի այդ շորս կողմից բաց կառքում նստի, ով դիտե, ինչ մարդկանց հետ։ Բայց նա արտաքուստ հավանություն ցույց տվեց, մինչև անգամ ասաց, թե լավ է, որ նա փակ կառքի տոմսակ չի վերցրել այդ շոգում։

Վերջապես, հասավ բաժանման տագնապալի րոպեն։ Կոնդուկտորը առաջարկեց կառք նստել։ Սմբատն ընկավ մոր գիրկը, և երկար ժամանակ նրանք չէին անջատվում միմյանցից։ Հասավ և՛ ուրիշների հերթը՝ Սմբատին համբուրելու։

Բոլոր կանայք արտասվեցին, բացի... Հռիփսիմեից։ Նա անվրդով էր։ Նա ժպտում էր։

Կոնդուկտորը Սմբատին շտապեցրեց։ Նա բռնեց յուր տեղը մի ռուս կնոջ և մի պառավ հրեայի մեջ, որ աշխատում էր բարեկամական ցույցեր անել յուր ուղեկցին։ Կառավարը բարձրացրեց ձիերի սանձերը։ Կոնդուկտորը հնչեց յուր փողը, ձիերը շարժվեցին։ Սմբատը գդակը վերցրեց վերջին բարևները տալու մորը, որ կանգնած էր անշարժ միևնույն դիրքում, միևնույն տեղում, կառքի մոտ։

— Մնաք բարև,— ասաց պառավ հրեան, քաղցր ժպտալով կառքը շրջապատողներին, որոնց մեջ նա ոչ մի ազգական, ոչ մի բարեկամ, ոչ մի ծանոթ չուներ։

Լսվեց մի սուր, տարօրինակ գոռոց, նման հուսահատ խոյի բառանչելուն սպանդագործի դանակի տակ։ Եվ մի ինչ-որ սև բան փռվեց գետնին ուղիղ կառքի առջև։ Ձիերը խրտնեցին, աջակողմինը փոքր էր մնում, որ ոտը դնի գետնի վրա տարածվածի կրծքին։

Ամենքը շփոթված նայեցին դեպի այն կողմ։ Կառավարը ամուր սեղմած ուներ յուր ձեռներում ձիերի սանձը։ Սմբատը վախեցած նայեց դեպի ցած... և բանը պարզվեց նրա համար։ Այնտեղ, գետնի վրա, յուր ոտների տակ, փոշիի մեջ տարածված էր, յուր մոր անշունչ մարմինը, մի կտոր սև լաթի պես։ Նա վայր ցատկեց կառքից, մոտեցավ և գունաթափ, դողդողալով, թեքվեց մոր վրա։ Նա բռնեց նրա թևից, բոռալով.

— Մայրի՛կ, մայրի՛կ։

Մայրիկն անշարժ էր, կենդանության և ոչ մի նշույլ չէր արտահայտում նրա նիհար, պարզ-մոխրագույն դեմքը։ Ազգականներն օգնեցին որդուն՝ բարձրացնել մոր անշնչացած մարմինն և դնել պատշգամբի վրա, ուր հավաքված էր ճամբորդներ ուղեկցողների մի մեծ խումբ։ Մեկը մի շիշ ջուր բերեց և սկսեց սրսկել Հռիփսիմեի երեսին։ Տեղի ունեցավ խիստ իրարանցում, ազգական կանայք բարձրացրին անասելի աղմուկ։ Հռիփսիմեի քույրը բարձր ձայնով լալիս էր, նա կարծում էր, որ հարվածը մահացու է։ Սակայն սառը ջրի ազդեցությունից գանգաղաբեն նա շարժվեցին ուշաթափվածի կոպերը։ Նա

աչքերը բաց արեց և, մի անգամ արտասանելով որդու անունը, կրկին թուլացավ և ընկավ Սմբատի գիրկը։

— Պարոն, ներեցեք, մենք սպասել չենք կարող,— լսեց Սմբատը յուր հետևից կոնդուկտորի անվրդով ձայնը։

Արդարև, կառքը սպասել չէր կարող, հանապարհորդներն արդեն տրտնջում էին։ Իսկ այստեղ տակավին գրեթե անշունչ ընկած էր նրա մայրը։

Նա դարձավ կոնդուկտորին.

— Թողեք իրեղեններս ցած բերեն։

Նույն վայրկյանին Հռիփսիմեն բոլորովին սթափվեց։ Նրան կառք դրեցին՝ տուն տանելու։ Նա կրկնում էր.

— Մի՛ գնար, մի՛ գնար։

Եվ Սմբատը պատասխանեց.

— Ո՛ւր կարող եմ գնալ...

Հետո, երեսը մի կողմ դարձնելով, որ աչքերի արտասուքը թաքցնի, ցածր ձայնով, այնպես որ միայն ինքը կարող էր լսել, արտասանեց.

— Այս թանկագին շղթան անկարելի է փշրել...

ԿՐԱԿ

I

Այս անգամ փաստաբան Միրաբյանի մոտ հյուր էինք լինդամենը երեք հոգի՝ մի բժիշկ, մի ճարտարապետ և ես։ Դրսում փչում էր ձմեռային բուք, կարկտի պես կոշտ ձյունի հատիկներն ուժգին զարկվում էին լուսամուտների ապակիներին։ Սեղանի վրա խշշում էր ինքնաեռը, վառարանի մեջ ուրախ-ուրախ այրվում կրակը, իսկ լամպը մանիշակագույն լուսամփոփի միջով տարածում էր մեղմ, հաճելի լույս։ Այս բոլորը մեզ տրամադրում էր նույն երեկո սովորականից ավելի նստել հյուրասեր տանտիրոջ տաք, համեստ, բայց ճաշակով կահավորված, դուրեկան սենյակում։

Բժիշկը ոգևորված խոսում էր անհատի և շրջանի փոխադարձ ազդեցության մասին, և մենք վիճաբանում էինք։

Միրաբյանը լուռ էր և կարծես չէր հետաքրքրվում մեր խոսակցությամբ։ Նա անթարթ աչքերով նայում էր վառարանին մերթ ընդ մերթ շփելով յուր խիտ և կարճ միրուքը, որ արդեն սկսել էր ճերմակել։

— Կրակ էր, ինքն իրան կերավ, ոչնչացավ,— հանկարծ արտասանեց նա կամացուկ, շարունակ նայելով վառարանին։

Բժիշկը լռեց և մենք բոլորս զարմացած նայեցինք Միրաբյանին։

— Ներեցեք, պարոններ,— ասաց նա մի քիչ շփոթվելով,— ես մտածում էի, բայց չկարծեք թե ականջ չէի դնում ձեզ։

— Ինչի՞ մասին էիր մտածում,— հարցրեց բժիշկը։

— Զարմանալի է մարդու միտքը... գուցե գաղափարների ասոցիացիա էր. մտածում էի այս վառարանում այրվող այն կանաչագույն կեղևով փայտի մասին։ Նա մի նորաբույս ծառի բուն է եղել։ Այդ կրակը և ձեր խոսակցությունը ինձ հիշեցրեց մի դեպք, մի... մի... անբախտ մարդու կյանքը։

Նշանակում էր, որ Միրաբյանի անսպառ շտեմարանում կար դարձյալ մեզ անհայտ մի պատմություն։ Մենք միշտ հաճույքամբ էինք լսում նրան, իսկ նա սիրում էր պատմել։ Ինչ ասել կուզի, որ մենք հետաքրքրվեցինք ու խնդրեցինք պատմել այն, ինչ որ այդ րոպեին պատճառել էր նրան այնքան մտախոհություն։ Մի-մի բաժակ թեյ ածելով մեզ համար, նա վառեց մի նոր ծխախոտ և նստեց դարձյալ վառարանի հանդեպ։

— Այն ժամանակ, պարոններ, ես դեռ ուսանող էի,— սկսեց նա անմիջապես,— և բնակվում էի Մոսկվայի ծուռ փողոցներից մեկում, մի պատվավոր ընտանիքում։ Նա բաղկացած էր մի պառավ այրիից և երկու երիտասարդ աղջիկներից՝ մեկը քսանուերեք, մյուսը մոտ քսան տարեկան։ Մայրը վարձով սենյակներ էր տալիս, մեծ աղջիկը երաժշտության դասատու էր, իսկ փոքրը նոր էր ավարտել գիմնազիոնը։ Նրանց հայրը եղել էր երկար տարիներ գերմաներենի դասատու մի դպրոցում։ Այրին նրա մահից հետո թոշակ էր ստանում։ Բնակարանի յոթ սենյակներից երկուսում կենում էին տանտիրուհիները, իսկ հինգը տրված էին վարձով։

Մի օր սենյակներից մեկը դատարկվեց. պառավն ընկավ հոգսի մեջ։ Նա մեզ խնդրեց, ինչպես և է, վարձող գտնել։ Պառավի խնդիրը կարողացավ կատարել իմ դրկիցներից մեկը՝ ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի մի հայ ուսանող՝ Զարիֆյան անունով։

Որովհետև Զարիֆյանը դեր է խաղալու իմ պատմության մեջ, բարեհաճեցեք լսել նրա մասին մի քանի խոսք։ Դա այն մարդկանցից էր, որոնց մասին, հենց առաջին անգամ նայելիս, կարելի է ասել՝ թե կյանքը երբեք նրանց համար տանջանքների բով չի դառնալ։ Նրա կարմիր երեսը, կարմիր ականջները, տափակ ճակատը, բաց-կինամոնագույն քծնող աչքերը արտահայտում էին խաբուսիկ համեստության և ամբարտավանության մի անորոշ խառնուրդ։ Նրա քայլվածքը պանդաղ էր, ձևերը մեղմ, խոսակցության եղանակը մի քիչ արհամարհական, մի քիչ ծանրաբարո։ Դա նրա բնական հատկությունները չէին, այլ արվեստական, շինծու։ Նա աշխատում էր երևալ ավելի խոհեմ և հասուն, քան կարող էր լինել քսանուչորս տարեկան մի երիտասարդ, որ շուտով պիտի ավարտեր ուսումը։

Ես զգում էի դեպի Զարիֆյանը ինչ-որ խուլ հակակրանք, թեև նա ինձ ոչ մի անախորժություն չէր պատճառել։ Նա ինձ հետ վարվում էր շատ քաղաքավարի, նույնիսկ աշխատում էր հաճոյանալ։ Նա աշխատասեր էր, հաշվագետ, խորամանկ և գիտեր գրավել պրոֆեսորների ուշադրությունը։ Նրա աչքերի արտահայտությունը պարունակում էր ինչ-որ վատ բան, հոգու մի եսական և անհաճո ձգտում, բայց միայն այն ժամանակ, երբ լուռ էր։ Դժբախտաբար կյանքում առհասարակ դիտող մարդիկ շատ քիչ են պատահում, ուստի Զարիֆյանը լնկերների շրջանում համարվում էր բարեսիրտ, հաճեստ, ի՞նչ եմ ասում, նույնիսկ յուր ազնվությամբ օրինակելի։ Այնինչ, ես ոչ ոքից չէի լսում, թե երբևէ նրա կողմից իրականորեն արտահայտվել են այդ սիրուն հատկությունները։

Ահա այդ երիտասարդը մի օր հետը բերեց բնագիտական ֆակուլտետի մի ուսանող, որը նույնպես հայ էր և կովկասցի։ Առանց երկար խոսելու, նա վարձեց սենյակը ճաշով և նույն օրն ևեթ տեղափոխվեց։ Երրորդ օրից սկսած նա արդեն ճաշում էր մեզ հետ միասին։ Ես նստած էի նրա դեմուդեմ և կամա-ակամա դիտում էի նրան։ Նրա թուխ-թուխ դեմքը գունատ էր, աչքերը խոշոր, սևաթույր, ճակատը լայն և պայծառ։ Նրա ուղղաձիգ քթթը, նուրբ և մի փոքր կանացի շրթունքները, որ նոր-նոր ծածկվել էին կակուղ մազերով, նրա ամբողջ կեր-

պարանքը արտահայտում էին հոգու անխառն մաքրություն։ Նրա նայվածքը խելացի էր և թափանցիկ։ Կար մի ինչ-որ հեգնություն այդ նայվածքի մեջ, մի ներքին ծիծաղ, բայց բարի և ցավակցական ծիծաղ այն բոլորի վրա, ինչ որ տեսնում էր. գոնե, այսպես թվաց ինձ հենց առաջին անգամից։

Ճաշի միջոցին, ինչպես և հետո, նա մի վայրկյան հանգիստ չէր մնում։ Մասնակցելով մեր խոսակցությանը, նա մերթ սեղմում էր շրթունքները, դառն ժպտում և ճակատը տրորում, որպես թե գուխը ցավելիս լիներ, մերթ անսպասելի ցնցումներ էր գործում, որպես թե մի անախորժ բան էր լսում։ Եվ միշտ նրա կրակոտ աչքերը կայծեր էին ցայտեցնում։ Նրա նիհար ձեռները մի քիչ դողում էին, ձայնը երերվում էր խոսակցության ժամանակ և երբեմն խեղդվում կոկորդում։

Հետևյալ օրը ես ճաշի ժամանակ դարձյալ նստեցի նրա դեմուդեմ։ Նույնն արի և երրորդ, չորրորդ օրերը։ Կարծես, նրա դեմքի, մանավանդ աչքերի մեջ կար մագնիսական զորություն, որ չէր թողնում իմ հայացքը հեռացնել իրանից։ Մի բան ասելիս, նախ և առաջ նրան էի նայում։ Ինձ հաճելի էր նրան նայել։ Իսկ նա նայում էր ամենին և ոչ ոքի։ Թվում էր, որ նրա միտքը երբեք չի կենտրոնանում սեղանակիցների վրա, որ խոսելով մեզ հետ, մտածում է ուրիշ բաների մասին։

Հինգ դրկիցներից մեկը լեհացի էր, ծառայում էր մի ինչ-որ բանկում, մյուսը՝ ռուս ուսանող, մենք՝ հայեր, տանտիրուհիները՝ գերմանացիներ, ամենքս էլ խոսում էինք, իհարկե, ռուսերեն։ Այսպիսով մեր խումբը ներկայացնում էր մի միջազգային խառնուրդ։ Զարիֆյանը սովորաբար նստում էր օրիորդների միջև։ Աջ ու ձախ ծառայելով մեկին ու մյուսին, նա երկուսին էլ հաճոյախոսություններ էր անում։ Մեծ քույրը—Մելիտան նշանված էր մի գերմանացի երաժշտի վրա, շուտով պիտի ամուսնանար և այդ միջոցին զբաղված էր յուր հարսանիքի հագուստներով։ Նա գեղեցիկ չէր, բայց խելոք էր և բարի։ Բավական սիրուն էր փոքր քույրը՝ Ադելաիդան։ Նրա մազերը ոսկեգույն էին, գեմքը առողջ, աչքերը խոշոր և լի կենսուրախության հրով, վառվռուն, կազմվածքը կանոնավոր,

միջահասակ։ Մի ուրախ ու զվարթ աղջիկ էր, միշտ երգում էր, միշտ թռչկոտում, միշտ ծիծաղում։ Եվ դա այնքան ներդաշնակում էր նրա պատանեկական հասակին, որքան ծիծեռնակի երգը՝ գարնան առավոտին։ Մենք բոլորս սիրում էինք նրան ինչպես եղբայր, կատակներ էինք անում, բարկացնում, և նրա առողջ քրքիջների շնորհիվ մեր ճաշն անցնում էր զվարճալի։

Բայց այն օրից, երբ նոր դրկիցը դարձավ մեր ճաշընկերը, մեր խմբի միջազգային բնավորությունն սկսեց քիչ-քիչ փոխվել։ Նա չէր մասնակցում մեր կատակներին ու զվարճախոսություններին, չէր ծիծաղում և ոչ օրիորդներով զբաղվում։ Կարելի էր կարծել, որ մի ծանր, անխուսափելի միտք անընդհատ տանջում էր նրան։ Իսկ իմ հետաքրքրությունը օրեցօր ավելանում էր։ Փափագում էի, որքան կարելի է, շուտ և մոտիկ ծանոթանալ այդ մարդուն։ «Է՛հ, մտածում էի, գուցե մի վիշտ ունի, գուցե կարոտ է ընկերական սփոփանքների, և ես կարող եմ օգտակար լինել»։ Ես նրան առաջ էլ տեսել էի մի քանի անգամ, բայց ծանոթ չէի։ Նա սկզբում եղել էր Պետերբուրգի համալսարանում և հենց այն տարին էր տեղափոխվել Մոսկվա։

II

Մի անգամ մենք արդեն ճաշի էինք նստել գերմանական ճշտությամբ ուղիղ որոշյալ ժամին, իսկ մեր նոր սեղանակիցը դեռ չկար։ Դրա համար մենք առաջվա պես ուրախ էինք, մանավանդ օրիորդները։ Կար մի բարոյական զորություն այդ երիտասարդի մեջ, որ անբռնաբարելի կերպով ազդում էր մեզ վրա։ Նայելով նրա մշտապես գունատ ու մելամաղձոտ դեմքին, մենք կամա-ակամա զսպում էինք մեր ծիծաղը և նայում միմյանց երեսին։

Արդեն ճաշը ավարտվելու վրա էր, երբ հանկարծ ներս մտավ և առանց սովորական բարևն ասելու, նստեց տեղը։ Այս անգամ նրա դեմքն ավելի էր գունատ, աչքերն այրվում էին՝ մոայլված և կնճռված ճակատի տակից կայծեր արձակելով։ Այդ միջոցին ռուս ուսանողը լեհացու հետ վիճաբանում էր

մարդասիրական և բարեգործական գաղափարների մասին։ Դա ժամանակակից խոսակցության առարկաներից մեկն էր։

Ուսանողը պնդում էր, թե մարդասիրությունը այժմյան տնտեսական անկանոն կազմակերպության հետևանքներից մեկն է։

Լեհացին հերքում էր նրա ասածները։

Ռուս ուսանողը խոսում էր առանձին ոգևորությամբ, երևի խրախուսված Զարիֆյանի հավանողական ժպիտներից և Մելիտայի ուշադրությունից։

— Ո՛չ,— գոչեց հանկարծ մեր նոր սեղանակիցը, գլուխը բարձրացնելով և նայելով ուղղակի ռուսի աչքերին,— ոչ, դուք սխալվում եք։ Ձեր ասածները ցնորք են և ցնորք էլ կմնան, քանի որ անհատի հոգին չի ենթարկվել արմատական հեղաշրջման. հասկանո՞ւմ եք, արմատական...

— Ի՞նչ եք կամենում ասել, պարոն Սանթուրյան,— հարցրեց ռուսը զարմացած։

Զարմացանք մենք բոլորս էլ և մի հարցական հայացք ձգեցինք Սանթուրյանի վրա։

— Ա՛յն, որ մեր հոգին է ապականված, մեր սիրտն է նեխված, և ոչ մեր միտքը խավար,— պատասխանեց նա, մի ներվային շարժումով հեռացնելով իրանից ապուրի ամանը, որ աղախինը նոր էր դրել նրա առջև։— Մարդկությունը երբեք չի հասնիլ ձեր երևակայած վիճակին, քանի որ գիտությունն ու կրթությունն անընդունակ են գչլել արմատից մեր կրծքի ներսակ թաքնված, քարացած ու ապականված մսի կտորը և նրա տեղը դնել իսկական մարդկային սիրտ։ Լսեցե՛ք, մարդկային սիրտ եմ ասում... Դուք պախարակում եք բուրժուաներին, որոնք գոնե իրանց սեղանի փշրանքը ձգում են չքավորներին։ Բայց ի՞նչ կասեք այն կրթված ու կրթվող բարբարոսների մասին, որոնք խոսքով ի՛սկ և ի՛սկ ձեր պաշտպանած գաղափարներն են քարոզում, իսկ գործով ուտում են իրանց բարեկամի ոչ միայն միսը, է է, դա քիչ է, այլև հոգին. հասկանո՞ւմ եք, հոգին։ Այո՛, ուտում են, մարսում և էլի գաղափարական մարդիկ համարվում։ Ախ, ներեցե՛ք, տանտիրուհիներ, ես այսօր ախորժակ չունիմ. ներեցե՛ք, պարոններ...

Այս ասելով, շտապով վեր կացավ և գնաց յուր սենյակը։

Մենք նայեցինք միմյանց երեսին։ Զարիֆյանը քթի տակ ժրպտաց, գլուխը շարժեց և ինչ-որ խոսք ասաց Ադելաիդային։ Իսկ ես չկարողացա զսպել իմ հետաքրքրությունը, թողի սեղանը և գնացի Սանթուրյանի հետևից։ Մոտենալով նրա դռներին, մի քանի վայրկյան տատանվեցի— մտնե՞լ, թե՞ ոչ։ Մինչև այդ օրը նրա սենյակում չէի եղել և ոչ էլ նա էր ինձ այցելել։ Բայց իմ ձեռը, գրեթե, ակամա երկու անգամ զարկվեց դռներին, և ներսից լսվեց նրա հուզված ձայնը—«մտե՛ք»։ Երբ ներս գնացի, նա անկողնակալի վրա թերթերի մեջ շտապով փաթաթում էր ամառային վերարկուն։

— Ներեցե՛ք, ես անքաղաքավարի վարվեցի. ա՜խ, ներեցեք,— կրկնեց նա, յուր այլայլված դեմքը դարձնելով ինձ։— Դուք, երևի ինձ խելագար եք համարում։ Գուցե իրավունք ունիք։ Բայց ես շատ ուրախ եմ ձեր այցելությանը. ցավում եմ միայն, որ պետք է գնամ... Գիտե՛ք, գործը անհետաձգելի է, իսկ ես անսիրտ, դեռ ուզում էի ճաշել...

Նա գործը վերջացրեց, հագավ ձմեռային վերարկուն և դուրս գնաց, հետը տանելով կապոցը։

Ես հիմարի պես ապշած նայում էի նրա հետևից։

Մի ժամ անցած, երբ հագուստով պառկած անկողնակալիս վրա, մտածում էի դեռ այդ մարդու տարօրինակ վարմունքի մասին, լսեցի իմ դռների ձայնը։ Ներս մտավ Սանթուրյանը, և ես լամպի լուսով նշմարեցի, որ այժմ նրա դեմքը հանգիստ է։

— Կրկին անգամ ներողություն. գնանք իմ սենյակը՝ միասին թեյ խմելու։

Նա բարեկամաբար բռնեց իմ թևից և տարավ ինձ յուր սենյակը։

— Ես չափից դուրս վրդովված էի,— ասաց նա, թեյ պատրաստելով,— այժմ ոչինչ, անցավ...

— Բայց ի՞նչ է պատահել։

— Դժբախտություն. ո՛չ, տմարդություն։ Մի շատ սովորական, բայց սոսկալի տմարդություն. ընկերի տմարդություն՝ ընկերի վերաբերմամբ։ Լսեցե՛ք, եթե կամենում եք։

Նրա պատմածից երևաց, որ յուր ծանոթ ուսանողներից մեկը հիվանդ է։ Նա համալսարանում լսում է այդ մասին,

գնում է հիվանդին այցելելու։ Տեսնում է, որ մարդը մենակ, անօգնական պառկած է։ Ոչ բժիշկ է գալիս, ոչ դեղերի փող ունի, նույնիսկ թեյ-շաքարն էլ վերջացել է։ Դա մի խեղճ մալարոս էր, ամենից ատված, արհամարհված։ Արհամարհված այն պատճառով, որ նրա մայրը վատ ճանապարհի էր եղել և հենց այն ժամանակ էլ էր։ Նա մի անհայտ դժբախտ զավակ էր, որ կրում էր անառակ մոր հանցանքի պատիժը։

— Երևի, ժառանգականության օրենքների հիման վրա,— գոչեց Սանթուրյանը, հետզհետե նորից հուզվելով,— չէ՞ որ մենք այժմ անգիր ենք անում Դարվինի թեորիան։ Երևակայեցեք, նա ամաչում է անգամ ընկերների օգնությանը դիմելու այդ նեղ վիճակում։ Դժբախտաբար ես գրպանումս միայն հիսուն կոպեկ ունեի։ Ի՞նչ կարելի էր անել։ Վազեցի մեկի, մյուսի, երրորդի մոտ. բոլորը մերժեցին ինձ հինգ ռուբլի տալուց։ Վերջապես, դիմում եմ չորրորդին։ «Փող չունիմ» ասում է։ Է՛հ, ի՞նչ արած, ստիպված դուրս եմ գալիս ձեռնունայն։ Սանդուղքի վրա հանդիպում եմ նրա աղախնին։ Կինը, մի ձեռին բռնած մի շիշ թանկագին խմիչք, մյուս ձեռի ափում սեղմած մի բուռն թղթադրամ, դիմում է նրա սենյակը։ Մի շար միտք ինձ թելադրում է, որ մեր փող չունեցող պարոնը յուր ընկերներին այս երեկո շաքարօղիով հյուրասիրելու համար քսանհինգանոց է ուղարկել խմիչքների խանութը... Ահա ինչե՞ր են պատահում։ Իսկ այդ ուսանողը միշտ բարձր բաների մասին է խոսում... Օհ՜, զզվում եմ միանգամայն այդ խոսքերից. ահա ինչու այսօր այնքան կոպիտ պատասխանեցի մեր սեղանակցին...

Նրա խոսքերի մեջ զգացվում էր մի անկեղծ հոգու բնական վրդովմունք։

— Ինչո՞ւ ինձ չդիմեցիք, ես փող ունեի,— ասացի ես։

— Առայժմ կարիք չկա. ես նրա համար փող գտա...

Հարկավոր չէր հարցնել իմանալու համար, թե Սանթուրյանը որտեղից է փող ճարել։ Նա անշուշտ գրավ էր դրել իր ամառային վերարկուն։

Այդ երեկո երկար ժամանակ մնացի նրա մոտ և բավական ծանոթացա նրա հայացքներին։ Զնայելով տարիքին, նա անհամեմատ ավելի զարգացած էր, ավելի շատ կարդացած և

կարդացածը լավ ըմբռնած, քան բոլոր իմ ծանոթ ուսանողները։ Խոսում էր լուրջ բաների մասին։ Երբեմն նրա միտքը այնպիսի թռիչքներ էր գործում, որ ես հազիվ կարողանում էի երևակայությամբ հասնել նրան։ Նրա ոչ մի դատողությունը սովորական չէր, ոչ մի դարձվածք անգամ չէր արտասանում այնպես, ինչպես ուրիշները։

Նա զգայուն էր և անչափ զգայուն։ Նրան վրդովեցնում էր մարդկանց անտարբերությունը դեպի հալածվածները, չքավորները, խեղճերը։ Եվ այդ մասին խոսելիս, ավելի էր հուզվում, գունատվում, նրա ձայնը ավելի էր դողում։ Իսկ աչքերը— կրակի այդ անսպառ աղբյուրը— շարունակ կայծեր էին արձակում։

Ո՛չ, ես այդ տեսակ շարժուն դեմք կյանքումս էլ չեմ տեսել։ Մարդը, կարծես, ամբողջովին բաղկացած էր ներվերից և այն էլ մերկ ներվերից։

Այնուհետև ես երբեմն գնում էի նրա սենյակը կամ ինքն էր գալիս ինձ մոտ։ Նա խոսում էր ամեն բանի մասին, բացի մեկից — յուր անձնավորության և ընտանեկան վիճակի։ Իսկ ես, հարկավ այդ մասին չէի հարցնում։ Միայն ինձ թվում էր, որ նրա ազգանունը ինձ ծանոթ է, որ ես մի տեղ լսել եմ, թե կարդացել նրա մասին մի պատմություն։

Ես սիրեցի նրան։ Սիրում էր արդյոք նա էլ ինձ,— չգիտեի։ Զգում էի միայն, որ իմ այցելությունները նրան չեն ձանձրացնում։ Մեր սենյակները միմյանցից բաժանված էին Զարիֆյանի սենյակով։ Երբեմն Սանթուրյանի ձայնը լսում էի իմ հարևանի մոտից։ Շուտով նկատեցի, որ Զարիֆյանը արդեն գրավել է նրա համակրությունը...

III

Մելիտան պսակվեց և ամուսնու հետ տեղափոխվեց Օդեսա։ Մեր խմբի միակ զարդը մնաց Ադելաիդան։ Զարիֆյանը սկսեց ավելի հետամուտ լինել նրան։ Թե ինչ ուներ սրտումը՝ այդ դժվար էր իմանալ նրա նման մի գաղտնապահ և խորամանկ մարդուց։ Միայն այդ երիտասարդի հարաբերությունը

դեպի օրիորդը ինձ դուր չէր գալիս, ինչպես և նա ինքն առհասարակ։ Երբեմն նկատում էի, որ օրիորդի հետ խոսելիս, նրա քծնող աչքերի մեջ փայլում էր վավաշոտություն։ Ճշմարիտ է, Ադելաիդան չէր փախչում աչքի քաղցր և խորհրդավոր ժպիտներից, բայց նկատում էի, որ աչքի տակով դիտում է Սանթուրյանին և ավելի ուշադիր է դեպի նա։ Մինչդեռ ամեն բանի վերաբերմամբ զգայուն երիտասարդը տակավին անտարբեր էր նայում սիրուն օրիորդին։

Իմ բարեկամությունը Սանթուրյանի հետ օրեցօր դառնում էր մտերմական, բայց նրա ընտանեկան կյանքը ինձ համար դեռևս անթափանցելի էր։

Այն ուսանողը, որին օգնելու համար նա գրավ էր դրել վերարկուն, թոքախտ ուներ, շուտով մեռավ։ Նրա թաղման օրը Սանթուրյանը առավոտ կանուխ ինձ զարթեցրեց և խնդրեց տալ տասնհինգ ռուբլի պարտք։ Բարեբախտաբար մոտը փող կար, տվի։ Նա խելագարի պես դուրս թռավ և շտապով հայտնեց ինձ այն հիվանդանոցի տեղը, ուր խեղճ ուսանողին փոխադրել էին վերջին ամիսը։

Այդ օրը ինձ համար կմնա անմոռանալի։ Ես գնում էի հանգուցյալի դագաղի հետևից՝ տասի չափ աղքատ ուսանողների հետ։ Ներկա էր և Զարիֆյանը։ Նա յուր դեմքին տվել էր հանդիսին վայել տխուր, միայն իմ կարծիքով կեղծ՝ արտահայտություն։ Բայց, աստված իմ, այն ի՞նչ վիճակի մեջ էր Սանթուրյանը։ Երբեք մի հանգուցյալի դագաղի շուրջը ես չէի տեսել այդքան ճնշված, ընկճված, վշտալի կերպարանք։ Թաղման հոգսերը նա յուր վրա ՝ էր առել։ Եվ հեռավոր Կովկասից եկած մարդը մի օտարազգի ուսանողի դագաղին հետևում էր այն վիճակում, որի մեջ գուցե միայն հարազատ մայրը կարող էր լինել։

— Ի՞նչ կապ կար նրանց մեջ,— հարցրի ես մի ուսանողից։

— Ոչինչ. նրանք միևնույն ֆակուլտետի ուսանողներ էին. ահա բոլորը,— պատասխանեց նա։

Դիակառքը հասավ գերեզմանատուն։ Միակ քահանան և միակ տիրացուն կատարեցին վերջին կարգը։ Այն րոպեին, երբ չորս զույգ բիրտ ձեռներ ուզում էին դագաղը իջեցնել գե-

ռեզման, Սանթուրյանը բանվորներին ձեռով նշան տվեց սպասել։

Նա կանգնած էր գերեզմանից հանած թարմ հողի բարձրության վրա, դագաղի ոտքի կողմը։ Նրա այտերը և ականջները ցրտից կապտել էին, շրթունքները դողում էին, ատամները զարկվում էին միմյանց, իսկ աչքերը դարձյալ կրակ էին արձակում։

Ձեռի մի ջղային շարժումով նա հետ ձգեց լայն ճակատի վրա սփռված գանգուր մազերը։ Նա սկսեց խոսել։ Սկզբում նրա ձայնը երերվում էր, շրթունքները ցրտից անզոր էին արտահայտել խոսքերը։ Բայց այս տևեց միայն մի քանի վայրկյան։ Նա հաղթեց ցրտին, զսպեց ներքին հուզմունքը, ձայնը բարձրացրեց։

Երբեք ես չէի լսել մարդկային խոսքը՝ բխած սրտի այդքան անհուն խորությունից։ Դա դամբանական չէր, այլ մի ամբողջ ողբերգություն։ Նա մռայլ գույներով նկարագրում էր հանգուցյալի բարոյական վիճակը, պատկերացնում էր նրա դիրքը ընկերների շրջանում։ Ամբողջ ժամանակը խեղճը ենթարկված է եղել մի խուլ և անլուր արհամարհանքի։ Իբրև զգայուն և հիվանդ մարդ, նա չի կարողացել սառնարյուն տանել այդ արհամարհանքը և օր-օրի վրա ընկճվել է նրա ծանրության ներքո։ Եվ ի՞նչ է եղել նրա հանցանքը։ Միայն յուր մոր մոլորությունը, որ բերանից-բերան պատմվելով, հայտնի է եղել ամբողջ համալսարանին։

Դա էր Սանթուրյանի դամբանականի միտքը։ Եվ նա, այդ կենդանի փաստը հիմք վերցրած, արծարծում էր մի ամբողջ գաղափար անհատի և շրջանի մասին։ Նա մի բարբարոսական զոհ էր համարում հանգուցյալին, զոհ մարդկային եսամոլության, գոռոզության, կեղծ պատվասիրության։

Նրա ձայնը ցրտից թանձրացած օդի մեջ այժմ արձակում էր երկաթի սուր հնչյուններ, այլևս չէր դողդողում, չէր խեղդվում կոկորդումը։ Նա թվում էր ամբողջովին մի կենդանի և սոսկալի բողոք ընկերների անիրավության դեմ։ Ա՜խ, որքան ցավում եմ, որ նկարիչ չեմ։ Այդ պահին նա այնքան գեղեցիկ էր, գրավիչ և ազդու յուր կերպարանքով, որ կարող էր ոգեվորություն ներշնչել մի հանճարեղ վրձինի։

Ամենքն զգացվեցին։ Իմ հոգուն տիրել էր մի անսովոր ջերմություն։ Ցուրտը ինձ համար անզգալի էր դարձել, ես ամբողջովին հափշտակվել էի Սանթուրյանի վառվռուն խոսքերով և նրանց խոր իմաստով։

— Տեր աստված, ո՛րքան պերճախոս է, ո՛րքան կրակ կա այդ մարդու սրտում, և ո՛րքան ուժ նրա ձայնի մեջ,— մտածում էի ես։

Ես արտասվեցի, նաև մի քանի ուրիշները, բայց ոչ Զարիֆյանը։

Հանդեսը վերջացավ և մենք, Սանթուրյանի խոսքերի խորին տպավորության տակ, վերադառնում էինք տուն։

— Դուք կարող եք պարծենալ ձեր հայրենակցով, նա տաղանդ է,— ասաց ինձ մի լեհացի ուսանող։

Այո՛, ես անկեղծ պարծենում էի իմ հայրենակցով։ Եթե նա յուր դամբանականը գրեր, մի սքանչելի էպոպեա դուրս կգար, եթե արտասաներ մի մեծ հանդիսում— հաղարավոր քարացած սրտեր կշարժեր։ Նա տաղանդ էր, և անխառն, ինքնուրույն տաղանդ։

— Լավ խոսեց մեր հայրենակիցը, բայց խոսողը նա չպիտի լիներ,— դարձավ ինձ Զարիֆյանը։

— Ինչո՞ւ նա չպիտի լիներ։

— Այնտեղ գրեթե բոլորը գիտեն նրա հոր պատմությունը։

— Ի՞նչ պատմություն, ի՞նչ եք ասում,— գոչեցի ես հետաքրքրված։

— Է՛հ, ուրեմն ձեզ հայտնի չէ։ Նրա հայրը բանտումն է. ո՞վ գիտե, գուցե շուտով աքսորվի...

— Ի՞նչ հանցանքի համար։

— Կարծես կովկասցի չեք և հայ։ Միթե չե՞ք կարդացել Սարգիս Սանթուրյանի դատը՝ յուր ապահոված տունը կրակ գցելու մասին։ Այդ դատը ահագին աղմուկ հանեց։ Նրա մասին գրեցին նույնիսկ այնտեղի և Պետերբուրգի մեծ լրագրերը։

Ահա ինչ, ես մտաբերեցի, թե ինչու Սանթուրյան ազգանունը ինձ ծանոթ էր թվում։ Արդարև, այդ դատը աղմուկ էր հանել։ Մի քանի հրապարակախոսներ Սարգիս Սանթուրյանին ցույց էին տվել իբրև ազգային ընդհանուր տիպար և այս

հիման վրա հարձակողական հոդվածներ գրել ամբողջ հայ ազգի դեմ։ Սանթուրյան ազգանունը դարձել էր նախատական մակդիր հայերի մեջ, մանավանդ «ազգասերների» շրջանում։

Զարիֆյանի խոսքերի մեջ ես զգացի մի տեսակ սատանայություն։ Բայց եթե նա, մեր ընկերոջ ընտանեկան տխուր պատմությունն ինձ հիշեցնելով, ուզում էր իմ մեջ արհամարհանք զարթնեցնել՝ չարաչար սխալվում էր։ Ես այնուհետև սկսեցի ավելի սիրել Սանթուրյանին։

Այժմ ես այցելում էի նրան գրեթե ամեն օր և միշտ զբաղված էի գտնում։ Նա խկույն գործը թողնում էր և սկսում ինձ հետ զրուցել։

Հաղիվ էր պատահում, որ նա հոգով քիչ թե շատ անվրդով լիներ, միշտ հուզված, միշտ շփոթված։ Ամեն մի անարդարություն, թե՛ առհասարակ կյանքի մեջ և թե ընկերների շրջանում, պղտորում էր նրա սիրտը։ Իսկ անարդարություններ շատ էր տեսնում և միշտ հանդիսանում էր պաշտպան հարբստահարվածին, զրկվածին, թույլին և խեղճին։ Մի անգամ ինձ մոտ կարդաց, թե ինչպես Խարկովում մի կին տանջել է յուր խորթ աղջկան և սպանել. և սկսեց երեխայի պես հեկեկալ։

Նա չէր խոսում միայն յուր հոր մասին, և այս հանգամանքը ինձ թվում էր միակ սև գիծը նրա անհերքելի ազնվության մեջ։

Շուտով ես իմացա, որ նրա հայրենակից ուսանողներից շատերը աշխատում են փախս տալ նրանից, անպատված ու ապականված համարելով Սանթուրյանի ազգանունը։ Եվ ոմանք այդ համարում էին հայրենասիրություն։ Թող, ասում էին, օտարները հասկանան, որ մենք էլ գիտենք պատժել մեր հասարակության մեջ երևացող ախտերը։

— Նա ինքը վատ տղա չէ, բայց շատ է պաշտպանում հորը,— ասում էր մեկը։— Նա ազգային հպարտություն չունի։

— Եթե նա լավ մտածեր, վաղուց հրաժարված կլիներ հորից,— ասում էր մյուսը։

— Նա ինքը առաջինը պետք է ապտակեր նրան,— գոռում էին ավելի արմատականները։

Ապտակել հարազատ հո՞րը։ Օ՜օ, երիտասարդություն,

երիտասարդություն։ Բարոյականության այդ անողոք ասպետներից շատերը այժմ կյանքի մեջ են։ Եվ ի՞նչ, դեռ երեկ նրանցից մեկին տեսա դատարանում՝ փրփուրը բերանին մի բանկ կողոպտած պարոնի պաշտպանելիս։

Ես նկատում էի, որ ընկերների այդ խիստ վարմունքը ազդում էր Սանթուրյանի վրա, և ազդում էր շատ ծանր։ Նա այնքան ինքնասիրություն ուներ, որ ինքն էր փախս տալիս ամենից, ոչ ոքի չէր այցելում, և ոչ ոքի էլ չէր ուզում ընդունել իր մոտ։ Միայն Զարիֆյանը նրա հետ գեթ արտաքուստ բարեկամություն ուներ։ Այդ մարդը քանի՜-քանի՜ անգամ իմ ներկայությամբ օգտվել էր Սանթուրյանի բարեկամությունից։ Մինչդեռ ես մի անգամ չտեսա, որ նա գեթ ամենաթույլ կերպով պաշտպաներ Սանթուրյանին յուր ընկերների մոտ։

IV

Մի անգամ, իրիկնադեմին, մտնելով Սանթուրյանի սենյակը, տեսա, որ նա, գլուխը սեղանի վրա դրած, հեկեկում է։ Ես շփոթվեցի, կամեցա ետ դառնալ։ Բայց նա արդեն լսել էր իմ քայլերի ձայնը, հետ նայեց, և ես մնացի սենյակում։ Նա շտապով սրբեց աչքերը և ոտքի կանգնեց։

— Ներեցեք տարաժամ այցելությանս համար,— ասացի ես։

— Օօ, ոչ, տարաժամ չէ, ուրախ եմ, որ եկաք։ Նստեցեք, խնդրեմ, ոչի՞նչ, մի քիչ հուզված էի. ինձ հետ շատ է պատահում։

Այո՛, շատ էր պատահում, բայց ի՞նչ էր այս անգամ առիթը։ Ես կամեցա անպատճառ իմանալ։ Նա միայնակ էր. գրեթե բոլորովին միայնակ, օտար երկրում, օտար շրջանում, և ես անկեղծ կամենում էի նրան սփոփել։

— Ատում եմ կյանքը,— գոչեց նա, արագ-արագ անցուդարձ անելով սենյակում,— մարդիկ չար են, չափազանց չար։ Ի՞նչ ենք արել, որ մեզ հալածում են... Միթե մեղավո՞ր ենք, որ սիրում ենք մեր հորը... Միթե դատավորները ամենագե՞տ են, անսխալ, և երբեք անարդար վճիռներ չե՞ն թաք-

չում նրանց արդարամիտ հայացքից... Ես ճանաչում էի իմ հոր սիրտը...

Նա ինձ սիրում էր... նա պաշտում էր յուր ընտանիքը։ Եթե մի մեղք գործել է, գիտեմ, միայն և միայն յուր ընտանիքի բարօրության համար է գործել։ Բայց ո՛չ, նա մեղավոր չէ, հավատացեք։ Իմ սիրտը երբեք չի կարող հաշտվել այդ մտքի հետ... Էհ, բայց թող լիներ ամենավերջին հանցավորը, դարձյալ ես չէի կարող դուրս ձգել իմ սրտից որդիական սերը... Մեղադրեցեք բնությանը, որ այս խոր, անբացատրելի զգացումը դրել է իմ սրտի մեջ։ Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ։ Իմ հայրը պետք է արդար լինի, որովհետև նա միշտ ազնիվ է եղել։ Ինչո՞ւ է նա պատժվում, ինչո՞ւ են մեզ պատժում... Ահա, կարդացե՛ք, ձեզ կարելի է հավատալ...

Այս ասելով, նա ձգեց իմ առջև մի նամակ։ Ես կարդացի։ Նամակը գրում էր Սանթուրյանի փոքր եղբայրը, որ գիմնազիստ էր։ Այստեղ նկարագրված էր ընտանիքի վիճակը, հասարակության խուլ արհամարհանքը դեպի նա։ Գիմնազիստը գանգատվում էր յուր ընկերների վրա, որոնք նրան ամեն քայլափոխում հիշեցնում էին հոր դատը, սրախոսում, ծաղրում... Ազգականներից շատերը երես էին դարձրել նրանցից։

Բայց կար մի հանգամանք, որ ամենից ավելի էր հուզել Սանթուրյանին։ Նրա քույրը արդեն նշանված է եղել մի երիտասարդի հետ, երբ հոր դատը բացվել է։ Փեսացուն սկզբում ուշադրություն չի դարձրել և մտադիր է եղել դատը վերջանալուց հետո, իսկույն ամուսնանալ։ Դա ձգձգվել է և, վերջապես, առաջին դատարանում վճռվել է տխուր։ Փեսացուն սկսել է օրից-օր հարսանիքը հետաձգել։ Այժմ նա, յուր ազգականների դրդմամբ, բոլորովին հրաժարվում է յուր հարսնացվից։

— Գիտե՞ք այդ ինչ է նշանակում,— ասաց Սանթուրյանը.— նշանակում է, որ իմ խեղճ քույրը պիտի տանջվի վրշտից և ով գիտե ինչ հետևանք կունենա նրա տանջանքը։ Նա սիրում է յուր թուլամորթ փեսացվին։

Ինձ մնում էր գործ դնել իմ բոլոր պերճախոսությունը նրան մխիթարելու համար։

— Գուցե դուք էլ եք ձեր սրտի խորքում ինձ մեղադրում,— շարունակեց նա, հետզհետե հանգստանալով,— որ այսքան կողմնապահ եմ իմ հոր վերաբերմամբ։ Գուցե մտածում եք. «ահա մի մարդ, որ ամենափոքր անարդարության դեմ բողոքում է, յուր հորը վերաբերվում է ներողամտաբար»։ Իրավունք ունիք այսպես մտածելու, այդ բնական է։ Բայց նախ՝ ինձ համոզեցեք, որ իմ հայրը հանցավոր է, երկրորդ՝ ցույց տվեք ծնողին ատելու միջոցը։ Ասացեք, ի՞նչպես սառնարյուն մնամ, երբ տեսնում եմ, որ ամենքը դատապարտում են նրան, գուցե նույնիսկ իսկական հանցավորները։ Լսեցե՛ք, ես ձեզ մի բան ասեմ. աստծուն է հայտնի, եթե դատապարտվածը լիներ բոլորովին օտար և անծանոթ մի մարդ, էլի ես նրան չէի մեղադրիլ. հենց միայն այն պատճառով, որ բոլորը նրան մեղադրում են։ Գիտե՞ք ինչու։ Որովհետև իմ մեջ կա մի բան, որ միշտ ինձ դրդում է ընդհանուրի դեմ գնալ. չենթարկվել ուրիշների կարծիքին։ Ես ատում եմ ոչխարային բնազդները։ Հասկացե՛ք, ինչպես կամենաք...

— Նա չէր կեղծում։ Արդարև, շատ անգամ նա անում էր այն, ինչ որ հակառակ էր ընկերների կարծիքին։ Նա սեղմում էր այնպիսիների ձեռը, որոնք այս կամ այն պատճառով արհամարհված էին։ Եվ ես նկատում էի, որ այս հանգամանքը անհամեմատ ավելի էր գրգռում ուսանողներին, քան նրա ազգանվան արատը։ Ինձ թվում էր, որ շատերն են իրանց սրտի խորքում հարգում նրան, թեև արտաքուստ ցույց են տալիս ատելություն, և թե նա ինքը շատերին արհամարհում է և այդպիսով գրգռում նրանց յուր դեմ։ Նա ոչ ոքից չէր թաքցնում յուր իսկական զգացմունքներն ու կարծիքները։ Նա ամենքի երեսին ասում էր այն, ինչ որ մտածում էր։ Եվ այդ ոչ ոքի դուր չէր գալիս։

— Նա ծաղրում է մեզ, չի ուզում ենթարկվել մեր ընկերական շրջանի սկզբունքներին, ասում էին շատ ուսանողներ։

Մի կիրակի առավոտ ես մտա Սանթուրյանի մոտ մի գիրք խնդրելու։ Նա կուրծքը սեղանին սեղմած, շտապով գրում էր։ Ինձ տեսնելով, նա ձեռագիրը արհամարհանքով շպրտեց մի կողմ։ Արդեն մենք այնքան մտերմացել էինք, որ խոսում էինք «դուս»-ով։

— Ի՞նչ էիր գրում,— հարցրի ես։

— Հիմար բան։

Ես հեռվից նայեցի ձեռագրին, և իմ հետաքրքրությունը շարժվեց։ Դա ոտանավոր էր. մի բան, որ ես իսկի չէի սպասում Սանթուրյանից։ Ես ձեռս մեկնեցի թուղթը վերցնելու, նա բռնեց իմ թևը ասելով.

— Սպասի՛ր, եթե ուզում ես, կտամ ավարտվածները, կարդա՛ և ծիծաղի՛ր...

Նա սեղանի դարանից հանեց մի քառածալ տետր կարմիր փաթեթի մեջ։ Տետրի ճակատին խոշոր տառերով գրված էր «Կրակ»։ Դա նրա վերնագիրն էր։ Ես կարդացի մի քանի տող բարձր ձայնով, բայց նա, ականջները փակելով, երեսը դարձրեց և խնդրեց, որ մտքումս կարդամ։ Կարդացի մի ընդարձակ ոտանավոր, հետո մի ուրիշը, երրորդը, չորրորդը։ Ասում են՝ ճաշակները տարբեր են լինում. գուցե իմ ճաշակը ամենաանկիրթներից է կամ փչացած, բայց ես մինչև այսօր էլ հիշում եմ, որ այն օրը առաջին անգամ հուզվեցի, մի հայերեն գրվածք կարդալով։ Դա վշտացած հոգու մի բուռն և անզուսպ բողոք էր՝ հասարակության եսամոլության դեմ. դա մի թանձր և մահաբեր թույն էր, որ ժայթքում էր մի տառապող սրտից։ Հուրը այրվում էր անհատի ներսում և անհատը, ինքն իրան ուտելով, ոչնչանում։ Որքա՞ն զգացմունքի խորություն, հոգեբանական նրբություն, պատկերների կենդանություն, զայրույթ և կատաղություն կար այդ ոտանավորների մեջ։

Ես հուզվեցի և հիացած նայում էի նրա հեղինակին։ «Ահա, ուրեմն, ինչումն է կայանում քո տաղանդը», մտածում էի ես, նայելով նրա մելամաղձոտ դեմքին։

— Ե՞րբ պիտի հրատարակես,— ասացի ես։

— Հրատարակե՞լ,— կրկնեց նա,— երբե՛ք։

— Ինչո՞ւ։

— Միթե ամեն խզբզանք կարելի՞ է հրատարակել։

— Բայց դա խզբզանք չէ։ Ո՛չ, Սանթուրյան, դու, իմ կարծիքով, տաղանդ ես և խոշոր տաղանդ։

— Հեշտ մի՛ արտասանիլ այդ բառը, ասաց նա, գլուխը հեգնաբար շարժելով և քթի տակ ծիծաղելով։— Տաղա՞նդ, չէ՛, հանճար... Ես գրել եմ ինձ համար, ի՞նչ իրավունք ունիմ

իմ սեփական զգացմունքները ուրիշի վզին փաթաթել։ Երբեմն ճիգ եմ անում այդ խզբզանքներով զսպել իմ սրտի կրակը. ահա ինչու վերնագիրը այդքան խոշոր է։ Տո՛ւր ինձ, բավական է...

Նա գրեթե ուժով խլեց ինձանից տետրը և կողպելով սեղանի արկղի մեջ՝ ավելացրեց.

— Առաջին և վերջին անգամ հանեցի սեղանիս միջից. թող այնտեղ փտի...

Ախ, որքա՞ն ցավում եմ, որ մի օր գաղտնի չմտա սենյակը և չգողացա նրա «Կրակ»-ը։

Գուցե սխալվում եմ, գուցե հափշտակված էի, բայց համոզված եմ, որ այդ կրակը գեթ մի փոքրիկ հրդեհ կգցեր մեր սառն և անարյուն գրականության մեջ, իսկ ես անհայտության խավարից կաղատեի մի փայլուն անուն...

Երբեմն Սանթուրյանի մոտ հանդիպում էի Զարիֆյանին։ Չնայելով իմ հակակրանքին, կարողանում էի նրա հետ խոսել միայն այն պատճառով, որ շատ էի սիրում Սանթուրյանին։ Նրանց հարաբերության մեջ ես զգում էի մի կողմից — անկեղծություն, պարզություն, մյուս կողմից — կեղծիք և շինծու քաղաքավարություն։

Զարիֆյանը զգում էր Սանթուրյանի մտավոր գերազանցությունը և նախանձում էր. միայն գիտեր թաքցնել յուր նախանձը։ Իսկ Սանթուրյանը երբեք չէր աշխատում ճանաչել նրա ներքին աշխարհը և վերաբերվում էր իբրև մի անկեղծ բարեկամի, քննադատում էր նրա մոտ և շատ անգամ պախարակում կովկասցի ուսանողների մտավոր և բարոյական հայացքները։ Իսկ ես համոզված էի, որ Զարիֆյանը նրա բոլոր ասածները հաղորդում է ուսանողներին։

Ճաշի միջոցներին նկատում էի, որ Զարիֆյանը արդեն չափից դուրս է հետամուտ Ադելաիդային։ Իմ մեջ վաղուց էր կասկած հղացել և գուշակում էի, որ մի բան է պատրաստվում և ոչ լավ բան։ Մի օր ռուս ուսանողն ինձ ասաց, թե իմ հայրենակիցը սիրահարվել է գերմանուհու վրա։ Ճիշտ էր այդ թե ոչ՝ չգիտեի, բայց ես Զարիֆյանի սիրտը անընդունակ էի համարում սիրո զգացմանը։ Այն մարդը, որ յուր փողկապն էլ հաշվով է կապում, չի կարող սիրահարվել։

Իմ ճանապարհը Ադելաիդայի սենյակի առջևով էր։ Երբեմն, տանից դուրս գալիս կամ տուն վերադառնալիս, ես այնտեղից լսում էի Զարիֆյանի սառն, միատեսակ հնչող ձայնը և չափավոր ծիծաղը։ Եվ ես իմ մտքում վրդովվում էի Ադելաիդայի դեմ, որ թույլ է տալիս այդ մարդուն՝ հետամուտ լինել իրան։ Վերջապես դեպի Զարիֆյանը տածած խուլ հակակրանքի զգացումը իմ մեջ մի օր մի փոքր գոհացում ստացավ։

Դա Ադելաիդայի ծննդյան տարեդարձի օրն էր։ Լրանում էր քսան տարին։ Նախընթաց երեկոյան նա մեզ հրավիրել էր շոկոլադ խմելու։ Մենք շնորհավորեցինք նրան մի-մի նվերով։ Զարիֆյանը գնել էր մի շքեղ մետաքսյա հովանոց. մի բան՝ որ անսպասելի էր նրա նման ժլատից։ Սանթուրյանը բերեց մի փղոսկրյա քնարիկ։ Դա մի հասարակ, բայց ճաշակով շինված քորոց էր կրծքի համար։

Օրիորդը մեր նվերները դրել էր առանձին սեղանի վրա և պարծանքով ցույց էր տալիս ընկերուհիներին, որ եկել էին շնորհավորելու։ Առանց քաշվելու, նա մի առանձին հաճույքով ցույց էր տալիս Սանթուրյանի նվերը, որ գուցե բոլոր նվերներից էժանագինն էր։

— Ախ, ի՜նչ գեղեցիկ է, ի՜նչ գեղեցիկ է,— կրկնում էր նա անդադար,— երևում է, որ նվիրողը ճաշակով մարդ է...

Սանթուրյանը երբեմն նայում էր օրիորդին, երբեմն ինձ և ամաչելով գլուխը թեքում կրծքին։ Պետք է ասել, որ մի շաբաթ էր արդեն, նա ուշադիր էր դեպի օրիորդը։ Պարզ էր, որ այդ կարճ միջոցում նա ավելի էր գրավել նրան, քան Զարիֆյանը՝ ամիսների ընթացքում։ Երկու օր առաջ նա ինձ մոտ առաջին անգամ խոսեց Ադելաիդայի մասին։ Նրա հաստուկտոր խոսքերից իմացա, որ հավանում է գերմանուհուն, մանավանդ նրա աշխույժ և ուրախ բնավորությունը։

Ադելաիդան անվերջ հրճվում էր Սանթուրյանի նվերով, ստեպ-ստեպ ժպտալով նրա երեսին։ Պետք էր տեսնել Զարիֆյանին։ Ներքին հուզմունքից նա անդադար կրծոտում էր շրթունքները, բեղերը շարունակ ոլորում և մատներով ձգձգում բաց-շագանակագույն միրուքը։ Նա աչքերով գրավում էր Ադելաիդային և աշխատում էր անուշադիր լինել դեպի Սանթուրյանը։ Ինձ համար պարզ էր, որ նա չարաչար նախանձում է։

Բայց առաջին և վերջին անգամն էր, որ ես նկատեցի այդ նախանձը... Այնուհետև Զարիֆյանի զգացումները անթափանցելի էին ինձ համար։

Հետևյալ օրը Սանթուրյանը ինձ բարեկամաբար խոստովանեց, որ անտարբեր չի դեպի Ադելաիդան։ Այդ օրից ըստ երևույթին՝ նա երբեմն գնում էր օրիորդի սենյակը։ Նրանք միասին կարդում էին գրքեր։ Թե ինչ էին խոսում, հարկավ, չգիտեի։ Բայց, ճանաչելով Սանթուրյանին, գուշակում էի, որ եթե մի անգամ սիրո զգացումը նրա սրտում գեթ մի թույլ արմատ է գցել, պետք է աճի, զարգանա այնքան արագ, որքան արագ հղանում էր և զարգանում նրա մեջ ամեն մի զգացում։ Ես չէի ուզում նրան խանգարել, խլել նրա երջանիկ ժամերը, ուստի առաջվա պես հաճախ չէի այցելում նրան։ Բայց նա ինձ հանդիմանում էր այդ մասին և, երբ ես չէի գալիս նրա մոտ, ինքն էր գալիս իմ սենյակը։

Սիրո զգացումը տակավին չէր գրավել նրա ներքին կրակը։ Նա նույն գրգռող, վրդովվող, անարդարությունների դեմ բողոքող Սանթուրյանն էր։ Նա նույնչափ անողոք էր դեպի մարդկային սառնասրտությունը, եսամոլությունը, նույնչափ զգայուն դեպի խեղճը, աղքատը, սնանկը և հալածվածը։ Նա ծախսում էր յուր վերջին կոպեկը, գրավ դնում ամեն ինչ, որ կարելի է գրավ դնել և նպաստում էր չքավոր ուսանողներին, միևնույն է ովքեր էլ լինեին և ինչ աչքով էլ նայեին նրան այդ մարդիկ։ Մի անգամ Զարիֆյանը հաղորդեց, թե մի բժշկ ուսանող չի կարողանում այդ տարվա ուսումնավարձը վճարել։ Սանթուրյանը նոր էր տնից փող ստացել և այն օրը վճարել սենյակի ու ճաշի վարձը։ Նա անմիջապես գրպանները դատարկեց սեղանի վրա։ Գոյացավ տասնյոթ ռուբլի և մի քանի կոպեկ։

— Ահա իմ մասը, մնացյալն էլ ուրիշից առեք,— ասաց նա, մղելով փողերը Զարիֆյանի կողմը։

— Վաղը ինքներդ կտաք նրան,— ասաց Զարիֆյանը։

— Ո՜չ, նա ինձանից չի վերցնիլ։ Մի անգամ նա մի պտակի համար փող էր ժողովում, ես կամեցա իմ բաժինը

տալ, նա չընդունեց։ «Չի կարելի, ասաց, ձեր փողերը խառնել ուսանողական փողերի հետ»։ Տվեք իրան ձեր կողմից. ինձանից չի վերցնիլ, բայց հասեք, թե ես եմ տվել։ Դա իմ մայրական փողերից է, հավատացե՛ք...

Եվ նա, յուր շրթունքները կրծոտելով, հազիվ կարողացավ զսպել արտասուքը։

Հիշում եմ այն օրը, երբ ուսանողները մի երեկույթով պետք է պատվեին Կովկասից եկած մի հայտնի մարդու։ Մեծամասնությունը կամեցավ գանցառության տալ Սանթուրյանին։ Ես և մի քանի ուրիշները բողոքեցինք և կարողացանք ստիպել նրանց՝ արդարացի լինել իրանց ընկերոջ վերաբերմամբ։ Ուսանողները համաձայնեցին հրավիրել Սանթուրյանին, չնայելով շատերի ընդդիմության։ Իսկապես այդ ընդդիմության պատճառը Սանթուրյանի ազգանվան արատը չէր, այլ նրա մտավոր առավելությունը, որ կարող էր նրանց նսեմացնել կովկասցի հյուրի մոտ։ Ուսանողները դդում էին Սանթուրյանի գերազանցությունը. ահա նրանց հալածանքի գլխավոր հոգեբանական պատճառը, որ ես պարզ հասկանում էի և զգում։ Զարիֆյանը, որ միշտ մի առանձին ախորժակով էր պատմում ամեն մի չար լուր, շտապել էր Սանթուրյանին հաղորդել այն բոլոր վիճաբանությունները, որ տեղի էին ունեցել նրա առիթով։ Ես այդ չգիտեի, եկա նրան հրավիրելու, և ի՞նչ գրության մեջ գտա։ Զգայուն երիտասարդը պառկած էր անկողնում՝ հագուստով։ Նրա աչքերն այրվում էին, կուրծքը ուժգին բաբախում, դժվարությամբ էր շունչ քաշում. այնքան ազդել էր այս անգամ նրա վրա ընկերների խստությունը։

— Հանգստացի՛ր, Մարգար, հանգստացի՛ր,— ասացի ես, իսկույն զգալով բանի էությունը,— հավատացի՛ր, չարժե այդքան զգայուն լինել դեպի ամեն բան։

— Դեպի ամեն բան,— գոչեց նա, գլուխը բարձրացնելով և մի կրակոտ հայացք ձգելով ինձ վրա,— դեպի մի այդպիսի ապտա՞կ։ Այո՛, չարժե, չարժե, որովհետև ես եմ մեղավորը, ես եմ առիթ տալիս ինձ հալածելու, ես, որ չեմ կարողանում հաշտվել ոչ ոքի հետ։

Եվ նա սկսեց խեղդված ձայնով հեկեկալ, գլուխը թաղելով բարձի մեջ։ Ես չէի խղճում նրան, այլ ցավակցում էի։

խղճում են թույլերին, իսկ նա թույլ չէր, այլ զգայուն, պարզախոս, անկեղծ։ Եվ հենց այդ պարզախոսությունն ու անկեղծությունն էին նրա անբախտության հիմքը։

Վերջին ժամանակ նրա դժբախտ հոր մասին Թիֆլիսի մի լրագրում երևացել էր մի կոպիտ ֆելիետոն։ Ուսանողները կարդում էին ու ծիծաղում։ Կարդաց նա ինքն էլ, և կրակը սկսեց մի նոր ուժով լափել նրա ներսը։ Ես ամեն կերպ աշխատում էի թեթևացնել նրա վիշտը։ Բայց երբեք չէի ձգտում նրա մեջ թուլացնել որդիական սերը։ Դա կլիներ ապարդյուն ջանք. այնինչ ես, փոխանակ մխիթարելու, կավելացնեի նրա դառնությունները։

Ես ուրախ էի, որ նա հետզհետե ավելի ու ավելի հափշտակվում էր Ադելաիդայով։ Դա, անկասկած, կարող էր ցրվել նրա թախիծը կամ գոնե թեթևացնել. դա միակ դեղն էր նրա բարոյական տառապանքի դեմ։

Մի օր նա մտավ իմ սենյակը ուրախ տրամադրությամբ։ Առաջին անգամն էի տեսնում նրա մելամաղձոտ դեմքի վրա կենսուրախության ժպիտ։ Առանց քաշվելու, առանց առաջաբանի, նա բացարձակ հայտնեց, թե արդեն յուր սերը հայտնել է Ադելաիդային և հավանություն է գտել նրա կողմից։ Ադելաիդան հիանալի աղջիկ է, սիրում է, կարող է հասկանալ նրան։ Եվ մի ամբողջ քառորդ ժամ նա գովում էր գերմանուհուն և հրճվում փոխադարձ սիրով։ Ես չկարողացա ինձ զրկել. ինչպես սիրո զգացումը դեռ չճաշակած մի մարդ, շտապեցի գործին ավելի խոր նայել և հարցրի.

— Բայց ի՞նչ վերջ կունենա այդ սերը։

— Ես կամուսնանամ նրա հետ, ահա թե ինչ վերջ կունենա,— պատասխանեց նա դրականորեն։

Խոստովանում եմ, այդ մասին ես չէի մտածել։ Ինձ թվում էր, թե դա մի ժամանակավոր հափշտակություն է, շուտ սկսվել է, շուտով էլ կանցնի։ Լսելով Սանթուրյանի վճռական պատասխանը, ես ինքս իմ հարցից ամաչեցի. ի՞նչպես էի հանդգնել ենթադրելու անգամ, որ այդպիսի ազնիվ մարդը կարող է թեթևամիտ խաղ խաղալ մի երիտասարդ և անարատ աղջկա հետ։ Բայց միևնույն ժամանակ ես հոգով ընդդեմ էի նրա ամուսնանալուն։ Չգիտեմ ինչու, հավատացած էի, որ

Ադելաիդան երբեք չի կարող Սանթուրյանի համար կյանքի արժանավոր ընկեր լինել։ Ճշմարիտ է, նա սիրուն էր, կրթված, աշխատասեր, և ինչպես գերմանուհի, գուցե կարող էր լավ տանտիկին լինել։ Բայց ինձ խորթ էր թվում նրա ծայրահեղ ուրախ բնավորությունը, որքան էլ այդ բնական լիներ նրա հասակում։ Արդեն նա չափից դուրս շատ էր ծիծաղում, թռչկոտում ու երգում։ Եվ դա մի ապագա ամուսնու համար ես թեթևամտության նշան էի համարում։ Բայց եթե ճիշտ է, որ կոնտրաստները հակում ունին դեպի միմյանց, Սանթուրյանը պետք է սիրեր Ադելաիդային, որովհետև այդ կողմից նրանք երկուսն էլ կատարյալ կոնտրաստներ էին։

Միայն մի բան ինձ չթողեց այդ օրը անկեղծ լինել։ Սանթուրյանը մտադիր էր ամուսնանալ ոչ իսկույն, այլ ուսումն ավարտելուց հետո։ Էհ, մտածում էի, ով գիտե, այս մի տարվա ընթացքում ինչեր կպատահեն, ինչո՞ւ այժմյանից իմ կասկածներով թունավորեմ բարեկամիս երջանկությունը։

Այժմ, ճաշի միջոցին, Սանթուրյանը Ադելաիդայի կողքին էր նստում։ Լեհացին ինձ զանազան նշաններ էր անում, թե ամեն բան հասկանում է, և ներքուստ ծիծաղում էր Զարիֆյանի վրա։ Ռուս ուսանողը անտարբեր էր. նա մտքով զբաղված էր յուր սրտի ընտրածով։ Պառավ տանտիկինը, կարծես, հասկացել էր բանի էությունը և չէր երևում, որ հակառակ լինի աղջկա կամքին։ Սանթուրյանին նա հավանում էր և միշտ գովում մեր մոտ նրա լրջմտությունը։ Իսկ Զարիֆյա՞նը... Նա դեռևս զսպում էր իրան և շարունակում Սանթուրյանի հետ յուր բարեկամությունը։ Այդ մարդը ուներ կամքի ուժ։ Բայց ինձ թվում էր, որ նա այլևս չի նախանձում, ցավում է միայն յուր նվիրած թանկագին հովանոցի մասին։ Դա սխալ էր, և ես հետո հասկացա, որ սխալվում եմ։

Ինչ ասել կուզի, որ այժմ Սանթուրյանը ավելի զբաղված էր յուր սիրո առարկայով, քան մի ուրիշ բանով։ Նա տանում էր օրիորդին թատրոն, նվագահանդեսներ, զբոսանքի, և ես զգում էի, որ սերը նրա ուսանողական նիհար գրպանին ածան չի նստում։ Մոտ երկու ամիս անցավ այդպես։ Ամեռը վերջանում էր, համալսարանական քննությունների ժամանակը մոտենում։ Մի օր նկատեցի, որ Սանթուրյանը տեղանի մոտ նըս-

տել է Ադելաիդայից հեռու և չի խոսում նրա հետ։ Իսկ օրիորդը, գլուխը կրծքին թեքած՝ տխուր նայում է սփռոցին, չի ուտում, միայն ձևի համար է մեզ հետ նստել։ Զարիֆյանը նստած էր նրա հանդեպ և յուր հայացքը չէր հեռացնում նրանից։ Դժվար էր կարդալ այդ մարդու դեմքի վրա նրա հոգու շարժումները։ Նա չգիտեր ոչ ամոթից կարմրել, որովհետև միշտ կարմիր էր, ոչ բարկությունից գունատվել և ոչ ուրախությունից ոգևորվել։

Հետևյալ և երկրորդ օրը Սանթուրյանը դարձյալ Ադելաիդայից հեռու էր նստել, դարձյալ օրիորդը տխուր էր և դարձյալ Զարիֆիյանը դիտում էր նրան։ Իսկ չորրորդ օրը Ադելաիդան ճաշի չեկավ։ Իմ հետաքրքրությունը շաժվել էր. կամենում էի իմանալ այդ լուռ տեսարանների պատճառը։ Զգում էի, որ անշուշտ մի անախորժ բան է պատահել։

Հենց այդ օրը երեկոյան Սանթուրյանը պլտորված մտավ իմ սենյակը։

— Էլի ի՞նչ է պատահել,— հարցրի ես։

— Դժբախտություն. օրիորդը ինձանից խուսափում է։

— Ինչո՞ւ։

— Հենց այդ «ինչուն» է ինձ հետաքրքրում։ Դու պետք է ինձ օգնես պատասխանը գտնելու։

— Ե՞ս։

— Այո՛։ Դու պետք է նրանից բացատրություն պահանջես։

— Ինչո՞ւ ինքդ չես պահանջում։

— Նա ինձ ոչինչ չի ասում։ Նա ինձ հետ չի ուզում խոսել։

— Ահա՛ ինչ...

— Այո՛, նա ինձ տեսնելիս՝ երեսը շուռ է տալիս։

— Էհ, շատ լավ, դու էլ քո երեսը շուռ տուր։

— Հետո՞։

— Հետո դու քեզ համար, նա յուր համար։

Սանթուրյանը զարմացած նայեց աչքերիս։

— Դու կատա՞կ ես անում,— գոչեց նա։

— Իսկի՛ էլ չէ։ Ես չեմ հավանում քո սերը, եթե միայն պլատոնական չէ և այդպես էլ չպիտի մնա։

— Պատճա՞ռը։

— Ադելաիդան քո ընկերը չէ։

— Իհարկե, նա ինձանից շատ և շատ բարձր է։ Այդ ես գիտեմ։

— Ո՛չ։ Նա քեզ արժանի չէ։

— Մի՛ ծաղրիլ ինձ, Միրաբյան։

— Ես չեմ ծաղրում։ Ինձ թվում է, որ Ադելաիդան քեզ չի սիրում գոնե այն սիրով, որին արժանի է մի լուրջ մարդ։

— Կնշանակե ես լուրջ մարդ չեմ։

— Ընդհակառակը...

— Ինչևէ,— ընդհատեց իմ խոսքը Սանթուրյանը,— դու պետք է նրանից բացատրություն խնդրես իմ կողմից։

Ես ընկա մտատանջության մեջ։ Դա մի նուրբ միջամտություն կլիներ իմ կողմից և ես հազիվ թե ընդունակ լինեի կատարել ինձ առաջարկած դերը։

— Ների՛ր, Սանթուրյան,— ասացի ես,— ես չեմ կարող անել։

— Ինչո՞ւ։

— Նախ՝ իմ սկզբունքներին դեմ է երկու սիրահարների մեջ մտնելը, երկրորդ՝ ես անձամբ անկեղծ ցանկանում եմ, որ դու հեռանաս այդ օրիորդից։

— Ուրեմն մերժո՞ւմ ես։ Շատ լավ. կդիմեմ Զարիֆյանի միջնորդությանը։

— Զարիֆյանի՞,— հարցրի ես, չկարողանալով թաքցնել իմ զարմանքը։

— Այո՞, ճարս ինչ։ Դու գիտես, որ ուրիշ ընկեր չունիմ...

— Նամա՛կ գրիր...

— Նամա՞կ։ Կան այնպիսի բաներ, որ նամակով չի կարելի բացատրել։ Ես գիտեմ, որ դու Զարիֆյանին չես սիրում, բայց նա վատ տղա չէ. գլխավորը՝ նա մոտ է Ադելաիդային։

Այս անգամ մի քիչ վրդովվեցի և ասացի.

— Բայց մի՞թե դու չես նկատում, որ նա ինքը անտարբեր չէ դեպի Ադելաիդան։

— Գուցե առաջ այդպես էր, իսկ այժմ նա սիրում է օրիորդին ինչպես եղբայր։ Նա մինչև անգամ խրախուսում է իմ սերը։ Նա տակտով մարդ է։

— Տակտով լինելուն խոսք չունիմ, բայց...

— Ի՞նչ բայց...

— Սա՛նթուրյան, մի՛ նեղանար ինձանից, եթե ասեմ՝ «հեռու կաց այդ օրիորդից էլ, այդ Զարիֆյանից էլ...»։

Ավելի ոչինչ չասացի։ Նա մի փոքր մտածեց և հետո վրձռական շարժում գործեց ու շտապով դուրս եկավ իմ սենյակից՝ դժգոհ դեմքով...

Այստեղ Միրաբյանը ընդհատեց յուր պատմությունը և սկսեց կրակը վառարանի մեջ խառնել։ Ապա մեզ համար դարձյալ մի-մի բաժակ թեյ ածեց և ասաց.

— Կարծեմ, պարոննե՛ր, դուք հոգնեցիք լսելուց։ Կկամենա՞ք շարունակությունը հետաձգեմ վաղվան։

Դեռ երեկոյան ութ ժամն էր։ Մենք միաձայն խնդրեցինք նրան շարունակել և ավարտել։ Նորից մի ծխախոտ վառելով, նա այս անգամ նստեց վառարանից հեռու։

V

Հետևյալ օրը,— շարունակեց Միրաբյանը,— Զարիֆյանը նստել էր առաջվա տեղը և կատարում էր նախկին դերը. այսինքն՝ ծառայում էր օրիորդին, հաճոյախոսություններ էր անում, միայն չափազանց զգույշ։ Երբեմն նա գաղտուկ մտիկ էր անում Սանթուրյանի երեսին և ուսերը վեր քաշում, կարծես, ասելով. «չեմ հասկանում, ի՞նչ է պատահել այս աղջկան»։

Մի կիրակի օր Սանթուրյանը ճաշի չեկավ։ Կասկածը տիրեց ինձ։ Այդ մարդը այնքան զգայուն էր, որ, ո՛վ գիտե, ինչ կարող էր անել բոպեի ազդեցությամբ. ո՛չ ուրիշին, այլ ինքն իրան, որովհետև նա ոչ ոքի թշնամի չէր կարող լինել և չէր էլ ուզում լինել, բացի ինքն իրան։ Նրա բոլոր վրդովմունքը, ատելությունը, նրա սրտի ամբողջ թույնը, հոգու բուռն կրակը միայն և միայն իրան էին վնասում։

Մի քանի անգամ ես անցա նրա սենյակը, որ տեսնեմ՝ վերադարձե՞լ է արդյոք։ Չկար։ Օրը մթնեց, թեյի ժամանակն էլ անցավ։ Դարձյալ չկար։ Վերջապես, արդեն կեսգիշեր էր, երբ լսեցի նրա դռան ձայնը և շտապեցի նրա մոտ։

— Ահ, այդ դո՞ւ ես, մտի՛ր,— ասաց նա,— մի ձեռքում պահած վառ լուցկին, մյուսում՝ լամպի ապակին։

Նա սենյակը լուսավորեց, վերարկուն շպրտեց մի կողմ և հոգնած՝ շնչասպառ նստեց անկողնակալի վրա։

— Առավոտից մինչև այժմ պատում էի փողոցներում,— ասաց նա վերջապես, պատասխանելով իմ հարցին։

— Ինչո՞ւ։

— Որովհետև ես անբախտ մարդ եմ։ Այսօր առավոտ Զարիֆյանը ինձ հաղորդեց, որ խոսել է Ադելաիդայի հետ...

— Հետևա՞նք...

— Ադելաիդան ամաչում է ինձ սիրել, որովհետև ես անհաշտ մարդ եմ, որովհետև ամենը ինձանից երես են դարձնում, որովհետև բոլորը ինձ արհամարհում են...

— Որտեղի՞ց գիտե նա այդ բանը։

— Է՜հ, այդ ինձ համար միևնույն է...

Ես ժպտացի։

— Տեսա՛ր ուրեմն,— ասացի,— որ դա սեր չէ, այլ թեթևամտություն։ Մի՞թե սիրող կինը ուրիշների աչքով կնայի յուր սրտի ընտրածին։

— Ո՛չ, իհարկե, ո՛չ։ Բայց Ադելաիդան անփորձ երեխա է։ Նա դեռ չի կարող յուր խելքով դատել։ Ես այլևս սիրո մասին չեմ մտածում։ Ոչ, ինձ այժմ տանջում է մի ուրիշ բան։ Երևակայիր, Զարիֆյանը ասում է, թե Ադելաիդան իմ մասին վատ գաղափար ունի։

— Օրինա՞կ։

— Լեզուս չի գալիս ասելու...

— Դարձյալ։

— Իբրև թե ես կեղտոտ նպատակ եմ ունեցել... Հասկանո՞ւմ ես...

— Ահա ինչ։ Բայց փաստ ունի՞ այդպես կարծելու...

— Փա՞ստ։ Ասածուն է հայտնի, որ ե՛ս իմ մաքուր սերն անգամ ամոթով եմ նրան հայտնել։

— Եվ դու այդ բոլորից հետո չե՞ս ուզում անձամբ օրիորդից բացատրություն պահանջել։

— Զարիֆյանը պնդում է, թե Ադելաիդան այդ մասին լսել անգամ չի ուզում։

Զարիֆյանը ասում է, թե օրիորդը վատ գաղափար ունի Սանթուրյանի մասին։ Զարիֆյանը պնդում է, թե օրիորդը չի ուզում տեսնվել Սանթուրյանի հետ. բոլորը Զարիֆյանը... Ոչ, մտածում էի ես, այստեղ մի գաղտնիք կա։

— Սանթուրյան,—կրկնեցի ես,—մոռացի՛ր այդ աղջկան, ձեռք քաշիր այդ Զարիֆյանից։

— Այժմ ես կաշխատեմ կատարել այդ խորհուրդը։ Մոռանալ Ադելաիդային, իհարկե չեմ կարող, բայց կհեռանամ նրանից։ Չի կարելի ուժով սեր գրավել։ Նա իրավունք ունի արհամարհելու, որովհետև բոլորը արհամարհում են։ Ոչինչ, թող արհամարհի. ես այլևս նրան չեմ ձանձրացնիլ...

Մի քանի օր անցած՝ պառավը եկավ իմ սենյակը և վրշտացած հայտնեց, թե Սանթուրյանը տեղափոխվում է։

Ես շտապեցի նրա սենյակը։ Նա շրթունքները կրծոտելով, անցուդարձ էր անում։ Արդեն ժողովել և կապոտել էր իրեղենները և սպասում էր կառքի։

— Ո՞ւր ես գնում։

— Ես ի՛սկույն ուզում էի գալ քեզ մոտ։ Տեղափոխվում եմ ուրիշ սենյակ։

— Մի՞թե արդեն բանն այդ տե՞ղն է հասել։

Նա ասաց, թե չի կարող այդքան մոտիկ ապրել և այդքան հեռու լինել Ադելաիդայից. թե զգում է, որ յուր ներկայությունը ձանձրացնում է օրիորդին և թե, վերջապես, հպարտության զգացումը չի թույլ տալիս այժմ նույնիսկ որևէ բացատրություն խնդրել նրանից։

Անցավ մոտ մի շաբաթ։ Ես Սանթուրյանին ո՛չ մի տեղ չէի հանդիպում։ Նա համալսարանումն էլ չէր երևում։ Դժբախտաբար ես մոռացել էի հարցնել նրա նոր սենյակի տեղը։ Վերջապես մի առավոտ հանդիպեցի նրան Տվերսկայա փողոցում։ Նա շտապով մոտեցավ ինձ և ամուր սեղմեց իմ ձեռը։ Ես կիսահեգնաբար հարցրի. արդյոք առողջանում է նրա սեր-

տի վերքը։ Նա դառնությամբ ժպտաց և խնդրեց, որ կատակ չանեմ։

— Իմ վերքն ավելի խոր է, քան նույնիսկ ինքս էի կարծում։

Երկու օր առաջ նա տեսել էր Ադելաիդային Զարիֆյանի հետ ձիաքարշով անցնելիս։ Առաջին անգամ նա զգացել էր, թե ինչ ասել է խանդ։

— Թեև,— ավելացրեց նա,— իրավունք չունիմ Զարիֆյանի վերաբերմամբ խանդոտ լինելու։

Ես չկարողացա զսպել իմ վրդովմունքը Զարիֆյանի դեմ։ Պատմեցի Սանթուրյանին ամենը, ինչ որ դիտել էի նրա բացակայությանը։ Ադելաիդայի նորից ուրախ և զվարթ դառնալը, Զարիֆյանի հաղթական ժպիտները, նրանց գաղտնի շշընջյունները, օրիորդի այցելությունները Զարիֆյանին, այս բոլորը մի շաբաթ էր արդեն՝ լուսաբանում էին ինձ համար նրանց հարաբերությունները։

Սանթուրյանը լսում էր թղթի պես գունատված։ Նրա կուրծքը ուժգին բարախում էր, աչքերը կարծես ծգտում էին դուրս գալ իրանց խորշերից։ Նա երկյուղալի էր այդ րոպեին։ Ես զղջացի իմ տված անսպասելի հարվածի համար։ Բայց արդեն ուշ էր։ Գնացի նրա հետ յուր նոր սենյակը և այդ գիշերը անցկացրի այնտեղ։ Երկար, երկար ժամանակ աշխատում էի նրան հանգստացնել։

Այո, իմ բարեկամը սիրում էր և տանջվում։ Այժմ նրա ներքին կրակին ավելացել էր և խանդի զգացումը. մի բան, որ ամենից ավելի էր վտանգավոր նրա նման մի զգայուն երիտասարդի համար։ Նա օրեցօր ավելի մռայլ էր դառնում, բայց և օրեցօր թանձրանում էր նրա սրտի հուրը, ուտելով և մաշելով նրան։ Նա հետզհետե դառնում էր լռակյաց, հոռետես, բայց ոչ կասկածամիտ կամ վատախոս։ Երբեք նրանից չէի լսում մի գանգատ Զարիֆյանի դեմ, նույնիսկ որևէ դժգոհություն։ Նա միայն բողոքում էր յուր ճակատագրի դեմ և ամեն բանում իրան էր մեղավոր համարում։ Նա չէր մեղադրում նաև Ադելաիդային։

— Նրա բարի կամքն է սիրել, ում հավանում է,— ասում էր նա,— և ես ոչինչ վատ բան չեմ տեսնում նրա արածի մեջ։

Ես չեմ մեղադրում անգամ, որ նա իմ մասին վատ գաղափար ունի։ Սխալվում են շատ անգամ հասուն մարդիկ, իսկ նա դեռ երեխա է, մի օր խելքի կգա և կհասկանա, որ սխալված է։

VI

Մեր քննությունները վերջացան։ Ես ուղևորվեցի Կովկաս, նախապես խոսք վերցնելով Սանթուրյանից, որ ինքն էլ արձակուրդներին հեռանա Մոսկվայից։ Ես հույս ունեի, որ տեղափոխությունը կարող է թեթևացնել նրա վիշտը։ Եթե իմ ծնողներից շտապողական նամակ ստացած չլինեի, կսպասեի, նա էլ յուր քննությունները վերջացնի, որ միասին վերադառնանք հայրենիք։

Երեք շաբաթ իմ ծննդավայրում մնալուց հետո, եկա Թիֆլիս։ Առաջին իմ ցանկությունն էր տեսնվել Սանթուրյանի հետ։ Հենց իմ գալու օրը գնա նրա բնակարանը։ Նա տանն էր։ Դուրս վազելով, դիմավորեց ինձ պատշգամբի վրա։

Երբ բարեկամդ ամեն օր աչքիդ առաջ է՝ չես նկատում նրա օր-օրի վրա արտաքուստ փոխվելը։ Բայց բավական է, որ նա հեռանա մի քանի շաբաթով և դու, նորից տեսնելով, կգտնես նրան փոխված։ Հայելին շնորհակալության արժանի մի պարագա է։ Նա պահպանում է մեր իլյուզիան և աննկատելի կերպով օր-օրի վրա մեզ հաշտեցնում ծերության հետ։

Ընդամենը մի ամիս էր ես չէի տեսել Սանթուրյանին, և որքա՜ն փոփոխություն այդ կարճ միջոցում։ Նրա այտերը ներս էին ընկել, ծնոտը երկարացել էր, ճակատի ոսկորները ավելի էին ցցվել։ Քսանչորս տարեկան երիտասարդի գանգուր սաղերի մեջ ես նկատեցի ճերմակներ։ Մի բան, որ արտաքինում անփոփոխ էր— դա նրա սևաթույր աչքերի կրակոտ փայլն էր։

Նա ինձ ծանոթացրեց յուր ընտանիքի հետ։ Մայրը մի նիհար կին էր, արտաքուստ նման յուր որդուն։ Քույրը, հակառակ իմ սպասածին, շիկահեր էր, փոքր եղբայրը՝ նույնպես։

Նրա հոր գործը անցել էր պալատ։ Շատ էին աշխատել նրան երաշխավորությամբ հանել բանտից մինչև գործի երկ-

բորդ քննությունը։ Չէր հաջողվել։ Փաստաբանը հույս էր տալիս, որ պալատը ուրիշ կերպ կնայի դատին, քան դատարանը։ Ընտանիքը ապրում էր այս հույսով։

Ազգականները մեծ մասամբ երես էին դարձրել նրանցից։ Օրիորդը ամոթից և վշտից չէր ուզում հասարակության մեջ երևալ։ Մայրն ամեն օր արտասուք էր թափում։ Գիմնազիստը տարվա կիսին, չդիմանալով ընկերների ծաղրին, դադարել էր գիմնազիոն գնալուց և պետք է մի տարի կորցներ։

Այս բոլորը պատմեց ինձ Սանթուրյանը, երբ մենք առանձնացանք նրա սենյակում։

— Չգիտեմ ո՞ր մեկին միտիթարել, ո՞ր մեկի համար մըտածել,— ասում էր նա վշտացած։

Ես ամեն օր այցելում էի նրան։ Միասին գնում էինք զբոսնելու քաղաքից դուրս։

Երբեք չեմ մոռանալ այդ զբոսանքները և իմ բարեկամի տաղանդավոր զրույցները։ Ա՛խ, սիրում էի նրա հանդուգն դատողությունները, նրա ազատ և աներկյուղ գաղափարները, նրա պարադոքսները, մտքի անկանոն, բայց հսկայական թռիչքները։ Երբեմն մի անսպասելի դարձվածքով, անփույթ ձևով արտասանված խոսքով որոշում էր այս կամ այն երևույթի ներքին իմաստը։ Ոչինչ չէր խուսափում նրա սուր աչքերից, ոչինչ, որ միայն վերաբերում էր հասարակական կյանքին։

Նա քստմնում էր այն բոլորից, ինչ որ, նրա կարծիքով, չէր բխում մարդու իսկական զգացումներից։ «Պատժվի՛ր, բայց մի՛ կեղծիլ», ահա նրա նշանաբանը, և այդ նշանաբանին հավատարիմ մնաց մինչև վերջը...

Մի անգամ ես նրան ուժով տարել էի, չեմ հիշում, ինչ ընկերության ընդհանուր ժողով։ Այնտեղ կային հայեր, ռուսներ, վրացիներ, նույնիսկ մի քանի թուրքեր։ Բոլորն էլ գրեթե բարձր կրթության տեր մարդիկ էին։ Քննվում էր մեր երկրի տնտեսական վիճակին վերաբերյալ մի խնդիր։ Սանթուրյանը ինձ հետ հեռվից դիտում էր ժողովը և ուշադրությամբ ականջ դնում խոսողներին։ Նրա երեսից չէր հեռանում հեգնական ժպիտը։

— Նայի՛ր,— ասաց նա, իմ ուսին խփելով,— այստեղ

բոլորը կեղծում են։ Նայի՛ր այն պարոնին, որ այս րոպեիս գյուղացիների շահերի անունով էր խոսում։ Տես ինչպես է յուր բեղերը ծածուկ սրում և ինչպես է յուր թանկագին փողկապն ուղղում։ Նա կեղծում է։ Համոզված եղի՛ր, որ փողկապը նրա աչքում ավելի գին ունի, քան ժողովրդի շահերը։ Նայիր այն մյուսին. հայ է, ազատամիտ է համարվում, բայց տես ինչպիսի քծնող դեմքով է նայում յուր մոտ նստած իշխանավորին... Պաշտոնի է սպասում... Վաղը նա կդառնա ժողովրդի թշնամին... Նայի՛ր այն կարմիր այտերով պարոնին։ Նա էլ է գրում իմ հոր դեմ... Բայց մի անգամ նրան հարցրին մի հասարակական գումարի մասին։ Զաքարիայի պես պապանձվեց։ Սրանք են մեր երկրի աղը։ Ոչ, Միրաբյան, գլուխս պտտում է... գնանք այստեղից։

Եվ նա իմ թևից քաշելով, դուրս բերեց ինձ այդ ժողովից։

— Իսկ իմ հայրը,— ասաց նա փողոցում,— այդ կիսակիրթ մարդը գոնե ուրիշներին աղնվության դասեր չէր տալիս։ Կարելի է ես այսքան չցավեի նրա մասին, եթե նրան դատապարտող հասարակության բարոյական հայելին մաքուր լիներ...

Եվ բոլոր նրա խոսակցությունների մեջ իբրև մի մռայլ գիծ՝ անցնում էր հոր անունը։

Երբեմն նրան տանում էի հասարակական այգիներ և այնտեղ մենք հանդիպում էինք ծանոթ ուսանողների։ Նա այժմ ինքն էր ամենից երես դարձնում։ Նա ոչ մի տեղ չէր ուզում երկար մնալ։ Միշտ հուզված, միշտ մտաղբաղ, նա բոլո՛ր անգամ հանգստություն չուներ ներքին կրակից։ Առաջ ես կարծում էի, որ յուր հոր դժբախտությունն է նրան այդպես դարձրել։ Բայց երբ մտերմացա նրա հետ, երբ ծանոթացա նրա անցյալին, իմացա, որ միշտ այդպես է եղել։

Նա ամեն օր հիշում էր Ադելաիդային։ Նա ցանկանում էր մոռացության տալ յուր կարճատև երջանկությունը։ Բայց իզուր։ Ես չեմ պատմիլ ձեզ նրա կրած տառապանքները։ Դա ինձ շատ հեռու կտաներ։ Կհրավիրեմ ձեզ վերադառնալ Մոսկվա, դեպի ուր ձգտում էր Սանթուրյանը։

Օգոստոսի վերջին նա Ռուսաստան ուղևորվեց, իսկ ես՝ իմ

ծննդավայրը։ Այս անգամ մորս տեսա անկողնի մեջ ծանր հիվանդ։ Յոթ շաբաթ նա տատանվում էր մահի և կյանքի մեջ։ Ես չէի կարող նրանից հեռանալ, թեև վաղուց պետք է լինեի համալսարանում։ Վերջապես նա սկսեց առողջանալ, և արդեն հոկտեմբերի վերջն էր, երբ հասա Մոսկվա։ Վճռել էի իմ ուսանողության այդ վերջին տարին էլ անցկացնել գերմանացի պառավի բնակարանում։ Մտածելով, գուցե իմ սենյակը արդեն վարձված է կամ տանտիրուհին տեղափոխվել է ուրիշ տուն, ես մի օրով իջևանեցի հյուրանոցում և նույն օրը գնացի պառավին տեսնելու։

Հույս ունեի Ադելաիդային հանդիպել մոր մոտ։ Թե ինչ հետևանք էին ունեցել նրա հարաբերությունները Զարիֆյանի հետ, չգիտեի։ Միայն մտածում էի, որ Զարիֆյանը չպիտի լինի Մոսկվայում։ Նա արդեն ավարտել էր ուսումը և պետք է վերադարձած լիներ հայրենիք։

Մտա ծանոթ տան բակը և դիմեցի ուղղակի դեպի պառավի բնակարանը։ Դռնապանը նախկինն էր։ Մոտեցավ ինձ և բարևելով, հարցրեց.

— Երևի գերմանուհուն եք ուզում տեսնել։

— Այո՛։

— Չկա գերմանուհին։

— Տեղափոխվե՞լ է։

— Այո՛։

— Ո՞ւր։

— Այնտեղ, ուր բնակարանի համար վարձ չեն տալիս,— պատասխանեց դռնապանը ռուս մուժիկին հատուկ սառը հեգնությամբ դեպի մահը։

Խե՜ղճ պառավ. նա մեռել էր։ Առավոտյան հիվանդացել էր, երեկոյան հոգին ավանդել։ Դժբախտությունը պատահել էր ամառվա կիսին։ Ադելաիդան մոր մահից հետո վաճառել էր կահ-կարասին և տեղափոխվել ուրիշ տեղ։ Մեր բնակարանը այժմ կարուձևի արհեստանոց էր դարձել...

Այլևս ոչինչ չհարցրի և դուրս եկա փողոց՝ մի ծանր թախիծ սրտումս։ Կարծես ինձ զրկեցին մի ընտանիքի օթևանից, այնքան ընտելացել էի այդ բնակարանին և իմ տանտիրու-

հիներին։ Անբախտ պառավ, գոնե տեսա՞ր քո երկրորդ աղջկա բախտավորությունը, մտածում էի ես։

Հետևյալ օրը սենյակ վարձեցի մի ռուս ընտանիքի մոտ և իսկույն տեղափոխվեցի։ Համալսարանում իմ աչքերը որոնում էին Սանթուրյանին, բայց անցավ մի ամբողջ շաբաթ, չէի տեսնում։ Ոչ ոք չգիտեր նրա բնակարանը։ Ասում էին, թե շատ քիչ է դասախոսություններին գալիս։ Նրա ամենախիստ դատավորներից մեկը ծաղրաբար նկատեց.

— Ժամանակ չունի. զբաղված է բուլվարում թռչուններ որսալով...

— Այդ նրա զբաղմունքը չէ,— ասացի ես զայրացած։

Դատապարտողը թարս նայեց ինձ և երեսը շուռ տվեց։ Ես զգացի, որ Սանթուրյանին պաշտպանելն այժմ աններելի է համարվում։ «Թռչունների որսը» մի նոր բամբասանք էր, որ առաջ չկար։ Մի ուրիշ անգամ նույն դատավորը հանդգնեց կոպտաբար նկատել.

— Զարմանալի չի լինիլ, եթե այժմ ձեր ոչ ոքի չհավանող, անհաշտ բարեկամը սրիկաներին թողնի և դառնա «թռչունների» հովանավոր և փաստաբան...

Ես կորցրի իմ սառնասրտությունը և ապտակեցի սանձարձակ պարոնին։ Դա առաջին և վերջին անգամն էր, որ ես ձեռք էի բարձրացնում մարդու վրա։ Մեզ իսկույն շրջապատեցին ուսանողները և բաժանեցին։ Նույն օրը սպասում էի, որ վիրավորված պարոնը ինձանից հաշիվ կպահանջե։ Իմ հույսերը չարդարացան. նա ապտակս կուլ տվեց։

VII

Վերջապես մի օր գնացի հասցեների գրասենյակը և իմացա Սանթուրյանի հասցեն։ Նոյեմբերի սկիզբն էր։ Երկինքն ամպամած էր, երկիրը սառած, ձյուն չէր գալիս, բայց շոր և կտրող ցուրտ էր։ Կառքերի անիվները խուլ դղրդյուն էին արձակում սառած սալահատակների վրա։ Բարակ վերարկվիս մեջ փաթաթված, սարսռելով անցա Եկատերինյան բուլվարը, ծռվեցի դեպի աջ և մտա Մալայա Բասմաննայա փողոցը։

Այնտեղ էր կենում իմ բարեկամը։ Հիշում եմ, երբ մոտեցա երկհարկանի տան դռներին, սիրտս սկսեց բաբախել։ Սիրում էի Սանթուրյանին և հենց այդ օրը ուսանողների ժողովը արտաքո կարգի նիստում վճռել էր ինձ հանդիմանություն անել — նրա պատճառով սանձարձակ ուսանողին ապտակելուս համար։ Չար կասկածները պաշարեցին ինձ. արդյոք կենդանի՞ է, առո՞ղջ է, արդյոք մի նոր դժբախտություն չի՞ պատահել, և այլն, և այլն...

Սեղմեցի էլեկտրական զանգակի կոճակը։ Դուռը բաց արավ մի պատանի աղջիկ։ Նա ինձ առաջնորդեց տան վերին հարկը։ Պատշգամբի վրա կանգնած էր մի նիհար, ոսկրոտ պառավ և կեղտոտ դոգնոցով սրբում էր յուղոտ ձեռները։ Սանթուրյանի տանտիրուհին էր։

— Տանն է,— պատասխանեց նա իմ հարցին, և տանելով ինձ մի բավական մութ նախասենյակ, ցույց տվեց իմ բարեկամի սենյակը։

Երբ առանց դռներին զարկելու, մտա սենյակ, իմ աչքերը ոչինչ չնշմարեցին։ Միա՛յն զգացի, որ երկու նիհար թեեր առան ինձ իրանց գրկի մեջ։

— Վերջապես եկա՞ր, վերջապես եկա՞ր,— կրկնում էր Սանթուրյանը, շտապով կապելով բաճկոնի կոճակները։

Դա այն մոմենտներից մեկն է, որոնք ինձ վրա խոր տպավորություն են թողել և հավիտյան չպիտի ջնջվեն իմ հիշողությունից։ Կաշի և ոսկոր — ահա ինչ է մնացել այլևս իմ բարեկամից։ Նրա ճակատի կապույտ երակները ավելի որոշ էին գծավորվել, պարանոցի ոսկորները դուրս էին ընկել։ Ինձ թվաց, որ նա դժվարությամբ է շունչ քաշում, և մի չար կասկած հղացավ իմ մեջ։

— Դու հիվա՞նդ ես,— գոչեցի ես ակամա։

— Է՛հ, միշտ միևնույնն եմ։ Նստի՛ր, ինչո՞ւ ուշացար. եթե իմանայիր, ի՛նչ անհամբերությամբ էի քեզ սպասում։ Օ՞օ, չգիտես ինչե՞ր են պատահել։ Դու մարգարե ես, դու ճանաչում ես մարդկանց...

Ես սկսեցի հարցուփորձ անել, ոչինչ որոշ պատասխան չստացա, թե ինչ է պատահել։ Պառավի մահը գիտեի։ Ադելաիդայի մասին սկսեցի հարցնել, նա ատամները կրճտելով,

գլուխը դառնությամբ շարժեց։ Իմ հետաքրքրությունը չափ չուներ։ Նրա դեմքից, աչքերի առանձին արտահայտությունից պարզ երևում էր, պատահել էր մի արտաքո կարգի բան։

— Ինչո՞ւ դասախոսություններին չես գնում։

— Դասախոսությունները կյանքումն եմ լսում։ Ինձ համալսարանում այժմ անբարոյական են համարում։ Խոսելով չեմ կարող պատմել։ Գնա՛նք իսկույն, ես քեզ փաստը ցույց կտամ և դու կիմանաս, թե որն է իսկական անբարոյականությունը։ Գնա՛նք, դու պետք է իսկույն, հենց այս րոպեին տեսնես նրան...

Այս ասելով, նա շտապով հագավ վերարկուն։ Ես լուռ հետևեցի նրան։ Դուրս եկանք փողոց։

— Ահա մոտիկ է, շուտով կհասնենք...

Հազիվ անցանք հարյուր քայլ, նա կանգ առավ մի երեք հարկանի նեղ տան դռան առջև։ Ներքին հարկը կիսով չափ գետնի մեջ էր։ Նա մոտեցավ գետնից հաղիվ մի կանգուն բարձր — մի փոքրիկ քառակուսի լուսամուտի, երկու անգամ կամացուկ զարկեց ապակիին։ Մի ձեռ ներսի կողմից սպիտակ վարագույրները բաժանեց միմյանցից։ Ես նշմարեցի մի կնոջ դեմք, որ իսկույն չքացավ։ Սանթուրյանը շտապով բաց արավ փողոցի դռները։ Մենք մտանք, երկու աստիճան փողոցից ցած իջանք, անցանք մի նեղ կորիդոր և մոտեցանք մի մոխրագույն դռան։ Սանթուրյանը բաց արավ դուռը և, նայելով դեպի ներս, ասաց.

— Հետս հյուր կա։

— Խնդրեմ,— լսվեց ներսից մի կանացի ձայն, որը ինձ շատ տկար թվաց։

Մենք մտանք մի փոքրիկ սենյակ — համեստ կահավորված։ Բայց ո՞վ էր այնտեղ բնակվում, ինչո՞ւ Սանթուրյանը ինձ չէր ասում։ Այս բոլորը մի առանձին խորհրդավորություն էին տալիս մեր տարօրինակ այցին։ Հետաքրքրությունից իմ սիրտը բաբախում էր։ Սենյակի մեջտեղում կանգնած էր մի երիտասարդ կին, համեստ տնային հագուստով։ Ինձ տեսնելով, նա ժպտաց, շփոթվեց, կարմրեց և, ձեռը մեկնելով, արտասանեց ճնշված ձայնով.

— Ա՜հա, այդ դո՞ւք եք, պարոն Միքաբյան։

Խորհրդավորության քողն ընկավ իմ աչքերից, և ես ճանաչեցի Ադելաիդային։ Բայց ո՛ւր էր այն զվարթ, թռչկոտող, առողջ դեմքով, ծիծաղկոտ և մշտաշարժ օրիորդը։ Իմ դեմ կանգնած էր մի գունատ, նիհար և ամաչկոտ կին՝ գլուխը կրծքին թեքած։ Նրա սիրուն կազմվածքը այլևս չուներ յուր առաջվա գեղեցկությունը. նրա ուսերը ինձ թվացին ցած իջած, կուրծքը նիհարած։ Նրա գլխին ձգած էր մի մեծ դեղնագույն շալ։ Ես նկատեցի, որ, ինձ տեսնելով, շտապեց շալով ծածկվել։

Ես ոչինչ չկարողացա խոսել, ապշած նայում էի Ադելաիդայի պարանոցին, որ գծավորվել էր կապույտ երակներով։ Ինձ թվում էր, որ այնտեղ խեղդվում է նրա հեկեկանքը, և նա հազիվ կարողանում էր իրեն զսպել։ Ես ակնարկեցի նրա մոր մահը և մի քանի մխիթարական խոսքեր ասացի։

— Այո, մեռավ, ինձ թողեց մենակ,— ասաց նա և սկսեց հեկեկալ։— Խե՜ղճ մայր, խե՜ղճ մայր,— կրկնում էր նա արտասվախառն ձայնով,— նա միայն տասներկու ժամ հիվանդ մնաց։ Առավոտը զարթնեց թե չէ, ասաց՝ գլուխս ցավում է։ Պառկեց, ուշաթափ եղավ։ Բժիշկ կանչեցինք, օգնել չկարողացավ։ Ամբողջ օրը տանջվեց անխոս... միայն նայում էր երեսիս... Երեկոյան տասը ժամին հոգին ավանդեց... Օ՜օ, խեղճ մայր, բարի մայր, աշխատասեր մայր...

Բայց այլևս չէի խղճում պառավին։ Լավ էր, որ մեռավ և աղջկանը չտեսավ այդ խայտառակ դրության մեջ։

Առանց բացատրությունների, ես ամեն բան հասկացա։ Իմ առջև կանգնած էր մի քաղաքակիրթ մարդու դոհ։ Ես միայն չէի կարողանում ինքս ինձ հաշիվ տալ, թե ի՛նչպես նա գրավեց այդ աղջկան մինչև այդ աստիճան...

Դժվար էր երկար ժամանակ դիմանալ քստմնելի տեսարանին։ Իմ սիրտը մորմոքվում էր, երբ նայում էի Ադելաիդային։ Նա ամաչում էր, չէր վստահանում ուղղակի նայել իմ աչքերին։ Ամաչում էր նաև Սանթուրյանը... ուրիշի արարքից։ Բայց ո՛րպիսի գուրգուրանքով, երախտագիտությամբ և ակնածությամբ էին նայում Ադելաիդայի թախծալի աչքերը իմ բարեկամին։

Ես շտապում էի իմանալ այդ նողկալի դեպքի պատմու-

թյունը, այն, ինչ որ պատահել էր ինձանից հետո։ Հարկավ, անկարելի էր այդ մասին խոսել Ադելաիդայի մոտ։ Մենք միմյանց հարցուփորձ էինք անում կողմնակի բաների մասին, մինչդեռ երեքիս էլ ճնշում էր անախորժ միտքը, երեքս էլ ըզգում էինք մեր դրության կեղծիքը։ Ես շտապեցի Ադելաիդային ազատել անախորժ դրությունից և հրաժեշտ տվի։ Գիտեի, որ Սանթուրյանը պիտի հետևի ինձ։

Մենք դուրս եկանք փողոց, և ես սկսեցի մի փոքր ազատ շնչել։ Իմ բարեկամը լուռ էր ամբողջ ժամանակ, մինչ անցնում էինք փողոցով։ Ես միայն լսում էի նրա կրծքում խեղդվող հառաչանքների խուլ արտահայտությունը։ Երբ հասանք նրա սենյակը, նա թուլացած, ընկճված նստեց բազկաթոռի վրա, արտասանելով.

— Դու տեսար նրան. այժմ պատրաստ եմ լսել քո հանդիմանությունը։

— Ո՞ւմ պիտի հանդիմանեմ։

— Ինձ։

— Ինչո՞ւ։

— Որ ես չլսեցի քեզ, որ չուզեցի ճանաչել այդ մարդուն, որ կուրացա և նրա բարեկամական դիմակի տակ չտեսա տգեղ կերպարանքը։ Ադելաիդա՞ն։ Նա ոչինչ մեղք չունի։ Մեղավորը ես եմ։ Ե՛ս, որ թույլ գտնվեցի, չկարողացա հաղթել իմ մեջ հիմար հպարտության զգացումը և ուժով, այո՛, նույնիսկ ուժով, մի օր մտնել Ադելաիդայի սենյակը, խնդրել, աղաչել, որ ինչ ուներ, ինքն անձամբ ասեր իմ երեսին։

Եվ նա սկսեց հետզհետե ավելի ու ավելի զրդվել։ Նա պատմեց բոլորը, և այստեղ երևան եկավ, թե կիրքը երբեմն ի՛նչ սոսկալի միջոցների է ընդունակ դիմելու։ Զարիֆյանը յուր միջամտության ժամանակ բոլորը աղավաղել էր՝ Ադելաիդայի ասածները Սանթուրյանի և Սանթուրյանի ասածները Ադելաիդայի մոտ։

Այդ դեռ վերջերը։ Իսկ առաջ, երբ Ադելաիդան հաշտ է եղել Սանթուրյանի հետ, Զարիֆյանը ամեն կերպ աշխատել է գցել յուր հայրենակցի վարկը նրա աչքում։ Նա գործել է այնքան դգույշ, այնքան խորամանկ, որ օրիորդը ինքն էլ չի զգացել, թե ինչպես յուր սրտում հետզհետե նոր ծագած սիրույն

փոխարինում է ատելության զգացումը։ Նա Սանթուրյանին Ադելաիդայի մոտ ներկայացրել է մի սրիկա և ավազակ հոր զավակ, որ ամենից արհամարհված է, ամենից հալածված։ Նա օրիորդի մոտ կարդացել է յուր հայրենակցի մասին լրագրերում, նույնիսկ հայ լրագրերում տպված բոլոր հոդվածները։ Սանթուրյանը հոգեպես հիվանդ է, դժբախտ է, չի կարող սիրել. ահա ինչ է ասել Զարիֆյանը։ Եվ ասել է այն ձևով, որ օրիորդը համոզված է եղել, թե ասում է ընկերական սիրուց, բարեկամական կարեկցությունից դրդված։ Այսպիսով, նա օրօրի վրա, կաթիլ-կաթիլ կասկածանքի թույնը թափել է Ադելաիդայի փափուկ սրտի մեջ։

— Գիտեմ,— շարունակեց Սանթուրյանը,— դու կարող ես ասել, թե ինչո՞ւ Ադելաիդան գեթ մի անգամ ինձ հետ չխոսեց այս մասին։ Բայց այդ կարելի էր պահանջել մի հասուն և փորձված կնոջից, իսկ Ադելաիդան, իբրև երեխա, ամաչել է մի ակնարկ անգամ անել ինձ...

Այնուհետև, երբ Ադելաիդան սկսել է երես դարձնել, երբ Սանթուրյանը խնդրել է Զարիֆյանին միջնորդ լինել, «առերես» բարեկամի համար բացվել է նորանոր մեքենայությունների ասպարեզ։ Նա բոլորը կեղծել է, բոլորը աղավաղել, երկու կողմերին ևս հակառակը պատմելով։ Երբեք Ադելաիդան չի ասել թե «արհամարհում է Սանթուրյանին», երբեք չի ասել, թե «լսել անգամ չի ուզում Սանթուրյանին անձամբ բացատրություն տալու մասին», երբեք մանավանդ չի ասել, թե Սանթուրյանը յուր վերաբերմամբ «սուտ նպատակ է ունեցել»։ Ընդհակառակը, Զարիֆյանը ինքն է ասել օրիորդին, թե իբր «Սանթուրյանը ծաղրել է յուր մոտ Ադելաիդային...»։

— Եվ այս բոլոր մեքենայություններին դիմել է մեզ միմյանցից բաժանելու համար,— շարունակեց Սանթուրյանը։— Նա ինքը երդվել է Ադելաիդայի մոտ, թե սիրում է նրան, տանջվում է նրա համար։ Գիտեմ, դու կասես, «դարձյալ մեղքը քո Ադելաիդայինն է, ինչո՞ւ այդքան թույլ է գտնվել և խաբվել է այդպես շուտ ու հեշտ»։ Ճիշտ է, բնական է այդ մեղադրանքը։ Բայց, բարեկամս, մի՛ մոռանալ մի բան. Ադելաիդայի սերը դեպի ինձ այնքան ամուր չի եղել, որ ուժ տար նրան դիմանալու մի այդպիսի ճարպիկ մարդու խարդավանքներին։ Կարո՞ղ է մի նոր տնկած և հազիվհազ արմատ ձգած ծառ դիմանալ թեկուզ մի թույլ փոթորիկի...

Որքան ևս Սանթուրյանը արդարացներ Ադելաիդային, այնուամենայնիվ օրիորդը իմ աչքում գեթ մի աստիճանի մեղավոր էր յուր անբախտության համար։ Բայց այլևս ուշ էր այդ մասին վիճելը և ավելորդ։ Ես միայն հարցրի.

— Այժմ ի՞նչ ես մտադիր անել։

— Իհարկե վրեժ առնել Զարիֆյանից։

Միանգամայն համոզված էի, որ Սանթուրյանը ընդունակ է մի արատավորված օրիորդի համար ազնիվ և ասպետական վրիժառու լինել, անգամ եթե այդ օրիորդը Ադելաիդան չլիներ։ Նույնիսկ ես ինքս պատրաստ էի Ադելաիդայի պատիվը պաշտպանել, ուր մնաց նա, որ սիրում է այդ օրիորդին։

— Բայց ի՞նչ պիտի լինի քո վրեժը,— հարցրի ես հետաքրքրված։

— Բարոյական վրեժ։

— Չեմ հասկանում։

— Շատ պարզ է. ես կամուսնանամ Ադելաիդայի հետ։ Վաղուց եմ վճռել, միայն քեզ էի սպասում։

Ես զարմացած նայեցի նրա երեսին։ Խոստովանում եմ, ամեն տեսակ վրիժառություն ինձ համար հասկանալի էր, բացի այդ մեկից...

— Դու զարմանո՞ւմ ես, Միրաբյան,— սկսեց բացատրել Սանթուրյանը,— բայց դա միակ վրիժառությունն է, որին պետք է դիմե այնիվ մարդը։ Լսի՛ր, Զարիֆյանը թողել է Ադելաիդային այդ դրության մեջ և հեռացել։ Նա մտադիր չէ ամուսնանալ յուր զոհի հետ։ Դժբախտաբար, մի շարք ուսանողների շրջանում այդ տեսակ զոհեր սովորական են դարձել։ Ստիպել Զարիֆյանին, որ յուր մեղքը քավե, ամուսնանա,— անկարելի է։ Եթե նա համաձայնվի էլ, Ադելաիդան երբեք չի կամենալ։ Նա այժմ զզվանքով է հիշում Զարիֆյանին։ Այս մեկ, Ի՞նչ պիտի անե, ուրեմն Ադելաիդան։ Մնա այդ դրության մե՞ջ։ Նա մի անպաշտպան երեխա է։ Նա շուտով կընկնի վատ ճանապարհ. աշխարհը լի է փորձություններով, կընկընի և կգլորվի անբարոյականության անդունդը։ Համաձա՞յն ես, որ նա այդպես կորչի։ Ո՛չ, դու ազնիվ մարդ ես, չես կա-

բող համաձայնվել։ Այս երկու։ Բայց կա և երրորդ պատճառ։ Դա ամենից զորավորն է. ես սիրում եմ Ադելաիդային, սիրում եմ այժմ էլ, այդ դրության մեջ էլ, և ավելի, քան առաջ։ Ահա այն պատճառները, որ ինձ դրդեցին իմ վճիռը կայացնել։

— Բայց քո ուսո՞ումը, քո ծնողնե՞րը, քո՞ւյրը, եղբա՞յրը, հասարակությո՞ւնը...

— Մտածել եմ այդ մասին էլ։ Ուսումս ավարտում եմ այս տարի։ Ծնողներս և քույրերս դեմ չեն լինիլ, որովհետև ամուսնանում եմ մի խաբված, բայց բարոյական կնոջ հետ։ Գալով հասարակությանը, ո՛չ ոքի պարտավոր չեմ հաշիվ տալու, իմ քայլը միայն ինձ է վերաբերում։

Ես այլևս ոչինչ չասացի, այնքան վճռական էր նրա պատասխանը։ Հրաժեշտ տալիս, նա ինձ խնդրեց, որ յուր պատմածները առայժմ ոչ ոքի չհաղորդեմ...

VIII

Մի շաբաթ անցած Սանթուրյանը եկավ ինձ մոտ և խընդրեց նրա խաչեղբայրը լինել։

— Այժմ ամեն ինչ պատրաստ է։ Ադելաիդան տատանվում էր։ Նա ինձ սիրում է, բայց իմ զոհաբերությունը շատ մեծ էր համարում և չէր ուզում իմ կինը դառնալ։ Ես նրան համոզեցի. վաղն ևեթ պետք է ամուսնանամ։

— Բայց այդքան շո՞ւտ։

— Դու գիտես, որ հետաձգելը անհարմար է...— Բայց ես այս անգամ չկամեցա ոչ մի կասկած թաքցնել իմ բարեկամից և բոլորը հայտնեցի։ Անշուշտ նրա վճիռը կրում էր բարձր աղնվության և վեհանձնության դրոշմ, անշուշտ նրա արածը մի հերոսական քայլ էր։ Բայց ո՞րտեղ կարող է հասցնել նրան այդ քայլը։ Լինել ամուրի և ամուսնացած— դրանք երկու միմյանցից շատ տարբեր դրություններ են։ Այն, ինչ որ թեթև կարող է անցնել ամուրիի համար, մեծ անախորժություններ կարող է պատճառել մի ընտանիքի հորը։ Նա չի կարող դիմանալ հասարակական կարծիքի ծանրությանը։ Իսկ եթե դիմանա էլ, մի՞թե նույնը կարող է երաշխավորել և Ադելաիդայի համար, որին պիտի տանի մի օտար և անծանոթ շրջան։

Սրանք էին իմ ընդդիմության պատճառները։ Սակայն Սանթուրյանը ինձանից ավելի լուրջ էր մտածել այդ բոլորի մասին։ Նա հերքեց իմ բոլոր առարկությունները։ Վճիռը անխախտելի էր։ Ես չկամեցա նրա հետ երկար վիճել։ Այն չար կասկածը, որ ծագել էր իմ սրտում նրա առողջության մասին, այժմ ավելի ամրացել էր։ Այդ օրը նա այնքան թույլ էր և դյուրագրգիռ, որ ես ավելի նրա կյանքի, քան ամուսնության մասին էի մտածում։

Պսակը կայացավ հայոց եկեղեցական օրենքներով. Ադելաիդան բողոքական էր։ Ինչպես ազնիվ որդի, Սանթուրյանը յուր մորը այդ մասին հաղորդել էր դեռ երկու շաբաթ առաջ, ուղարկելով նամակի հետ Ադելաիդայի լուսանկարը։ Հարսանիքից երկու օր առաջ նա ստացել էր պատասխան։ Մայրը ընդդիմադրություն չէր ցույց տալիս, բայց աղաչում էր դդուշ լինել ընտրության մեջ։ Երևի, որդին առայժմ ճշմարտությունը թաքցրել էր նրանից... Եվ լավ էր արել։

— Գիտեմ, այժմ ինձ ատողների և արհամարհողների թիվը պետք է ավելանա,— ասում էր նա պսակի երկրորդ օրը,— բայց ես արդար եմ իմ խղճի առջև, և դա ինձ բավական է։ Ոչ մի հալածանք չի կարող ինձ ստիպել զղջալ իմ արածի մասին։ Ա՜խ, Միրաբյան, հավատացի՛ր, ես քեզ սիրում եմ ոչ միայն նրա համար, որ դու իմ միակ բարեկամն ես։ Ոչ, դա դեռ քիչ է. ես քո մեջ տեսնում եմ մտքի անկախություն. դու ուրիշի խելքով չես ապրում, օրենք դարձած նախապաշարմունքները քեզ շատ չեն կաշկանդում... Բայց և այնպես էլի կաշկանդում են։ Գիտեմ, ուսանողները քեզ էլ սկսել են խորթ աչքով նայել իմ պատճառով։ Բայց անկեղծ պատասխանի՛ր. զգում ես, որ վատ բան ես արել ինձ նման մի անհաշտ մարդու հետ ընկերանալով։

— Երբե՛ք,— գոչեցի ես զգացված,— ընդհակառակը, ես շատ գոհ եմ իմ արածից։

— Տո՛ւր ինձ ձեռքդ,— ասաց նա ոգևորված,— մենք հավիտյան կմնանք բարեկամներ։

Եվ մնացինք։

IX

Ադելաիդան ծնեց մի արու զավակ։ Այդ ժամանակները թե՛ ես և թե Սանթուրյանը այնքան զբաղված էինք վերջին քննություններով, որ հաղիվ շաբաթը մի անգամ տեսնվում էինք։ Բայց իմ աչքից չէր խուսափում այն տխուր հանգամանքը, որ նա օրեցօր թառամում էր և դալկանում։ Նա չէր հազում, և դա միակ բանն էր, որ հույս էր տալիս ինձ, թե հիվանդությունը թոքախտ չէ։ Եվ որքան նա մարմնապես թուլանում էր, այնքան հոգեկան կրակը ուստկանում էր, այնքան աչքերի փայլը զորեղանում։ Թվում էր ինձ, որ հենց այդ կրակն է նրան արագ-արագ լափում, և եթե մի ցավ ունի, հենց դա է։

Ես ամեն օր լսում էի այն բոլորը, ինչ որ ուսանողների շրջանում խոսվում էր Սանթուրյանի համարձակ քայլի մասին։ Ամենքը դատապարտում էին այդ քայլը, ամենքը համարում էին նրան անբարոյական։ Իսկ ես, որ միակ մարդն էի իսկական իրողությանը տեղյակ, չգիտեի, ո՛ր մեկին ապացուցանեմ իմ բարեկամի վարմունքի ազնվությունը։ Ոչ ոք չէր ուզում հավատալ, թե Ադելաիդան այն թշվառ էակներից չէ, ինչ որ կարծում էին։

— Դրոշմը ճակատին էր, երբ ամուսնացավ. միթե կարելի՞ է հերքել արևի լույսը,— ասում էին շատերը։

Ինձ վրդովեցնում էր մանավանդ մի հանգամանք. ոչ ոքի հայտնի չէր, թե ո՞վ է այդ դրոշմի հեղինակը։ Ես մի վերին աստիճանի անախորժ դրության մեջ էի։ Մի կողմից ուզում էի ամենի առջև պատռել Զարիֆյանի գիմակը, մյուս կողմից՝ անհարմար էի համարում։ Ճշմարիտ է, Սանթուրյանը ինքը, հարկավոր եղած ժամանակ, կպարզեր իրողությունը, այնքա՛ն նա համարձակ էր յուր արածների վերաբերմամբ, բայց համոզված էի, որ դա կարող էր Ադելաիդային մի առանձին վիշտ պատճառել։

Կային մարդիկ, որ ասում էին՝ «Սանթուրյանը սեփական մեղքն է քավում»։ Դա համեմատաբար մի նպաստավոր կարծիք էր։ Եվ ես միայն դրա դեմ էի լռում, հասկացնել տալով ուսանողներին, թե իբր հենց այդ է զուտ ճշմարտությունը։

Մի անգամ համալսարանի դահլիճներից մեկում կովկասցի ուսանողները հավաքված խորհրդակցում էին մի ինչ-որ «կովկասյան քեֆի» մասին։ Ես չէի հետաքրքրվում, բայց լսում էի նրանց խոսածները։ Սկսեցին անունները գրել։ Մեկը ծաղրաբար հիշեց Սանթուրյանի անունը։ Դա նորանոր բամբասանքների և սրախոսությունների առիթ տվեց մի խումբ ուսանողների։ Արդեն ես սկսել էի արհամարհել նրանց կարծիքները, և դա ավելի էր կատաղեցնում նրանց, թեև իմ ապտակը դեռ չէին մոռացել։

— Տեսե՞ք,— ասաց մի սրախոս,— մենք միայն մի դիպլոմով կվերադառնանք հայրենիք, իսկ նա երկուսը կտանի։

— Ինչո՞ւ ոչ երեքը,— նկատեց մի ուրիշը։

— Երրորդը կեղծ է,— պատասխանեց սրախոսը։

Դարձյալ արյունը խփեց գլխիս, դարձյալ կամենում էի պատժել այդ չարախոսներից մեկին։ Բայց այդ րոպեին մեկը հանկարծ բռնեց իմ թևից և հետ քաշեց ինձ։ Նայեցի և տեսնեմ ինքը Սանթուրյանն է։ Նա հեռվից հասկացել էր բանի էությունը։ Ուսանողները նրան տեսնելով, հետ քաշվեցին, որ ցրվեն։

— Սպասեցե՛ք, պարոններ,— գոչեց նա։

Բոլորը կանգ առան իրանց տեղերում։

— Պարոններ,— խոսեց իմ բարեկամը վրդովված ձայնով,— գիտեմ, վեճը ինձ էր վերաբերում և իմ ընկերը ուզում էր ինձ պաշտպանել։ Դուք շատ արի եք իմ վերաբերմամբ։ Խնդիրը ձեր քեֆին մասնակցելու մասին չէ։ Իհարկե, ոչ դուք կհրավիրեք, ոչ ես կկամենամ իմ ներկայությամբ ապականել ձեր վերջին ուսանողական ժողովը։ Բայց լսեցե՛ք միայն մի խոսք։ Դուք դատապարտում եք իմ վերջին քայլը, դուք համարում եք նրան անբարոյական։ Իսկ ե՛ս... ես համարում եմ ավելի, քան բարոյական։ Դուք ասում եք, թե ես ամուսնացել եմ մի թշվառ էակի հետ։ Եթե խնդիրը միայն ինձ վերաբերեր, իհարկե, կլռեի, ինչպես միշտ լռել եմ ձեր բոլոր, ներեցե՛ք, զրպարտությունների դեմ... Բայց այժմ... դուք անխնա արատավորում եք մի անուն, որ ինձ համար թանկ է, քան ես և իմ անունը։ Դուք անարդար եք վարվում։ Ես չեմ վիճիլ ձեզ հետ այդ մասին։ Բայց ընդունենք մի րոպե, որ ձեր ասածը

ճիշտ է. որ ես, իրավ, մի թշվառ էակի հետ եմ կապել իմ կյանքը։ Նախ՝ դա ինձ և միայն ինձ է վերաբերում, երկրորդ՝ եթե քաջ եք, եթե գոնե մի կաթիլ անկեղծություն ունիք, եթե ձեր հոգին բոլորովին ստրկացած չէ, բարեհաճեցեք պատասխանել այս հարցին. «ո՞րն է լավը. կնոջը ցեխի մեջ գլորե՞լը, թե՞ ցեխից հանելը...»։ Ես սպասում եմ պատասխանի...

Նա կանգնած էր դահլիճի մեջտեղում և նայում էր յուր շուրջը։ Նա ինքը հուզմունքից դողում էր, բայց ճիգ էր անում զսպել իրան և հաջող։ Նրա նիհար, գունատ, հիվանդոտ դեմքը խորին տրտմության հետ արտահայտում էր նաև հոգու անսահման անվեհերություն։ Նա գեղեցիկ էր, գրավիչ և ազդու այդ րոպեին։ Բոլոր ուսանողները այդ վայրկյանին ինձ թվում էին ոչնչություն։ Ես հիացած նայում էի նրան, մտքումս ծափահարելով նրա ամեն մի բառը։ Պատրաստ էի պաշտպանել նրան մինչև իմ արյան վերջին կաթիլը և սպասում էի, թե ով կհանդգնի ձեռք բարձրացնել կամ մի կոպիտ խոսք ասել նրան։

Բայց ամենքը լուռ էին և ապշած նայում էին նրան։ Դեմքերը փոխվել էին։ Նա, որ միշտ մեղադրվում էր և միշտ դատապարտվում, այժմ, կարծես դարձել էր դատավոր և յուր անողոք հարցը դրած, սպասում էր պատասխանի։ Իսկ պատասխան չէր լսվում։ Ուսանողները նայում էին միմյանց երեսին։ Սրախոս պարոնը աշխատում էր ժպտալ, բայց շփոթված էր։ Ինձ համար այդ հասկանալի էր, նրա խիղճը մաքուր չէր, որովհետև նա մեկին արդեն «գլորել էր ցեխի մեջ»։

— Չե՞ք պատասխանում,— արտասանեց Սանթուրյանը, ձայնը բարձրացնելով,— լռո՞ւմ եք... Հասկանում եմ. որովհետև ձեզանից շատերի համար գուցե անհնարին է պատասխանել... Օ՜օ, ոչ ոքի չեմ ուզում դատապարտել, թեև դատապարտելու փաստեր ունիմ... Բայց, պարոննե՛ր, բավական է։ Դուք հալածում եք ինձ, ես տանում եմ ձեր բոլոր վիրավորանքները։ Բայց, հավատացե՛ք, դա ինձ համար այնքան վրշտալի չէ, որքան ձեր սխալ հասկացողությունը պատվի և պատվասիրության մասին։ Ուրիշ ոչինչ ասելիք չունիմ... Դա իմ վերջին հրաժեշտն է... Միրաբյան, կամենո՞ւմ ես ինձ հետ գալ...

Այս ասելով, նա քայլերը ուղղեց դեպի դուրս։ Ուսանողները ճանապարհ տվին նրան։

— Հիվանդ է,— շշնջաց մեկը։

— Չարժե խոսել նրա հետ,— ասաց մյուսը։

— Տեսե՛ք, նոր է խելքի եկել և ուզում է հաշիվ պահանջել մեզանից,— ասաց երրորդը։

Ես ոչ ոքի վրա ուշադրություն չդարձրի։ Ինձ թվում էր, որ Սանթուրյանը յուր վրեժն առավ և վերջացրեց։ Ես հաստատ քայլերով հետևեցի նրան, և այն օրից կտրեցի իմ կապը ուսանողների հետ...

X

Մոտեցել էր գարունը։ Մոսկվա գետի սառույցը վաղուց արդեն կոտրվել էր։ Արեգակի ջերմությունը զգալի էր դարձել։ Ջատկական տոներից հետո սկսվեցին մեր քննությունները և վերջացան մայիսի կեսին։

Մի սիրուն, պայծառ, թեև բավական ցուրտ արեգակնային օր էր, երբ վերջին հրաժեշտս տալով համալսարանին, իրավաբանի դիպլոմը ձեռքիս, վերադառնում էի իմ սենյակը ուրախ, երջանիկ, լի ապագայի քաղցր հույսերով։ Մտադիր էի շտապով ճաշել և անմիջապես գնալ Սանթուրյանի մոտ՝ իմ ուրախությանը նրան էլ մասնակից անելու։ Նրա քննությունները դեռ չէին վերջացել։ Հյուրասիրելու առաջին հերթն իմն էր։ Մտածում էի իրիկնադեմին նրան ու Ադելաիդային հրավիրել մի հյուրանոց ընթրիքի։ Ես վուրկ էի ուրիշ բարեկամներից։

Սակայն այդ հանդիսավոր օրվա իմ ուրախությանը վիճակված չէր երկար շարունակվելու։ Երբ երգելով, ուրախ-ուրախ մտա իմ սենյակը, սեղանիս վրա գտա մի տոմսակ հետևյալ բովանդակությամբ. «Շտապեցեք գալ մեզ մոտ, Մարգարը ցանկանում է ձեզ հետ տեսնվել»։ Այդ օրերը պետք է, վերջապես, Թիֆլիսի պալատում քննվեր Սանթուրյանի հոդվածը, որ այնքան ձգձգվել էր։ Կարծեցի, իմ բարեկամը այդ մասին տխուր հեռագիր է ստացել, երևի կամենում է յուր վիշ-

տը հայտնել ինձ։ Բայց նամակը Ադելաիդան էր գրում, և այս հանգամանքը ինձ շփոթեցրեց... Մի շաբաթ էր, ես նրանց չէի տեսել։

Չգիտեմ ինչպես ճաշեցի և կառք նստելով, շտապեցի իմ բարեկամի մոտ։ Նրա այժմյան բնակարանը բաղկացած էր երկու փոքրիկ սենյակներից։ Մեկը ծառայում էր իբրև ընդունարան, սեղանատուն, պարապելու սենյակ, մյուսը ննջարան էր։ Ադելաիդան ինձ դիմավորեց դռների մոտ և շվարած հաղորդեց, թե յուր ամուսինը հիվանդ է։ Ես կարծես ավելի վատ լուրի էի սպասում, սառնությունս չկորցրի, մտա ննջարան, ուր պառկած էր նա։ Ես մոտեցա նրա անկողնին։ Նա սաստիկ տաքության մեջ էր, ճակատն այրվում էր, կուրծքը շնչառությունից ուժգին բարձրանում էր և ցածրանում։

— Ոչինչ,— ասաց նա շշնջալով, ինձ հանգստացնելու համար,— մի քիչ տկար եմ, կանցնի...

Ես նստեցի նրա գլխի մոտ։ Ադելաիդան շշնջալով պատմեց իրողությունը։ Չորս օր առաջ Սանթուրյանը մինչև ուշ երեկո պարապում է և հետո, թեթև գլխացավ զգալով, պառկում է անկողին։ Այդ օրը երեխան հիվանդ է լինում, չի քնում, ծիծ չի ուտում, շարունակ լալիս է։ Սանթուրյանը ստիպված է լինում մինչև լույս նրան ման ածել սենյակից սենյակ, յուր կրծքի վրա սեղմած։ Նա չի թողնում, որ մայրը անհանգստանա։ Ոտաբոբիկ, կուրծքը մերկ, նա ժամերով անցուդարձ է անում բաց և սառը հատակի վրա։ Առավոտյան կանուխ նա հոգնած, անքուն, Ադելաիդայից թաքցնելով յուր դողոցը, վազում է բժշկի հետևից,— և նույն բժիշկը, երբ երեկոյան գալիս է կրկին անգամ երեխային տեսնելու, գտնում է իմ բարեկամին անկողնում պառկած։

Այն կրակը, որ տարիների ընթացքում մխալով ուտում էր նրա հոգին, քայքայել էր նրա ամբողջ կազմվածքը։ Նրա համար դժվար էր դիմանալ մի ամենաթեթև հիվանդության անգամ։ Ահա ինչու էի ես վախենում։ Երբ բժիշկը եկավ նրան նորից զննելու, ես թաքուն խնդրեցի հայտնել ինձ, իբրև հիվանդի բարեկամին, ճշմարտությունը։

— Եթե հիվանդի կազմվածքը ամուր լիներ,— ասաց

բժիշկը,— կարելի էր երաշխավորել, որ կառողջանա։ Բայց նրա թոքերը վաղուց են վնասված...

Ահա հենց այդ բանն էր ինձ վախեցնում։ Ես մի կերպ զսպեցի իմ արտասուքս և շրթունքներս կրծոտելով անցա ննջարան, նստեցի հիվանդի մոտ։

Այդ դիշեր մինչև լույս նա անցկացրեց շատ անհանգիստ։ Ադելաիդան ստիպված էր ամբողջ ժամանակ զբաղվել երեխայի հետ։ Ոչ ծծմայր ուներ, ոչ աղախին։

Հիվանդը ցնորքների մեջ էր, խոսում էր անկապ և թլվատ լեզվով։ Ես ստեպ-ստեպ փոխում էի նրա ճակատի սառը կոմպրեսը և ժամը մի անգամ դեղի գդալը մոտեցնում բերանին։

Հետևյալ առավոտ նա մի քանի ժամով ուշքի եկավ և սկսեց ինձ հետ զրուցել։ Նա խոսում էր յուր հոր գործի, մոր, եղբոր, քրոջ, Ադելաիդայի և նրա երեխայի մասին։ Որքա՜ն սեր և գուրգուրանք էին զգացվում նրա խոսքերի մեջ։ Իսկ Ադելաիդան յուր երախտագիտությամբ և անկեղծությամբ լի հայացքը չէր հեռացնում նրա երեսից։ Իմ բարեկամը հիվանդացել էր երեխայի պատճառով և այդ կրկնապատկում էր գերմանուհու սերը և վիշտը։

Իսկ հիվանդը հավատացած էր, որ շուտով, շուտով տաքությունը բոլորովին կանցնի, երեկոյան կամ վաղը ինքը ոտքի կկանգնի։ Նա սկսեց խոսել ուսանողների, համալսարանի, պրոֆեսորների և վերջին քննությունների մասին։ Նա շտապում էր շուտով ավարտել քննությունները և վերադառնալ հայրենիք Ադելաիդայի հետ։

— Ես համոզված եմ,— ասաց նա Ադելաիդային,— որ մայրս և քույրս քեզ պիտի շատ սիրեն...

Երբ Ադելաիդան անցավ մյուս սենյակ երեխային ծիծ տալու, նա խոսեց վերջին տեսարանի մասին համալսարանում։ Նա չէր մեղադրում յուր հակառակորդներին, միայն ասում էր, թե սահմանափակ խելքի և զարգացման տեր են, մտքի անկախություն և համոզմունքների քաջություն չունեն, ուրիշներից լսածները և կարդացածներն են թութակի պես կրկնում։ Ներս մտավ դարձյալ Ադելաիդան։ Հիվանդը խոսքը փոխեց և սկսեց յուր կնոջ հետ կատակներ անել, ծիծաղել։

Պահանջեց երեխային, նայեց երեսին և յուր բարակ, դեղնած մատների ծայրով քնքշաբար շոյեց նրա թավշամորթ այտերը։ Ադելաիդան այդ ժամանակ աշխատում էր ինձ չնայել...

Ճաշից հետո եկավ բժիշկը, նայեց և գլուխը երկմտությամբ շարժեց, մի խորհրդավոր հայացք ձգելով ինձ վրա։ Այս անգամ նա՛ ասաց.

— Այս գիշեր ամեն ինչ կպարզվի...

Ուշ երեկո էր։ Ես նստած էի իմ բարեկամի գլխի կողմում, իսկ Ադելաիդան նրա ոտքի մոտ, որպեսզի կարողանա շարունակ նայել նրա աչքերին։

Դառն և թշվա՛ռ ժամեր, հավիտյան պիտի կենդանի մնաք իմ հիշողության մեջ... Ես նստել էի մահամերձ մորս անկողնու մոտ, զգացել էի մահի մոտավորությունն իմ սրտին թանկ մի անձի։ Բայց ա՛յլ էր այս անգամ։ Ինձ տիրել էր բոլորովին մի անսովոր վիշտ։ Օտար երկրում, օտար շրջանում, հեռու ծնողներից, վտանգավոր դրության մեջ պառկած էր մի ազնիվ, բարի, վեհանձն և տաղանդավոր երիտասարդ։ Ով գիտե, ինչ հույսեր և ձգտումներ կային նրա կրծքի տակ։ Այն մարդը, որ բոլոր յուր ընկերներից արժանավորն էր, հալածված էր, ատված և արհամարհված։ Ինչո՞ւ։ Որովհետև բնությունը նրա խելքին տվել էր ուրիշ ուղղություն և սրտին մեջ մտցրել էր տարբեր զգացումներ։

Ես էի, որ հասկանում էի նրան։ Բայց հասկանո՞ւմ էի արդյոք բոլորը, ինչ որ կար նրա մեջ. Ընդունա՞կ էի արդյոք գնահատելու նրա բոլոր արժանավորությունները։— Հազիվ թե. որովհետև նրան ամբողջովին հասկանալու համար պետք էր նրա չափ խելոք լինեի, չեմ ասում նրա սրտի չափ լայն սիրտ ունենայի, որ, իհարկե, չունեի։ Հասկանո՞ւմ էր գոնե Ադելաիդան նրան։— Չէի կարծում։ Ահա ինչու ինձ թվում էր, որ նա դարձյալ իրան մենակ է համարում։ Մի անբացատրելի խորհրդավոր ժպիտ էի նշմարում նրա դեմքի վրա, երբ մյուս սենյակից լսվում էր երեխայի լացի ձայնը... Գուցե նա, այդ փոքրիկը միայն ապագայում, ինչպես հարկն էր, հասկանար և գնահատեր Սանթուրյանին, նրա անսահման վեհանձնությունը։ Բայց ե՞րբ...

Այնինչ մահը քայլ առ քայլ մոտենում էր, որպեսզի յուր

սև ճանկերի մեջ առնե իմ բարեկամին։ Նրա մռայլ շուքն արդեն տարածվել էր հիվանդի մահճակալի վրա։

Ադելաիդան և ես նայում էինք միմյանց և ճիգն անում զսպել մեր արտասուքը։ Հիվանդը պառկած էր երեսը դեպի պատը։ Նրա գանգուր և սև մազերը, սպիտակ բարձի վրա սփռված, լամպի աղոտ լույսի ներքո մի շարագուշակ երևույթ էին ներկայացնում։

Նա նոր էր դադարել խոսելուց։ Նա շարունակ զառանցում էր յուր հոր դատի մասին։ Նա կրկնում էր, թե յուր հայրը անմեղ է։ Հավատում էր աստծու արդարադատությանը և ասում. «Նա կօգնի իմ հորը, չի թողնիլ նրան անպաշտպան»։

Այո՞, պարոններ, այդ մարդը միշտ հավատում էր աստծո գոյությանը։ Եվ այդ այն ժամանակ, երբ մեր ընկերների շրջանում ուրիշ հայացքներ էին տիրում։

Այժմ նա լուռ էր։ Անցան մի քանի ծանր, երկարատև ժամեր։ Հանկարծ վերմակը շարժվեց, Սանթուրյանը դժվարությամբ երեսը դարձրեց դեպի ինձ, փնտրելով իմ ձեռը։ Նա յուր թույլ և տակավին ջերմ ձեռով սեղմեց իմ աջը և արտասանեց.

— Չէ՛, վատ եմ... կուրծքս այրվում է...

Ես կարծեցի նա ջուր է ուզում։ Բաժակը մոտեցրի բերանին։ Նա հետ մղեց։ Նա նայեց դեպի սենյակի անկյունը, այնտեղ, ուր վառարանն էր։

— Կրակ չկա, թող վառեն,— ասաց նա,— ցուրտ է։

Ադելաիդան իսկույն կատարեց նրա ուզածը և հինգ րոպե չանցած՝ կրակը սկսեց չթչթալով այրվել վառարանի մեջ։

— Հեռագիր չկա՞,— հարցրեց հանկարծ հիվանդը,— պիտի լինի...

— Նա յուր հոր գործի մասին հեռագրի էր սպասում...

— Անպատճառ կլինի,— ավելացրեց նա,— ուրախ հեռագիր...

Նա ձեռով նշան արավ, որ օգնենք նրան բարձրանալու։ Մենք նրան նստեցրինք անկողնի մեջ, մեջքին դարսելով բարձեր։ Նա չէր կարողանում գլուխը ուղիղ պահել, բայց անպատճառ ուզում էր նստած մնալ։

Վառարանի մեջ կրակը այժմ այրվում էր, թանձր բոցեր արձակելով։ Նա յուր հայացքը դարձրեց դեպի այն կողմը և մի քանի վայրկյան նայում էր։

Ա՜խ, որքա՜ն խորհրդավոր էր այդ պահին նրա դեմքը։

— Կրա՜կը, կրա՜կը,— արտասանեց նա թույլ ձայնով— այրում է իմ ներսը, վերջանում է...

Հետո նա գլուխը թեքեց կրծքին, կրկին բարձրացրեց և նայելով ուղիղ իմ աչքերին՝ ասաց.

— Չէ, մոտենում է... տուր ինձ ձեռդ...

Ես ձեռս տվեցի նրան։ Դարձյալ նայեց աչքերիս և ասաց.

— Խոստացի՛ր, որ Ադելաիդային կուղարկես յուր քրոջ մոտ, Օդեսա...

Ես խոստացա արտասուքս խեղդելով կոկորդումս։ Այդ միջոցին Ադելաիդան մյուս սենյակումն էր։ Խեղճ կին. նա չգիտեր ինչ անի։ Անհուն վշտից խելքը կորցրած՝ նա շտապում էր մի սենյակից մյուս սենյակ, մերթ երեխայի, մերթ հիվանդի մոտ։ Նրան վրդովեցնում էր երեխայի լացը...

Սանթուրյանը նշան արավ, որ պառկեցնեմ իրան։ Նա գլուխը բարձին դրած՝ շարունակ նայում էր վառարանին։ Այդ ժամանակ մխում էին փայտի վերջին կտորները։ Հանկարծ հիվանդի աչքերն առանձին փայլ ստացան, դեմքը պայծառացավ, ճակատը պարզվեց, և նա բավական հաստատ ձայնով գոչեց.

— Մի՛ թողնեք կրակը մարի, մի՛ թողնեք, ես կմեռնեմ...

Մենք նկատեցինք, որ նա աչքերով ինչ-որ փնտրում է, նայում է դեպի մյուս սենյակ։ Ես կարծեցի, որ նա երեխային է փնտրում։ Հարցրի, գլխով բացասական նշան արավ և շշնջաց.

— Կրա՜կը, իմ կրակը, տվեք...

Ադելաիդան առաջինը հասկացավ նրա միտքը. նա շտապեց մյուս սենյակ և այնտեղից բերեց ինձ ծանոթ կարմիր տետրը, որի ճակատին խոշոր, սև տառերով գրված էր «Կրակ»։ Նա նայեց տետրին և ասաց.

— Գցի՛ր այնտեղ, ես այրվեցի, թող նա էլ այրվի...

Խեղճ կինը չգիտեր՝ կատարե՞ հիվանդի պահանջը, թե՞

չէ. նայեց ինձ։ Բայց հիվանդը յուր խոշոր աչքերով այնպես էր աղերսում, որ մենք չդիմացանք։ Ադելաիդան տետրը ձգեց վառարանի մեջ։

Այդ ժամանակ լսվեց դռան զանգակի ձայնը։ Ադելաիդան շտապեց դուրս։ Հիվանդը ոչինչ չլսեց։ Նա շարունակ նայում էր վառարանին։ Այնտեղ սկզբում բարձրացավ թանձր ծուխ, ապա տետրը բոցավառվեց։

Ներս մտավ Ադելաիդան և ինձ գաղտնի ցույց տվեց մի հեռագիր։ Ես կարդացի։ Պալատը Սանթուրյանի հորը արդարացրել էր...

Մի քանի վայրկյան Ադելաիդան և ես շփոթված էինք — հայտնե՞լ հիվանդին, թե՞ ոչ։ Չափազանց ուրախ լուրը կարող էր նրա վրա սպանիչ ազդեցություն գործել։ Բայց միթե առանց այդ էլ նա չէ՞ր մեռնում։ Թող ուրեմն, հանգիստ մեռնի։ Այս էր մեր երկուսի լուռ միտքը։

Ես թեքվեցի դեպի հիվանդը, որ շարունակ նայում էր կրակին և շշնջացի.

— Մարդա՛ր, կարո՞ղ եմ քեզ մի ուրախ լուր հաղորդել...

Նրա աչքերը լայն բացվեցին, ձեռը դուրս եկավ վերմակի տակից։ Ես հեռագիրը բռնեցի նրա աչքերի առջև և ասացի.

— Պալատը հորդ արդարացրել է...

Նա հասկացավ իմ ասածը։ Յուր թույլ ձեռներով վերցրեց հեռագիրը և սեղմեց կրծքին։

— Տեսա՞ր,— շշնջացին նրա շրթունքները...

Մոտեցավ Ադելաիդան։ Ես հեռացա։ Նա չոքեց մահճակալի առջև և գրկեց հիվանդին։ Եվ ես պիտի կրեի այդ սրտաշարժ տեսարանի ամբողջ ծանրությունը։

Վառարանի մեջ արդեն այրվել վերջացել է «Կրակը»։ Մխում էր միայն տետրի կազմից մի բարակ կարմիր-դեղնագույն շերտ... Գիշերվա ուղիղ երկու ժամն էր, երբ այն էլ այրվեց, մոխիր դարձավ։

Ես փակեցի իմ բարեկամի աչքերը... Նա մինչև վերջին շունչը հերոսաբար դիմացավ յուր տանջանքներին...

Միրաբյանը լռեց, մի ծանր հոգոց արձակելով կրծքից։ Մենք սպասում էինք, որ նա յուր վերջին խոսքը կնվիրե Զարիֆյանին։ Բայց նա ոչինչ չէր ասում, և ես առաջինը հարցրի.

— Իսկ Զարիֆյա՞նը, միթե անպատի՞ժ մնաց...

— Կան մարդիկ, որոնց ճակատագիրը հովանավորում է և կյանքի մեջ պատժից ազատում... Գուցե միայն ե՛ս կարող էի Զարիֆյանին պատժել, եթե հայտնեի ձեզ նրա իսկական անունը։ Բայց ինչո՞ւ. մի՞թե դա կվնրադարձնի ինձ իմ բարեկամին։ Թո՛ղ ուրեմն իմ պատմության մեջ նրա անունը մնա Զարիֆյան, իսկ ինքը յուր իսկական անունով վայելե միջավայրի հարգանքը...

Այլևս Միրաբյանը ոչինչ չասաց և փակեց հանգած վառարանի դռնակը...

ՄԵԼԱՆԻԱ

I

— Մելա՛նիա, ուրախացի՛ր. Պետերբուրգից հեռագիր ստացա, սենատը գործը վճռել է մեր օգտին։ Հորեղբորս որդին հույս ուներ մեզանից չորս հարյուր հազար ստանալու, հիմա չո՛րս կոպեկ չի ստանա։ Օ՜հ, վերջապես ազատվեցի գլխացավից։ Այժմ կարող ենք ապրել, ինչպես հարկն է։

Ինքը՝ Սամսոն Ֆրանգուլյանն, այնքան ուրախ էր, այնքան զգացված, որ ամուր գրկեց ամուսնուն և համբուրեց։ Երեսուն տարի աշխատասեր մարդը ոսկոր էր կոտրել, դիզել ահագին հարստություն և հանկարծ մի անգործ ազգական ուզում էր խլել այդ հարստության մի երրորդականը։ Հանաք բա՛ն չէր բաժանվել մի այդպիսի գումարից։ Եվ բաժանվել այն ժամանակ, երբ նա գործերը թողել էր, տեղափոխվել Կովկասի մայրաքաղաքը «հանգստանալու և ապրելու» համար։

Նա երջանիկ էր։ Թեև ավելի քան կես դար արդեն անցել էր նրա գլխով, բայց կազմվածքը դեռ պահպանել էր կանոնավորությունը, ձայնը դեռ հնչում էր խրոխտ, քայլվածքը դեռ աշխույժ էր, իսկ ստամոքսը բոլորովին անխախտ։ Փույթ չէ, որ մազերը կիսով չափ ճերմակել էին — դա ժամանակի անխուսափելի հետևանքն էր։ Կար միայն մի հոգս, որ երբեմն նրան գցում էր ծանր մտատանջության մեջ։ Սա-

կայն, հուսալով իր հարստության վրա, նա հավատացած էր, որ այս հոգսից էլ կարող է ազատվել...

Վեց տարի էր անցել ընդամենը, որ նա ամուսնացել էր։ Ունեցել էր երկու զավակ, որոնցից անդրանիկը մեռել էր դեռ ծծից չկտրած. մնում էր երկրորդը — երկու տարեկան մի տղա։ Այդքան ժամանակվա ընթացքում ոչ մի սև գիծ չէր անցել ամուսինների միջով։ Մարդն իր բնական տակտով ու խելքով, կինը կրթությամբ և մտքի համեմատական զարգացմամբ — կարողացել էին հարգել իրարու ինքնասիրությունը և կենակցել հաշտ, անխռով։ Կար մի հանգամանք, որ միշտ պիտի երաշխավորեր Մելանիայի հարգանքն ու պատկառանքը դեպի ամուսինը — այսպես էր համոզված Սամսոնը.— Մելանիան աղքատ ծնողների զավակ էր, Սամսոնը՝ հարուստ։ Եթե Մելանիան երիտասարդ է, կրթված, գեղեցիկ, նույնիսկ գրավիչ, սրա փոխարեն՝ Սամսոնը կերակրում է նրա ծնողներին, ուսում է տալիս եղբայրներին և խոստանում է իր ծախսով ամուսնացնել քույրերին։ Ուրեմն, կշեռքի թաթերը հավասար են։ Եվ ոչ. մի խոշընդոտ Սամսոնի բախտի առջև, և ոչ մի մռայլ ամպ նրա կյանքի հորիզոնում։ Իսկ այսուհետև նամանավանդ չպիտի լինի, քանի որ Սամսոնը թողել է գործերը և անձնատուր եղել կնոջն ու նրա կամքին։ Քանի որ նա լիակատար իրավունք է տվել Մելանիային ծախսել, որքան կամենում է, ապրել, ինչպես քեֆն է, ծանոթություններ սկսել ում հետ փափագում է։

Նա մի ձեռքով գրկեց Մելանիային և, երջանկության ժպիտն երեսին, անցավ նրա հետ սենյակից սենյակ՝ մի անգամ ևս նոր կացարանն աչքի անցկացնելու։ Ամեն ինչ արդեն կարգին էր. սենյակները կահավորված ու զարդարված, յուրաքանչյուրն առանձին ճաշակով, լուսամուտները վարագուրված թանկագին կտորներով, հատակները ծածկված խայտաբղետ գորգերով։ Ամեն տեղ երևում է տանտիրոջ առատաձեռնությունը և տանտիկնոջ ճաշակը։ Ախոռատանը կապած էին սքանչելի ձիերը, որ Սամսոնը նոր էր ստացել Մոսկվայի մի հայտնի գործարանատերից։ Գավթում կառապանը երգ ասելով, սրբում ու հղկում էր, առանց այն էլ հայելու պես փայլող, կարեթը։ Խոհարար, սպասավոր, նաժիշտ, տնտեսուհի —

բոլորը զբաղված էին իրենց գործով, բոլորն ակնածությամբ նայում էին իրենց տիրուհու աչքերին։

Մելանիան ուներ միջոց ծանոթանալու ում հետ ևս կամենար։ Հարուստ էր, երիտասարդ, գեղեցիկ ու կրթված — հանգամանքներ, որոնք կարող էին նրա առջև բաց անել ամենաամուր փակված դռները։ Եվ նա կարողացավ օգտվել իր միջոցներից։ Նրան ընդունում էին ամեն տեղ սիրով և այցելում ավելի սիրով։ Նա երևում էր բոլոր հասարակական երեկույթներում, բալերում և պարահանդեսներում։ Նա դիտում էր, ուսումնասիրում և ամեն կերպ աշխատում իր հագուստը, ձևերը, ամբողջ կենցաղը հարմարեցնել արիստոկրատիկ շրջանի կենցաղին։ Եվ այնքան ընդունակ էր, որ մի քանի ամիս անցած՝ արդեն նրա մեջ կարելի էր նկատել ահագին առաջադիմություն դեպի գեղեցիկը, նուրբը և հաճելին։

Արդեն ամբողջ քաղաքը խոսում էր Ֆրանգուլյանների երեկույթների, ճաշերի, ձիերի, կահ-կարասիքի, մանավանդ Մելանիայի բաղմաթիվ տուալետների ու խոշոր ադամանդների մասին։ Երբ նա, Ժորժիկին կողքին նստեցրած՝ բոննայի հետ սեփական կառքով անցնում էր քաղաքի գլխավոր փողոցով, հարյուրավոր աչքեր նախանձով ուղեկցում էին նրան բարևներով։ Իսկ Մելանիան գիտեր այդ բարևներին պատասխանել ըստ արժանվույն։ Յուրաքանչյուրին ցույց էր տալիս այնքան ուշադրություն, որքան միայն արժանի էր համարում։ Նա ընդունակ էր հարգել մարդկանց ոչ միայն դիրքն ու ծագումը, այլև խելքը, ճաշակն ու քաղաքավարությունը։ Նրա ծանոթների շրջանն ընդարձակ էր և բազմատեսակ։ Զմեռվա կիսին արդեն նրա հյուրասենյակում վաճառականների կանանց հետ կարելի էր տեսնել բանկիրների ու չինովնիկների կանանց, երբեմն նաև այս կամ այն իշխանուհուն։

Սամսոնը դեմ չէր դրան, թեև հոգու խորքում շատ էլ չէր համակրում նոր ծանոթներից ոմանց։ Բանկիրների ու չինովնիկների հետ նա առաջ էլ բարեկամություն ունեցել էր, իսկ իշխանների հետ չգիտեր ինչպես վարվել։ Երբեմն իրեն զգում էր շատ անհարմար վիճակի մեջ։ Մեկմեկու հետևից նրա տնից վռնդվում էին այն սովորությունները, որոնց հետ կապված էր իր սադմով և մտցվում նորերը։ Բայց նա դարձյալ չէր

բողոքում, և լուռ հպատակվում էր Մելանիայի պահանջներին։ Վախենո՞ւմ էր։ Ոչ. նա երկչոտ չէր։ Կամքի ուժ չունե՞ր։ Ոչ. փալաս մարդ չէր, եթե կամենար, կարող էր ամեն ինչ տակն ու վրա անել և նորից վերադառնալ նախկին կենցաղին։

Նա սիրում էր Մելանիային, սիրում էր վեց տարի նրա հետ կենակցելուց հետո, սիրում էր մանավանդ այժմ, երբ Մելանիան օրեցօր գեղեցկանում էր ու կենդանանում։ Ահա նրա անտրտունջ հլության միակ պատճառը։

Զարմանալի բան. մի քանի ամսվա մեջ այդ կինն այնքան փոխվել էր, որ Սամսոնը ապշում էր, դիտելով նրան։ Դա այլևս առաջվա համեստ, նույնիսկ ամոթխած Մելանիան չէր։ Մի ամեռվա ընթացքում ցույց տվեց այնչափ համարձակություն, եռանդ, կենսական ուժ, որչափ ցույց չէր տվել գուցե ամբողջ կյանքում։ Տեղափոխվելով մի շրջանից մի ուրիշը, կարծես, նոր մթնոլորտի հետ շնչում էր նոր ոգի, նոր աշխարհայացք, նոր զգացումներ։ Նրա թմրած էությունը արթնացել էր և արտահայտում էր իր բնական ուժը, որ ելք չէր գտել նախկին միջավայրում։ Այնտեղ, ծննդավայրում կային զանազան կաշկանդող պայմաններ — գռեհիկների բամբասանքները, ազգականների ծաղրը, ծնողների չքավորությունը։ Այստեղ թե՛ նրա և թե՛ Սամսոնի անցյալի հետ ոչ ոք ծանոթ չէր։ Այստեղ ընդունում էին նրանց այնպես, ինչպես կային այժմ— հարուստ և ժամանակի ազդեցությամբ այնչափ տաշված ու հղկված, որ կարող էին ամեն շրջան մտնել և խորթ չթվալ։

Սամսոնը, տեսնելով կնոջ մեջ այս արմատական առաջադիմությունը, ավելի ու ավելի էր սիրահարվում նրա վրա։ Նա՛, այդ հիսունչորս տարեկան մարդը, մինչև հիմա ըստ արժանվույն չէր գնահատել իրենից երեսուն տարով փոքր կողակցին և, կարծես, այժմ զգում էր իր սխալը։ Նա պարծենում էր մտքում Մելանիայի գեղեցկությամբ, սալոնական ձիրքով և վարվելու շնորհքով։ Նա ուրախ էր նրա երիտասարդությանը։ Սակայն, այն հանգամանքը, որ ինքն այդ կնոջից երեսուն տարով մեծ է, նրա մեջ հղացրեց մի նոր, տակավին անծանոթ, մի անտանելի զգացում։

Նա սկսեց խանդել։ Խանդել ավելի ու ավելի ենթարկվելով այն մտքին, որ վաղուց նրան պատճառում էր ծանր հոգս...

II

Իբրև զգաստ, խելացի և հեռատես մարդ, Սամսոնն իր կասկածները դեռ թաքցնում էր։ Եվ առիթ էլ չուներ խանդելու։ Գիտեր, որ խիստ անարդար կլինի, եթե բացարձակ հայտնի Մելանիային, թե վախենում է նրա այժմյան կենսասիրությունից։ Կար և մի ուրիշ հանգամանք, որ ստիպում էր նրան լռել. նա չէր ուզում նախանձամիտ ու կասկածոտ ասիացի համարվել ո՛չ կնոջ և ո՛չ մանավանդ օտարների աչքում։ Միևնույն ժամանակ չէր ուզում ցույց տալ, թե վստահ չէ սեփական ուժերին կամ կնոջ հավատարմությանը։

Եվ այսպես, նա լռում էր։ Բայց տանջվում էր, և այդ տանջանքը, նոր միայն սկսված, արագ-արագ զարգանում էր։ Տեսնելով Մելանիայի հետզհետե թարմացող ու գեղեցկացող դեմքը՝ երբեմն երկյուղից ցնցվում էր։ Չէ՞ որ մի օր, վերջապես, այդ նորաբաց ծաղիկը կարող է երեսովը տալ նրա տարիքը։ Մի՞թե կարելի է բնությունը բռնաբարել շարունակ և մնալ անպատիժ, բոլորովին անպատի՞ժ։

Երբ նա անխոհեմաբար կուշտ ճաշից հետո, սեղանատանը կամ ննջարանում (մանավանդ այստեղ) գրկում էր Մելանիային, այնպիսի մի ցնցում էր արտահայտում երիտասարդ կնոջ կրակոտ մարմինը, որ Սամսոնը ուղղակի սարսափում էր։ Այնպես, որպես մարդ կարող էր սարսափել, եթե ձեռը վերցնի մի գեղեցիկ իր և հանկարծ զգա, որ նա լեցուն է դինամիտով։ Այդ սիրուն աչքերի այրող շողերը բորբոքում էին նրա հնացած արյունը, բայց և ասեղների պես ցցվում նրա սրտի մեջ։ Այդ կարմրախայտ հյութալի շրթունքների ու նուրբ պնչերի դողոցը շարժում էր նրա մաշված կիրքը, բայց և ցավ պատճառում նրա ուղեղին։ Այդ կլորիկ և գեղակազմ կրծքի բաբախումը հրահրում էր նրան, բայց և սարսուռ ազդում նրա մարմնին։ Այո, Մելանիան բոլորովին նախկին Մելանիան չէ, այն, ինչ որ էր ընդամենը կես տարի առաջ։ Նա վառվել է ինքն իր մեջ և այրվում է ինքն իր հրով։

Ա՜խ, եթե Սամսոնը երեսուհինգ տարեկան լիներ։ Ի՞նչ օգուտ, որ տակավին առողջ է ու թարմ՝ իր տարիքի համեմատ։ Ի՞նչ օգուտ, որ այսօր էլ դեռ երակների մեջ զգում է

երիտասարդական արյուն։ Այնուամենայնիվ նա ծեր է և միայն ինքն է զգում, թե որքան ծեր է... Նա հիսունչորս տարեկան է, և հենց այն միտքը, թե երեսուն տարով մեծ է կնոջից, կարող է թունավորել Մելանիայի կյանքը։

Մի անգամ միջօրեին, նախաճաշից հետո, երբ գինին փոքր-ինչ ներգործել էր Սամսոնի վրա, հանկարծ պատանեկական աշխույժով փաթաթվեց Մելանիայի պարանոցին և սկսեց անվերջ համբուրել նրան, Մելանիան ճիգն արավ և կարողացավ դուրս սլկվել նրա գրկից։ Սամսոնը աչքերը հառեց նրա երեսին։ Ա՜խ, որքա՜ն գեղեցիկ էր երիտասարդ կինը այդ պահին, ինչպե՞ս սազում էր նրան գարնանային թեթև հագուստը յուր բաց մանիշակի գույնով ու սպիտակ մետաքսյա դանթելներով։ Նրա դեմքի գծերն ավելի էին նրբացել։ Կանացի հրապույրը բուրում էր նրա ամբողջ կերպարանքից, որպես մի քաշող մագնիսական, մի արբեցուցիչ ուժ։

Սամսոնը չկարողացավ իրեն զսպել, նորից հարձակվեց մի քանի քայլ հեռու կանգնած Մելանիայի վրա։ Այս անգամ կինը ձեռները հորիզոնաձև տարածեց առաջ՝ պաշտպանվելու համար։ Նրա լայն թևերը հետ քաշվեցին. բացվեցին նրա փափուկ բազուկները մինչև արմունկները, և թարմ կաշվի նրբիկ սպիտակությունը ավելի գրգռեց Սամսոնին։ Սակայն, այն ի՞նչ անսովոր ժպիտ էր, որ սահեց Մելանիայի շրթունքներով, և ինչո՞ւ նրա աչքերը փակվեցին... կիրք էր արդյոք այդ, թե սառնություն, մի՛գուցե ատելություն, մի՛գուցե...

Սամսոնը մի քայլ հետ կանգնեց և հանկարծ հարցրեց.

— Մելա՛նիա, դու ինձ սիրո՞ւմ ես։

Նրա ձայնը դողաց։ Հարցը նոր էր, անսպասելի։ Վեց տարվա ընթացքում Սամսոնը երբեք մի այդպիսի հարց չէր տվել Մելանիային և այժմ տալիս էր, և այն էլ այնպիսի տարօրինակ եղանակով ու հուզված ձայնով։ Մելանիան ցընցվեց ու գունատվեց։ Նա չիմացավ ինչ պատասխանի, նա միայն անորոշ ժպտաց և հայացքը դարձրեց դեպի բակը։

— Սիրո՞ւմ ես ինձ,— կրկնեց նույն դողդոջուն ձայնը։

Նույն լռությունը։

Սամսոնը մոտեցավ Մելանիային, երկու ձեռով բռնեց նրա ձեռները ու նայելով աչքերին, ասաց.

— Համարձակվիր չսիրել, ատամներս ցույց կտամ։

Ասաց կես լուրջ և կես կատակի եղանակով, բայց ավելի կոշտ, քան մեղմ, ավելի իշխանական, քան բարեկամական տոնով։ Եվ իր խոսքերի մեջ ինքն էլ զգաց ինչ-որ չարագուշակ հնչյուն։

Հուզումը, մանավանդ զզջումը թաքցնելու համար, Սամսոնը դուրս գնաց սենյակից։

Մնալով մենակ՝ Մելանիան նստեց առաջին պատահած աթոռի վրա և ընկղմվեց մտախոհության մեջ։

«Սիրո՞ւմ ես ինձ», հնչում էր նրա ականջին։ Ի՞նչ պատասխաներ։ Միթե նա ինքը գիտե՞, սիրում է, թե չէ։ Նա միայն գիտե, որ Սամսոնը իր օրինական ամուսինն է— ուրիշ ոչինչ։ Մի մարդ, որի հետ անխզելի կերպով կապված է մինչև մահ՝ սկսած տասնուչորս տարեկան հասակից։ Մնողները նրան չստիպեցին գնալ այդ մարդուն, այլ «համոզեցին»։ Նրան բացատրեցին բոլոր հանգամանքները. և նա համաձայնվեց։ Նա հասկացավ, թե դառնալով Սամսոն Ֆրանգուլյանի կինը, պիտի բախտավորեցնի իր ծնողներին — այսքանն արդեն բավական էր։ Ոչինչ հակադրություն չէր զգում սեփական ճակատագրի և ծնողների կամ քույրերի ու եղբայրների բախտի մեջ։ Իր վիճակը ձուլված էր համարում նրանց վիճակի հետ։ Երջանիկ են, ինքն էլ երջանիկ կլինի. անբախտ են, ինքն էլ կանբախտանա — ահա բոլորը։ Եվ եթե ասում են, թե Սամսոն Ֆրանգուլյանի հետ անպատճառ բախտավոր կլինի, կնշանակե ճշմարիտ են ասում։ Ինչո՞ւ չգնար այդ մարդուն։ Կյանքը նրա համար մի անծանոթ աշխարհ էր, ինքը կանգնած նրա տակավին փակ դռների առջև։ Եթե սիրող ծնողները, բռնելով թևից, դպրոցական նստարանից նրան ուղղակի ամուսնական կյանքի մեջ մտցրին, միայն և միմիայն հավատալով և սիրելով նրանց՝ ընդունեց այս վիճակը։ Բայց ի՞նչ է եղել նրա ապրուստը այս վեց տարվա ընթացքում։ Այն, ինչ որ տվել են մի կողմից ամուսնու դիրքն ու հարստությունը, մյուս կողմից՝ մայրական բնազդական սերը դեպի իր զավակները։ Ի՞նչ է այժմ, այս րոպեին, կյանքը նրա համար։ Շքեղ տուալետներ, թանկագին ադամանդներ, ճոխ սեղան, նոր շրջան, պարեր, երգ, զվարճություն։

Այժմ նրան հարցնում են՝ «սիրո՞ւմ ես»։ Սիրո՞ւմ է, արդյոք։ Ո՞ւմ, Սամսոն Ֆրանգուլյանին, այդ... ծերունուն... այդ... Ի՞նչ պատասխաններ այդ մարդուն։ Մի՞թե ասեր, թե մի դառն գաղտնի կսկիծ մորմոքում է նրա սիրտը, երբ զգալով ինչ-որ ներքին անծանոթ հոգեկան պահանջ, մտածում է նաև ամուսնու մասին...

Փոքրիկ պարտիզում, դայակի հետ խաղում էր երկու ու կես տարեկան Ժորժիկը։ Մելանիան դուրս եկավ սենյակից, մոտեցավ նրան, գրկեց ու համբուրեց անսովոր ջերմությամբ։ Նա հուզված էր և զգում էր, որ ձմեռվա արեգակի գոլ ճառագայթները իր երակների մեջ տարածում են ինչ-որ անսովոր ջերմություն, իսկ սիրտը ճնշվում է... հորդացող արյունից, հագուրդ չստացող կրքերից...

III

Մի օր, սովորական զբոսանքից տուն վերադառնալով, Մելանիան աղախնից լսեց, թե մի անծանոթ հյուր կա ամուսնու առանձնասենյակում։ Մի քանի րոպե անցած, երբ նա, հագուստը փոխելով, անցավ սեղանատուն նախաճաշ անելու, այնտեղ Սամսոնը շտապեց ներկայացնել հյուրին։ Դա Սամսոնի քրոջ մարդու եղբայրն էր, ազգանունը Փիրուզյան, մոտ երեսուն տարեկան մի երիտասարդ։ Նա ոչ տգեղ էր, ոչ գեղեցիկ, ոչ գեր, ոչ նիհար, բայց առողջ դեմքով, ուրախ աչքերով։ Հագած էր սևագույն երկայն «վիզիտկա» կլորակ փեշերով մոխրագույն վարտիք, ասեղնագործ շապիկ՝ բարձր օձիքով, որի ձյունային սպիտակությունը խիստ ներդաշնակում էր նրա դեմքի տակավին թարմ գույնին և փոքր-ինչ կարմրագույն ականջներին։

Սամսոնի բացատրությունից երևաց, որ Փիրուզյանը տասը տարի բացակա է եղել հայրենիքից, մեծ մասամբ ժամանակն անց է կացրել Պետերբուրգում։ Այնտեղ նա, «մի քանի հանգամանքների պատճառով» (Փիրուզյանը գլուխը թեքեց կրծքին, արտասանելով. «երեխայություն»), ստիպված թողել

է համալսարանը և մտել ծառայության ինչ-որ երկաթուղու վարչության մեջ։ Սամսոնը նրան շատ անգամ է հանդիպել մայրաքաղաքում և հավանել է ու սիրել նրան։ Հույսով է, որ Մելանիան էլ կհավանի, երբ կճանաչի։

Հայտնվեց, որ Փիրուզյանը պաշտոնը թողել է և մտադիր է հաստատվել Կովկասում։

— Ուզում է Բաքու գնալ, ես խորհուրդ չեմ տալիս,— ասաց Սամսոնը,— տասը տարի Պետերբուրգում ապրելուց հետո, մարդ չի կարող այդ քամու ու փոշու մեջ ապրել։

Փիրուզյանն ասաց, թե մայրաքաղաքի կյանքը ձանձրացրել է իրան, թե ժամանակ է հիմա լուրջ գործով զբաղվելու, թե վճռել է հարստանալ և ուզում է նավթային արդյունաբերությունը «ուսումնասիրել»։ Մելանիան հետաքրքրվեց նրա անցյալով իբրև ազգականուհի, և Փիրուզյանը սկսեց հաճույքով պատմել մայրաքաղաքի թատրոնների, ցիրկերի, էլեկտրական կառքերի, ձիարշավների մասին։ Նա առանձին աչխույժով խոսում էր վելոսիպեդիստների մասին, ինքը ճարպիկ վելոսիպեդիստ լինելով։

Երբեմն նրա հայացքը կանգ էր առնում Մելանիայի գեղեցիկ դեմքի վրա։ Դիտող մարդը կարող էր նրա աչքերի մեջ կարդալ ինչ-որ ներքին գոհունակություն։ Թվում էր, որ նա հիացած էր իր ազգականի կնոջ սիրունությամբ և, միևնույն ժամանակ ուրախ է, տեսնելով մարդու ու կնոջ հասակների մեջ ահագին տարբերություն։ Իսկ Մելանիան սեղանի քով ուշադիր էր դեպի հյուրը իբրև բարեբարո տանտիկին. այսքանը միայն։ Բայց այսօր առաջին անգամ լուրջ համեմատում էր Սամսոնին մի ուրիշ տղամարդի հետ և... հպիվ կարողանում զսպել հառաչանքը։ Որքա՜ն Փիրուզյանը նսեմացնում էր իր ներկայությամբ Սամսոնին։ Մեկից բուրում է առնական ուժը իր բոլոր եռանդով, մյուսի մեջ կյանքն արդեն անցել էր իր վառվռուն շրջանը, և անցել վաղո՜ւց։ Գուցե Փիրուզյանը, Սամսոնի տարիքին հասնելով, կրկնակի ծերանա, բայց այժմ նա ունի մի հրապույր, որից առմիշտ զրկվել է Սամսոնը։

«Քսանութ տարի՜, տեր աստված», մտածեց Մելանիան,

շրթունքները սեղմելով ատամների տակ։ Այս արդեն չափից դուրս է, այս արդեն դեմ է բնության բոլոր օրենքներին, և միայն Մելանիան է զգում, թե ո՛րքան դեմ է...

Գարնան մոտենալով՝ Մելանիան օրեցօր դառնում էր մտախոհ ու լուրջ։ Այժմ նա այլևս չէր հետաքրքրվում սալոնային կյանքով։ Նա նույնիսկ ձանձրացել էր այդ արիստոկրատիկ համարված շրջանի կեղծ ու պատիր կանոններից ու հիասթափվել, ինչպես մի երեխա արդեն ծանոթ խաղալիքի վերաբերմամբ։

Նա նկատելու չափ գունատվել էր, բայց աչքերի հուրը քանի գնում սաստկանում էր։ Նա խոսում էր սակավ, աշխատում էր Սամսոնի հետ երես առ երես չմնալ, փախչում էր, որքան կարող էր, նրա զգվանքներից, մանավանդ համբույրներից։ Նա ավելի ու ավելի ամփոփվում էր ինքն իր մեջ։

Շաբաթը երկու անգամ նա Փիրուզյանին հյուր է ընդունում և ճաշին պահում — Սամսոնի ցանկությամբ։ Վարվում էր նրա հետ իբրև ազգական, պարզ, համարձակ, բայց առանց որևէ մտերմության, միշտ պահելով իր և նրա մեջ որոշ չափի տարածություն։ Նրա մեջ կատարվում էին զարմանալի փոփոխություններ։ Դեռ մի տարի առաջ մի հասարակ կին էր, գրեթե մեկն իր նախկին շրջանի կիսաթմրած էակներից։ Տեղափոխվելով ուրիշ քաղաք, հանկարծ փոխվեց նոր կյանքի ասպարիզում, դարձավ սալոնային կին։ Այժմ նա լրջամիտ էր և մտախոհ, որպես թե նրա գլուխը լեցուն էր համամարդկային հոգսերով։

Եվ այսքան փոփոխություններ ընդամենը մի տարվա ընթացքում։

Սամսոնը ուրախ էր նրա այս վերջին տրամադրությանը, ավելի, քան արիստոկրատիկ ձգտումներին։ Բայց նա չգիտեր, որ հանգստությունն արտաքին է, որ Մելանիայի մեջ տեղի ունի ինչ-որ փոթորիկ և նրա արյունը ավելի ու ավելի է բորբոքվում, չնայելով ճակատի մոայլին, երեսի գունատությանը։

Մի անգամ Սամսոնը տուն վերադառնալով, անմիջապես անցավ ննջարանը, երբ աղախնից իմացավ, որ Մելանիան այնտեղ է։ Բաց անելով դռները, նա բևեռվեց շեմքի վրա։ Նա հանդիպեց մի անսովոր, չտեսնված տեսարանի։ Քանի մի

բայլ հեռու, շքեղ արյունոյի առջև, կանգնած էր Մելանիան՝ կիսամերկ, ոտաբոբիկ։ Նա դիտում էր իրան ոտից մինչև գլուխ։ Նրա բաց կուրծքը, սպիտակ ուսերը նկարվել էին արեգակի ջերմ շողերով ողողված սենյակի մեջտեղում որպես մի կլասիկական արձան, որպես մեկը Քանովայի ախատաբորբոք ձեռակերտներից։ Միայն կենդանի, շարժական արձան, որ շուրջը տարածում էր հեշտանքի կիպիչ շողեր։ Եվ այս շողերի մեջ նա լողում էր ինչպես մարմնացած կիրք։ Բայց որպիսի քնքուշ, արբեցուցիչ ու կորուսիչ կիրք իր կանացի ամոթխածության մեջ իսկ։

Արյունը խփեց Սամսոնի գլխին, աչքերը մթնեցին։ Նա կամացուկ, ոտների ծայրերի վրա, մոտեցավ հեռուից։ Նա ուզում էր գրկել այդ կիսամերկ մարմինը, որ իրան և միմիայն իրան էր պատկանում, և խեղդել իր գրկի մեջ կրքերի բուռն թափով։ Մելանիան երեսը հետ դարձրեց, մի քայլ հեռու կանգնեց՝ առանց մարդի չափ շփոթվելու։

— Ի՞նչ ես անում այդ,— գոչեց Սամսոնը, բարկացած ձևանալով։

— Հիանում եմ ինձանով,— պատասխանեց Մելանիան, կարծես մարդուն ավելի գրգռելու համար։

— Մելա՛նիա, ի՞նչ է պատահել քեզ։ Դու շատ ես փոխվել, դու այդպիսի կին չէիր։

Մելանիան սկսեց լուռ հագնվել։ Հագուստը ոփովել էր հատակի վրա անկարգ, որպես անփույթ դեռատանուհու զգեստները թատրոնական հանդերձարանում։

— Մելա՛նիա, այդ քեզ իսկի չի սազում։

— Ինչո՞ւ։

— Դու հայ կին ես։

— Հայ կինը արյուն չունի՞,— պատասխանեց Մելանիան, հեգնաբար ժպտալով։

— Արյո՞ւն,— կրկնեց Սամսոնը, այս մի հատիկ բառի մեջ զգալով ինչ-որ շար և սոսկալի իմաստ։

— Արյո՞ւն, այո՛, արյո՛ւն։

— Բայց դիտե՞ս ովքեր ունին այդպիսի արյուն։

— Կոկետուհիները,— լրացրեց Մելանիան ռնփույթ եղանակով, ժողովելով ուսերին սփռված խիտ մազերը։

Սամսոնը կաշկանդվեց նրա համարձակությունից։

Մելանիան, թեքվելով, որ անկողնակալի տակից դուրս բերի հողաթափերը, ավելացրեց.

— Ուրիշներն անում են տղամարդի համար, ես անում եմ ինձ համար։ Կարծեմ, մի մեծ մեղք չէ։

— Մելա՛նիա, այդ... անամոթություն է...

Մի բարձր արծաթահնչյուն կծու ծիծաղ տարածվեց փափուկ գարնանային մթնոլորտի մեջ, որպես ծիծեռնակի ծլվլոցը։

— Անամոթությո՞ւն... որ այդպես է, ինչո՞ւ էիր ուզում գրկել ու համբուրել։ Գրավիչ էի, այո՞։ Հասկանում եմ. չէ՞ որ երիտասարդ եմ, գեղեցիկ, թարմ, և դու... ուզում էիր տիրանալ... Ցտեսություն...

Նա հանդարտ քայլերով դուրս գնաց, թեթևակի բարձրացնելով հագուստի փեշը հետևից։

Սամսոնը ապշած նայեց նրա հետևից։ Այդ կնոջ հողաթափերն անգամ տարածում էին ախտաշարժ ոգի փափուկ գորգի վրա...

«Նա ինձ ատում է»,— ասաց Սամսոնը ինքն իրան վճռաբար։

Նայեց անգիտակցաբար հայելուն և սարսափեց։ Ողորմա՛ծ աստված, այդ կնոջ համեմատ նա ոչ միայն ծեր է, այլև զառամյալ։ Նրա ճաղատ գլուխը, արագ-արագ ճերմակող ընչանցքը, թուլացած ուսերը, խոր ընկած այտերը, բոլո՞ր, բոլորը արդեն սկսել են արտահայտել կենդանի մահացում։ Զգո՞ւմ է արդյոք յուր երակների մեջ երիտասարդական արյուն, ինչպես կարծում էր։ Ո՛չ, այս սուտ է, ինքնախաբեություն։ Նա չի՛ կարող անողոք ժամանակի առաջն առնել։ Ի՞նչ օգուտ կրքից, երբ...

Ա՜խ, խլեցե՛ք նրանից հարստության կեսը, միայն թե պակասեցրեք նրա տարիքն ևս կիսով չափ։ Տվե՛ք նրան կյանք. որովհետև նա սիրում է Մելանիային և ուզում է նրանից սիրված լինել, որովհետև ուզում է ապրել բառի ընդարձակ մտքով։

«Միթե հայ կինը արյուն չունի՞»,— հնչում էին չարագուշակ բառերը Սամսոնի ականջներում։

IV

Ամառվա սկզբին Մելանիան տեղափոխվեց ամառանոց։ Նա չկարողացավ այդ տարի արտասահման գնալ, որովհետև Սամսոնը զբաղված էր։ Քաղաքի մի լավ փողոցում կառուցանել էր տալիս սեփական տուն և ուզում էր մինչև վերջը անձամբ հետևել շինությանը։

Շաբաթը մի անգամ Սամսոնը գնում էր ամառանոց և կիրակի օրերն անցկացնում ընտանիքի մոտ։ Երբեմն իր հետ տանում էր Փիրուզյանին։ Մելանիան այժմ այլևս մի առանձին ուշադրություն չէր ցույց տալիս հյուրին, միայն նուրբ աչքը կարող էր նկատել, որ երբ տեսնում էր նրան, առաջին վայրկյան աչքերը շողշողում էին տարօրինակ։ Բայց միայն մի վայրկյան, այնուհետև դեմքը սքողվում էր այն նուրբ քողով, որ քանի գնում, անթափանցելի էր դառնում։

Սամսոնը չէր նկատում այդ վայրկենական փոփոխությունը և չէր էլ կարողանա նկատել։ Ազգակցական կապի մասին նրա գաղափարն այնքա՞ն մաքուր էր, որ մտքովն անգամ չէ՛ր անցկացնում, թե Փիրուզյանը կարող է իր կնոջ վրա վատ աչքով նայել։ Վերջապես Մելանիան այնքան քիչ էր հետաքրքրվում Փիրուզյանով, որ Սամսոնը երբեմն մտքում բարկանում էր նրա վրա։ Ի՞նչպես կարելի է սառն վերաբերվել դեպի մի ազգական, որ ներս է մտնում թե չէ, իսկույն գրկում է Ժորժիկին, ուսերի վրա բարձրացնում և ամբողջ ժամանակ նրան բաց չի թողնում ձեռներից։

— Մելա՛նիա,— դարձավ նա մի օր կնոջը,— դու քանի գնում, վատ ես վարվում Արտյուրի հետ։ Չե՞ս հավանում։

— Ի՞նչ հավանելու կամ չհավանելու բան կա. հարյուր ազգական ունիս, նա էլ նրանցից մեկը։

— Բայց դու իմ ո՛չ մի ազգականի հետ այդպես սառը չես վարվել։

— Չարժե այդ մասին խոսել, լա՜վ։

Մելանիան գրկեց Ժորժիկին և դրեց ծնկների վրա։ Բաց արավ գունազարդ պատկերների մի ժողովածու (Փիրուզյանն էր նվիրել Ժորժիկին), բռնեց փոքրիկ մատիկը և շրջեցնելով

պատկերների տակ, կարդում էր զանազան կենդանիների անուններ։

Սամսոնը զգացվեց ընտանեկան տեսարանից։

— Հանաքը մի կողմ,— ասաց նա,— շուտով Ժորժիկը լարող է այբուբեն սովորել։

— Շուտո՞վ,— կրկնեց Մելանիան, դառը քմծիծաղ տալով,— ո՛չ, դու դեռ շա՞տ պիտի սպասես։

Սամսոնը՝ շրմբոնեց այս խոսքի մեջ թաքնված հեգնանքը։

— Կսպասեմ,— ասաց նա ժպտալով։

Մի օր, երբ նա ամառանոց եկավ մենակ, Մելանիան հարցրեց.

— Ինչո՞ւ ազգականիդ չբերեցիր։

— Չուզեց գալ։

— Ինչո՞ւ։

— Է՞, երևի, հասկացել է, որ դու չես սիրում իրեն։

Մելանիան շրթունքները թեթևակի կծեց։

— Եթե հասկացել է, շատ լավ է արել։

— Մելա՛նիա,— արտասանեց Սամսոնը հանդիմանաբար։

— Նա ինձ բոլորովին դուր չի գալիս։ Այո՛, դուր չի գալիս, եթե ուզում ես ճշմարիտն իմանալ։

— Բայց լա՛վ չես անում։ Պետք է նրա հետ քիչ թե շատ քաղաքավարի վարվել, թե չէ քույրս կլսի, կվիրավորվի։

— Մի՞թե,— արտասանեց Մելանիան մտախոհ և անորոշ։

— Ես մյուս անգամ անպատճառ հետս կբերեմ նրան։

Մելանիան իսկույն չպատասխանեց, լռեց մի քանի վայրկյան և հետո ասաց.

— Դո՛ւ գիտես, ազգականը քոնն է ...

Այդ օրը նա Սամսոնին թվաց սովորականից ավելի տրխուր, գունատ, նույնիսկ նիհար։ Կարելի էր կարծել, թե ամառանոցի օդը լավ չի ներգործում նրա վրա։ Սամսոնը հարցրեց.

— Մելա՛նիա, դու առո՞ղջ ես...

— Ե՞ս,— կրկնեց Մելանիան,— ես բոլորովին առողջ եմ...

Եվ, կարծես, հանկարծակի մի բան հիշելով, նկատելու չափ՝ գրգռված, ավելացրեց.

— Լա՛վ կանես, որ քո մասին մտածես։

— Ինչո՞ւ, ես է՞լ բոլորովին առողջ չեմ։

— Դո՞ւ... այո... առողջ չես...

Սամսոնը զարմացած նայեց կնոջ երեսին։

— Մելա՛նիա, ինչ ես ուզում ասել։ Ես առողջ եմ և միշտ էլ առողջ եմ եղել։

— Է՞հ, ավելի լավ, շատ ուրախ եմ։

— Այդ ի՞նչ տեսակ ես խոսում, Մելա՛նիա։ Ասա՛։

— Ասե՞մ,— կրկնեց Մելանիան՝ հանկարծ մի համարձակ հայացք ձգելով ամուսնու աչքերի մեջ։

— Ասա՛։

— Դու պահանջո՞ւմ ես։

Մելանիան, գլուխը թեքելով կրծքին, սկսեց մատներով նյարդային արագությամբ պտտեցնել սեղանի վրա դրած ծխախոտատուփը։

— Բայց ավելի լավ է չխոսել այդ մասին,— ասաց նա վերջապես, տուփը սեղանին դարկելով և ոտքի կանգնեց։

Սամսոնը քանի գնում, ավելի ու ավելի էր հետաքրքրվում։

Կնոջ խոսքերի մեջ զգում էր մի հետին թունալի միտք, մի միտք, որ անշուշտ վաղուց է Մելանիային զբաղեցնում։ Նա ինքն այդ միտքը բացատրեց այլ կերպ։

— Մելա՛նիա, եթե չես ասիլ, կնեղանամ։

— Է՞հ, շա՞տ լավ, որ ստիպում ես, կասեմ։ Դու հիվանդ ես։

Մի վայրկյան Սամսոնը կարծեց, թե կինը կատակ է անում, թեև սպասում էր լսել նրանից հենց այդ պատասխանը։

— Ես հիվա՞նդ եմ, ե՞ս— գոչեց նա ծիծաղելով։

Եվ նրա ծիծաղը հնչեց այնքան թառամ, այնքան ծերունական, որ Մելանիան ակամա ցնցվեց։

— Ես հիվա՞նդ եմ, ե՞ս,—կրկնեց Սամսոնը այս անգամ լուրջ,— ասա՛, ինչո՞վ։

— Թո՛ղ, ի սեր աստծու...

— Հիմա չեմ թողնիլ, մինչև որ բոլորը չասես։ Տեսնում եմ, դու իմ մասին վատ կասկած ունիս։ Դու ինձ զրպարտում

ես. գիտե՞ս, զրպարտում ես... ես կյանքումս հիվանդ չեմ եղել...

— Այո... կարելի է...բայց ես այդ չէի ուզում ասել...

— Ուրեմն ի՞նչ, ասա՛ ի՞նչ է իմ հիվանդությունը...

Մելանիան գլուխը հանդարտ բարձրացրեց, ուղիղ նայեց ամուսնու երեսին և արտասանեց.

— Մերությունը...

Որքա՜ն վիշտ, որքան կծու հեգնանք կար այս մի հատ բառի մեջ։ Վիշտ՝ Մելանիայի, հեգնանք՝ Սամսոնի համար։ Եվ մի վայրկյանում հիսունչորս տարեկան մարդը ծերացավ ամբողջ տասը տարով։

Ահա՜ այն վայրկյանը, որին վերջին ժամանակ սպասում էր ամեն օր, ամեն ժամ, և սպասում ներքին սարսափով։

— Ես ծե՞ր եմ,— կրկնեց նա անեռանդ ձայնով և մի տեսակ հուսահատությամբ։

— Այո՛, դու ծեր ես, միթե չգիտեի՞ր։

Սամսոնը թուլացած ընկղմվեց բազկաթոռի վրա։

Մելանիան կամացուկ դուրս գնաց սենյակից...

V

Անգո՜ւթ կին. նա չկասեցավ գեթ սակավ-ինչ մեղմացնել յուր անողոք խոսքերի ուժը։

Մեղմացնե՞լ, բայց ինչո՞ւ. միթե նա սո՞ւտ ասաց կամ զրպարտեց։ Նա ասաց ա՛յն, ինչ որ ծանրացել էր իր սրտի վրա, այն, ինչ որ ճնշում էր հոգին, թունավորում կյանքը. ասաց զուտ ճշմարտությունը։ Սակայն ի՛նչ. թեթևացա՞վ նրա հոգին։ Օ՜, ոչ, ընդհակառակը, այժմ նա ավելի է մտածում յուր ճակատագրի մասին, քան մտածել էր մինչև այդ պահ։

Տե՜ր աստված, ինչո՞ւ խաբվեց։ Մի՞թե նրա ծնողները կատարյալ բռնակալներ էին։ Բնա՛վ։ Նրան տրված էր որոշ չափով ազատություն, գոնե պայմանական ազատություն, որպիսին «ժամանակակից» ծնողները տալիս են օրիորդներին։ Նախ նրան ծանոթացրին Սամսոն Ֆրանգուլյանի հետ, թույլ տվեցին մի քանի անգամ հետը խոսել կլուբում, թատրոնում, հետո միայն սկսեցին «համոզել», այո, համոզել և ոչ թե հարկադրել։ Եվ որպիսի՜ մեղմ եղանակով համոզեցին։ Նա կարող էր մերժել, եթե կամենար։ Ոչ ոք նրան զոռով չէր ամուսնացնիլ։ Շա՜տ-շա՜տ ծնողները մի փոքր կըվշտանային, մի փոքր կնախատեին նրան, հետո... կլռեին։ Բայց նա չմերժեց. թո՛ղ ուրեմն այժմ կրի յուր սխալի հետևանքները։ Թող նա կենակցի մի մարդու հետ, որը երեսուն տարով մեծ է իրենից և որին չի սիրում։ Չի՞ սիրում։ Ոչ, այդ սխալ է, ուզում է սիրել և չի կարողանում։ Նա հարգում է այդ մարդուն, համարում է նրան արժանավոր ամուսին։ Ամուսին, որ սիրում է նրան ինչպես աստվածուհու, կատարում է նրա բոլոր ցանկությունները, բոլոր քմահաճույքները, ինչպես ստրուկ։

Բայց միթե այսքանը բավակա՞ն է։ Իսկ ո՞ւր թաքցնի Մելանիան նոր հղացած կյանքը, նրա բնական պահանջները, երիտասարդ սրտի ավյունը, որ այրում է նրան ամառային արեգակի ջերմության չափ, տարածվելով ամբողջ մարմնի մեջ, որպես հալած մետաղ։ Ինչպե՞ս զսպի սիրելու ջերմ փափագը։ Սիրելու ոչ թե մի ուժասպառ տղամարդի, այլ մի տաքարյուն երիտասարդի, որ կարողանար հագուրդ տալ նրա բոլոր զգացումներին, որ նրա չափ օժտված լիներ կենսասիրական հրով։ Բռնությո՜ւն, կատարյա՜լ բռնություն։ Նա ինքը դեռ քսանուչորս տարեկան չկա, դեռ նոր-նոր է հասկանում, թե կինը նախ և առաջ ինչու համար է ստեղծված։ Եվ ստիպված է գրկել ու համբուրել, կամ գրկվել և համբուրվել մի հնոտիի հետ։ Եվ դեռ Մելանիային նախանձող կանայք կան։

Օգոստոսի վերջին Մելանիան վերադարձավ քաղաք։

Սեփական տունն արդեն պատրաստ էր. Սամսոնն ընտանիքն ուղղակի այնտեղ տեղափոխեց։

Խե՜ղճ մարդ. որքա՜ն էր աշխատել նոր կացարանին կարելույն չափ ճոխություն ու շուք տալու։ Շատ կահ-կարասի նոր էին բերել տվել արտասահմանից, որովհետև հները չէին համապատասխանել սենյակների շքեղությանը։ Պատերը յուլաներկ ներկված, դռները թանկագին կարմիր փայտից, լուսամուտները շրջափակված ոսկեզօծ այուների մեջ — ահա

գլխավոր դահլիճը։ Հարկավ, մնացյալ սենյակներն էլ համապատասխան շուք ունեին։ Ախոռատանը խրխնջում էին մի զույգ նոր ձիեր, այս անգամ մոխրագույն, պոչերը կտրած։ Գլխավոր մուտքի մոտ կանգնած էր պարթևահասակ շվեյցարը, իսկ մարմարիոնյա սանդուղքը զարդարված էր գեղեցիկ արձաններով ու թանկագին տրոպիկական բույսերով։

Եվ այս բոլորը Մելանիայի, միա՛յն Մելանիայի հաճույքի համար. այնքա՞ն էր սիրում նրան Սամսոնը։ Այնինչ ինքը՝ Սամսոնը, որքա՞ն փոխվել էր այս վերջին երկու շաբաթվա ընթացքում։ Ոչ միայն նիհարել էր, այլև ավելի ծերացել, այլև մեջքից բավական կորացել։ Այժմ նա լուռ էր, որպես անշարժ ջուր։ Մի միտք արճիճի պես ծանրացել էր նրա հոգու վրա։ Այդ նույն միտքն էր, որ վերջին տարիները հալածում էր նրան և որից այժմ ազատվելու հնար չէր գտնում...

Քաղաք բերելով Մելանիային, նա հարցրեց՝ արդյոք առաջիկա սեզոնին ի՞նչպես է կամենում կարգադրել կյանքը։ Պիտի անցյալ ձմեռվա պես դռները բա՞ց անի բազմաթիվ ու բազմատեսակ ծանոթների առջև, թե՞ ուզում է ուրիշ կերպ ապրել։

Մելանիան հիացած էր նոր բնակարանով ու նոր կահկարասիով, բայց ոչ այնպես, ինչպես մի տարի առաջ էր հիանում ամեն մի շքեղությամբ։

Նա պատասխանեց — վճռել եմ այսուհետև ուրիշ կերպ ապրել։

— Ի՞նչպես։

— Ուզում եմ հասարակական գործերով զբաղվել։ Իրավունք կտա՞ս։

— Արա՛, ինչ որ սիրտդ ուզում է, միայն թե չախրես։ Ես չեմ սիրում քեզ տխուր տեսնել։

Այս բոլորովին անկեղծ էր. Սամսոնը չէր կամենալ Մելանիային տխուր տեսնել կամ, ավելի ճիշտ, վախենում էր նրա տխրությունից։ Բարվոք կհամարեր նրան տեսնել գործերով զբաղված, քան ինքն յուր մեջ ամփոփված։ Պարապությունը, նրա կարծիքով, կարող էր երիտասարդ կնոջը տանել դեպի ո՞վ գիտե ինչ վտանգավոր մտքեր...

Մելանիան սկսեց զբաղվել հասարակական գործերով։ Ոսկի բանալիով բաց արավ յուր առջև բոլոր այն հիմնարկությունների դռները, ուր միայն կարող է մուտք ունենալ կինը։ Սամսոնը զոհեց մի խոշոր գումար, Մելանիան ընդունվեց օրիորդական գիմնազիոնի պատվավոր հոգաբարձու։ Քանի մի ուրիշ նվերներ երիտասարդ կնոջը իրավունք տվեցին այս կամ այն բարեգործական ընկերության խորհրդի անդամ ընտրվել։ Այս բոլորը շոյում էր Մելանիայի սնափառությունը և շարժում շատերի նախանձը։ Սկսեցին նրան բամբասել, անվանել Parvenue, չարախոսել նրա ո՛չ միայն գործունեությունը, այլև անձը, վերագրելով նրան հազար ու մի վատ ձգտումներ։ Իսկ նա ոչ որի վրա ուշ չէր դարձնում։ Նա խելոք էր և ոչ զուրկ տաքտից, գիտեր և՛ արհամարհել մարդկանց, և՛ փակել նրանց բերանը յուր սիրալիր վարմունքով։ Մեկին հաղթում էր յուր ճաշակով ու ընթրիքներով, մյուսին զբոսանքի համար առաջարկելով յուր շքեղ կառքը, երրորդին ուղղակի այցելություն անելով և այլն։

Օրը մինչև երեկո զբաղված էր։ Գրում էր նամակներ, ցրում էր այս կամ այն բարեգործական երեկույթի տոմսակները, պատվերներ էր տալիս, պատվերներ կատարում և հոգնում։ Մոռանո՞ւմ էր յուր վիճակը. այսինքն ա՛յն, ինչի պատճառով իսկապես զբաղվում էր հասարակական գործերով։— Ո՛չ. նա խաբում էր ինքն իրան։ Բայց ջանք էր անում մոռանալ։ Ավելի,՝ նա անկեղծ ցանկանում էր սիրել Սամսոնին։ Այս նպատակով բռնաբարում էր ինքն իրան, խեղդում յուր մեջ շատ ապօրինի, վտանգավոր, բայց հաճելի զգացումներ։ Նա հեռու էր պահում իրան տղամարդկանց շրջանից, որպեսզի չվրդովի ոչ յուր և ոչ Սամսոնի արյունը։ Իսկ կանայք առաջվա պես վայելում էին նրա ընդարձակ հյուրասիրությունը։

Սամսոնը ոչ մի նկատողություն չէր անում նրան այս կամ այն քայլի մասին և միշտ կրկնում էր.

— Արա՛, ինչ որ քեֆդ է։

Բայց այս խոնարհության մեջ Մելանիան ակամա զգում էր ինչ-որ վատ բան. ինչո՞ւ — ինքն էլ չգիտեր։ Մի օր նա հարցրեց ամուսնուն.

— Դու բարկանո՞ւմ ես ինձ վրա։

— Ո՞վ ասաց։

— Ինձ այնպես է թվում։

— Իզուր։ Ես քեզ ոչինչ, ոչինչ չեմ արգելում, արա՛, ինչ որ քեֆդ է։

— Դու ունիս իրավունք արգելելու։

— Ունի՛մ, բայց չեմ արգելում։

— Իսկ ես ուզում եմ, որ դու ինձ շատ էլ ազատություն չտաս։

— Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղեց Սամսոնը,— դու մի՛ կարծիր, թե ես քո ազատությունից վախենում եմ։ Ոչ, ես վախկոտ չեմ։

Նա խոր նայեց կնոջ աչքերին։ Մելանիան գլուխը թեքեց կրծքին, մի քիչ կարմրելով։ Խոսակցությունը սրանով էլ վերջացավ։

VI

Փիրուզյանը հաճախ այցելում էր Սամսոն Ֆրանգուլյանին։ Նկատելով, որ ազգականը անգործ տխրում էր, հանդիմանում էր նրան, որ ահագին դրամագլուխը դրել է բանկ և ձեռները անշարժ նստել։ Ինչո՞ւ չի սկսում մի նոր ձեռնարկություն և իր կյանքի պակասը լրացնում։

— Մերացել եմ,— պատասխանեց մի օր Սամսոնը կատակով, բայց ակամա հառաչելով,— եռանդ չունիմ նորից գործեր սկսելու։

— Մերացե՞լ,— կրկնեց Փիրուզյանը,— դուք ձեզ ծե՞ր եք համարում։ Դուք ինձանից երիտասարդ եք։

— Քսաներկու տարով ձեզանից մեծ եմ, գիտե՞ք՝ ինչ ասել է քսաներկու տարին մարդու կյանքում։

— Տարիքը դատարկ բան է, գլխավորը մարդու ուժերն են ու սիրտը։

Նա շատ լավ գիտեր, թե որքան կործանիչ է ժամանակի ուժը, թե որքան մարդիկ խաբում են իրենց, երբ ասում են, «թե ես տարիքով ծեր եմ, բայց սրտով, հոգով ու ուժով երի-

տասարդ եմ»։ Սակայն խորամանկ էր, ճանաչել էր ազգականի թույլ երակը և աշխատում էր շոյել նրան։ Ահա ինչու Սամսոնը իսկապես սիրում էր նրան։ Այդ երիտասարդի մոտ նա էլ չէր զգում յուր ծերությունը։

Ամեն կիրակի, երբեմն նաև շաբաթամիջին, Փիրուզյանը ճաշում էր Ֆրանգուլյանի տանը։ Գալիս էր ճաշից շատ առաջ և հեռանում ճաշից շատ հետո։ Երբեմն Մելանիային հանդիպում էր տանը մենակ, և միշտ ազգականի պարզ հարգանքով էր վերաբերվում դեպի նա։ Այնինչ, Մելանիան շարունակ ցույց էր տալիս անտարբերություն, երբեմն նույնիսկ սառնություն։ Միևնույն ժամանակ, այլևս Սամսոնի հետ չէր խոսում Փիրուզյանի մասին։ Կարծես, նրա համար միևնույն է. կա՞ այդ մարդը, թե՛ չէ։ Բայց և այնպես, այժմ էլ նա երբեմն մտքում համեմատում էր Սամսոնի հետ և միշտ մտածում. ինչո՞ւ Սամսոնը նրա հասակի չէ։ Ա՜խ, այն ժամանակ Մելանիան երջանիկ կլիներ։ Իսկ այժմ նրա արյունը չի հուզվում Սամսոնի մերձավորությունից և այս կատաղեցնում է նրան։ Մինչդեռ հուզվում է, երբ մի վայրկյան ազատություն է տալիս իրեն և դիտում Փիրուզյանի առնական ուժով տոգորված դեմքը, նրա աչքերի երիտասարդական փայլը։

Մի օր Փիրուզյանը եկավ ա՛յն միջոցին, երբ Սամսոնը տանը չէր և շուտ էլ չպիտի վերադառնար։ Մելանիան ընդունեց նրան ամուսնու կաբինետում և ընդունեց ավելի սառը, քան ամուսնու ներկայությամբ։

— Սամսոնը տանը չէ,— շտապեց ասել նա։

— Ափսո՛ս,— արտասանեց Փիրուզյանը և խոր հայացքով նայեց Մելանիայի աչքերին։

Այդ հայացքը թե՛ բարկացրեց և թե շփոթեցրեց Մելանիային։

— Գո՞րծ ունեիք հետը,— հարցրեց նա։

— Այո՛։

— Այսօր շատ ուշ կգա տուն։ Ճաշի է հրավիրված։

Նա կամենում էր հյուրին ճանապարհ դնել, բայց հյուրը նրա ձեռքի թեթև շարժումից օգտվելով, նստեց Սամսոնի լրասեղանի քով։ Նա միանգամայն կատաղեցնում էր Մելանիային իր երեսի թարմ գույնով, իր աշխույժ ձևերով, այն

մարմնավոր ուժով, որ արտահայտվում է երեսունչորս տարեկան տղամարդի յուրաքանչյուր շարժմամբ։

— Դուք ինձ ներեցե՛ք, ես ձեզ կթողնեմ մենակ։ Հյուրասենյակում ինձ սպասում է որբախնամ ընկերության վարչության նախագահը։

— Խնդրե՛մ, խնդրե՛մ,— չշփոթվեց Փիրուզյանը,— գնացեք, զբաղվեցե՛ք բարի գործերով, իսկ ինձ թույլ տվեք մի փոքրիկ նամակ գրել Սամսոն Պետրովիչին։ Գործը շատ կարևոր է, հետաձգել չի կարելի։

Մելանիան հեռացավ։ Հյուրը մնաց մենակ։ Վերցրեց մի թերթ փոստի թուղթ և գրիչ։ Գրեց մի քանի տող, հետո գրիչը ցած դրեց և, թիկն տալով բազկաթոռին, ընկավ մտածմունքի մեջ։

Արդեն մի քանի ամիս էր, նրա միտքը զբաղված էր Մելանիայով։ Նա չափազանց հավանում էր երիտասարդ ազգականուհուն և հավանել էր հենց առաջին տեսնելով։ Նրա հաճախակի այցերի գաղտնի շարժառիթը տիկինն էր։ Նա չէր շփոթվում Մելանիայի սառն վարվողությունից, և չէր շփոթվիլ, եթե Մելանիան մինչև անգամ բոլորովին չխոսեր նրա հետ։ Տասը տարի պտտելով մայրաքաղաքի շրջաններում, բավական ուսումնասիրել էր գեղեցիկ կանանց հոգեբանությունը։ Իսկ այս հոգեբանությունը, նրա համոզմունքով, ամեն տեղ և բոլոր ազգերի կանանց մեջ միևնույնն էր։ Նա գիտեր, որ Մելանիայի անտարբերությունն արտաքին է, ստիպողական, որ մի երիտասարդ ու գեղեցիկ կին չի կարող մի այդպիսի թառամած ամուսնու մոտ ոչինչ չզգալ դեպի մի երիտասարդ տղամարդ, որքան ևս բարոյական ու առաքինի լինի։ Նա այս շատ լավ գիտեր, ուստի Մելանիայի սառնությունը չէր նրա մտատանջության պատճառը և ոչ էլ այն, որ Մելանիան նրա ազգականուհին էր։ Փիրուզյանը պատկանում էր ժամանակակից այն երիտասարդների շարքին, որոնց աշխարհայացքը զերծ է ազգակցական կամ բարեկամական կապերի «նախապաշարումներից»։ Սակայն Սամսոն Ֆրանգուլյանը լավ մարդ է — ահա գլխավորը։ Նա շատ է հավատում Փիրուզյանի ազնվությանը — ահա անտանելին։

Ի՞նչ անել. արհամարհե՞լ այդ մարդու հավատը, ոտնատա՞կ անել նրա պատիվը։ Օ, ո՛չ, այս արդեն ծայրահեղ ապականություն կլինի, անասնություն։ Ուրեմն ի՞նչ անել. մոռանա՞լ Մելանիային։ Ո՛չ, արդեն այդ կինը շատ հրապուրիչ է, արդեն նա բավական խոր տեղ է բռնել Փիրուզյանի սրտում։ Մոռանալ անհնարին է։ Եվ ինչո՞ւ մոռանալ. միթե նա հիմա՞ր է, միթե չգիտե՞, որ ի՛նչ որ հաճելի է իրեն, հաճելի է և՛ Մելանիային, որ սիրուն տիկինը ուզում է զգալ ու ապրել, որ նա, իսկապես, ատում է իր կողակցին, թեև գուցե հարգում, որ նա շատ էլ նախապաշարված կին չէ, որ դարավերջի ապականությունը նրա հոգեկան աշխարհի վրա ունեցել է որոշ ներգործություն, որ վերջապես, ոչ մի կին, նույնիսկ հայ կինը, չի կարող տղամարդի մեջ չսիրել հանդգնություն ասված բանը, մանավանդ եթե տղամարդը երիտասարդ է և ոչ այնքան էլ տգեղ...

Վճռված է։ Աշխարհի երեսին ամեն ոք ունի իրավունք ապրելու, իսկ մի երիտասարդ կին ու մի երիտասարդ տղամարդ՝ նամանավանդ։ Եվ չկա օրենք, որ կարողանա խանգարել նրանց ապրելու։ Կյանքը բարձր է բարոյականությունից։ Ինքը, բարոյականություն ասված միտքը առաձգական է, նրա կանոնները փոխվում են ժամանակի ընթացքում։ Այժմ իսկ այդ կանոնները տարբեր են զանազան կլիմաների տակ, զանազան մարդկային համայնքների ու կրոնական համախմբերի մեջ։ Մի բան է միայն անփոփոխ — մարդկային սիրտը։ Անփոփոխ մի ձգտման մեջ — զգալ ու վառվել սեռային կրքով, քանի որ ընդունակ է վառվելու։ Լավ է առաքինի մարդ մնալը, բայց բնության ուժը անհաղթելի է կենդանի մարդու համար, նաև գերադասելի բարոյականությունից։ Հիմա՞ր մարդիկ, տեսե՛ք. դուք խոսում եք թռչունների մաքրության մասին, մի՞թե ագավնիներն այնչափ միամիտ են, ինչպես կարծում էր Քրիստոսը։ Ո՞վ է ստեղծել ընկերական կյանքի կանոնները, այդ բարոյականություն կոչված անտեսանելի, անշոշափելի շինության հիմքը։— Մարդի՞կ։ Էէ՛, ուրեմն մարդիկ չունի՞ն իրավունք քանդելու այն, ինչ որ ինքնըստինքյան խորտակվում է ժամանակի ավերիչ ուժից։

Մի ուրիշ խնդիր, որ Փիրուզյանին զբաղեցրեց, Սամսոն

Ֆրանգուլյանի լավ մարդ լինելն էր։ Արդյոք, այս ճշմարի՞տ է, արդյոք, կարելի՞ է այդ մարդուն լավ համարել։ Ի՞նչ իրավունքով է նա տիրացել մի երիտասարդ կնոջ, եթե, իրավ, լավ մարդ է։ Նա՛, այդ քայքայված, հնամաշ միլիոնները։ Մի՞թե լավ մարդը փողով կգներ մի անփորձ էակի, մի դեռահաս աղջկա, գրեթե մի երեխայի բախտը, ճակատագիրը, կյանքը։ Օ՜օ ոչ, հազար անգամ ոչ։ Բայց որ գնել է — թող կարողանա և պահպանել, ինչպես գիտե պահպանել իր միլիոնները։ Որ չի կարող պահպանել, թող տուժի։ Մելանիան խաբված էակ է, այն ժամանակ, երբ որոշվել է նրա ճակատագիրը, կյանքի մասին ոչինչ և ոչինչ գաղափար չի ունեցել։ Այժմ է նրա մեջ զարթնել կյանքը, այժմ է սկսում եռալ նրա արյունը։ Եվ մի՞թե գարնան այս նոր-նոր բացվող ծաղիկը պիտի թողնել աշնան պաղ ձեռներում։ Ինչո՞ւ. ո՞վ է այն բռնակալը, որ ժամանակի վրա անգամ տարածում է իր իշխանությունը։ Մի եսամոլ ծերունի իր միլիոններով հանդգնում է ոտնատակ անել բնության օրենքները։ Այդ զզվելի է...

Վճռված է. Մելանիան բնական օրենքով այն մարդուն է պատկանում, ով գրգռել կարող է նրա կիրքը։ Ով ուզում է, թող լինի այդ մարդը, ինքը Փիրուզյանը, թե մի ուրիշը։ Պետք է այս բանը հասկացնել երիտասարդ էակին և զգալ տալ նրան, թե կա մի մարդ, որ գիտե ըմբռնել նրա գաղտնի վիշտը։

— Դուք վերջացրի՞ք ձեր նամակը,— լսվեց հանկարծ Մելանիայի ձայնը։

— Ես չգրեցի։

Մելանիան նստեց։ Նստեց նաև Փիրուզյանն անմիջապես։

VII

Ի՞նչ է նշանակում այս, Մելանիան անկեղծ ուզում է ազատվել այդ մարդուց, և խոսք չի գտնում նրան հեռացնելու։ Նա կաշկանդվեց հյուրի մի երկարատև նայվածքից և գլուխը թեքեց կրծքին, թեթևակի կարմրելով։

Նա զգում է, որ արյունը երակների մեջ սկսում է հոսել առանձին ուժով և մարմնին պատճառել անսովոր ու ախորժելի դողոց։ Եվ այս է, որ կատաղեցնում է նրան։ Ոչ, ոչ, պիտի այդ մարդուն ուղղակի, թեկուզ անքաղաքավարի կերպով, ճանապարհ դնել։ Մելանիան ատում է նրան հոգու բոլոր ուժերով, ինչպես կարող է ատել մի կին մի տղամարդու։ Այդ մարդու դեմքն արդեն արտահայտում է վատ բան, շա՛տ վատ բան։ Բայց ինչո՞ւ Մելանիան հենց այս րոպեին խրդճում է Սամսոնին...

— Ուզում եմ Ժորժիկին կառքով մի քիչ զբոսեցնել, եղանակը լավ է,— փորձեց նա հասկացնել հյուրին, թե չպիտի երկար նստել։

— Ժորժիկը, ձեր որդին, օ՜օ, շատ լավ երեխա է, առողջ, գեղեցիկ, և զարմանալի նման է հորը,— նկատեց Փիրուզյանը, անուշադիր թողնելով Մելանիայի բառերի բուն իմաստը։

Չէ՞, այդ մարդը միանգամայն հանդուգն է։ Սակայն նրա հանդգնության մեջ կա ինչ-որ քաշող ուժ։ Երբեք և ոչ ոք Մելանիայի վերաբերմամբ այդքան անքաղաքավարի չի եղել, ճիշտ է, բայց և երբեք և ոչ ոքի ներկայությունը այսքան չի կաշկանդել նրան։ Նա անկեղծ ուզում է փախչել այդ մարդուց և, միևնույն ժամանակ մի անհաղթելի ուժից մղվում է դեպի նա։ Ի՞նչ ասել է այս։ Մի՞թե ատելի մարդը կարող է այսքան ձգողական ուժ ունենալ։

— Այսօր ուզում էի Սամսոն Պետրովիչի հետ խոսել մի շատ լուրջ գործի մասին,— ասաց Փիրուզյանը, շարունակելով իր խորհրդավոր հայացքի տակ այրել երիտասարդ կնոջը։

— Բանն այն է, որ Սամսոնը անգործ տխրում է, պետք է, որ նա որևէ նոր գործի ձեռնարկի։ Մի այդպիսի գործ կա, հենց այս մասին էի ուզում Սամսոնի անունով նամակ գրել ու թողնել նրա սեղանի վրա։ Կառավարությունը տալիս է մի ահագին անտառ, շահագործելու համար։ Մեծ գումար է հարկավոր, ամբողջ քաղաքում գուցե միայն Սամսոնը կարող է այդ կապալը վերցնել։ Բայց մեծ էլ օգուտ կարելի է ունենալ։

— Չգիտեմ, ես այդ տեսակ գործերից ոչինչ չեմ հաս-

կանում,— արտասանեց Մելանիան, մի անգամ ևս փորձելով զգալ տալ հյուրին, թե չի ուզում երկարացնել։

Բայց հյուրը շտապեց օգտվել հենց այդ խոսքերից։ Նա ասաց.

— Օ՜օ, շա՜տ ուրախ եմ, որ չեք հասկանում։ Այդ պատիվ է բերում ձեր ճաշակին. կյանքը շատ տխուր կլիներ, եթե երիտասարդ ու գեղեցիկ կանայք էլ հետաքրքրվեին նյութականով։ Ապրել ու զվարճանալ— ահա ինչ է վայելում ձեր հասակին, դիրքին, գեղեցկությանը։

Այս խոսքերը ներգործեցին Մելանիայի վրա։ Նա մինչև անգամ փափագեց լսել նրանց շարունակությունը։ Փիրուզյանը այս հասկացավ և շտապեց օգտվել հարմար րոպեից։ Կինը կյանքի ժպիտն է, պոեզիան։ Կինը, մանավանդ երիտասարդ ու գեղեցիկ կինը, տղամարդի աստվածուհին է։ Մի՞թե վայե՞լ է աստվածուհուն նյութականով հետաքրքրվել։ Կինը մինչև անգամ չպիտի մտածի լուրջ բաների մասին, որովհետև մտածմունքը խորշեր է առաջացնում դեմքի վրա և ծերացնում է կնոջը։ Կինը միայն պիտի զգա, միայն պիտի սիրի ու սիրվի և միշտ ձգտի լիացում տալ իր զգացումներին...

Զգալ, լիացում տալ զգացումներին։ Մելանիան վախեցավ։ Փիրուզյանը խոսում էր նրա սրտի խորքից, նրա այժմյան տրամադրությունից։ Այլևս նա հաղթահարվեց, գոնե այնչափ, որ դադարեց մտածել հյուրից ազատվելու մասին։ Այժմ նա լսում էր նույնիսկ հետաքրքրությամբ, թեև մերթ ցնցվելով, մերթ անտարբեր ձևանալով, մերթ բարկանալով միմյանց հակասող, միմյանց չնչող զգացումներից։

— Ես շատ ուրախ եմ,— շարունակեց Փիրուզյանը եռանդով,— որ դուք զբաղվում եք հասարակական գործերով։ Բայց ներեցեք, ինձ թվում է, դուք այդ անում եք, ը՜ը՜ը՜, անում եք... ձեզ խաբելու համար...

— Ուրեմն դուք չե՞ք հավատում իմ անկեղծությանը,— գոչեց Մելանիան վիրավորված։

— Ո՜չ,— արտասանեց Փիրուզյանը համարձակ, մեղմիկ ժպտալով և նայեց խոսակցի բիբերին։

— Ի՞նչ իրավունքով։

— Իրավունքի բան չկա, ճաշակի խնդիր է։ Նախ և առաջ՝ պիտի ասել, որ ես չեմ հավատում առհասարակ կանանց. մանավանդ երիտասարդ կանանց հասարակական գործունեությանը։ Ես այստեղ ճանաչում եմ մի քանիսին, որոնք իրենց երեխաներին հանձնում են ծառաների հսկողությանը, իսկ իրանք օրը մինչև երեկո վազվզում են դեսուդեն մի ինչոր ձանձրալի պարահանդես կամ ավելի ձանձրալի ներկայացում սարքելու համար։ Նրանք երևակայում են, թե իրենք կազմում են հասարակական կյանքի առանցքը։ Օ՜օ, անկարելի է նրանց հետ վիճաբանել։ Խոսում են հեղինակավոր եղանակով, քննադատում են այնպիսի բաներ, որոնց մասին հավի հասկացողություն ունին։ Այդ կանայք երջանիկ են իրենց իյուղիայով և դժբախտ՝ կյանքի տեսակետից նայողի աչքում։ Իմ կարծիքով, նրանք ավելի հաճելի կլինեին, եթե սովորեին ճաշակով հագնվել ու ճաշակով սանրել իրենց մազերը։ Գալով ձեզ, պետք է ասել, որ դուք, տիկի՛ն, գործել չեք ուզում, այլ ինչպե՛ս ասեմ... զգալ ու ապրել... Դուք աշխատում եք միայն գործով թմրեցնել ձեր սրտում նոր վառված շատ բնական ու շատ ներելի զգացումները։ Հասկանում եք, կարծեմ։ Էհ, չի կարելի չասել, որ մի քիչ էլ սնափառ եք, ինչպես առհասարակ բոլոր հարուստ կամ որևէ դիրք ունեցող կանայք։ Բայց ճշմարտությունն այս է. դուք գործել չեք ուզում, այլ ապրել, կրկնում եմ, ապրել։ Ինչո՞ւ— նրա համար, որ դուք այժմ, ներկա հանգամանքներում... չեք ապրում...

Հանդո՜ւգն մարդ։ Իր գիտողական ձիրքով, իր արձվային հայացքով նա թափանցում էր երիտասարդ կնոջ սրտի խորքը և քրքրում զգուշությամբ թաքցրած զգացումները։

— Դուք սխալվում եք, ես ապրում եմ և շատ լավ եմ ապրում,— ասաց Մելանիան այնպես արագ, որ կարծես վախենում էր՝ միգուցե ուրիշ բան ասի։

Մի թեթև հեգնական ժպիտ սահեց Փիրուզյանի դեմքով։

Տիրեց վայրկենական լռություն, որովհետև նա պատրաստվում էր ավելի համարձակ քայլ անելու։

— Ասացե՛ք, խնդրեմ, քանի՞ տարեկան էիք, երբ ձեզ

ամուսնացրին,— հարցրեց նա անփույթ եղանակով, սակայն որոշ շեշտելով «ձեզ ամուսնացրին» բառերը։

Հարցը, հարկավ, համարձակ էր, բայց չէ՞ որ Փիրուզյանը աղգական է, ունի իրավունք թույլ տալու իրան որոշ ազատություն։

— Չգիտեմ, չեմ հիշում,— պատասխանեց Մելանիան հուզմունքից դողացող ձայնով։

— Երևի, տասնուվեց կամ շա՜տ-շա՜տ՝ տասնույոթ տարեկան,— լրացրեց ինքը Փիրուզյանը,— այսինքն՝ այն հասակում, երբ ձեր վերջին խաղատիկինը դեռ փշրված չէր։

Եվ, մի վայրկյան կանգ առնելով, ցածր ձայնով ու կարծես ինքն իր համար, ավելացրեց.

— Այո, այո, տղամարդիկ եսամոլ են, ոճրագործության չափ եսամոլ։

Պարզ էր, թե ում էին վերաբերվում այս բառերը։

Էականը ասված էր. ավելի հեռու գնալն առայժմ և՛ անհարմար համարեց, և՛ վտանգավոր։ Նա ուրքի ելավ— ժամացույցին նայելով։ Ժամանակ է ժորժիկին զբոսնելու տանել։

— Հույսով եմ, որ ասածներս կատակի տեղ կընդունեք և կմոռանաք,— ասաց հյուրը։

Երբեք նա այնքա՜ն երիտասարդ, այնքա՜ն ուժեղ, այնքան գրգռեցուցիչ չէր թվացել Մելանիային, որքան այսօր, հետևաբար՝ այնքան ատելի և երկյուղալի։

Երեկոյան, երբ Մելանիան Սամսոնին հայտնեց Փիրուզյանի այցելության մասին, ավելացրեց.

— Վերցրո՛ւ այդ կապալը, դու անգործ տխրում ես։

VIII

Մելանիան չէր կարողանում մոռանալ Փիրուզյանի խոսքերը։ Մտածում էր, քննում, վերլուծում և ակամա եզրակացնում, թե որքան հանդուգն են այդ խոսքերը, նույնքան ճիշտ են։ Ճիշտ գոնե այն մասում՝ թե երիտասարդ կինը պիտի ղգա ու ապրի, որ ինքը Մելանիան, պարապելով հասարակական գործերով, չի զգում այն, ինչ որ պահանջում է

սիրտը, թե կյանքն անցողիկ է, իսկ մարդ երկրորդ անգամ չի ծնվում, թե վերջապես «որքա՜ն տղամարդիկ եսամոլ են»։

Գտնվել է մի անձ, որը հանդգնաբար կարդում է նրա մտքերը և շոշափում նվիրական զգացումները։ Նա ինքն երիտասարդ է, նրա ամբողջ կազմից մարմնավոր ուժն է բուրում, ա՛յն, ինչ որ վաղուց է թառամել Սամսոնի մեջ։ Լավ մարդ է, թե վատ, խելոք է, թե հիմար, բարոյական, թե անբարոյական,— այդ չէ խնդիրը։ Երիտասարդ է — ահա գլխավորը։ Եվ ունի իրավունք ասելու, թե Մելանիան չի ապրում ու չի կարող ապրել լի կյանքով մի ծերունու հետ։

Ամեն օր Փիրուզյանը գալիս էր իր աղգականի մոտ գործի վերաբերմամբ խոսելու։ Սամսոնը վաղուց էր դադարել մտածել դրամական շահերի մասին։ Եվ այս ոչ այն պատճառով, որ փողից կուշտ էր, այլ գլխավորապես այն պատճառով, որ այժմ այլևս կյանքի քաղցրությունը դրամի մեջ չէր տեսնում, որպես առաջ։ Նա անգործ տխրում էր,— ահա ինչու համոզվեց կապալը վերցնել։ Իրավունք տվեց Փիրուզյանին մանրամասն տեղեկանալ պայմանների մասին և ժամանակին հիշեցնել աճուրդի օրը։

Որքան Մելանիան անկեղծ փափագում էր առաջվա պես փախչել Փիրուզյանից, այնքան ավելի այժմ ներքին ուժը մղում էր նրան դեպի երիտասարդ տղամարդը։ Նա զգում էր, որ վաղ թե ուշ այս ակամա հակումը կարող է Սամսոնի աչքին ընկնել։ Վախենո՞ւմ էր ամուսնուց։— Ոչ, վախենում էր իր խղճից, չէր ուզում նրա դեմ որևէ հանցանք գործել։ Զգում էր, որ իր դրությունը վտանգավոր է, որ կարող է կուրանալ, մոլորվել ու ընկնել առաջին պատահողի գիրկը, թեկուզ այդ առաջին պատահողը լինի անցորդի մեկը։ Ահա ինչու ատելով Փիրուզյանին, երկնչում էր նրա մերձավորությունից, ինչպես մի թունալի ու սոսկալի ախտից։ Ախտ, որ թեև հաճելի ու արբեցուցիչ, բայց կործանիչ է։

Եվ նա կռվում էր ինքն իր հետ։ Երբեմն զգում էր, որ մտքի ուժը ահա, ահա պիտի հաղթվի կրքերի զորությունից։ Այսպիսի րոպեներին նա կարոտում էր Սամսոնի օգնությանը։ Թող այդ մարդը նրա հետ վարվի խիստ, անողոք. այս և միայն այս կարող է Մելանիային փրկել, պահպանել

նրան հնարավոր անկումից։ Երբեմն նա փափագում էր, որ Սամսոնը խանդե, թեկուզ անտեղի զայրանա, կատաղի և կշտամբե նրան ամենավիրավորական խոսքերով։

Մինչդեռ Սամսոնը ոչ միայն չէր խանդում, այլև վերին աստիճանի համբերող էր։ Գոնե այսպես էր երևում արտաքուստ։

— Այսօր միասին գնանք օպերա,— ասում էր Մելանիան, որ սովորաբար մենակ էր գնում թատրոն։

— Լա՛վ, գնանք,— պատասխանում էր Սամսոնը, թեև ատելով ատում էր օպերան։

— Այսօր սպասավորին հրամայել եմ այսուհետև ցիլինդրով ու սյուրթուկով նստել կառապանի մոտ։ Չերքեզկան ու դաշյունը զահլեա տարել են։

—Լավ ես արել,— պատասխանում էր Սամսոնը, թեև ամեն մի ցիլինդրի թշնամի էր, մանավանդ սպասավորների ցիլինդրին։

— Էգուց խոհարարին ուզում եմ արձակել, չեմ հավանում։

— Արձակի՛ր,— պատասխանում էր Սամսոնը, թեև խոհարարը շատ լավ էր պատրաստում նրա սիրած կովկասյան կերակուրները։

Այս անսահման հլությունը, վերջապես, սկսեց ձանձրացնել Մելանիային։ Ի՞նչ է նշանակում այս։ Ինչո՞ւ Սամսոնը այդպես խեղճացել է, կամքից զրկվել և ներկայացնում է իր դասակարգի մարդկանց կատարյալ հակապատկերը։ Անկարելի է, որ այդ հեզությունը մի հետին միտք չունենա, մի ավելի խոշոր պատճառ, քան սերը դեպի Մելանիան։

Մի օր Մելանիան փորձի համար ասաց, թե վճռել է անգլերեն լեզվի դասեր վերցնել։ Կա մի պոլսեցի երիտասարդ ուսուցիչ, որին ուզում է վարձել։

— Էհ, փորձի՛ր, եթե ուզում ես,— համաձայնվեց Սամսոնը։

— Ուրեմն, թո՞ւյլ ես տալիս։ Իսկ խուդանովը իր կնոջը չի թույլ տալիս։

— Խուդանովն ինձ համար օրինակ չէ։ Լեզուներ սովորելը լավ բան է։ Ասում են՝ մի լեզու իմացողը մեկ մարդ է, հինգ լեզու իմացողը— հինգ մարդ։

Մելանիան մի անհամբեր շարժումն արավ և լռեց։

Գնալով Սամսոնի հլությունը սկսեց նրա համար դառնալ արդեն ոչ միայն ձանձրալի, այլև... զզվելի, այլևս այդ հլության մեջ նա տեսնում էր թուլություն, բարոյական ուժերի բացակայություն։ Մի բան, որ առհասարակ ատում էր ամեն մի տղամարդի մեջ։

Մի օր առավոտը, թեյից հետո, Մելանիան ասաց.

— Սամսոն, այս երեկո ուզում եմ դիմակահանդես գնալ, թույլ կտա՞ս։

— Գնա՛։

Մելանիան գիտեր, որ Սամսոնը ամբողջ հոգով հակառակ է դիմակահանդես գնալուն, և այս անգամ կատաղեց կեղծիքի դեմ։

— Դու զարմանալի մարդ ես,— գոչեց նա ջղային եղանակով։

— Ինչո՞ւ։

Մելանիան մտածեց և հանկարծ արտասանեց.

— Չեմ սիրում այդ տեսակ ազատություն։ Հասկանո՞ւմ ես, չեմ սիրում, զզվում եմ...

Սամսոնը նայեց նրա երեսին զարմացած։ Կար ժամանակ, երբ Մելանիան սաստիկ ձգտում էր հենց այդ տեսակ ազատություն ունենալ, իսկ այժմ ի՞նչ պատահեց։

— Մեղա՞, թե միտքդ հասկանամ.— արտասանեց նա, ուսերը վեր քաշելով։

— Չե՞ս հասկանում,— գոչեց Մելանիան նույն ջղային եղանակով,— ավելի վատ քեզ համար։ Ուզո՞ւմ ես, որ պարզ խոսեմ։ Դու խեղճ մարդ ես, իսկ ես խեղճ մարդկանց չեմ սիրում։

— Ե՞ս եմ խեղճ մարդ,— կրկնեց Սամսոնը, դառն հեգնությամբ ժպտալով,— երևի դու ինձ դեռ լավ չես ճանաչում։

— Ո՛չ, այդ չէի ուզում ասել։ Դու խեղճ չես, այլ չափից դուրս շատ ես սիրում ինձ։

— Տեր ամենակարող աստված,— կարողացավ միայն մրմնջալ Սամսոնը։

— Մի՛ սիրիր ինձ, այո՛, մի՛ սիրիր...

— Ասա՛, ասա՛, տեսնենք է՛լ ինչ ես ասում։

Հանկարծ Մելանիայի կոկորդի երակները փքվեցին, կապտեցին, երեսի մկանունքները աղավաղվեցին, կուրծքը բարձրացավ ուժգին։ Սկսեց հեկեկալ։ Սամսոնն արդեն ապշեց։ Քանի մի վայրկյան լուռ նայեց կնոջը, ապա մոտեցավ և ձեռը դրեց նրա ուսին։

— Մելանիա, արդյոք հիվա՞նդ չես դու։

Մելանիան մի բոպե թույլ տվեց բուռն արտասուքին դուրս հոսելու, ապա մի քիչ զսպեց իրեն, ոտքի կանգնեց։

— Ա՜խ,— ասաց նա, արցունքները արագ-արագ սրբելով,— ես ինքս էլ չեմ հասկանում ինչ եմ ասում։ Դու սիրում ես ինձ, ո՛չ միայն ինձ, այլ ծնողներիս, քույրերիս ու եղբայրներիս։ Բայց ինձ թվում է, որ դու այդպես չպիտի լինես, ընդհակառակը պիտի իմ գլխին բռնակալ դառնաս։ Այո՛, այնպես, ինչպես հին ժամանակի ամուսինները։ Ուզում եմ, որ դու ինձ վրա գոռաս. չթույլ տաս ինձ տնից դուրս գալ, թողնես մենակ, ինքդ գնաս կլուբներում, հյուրանոցներում ու այգիներում քեֆ անես։ Ուզում եմ՝ հարբած տուն գաս, ինձ հայհոյես, ծեծես, հասկանո՞ւմ ես, ծեծես, ոտներիդ տակը գցելով։ Կարո՞ղ ես այդպես անել, ա՛սա, կարո՞ղ ես։

Սամսոնը արձանացել էր տեղն ու տեղը։ Նա չէր հավատում իր ականջներին։

— Եթե չես կարող հարբել, հայհոյել, ծեծել, գոնե հետս վարվիր այնպես, ինչպես իրենց կանանց հետ վարվում են այժմյան ամուսինները։

— Այսի՞նքն։

— Խաբի՛ր ինձ, դավաճանի՛ր, աչքիս առջև սիրուհինե՛ր պահիր. մի խոսքով՝ վատ ամուսին եղիր, շատ վատ, շա՛տ կոպիտ, անպիտա՛ն, կեղտո՛տ, գազա՛ն։ Այնքան կեղտոտ, այնքան գազան, որ ամբողջ քաղաքը խոսի քո մասին, որ ամենը քեզ ատեն ու հայհոյեն։ Քեզ ատեն ու հայհոյեն, իսկ իմ մասին ցավեն, ասեն. «խե՜ղճ կին, անբախտ կին, ինչպե՜ս տանջվում է մարդու ձեռքին»։

Մի ինչ-որ սուր միտք անցավ Սամսոնի ուղեղով։ Բայց

աշխատեց իսկույն ևեթ ազատվել այդ մտքից, որ ծանր էր, դաժան, գարշելի։ Նա ձեռով մի բացասական շարժումն արավ, մոտեցավ Մելանիային, երկու մատով բարձրացրեց ծնոտը, նայեց ուղիղ աչքերի միջին և արտասանեց.

— Մելա՛նիա, հասկանո՞ւմ ես ինչ ես ուզում ինձանից։

Եվ, անցնելով սենյակի մյուս ծայրը, հետ եկավ ու ավելացրեց.

— Զգո՞ւյշ, Մելանի՛ա, եթե ուզենամ վատ մարդ լինել, շա՛տ վատ կլինեմ, իմացի՛ր, շա՛տ վատ։

Այս ասվեց հասարակ եղանակով, բայց այնպիսի համոզիչ ուժով, որ Մելանիան մի վայրկյան սարսափեց։ Նայեց ամուսնու երեսին և զգաց, որ արդարև, եթե Սամսոնը կամենա, կարող է շատ վատ ամուսին դառնալ։ Նրա խորշոմած մոայլ ճակատը այդ պահին սքողված էր տարօրինակ ստվերով։ Կիսաթառամ աչքերի մեջ երևում էր տանջող խանդի կուրությունը, որ կարող է անգամ հանցանք գործել։

Բայց այնուամենայնիվ Մելանիան չկղջաց։ Նա ասաց.

— Ինչ ուզում ես, արա՛, միայն փոխվիր։ Կամ հին մարդ եղիր, կամ նոր մարդ, կամ բռնակալ, կամ դավաճանող։

Ասաց, կարծես, հակառակ իր կամքի. միայն ենթարկվելով ինչ-որ տարերային ուժի ազդեցության...

IX

Այսպես, ուրեմն, Սամսոնը շատ է սիրում Մելանիային։ Իսկ Մելանիան, ընդհակառակը, ուզում է ատվել նրանից։ «Ուզում եմ որ, հարբած տուն գաս, հայհոյես ինձ, ծեծես»։ Եթե Սամսոնը այդ չի կարող անել, թող վարվի նրա հետ այժմյան ամուսինների պես։ «Խաբիր ինձ, դավաճանիր, աչքիս առջև սիրուհիներ պահիր»։

Եթե Սամսոնը մինչև այժմ կասկածում էր, այսօր համոզվեց, որ ինքն արդեն ատելի է դարձել Մելանիայի համար։ Ահա ինչու Մելանիան պահանջում էր, որ Սամսոնն ատի նրան. նա փոխադարձություն է պահանջում։

«Կամ հին մարդ եղիր, կամ նոր մարդ, կամ բռնակալ, կամ դավաճանող»,— հնչում էր Սամսոնի ականջին Մելանիայի վերջին խոսքերը։ Ո՞րը լինել. բռնակա՞լ, թե՞ դավաճանող։ Դավաճանել Մելանիային։ Օ, ո՛չ. այս չի կարող անել Սամսոնը։ Նրա հայացքով տղամարդուն ներելի է անել ամեն ինչ, քանի որ ամուրի է, իսկ երբ մի անգամ մարդ ամուսնացավ, պիտի հավատարիմ մնա ամուսնական առագաստին։ Ոչ, Սամսոնը դավաճանել չի ուզում, նա մինչև անգամ զզվում է այս մտքից։ Եվ վերջապես, ինչպես դավաճանել։

«Ինչպե՞ս», կրկնում էր Սամսոնը դառն կսկիծով։ Այս բառի մեջ նա զգում էր մի թունալի հեգնություն, մի սոսկալի ծաղր։ Դավաճանել. այո՛, Սամսոնի համար հասկանալի է, թե ի՛նչ էր ուզում ասել Մելանիան այս բառով...

Նա շրթունքները անխնա կրծոտում էր մի ծանր, անտանելի մտքից, մի ցավի գիտակցությունից, որի համար դեղ չկար. ուշ, անիրավ օրենքներ բնության, միթե չկա ոչ մի փրկարար միջոց ձեր քայքայիչ զորության դեմ։ Չկա, նա բոլոր միջոցները փորձել է արդեն և հիասթափվել...

Ուրեմն բռնակա՞լ դառնալ։ Փակե՞լ Մելանիային տանը, գոռա՞լ, հայհոյե՞լ, ծեծե՞լ։ Եվ ինչո՞ւ չէ։ Եթե մինչև այժմ Սամսոնը կատարյալ ազատություն է տվել կնոջը՝ ապրել ուզածի պես, արել է հակառակ իր հայացքների, միայն այն պատճառով, որ սիրել է նրան, չի կամեցել, կամ ավելի ճիշտը, չի կարողացել վշտացնել այդ երիխային։ Այժմ Մելանիան ինքն է ասում, թե ձանձրացել է այդ ազատությունից։

Հարգանքի զգացումը ավելի է ճնշում նրան, քան ատելության ուժը։ Սամսոնի «լավ մարդ» լինելը տանջում է նրան։ Օ՜հ, այժմ միայն Սամսոնը հասկանում է այս բանը։ Լավ մարդու դեմ մեղք գործելը այնքան հեշտ չէ, որքան «բռնակալի կամ դավաճանողի» դեմ։ Խիղճը թույլ չի տալիս։ Թող Սամսոնը վատ մարդ դառնա. մանավանդ վատ հոչակվի հասարակության մեջ, այն ժամանակ Մելանիան իրան ազատ կհամարի և... Իսկ այժմ կաշկանդված է...

Այս մտքերի ազդեցությամբ Սամսոնը զգում էր այնպիսի կսկիծ, որի նմանը երբեք չէր զգացել։ Այնինչ նա դառն

օրեր էր տեսել։ Եղել էր աղբատ, անպաշտպան, կրել էր մարդկային արհամարհանքների ծանրությունը։ Դառնալով վաճառական, երկու անգամ մոտիկից տեսել էր առևտրական աշխարհի համար այն սոսկալի վիշապի աչքերը, որ կոչվում է սնանկություն։ Լսել էր պարտատերերի ծաղրն ու հայհոյանքները։ Իբրև սիրող որդի, քառասունութ ժամ դիտել էր մահամերձ մոր տանջանքները։ Իբրև սիրող հայր, կրել էր առաջին զավակի մահվան հարվածը։ Նա տեսել էր և ուրիշ շատ թշվառություններ, բայց երբեք այնպես չէր տանջվել, որպես այժմ, երբե՞ք։

Նա երևակայում էր իրեն բռնակալ ամուսնու դերի մեջ և ինքն էլ սոսկում էր բոլորից, ինչ որ կարող էր և ընդունակ էր անելու այդ դիրքում։ Մինչև այժմ նա խանդել էր, այո՛, բայց խանդել էր միայն Մելանիայի երիտասարդությանը։ Իսկ այժմ հանկարծ առաջ է գալիս մի գարշելի, մի դժոխային կասկած— արդյոք, Մելանիան չի՞ դավաճանել։

Եվ եթե դավաճանել է, ո՞վ է նրան մոլորեցնողը։ Վերջին ժամանակ նա այնքան հեռու է պահում իրեն տղամարդկանց ընկերությունից, որ դժվար է կասկածել որևէ մեկի մասին։

Փիրուզյա՞նը— անցավ հանկարծ Սամսոնի մտքով։ Ինչո՞ւ չէ. մի՞թե նա երիտասարդ չէ։ Բայց ոչ, այդ անկարելի է, ի՞նչ անպիտան, ի՞նչ հանցավոր միտք։ Փիրուզյանը հարգում է Սամսոնին այնքան, վերաբերվում է Մելանիային այնպիսի պատկառանքով, Մելանիան սառն է դեպի նա այնչափ, որ ամոթ է անգամ կասկածել նրանց հարաբերությունը։

Սակայն, որքան Սամսոնը աշխատում էր դուրս հանել մտքից այդ մարդուն, այնքան նրա երիտասարդ ու թարմ կերպարանքը սպառնում էր նրան...

Այսպես տևեց մի ամբողջ շաբաթ։ Բանը հասավ այնտեղ, որ Սամսոնը ցանկացավ կրճատել Փիրուզյանի այցերը։ Այս նպատակով նա դրականապես հրաժարվեց անտառի կապալից հենց աճուրդի օրը։ Փիրուզյանը չհասկացավ նրա իսկական միտքը, միայն մութ կերպով զգաց, որ Սամսոնի մեջ վերջին օրերը կատարվում է ինչ-որ փոփոխություն։ Նա զգուշացավ և մի քիչ կրճատեց իր այցերը։

Այժմ Սամսոնը կասկածով էր վերաբերվում Մելանիային, հետևում էր նրա յուրաքանչյուր քայլին։ Նա տակավին չէր վարվում իբրև բռնակալ, բայց արդեն մոտ էր այդ աստիճանին։ Եվ մերձենում էր առանց ինքնաբեր որոշման, այլ այնպես, անգիտակցաբար։ Նա կարծում էր, որ Մելանիան զըզջում է իր արածների մասին և շուտով կսկսի բողոքել մարդու մի քանի թեթև խստությունների դեմ։ Բայց պատահեց հակառակը։ Մի օր Սամսոնը Մելանիային արգելեց ինչ-որ պարերեկույթ գնալու հենց այն պահին, երբ տիկինն արդեն հագնված էր և դրսում սպասում էր լծված կարեթը։ Մելանիան իսկույն ուսերից դեն ձգեց մուշտակը, ասելով.

— Շա՛տ լավ, եթե չես թողնում՝ չեմ գնալ։

Սամսոնը զղջաց. նա փորձում էր միայն իր ուժը։

— Գնա՛, քանի որ պատրաստվել ես,— ասաց նա։

Բայց Մելանիան սկսեց նրա առջև մեկ-մեկ դեն ձգել իր արդուզարդը։

— Գնա՛, ասում եմ,— կրկնեց Սամսոնը։

— Որ արգելում ես, ի՞նչպես գնամ։

— Չեմ արգելում։

— Ո՛չ, արգելում ես։

Սամսոնը բարկացավ, ձայնը բարձրացրեց։

— Ասում եմ քեզ, որ թույլ եմ տալիս։

— Թույլ ես տալիս, բայց ինքդ գոռում ես։ Ունիս իրավունք, գոռա՛։

— Մելա՛նիա,— գոչեց Սամսոնը, ձայնը ավելի բարձրացնելով.— մի՛ հանվիր։

— Արդեն հանվել պրծել եմ։ Մազերս էլ բաց արի։ Ը՛հը, կատաղում են, աչքերդ կարմրում են, բռունցքներդ սեղմում ես։ Չլինի՞ թե ուզում ես ծեծել, հաա՞. ծե՛ծիր, ունիս իրավունք։

Այնինչ՝ Սամսոնը ոչ կատաղած էր, ոչ աչքերը կարմրել էին, ոչ մանավանդ բռունցքները սեղմել։ Նա միայն բարկացած էր։

— Ծեծե՞լ,— կրկնեց նա,— ժամանակ-ժամանակ այնպիսի բաներ ես ասում, որ ձեռներս քոր են գալիս։

— Ավելի լավ, ավելի լավ։ Ես դեմ չեմ, ծեծի՛ր, ծեծի՛ր,

ինչքան քեֆդ է։ Ես մի խեղճ, անպաշտպան կնիկ եմ, ծեծի՛ր...

Եվ նա սկսեց հեկեկալ, ընկնելով թախտի վրա։ Սամսոնը ակամա մեղմացավ. ավելի. նա պատրաստ էր մոտենալ, գրկել ու համբուրել Մելանիային, մինչև անգամ ներումն խնդրել։ Բայց զսպեց իրեն. թող չկարծի այդ կինը, թե իր ամուսինը շատ էլ թուլամորթ է։ Նա ասաց.

— Դու խելագարվել ես։

— Խելագարվել եմ, այո՛,— հաստատեց Մելանիան,— իմ տեղը ո՞վ չի խելագարվիլ։ Ուրեմն, փակիր ինձ տանը, մի՛ թողնիր դուրս, կարող եմ գժություններ անել, հասկանո՞ւմ ես, կարող եմ գժություններ անել...

Այսպիսի տեսարանները կրկնվեցին մի քանի անգամ։ Եվ ամեն անգամ Մելանիան, կարծես, աշխատում էր Սամսոնին տրամադրել այնպես, որ մարդ կորցնի համբերությունը, կատաղի և վերջապես, բռունցքը բարձրացնի նրա գլխին։ Իսկ Սամսոնը դեռ կարողանում էր իրեն զսպել։ Նա ուրիշ բան էր մտածում...

X

Այն օրից, երբ Սամսոնի սրտում կասկած ծագեց, կամենում էր Մելանիայի հետ խոսել Փիրուզյանի մասին։ Նա ուզում էր իմանալ կնոջ կարծիքը այդ մարդու վերաբերմամբ և գուցե հենց սեփական խոսքերով բռնել նրան։

Մի օր նա հարցրեց.

— Մելա՛նիա, ինչո՞ւ Արտյուրն էլ առաջվա պես շուտ-շուտ չի գալիս մեր տուն։

— Ես ի՞նչ գիտեմ, հարցրու իրանից։

— Իսկ ես գիտեմ։ Նա քեզանից վիրավորվել է։

— Ինչո՞ւ։

— Լավ չես ընդունում նրան,— պատասխանեց Սամսոնը և երկիմաստ հայացքով նայեց կնոջ երեսին։

— Ե՞ս, թե՞ դու,— արտասանեց Մելանիան, չշփոթվելով ամուսնու համառ հայացքից։

— Այո, ճշմարիտ ես ասում. ես էլ լավ չեմ ընդունում նրան։ Ուզո՞ւմ ես միտքս իմանալ. այո, շատ ուրախ եմ, որ նա հիմա քիչ-քիչ է երևում իմ տանը։

— Պատճա՞ռը։

— Հենց այնպես։ Մինչև անգամ լավ կլինի, որ իսկի էլ չգա այսուհետև։

— Դու այդ ուզո՞ւմ ես։

— Իսկ դու չե՞ս ուզում։

— Ինձ թո՛ղ, աստված սիրես։ Ազգականը քոնն է, դո՛ւ ասա, ուզո՞ւմ ես, որ նա իսկի չգա մեր տուն։

— Ուզում եմ,— պատասխանեց Սամսոնը հանկարծ, փորձի համար։

— Լավ,— ասաց Մելանիան և լռեց։

Հետևյալ օրը Փիրուզյանն եկավ։ Սամսոնը տանը չէր։ Մելանիան հրամայեց սպասավորին՝ հայտնել, թե պարոնը և տիկինը տանը չեն։ Մինչդեռ սպասավորը նախասենյակում հաղորդում էր այս խոսքերը Փիրուզյանին, նա անմիջապես գոչեց.

«Ժորժիկ, Ժորժիկ, ապա թե կարող ես ինձ բռնիր»։ Եվ սկսեց վազվզել, բարձրաձայն ծիծաղել։

Մի ժամ անցած՝ նա իր արարքը պատմեց Սամսոնին։

— Ուրեմն Արտյուրն իմացավ, որ դու տա՞նն ես,— հարցրեց Սամսոնը զայրանալով։

— Այո, տանը և առողջ։

Սամսոնի աչքերը կատաղությունից փայլեցին.

— Մելա՛նիա, դու քանի գնում, խելքդ կորցնում ես,— գոչեց նա,— ինչո՞ւ համար ես ինձ խայտառակում իմ ազգականի մոտ։

— Ինքդ ուզեցիր, որ նա մեր տունը ոտ չդնի։

— Ես... կատակ էի անում։

— Կատա՞կ, հա՞, դու... կատա՞կ,— հեգնաբար ծիծաղեց Մելանիան,— մի՞թե դու կատակ անել էլ գիտես, չէի իմանում, ներողություն։

— Ես քեզ փորձելու համար ասացի, թե չեմ ուզում Արտյուրին մեր տանը տեսնել։

— Ինձ փորձելու համա՞ր։

— Մելա՞նիա։

— Ինձ փորձելու համար,— կրկնեց Մելանիան, ինքն իրեն կորցնելով,— ա՜, ուրեմն, ուրեմն... դու ինձ կասկածո՞ւմ ես։

— Այո՛, քեզ կասկածում եմ. չի՞ կարելի քեզ կասկածել ինչ է։

Մելանիայի աչքերը պսպղացին։ Նա կամեցավ հեկեկալ, բայց ճիգ արավ և իրեն զսպեց։ Նա միայն ասաց.

— Այդ էր պակաս... կասկածել ինձ...

— Ինչո՞ւ, դու կին չե՞ս, ինչպես բոլոր կանայք։

— Ես մի անբախտ կին եմ, ուրիշ ոչինչ,— արտասանեց Մելանիան շնչասպառ։

— Անբա՞խտ,— կրկնեց Սամսոնը դառն հեգնանքով,— եթե դու անբախտ ես, կկամենայի իմանալ՝ ով է բախտավոր քո ծանոթներից։ Օրը մի տեսակ կերակուր ուտո՞ղը, թե տուրին մի ձեռք հագուստ չունեցողը։ Ո՞ւմ է նախանձում ամբողջ քաղաքը. քե՞զ, թե՞ մի ուրիշին։

— Սամսոն, միամիտ մի՛ ձևանալ։ Դու շատ լավ գիտես, թե բախտավորությունը լավ ուտել-խմելու ու շքեղ հագուստների մեջ չէ։

— Կկամենայի գիտենալ՝ այն ի՞նչ է, որ մեր դարում չի կարելի ունենալ դրամի զորությամբ։

— Ի՞նչ է,— կրկնեց Մելանիան սրտի կսկիծով,— ի՞նչ է...

Եվ մի սուր հայացքով ուղիղ նայեց ամուսնու աչքերին։ Սամսոնը հասկացավ նրա թունալի, բայց արդարացի միտքը։ Հասկացավ և շրթունքները կրծոտելով, լռեց։

— Լռո՞ւմ ես,— մրմնջաց Մելանիան և նույն վայրկյանին մի երկարատև հարվածող ծիծաղ դուրս թռավ նրա կրծքից։

— Մելա՛նիա,— գոչեց Սամսոնը խռպոտ ձայնով,— դու չափ ու սահմանդ կորցնում ես։ Մելա՛նիա, մարդ չպիտի մոռանա իր անցյալը։

Այս արդեն Մելանիայի կծու ակնարկի պատասխանը չէր, այլ մի տեսակ փախուստ բուն խնդրից...

— Ի՞նչ ես ուզում ասել դրանով, պա՛րզ խոսիր...

— Ժամանակն է հասկանալու, որ քեզ նման երիտասարդ

ու գեղեցիկ կանայք հազարավոր են, իսկ քեզ պես ապրում է հազարից մեկը... Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում...

Հասկանո՞ւմ է, արդյոք, Մելանիան։ Ինչպե՞ս չհասկանալ, երբ մարդը խոսում է այնքան պարզ, երբ նրա յուրաքանչյուր բառի, ձայնի ամեն մի հնչյունի մեջ զգացվում է միլիոնատիրոջ թունալի արհամարհանքը դեպ մի կնոջ չքավոր անցյալը։ Մելանիան զինաթափ եղավ, գլուխը թեքվեց կրծքին, ձեռները թուլացան։ Այսպես, ուրեմն, հարվածի փոխարեն հարված և ավելի զորեղ։ Եթե նա Սամսոնից երիտասարդություն է պահանջում, Սամսոնն էլ պահանջում է նրանից հիշել անցյալը։ Նրան ողորմություն են արել, դուրս բերել չքավորությունից և հարուստ ու չքեղ ապարանք մտցրել։ Նա երախտամոռ է և իր վիճակի համար փոխանակ շնորհակալ լինելու՝ հանդիմանում է բարերարին։

Մի քանի վայրկյան Մելանիայի մտքերը շփոթվեցին։ Սակայն մի բան նրա համար պարզ էր ավելի, քան երբևէ. այն, որ վերջապես հասել է ժամանակը, երբ պիտի երես առ երես կանգնի այդ մարդու դեմ անդիմակ, և ասի բոլորը, ինչ որ կուտակվել է սրտում վերջին երկու-երեք տարվա ընթացքում։

XI

Նա ձեռքով տրորեց ճակատն ու աչքերը, կարծես, ուշը ժողովելու համար։ Ա՜խ, ուրեմն Սամսոնը նրան բարերարությո՞ւն է արել, ամուսնանալով նրա հետ։

— Եթե երեսովս պիտի տայիր աղքատությունս, ինչո՞ւ ամուսնացար,— գոչեց նա,— ինչո՞ւ ամուսնացար։

— Երևի նրա համար, որ դու էլ երեսովս տաս ծերությունս,— հեգնեց Սամսոնը։

— Ես ունիմ իրավունք, դու չունիս։ Դու քո կամքով ամուսնացար, իսկ ինձ ամուսնացրին։ Հասկացի՛ր զանազանությունը։ Դու ինձ փողով գնեցիր իմ ծնողներից...

— Թող չծախեին... Բայց լռիր, բավական է։

Լռե՞լ։ Ոչ, առանց այդ էլ երկար ժամանակ է լռել։ Հիմա առիթ են տալիս խոսելու և պիտի խոսի։ Նա միշտ տանջ-

վել է, միշտ, թեև ուրիշները նախանձել են նրան՝ այսինքն՝ նրա ադամանդներին ու տուալետներին, կառքերին ու ձիերին, ճաշերին ու ընթրիքներին։ Նա ծիծաղել է, երգել, նվագել, թռչկոտել, բայց տանջվել է։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ ես տանջվել,— հարցրեց Սամսոնը։

— Որովհետև չեմ կարողացել քեզ սիրել, ուզեցել եմ սիրել, չեմ կարողացել։

— Շնորհակալ եմ, որ գոնե ուզեցել ես սիրել։

— Ես կատակ չեմ անում,— շարունակեց Մելանիան,— սրտիս ցավն եմ հայտնում։ Մա՛րդ. դու ապրել ես ու վերջացրել կյանքդ, իսկ ես նոր եմ սկսում ապրել, հասկանո՞ւմ ես, նոր-նոր միայն։ Չէ՞ որ քսանչորս տարեկան եմ, ա՛նաստված, ինչպե՞ս ապրեմ քեզ հետ։ Ինչո՞վ ես ուզում ինձ բախտավորեցնել։ Բազմաթիվ ծառաներո՞վ, այս չքեղ տնո՞վ, թանկագին հագուստներո՞վ, ոսկով ու քարեղենո՞վ։ Լսի՛ր, ես այն կանանցից չեմ, հասկանո՞ւմ ես, չեմ էլ ուզում լինել։ Չեմ ուզում ուտել ամուսնուս հարստությունը, սիրել ուրիշներին։ Ի՞նչ ես աչքերդ պսպղացնում։ Ի՞նչ ես կատաղում, մի՞թե չգիտես, որ կան այս տեսակ կանայք։ Ես ինքս ճանաչում եմ օրիորդներ, որ երազում են գտնել հարուստ ու ծեր ամուսիններ, որպեսզի նրանց փողերը ծախսեն, իսկ սիրեն ուրիշներին։ Այո՛, կան, շատ կան այդպիսիները, քեզ էլ է հայտնի, որ կան։ Բայց ես չեմ ուզում նրանց օրինակին հետևել, հասկանո՞ւմ ես, չեմ ուզում։

Նա միայն աշխատել է ինքն իրեն խաբել։ Սկզբում, երբ սկսեց ճանաչել իրեն, հասկանալ իր անբախտությունը, ուզում էր իր նման շատ-շատերի պես լուռ խոնարհվել ճակատագրի առջև։ Բայց չկարողացավ։ Հետո փափագեց աշխարհ տեսնել, իմանալ՝ ինչպես են ապրում ժամանակակից հարուստ կամ արիստոկրատ համարված կանայք։ Մի տարվա մեջ նա շատ բան տեսավ, շատ բան ուսումնասիրեց և այն, ինչ որ տեսավ ու ուսումնասիրեց, շուտով զզվեցրեց նրան։ Այնուհետև աշխատեց գլուխը խաբել հասարակական գործերով։ Եվ ահա կես տարի, միայն կես տարի անցած՝ այսօր այս էլ է նրան զզվեցնում։ Մարդիկ երեսին կեղծավորում են, հետևից ծաղրում, երեսին խելոք, լուսավորված կին համարում, հետևից —

փառամոլ, parvenue, выскочка։ Նրան չարախոսում են, թե «սիրեկան է փնտրում»։ Այժմ նա ուզում է բոլորից և ամեն բանից երես դարձնել ու ապրել ինքն իր սրտի համար, ապրել սիրող կնոջ կյանքով։ Եվ հանկարծ... սեր չկա... պահանջ կա, բայց սեր չկա։ Իսկ քանի որ սեր չկա, ինչի՞ է նման կյանքը և ի՞նչ օգուտ հարստությունից։

— Ասա՛, ի՞նչ օգուտ, որ այն էլ երեսովս ես տալիս։ Չեմ ուզում քո հարստությունը, չեմ ուզում, երդվում եմ Ժորժիկիս անունով։ Խլիր բոլորն ինձանից և փոխարենը տուր ինձ կյանք, ո՛չ թե հարուստ, այլ բախտավոր կյանք։ Ես զգալ եմ ուզում ու ապրել։ Ես ուզում եմ իմանալ, ինչ ասել է երիտասարդական սեր, ինչ ասել է առհասարակ սեր...

— Ասա, որ ուրիշ տղամարդ ես ուզում,— ընդհատեց Սամսոնը կոպտաբար։

Եվ հոգու խորքում զգաց, որ զրպարտում է։

Մի՞թե եթե Մելանիան ուրիշ տղամարդ ուզենա, չի՞ կարող գտնել գաղտնի, և մի՞թե եթե այդպիսի հանցավոր միտք ունենա, այդքան պարզ կխոսի։ Ո՛չ, Սամսոնն ավելի ճիշտ կասեր, թե գոնե նույն խոսքերն արտասաներ առանց «ուրիշ» բառի։

— Եթե նույնիսկ այդպես լիներ,— գոչեց Մելանիան անսովոր համարձակությամբ,— ի՞նչ կա զարմանալու. միթե չե՞ս զգում, որ ունիմ իրավունք։

— Մելա՛նիա,— գոչեց Սամսոնը, բոլորովին բորբոքվելով խելակորույս կնոջ հանդուգն խոսքերից,— խայտառա՞կ կին, բավակա՞ն է...

— Ինչո՞ւ խայտառակ։ Որ ուրիշների պես չեմ թաքցնում զգացածս ու մտածածս։ Որ երեսիդ չե՞մ շողոքորթում ու հետևիցդ խաբում ու անպատվում քեզ։ Ասա՛, դու ինքդ երիտասարդ հասակումդ չե՞ս սիրել։ Եթե չես սիրել — դու մարդ չես, եթե սիրել ես — ապրել ես։ Բայց ի՞նչ եմ ասում։ Դու սիրել էլ ես, սիրահարվել էլ ու ուրիշ բաներ էլ արել։ Միտդ բեր ասածներդ, հիշիր ինչեր էիր պատմում երբեմն, անկեղծության բոպեներին։ Ա՛հ, ամաչո՞ւմ ես։ Ինչո՞ւ չթողեցիր, որ ես էլ սիրեմ, ես էլ ապրեմ։ Ինչո՞ւ նոր ծլող ծաղիկը կարեցիք

ոսկի մկրատով։ Ինչո՞ւ ինձ խլեցիր ծնողներիս գրկից այն ժամանակ, երբ ես երեխա էի։ Ինչո՞ւ, ասա՛, ինչո՞ւ։

Նա թուլացած ընկղմվեց գահավորակի վրա և սկսեց հեկեկալ։

Սամսոնը մի ձեռը բազկաթոռի կոնակին հենած՝ մյուսը սեղմել էր ճակատին և նայում էր հատակի մի կետին։

Հեկեկանքը դադարեց։ Մելանիան, աչքերը սրբելով, ոտքի կանգնեց, մի վայրկյան մտածեց՝ անշարժ կանգնած։ Հետո ձեռով մի դրական շարժումն անելով անցավ արագ քայլերով յուր ննջարանը, որ կից սենյակն էր։ Բաց արավ պահարանը, վերցրեց այնտեղից բոլոր յուր ակնեղենները, վերադարձավ և շպրտեց հատակի վրա, գոչելով.

— Սրանցո՞վ ես պարծենում, սրանցո՞վ։ Վերցրո՛ւ, քեզ լինի, չեմ ուզում...

Այժմ Սամսոնը նստած էր գահավորակի վրա լուռ, անշարժ։ Չգիտեր ինչ ասի, լեգուն կաշկանդվել էր։ Կնոջ խոսքերի մեջ նա զգում էր որոշ չափի ճշմարտություն, մանավանդ իր անցյալի վերաբերմամբ, որի դառն հետևանքը կրում էր այժմ։ Գունատ էր, որպես աշնան ծառից պոկված տերև։ Աչքերը անգիտակցաբար հառեց ցիրուցան սփռված օղերի, ապարանջանների, վզնոցների, մատանիների ու քորոցների վրա, որոնց խոշոր ու մանր ադամանդները գորգի վրա պսպղում էին նուրբ մանիշակագույն փայլով։ Եվ, կարծես, այս շինծու աստղերի մեջ էր որոնում իր թշվառության հիմքը։ Միթե այսպես չէ՞։ Միթե իր կյանքի լավագույն շրջանը այս ադամանդներին տիրանալու համար չէ՞ր գործադրել։ Նա կամեցավ առաջ հարստանալ, հետո բախտավորվել։ Ինչպե՞ս չհասկացավ, որ տիրելով մեկին. զրկվում է մյուսից, օրեցօր քայքայվում և, գլուխը քաշ ոսկիներ հավաքելով, անգիտակցաբար մերձենում է գերեզմանին։

Ինչպե՞ս չզուշակեց, թե փողով կյանք չի կարելի գնել, թե ժամանակը գետ է, որի ջուրը երբեք հետ չի դառնում։ Ինչո՞ւ յուր գոյության վաղվոան շրջանը անցկացրեց սիրուհիների ու անառակ կանանց գրկերում, իսկ կնոջ համար պահեց նրա ողորմելի մնացորդը։ Եվ ահա այսօր նրա երեսին են շպրտում այս ադամանդներն ու փոխարենը պահանջում երիտասարդու-

թյուն... առնական ուժ։ Պահանջում է այն, որ նա միայն ունի իրավունք պահանջելու, որովհետև նա սիրուհի չէ, այլ կյանքի հավիտենական ընկերուհի...

— Շնորհակալ եմ,— հնչեց նրա ականջին Մելանիայի արդեն փոքր-ինչ հանգարտված ձայնը,— շնորհակալ եմ արած լավությունների համար։ Բայց այսուհետև չշարունակես, խնդրում եմ, պահանջում։ Այժմ քո բարերարությունը ինձ տանջում է, հասկանո՞ւմ ես, ուղղակի տանջում...

Եվ մի վայրկյան կանգ առնելով, ավելացրեց.

— Վաղը կգրեմ ծնողներիս, որ այսուհետև էլ իրավունք չունեն քեզանից օգնություն ստանալու։ Ես չեմ ուզում հարստահարվել, դու էլ մի՛ հարստահարվիր...

XII

Մելանիան կատարեց իր խոսքը։ Հետևյալ օրն իսկ գրեց մանրամասն նամակ մորը։ Նկարագրեց իր ընդհարումը Սամսոնի հետ. պարզեց մինչև այժմ գաղտնի պահած վիշտը, վերջապես, հայտնեց պարզապես, թե այժմ անբախտ է, այնքա՞ն անբախտ, որ հաղիվ թե կարողանա այսուհետև ապրել այդ մարդու հետ։

Երեք օր անցած՝ պատասխանի փոխարեն անձամբ եկան նրա ծնողները։ Երևի, արդեն շատ ադդու էր գրված Մելանիայի նամակը։ Դա մի ոչ այնքան ծեր զույգ էր— մարդը գերգեր, մոտ հիսուն տարեկան, կինը, մարդուց հաղիվ չորս-հինգ տարով փոքր, տակավին թարմ, նույնիսկ գեղեցիկ։

Նրանք անմիջապես բացատրություն պահանջեցին իրենց աղջկանից։ Մելանիան ասաց, թե բոլորը գրել է նամակում և ուրիշ ասելիք չունի։

Սամսոնը ընդունեց իր զոքանչին ու աներոջը սառը, չկամեցավ նրանց հետ խոսել իր ընտանեկան ընդհարման մասին։ Զույգը վշտացավ։ Հետևյալ օրը նա որոշեց խնդիրը, ինչպես էլ լինի, բոլորովին պարզել։ Այս անգամ Մելանիան համառոտ ու գրական եղանակով կրկնեց բոլորը, ինչ որ գրել էր նամակում։ Նա այլևս չի կարող Սամսոնի հետ ապրել, նրա

հացն ուտել. խիղճը տանջում է, զգում է իրեն ստորացած մի մարդու առջև, որին չի սիրում և երբեք չի սիրել և չի կարող սիրել։

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ,— գոչեց տիկին Նազանին՝ Մելանիայի մայրը։

— Որովհետև ծեր է,— պատասխանեց Մելանիան այնքան լուրջ ու կտրուկ եղանակով, որ թույլ չէր տալիս ոչ մի հակաճառություն։

— Հը՞մ,— փնթփնթաց Սերգեյ Արտեմիչը՝ Մելանիայի հայրը,— լա՛վ պատճառ է, օրհնյա՛լ լինիս։

Մելանիան մի սուր հանդիմանական հայացք ձգեց հոր երեսին և հարցրեց.

— Քանի՞ տարեկան ես, պապա։

— Քառասունուինն լրացավ անցյալ ամիս։

— Իսկ դո՞ւ, մամա։

— Քառասունչորս։

— Քառասունինը — քառասունչորս, զանազանությունը հինգ տարի. հիսունչորս — քսանչորս, զանազանությունը երեսուն տարի։ Պապա, աղջկադ ամուսինը քեզանից ծեր է։ Ասա, ինչո՞ւ ինձ տվեցիք այդ մարդուն։

— Սամսոն Ֆրանգուլյանը քաղաքի ամենալավ փեսացուներից մեկն էր. խելոք, օրինավոր մարդ ու միլիոնների տեր...

— Եվ ծեր,— ավելացրեց Մելանիան անսովոր համառությամբ։

— Չեմ հասկանում, ինչ ես մի գլուխ կրկնում ծե՛ր, ծե՛ր, ու ծե՛ր,— գոչեց տիկին Նազանին,— լա՞վ կլիներ՝ եթե քեզ տված լինեինք մի քաղցած երիտասարդի։

— Այո, մամա, ավելի լավ կլիներ։

— Այժմյան փչացած երիտասարդներից մեկի՞ն,— հարցրեց Սերգեյ Արտեմիչը։

— Թեկուզ մի շառլատանի,— պնդեց Մելանիան նույն համառությամբ։

— Սերգեյ,— դարձավ տիկին Նազանին իր կողակցին,— դու հեռացիր, թող մեզ մենակ։

Սերգեյ Արտեմիչը հասկացավ ամուսնու միտքը և շտապեց կատարել նրա հրամանը։

Նազանին նստեցրեց աղջկան իր մոտ, գահավորակի վրա և մի ձեռով գրկեց նրա մեջքը, մյուսով շոյելով մազերը, ասաց.

— Հիմա կարող ես սիրտդ բաց անել։ Ես կնիկ եմ, ամեն բան կհասկանամ, մի՛ ամաչիր։

— Մա՛մա, թո՛ղ ինձ,— արտասանեց Մելանիան, երեսն ամոթով մի կողմ դարձնելով,— առանց այդ էլ ես շատ բան ասացի։

Տիկին Նազանին բարվոք համարեց ուղղակի դիմել բուն խնդրին։

— Մելա՛նիա,— ասաց նա, հառաչելով,— մի բան հարցնեմ, չնեղանաս։ Ասա՛, քեզ խելքից հանող չկա՞։ Էհ, ո՛վ գիտե, Թիֆլիսն է։

— Ի՞նչ ես ուզում ասել։

— Էհ, մեջտեղը մի ուրիշ տղամարդ չկա՞։

— Հը՞մ,— արտասանեց Մելանիան, դառնությամբ գլուխը երերելով,— գիտեի, որ ա՛յդ պիտի հարցնես։ Ո՛չ, մամա, ես ոչ ոքի չեմ սիրում և չեմ էլ ուզում սիրել, քանի որ այս տանն եմ ապրում։

— Երդվի՛ր։

— Երդվում եմ Ժորժիկիս անունով։

— Ոչ ոքի չես սիրում ու էլի մարդուդ հետ չես ուզում ապրել։ Չեմ հասկանում։ Մեծո՞ւմ է քեզ Սամսոնը։

— Երանի թե ծեծեր...

— Հետդ վա՞տ է վարվում։

— Ո՞չ։

— Ատո՞ւմ է քեզ։

— Ընդհակառակը. հիմա ավելի է սիրում։

— Ազատություն չի՞ տալիս։

— Այնքան է տալիս, որ ես ինքս զզվել եմ։

— Սրտիդ ուզածը չի՞ կատարում։

— Կատարում է։

— Գաթեյի է սիրուհինե՞ր է պահում։

— Ո՛չ, ո՛չ, մամա, այդ բոլորից և ո՛չ մեկը։

— Ուրեմն կամ ես ծերացել եմ ու ոչինչ չեմ հասկանում, կամ դու խելագարվել ես։

— Մամա՛, միամիտ մի ձևանար, դու էլ կին ես, հասկացի՛ր դրությունս։ Մի բոպե միտդ բեր այն ժամանակը, երբ դու իմ հասակի էիր։ Միտդ բեր ու երևակայիր քեզ մի հիսունուչորս տարեկան մարդու գրկում։

— Հիսունչորս տարին տղամարդի համար ծերություն չէ։

— Բայց... Սամսոնը ծեր է, հասկացի՛ր, ծեր...

— Այդ ոչ ոք չի կարող ասել, նրան տեսնելով։

— Բայց ե՛ս եմ ասում, հասկանո՞ւմ ես, ե՛ս... Ա՜խ, մամա, ի սեր աստծու, խնայի՛ր ի՛նձ, մի՛ ստիպիր...

Մայրը նայեց աղջկա աչքերին և այնտեղ կարդաց նրա խոսքի վերջը։ Նա գլուխն անզոր թեքեց կրծքին։

— Ուրեմն,— արտասանեց նա կակազելով,— ուրեմն... Մելանիա...

— Երեխանե՞րը... առաջ, մամա, բայց հիմա... Ահ, բավակա՛ն է, վերջապես...

Այն, ինչ որ արտահայտում էին երիտասարդ կնոջ հուսահատական շարժումները, այնքան համոզիչ էին և այնքան միևնույն ժամանակ վշտալի, որ Նազանին բոլորովին զինաթափ եղավ և ուժասպառ թիկն տվեց գահավորակին։ Ավելի՛. նա զգաց խղճի խայթ. զգաց և կարեկցեց աղջկան։

Նույն օրն երեկոյան նա առանձնացավ իր կողակցի հետ, երկար ու երկար խորհրդակցեց։ Բայց խնդիրն անլուծելի էր։ Տիկին Նազանին փորձեց մարդուն համոզել՝ Սամսոնից բացատրություն պահանջելու։ Սերգեյ Արտեմիչը դրականապես մերժեց։

— Ամոթ է,— ասաց նա,— որ հարցնեմ էլ, միևնույն է, ոչինչ չի ասիլ...

— Հապա ի՞նչ անենք։

— Չգիտեմ։

Երկուսն էլ անզեն և անզոր նայեցին միմյանց երեսին։ Երկուսն էլ զգացին, որ գործված սխալն անուղղելի է և որ իրանք իրանց ձեռքով դժբախտացրել են իրանց հարազատ զավակին...

XIII

Սուր վիրավորանքի հետ Սամսոնը զգում էր նաև խղճի սուր խայթոց։ Որքան համարձակ լիներին Մելանիայի խոսքերը, այնքան իմաստն արդարացի էր։ Մեղադրանքը պարզ էր, հիմնավոր և... անհերքելի։ Ա՜խ, եթե միայն ծերությունը լիներ... Բայց ի՞նչ կարելի է առարկել մի անողոք ու սոսկալի փաստի դեմ, որի ծանրությունը նա զգում էր առանց Մելանիայի մութ ակնարկների էլ։ Ինչո՞վ իրան պաշտպանի, քանի որ գիտե՝ սիրելը քիչ է, պետք է ունենալ նաև սիրելու իրավունք, այսինքն՝ միջոց։

Դեռ ամուսնության երկրորդ տարին նա զգաց, որ շուտով պիտի զրկվի այդ միջոցից։ Եվ երբ զգաց, որ սկսում է զրկվել, շատ մտածեց, շատ աշխատեց ու չգտավ ոչ մի հնար բնության հարվածի դեմ։ Նա համոզվեց, վերջապես, որ ոչ ոք, ոչ ոք չի կարող օգնել իրեն այս դեպքում, թեկուզ զոհի իր բոլոր միլիոնները։ Ճակատագրի դա՞ռն հեգնանք. անբախտությունը սկսվեց հենց այն պահուն, երբ նա հույս ուներ ապրել մի նոր, ավելի հանգիստ, ավելի երջանիկ կյանքով...

Ի՞նչ անել այժմ, երբ նրանից պահանջվում է անկարելին։ Բաժանվե՞լ Մելանիայից, ազատությո՞ւն տալ պահանջողին՝ դնա ուր ուզում է, ապրի, ում հետ նա կամենում է։ Բավականանա՞լ ամուսնական կյանքի այն առաջին երկու-երեք կիսաբախտավոր տարիներով, երբ դեռ ուներ փոքրիշատե իրավունք իբրև ամուսին։

Մի պահ զգաց, որ եթե բարոյական քաջություն ունենա, պարտավոր է այդպես անել. չէ՞ որ չի կարելի առանց իրավունքի բռնի տիրանալ մի թարմ էակի կյանքին։ Սակայն... միայն մի պահ, հետո ինքը սարսափեց իր մտքից։ Բաժանվե՞լ Մելանիայից, մի էակից, որ զարդարում է նրա կյանքը և հյութ տալիս նրա չոր ու ցամաք գոյությանը։ Գցել նրան մի ուրիշի գի՞րկը և, դիտելով հեռվից, տանջվե՞լ բարոյապես, դառնալ ծաղրի ու խոսակցության առարկա՞... Օ՜օ, ոչ, ոչ։ այդ անկարելի է, այդ վեր է նրա ուժերից։ Ուրեմն ի՞նչ. ըստիպել երիտասարդ կնոջը կենակցե՞լ իր հետ, մի մարդո՞ւ, որին չի սիրում և երբեք չի՛ կարող սիրել, գուցե, իրավ, հակառակ իր ջերմ ցանկության։ Միթե անգթությո՞ւն չէ այդ։ Իսկ նա ոչ միայն գործում է այդպիսի անգթություն, այլև Մելանիայի երեսովն է տալիս այդ անգթությունը, համարելով նրան բարերարություն։

Եվ, հալածվելով այս մտքից, Սամսոնը տանջվում էր։ Արդեն առաջ էլ չէր սիրում հասարակություն, իսկ այժմ բոլորովին երես դարձրեց նրանցից։ Ոչ մի տեղ չէր գնում, ոչ ոքի չէր ընդունում, իսկ աներոջ ու զոքանչի հետ խոսել անգամ չէր ուզում։ Բնազդմամբ գուշակում էր, որ Մելանիան պարզել է նրանց իր վշտի գաղտնի պատճառը. մի բան, որից այնքան ամաչում էր Սամսոնը։ Ա՜հ, սարսափելի՜ դրություն։ ո՞ւմ հայտնի իր ցավը, ո՞վ կկարեկցի նրան և, որ ամենագլխավորն է, ո՞վ կարդարացնի նրա կապը Մելանիայի հետ։ Ոչ ոք։ Նա այս լավ գիտեր, ուստի լուռ ու մունջ փակվել էր ինքն իր մեջ։ Երբեմն նրա սրտում ծագում էր հուսո նշույլ. գուցե Մելանիան զղջա, ներում խնդրի անողոք կշտամբանքի համար և հաշտվի իր վիճակի հետ, դադարելով պահանջել անկարելին, անբնականը։ Բայց այս հույսն էլ նրան ոչինչ լավ ապագա չէր խոստանում։ «Հետո՞»... կրկնում էր նա, և գլուխը թուլացած թեքում էր կրծքին, ձեռները ընկնում էին ցած։ Այո՛, հետո՞, իսկ նրա անզորությո՞ւնը, որ անբուժելի է...

Տիկին Նազանին և Սերգեյ Արտեմիչը բարվոք համարեցին խնդիրը թողնել անորոշ և հեռանալ այն քաղաքը, որտեղից եկել էին։ Զգում էին, որ իրենց ներկայությունը անչափ նեղում է Սամսոնին, այնինչ ցավը դարմանելու և ոչ մի միջոց չէին կարողանում գտնել։

Ճանապարհ ընկնելու օրը Նազանին մի անգամ ևս փորձեց համոզել Մելանիային, թե ուրիշ հնար չկա, պետք է հպատակվել ճակատագրին։ Բայց զուր։ Մելանիան սառն եղանակով հարցրեց.

— Մամա, եթե մի օր վերադառնամ քեզ մոտ, կընդունե՞ս ինձ։

Նազանին սարսափեց։ Բայց զգում էր, որ դուստրը արդեն անսահման դժբախտ է, ուստի ճարահատյալ պատասխանեց.

— Ո՞ր ծնողը իր զավակին կթողնի փողոցում։

Մելանիան զգացվեց, փաթաթվեց մոր պարանոցին, համբուրեց և հետո սկսեց հեկեկալ, կրկնելով.

— Ախ, ի՞նչ անբախտն եմ, ի՞նչ անբախտն եմ։

Մի օր, նախաճաշից հետո սպասավորը Սամսոնին հայտնեց, որ Փիրուզյանը հարցնում է, կընդունի՞ նրան արդյոք։ Սամսոնը հրամայեց ընդունել։

Փիրուզյանը ներս մտավ նախկին բարեկամական ժպիտն երեսին, ամուր սեղմեց իր ազգականի ձեռը և նստեց նրա դեմուդեմ։ Սամսոնը, որ գրասեղանի բոլ գրաղված էր ինչ-որ հաշիվներով, թղթերը հավաքեց մի կողմ դրեց և հարցրեց՝ ուր է մնացել մինչև այժմ հյուրը։ Հայտնվեց, որ Փիրուզյանը վերջին երկու շաբաթը անց է կացրել Բաքվում, միայն այսոր առավոտ է վերադարձել։ Նա վճռել է նավթային գործերով զբաղվել և եկել է Սամսոնի աջակցությունը խնդրելու։

Սամսոնին հայտնեցին, որ նախաճաշը պատրաստ է։ Նա հյուրի հետ անցավ սեղանատուն։ Այնտեղ Մելանիան, սեղանի քով նստած, կերակրում էր Ժորժիկին։ Նա հյուրին ընդունեց անխոով, գլխի թեթև շարժումով պատասխանելով նրա խոնարհ բարևին։

Փիրուզյանը իսկույն գուշակեց, որ մարդ ու կնոջ հարաբերությունները լարված են։ Հոգու խորքում այս անգամ անկեղծ խղճաց Սամսոնին, նայելով նրա անսովոր մռայլ դեմքին։ Նա խոսում էր նավթային նոր շատրվանների և արդյունաբերական աժիոտաժի մասին։

Հանկարծ նա զգաց խղճի խայթ յուր հանցավոր միտումների պատճառով։ Նա զղջաց։ Բայց զղջաց ո՛չ այնքան որևէ բարոյական սկզբունքի հիման վրա, որքան այն մտքից, որ զուր էին իր հանդուգն միտումները և երբեք չեն կարող իրագործվել։ Մելանիայի ամբողջ էությունը հասկացնել էր տալիս նրան, թե շեղել այդ կնոջն ուղիղ ճանապարհից շատ էլ դյուրին չէ և թե ինքը շատ էլ ճիշտ գաղափար չի ունեցել նրա մասին։

Նա որոշեց զգույշ վարվել։ Ինչո՞ւ զուր տեղը զրկվի Սամսոն Ֆրանգուլյանի պես մի հզոր դրամատիրոջ բարեկամությունից այն ժամանակ, երբ իր նոր ձեռնարկելի գործի համար կարոտ էր նրա աջակցությանը։ Նա աշխատեց ցույց տալ

անտարբերություն դեպի Մելանիան և կարողացավ Սամսոնի սրտից ջնջել շար կասկածի վերջին նշույլը։

Մի շաբաթ անցած՝ նա դարձյալ այցելեց Ֆրանգուլյաններին։ Այս անգամ նկել էր վերջին հրաժեշտը տալու։ Նա թողնում էր Թիֆլիսը ու հեռանում Բաքու երկար ժամանակով։

XIV

Խորհում էր Մելանիան գիշեր ու ցերեկ և չէր կարողանում որևէ որոշում կայացնել։ Նա օր օրի վրա ավելի էր համոզվում, որ չէր կարող երկար ժամանակ մնալ անորոշ ու ծայր աստիճան լարված դրության մեջ։ Նա զգում էր, որ Սամսոնը նրա համար օտարանում է ոչ օրերով, այլ ժամերով և հեռանում է անվերադարձ։ Երկու ամուսինների մեջ բարձրանում էր մի պատնեշ, որին չէր կարող խորտակել ոչ մի առողջ բանականություն։ Եվ Մելանիան սկսեց վախենալ Սամսոնից, առաջին անգամ զգալով, նրա տանջալի լռության մեջ ինչ-որ չարագուշակ մի բան։ Մնալ այդ մարդու հետ մի հարկի տակ՝ թվում էր նրան և՛ վտանգավոր, և՛ զզվելի։ Ի՞նչ անել, արդյոք, թողնել նրան և վերադառնալ ծնողների՞ մոտ, թե՞ դիմել այն ապօրինի, այն վատթար և այն սովորական դարձած միջոցին իր դրության հետ հաշտվելու համար, որին դիմում են շատ շատերը։ Դավաճանության։ Դժվար իրագործելի էր թե՛ մեկը, թե՛ մյուսը։ Ի՞նչ պիտի պատասխաներ հարյուրավոր հետաքրքրվողների հարցին — «Ինչո՞ւ բաժանվեց»։ Պատճառ պիտի բերեր Սամսոնի ծերությունը։ Բայց չէ որ նրանք կարող էին ասել՝ «ո՞ւր էր քո խելքը ամուսնանալիս»։ Առարկել նրա ֆիզիկական անկարողությո՞ւնը։ Օհ, ոչ, այդ ամոթալի է, և նա չի կարող կրել հասարակության ծաղրն ու ծիծաղը։ Իսկ մնալ օրինական ամուսնու հարկի տակ, ուղել նրա մահը, խաբել և դավաճանել, դեմ էր նրա ամբողջ էությանը և կրկնակի վտանգավոր...

Եվ այսպես, այս երկդիմի դրության մեջ Մելանիան տառապում էր անսահման։

Այնինչ Սամսոնը՝ սիրելով Մելանիային դաժան սիրով

կատաղում էր ժամանակի և բնության դեմ այնպես, որ կարծես նրանց անողոք օրենքները հատկապես նրա համար էին հորինված։ Նա անիծում էր մարդկությունը և նրա հնարած բոլոր գիտությունները, որ անզոր էին նրա անողորության դեմ։ Եվ աշխարհը նրան թվում էր սառն, անհյուրընկալ։ Կյանքի նյութական շուքի մեջ զգում էր իրան խորթ, եկվոր և հարստության մեջ չքավոր, որպես մի արհամարհված մուրացիկ։ Գարնան մերձավորությունը բորբոքելով նրա օր օրի վրա սառչող արյունը, ավելի զգալի և ավելի դաժան էր դարձնում անփոխարինելի կորուստը։ Եվ, մարդկանցից փախչելով, ինքն իր մեջ զգում էր այնպիսի ամայություն, որ կարծես հոգին բաժանվել էր և դիտում էր մարմնի սառուցումը հեռվից։ Կենդանի կմախք, որ այրվում էր առանց ջերմանալու։ Նա հոգու ամբողջ կարողությամբ ատում էր բնությունը և բոլորը ինչ որ նորոգվում ու թարմանում էր նրա մեջ։ Ծառերի նորածիլ տերևները, ծտերի ծլվլոցը, եղանակի մեղմությունը, երկնի պայծառությունը և երկրի ժպիտը, բոլորը, բոլորը կարծես ծաղրում էին նրան անողոք և անամոթ ծաղրով։ Նա կկամենար տեսնել ամեն ինչ հնացած, թառամած և անզոր, ինչպես ինքը։ Նա պատրաստ էր, եթե ունենար գերբնական զորություն, մի հարվածով մեռցնել բոլոր կենդանի էակների մեջ կյանքը և բոլորին դարձնել իր պես այրվող կմախք։

Նա սկսեց ատել Մելանիային, չդադարելով սիրել նրան անզոր սիրով։ Երկու հակադիր, միմյանց ջնջող զգացումների մեջ հոգեպես բաժանվեց երկու տարբեր մասերի։ Մի ներքին ուժ դրդում էր նրան, ամեն անգամ Մելանիային հանդիպելիս, փաթաթվել նրա պարանոցին և անվերջ համբուրել, շոյել, միանալ և ձուլվել նրա հետ մեռելության ձուլարանում։ Մի ուրիշ ներքին ուժ թելադրում էր նրան. «Հարձակվիր այդ երիտասարդ կնոջ վրա, բռնիր նրա գեղեցիկ կոկորդը, խեղդիր, սպանիր և հետո սիրիր... նրա գերեզմանը»։

Այլևս պարզ էր նրա համար, որ յուր սիրո զգացման ամենաթույլ մի արտահայտություն Մելանիային պատճառում է զզվանք։ Եվ խոցոտված և արյունոտված ինքնասիրությունը ուժ էր տալիս նրան այդ զգացումը զսպելու, մինչդեռ ատելության բուռն զգացման դեմ օր օրի վրա դառնում էր անզոր,

անպաշտպան։ Նրա գլխի մեջ ծագում էին մեկը մյուսից մռայլ մտքեր, որոնք գլխավորապես պտտում էին մի առանցքի շուրջը։ Այդ առանցքը Մելանիայի երիտասարդությունն էր, մանավանդ գեղեցկությունը։ Օհ՜, անտեսանելի, անբմբռնելի զորություն, եթե չես կարող վերադարձնել նրա կորցրած առնականությունը, դարձրու այդ կնոջը նրա հասակին և թառամած արյունին համապատասխան մի էակ։ Այո, թող այժմ Մելանիան զրկվի իր գեղեցկությունից, որպեսզի նա այդքան չսիրվի և որպեսզի Սամսոնը այդքան չտանջվի, այսքան չխանդի և որպեսզի ամեն վայրկյան չմտածե՝ արդյոք Մելանիան մի ուրիշին չի՞ սիրում։

Մելանիայի ներքին անրացատրելի ահը զարգանում էր օր օրի վրա։ Այժմ ամեն անգամ Սամսոնին տեսնելիս՝ ցնցվում էր։ Արդեն նա իր անկողնակալը փոխադրել էր մի ուրիշ սենյակ և գիշերում էր առանձին և եթե չքաշվեր, ամեն գիշեր կկողպեր իր ննջարանի դռները։ Հակառակ նախկին սովորության, մերթ ընդ մերթ նա գիշերները հանկարծակի արթնանում էր և միշտ ականջ դնում դեպի կից սենյակը, ուր գիշերում էր Սամսոնը։

Ինքը Սամսոնը աշխատում էր շատ անգամ իրան նրանից հեռու պահել նամանավանդ այն պահերին, երբ ատելության զգացումը բորբոքվում էր նրա մեջ առանձին ուժով։ Այդ մոմենտներին մի շատ դաժան ցանկություն կլանում էր նրա հոգին և խլացնում առողջության ձայնը։ Նրա բանականությունը մթագնում էր և նրա առջև պատկերանում էր Մելանիայի այլանդակված մարմինը, օհ ոչ ամբողջը, այլ միայն երեսը... Չէ՞ որ այսպիսով և միայն այսպիսով կարող է լուծվել անլուծելին։

Նա լուռ պայքարում էր մի դիվային ցանկության դեմ, որ սակայն զարգանում էր օր օրի, ժամ ժամի վրա, և ավելի ու ավելի ենթարկում նրան իր զորությանը...

XV

Գիշերվա երկու թե երեք ժամն էր։ Սամսոնը դեռ անքուն էր իր սենյակում։ Սեղանի վրա վառվում էր փոքրիկ լամպա-

ը, ազոտ լուսավորելով նրա մռայլ կերպարանքը։ Նա պառկած էր թիկնիվար տաճկական բազմոցի վրա, ձեռները գըլխատակը դրած։ Կար այդ պահին ինչ-որ չար, հրող շերտ նրա դեմքի վրա և աչքերի մեջ։

Նա ոտքի ելավ և սկսեց անցուդարձ անել։ Մերթ նա կրծոտում էր շրթունքները, մերթ ծանր հառաչում էր, մերթ նրա աչքերը պսպղում էին, մերթ կարծես մարում ինչպես հեռավոր փարոսի լույսը։

Նա վերցրեց սեղանի վրայից լամպարը, անցավ հաջորդ սենյակը, իր ննջարանը։ Այժմ այնտեղ երկուսի փոխարեն դրված էր միայն մի անկողնակալ, այժմ նա սառն էր, անհյուրընկալ, առմիշտ զրկված ամուսնական կյանքի մի ժամանակվա ջերմությունից։ Նա սկսեց ծուլորեն, կամաց-կամաց հանել հագուստը։ Դուրս բերեց ժիլետի գրպանից ժամացույցը, նայեց, դրեց անկողնակալի գլխի քով գտնվող փոքրիկ սեղանի վրա։ Գիշերվա երկուուկես ժամն էր։ Երբեք նա այդպես ուշ չէր պատրաստվել անկողին մտնելու։ Նա դեն ձգեց փողկապը, հանեց կոշիկները, հագավ հողաթափերը և դարձյալ սկսեց անցուդարձ անել։ Երկու անգամ նա մոտեցավ դռներին և ականջ դրեց հաջորդ սենյակը, որ առաջ Ժորժիկինն էր, այժմ Մելանիային ծառայում էր որպես ննջարան։

Գիշերային անդորր լռության մեջ լսվում էր երիտասարդ կնոջ առողջ ու կանոնավոր շնչառությունը։ Նա քնած էր խոր քնով — գոնե այնպես թվաց Սամսոնին, երբ կիսով չափ բաց արավ դռները և նայեց։ Փոքրիկ սեղանի վրա վառվում էր այն գեղեցիկ լամպարիկը՝ վարդագույն լուսամփոփով, որի լույսով Սամսոնը շատ անգամ էր սքանչացել Մելանիայի մարմնի գեղեցկությամբ։ Բայց երբեք, երբեք այդ մարմինը չէր եղել նրա աչքում այդքան գեղեցիկ, որքան այդ գիշեր։ Մետաքսյա դեմի-սեզոն վերմակի մի ծայրը հետ էր ծալվել և ցուցադրել նրա ուռուցիկ կուրծքը, որի վրա հանգչում էին խիտ մազերի ալիքավոր հյուսերը։ Վերև այդ մազերը նրա գլխի շուրջը կազմում էին մթին շրջանակի նման սքանչելի մի պսակ։ Աջ ձեռքը հանգիստ տարածված էր կողքով, իսկ ձախ ձեռը գլխի շուրջը կազմում էր մի ուրիշ շրջանակ։ Հագուրդ չստացած կենսասիրության ժպիտը շրթունքների վրա տալիս էր նրա

դեմքին ինչ-որ թախիծ, իսկ պայծառ ճակատը սքողված էր մազերի ստվերով։

Սամսոնը ներս մտավ կամացուկ, որպես մի հանցավոր՝ սրբության տաճարը։ Նա գալիս էր ոչ իր հանցանքները խոստովանելու ու քավելու, այլ գործելու մի նորը և այնպիսին, որի նմանը երբեք չէր գործել — տաճարից գողանալու այն, ինչ որ ամենասուրբն էր, ամենաթանկարժեքը։ Քանի մի վայրկյան նա նայեց Մելանիայի դեմքին։ Նայեց այնպես, որպես անոթի գայլը համեղ պատառի վրա, որին ճաշակելու կարողությունից զուրկ է։ Նա սքանչանում էր և տանջվում։ Այնինչ՝ դիվային միտքը պաշարում էր նրան ուժգին, և նա զգում էր իր անզորությունը նրանից ազատվելու։ Այո, այո, այդ կինը շատ երիտասարդ է, շատ սիրուն, շատ հրապուրիչ, շատ կենսաթրթիռ և շատ խստապահանջ իր մարմնավոր երջանկության վերաբերմամբ։ Նա չի կարող իր այրվող արյունը խառնել մի անզորի ցրտության և ապիկարության հետ։ Նա պիտի փնտրե մի ուրիշին, այս են պահանջում բնության օրենքները և այս է գրոշմված Մելանիայի դեմքի վրա։ Գուցե արդեն փնտրում է, գուցե արդեն գտել է։ Ի՞նչ. գրկվել այդպիսի մի գանձից, դառնալ խաբված ամուսին, ծաղրված ու ծաղակոծված ամենից։ Օհ ոչ, ոչ, ոչ, այդ անկարելի է և երբեք չպիտի թույլ տալ...

Սակայն ինչպե՞ս դիմադրել բնության պահանջի զորությանը. ինչպե՞ս այդ կնոջն ապահովել մոլորությունից։ Միայն մի միջոց կա ապահովության — այլանդակել այդ զմայլելի մարմինն այնպես, որ ոչ ոք չհրապուրվի նրանով և ոչ ոք չկամենա նրան մերձենալ, բացի իր օրինական տիրոջից։ Այն ժամանակ Մելանիան ստիպված կլինի սիրել Սամսոնին և միայն նրան։

Նա սարսափեց, մտածելով, որ այն, ինչ որ չի ուզում անել գերբնական ուժը, պիտի անե ինքը... իր ձեռքով։ Սարսափեց, բայց չփախավ դիվային մտքից, որ ընդամենը մի շաբաթ էր, որ հղացել էր և այժմ ձգտում էր իրագործել գիշերային լռության մեջ, երբ տանը ամենքը քնած են, երբ խոր քնով քնած է և նա, որի վրա պետք է կատարվի մի անգութ գործողություն։ Անգո՞ւթ, ո՛չ, ինչո՞ւ։ Սամսոնը չի զրկի այդ

կնոջը կյանքից, կզրկի միայն գեղեցկությունից։ Ոճիրը սոցիալական է, հակամարդկային և հակաբնական, բայց նա չի ուղղված այդ գեղեցիկ էակի դեմ։ Նա կապրի, բայց իր գեղեցկությունից զրկված։

Նա նայեց երկարատև հայացքով Մելանիայի սիրուն հոնքերին, որոնցով շատ անգամ էր հիացել։ Ահա որտեղ է նրա գեղեցկությունը, ահա ինչն է ավելի դյուրին աղավաղել։ Բավական է մատների մի թեթև շփում, և նա կխախտվի հավիտյան...

Սամսոնը ձեռը տարավ վարտիքի գրպանը։ Այժմ նա այլևս ինքն իրան չէր պատկանում։ Նա դուրս բերեց գրպանից մի փոքրիկ սրվակ և մի կտոր բամբակ։ Նա ինքը կսարսափեր իրենից, եթե այդ պահին նայեր հայելուն։ Կերպարանքն ավելի մռայլվել էր, բերանի անկյուններն աղավաղվել էին և թեթևակի դողում։ Նա ուշադիր կարդաց սրվակի խորագիրը և գլուխը դրականորեն շարժեց։

Մելանիան շարունակում էր հանգիստ քնել միևնույն դիրքում։ Թվում էր՝ մի ինչ-որ խոր երազ ընդգրկել է նրան իր անշարժության մեջ։

Սամսոնը հանեց սրվակի խցանը և պատրաստվում էր հեղուկը կաթեցնել մյուս ձեռում բռնած բամբակի վրա նույն պահին, երբ Մելանիան ծանր հառաչելով շարժվեց։ Սամսոնը կանգ առավ և, սրվակը գրպանը դնելով, նայեց։ Այժմ Մելանիան երեսը դարձրել էր դեպի պատը, բայց դարձյալ քնած էր խոր քնով։ Այս անգամ նրա շքեղ գիսակները հեռացել էին ուսերից և թափվել բարձի վրա։ Նրանց փարթամությունը զայրացրեց Սամսոնին։ Ակամա նրա հայացքը դարձավ դեպի կնոջ տուալետի սեղանը և կանգ առավ մի հարդյա զամբյուղիկի վրա։ Նա հուշիկ քայլերով մոտեցավ սեղանիկին, շոշափեց զամբյուղակը, որ լի էր թելի կապոցներով, ասեղներով, կոճակներով և այլ մանր-մունր իրերով։ Լսվեց պսպղուն մկրատի սուր հնչյունը, որից Սամսոնը ցնցվեց այնպես, որպես կարող է ցնցվել մարդը օձի մերձավոր շվվոցից։ Նա դարձյալ նայեց Մելանիայի մազերին և, մկրատը վերցնելով, մոտեցավ։ Կապարային լռության մեջ լսվեց սուր մկրատի զգուշավոր շխկոցը, և Մելանիայի շքեղ գիսակները, արմատից

անջատվելով, թափվեցին բարձի վրա և այնտեղից ծանրորեն դեպի հատակը որպես սպանված թռչուն։ Սամսոնը ժամանակ չկորցրեց իր դժոխային դիտավորությունը մինչև վերջը իրագործելու։ Նա շտապով դուրս բերեց գրպանից սրվակը, թափեց մի քանի կաթիլ նրա մեջ պարունակված հեղուկից բամբակի վրա և թեքվեց դեպի Մելանիան։ Հանկարծ նրա ձեռը դողաց։ Նա մի քայլ հետ կանգնեց։

Մելանիան հանդարտիկ աչքերը բաց արավ և նայեց հեռ այն վայրկյանին, երբ չար ձեռքը պիտի առմիշտ այլանդակեր նրա գեղեցկությունը։ Նա հանդարտ գլուխը բարձրացրեց, նստեց անկողնի մեջ, աչքերը հածելով շուրջը՝ մղձավանջից արթնացածի պես։ Բայց արթնացավ նա այն վայրկյանին, երբ նշմարեց Սամսոնին, որ կիսամերկ կանգնած էր սենյակի մեջտեղում լուռ, անշարժ, մի ձեռում պահած սրվակը, մյուսում՝ բամբակը։ Նա արձակեց մի թույլ ճիչ և ոտքի կանգնեց։ Նա ձեռներով շոշափեց գլուխը և արտասանեց.

— Գլուխս... չկա...

Նայեց աջ ու ձախ, վեր ու վար և տեսավ հատակի ու բարձի վրա սփռված մազերը, և սարսռեց ամբողջ մարմնով։

— Այս ի՞նչ է,— գոչեց նա, սարսափած հայացքը ամուսնուն դարձնելով։

Սամսոնը լուռ էր։ Մի չարախինդ ժպիտ աղավաղել էր մարդու դեմքը։

— Ի՞նչ ես անում այստեղ, ի՞նչ ես արել,— նորեն գոչեց Մելանիան։

Սամսոնը անգիտակցաբար հատակի վրա ձգեց ձեռքում բռնած բամբակը, որ այրում էր նրա մատները։ Մելանիան արագ հարձակվեց, վերցրեց գետնից բամբակը, մոտեցավ լամպարին, աչքերը չհեռացնելով Սամսոնից։ Նույն վայրկյանին մատների ծայրում զգաց այրոց, դեն ձգեց բամբակը և մնաց տեղն ու տեղը սառած։

— Ես ուզում էի քեզ բժշկել ամբարտավանությունից,— արտասանեց Սամսոնը, և նրա ձայնը հնչեց այնպիսի չարախնդությամբ, որից Մելանիայի մարմինը պատեց սառը քրտինքով։

— Ա՜,— աղաղակեց սարսափած կինը և թուլացած ընկավ անկողնակալի վրա։

Նա ամեն բան հասկացավ և՛ այն, ինչ որ էր, և՛ այն, ինչ որ պիտի լիներ, և՛ այն, ինչ որ չպիտի լիներ։ Սակայն հասկացավ նաև, որ դիվային դիտավորությունը հրեշավոր մարդու իրագործվել է միայն կիսով չափ։ Նույն վայրկյանին ոտքի ելավ և շտապով անցավ հարևան սենյակը, ուր քնած էր Ժորժիկը դայակի հետ։

Սամսոնը լսեց, թե ինչպես դռները փակվեցին, բանալին պտտեց և զգաց, որ այլևս ամեն ինչ վերջացած է, որ բանալիի այդ պտույտը կտրեց ամեն մի կապ իր և Մելանիայի միջև։ Նա չկարողացավ իրագործել յուր վազրելի միտումը — զրկել կնոջը գեղեցկությունից, որպեսզի առմիշտ տիրե նրան որպես մի սեփականություն, որ ուրիշ ոչ ոքի չի կարող պիտանի լինել։

Նա անցավ յուր սենյակը և երեսնիվար պառկեց անկողնակալի վրա, բռունցքները սեղմելով գլխին։ Այն միջոցը, որով նա անհաջող փորձեց պաշտպանել Մելանիային մոլորությունից և ապահովել յուր ընտանեկան պատիվը, այժմ նրան թվաց սոսկալի երազ...

Առավոտյան տասնմեկ ժամն էր, երբ Սամսոնը բաց արավ անքնությունից ուռած ու կարմրած աչքերը։ Ներս մտավ սպասավորը և լուր տվեց նրան մի ծրար։ Նա բաց արավ ծրարը. Մելանիայի ձեռագիրն էր, նամակը գրված էր համառոտ և շատ գրական։ Մելանիան գրում էր, թե հասկացել է նրա չար դիտավորությունը։ Մի մարդ, որ ընդունակ է այդպիսի դիտավորության, չի խորշիլ անգամ սպանության մտքից։ Նամակը վերջանում էր այս խոսքերով.

— Ես վերադառնում եմ ծնողներիս մոտ, թողնելով ամեն ինչ և ամենը, նույնիսկ Ժորժիկիս։ Ես ազատում եմ կյանքս և գեղեցկությունս։ Դուք կարող էիք ինձ սպանել։ Ես ուզում եմ ապրել, զգալ ու ապրել։

— Ե՞րբ գնաց տիրուհիդ,— հարցրեց Սամսոնը խեղդված ձայնով։

— Առավոտյան գնացքով։

Սամսոնը ամոթահար, հուսահատ ու ուժասպառ թավալվեց անկողնակալի վրա, որ վաղուց էր նրա դագաղը և այժմ դարձավ նրա համար ցուրտ գերեզման...

ԱՐՏԻՍՏԸ

Հինգ ամիս էր ընդամենը Օդեսայումն էի, չորրորդ անգամ փոխեցի սենյակս։ Փոքրիշատե մեծ քաղաքում բնակվող մենակեցի համար մի առանձին հաճույք էր ստեպ-ստեպ կացարան փոխելը։ Անցնելով մի թաղից մյուսը, կարծում ես մի երկրից մյուսն անցար։ Նոր հարևանություն, նոր միջավայր, երբեմն այլ կենցաղով ու ոգով։

Այս անգամ պիտի բնակվեի քաղաքի աղմկալի փողոցներից մինում, հինգ հարկանի մի տան երրորդ հարկում։ Տանտիրուհիս իտալուհի էր, գեր, առողջ, ամրակազմ մի այրի՝ մոտ հիսուն տարեկան։ Նրա ամուսինը եղել էր իտալական օպերայի հուշարար, շատ վաղուց հայրենիքից տեղափոխված Ռուսաստան։ Մեռնելով՝ կնոջ ու միակ դստեր համար թողել էր իբրև ժառանգություն հին նոտաների մի մեծ կապոց և իտալացի արտիստների ծանոթությունը։ Այրին, ապրելու ուրիշ միջոց չունենալով, պարապում էր սենյակներ վարձու տալով։

Հենց առաջին օրն ես ծանոթացա հարևաններիս հետ։ Այդ ինձ համար նոր և բավական հետաքրքրական շրջան էր։ Նա բաղկացած էր մեծ մասամբ իտալացիներից։ Կար և մի ռուս ուսանող ու մի հրեուհի ատամնաբույժ, բավական գեղեցիկ, թեև ոչ էլ այնքան թարմ։

Կենտրոնը կազմում էր տանտիրուհու դուստրը՝ շիկա-

հեր, փղոսկի պես փայլուն, մաքուր ատամներով և գեղեցիկ աչքերով քսան տարեկան Լուիզան։ Նա երգում էր. ուներ գոբրեղ ու անուշ ձայն, պատրաստվում էր բեմին նվիրվելու։ Գիտեր նվագել դաշնամուր, երաժշտության դասեր էր տալիս, փող ժողովում, որ գնա Իտալիա ձայներ մշակելու։

Առաջին օրն անծանոթ շրջանում զգացի սովորական անհարմարություն, երկրորդ օրն ընտելացա, իսկ մի շաբաթ անցած՝ բավական բարեկամացա բոլորի հետ։ Մենք ճաշում էինք միևնույն սենյակում, միաժամանակ, միևնույն սեղանի քով։ Երկու ժամից սկսած մինչև երեկոյան չորս-հինգ ժամը ծիծաղ, երգ, նվագում, պար ու սրախոսություններ խառնվում էին միմյանց և ջերմացնում տարբեր ազգերի ու դավանությունների պատկանող մարդկանց բարեկամական մթնոլորտը։

Մի օր ճաշից հետո Լուիզան նստեց դաշնամուրի քով և սկսեց նվագել ինչ-որ վայլս։ Բասոկոնտատո Չելլինին գրկեց կոնտրալտո Լուկրեցիա Կաֆարելլիին ու սկսեց պարել։ Բարձրացավ ընդհանուր ծիծաղ, որովհետև իրավ որ այդ մի գվարճալի զույգ էր. Չելլինին խիստ նիհար էր և շատ բարձրահասակ, Լուկրեցիա Կաֆարելլին, ընդհակառակը, խիստ գեր էր և կարճահասակ։ Լուիզան նվագելով հանդերձ գեղեցիկ գլուխը ձգել էր հետ և անդուսպ քրքջում էր, լցնելով սենյակը յուր անուշ ձայնի հյութալի հնչյուններով։

Զվարճության տաք միջոցին դռների մեջ նկարվեց ինձ համար մի անծանոթ կերպարանք։ Ոչ ոք առաջին պահ չնկատեց նրան, բացի ինձանից, որ նստած էի դռների մոտ։ Անծանոթը հենց առաջին վայրկյանից գրավեց ուշադրությունս։ Ես դիտեցի նրան։ Մոտ 16—17 տարեկան մի պատանի էր, նիհար, գունատ դեմքով, կուրծքը փոքր-ինչ ներս ընկած։ Հագած էր մուգ-կապտագույն գոտևոր կարճ բաճկոն, որի կուրծքը զարդարված էր ասրյա խաչաձև ծոպերով, և նույն գույնի նեղ վարտիք։ Ձեռին բռնած էր մի կակուղ կանաչագույն գլխարկ փետուրով զարդարված, նման այն գլխարկներին, որ դնում են թափառաշրջիկ հույն անդրիավաճառները կամ իտալացի երաժիշտները։ Նրա դեմքի գծերը կանոնավոր էին ու նուրբ, աչքերն ունեին ինչ-որ մելամաղ-

ծիկ արտահայտություն։ Դա այն երջանիկ դեմքերից էր, որոնք հենց առաջին հայացքով մարդու սրտում շարժում են համակրության զգացում։

— Բոն-ջուրնո,— ասաց նա, գլուխ տալով։

— Օհո՜, արտի՜ստը,— գոչեց ամենքից առաջ բարիտոն Կավալլարոն, որ մի բարեսիրտ մարդ էր, մոտ երեսունուհինգ տարեկան։

— Արտի՜ստը, արտի՜ստը,— կրկնեցին մյուսները։

Նույն վայրկյանին պար, նվագում, ծիծաղ ընդհատվեցին, և բոլորի հայացքները դարձան դեպի պատանին։

— Ո՞րտեղ էիր, այսքան ժամանակ չէիր երևում,— հարցրեց Կավալլարոն։

— Սպասեցեք, նա տխուր է,— գոչեց Լուիզան և մոտեցավ պատանուն. — էլի ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ներս չես մտնում։

— Որտե՞ղ է սինյորա Ստեֆանիան,— հարցրեց պատանին։

Նրա ձայնը հուզված էր, դողում էր։ Կար այդ ձայնի մեջ մի սրտաշարժ շեշտ, որ արտահայտում էր հեզության հետ և թախիծ։

— Ա՜ա, հասկացա,— ասաց Լուիզան,— էլի մայրդ երեվի հիվանդ է։ Խե՜ղճ պատանի, դու սլանում ես երկինք, նա կպած է երկրին...

— Սինյորինա Լուիզա, ես ձեզ խնդրում եմ ինձ չխրդնալ,— գոչեց պատանին վիրավորված,— սինյորա Ստեֆանիան այստե՞ղ է։

— Մայրս խոհանոցումն է։

Պատանին գլուխ տվեց շնորհալի ձևով ու հեռացավ։

— Նա չափազանց տխուր էր,— ասաց Կավալլարոն,— անշուշտ մայրն այս անգամ ծանր հիվանդ է։

— Չեմ կարծում,— նկատեց Լուիզան,— այդ կինը միշտ հիվանդանում է որդուն տանջելու համար։ Խե՜ղճ պատանի...

— Խե՜ղճ, — կրկնեց ռուս ուսանողը կծու հեգնությամբ,— բայց նա չի ուզում, որ դուք նրան խղճաք, սինյորինա Լուիզա։ Տեսա՞ք, ինչպես վիրավորվեց։

— Նա հպարտ է ինչպես սպանական գրանդ,— ասաց

Կավալլարոն, յուր բարի աչքերը թանձր ունքերի տակից դարձնելով դեպի ինձ,— և հպարտությունը սազում է նրա հեզությանը։ Սինյոր, նրա կերպարանքն ինձ միշտ հիշեցնում է իմ եղբորը։ Տաղանդավոր ջութակահար էր, մեռավ քսան տարեկան հասակում թեերիս վրա։

— Դուք ճանաչո՞ւմ եք Լևոնին,— դիմեց ինձ օրիորդ Ռաիսան, հրեուհի ատամնաբույժը։

— Ո՞չ։ Երևակայեցեք, հարևաններ, պարոնը մեր արտիստին չի ճանաչում։

— Օ՜օ, այդ աններելի է,— գոչեցին Լուիզան ու Լուկրեցիա Կաֆարելլին։

— Իմ կարծիքով,— ասաց Կավալլարոն,— ով գեղարվեստասեր է, իրավունք չունի Լևոնին չճանաչելու։ Նա իսկական արտիստ է, այո՛, հոգով, սրտով, արյունով, ամբողջ էությամբ արտիստ։

Իմ հետաքրքրությունը բոլորովին գրգռվեց։ Ո՞վ է, վերջապես, այդ մանուկը, որ այդքան գրավել է հարևաններիս համակրանքը։

— Եթե կամենում եք, իսկույն կծանոթանաք,— ասաց Լուիզան.— արժե այցելել նրան յուր ապարանքում։ Գիտե՞ք ինչ,— դարձավ նա ընդհանուրին,— վատ չի լինիլ, եթե խմբովին գնանք մեր արտիստի հիվանդ մորը տեսնելու։ Այո՛, վատ չի լինի... Ես գնում եմ, ով ուզում է, թո՛ղ հետևե ինձ։

Այս ասելով, նա անմիջապես դիմեց դեպի դռները։ Բացի ուսանողից և երկրորդական բարիտոն Բորելլիից, բոլորս հետևեցինք նրան, նույնիսկ հաստամարմին Լուկրեցիա Կաֆարելլին։

Արտիստը բնակվում էր նույն տան վերին հարկում, Լուիզան մեզ առաջնորդեց դեպի գլխավոր սանդուղքը, բարձրացանք չորրորդ հարկը։ Այնտեղից նեղ, կեղտոտ, փայտյա սանդուղքով հասանք հինգերորդ հարկը, մտանք մի մթին անցք։ Անմիջապես խփեց մեր քթին ճարպի մեջ տապակվող մսի անախորժ հոտը։

Լուիզան կանգ առավ մեկթևանի մի ցածր դռան առջև։

— Սինյոր Չելլինի,— ասաց նա,— ձեզ համար պիտի առաստաղը մեկ ֆուտ բարձրացնել։

— Իսկ սինյորինա Կաֆարելլիի համար դռները պիտի երկու ֆուտ լայնացնել,— հեգնեց Չելլինին կոնտրայլտոյի մարմնի հաստությունը, գրկելով յուր երկայն թևով նրա իրանը։

Մենք մտանք մի սենյակ, որ մի փոքր մեծ էր, քան մի մեծ հավաբուն։ Այնտեղ, մութ անկյունում, պատի տակ երևում էր ինչ-որ բան, նման անկողնակալի, թե թախտի՝ չգիտեմ. սինյորա Ստեֆանիայի հաղթանդամ մարմինը թաքցրնում էր նրան իմ աչքից։ Մի քայլ առաջ գնալով, տեսա հնամաշ վերմակի տակ պառկած մի կնոջ դեմք։ Նրա ճակատը կապած էր սև թաշկինակով, աչքերը հառած առաստաղին։ Նա տնքտնքում էր ու ծանր հառաչում։ Նրա ոտների կողմում կանգնած էր «արտիստը»։ Ըստ երևույթին, նրա միտքը կլանված էր կամ մոր հիվանդությամբ, կամ մի ուրիշ հոգսով, որովհետև մեր երևալը աննկատելի մնաց նրա համար։

— Դե լա՛վ, քիչ տնքտնքա,— ասում էր սինյորա Ստեֆանիան հիվանդին,— խոմ չես մեռնում։ Սովորական հիվանդություն է էլի, վաղը կանցնի։ Բա-բա-բա, տե՛ս մոտդ ինչ պատվավոր հյուրեր են եկել։ Համարյա իմ բոլոր կավալերներն ու դամերը։ Տղա,— դարձավ նա Լևոնին,— երևի այդ դու ես անհանգստացրել մարդկանց։

Պատանին նայեց մեզ, չափազանց շփոթվեց և շտապեց սենյակի ընդամենը մի զույգ ջարդված աթոռներն առաջարկել յոթ հյուրերից չգիտեր ո՞ր մեկին։

— Պարոնը բժի՞շկ է,— հարցրեց հիվանդը, երբ տեսավ ինձ։

— Բժիշկ չէ,— պատասխանեց սինյորա Ստեֆանիան,— բայց, երևի, ցավդ բժշկից լավ հասկանա։ Քո հայրենակիցներից է...

— Հա՞յ,— գոչեց հիվանդը զարմանալով, թե ուրախանալով չկիտեմ և, գլուխը դանդաղ բարձրացնելով, նա նստեց անկողնում։

— Հա՞յ,— կրկնեցի ես զարմացած, որովհետև ինչ ազգի ասես սպասում էի այդ միջավայրում, բացի հայից։

— Այո՛,— ասաց օրիորդ Ռաիսան,— արտիստը ձեր հայ-

բենակիցն է. զարմանալի է, որ չիմացաք հենց առաջին տեսնելուց։

— Ո՞րտեղացի եք,— հարցրեց Հիվանդը,— խոմ Բեսարաբիայից չե՞ք։ Ո՞չ։ Օ՜օ, այդ շատ լավ է, շատ լավ։ Օ՜ֆ, օֆ-օֆ, Բեսարաբիայի հայերը աստված չունին, գաղաններ են, չեն ուզում ցավս հասկանալ։ Տե՛ր աստված, ոչ ոք ցավրս չի հասկանում, ոչ ոք։

— Էլի մի՛ սկսիր հին երգդ,— գոչեց սինյորա Ստեֆանիան,— բավակա՛ն է։

— Ո՛չ, Ստեֆանիա, չեմ կարող լռել, սիրտս այրվում է։ Դու էլ մայր ես, բայց զավակդ տղա չէ։ Օ՜հ, երանի իմն էլ աղջիկ լիներ։ Չգիտես, ինչ է անում նա։ Հոր նման տանջում է ինձ։ Պարոն,— դարձավ ինձ,— այդ փչացածն իմ միակ տղան է, հասկանո՞ւմ եք, միակ, ուրիշ զավակ չունիմ։ Աստված սիրեք, խելքի բերեք նրան։ Նա հոր ճանապարհով է գնում...

— Սովորական գանգատներ են,— շշնջաց ականջիս Լուիզան,— ուշադրություն մի՛ դարձնեք։

Ես նայեցի Լևոնին։ Ամաչելուց նա երեսը դարձրել էր պատին, մեզ չէր նայում։

Լուիզան մոտեցավ նրան, բռնեց ձեռներից, երեսը դարձրեց յուր կողմը, ուղիղ նայեց աչքերին բարեկամական — ո՜չ, ավելի՛ — սիրող քրոջ քնքուշ հայացքով։ Ինձ թվաց, որ այդ հայացքը թափանցեց մինչև Լևոնի հոգու խորքը։ Եվ ո՞ւմ հոգու խորքը չէր թափանցիլ այն։ Լևոնը զվարթացավ և երախտագիտության զգացումով լեցուն աչքերով նայեց իտալուհու երեսին։

— Եթե օրինավոր որդի լիներ,— շարունակեց Հիվանդը,— ձեզ նման պատվավոր հյուրերին այսօր այս խոզաքնում կընդունե՞ր։ Տեսնո՞ւմ եք, աթոռներ էլ չունինք։ Անամո՛թ, ի՞նչ ես ցցվել փայտի պես։ Չե՞ս տեսնում հյուրերիս։

Լևոնը կրկին անգամ սենյակի մի ղույգ աթոռներն առաջարկեց մեզ։ Նստել անկարելի էր. այդ փոքրիկ սենյակում յոթ-ութ հոգի կանգնել միայն կարող էին։ Լուկրեցիա Կաֆարելլին երկար չդիմացավ օդի սակավությանը, դուրս գնաց։

Չելլինին հետևեց նրան, ասելով, թե «արտիստի» մայրը մեռնելու ախորժակ չունի դեռ, կարիք չկար անհանգստանալու։

Նրանց դուրս գնալուց հետո սենյակն այնչափ գոնե ազատվեց, որ ես կարող էի դիտել շուրջս։ Այն, ինչ որ տեսա, ինձ հաճելի զարմացում պատճառեց։ Մի անկյունում կախված էին աշխարհիս անվանի երաժշտապետների, նվագիչների, երգիչների ու երգչուհիների լուսանկարները հովհարի ձևով միմյանց միացրած։ Մյուս անկյունում դրված էր մի փոքրիկ գրասեղան, ծանրաբեռնված զանազան էժանագին գեղարվեստական իրերով։ Այնտեղ տեսա Բեթհովենի, Մոցարտի, Շեքսպիրի և Վագների կավյա կիսարձանիկները ադյուսի գույնով, մի հաստ խեցեղեն շվի, մի կոտրված սրինգ և ուրիշ այդպիսի պարագաներ։ Սեղանի առաջին պատից կախված էին մի կիթառ, մի մանդոլինա և մի ինչ-որ թատրոնական զգեստ՝ նման Ռիգոլետտոյի հագուստին։ Ամենահետաքրքրականը մի նկար էր պոլիտրայի վրա, որ ներկայացնում էր երկու պատանիների մենամարտությունը բռունցքներով մի փողոցային երգչուհու համար։ Աղջիկն ընկել էր մեջտեղ գրգռված մազերով և աշխատում էր բաժանել ախոյաններին...

— Տեսնո՞ւմ եք,— շշնջաց ականջինս Կավալլարոն,— երաժշտություն, նկարչություն, պոեզիա, ոչինչ չի մոռացված։

Այդ միջոցին Հիվանդը շարունակում էր գանգատվել։

— Ահա երեք օր է, առավոտներն էլ երեսը չեմ տեսնում։ Նա չի քնում, Ստեֆանիա, չի քնում։ Չէ՞ որ կարող է հիվանդանալ, հետո ես ի՞նչ անեմ, ո՞վ կպահի ինձ։ Գիշեր-ցերեկ թատրոններումն է։ Հոր ցավը որդուն է անցել։ Անիծվի նրա գերեզմանը, օրս սևացրեց։

— Էլի՛ միևնույն գանգատները,— արտասանեց Լուիզան,— և ինչպե՞ս չի հոգնում այդ կինը։ Եսամո՞լ...

Արդարև, Հիվանդի աչքերի մեջ երևում էր եսամոլի հոգի, թեև գեղեցիկ էին այդ աչքերն և դեռ բավական վառվռուն, մոտ հիսուն տարեկան կնոջ թառամած դեմքի վրա։

Հրաժեշտ տալիս նկատեցի մի բան. Կավալլարոն թաքուն Լևոնի ձեռի ափի մեջ սեղմում էր մի ոսկեդրամ, պատանին հրաժարվում էր ընդունել։ Այդ ժամանակ բարիտոնը քայ-

լերը դանդաղեցրեց, մնաց սենյակում, թույլ տալով, որ Լևոնը մեկ ուզեկցի։

Սինյորա Ստեֆանիան համառոտ պատմեց ինձ Լևոնի մասին հետևյալը։— Նրա հայրը եղել է թատրոնական վարսավիր և չափազանց գեղարվեստասեր։ Համեստ, գլուխը քաշ արհեստավորը հանկարծ անձնատուր է լինում հարբեցողության կործանիչ ախտին և ոչ առանց պատճառի։ Պարզվում է, որ անհույս սիրահարված է մի երգչուհու վրա։ Կոպիսների հետևում շուտով նա դառնում է ընդանուր կատակների ու ծաղրի առարկա։ Արտիստներից սկսած մինչև վերջին թատրոնական ծառան ծիծաղում են նրա հանդուգն զգացման վրա դեպի մի գեղեցկուհի, որի երկրպագուների թվում անվանում են նաև տեղական քաղաքագլուխ, հայտնի միլիոնատեր ու բարեգործ հույն Մարազլիին...

Հալածանքն ու ներքին վիշտը ներգործում են վարսավիրի վրա այնչափ, որ սրտի դառնությունն օղու մեջ անգամ չի կարողանում խեղդել։ Մի օր նա ծնծում է ռեժիսորին, որ ծաղրելիս է լինում նրա շինած մի կեղծամը, անվանելով նրան «սրիկա»։ Նրան զրկում են թատրոնական վարսավիրի պաշտոնից։ Այդ ժամանակից նա դառնում է օղու և փողոցների անդառնալի սեփականությունը։ Եվ մի երեկո ոստիկանները գտնում են նրան մի ծառի տակ, ձյունի մեջ թավալված, բերում են տուն։ Երեք օր չանցած՝ մեռնում է տիֆից, թողնելով կնոջն ու զավակին ճակատագրի հաճույքին։

Այրին, ամուսնու արհեստից զրկված ու տանջված, ութ տարեկան Լևոնին հանձնում է մի ատաղձագործի և ինքը սկսում ուրիշների համար ճերմակեղեն կարել։ Երկու ամիս չանցած՝ մանուկն արհեստանոցից փախչում է ուսումնարան։ Բարի մարդիկ տալիս են նրա ուսումնավարձը։ Նա սովորում է գրել-կարդալը։ Այրին հանձնում է նրան հագուստեղենի վաճառատուն։ Մանուկը չի մնում այնտեղ։ Մի աներևույթ ձեռք մղում է նրան դեպի թատրոն։ Նա դառնում է աֆիշներ բաժանող, օրական հիսուն կոպեկով և թատրոնների վերնահարկը բարձրանալու իրավունքով։ Անցնում է կուլիսների հետևը, կամաց-կամաց ծանոթանում է արտիստական աշխարհի հետ։ Այժմ բոլոր արտիստները ճանաչում են նրան,

բոլորին նա ծառայություններ է անում, և բոլորը սիրում են նրան յուր հեզության և աշխուժության համար։ Նա ոչ մի ներկայացում բաց չի թողնում, մանավանդ իտալական խմբի ներկայացումները։ Նա ցերեկներն էլ թատրոնումն է կամ նրա շուրջը։

— Սինյոր, կդարմանաք եթե ասեմ, որ այժմ նա երբեմն ստեղծում է նորեկ անծանոթ արտիստի համար փառք մեր քաղաքում,— շարունակեց մոր փոխարեն Լուիզան։— Այո՛, այո՛, սինյոր Չելլինի, մի հակառակեք, այս ճիշտ է։ Նա ունի բազմաթիվ հույն և հրեա ընկերներ, որոնք զարմանալի հավատ ունին դեպի նրա ճաշակը և սիրում են նրան։ Դրանք կլակյորներ չեն, ո՛չ, այլ թատերասերներ։ Չգիտեմ, գուցե նրանք կաշառում են, բայց Լևոնը՝ ո՛չ, երբեք չի կարելի նրան կաշառել։ Սինյոր Կավալլարո, ճի՞շտ եմ ասում, թե ոչ։

— Նա ազնիվ է որպես նորածին և զգայուն՝ որպես քնարի լար,— արտասանեց բարիտոնը։— Նա իմ հանգուցյալ եղբոր տիպարն է...

— Բայց ինչպե՞ս է ստեղծում անծանոթ արտիստի համար փառք,— հետաքրքրվեցի ես։

— Առաջին ծափահարությամբ,— պատասխանեց Կավալլարոն։

— Չեմ հասկանում,— ասացի ես։

— Սինյոր, երևի չգիտեք ինչ ասել է արտիստի համար առաջին ծափն անծանոթ քաղաքում։ Շատ բան, երբեմն ամեն ինչ։ Դուք թատերասեր եք, նկատած կլինեք մի երևույթ։ Թատրոնական սրահում նստող հասարակությունը հաղիվ է վստահանում առաջին ծափը տալ անծանոթ արտիստին։ Շատ անգամ, հոգով հիացած երգչի երգով, նա ամաչում է յուր հիացումը արտահայտել. կարող են նրան անճաշակ համարել։ Բայց ահա օգնության է հասնում Լևոնը։ Նա ազատ է հասարակական նախապաշարումներից, չի քաշվում առաջին ծափը տալ։ Խումբը հետևում է նրա օրինակին։ Այն ժամանակ հասարակությունը նույնպես ծափահարում է։ Մյուս օրը լրագրերը գրում են այդ ծափահարությունների մասին, և ահա անծանոթ արտիստի աջողությունը ապահով է։

— Եթե, իհարկե, արտիստը շնորհք ունի,— ավելացրեց Ջելլինին։

— Այո՛, իհարկե։

— Բայց քո Լևոնը կարող է շատ անգամ անշնորհքին էլ տալ առաջին ծափը,— նկատեց Բորելլին։

— Ներողություն,— պատասխանեց Կավալլարոն, հեգնորեն ժպտալով,— մեր խմբի վերաբերմամբ գոնե նա դեռ այդպիսի սխալ չի գործել։

Ես գուշակեցի, որ Բորելլին դեռ չի արժանացել Լևոնի ծափին։

Վիճաբանությունը գուցե շարունակվեր, եթե կրկին ներս չմտներ Լևոնը։ Այս անգամ նրա դեմքը բավական հանգիստ էր։ Նա հրավիրեց Կավալլարոյին մի անկյուն և, շշնջալով ականջին, բաց թողեց նրա գրպանը մի ոսկեդրամ։ Հետո իմացա, որ մեր դուրս գալուց հետո նա իր մոր բարձի տակ գտնում է այդ դրամը։ Հասկանում է, որ Կավալլարոն պիտի դրած լինի, վերցնում է, բերում, վերադարձնում տիրոջը։

— Համառ ես, Լևոն, համառ,— գոչեց Կավալլարոն, շփելով պատանու գլուխը հայրական սիրով։— Դե լա՛վ, մի՛ նեղանար, նստի՛ր, մի փոքր խոսենք։ Դու, իհարկե, երեկ թատրոնումն էիր։

— Էի։

— Հավանեցի՞ր ինձ...

— Իհարկե։

— Ասա ինչո՞ւ երեսդ դարձնում ես ինձանից... Ա՜ա, կեղծո՞ւմ ես։

— Սինյոր Կավալլարո, երեկ դուք շփոթված էիք։

— Ե՞ս. ամենևին։ Սխալվում ես։

— Ո՛չ, սինյոր, չեմ սխալվում։ Երբ հանգիստ եք, երբեք չեք շեղվում։ Մենք ամենքս իմացանք, որ ձեզ բարկացրել են։

— Քեզ այդպես է թվացել։ Ոչ ոք ինձ չէր բարկացրել։ Ահա տեսա՞ր, Լևոն, ինձ դեռ լավ չես ճանաչում։

Լևոնը նայեց Կավալլարոյի աչքերին այնպիսի պարզ ու խելոք հայացքով, որ կեղծել նրա մոտ անկարելի էր։ Կավալլարոն ձեռը դնելով նրա ուսին, ասաց.

— Չես սխալվում, բարեկամս, երեկ նեկայացումից մի քիչ առաջ ես խոշոր վեճ ունեցա ռեժիսորի հետ։

— Ո՛չ, սինյոր Կավալլարո, ասացեք՝ դիրիժորի հետ,— ուղղեց Լևոնը համարձակ։

— Դու ո՞րտեղից իմացար։

— «Օ՜ Կարլո»-ն երգելիս՝ սինյոր Մարտինին կես տոն բարձր վերցրեց ձեզ շեղելու համար։ Սինյոր Մարտինին բոլորի վերաբերմամբ անաչառ է, բացի իրանից։ Ռեժիսորի պատճառով նա ձեզանից վրեժ չէր առնիլ։ Նա քինախնդիր է միայն յուր անձնական հակառակորդների դեմ։

— Լսո՞ւմ եք, սինյոր,— դարձավ ինձ Կավալլարոն ոգեվորված,— այս պատանու բերանով խոսում է ինքը երաժշտական բնազդը և դիտողական ձիրքը։

Լևոնը վեր կացավ, գլուխ տվեց, շնորհակալություն հայտնեց մեզ մեր այցելության համար և շտապեց դեպի դրոները։ Այլևս նա այնքան գրավել էր ինձ, որ կամեցա անպատճառ հետը խոսել։

— Հայերեն գիտե՞ք,— հարցրի ես, երևի, հայրենասիրական զգացումից դրդված։

— Գիտեմ։

Նա, ինչպես և յուր մայրը, խոսում էր ռուսերեն լեզվով տաճկական արտասանությամբ։ Իտալացիներից միայն տանտիրուհիս և նրա աղջիկը գիտեին ռուսերեն, նաև Կավալլարոն։ Մյուսների հետ Լևոնը խոսում էր իտալերեն։

Մի քանի հարցեր տվեցի նրան պարզ հայերեն լեզվով։ Նա ապշած նայեց երեսիս և ժպտաց։

— Չե՞ս հասկանում,— դարձա ես ռուսերեն լեզվի օգնությանը։

— Այդ լեզուն եկեղեցական է,— խոսեց նա տաճկերեն լեզվով,— իմ իմացած հայերենն ահա այս լեզուն է։

Ինձ համար նորություն չէր Բեսարաբիայի հայերի մայրենի լեզու չիմանալը։ Բայց առաջին անգամն էի պատահում մեկին, որ տաճկերենը հայերեն էր համարում։

Ես խնդրեցի Լևոնին այցելել ինձ շուտ-շուտ և իմ կողմից խոստացա այցելել նրան։

Նա ինձ երկար սպասել չտվեց։ Հետևյալ օրն իսկ եկավ սենյակս և ուրախ-ուրախ հայտնեց, թե մայրն արդեն առող-

ջանում է։ Ուղիղն ասած, ես չէի հետաքրքրվում մոր վիճակով, ինձ գրաղեցնողը որդու ճակատագիրն էր։

Երբ խոսք բաց արի թատրոնի ու երաժշտության մասին, պատանին կերպարանափոխվեց, ինչպես կրակոտ սիրահար, երբ խոսվում է նրա սրտի ընտրյալի վերաբերմամբ։ Ոգևորված նկարագրեց յուր լսած երևելի երգիչների ու նվագիչների տաղանդը։ Վերջին յոթ տարվա ընթացքում նա լսել է գրեթե բոլոր նշանավոր երգիչներին ու նվագիչներին, որոնք այցելել էին Թուսաստան Օդեսայի վրայով։

— Երևի դու էլ նվագում ես կամ երգում,— հարցրի ես։

— Ոչ՝, սինյոր։

— Չեմ հասկանում։

— Երգելու համար ձայն չունիմ։

— Իսկ նվագելու համար գործիքներ շատ ունիս սենյակումդ։ Երեկ տեսա։

— Այո՝, նվագում եմ մոնդոլինա և կիթառ։

— Նոտաներ գիտե՞ս։

— Սինյորինա Լուիզան սովորեցրել է։ Դուք լսե՞լ եք նրա երգեցողությունը։ Հիանալի ձայն ունի։ Այնպես չէ՞։ Այո՞։ Հավանե՞լ եք։ Իհարկե, ո՞վ չի հավանիլ։ Օ՞օ, Լուիզային մեծ ապագա է խոստանում...

Նա լռեց, հառաչեց, հայացքը ձգելով դեպի անորոշ տարածություն։ Ես նրա դեմքի վրա նշմարեցի հոգեկան գաղտնի տառապանքի արտահայտություն։ Խոստովանում եմ, այն ժամանակ նշանակություն չտվեցի նրա հառաչանքին։ Եվ մի՞թե կարող էի երևակայել տասնույոթ տարեկան պատանու հոգին որևէ լուրջ վշտի ընդունակ։

— Այդ բոլորը լավ,— ասացի ես,— բայց դու ինչո՞վ ես կերակրում քեզ ու մորդ։ Չէ՞ որ հայրդ ժառանգություն չի թողել։

— Գործ շատ կա, սինյոր։ Պրոգրամներ եմ ծախում, ստատիստի դեր եմ կատարում բեմի վրա, պոչ եմ բռնում։ Ա՞խ, սինյոր, եթե միջոց ունենայի, կսովորեի վիոլոնչել նվագել ու կմտնեի երաժշտական խումբը։

— Հիշո՞ւմ ես հորդ, Լեոն։

— Իհարկե, շատ լավ եմ հիշում։

— Ասում են, նա բարի մարդ էր։

— Այո՝, սինյոր, շատ բարի էր, միայն...

— Հարբում էր,— լրացրի ես պատանու խոսքը։

— Նա երբեք ինձ չէր ծեծում, չէր էլ բարկանում վրաս։ Բայց ո՞չ, մի անգամ բարկացավ, հիշում եմ...

— Երևի չարություն էիր արել։

— Այո՝։ Այն ժամանակ նրա խանութն ահա այն անկյունի կապույտ տան ներքին հարկումն էր։ Ամեն օր գնում էի այնտեղ կեղծամներ սանրում։ Մի օր նա տխուր էր շատ։ Մի ժեներալ եկավ երեսը սափրել տալու։ Նրա մոտ միշտ մեծամեծներ էին գալիս։ Ես վերցրի մի սանր, վրեն քաշեցի մի թուղթ ու սկսեցի շրթունքներովս նվագել։ Ժեներալը բարկացավ ու հորս հրամայեց ինձ դուրս անել։ Հայրս մոտեցավ, ականջս քաշեց ու, վզակոթիս տալով, վռնդեց դուրս։ Բայց հետո, երբ ժեներալը գնաց, կանչեց ինձ ներս, աչքերս սրբեց, համբուրեց ու ասաց. «Եթե դու կունենաս երաժշտական ընդունակություն, ինձ գրավ կդնեմ, քեզ չեմ թողնիլ առանց ուսման»։ Այո՝ սինյոր, շատ լավ մարդ էր, թեև հարբում էր։ Սինյոր, ներեցեք, ո՞ր ժամն է։

— Տասնումեկ։

— Օ՞օ, ես ուշացա։ Ներողություն, էլի կգամ։ Ձեր սենյակը լավն է։ Դուք ինձ գրքեր կաք կարդալու, այո՞։ Շնորհակալ եմ։ Ցտեսություն։ Այսօր Կալաֆատիի բենեֆիսն է։ Թատրոնը լիքն է լինելու։ Պետք է գնամ պոչ բռնեմ։

Ես կամեցա հարցնել՝ ինչ ասել է «պոչ բռնել», բայց Լեոնն արդեն չքացել էր։

Կալաֆատին ընտիր երգչուհի էր։

Գնացի թատրոն տոմսակ վերցնելու։ Կասի առաջ կանգնած էր գնողների մի երկայն շարք, որ հասնում էր մինչև փողոցի կեսը։ Եղանակը սառն էր, խոնավ, անախորժ։ Պետի բռնեի շարքի վերջին տեղը և ամենաքիչը մի ժամ սպասելի մինչև հերթս հասներ։ Ուզում էի վերադառնալ տուն, երբ լսեցի իմ ազգանունը։ Դա Լեոնի ձայնն էր, որ կարող էի ճանաչել հարյուրավոր ձայների մեջ։ Նա կանգնած էր կասից մի քանի քայլ միայն հեռու, երկու հրեաների միջև սեղմված։

— Տոմսա՞կ եք ուզում գնել,— հարցրեց նա տաճկերեն։

— Այո՛։

— Եկեք, տեղս բռնեցեք, ապա թե ոչ, շուտ չեք հասնիլ կասին։

Ես բռնեցի նրա տեղը։ Նա գնաց կանգնեց շարքի վերջում։ Այստեղ միայն իմացա՝ ինչ ասել է «պոչ բռնել»։ Լևոնը կանգնում էր շարքի հետևում և, երբ բավական մոտենում էր կասին, յուր հերթը ծախում էր ցանկացողին հինգ-տասը կոպեկով։ Հետո դարձյալ գնում էր ու շարքի հետևում կանգնում։ Նա ամեն միջոց գործ էր դնում թատրոնից չհեռանալու համար։ Նրա օդը, կերակուրը, կյանքը, ամեն ինչ թատրոնն էր։

Իմ հետաքրքրությունը այդ պատանու վերաբերմամբ արդեն այնքան մեծ էր, որ աշխատում էի ամեն օր նրան տեսնել։

Մի առավոտ նրա մոտ հանդիպեցի երկու անծանոթների, որոնց հետ յուր սենյակի դռների առջև կանգնած խոսակցում էր։

Մեկը յուր հասակի պատանի էր հնամաշ հագուստով, բայց գլխին նոր գլխարկ։ Դեմքի գծերը բուն հրեական էին, աչքերը դեղնագույն, մազերը գրեթե կարմիր, երեսը ինչ-որ բծերով ծածկված, սակայն համակրելի։

Մյուսին ես շատ անգամ էի տեսել քաղաքի զրոսավայրերում ու թատրոնների առջև։ Դա մոտ քսանուհինգ տարեկան երիտասարդ էր, այնքան նիհար, այնքան բարակ ու գունատ, որ կարծես մագաղաթից լիներ շինված։ Նրա երեսը երկարավուն էր ու նեղ, աչքերը կլոր ու փոքրիկ, կոկորդի ոսկորը դուրս ցցված։ Հարթ ու նոսր մազերը, մինչև ունքերը քաշած կակուղ գլխարկի տակից ցած իջնելով, յախուջի պես կպել էին բարակ պարանոցին, և ընդգրկել կոկորդի մի մասը։ Սև սյուրտուկի վրա հագած էր թիկնոցավոր վերարկու առանց աստառի, լայն թևերով։ Մի ձեռին բռնած էր բազկի հաստությամբ մի դեղնագույն փշոտ փայտ, մյուս ձեռին՝ անկապմ գրքույկներ ու տեղական լրագրերի համարները։

— Իմ ընկերներն են,— ասաց Լևոնը, ամիջապես ծանոթացնելով ինձ նրանց հետ։— Բանաստեղծ Չաուշենկո, Իցկո Մարգուլիս։

Ես հաճույքով սեղմեցի երկուսի էլ ձեռը։

— Չաուշենկոն սիրում է մարդկանց հետ ծանոթանալ յուր երկերի միջոցով,— ասաց լայն վերարկու հագած երիտասարդը, որ ինքն բանաստեղծն էր։

Եվ անմիջապես, գրքույկներից մեկը պահելով քթիս առջև, հարցրեց.

— Չէի՞ք կամենալ արդյոք, մի օրինակ վերցնել։

— Հաճո՛յքով։

Գրքույկի վերնագիրն էր. Часы горя и страданий; стихотворения Леонида Николаевича Чаушенко.

— Դուք գուցե զարմանաք, մոսյո,— ասաց նա, դնելով վարտիքի գրպանը գրքույկի արժեքը,— որ ես, այսպես ասած, հանդգնեցի կապել ձեր վզին իմ երկը։ Բայց մի՛ վրդովվեք, մարդիկ իրանց խիղճն են ծախում, Չաուշենկոն՝ յուր երկերը։ Նախկին գրաշար եմ։ Ինքս գրում եմ, ինքս շարում, ինքս տպում, ինքս վաճառում, ինքս էլ ուտում իմ սրտի արյան վաստակը...

— Իսկ ես նախկին և ներկա ջհուդիկ եմ,— ընհատեց բանաստեղծի խոսքը Իցկո Մարգուլիս կոչված պատանին,— երբեմն լրագիրներ եմ ծախում, երբեմն էլ թատրոններում ծառայում։ Նեղ տեղն ընկնելիս փողոցներում կոշիկներ եմ սրբում։

— Եվ երևակայում է իրան ապագա Ռուբինշտեյն,— հեգնեց Չաուշենկոն։

— Ա՛խ, պարոն, արդյոք դուք երաժշտության ուսուցի՞չ եք։ Ո՞չ։ Ափսո՛ս։ Ես կկամենայի ձեզանից դաշնամուրի վրա դասեր վերցնել։ Միծաղի՛ր, Չաուշենկո, բայց էլի ե՞ս պիտի քո Часы горя и страданий երաժշտության վերածեմ։ Դե լա՛վ, գավազանդ մի՛ ցույց տուր, ես երկչոտ ջհուդներից չեմ, ես հրեա եմ։ Արեվիդե՛րչի, սինյոր... Գնա՛նք, բանաստեղծ։ Ջիմբա, չիմբա-չիլայա՛...

Նա քամու արագությամբ թռավ դուրս։ Չաուշենկոն հետևեց նրան, հաստ գավազանի ծայրն աղմուկով զարկելով փայտյա սանդուղքի աստիճաններին։

Փառք աստուծո, այս անգամ Լևոնի մայրը տանը չէր. գնացել էր շուկա պարեն գնելու։ Լևոնն ասաց, թե Զաուշենկոն ու Իցկո Մարգուլիսն եկել էին խորհրդակցելու իտալական խմբի առաջին երգչուհի Բարբինիի բենեֆիսի մասին։ Պատրաստվում են արտաքո կարգի ցույցեր։ Զաուշենկոն մտադիր է բենեֆիսի պատվին նվիրել երգչուհուն մի բանաստեղծություն, որ պետք է թարգմանել իտալերեն։

Ես, Լևոնին փորձելու համար, ասացի.

— Կցանկանայի իմանալ, դուք ի՞նչ գործ ունիք երգչուհիների բենեֆիսների հետ։

— Ինչպե՞ս թե ինչ գործ ունինք,— գոչեց նա զարմացած,— երգչուհիները գեղարվեստին չե՞ն ծառայում։

— Շատ էլ ծառայում են, հետո՞։

— Ամեն մարդ պարտավոր է պատվել գեղարվեստը։

— Գեղարվեստը շռայլություն է։ Նա հարուստների համար է։ Իսկ դու և քո ընկերները աղքատ եք...

— Հարուստներն արտիստներին նվերներ են անում, իսկ մենք՝ ցույցեր...

Հազիվ մի քանի բոպե խոսել էինք, երբ ներս մտավ Լևոնի մայրը։ Դնելով պարենի զամբյուղը Շեքսպիրի քթի առջև, նա իսկույն ևեթ հարձակվեց որդու վրա։

— Էլի փողոցային սրիկաները այստեղ էին, հա՞։ Երևի, խորհուրդ ունեիք։ Մի շաբաթ է՝ գլուխս ցավեցնում եք այդ երգչուհու բենեֆիսով։ Պարոն, տեսա՞ք, խոմ տեսա՞ք այս անզգամի ընկերներն ովքեր են։ Ի՞նչ կարող է սովորել այդպիսիներից։ Փո՜ւչ, փ՞ուչ զավակ...

Երբեմն մայրերը կարող են իրենց հարազատ զավակների թշնամին լինել։ Անշուշտ Լևոնի մայրը սիրում էր որդուն, բայց չէր տեսնում յուր և նրա մեջ եղած վիհը, այն ահագին վիհը, որ չէր կարելի լեցնել ու հարթել անվերջ նախատինքներով։ Մի անգամ այս մասին խոսում էինք մեր սեղանատեր. սինյորա Ստեֆանիան և Բորելլին պաշտպանեցին մորը, իսկ մյուսները՝ որդուն։ Ռաիսան ասաց.

— Մեզ՝ հրեաներիս, համարում են նյութապաշտ։ Ես դեմ չեմ, ճիշտ է. բայց, հավատացեք, ոչ մի հրեա, մանավանդ հրեուհի յուր որդու վերաբերմամբ այդ քրիստոնյա

կնոջ չափ նյութամոլ չէր լինի։ Հրեան խելոք կերպով է հարբստահարում յուր որդուն։ Եթե յուր որդու մեջ տեսնում է երաժշտական կամ երգելու ձիրք, աշխատում է հենց այդ ձիրքը շահագործել։ Նա չի ստիպում նրան արհեստավոր կամ վաճառական դառնալ։

Երկու անգամ Լևոնն իմ ներկայությամբ լաց եղավ, երբ մայրը հանդիմանում էր նրան իբրև «անպետք» զավակի։ Նա փաթաթվեց մոր պարանոցին, գոչելով.

— Մա՜մա, մա՜մա, մի բարկանալ, ես քեզ սիրում եմ։

Օ՜օ, ո՜չ, այդ պատանին չէր կեղծում։ Նա սիրում էր մորն անչափ, և այս նրա դժբախտության պատճառներից մեկն էր։

— Կարելի՞ է,— լսեցի մի առավոտ դռների հետևից Լևոնի ձայնը, երբ դեռ անկողնից չէի վեր կացել։

Ուրախությամբ հրավիրեցի նրան ներս։ Նա գլխաբաց էր, երեսն անլվա, աչքերի սպիտակուցները դեղնած, մազերը գզգզված, դեմքը մագաղաթի պես գունատ։ Կռնատակին պահած էր մանդոլինան և այնպես ամուր սեղմած, որ, կարծես, վախենում էր ձեռքից խլեն։ Նրա բաճկոնի կոճակները բաց էին, փողկապ չուներ, շապկի եզրերը բաժանվել էին և երևան էին հանում նրա նիհար կուրծքը։ Ծնկների վրա կուչկուչված վարտիքի ծայրերը բարձրացել էին, երևվում էին կոշիկների ականջները։

— Ներողություն, սինյոր,— ասաց նա, ցրված հայացքը պտտեցնելով չորս կողմը,— կարծում էի՝ վեր եք կացել։

Ես շտապեցի նրան հանգստացնել, թե հենց վեր էի կենում, երբ եկավ։ Նա խնդրեց թույլ տալ իրան կես ժամ մնալու իմ սենյակում։ Ոչ միայն կես ժամ, այլ միշտ, երբ կամենար և որքան կամենար, կարող էր օգտվել իմ սենյակից։ Բայց այս անգամ ինձ շփոթեցրեց նրա այլայլված կերպարանքը։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեցի, կարծելով, որ թաքնվում է ինչ-որ հալածողներից։

Մի քանի վայրկյան չպատասխանեց։ Ես հարցս չկրկնեցի, սկսեցի հագնվել։ Նա մոտեցավ դռներին, նայեց դեպի

դուրս ու հետ եկավ, կանգնեց սենյակի մեջտեղում, ավելի ամուր սեղմելով մանդոլինան կոան տակ։

— Գիտե՞ք, սինյոր,— ասաց,— կարող է մայրս գալ։

— Ի՞նչ անենք, թո՛ղ գա։

— Ես նրանից եմ փախել։ Ուզում էր մանդոլինաս կոտրել, վառարան գցել։

— Ինչու՞։

— Մինչև լույս չեմ թողել նրան քնելու, նվագել եմ։

Հետո պատմեց, թե երեկ օպերային երաժշտական խմբի բենեֆիսն է եղել։ Ներկայացումից հետո բոլոր երաժիշտները գնացել են հյուրանոց ընթրելու։ Խմբապետը Լևոնին էլ հրավիրել էր։ Ընթրիքի միջոցին մեկը վիոլոնչելով նվագել է, ի միջի այլոց, և՛ մի սպանական եղանակ՝ «Մադրիդի շրջմոլիկը»։

— Գլխիցս չէր դուրս գալիս այդ եղանակը։ Ուզում էի անպատճառ սովորել այս գիշեր, որ չմոռանամ։

— Եվ սովորեցի՞ր։

— Այո՛։

— Ինձ համար կնվագե՞ս։

Լևոնի բնավորությունը պարզ էր։ Նա կոտրատվել չգիտեր, ամեն բանի վերաբերվում էր հասարակ։ Ես արդեն մի քանի անգամ լսելի էի նրա նվագումը։ Վատ էր նվագում, թե լավ, չգիտեմ, միայն զգացվում էր և զգացնել տալիս լսողին։

Նա նստեց աթոռի վրա, գրկեց մանդոլինան։ Առավոտյան արեգակի կիտրոնագույն շողերը սփռվել էին ներս։ Լևոնի աչքերն անգիտակցաբար դարձան դեպի այդ շողերը, կարծես ինչ-որ գաղտնի մագնիսի զորությամբ։ Ա՛խ, այդ վեր ուղղված աչքերը, այդ հեզ դեմքը։ Անցել է ընդամենը երկու տարի, բայց կանցնեն շատ տարիներ, դարձյալ այդ օրը վառ կմնա հիշողությանս մեջ։

Ի՞նչ էր Լևոնի նվագածը՝ բացատրել չեմ կարող։ Հիշում եմ միայն ինձ վրա գործած տպավորությունը։ Կիսամերկ բևեռվել էի սենյակիս մեջտեղում և լսում էի բուռն զգացմունքների վիժումը։ Վիշտ և բերկրություն, փոթորիկ ու մեղմ թախիծը խառնվել էին «Մադրիդի շրջմոլիկի» մեջ. դո-

նե այսպես էր թվում ինձ։ Գուցե դա մի կրակոտ, ասպետական ժողովրդի սրտի հրաբուխն էր, փոքր-ինչ կանոնավորված ինձ անհայտ մի հանճարի ստեղծագործ ուժով, բայց հետաքրքրականն ինձ համար նվագողն էր։ Կարծես նյութեղեն պատանին չքացել էր, մնացել էր միայն նրա ստվերը։ Նա չէր նկատում իմ ներկայությունը, քաղցր հնչյունների հեղեղով կլանված նյարդերը չէին զգում աշխարհի նյութականը։ Կարծես հոգին ամբողջովին ձուլվել էր նվագած եղանակի հետ ու սլացել հեռու մի աշխարհ՝ ընտիր հոգիների կախարդական աշխարհը։

Երբ ավարտեց, մի քանի վայրկյան լուռ էր, անշարժ, աչքերը տակավին հառած արեգակի շողերին, որոնք հետզհետե գունատվում էին։

Ես չկարողացա ինձ զսպել, ոգևորված գոչեցի.

— Կեցցե՛ս Լևոն, կեցցե՛ս...

Բայց նա չլսեց։ Անշարժ էր. նուրբ շրթունքները, որոնք միշտ սեղմված էին, դողում էին նկատելի։ Հանկարծ նրա ձեռները թուլացան, գլուխը մի փոքր թեքվեց ուսին, մանդոլինան հանդարտիկ սահեց կրծքից և ընկավ նիհարիկ ծնկների վրա։ Եվ նրա դեպի շողերը հառված աչքերի մեջ նշմարեցի արցունք։

— Մանուկ, ինչո՞ւ ես լալիս,— գոչեցի կարեկցությամբ։

Նա ոտքի կանգնեց և, ճակատից հեռացնելով թանձր մազերը, տարօրինակ ձայնով արտասանեց.

— Վիոլոնչելիստն ինձ ասաց՝ Մադրիդի շրջմոլիկը դրժբախտ է եղել։ Յուրտ գիշերները երգել է գրանդի աղջկա լուսամուտի տակ և լաց եղել... Նրա հայրը աղքատությունից մի օր կախվել է ծառի վրա, խեղդվել։

Այդ ժամանակ ես չհասկացա նրա խոսքերի խորքերում թաքնված բուն վիշտը և կարծեցի զառանցում էր։ Արդարև, զառանցում էր նա, բայց ինչո՞ւ և ի՞նչ...

— Ա՛խ, ներողություն,— գոչեց նա, հանկարծ ուշքի գալով,— ես... անքնությունից...

— Այո, Լևոն, անքուն ես։ Եթե կամենում ես՝ հանգստացիր սենյակումս։

— Շնորհակալ եմ, սինյոր։ Թո՛ւյլ տվեք միայն մանդո-

լինաս թողնեմ այստեղ։ Մայրս կարող է նրան վտարանը գցել։ Երեկ լուսամուտով փողոց շպրտեց կիթառս ու մի քանի լուսանկարներ։

— Լևոն, մայրդ չար կին է,— գոչեցի ես, մինչև հոգուս խորքը վրդովված այրու վայրենի արարմունքից։

Լևոնը չափազանց վշտացավ և սկսեց պաշտպանել մորը։ Ո՛չ, ո՛չ, չար կին չէ նրա մայրը, ընդհակառակը, շատ բարի է։ Նա սիրում է Լևոնին։ Երբեմն քնած ժամանակ Լևոնը զգում էր, որ իրան թեսքուն համբուրում է։ Նա սիրում է, բայց սերը ցույց չի տալիս։ Վախենում է, որ Լևոնը երես առնի, ավելի փչանա։

— Ավելի փչանա՞ս,— գոչեցի ես,— բայց մի՞թե դու փչացած ես։

— Ի՞նչ գիտեմ, սինյոր. մայրս ասում է՝ «ո՛վ յուր ծընողների կամքը չէ կատարում, փուչ որդի է»։

— Է՛հ, ուրեմն, ինչո՞ւ չես կատարում մորդ կամքը,— հարցրի դիտմամբ, կամենալով փորձել նրան։

Նա մի տխուր հայացք ձգեց երեսիս, ոչինչ չասաց։ Ես այդ հայացքի մեջ կարդացի նրա անզորությունը՝ դառնալ մոր կամքի հլու զավակ։ Անվիճելի էր, որ նա շուտով կհրաժարվեր կյանքի բոլոր բարիքներից, քան թատրոնից։

Ճաշի միջոցին պատմեցի նրա տարօրինակ տրամադրության մասին։ Լուիկան լսեց լարված ուշադրությամբ։ Նրան նկատելու չափ շփոթեցրեց այն, ինչ որ Լևոնն ասել էր «Մադրիդի շրջմոլիկի» մասին։ Կավալլարոն խորհրդավոր ժպտում էր և գլխով հանդիմանական շարժումներ անում, Լուիզայի աչքերին նայելով։ Ուսանողը նկատեց, թե Լևոնն աննորմալ էակ է, մի տեսակ հոգեկան հիվանդ։ Նրա հասակի ու զգացումների մեջ չկա համաչափություն։ Խակ ուղեղը զարգանում է անկանոն։ Այս նկատողությունը չափազանց վրդովեցրեց Կավալլարոյին, Չխնայելով ռուս լեզվի քերականական կանոնները, նա սկսեց հակաճառել.

— Հոգեկան հիվանդ, հոգեկան հիվանդ. վերջին ժամանակ կարծես գիտությունները հենց նրա համար են սովորում, որ բոլոր տաղանդավոր մարդկանց հիվանդ համարեն։ Ո՛չ, պարոններ, խակական հոգեկան առողջները հենց Լևոն-

ներն են։ Միայն նրանք դժբախտ են, սինյոր ստուդենտ, հասկանու՞մ եք, դժբախտ, որ չեն ծնված կյանքի բարեհաջող պայմաններում։ Փոխանակ գիտնականորեն բացատրելու այդ պատանիների հոգին, օգնեցեք նրանց. ահա՛ ինչ։ Մի՛ թողնեք ադամանդը փողոցի ցեխի մեջ։ Ափսո՛ս է Լևոնը։

— Նա օրից-օր հալվում է մոմի պես,— շարունակեց Կավալլարոն կարեկցաբար,— նրա կազմը նուրբ է, չի կարող դիմանալ այդ տեսակ ապրուստի։ Երբեմն գիշերը, հազիվ անկողին պառկած, վեր է կենում, գնում կանգնում է կասի առջև, առանց վերարկուի, մի քանի կոպեկ վաստակելու համար։ Վաստակածի մի մասն էլ թատրոնի վրա է ծախսում։ Ահա վաղը սինյորա Բարբինիի բենեֆիսն է։ Դա նրա ամենասիրելի երգչուհին է։ Համոզված եմ, որ այժմ իրան տանջում է, որպեսզի կարողանա որևէ կերպ վաղվա ցույցերը գեղեցկացնել...

Հետևյալ երեկո ես թատրոնումն էի։ Նստած մի բարեկամ ընտանիքի հետ օթյակներից մեկում, նայում էի դեպի վերնահարկ։ Բազմաթիվ գլուխների մեջ, վերջապես, տեսա Լևոնին։ Արմունկները պատնեշին հենած, գլուխն ափերի մեջ բռնած, աչքերը հառել էր բեմին։ Նրա մի կողմում կանգնած էր բանաստեղծ Ջաուշենկոն, մյուս կողմում՝ Իցկո Մարդուլիսը։ Երբ բեմի վրա երևաց երգչուհի Բարբինին, Լևոնը գլուխը բարձրացրեց և ամենից առաջ ծափահարեց։ Նրան հետևեցին Ջաուշենկոն և Իցկոն, հետո վերնահարկի մի մասը։ Նույն վայրկյանին մի քանի տասնյակ ձեռներ ձգեցին բեմի վրա ինչ-որ սպիտակ ու կարմիր ծաղիկներ, նաև գույնզգույն բարակ թղթի թերթիկներ։ Գոյացավ մի ֆանտաստիկ անձրև։ Պարտերն ակամա հափշտակվեց, և ամբողջ հինգ րոպե թատրոնը թնդում էր բուռն ծափահարություններից։ Վերցնելով յուր գլխին տեղացող անձրևից մի կաթիլ՝ մի ծաղիկ, երգչուհին սեղմեց սրտին, անդադար գլուխ տալով աջ ու ձախ, հետո աչքերը բարձրացրեց դեպի վերնահարկ և օդային համբույրներ ուղղեց պատսպի երկրպագուներին։ Այս ավելի ոգևորեց նրանց և ավելի զորացրեց ազաղակներն ու ծափերը։

Լևոնը յուր մարմնի կիսով դուրս էր եկել պատնեշի հե-

տնից։ Կարծես ձգտում էր ծաղիկների հետ ընկնել երգչուհու ոտների տակ իբրև կենդանի զոհ գեղարվեստի։

Անցավ առաջին գործողությունը, երկրորդը, երրորդը։ Լևոնի ոգևորությունը սաստկանում էր երգչուհու աջողության հետ զուգընթաց։ Նա մերթ ծափահարում էր, ձեռները գլխից վեր բարձրացրած, մերթ աղաղակում. «էվի՞վա, բրա՞վա, բրավի՞սիմա»...

Վերջին գործողության կիսում Լևոնը հանկարծ չքացավ Զաուշենկոյի և Իցկոյի հետ, մինչև ներկայացման վերջը չերևաց այլևս։

Դուրս գալով խուռն բազմության հետ փողոց, տեսա հետևյալը։— Թվով երեսուն-քառասուն ոստիկաններ կազմել էին մի ընդարձակ շրջան՝ հեղեղված էլեկտրական ահագին լապտերների առատ լուսով։ Թատրոնից դուրս եկողները հավաքվում էին շրջանի հետևում։ Մուտքի մոտ մի կողմում խմբված էին հարյուրի չափ համալսարանական ուսանողներ, մյուս կողմում կանգնած էին երկու կանոնավոր շարքերի բաժանված մի խումբ պատանիներ տասնուհինգից մինչև քսան տարեկան։ Միակ չափահասը նրանց մեջ Զաուշենկոն էր։ Նա ձեռին պահած էր մի թերթ թուղթ։

Ուսանողներից մի տասը հոգի ձեռներում բռնած էին մի-մի փոքրիկ փունջ ծաղիկների, իսկ պատանիները՝ մի-մի վառ կերոն։

Տեսարանը գեղեցիկ էր, հետաքրքրական։ Գիտեի, որ Լևոնը հետին դեր չի կատարում նրա մեջ։ Քաշվեցի մի կողմ և աչքերով որոնեցի նրան։ Դժվար չէր գտնելը։ Նա կանգնած էր պատանիների շարքերից մեկի գլխին, ձեռքին մի երկայն ձող, որի ծայրում վառվում էր հաստ մոմի կտորը։ Ցուրտ չէ՞ր զգում նա առանց վերարկուի, նույնիսկ առանց կրկնակոշիկների, յուր բարակ պիջակում։ Երևի չէր զգում, թե՛և եղանակը բավական ցուրտ էր։ Նա հափշտակված էր յուր դերով, աշխատում էր կարգ պահպանել պատանիների շարքում։ Կերոնների հրեղեն լեզվակները էլեկտրական ահագին լապտերների լուսո ներքո ներկայացնում էին դեղնագույն աղոտ բծեր՝ տկար, որպես աստղերը լուսնյակ երեկո։

Լևոնի նիհար դեմքը ստացել էր մի տեսակ բաց-մանի-

շակագույն երանգ։ Նա հիշեցնում էր դեկադենտ նկարչի քմահաճ վրձինի տարօրինակ ստեղծագործություն։ Սակայն այդ հիվանդոտ դեմքի վրա աչքերը փայլում էին հղկած պողպատի պես։ Զորս կողմից էլեկտրականությամբ հեղեղված՝ նրա մարմինը գետնի վրա չէր ձգում ստվեր. նա ինքը, կարծես, ստվեր լիներ։ Նրա շարժումները արագ էին, ջղաձգական, լի ավյունով։ Երբ խոսում էր, նույնիսկ հեռվից ինձ թվում էր, որ խոսում են նրա բոլոր նյարդերը, սրտի բոլոր թելերը։ Ահագին բազմության մեջ ձայնն ինձ չէր հասնում, բայց գրազ կգայի, որ այդ ձայնը դողում էր հոգեկան բարձր հաճույքից յուր բոլոր ելևէջներով։ Լևոնը երջանիկ էր։

Երբ երգչուհին դուրս եկավ թատրոնից երկրպագուներով շրջապատված, Իցկո Մարգուլիոսն ամենից առաջ աղաղակեց. «ուռա՞»։ Զաուշենկոն, գավազանով հետ մղելով նրան, մոտեցավ երգչուհուն ու տվեց նրան յուր ձեռքի թուղթը։ Անշուշտ, այդ նրա ոտանավորն էր, հատկապես օրվա առիթով գրված։

Լևոնը գդակը վերցրեց և օդը գցեց։ Նրա թանձր մազերից երկու-չերտ ընկան նուրբ ճակատի վրա։ Նրա օրինակին հետևեց պատանիների ամբողջ խումբը։ Երևան եկավ Զաուշենկոյի նեղ, երկայնաձև գլուխը, հարթ, նոսր մազերով։ Եվ կիսամերկ, կիսաքաղցած պատանիների տհաս ձայները՝ «բրա՞վա, բրավի՞սիմա», խառնվելով միմյանց, կարծես, սառեցին ձմեռային օդում։ Այդ վայրկյանին ես անիծեցի մտքումս երջանիկ երգչուհուն, որ թեկուզ ակամա, խելքից հանել էր այդ մատաղահաս էակներին և վտանգի էր ենթարկում նրանց կյանքը, ո՞վ գիտե, գուցե և՛ հոգին։ Մի՞թե, արդարև, գեղարվեստն այնքան անողոք է յուր բարձրության վրա, որ յուր առջև ծունկ է չոքեցնել տալիս նույնիսկ անմեղությանը։

Երբ երգչուհին մոտեցավ թատրոնի առջև սպասող փառահեղ կառքին, մի քանի զույգ ձեռներ սկսեցին արձակել ձիերը։ Կարծեցի, թե Լևոնն է սկզբնապատճառը և շտապեցի մտքումս հայհոյել բարեկամիս։ Սակայն դեռ լավ չէի ճանաչում նրան։ Նայեցի՝ չկար ո՞չ լծվողների և ո՞չ լծողների

մեջ։ Դրանք բացառապես ուսանողներ էին, որոնց թեթևամտությունը, երևի, անասնության էր հասնում։

Լևոնի խումբն աջ ու ահյակ ուղեկցում էր կառքին՝ վառ կերոններով։ Երգչուհին մեկ-մեկ ընդունում էր ուսանողներից փնջերը, փետում ու ծաղիկները սփռում պատանիների վրա, իսկ ուսանողներին վարձատրում էր օդային համբույրներով։

Ճեղքելով ամբոխը, ես մոտեցա բարեկամիս։

— Աա՜, դուք է՞լ այստեղ եք,— գոչեց նա, հևալով,— լսեցի՞ք ինչպես երգեց, լսեցի՞ք...

— Այո՛, Լևոն, հիանալի երգեց։ Բայց այդ ուսանողնե՞րը... Ի՞նչ են անում... Մի՞թե դու հավանում ես այդպիսի ցույցեր։

— Աստված մի՛ արասցե։

— Մենք անասուններ չենք,— ասաց Իցկո Մարգուլիսը։

— Այո՛, մենք մարդիկ ենք,— գոչեց Զաուշենկոն, վրդովված.— է՛յ պարոնայք ստուդենտներ, մի՛ ձգեք ձեր մունդիրի վարկը. է՛յ, պարոններ, ամոթ է...

— Մտի՛կ արեք,— գոչեց Լևոնը,— ինքն էլ չի հավանում, ուզում է իջնել կառքից... Բայց ո՛չ, չի իջնում... Աա... Վի՛տյա, Պետրո, Մերգել, Խայս, հանգցրեք կերոնները... Ո՛չ, ո՛չ, ո՛չ, սպասեցեք... Նա իջնում է կառքից... Իջավ, իջավ... Ձիերը լծում են... Կարի՞սսիմա, կեցցե՛ Բարբինի. էվի՞վա, բրա՞վա, բրավի՞սսիմա, առա՛ջ, առա՛ջ...

Եվ, կերոնը բարձրացրած, աղաղակելով, չքացավ ամբոխի մեջ, յուր հրեա և հույն ընկերների հետ... Նրանց հետևվեց Զաուշենկոն, լայն վերարկուի փեշերը օդի մեջ ֆրրֆրռացնելով պատառոտված առագաստների պես...

Ես տուն վերադարձա ծանր տպավորության տակ։ Այդ գիշեր երազումս տեսա Լևոնի հորը։ Թշվա՞ռ վարսավիր։ Նա հարբած, կեղտոտ ու պատառոտված հագուստում շընթրկալ էր թատրոնի մուտքի առջև։ Անցորդները հեգնում ու ծիծաղում էին նրա անհույս սելը, որ, ո՛վ գիտե դուցե առաջացել էր գեղարվեստի սիրուց։ Այսպես էի ես միշտ պատկերացնում վարսավիրին, այսպես էլ տեսա նրան երազումս...

Զարթնելով, փափագ զգացի Լևոնին տեսնելու։ Բարձրացա վերև։ Տանը չէր։ Մայրն ինձ հանդիպեց արտասուքը աչքերին և գանգատվեց, թե գիշերը տուն է վերադարձել երեք ժամին։ Այսօր զարթնել է թե չէ, իսկույն տնից դուրս է եկել։

— Պարոն,— աղերսեց այրին,— դուք կարող եք նրան խելքի բերել։ Նա սիրում է ձեզ, կլսե ձեր խոսքերը։ Նա գնում է հոր ճանապարհով։ Վերջն իրան հարբեցողության կտա և շան պես կթավալվի փողոցներում։

— Նա այդ չի անիլ, խելոք է։

— Ա՛խ, պարոն, կարծում եք հայրը հիմա՞ր էր։ Ո՛չ, նա էլ խելոք էր։ Բայց խելքից հանեցին, օրս սևացրին։ Ամուսնուս ձեռքիցս խլեցին, չեմ ուզում որդուս էլ խլեն... Պարոն, օգնեցեք, ես մայր եմ, հասկանո՞ւմ եք, մայր...

Այո՛, մայր էր այդ կինը, գիտեի, որ սիրում էր որդուն ու տանջվում նրա պատճառով։ Այժմ խղճում ու մինչև անգամ ցավակցում էի նրան. բայց դարձյալ անախորժ էին ինձ համար նրա անվերջ գանգատները, նրա եսամոլ հոգացողությունը որդու համար։

Կեսօրից հետո կրկին բարձրացա վերև։ Այս անգամ Լևոնը տանն էր, բայց անկողնում պառկած։ Նրա վտիտ այտերի վրա նշմարեցի անսովոր կարմրություն։ Բռնեցի բազուկը. երակը զարկում էր ուժգին։ Անշուշտ երեկ մրսել էր։ Բայց չէր հանձն առնում հիվանդությունը։ Նա ուրախ էր և, օգտվելով մոր բացակայությունից, հայտնեց յուր ուրախության պատճառը։ Բարձի տակից հանեց մի լուսանկար և, ցույց տալով, հարցրեց.

— Ճանաչո՞ւմ եք։

Այդ երեկվա երջանիկ երգչուհու լուսանկարն էր։

«Իմ սիրելի արտիստին», կարդացի լուսանկարի ճակատին։

— Ամենքն էլ ինձ արտիստ են կոչում,— ասաց Լևոնը,— չգիտեմ ինչու։ Այսօր գնացել էի նրան շնորհավորելու երեկվա աջողության համար... Ծաղիկներ էի տարել։ Հրավիրեց ներս, կոֆեով հյուրասիրեց։ Բավական խոսեցինք... հարցնում էր՝ ինչքան եմ վաստակում։ Խաբեցի, ասացի՝ հայրս ժառանգություն է թողել։ Վախենում էի, որ փող ա-

ուաջարկի ինձ։ Նա նվիրեց ինձ յուր լուսանկարը։ Ես համբուրեցի նրա ձեռքը, նա էլ իմ ճակատը։ Օ՜օ, սինյոր, ես շատ երգչուհիներից ունեմ այդպիսի նվերներ, ահա՛, այն ալբոմը լիքն է...

Եվ այս վարձատրությամբ նա գոհ ու երջանիկ էր։

— Բայց ես մի լուսանկար ունիմ,— շարունակեց նա,— ալբոմում չեմ պահում։ Մայրս սպառնում է բոլորն այրել, վախենում եմ այս մեկն էլ այրի... իսկույն ցույց կտամ...

Նա բարձրացավ տեղից, պիջակի գրպանից հանեց մի ծրար, ծրարի միջից թանկագին լուսանկարը։ Ես կարդացի հետևյալ մակագիրը. «Իմ ապագա երկրպագուին—Լուիզա»։

— Օ՜հ, ճիշտ է, բոլորովին ճիշտ, սինյոր։ Ես նրա ապագա երկրպագուն կլինեմ։ Լուիզան փայլուն ապագա ունի. կտեսնեք, սինյոր, կտեսնեք... Բայց այս ի՞նչ է, գլուխը պտտեց, պառկեմ...

Երբ տիկին Ալմաստը — Լևոնի մայրը — ներս մտավ, խորհուրդ տվեցի բժիշկ հրավիրել։ Լևոնը գլուխը բարձրացրեց, նստեց անկողնում։ Ի՞նչ բժիշկ, ո՞վ է հիվանդ, հարկավոր չէ բժիշկ... Ես հասկացա նրա միտքը, վախենում էր, որ բժիշկն արգելի նրան տնից դուրս գալու։

Երեկոյան յոթ ժամին երրորդ անգամ բարձրացա վերև և նրան չտեսա։ Տիկին Ալմաստն ասաց, թե իմ դուրս գալուց հետո թաքուն հագնվել է ու փախել...

Անմի՞տ պատանի. նա վտանգի էր ենթարկում յուր կյանքը։ Ես իսկույն դուրս եկա փողոց. գիտեի ուր կարող է լինել։ Հանդիպեցի նրան թատրոնի մուտքի առջև։

— Պարոններ, չե՞ք կամենում պրոգրամ գնել,— դիմում էր նա անցորդներին, առաջարկելով նույն օրվա ներկայացման ծրագիրը։

Մարդիկ անցնում էին անտարբեր, անգամ չնայելով նրան, իսկ ոմանք կոպտությամբ գոռում էին. «գնա՛, կորի՛ր»։ Եվ Լևոնի հպարտ հոգին կրում էր այդ վիրավորանքները համբերությամբ։ Իմ սիրտը մորմոքվեց, երբ նայեցի նրա կապտած դեմքին։

— Գնա՛ տուն, գնա՛,— խնդրեցի ես,— դու բոլորովին հիվանդ ես...

— Ո՞վ ասաց հիվանդ եմ։ Մա՞յրս։ Նա միշտ կամ իրան է հիվանդ երևակայում, կամ ինձ։ Այս երեկո նոր օպերա է ներկայացվում, ես տո՞ւն գնամ։ Ո՛չ, սինյոր, ահա՛ իմ տունը...

Նա ցույց տվեց թատրոնը և ժպտալով հեռացավ։ Հեռվից լսում էի նրա ձայնը.

— Պարո՛ն, պրոգրամ, պրոգրամ, չե՞ք կամենում, նոր օպերա է, հետաքրքրական. պրոգրամ, հատը տասը կոպեկ...

Մյուս օրն առավոտյան դարձյալ բարձրացա վերև և էլի նրան անկողնում տեսա։ Միևնույն տանը բնակվում էր մի հրեա բժիշկ։ Շտապեցի նրան հրավիրել։ Քննեց հիվանդին, գրեց ինչ-որ դեղ։ Երկու օր հազիվ կարողացանք Լևոնին տանը պահել, երկրորդ երեկո լաց եղավ, երբ արդելեցինք թատրոն գնալ։ Բարեբախտաբար, երրորդ օրը տաքությունն անցավ։

Ձմեռային սեզոնը վերջացավ։ Իմ հարևան արտիստները հենց մեծ պասի առաջին օրն ուղևորվեցին իրենց հայրենիքը։ Այդ օրը տխուր էր ոչ միայն Լևոնի, այլև ինձ համար. այնքան արդեն վարժվել էի հարևաններիս շրջանին։

Մենք մինչև կայարան ուղեկցեցինք իտալացիներին։ Հրաժեշտ տալիս՝ Կավալլարոն երեք անգամ բարեկամաբար համբուրվեց Լևոնի հետ...

Հենց նույն օրը Լուիզան ինձ ասաց, թե ինքն էլ ամենաուշը մի ամսից ուղևորվելու է Իտալիա։ Հարցը վճռված էր. սինյորա Ստեֆանիան վաղուց էր հաշտվել աղջկանից բաժանվելու մտքի հետ։

Երբ հայտնեցին Լևոնին Լուիզայի ուղևորության մոտալուտ ժամանակը, ինձ այնպես թվաց, որ լուրը նրա վրա առանձին տպավորություն չգործեց։ Գուցե այդ նրանից էր, որ նույն օրերը նա առհասարակ շատ տխուր էր տրամադրված։ Մեծ պասի առաջին շաբաթն էր, թատրոնները փակ էին։ Լևոնն ամեն օր գնում էր քաղաքային թատրոնի շուրջը գտնվող գեղեցիկ պարտեզը, նստում այնտեղ ու նայում հսկայական շինությանը։ Հետո գլուխը կրծքին թեքած, ով գիտե ինչ խորհրդածությունների մեջ, վերադառնում էր

տուն։ Նա նորոգել էր տվել մոր ձեռքով լուսամուտից փողոց շպրտված կիթառը, նվագում էր։ Երբեմն գալիս էր ինձ մոտ և իմ առաջարկությամբ մանդոլինա նվագում։ Մի անգամ թախանձեցի նրան կրկնել «Մադրիդի շրջմոլիկը». մերժեց։

Օպերային փոխարինեց դրաման։ Մեծ պասի առաջին կիրակուց սկսվեցին ներկայացումները։ Լևոնը մտավ յուր գերի մեջ, բայց ո՛չ նախկին սիրով. դրաման օպերայի չափ չէր սիրում, մանավանդ որ եկվոր խմբի մեջ չկային գրավիչ ուժեր։ Սակայն պատանուն պաշարել էր ուրիշ տեսակ աշխույժ, որ ինձ անհանգստացնում էր։ Նա ամեն օր գալիս էր ինձ մոտ, վերցնում մանդոլինան, նստում լուսամուտի մոտ, նվագում «Մադրիդի շրջմոլիկը»։ Երբեմն հանկարծ ընդհատում էր նվագումը, մանդոլինան շտապով դնում էր սեղանի վրա ու դուրս վազում։ Նա գնում էր Լուիզայի մոտ, նստում և երկար ու երկար հարցուփորձ անում առաջիկա ճամփորդության մասին։ Եվ բարեսիրտ Լուիզան երբեք չէր ձանձրանում նրա հարցերից, որովհետև նրա համար հաճելի էր խոսել յուր ապագայի մասին։

— Գիտե՞ք,— դարձավ ինձ մի անգամ Ռախսան,— նա ուղղակի սիրահարված է Լուիզայի վրա։ Այո՛, կարող եմ երդվել, որ սիրահարված է։

— Զգո՛ւյշ եղեք, օրիորդ,— ասացի ես,— Լևոնը կլսի ու կվշտանա։

Ես հիշեցի թշվառ վարսավիրին և վախեցա՝ միգուցե որդին ենթարկվի հոր վիճակին։ Բայց բարեբախտաբար, Լուիզայի շրջապատողներն ավելի խելացի էին, քան այն երգչուհու շրջանը, որի վրա սիրահարված էր եղել վարսավիրը։ Ռախսան խոսք տվեց ինձ այլևս չխոսել Լևոնի նվիրական զգացումների մասին...

Հասավ, վերջապես, օրիորդի ուղևորության օրը։ Մի շաբաթ էր, Լևոնն անճանաչելի էր դարձել. նա ուրախ էր ու զվարթ։ Կարծես ինքն էր պատրաստվում ճանապարհորդելու։ Գնում էր, գալիս, խոսում, զվարճախոսում։ Զգիտեր ինչ աներ Լուիզայի սիրտը շահելու համար։ Ուղևորության նախընթաց երեկո Լուիզան, ցույց տալով մի արծաթե գրչակոթ, ասաց.

— Տեսեք ի՞նչ խելացարություն է արել ձեր հայրենակիցը։ Չէ՞ որ այս նրա մի շաբաթվա աշխատանքի վարձն է։

— Նա նվիրել է ձեզ այդ գրիչը, որ նամակներ գրեք իրան,— ասացի ես։

— Այո՛, և ես կգրեմ նրան։ Խնդրեցի նրան հետ վերցնել նվերը, վիրավորվեց, քիչ մնաց լաց լինի։

Գնացքն ուղևորվում էր առավոտյան տասը ժամին։ Մենք, սինյորա Ստեֆանիայի բոլոր կենողներս, գնացինք կայարան Լուիզային ճանապարհ դնելու։ Կարծում էի, Լևոնն ամենից առաջ եկած կլիներ այնտեղ։ Սակայն նա չկար և չերևաց երկար ժամանակ։ Այս անսպասելի էր. ի՞նչը կարող էր խանգարել նրան վերջին անգամ տեսնելու Լուիզային։

Սինյորա Ստեֆանիան ինձ հաղորդեց, թե Կավալլարոյից մի շատ սիրալիր նամակ է ստացել։ Երգիչն ուրախությամբ հանձն է առնում հոգալ Իտալիայում Լուիզայի մասին, ղեկավարել նրա առաջին քայլերը։

— Նա շատ ազնիվ մարդ է,— ավելացրեց տանտիրուհիս ուրախ-ուրախ,— հարազատ եղբոր պես կնայի Լուիզային։ Ես աղջկանս բաց չէի թողնիլ, եթե չլիներ Կավալլարոն...

Երբեք Լուիզային այնչափ զվարթ ու զվարճախոս չէի տեսել, որչափ այդ օրը, չնայելով, որ մինչև կայարան գընալն երկու անգամ արտասվել էր մորից բաժանվելու պատճառով։ Մի վայրկյան անգամ չէր հանգստանում, թռչկոտում էր ինչպես յոթ տարեկան աղջիկ, քրքջում էր, հրճվում յուր ճամփորդությամբ։ Ամենքիս հետ կատակներ էր անում և բոլորին խոստանում առանձին-առանձին նամակ գրել։ Նա լի էր ապագայի վերաբերմամբ քաղցր հույսերով և այդ հույսերը չէր թաքցնում մեզանից։ Մի երկու տարուց հետո նա կվերադառնա մշակված, կատարելագործված ձայնով, կսկսի երգել օպերայում։ Տեսեք, ինչպիսի՞ աջողություն կունենա, ո՞րքան երկրպագուներ։

— «Իսկ նա՞,— անցավ մտքովս ակամա,— նրա մասին չե՞ս մտածում»։

— Բայց ո՞ւր է Լևոնը,— հարցրեց Լուիզան հանկարծ, կարծես գուշակելով իմ միտքը.— ա՜հ, իմացա ինչո՛ւ համար

է ուշանում։ Ռիշելիեի փողոցով անցնելիս տեսա նրան ծաղկավաճառի խանութում։ Այդ պատանու սիրտը օվկիանոս է, ընդարձակ... Ահա նա, գալիս է... Տեսեք՝ ինչ է բերում, չէի՞ ասում... Անուղղելի՞...

Ճեղքելով կայարանի ամբոխը, Լևոնը մոտեցավ մեզ մի գեղեցիկ փունջ ձեռին։ Շատ վազելուց քրտնել էր ու սաստիկ հևում էր։ Դիմելով ուղղակի Լուիզային, գդակը վերցրեց և գլուխ տալով, փունջը ներկայացրեց։

Արդեն լավ ճանաչելով նրան, ես վախեցա միայն մի բանից՝ Լուիզայի հանդիմանությունից։ Եթե օրիորդն ամենաթեթև ակնարկ անգամ աներ, թե այդպիսի մի նվեր բոլորովին չի համապատասխանում Լևոնի աղքատ գրպանին, գիտեի, պիտի շարաչար վիրավորեր նրան։ Բայց նա նրբազգաց գտնվեց. իսկույն ըմբռնեց Լևոնի հոգեբանությունը և այնպես հայտնեց յուր շնորհակալությունը, այնպես ժպտաց, հոտ քաշելով փնջից, այնպես գովեց նվերը, որ պատանու այտերը կարմրեցին ներքին հաճույքից։

Այդչափ սրտագետ չգտնվեց Ռաիսան, նա հարցրեց Լուիզային.

— Կավալլարոն քեզ դիմավորելո՞ւ է Միլանում։

— Այո,— պատասխանեց սինյորա Ստեֆանիան։

— Մի՞թե նա այնտեղ է,— հարցրեց Լևոնը հուզված, դողդոջուն ձայնով։

— Նա եկել է Միլան հատկապես Լուիզային դիմավորելու համար,— պատասխանեց սինյորա Ստեֆանիան մի առանձին հաճույքով։

Այն հոգեկան հաճույքը, որ մի ժպիտով Լուիզան պատճառել էր Լևոնին, վայրկենաբար չքացավ, տեղի տալով գաղտնի նախանձի կրծող կրքին։ Բայց Լևոնը գիտեր ղսպել իրան չափահաս տղամարդի պես։ Նա ասաց.

— Այդ լավ է։ Սինյոր Կավալլարոն կօգնի սինյորինա Լուիզային

Երկրորդ զանգակի միջոցին Լուիզան սկսեց վերջին հրաժեշտը տալ։ Նա արավ ավելի, քան կարելի էր սպասել նույնիսկ յուր նման մի բարի, հասարակ և պարզասիրտ օրիորդից, որ վարակված չէր նախապաշարումներով։ Ազատվելով

մոր գրկից, ամենից առաջ Լևոնի ձեռն առավ և... համբուրվեց նրա հետ պարզ ընկերական կերպով։ Հետո, շտապ-շտապ սեղմելով մեր ձեռները, փունջը ձեռին բարձրացավ կառախումբ։

Ես դիտում էի Լևոնին։ Նա բևեռվել էր նույն տեղում, ուր արժանացավ Լուիզայի հրաժեշտի համբույրին, և նայում էր այն լուսամուտին, ուր պիտի երևար օրիորդը։ Բնազդաբար բռնեցի նրա թևից և մի փոքր հեռացրի կառախմբից...

Ահա երևաց Լուիզայի զվարթ դեմքը լուսամուտից։ Նա օդային համբույրներ էր ուղարկում մեզ։ Մի քանի րոպե ևս և լսվեց երրորդ զանգը, ու կառախումբը կամացուկ շարժվեց, այնպես անաղմուկ, որ կարծես նավ էր լողում։ Այն ժամանակ միայն Լևոնը սթափվեց և գլխարկը բարձրացնելով գոչեց իտալերեն.

— Բարի ճանապա՞րհ... Ցտեսությո՞ւն... Շուտո՞վ...

Տուն վերադարձանք երկուսս միասին ձիաքարշով։ Ճանապարհին Լևոնը մի բառ անգամ չարտասանեց։ Լուռ էի և ես. չէի կամենում ընդհատել նրա մտքերի թելը։ Թե նա տանջվում էր՝ այս պարզ էր ինձ համար, թե նա երջանիկ է Լուիզայի համբույրով՝ այս էլ երևում էր։ Բայց թե ի՞նչ էր մտածում՝ այս չիմացա. երևում էր միայն, որ նրան զբաղեցնողը սովորական մի միտք չէ...

Ես հրավիրեցի նրան սենյակս։ Ինչ-որ պատճառով հրաժարվեց գալ։ Արագ-արագ բարձրանալով վերև, չքացավ հինգերորդ հարկի բարձրության մեջ։

Այդ օրից ավելի քան մի շաբաթ անցավ, ես նրան չտեսա։ Ինքը չէր գալիս սենյակս, իսկ ես բարձրանում էի վերև և միայն մորը հանդիպում։

— Ուշ գիշերին տուն է դալիս, երբ ես քնած եմ, առավոտը գնում է, երբ քնած եմ։ Բայց լավ որդի է, ամեն օր սեղանի վրա թողնում է հիսուն կոպեկ ողորմություն... անիծվի՞ նա...

— Տիկին,— գոչեցի ես բարկացած, բոլորովին համբերությունից դուրս գալով այրու անվերջ անեծքներից,— նա ձեր ծախքը տալիս է, հերիք է, էլ ի՞նչ եք ուզում...

Խեղճ կինն ապշած նայեց երեսիս ու մի քայլ հեռու

դրեց։ Երևի, շատ էի բարկացած, և նա չէր սպասում իմ կողմից այդչափ կոպտություն։ Ես զզջացի. ինչ և լիներ, նա դըժբախտ էր, գոնե այդպես էր համարում իրան։

— Հետաքրքրվե՞լ եք, արդյոք, ուր է գնում ամեն օր,— հարցրի ես, ձայնս մեղմացնելով։

— Շատ էլ հետաքրքրվում եմ, որ չի ասո՞ւմ։ Կիթաոն էլ ամեն օր հետը տանում է։ Բայց ես կիմանամ՝ ուր է գնում, կիմանամ. չեմ թողնիլ որ կորչի հոր պես...

Զարմանալին այն էր, որ թատրոնների շուրջն էլ չէին հանդիպում Լևոնին։ Ես կատարելապես տխրում էի առանց նրան, մանավանդ, որ սինյորա Ստեֆանիայի սեղանատունը զրկվել էր յուր հրապույրից։ Այնտեղ այլևս չէին հնչում Լուիզայի մետաղային ձայնն ու վարակիչ ծիծաղը։ Սինյորա Ստեֆանիան նրա ուղևորվելու հենց երկրորդ օրը դաշնամուրը վերադարձրել էր երաժշտական խանութ, ուսկից վերցրած էր ամսավարձով։ Չկար ո՛չ նվագող, ո՛չ երգող, ո՛չ ծիծաղող։ Ռաիսան և ուսանողը մտերմացել էին ու զբաղված էին իրանց մտերմությամբ։ Ավարտելով ճաշը, նրանք շտապում էին հեռանալ իրենց սենյակները։

Ես ուրախությամբ կտեղափոխվեի մի ուրիշ բնակարան, եթե չվնասեի Ստեֆանիայի դրությանը։ Նրա սենյակների մեծ մասը դատարկ էր, եթե ես էլ դուրս գայի, խեղճ կինը պիտի տուժեր։

Մի անգամ ճաշից հետո բուլվարումն էի։ Այստեղից բացվում էր Օդեսայի գեղեցիկ տեսարաններից մեկը։ Մոտ երկու հարյուր ոտնաչափ բարձրությունից երևում են ամբողջ նավահանգիստն ու ծովածոցը իրանց հազարավոր նավերով։ Ես վաղուց էի կշտացել այդ տեսարանից։ Նստած ամբոխից հեռու մի առանձնակի նստարանի վրա՝ երաժշտություն էի լսում։ Ակամա հիշում էի Լևոնի մանդոլինան, որ տասն օր էր որբացել էր սեղանիս վրա։ «Ո՞ւր է նա այժմ»,— հարցնում էի ինքս ինձ, և հարցը մնում էր հարց։

— Բոնժուր, մոսյո,— լսեցի մի թույլ թոքախտավոր ձայն։

Գլուխս բարձրացրի և իմ առջև տեսա Զաուշենկոյին

Իցկո Մարգուլիսի հետ։ Այս հանդիպումն ինձ ուրախացրեց։ Ես սեղմեցի նրանց ձեռը և իսկույն հարցրի Լևոնի մասին։

Զաուշենկոն հաստ գավազանը բարձրացրեց լայն վերարկուի տակից և, ցույց տալով նավահանգիստը, թատրոնական եղանակով ասաց.

— Այնտեղ է։

— Զաուշենկո, ինչո՞ւ այսօր ձևերդ տրագիկական են,— ասաց Իցկոն։

— Որովհետև, սիրելի ջհուդիկս, այնտեղ է կատարվում կյանքի տրագեդիան։ Մարդիկ տանջվում են ու մեռնում խավարի մեջ։ Գնա՛նք, տա՛ր ինձ այնտեղ, Իցկո։ Զաուշենկոն արիստոկրատ բանաստեղծներից չէ, որոնք խորշում են ամբոխից։ Մաքսիմ Գորկիի գրածները չես կարդացել, Զաուշենկոյինը կկարդաս։ Ութ տարի ուսումնասիրել եմ արճիճային աշխարհը. այժմ ուզում եմ ուսումնասիրել նավահանգստի ամբոխը։ Գնա՛նք, պարոն,— դարձավ նա ինձ,— դուք էլ գրող եք, գնանք, մի՛ ամաչեք։

— Գնանք, ուր ուզում եք, միայն թե Լևոնին ցույց տվեք։

— Իցկոն մեզ կառաջնորդի։ Նա խավարի ծնունդ է։ Հայրը նավահանգստում հին լաթեր ու երկաթ է ժողովում, պիտի իմանա խավար աշխարհի բոլոր խորշերը յուր ձեռքի ափի պես։

— Իսկ դու պիտի լուսավորես այդ խավար աշխարհը ահա դրանցով,— ասաց Իցկոն, զարկելով բանաստեղծի ձեռքի գրքույկներին։— Քանի՞ օրինակ ես վերցրել։ Տա՞ս։ Կխարջենք, միամիտ կաց։ Նո՛ւ, չիմբա-չիմբա, չիլալա... Զաուշենկո, չիլալա՞։

Նա ձախ ոտը բարձրացրեց և, աջ ոտի վրա ոստոստալով, վազեց առաջ։

Օդեսայի նավահանգիստը քաղաքի հետ միացած է մի հսկայական քարե սանդուղքով, որի բարձրության վրա բուլվարի մեջտեղում կանգնած է քաղաքի հիմնադիր Ռիշիլիեի արձանը, իսկ ստորոտում կառուցված է մի փոքրիկ եկեղեցի նավահանգստի բնակչության համար։ Մենք իջանք այդ սանդուղքով, մտանք մի ազեղնաձև լայն փողոց։ Այդ վերջին

փողոցն է դեպի ծովափը, այնուհետև ամբողջ նավահանգըստի երկայնությամբ բարձրանում է «էսթակադան»՝ երկաթուղու բեռնակիր գնացքների համար կառուցված կամուրջը։ Գիշեր-ցերեկ այս հսկայական կամուրջի վրայով սուլելով անցնում են շոգեկառքերը, քարշ տալով վագոնների երկայն շարքերը, իսկ ներքև բազմաթիվ կամարների տակով անցուդարձ են անում բեռնակիր սայլեր, նավաստիներ, բանվորներ։ Այդ մի աղմկալի վայր է, մի բարդ հանգույց ծովային և ցամաքային կյանքերի միջև։ Շոգենավերի թանձր ծուխը, նավաստիների կոշտ ձայները, էսթակադայի խուլ թնդյունները գնացքների ծանրությունից, կայարաններում կուտակված քարածխի փոշին՝ այս բոլորը ընդհանուր առմամբ անսովոր մարդու վրա ճնշող տպավորություն են գործում։

Իցկո Մարգուլիսը մեզ առաջնորդեց քարածխի փոշով ծածկված փողոցի խորքը։ Երբ եկեղեցուց հեռացանք երկու հարյուր քայլ, դեպի աջ, մեր առջև բացվեց օղետների, ստորին տեսակի թեյատների ու պանդոկների մի ամբողջ ավան։ Այստեղ էր վխտում նավահանգստի բնակչության մեծ մասը։ Պանդոկներից լսվում էին հարմոնիայի և ռուսական ողորմելի բալալայկայի հնչյուններն ամբոխի աղաղակների, երգերի, գոռում-գոչյունների, հիշոցների ու անեծքների հետ։ Նրանք, որոնք ժամանակ ու միջոց ունեին, ուտում, խմում ու հարբում էին պանդոկներում, վայելելով էժանագին հուրինների ընկերության հաճույքը։ Իսկ նրանք, որոնք միմիայն խմելու համար փող ունեին, մտնում էին «Մոնոպոլի» կրպակները։ Այստեղ վերցնելով կնքված շշերը՝ դուրս էին գալիս փողոց և բովանդակությունը դատարկում իրանց բերանները։ Օդին արգելվում է խմել «Մոնոպոլի» կրպակներում, ուստի հարբեցողությունը, որ առաջ քիչ թե շատ ամոթ ուներ և թաքնվում էր օղետների պատերի մեջ, այժմ թագավորում է փողոցում ամենայն համարձակությամբ։ Եվ ահա նրա ողորմելի զոհերը թավալված են կրպակների առջև, մայթերի վրա, փողոցի մեջտեղում սայլերի ու կառքերի տակ ջարդվելու վտանգին ենթակա։

Իցկոն կանգ առավ մի մեծ պանդոկի առջև, որի դռների ճակատին գրված էր. «Արքայական յախտա»։

— Ահա այստեղ է Լևոնը,— ասաց նա.— անցյալ շաբաթ «Ոսկե խարիսխումն» էր նվագում։

— Հը՛մ,— արտասանեց Ջաուշենկոն, դառնալով ինձ,— տատանվո՞ւմ եք։ Վախենո՞ւմ եք մտնել։ Քա՛ջ եղեք, ձեզ չեն ուտիլ, մեզ նման մարդիկ են...

Նա գավազանը բարձրացրեց և հաղթական քայլերով մտավ Իցկոյի հետ պանդոկ։ Ես մի քիչ նրանցից լավ էի հագնված։ «Աղա» չհամարվելու համար վերարկուիս օձիքը բարձրացրի, գլխարկիս եզրը քաշեցի աչքերիս, հուսալով, որ ամենաշատը հույն որմնադիր կհամարեն ինձ։

Պանդոկը լի էր հաճախորդներով։ Առաջին պահ ոչինչ չկարողացա որոշել, այնքան մթնոլորտը տոգորված էր ծխով, փոշով ու կերակուրների շոգիով։ Դժվար էր ընդհանուր աղմուկի, գոռում-գոչյունների ու հայհոյանքների մեջ մի բան հասկանալ։ Այցելուների մի մասը խմբվել էր բուֆետի առջև, որ գտնվում էր ուղիղ մուտքի դիմաց։ Մենք հրհրվում էինք այս ու այն կողմ։ Ջաուշենկոյի նիհար մարմինը պնդակազմ նավաստիների ուսերի հարվածներից տաշեղի պես թռչկոտում էր։ Երբեմն նա իրան դիմող մեջքերին դեմ էր տալիս գավազանի կոթը, ինքը հետ կանգնում։ Իցկոն, յուր փոքրության շնորհիվ, կատվի ճարպկությամբ սլանում էր առաջ մարդկանց արանքով։ Ես հազիվ էի կարողանում քիթ ու պռունգս ազատ պահել օդի մեջ անիմաստ շարժվող ձեռների ու արմունկների պատահական հարվածներից։

Մենք անցանք երկու շարք կեղտոտ ու մերկ սենյակների միջով, որոնց շուրջը նստած էին նավաստիներ և երկաթուղու ծառայողներ։ Մի, քիթը ուռած, կարմրած, աչքերի տակերը կապտած կին, ինձ տեսնելով, գոչեց.

— Էյ, բասուրման, արի միասին «տրեպակա» պարենք։

Ես հազիվ կարողացա ազատվել նրա սիրալիր թևերից, որ բացվել էին ինձ գրկելու համար։ Ջաուշենկոն, գլուխը փիլիսոփայորեն շարժելով, արտասանեց.

— Թռչուն, ո՞ւր է քո փետուրը։

— Քեռի Սիդորի կատուն պոկոտել է,— ասաց Իցկոն, ծիծաղելով։

Քեռի Սիդորը «Արքայական յախտայի» տերն էր, կատուն՝ օղին։

Վերջապես, հասանք ընդարձակ պանդոկի համեմատաբար մի ապահով անկյուն, ուր մեր կողերը ջարդվելու վտանգից ազատվեցին։ Այստեղ մի երկար սեղանի քով նստած էին տասնի չափ նավաստիներ։ Սեղանը ծածկված էր կեղտոտ ամաններով, հացի կտորներով, ուտելիքների ու ծխախոտի մնացորդներով, գարեջրի և օղու շշերով ու բաժակներով։

— Ահա և՛ ձեր արտիստը,— ասաց Իցկոն, ցույց տալով սեղանի ծայրը։

Այնտեղ նստած էր Լևոնը։ Նա կիթառ էր նվագում և զվարճացնում սեղանակիցներին։ Չնայելով յուր չքավորությանը, ես մինչև այդ օրը նրան կեղտոտ չէի տեսել։ Գոնե շապիկը միշտ անարատ էր, ձեռները ու երեսը մաքուր, կոշիկները վաքսած, փայլուն։ Իսկ այժմ նա նմանվում էր գործարանական բանվորի։

Իմ երևալը նրան զարմացրեց։ Նա չընդհատեց նվագումը, բայց չափազանց շփոթվեց, կարմրեց։ Նավաստիները նրան լսում էին ուշադիր, թեև արդեն բոլորն հարբած էին։ Իրանց հիացմունքն արտահայտում էին գոռում-գոչյուններով։ Երբեմն մեկը կամ մյուսը վեր էր կենում, գրկվում ու համբուրվում նրա հետ կամ, մեջքին զարկելով, արտասանում էր.

— Մլադե՛ց, Լյովա, մալադե՛ց...

Չաուշենկոն մեզ հրավիրեց նստել մի դատարկ սեղանի քով, ասելով, թե Լևոնին չի կարելի խանգարել, նավաստիները կկատաղեն։ Մի շիշ գարեջրի պատրվակով կարելի էր նստել, և մենք նստեցինք։ Լևոնը շարունակ մեզ էր նայում ու ժպտում։ Այդ տասն օրվա ընթացքում նա ավելի նիհարել էր ու թոշնել։ Առաջին անգամ այդ օրը նրա բերանի անկյուններում նկատեցի թեթև խորշեր։

Սեղանի մոտից վեր կացավ լայն թիկունքով ու մեծ միրուքով մի նավաստի և օրորվելով մոտեցավ Լևոնին։ Ձեռը դնելով պատանու նիհարիկ ուսի վրա, գոչեց.

— Էյ, ճպուռ, նվագելո՞ւ ես ինձ համար։ «Օ՜հ, իմ վիշտ», թե՞ չէ. ես ուզում եմ «Օ՜հ, իմ վիշտ» լսել։

— Տե՛ղդ նստիր, էյ, Սիբիրի ռեխ,— գոչեցին ընկերները,— մի՛ խանգարիր Լյովային։

— Չեմ նստիլ, մինչև որ չլսեմ՝ «Օ՜հ, իմ վիշտ»։ «Օ՜հ, իմ վիշտ»։ Լյովա, Լյովա, «Օ՜հ իմ վիշտ»։

— Հիմար գլուխ,— նկատեց մեկը,— Լյովան հենց «Օ՜հ, իմ վիշտ» է նվագում։ Չես լսում, անո՜ւս...

— Լյովա, սուտ չի՞ ասում։

Լյովան գլխով հաստատեց, որ նվագածը հենց «Օ՜հ, իմ վիշտն» է։

— Սատանան տանի,— գոռաց Սիբիրի ռեխը,— ի՛նչ լավ էիր նվագում։ Լսեցինք, լսեցինք. հիմա նվագիր «Դունայի գեղեցկուհի»։ Լյովա, Լյովա, «Դունայի գեղեցկուհի»։

— Ա՛յ քեզ «Դունայի գեղեցկուհի»,— ասաց մի հազթանդամ և, հետևից ձեռները գցելով Սիբիրի ռեխի կոների միջով, փորը դեմ տվեց մեջքին, բարձրացրեց ու բերեց նստեցրեց յուր տեղը։

— Է՛յ դու Կալուգայի արջ, ինչպե՞ս համարձակվեցիր,— գոռաց Սիբիրի ռեխը,— թաթերդ կփշրեմ...

Եվ բռունցքն այնպիսի ուժով զարկեց սեղանին, որ շշերն ու բաժակները միմյանց դիպչելով փշրվեցին։

Բարձրացավ աղմուկ, վեճ, իրարանցում։ Օդի մեջ երևացին մի քանի սպառնալի բռունցքներ։ Գուցե «Սիբիրի ռեխը» և «Կալուգայի արջը» միմյանց քիթ ու պռունգ ջարդեին, եթե չլիներ մի ալևոր նավաստի, որին ընկերները «Դյադուշկա» էին անվանում։ Նա մեջ մտավ նրանց բաժանելու։ Օգնության հասավ Լևոնը։ Նա նվագումը ընդհատեց և, տեղից վեր կենալով, ասաց.

— Պարոններ, թո՛ւյլ տվեք ինձ գնալ «խերսոնցիների» մոտ։

Վեճն իսկույն դադարեց, բոլորը շրջապատեցին երաժշտին։

— Լյովա, աղավնյակ, մի՛ անիր, Լյովա, հոգյակ, նվագիր. ինչպե՞ս կարելի է,— խնդրեցին բոլորը։

— Նվագի՞ր... ինչպե՞ս նվագեմ, պարոններ, քանի որ

չեք լսում, կռվում եք անկիրթ «բոսյակների» պես։ Մի՞թե վայել է «Ռուսաց ընկերության» նավաստիներին։

— Վայել չէ, իհարկե վայել չէ,— գոչեց «Դյադուշկան»։

— Դուք ինձ «տիրասպոլցիների» մոտից բերեցիք այստեղ, որ ձեր կռի՞վը տեսնեմ։ Դուք լավ չեք գնահատում երաժշտությունը։

«Խերսոն», «Տիրասպոլ» նավեր էին, և նավաստիները կրում էին իրենց նավերի անունները։

— Կգնահատենք, կգնահատենք, Լյովա, հիմարներ չենք...

— Ի՞նչ է, փո՞ղ է ուզում այդ ճպուռը,— գոչեց Սիբիրի ռեխը, և վարտիքի գրպանից հանելով արծաթե դրամներով լի քսակը, գցեց Լևոնի գիրկը,— ա՛հա, վերցրո՛ւ, խեղդվի՛ր...

— Մենք էլ կտանք, մենք էլ կտանք,— աղաղակեցին ամենքը, ձեռները տանելով իրանց գրպանները։

— Տեսե՛ք, տեսե՛ք, Լևոնը հարստանալու է,— գոչեց Իցկոն, հրճվանքից ձեռները միմյանց զարկելով, երբ տեսավ փողի քսակը։

— Հապա, կտեսնենք, թե ինչպես,— արտասանեց Զաուշենկոն, որ, արմունկները սեղանին հենած դիտում էր կատարվող տեսարանը։

Լևոնը հանդիստ վերցրեց յուր գիրկն ընկած քսակները և գնելով սեղանի վրա, ասաց.

— Ես իմ գնից մի կոպեկ էլ ավել չեմ վերցնիլ։ Համարը 10 կոպեկ, ո՛չ ավելի ո՛չ պակաս։ Դրեք ձեր գրպանները, նստեցե՛ք, նվագում եմ...

— Բրավո՞, Լևոն, բրավո՞, դու մեր երեսը սև չարիր,— գոչեց Զաուշենկոն ոգևորված և նավաստիների ուշադրությունը գրավեց մեր վրա։

— Այդ ի՞նչ կատու է,— գոչեց Սիբիրի ռեխը,— ա՜հ, տիրացո՜ւ։ Չէ, ուխտավոր է, աբեղա է... էյ, երևի Իոքագամայի տաճարի համար լումա ժողովելու ես եկել։ Արի՛, արի՛, մենք էլ կտանք մեր հոգու փրկության համար։

Զաուշենկոն վերցրեց սեղանի վրայից յուր գրքույկները և հանդիսավոր քայլերով մոտեցավ նավաստիներին։

— Պարոննե՛ր, ես ո՛չ տիրացու եմ, ո՛չ տաճարի համար լումա ժողովող։ Ես երգիչ եմ...

— Երգիչ, երգիչ, այդ շատ լավ է,— ասացին ոմանք։— Դեհ երգիր, տեսնենք։

— Երգիր՝ «Օ՜հ, իմ վիշտ»,— պահանջեց Սիբիրի ռեխը,— «Օ՜հ, իմ վիշտ»։

— Օ՜հ, խավար. ահա իմ վիշտը,— արտասանեց բանաստեղծը։— Պարոննե՛ր, ես ձայնով չեմ երգում, այլ գրչով։ Գնեցե՛ք մի-մի օրինակ ահա այս գրքույկներից։ Դուք, պարոններ, ինչպես տեսնում եմ, երաժշտություն սիրում եք, մի՛ մոռանաք, որ բանաստեղծությունն էլ նրա քույրն է։

— Քո՞ւյրն է,— ասաց Սիբիրի ռեխը,— ապա տո՛ւր ինձ այդ գեղեցկուհուն...

Նա խլեց գրքույրկներից մեկը, դրեց դատարկ ամանի մեջ, վրան օղի թափեց և, լուցկին վառելով, ասաց.

— Ապա, տեսնենք, քույրն ինչպես է երգում։

Օղին այնքան թունդ չէր, որ վառվեր։

— Քեռի՛ Սիգոր,— գոչեց Սիբիրի ռեխը,— կատվիկ մագիլները հանել ես... խի-խի-խի՛, սպիրտ բեր...

— Է՜յ, Սիբիրի ռեխ,— ասաց «Դյադուշկան»,— այսօր դու մեզ ուզում ես խայտառակել։ Գրքերը սուրբ են, հանցանք է նրանց այրելը... Գնե՞նք մի-մի օրինակ...

Նավաստիները գնեցին մի-մի օրինակ «Վշտի և տանջանքների ժամերից», իսկ անհանգիստ Սիբիրի ռեխը մի մեծ բաժակ օղի ձեռքում մոտեցավ հեղինակին։

— Կոնծի՛ր, դնչիցդ երևում է, որ սիրում ես...

Զաուշենկոն խմող չէր։ Երկու ձեռները դեմ տվեց բաժակին, գոչելով.

— Հեռո՞ւ ինձանից համառուսական թույն...

Այն ժամանակ Սիբիրի ռեխը կպավ Լևոնին.

— Խմի՛ր, դու մինչև այսօր դեռ չես հաղորդվել... Թե քրիստոնյա ես, պիտի խմես...

— Լյովա, Լյովա, մի բաժակ իմ խաթրու,— խնդրեցին մյուսները։

Լևոնը հրաժարվեց, ասելով, թե խմելուց հետո չի կարող նվագել։ «Դյադուշկան» նրան պաշտպանեց։

Օրն արդեն մթնել էր։ «Դյադուշկան» հայտնեց, թե շոգենավ վերադառնալու ժամանակ է։ Խումբը վճարելով կերած-

խմածի գինը, նաև Լևոնի վարձը, դուրս եկավ աղմուկով, գոռում-գոչյուններով, միմյանց բոթելով ու հարվածելով։

Փողոցում Զաուշենկոյի գլուխը պտտվեց այնպես, որ անշուշտ կընկներ, եթե չհենվեր պատին։ Խմիչքների հոտը և ծխախոտի ծուխը շշմեցրել էին նրան։ Բայց նա կրկնում էր.

— Շատ ուրախ եմ այստեղ գալուս, շատ ուրախ եմ, ամեն օր պիտի գամ։ Ո՞րքան նյութ, որքա՜ն նյութ գրողի համար։

Իցկոն ոստոստում էր Լևոնի շուրջը։ Վերջապես, ձեռքը գցելով նրա թևին, հարցրեց.

— Այսօր ինձ համար շոկոլա՞դ ես առնելու, թե՝ ծխախոտ։

— Երկուսն էլ։

— Ֆիա՜մ, ֆիա՜մ, ուրեմն այսօր երկու ռուբլուց ավելի ես հավաքել... Կեցցե՜ տիրոջ։ Ես այսօր ոչինչ չեմ վաստակել։ Բանաստեղծ, պիտի ինձ համար մի սրինգ գնես։ Ես էլ ուզում եմ սրինգ նվագել։

— Կգնեմ, ինչու չեմ գնիլ,— ասաց Զաուշենկոն բարեսրտաբար։

— Զիմբա-չիմբա- չիլալա, Զաուշենկո, չիլալա՜...

Երբ ընկերները բաժանվեցին, ես հետաքրքրվեցի իմանալ՝ ինչու Լևոնը փոխել է յուր արհեստը։ Չէի ուզում հավատալ, որ առանց վերին աստիճանի ստիպողական մի պատճառի կարող է նա ցերեկներն անգամ ապրել թատրոնից հեռու։

— Կարիքն է ստիպում, սինյոր,— պատասխանեց նա հանդարտ։

— Բայց չէ՞ որ դու առաջ էլ կարիքներ։

— Ես ուզում եմ մորս կամքը կատարել։

— Այսի՞նքն։

— Ուզում եմ նրան ապահովել։

Ես նայեցի նրա աչքերի մեջին և հասկացա, որ կեղծում է։ Փողոցային լապտերի լույսը մատնեց նրա այլայլվելը։

— Է՛հ, շատ գովելի է,— ասացի ես,— որ ուզում ես մորդ ապահովել։ Բայց ների՛ր, Լևոն, այս անգամ շատ էլ չեմ հավատում քեզ։ Կարծում եմ, ուրիշ նպատակ ունիս։

Նա ոչինչ չասաց, միայն քայլերն արագացրեց։

— Ո՞ւր ես շտապում, հարցրի ես։

— Թատրոն։

— Էլի թատրոն։

— Այո՛, սինյոր... այսօր լավ դրամա են ներկայացնում...

Եվ, երևի, իմ հարցուփորձից ազատվելու համար, շտապով հեռացավ։ Ես արդեն գուշակել էի նրա միտքը...

Մի քանի անգամ այցելեցի «Արքայական խախտա»-ն։ Լևոնին այնտեղ սիրում էին։ Նավաստիները խլում էին նրան միմյանց ձեռքից։ Նա գիտեր նվագել մալոռուսական եղանակներ ու պարեր։ Անցնում էր մի խմբից մյուսը, բոլորին զվարճացնում, հավաքելով յուր տասնական կոպեկները։ Զվարճության տաք միջոցներին սեղանակիցները երբեմն խնդրում էին նրան խմել մի-մի բաժակ օղի կամ գարեջուր։ Նա չէր ուզում խմել և չէր կարողանում խմել։

Մի անգամ իմ ներկայությամբ, երբ զզվանքով հետ դրեց օղու բաժակը, նրա համար պահանջեցին ինչ-որ քաղցր ըմպելիք։ Նա մի բաժակ խմեց, հետո երկրորդն և զվարթացավ...

Ցավալի էր ինձ համար, որ նա այցելում է այդ ստորին վայրերը։ Բայց իրավունք չէի համարում համոզել նրան թողնելու այդ տեղերը։ Ուրիշ ի՞նչ միջոց ուներ նա ապրելու, բացի նախկին ողորմելի պարապմունքից։

Մի օր նա ասաց.

— Սինյոր, երկու ամիս չկա, արդեն երեսուն ռուբլի եմ հետաձգել։ Բայց մորս չասեք։

— Ինչո՞ւ։

— Որովհետև այդ փողերը ինձ հարկավոր են...

— Իտալիա գնալու համար,— լրացրի ես նրա խոսքը, խնդիրը միանգամայն պարզելու համար.— Մի՛ զարմանար, Լևոն, ես այդ վաղուց գիտեի։

— Օ՜օ, սինյոր, թարավ է, ես ուզում եմ տեսնել Իտալիան...

— Եվ Լուիզային...

Նա ամոթից երեսը դարձրեց ինձանից։ Ես հազորդեցի նրան, թե սինյորա Ատեֆանիան Կավալլարոյից նոր նամակ է ստացել։ Բացիտոնը գրում է, թե Խրիստոֆորովիչն ոտոլիչնե-

ը փորձել են օրիորդի ձայնը և հիացել են նրա ուժով ու «տեմբրով»։ Մի հայտնի պրոֆեսոր խոստանում է երեք տարվա ընթացքում Լուիզային այնչափ պատրաստել, որ կարողանա օպերաներում առաջին «դրամատիկ-սոպրանո»-ի դերը երգել։

Հաղորդածս նորություն չէր նրա համար։ Նա ասաց, թե հենց նույն օրն ինքը նամակ է ստացել Լուիզայից։ Բարի օրիորդն յուր խոստումը կատարել էր։ Սակայն այդ եղավ առաջին և վերջին նամակը...

Ամբողջ գարունը և ամառը պատանին այցելեց նավահանգստի պանդոկները։ Երբեմն գալիս էր սենյակս և ինձ հաշիվ տալիս։ Նրան դեռ սիրում էին նավաստիները, հաճույքով լսում և միմյանց ձեռքից խլում։ Ամսական միջին թվով քսան ռուբլուց ավելի է հետաձգում։ Շուտով, շուտով կկատարի այդ փափագը, կուղևորվի Իտալիա...

Այնինչ՝ պանդոկների մթնոլորտն արդեն դրել էր յուր դրոշմը նրա վրա։ Ձևերը նկատելի չափ գռեհկացել էին։ Ժամանակ առ ժամանակ արտասանում էր տգեղ բառեր, որ առաջ չկային նրա բառարանում։ Արտասանում էր և իսկույն զղջում, կարմրում։ Մի քանի անգամ զգացի, որ բերանից խմիչքների հոտ է գալիս։ Իսկ մի երեկո մեր տան դարբասի առջև տեսա նրան սաստիկ հարբած դրության մեջ։ Կիթառը կոնատակին բռնած, օրորվելով տուն էր գնում, մի քայլ առաջ դնելով, մի քայլ կողք, օրորվելով։ Օգնեցի նրան սանդուղքով բարձրանալու։

Ալմաստը տեսավ նրան թե չէ՝ ձեռները զարկեց երեսին, գոչելով.

— Սպանեց, մորթեց...

Նախատինքի ժամանակ չէր։ Խնդրեցի վշտացած մորը զսպել առայժմ յուր սրտի թույնը։

Լևոնը թավալվեց երեսնիվայր անկողնում, մի ոտը թողնելով հատակի վրա։ Տեսարանը եղկելի էր։ Լևոնը, այն պատանին, որին երևակայությունս գրեթե հրեշտակացրել էր, ընկնում էր աչքումս։ Եվ այս ինձ համար դառն էր, շատ դառն։ Նա ոչինչ չէր զգում, ընկած էր կեղտոտ լաթի պես, ոտից մինչև գլուխ ցեխոտ։ Միայն երբեմն ձեռը դուրս էր բերում փորի տակից շոշափում ձախ կոշիկը...

Ես թողեցի տխուր տեսարանը և հեռացա։ Մի՞թե այս է բարեկամիս վերջը։ Մի՞թե Ալմաստի շար գուշակությունը իրագործվում է։

Առավոտը երբ բարձրացա վերև, Ալմաստն արդեն թեթևացրել էր յուր սիրտն և աչք-ունքը կիտած լուռ նստած էր մի անկյունում։ Լևոնը փնտրում էր կիթառը, որ գնա յուր գործին, չէր գտնում։ Ալմաստը թաքցրել էր, չէր ուզում տալ։ Տեսնելով ինձ՝ խեղճ կինը լաց եղավ։ Այս անգամ խոսքեր չգտա Լևոնին արդարացնելու։

— Չէի՞ ասում, որ վերջն յուր անիծված հոր օրին է հասնում։ Ահա՝ չորրորդ անգամն է՝ տուն է գալիս շան օրում...

Ես բարվոք համարեցի Լևոնի հետ խոսել առանձին, հրավիրելով սենյակս։ Հիշում էր երեկվա յուր խայտառակ դրությունը և սաստիկ ամաչում։ Լուռ էր, սպասում էր, որ ես խոսեմ։ Ի՞նչ պիտի ասեի. նախատելը կլիներ ավելորդ. Լևոնը հիմար գլուխ չէր և ոչ էլ երեխա. շուտով պիտի լրանար տասնութ տարին։ Ես ընկերաբար բացատրեցի հարբեցողության կորստաբեր հետևանքները։ Նա լսեց մինչև վերջը համբերությամբ և, երբ վերջացրի, ասաց.

— Այդ բոլորը գիտեմ. հայրս հենց հարբեցողությունից մեռավ։

— Գիտես և էլի խմո՞ւմ ես։

— Ստիպում են։

— Ովքե՞ր։

— Նավաստիները։

— Տեղափոխվի՛ր ուրիշ պանդոկ։

— Ամեն տեղ ստիպում են։

— Մի՞թե չես կարող մերժել։

— Առաջ մերժում էի, հիմա չեն թողնում։

— Ի՞նչ ասել է չեն թողնում. ամեն մարդ յուր կամքի տերն է։

— Այո՛, սինյոր, բայց երբ կես փթանոց բռունցքը պահում են քթիդ տակ, մոռանում ես կամքդ։

— Նրանք քեզ ծեծո՞ւմ են։

— Կծնծեն, եթե շատ համառություն անեմ։

— Բայց ի՞նչ օգուտ ունին քեզ հարբեցնելուց։

— Հարբածներն ատում են արթուն մարդուն։ Երբ չեմ խմում, ասում են՝ «դու մտքումդ ծաղրում ես մեզ։ Դու էլ խմիր, հավասարվիր մեզ հետ»։

— Գոնե քի՛չ խմիր։

— Շատ չեմ խմում, բայց քիչն էլ է ինձ հարբեցնում։

— Ի՞նչ են խմեցնում։

— Առաջ քաղցր խմիչքներ էին տալիս։ Հիմա ասում են՝ «թանկ է նստում» և ստիպում են խմել գարեջուր էլ, օղի էլ...

Ես լռեցի, բայց հարկավոր էր մի հետևանքի հասցնել մեր խոսակցությունը։

— Լևո՛ն, թո՛ղ այդ պանդոկները, էլի թատրոններով ըզբաղվիր...

— Իհարկե, թողնելու եմ, սինյոր, շուտով, շուտով կգընամ Իտալիա... Արդեն հարյուր հիսուն ռուբլի ունիմ։

— Իսկ մա՞յրդ։

— Նրան էլ հետս տանելու եմ։

— Հարյուր հիսուն ռուբլո՞վ։

— Ի՞նչ կա, քի՞չ է։ Ես շատերից եմ հարցրել։ Ասում են՝ ամսական երեսուն ռուբլով կարող ենք ապրել այնտեղ, ինչպես այստեղ։

— Գուցե կարելի է, բայց մի քանի ամիս, իսկ հետո՞։

— Հետո՞... մի գործ կգտնեմ։

— Լևոն, ճշմարի՛տն ասա, ի՞նչն է քեզ ստիպում Իտալիա գնալ,— հարցրի ես, նայելով ուղիղ նրա աչքերի միջին։

— Ուզում եմ վիոլոնչել նվագել սովորել ու գալ այստեղ օրկեստրը մտնել։

«Կեղծում ես, բարեկամս,— մտածեցի ես,— այդ չի գլխավոր պատճառը»։

Նայեցի նրան ուշադիր, սիրտս մորմոքվեց։ Նա ոտքի վրա ցամաքել էր, ինչպես արմատից պոկված ծաղիկ։ Խնդրեց ինձ համոզել մորը, որ կիթառը տա իրան։ Միևնույն է, եթե չտա, պիտի նորը գնել. ինչո՞ւ ավելորդ ծախսի մեջ ընկնել։

Հազիվ այդ օրից անցել էր մի շաբաթ, երբ մի երեկո,

մոտ տասը ժամին, հանկարծ սենյակս մտավ Ալմաստը շփոթված։

— Պարոն, նեղություն քաշեցեք, վերև բարձրացեք աստծո սիրույն։

Տարօրինակ դրության մեջ տեսա ես Լևոնին այդ երեկո։ Հեղ պատանին կատարելապես կատաղել էր։ Առանց բաճկոնի ու կոշիկների թավալվել էր դոների առջև և մռնչում էր ինչպես մատաղ գաղան, կրծոտելով յուր ձեռների միսը։ Նրա նիհար պարանոցի երակներն ուռել, փքվել էին, կարծես ահա, ահա պիտի տրաքվեին ձգված լարերի պես։ Նա ոտները զարկում էր հատակին ինչպես դիվահար։

Պատահել էր մի շատ սովորական դեպք, որի նմանները պատահում են Օդեսայի խուլ անկյուններում գրեթե ամեն երեկո։ Նավահանգստից վերադառնալիս Լևոնի վրա հարձակվել են ինչ-որ քաղցած սրիկաներ, խլել ձեռքից կիթառը, հանել բաճկոնն ու կոշիկները և բաց թողել։

— Եվ դրա համար քեզ սպանո՞ւմ ես,— գոչեցի ես բռնելով Լևոնի թևը,— ամո՞թ։

— Ես էլ այդ եմ ասում, որդի, խոմ չեմ նախատում։ Տանը մի հատ պիջակ էլ ունիս, կոշիկներ էլ... Վայ, տեր աստված, ինչպես է գլուխը պատին խփում։ Այս ի՞նչ պատիժ է, երկնային թագավոր...

Կասկածելի էր, որ Լևոնը կիթառի, մանավանդ ողորմելի պիջակի և կոշիկների համար այդպիսի հեծ ու կոծ բարձրացներ։ Անշուշտ կորուստն ավելի մեծ էր։ Խնդրեցի Ալմաստին մի քանի լոպե թողնել մեզ առանձին։ Այրին դուրս գնաց։ Ճանաչելով Լևոնի բնավորությունը, գիտեի՝ ինչպես պիտի խոսել այսպիսի հանգամանքներում նրա հետ։ Նա սիրում էր զգալ, որ մարդիկ իրեն չափահաս են համարում։

— Ամոթ է, Լևոն։ Փառք աստուծո, դու երեխա չես, խելքի եկ... Չարժե այդպես գոռալ...

— Չարժե՞, չարժե՞, սինյոր, դուք է՞լ եք ասում։ Բայց չգիտեք ինչ եմ կորցրել, ի՞նչ։ Զախ կոշիկս... այո՛... ձախը... Գիտե՞ք... Իտալիա, վիոլոնչել, երգ, երաժշտություն, կորավ ամեն ինչ... Բուլվարի ներքևումն էր, այն մեծ սանդուղքի մոտ։ Երկու հոգի էին՝ մեկը բարձրահասակ, մյուսը թիկնա-

վետ։ Բարձրահասակը բռնեց հետևից ձեռներս, մյուսը խուզարկեց գրպաններս։ Երբ մի ռուբլուց ավելի չգտան՝ բարկացան։ Կարծում էի կիթառս կխլեն, կհեռանան։ Չեղա՜վ։ Պիջակս էլ հանեցին... Տերը նրանց հետ, թող շապիկս էլ հանեին՝ չէի խոսիլ... Բայց կոշիկներս, ձախ կոշի՜կս... «Հանի՛ր,— ասաց ձեռներս բռնողը,— գոնե երկու բաժակ օղի արժեն»։ Երբ թիկնավետը կռացավ կոշիկներս հանելու, կատաղեցի, սկսեցի կծոտել նրա ուսերը, գլուխը... Նա ինձ ապտակեց։ Աչքերս մթնեցին... Սկսեցի աղաչել, պաղատել... Չլսեցին անաստվածները... Տարան, տարան...

— Ուրեմն կոշիկներիդ համա՞ր ես լալիս,— ասացի ես մոտավորապես հասկանալով բանի էությունը...

— Հարյուր հիսուն ռուբլի, սինյոր, հարյուր հիսուն ռուբլի կար կոշիկիս մեջ, ձախ կոշիկս... Այնտեղ էի պահում հավաքած փողերս...

Եվ նա սկսեց դառնագին հեկեկալ...

Այդպես, ուրեմն, տարել էին նրա վեց-յոթ ամսվա աշխատանքի վարձը, նրա Իտալիա գնալու, Լուիզային տեսնելու հույսը... Նա ավելի ապահով տեղ չէր գտել յուր փողերի համար։ Տանը պահել վախեցել էր։ Մայրը կգտներ, չէր վերադարձնիլ։ Այդ կինը ամեն առավոտ որդու գրպանները խուզարկում էր, մոտը փող չէր թողնում։

— Փաթաթել էի թղթում, դրել կրունկիս կողմում, վրեն կաշի խփել, ծայրերը գամել... Շատ գիշերներ կոշիկներով եմ քնել... Տարա՜ն սրիկաները։ Ով գիտե հիմա ծախում են մի բաժակ օղիով կամ մի ֆունտ հացով... Տե՜ր աստված, տեր աստված, ի՞նչ պիտի անեմ...

Ես խոսքեր չէի գտնում թշվառին մխիթարելու։ Խստություն համարեցի նախատել նրան յուր անզգուշության համար։ Հարկավոր էր միայն ցույց տալ կորուստը գտնելու գեթ մի թույլ հույս։ Արդեն վիշտը շատ մեծ էր։

— Ա՜խ,— գոչեց նա հանկարծ, ձեռը զարկելով ճակատին,— հույս կա, կա հույս գտնելու։

— Այո՜,— ուրախացա ես երեխայի պես։

— Այո՛, սինյոր։ Դուք ճանաչո՞ւմ եք Իցկոյի հորը։ «Մոշկա սելյոդկա» են կոչում նրան։ Ճարպիկ մարդ է, ճանաչում է

փողոցի սրիկաներին։ Հին հագուստեղեն ու կոշիկներ է գնում, վաճառում։ Ա՜հ, իսկույն կգնամ նրա մոտ, իսկո՛ւյն։ Մա՛մա, ներս եկ, տո՛ւր ինձ մյուս կոշիկս, պիջակս, գնում եմ կիթառս փնտրելու...

Հակառակ մոր կամքին նա շուտով հագնվեց ու վազեց դուրս։

Ես, իհարկե, Ալմաստին չհայտնեցի, թե Լևոնն ինչ է կորցրել։ Երևակայում էի ինչ ողբ պիտի բարձրացներ և ո՛րքան անիծեր որդուն։

Վերադարձա սենյակս, հոգով նախանձելով հարուստներին։ Ինչո՞ւ ես էլ հարուստ չէի...

Լույսը նոր բացված գնացի Լևոնին տեսնելու։ Արդեն դուրս էր եկել տնից։ Ամբողջ գիշեր, Ալմաստի ասելով, չէր քնել, պտտել էր անկյունից անկյուն։ Ուշ երեկո էր, երբ Լևոնը մտավ սենյակս հոգնած, քրտնած, փոշոտ։ Նա խոսելու անգամ ուժ չուներ։ Մինչև կեսօր թափառել էր Իցկոյի հոր, իսկ կեսօրից հետո՝ Զաուշենկոյի և Իցկոյի հոր հետ։ Եղել էին գրեթե բոլոր այն շուկաներում, ուր հին հագուստեղենի առուտուր է կատարվում։ Փնտրել էին միայն կոշիկները, առանց ումևէ ասելու՝ ինչ գանձ են փնտրում։ Եվ զո՞ւր։ Իցկոյի հայրը խորհուրդ էր տվել Լևոնին «մոռանալ, թե երբևէ փող է ունեցել»։ Զաուշենկոն հայտնել էր ոստիկանությանը։ Պրիստավը ծաղրել էր. ո՞ր հիմարն է կոշիկի մեջ փող պահում։

Լևոնն ամբողջ օրն անց էր կացրել անոթի։ Առաջարկեցի ընթրել ինձ հետ, մերժեց. դուրս եկավ ուժասպառ, հուսահատված, հարբածի պես օրորվելով։

Մյուս օրն ես նրան հանդիպեցի փողոցում մի փոքրահասակ, նիհար, կեղտոտ հրեայի հետ խոսելիս։ Դա ինքը «Մոշկա սելյոդկան» էր, Իցկոյի հայրը։

— Մոսյո,— դարձավ նա ինձ, երբ իմացավ, որ Լևոնի բարեկամն եմ,— միրուքս վկա, աղքատն երբեք փող չպիտի ունենա։ Փողը շատ գողող է, սիրում է թանկագին պալատներ։ Հիմար աղքատը կարծում է, թե կարելի է նրան պահել գարշապարի տակ, կոշիկում, խի-խի-խի՜... Մանո՛ւկ, դու պիտի կուրծքդ պատռեիր ու ասեիր այդ հարյուրանոցին. «պատվելի, սիրելի, համեցեք, ա՛յ քո բնակարանը»։ Երանի եմ տա-

լիս այն հնավաճառին, որ այդ կոշիկը կգնի։ Երդվում եմ միրուքովս, Սողոմոն արքան էլ այդպիսի թանկագին կոշիկներ չի հագել։

Մի շաբաթ շարունակ Լևոնը վաղ առավոտից սկսած մինչև ուշ երեկո փնտրում էր յուր կորուստը։ Զաուշենկոն և Իգկոն հուսահատվել էին, այլևս չէին օգնում նրան, իսկ նա դեռ փնտրում էր։ Նա զրկվել էր քնից, հանգստությունից, ախորժակից։ Տուն էր վերադառնում երեկոները, պառկում հագուստով անկողնում, հեկեկում ու հեկեկում։ Ալմաստը հուսահատությունից չգիտեր ինչ աներ, տանջվում էր որդու հետ հավասար։ Նա պնդում էր, թե Լևոնը կխելագարվի, եթե այդ դրության մեջ մնա։ Ամեն ինչ մոռացել է, ոչնչով չի հետաքրքրվում, նույնիսկ թատրոններով։

Խոստովանում եմ, ես այլևս քաջություն չունեի Լևոնի վիշտը տեսնելու։ Նրա ծանր հառաչանքները, ողբը, հեծկլտանքը կտրատում էին սիրտս։ Այնինչ՝ այժմ նա ավելի հաճախ էր այցելում ինձ, քան առաջ։ Գալիս էր, նստում սեղանի քով և խոսում յուր կորստի մասին։ Նա դեռ պահում էր սրտում մի թույլ հույս փողերը գտնելու։ Ով գիտե, անկարելի ոչինչ չկա. կարող են այդ կոշիկները պտտել ամբողջ քաղաքը և դարձյալ հետ գալ, իրենց տիրոջ ձեռքն ընկնել... Բայց շուտով այդ թույլ հույսն էլ մեռավ նրա մեջ, և Լևոնի միտքը սկսեց փոքր առ փոքր սթափվել։ Մանոթ նավաստիները խնդրում էին նրան շարունակել հաճախել պանդոկները, խոստանալով նրա համար նոր կիթառ գնել։ Ես խորհուրդ տվեցի նրան ընդունել այդ առաջարկությունը և նորից սկսել փող ժողովել։ Մի օր, վերջապես, նա գնաց «Արքայական յախտա» մի նոր կիթառ ձեռին։ Երեկոյան նա պատմեց ինձ, թե նավաստիները ինչպիսի ուրախությամբ են ընդունել նրան, ինչպես գրկվել ու համբուրվել նրա հետ։ Նրա բերանից գարձյալ օղու հոտ էր գալիս։ Երևի այս անգամ խմել էր վիշտը մոռացության տալու համար. ես քաջություն չունեցա հանդիմանելու։

Մի չնչին գումար, որ կարողացավ նա խնայել առաջին ամիսը, նորից վերականգնեցրեց նրա հույսերը։ Այս անգամ նա անկեղծ խոստովանեց ինձ, որ Իտալիա գնալու գլխավոր

նպատակը Լուիզային տեսնելն է։ Գրեթե օր չէր անցնում, որ նա չհարցներ.

— Սինյոր, ի՞նչ լուր կա Լուիզայից։

Նա ինքը ամաչում էր անմիջապես սինյորա Ստեֆանիային դիմել այս հարցով։ Ես հաղորդում էի նրան բոլորը, ինչ որ լսում էի տանտիրուհուցս։ Միշտ Լուիզան բարև էր ուղարկում Լևոնին։ Եվ Լևոնը երջանիկ էր այդ ուշադրությամբ։ Չգիտեմ, կա՞ր արդյոք մի ուրիշը, որ այնքան ուրախանար Լուիզայի ամեն մի նոր հաջողության համար, որքան այդ սիրահարը։ Նա ասում էր, թե ամենից ավելի ինքն է սիրում Լուիզային և ամենից առաջ էլ ինքն է ուզում ծափահարել նրան բեմի վրա. ոչ այստեղ՝ Օդեսայում, այլ այնտեղ՝ Իտալիայում։

Մի անգամ նա ասաց.

— Եթե մինչև առաջիկա գարուն չկարողանամ ճանապարհ ընկնել, կխելագարվեմ։

Մի ուրիշ անգամ դիմեց ինձ այս հարցով.

— Ի՞նչ եք կարծում, սինյոր, Լուիզան, նշանավոր երգչուհի դառնալով, կգոռոզանա՞։

Հասկացա, թե իսկապես ինչ է ուզում իմանալ։ Հոգու խորքում նա ինքն իրեն արժանի չէր համարում Լուիզային, բայց հպարտությունը չէր թույլ տալիս նրան խոստովանել այդ։ Նա ուզում էր իմ միտքը իմանալ՝ արժանի՞ եմ համարում իրան Լուիզային, թե՞ ոչ։

Կամենալով գեթ մի փոքր սթափեցնել այդ օրից-օր ավելի ու ավելի կուրացող հոգին, պատասխանեցի.

— Այո, կգոռոզանա։ Նա հենց այժմ էլ, երբ դեռ շատ հեռու է նշանավոր երգչուհի համարվելու պատվից, գոռոզացել է...

— Ո՞վ ասաց,— գոչեց Լևոնը վշտացած։

— Նրա վարմունքը։ Նա քեզ մոռացել է։

— Ի՞նչ։ Ինչո՞ւ. նա միշտ բարևներ է ուղարկում, խոսքերդ ինքներդ եք ասում։

— Այո, բարեկամս, ուղարկում է. բայց, ների՛ր, այդ բարևների նպատակը ես ուրիշ կերպ եմ հասկանում։ Լուիզան, դեռ երգչուհի չդարձած, արտիստների խորամանկու-

թյունն է յուրացնում։ Ես ճանաչում եմ նույնիսկ տաղանդավոր երգչուհիներ ու դերասանուհիներ, որոնք շողոքորթում են համալսարանական քաղաքներում ուսանողներին, գավառական քաղաքներում՝ գիմնազիստներին միմիայն նրանց ցույցերին արժանանալու համար։ Իսկ դու քո խմբով ավելի գեղեցիկ ցույցեր գիտես անել։ Լուիզան այս գիտե և քեզ հետ հեռավոր բարեկամություն է պահպանում յուր ապագայի համար, թեև գիտե, միևնույն ժամանակ, որ դու կաշառվող չես։ Ա՜խ, բարեկամս, մի՛ հափշտակվիր այն ուսանողի պես, հրշո՞ւմ ես, որ անցյալ տարի ինքնասպանություն գործեց մի երգչուհու պատճառով։ Լուիզան քեզ չի սիրում, եթե սիրեր՝ նամակ կգրեր։ Ինչո՞ւ մեկը գրեց ու լռեց։

Գուցե ես զրպարտում էի Լուիզային, բայց ասածիս մեջ զգում էի ճշմարտության մաս։ Լևոնին փրկելու համար պատրաստ էի ավելի վատ գույներով պատկերացնել Լուիզային նրա առջև։

— Նա ժամանակ չունի ինձ նամակ գրելու, զբաղված է,— ասաց Լևոնը ոչ այնքան Լուիզային արդարացնելու, որքան յուր անձնասիրությունը պաշտպանելու մտքով։

— Գուցե... թո՛ղ այդպես լինի...— ասացի ես անորոշ եղանակով Լևոնին ավելի չվշտացնելու համար։

Որքան հիշում եմ, հենց այդ օրն էր, որ սինյորա Ստեֆանիան մտավ սենյակս անսովոր ուրախ տրամադրության մեջ և ասաց.

— Սինյոր, հիմա կարող եք ինձ շնորհավորել։

— Ի՞նչ է պատահել...

— Պատահել է այն, ինչ որ վաղուց սպասում էի անհամբեր։ Լուիզան երեկ պսակվել է Կավալլարոյի հետ... հենց այս րոպեիս հեռագիր ստացա... ահա...

Եվ նա ծոցից հանելով հեռագիրը՝ ցույց տվեց ինձ։

— Այդպես անսպասելի՞,— գոչեցի ես, թեև վաղուց մի ներքին ձայն ինձ ասում էր, թե կա ինչ-որ մտերմություն Լուիզայի և Կավալլարոյի միջև։

— Անսպասելի չէր, սինյոր, ոչ, այդ դո՛ւք չգիտեիք, իսկ ես գիտեի, որ նրանք նշանված են վաղուց։ Նշանվելն ինձ համար կարևոր չէր, պսակվելն էր կարևոր։ Ես լռում էի, վա-

խենալով, որ գործը չփչանա։ Ա՜խ, վերջապես ո՞րքան ուրախ, ո՞րքան ուրախ եմ։ Կավալլարոն հենց իմ ուզած փեսան է՝ բարի, քաղաքավարի, լավ երգիչ, լավ էլ փող է ստանում։ Այո՛, Լուիզան ավելի լավ ընտրություն անել չէր կարող։ Երեկ պսակվել են, այսօր պիտի ուղևորվեն Պարիզ։ Կավալլարոն պիտի մի տարի մնա այնտեղ։ Լուիզան, իհարկե, նրա հետ կլինի...

Ես շնորհավորեցի երջանիկ մորը. բայց մի ներքին ձայն շշնջաց, թե շատ էլ անկեղծ չեմ վարվում։ Ինչպե՞ս կընդունի այդ լուրը Լևոնը, որին սիրում եմ ավելի, քան Կավալլարոյին ու Լուիզային։

Այդ օրը ես վերադարձա դրսից տուն ուշ գիշերին, որպեսզի չհանդիպեմ Լևոնին։ Սակայն հետևյալ օրը նա եկավ սենյակս երեկոյան սովորական ժամից առաջ։ Սինյորա Ստեֆանիան ճաշի միջոցին ինձ ցույց էր տվել երկրորդ հեռագիրը, որով հայտնվում էր, թե նորապսակներն արդեն ուղևորվել են Պարիզ։

Տխուր, անմոռանալի երեկո. առաջին անգամ կողոպտվելուց հետո Լևոնի դեմքի վրա տեսա այդ երեկո ուրախ ժպիտ։ Նա իսկույն պատմեց յուր ուրախության պատճառը։ Երկու օր է՝ նրան կանչում են «Խերսոն» շոգենավը։ Այնտեղ նա նվագում է նավապետի և յուր օգնականների համար։ Այսօր օգնականներից մեկը, տալով նրան յուր մանդոլինան, առաջարկել էր նվագել։ Լևոնը կատարել էր նրա ցանկությունը։ Նավապետին առանձնապես դուր էր եկել «Մադրիդի շրջմոլիկը»։ Նա մի շատ բարի մարդ է. իմանալով, որ Լևոնը ձգտում է գնալ Իտալիա, այսօր խոստացավ օգնել նրան։ Երկու օրից հետո «Խերսոնը» գնում էր Կրոնշտադտ։ Այնտեղից հետ է գալու և ուղևորվելու Միջերկրական ծով, հետո Հեռավոր Արևելք։ Ահա այդ ժամանակ նա կվերցնի Լևոնին յուր մոր հետ և կտանի մինչև Իտալիայի սահմանները...

— Օ՜օ, սինյո՛ր, սինյո՛ր, այնքան ուրախ եմ, որ ուզում եմ թռչկոտել։ Ես նավապետի պարտքի տակ չեմ մնալ։ Կնվագեմ նրա համար ամբողջ ճանապարհին, գիշեր-ցերեկ կնվագեմ։ Իտալիա, Իտալիա, անպատճառ պիտի տեսնեմ։ Որքա՞ն կզարմանա Լուիզան ու ինչպե՞ս կուրախանա։

Ծանր էր ինձ համար այս անկեղծ խոսքերից հետո թաքցրնել իրողությունը Լևոնից, որ այդ պահին մարմնացած ոգևորություն էր։

— Լևոն,— ասացի,— շա՞տ ես փափագում տեսնել Լուիզային։

— Այո՛, իհարկե։

— Եթե չտեսնես, շա՞տ կտխրես։

— Բայց ես կտեսնեմ նրան, սինյոր, կտեսնեմ Միլանում ,— գոչեց Լևոնը հավատով լի, միևնույն ժամանակ, մի տեսակ երկյուղով նայելով երեսիս։

— Լուիզան այժմ Միլանում չէ։

— Ո՞վ ասաց։

— Սինյորա Ստեֆանիայի հեռագիրը։

— Հապա ո՞րտեղ է։

— Պարիզում։

— Ո՞ւմ հետ...

— Կավալլարոյի...

— Կավալլա՞րո,— գոչեց պատանին գրեթե շնչասպառ։

— Ամուսնացել է Լուիզայի հետ և երեկ ուղևորվել Պարիզ մի տարի ժամանակով,— ասացի ես միանգամից սրտիս ծանրությունից ազատվելու համար։

Լևոնը ցնցվեց, երեսի մկանունքները դողացին։ Մի վայրկյանում կարմրեց, կապտեց, հետո սփրթնեց կտավի պես։

— Տեսա՞ր, որ քեզ չի սիրում Լուիզան, որ դու երազի մեջ ես...

Լևոնը ճիգ արավ զսպել հուզմունքը։ Այդ տասնութ տարեկան պատանին, որի զգացումներն այնքան անժամանակ հասունացել էին, ուներ նաև կամքի ուժ։ Սակայն հարվածը ավելի զորեղ էր։ Նա թուլացած ընկղմվեց աթոռի վրա, արտասանելով.

— Ա՛յ նորություն... պետք է շնորհավորել...

— Այո՛, պետք է շնորհավորել,— կրկնեցի ես, ձևանալով իբր թե չեմ նկատում նրա հուզմունքը։

— Կավալլարոն լավ մարդ է, ազնիվ է,— ասաց նա դողդոջուն ձայնով, շրթունքները կրծոտելով։

— Այնքան ազնիվ, որ Լուիզան չարժե նրան։

— Սինյոր...

— Չարժե, չարժե,— կրկնեցի ես, վրդովվելով անմեղ իտալուհու դեմ։

— Լուիզան բարձր է... Լուիզան... հրեշտակ է...

Այլևս նա չկարողացավ իրան պահել, գլուխը դրեց սեղանին ու սկսեց հեկեկալ այնպես ուժգին, որ թվում էր, թե նրա մարմինը կտոր-կտոր է լինում։

Ես զգացի անզուսպ ատելություն դեպի Լուիզան. կարծես նա ինձ հասցրել էր բարոյական ծանր վիրավորանք։ Սկսեցի անխնա և միանգամայն անարդար պախարակել մի էակի, որ իսկապես արժանի էր սիրո ու հարգանքի։ Նկարագրեցի նրա աննշան թերությունները խոշորացույցով մեծացրած, հնարեցի չեղած թերություններ։ Լսելով ինձ, կարելի էր կարծել, թե չկա աշխարհի երեսին և չի եղել ավելի անբարտավան, ավելի հիմար և նույնիսկ ավելի տգեղ ու հակակրելի աղջիկ, քան Լուիզան։ Եվ այս բոլորը Լևոնին հիասթափեցնելու համար։ Ես ջախջախում էի նրա կուռքը, ձգում նրա ոտների տակ, որպեսզի ոչնչացնեմ նրա սրտում խորին հավատը։ Այնինչ գիտեի, որ այդ կուռքը ոչնչով մեղավոր չէ յուր մոլեռանդ երկրպագուի առջև։ Նա փուչ չէր էլ երևակայել, որ յուր պարզ, ընկերական վարմունքը կարող է մի պատանու սրտում առաջացնել այդքան հաստուն, այդքան խոր և ջերմ զգացում...

Սակայն Լևոնն ավելի մեծահոգի և վեհանձն էր, քան կարող էի երևակայել։ Նրա կեղեքվող կրծքից դառն հեծկլտանքի հետ դուրս էին գալիս միայն այս բառերը.

«Լուիզան պակասություն չունի... Լուիզան հրեշտակ է...»։

Եղել են մոլեռանդներ, որոնք կրակի միջից իրանց այրվող ձեռները պարզել են դեպի վեր, աղոթել աստծուն, որի անունով նրանք դատապարտվել են այրման։ Այսպես էր և՛ Լևոնը։ Անհուն տանջանքների բովում նա դեռ պաշտում էր յուր իդեալին, որովհետև դա նրա միակ աստվածուհին էր։

Նա զսպեց հեծկլտանքը, սրբեց արցունքը, ոտքի կանգնեց գրաֆը վերցնելով։

— Պետք է շնորհավորել սինյորա Ստեֆանիային,—

ասաց։— Բայց այժմ ուշ է... վաղը... Ներողություն, սինյոր, Լուիզայի համար չէի լալիս... Հոգնած եմ... Գիտեք... գիտեք... Լուիզան զուր է ամուսնու հետ գնում Պարիզ... Կավալլարոն գնում է յուր ձայնն ավելի մշակելու... Լուիզան յուր ապագան կզոհի նրան... Բայց ի՞նձ ինչ... ի՞նձ ինչ...

Քանի մի րոպե նրան պաշարեց անձնասիրության և ամոթի զգացումը։ Նա շփոթվեց յուր թուլությունից, արտասուքից։ Շփոթվեց այնպես, որ երեսիս չէր ուզում նայել։ Վերցրեց մի քանի անգամ մանդոլինան աննպատակ, հետ դրեց, գլխարկը ձեռքին սկսեց փնտրել նրան, ծիծաղեց կեղծ, անբնական ծիծաղով։ Վերջապես, ճանկեց յուր թանձր մազերը, կանգնեց սեղանի մոտ և կարմրած աչքերը հառեց լամպարի լույսին։ Չգիտեմ ինչու, միշտ նրա աչքերը ձգտում էին դեպի լույս։ Նա սիրում էր նայել արեգակի շողերին, լամպարի լույսին, վառարանի կրակին... Եվ այդ լինում էր մանավանդ այն միջոցներին, երբ նրա մտքերը պղտորված էին, նրա հոգին խռովված էր...

Ես տանջվում էի իմ անզորությունից, որովհետև չգիտեի՝ ինչով մխիթարել մարմնացած տանջանքը։

Լռությունը տևեց երկար։ Ես անցուդարձ էի անում. նա շարունակ կանգնած էր։ Հանկարծ, շրթունքները կրծոտելով, գլխարկը մի ձեռքով խփեց մյուս ձեռի ափին, շուռ եկավ և, առանց ինձ հրաժեշտ տալու, արագ քայլերով դուրս գնաց...

Մանդոլինան մնաց սեղանիս վրա կարծես վշտացած, որ դարձյալ իրան մոռացան... Չէ՞ որ Լևոնը եկել էր նրան տանելու, որ վաղը նվագի շոգենավի վրա...

Ինձ պաշարեց զղջման զգացումը. ինչո՞ւ այդպես շուտ և անզգույշ հայտնեցի նրան լուրը։ Ով գիտե՝ ուր վազեց և ինչ կարող է անել։ Երկու անգամ բարձրացա վերև և, դրսից լսելով նրա ձայնը, հանգստացա, հետ եկա։ Սկսեցի ինձ մխիթարել այն մտքով, որ կատարել եմ անկեղծ բարեկամի պարտք, բանալով Լևոնի աչքերը։ Մտածեցի նաև, որ է՞հ, ինչ և լինի, տասնութ տարեկան պատանի է, հազիվ թե վիշտը նրա սրտում երկար ապրի։ Լաց կլինի, լաց կլինի Լևոնը՝ կհանգստանա... Մտածում էի այսպես և, միևնույն ժամանակ, զգում, որ սխալված եմ...

Առավոտը զարթնեցի մի անսովոր ծանրություն սրտիս վրա։ Շտապով խմելով մի բաժակ թեյ, գնացի վերև։ Լևոնը տանը չէր։ Ալմաստն ասաց, թե գիշերը, անկողին պառկելուց առաջ, տվել է հիսուն ռուբլի և համբուրվել հետը, թե գրեթե ամբողջ գիշերը նստած է եղել գրասեղանի քով, գրել է, ջնջել, պատռել։ Առավոտը կրկին համբուրվել է նրա հետ և դուրս գնացել, տանը թողնելով կիթառը, որ ամեն օր հետը տանում էր։

— Նա տխո՞ւր էր,— հարցրի ես։

— Ոչ տխուր, ոչ ուրախ. այնպես էր, ինչպես միշտ։

Կիթառը տանն է, մանդոլինան սենյակումս. պարզ է, որ նա ո՛չ պանդոկ է գնացել, ո՛չ շոգենավ։ Ո՞ւր կարող է լինել։ Ես փափագեցի տեսնել նրան անպատճառ, հենց նույն ժամին. ես սաստիկ անհանգիստ էի։ Դուրս եկա, պտտեցի թատրոնների շուրջը, անցա երկու անգամ Դերիբասյան փողոցը, ուր երբեմն Լևոնը զբոսնում էր։ Չկար։ Օրը կիրակի էր. մտածեցի, գուցե հայոց եկեղեցումն է. կիրակի օրերը երբեմն գնում էր պատարագ լսելու։ Այնտեղ էլ չէր։

Ավելի քան երկու ժամ թափառելուց հետո վերադարձա տուն մտամոլոր։ Թվում էր ինձ, որ մի բան եմ կորցնում, մի շատ թանկագին բան։

Դարբասի առջև հանդիպեցի Ջաուշենկոյին։ Նա Լևոնի սենյակից էր գալիս։ Նա էլ էր փնտրում ընկերոջը, չգիտեմ ինչ որ «կարևոր» գործի համար։ Եղել էր պանդոկներում, «Խերսոն» շոգենավի վրա, հարցրել էր. նավաստիները այսօր նրան չեն տեսել։

Պատմեցի նրան պատահածը։

— Օ՜, ունայնություն,— գոչեց բանաստեղծն յուր սովորական ոգևորությամբ,— ես միշտ ասել եմ, թե սերը դեպի կինը հոգու հիվանդություն է։ Լևոնը վաղուց է ինձ խոստովանել, թե սիրահարված է այդ աղջկա վրա։ Օ՜հ, ինչքա՞ն էր խոսում նրա մասին, ինչպե՞ս հառաչում... Պետք է գտնել նրան, հենց իսկույն... Նա տաքարյուն է...

Խնդրեցի նրան մի քանի րոպե սպասել ինձ դրսում։ Գնացի սինյորա Ստեֆանիայի մոտ։ Անշուշտ Լևոնը այսօր եղել է նրա մոտ. չէ՞ որ ուզում էր շնորհավորել նրան։

Երջանիկ տրամադրության մեջ գտա Ստեֆանիային։ Նա ուրախությունից երգում էր ու պարում Ռախայի մոտ այն բոպեին, երբ մտա սեղանատուն։ Նա ասաց, թե հրավիրել է մի քանի բարեկամներ ու ծանոթներ, թե պետք է մի լավ գվարճանալ։

— Ա՜խ, սինյոր, այնքան ուրախ եմ, որ ուզում եմ բոլորին գրկել ու համբուրել։

«Մի՛գուցե և ինձ»— ակամա մտածեցի ես, գրեթե երկյուղով նայելով նրա սյուների պես հաստ ու ուժեղ կոներին։

Լևոնի մասին ասաց, թե առավոտյան եղել է յուր մոտ, շնորհավորել է, ձեռքը համբուրել։

— Նա քաղաքավարի պատանի է, իսկ և իսկ արտիստ։ Կարծես հայրը վարսավիր չի եղել, այլ ջենտլմեն։ Բայց ծիծաղելի էր, չէր հավատում Լուիզայի ամուսնությանը։ Հեռագրերը տվեցի, ինքը կարդաց, մեկ էլ շնորհավորեց, բայց այնպես մտիկ արավ աչքերիս խեթ-խեթ, ապշած, որ, կարծես, նոր էր տեսնում ինձ։ Հետո առանց դես առանց դեն ասաց. «Սինյորա Ստեֆանիա, մորս սիրեցեք, նա խեղճ կին է»։ Առհասարակ շատ օտարոտի էր...

Այսքանը բավական էր, որպեսզի իմ մեջ ծագեր վատ նախազգացում։ Դուրս գալով փողոց, Ջաուշենկոյին հաղորդեցի իմ երկյուղը։ Նա առաջարկեց գնալ քաղաքային թատրոնի կողմերը։ Իցկոն այժմ պիտի այնտեղ լինի։ Նա կարող է գտնել Լևոնին։

Իցկոյին հանդիպեցինք յուր հասակի մի հույնի հետ սաստիկ վեճի բռնված։ Հույնը կատաղել էր, հայհոյում էր Իցկոյին, անվանելով նրան «քոսոտ ջհուդ», «սատկած առնետ» և այլն։ Իսկ Իցկոն միայն կրկնում էր. «դու ինքդ, դու ինքդ»։

Ջաուշենկոն, սպառնալով հույնին գավազանով ջախջախել նրա գլուխը, ստիպեց նրան լռել։ Հայտնվեց, որ վեճը Լևոնի պատճառով էր։ Հույնը Լևոնի մրցակիցն էր թատրոնի վերնահարկում և շվացնում էր այն երգիչներին, որոնց նա ծափահարում էր։ Նա Իցկոյի մոտ Լևոնին հայհոյել էր։ Իցկոն պաշտպանել էր բացակա ընկերոջը և վեճի բռնվել։

Երբ Ջաուշենկոն պատմեց ինձանից լսածը, Իցկոն, վերուվար թռչկոտելով, գոչեց.

— Իհե՛, իհե՛ խեղճ Լևոն...

Նա ևս գիտեր, որ Լևոնը միշտ երազում է Լուիզայի մասին, և պատմեց մեզ մի քանի մանրամասներ։ Ի միջի այլոց, ասաց, թե շատ տխրելիս Լևոնը գնում էր «Ալեքսանդրյան պարկ» կոչված զբոսավայրն ու այնտեղ ծովափի կողմում, մի հեռավոր նստարանի վրա նստում, կիթառը ծնկների վրա դրած, և մտիկ անում նավահանգստից դուրս եկող շոգենավին։ Քանի՜-քանի անգամ Իցկոն հանդիպել է նրան այդ դրության մեջ, նա ասել է. «Իցկո, երբ մտիկ եմ անում մի հեռացող շոգենավի, ինձ թվում է, որ ես էլ նրա վրա ուրիշների հետ գնում եմ հեռու, հեռու երկրներ...»։

— Գնա՛նք Ալեքսանդրյան պարկ, այնտեղ է, երևի,— առաջարկեցի ես։

Տասը բոպեում հասանք զբոսավայրը, անցանք այդ ընդարձակ այգին երկարությամբ ու լայնությամբ, նայեցինք բոլոր ծառուղիները. չկար ու չկար Լևոնը...

Ես վերադարձա տուն հոգնած և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես, թողնելով Ջաուշենկոյին և Իցկոյին որոնել իրանց կորած ընկերոջը...

Վատ նախազգացումս ինձ այնքան շարացրել էր, որ ես առանց որևէ պատրվակի հրաժարվեցի մասնակցել սինյորա Ստեֆանիայի այդ օրվա ուրախ խնջույքին։ Ես պառկած էի հագուստով անկողնակալիս վրա և մտածում էի Լևոնի և միմիայն Լևոնի մասին։ Նրա տխուր, հուսահատությամբ լի աչքերն էի հիշում։ Վերջին բոպեին և նրանց մեջ կարդում էի մի փոքրիկ, բայց սքանչելի հերոսի հոգու անհուն տվայտանքը։ Երևակայում էի նրան յուր թշվառ հոր դրության մեջ. հարբած, կեղտոտ, վեր ընկած թատրոնի դռների առջև, անցորդների ծաղրին ու սրախոսություններին ենթարկված...

Նայում էի նրա մանդոլինային, սիրտս մորմոքվում էր։ Անշունչ գործիքը կարծես լեզու էր ստացել, ողբում էր յուր

տիրոջը։ Ես վերցրի նրան սեղանիս վրայից, քաշ արի պատի մի անկյունում, որ այլևս աչքիս չընկնի...

Մի քանի անգամ մատներս դիպան նրա լարերին, և նրանց թույլ հնչյունները հիշեցրին ինձ այն նշանավոր առավոտը, երբ Լևոնն առաջին անգամ նվագեց «Մադրիդի շրջմոլիկը»։ Թշվա՜ռ շրջմոլիկ, ո՞ւր ես դու այժմ...

Իսկ այնտեղ, հարևան սենյակում ուտում, խմում, զվարճանում էին հրավիրվածները։ Լսում էի Ռախայի ձայնը և սինյորա Ստեֆանիայի բարձրաձայն ուրախ ծիծաղը, որ առատ-առատ բխում էր նրա լայն, առողջ կրծքից... Փոքր առ փոքր նյարդերս թմրեցին. ես նիրհեցի, որովհետև գրեթե ամբողջ գիշեր չէի քնել... Կեսքուն և կեսարթուն դրության մեջ լսեցի ինչ-որ դղրդոց։ Վեր թռա տեղիցս... դա Լևոնի մանդոլինան էր, որ ընկել էր պատից հատակի վրա։ Նույն րոպեին, երբ գործիքը նորից քաշ էի անում պատին, դրսից լսեցի անսովոր աղմուկ։ Շտապեցի նախասենյակ և այնտեղից հանդիպեցի սինյորա Ստեֆանիային յուր հյուրերի հետ։ Նրանց դեմքերն արտահայտում էին զարմացում և երկյուղ։

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել,— հարցնում էին միմյանց։

Մեր բնակարանի մուտքի առջև կանգնած էր այրի Ալմաստը և ձեռները տարածած դեպի ներքև, գոռում էր հրդեհում այրվողի պես։ Երկու ոստիկան և մեր գավթապահը բարձրացնում էին սանդուղքով... Լևոնին։ Նրանց հետևից բարձրանում էին Ջաուշենկոն և Իցկոն։

Նայելով Լևոնի թրջված հագուստին, կապտած դեմքին, ամեն ինչ հասկացա... Մնացյալն երկու խոսքով պատմեցին Ջաուշենկոն և Իցկոն։

Լևոնին հանել էին ջրից նավաստիները «Խերսոն» շոգենավի տակից, որ երկու շաբաթից հետո պիտի տաներ նրան Իտալիա...

ԸՆԿԵՐՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

— Այդպես, ուրեմն, դու ամուսնանում ես իմ քրոջ աղջկա հետ, հարսանիքիդ օրն արդեն որոշված է, բնակարանդ կահավորված է և հարսնացուիդ օժիտը պատրաստ է։ Մի երկու շաբաթ ևս, դու Մարկոսյանի փեսան ես։ Հիանալի է, խելացի և, որ գլխավորն է, խիստ գործնական է։ Էյ, սպասավոր, բեր այստեղ մի շիշ շամպայն, ես այսօր պիտի մի քիչ քեֆ անեմ։

Սպասավորը հայտնվեց, չքացավ, նորեն երևաց մի ձեռում անձեռոցիկի մեջ փաթաթված շիշը, մյուսում՝ երկու դատարկ գավաթներ։

Նրանք նստած էին քաղաքի առաջնակարգ ճաշարանի առանձին սենյակներից մեկում, որ կահավորված էր փափուկ թավշյա գահավորակով ու բազկաթոռներով։ Սպասավորին խստիվ պատվիրված էր ոչ ոքի չթողնել այդտեղ և ամեն անգամ ներս գալիս ու դուրս գալիս դռները ծածկել։

Երկու նախկին ուսանողական ընկերներ էին և ներկա բարեկամներ։ Երկուսն էլ քաղաքում հայտնի անհատներ էին — Նազիմյանը որպես խելոք փաստաբան, Մերսիմյանը որպես եռանդուն ինժեներ-ձեռնարկող և ազգական հայտնի միլիոնատերի՝ Մարկոսյանի։

Արտաքինով նրանք հակատիպարներ էին։ Նազիմյանը նիհար էր, բարեկազմ, դեմքի նուրբ և փոքր-ինչ կանացի

գծերով, բարձր պարանոցով և կանոնավոր ձևավորված գլխով։ Մերսիմյանը գեր էր, թուխ երեսով, կարճ պարանոցով, տափակ ծոծրակով, տափակ ճակատով, փոքրիկ, խորամանկ աչքերով։

— Եվ ի՞նչ ընտրություն,— շարունակեց Մերսիմյանը, գավաթները լեցնելով փրփրուն ըմպելիքով,— ամենափառավոր։ Հասկանալի է, թե ինչու այնպես եռանդով հետամուտ էիր այդ աղջկան։ Դա մի ամբողջ հեքիաթ է, ժամանակակից հեքիաթ, ոսկե խնձորներով։ Ես ծանոթացրի քեզ նրա հետ, ես գովեցի ու փառաբանեցի քեզ նրա ծնողների մոտ, ես նրանց համոզեցի ընդունել քո առաջարկը։ Մի խոսքով, ես կատարեցի պատվավոր միջնորդի պաշտոնը հանուն մեր ընկերության։ Քանի՞-քանի երիտասարդներ էին ընկած օրիորդ Հելենայի հետևից և քանի-քանիսին է նա մերժել։ Իհարկե, հիվանդ հայր, միամիտ մայր. ոչ մի եղբայր, միակ ժառանգը ահագին հարստության։ Սքանչելի է։ Կեցցես, բարեկամս, ճարպիկ ես, վկա է աստված, որ ավելի հաջող որս չէիր կարող գտնել ամբողջ քաղաքում։

— Ինչո՞ւ ես այդ ասում,— ընդհատեց Նազիմյանը իր բարեկամի խոսքը,— մի՞թե չգիտես, որ ես Մարկոսյանի հարստությամբ չեմ հրապուրվել, այլ...

— Սո՞ւս, գիտեմ, շատ լավ գիտեմ։ Դու սիրահարված ես աղջկա վրա։ Քեզ համար ի՞նչ արժեք ունեն նրա հոր հինգ հոյակապ տները քաղաքի կենտրոնում, երկու շռգենավերը ծովի երեսին, դեռ չշահագործվող նավթահողերը Ամանիայում և Սուրախանիում, գեղեցիկ ձիերը, փայլուն կառքերը, ոսկին, արծաթը, ադամանդները։ Դու սիրահարված ես, խե՜ղճ պատանի։ Դու չգիտես ինչ ասել է հինգ միլիոնի ժառանգություն կամ, ճիշտն ասած, գիտես և արհամարհում ես, հա՜, հա՜, հա՜։ Քո հոգին քեզ չի մղում դեպի շքեղ բալեր, երեկույթներ, ճանապարհորդություն դեպի Եվրոպա, դեպի թանկագին կուրորտներ։ Դու սիրահարված ես ինչպես տասնուհինգ տարեկան գիմնազիստ, գու պատրաստ ես այսօր ևեթ սիրույդ առարկայի հետ հեռանալ աշխարհի բոլոր վայելքներից և ապրել շինականի իդիլիայով։ Դու սիրահարված, դու, հա՜, հա՜, հա՜...

— Մերսիմյան,— ասաց Նազիմյանը, նայելով ընկերոջ խորամանկ աչքերին, որոնց մեջ նկատում էր մի նենգ դիտավորություն,— ի՞նչ է նշանակում այդ կոմեդիան, ի՞նչ ես ուզում ասել։

— Համբերիր, կիմանաս։ Էյ, սպասավոր, բեր դարձյալ մի շիշ և անանաս, շո՜ւտ։

— Ես այլևս չեմ խմելու։

— Կխմես, պետք է խմես, ես զուր չեմ բերել քեզ այստեղ։ Գործ ունեմ, շատ կարևոր գործ։ Դու զարմանո՞ւմ ես, աչքերդ հառում ես երեսիս։ Է՜յ, սպասավոր, թող անանասը, ես ինքս կկճպեմ ու կկտրեմ։ Դե, կորիր։ Այդպես։ Այժմ ոչ ոք մեզ չի խանգարիլ անկեղծ լինելու։ Գոնե մի օր, մի ժամ, կես ժամ։ Տասներկու տարվա ընկերներ ու բարեկամներ ենք, սատանան տանի, մի՞թե չպիտի գեթ մի անգամ նայենք միմյանց հոգու խորքը։ Լսիր, Արշակ, որովհետև խնդիրը շատ լուրջ է, ուրեմն իրավունք կտաս ինձ մի փոքր հեռվից սկսել։ Զգենք նախ և առաջ մի թեթև հայացք մեր անցյալի վրա։

Անձեռոցիկով սրբելով իր հաստլիկ հյութալի շրթունքները, Մերսիմյանը արմունկները հենեց սեղանի եզրին և շարունակեց։ Նա հիշեց ուսանողական օրերը, հիշեց ինը ռուբլիանոց սենյակները և երեսուն կոպեկանոց ճաշերը մայրաքաղաքի էժանագին կերակրատներում, որոնք «ընտանեկան սեղանատուն» անվան տակ են մտնում, որպեսզի ավելի դյուրին փշացնեն չքավոր ուսանողների ստամոքսը։ Հիշեց ընկերական ժողովները, «ազատամիտների» և «սոցիալ-դեմոկրատների» պայքարը։ Նրանք ազատամիտներից էին։ Նա չմոռացավ հիշել և երիտասարդ աղախիններին գիշերային գաղտնի այցերը, կար անող կանանց չքավոր կացարանները հինգհարկանի տների կատուների տակ և կիսաթառամ տանտիրուհիների խանդավառ արցունքները հրաժեշտի պահերին։

— Այո՝, քաղցր են ուսանողական կյանքի հուշերը,— գոչեց Նազիմյանը, որի վրա մի քիչ ազդել էր շամպայնի երրորդ գավաթը։

— Քաղցր են,— կրկնեց Մերսիմյանը կծու հեգնու-

թյամբ,— ո՞չ, բարեկամ, դու կեղծում ես։ Դու սարսափով կամ զզվանքով ես մտաբերում այն չորսուկես տարիները, որ անցուցել ես կես-քաղցած ու կես-կուշտ փորով։ Ախ, շատ անգամ է մեր ինքնասիրությունը խոցոտվել հարուստ ընկերների շրջանում, մինչդեռ երկուսս էլ հոգով ու մտքով մղվել ենք հենց այդ շրջանը։ Դու քո չինովնիկ հորից ստանում էիր ամսական երեսուն ռուբլի, ես իմ միլիոնատեր փեսայից, ոչ ավելի։ Աղքատ լինելով, երկուսս էլ ատում էինք աղքատությունը չքավորի բոլոր անզոր ատելությամբ, որովհետև միշտ երազում էինք մայրաքաղաքյան կյանքի խելառ հաճույքների մասին։ Եվ միշտ ստիպված էինք սանձահարել մեր ախորժակը դառն մտատանջությունների և կծու հառաչանքների գնով։ Երևակայությամբ գեղասեր — հազիվ ամիսը երկու անգամ գնում էինք մեծ թատրոնների վերնահարկը, ուսկից բեմն երևում է շախմատի տախտակի, իսկ դերասանները նրա ֆիգուրների չափ։ Եվ ինչո՞ւ թաքցրնել. այդ բարձրությունը մեզ շատ անգամ ավելի է վշտացրել, քան մարդկային հոգու ցածությունը։

Որքա՞ն ջանք են գործ դրել իրենց մունդիրի կոճակների վրա ժանգ և կոշիկների վրա կարկատան չտեսնելու համար, որքա՞ն աշխատել են վերարկվի մաշված օձիքները հարուստների մոտ թաքցնելու համար։ Եվ կոճակները մաքրելով՝ անգիտակցաբար նրանց ժանգը փոխադրել են իրանց հոգու վրա, ուր հետզհետե զորանում էր մի անտանելի զգացում— աղքատի տանջող նախանձը դեպի հարուստը։ Ճըշմարիտ է, նրանք կարողացել են ուրիշներից թաքցնել այդ զգացումը, որպեսզի չտեսնեն չքավորների ամբարտավան արհամարհանքը և հարուստների վիրավորական կարեկցությունը, բայց որպիսի հոգեկան տանջանքներով։

— Այդ կողմից դու ինձանից ավելի խելոք և ավելի տակտով էիր,— շարունակեց Մերսիմյանը, դանակի ծայրից ընկերոջ գավաթի մեջ բաց թողնելով անանասի շերտը։— Խառնիր գդալով և շամպայնը նորից կփրփրե։ Այո, ավելի խելոք և ավելի տակտով։ Դու այժմ էլ այդպես ես։ Ինչ եմ ասում, դու ինձ շատ ես հետ թողել խելքով։ Ա, դու ծիծաղո՞ւմ ես համեստությամբ։ Բայց լսիր, ես ուզում եմ մի թեթև հա-

մեմատություն անել քո և իմ միջև։ Ուզում եմ, վերջապես, գիտենալ՝ ինչ արտաքին տարբերություն կա երկու համանման գարշելիների մեջ։

— Գարշելինե՞ր,— գոչեց Նազիմյանը զարմացած,— այդ ի՞նչ լեզվով ես խոսում։

— Խնդրեմ, խնդրեմ, մի խանգարիր։ Դու գիտես դուք գալ ամենքին հավասարապես, իսկ ես մի բարեկամ ձեռք բերելիս, երկուսը կորցնում եմ։ Ես թշնամուս տեսնելիս կատաղում եմ, դու՝ ժպտում ես։ Ախ, ոչ ոք ընդունակ չէ քեզ պես գրավիչ ժպտալ, նաև վայելուչ տխրել։ Երբ հարկավոր է՝ ուրախ սեղանակից ես, երբ անհրաժեշտ է՝ մտախոհ ու մըռայլ Համլետ։ Դու նրբակազմ ես, սահուն շարժումներով ու ձևերով. ես կոպիտ եմ, անտաշ։ Քո ձայնն անուշ ու շոյիչ է, իմը անդուրեկան, բիրտ։ Քո գունատ դեմքի արտահայտությունը հեզ է, և այդ է, որ քեզ շատերի աչքում դարձրել է գրեթե անմեղ հրեշտակ, իսկ ինձ համարում են արջ, և միանգամայն արդարացի։ Դու ոչ ոքի անհատական համոզումը չես վիրավորում կամ նսեմացնում, իսկ ես վիրավորում եմ, և ինձ ատում են։ Դու երբեք վիճաբանության միջոցին կոպիտ բառեր չես արտասանում, իսկ ես դիպչում եմ իմ հակառակորդի անձնավորությանը, մանավանդ երբ նրա ուժն ինձ դուր չի գալիս։ Դու քո հերքումները միշտ դնում ես անուշ հնչող բառերի մեջ և դարձնում նրանց ընդունելի, ես չեմ կարողանում։ Ինչո՞ւ թաքցնեմ, շատ անգամ ուզում եմ և չեմ կարողանում։ Դու եթե կամենաս, կարող ես թույնը թաթխել մեղրի մեջ և դնել թշնամուդ բերանը, դեմքիդ վրա խաղացնելով առաջնակարգ կոկետուհու քաղցը ժպիտը, իսկ ես...

— Չեմ հասկանում, այդ ի՞նչ անալիզ է,— ընդհատեց վերջապես Նազիմյանը, որ քանի գնում, այքան ավելի զարմանում էր ընկերոջ տարօրինակ տրամադրության վրա։— Դու ինձ հրավիրեցիր ճաշի, ասելով, թե ինչ որ կարևոր գործ ունես, և սկսել ես մի անհասկանալի հեքիաթ։ Ինձ թըվում է, որ դու արդեն հարբել ես...

— Ահ, կատարելապես ճիշտ է, ես հարբել եմ, էրգո, կարող եմ ճշմարտությունն ասել առանց քաշվելու։ Սպա-

պիր. իսկույն կդառնամ էականին։ Թույլ տուր մի քիչ էլ շարունակել իմ անալիզը։ Դու գիտես հաշտեցնել ծայրերը, հարթել անկյունները, միացնել գույները և ստեղծել ներդաշնակություն այնտեղ, ուր շիտակ մարդիկ միայն տգեղություն են տեսնում։ Ամենակատաղի հակառակորդների մեջ անգամ գտնում ես հայացքների ընդհանուր կետ և այդ կետի վրա հարկադրում ես նրանց իրարու երեսին ժպտալ, ձեռը սեղմել։ Էհ, այժմ ես թողնում եմ ինձ մի կողմ, իմ ձեռով դրոշմելով իմ ճակատին գարշելի ածականը, և դառնում եմ միայն քեզ, որովհետև կարևորը դու ես և ոչ ես։ Դու հասարակության մեջ խոսում ես հանդարտ, անվրդով, ստեպ-ստեպ նայելով խելոք մարդկանց երեսին ակնածու հայացքով, մի հայացք, որ արտահայտում է. «ներեցեք, եթե ես սխալվում եմ»։ Եվ ոչ ոք չի ասում, թե դու սխալվում ես, որովհետև երբեք վիճելի ճշմարտություններ չես ասում, որովհետև քո բոլոր ասածները հին աքսիոմաներ են։ Յուրաքանչյուր մի ազդեցիկ բառի համար դու ունես ձեռների չափած կցած շարժումներ և դեմքի պատրաստի արտահայտություն։ Բառերը շեշտում ես գեղեցիկ, միշտ աչքերիդ մեջ պահելով սովորական հեզությունը։ Օհ, այդ սոսկալի հեզությունը, նա ավելի դաժան է, քան ինքը դաժանությունը։ Այն է քո ամենազոր զենքը կյանքի։ Այն է, որ քեզ հանրության աչքում դարձնում է համակրելի։ Այո, ամենքը, ամենքը, թե հարուստ և թե աղքատ, թե կին և թե տղամարդ. ընկերներդ, ծանոթներդ, կլիենտներդ քեզ համարում են համակրելի։ «Համակրելի Նազիմյանը, հոգյակ Նազիմյանը»։ Ոմանք քեզ մինչև անգամ «Հիսուսիկ» անունն են տվել, սրբապղծելով մեծագույն վարդապետի անունը։ Նազիմյան, դու մի կատարյալ տիպ ես, Նազիմյան, տիպ։ Ահ, ցավում եմ, որ ես մի մեծ վիպասան չեմ, փնչպե՞ս քեզ կանմահացնեի իմ գրչով։ Դու տիպ ես հավիտենական, եղել ես, կաս և լինելու ես միշտ աշխարհի բոլոր կողմերում և ինչ պայմաններում ես լինես։ Ոչ մի քաղաքական, կրոնական կամ օրենսդրական կանոններ քեզ չեն կարող փոխել։ Փոխվի՞ քո հագուստը. բայց հոգիդ, էությունդ էմնա, վանդի անմահ ես, ո՜վ ազդեցիկի ծնունդ...

— Դեհ, բավական է, հարկավոր է վերջ տալ շաղակրատությանդ,— ասաց Նազիմյանը, մատը սեղմելով էլեկտրական զանգակի կոճակին։

— Սպասիր,— գոչեց Մերսիմյանը Նազիմյանի ձեռը կոճակից հեռացնելով,— ես իսկույն, իսկույն կավարտեմ։ Մինչև այժմ ես եղել եմ քո արժանավորությունների գլխավոր երկրպագուն, քո մտերիմը, պաշտպանը, հավատարիմ ընկերը։ Իսկ ա՞յժմ... Այժմ ուզում եմ մի լավ նայել այդ հեզ աչքերին և տեսնել նրանց հատակում թաքնվածը...

Նա աթոռն ավելի մոտեցրեց սեղանին, գլուխն առաջ ձգեց և իսկապես սկսեց խոր, երկարատև հայացքով նայել Նազիմյանի աչքերին։ Մի ինչ-որ բոլորովին անսովոր, երկյուղալի, նույնիսկ թշնամական բայլ կար այդ համառ նայվածքի մեջ։ Նազիմյանը փորձեց ժպտալ, չկարողացավ, թեթևակի ցնցվեց և թիկն տալով աթոռի մեջքին, նայեց առաստաղին.

— Աա, տեսնում եմ, որ դու արդեն կամաց-կամաց հասկանում ես, թե ինչու համար եմ քեզ այստեղ հրավիրել,— արտասանեց Մերսիմյանը կծու հեգնանքով, որ նույնպես տարօրինակ էր Նազիմյանի համար։— Ես խաբված չեմ եղել, ոչ։ Ես միշտ մտածել եմ, որ այդ գեղեցիկ տերևների տակ աղբ է թաքնված, բայց լռել եմ ու բարեկամությունս շարունակել։ Ինչո՞ւ։ Որովհետև որքան ևս դու գարշելի լինեիր, ուրիշներից վատ չէիր այդ անիծյալ Սոդոմում։ Դու գոնե խելք ունեիր, գիտեիր ամենաեղկելի արարքներիդ վայելուչ ձև տալ։ Իսկ ա՞յժմ... Այժմ տեսնում եմ, որ դու... օձ... օձ...

— Մերսիմյան,— գոչեց Նազիմյանը արդեն դայրացած,— չեմ կարծում, որ գինին այդքան ազդած լինի քեզ վրա... Դու խելագարվել ես...

— Օձ... Ես քեզ թույլ չեմ տալ բուն դնելու այդ միամիտ ընտանիքում, թույլ չեմ տալ անբախտացնել իմ քրոջ աղջկան...

— Ի՞նչ ես ուզում ասել, բացատրիր վերջապես...

Մերսիմյանը ձեռը տարավ ծոցի գրպանը, դուրս բերեց այնտեղից մի ճխլված նամակ, բաց արավ և դրեց ընկերոջ առջև։

— Ահա, կարդա և կիմանաս։

Նազիմյանը նայեց նամակի վերնագրին, ստորագրին և շրթունքները կծեց։ Մի քանի վայրկյան նա դիտում էր ընկերոջ դեմքը։

— Ճանաչեցի՞ր։ Այժմ ասա, ի՞նչ երեսով ես դու ուզում ամուսնանալ իմ քրոջ աղջկա հետ։ Սպասի՛ր, մի՛ շարժվիր տեղիցդ։ Դու այս սենյակից դուրս չպիտի գաս, մինչև որ խնդիրը պարզվի և վճռվի։

— Այդ նամակը ինչպե՞ս է քո ձեռն ընկել։

— Շատ հասարակ ձևով, փոստն ամենքի տրամադրության տակն է, կարդա, և բոլորը կիմանաս։

Նազիմյանը դողում էր, զուր աշխատելով իշխել իրան։ Նա շտապով աչքի անցկացրեց նամակը, որ գրված էր ծանոթ կանացի ձեռքով և ծանոթ ուղղագրական սխալներով փոստային թղթի ամբողջ չորս երեսների վրա։

— Դու գնացե՞լ ես նրա մոտ,— հարցրեց նա, նամակը վերադարձնելով։

— Մի՞թե կարող էի չգնալ այդ տեսակ աղերսալի տողերից հետո։ Լսի՛ր, ես կպատմեմ բոլորը։ Մեկէլ օրն երեկոյան, այս նամակն ստանալով, սկզբում կարծեցի թե դա մի շանտաժ է քո դեմ։ Մեկն այն սովորական շանտաժներից, որոնց զոհ են դառնում երբեմն անցյալ ունեցող տղամարդիկ իրանց հարսանիքի շեմքում։ Բայց աղերսն այնքան անկեղծ էր հնչում, որ ես չէի կարող չտեսնվել այդ անբախտ աղջկա հետ։ Երեկ առավոտյան տասը ժամին գնացի նրա կացարանը։ Այդ մի համեստ կահավորված մաքուր սենյակ էր մի մեծ տան գավթի ծայրում։ Դռների առջև ինձ դիմավորեց մի գեղեցիկ և երիտասարդ կին սև հագնված։ Նա հուզված ձայնով արտասանեց իմ ազգանունը և շտապեց շնորհակալություն հայտնել, որ անուշադիր չէի թողել իր նամակը։ Ես նայեցի նրան և իսկույն զգացի, որ իմ առջև կանգնած էր մեր կեղտոտ կրքերի զոհերից մեկը։ Բայց ի՞նչ զոհ։ Արդարև, քո ճաշակը նուրբ է։ Նա գեղեցիկ է, թարմ և զարմանալի չէ, որ նրա գրկում դու մոռացել ես սովորական զգաստությունդ...

Այստեղ Նազիմյանը թեթևակի ցնցվեց, ապա սկսեց սուր հայացքով նայել ընկերոջ երեսին։

— Նա պատմեց բոլորը առանց հառաջաբանի,— շարունակեց Մերսիմյանը, բնավ չշփոթվելով Նազիմյանի հայացքից։— Նա չէր արտասվում, բայց հուզմունքից խեղդվում էր։ Նրա դողդոջուն ձայնն իր անկեղծ շեշտով ազդում էր ինձ վրա հակառակ իմ ջանքի — լինել սառը, ինչպես վայել էր քո հավատարիմ ընկերոջը։ Նա ցույց տվեց ինձ իր վեցամսյա երեխային և հարցրեց արդյոք չե՞մ տեսնում նմանություն նրա և քո դեմքերի մեջ...

— Ես երեխա չունեմ, իմը չէ, արտասանեց Նազիմյանը դրականապես և դարձյալ նայեց ընկերոջ երեսին զննող հայացքով։

— Մի՛ ստիր,— գրգռվեց Մերսիմյանը,— նա ունի անհերքելի փաստեր։ Դու, իհարկե զգույշ մարդ ես, բայց на всякого мудреца довольно простоты: Նա ցույց տվեց ինձ քո նամակը Թիֆլիսից գրված։ Երբ առաջին անգամ իր կրծքի տակ զգում է անսովոր բաբախումը, սարսափում է և շտապում է քեզ հայտնել։ Այն ժամանակ դու Թիֆլիսումն ես լինում դատաստանական գործերով։ Դու նրան խորհուրդ ես տալիս դիմել մանկաբարձուհիների օգնության՝ «խայտառակության» առաջն առնելու համար։ Ինչպես մի անփորձ էակ, նա չի կարողանում գտնել խիղճը վաճառող մանկաբարձուհի և ամաչում է երկար փնտրել։ Նա ստիպվում է թողնել ծնողների տունն ու հեռանալ։ Թիֆլիսից վերադառնալով՝ դու նրա համար վարձում ես առանձին բնակարան։ Քեզանից ոչ ոք հաշիվ չի պահանջում... Անպիտան, ասա ինձ պարզ, ի՞նչ ես մտադիր անել այդ անբախտի վերաբերմամբ...

— Այն, ինչ որ ընդունված է անել այդպիսի դեպքերում,— պատասխանեց Նազիմյանը, որ արդեն բավական իշխել էր իրան։

— Այսինքն՝ բաժանվե՞լ...

— Այդ մի սովորական պատմություն է.

— Թողնել հարազատ զավակիդ ճակատագրի հաճույքին՝։

— Ես կապահովեմ նրան նյութապես։

— Սիրուհուդ կապահովես կնոջդ փողերո՞վ,— գոչեց Մերսիմյանը, ձեռը զարկելով սեղանին,— ես չեմ թողնիլ, որ իմ քրոջ աղջիկը մինչև այդ աստիճան խաբվի։

— Ուրեմն, ի՞նչ ես պահանջում ինձանից։

— Պահանջում եմ, որ այսօր ևեթ հրաժարվես իմ քրոջ աղջկանից։ Նա չի կարող իր անկողինը բաժանել քո սիրուհու հետ։

— Բայց ես ասացի, որ սիրուհուս կթողնեմ և արդեն թողել եմ։ Նա ինձ խանգարել չի կարող։

— Նա քեզ կխանգարի, որովհետև սիրում է քեզ, չնայելով քո ստոր վարմունքին։

— Նա ի՞նքն ասաց այդ։

— Այո, ինքը,— պատասխանեց Մերսիմյանը առանց տատանման։

— Դու ստում ես, Մերսիմյան։

— Ոչ մի դրամական ապահովություն չի կարող նրան ստիպել հաշտվելու իր վշտի հետ։ Նա ունի վրիժառության զգացում դեպի քեզ։ Բայց ինչո՞ւ ես հարցնում ինձ, այս բոլորը նա երեկ երեկո ինքն է քեզ ասել քո բնակարանում։

— Ահ... դու ա՞յդ էլ գիտես։

— Այո, ինձ հայտնի են բոլոր մանրամասնությունները։ Այսպես թե այնպես, դու առանց սկանդալի չես ազատվի նրանից։ Իսկ ես չեմ ուզում, որ իմ քրոջ աղջկա անունն այս կամ այն կերպ կապվի այդ սկանդալի հետ։ Հասկանո՞ւմ ես։ Դու պետք է հրաժարվես հարսնացվիցդ։

— Իմ հրաժարվելը ինքնըստինքյան կդառնա մի սկանդալ քրոջդ աղջկա համար։ Չեմ կարծում, որ նրա համար դուրեկան լինի «մերժված»-ի համբավը։

— Այդ մասին դու կարող ես չմտածել։ Դու կկատարես բոլորը՝ ինչ որ քեզնից պահանջեմ։

— Ա՞յն է,— հարցրեց Նազիմյանը մի տեսակ դիվային շեշտով։

— Առաջինը, կխոստանաս ինձ ամեն տեղ ասել, թե հարսնացուդ ինքն է քեզ մերժել, հնարելով այնպիսի պատճառներ, որոնք մազի չափ չդիպչեն նրա պատվին։ Դու խորամանկ ես, կարող ես հնարել։ Երկրորդ, հենց այժմ ևեթ

կգրես Հելենային մի սիրահարական նամակ, ուր կնկարագրես նրա բոլոր արժանավորությունները։ Դու կաղերսես, որ նա համաձայնվի քո ամուսինը դառնալու։ Հասկանո՞ւմ ես։ Այդ նամակը կմնա իմ ձեռքում որպես փաստաթուղթ այն հավանական դեպքի համար, երբ դու մի ուրիշ հարսնացու գրավելու ցանկությամբ կփորձես իմ քրոջ աղջկա վարկը գցել։ Այս բոլորի մասին ես մտածել եմ, որոշել և պահանջում եմ, որ կատարես։ Էյ, սպասավոր։

— Ի՞նչ ես կամենում։

— Թուղթ և գրիչ։

— Ավելորդ է։ Դու երեխա չես, թո՛ղ այդ հիմարությունները... Այդ տեսակ տխմար պահանջներ կատարելու չափ ես երեխա չեմ։

Եվ դառնալով սպասավորին, որ ներս էր վազել Մերսիմյանի կոչին, հրամայեց։

— Բեր հաշիվը։

— Հաշիվը կվճարի նա՛, որ քեզ ճաշի է հրավիրել։ Սպասավոր, բեր թուղթ և թանաք։

Սպասավորը անհետացավ։

— Բարեկամ,— ասաց Նազիմյանը այս անգամ միանգամայն մեղմ եղանակով,— այդ կոմեդիան ոչ քեզ է վայելում, ոչ ինձ։ Եթե դու ընկեր ես, օգնիր ինձ այս կնոջից ազատվելու հանուն քո քրոջ դստեր բախտավորության։

— Իմ նպատակը հենց իմ քրոջ աղջկա բախտավորությունն է, ահա թուղթ ու թանաք, գրիր, ինչ որ կթելադրեմ։

— Ուրեմն դու կատակ չե՞ս անում։

— Գրի՛ր։

Նազիմյանը ոտքի կանգնեց։

— Ցտեսություն,— ասաց նա,— երբ գինուց կարթնանաս, կխոսենք։

— Ուրեմն, դու ուզում ես, որ ամեն ինչ ե՛ս անե՞մ։ Շատ լավ. այսօր իսկ Հելենան կխմանա քո պատմությունն այդ կնոջ հետ։

— Դու այդ չես անիլ։

— Կանեմ, երդվում եմ ինչով կամենաս։

— Բայց գիտե՞ս, արդյոք, ինչպես է վերաբերվում ինձ

քո քրոջ աղջիկը,— ասաց Նազիմյանը, վերից վար մի խոր հեգնական հայացք ձգելով Մերսիմյանի անտաշ մարմնի վրա։

— Նա քեզ համարում է ազնիվ ու մաքուր մարդ, բայց իմ խոսքին կհավատա, որովհետև գիտե, որ շահ չունեմ քեզ զրպարտելու և, վերջապես, ձեռիս փաստ կա։

— Ես այդ չէի ուզում ասել։

— Ահ, գիտեմ, նա սիրահարված է քեզ վրա։ Հարվածը նրա համար կլինի ծանր, բայց ոչինչ, ժամանակը կբուժե վերքը։ Հելենան այնքան հիմար չէ, որ չհասկանա, թե չի կարելի սիրել մի մարդու, որ իր հարազատ զավակին փողոց է նետում...

Տիրեց մի քանի վայրկյան լռություն։

Նազիմյանը, ձեռը ճակատին սեղմած, խորհում էր։ Մերսիմյանը վարից վեր նայում էր նրա կանոնավոր կազմվածքին, գեղեցիկ գլխին և արիստոկրատիկ ձեռներին։ Նա միշտ հոգու խորքում նախանձել էր այդ մարդուն, որ այնքան դուր էր գալիս կանանց։

— Նստի՛ր և գրիր,— կրկնեց նա մի անգամ ևս։

— Գիտես ի՞նչ, սիրելիս,— ասաց վերջապես Նազիմյանը, մի ձեռը հենելով սեղանի եզրին,— ինչպես տեսնում ես, այժմ քեզ հետ պիտի խոսել ուրիշ լեզվով։ Լսիր, ես վճռել եմ ամուսնանալ օրիորդ Մարկոսյանի հետ և ամուսնանալու եմ անպատճառ, ինչ էլ լինի։ Այս մեկ։ Երկրորդ, երեկվանից իմ ապագա աները ինձ մտցրել է իր գործերի մեջ։ Թող հայտնի լինի քեզ, որ այսուհետև ես ոչ միայն Մարկոսյանի ընտանիքի անդամ եմ, այլև լիազոր հավատարմատար։

— Դո՞ւ,— գոչեց Մերսիմյանը այլայլված։

— Այո, ես։

— Հավատարմագիր ունե՞ս։

Նազիմյանը դուրս բերեց գրպանից մի մեծ թերթ, բաց արավ և դրեց Մերսիմյանի առջև։

— Ի՞նչ ես ուզում ասել դրանով,— հարցրեց Մերսիմյանը։

— Այն, որ մենք միմյանց շատ լավ ենք ճանաչում և

չենք կարող իրարու խաբել։ Այսօր ես Մարկոսյանի երկաթե պահարանում գտա քո ստորագրությամբ ոչ ավելի ոչ պակաս տասնումեկ մուրհակ։ Այդ մուրհակներից մեկի ժամկետը լրանում է վաղը չէ մյուս օրը, մյուսինը — հինգ օրից հետո...

— Գիտեմ, լրանում է, բայց քե՞զ ինչ։

— Ես Մարկոսյանի լիազոր հավատարմատարն եմ։ Մերսիմյան, դու կարող ես գնալ իմ հարսնացուին իմ մասին պատմել ինչ որ քեֆդ է, բայց լարել նրան իմ դեմ չես կարող։ Գալով նրա հորը, այդ մենք կփորձենք, ծերունին մեզնից որին է հավատում, քեզ թե ինձ։ Իսկ այժմ լսիր. դու քո բոլոր մուրհակները պետք է մինչև վերջին կոպեկը վճարես։ Հետևաբար վաղը չէ մյուս օրը 12 ժամին ես քեզ կսպասեմ դրասենյակում։ Դու կբերես հինգ հազար ռուբլի և մուրհակդ հետ կստանաս։ Դեհ։ Շամպայնի փողը ես կվճարեմ։

Նա քայլերն ուղղեց դեպի դռները և դուրս գնաց։

Ոտքի թռնելով, Մերսիմյանը մնաց տեղն ու տեղը անշարժ։ Հինգ հազար ռուբլի։ Ինչպե՞ս, որտեղի՞ց։ Նրա դրամարկղում կա ընդամենը երեք հարյուր ռուբլի... և ոչ ոքից ստանալիք կամ հույս ստանալու։

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Հետևյալ օրը Մերսիմյանը ժողովարան գնաց սովորական ժամանակից երկու ժամ առաջ։ Նա ուզում էր այնտեղ հանդիպել Նազիմյանին, որ չէր սիրում երկար մնալ ժողովարանում, չունենալով թուղթ խաղալու սովորություն։

Այն հանգամանքը, որ Նազիմյանը այժմ Մարկոսյանի լիազոր հավատարմատարն է, տակնուվրա արավ Մերսիմյանի մտքերը։

— Ուրեմն վաղը անպատճա՞ռ պիտի վճարեմ մուրհակս,— հարցրեց նա, Նազիմյանի թևից բռնելով և մի կողմ տանելով։

— Կարծում եմ։

— Ես փող չունեմ, պետք է մուրհակը նորոգել։

— Տեսնվե՞լ ես փեսայիդ հետ։

— Նրա մոտից եմ գալիս։

— Հրամայե՞ց նորոգել։

— Ոչ։

— Ի՞նչ ասաց։

— Որ այսուհետև ինքն այլևս գործերով չի զբաղվելու և ամեն ինչ քեզ է հանձնել։ Խնդրում եմ, պարտքիս վճարումը հետաձգել մի ամսով։

— Ցավում եմ, որ չեմ կարող այդ անել։

— Ուրեմն ուզում ես ինձ նե՞ղը գցել։

Նազիմյանը աչքերը լայն բանալով, նայեց ընկերոջ երեսին շինծու զարմացմամբ, որ սակայն շատ բնական թվաց գիմացինին։

— Այդ դո՞ւ ես ասում, բարեկամս։ Երեկ դու չէի՞ր, որ քիչ էր մնում ատրճանակ սեղմեիր ճակատիս։ Թույլ տուր հարցնել. սպառնալիքդ կատարեցի՞ր։

— Կկատարեի, եթե հետևանքի մասին աներկբա լինեի։ Բայց հրապույրդ չափազանց զորեղ է Հելենայի համար։

— Չափազա՞նց մինչև անգամ,— կրկնեց Նազիմյանը ժպտալով,— ինչ հիման վրա ես այդ կարծում։

— Ես Հելենային ենթարկեցի թեթև քննության...

— Ե՞վ...

— Համոզվեցի, որ դու նրան ոչ միայն սիրահարեցրել ես քեզ վրա, այլև կախարդել, այո, ուրիշ խոսք դժվարանում եմ գտնել։ Նա քեզանով է ապրում ու շնչում այժմ, քեզ է միայն երազում։ Նա չի հավատալ ոչ մի պարսավանքի...

— Բայց չէ՞ որ դու գրավոր փաստ ունես ձեռքումդ... այդ կնոջ նամակը...

— Նա կարհամարհի ամեն ինչ, այնքան կուրացած է քեզանով։

— Կարող ես ազդել նրա հոր վրա, եթե արդեն վճռել ես ինձ կործանել։

— Օ՜օ, դու նրան էլ ես խելքից հանել, այդ հիվանդոտ կամակորին։ Նա քեզ համարում է աղնվության տիպար և հավատում է այնպես, որպես երբեք իր կյանքում ուրիշ մեկին չի հավատացել։

— Էէ, աշխատիր ուրեմն գործել քրոջդ միջոցով։ Նա կարող է ազդել թե՛ իր ամուսնու և թե՛ աղջկա վրա։

— Քույրս վաղուց է կորցրել իր ազդեցությունը ամուսնու վրա։

Այդ մի դառն խոստովանություն էր Մերսիմյանի համար։ Նա գիտեր, որ ինքն է գլխավոր պատճառը, որ իր քույրը կորցրել է ազդեցությունն ամուսնու վրա։ Գիտեր, որ իր մուրացկանությամբ վաղուց ձանձրացրել է Մարկոսյանին և այդ պատճառով ծերունին ատում է ոչ միայն նրան, այլև նրա քրոջը։

— Շատ ցավում եմ, որ այդպես է,— ասաց Նազիմյանը, ձեռը ճգնավորի հեզությամբ սեղմելով իր կրծքին,— շատ ցավում եմ... Ցտեսություն։ Ես գնում եմ երեկոյան հեռագիրները կարդալու, տեսնենք ինչ է խոսվում առաջիկա պատերազմի մասին...

— Արշակ,— գոչեց Մերսիմյանը գունատվելով, և բռնեց ընկերոջ ձեռը։

— Հանդարտ, սիրելիս, տեսնողները կարող են կարծել, որ մենք վիճում ենք թշնամաբար։

— Այդպես սառը մի՛ խոսիր,— մռնչաց Մերսիմյանը,— ես ավելի եմ վրդովվում։

— Սիրելիս, ի՞նչ կարիք կա թակարդ ընկած արջի պես մռնչալու։ Էհ, գիտեմ, որ ֆիզիկապես ուժեղ ես, կարող ես ինձ ծեծել, բայց կրթված մարդուն վայե՞լ է խոհեմությունը մոռանալ, մանավանդ մի հասարակական տեղում։ Կամենո՞ւմ ես ճշմարտությունը գիտենալ։ Լսի՛ր. Մարկոսյանը քո մուրհակը չի փոխիլ։ Սիրելիս, ինչո՞ւ չհասկանալ նրա դրությունն էլ. մարդու մատյանները քո հաշվում ցույց են տալիս անվերջ փոխառություններ և ոչ մի հատուցում, հասկանո՞ւմ ես, ոչ մի վճարում։

— Արշակ,— ասաց Մերսիմյանը զգալի չափով ընկրճված ձայնով,— գործերս վատ են գնում, հասկացիր. շատ վատ... Այսօր ես տասը մարդու եմ դիմել և բոլորից մերժում եմ ստացել։ Այլևս ոչ ոք չի ուզում ինձ օգնության ձեռք մեկնել։ Ամենքը մատի փաթաթան են դարձրել իմ փեսայի հարստությունը ու նրա մոտ են ուղարկում ինձ։ Ես Մար-

կոսյանին տված մուրհակներիս մասին չեմ հոգում։ Նրանք ինձ համար այնքան էլ վտանգավոր չեն, վաղը ես ուրիշ վճարելիք ունեմ։ Բանկին, հասկանո՞ւմ ես, երկու հազար հինգ հարյուր ռուբլի, բայց այդքանն էլ չունեմ։ Հույսս դարձյալ փեսայիս վրա է։ Ես գիտեի, որ նա այս անգամ բացե ի բաց պիտի մերժի, բայց, բայց... էհ, մտածում էի, գուցե կարողանամ մի անգամ էլ կոտրել նրա համառությունը։ Արշակ, մոռացիր երեկվա ինցիդենտը... հուսահատությունը երբեմն մարդուն ստիպում է անխոհեմ միջոցների դիմել...

Մինչ Մերսիմյանը արտասանում էր իր վերջին խոսքերը, Նազիմյանը նորեն սուր հայացքով նայեց նրա աչքերին։ Նա արդեն հասկացել էր ընկերոջ միտքը։

— Այդպես, ուրեմն,— արտասանեց նա դարձյալ ժպտալով,— այդպես... Դե բարեկամս, ես շատ լավ գիտեի՝ ինչ բանից է ծագում քո ասպետությունը, հրաշալի քեռի հարսնացուիս։ Դու ուզում էիր դիմել մի ծայրահեղ միջոցի՝ շահագործել իմ անհատական գաղտնիքը։ Ով գիտե, գուցե կարողանայիր նպատակիդ հասնել։ Գուցե փեսադ երախտապարտ գտնվեր և մի անգամ էլ իր քսակը բանար քեզ համար։ Ոչինչ, բավական օրիգինալ միջոց էր։ Բայց չհաջողվեց։ Նեսրդ քարին դիպավ։ Այժմ թույլ տուր քեզ մի թեթև հարց տալ. երեկ ճաշին դու մի քանի անգամ ինձ անվանեցիր օձ, իսկ դո՞ւ ինչ ես, կարելի՞ է իմանալ...

Մերսիմյանը շփոթված երեսը մի կողմ դարձրեց։

Նազիմյանը ձեռը դրեց նրա ուսի վրա և, երեսին նայելով, ավելացրեց.

— Վախկոտ աղվես գայլի մորթով։ Ցտեսություն, ես գնում եմ ընթերցարան։ Դե լավ, արյունդ մի պղտորիր, ես չեմ վիրավորվում...

Նա հանգիստ հեռացավ Մերսիմյանից, ճանապարհին աջ ու ձախ բարևելով իր ծանոթներին սովորական սիրալիր ժպիտն երեսին։

Մերսիմյանը նայեց նրա հետևից մի քանի վայրկյան տակավին շփոթված։ Ապա, ուշքը ժողովելով, նստեց մերձակա բազկաթոռներից մեկի վրա և ծխախոտ վառեց։ Այդպես,

ուրեմն, նա տվել էր մի հարված—փոխարենը ստացավ կրկնակի։ Նազիմյանը նրա դիմակը պատռեց ավելի հարպիկ, քան ինքը նրանը։ Այժմ ո՞վ է երկուսից ավելի ստորը։ «Ես, թե նա, ե՞ս, թե նա», կրկնեց մտքում նա մի քանի անգամ և չկարողացավ որոշել։

Նա ձեռքով մի հուսահատական շարժում արավ և ոտքի կանգնեց։ Ի՞նչ պիտի անե այժմ։ Կատարե՞լ արդյոք իր սպառնալիքը։ Բայց չէ՞ որ նա իր զենքը տվեց Նազիմյանին, կարելի՞ է այսուհետև խաբել նրան կամ վախեցնել։

Նա անցավ ընթերցարան։

Նազիմյանը, երկայն սեղանի քով նստած, ոտ ոտի վրա ձգած, հեռագիրներ էր կարդում։ Զգալով ընկերոջ լուռ ներկայությունն իր հետևում, նայեց վարից վեր և ամեն բան հասկացավ։ Այլևս Մերսիմյանը նրա աչքերի մեջ չտեսավ կծու հեգնանք, որ այնպիսի դաժանություն էր տվել այդ ժպտուն դեմքին։ Եվ ինչո՞ւ պիտի լիներ։ Մերսիմյանն ընկած էր, իսկ Նազիմյանը ընկածին հարվածելը ավելորդ էր համարում ոչ ասպետական զգացումից դրդված, այլ այն մշտական երկյուղից, որ հատուկ է ծայրահեղորեն զգաստ բնույթներին։

— Քաղաքական աշխարհում ոչ մի հետաքրքրական երևույթ,— ասաց նա, հեռագիրները շարտելով սեղանի վրա։

Նրանք միասին դուրս եկան վեստիբյուլ։ Մերսիմյանը դուրս բերեց ծոցի գրպանից նամակը և տվեց Նազիմյանին։

— Ինչի՞ս է հարկավոր այդ կնոջ նամակը,— ասաց Նազիմյանն ամենայն անտարբերությամբ։

Մերսիմյանը ապշած նայեց նրա երեսին։

— Երեկ, մեր փոթորկալի ճաշից հետո,— բացատրեց Նազիմյանը,— ես գնացի նրա մոտ։ Էհ, բարեկամս, երբեք չպետք է քրքրել ուրիշի բարոյական տիղմը, առանց սեփականի մասին մի լավ մտածելու։ Բայց ես քեզ չեմ մեղադրում, մանավանդ այդ կնոջը։

— Ի՞նչ ես ուզում ասել,— հարցրեց Մերսիմյանը, նախագուշակելով սակայն, որ ընկերն իր ամենաղորեղ հարվածը թողել է վերջի համար։

— Այդ կինն երբեք ինձ չի սիրել։ Նա միայն առիթ է

փնտրել քեզ հետ ծանոթանալու, ահա նրա քեզ գրած նամակի իսկական նպատակը։ Դեհ, դեհ, չարժե շփոթվել ու կարմրել։ Բարոյականություն ասված բանը շատ առաձգական հասկացողություն է։ Նա իսկական ձև է և ոչ նյութ, իսկ ձևերը տարբեր են լինում։ Հասարակությունն աչքերով է դատում։ Նրա համար բարոյական է ամեն ինչ, որ արտաքուստ վայելուչ է։ Բավական է, որ նրա տեսողությունը չվիրավորես, նա չի աշխատիլ ներքինդ թափանցել։ Բայց եթե վերարկվիդ օձիքը մաշված է, նա կկարծե, որ ներքնահագուստդ կեղտոտ է։ Ամեն բան ձևի վրա է հիմնված։

— Ես ոչինչ չեմ հասկանում քո ասածներից։

— Բավական է։ Մենք պատանիներ չենք, և ես կրկնում եմ, չեմ մեղադրում ո՛չ քեզ և ոչ մանավանդ նրան։ Մտածեցեք նախ գործի մասին։ Ասա այժմ, ի՞նչ ես կամենում ինձանից։

— Արշակ...

— Դե լավ, կարճ կապենք, չէ՞ որ մեջտեղ մուրհակների խնդիր կա։ Կամենո՞ւմ ես գնալ փեսայիդ մոտ։ Էհ, ինչ կա, գուցե մեզ հաջողվի մի բան անել։ Ասա, գնո՞ւմ ենք, թե չէ։ Շտապենք, հետո ուշ կլինի...

— Գնանք,— ասաց Մերսիմյանը, չկարողանալով թաքցնել իր ուրախությունը։

— Այդպես, ուրեմն, ծառայության փոխարեն ծառայություն, չէ՞, հաճելի ծառայություն։

Նրանք իջան ընգարձակ սանդուղքով, հագան վերարկուները և դուրս եկան փողոց։

Մարկոսյանի բնակարանը հեռու չէր։ Անցնելով երկու փողոց, բարձրացան երկհարկանի տան վերին հարկը։ Կեղտոտ հագնված զարաբաղցի սպասավորը կեղտոտ ձեռներով քաշեց նրանց ուսերից վերարկուները, մտերմական եղանակով ասելով.

— Լո՞խ էլ տանն են։

Այժմյան միլիոնատերը երեսուն տարի առաջ գործակատար էր մի Թուրք նավատիրոջ մոտ։ Շատ բաներ էին պատմում նրա մասին, բայց ասում էին միայն այն մարդիկ, որոնք հոգով փափագել էին լինել Մարկոսյան և չէին կարո-

ղացել, իսկ ընդհանրապես նրա անցյալը մոռացության էր տրվել։

Ընտանիքը սեղանատանն էր։

Ընկերներն անցան շռայլ կահավորված, էլեկտրական ճրագներով լուսավորված հյուրասենյակը և մտան մի ընդարձակ սենյակ։ Այստեղ, արծաթե սամովարի շուրջը ժողովված, թեյ էին խմում Աղաջան Մարկոսյանը, տիկին Նազլուն, օրիորդ Հեղինեն և մի հեռավոր ազգական, որ, նորեկներին տեսնելով, անմիջապես ոտքի ելավ և հրաժեշտ տվեց։

Արտաքինի կողմից դա մի տարօրինակ զույգ էր, որ քաղաքում դարձել էր անգործ մարդկանց սրախոսությունների առարկա։ Մարդը փոքրամարմին էր, նիհար, նեղ երեսով և կարճ ու հաստլիկ ընչացքով, գյուղական տափակ դեմքերից մեկը։ Տասը տարի էր արդեն՝ ստամոքսի կատարից ու ոսկրացավից կուչ էր եկել, կծկվել էր, դեմքի թառամ ու կանաչած գույնով հիշեցնում էր կճպած ու արևի տակ չորացած բաղրիչան։ Ընդհակառակը՝ կինը պարթևահասակ էր, գեղեցիկ դեմքով, կարմիր այտերով, թեև մի քիչ կոշտ, բայց կանոնավոր կազմվածքով, առողջ և տակավին կայտառ, ինչպես լավ խնամված մատակ...

Նազիմյանը համբուրեց նրա խոշոր ադամանդով զարդարված ձեռը և ժպիտը երեսին նստեց հարսնացուի կողքին։ Հեղինեի դեմքը պայծառացել էր նրան տեսնելու վայրկյանից, նա իր փեսացվի վրա սիրահարվեց ծանոթության առաջին իսկ օրից, զգալով նրա գերազանցությունը մյուս բոլոր, ծանոթ երիտասարդներից։ Արտաքուստ Հեղինեն իր հոր կանացի պատճենն էր. իր հիվանդոտ դեմքով, տափակ կրծքով և քթի արմատի վրա միացած սև ունքերով։

— Էհ, ի՞նչ նոր խաբար կա աշխարհում,— հարցրեց Աղաջանը զարաբաղյան շեշտադրությամբ։

Նազիմյանը հաղորդեց օրվա հետաքրքրական լուրը. մի խումբ հայ և Թուրք հանքատերեր ստորերկրյա խողովակների միջոցով ամիսներ շարունակ Նոբելի պահեստներից նավթ են քաշել։ Այժմ գողությունը բացվել է, և գողերի անունները բերանից բերան են անցնում։

— Էլի՞,— գոչեց Մարկոսյանը քսու ու խուլ ձայնով, որ կարծես դատարկ կարասի խորքից էր գալիս։

Լուրն իսկապես նրան ուրախություն պատճառեց։ Իր շրջանի մարդկանց ստորություններն առհասարակ նրան ուրախացնում էին։ Այնուամենայնիվ նա ավելացրեց.

— Շունշանորդիներ, խայտառակեցին մեր Բաքվի ազնիվ անունը։

Եվ հետաքրքրվեց գիտենալ՝ ինչ պատիժ է սպասում գողերին։ Նազիմյանը, ուսերը տարակուսանքով վեր բարձրացնելով, խորհրդավոր ժպտաց։

— Հասկացա, հասկացա,— արտասանեց Աղաջանը տեղական վարք ու բարքերը լավ ուսումնասիրած մարդու եղանակով,— հարգս հարգաց, պատիվս արժանավորաց։ Յոթ պատվիրանքը կատարած կլինեն,— ավելացրեց նա ծիծաղելով,— դեհ, մենք ճանաչում ենք մեր պրիստավներին ու քննիչներին։ Ամա ի՛նչ ետ եկածներն են մերոնք. իրանք հրամայում են գողանալ, հետո պրիկաշչիկներին կամ մշակներին են բերան տալիս։

Մի անգամ ևս Մերսիմյանը մտածեց Հեղինեի ապագայի մասին։ Միամիտ օրիորդ, որպիսի սրտով ու հավատով է հառել երջանկությամբ լի աչքերը իր փեսացուի երեսին, ինչպես է աշխատում կարելուն չափ մերձենալ նրան, սեղմվել, շնչելով մոր հանդիմանական հայացքներին։ Պարզ է, որ նա արդեն անդառնալի ձուլվել ու միացել է հոգով ու սրտով Նազիմյանի հետ։ Պարզ է, որ բաժանել նրանց՝ կնշանակե խորտակել խեղճ աղջկա կյանքը։ Եղավ մի վայրկյան, երբ Մերսիմյանը մոռացավ իր հաշիվները, կամենալով պատռել ընկերոջ դիմակը և ցույց տալ Հեղինեին, թե ում է հանձնում իր ճակատագիրը։ Բայց նայեց ընկերոջ երեսին և սթափվեց։ Արդեն խղճի հետ պայմաններ կապելու սովորությունը վաղուց էր նրա մեջ արյուն ու մարմին դարձել։ Էհ, միևնույն է. Հեղինեն չի հավատալ և եթե հավատա էլ, կների։ Չ՞է որ նա կին է և սիրահարված կին։ Կների նույնիսկ նրա մայրը, գուցե և հայրը։ Քի՞չ են եղել դեպքեր, որ նահապետական համարված մայրը իր աղջկա թևը բռնած մրցըրել է փեսացուի ննջարանը, ուր դեռ սիրուհու անուշահոտ

յուղերի բույրը չի չքացել, լավ գիտակցելով, որ վաղ թե ուշ այդ ննջարանում աղի արցունքներ է թափելու աղջիկը իր ամուսնու անցյալի կրկնությունները տեսնելով։ Մի՞թե քիչ են եղել և կան տղամարդիկ, որոնք չեն քամահրում իրանց կանանց փողերով ավելացնել սիրուհիների թիվը։

Թող կորչի տմամար առաքինությունը, պետք է մուրհակների մասին մտածել։ Վերջապես, կա և մի ուրիշ ոչ պակաս շարժառիթ լռելու— Նազիմյանի սիրուհին շատ գրավիչ է... Նազիմյանը նրան թողնում է և չի կարող չթողնել։ Այդ կինը Նազիմյանին չի սիրում և իսկապես երբեք չի սիրել։ Այսքանը շատ լավ գիտե Մերսիմյանը։ Ոչ, ոչ, դժվար է խելքով մրցել Նազիմյանի հետ։ Պետք է ընկերաբար վարվել, ինչպես վարվել է մինչև այժմ... Երեխա՞ն։ Այդ արդեն Նազիմյանի գործն է։ Նա խելոք է և ոչ այնքան էլ անսիրտ։ Նա կմտածի իր պարտականության մասին։ Փող կա, և նրանով կարելի է բոլոր դժվարությունները դյուրացնել։ Իսկ երբ երեխայի ապահովության հարցը լուծվի — մա՞յրը... Եվ իսկապես նա շատ գեղեցիկ է... Այսօր Մերսիմյանը նրա մոտից դուրս գալիս զգաց, որ չի կարող գտնել մի ավելի սիրունը ավելի հաջող պայմաններով... Զգաց նաև, որ գեղեցկուհու աչքերը նայեցին իրան ավելի քան երախտագիտությամբ։ Օհ, կանայք, կանայք, բավական է մի անգամ սայթաքվեք, և արդեն գլխիվայր գլորվում եք անդունդը։ Այսօր մեկը, վաղը նրա ընկերը...

Նազլուն խոսք բաց արավ հարսանիքի մասին։ Մի կարևոր խնդիր դեռ վճռված չէր։ Նազլուն ուզում էր երկու տեսակի խրախճանք տալ— մեկն ասիական երաժշտությամբ Աղաջանի ազգականների և «ասիացի» բարեկամների, մյուսը եվրոպական երաժշտությամբ՝ «բարձր» դասակարգի համար։ Նա արհամարհում էր իր շինական ամուսնու ազգակցական կապերը։ Լինելով ինչ-որ մասնավոր փաստաբանի աղջիկ, համոզված էր, թե իր իբր ազնվական տոհմի դեմ մեղանչել է, որ թույլ է տվել իրան ամուսնանալու մի նախկին գործակատարի հետ։ Այս էր պատճառը, որ ամուսնու անվերջ նախատինքները նրա վրա ոչ մի ներգործություն չէին ունեցել։ Նա արհամարհում էր այդ նախատինքները որպես մի

շինականի գռեհկության բնական արտահայտություն։ Նա միշտ կռվում էր ամուսնու հետ իրենց կենցաղավարության մասին և միշտ հաղթող էր հանդիսանում։

Այս անգամ Աղաջանը համառությամբ պնդեց, թե պետք է ամենքին անխտիր հրավիրել մի երեկո, և բոլորին նստեցնել միասին։

— Ես քեզ նման ռիստոկրատ չեմ,— ասաց նա,— ես գեղից դուրս եկած մարդ եմ, չեմ կարող հորս տրեխները մոռանալ։

— Բայց անկարելի է, մա՛րդ, չի լինիլ,— գոչեց Նազլուն,— ես չեմ կարող քո Վանեսանց Զառնիշանին Օմմբալովի կամ Սիփալովի կանանց հետ կամ Գյուքոնց Բաղդասարին Աղազատովի հետ նստեցնել։ Չի սազիլ...

— Կսազի, էնպես կսազի, որ քեփդ գա։ Այ, ասեմ ինչ կանես։ Քո հավանած ռիստոկրատներին կնստեցնես իմ ազգականների հետ մեջտեղ։ Եթե մերոնք էշ ավանակներ են, ձերոնք էլ ջորիներ են, վնաս չունի, կհասկանան։

Նա ուզում էր այս խոսքերով խայթել իր աներձագին, որի առողջ ու կայտառ դեմքն այսօր առանձնապես գրգռում էին նրա նախանձը։ Նա արդեն գուշակել էր իր սովորական հոտառությամբ, թե ինչու համար է եկել ինժեները։

Մերսիմյանը հասկացավ ու լռեց։ Աղաջանին նրա լռությունը ավելի գրգռեց։

— Փուհ, գլուխս մի՛ ցավացնիր,— ընդհատեց նա կնոջը, որ ուզում էր հակաճառել նրան,— արա՛, ինչ որ քեփդ է։

Նա ոտքի կանգնեց, թողնելով թեյի բաժակը կիսատ և կաղե կաղ, մրթմրթալով դուրս գնաց։

Մերսիմյանը մի հուսահատական հայացք ձգեց ընկերոջ վրա։

Նաղիմյանը վեր կացավ և հետևեց Աղաջանին։

Նազլուն սկսեց գանգատվել եղբորը իր ամուսնու դեմ։ Վերջին ժամանակ մարդը միանգամայն անտանելի է դարձել։ Ամենաչնչին հակաճառությունից գրգռվում է և ուղղակի թունավորում ընտանիքի կյանքը։

— Ինձ տեսնողը կասե, թե բախտավոր եմ, բայց կյանք չունեմ, Լևոն, կյանք չունեմ։ Ի սեր աստծո, այսօր ոչինչ

չխնդրես նրանից։ Նրեսիս ամոթը թափվեց, շարունակ քո դեմ է գանգատվում։

Եկավ սպասավորը և Մերսիմյանին հրավիրեց Աղաջանի առանձնասենյակը։ Աղաջանը անմիջապես հարձակվեց նրա վրա, ժամանակ չտալով անգամ նստելու։

— Էլի՞ ուզողությո՞ւն, էլի՞։ Ախպեր, մինչև ե՞րբ, հերիք չէ՞։ Քանդեցիք ինձ, պրծաք, էլ ձեռք չե՞ք վերցնելու քույր ու եղբայր։ Քառասունուհինգ հազարի հաշիվ կա ոտքիդ, հերի՞ք չէ։ Ախար մին ասա տեսնեմ, մեծ-մեծ բաներ ես բռնում, հողեր ես առնում, հորեր ես քանդում, կանտոր ու բուխալտեր ես պահում, ո՞վ ես, ինչի՞ տեր ես։ Ախպեր, խրված եմ էէ, խրված եմ մինչև կոկորդս, հոգի, հավատ, երկինք, չունեմ, չունեմ, չունեմ... պըյ, պըյ, պըյ...

Նա կանգ առավ, շունչ քաշեց, ապա շարունակեց.

— Էէ՞, լավ, ասենք փեսադ եմ, հետո՞։ Ուզում ես մի կտոր հաց տամ, քեզ պահե՞մ։ Աչքիս վրա, ամեն օր եկ, աստուծո տվածից կեր, գնա, հալալ լինի քեզ էլ, մորդ էլ։ Էլ դիշքիրահի՞ս որն է։ Լյազգի՞ ես, թե դաշաղ։ Դե որ դաշաղ ես, մի խանչալ վերցրու, մի անգամ մորթիր, ազատիր էլի... էլ ինչո՞ւ ես շարշարում, պըյ, պըյ, պըյ...

Նա սաստիկ հազաց, կծկվեց, կուչ եկավ և գրեթե աներևութացավ սեղանի տակ։

Մերսիմյանը կամեցավ պաշտպանվել, բայց զգաց, որ կարող է գործն ավելի փչացնել։ Արդարև, Աղաջանը հենց մի հակաճառության էր սպասում, որպեսզի ավելի սաստկացնի իր նախատինքները։

Նաղիմյանը լուռ նայում էր սեղանի մի կետին, դեմքի վրա հարգանքի և հեզության ժպիտը, սրտի խորքում ծաղրի և արհամարհանքի զգացումը դեպի այդ գռեհիկ շինականը։

Աղաջանը իր վերջին թուքը ձգեց Մերսիմյանի կողմը, չխնայելով հատակին սփռած Խորասանի թանկագին գորգին։ Նա բերանը սրբեց և գլուխը բարձրացրեց սեղանի հետևից, որջից դուրս սողացող փորսողի պես։

— Լավ,— շարունակեց նա, ավելի գրգռված,— իմացանք, որ ռուսում ունես, գիտնական ես, հանցու ի՞նչ, հենց պետք է քերթե՞ս էլի մեզ։ Ես որ գեղական տեղովս իմ հա-

լալ արյուն քրտինքով մի կտոր հաց եմ աշխատել, առողջությունս կորցնելով, խե, դու էդ ուսումնական տեղովդ չես կարո՞ղ։ Հենց հազիր-հազիրդանա եփած տոլմա պիտի ուտեք ու էդպես չաղանա՞ք։ Ախպեր, ձեր ինժիներներն ինչ ցավ ու կրակ դարձան մեր գլխին կամ ձեր էդ դիպլոմավորներն ի՞նչ են անում։ Գալիս են թե չէ, բիրդան ուզում են միլիոնչի դառնալ, էն էլ ուրիշների փողով։

— Արշակ ջան,— դարձավ գրգռված միլիոնատերը իր փեսացուին, որի ներկայությունը մի վայրկյան մոռացել էր,— թող քեփիդ չդիպչի, տեղն եկավ, ասացի։ Ախար ո՞նց չասեմ։ Դե որ ուսումնականն էլ վերջը պիտի վաճառական դառնա, էլ ինչո՞ւ են ոսկոր մաշում, ուսում առնում, էն է թող բաղկալի դուքան բաց անեն ու նստեն էլի։ Էլ ինչո՞ւ գնացիր,— նորեն նա դարձավ Մերսիմյանին,— մին բեռուք փողերս փչացրիր, եկար։ Էդ կրծքիդ զնաչոկի համա՞ր։ Որ ես իմ կրծքի վրա չունեմ, քեզանից պակա՞ս եմ։ Մախլաս։ Ինչ ուզում ես ասա, ուրիշի փողը հալալ չէ, հալալ չէ, հալալ չէ...

Վերջին բառերն արտասանելիս նրա ձայնի մեջ զգացվեց ինչ-որ խոր թաքնված վիշտ...

Նազիմյանն ու Մերսիմյանը նայում էին միմյանց երեսին, չհամարձակվելով նայել այդ մարդու երեսին, որ ինքը վաղուց զրկվել էր մարդկանց երեսին ուղիղ նայելու երջանկությունից։ Այդ կոպիտ շինականը համարձակվում էր նրանց նախատել, և նրանք հարկադրված էին լսել ու լռել, որովհետև եթե խոսեին — մեկը պիտի վաղն ևեթ սնանկանար, մյուսը պիտի զրկվեր միլիոնների ժառանգությունից։

Թափելով իր սրտի թույնը, Մարկոսյանը կամաց-կամաց հանգստացավ ու լռեց։ Մերսիմյանի հլու լռությունը հաղթանակ տարավ Նազիմյանի ներկայության շնորհիվ։

— Գնա ախպեր,— ասաց վերջապես Մարկոսյանը,— ինչ որ Արշակն ուզում է, թող անե։ Ես իմ իրավունքներս նրան եմ տվել։ Եթե փող կա, թող տա...

Նազիմյանը ոտքի ելավ և հրաժեշտ տվեց...

Փողոց դուրս գալով, Մերսիմյանը գոչեց.

— Այ տանջանք, այ խայտառակություն, ամբողջ մարմինս քրտինքի մեջ է։

— Վնաս չունի, հավատացած եմ, որ առաջին անգամը չես այդ տեսակ բաղնիք ընդունում։ Էհ, եղբայր, չպիտի մանրազգաց լինել։ Նա ուներ իրավունք։

— Բայց գոնե խնդիրս կատարվա՞ծ է։

— Այդ է հետաքրքրականը։ Այո, համարյա թե կատարված է։

— Այդ դեպքում թքում եմ այդ մարդու նախատինքների վրա։ Շնորհակալ եմ, բարեկամս, դու ինձ ազատում ես կործանումից...

— Դեռ ոչ, մի՛ շտապիր։

Մերսիմյանը ցնցվեց, կանգ առավ մայթի վրա և նայեց ընկերոջ երեսին։

— Ես իմ ընկերական պարտականությունը կատարեցի,— ասաց Նազիմյանը, ձեռը դնելով նրա ուսի վրա,— այժմ հերթը քոնն է։

— Հրամայիր։ Վաղվա օրն ինձ համար այնքան սպառնողական է, որ պատրաստ եմ կատարել քո բոլոր պայմանները։

— Իմ պայմանը քեզ հայտնի է։ Ասա խնդրեմ, ինչպե՞ս ես հավանում իմ... սիրուհուն... նախկին սիրուհուն... Կարծեմ, էլիզը բավական սիրուն է, էէ՞... Ափսոս մթան մեջ լավ չեմ տեսնում աչքերդ, նրանց մեջ կարող էի կարդալ իմ հարցիս պատասխանը։ Բայց ոչինչ, ես արդեն գիտեմ ամեն բան։ Համոզված եմ, որ ոչ միայն չես վիրավորվիլ, այլև գուցե... Դե լավ, շատ էլ մի՛ նեղվիր։ Կառք նստիր և իսկույն գնա նրա մոտ։ Տուր նրան սիրտդ և բեր ինձ համար ազատություն։ Սուս, ոչ մի խոսք. ես այսօր ճաշից հետո ամեն բան իմացա։ Այո, այո, նա քեզ շատ է հավանում, ինձնից միայն երեխայի ապահովությունն է պահանջում։ Ես խոստացել եմ, մնում է քանակությունը որոշել։ Ես սակարկություն սիրողներից չեմ։ Քեզ եմ լիազորում որոշել, բայց շատ էլ շռայլ չլինես... Համաձա՞յն ես։

Մերսիմյանը ոչինչ չասաց։

— Լռությունն այս դեպքում կատարյալ համաձայնություն է։ Է՛յ, կառապան, սպասիր։ Դեհ, նստիր ու շտապիր։ Ես քեզ

կսպասեմ կլուբում։ Երեկ ճաշեցինք կովելով, այսօր կընթրենք բարեկամաբար։

Նա գրկեց Մերսիմյանին ընկերաբար և մոտեցրեց կառքին։

— Շատ չուշանաս,— ասաց նա և հեռացավ։

Մերսիմյանը նստեց կառք և աներևույթացավ գիշերային խավարի մեջ։

Երկու ժամ դեսուդեն պտտելով, սրա ու նրա հետ զրուցելով, Նազիմյանը հոգնեց ու անցավ սեղանատուն։

Հազիվ նա նստել էր սեղանի քով, երբ ներս մտավ Մերսիմյանն աչքերը վառված, դեմքը կարմրած։ Նա զվարթ էր։

— Գիտես,— ասաց նա, նստելով Նազիմյանի դեմ,— դու շատ գարշելին ես։

— Մենք ընկերներ ենք։

Նրանք սկսեցին ընթրել։

ԳԱՂԱՓԱՐԻ ԳԵՐԻՆ

Նա անցնում էր քաղաքի բազմամարդ փողոցով, որը անգործ ամբոխի համար զբոսավայր էր։

Նրա քայլվածքը հանդարտ էր, բայց անկանոն, ներվային։ Թվում էր, որ նա ինքն էլ չգիտե ուր է գնում կամ ինչու։ Հագած էր նա իր սովորական մաշված ու խունացած վերարկուն լայն թևերով, լայն փեշերով, կեղտոտ օձիքով։ Հնամաշ, ժապավենները վաղուց դեղնած գլխարկի տակից նրա խորն ընկած, մտախոհ աչքերը ուղղված էին դեպի անորոշ տարածություն։ Շուրջը խոսում էին, ծիծաղում, աղմկում, ոչինչ չէր լսում։ Նա հրում էր անցորդներին, հրվում էր ուժգին և... ոչինչ։

Նա այդ ամբոխից չէ և չունի ոչ մի կապ նրա հետ։ Ինքն իր մեջ պարուրված, նա ճանաչում է միայն իր հոգու աշխարհը և արտաքինը նրա համար գոյություն չունի։ Նրա երկայն ու թանձր մազերը, նիհար ուսերի վրա սփռված, նրա կերպարանքին տալիս են թափառական դարվիշի տեսք։ Պակասում են միայն տապարն ու քեշկյուլը։ Նրա տոպրակի չափ լայն գրպանները լիքն են լրագրերով ու գրքերով։ Իսկ մի մեծ գիրք նա բռնած ունե իր կռնատակին և այնպես ամուր, որ, կարծես, վախենում է մի գուցե անցորդները խլեն նրա ձեռքից։

ՔսանոՀինգ տարի է արդեն անտանելի մտքերը տանջում են նրան, որդերի պես կրծոտելով նրա սիրտն ու հոգին։

Քսանուհինգ տարի է նա դարձել է այդ մտքերի կամազուրկ ստրուկը և չի ընդունում ոչ մի օրենք, ոչ մի իշխանություն, բացի նրանց երկաթե ճիրաններից։

Դեռ պատանի հասակին չհասած զգաց, որ կյանքի բարձրագույն երջանկությունը մտքի անկախության և հոգու ազատության մեջ է։ Ոչ ոսկին, ոչ սերը, ոչ բարեկամությունը, ոչ դիրքը, ոչ մի բան չի կարող տալ մարդուն այն հաճույքը, որ տալիս է միտքը, երբ նա գործում է, ստեղծագործում և հափշտակում ամբոխին։

Մի անգամ դպրոցական աշակերտները կատակով հարցրին՝ չէ՞ր կամենալ արդյոք դառնալ Ալեքսանդր Մակեդոնացի։ Նա ամենայն լրջությամբ և զգացված պատասխանեց.

— Կկամենայի, բայց ոչ երկրներ գրավելու, այլ մարդկանց հոգիներին տիրանալու համար։

Նրան ծաղրում էին։ Սակայն եղան և այնպիսիները, որոնք նրա համար գուշակեցին փայլուն ապագա կամ փիլիսոփայության, կամ գրականության ասպարիզում։ Նա հափշտակվեց և ավելի խոր հավատաց իր ներքին ձայնին։ Ինչ էր ասում այդ ձայնը։ Նա շշնջում էր.

— Դու, Միսակ Ավալյան, սովորական մահկանացու չես, մեկը միլիոններից։ Քո ճակատին դրոշմված է անմահության կնիքը։ Դու կոչված ես մարդկանց հոգիներին տիրանալու քո խելքով, խոսքով ու գրչով։ Դու հանճար ես քո ազգի համբավը զարդարելու համար։

Եվ ահա քսանուհինգ տարի է նա այդ ձայնի գերին է։ Ինչե՞ր չի կրել նա հանուն իր բարձր «կոչման»— ի՞նչ դառնություններ, ի՞նչ նյութական զրկանքներ և բարոյական տառապանքներ։ Ահ, եթե գրի առնե բոլորը, ինչ որ ապրել է ու զգացել, դուրս կգա մարտիրոսագրության մի ստվար հատոր, որ կարող է սարսուռ ազդել ընթերցողների վրա։ Նա այդպես էլ ասում էր։

— Իմ կյանքը,— կրկնում էր մերձավոր բարեկամների մոտ,— մի ողբերգություն է անթիվ գործողություններով։ Տեսարանները միմյանցից սոսկալի են։ Կգա ժամանակ, երբ ես կտամ նրանց գեղարվեստական նկարագիրը, և մարդիկ

կտեսնեն ինչ ահռելի տառապանքների է մատնված գաղափարին նվիրված մարդը։

Այսօր նրա ֆանատիկոսյան ճակատն ավելի կնճռոտ է, շրթունքներն ավելի սեղմված, նրա վտիտ կերպարանքը, կարծես, ինքը մարմնացած թշվառությունն է։ Անցորդները նրան համարում են բախտի անիվի տակ ջախջախված մեկը, որ չգիտե ուր տանի իր ողորմելի անձը, նայում են նրան մերթ կարեկցությամբ, մերթ արհամարհանքով։ Ոմանք կանգ են առնում և հետաքրքիր հայացքով հետևում են նրա երերուն քայլերին, կարծես սպասելով, թե ահա, ահա նա ուժասպառ պիտի թավալվի գետնի վրա։ Նրան ամեն օր տեսնում են զբոսավայրում, և միշտ մենակ, միշտ խորասուզված իր մտքերի մեջ, միշտ կոնատակին մի գիրք կա և շատերը, որ նրան համարում էին հոգեկան հիվանդ և խղճում են ասելով.

— Էլի այդ խեղճ մարդը։

Նա ճեղքեց ամբոխը մի ամենախիտ տեղ, ցած իջավ մայթից։ Նա կամեցավ ձիաքարշ նստել, ինքն էլ չգիտեր ինչու։ Կոնդուկտորը մոտեցավ նրան։ Նա մեքենաբար առավ տոմսակը, դրեց գրպանը, մի վայրկյան անգամ չազատվելով իր մտքերից որպես կախարդված մեկը։

— Իսկ փողը,— ասաց կոնդուկտորը։

Նա մոռացել էր, որ գրպանում ահա երեք օր է կոպեկ չունի։ Շփոթվեց, բայց ի՞նչ փույթ, վաղուց էր սովոր նման պատահարների։ Նա տոմսակը հետ դարձրեց, շտապով ցած իջավ վագոնից, հետևից լսելով կոնդուկտորի լկտի ծիծաղն ու հայհոյանքը։

Ինչ է պատահել, որ այսօր այնքան մտամոլոր է ու շփոթված։ Ոչինչ, մի շատ սովորական բան— ընդհարում իր կնոջ հետ։ Ճիշտ այն պահին, երբ նա սկսեց պարապել իր բազմաթիվ գրքերով ծանրաբեռնված սեղանի մոտ, անզգա կինը մոտեցավ և հանդգնեց նրանից պահանջել օրվա ծախսի համար դրամ։ Ընդամենը մի ռուբլի։ Նա մերժեց, որովհետև չուներ։

— Ուրեմն ինչո՞վ պիտի կերակրեմ երեխաներիդ,— ասաց անողոք կինը այն դարձվածքը, որ ամեն օր կրկնում էր և որ մուրճի հարված էր խեղճ մարդու համար։

— Այսօր էլ մի կերպ անցկացրու։

— Այսօր էլ, այսօր էլ, մինչև ե՞րբ...։

— Կին, կգա մի օր, որ լավ կապրենք և շատ լավ։ Մի դառն, երկարատև ծիծաղ եղավ նրա պատասխանը։ Եվ կրկնվեց ամեն օրվա դարձած տեսարանը։

— Դու ծույլ ես, դու փախչում ես աշխատանքից, դու անհոգ հայր ես,— ասաց կինը։

— Իսկ դու նյութապաշտ ես, երկրին կպած ողորմելի,— ասաց մարդը։

Հաղար անգամ կրկնված դարձվածքներ, որ վաղուց էին կորցրել իրանց սրությունը։ Բայց այս անգամ, երբ Միսակ Ավալյանը, կամենալով ազատվել անախորժ տեսարանից, վերցրեց վերարկուն ու գլխարկը դուրս գնալու, կինը դռների միջից շպրտեց մի բառ, որ մինչև այդ օրը չէր լսվել նրա բերանից։

— Անքանքար...

Այս մի հատիկ բառը կայծակի նման հարվածեց մարդուն, նա կանգ առավ, գունատվեց, գուցե վայր ընկներ, եթե չհենվեր պատին։

— Ա՜հ, դու էլ, անիրավ, դու էլ,— արտասանեց երբ ուշքի եկավ։

— Այո, անքանքար։ Մի՞թե մինչև հիմա չգիտեիր։

Ավելի ոչինչ չասաց կինը, դռներն ուժգին թափով ծածկեց և մտավ ներս։ Նա զգաց, որ իր ամուսնու ծայրաստիճան հիվանդ ինքնասիրությանը տվեց մի այնպիսի հարված, որպիսին երբեք չէր տվել։

«Անքանքար»,— հնչում էր Միսակ Ավալյանի ականջներում սոսկալի բառը, երբ անցնում էր ամբոխի միջով։ Ահա, այդ շար ոսոխի դիվային մի քրքիջ էր, ավելի վիրավորական, քան թե լսեր «դու գող ես»։ Եվ այս հարվածը տվեց նրան իր կյանքի հավիտենական ընկերը, նա, որը ընդհակառակը պիտի լիներ իր պաշտպանը, թևեր տվողն ու խրախուսողը։

Անգո՜ւթ կին. վերջապես գտար մի բառ, որի մեջ անփոփեցիր այն ճշմարտությունը, թե տասներկու տարի է նրան չես ճանաչում, չես գնահատում, չես կարեկցում անգամ։ Ի՞նչ ես պահանջում նրանից։ Կյանքի նյութական ապահովու-

թյուն։ Չէ՞ որ նա քեզ հազար անգամ ասել է, թե չի կարող տալ։ Չի կարող, որովհետև այլ է ոսկու հետևից վազելը, այլ է գաղափարին ծառայելը և մեկը մյուսի հետ երբեք չի կարող հաշտվել։ Նրա ուղին նեղ է, փշոտ։ Նա պետք է լինի մերկ, անոթի, ինչպես եղել են մարդկության բոլոր ուսուցիչները, մտքի բոլոր հերոսները...

«Անքանքար»,— կրկնում էր Ավալյանը մտքում, այնպիսի շարժումներ անելով գլխով ու ձեռներով, որ անցորդները իրավ, ունեին իրավունք նրան ցնորված համարելու։

Եվ այդ ասում է մի կին, որ պատիվ ու բախտավորություն ունի Ավալյանի ամուսինը լինելու։ Ինչո՞ւ։ Որպեսզի նրա ինքնասիրությունը վիրավորելով, հարկադրե նրան թողնել թանկագին երաղները, տենչը մեծ մարդու և դառնալ մի խանութպան, մի գործակատար, անթև, անթռիչք, երկրին կպած մի ողորմելի որդ։ Ոչ, տխմար կին, դու չես հասկացել նպատակիդ։ Քանի-քանի անգամ նա քեզ ասել է։

— Կին, հասկացիր, ես մեղավոր չեմ, որ իմ միջավայրը տգետ է, իմ ազգը գռեհիկ։ Այնքան գռեհիկ, որ ընտիր զավակների մտքի սքանչելի արտադրությունները գրախանութներում փտեցնելը ոճիր չի համարվում։

Եվ նա «սքանչելի» բառն արտասանելիս միշտ մտածել է իր մի շարք տպագրված շարադրությունների մասին, որոնք, արդարև փտում էին գրավաճառանոցում։

Անցնելով մի քանի փողոցներ, Ավալյանը հասավ քաղաքի պարտեզներից մեկին։ Նա մտավ այնտեղ, նստեց մի նստարանի վրա, բաց արավ թևի տակ բերած գիրքը, որ մի փիլիսոփայական տրակտատ էր գերմաներեն լեզվով, և փորձեց փոթորկված հոգին զբաղեցնել ընթերցանությամբ։ Շուտով նրա բազմաչարչար գլուխը հոգնեց և ստամոքսն սկսեց բողոքել անոթության դեմ։ Նա դուրս եկավ պարտեզից և դանդաղ քայլերով անցավ մի շարք խանութների առջևով։ Նա կանգ առավ մի նպարավաճառանոցի դեմ։ Նայեց համով դասավորված ձկնեղենի, մսեղենի և մրգեղենի նմուշներին, որ շարեշար դրված էին անցորդների ախորժակը գրգռելու համար։ Քաղցը բորբոքվեց նրա մեջ և ինքն էլ չգիտեր ինչու, կատաղեց նպարավաճառի դեմ և մտքում ասաց «սրիկա»։

Եվ շտապեց հեռանալ խանութից անողոք քաղցը խլացնելու համար։ Նա անցավ դարձյալ մի քանի փողոցներ, միշտ միևնույն անվստահ, երերուն քայլերով։ Մի նեղ փողոցի վրա կար մի փոքրիկ աննշան գրախանութ, ուր վաճառքի էին դրված մեծ մասամբ հին գրքեր։ Այդ խանութն էր միայն, որ համարձակվել էր հրապարակախոս, իմաստասեր, վիպասան և թատերագիր Միսակ Ավալյանի երկերն ընդունելու «կոմիսիայով» վաճառելու համար։ Մյուս գրավաճառները բացեիբաց հրաժարվել էին վերցնելու նրա երկերը, ասելով «տեղ չունենք»։

Նա մտավ այդ խանութը, կանխավ դրսից նայելով և ստուգելով, որ այնտեղ ոչ ոք չկա, բացի գրավաճառից։

— Բարև, բարև,— դիմավորեց նրան գրավաճառը, որ անհրապույր դեմքով մի մարդ էր մոտ երեսուն տարեկան։

Եվ ժպտաց մի դառը հեգնական ժպիտով։ Ահ այդ ժպիտն և «բարև, բարև» արտասանող այդ չոր և անհյուրընկալ ձայնը վաղուց էին ծանոթ Ավալյանին։ Նա գիտեր, որ այդ նշանակում էր «էլի եկար, զուր, բարեկամ, զուր»։

— Հը, ի՞նչ կասես,— փորձեց Ավալյանը նույնպես ժպտալ և չկարողացավ։

Նրա նիհար երեսը, որ երիք քառորդով ծածկված էր թանձր միրուքով, աղավաղվեց և քթի պնչները փքվեցին։

— Ինչ կասեմ,— կրկնեց գրավաճառը.— այն, ինչ որ ասացի երեկ և անցյալ օրը. «ոչ մի օրինակ»։

— Ոչ մի օրինակ,— արտասանեց Ավալյանը և զգաց, որ ձայնը հոգնածությունից, թե քաղցից և թե հուզմունքից դողաց։

— Ոչ մի օրինակ,— պնդեց անողոք գրավաճառը, և չեմ էլ կարծում, թե ծախվի մի օրինակ գոնե մոտիկ ապագայում։ Փորձով գիտեմ։ Իմ գնողները շատ ժլատ են և չափազանց դժվարահաճ։ Նրանք միշտ գալիս են ու պահանջում այնպիսի գրքեր, որ ես չունեմ։ Անցեք մի ամսից հետո, գուցե ինձ հաջողվի մի քանի օրինակ նաղդել իմ անձնական բարեկամների և կամ ազգականների վրա։

— Մի ամսից հետո։ Բայց ինձ փող է հարկավոր, ես ոչինչ չունեմ, նույնիսկ հինգ կոպեկ։

— Էհ բարեկամ, փողն ո՞ւմ չի հարկավոր։ Ես ինքս այսօր մեծ կարիքի մեջ եմ։

— Գոնե մի ռուբլի չե՞ս կարող տալ։

— Ոչ ռուբլի, ոչ կոպեկ, չունեմ։

— Ես կոմիսիա կտամ քեզ հարյուրին վաթսուն՝ պայմանավորված երեսնի փոխարեն։

— Որ իննսուն տոկոս էլ տաս, էլի չեմ կարող, չունեմ։

— Ցտեսություն,— ասաց Ավալյանը ընկճված ձայնով և դուրս գնաց։

— Գնաս բարո՞վ։

Երբ Ավալյանը տուն վերադարձավ, կինը կանգնած էր պատշգամբի վրա, ձեռները ծոցը դրած, հայացքն ուղղած դեպի վար կեղտոտ գավիթը, ուր խաղում էին նրա զավակները— մեկը վեց, մյուսը չորս տարեկան, երկուսն էլ աղջիկ։ Դա փոքրիկ հասակով, թուխ դեմքով, նեղ ճակատով, տափակ մազերով, հիվանդոտ աչքերով մի էակ էր — կյանքի առօրյա հոգսերի կատարյալ մարմնացում։ Տնային ծանր ու հարատև աշխատանքն և կարիքը զրկել էր նրան իր տարիքին հատուկ թարմությունից։ Երեսուն տարեկան չկար, քառասունուհինգ տարեկանի տպավորություն էր անում։

Նրա մոտ կանգնած էր եղբայրը, մոտ քառասուն տարեկան մի տղամարդ, դեմքի առողջ, խնդուն ու խելացի գծերով, կատարյալ այս աշխարհի զավակ։

— Ահա և՛ ինքը,— ասաց նա, անփույթ բարևելով Ավալյանին,— ես ձեզ կհաշտեցնեմ։

Ավալյանը լուռ բարձրացավ սանդուղքով և անցավ ընտանիքի մոտ, որ բաղկացած էր երկու շատ փոքրիկ, շատ անշուք և վերին աստիճանի աղքատ կահավորված սենյակներից։ Նա վերարկուն ձգեց աթոռներից մեկի, գլխարկը մյուսի վրա և նստեց գրասեղանի քով։ Շուրջը ձգելով մի մոլոր հայացք. արմունկը հենեց սեղանին, գլուխը դրեց ձեռի ափի մեջ և աչքերը փակեց։ Կար այդ շրջապատող չքավորության մեջ մի սուր կշտամբանք, որ միշտ պղտորում էր նրա հոգին ինչ տրամադրության մեջ ևս լիներ։ Անտանելի զգացմամբ, գրեթե սարսափով սպասում էր, թե ահա, ահա ներս է մտնելու կինը և շարունակելու է առավոտյան տեսարանը։

Նա բաց աթավ գրասեղանի դարակը, դուրս բերեց այնտեղից մի հաստլիկ ձեռագիր, սկսեց թերթել։ Սա նրա վերջին աշխատությունն էր, դեռ անավարտ։ Մի գործ, որ իբրև թե պիտի արծածեր նրա գաղափարներն ավելի հանդամանորեն, քան երբևիցե արծածվել էին նրանք։ Այսպես էր նա հավատացած, ուստի և ոգևորված էր։ Նա հույս ուներ այդ գործով, վերջապես, խորտակելու է իր և հասարակության մեջ կանգնած պատնեշը։ Ահա, այդ սարսափելի սառցե պատը, քսանուհինգ տարի է նա ձգնում է հալեցնել իր տաղանդի ջերմությամբ և չի կարողանում։ Նա դեռ անհայտ է ամբոխին, նրա անունը դեռ չի փայլում գրական հորիզոնում և եթե մերթ ընդ մերթ հնչում է այս կամ այն փոքրիկ շրջանում, միշտ հեգնությամբ։ Տկարամիտներն ու անշնորհքները բռնել են ասպարեզը և չեն թույլ տալիս մի ուրիշը ոտք դնե այնտեղ։

— Նրանք ինձ ծաղրում կամ ատում են,— մտածում էր նա,— որովհետև վախենում են ինձնից։

Նա հետ դրեց ձեռագիրն և ոտքի ելավ։ Սովը շարունակում էր մաշել նրա ստամոքսը. վախենում էր հարցնել, արդյոք կա ուտելու բան։

Ներս մտավ կինը, նրա հետևից եղբայրը։ Կանգ առան և նայեցին նրան՝ քույրը դառը հեգնական հայացքով, եղբայրը վիրավորական կարեկցությամբ, այնպես ինչպես նայում է զորավորը ապիկարին։

Նրանց տեսնելով, Ավալյանը կատաղեց։

— Ի՞նչ եք ուզում ինձնից,— գոչեց նա բռունցքները սեղմելով և մի ոտը հատակին գարկելով,— թողեք ինձ հանգիստ, ես պիտի պարապեմ, հասկանո՞ւմ եք. մի՛ խանգարեք, բավական է որքան ճնշել եք...

Նրանք ոչինչ չասացին, որովհետև պատրաստվել էին շատ բաներ ասելու։ Որպես անողոք դատավորներ նրանք հանդարտ նստեցին իրարու քով պատի տակ դրած հնամաշ, ջարդված ու վաղուց գույնը կորցրած աթոռների վրա։ Ավալյանը զգաց, որ սկսվելու է մի նոր և մինչև այդ օրը չտեսնված երկար բացատրություն։ Ինչ անել, նորից փախչել դո՞ւրս։ Ոչ, այդ կլինի վերջին երկչոտությունը և նա կպարտվի բարոյապես։ Պետք է փոթորիկն ընդունել և դիմադրել թեկուզ վիրավորանքների ու հայհոյանքների ուժով։

— Այդպես շարունակել չի կարելի,— սկսեց կինը, մի ցածր, երկարատև հառաչանքից հետո, ձեռները կրծքից իջեցնելով և դնելով ծնկների վրա — պետք է վերջ տալ այս անտանելի կացությանը, իմ ուժերը սպառվել են...

— Ի՞նչ ես պահանջում ինձնից,— հարցրեց Ավալյանը նույնպես նստելով։

— Ինձ համար ոչինչ, երեխաներիդ համար եմ պահանջում — մարդավարի ապրուստ։

— Միշտ միևնույն երգը։ Մարդավարի ապրուստ։ Գիտեմ ինչ է քո իդեալը, խոհարար, սպասավոր, ընդարձակ բնակարան թանկագին կահ-կարասիով. շքեղ զգեստներ։ Կառքեր, ձիեր, զարդ, պչրանք։ Տասներկու տարի անընդհատ աշխատեցի և չկարողացա փոխել քո մեչչանական հայացքները կյանքի վերաբերմամբ։ Կին, այդ համառությունդ կարող է ինձ խելագարության հասցնել։

— Լսո՞ւմ ես, Գարեգին,— դարձավ կինը եղբորը,— լսո՞ւմ ես, թանկագին կահ-կարասի, խոհարար, սպասավոր, զարդ ու պչրանք։ Ահա ինչպես է հասկանում իմ պահանջը։ Օրվա հացի փող չունենք, երեխաներս շրջում են կիսամերկ, ոտաբոբիկ, վերջին շապիկս եմ մաշում, և ես հանկարծ սպասում եմ դրանից փարթամ ապրուստ, հա, հա, հա։

Սուր և կծու էին Ավալյանի համար և այդ թույլ ձայնը և այդ դառն ծիծաղը, որ գալիս էր տանջված կրծքի խորքից։

— Արուսյակ,— արտասանեց նա, աշխատելով զսպել գրգիռը,— խնդրում եմ, բավական է, մի՛ տանջիր ինձ։

— Դեռ ե՞ս եմ քեզ տանջում, ե՞ս։ Տասներկու տարի է իմ կյանքը տանջանքների շղթա է, դեռ դո՞ւ ես հանդիմանում ինձ։ Մտիկ արա ինձ, ինչ օրի եմ հասել։ Աշխատում եմ օրը մինչև երեկո ինչպես փողոցի բեռնակիր, հոգնում եմ և ուժասպառ լինում այնքան, որ շունն էլ փախչում է ինձանից։ Խոհանոցի ծուխն ու անվերջ արցունքներս աչքերս կուրացրել են։ Նայիր ձեռներիս. նրանք փայտացել են կոպիտ աշխատանքից։ Նայիր ինձ, ո՞վ կարող է ասել, որ ես քսանուինը

տարեկան եմ։ Եվ դեռ ե՞ս եմ տանջում քեզ։ Ոչ, այսպես ապրել այլևս չեմ կարող, հոգնել եմ, ուժ չունեմ...

— Վերջը, վերջը,— պոռաց Ավալյանը,— այդ բոլորը հազար անգամ լսել եմ ու ձանձրացել։ Նոր ի՞նչ ես ուզում։ Պահանջդ։

— Իմ պահանջը իմ և իմ զավակների անունից է։ Ուզում եմ, որ թողնես ցնորքներդ, գոնե այդ հասակում ուշքի գաս և սկսես պարապել մի որևէ գործով։

— Ցնորքներ։ Այո ունեմ ցնորքներ, չեմ հերքում։ Բայց հենց այդ ցնորքներն են, որ դու չես հասկանում, խեղճ ողորմելի արարած։ Դու գրականությունը գործ չես համարում, դու արհամարհում ես իմ կոչումը, այն աստվածային հուրը, որ այրում է հոգիս և որ այսօր, վաղը պիտի հրդեհե մեր փտած կյանքը։

— Ահ, թող աստված սիրես այդ սովորական դարձվածքները։ Նրանք վաղուց են ձանձրացրել ինձ։ Դու շատ լավ ես հասկանում իմ միտքը, երևակայիր քո մասին ինչ ուզում ես, բայց մի մոռանար, որ քո առաջին սուրբ պարտակությունը զավակներիդ ապրուստ տալն է։

— Երբեք, երբեք։ Իմ առաջին սուրբ պարտականությունն իմ կոչմանը ծառայելն է։ Այո, այո, դու խուլ ես, բայց ես միշտ պիտի կրկնեմ, մի հոգի, որ ծնված է ազատ ու անկախ, չի կարող ստրկանալ ուրիշ ոչ մի պարտականության, բացի իր կոչմանը։ Առօրյա կյանք, մանր-մունր պահանջներ գոյություն չունեն, հասկանո՞ւմ ես, թե չէ։ Մի ժամանակ երբ ես ուսուցիչ էի, տանջվում էի հոգեպես, մտածելով, որ դավաճանում եմ իմ կոչմանը, ոտնատակ եմ անում իմ սրբություն սրբոցը։ Գո՞րծ։ Կարծես կա ավելի ազնիվ, ավելի բարձր գործ, քան իմը։ Ահ, անմիտ կին, ավելի լավ չէ, որ ճակատագրիդ հպատակվես և փոխանակ իմ կյանքը թունավորելու, օգնես ինձ իմ խաչը կրելու։ Դո՞ւ ես դժբախտ։ Ահ, եթե կարողանայիր մի քիչ բարձր մտածել, կզգայիր, որ քո բոլոր ընկերուհիների, ծանոթների, քո ամբողջ միջավայրում դու ես երջանիկը, քանի որ իմ կինն ես։

Մի ուրիշ, ավելի դառն, ավելի կծու ծիծաղ եղավ հետը

հետևեցին ինքն իր տրամադրությամբ ոգևորվող գաղափարականի պատասխանը։

— Մի՛ ծիծաղիր, անմիտ,— գոչեց Ավալյանը, կատաղությունից ճանկեց իր գլխի թանձր ու երկար մազերը, որոնք պապուասի տեսք էին տալիս նրան,— այսօր դու ինձ վերքեր ես տալիս, որոնց վաղը լիզելու ես բժշկելու համար։ Քո ծիծաղը ապտակում է ստեղծագործող հոգիս։ Դու բարոյականության դեմ ես ոճիր գործում, խեղճ ողորմելի թզուկ։ Դու չես հասկանում, որ ես քո զավակների համար պատրաստում եմ մի գանձ, որին շատ շատերը պիտի նախանձեն։ Մի խանգարիր ինձ ով երկրին կպած արարած, մի խանգարիր հոգուս թռիչքին դու քո ճղճիմ հոգով։ Ես գիտեմ որտեղից են գալիս այդ հովերը։ Դու քո խելքով չես գործում։ Քեզ սովորեցնում են, քեզ գրգռում են իմ դեմ...

Պարզ էր, որ ակնարկը վերաբերում էր տիկնոջ եղբորը։

— Մի՛ համարձակվիր վիրավորելու իմ եղբորը,— գոչեց կինը ավելի գրգռվելով,— ես ինչ որ ասում եմ, իմ կարճ խելքով եմ ասում։

Հյուրը, որ մինչև այդ ժամանակ չէր խառնվել մարդ ու կնոջ վիճաբանությանը, մի ներողամիտ հայացք ձգեց Ավալյանի վրա և ասաց.

— Ես զղջում եմ, որ այսօր եկա այստեղ, բայց այդ տեսարանն ինձ համար ոչ նոր է, ոչ զարմանալի։ Թույլ տուր ինձ, Միսակ, մի քանի խոսք ասել և հեռանալ։

— Ահ, գիտեմ ինչ պիտի ասես։ Քույր ու եղբայր միևնույն խմորից եք հունցված, դուք ինձ երբեք չեք հասկանալու, իսկ ես ձեր մտադրությունը արհամարհում եմ ամբողջ հոգով։

— Թող այդպես լինի, բայց ես, այնուամենայնիվ այսօր կասեմ այն, ինչ որ վաղուց չէի ուզում ասել և չէի համարձակվում, խնայելով քո հիվանդոտ եսասիրությունը։ Բանն այն է, բարեկամս, որ դու մի սարսափելի մոլորության մեջ ես, դրանից է առաջանում քո ընտանիքի և քո իսկ դժբախտությունը։ Խոսքս այն բանի մասին է, որ դու անվանում ես կոչում և որ այնքան հափշտակում է քեզ։ Լսիր, սիրելիս, դու չունես այն, ինչ որ երևակայում ես թե ունես։ Պետք է, վեր-

ջապես, մի օր ասել քեզ այս դառն ճշմարտությունը և ահա այսօր ասում եմ, դու խորին ինքնախաբեության մեջ ես։

— Ինչի՞ վերաբերմամբ։

— Քո գրական ձիրքի։ Այո, այո, քո գրական ձիրքի, քո այսպես ասած ստեղծագործական շնորհքի վերաբերմամբ, լսիր, դու արդեն հասել ես ծերության առաջին շրջանին։ Քառասունհինգ տարին այնպիսի հասակ է, որ տղամարդը կարող է սառնարյուն լսել նույնիսկ ամենանվիրական ճշմարտությունների մասին։ Ասում եմ քեզ, որպես քո հատուկենտ ընթերցողներից մեկը — դու շնորհք չունես։ Քսանհինգ տարի է դու միայն անհաջողությունների ես հանդիպում, դու պետք է զգայիր այդ...

— Հետո՞, հետո՞,— պատասխանեց Ավալյանը, զգալով, որ արյունը սկսում է գլուխը տալ։

— Հետո այն, սիրելիս, որ լինելով մի հասարակ արհեստավոր, այն էլ ոչ բավականաչափ ճարպիկ, քեզ արտիստ ես համարում։ Պարզ և անկեղծ ասում եմ, քո գրիչը ոչ մի ազդեցություն չունի քո փոքրաթիվ ընթերցողների վրա։ Ես ավելին կասեմ, քեզ ծաղրում են ամենքը, որոնք երբևիցե քո գրածներից կարդացել են գեթ մի քանի տողեր, ծաղրում են քո հավակնությունը, քո մեծամտությունը, քո մանկական մտքերը, որոնց դու ծիծաղելի լրջությամբ համարում ես խորը փիլիսոփայություն։ Ես բարեխղճաբար կարդացել եմ քո բոլոր երկերը։ Հավատացնում եմ, անկեղծ հոգով ցանկացել եմ նրանց մեջ գտնել որևէ ստեղծագործական շունչ և չեմ գտել։ Քո բոլոր մտքերը հնամաշ կրկնություններ են։ Կարող եմ ասել, որ դու իսկի ոճ էլ չունես, գիտես բառերը քիչ թե շատ քերականորեն դասավորել և ուրիշ ոչինչ, այդ է քո ամբողջ ունակությունը։ Չորս գրքույկներ իրարու վրա կարդացի և ոչ մի սրամիտ դարձված կամ գեղեցիկ համեմատություն չգտա, ողորմելի, և դու քեզ երևակայում ես բանաստեղծ, վիպասան, դրամատուրգ և չգիտեմ էլ ինչ։ Դեռ երեկ քո անկեղծ բարեկամներից մեկը ասում էր գրեթե միևնույնը, ինչ որ ես այժմ ասում եմ։ Բարեկամս, քսանհինգ տարի է գրում ես և մինչև այսօր քո ոչ մի գործը լուրջ քննադատության կամ վիճաբանության չի արժանացել։ Շատ, շատ քո

մասին երբեմն գրել են մի քանի սառը տողեր, որոնք ավելի ներողամտություն են արտահայտել, քան հարգանք։ Մի՞թե այսքանը բավական չէ, որ դու վերջապես սթափվես։

— Ինձ չեն հասկանում, որովհետև ես ամբոխի համար չեմ գրում,— գոչեց Ավալյանը,— որովհետև իմ գործերը գաճաճների ճաշակի համար չեն գրվում։ Որովհետև իմ գաղափարներն անմատչելի են ամբոխին։ Որովհետև արհամարհում եմ հասարակության, մամուլի և բոլոր այն պարոնների կարծիքը, որոնց հետ դու շփվում ես։

— Երկինքը վկա, այդ խոսքերը ծիծաղելի են քո բերանում,— ընդհատեց հյուրը անկեղծ կարեկցությամբ։ Արհամարհում եմ հասարակության և մամուլի կարծիքը։ Կարելի է միթե արհամարհել մի բան, որ գոյություն չունի։ Ես քեզ ասում եմ, որ քո մասին տիրում է կարծիքների կատարյալ բացակայություն։ Հասկացիր, վերջապես, այդ բանը, խեղճ մարդ և մի կրկնիր չգնահատված հանճարների սովորական երգը։ Բայց բավական է, ես իմն ասացի, մնացյալը դու գիտես։

Եվ հյուրը տոքի եղավ դուրս գնալու։

Ավալյանը անցուդարձ անելով, կատաղությունից շրթունքներն էր կրծոտում։ Նրան թվում էր, որ խոստոն իր ոխերիմ թշնամին է, եկել է հատկապես նրա աչքերի առջև ոտնատակ անելու նրա արքայությունը։

— Ես ծիծաղում եմ քեզ վրա, ես քեզ խղճում եմ,— կարողացավ նա մի քանի արտասանել։

— Կեղծում ես, բարեկամ, դու չես ծիծաղում, այլ կատաղում ես։ Ծիծաղողը սառն է լինում, իսկ դու բորբոքվում ես, հենց միայն այդքանը գեղեցիկ ապացույց է, որ դու զգում ես իմ ասածների ճշմարտությունը։ Բարեկամս, գիտեմ ես, որ կոպիտ եմ վարվում, դիպչելով քո հոգու հիվանդոտ տեղին։ Բայց ինչ արած, ճշմարտությունն ամենից առաջ։ Ահ, ինքնախաբեության զոհ, ուշքի եկ, վերջապես խեղճ է քո ընտանիքը, խեղճ ես դու։ Մի տանջիր քեզ ու քո մերձավորներին։ Գիտեմ, դժվար է և դառը հիասթափվելը, բայց պետք է քեզ հիասթափեցնել։ Դու հիպնոզի ես ենթարկված. մի անգամ ինքդ քեզ ներշնչել ես մի սխալ գաղափար, և նա տա-

րիների ընթացքում աճելով, քո հոգին կլանել է ամբողջովին։

— Ոգևորությունը խաբել չգիտե,— գոչեց Ավալյանը համոզմունքով,— ես ոգևորված եմ, կնշանակե, խաբված չեմ։ Ինչո՞ւ ես ունեմ այդ ոգևորությունը և ոչ թե դու, մի ուրիշը, քեզ նման հաղարավորները։ Ոչ, ոչ, հազար անգամ ոչ, զուր են քո դիվային փորձերը։ Ես իմ ուժին հավատում եմ, կնշանակե ուժ եմ։

Նորեն մի դառը ժպիտ աղավաղեց հյուրի խելացի դեմքը։ Նա մոտեցավ երկու լուսամուտներից մեկին, բաց արավ և ասաց.

— Տեսնում ես, գետի մյուս ափի վրա, ծառերի խտության մեջ — այն մեծ տունը դեղնագույն պատերով։ Գնանք մի օր այնտեղ, և ես ցույց կտամ քեզ հարյուրավոր թշվառներ, որոնք նույնպես հափշտակված են իրենց կոչումով։ Նրանք ևս գաղափարի գերիներ են քեզ պես։ Մեկն իրեն երևակայում է անուղղելի զորավար, մյուսը հանճարեղ ճարտարապետ, երրորդը երևելի հռետոր, մի ուրիշը նշանավոր գիտնական կամ գյուտարար։ Յուրաքանչյուրը հափշտակված է իր իդեալով. փորձիր նրանց հասկացնել իրենց մոլորությունը, քեզ կհամարեն խելագար։ Բայց արդյոք, չես խղճա այդ թշվառներին։

— Ինչո՞ւ,— պոռաց Ավալյանը, իր վտիտ կրծքի ամբողջ ուժով,— դու ինձ համարում ես խելագա՞ր։ Զգուշացիր, ժխորի զավակ, խելագարը կարող է քեզ իր ճանկերով խեղդել։

— Էհ, թող, ի սեր աստծու, այդ ձևերը։ Դու հիստերիկ կին կամ հիվանդ երեխա չես, որ քեզ հետ մեղրալի բերանով խոսեմ. թող իմ անվայելք համեմատությունը վիրավորե քեզ, բայց ես պարտավոր եմ սթափեցնելու համար միջոցների մեջ խտրություն չդնել։ Մարդ, որպես ազգական, խղճում եմ քեզ, դեն ձգիր աչքերիդ քողը և հաշտվիր այն ճշմարտության հետ, թե դու հանճար չես և ոչ տաղանդ, և ոչ նույնիսկ միջակություն, այլ ոչնչություն, կատարյալ ոչնչություն։ Ի՞նչ իրավունքով ես դու տանջում ուրիշներին, որ ոչնչով մեզավոր չեն քո դժբախտության մեջ։ Ահա այս խեղճ կնոջը, որ ամեն օր այդպես լալիս է, ահա այն երեխաներին, կեղտոտ բակում խաղում են շների, կատուների հետ, չունենալով ավելի լավ

շրջան։ Նայիր, տես ինչի են նման։ Իմ սիրտն է մորմոքվում նրանց այդ դրության մեջ տեսնելիս։ Կարծես թափառական, մուրացիկ գնչուներ լինեն։ Նրանց բզկտված բաճկոնները, պատառոտված կոշիկները, որոնց միջից երևում են նիհար սրունքները, մի-մի բողոք են քո հանցավոր անհոգության դեմ։ Այնինչ դու անսիրտ հայր չես, այլ բարի և շատ բարի։ Մտածիր և ինքդ քեզ հարցրու, արդյոք քո անփութությունը անբարոյականության հավասար չէ՞։ Արդյոք մի տեսակ զազրելի պարազիտ չե՞ս, կպած ժողովրդի մարմնին։ Ես շատ անգամ եմ քեզանից լսել գանգատներ հայ հասարակության դեմ, շատ անգամ ես դու նրա հասցեին շպրտել վիրավորական կշտամբանքներ, թե գռեհիկ է, չգիտի արժանավայել գնահատել և վարձատրել իր մտավոր աշխատավորներին, այսինքն՝ քեզ և քեզ նմաններին։ Ասա՛ ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով։ Ո՞վ է քեզանից պահանջում զոհաբերություն կամ ո՞վ է կարոտ քո ոգևորությանը։ Ինչո՞ւ ես զոռով չգնահատված մարգարե ձևանում։ Ո՞ւմ են որևէ օգուտ տվել քո տափակ ոճով արտահայտված տափակ մտքերը, հո չի կարելի բռնի կերպով հաստատել, թե դու հայ ազգի փրկիչն ես։ Չէ՞ որ բացի քեզնից պետք է մի ուրիշն էլ զգա քո կարևորությունը։ Հապա ո՞վ է զգում, ասա, ցույց տուր գոնե մեկին։ Միթե բոլորն էլ հիմար են կամ թշնամի, նախանձոտ, տգետ։ Այո, խոսք չունեմ, ինչպես ամենուրեք, մեր մեջ ևս կան չվարձատրված տաղանդներ, գիտեմ։ Բայց երդվում եմ ճշմարտության անունով, որ դու նրանց շարքին չես պատկանում։ Հավատա, ամենից ավելի հենց նրանց աչքում ես ծաղրելի, ամենից առաջ հենց նրանք են քեզ արհամարհում։

Նա լուսամուտը փակեց և նորից նստեց։

Քանի մի վայրկյան տիրեց լռություն։ Ավալյանն անցել էր սենյակի մի անկյունը և, մեջքը պատին տված լսում էր։ Նրա վտիտ մարմինը կծկվել էր ու փոքրացել այնպես, որ թվում էր, թե մի պահ ևս, և նա բոլորովին պիտի չքանա։ Կինը նայում էր նրան, սրտի խորքում կարեկցում։ Ծանր էր նրա համար լսել եղբոր անողոք քննադատությունը իր զավակների հոր մասին և պատրաստ էր պաշտպանել նրան։ Բայց ինչպես, ինչ ասել, չգիտեր։

— Ես հասկանում եմ ձեզ,— արտասանեց Ավալյանը վշտից ու հուզմունքից երերվող ձայնով,— քույր ու եղբայր խոսք մի արած, դուք ուզում եք ինձ հրել բարձրությունից, ձգել վար և ձեզի պես գամել երկրին։ Դուք ուզում եք ինձ դարձնել մի հասարակ բեռնակիր, որպեսզի իմ ուսերի վրան ո՛չ միայն իմ զավակների հոգացողությունը, այլև ձեր իշխանությունը, ձեր կամքը, ձեր ես լինի։ Բայց այդ ձեզ չի հաջողվիլ, երդվում եմ, չի հաջողվիլ որքան ես աշխատեք։ Այո, թող ես ձեր աչքում լինեմ խելագար, այդ ինձ համար մինչև անգամ գովեստ է, բայց ձեր ուղին ինձ համար զզվելի է։ Ահ, դուք, ողորմելի խլուրդներ, ի՛նչ եք դուք ինձ համար, եթե ոչ գիշի վրա նստած ճանճեր, որոնք արծիվների թռիչքի մասին երբեք, երբեք չեն կարող գաղափար կազմել։ Հաց, հաց, ահա ձեր գոյության Ան ու Ֆեն։

— Հետո՞, հետո՞,— կրկնեց հյուրը ամենայն սառնությամբ, դա՞ է միայն ասելիքդ, ուրիշ ոչի՞նչ։ Բայց այդ բոլորը միայն ֆրազներ են, հավատացնում եմ, դատարկ, անիմաստ ֆրազներ, դարձյալ ուրիշներից վերցրած և քո ապիկարության կատարյալ ապացույց։

— Դժբախտ, դժբախտ,— արտասանեց կինը, երեսը դարձնելով մի կողմ։

— Այո, ես դժբախտ եմ, որ ունիմ քեզ նման կին և դրա նման ազգական։ Հեռացե՛ք, թողեք ինձ հանգիստ, թողեք։

— Ոչ, չեմ թողնիլ քանի որ վերջին խոսքս չեմ ասել։ Լսի՛ր. վաղուց է ինձ հայտնի, որ դու իմ քրոջ հետ ամուսնանալը համարում ես քո դժբախտությունը։ Դու այդ մասին մինչև անգամ գրել ես մի պատմվածք և տպագրել անամոթաբար։ Դու արտահայտել ես այն բանալի գաղափարը, թե ընտանեկան կյանքի հիմքը պետք է լինի ամուսինների հոգեկան համերաշխությունը։ Դու հրապարակորեն վիրավորել ես իմ քրոջը, նկարագրելով նրան որպես մի էակ, որ անընդունակ է ըմբռնել քո դժվարամատչելի գաղափարները և գնահատել քո մեծությունը։ Ահ, չճանաչված հանճար, այդ պատմվածքը մեկն է քո անշնորհքության փայլուն ապացույցներից, որովհետև այնտեղ ես դու կապկություն ես

արել, հետևելով ոչ քեզ նման, այլ իսկապես չգնահատված տաղանդների օրինակին։ Չեմ վիճում, քույրս շատ էլ մեծ մտավոր զարգացում չունի, բայց նա զուրկ չէ առողջ բանականությունից և արժանավորներին գնահատելու ճաշակից։ Նա ունի գոնե շնորհալին անշնորհքից զանազանելու չափ ունակություն։ Հավատա, եթե դու տաղանդ լիներիր, վաղուց նրան գրված կլիներիր։ Վերջապես, ես ինքս կստիպեի նրան համբերությամբ կրել կյանքի նյութական զրկանքները, հանուն քո սուրբ կոչման։ Բայց դու չունիս կոչում, բարեկամ, չունիս, ինչո՞ւ ես անհաջողությանդ պատճառները նրա վրա ձգում։ Տաղա՞նդ... տաղանդն այնպիսի մի ուժ է, որի առջև վաղ թե ուշ խորտակվում են բոլոր պատնեշները և փարատվում է ամեն մի խավար։ Նրա դեմ անզոր է և՛ տգիտությունը, և՛ նախանձը, և՛ ատելությունը, ամեն ինչ։ Քսանուհինգ տարի է դու կռվում ես, ասա՛, հաղթե՞լ ես որևէ նախապաշարմունք, մի սխալ կարծիք. մի թյուր հասկացողություն, լսե՞լ են երբևէ քո ձայնը, հարցրե՞լ են գեթ մի անգամ քո կարծիքը այս կամ այն հասարակական գործի մասին։ Ունի՞ս դու գոնե մի հատիկ երկրպագու չեմ ասում, այլ պարզ հետևորդ, ուզում եմ ասել աշակերտ։ Հո չի կարելի շարունակ դատարկ խոսքերով կերակրվել և սնոտի երազների մեջ թմրել։ Մի բան ևս. ասում ես, թե քո մեջ ուժ ես զգում, բայց չէ՛ որ խելագարներ կան, որ հավատացած են, թե կարող են դարավոր կաղնին արմատահան անել իրանց ձեռքերով և երբ փորձում են, թավալվում են գետնին։ Սակայն ներիր, ես նույնիսկ չեմ հավատում թե դու որևէ ուժ զգում ես քո մեջ։ Այո, այո, չեմ հավատում, դու միայն կարծում ես, թե զգում ես այդպիսի ուժ, ավելի ճիշտն ասած, քեզ համար ցանկալի է զգալ։ Հարցրու հոգույդ, և դու կտեսնես, որ երբեք անկեղծորեն չես հավատացել քո կոչմանը։ Դու ինքդ քեզ համար արհեստականորեն մի իլյուզիա ես ստեղծել և քեզ համար հաճելի է ապրել այդ իլյուզիայով։ Մի բոպե արթնացիր, մարդ, թող քո երևակայությունը, վերլուծիր ինքդ քեզ, և, հավատացած եմ, քո ամենախիստ դատավճիռն ինքդ կտաս։ Ա՜հ, ճշմարիտ չէ՞ իմ ասածը, դու դե՞մ ես, խոսիր, հերքիր, եթե կարող ես, միայն անկեղծ

եղիր, հասկանո՞ւմ ես, միայն անկեղծ եղիր, խոսիր սրտիդ խորքից և ոչ հանճարների բերնից գողացած խոսքերով։ Այ, հենց այժմ, այս բոպեին դու նման ես այն հիվանդին, որ համոզված է, թե շուտով մեռնելու է և դարձյալ ուզում է հավատալ, որ պիտի առողջանա և ինչո՞ւ, որովհետև թուլամորթների համար հույսը զորություն է, իսկ հուսախաբվելը՝ մահ...

— Բավական է, բավական է,— աղաղակեց Ավալյանը գրեթե շնչասպառ,— ես քեզ արգելում եմ խոսել։ Դուրս այստեղից, սատանա, դուրս, զաղրելի օձ, դու թունավորում ես իմ հոգին։ Ես չեմ ուզում քեզ լսել, չեմ կարող լսել։

Բայց արդեն ուշ էր։ Հյուրի անողորմ խոսքերի մեջ զգացել էր դառը ճշմարտությունը։ Երբեք նա այնպես տանջված չէր։ Ահ, այդ կոպիտ մարդու պարզ խոսքերով խոսում էր ինքը հասարակությունը։ Այո, այո, նա չգնահատված, չհասկացված տաղանդ չէ, այլ ընդհակառակը, շատ հասկացված, շատ արհամարհված անքանքարություն։ Միանգամայն ճիշտ է, որ նա այդ բանը զգում է վաղուց։ Քանի-քանի անգամ սառը, դաժան բանականությունը շշնջացել է նրան. «Ավալյան, դու ստեղծագործող չես, դու մոլորված ես, դու միջակություն ես և ավելի արհամարհելի, քան միջակությունը»։ Բայց հավատալն ու հուսալը ավելի հաճելի է եղել, քան հուսախաբ լինելը։ Այո, նա արվեստաբար սնուցել էր իր մեջ ֆանատիկոսի հավատ դեպի իր չունեցած գանձը և հետզհետե աստիճանաբար ենթարկվել է այդ հավատին ինչպես մի ֆակիր, որ ժամերով իր ոտքերի ծայրերին նայելով աշխատում է Նիրվանը ճաշակել և երևակայել, թե ճաշակեց, ինչպես մի ստախոս, որ մի հայտնի սուտ հաճախ կրկնելով, վերջ ի վերջո ինքն էլ հավատում է յուր ստին։ Եղել են վայրկյաններ, որ նա փափագել է խոստովանել իր մոլորությունը և քաջություն չի ունեցել խոստովանելու։ Նա կեղծիքը գերադասել է հոգու հատակից ձայնող ճշմարտությանը, որովհետև կեղծիքը շոյել է նրա ինքնասիրությունը, իսկ ճշմարտությունը մտրակել է նրան։

Նա նայեց կնոջը և նրա դեմքի վրա կարդաց վիրավորիչ կարեկցություն։ Նայեց հյուրին — նույն արտահայտությունը։ Որպես դաժանորեն դատապարտված մեկը նա ցան-

կություն զգաց հարձակվել անողոք դատավորների վրա և խեղդամա՞ անել նրանց։ Նա պատրաստ էր արտասանել ամենագեղեցիկ, ամենավիրավորական մի հայհոյանք իր կնոջ ու նրա եղբոր հասցեին, բայց ամոթի զգացումը թույլ չտվեց նրան այդ անելու։ Թուլացած ու ուժասպառ նա նստեց աթոռի վրա գրասեղանի քով և գլուխը դրեց ձեռների ափերի մեջ։ Քսանուհինգ տարի նա աշխատել է այդ սեղանի քով մոլեռանդ տոկունությամբ, հիվանդոտ երևակայությամբ իր ոտների տակ ստեղծելով նախանձելի համբավի պատվանդանը։ Եվ ահա, այսօր, նրան շոշափելի փաստերով ապացուցում են, թե փխրուն է այդ պատվանդանը, և նա պետք է տապալվի գետին և կործանվի։ Ինչ-որ մի բուք բարձրացավ ներսից և սկսեց խեղդել նրա կոկորդը։ Նա պահանջ զգաց բարձրաձայն հեկեկալու ինչպես մի մանուկ, որի աչքերի առջև ջարդուփշուր էին արել նրա ամենաթանկագին խաղալիքը։ Բայց կեղծ ինքնասիրությունը, որ այնքան ստրկացրել էր նրան, այս անգամ ևս օգնության հասավ։ Նա կարողացավ զսպել իրան, բայց կատաղությունից սկսեց կրծոտել իր ձեռները։

Հյուրը նրա ոսկրոտ թիկունքների ցնցումներից զգաց անտանելի հոգեկան տանջանքը։ Մի վայրկյան զղջաց, որ այնքան խիստ վարվեց ողորմելի մարդու հետ։ Բայց նայեց շուրջը, ուր տիրում էր հուսահատական չքավորությունը, նայեց քրոջ հյուծված կերպարանքին և նորեն լսեց նրա լացը։ Եվ ասաց իրեն, թե պարտավոր էր այդպես վարվել, և ոչ մի մխիթարական խոսք, ոչ մի խրախուսանք։

Դռները աղմուկով բացվեցին, ներս վազեցին Ավալյանի զավակները — երկու պղնձագույն էակներ իրանց ցնցոտիների մեջ։ Աղքատությունը կարծես ծծել էր նրանց կյանքի հյութը գեռափթիթ հասակում։ Նրանց նիհար, հիվանդոտ դեմքերի վրա չկար մանկական աշխուժության և ոչ մի նշույլ։ Վաղաժամ թախիծը պարուրել էր նրանց աչքերի պայծառությունը։

Նրանք կանգ առան սենյակի մեջտեղում և նայեցին նախ իրենց մորը, ապա հորը։ Հասկացան անմիջապես, որ նրանք դարձյալ ընդհարվել են և դարձյալ միմյանց վիրա-

վորել։ Սովորական տեսարան, որ ամեն օր կրկնվելով, մանուկ տեսողության համար դարձել էին անհրաժեշտություն։ Նրանք բնազդորեն միշտ եղել էին մոր կողմը, որովհետև նա էր միշտ լաց լինում և տանջվում նրանց աչքերի առջև։

— Ինչո՞ւ եկաք,— ասաց քեռին,— գնացեք, խաղ արեք դրսում... Դեհ, շուտ։

Եվ բռնելով նրանց թևից. դուրս տարավ և դռները փակեց։

— Աստված իմ,— արտասանեց մայրը, աչքերը սրբելով,— ես նրանց համար դեռ ոչինչ չեմ պատրաստել ուտելու։

Նայեց եղբորը մի հայացքով, որ միաժամանակ արտահայտում էր և՛ աղերս, և՛ երկյուղ, և՛ ամոթ։

Եղբայրը դուրս բերեց գրպանից մի քանի ռուբլի և գաղտուկ տվեց նրան։

— Մինչև երբ,— արտասանեց քույրը, խոր հառաչելով։

Այդ պահին Ավալյանը գլուխը բարձրացրեց և, ոտքի ելավ, գոռալով։

— Մուրացկա՞ն, ես թույլ չեմ տալ, երբե՛ք, հետ տուր այդ փողերը, հետ տուր, ինչպե՞ս համարձակվեցիր վերցնել։

— Ինչե՞ր ես խոսում, Միսակ, չէ՞ որ ես քո կնոջ եղբայրն եմ։

— Այդ միևնույն է, չեմ ուզում։ Ես ինքս կգտնեմ փող, հետ վերցրու քո ողորմությունը։ Գրավ կդնեմ ինձ և չեմ թողնիլ, որ երեխաներս մուրացկանությամբ ապրեն։ Ա՛հա, դուք ինձ համարում եք ողորմելի։ Ես ձեզ արգելում եմ խղճալ ինձ։ Կգնամ, իսկույն փող կբերեմ, իսկ հետո կտեսնեք ով է մեզնից ավելի ողորմելի։ Ե՞ս, թե դու, ե՞ս, թե դու...

Նա վերցրեց գլխարկն ու վերարկուն և դուրս վազեց խելագարի պես։

Քույրը տարակուսանքով նայեց եղբորը։

— Մի վախենար,— ասաց եղբայրը,— այդ լավ նշան է, նա բժշկվում է։

— Տեսնենք...

Ամբողջ մի շաբաթ Ավալյանն անճանաչելի էր։ Նրան պաշարել էր անսովոր եռանդ։ Դուրս էր գալիս տնից առավոտները կանուխ և վերադառնում էր ճաշին։ Գրասեղանին չէր մոտենում, չէր գրում և ոչ էլ կարդում էր։

Կնոջ և երեխաների վրա չէր գոռում, չէր հանդիմանում նրանց, թե խանգարում են նրան պարապելու։ Լուռ էր, սովորականից ավելի մտազբաղ, տխուր։

Մի օր նա, տուն վերադառնալով, ասաց.

— Այժմ դու կարող ես հանգստանալ, ես գործ գտա։ Ինձ տվել են երկու մասնավոր դասեր մի հարուստ ընտանիքում։

— Ա՜հ, փառք աստծու,— չկարողացավ թաքցնել իր ուրախությունը կինը,— այժմ գոնե օրվա հացը կունենանք։

— Այո, կունենանք, կունենանք,— կրկնեց Ավալյանը ներվայնաբար։

Արդարև, մի քանի ամիս նրանք հաշտ էին։ Կարելի էր կարծել, որ խռովություններն առմիշտ փախել են այդ ընտանիքից, ուր նրանք բույն էին դրել տասներկու տարի։ Ոչ մարդն էր բորբոքվում ու գոռում, ոչ կինն էր գանգատվում, լալիս։ Շուտով երեխաների վրա երևացին նոր հագուստներ և ոտներին նոր կոշիկներ։

Բայց Միսակը շարունակ լուռ էր, կնոջ ոչ մի հարցին չէր պատասխանում, երեխաներին չէր փաղաքշում։

Մի անգամ նա տուն վերադարձավ արտաքո կարգի գբրգրոված և ասաց.

— Ես դասերից հրաժարվեցի։

Կինը սարսափեց։

— Ինչո՞ւ,— հարցնեց նա դողալով։

— Հենց այնպես, չեմ ուզում պարապել։ Չեմ կարող, տանջվում եմ։

Նա մոտեցավ գրասեղանին և դուրս բերեց այնտեղից իր անավարտ ձեռագիրը։

— Տեսնո՞ւմ ես.— գոչեց, ձեռը զարկելով ձեռագրին,— ես չեմ կարող զավակս թաղել գերեզմանում, չեմ կարող։ Թող քո եղբայրը չպարծենա, թե ինձ շիտակ ճանապարհի վրա դրեց իր ողորմելի համոզումներով։ Ինձ ուղղել ոչ դք չի կարող, ոչ ոք։ Ահա նա, գալիս է իմ կարծեցյալ ուսուցիչը։ Տես, ինչ ինքնագոհություն է արտահայտում նրա կոշտ

դեմքը, հա՜, հա՜, հա՜, երևակայում է, որ ինձ կորստից փրկել է։ Ոչ, ոչ, երկրին մեխված հոգի, դու չես կարող ինձ իմ բարձունքից իջեցնել մինչև քո ողորմելի աստիճանը։ Իմ աշխարհն այլ է, քեզ համար անմատչելի, անհասկանալի։ Հեռացիր, մի խանգարիր ինձ այլևս, դեհ, շուտ-շուտ հեռացիր, կորի՛ր։

Հյուրը բևեռվեց դռների շեմքի վրա։

— Թողեք ինձ, ահա իմ տեղը,— շարունակեց Ավալյանը, ձեռն ուժգին սեղանին զարկելով,— այստեղ եմ սկսել ապրել, այստեղ էլ պիտի մեռնեմ։ Ես չեմ կարող օրվա հացի ստրուկը դառնալ, հասկանո՞ւմ եք, չեմ կարող։ Բավական է որքան տանջվեցի այս մի քանի ամիսները։ Այսօր հրաժարվեցի դասից և այժմ դարձյալ նույն Ավալյանն եմ... Ես իմ կոչման գերին եմ... այո, այո, իմ գաղափարի...

Հյուրը նայեց նրան խորին կարեկցությամբ և ասաց.

— Դու հիվանդ ես և անբուժելի։

Նույն տարվա աշնանը Ավալյանը հիվանդացավ։ Նրա վտիտ ու հյուծված մարմինը չդիմացավ թոքերի բորբոքմանը։ Նա վախճանվեց, թողնելով զավակներին անոթի։

Մեկը նրա գերեզմանի վրա ասաց.

— Նրան սպանեց ամբոխի տգիտությունը...

ՁՀՈՒԴԻ ԱԿԱՆՋԸ

Կովել քաղաքի կայարանում մեր վագոնը լցվեց հրեաներով։ Եղանակն անձրևային էր, անախորժ, մինչև անգամ ցուրտ, թեև օգոստոսը դեռ չէր վերջացել։ Բոլոր ճանապարհորդները թրջված էին, բոլորի իրեղենները ցեխոտված. որովհետև կայարանն անկարգ էր, իսկ պլատֆորմը ծածկոց չուներ։

Սկսվեց այնպիսի իրարանցում, որի նմանը չէինք տեսել Թիֆլիսից մինչև Լեհաստան, անցնելով Կովկասի վառվռուն տարրերի միջով։ Առաջին պահ չէինք լսում ոչ միայն մեքենայի խուլ թնդյունը և կառքերի ձանձրալի դղրդյունը, այլև իրարու ձայնը։

Ներս խուժելով, հրեաները կատվի արագությամբ իրենց բազմաթիվ կապոցները տեղավորեցին, գտնելով այնպիսի անկյուններ ու խորշեր, որոնց մասին ես մինչև այդ ժամանակ գաղափար չունեի։ Այսպես է հրեան։ Ով շատ է ճանապարհորդում, նա շուտ է հարմարվում անհարմարություններին։ Իսկ ո՛վ չգիտե, որ աշխարհի երեսին ոչ ոք այնքան չի ճանապարհորդում, որքան հրեան։ Չէ՞ որ այդ անբախտ ժողովրդի ճակատին պատմությունը գրել է.

— Թափառի՛ր հավիտյան։

Երբ իրարանցումը մի փոքր դադարեց, մեզ մոտեցավ մոխրագույն վերարկուով ու մեխակի գույնի, լայն, ճխլտված

գլխարկով մի մարդ և, տասն անգամ ներողություն խնդրելով, նստեց իմ դեմ։ Իսկապես բոլոր տեղերը բռնված էին, բայց մարդն այնուամենայնիվ նստեց, աշխատելով կարելույն չափ իր մարմինը փոքրացնել։

Տեսե՞լ եք արդյոք մի տղամարդ, որի դեմքը ներկայացնե գեղեցկի և տգեղի զարմանալի խառնուրդ։ Երևակայեցեք հորիլլոյի դնչից և ամենագեղեցիկ դեմքի մի հյուսվածք, և դուք կունենաք մոտավորապես նորեկ հարևանիս պատկերը. նրա քառակուսի ծնոտը, տափակ քիթը, լայն բերանը, հաստ շրթունքները, խոշոր կինամոնագույն աչքերի խելացի արտահայտության և կանոնավոր կազմված գլխի, սիրուն ճակատի և նուրբ հոնքերի գեղեցկության հետ։

Նստեց թե չէ այդ մարդը, սկսեց ոտքից մինչև գլուխ զննել մեզ խիստ հետաքրքիր հայացքով, չմոռանալով նայել իրեղեններիս։ Հրեայի ախտ դարձած հետաքրքրությունը, որ ուզում է անպատճառ իմանալ. ո՞վքեր են իր ուղեկիցները, ի՞նչ դիրք ունին, ո՞ւր են գնում և ինչո՞ւ։ Հենց այս հատկությունն է, որ ճանապարհորդության մեջ նրան դարձնում է մերթ ցանկալի և համակրելի ընկեր, մերթ ձանձրալի և ատելի ուղեկից։

Վերջապես նորեկը հեռացրեց մեզանից իր խուզարկու հայացքը, երևի գուշակելով, որ մեզ շատ էլ դուրեկան չէ այն։

— Ֆեյլդման,— դարձավ նա իր ազգակիցներից մեկին,— քանմեկ կխաղա՞ս։

— Այ-վա՛յ, ժամանակ չկա,— պատասխանեց Ֆեյլդմանը, որ նստած էր մեր կողքի փոքրիկ բազմոցի վրա,— վերջապես ես քաղցած եմ, ուտել եմ ուզում։

Դա մի փոքրիկ, շատ փոքրիկ, արագաշարժ և արագախոս ծերուկ էր, պստիկ, ճերմակ միրուքով ու թավ, սև ունքերով։ Նա անմիջապես իր ոտների տակից «այ-վայ» անելով դուրս բերեց և ծնկների վրա դրեց մի զամբյուղ, ուտելեղենով լիքը։ Շուտով մեր վագոնում տարածվեց կանաչ սոխի և ինչ-որ ապխտած ձկան հոտ։ Ֆեյլդմանն ուտում էր կապիկի պես, այսինքն՝ երկու ձեռները մոտեցնելով բերանին. քիչ-քիչ, բայց արագ-արագ և արագ-արագ ճպճպելով աչքերը։

— Է՛հ, բաս ի՞նչ անեմ, տխուր է,— ասաց հարևանս, անգիտակցաբար իր լայն գլխարկը բարձրացնելով ծոծրակի կողմը։

Այդ միջոցին տասը տարեկան աղջիկս ծիծաղելով ասաց.

— Հայրի՛կ, չե՞ս տեսնում, այդ մարդու մի ականջը չկա։ Նայի՛ր։

Արդարև, հարևանիս ձախ ականջը կտրած էր մինչև բըլթակը, և այս թերությունը նրա կերպարանքին տալիս էր ավելի տարօրինակ տեսք։

Ես կարծեցի, որ փոքրիկի անմեղ ծիծաղը կդիպչի այդ մարդուն և շտապեցի զսպել նրան։ Բայց պատահեց հակառակը։ Հրեան սիրալիր ժպտաց, բաց անելով իր լայն բերանը մինչև վերջին ատամները։ Եվ այդ ժպիտը նրա դեմքից քշեց այն բոլորը, ինչ որ անասնական էր։ Մատը թափ տալով օդի մեջ, նա հայրական եղանակով ասաց.

— Մադմուազել, մի՛ ծիծաղիր ականջիս վրա, առնետները կբարկանան։ Գիտե՞ս, նրանք են կերել օրը ցերեկով իմ ականջը։ Ախ, նրանք սոված են, շատ են սոված, այդ գարշելի, հոտած առնետները։ Հեյ մե՛յ, ի՞նչ կուշտ ծիծաղում ես, երանի՜ քո հասակին...

Ապա նա, իր տեղը լայնացնելով, դարձավ ինձ.

— Ո՞ւր եք գնում։

— Առայժմ Վարշավա։

— Գործո՞վ։

— Ոչ, հենց այնպես։

— Ի՞նչ ազգից եք,— շարունակեց նա, տեղը ավելի լայնացնելով։

— Հայ։

— Աա՜, հա՞յ եք,— գոչեց նա, կարծես ուրախանալով և, միևնույն ժամանակ, տեղն ավելի լայնացրեց,— ո՞րտեղից եք գալիս։

— Թիֆլիսից։

— Թիֆլիսից գնում եք Վարշավա,— պատասխանեց նա դառն հեգնական ծիծաղով,— կնշանակե դժոխքից գնում եք գեհենն։

— Մի՞թե։

— Կատարելապես,— գոչեց հրեան և այս անգամ տեղն այնպես ուղղեց, որ այլևս որդիս հարկադրվեց վեր կենալ։

— Ես ասացի, որ մենք միայն մի օր ենք մնալու Վարշավայում։

— Օհ՜, և ո՛չ մի ժամ, ո՛չ մի ժամ չմնաք, պարոն։ Վատ է, շատ վատ այնտեղ։

Եվ բացատրեց, թե ինչու է վատ այնտեղ։ «Ազգերը և դասակարգերը» խառնվել են միմյանց և ոտքի կանգնել։ Փողոցներում ստեպ-ստեպ իջնում է կարմիր դրոշակ։ Նրա գույնը խիստ գրգռում է «ոմանց», ինչպես որսորդի աչքերը օրհասական արջին։ Ատրճանակ, դաշույն, հրացան, ռումբ, լրտեսություն, մատնություն, կողոպուտ— ահա՛ ինչեր են տիրում այնտեղ։ Որտեղ նայում ես— արյո՛ւն.

— Եվ մեծ մասամբ մեր արյունը, հասկանո՞ւմ եք, մե՛րը, ազգերից ամենաբախտավորինը։ Օհ՜, երկու հազար տարի է ծծում են մեր սրբազան արյունը և դեռ չեն կշտացել անիրավները։ Մի՛ գնաք այդ անիծյալ քաղաքը, որովհետև այնտեղ հրեաներ կան։ Առհասարակ փախեք Ռուսաստանից։ Ես էլ ստիպված եմ գնում։ Ընտանիքս Քիշինևից տարա այնտեղ։ կարծում էի ավելի ապահով կլինի։ Բայց աստված իմ, աստված իմ, ե՞րբ պիտի վերջապես խելքի գան բռնակալները։

Նա լռեց, ծանր ու երկարատև մի հառաչանք արձակեց կրծքից։ Ապա իր խելոք և խոր թափանցող աչքերը— նրանց մեջ արդեն վառվել էր պատմական վիշտը— դարձրեց դեպի լուսամուտը։

Աղմուկը չէր դադարում։ Այժմ հրեաները զբաղված էին մի տեղ թուղթ խաղալով, մյուս տեղ՝ ուտելով։ Նրանք վիճում էին բարձրաձայն, այնպես որ կարծում էիր, թե ահա, ահա՛ պիտի պայթի կռիվ և պիտի ջարդոտեն միմյանց քիթն ու պռունգը։ Բայց գոռում-գոչումներին հետևում էր բարձրաձայն ծիծաղ, ապա վայրկենական դադար, ապա դարձյալ գոռոցներ և հայհոյանքներ։

Դրսում անձրև չկար, մենք անցել էինք նրա սահմանը։ Կառախումբն արդեն կտրում էր Լեհաստանի դաշտերն ու անտառները։ Աջ ու ձախ երևում էին գյուղեր, ագարակներ, մերթ ընդ մերթ ամառային դղյակներ,— մի ժամանակվա

փարթամ Լեհաստանի բեկորները։ Ոչխարների հոտերը և ձիերի երամակները արածում էին աշնանային դեղնագույն կանաչը, անտառների մեջ ցրված։ Գյուղացիները հերկում էին ոսկեգույն հողը, ուշադրություն չդարձնելով անցնող կառախմբի վրա։ Գեղջկուհիները իրանց կապույտ գոգնոցների մեջ ժողովում էին կաղամբ, գետնախնձոր, եգիպտացորեն, որ մեծ մասամբ երկաթուղու գծի մոտ էին ցանված։ Տեղ-տեղ, խոշոր տերևների միջից ժպտում էին հասուն դդումներ, իսկ արևածաղկի դեղին աչքերն ապուշ-ապուշ նայում էին մայր մտնող արեգակին, ծծելով նրա վերջին ճառագայթները։

Աշխատանքը եռում էր, բայց կյանքը մեռած էր։ Մարդկանց հոգնած դեմքից չէր նկատվում զվարթություն, այն, ինչ որ բանաստեղծի երևակայությունն է հորինում գյուղական կյանքի համար։ Չէր երևում, որ այստեղ մարդիկ պարում են ու երգում և իրենց կայտառ քրքիջը միացնում բնության երգեհոնին, այնպես, ինչպես ես տեսա Բելգիայի սքանչելի մարգերում։ Մռայլ դեմքերի և կորացած մեջքերի վրա զգացվում էր քաղաքական հեղձուցիչ մթնոլորտի ճնշումը։ Արդեն Վարշավայում պայթող ռումբերի թնդյունը արձագանք էր գտել Լեհաստանի գյուղերում։ Արդեն իր գոռոզությամբ և պատմական կամակորությամբ նշանավոր ժողովուրդն արթնացել էր հարյուր տարվա թունավոր նիրհից և ականջ էր դնում դեպի հյուսիս։ Նա բռունցքները սեղմում էր կատաղի, ատամները կրճտում էր բորբոքված և մոնչում վանդակի մեջ փակված վագրի պես։ Բայց... տակավին անզոր...

Սիրուն է Լեհաստանն իր երկրի մակերևույթից հազիվհազ բարձրացող բթածայր բլուրներով, խիտ անտառներով, ոչ խոր ձորերով, պարզ գետակներով և ոչ պարզ երկնքով։ Այնտեղ երկիրն այնքան դաժան և մերկ չէ, որքան բուն Ռուսիայում, այդ անվերջ անապատներում։ Այնտեղ գյուղացու տնակը ռուս մուժիկի խրճիթից տարբերվում է, որովհետև տնակ է իր եվրոպական ձևով և եվրոպական մաքրությամբ։ Զգում ես, որ երկիրը բռնած է մի ընդունակ ազգ, որի հարուստ պատմությունը միայն արյունոտ էջերից չի կազմված

և որի զավակների միակ պարծանքը անցյալի ու ներկայի կրած բռնությունը չէ...

Հրեան հայացքը հեռացրեց պատուհանից։ Ես ևս։ Նա նայեց աղջկաս մեղմ հայացքով, որքան թույլ էր տալիս դեմքը և ասաց.

— Աա՜, մադմուազել, էլի դու ականջիս ես նայում։ Օհ՜, ծիծաղի՛ր, ծիծաղի՛ր, քանի որ կարող ես. շուտով այդ ապրանքը կթանկանա։

Եվ արագությամբ դարձավ ինձ.

— Պարոն, կորած ականջս պատմություն ունի, կարո՞ղ եք երևակայել։

— Ձեր ակա՞նջը։

— Այո՛, իմ այս անիծյալ ականջը,— կրկնեց նա երկու մատների ծայրով քաշելով կարմիր բլթակը, որ չորացած բակլայի էր նման,— կկամենա՞ք լսել։ Բնորոշ է, պարոն, շատ բնորոշ մեր ժամանակների համար։ Աա՜, ի՞նչ կասեք, չէ՞ որ պետք է մի բանով զբաղվել ճանապարհին։ Ֆեյլդմանը դեռ խփշտում է։ Հետո երևի չքանալու է։ Չէ՞, Ֆեյլդման, դու կարծեմ պիտի ննջես։

— Երեք կայարանից հետո կասեմ,— պատասխանեց Ֆեյլդմանը, յուղոտ մատները սրբելով մի գույնզգույն կեղտոտ թաշկինակով։

Ես ոչ միայն համաձայնվեցի լսել հարևանիս պատմությունը, այլև հետաքրքրվեցի։ Հրեայի պատմածը չի կարող անմիտ լինել։

— Լսեցեք,— սկսեց նա, գլխարկը դնելով ծնկների վրա,— բայց դեռ թույլ տվեք կապոցներս ուղղեմ։ Ըհը՛, այսպես, լսեցեք,— շարունակեց նա, այլևս միանգամայն ապահովելով իր համար ընդարձակ տեղ,— ես հրեա եմ, ոչ, ջհուդ եմ, բառիս իսկական իմաստով։ Իսրայելի զավակը, անունս է Ահարոն Այզելման։ Եվ ինչպես ջհուդ, իհարկե, առուտուրով եմ պարապում։ Ի՞նչ արած, հայր Աբրահամը մեզ համար հող չի թողել, որ մշակենք... Այնպես չէ՞, Ֆեյլդման։

— Եվ, հի՜, հի՜, հի՜,— ծիծաղեց Ֆեյլդմանը իր փոքրիկ դեմքը ցցելով օդի մեջ և աչքերը փակելով։

— Ես ունիմ, ա՜հ, ի՜նչ եմ ասում, ունեի անիծված քաղաքներից ամենաանիծյալ Օդեսայում պատրաստի հագուստեղենի և մաշկեղենի խանութ։ Ի՜նչ խանութ, ահագին մագազին էր, հինգ աչք ուներ, մեծ հայելի ապակիներով։ Բայց առաջ ես մի հասարակ դերձակ էի— այս է գլխավորը։ Ունեի մի փոքրիկ ցածր խանութ, որ գտնվում էր քաղաքի մեծ փողոցներից մեկում, մի հարուստ մագազինի մոտ։ Այդ մագազինի տերն էր Սերգեյ Պախոմովիչ Ագրինցևը։ Վաճառում էր նա պատրաստի հագուստեղեն, մաշկեղեն և զանազան ասվյա կտորներ։ Ախ, երանի ես հարևան չլինեի, չտեսնեի այդ հարստությունը և չմոլորվեի։ Ով գիտե, գուցե այն ժամանակ ավելի բախտավոր կլինեի։ Ֆե՛յլդման, այնպես չէ։

— Աստված մեղանից լավ գիտե, ինչ որ եղավ, պետք է լիներ,— ասաց Ֆեյլդմանը, բառերը կոտորակների նման օդն արձակելով։— Ոխի՛ր։

Հարևանս վերցրեց իր ընկերոջ առաջարկած ծխախոտը, վառեց և շարունակեց։

— Այդ Ագրինցևը Օդեսայի գազաններից մեկն էր։ Ապրանքը վաճառում էր իր ուզած գնով, ապառիկ ոչ ոքի չէր տալիս, միևնույն ժամանակ գնողների հետ վարվում էր կոպիտ։ Մարդը կուշտ էր, կարիք չուներ ուրիշներին շողոքորթելու։ Բայց գլխավորն այն է, որ մաշկեղենի առուտուրի մեջ մրցակից չուներ։ Ապրանքն ստանում էր առաջին ձեռքից։ Սիբիրի բոլոր նշանավոր վաճառականների հետ անմիջական հարաբերության մեջ էր։ Մի խոսքով, հսկա էր, գոնե իմ աչքում։ Իսկ ես... ես մի քոսոտ ջհուդիկ էի... դերձակ։ Ճշմարիտ է՞, Ֆեյլդման։

— Աստծու օրենքի պես։

— Խանութս պարոն Ագրինցևի մագազինին կպած էր, ի՞նչ ասեմ, ինչպես մի կեղտոտ կարկատան մի նոր և փառավոր մուշտակի։ Այս բանը նրան դուր չէր գալիս։ Նա ուզում էր ինձ դենը շպրտել, բույնս քանդել, մեծացնել և միացնել իր մագազինին։ Բացի դրանից, նա չափազանց ատում էր մեր ցեղը, աչքով աչք չուներ մեզ տեսնելու։ Բայց ես էլ հիմար չէի։ Այդ բանը շատ լավ իմանալով, ես վաղօրոք տեղս ամրացրել էի։ Տանտիրոջս հետ ունեի տասն-

երկու տարով նոտարի մոտ կապած պայմանագիր։ Եթե նա ժամանակից թեկուզ մի շաբաթ առաջ ինձ դուրս աներ, պարտավոր էր վճարել երկու հազար ռուբլի տուգանք։ Դուրս անե՞լ, հիի՜, ոչ, Ահարոն Այզելմանը նպատակ ուներ։ Նրա գլխում հղանում էր մի մեծ, հանդուգն ծրագիր։ Ես տեսնում էի, որ հարևանս շատ է չաղանում, չափից դուրս։ Եվ բոլորովին անարժան։ Այդ մարդը, պարոն, ոչ խելք ուներ, ոչ ճարպկություն։ Նա վաճառական չէր։ Կարդալ-գրելում, կարդում էր, ինչպես կառապան։ Այնինչ, ես օր չէր անցնում, որ մի կամ երկու լրագիր չկարդայի։ Գիտեի առուտուրը ո՛րտեղ է ծաղկած, ո՛րտեղ է ընկած, բորսայում ինչ թղթեր են բարձր, որոնք են ցածր, մի խոսքով, ի՛նչ որ կարելի էր իմանալ լրագիրներից, իմանում էի։

— Երբ հարևանիս, ինչպես հարկն է, լավ ճանաչեցի և նրա գործերին տեղեկացա, տեսա, որ ասպարեզից ոչ թե նա ինձ, այլ ես նրան կարող եմ քշել։ Օհ՜, պարոն, ինչու կեղծել, այսպես է հրեան։ Նա վաճառականության մեջ երբեմն Դավիթ է, որ կռվում է Գողիաթի հետ. թեև միշտ էլ հաղթող չի լինում, բայց կռվում է։ Դա նրա ախտն է պապերից ժառանգած։ Ինչևէ։ Ես ունեի սրա ու նրա ձեռքում տոկոսով տված մի փոքրիկ գումար, որ խնայել էի ասեղիս ծայրով։ Շատ քիչ էր։ Բայց ունեի և՛ մի բարեկամ Շմուլ Մոզեր անունով։ Նա այժմ էլ կա, փառք աստծու, մահից ազատվեց։ Ճարպիկ մարդ է այդ Մոզերը, խելքը գլխին... Այն ժամանակ նա մի հասարակ միջնորդ էր...

— Սրա ու նրա համար ցորեն էր առնում ու ծախում,— լրացրեց Ֆեյլդմանը,— լեզու ունի, որ ածելու նման է կըտրում։ Հայրն էլ այնպես էր։

— Կաց, Ֆեյլդման, ես բոլորը կասեմ,— շարունակեց հարևանս։— Ահա՛, պարոն, միտքս հայտնեցի Շմուլ Մոզերին։ Իհարկե, իսկույն հասկացավ և ոգևորվեց։ Մենք վճռեցինք մրցել Ագրինցևի հետ։ Շմուլ Մոզերն իր ունեցած երեք հազար ռուբլին միացեց իմ փոքրիկ դրամագլխին և ինքն իսկույն ուղևորվեց Սիբիր։ Ես լուր տարածեցի, թե վճռել եմ խանութս քանդել, մեծացնել։ Եվ, իրավ, այս մասին բանակցում էի տանտիրոջ հետ։ Հարևանս ինձ հրամայեց «խելոք

կենալ»։ Ես կատակով ասացի. «Ձերդ մեծապատվություն, միշտ խելոք լինելը ձանձրալի է, ուզում եմ մի քիչ գժվել»։ Մի օր, տեսնելով, որ խանութիս ցուցանակը վերցրել եմ, պատվերներ չեմ ընդունում և լուսամուտները փոխել եմ տալիս, դարձավ ինձ.

— Այզելմա՞ն։

— Հրամայեցեք, Սերգեյ Պախոմովիչ։

— Դու ինձ հետ կատակ մի՛ անիլ։

— Ինչպե՞ս կհանդգնեմ, ձերդ մեծապատվություն։

— Ասում եմ, կատակ մի անիլ, ես գիժ մարդ եմ։

— Ի՞նչ եք ուզում,— հարցրի ես, տեսնելով որ այլևս շարժել եմ իմ գոռոզ հարևանի հետաքրքրությունը։

— Ուզում եմ, որ դու այստեղից կորչես, քանի որ դեռ գլուխդ չեմ ջարդել։

— Ո՞ւր կհրամայեք կորչել, ձերդ վաճառականական գերազանցություն։

— Ուր ուզում ես, թեկուզ Երուսաղեմ։ Ես արդեն զզվել եմ քո հոտից։

— Անցագիրս տվեք, գնամ։

— Ո՞րքան արժե։

— Հազար երկու հարյուր։

— Ախ, դու սատանայի ռեխ եբրայեցի։

— Այդ միայն տուգանքն է։

— Էլ ի՞նչ ես ուզում։

— Մի՞թե չգիտեք, ձերդ մեծապատվություն— խանութիս վերանորոգման ծախքը։ Ուղիղ ինը հարյուր ռուբլի էլ այն է։

— Ես քո դունչը կչախչախեմ, անիծյալ Հուդա իսկարյոտացի,— բռնկվեց Ագրինցևը։

— Չախչախեցեք, Սերգեյ Պախոմովիչ, բայց ամեն մի դունչ որքան էլ ատելի լինի, ուտել է ուզում։

Նա մի քանի օր դոռդոռաց, հայհոյեց պապերիս, նախահայրերիս, կրոնս, հավատս, բայց համաձայնվեց վճարել թե տուգանքը և թե ծախսերս։ Ինձ էլ միայն այդ էր հարկավոր։ Խանութս դատարկեցի, բայց ես իմ գործն արդեն տեսել էի, դիմացի տանը, ուղիղ Ագրինցևի դեմ ու դեմ վարձել էի չորս աչք։

Գործը շատ բարդ չէր, որ մեծ դժվարություն քաշեի։ Ապրանք շուտով ստացա Վարշավայից։ Իսկ ընկերս հրաշքներ էր գործում Սիբիրում։ Մի տարի անցած նա գրավեց մի քանի խոշոր առևտրական տներ և ձեռք բերեց մեծ վարկ։ Դա մի զարմանալի հաջողություն էր. ունենալով ընդամենը յոթ հազար ռուբլի դրամագլուխ, վայելում էինք հիսուն հազար վարկ։ Բայց հաջողությունը մեզ շմոլորեցրեց. վճռեցինք արթուն լինել և գործն ընդարձակել պահանջի համեմատ։ Բախտը ժպտում էր մեզ, մենք շատ շուտով անցանք քաղաքի հայտնի վաճառականների շարքը։ Ա՜խ, երջանիկ օրեր, որ այնքան թանկ արժեցաք ինձ ապագայում...

Հրեան սխուր հառաչեց և ձեռով դրստեց իր լայն ճակատը։

Կառախումբը կանգ էր առել։ Մի քանի ճամփորդներ դուրս եկան. նրանց փոխարինեցին նորերը։ Եկան, ի միջի այլոց, նաև երկու նիհար և խիստ միմյանց նման երիտասարդներ լայն վերարկուներով և փոքր գլխարկներով։ Դեպ անցան, դեն անցան և վերջը կանգնեցին անցքում ու սկսեցին զննել ուղևորներին։

Ֆեյլդմանը կապկի արագությամբ մոտեցավ մեզ և շշնջաց.

— Գրպանահատներ են, որսի են եկել։

Վերջապես, աղմուկը հանդարտվեց. հարևանս շարունակեց։

— Ագրինցևը սկզբում մեզ վերաբերվում էր արհամարհանքով։ «Տե՛ս, այդ քոսոտ երուսաղեմցիները ուզում են մրցել Ագրինցևի հետ։ Չգիտեն, որ կարող եմ կոշկիս քթով նրանց կոյանոց շպրտել»։

Ճիշտ այս խոսքերն էր նա ասել իմ բարեկամներից մեկին։ Եվ ուշադրություն չէր դարձնում մեզ վրա, մինչև անգամ մեր խանութի կողմը չէր նայում։ Իսկ ես, ընդհակառակը, առաջվա պես խոնարհ էի ու համեստ։ Գլուխ էի տալիս Ագրինցևին ամեն անգամ պատահելիս այնպես, ինչպես մենք հրեաներս միայն սովոր ենք գլուխ տալ։ Հիշում էի հանգուցյալ հորս խոսքերը. «Տե՛ս, չլինի թե կյանքումդ շահես որևէ քրիստոնեի թշնամություն։ Միշտ խոնարհվիր,

միշտ գետնին նայիր, այդ քեզ չի ստորացնիլ, բայց կպաշտպանե փորձանքներից»։

Եվ խոնարհվում էի։ Միևնույն ժամանակ, աշխատում էի ամենայն եռանդով։ Այժմ հասարակ դերձակի գլուխը ներկայացնում էր խոշոր հաշիվների և պես-պես ծրագրերի շտեմարան։ Շմուլ Մոզերն ինձանից ավելի հանդուգն էր. միշտ դրդում էր լայնացնել ու լայնացնել գործը։ Ապրուստիս մեջ շատ քիչ փոփոխություն էի մտցրել։ Հագնվում էի առաջվա պես համեստ, բայց այլևս ինքս չէի կարում ինձ համար. ժամանակն ավելի թանկ արժեր։ Ընտանիքս այժմ կենում էր երկուսի փոխարեն չորս սենյակում։ Չէի խմում, չէի շռայլում, կանանց վրա աչք չունեի։ Բայց զավակներիս ուսման համար ոչինչ չէի խնայում։ Այժմ մեծ որդիս համալսարանումն է։

Սկսեցի, հակառակ հարևանիս սովորության, ապառիկ ապրանք բաց թողնել։ Բայց, իհարկե, գիտեի ում։ Դրա համար ունեի առանձին ցուցակ, որից դուրս ամենքին մերժում էի։ Դա եղավ մրցման առաջին միջոցը Ագրինցևի դեմ։ Ինքս ոտքի վրա մնալու համար պատրաստ էի նրան գլորել գետին։ Երկուսս միասին միևնույն շրջանում, միևնույն փողոցում, միևնույն առուտուրը չէինք կարող վարել։

Կար և մի ուրիշ միջոց— քաղաքավարություն գնողների հետ։ Վա՜յ այն վաճառականին, որ չգիտե ժամանակին ժպտալ, ժամանակին տխրել, ժամանակին ձևանալ բթամիտ, նայելով իր գնողի տրամադրությանը։ Եթե գնողդ ցորենի առևտրական է, ասա՛, որ Մովսիսի ստացած պատգամների մեջ այդ առուտուրն էլ կա. եթե պետական պաշտոնյա է, առանց նրան երկրագունդը կդադարի պտտել արեգակի շուրջը, եթե ոստիկանապետ է, թող կորչեն բոլոր հեղափոխականները, որ կործանեցին առուտուրը. իսկ եթե զինվորական է, թող տարտարոսը գլորվի նենգամիտ Անգլիան, որ միշտ դավեր է լարում «մեր հայրենիքի» դեմ և այլն, և այլն։ Եվ ես այսպես էի անում։

Մյուս կողմից, ո՛չ մի կոպտություն ինձ չէր շփոթեցնում կամ վիրավորում։ Տեսնում ես, որ գնողը, հետդ խոսելիս, երեսիդ էլ չի նայում, խոսում է եզակի դեմքով, ինչպես

սպասավորի հետ։ Գրո՞ղը տանի, ով գիտե, ինչ-որ նախկին սպա է և կամ պաշտոնաթող և գողության մեջ բռնված ինտենդանտ, կամ սրա պես մի խրտվիլակ։ Գոհություն աստծու, այսպիսիների թիվը մեծ է սքանչելի Ռուսիայում։ Ես մտածում էի՝ թող գոռոզանա, փքվի, մի օր կտրաքվի։ Ես կշոյեմ առայժմ նրան, միայն թե ինձանից մի բան գնե։ Եվ «ձերդ պայծառափայլություն, ձերդ գերազանցություն, ազնվություն» և այլն, ինձ համար այնքան սովորական էին, որքան ռուս գինվորի բերանում «լսում եմ»։ Սակայն չնայելով այս բոլորին, երբեմն լսում էի այնպիսի վիրավորիչ խոսքեր, որոնք արյունս էին բորբոքում։ Օհ, քանի՞-քանի անգամ են երեսիս շպրտել— «անհավատ, հեթանոս, կապիկի դունչ, քոսոտ շուն» և այլն, և այլն։ Այզելման, կուլ տուր մանկությունից սկսած մինչև գերեզման, որովհետև կուլ է տվել քո հայրն էլ, քո պապն էլ, քո ամբողջ ցեղը, դարե՞ր շարունակ։

— Ա՜խ, քրիստոնյա պարոն,— գոչեց նա, հանկարծ բորբոքվելով և տեղից վեր թռչելով,— երկու հազար տարի է մեզ հայհոյում եք և անարգում, ի՞նչ եք առաջացրել, ասացեք։ Եվ ո՞վքեր են անարգում, Աբրահամի և Մովսիսի աստվա՞ծ, բոլոր աստվածներից վեհը։ Մարդկության տականքը—կաշառակեր պաշտոնյաները, գող գանձապետները, լրտեսները, արբշիռները, որդերը, աղբակույտի հանճերը, կոյանոցի սողունները։ Արարածնե՞ր, որոնցից գեհենը պիտի գարշի և Կայենը զազրի։ Մարդասեր Եհովա, գոռոզանում են իրենց խաչով, չեն ուզում հասկանալ, որ այդ խաչը մենք ենք կառուցել։ Հալածում են մեզ մի մարդասերի անունով, և չեն ուզում հասկանալ, որ նա ինքն արյան գնով կռվել է հալածանքի դեմ։ Ես հարցնում եմ. ո՞ւր էին այդ քրիստոնյաները, երբ մենք պաշտում էինք իսկական աստծուն, երբ դավանում էինք կրոններից բարձրագույնը, երբ ունեինք իմաստուններ և մարգարեներ... Գլուխներ ենք տվել աշխարհին, որոնց միշտ պիտի երկրպագություն տաք, ո՞վ գոռոզներ և ամբարտավաններ։ Ահա՛ հենց այժմ, սկսվել է մի մեծ շարժում, որ պիտի տակնուվրա անի մարդկության կյանքը։ Ա՜խ, դուք կարծում եք, որ մենք վաճառականներ լինելով՝ իսկի բան չենք հասկանում սոցիալիզմից։ Ո՞վ է նրա առաջին մարգարեն։ Դարձյալ մի հրեա։ Իսկ սիոնի՞զմը։ Ա՜խ, այժմ այլևս չե՞ք ծաղրում, ով քրիստոնյաներ։ Սպասեցեք, ամբարտավաններ, եթե հին Երուսաղեմը չգրավենք, նորը կկառուցենք...

— Մի միլիարդ չորս հարյուր միլիոն դրամագլուխ ունեինք Ամերիկայում և Անգլիայում,— մեջ մտավ Ֆեյլդմանը,— թող այժմ էլ ասեն, թե հրեան գծուծ է, հի՛, հի՛, հի՛։ Մենք կըստիպենք ձեզ հարգել մեզ, կստիպենք, հի՛, հի՛, հի՛...

— Կաց, Ֆեյլդման ,— փոխեց եղանակը Այզելմանը,— ես բոլորն ասացի։ Ա՛հ, ներեցեք, պարոն, սիրտս լիքն էր։ Գիտեմ, դուք այն քրիստոնյաներից չեք, որոնց հետ խոսելն երկյուղալի է։ Այնպես չէ՞, Ֆեյլդման, հայերը մեր բարեկամներն են, մենք պատմական եղբայրներ ենք։ Ագրինցև,— գոչեց նա, նորից տաքանալով,— հիշում եմ այսօրվա պես այն վիրավորանքը, որ դու ինձ հասցրիր։ Պարոն, լսա՞ծ եք Ուռուսով իշխանների մասին։ Նշանավոր մարդիկ են։ Մի օր նրանցից մեկին ծախեցի մի օձիք և մի զույգ թևեր հազար երկու հարյուր ռուբլով։ Նա Ագրինցևի կթան կովն էր, իմ ձեռքն ընկավ, որովհետև Ագրինցևը չէր կարողացել լավ շոյել նորին իշխանության սիրտը։ Բայց օհ, այդ հազար երկու հարյուր ռուբլին ինձ որքա՞ն տանջանքներ տվեց։ Պատմեմ, տեսեք։ Հենց նույն օրերը ես ընտրվել էի տեղական ժողովարանի անդամ։ Երեկո էր. ես կնոջս և մի երկու ծանոթներիս հետ ընթրում էի սեղանատանը։ Մեզանից ոչ հեռու, մի ուրիշ սեղանի մոտ նստած էր Ագրինցևն իր ծանոթների հետ։ Նա հարբած էր և բարձր ձայնով պարսավում էր հրեաներին. այսպես են, այնպես են։ Սովորական զրպարտությունն է՞ր։ Մեր սեղանի մոտ կար մի տաքաբյուն փաստաբան։ Չհամբերեց մարդը, բողոքեց։ Եվ նրա ու Ագրինցևի մեջ վեճ բացվեց։

— Քեզ ով է խոսեցնում, որ մեջ ես ընկնում,— գոռաց Ագրինցևը։

— Դուք, պարոն,— ասաց սեղանակիցս,— ի՞նչ իրավունքով եք զրպարտում մեզ։

— Լռի՛ր, քոսոտ ջհուդ, լռի՛ր։

Մենք վրդովվեցինք։ Ագրինցևը դարձավ ինձ.

— Ա՜, Այզելմա՜ն, դու էլ այստե՞ղ ես։ Ժողովարանի անդամ ես ընտրվել։ Շնորհավորում եմ։ Բայց հեռո՛ւ, հեռո՜ւ նստիր մեզանից, հոտ է փչում։

— Հետաքրքրական է իմանալ,— ավելացրեց Ագրինցևի ընկերներից մեկը,— որ նույնպես հարբած էր,— հրեուհիները երբևէ մաքրո՞ւմ են իրենց եղունգները։

Կինս գունատվեց։ Նա կուշաթափվեր, եթե ես նրան ժամանակին չտանեի դահլիճ։ Երբ մենակ վերադարձա սեղանատուն, տեսա, որ վեճը սուր կերպարանք է ստացել։ Ագրինցևը ոտքի էր կանգնել շիշը ձեռքին և սպասում էր հարձակվել սեղանակիցներիս վրա։ Ես միջամտեցի։ Եվ ահա՝ այդ միջոցին, պարոն Ագրինցևն ինձ ապտակեց։ Օհ՜, այսօր էլ երեսս այրվում է այդ հրապարակական վիրավորանքից։ Լսո՞ւմ եք, պարոն, նա ապտակեց ինձ հարյուր մարդկանց և մի այդչափ էլ կանանց ներկայությամբ։

— Եվ դուք չպատասխանեցի՞ք,— հարցրի ես հանգիստ։

— Ա՜խ, պարոն, ինչպե՞ս պատասխանեի,— գոչեց նա, դարձյալ ոտքի ելնելով,— եթե շունը կծում է, մի՞թե այդ նշանակում է, որ մարդն էլ պիտի կծի։ Ես, իհարկե, բողոքեցի հասարակությանը, դիմեցի դատարանին։ Փաստաբանը լրագիրներում տպեց նամակ։ Եվ վերջ ի վերջո ես ինքս ստիպվեցի վերջ տալ վեճին, վախենալով հետևանքներից։

Հրեան մի քանի վայրկյան լռեց իր հուզմունքը զսպելու համար. ապա շարունակեց.

— Ագրինցևը քանի գնում, այնքան ավելի կատաղում էր։ Արդեն ես քշում էի նրան ասպարեզից։ Օ՜օ, Շմուլ Մոզեր, Շմուլ Մոզեր, դու այժմ սնանկ ես, անցյալ պասկեքին կոպեկ չունեիր, որ մորդ համար «մացա» գնեիր։ Բայց համոզված եմ, որ մի օր դու կդառնաս Մորգան կամ Շվաբ և ամբողջ հարավային Ռուսիայի առուտուրը ձեռքումդ կունենաս։ Օհ՜, Շմուլ Մոզեր, Շմուլ Մոզեր, դու վաճառականության Սողոմոնն ես։ Դու էիր, որ շարունակ հորդորում էիր ինձ ընդարձակել մեր գործերը։ «Տես, ասում էիր, ես այդ անիծյալ քրիստոնյային պիտի մերկացնեմ և փողոցները ձգեմ։ Նա

անարգում է իմ ազգը, ընտանիքը, հավատը, իմ բոլոր սրբությունները։ Ես նրան պիտի կործանեմ»։

Եվ կործանում էինք, պարոն, կործանում էինք այդ Սերգեյ Պախոմովիչ Ագրինցևին։ Օհ՜, այնպես արագ, որ ես ինքս էլ զարմանում էի։ Նա ատամները կրճտում էր և երկար փառահեղ միրուքը փետում։ Մենք նրան հարկադրել էինք արդեն ապրանքը ապառիկ բաց թողնել։ Բայց ամեն մարդու բան չէ, պարոն, ապառիկ ծախելը։ Ողորմելին չգիտեր, որ շատ անգամ գոռոզ արտաքինի և շքեղ հագուստի տակ թաքնված է ինքը չքավորությունը։ Եվ տալիս էր այդպիսիներին ու կորցնում էր անիրավը...

Այնուհետև մենք նրան ստիպեցինք ապրանքի գինը իջեցնել 20 տոկոսով։ Այս էլ մի մեծ հարված էր նրա համար, որովհետև մենք գիտեինք ապրանքն ավելի էժան գնել և ավելի էժան տեղափոխել։ Մի խոսքով, առաջին անգամ նա կորցրեց տասնհինգ հազար և այնուհետև սկսեց խելքն էլ կորցնել։ Իսկ ծախսերը չէր պակսեցնում։ Եվ ինչպե՞ս էր ծախսում, աստված իմ։ Սեփական կառք ուներ, Մոսկվայից բերել տված, որ սև մարմարիոնի պես էր փայլում արեգակի տակ։ Նժույգներ ուներ, որոնցից ամեն մեկն արժեր հազար հինգհարյուր ռուբլի։ Եվ խմում էր. սիրում էր ուրիշներին հրավիրել։ Մի երեկո կլուբում երաժիշտներին և ծառաներին հարբեցրեց կոնյակով։ Իսկ կինը, տեր աստված, կինը, մի սաժեն բարձրություն ուներ, մի արշին լայնություն, փոքրիկ նեղ աչքերով, կատարյալ մոնղոլուհի։ Շատ էր սիրում մեծամեծներին։ Ամիսը մի կամ երկու անգամ երեկույթներ էր սարքում։ Ինքը նահանգապետի կինը չէր մերժում նրա հրավերը։ Դե, իհարկե, այդպիսի մի բարձրաստիճան հյուրին խում չէր կարելի տապակած ձկով կամ երշիկով հյուրասիրել։ Շմուլ Մոզերը, ձեռքերը միմյանց քսելով, հրճվանքով կրկնում էր։

— Բարեկամդ անդունդն է գլորվում...

Եվ գլորվում էր։

Նույն ժամանակներն ես օր ու գիշեր հանգիստ չունեի։ Որքան հաջող են գնում հրեայի գործերը, այնքան նա քիչ է քնում։ Զարթնում էի, պարոն, վեց ժամին, յոթին արդեն մա-

գազինումս էի։ Կողպում էինք տասներկու ժամին։ Իսկ Ագրինցևը փաշա էր. գալիս էր մագազին տասնմեկից ոչ առաջ և երեկոյան ութ ժամին արդեն թղթախաղի սեղանի մոտ էր։ Սիրուհիներ պահելը վաղուց գիտեինք։ Դեռ մի փոքրիկ սկանդալ էլ պատահեց, որը ծածկելու համար նա կաշառեց ոստիկանապետին։ Գործակատարների հաշիվները չէր քննում։ Եվ գողանում էին անիրավները։

— Ես գնում եմ, Այզելման,— ընհատեց հարևանիս խոսքը Ֆեյլդմանը, երբ կառախումբը կանգ առավ։

Ծերուկը բեռնավորվեց իր բաղմաթիվ կապոցներով և մեզ գլուխ տալով չբացավ։

— Այժմ,— շարունակեց հարևանս,— ես մոտենում եմ պատմությանս կորիզին։ Լավ լսեցեք, պարոն, տեսեք ձեր քրիստոնյաներն ինչպես են վրեժ առնում մեզնից։ Ագրինցևն այժմ հարբում էր շուտ-շուտ։ Ոչինչ, այդ սովորական բան է Ռուսիայում, չէ՞ որ նա տարենը մի քանի անգամ Մոսկվա էր գնում։ Լսում էի նրա գոռոցները գործակատարների վրա։ Եվ ի՞նչ խոսքեր, աստված իմ։ Երբեմն մինչև անգամ ծեծում էր խեղճերին։ Բայց պետք է խոստովանել, հետո փող էր բաշխում նրանց։

Մի օր ճաշից հետո, Ագրինցևը հանկարծ մտավ մեր խանութը։ Առաջին անգամն էր պատիվ անում մեզ։ Նկատեցի իսկույն, որ բարեկամս բավական թրջված է և մի քիչ օրորվում է։ Գործակատարներիս աչքով նշան արի զգույշ մնալ։ Իսկ Շմուլ Մոզերին խնդրեցի բնավ չխոսել։ Շատ թունավոր լեզու ունի անպիտանը։ Բարեբախտաբար, օրվա այն միջոցին էր, երբ գնորդներ չեն լինում։

Ագրինցևը, ներս մտնելով, կանգ առավ դռների մոտ, ձեռքերը դրեց պանթալոնի գրպանները, հետո փորը դուրս ցցեց և արտասանեց.

— Զալինկին Զուխտո՞ւմ։

Իբր թե ծաղրում էր մեր աղավաղված եբրայերենը, որով երբեք չէինք պարծենում։ Ես պատասխանեցի.

— Милостиво просим!

— Այզելման, ուզում եմ խոզաբունդ տեսնել։

— Համեցեք,— ասացի ես քաղաքավարի,— բնավ չվրշ-

տանալով նրա վիրավորական խոսքից։— Շնորհ արեք ներս գալու։

— Օ՜օ, էլեկտրական լո՞ւյս։ Ո՞ր ժամանակից։

— Արդեն մի քանի ամիս է։

— Այդ ի՞նչ իրավունքով։

— Ինչպես թե ի՞նչ իրավունքով, Սերգեյ Պախոմովիչ։

— Հարցնում եմ, ո՞վ է քեզ իրավունք տվել։

— Փողը և իմ ցանկությունը,— պատասխանեցի ես։

Ագրինցևը ծիծաղեց։

— Աա՜, ուրեմն դու փող էլ ունես, ցանկություն էլ։ Իսկ ես կարծում էի, որ միայն գողացած ապրանք ունիս։

— Ինչպե՞ս թե գողացած ապրանք,— գոչեցի ես,— իմ խանութում այդպիսի բան չկա։

— Ուրեմն ո՞րտեղ ես թաքցնում իմ ապրանքը, ասա՜. դո՞ւ չես սովորեցնում գործակատարներիս, որ մաշկերս գողանան և քեզ ծախեն, աա՜,

Այդ մի այնպիսի անամոթ զրպարտություն էր, որին չէի կարող դիմանալ։ Ուստի տաքացա և Ագրինցևին անվանեցի ստախոս։

— Աա՜, Իսրայելի շուն,— գոռաց նա այնպես, որ հարևաններս հավաքվեցին,— աա՜, սատկած կատու, խոզի փորոտիք, ես քո ատամները կջարդեմ, տո՜ւր ապրանքս, տո՜ւր, ասում եմ։

Հարևաններս միջամտեցին և աշխատեցին խաղաղեցնել նրա զայրույթը։ Ամենքը հավատացրին նրան, որ «Այզելման և Մոզեր» առևտրական տունն երբեք չի ստորացնիլ իրան գողացած ապրանք գնելու չափ։

Ագրինցևը սթափվեց մի փոքր։ Ես լուռ էի, որովհետև նահանգապետը նրա կողմն էր, իսկ ես մի հրեա։ Սկսվեց մի ուրիշ տեսարան։ Ագրինցևը կամեցավ ծխել և լուցկի պահանջեց։

Ես ունեի մի գործակատար։ Վիտալի Ռաբինովիչ էր անունը։ Ոսկի էր այդ երիտասարդը, մազալինիս հոգին, աչ թևս։ Խելոք էր նա, պարոն, ընդունակ, եռանդուն։ Միշտ կարդում էր ընտիր գրքեր։ Խեղճ մոր միակ զավակն էր։ Ա՛խ, ես նրան սիրում էի հարազատ որդուս չափ։ Կորա՜վ

թշվառը, իր անձը զոհեց ինձ, անպիտանիս։ Ա՜խ, ներեցեք, ես չեմ կարող նրան հիշել առանց արտասուքի։

Հրեայի խոշոր աչքերից դուրս ցայտեցին երկու կաթիլ և գլորվեցին այտերի վրա։ Նա ոտքի կանգնեց՝ իր խորին հուզմունքը զսպելու համար։

Անցան մի քանի լուռ և ծանր րոպեներ։ Հրեան սրբեց աչքերը, զսպեց իրան և նորից նստեց։

— Ներեցեք,— ասաց նա,— ես շատ էլ թույլ մարդ չեմ, բայց այս մեկ կորուստը ինձ համար ծանր էր։ Ռաբինովիչը չուներ հալածանքներ քաշած հրեայի փորձառությունը և սառնությունը։ Նա դեռ չէր զրկվել ինքնասիրության կրքից, ինչպես մեզանից շատերը։ Հպարտ էր, սիրում էր իր ցեղակիցների ոտնատակ եղող պատիվը։ Դժբախտաբար հենց նա առաջ եկավ և լուցկի տվեց։ Վառելով իր թանկագին սիգարը, Ագրինցևը նայեց, ոտքից մինչև գլուխ Ռաբինովիչին արհամարհական հայացքով և ասաց.

— Դու է՞լ ջհուդ ես։

— Ոչ, պարոն,— պատասխանեց Ռաբինովիչը, գլուխը հպարտ բարձրացնելով,— ես հրեա եմ։

— Այդ միևնույն աղբն է։

— Ներեցեք, պարոն, միևնույնը չէ։ Ջհուդներ կան բոլոր ազգերի մեջ, իսկ մենք հրեաներ ենք։ Վերջապես, բավական է, պարոն, հեռացեք, ես իմ տիրոջ պես չեմ կարող տանել ձեր վիրավորանքները։

— Ա՜խ, ի՞նչ,— գոռաց Ագրինցևը,— չե՞ս կարող տանել։ Ա՜խ, ուրեմն դու հեղափոխական ես։ Ախ դո՛ւ գարշելի, հոտած։

— Պարոն,— չկարողացավ իրեն զսպել Ռաբինովիչը,— գարշելին դուք եք և անարգ հոտը ձեր բերանից է գալիս։ Փորձեցեք շարունակել ձեր հայհոյանքը, և ես ցույց կտամ ձեզ...

Այս ասելով, Ռաբինովիչը ձեռը տարավ գրպանը։ Շմուլ Մոզերը բռնեց նրա թևից և տարավ մագազինի խորքը։ Ես կարծում էի, որ Ագրինցևը կհարձակվի նրա վրա և տեղն ու տեղը կխեղդի նրան։ Բայց այդ չպատահեց։ Հետո միայն իմացա, որ այդ մարդկանց խրոխտությունը իրենց քաջություն

թյանը չի համապատասխանում։ Նրանք քաջ են միայն խեղճերի համար։ Ռաբինովիչի ատրճանակը սանձահարեց նրա լրբությունը։ Այնուամենայնիվ, վերջին խոսքը նա ասաց, դառնալով ինձ.

— Ես, ինչպես իմ տերության հավատարիմ հպատակ և ուղղափառ քրիստոնյա, պարտքս կհամարեմ հայտնել ում հարկն է։

— Ի՞նչ հայտնել, պարոն,— հարցրեց Շմուլ Մոզերը։

— Այն, որ ձեր այս խոզաբունը լիքն է հեղափոխականներով։ Ա՜խ, անպիտաններ, ուրեմն հայր Վլադիմիրը զուր չի ասում, թե դուք խորշում եք ուղղափառներից։ Դուք «գոյ» եք անվանում մեզ, ձեր թալմուդը մեզ պիղծ է կոչում։ Ա՜խ, մենք պի՞ղծ ենք։ Եթե պիղծ ենք, ապա ինչո՞ւ համար եք ձեր պասեքին գողանում մեր երխաներին, սիրտը ծակում և արյունը քամում, որ ձեր «մացա»-ին խառնեք, ա՜խ, ասացե՛ք։

Ո՞վ կարող էր այդ խելացնորին համոզել, որ այդ բոլորը զրպարտություն է։ Նա գոռում էր ու պնդում ասածը։ Վերջապես, հարևաններս ազատեցին մեզ նրանից։

Հետևյալ օրը խուզարկեցին ոչ միայն Ռաբինովիչին, այլև ինձ, Շմուլ Մոզերին, բոլոր գործակատարներիս թե՛ տանը և թե մագազինում։ Իհարկե, ոչինչ չգտան։ Բայց այդ բանը բավական վնաս տվեց մեզ։ Քաղաքական ահաբեկությունը այն ժամանակ մեծ էր, մարդիկ վախենում էին իրենց ստվերից։ Ոչ միայն գնողներս պակասեցին, այլև բանկերում սկսեցին մեզ վրա ծուռ աչքով նայել...

Շմուլ Մոզերն ինձ մխիթարում էր.

— Մի՛ վախենար, մեր բանը շուտ կդրստվի, բայց Ագրինցևի գործերը շատ վատ են, քանի որ այդպիսի միջոցների է դիմում։

Նա իրավունք ուներ. շուտով այդ երևաց։ Հիմարությունն առհասարակ ինքն է իր համար փոս փորում։ Ագրինցևը, տեսնելով, որ մեզ չբանտարկեցին, լուր տարածեց, թե մենք կաշառել ենք ոստիկանությանը։ Կաշառելը, պարոն, հրեաների քաղաքացիական պարտականություններից մեկն է։ Բայց քաղաքական գործերում մենք զգույշ ենք...

Լուրը հասավ ոստիկանապետին, հետո նահանգապե-

տին։ Երկուսն էլ դադարեցին այցելել Ագրինցևի տունը, մինչև անգամ ընդհատեցին նրա հետ ամեն մի ծանոթություն։ Այս մի մեծ հարված էր Ագրինցևի համար։ Լսեցի, որ նա մի քանի անգամ գնում է նահանգապետին բացատրություն տալու, չի ընդունում։ Մեջ է ընկնում պատվարժան ավագ քահանա Վլադիմիրը, և հազիվ կարողանում է ոստիկանապետին միայն հաշտեցնել «պատրիոտ» Ագրինցևի հետ։ Այդ հայր Վլադիմիրն էլ մի պատիժ էր տեղական հրեաների համար։ Ամեն կիրակի իր քարոզներով գրգռում էր ռուս ամբոխին մեր դեմ։ Եվ հաջողություն ունեցավ։

Ագրինցևը դիմեց մի ուրիշ միջոցի, իր գործակատարների բերանով տարածեց, թե ես ու Շմուլ Մոզերը լրտեսներ ենք։ Մի օր ինձ մոտ եկան երկու անծանոթ երիտասարդներ և բացատրություն պահանջեցին։ Մեջ ընկավ Ռաբինովիչը և նրանց բավարարություն տվեց։ Իհարկե, մենք կարողացանք մաքրել մեր անունը, բայց չէ՞ որ այս տեսակ զրպարտություններն անհետևանք չեն մնում։ Գտնվեցին թեթևամիտներ, որ մեզնից երես դարձրին։

Բայց այդ մեր գործին վնաս չբերեց։ Վերադարձան մեր բոլոր հին գնորդները, երբ հասկացան, որ մենք կրկնակի զրպարտված ենք։

Նույն միջոցին Ագրինցևի գործերը քայքայվել էին այնպես, որ մեծ խելք էր հարկավոր նրանց ուղղելու համար։ Այնինչ Ագրինցևը գրկվել էր իր մեծ գլխում անփոփված փոքրիկ ուղեղի մնացորդից էլ։ Դուրս եկավ, որ այդ մարդը պարտքերի մեջ խրված է ավելի, քան մենք կարող էինք սպասել։

Մի օր նրա մուրհակը բողոքի ենթարկվեց։

Դա ողբերգության սկիզբն էր. շարունակությունը շուտով տեսանք։ Մարդը կորցնում էր իր վարկը արագ-արագ։ Ֆաբրիկաներն արդեն կրճատել էին նրա կրեդիտը, իսկ մեկը միանգամայն մերժել էր։ Այս բոլորը մենք շատ լավ գիտեինք և նպաստում էինք։ Աշնան սկզբին նա նոր ապրանք չստացավ, իսկ հինը ամառվա ընթացքում կերվել էր ցեցից։

Ագրինցևն անզոր էր կանգնել անկման կես ճանապարհին։ Հարբում էր նա այժմ բոսյակի պես։ Մագազինը փոխեց

կնոջ անունով, որովհետև ինքն արդեն սնանկ էր ճանաչված։ Կառքերն ու ձիերը ծախվեցին։ Կինը ամաչում էր տնից դուրս գալ կամ հյուրեր ընդունել։

Ագրինցևն երբեմն կանգնում էր իր անցյալ փառքի դրոների առջև և ձեռքով ինչ-որ սպառնալիքներ ուղարկում դեպի մեր կողմը։ Ես դեռ վախենում էի նրանից, և այժմ ավելի, քան առաջ։ Հուսահատությունը սարսափելի է, պարոն։ Ահա՛ ինչու չէի կարողանում խղճալ այդ մարդուն։

Խղճա՞լ, ոչ, նա շատ էր անարգել մեզ։ Մի օր Շմուլ Մոզերն ասաց.

— Այզելման, մենք արդեն վարձատրված ենք։

— Ի՞նչ ես ուզում ասել,— հարցրի ես։

— Ագրինցևը խանութը փակում է վաղը։

— Տեսնում եմ։ Հետո՞։

— Նա կորած է։ Անցյալ շաբաթ մեր սինագոգը շուն գրոցողների մեջ տեսել են և՛ Ագրինցևին։

Այդ արդեն ես չգիտեի։

Անցավ կես տարի ևս։ Ագրինցևը չքացել էր ասպարեզից։ Բայց մենք նրան չէինք մոռացել, և ինչպե՞ս կարող էինք մոռանալ մի մարդու, որ դեռ մի քանի տարի առաջ առաջնակարգ քաղաքացիների շրջանում էր։ Իսկ ա՞յժմ... այժմ, ով գիտե, ո՞ւր։ Մի օր, հարգելի պարոն, պատահեց հետևյալը։ Մադմուազել և դուք, պատանի պարոններ, լավ լսեցեք, զվարճալի է։ Որքան շատ են տանջվում ծնողները, այնքան պիտի խելոքանան զավակները։ Հենց այս է պատճառը, որ հրեան ծեր է և խոհեմ օրորոցից սկսած։

Այո, պարոն, պատահեց այն, որ ես ամբարտավանությունը ցեխի մեջ տեսա։

Նստած էի մագազինումս։ Շմուլն ու գործակատարների, մի մասը գնացել էին ճաշելու։ Հանկարծ դռների առջև հայտնվեց մի մարդկային կերպարանք։ Այնքան այլանդակ էր նա, որ ես առաջին րոպեին չճանաչեցի։ Կարծեցի թափառական մուրացկաններից է, որոնց դեմքը հարատև սովը այնքան աղավաղում է։

Հարգելի պարոն, ես եղել եմ Եվրոպայի համարյա բոլոր երկրներում, ճանաչում եմ Ռուսիայում կենող բոլոր ազգու-

թյունները և կարող եմ ասել, որ ոչ մի ազգ այնքան շուտ չի հաշտվում ճակատագրի հարվածների հետ, որքան ռուսը։ Երեկվա հարուստը այսօր կառապան է, և այս նրա համար, կարծես սովորական բան է։ Երեկ նա շամպայն էր խմում, այսօր, փույթ չէ, սիվուխա կխմի։ «Ոչինչ»— ասում է նա և շուտով ամեն բան մոռանում։

Դուք արդեն գուշակեցիք, որ հյուրս Ագրինցևն էր։ Հագնված էր նա այնպես, ինչպես, տեսած կլինեք, հագնվում է օղիի գերի ռուս փոքրիկ չինովնիկը, երբ պաշտոն չունի և թափառում է դատարանների առջև, սրան ու նրան իր ծառայությունն առաջարկելով։ Այն տարբերությամբ, որ չինովնիկի անցյալից մնացել է «ֆուրաշկայի» կոկարդն ու կարմիր ժապավենը, իսկ Անգրինցևի հարստությունից՝ մի մուշտակ, հնամաշ, օձիքի մազերը թափված, փեշերն ու կուրծքը կեղտի բծերով ծածկված։

Նա հարբած չէր այդ օրը։ Դեմքը լուրջ էր, եթե կարող է այդ լուրջ լինել, ինչ ասեմ, մի մեծ կապույտ-կարմրագույն ուռուցք։

— Բարով, Այզելման,— ասաց նա օղիի քայքայված ձայնով, որի մեջ, սակայն, դարձյալ զգացվում էր արհամարհանք դեպի ինձ։

— Պատիվ ունեմ, Սերգեյ Պախոմովիչ,— պատասխանեցի ես առանց հեգնության, այնպես, որ կարծես, ոչինչ փոփոխություն չէր պատահել նրա ճակատագրի մեջ։ Ես մինչև անգամ չզլացա ոտքի կանգնել այդ փողոցային շրջմոլիկի համար։

— Այզելման, ես եկել եմ քեզ մի բան առաջարկելու։

Ասաց պարոնը և ձգվեց աթոռի վրա, ոտներն երկարացնելով և ձեռքերը խոթելով պանթալոնի գրպանը։

— Հրամայեցեք։

— Առաջինը՝ արի հաշվենք, այսինքն՝ դու ինձանից ներումն խնդրիր, և ես կներեմ։ Աստված վկա, կներեմ։

Լսո՞ւմ եք, պարոն, դեռ ես պիտի նրանից ներումն խնդրեի, դեռ նա պիտի ինձ ներեր։

Գործակատարներս, քիթ-քթի տալով, սկսեցին ծիծաղել։

— Նո՞ւ, խնդրիր,— կրկնեց նա,— ուզզափառ ռուսը

չար չէ։ Որքան էլ կատաղի, սիրտը բարի է, ոխ պահել չգիտե։ Ես անցյալը մոռանում եմ, դու էլ մոռացիր, աա՞...

— Սերգեյ Պախոմովիչ, ես ձեր դեմ ոխ չունիմ, կարող եք հանգիստ լինել,— ստեցի ես մի փոքր։

— Աա՜, այդպե՞ս, շատ լավ, շատ լավ։ Ուրեմն, ես քեզ ներում եմ։ Թողնենք այդ։ Դատարկ բան է։ Չարժե խոսել անցյալի մասին։ Մեր կյանքը գետ է, երբեք ետ չի դառնում, մեր հոգին էլ այսպես պիտք է լինի։ Աա, դու ուզում ես ասել, որ քեզ մի քանի անգամ հայհոյե՞լ եմ։ Ի՞նչ կա. այժմ դու կարող ես ինձ հայհոյել։ Կլսեմ։ Դրանից իմ հոր ոսկորները գերեզմանում տրեպակա չեն պարիլ։ Այզելման, ես եկել եմ առաջարկելու ահա թե ինչ. արի ընկերանանք և միասին տանենք մեր գործը։ Աա՜, ի՞նչ կասես։

— Ընկերանա՜նք, դու և ե՞ս, Սերգեյ Պախոմովիչ։

— Այո՜, հենց ես ու դու, ի՞նչ կա։

Մարդը կատակ չէր անում. ես էլ լուրջ խոսեցի։

— Բայց ես մի պիղծ ջհուդ եմ, Սերգեյ Պախոմովիչ, մի կեղտոտ և հոտած անհավատ։ Եվ ինչպե՞ս դուք, ուղղափառ քրիստոնյա, կարող եք ձեզ ստորացնել, ընկերանալով ինձ հետ։

— Դե, լա՜վ, մի ծաղրիր ինքդ քեզ, լավ չէ. ազգային պատվի զգացում ունեցիր։

— Բայց ի՞նչ կասի հայր Վլադիմիրը, եթե ես ունենամ ազգային պատվի զգացում։ Նա չի՞ գժվի, երբ մեր խանութի ճակատին կկարդա միասին գրված «Ագրինցև և Այզելման»։ Աա՞, նա ձեզ կանիծի, այդ բարեպաշտ քրիստոնյա հայրը...

— Հայր Վլադիմիրին ես ուղարկեցի սատանաներին, այլևս նա իմ տուն չէ գալիս։

— Հասկանում եմ. այլևս փորը չի կարող կշտացնել ձեր տանը։ Խելոք մարդ է, ուրեմն...

Ագրինցևը հասկացավ իմ վիրավորանքը և կուլ տվեց։

— Հը՜, ասա,— շարունակեց նա,— ե՞րբ ենք պայմանագիրը ստորագրում։ Ասում ես պիղծ ջհուդ ես։ Ես էլ այդ մասին շատ եմ մտածել, բայց և այնպես վճռել եմ ընկերանալ։ Ի՞նչ անենք, ջհուդներն էլ ինձ նման մարդիկ են։ Իսկապես ես նրանց դեմ ոչինչ չունիմ։ Կարող են իրենց սինագոգում

որքան քեֆներն է «ալելույա» կանչել։ Ջհուդ ես, ես էլ հենց այն պատճառով եմ ուզում ընկերանալ քեզ հետ, որ ջհուդ ես։ Օ՜օ, ջհուդները դևեր են վաճառականության մեջ։ Նրանց հետ ոչ ոք չի կարող մրցել։ Ա՜հ, ի՞նչ կասես, շնորհակալ չե՞ս, որ քեզ այսքան պատիվ եմ անում։

Ռաբինովիչը մոտեցավ և ականջիս շշնջաց.

— Թողեք այդ խոտվիլակին շպրտեմ փողոց։ Նա դարձյալ մեզ անարգում է։

Բայց ես ուզում էի Ագրինցևի հետ խոսել. այժմ նա ինձ հաճույք էր պատճառում է։

— Օ՜օ,— ասացի ես, հազիվ զսպելով ծիծաղս,— շատ և շատ շնորհակալ եմ։ Լա՜վ, ընկերանանք։ Ո՞ւր է ձեր դրամագլուխը։

— Ինչպես թե դրամագլուխը։

— Այո՜, ո՞րն է ձեր դրամագլուխը։

— Իմ դրամագլուխն է անունս և ազգանունս։

— Հետո՞։

— Հետո այն, որ ես ուղղափառ քրիստոնյա եմ։ Ինձ հետ ընկերանալով, դուք կարող եք բոլորովին հանգիստ լինել, որ ոչ մի քրիստոնյա ձեզ չի վիրավորիլ։ Մի խոսքով, ես Սերգեյ Պախոմովիչ Ագրինցևն եմ։

Այս անգամ արդեն ծիծաղս չկարողացա զսպել։

— Այզելման,— վիրավորվեց Ագրինցևը և ոտքի թռավ,— դու ինձ չես հավատո՞ւմ։ Զգուշացիր, Այզելման, ես դեռ առյուծ եմ։

— Պետք էր ճշմարտությունն ասել, և ես ասացի, չվախենալով նրա կատաղությունից։ Ժամանակն էր, որ ես վրեժս առնեի իմ թշնամուց, որ այնքան անարգել, այնքան հալածել էր ինձ։

Ես ասացի, վաճառականությունը կանոններ ունի, որոնց մոռացողը շարաշար պատժվում է։ Մի մարդ, որ իր կոպտության, գոռոզության և շռայլության շնորհիվ կորցրել է ամեն ինչ, չի կարող նույնիսկ խոսել վարկի մասին։

— Դուք ոչ միայն փողով եք սնանկ, Ագրինցև,— շարունակեցի ես,— այլև խելքով։ Երբ դուք հարբում էիք և մեզ հրեաներիս հրապարակորեն անարգում, մտածո՞ւմ էիք, արդյոք, որ մի օր պիտի այդպես ստորանաք իմ առջև։ Ո՞ւր է այժմ ձեր անցյալը։ Կարողություն չեմ ասում, այլ գոռոզություն։ Ո՞ւր են ձեր ուղղափառ հավատակիցները. ինչո՞ւ Մոսկվայի քրիստոնյա ֆաբրիկանտները ավելի առաջ բողոքեցին ձեր մուրհակները, քան Վարշավայի հրեաները։ Եթե դուք մարդ լինեիք, ես ձեզ չէի կործանիլ մինչև այդ աստիճան։ Ցույց կտայի ձեր փրկության ճանապարհը։ Ախ, Սերգեյ Պախոմովիչ, Սերգեյ Պախոմովիչ, մի՞թե այժմ էլ խելքի չեք եկել, մի՞թե այժմ էլ ուզում եք ինձ ծաղրել։ Բայց չէ՞ որ դուք եք արժանի ծաղրի։ Ոչ, ոչ, պարոն, ոչ ծաղրի, այլ ցավակցության։ Նայեցեք ձեզ ոտքից մինչև գլուխ, ինչ օրի եք հասել։ Զգո՞ւմ եք, արդյոք, որ կորած եք հավիտյան։

Կարող եք երևակայել, պարոն. այն մարդը, որ կարելի է ասել, կյանքում չգիտեր ինչ ասել է արտասուք, հանկարծ արտասվեց, ինչպես մի ողորմելի կին։ Այստեղ ես նրան խղճացի, բայց միայն մի քանի րոպե։ Կարո՞ղ էի մոռանալ հենց միայն այն օրը, երբ նրա կի՛նը անպատվել էր կնոջս, գլխարկ պատրաստող ֆրանսուհու մոտ, անվանելով նրան... Օ՜օ, ես պատրաստ էի այդ ամբարտավան քրիստոնյային կոշկիս կրունկով խփել և գցել ցեխի ամենաթանձր տեղը։ Թող նա այնտեղ խեղդվեր, ավելի լավ վիճակի արժանի չէ՞ր։

— Շարունակեցեք, Սերգեյ Պախոմովիչ, շարունակեցե՛ք,— ասացի ես կծու հեգնությամբ,— արտասուքը մաքրում է մեր հոգին կեղտերից։ Անշուշտ հայր Վլադիմիրը ձեզ ասած կլինի, որ զղջալը քրիստոնեի պարտավորություններից մեկն է։

Բայց, ավա՜ղ, նա չէր զղջում։

— Դու ծաղրում ես ինձ, անհավատ,— գոչեց նա, արտասուքն արագ սրբելով և ոտքի կանգնելով,— ես քեզ ցույց կտամ։

Ես հանդարտ ձայնով պատասխանեցի.

— Ո՛չ, Սերգեյ Պախոմովիչ, ո՛չ, ես այլևս ձեզանից երկյուղ չունիմ։ Դուք անզոր եք։ Լսեցե՛ք, դուք այժմ փող չունիք, վարկ չունիք, խելք չունիք, իսկ պատվի մասին չխոսենք։ Դուք ընկած եք, ով քրիստոնյա, այնպես, ինչպես

միայն ձեր նմաններն են ընդունակ ընկնելու։ Եվ որովհետև ձեր ուղղափառ քրիստոնյաները ձեզ չեն օգնում, ե՛ս կօգնեմ։ Լսեցեք, ես ձեզ կընդունեմ ինձ մոտ դոնապան... Կնշանակեմ ամսական քսանուհինգ ռուբլի ռոճիկ, որ ինձ պահպանեք խուլիգաններից։ Ուտելիքդ էլ կտամ։ Մի՛ վախենաք, ես ձեզ սոխով և ապխտած ձկով չեմ կերակրիլ։ Այն ես կշարունակեմ ուտել։ Ես ձեզ կտամ ձեր բորշը, կըվասը և սիվուխան...

Հարվածս զորեղ էր։ Ագրինցևը վայրկենաբար գունատվեց։ Նրա ուռած երեսն ավելի այլանդակվեց։ Երկյուղալի էր նա։ Բռունցքները սեղմելով հարձակվեց վրաս։ Բայց նույն վայրկյանին երկու առողջ երիտասարդական ձեռքեր բռնեցին նրան ետևից։ Ռաբինովիչն էր, որ ուզում էր դուրս վռնդել այդ կեղտն իմ խանութից։ Ես դարձյալ թույլ չտվեցի։

Ներս մտավ Շմուլ Մոզերն, և մի վայրկյանում բոլորը հասկացավ։

Ագրինցևն ուշքի եկավ, սթափվեց։ Այն ժամանակ կատարվեց ուրիշ տեսարան։ Նա մոտեցավ ինձ, այս անգամ ընկճված և խեղճացած։

— Ասա՛,— գոչեց նա տարօրինակ ձայնով,— ասա՛, ի՞նչից եք ստեղծված դուք, ջհուդներդ։ Ասա՛, ինչի՞ց։ Մի՞թե միևնույն նյութից, որից ես և ուրիշները։ Ասա՛, ի՞նչից, են շինված քո գլուխն ու քո լեզուն, քո աչքերը, քո ձեռքերը, ոտքերը։ Ինչո՞ւ քո լեզուն ավելի լավ է խոսում, ինչո՞ւ դու ինձանից լավ ես տեսնում, ինձանից լավ լսում։ Ինչո՞ւ կիսիս չափ չկաս — տասն իմ չափ եռանդ ունիս։ Ինչո՞ւ դու ոտքով ավելի արագ էիր կատարում գործերդ, քան ես կառքով։ Ինչո՞ւ դու կարողանում էիր առավոտներն ինձանից ավելի վաղ զարթնել, գիշերները ինձանից ուշ քնել։ Ինչո՞ւ դու գիտեիր գուշակել, թե մի տարի հետո, որ ապրանքն է թանկանալու, որն է էժանանալու։ Ինչո՞ւ դու բոլոր վաճառականների գործերին տեղյակ էիր, իսկ ես իմ հաշիվներին էլ վերահասու չէի։ Ասա, ի՞նչ կա քո աչքերի մեջ, որ այդպես լավ են տեսնում։ Ասա, որ ես դուրս գալեմ եղունգներովս։ Ասա, ի՞նչ կա քո ականջների մեջ, որ այնպես լավ են լսում հեռվից։ Ասա, Այզելման, ինչո՞ւ դուք հրեաներդ անհաղթելի

եք։ Ինչո՞ւ ձեզ ոչ ծեծն է ցավ պատճառում, ոչ հալածանքը հուսահատեցնում, ոչ անարգանքն ընկճում։ Ասա՛, պատասխանիր, ես չեմ բարկանում, տեսնում ես, այլ խնդրում եմ...։

Տարօրինակ հարցեր են, այնպես չէ։ Ես կամեցա ինչ-որ ասել, բայց Շմուլ Մոզերն ինձ առաջեց։

— Ես կպատասխանեմ,— ասաց նա հանդարտ ձայնով և մոտեցավ Ագրինցևին։— Ասում եք ինչ նյութից է ստեղծված հրան։— Միևնույն նյութից, միևնույն աստծու ձեռքով։ Հող է այդ նյութը և հող պիտի դառնա, թե ձեր ավետարանով և թե մեր թալմուդով։ Բայց դուք, ով քրիստոնյաներ, այնքան հունցել, այրել, ծեծել, կռել եք մեզ, որ դարձել ենք պողպատ։ Հազար ինը հարյուր տարի է, դուք հրեայի դարբինն եք, և պետք է ասած, երևելի վարպետ եք ձեր գործում։ Դուք եք, որ սրել եք հրեայի լեզուն, նրբացրել եք նրա տեսանելիքը և լսելիքը։ Հարցնում եք, ինչո՞ւ ենք մենք ձեզանից ավելի շուտ զարթնում, ձեզանից ուշ քնում։ Ինչո՞ւ, որովհետև առավոտները ձեր կոզակների ձիերի տրոփյունն է մեզ զարթեցնում, իսկ գիշերները ոստիկանների շվոցներն է խափանում մեր քունը։ Մենք այդ տրոփյունն ու այդ շվոցները ձեզանից լավ ենք լսում, որովհետև ձեր լսելիքը դեռ կոպիտ է։ Ոչ. այդ չէ միայն, մենք ստիպված ենք քիչ քնել, բնավ չքնել, որովհետև քնում են միայն տեր ու պահապան ունեցողները. իսկ մեր գլխին հավիտյան կախված է բռնության սուրը։ Մենք վազում ենք— ձեր կառքը մեզ չի հասնում, որովհետև մենք հալածվողներ ենք։ Իսկ հալածվողների ոտները փետուրից են։ Ախ, կար ժամանակ, երբ մենք էլ ձեզ նման գոռոզ էինք և անբարտավան։ Անցա՛վ, կործանվեց ամեն ինչ, ցրվեց մեր բույնը, դարձյալ ձեր ձեռքով, ով քրիստոսի աշակերտներ։ Եվ մենք ցրվեցինք աշխարհի բոլոր կողմերը։ Դժոխք է մեզ համար տիեզերքը, և այդ դժոխքի ամենասոսկալի վայրն է մեզ վիճակվել... Ռուսիան։ Ի՞նչ եք ուզում իմանալ, ինչո՞ւ մենք հաջող ենք վաճառականության մեջ։ Բարի քրիստոնյա, ի՞նչ կլիներ մեր դրությունը, եթե այդքանն էլ չունենայինք։ Չէ որ մեր միակ ապավենը ճարպկությունն է։ Միակ միջոցը գոյության։ Ա՞յն էլ ուզում եք խլել։ Խլեցե՛ք, մենք ուրիշը կգտնենք։ Զարմա-

նում եք, թե ինչպես մենք ձեզ այդ օրին հասցրինք։ Շատ պարզ է։ Մենք ուզում ենք ապրել, իսկ դուք արդեն ապրում էիք։ Մենք բախտ էինք որոնում, իսկ դուք արդեն ունեիք այն։ Մենք դժգոհ էինք մեր վիճակից, իսկ դուք գոհ — ահա՛ ձեր դժբախտության հիմքը։ Ձեր խելքը և եռանդը նիրհում էր ձեր անբարտավանության մեջ, իսկ մենք արթուն էինք և պիտի կռվեինք։ Այսպիսի հանգամանքներում դժվա՞ր էր ձեզ թավալել գետին ու խեղդել։ Ոչ։ Եվ մենք թավալեցինք ու խեղդեցինք ձեզ։ Ի՞նչ եք ուզում այժմ մեզանից։ Ընկերանա՞լ։ Շատ բարի, համեցեք ընկերանանք։ Բայց ամեն մի ընկերություն հիմնվում է իրավունքների հավասարության վրա։ Տվեցեք ձեր իրավունքները մեզ էլ, կամ վերցրեք հազարավոր շղթաները մեր ձեռքերից ու ոտքերից, և մենք կարող ենք ընկերանալ։ Վերջապես, մեր վարք ու բարքերի մեջ կա ահագին անդունդ, նախ լեցրեք այն — հետո։ Դուք, պարոն Ագրինցև, ծնված եք գոռալու, հայհոյելու, հարբելու, ծեծելու, կոտրատելու և մատնելու համար։ Ախ, ի՛նչ երևելի ոստիկան կլինեիք դուք, եթե ժամանակին հասկանայիք։ Նայեցե՛ք. ձեր այդ խոշոր բազուկները, կարծես ստեղծված են մեզ խեղճերիս բռնելու և բանտ դնելու համար։ Եվ դուք ուզում էիք, որ մենք չկարողանա՞նք հաղթել ձեզ վաճառականության մեջ։ Ի՞նչ կոպիտ մոլորություն։ Մեր հայրերը և մեր նախահայրերը, մեր հարյուրավոր սերունդները առուտրի մեջ են մաշել իրենց խելքը։

Ագրինցևը, այդ անհամբեր և ոչ ոքի հակաճառությանը չընդդիմացող մարդը, լուռ լսում էր Շմուլ Մոզերի թունավոր խոսքերը։ Երբ ընկերս ավարտեց, նա նայեց շուրջը նախանձի և չարության սուր հայացքով։ Ապա մոտեցավ ինձ մի քանի քայլ և ասաց.

— Այդ շան ձագին ես չեմ պատասխանիլ։ Իմ հաշիվը քեզ հետ է։ Ահա ինչ կասեմ քեզ, Այզելման. տեսնում ես այս դանակը։ Սա քեզ համար է...

Նա գրպանից հանեց մի մեծ դանակ, ցույց տվեց և նորից դրեց գրպանը։ Աստված իմ. այս վայրկյանիս էլ աչքերիս առջև փայլում է նրա դեղնագույն կոթը։

Անցան ամիսներ։ Այդ միջոցներին հրեաների դրու-

թյունը սոսկալի էր։ Ինչ-որ անհայտ չար ոգիներ գործում էին եռանդով։ Պատրաստվում էր այն դժոխային անցքը, որի մասին գիտեք, պարոն, և որը հետո պիտի կրկնվեր ավելի կորեղ կերպով։

Մենք հիմար չէինք, զուշակում էինք։ Երբեմն ժողովներ էինք անում, խորհրդակցում, բայց ի՞նչ կարող էինք անել։ Մեր թշնամին պարզ էր ով է. նա զորեղ էր, իսկ մենք՝ տրկար։ Պետք է դիմեինք իր իսկ օգնությանը և մեր դրությունն այս անգամ հիշեցնում էր առասպելական մկներին։

Նահանգապետը մերոնցից մի քանիսին ասել էր.

— Հրեաները երազումն էլ վտանգ են տեսնում։ Բայց ոչ մի երկրում այնքան նրանք բախտավոր ու ապահով չեն, որքան Ռուսաստանում։ Նրանք իրենք են ուրիշներին հալածում ու ճնշում։ Նրանք խռովարարներ են։

Եվ այլն, և այլն— պատմական խոսքեր, որ վաղը, մյուս օրը բեմերից պիտի արտասանվի իբրև ծաղր և ամոթ։

Մի երեկո խանութիս առջև նկատեցի Ագրինցևին։ Մի խումբ կասկածելի մարդկանցով շրջապատված՝ նա ինչ-որ խորհրդակցություն ուներ նրանց հետ։ Երբե՞ք քաղաքի կենտրոնական փողոցներում այդպիսի դեմքեր չէի տեսել։ Դա մարդկության այն տականքն էր, որ թափառում է մթին խորշերում, կեղտոտ անկյուններում։

Ես մոտեցա դռներին և պարզ լսեցի այս խոսքերը.

— Այս ամենահարուստ մագազիններից մեկն է մեր քաղաքում։ Մի ահագին սնդուկ կա ոսկով լի։ Բոլորը ձերը կըլինի։ Բայց տիրոջը ձեռք չտաք. նա իմն է...

Աչքերս մթնեցին, ոտքերս դողացին։ Եթե Ագրինցևը նըկատեր իմ սարսափը, պիտի խնդար չարությամբ։ Ես հեռացա խանութիս խորքը և հայտնեցի բոլորը Շմուլ Մոզերին։ Խորհուրդ կազմեցինք գործակատարների հետ։ Ես այն կարծիքին էի, որ պետք է մեր կանանց ու երեխաներին հեռացնենք Օդեսայից, իսկ ինքներս մնանք մեր կայքը պաշտպանելու։ Այսպես էլ արինք։ Ես իմ ընտանիքին ուղարկեցի Քիշինյով՝ կնոջս ծնողների մոտ, իսկ Շմուլ Մոզերն իր մորը՝ Բենդեր։ Նա շատ էլ չէր հավատում համառ լուրերին և ոչ էլ այդ պարզ սպառնալիքներին։ Արդեն հրեաները շատ են հա-

լածվել, ավելի տանջել նրանց չի կարելի։ Խե՜ղճ մարդ, չգիտեր, որ այլ էր մեր կարծիքը, այլ էր որոշումներ արձակողների տրամադրությունը...

Պարոն, ես ձեզ չեմ ձանձրացնիլ, պատմելով այդ աղետալի օրերի անցքը։ Դուք բավական տեղյակ եք, թեև շատ բան չգիտեք։

Եկան այդ օրերը հենց այն ժամանակ, երբ մեր գործերը ամենափառավոր դրության մեջ էին։ Երկնային ահե՜ղ դատավոր, Մովսիսի, Ահարոնի աստված, կգա՞, արդյոք, մի օր, որ դու պատժես մեր դահիճներին։ Ոչ այնպես, ինչպես այժմ օտարների ձեռքով, երկրից դուրս, այլ հենց այստեղ, իրենց հողի վրա, իրենց արյունակիցների ձեռքով։ Պարոն, քրիստոնյա պարոն, ես հավատում եմ նախախնամությանը և համոզված եմ, որ այդ օրը հեռու չէ... նա արդեն մոտենում է ահռելի կերպարանքով։

Արշավանքն սկսվեց ուրիշ փողոցներից և միայն երկրորդ օրը հասավ մեզ։ Այն միջոցին, երբ մեր հարևան հրեաների խանութները կողոպտում էին, երբ տներից դուրս ձգվող մանկական անկողինների բուրդն ու փետուրը քամու բերանումն էին, կանանց և երեխաների աղաղակներն ու հեծկլտանքը լեցրել էին օդը — մենք փակված էինք խանութում։ Ես էի, Շմուլ Մոզերն ու Ռաբինովիչը. տասնչորս գործակատարներից միայն նա էր մնացել, այդ ազնիվ երիտասարդը։ Բոլորը գնացել էին պաշտպանելու իրենց մերձավորներին։ Ռաբինովի՜չ, ինչպե՞ս կարող եմ սառնարյուն հիշել քեզ, անվեհեր տղա, որ այնպես զոհվեցիր ինձ...

Եվ մենք երեքս պիտի պաշտպանեինք հազարավոր խուժանի դեմ հարյուր քսան հազարի ապրանք՝ քսանուհինգ տարվա դառն աշխատանքիս արդյունքը։

Շմուլ Մոզերն ասաց.

— Այզելման, թողնենք ամեն ինչ ճակատագրի կամքին։ Ես կյանքս գերադասում եմ կայքից։

— Իսկ իմ կյանքը — կայքիս մեջ է,— ասացի ես։

Ռաբինովիչը բոլորովին ուրիշ կարծիք ուներ։

Նա ասում էր, որ ամեն մի հրեա պիտի սովորի զենքով պաշտպանել իր կյանքը և ինչքը։

Ահա մոտեցան խոպոտ բղավող ձայները։ Լսվեց քաղցած և կիսամերկ խուժանի դիվային քրքիջը։ Ես ու Շմուլը սարսափից կուչ եկանք պատի տակ։ Ռաբինովիչը հանեց գրպանից մի ատրճանակ և պահեց ձեռքում։

Մոտ մի ժամ տևեցին աղմուկը, կողոպուտը, կոտորածը մեր փողոցում։ Բայց մեր դռները դեռ անշարժ էին։ Հետո մի քանի րոպե տիրեց շարագուշակ լռություն։ Լսում էինք միայն բազմաթիվ քայլերի ձայներ։ Շմուլ Մոզերը կարծեց, որ մենք փրկվեցինք։ Ես մոտեցա դռներին, նայեցի նրանց արանքով դուրս։ Սիրտս ասում էր, որ այնտեղ պատրաստվում էր մեր դեմ մի վատ բան։ Եվ ահա ինչ տեսա. փողոցի մեջտեղում կանգնած էր Ագրինցևը, ձեռքում մի շիշ օղի։ Նա գոռաց.

— Անիծվածնե՜ր, ո՞ւր եք փախչում։ Զորքի՞ց եք վախենում։ Շարունակեցե՛ք, ոչ ոք ձեզ չի խանգարիլ։ Այս կողմն եկեք, ո՞ւր եք վազում, ավանակնե՜ր։

Հետո շարունակեց.

— Ահա՜, լակեցեք այս շիշն էլ։ Չորրորդն է, վերջին հինգ ռուբլիս եմ ծախսել։ Լակեցե՛ք։ Քա՜ջ եղեք։ Խփեցե՛ք, կոտրեցե՛ք դռները։ Սնդուկը ոսկով լիքն է։ Այստե՜ղ, մի՛ հեռանաք, ապուշներ։ Լսո՞ւմ եք։ Էէ, ի՞նչ շքեղ ցուցանակ ունի։ Մտեք ներս, տեսեք։ Ամենքիդ մի բան կհասնի։ Բայց ձեռք չտաք այն մեկին, մորուքավորին։ Կբռնեք և ինձ կհանձնեք։ Նո՛ւ, սկսեցեք, շան զավակներ։ Մեկ, երկու, երեք, հուռա՜, կեցցե՜...

Խուժանը կրկնեց «հուռա» և «կեցցե»...

Շմուլ Մոզերը գոռաց.

— Այզելման, մագազինը կորած է, գոնե մեր գլուխներն ազատենք։ Բայց այլևս ուշ էր։ Դռները դղրդացին և խորտակվելով ընկան մայթերի վրա։ Աչքերիս առջև բացվեց մի տեսարան, որ եթե երազումս տեսնեի, արյունս պիտի սառչեր երակներիս մեջ։ Բայց հուսահատությունը ինձ տվել էր տարօրինակ քաջություն, ես չվախեցա։ Մոտ հարյուր սրիկաներ Ագրինցևի ղեկավարությամբ ներս խուժեցին, փայտերով, կացիններով զինված։ Կային և կանայք ու պատանիներ։

Ես փորձեցի կաշառել խուժանին փողով, որ մագազինս չկողոպտեն։ Բայց ո՞վ էր լսում։ Այդտեղ միայն Արգինցևի ձայնն էր ազդու։ Սրիկաներն ինձ հրեցին ներս, և այդ պահին լսվեց ատրճանակների ձայն։ Խուժանը մի վայրկյան ետ մղվեց գոռալով.

— Ռումբ, ռումբ...

Բայց ռումբ չկար։ Դա Ռաբինովիչի ատրճանակն էր, որ սրիկաներից մեկին թավալեց դռների մեջ։

Առաջ բռնեցին Շմուլ Մոզերին։ Բռնողը մի հաղթանդամ կին էր Մեհերայի ահռելի կերպարանքով։ Նա գոռում էր.

— Ես քեզ պիտի կենդանի այրեմ։

Եվ ձգեց ընկերոջս ամբոխի ձեռքը։ Բայց Շմուլ Մոզերին մահ չէր վիճակված։ Նրան քաշքշեցին, ծեծեցին, ոտնատակ արին, բայց և այնպես ազատվեց։ Կապկի ճարպկությամբ դուրս պրծավ տասնյակ ձեռքերից, պատառոտված հագուստով, ջարդված կողերով և փախավ մագազինի ետևի դռներով, թողնելով հատակի վրա արյան հետք։

Շրջապատեցին Ռաբինովիչին։ Նա դատարկել էր արդեն ատրճանակը և դարձյալ մեկին սպանել և երկուսին վիրավորել։ Զենքը խլեցին ձեռքից, և մեկը սկսեց նրա կոթով դարնել թշվառի բաց գլխին։ Այս բոլորը տևեց մի քանի րոպե միայն։ Խուժանն արդեն կողոպտում էր ունեցածս։ Ես տեսա աղնիվ գործակատարիս այլանդակված դիակը փողոց շպրտվելիս։ Նրա գանգը երկու կտոր էին արել կացնի հարվածով։ Թշվա՜ռ մայր... Նա այժմ թափառում է փողոցներում ցնորված...

— Ա՜խ, վերջապես, դու իմ ձեռքումն ես,— լսեցի ես Արգինցևի ձայնը այն ժամանակ, երբ մի թեթև հույս կար ամբոխի ձեռքից ազատվելու,— ո՞ւր ես ուզում փախչել։

Նրա հուժկու ձեռքերն ինձ սեղմեցին պատին։ Ի՜նչ թարցընեմ, պարոն, ես նրան խոստացա բոլորը, ինչ-որ ունեի, միայն թե կյանքս ինձ թողներ։ Ես ստորացա այդ սինլրքորի առջև, որովհետև աչքիս առջև կանգնած էին զավակներս, որոնք պիտի մնային անխնամ։

— Մի՛ վախենար,— գոչեց Արգինցևը,— ես քեզ չեմ

սպանիլ։ Ընդհակառակը, դու պետք է ապրես, որ միշտ հիշես Արգինցևին։ Է՜յ, թավալեցեք այս բոստոնին գետին...

Սրիկաներից երկուսն օգնեցին նրան և ինձ թավալեցին։ Գրպանումս ունեի մի մեծ դանակ. այդ էր իմ միակ զենքը ամբողջ կյանքումս։ Այժմ ուրիշ է, այժմ ես ատրճանակ ունիմ և պիտի հրացան էլ ձեռք բերեմ։ Ես նշան արի թշնամու սիրտը, բայց վիրավորեցի միայն նրա թևը։ Կարծես նա ցավ չզգաց, ճիչ անգամ չարձակեց։

— Այզելման,— գոռաց նա ծնկները սեղմելով կրծքիս և կոկորդս բռնած,— ընկերդ ասաց, թե դուք ինձ թավալեցիք և խեղդեցիք։ Բայց այդպես չեն թավալում մեր օրենքով, այլ այսպես։ Դե՜հ, հանիր լեզուդ...

Ջուր էի ճիգ անում ազատվել նրա ձեռքերից։ Նա թքեց երեսիս և մի քանի անգամ ապտակեց։ Սրիկաները ոտքերով զարկում էին կողերիս։ Հասկանալի էր Արգինցևի միտքը։ Ես երեսս ի վայր շուռ եկա։

— Էէ, չե՞ս ուզում որ աչքերդ հանեմ, լեզուդ կտրեմ,— ասաց նա,— ոչինչ։ Թող այդպես լինի։ Այսքանն էլ բավական է, ես ուզում եմ միայն քեզ վրա մի նշան թողնել...

Նույն վայրկյանին գլխիս վրա փայլեց դանակի դեղին կոթը։ Զգացի սուր ցավ և հետո երեսիս վրա տաքություն։ Արյունս էր, որ խառնվելով հողի հետ, փակեց աչքերս։ Ես լսեցի.

— Է՜յ, սրիկաներ, ես միայն այս ականջն եմ վերցնում Այզելմանի հարստությունից։ Մնացյալը ձեզ լինի։ Բաժանեցեք...

Այստեղ ես-ուշաթափվեցի...

Հրեան կանգ առավ։ Օ՜օ, որքան ատելություն, վրիժառության կրակ և անզորության կսկիծ կային նրա խելացի աչքերի մեջ։ Մի քանի վայրկյան տիրեց լռություն։

Պետք է զորեղ կամքի տեր լիներ Ահարոն Այղելմանը։ Տեսնելով, որ իր պատմվածքը մեզ վրա գործեց ճնշող տպավորություն, շտապեց զսպել իր սրտի ալեկոծությունը։

Եվ, դառնալով աղջկաս, նա դարձյալ ժպտաց սիրալիր և ասաց.

— Մաղմուազել, այժմ մի ականջս ուղղափառ քրիստոնյա է, իսկ մյուսը՝ հրեա...

Մենք հասանք Վարշավա...

ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆԸ

(Պատկեր)

— Բարի լույս, եղբայրս, ինձ ձեռաց երեք ռուբլի փող է հարկավոր։ Տուր։

Այս ասելով, Միսակը կանգնեց փողոցում, պատի տակ և իր կեղտոտ ձեռը անմիջապես պարզեց Արամին։ Երևի նա միանգամայն հավատացած էր, որ առանց այլևայլի ուզածն իսկույն պիտի ստանա, ինչպես ստացել էր ամեն շաբաթ տասնումեկ տարի շարունակ։

Մինչդեռ Արամն այն օրը ոչ միայն տրամադիր չէր եղբորը փող տալու, այլև հաստատապես վճռել էր մի անգամ ընդմիշտ ազատվել նրա անամոթ մուրացկանությունից, որ վաղուց արդեն ձանձրացրել էր նրան։ Այսպես էր պահանջում նրանից իր կինը հանուն հինգ փոքրիկ զավակների, որոնց կերակրելն ու հագցնելը դյուրին բան չէր մի հասարակ արհեստավորի համար։ Կար և մի ուրիշ, ավելի նշանավոր պատճառ, որ ստիպում էր Արամին կտրել ամեն կապ իր հարազատ եղբոր հետ։ Եվ այս պատճառն այսօր նրան թվում էր այնքան ստիպողական, որ դեռ առավոտ թեյի միջոցին ինքն իրեն մտածում էր, թե ինչպես է, որ մինչև այժմ նա դեռ հարաբերություն ունի իր եղբոր հետ կամ նույնիսկ թույլ է տալիս իրեն հետ խոսելու։

Նա մինչև անգամ երեսը չդարձրեց Միսակին, լսելով նրա խռպոտ ձայնը։ Կանգնած իր արհեստանոցի դռների առջև նայում էր հեռու։ Այնտեղ, փողոցի ծայրում, մի լայն հրապարակում տիրում էր մի տեսակ իրարանցում, որ վերջին ամիսները դարձել էր սովորական։ Ոստիկանների մի ահագին խումբ, գավթապահների օգնությամբ ցրում էր ամբոխը, որ բոլոր մերձակա փողոցներից դիմում էր դեպի հրապարակ։

— Իսկի չարժե մտիկ անել,— ասաց Միսակը, ձեռը շարժելով օդի մեջ,— դատարկ բան է։— Քարվանսարայի ծույլ գործակատարները գործադուլ են արել։

— Էլի՞։

— Էլի,— շարունակեց Միսակը, կանգնելով եղբոր առջև,— ստիպում են խանութները փակել։ Իսկ ոստիկանները պահանջում են բաց անել։ Խեղճ վաճառականները հա, հա, հա, երկու կրակի մեջ են։ Դես են նայում՝ հարված են ստանում, դեն են նայում՝ ապտակ։ Մի պառավ կնիկ աչքերիս առջև ընկավ ձիերի ոտների տակ և լավ ճխլտվեց։

— Ինչո՞ւ։

— Որդին գործակատար է, ապստամբվողներից մեկն է։ Մայրն ուզում էր նրան ազատել ոստիկաններից։ Ինձ էլ մի քանի հարվածներ հասան։

— Հեռո՞, ի՞նչ պատահեց այն պառավ կնոջը,— հարցրեց Արամը, հակառակ իր կամքի, երեսը դարձնելով եղբորը։

— Ադատվեց։ Եվ գիտե՞ս ում շնորհիվ, այ, քո հարազատ եղբոր, Միսակ Առաքելովիչ Դաբաղյանի։ Այո, գնդակի արագությամբ ընկա ձիերի մեջ, դես հրեցի, դեն հրեցի, վերցրի գետնի վրա փռված պառավին և դուրս բերեցի ամբոխի միջից։ Հենց այդ ժամանակ ինձ հասան մտրակի հարվածները։ Ախ, ինչպես են զարկում, ինչպես, աստված ազատի։ Արամ, Արամ, շատ վատ ժամանակներում ենք ապրում։ Մարդու կյանքը բոլորովին ապահով չէ։ Եթե խելք ունես, իսկի գլուխդ բնից դուրս մի հանիր։ Հասկանո՞ւմ ես ինչ եմ ասում։ Եթե չես հասկանում, վայ քո գլխին, վայ քո կնոջը, երեխաներին ու արհեստանոցին։ Ես շատ մոտիկ բարեկամ մարդու մի քանի անգամ զգուշացրի, ուշադրություն չդարձրեց։

Այժմ նա կամրջի գլխի պալատումն է։ Գիտե՞ս ինչ եմ ասում, եղբայր պատվական։ Փորձանք եկավ գլխին. ինքն է մեղավոր։ Առհասարակ այդ գործում փորձանքի մեջ ընկնողները բոլորն էլ իրանք են մեղավոր։ Այո, ժամանակները վատացել են, շատ են կատաղել։ Տուր շուտով երեք ռուբլի։

Մինչ Միսակը բարբառում էր, Արամը ուշադիր դիտում էր նրա կարմիր-կապտագույն թորշոմած դեմքը։ Այդ անբընական փքված այտերը, թերթերունքներից զրկված կոպերը, արյունալի պլզած աչքերը, թարախով լի բշտիկներով ծածկված քիթն ու ճակատը կրում էին ոչ միայն ոգելից ըմպելիքների կործանիչ ազդեցությունը, այլև մի սոսկալի մարմնավոր ախտի զզվելի դրոշմը։ Դա անգործ, արբշիռ շրջմոլիկի մի տիպար էր, փողոցի սեփականություն։ Մեկն այն թշվառներից, որոնց անողոք ճակատագիրը քաշում է դեպի կյանքի ստոր խորշերը, որպեսզի այնտեղ ոչնչացնի նրանց անհետք, ինչպես անբնական անասունների։

Արամը շաբաթը մեկ անգամ տեսնում էր այդ եղկելի կերպարանքը իր արհեստանոցի դռների առջև կանգնած՝ սովորական տուրքին սպասելիս։ Տեսնում էր նրա օր-օրի վրա վայր ու վայր ընկնելը և ցավում էր ու վշտանում, որպես կարող է վշտանալ միևնույն արգանդից ծնված եղբայրը։ Նա վաղուց էր իր եղբորը համարում կորած և վաղուց էր դադարել համոզել նրան հետ դառնալ դեպի անդունդ տանող ճանապարհից, մի անգամ առմիշտ համոզվելով, որ ոչ մի խրատ և ոչ մի քարոզ չի կարող փրկել նրան։ Հարբեցողությունը, սուտը, անամոթությունը, խաբեությունը, ծուլությունը այդ մարդու մեջ գտել էին հավիտենական բուն։ Վերջին ժամանակները նա սկսել էր մինչև անգամ գողություն անել, թեև այնքան զգույշ, որ դեռ ոստիկանության ձեռքը չէր ընկել, կամ գուցե ընկել էր և դուրս պրծել... սովորական ճանապարհով։ Այս բոլոր ախտերը հայտնի էին Արամին, և նա դեռ եղբայր էր համարում նրան, դեռ օգնում էր նրան... կարեկցությունից դրդված։

Իսկ այժմ... Այժմ պատահել էր մի բան, որի հետ չէին կարող հաշտվել Արամի զգացումները։ Նա նայեց եղբոր կարմրած աչքերին, որոնց իմաստն այսօր առաջին անգամ

թվաց նրան այնչափ կասկածելի և հրող, ու զգաց դեպի նա նոր տեսակի ատելություն։ Ատելություն, որ խառն էր սուր զզվանքի հետ։ Այն մարդը, որ մինչև այժմ նրա մեջ զարթեցրել էր միայն ամոթի, կարեկցության և վշտի զգացում, այսօր թվաց նրան այնպիսի մի արարած, որին համենայն դեպս կարեկցել չէր կարելի։ Եվ տպավորությունն այնքան խորն էր, որ Արամը հանկարծակի ցնցվեց։

— Այո, եղբայր,— շարունակեց Միսակը, տեսնելով, որ իր խոսակցությունը այսօր, հակառակ սովորականին, գրավում է եղբոր ուշադրությունը,— ես շատերին եմ ասում, իսկ քեզ պարտավոր եմ ասել, որովհետև հարազատ եղբայրդ եմ, այն էլ մեծ եղբայրդ, լսիր, լավ լսիր։

Նա մի քայլ ևս առաջ դրեց և բերանը բոլորովին մոտեցրեց եղբոր ականջին։

— Այստեղ քո կազմարանում դու ունիս մի քանի արհեստավորներ։ Ջահել տղերք են, տաք գլուխներ, չեն հասկանում ինչ են անում։ Ահա նրանք կարող են քեզ փորձանքի մեջ գցել, վկա է աստված։ Սուս, մեր մեջ մնա, նրանց ոչինչ չասես։ Կարող են ինձ մյուս աշխարհն ուղարկել...

— Ամենքից վտանգավորները կազմարարներն են, որովհետև նրանք գիրք շատ են կարդում։ Հը՛մ, ճշմարիտ չե՞մ ասում։ Լավ մտածիր։ Հենց մեկը դու։ Օ՜, օ, ես գիտեմ, թե ինչեր ես կարդացել և այժմ գլուխդ ինչով է լցված...

— Հետո, հետո,— ընդհատեց հանկարծ Արամը, որ մինչև այդ ժամանակ լուռ էր և զննող հայացքով նայում էր եղբորը,— շարունակիր։

— Ուրիշ ոչինչ, ես ասացի բոլորը։

— Ինչո՞վ է լիքը գլուխս, հրմ, ինչո՞վ։

— Թքիր, ես քեզ հետ կռվելու չեմ եկել այստեղ։ Թողնենք։ Վախենում եմ։ Մեկ էլ տեսար կնիկդ եկավ, երեսիս թքեց, վզակոթիս տվեց և դուրս արավ տնից։ Հա, հա, հա, տնից դուրս արավ։ Ինչպես, քանի որ տունդ իսկի մի անգամ էլ ոտ չեմ դրել։ Ջես թողել, որ ներս մտնեմ։ Կնիկդ ինձ ատելով ատում է։ Ինձ, կոլեժսկի ռեգիստրատորիս։ Ո՞վ։—Մի կալատոզի աղջիկ։ Մի նեղանար, եղբայր, կնիկդ քեզ շատ է փոխել։ Առաջ դու ավելի բարի էիր։ Նա զզվում է ինձանից։

Ինչո՞ւ։ Որովհետև պիջակս յուղոտ է, պատառոտված, շապիկիս վրա գինու բծեր կան, օձիքս սևացած է, կոշիկներս ծակ, վարտիքիս ծայրերը զզգված՝ գլխիս կեղտոտ մազերիս պես։ Իսկ քիթս, նրա ասելով փտած բադրջանի է նման։ Հոտ է գալիս ինձանից, ինչպես խոզից կամ շնից։ Խի, խի, խի... Տերը նրա հետ։ Կալատոզի աղջիկն իրան կոմսուհի է համարում։ Մի նեղանար, եղբայր, ես ճշմարիտ եմ ասում։

— Իմ կնիկը բոլորովին այդ բաների համար չէ, որ քեզ ատում է, Միսակ,— արտասանեց Արամը այնպիսի հուզումով, որից նրա ձայնը դողաց,— իմ կնիկը քեզ շատ բաներ է ներել, էլի կների, եթե դու չլիներ...

Նա կանգ առավ, շրթունքները սեղմելով ատամներով։

— Եթե ես ի՞նչ լինեի, ասա, ասա, ինչո՞ւ կիսատ թողեցիր։ Էհե, բարեկամ, դու ինձ հիմար չկարծես, հասկանում եմ ինչ էիր ուզում ասել։ Ես հարբեցող եմ, անգործ, անպիտան, փչացած...

Միսակը նայեց եղբորը իր կարմրած, հիվանդոտ աչքերով և տարօրինակ ժպտաց։

— Ախ, եղբայր, եղբայր պատվական,— խոսեց նա մի քանի վայրկյան լռելուց հետո,— նայում եմ քեզ և ուրախանում։ Ինչ ահագին տարբերություն կա քո և իմ մեջ։ Դու օրինավոր մարդ ես. երևելի կազմարար, հա, հա, հա, կրթված կազմարար, իսկ ես... թյու, ահա թե ինչ եմ, ցեխ, աղբ... հա, հա, հա, ինտելիգենտ մարդկանց հետ ես նստում ու վեր կենում։ Լրագրներում հոդվածներ ես գրում արհեստավորների ու բանվորների դրության մասին։ Հա, հա, հա, այդ շատ հետաքրքրական է, շատ հետաքրքրական։ Պաշտպանում ես գործավորներին, հայհոյում ես բուրժուաներին և ձրիակերներին։ Ցանկալի է իմանալ՝ քո կարծիքով ես ո՞ր դասակարգին եմ պատկանում—բուրժուա՞, թե՞ բանվոր։ Հետո դու ուրիշ՝ դահա-դահա շատ բաներ ես անում։ Եվ, որ ամենագլխավորն է, կառքով ես ման գալիս ընտանիքիդ հետ։ Գիտե՞ս, կառքով ման գալը քիչ բան չէ, եթե կառապանը քեզ տանելիս շուտ-շուտ հետ չի նայում։ Մի անգամ ես կառք նստեցի քեֆիս համար և կառապանը ամեն վայրկյան հետ էր նայում։ Նա կարծում էր, որ ես քշել պիտի տամ և տեղ

հասած թաքուն պիտի ծլկվեմ կառքից, որպեսզի վարձը չվճարեմ։ Դեմքս կասկածելի էր նրա համար։ Իսկ դու կասկածելի չես, գիտեմ։ Օ, օ, ես գիրք չեմ կարդում, բայց գիտեմ կարդալ մարդկանց հոգիները նրանց ճակատների վրա։ Ուզո՞ւմ ես ասեմ, թե կնիկդ ինչու համար է ինձանից զզվում այժմ, թե դու ինչու համար ես այսօր այդպես կասկածով և խոր-խոր մտիկ անում ինձ։ Դու մի բան ես ուզում իմանալ, զուր մի պլզիլ աչքերդ...

Այդ միջոցին երկու ոստիկաններ մի կապույտ շապիկավոր երիտասարդի, աջ ու ձախ թևերից բռնած, տանում էին դիմացի մայթով։

Հանկարծ Միսակը կտրեց իր, ըստ երևույթին, անկապ խոսքերի թելը, նայեց նրանց և ապա դեպի երկինք, որպես թե անփույթ։ Ինչ-որ մի նենգ և բազմախորհուրդ բան ժպիտի պես աղավաղեց նրա առանց այն էլ այլանդակված դեմքը։

Արամի զննող հայացքից չխուսափեց այդ վայրկենական տեսարանը։

Երկար ժամանակ Արամը աչքերով հետևում էր ոստիկաններին և ձերբակալվածներին։ Սպասում էր, որ մեկն ու մեկը նրանցից հետ կդարձնի երեսը և կնայի ուրիշ ոչ ոքի, եթե ոչ միայն Միսակին։ Բայց ոչ մեկը չնայեց։ Նրանք անհետացան փողոցի ծայրում։ Միսակը հասկացավ եղբոր միտքը, հազաց խուլ ձայնով, թքեց մայթի վրա և շարունակեց.

— Պետք է ասած, որ ես քեզանից շնորհակալ եմ, եղբայր պատվական։ Մեր ժամանակներում եղբայրություն ասած բանը չկա։ Իսկ դու վատ եղբայր չես։ Դու մեկ-մեկ ինձ գրպանի ծախս ես տալիս։ Հենց դրա համար է, որ քեզ սիրում եմ և ուզում եմ պաշտպանել ամեն կերպ։ Եղբայր պատվական, ուշադրություն դարձրու քո աշակերտների վրա։ Նրանք ինչ գործ ունեն ուսանողների հետ։ Մի թողնիր, որ ոչ մի ուսանող կամ բանվոր, կամ անծանոթ ոտք դնի քո արհեստանոցն առանց գործի, հենց այնպես։ Հասկացա՞ր։ Պետք է որ հասկանաս, հիմար խոմ չես։

— Հասկանում եմ, այո, հասկանում եմ,— արտասանեց Արամը եռանդով ու ջերմագին։ Եվ նրա ձայնը դարձյալ դողաց։

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, ապա թե ոչ, քիչ էր մնում վախենայի քեզ համար։ Էհ, այժմ թողնենք այդ և դառնանք ուրիշ կողմ։ Գրողը տանի, այսօր ես սոխակի պես եմ բարբառում, լեզուս խիստ է բացվել։ Գիտե՞ս ինչ, դու շատ էլ մի պարծենար քո խելքով։ Եթե դու գրել գիտես, ես խոսել գիտեմ։ Ես մի ժամանակ դատարաններում փոքրիկ գործեր էի պաշտպանում։ Մասնավոր փաստաբան էի, գրողը տանի ինձ։ Ահա թե ինչ էի ուզում ասել, եղբայրիկս. ես քեզ համար շատ բան եմ արել։ Օ, օ, ես չլինեի, այսօր դու, ով գիտե, քաղցած պիտի զկռտայիր։ Հիշում եմ այսօրվա պես, դու տասներկու տարեկան էիր, երբ մեր հայրը, Տեր-Առաքելը մեռավ։ Այն ժամանակ ես կոնսիստորիայում գրագիր էի ամսական քսանուերկու ռուբլով։ Վերցրի քեզ իմ թևերի տակ ինչպես մայր, որովհետև մեր մայրը քեզ ծնելիս էր մեռել։ Ես էի, որ քեզ տվեցի Մյուլմանին աշակերտ։ Ամենաառաջին կազմարարին։ Իմ խաթրու նա քեզ արհեստ սովորեցրեց երեք տարում։ Երկու ամսվա ռոճիկս միացրի քո խնայած գումարին, քեզ համար արհեստանոց բաց արի։ Այժմ դու ամենալավ կազմարարներից մեկն ես իմ շնորհիվ, այո, իմ շնորհիվ։ Այժմ դու ապրում ես մարդու պես, իսկ ես շան նման կյանքս քարշ եմ տալիս փողոցներում և մի օր անտեր, անօգնական կսատկեմ մի աղբանոցում։

— Եվ ո՞վ է մեղավոր, որ դու այդպես ես,— գոչեց Արամը։

— Ի՞նչ, ո՞վ է մեղավոր։ Դու չգիտե՞ս, որ հարցնում ես։ Մոռացե՞լ ես կնոջս։ Ախ, այն գարշելի արարածին։ Աստծուն է հայտնի, որ ես նրան սիրում էի։ Ինչ արավ նա ինձ։ Ախ, մինչև այն սարսափելի օրը ես օրինավոր մարդ էի, օղու հոտը չէի իմանում։ Այն օրից ես սկսեցի ընկնել ու ընկնել և հասա, ահա, այս դրությանս։ Ես միայն մի բանում եմ մեղավոր, այն է, որ այդ բոպեին հենց անկողնի մեջ երկուսին միասին շանսատակ չարի։ Էհ, եղբայր, ինչու ինձ հիշեցրիր այդ պատմությունը։ Թքիր։

— Բավական է, լռիր,— արտասանեց Արամը խուլ ձայնով,— դու արդեն սպանել ես թե մեկին և թե մյուսին։

— Ի՞նչ ես հիմար-հիմար խոսում,— վրդովվեց Միսակը,

եթե միայն կարող է վրդովվել մի մարդ, որ կորցրել է ամեն մի զգացում։

— Ես գիտեմ ինչ եմ ասում, գիտեմ։

— Դեհ, բավական է ինչքան խոսեցինք,— հանկարծ հանդարտվեց Միսակը,— խնդիրն այն է, որ այսօր ես ոչինչ եմ, զրո, սողուն, խլեզ, ճիճու, գորտ, ինչ կամենաս, միայն ոչ մարդ։ Դու կարծում ես, որ ես չգիտեմ, որ դու ինձ չես սիրում։ Ինձ ոչ ոք բանի տեղ չի դնում։ Բայց թող հայտնի լինի ամենքին, որ ես էլ թքել եմ բոլորի վրա...

— Այդ ես գիտեմ, գիտեմ,— ընդհատեց Արամը դառն հեգնությամբ։

— Գիտես, ավելի վատ քեզ համար։ Իմացիր ուրեմն, որ ես այժմ ատում եմ մինչև անգամ իմ հոր գերեզմանը։ Ինչո՞ւ նա ինձ աշխարհ գցեց։ Այո, այս այնքան ճշմարիտ է, որքան և այն, որ կազմարարներիդ սոսնձի հոտն ինձ սկսում է արդեն զզվեցնել։ Գլխիս ցավից էլ այստեղ կանգնել չեմ կարող։ Տուր ինձ երեք ռուբլին։ Ես չգիտեմ այսօր քեզ ինչ է պատահել, որ այդպես ուշացնում ես։ Առաջ, որ գալիս էի ստանալու, շտապում էիր շուտով տուրքդ ձեռքս դնել և ինձ ճանապարհ գցել։ Տուր, շուտ արա, այսօր դեռ կոկորդս չեմ թրջել։ Ուզում եմ մի երկու բաժակ ներս ուղարկել, հետո մտնել ամբոխի մեջ։ Տես, այն կողմ նայիր, դու խոմ մեկին տեսար թիկնապահներով քոռ Մաթոսի բաղնիքը գնալիս։ Այժմ երկուսին էլ տանում են։ Այ, մտիկ արա, մեկը ուսանող է, մյուսը ատաղձագործ... Հա, հա, հա,— ծիծաղեց արբշիռը բարձրաձայն մի այնպիսի անախորժ ծիծաղով, որից Արամը ցընցվեց ոտից մինչև գլուխ։

Պատահեց մի բան, որին Միսակը չէր կարող սպասել։ Արամի աչքերը լցվեցին արյունով։ Նա գունատվեց։ Հետո կարմրեց, հետո կապտեց և հանկարծ, կատվի արագությամբ, հարձակվեց եղբոր վրա և, բռնելով նրա օձիքից, գոռաց.

— Լռիր, լռիր, գարշելի, սպա թե ոչ՝ խելքս կորցնում եմ։

Միսակը մի կերպ ազատվեց եղբոր ձեռքից, մի քայլ հետ կանգնեց վախեցած։

— Ի՞նչ պատահեց քեզ, դու խակ որ խելքդ կորցրիր,— ասաց նա շնչասպառ։

— Արի ներս, փողոցում նայողներ կան, արի ներս, ես քեզ հետ գործ ունեմ,— գոչեց Արամը և բռնելով եղբոր ձեռքից, ուժով քաշեց, տարավ արհեստանոց։

Այնտեղ ոչ ոք չկար։ Օրը կիրակի էր, Արամի արհեստավորներն ու աշակերտներն ազատ էին։ Առաջին սենյակը, ուր տարավ Արամը եղբորը, ներկայացնում էր կեսընդունարան և կեսարհեստանոց։ Նա քաշեց եղբորը մի մութ անկյուն և, սեղմելով նրան պատին, մի ձեռքով բռնեց նրա օձիքը և ասաց.

— Այսօր դատի օր է, դու պետք է ինձ հաշիվ տաս։

— Բաց թող օձիքս, բաց թող, ասում եմ։ Դու գժվել ես։ Ինչի՞ մասին ես ինձանից հաշիվ պահանջում։ Մեր հայրը ժառանգություն չի թողել։

— Թողել է, անիրավ, թողել է,— մռնչաց Արամը, ավելի սեղմելով նրան պատին,— մի մաքուր անուն։ Դու ապականել ես այն։ Հենց այս մասին պիտի հաշիվ տաս։ Եվ այսօր, անպատճառ այսօր։ Ասա այս բոպեին, ո՞ւր է իմ նախկին աշակերտը, այն խելոք, աշխատասեր Հակոբը, որ իր շրջանի պարծանքն էր, ո՞ւր է։

— Բանտում։

— Ինչո՞ւ, անիրավ, ասա ի՞նչ մեղքի համար։

— Աստված գիտե, ես ինչ իմանամ, ես պրոկուրո՞ր եմ։

— Դո՞ւ չգիտես։ Օ, օ, դու շատ բան գիտես։ Մատնիչ...

Տիրեց մի քանի վայրկյան լռություն։

Երկու եղբայր նայում էին միմյանց աչքերին, մեկը համարձակ դատավորի սոսկալի հայացքով, մյուսը ընկճված, բայց լիրբ և անպատկառ։

— Մատնիչ,— կրկնեց Արամը,— խոստովանիր բոլորը, քանի որ լեզուդ բերանումդ է։ Սողուն, ես բոլորը ներել եմ քեզ, բոլորը, բայց այդ մեկը, օ, օ, ոչ, անկարելի է ներել։ Դու գերեզման հասցրիր մեր հորը քո խայտառակ կյանքով, ներեցիր։ Դու ծեծով ու տանջանքով կնոջդ ստիպեցիր դավաճանել քեզ, ասացի այդ քո գործն է։ Դու մտար գողերի ու սրիկաների շրջանը, ես քեզ խղճացի։ Եվ միշտ օգնում էի։ Դու զրպատել ես ինձ, իմ կնոջն անգամ, գոռալով այս ու այն տեղ, թե մենք գրկել ենք քեզ։ Ես համբերեցի։ Ես քո բոլոր խայտառակությունները տարել եմ համբերությամբ։

Բայց այդ մեկ ախտդ ես ներել չեմ կարող. իրավունք չունեմ ներելու, որովհետև թքում են երեսիս ամեն կողմից։ Ես երկար ժամանակ չէի հավատում տարածված լուրին։ Չէի ուզում հավատալ։ Անտանելի է, դառն։ Օ, օ, քանի անքուն գիշերներ եմ անցկացրել քո պատճառով։ Այժմ արդեն ապացուցված է, որ դու այն ես, ինչ-որ անվանում են քեզ։ Ես անհերքելի փաստեր ունեմ, ահա, այնտեղ, սեղանի մեջ։ Դու մոտ քառասուն մարդ ես... Ասա. ինչո՞ւ համար, ո՞վ է քեզ ստիպում։

— Համոզմունքս, — հազիվ կարողացավ արտասանել Միսակը։

— Ուրեմն խոստովանո՞ւմ ես։ Եվ դեռինը չի՞ պատրաստվում քեզ ներս կլանելու։ Համոզմունք։ Միթե քեզ նման մի սողուն կարո՞ղ է համոզմունք ունենալ։ Լսիր,— շարունակեց Արամը, հազիվ շունչ քաշելով և եղբոր օձիքը բաց թողնելով,— ես պահանջում եմ քեզանից, ահա, ինչ։ Ես կկանչեմ այստեղ բոլորին, որոնք խոսում են քո մասին։ Դու պետք է նրանց առջև խոստովանես, թե ով ես դու։ Դու մեղա կրգաս ծնկաչոք և ահա դրանով ինքդ վերջ կտաս քո դարշելի կյանքին։

Վերջին խոսքերն արտասանելիս՝ նա սենյակի անկյունում դրած գրասեղանի արկղից հանեց մի ատրճանակ և դրեց սեղանի վրա։

— Հի, հի, հի,— ծիծաղեց Միսակը բարձրաձայն,— ինչ վախկոտ մարդ ես գտել։ Ես գիտեմ, որ իմ կյանքի դատավճիռը տրված է արդեն։ Բայց ես ոչ ոքից չեմ վախենում, լսո՞ւմ ես, ոչ ոքից... Դիր իր տեղն ատրճանակդ և հանգիստ թող ինձ, ապա թե ոչ, գիտես, ես քեզ էլ...

— Օհ, երանի միայն իմ վերաբերմամբ լիներիր ստոր և գազրելի։ Բայց դու քանի անմեղների ես տանջանքների ենթարկել։

— Ասա, կկատարե՞ս իմ պահանջը, թե չէ։

Միսակը, նայելով նրան լիտի հայացքով, քայլերն ուղղեց դեպի դռները։

— Մնաս բարով, դու քոնն արա, ես էլ իմը կանեմ։

Արամը կտրեց նրա ճանապարհը, նորից փակեց դռները և եղբորն այնպես հրեց դեպի սենյակ, որ նա, հինգ քայլ հետ

գնալով, ընկավ գրասեղանի վրա։ Նրա մի ձեռը դիպավ ատրճանակին։ Նա բնազդաբար խլեց զենքը, ուղղվեց։ Այդ րոպեին նրա քայքայված դեմքը սոսկալի էր։

— Կովենք, ուրեմն,— բղավեց նա ատրճանակը բարձրացնելով։

Այնտեղ, հակառակ անկյունում, փոքրիկ, կեղտոտ նստարանի վրա դրած էր մի մեծ և սուր դանակ, որպիսին գործ են ածում կազմարարները։

Արամը խլեց դանակը։

Նրա աչքերը մթնել էին, արյունը գլխովն էր գնում։ Նա ոչինչ չէր զգում և մտածում այլևս, բացի մի բանից, որ իր առջև կանգնած է մի վնասակար սողուն, որին պիտի ոչնչացնել։

Միսակն զգաց, որ դրությունը վտանգավոր է։ Եվ վճռեց պաշտպանվել։ Սակայն հազիվ նա մի շարժում էր արել, երբ զգաց իր կրծքի վրա պողպատի սառնությունը։ Լսվեց մի խուլ դղրդյուն, և նա ընկավ հատակի վրա։

— Այդպես, ուրեմն դու հանաք չէիր անում,— արտասանեց մատնիչը, գալարվելով հատակի վրա,— ախ, ինչ վատ ձեռք ունես։

Արամն արյունոտ դանակը ձեռքին՝ մի քանի վայրկյան գազանային աչքերով դիտում էր արածը։ Նա զգաց, որ հարվածը մահացու է, դանակը ցցվել է ուղիղ եղբոր սրտի մեջ։ Գցեց դանակը մի կողմ և նստելով նստարանի վրա, աչքերը ձեռքերով ծածկեց։

— Կանչիր այստեղ վկաներ։ Ես կասեմ, որ ինքս ինձ սպանեցի։ Եղբայրասպան։ Կանչիր։ Երեխաներ ունես։ Կանչիր, խեղճ ես...

Վիրավորվածն սկսեց խռխռալ և ձգվել։ Արամը ցնցվելով, ոտքի կանգնեց և մի քայլ մոտենալով եղբորը, բևեռվեց տեղն ու տեղը ու արտասանեց.

— Ինչ արի... Եղբորս։— Միսակը մի վայրկյան աչքերը բաց արավ։

— Ասա բոլորին, որ ես մարդկանց ատում էի, որովհետև ինձանից զզվում էին ամենքը։ Բայց ոչ մի կոպեկ չեմ վերցրել արածներիս համար։

Եվ երեսը դարձնելով պատի կողմը, լռեց հավիտյան...

ԿՅԱՆՔԻ ԺՊԻՏԸ

— Մայրիկ, ես վախենում եմ,— լսվեց խոր գիշերին մանկան դողդոջուն ձայնը։

Նա բաց արավ աչքերը։ Սենյակի թանձր խավարը ավելի սարսափեցրեց նրան։

— Մայրի՛կ, մայրիկ, զարթնիր, ես վախենում եմ,— լսեց մայրը մանկան աղաղակն ու զարթնեց։

— Ինչո՞ւ ես վախենում,— ասաց նա, վեր թռչելով փոքրիկի ձայնից խայթված։

— Մայրիկ, էլի կրակում են։ Լսի՛ր։

Մայրական քնքուշ ձեռը, որին բնությունը այնքան սեր էր ներշնչել, մեղմիկ իջավ փոքրիկի սառը քրտինքով թրջված ճակատի վրա։

— Լսո՞ւմ ես, մայրիկ, ականջ դիր։

Գիշերային հանգիստը վաղուց էր խանգարվել հրացանի ճարճատյունով։

Սլացան վերջին գնդակները՝ հատ-հատ ինչպես երամից ետ մնացած թռչուններ. հայտնի չէր որտեղից և ուր։ Եվ նորեն տիրեց լռություն։

— Մայրիկ, ինչո՞ւ են կրակում։

— Հենց այնպես, հաճույքի համար։

— Բայց ես վախենում եմ։

— Մի՛ վախենար, զավակս, հեռվում են կրակում։

— Շա՞տ հեռվում։

— Շատ հեռվում։

— Գնդակները մեր տանը չե՞ն հասնիլ։

— Չեն հասնիլ, զավակս, չեն հասնիլ։ Քնիր հանգիստ։

Թռավ մանկական կրծքից մի ծանր, ոչ մանկական հառաչանք։

Չհանգստացավ նա։ Երկար, երկար ժամանակ պտտում էր իր անկողնում։ Եվ նրա վառ երևակայության մեջ մի առ մի զարթնեցին բոլոր այն սարսափները, որ մայրը կարդացել էր նրա համար մանկական գրքերից։ Անտառումն էր նա իր ընկեր ու ընկերուհիների հետ։ Ուշացել էին տուն վերադառնալու, մոլորվեցին։ Դեգերում էին ծառերի մթության մեջ։ Առյուծներ, վագրեր, գայլեր ու բորենիներ, օձեր ու կարիճներ։ Եղջյուրավոր դևեր, պոչավոր սատանաներ, կմախքներ, որոնք ծիծաղում էին, ահռելի պառավներ մանգաղներով զինված։ Մարդիկ առանց գլուխների, գլուխներ առանց մարմինների, որ խոսում են ու թավալվում գետնի վրա, մեծ անդունդներ վիշապներով լեցուն։ Բոլորը, բոլորը, ինչ որ ստեղծել էր բանաստեղծների հիվանդոտ երևակայությունը մանուկ սերնդի կրթության համար։

Վիշապի մի սոսկ սուլոց, հետո երկրորդը, երրորդը...

— Մայրի՛կ, զարթնիր ես վախենում եմ,— դուրս թռավ մանուկն իր փոքրիկ անկողնակալից և ընկավ մոր գիրկը։

Տակավին մութն էր։

— Ի՞նչ պատահեց քեզ, մանուկս։ Քնիր, դեռ մութն է։

Նորեն նա փոքրիկին դրեց իր անկողնակալի վրա, ջերմ համբույրներով հանգստացրեց նրան։

— Ոչ, չեմ կարող քնել, մայրիկ, մի բան պատմիր ինձ համար։

— Ի՞նչ պատմեմ։

— Ինչ ուզում ես, ինչ ուզում ես, լավ բան։

— Կամենաս, կարդամ քեզ համար այն դեղին գրքից։

Մանուկը սարսափեց։

— Ո՛չ, ո՛չ, ոչ,— գոչեց նա,— չեմ ուզում, դեն գցիր

դեղին գիրքը։ Գցիր վառարանի մեջ, թող այնտեղ այրվի։ Պատմիր ուրիշ բան, քեզանից պատմիր։

Եվ աստված լուսավորեց մոր միտքը։ Եվ մայրը դարձավ բանաստեղծ ու ստեղծագործեց անմիջապես։

Դա իր հարազատ զավակի իսկ կյանքն էր։ Եղել է մի մանուկ վեց տարեկան։ Ծնողները սիրել են նրան իրենց հոգու ամբողջ ջերմությամբ, շոյել ու փայփայել են ու ոչինչ չեն խնայել նրա համար, ոչի՛նչ։ Մանուկը եղել է երջանիկ այդ սիրով և պաշտել է իր ծնողներին ու սիրել կյանքը։

Եվ աշխարհն այնքան հաճելի է եղել նրա համար, որ ոչ մի վիշտ, ոչ մի դառնություն չի ընկճել նրա մատաղ հոգին։ Ապրել է ու աշխատել, աշխատել է ու ապրել մինչև խորին ծերություն, միշտ ուրախ, միշտ զվարթ։ Նա հավատացել է կյանքին խորին հավատով և սիրելով կյանքն ու իր զավակներին, արհամարհել է մահը և միշտ հեգնել ու ծաղրել է նրան ինչպես առավոտն է իր պայծառ լուսով ծաղրում գիշերվա խավարը։ Արեգակը նրա համար է երկիրը լուսավորել, ծառերը նրա համար են բարձրացել, նռենիները նրա համար են բուսել ու անուշ բուրմունք տարածել, գետերը նրա համար են հոսել, աղբյուրները նրա համար են կարկաչել, թռչունները նրա համար են երգել, երաժիշտները նրա համար երկնքից աստվածային հնչյուններ իջեցրել, իսկ հուրը, սուրը նրա համար եղել են խաղալիքներ։ Ամեն ինչ, ամեն ինչ նրա երջանկության համար է եղել, և երկիրը ու երկինքը, և ծովերը և աստղերը, համայն տիեզերքը։ Մարդու համար։ Եվ մարդն եղել է հպարտ ու վեհ, ուրախ ու երջանիկ։

Եվ մայրական անուշ ու քնքուշ ձայնի երաժշտությամբ հանգստացավ մանկան փոթորկված հոգին, ու նրա աչքերը մեղմիկ փակվեցին...

Նա քնեց և այս անգամ նրան պաշարեցին այլ երազներ։ Երազներ, միմյանցից ուրախ ու հաճելի։ Ծաղկազարդ սարեր ու բլուրներ, պայծառ երկինք, զմայլելի երկիր, և երաժշտություն, այնքան դյութիչ ու այնքան կախարդիչ, որ մանկան լությունը ձուլվեց նրա հնչյունների հետ...

Գիշերային բուերը լռեցին, զարհուրելի պատկերները չքացան, ահռելի ուրվականները կորան։ Դադարեց աքաղաղների աններդաշնակ կանչը, օձերի վշվշոցը։ Սկսեցին երգել առավոտյան թռչունները գավթում գտնվող ծառերի վրա։ Երազը խառնվեց իրականության։

Մայրը զարթնեց, բաց արավ լուսամուտի փեղկերը։ Գարնանային արեգակի շողերը ոսկեզօծեցին մանկան երեսը, և նայեց մայրը ու նրա սիրտը սկսեց ուժգին բաբախել... Այն ի՛նչ անդորր ու երջանիկ ժպիտ էր մանկական դեմքի վրա։ Երբեք, երբեք նա չէր տեսել այդքան պայծառ, այդքան ուրախ ժպիտ։

Կյանքի ժպիտը։

Եվ մայրը վերցրեց անշնորհք բանաստեղծի մանկական երգարանը, որ լեցուն էր սարսափներով, շպրտեց վառարանը, ասելով.

— Ես եմ բանաստեղծ և ոչ դու։

ԻՄ ԿՅԱՆՔԻՑ

Սիրելի մանուկներ, ես ուզում եմ ձեզ մի քանի բաներ պատմել։ Կարծում եք գեների, չար ոգիների մասի՞ն։ Ոչ, իմ տեսածների և իմ լսածների մասին։

Հըմ, ի՞նչ կա, միմյանց երեսին եք նայում։ Երևի վախենում եք, որ ես ձեզ ձանձրացնեմ։ Դուք հանգիստ կացեք։ Ձեր աչքերի առջև կգան, կանցնին զանազան պատկերներ, ինչպես սինեմատոգրաֆի մեջ։ Որը ձեզ կծիծաղեցնի, որը կտխրեցնի, որը կհավանեք, որը չեք հավանիլ։ Բայց ինչ որ էլ պատմեմ, բոլորը պատահած բաներ են, ոչ մի հնարովի բան, ոչ մի հեքիաթ չկա։

Դե՛հ, խնդրեմ ականջ դնեք։

I

Մեր քաղաքը

Նախ ասեմ, թե ես ով եմ։

Անդրկովկասի մի անկյունում կա մի քաղաք, անունը Շամախի կամ Շիրվան։

Ա՜հ, հրաշալի է այդ քաղաքի բնությունը։

Այնտեղ երկինքը կապույտ է, ինչպես փիրուզա, երկիրը բույսերով, ծաղիկներով փարթամ, ինչպես մի սքանչելի պարտեզ։ Այնտեղ ձմեռը եղանակը մեղմ է, դուրեկան, ոչ քամի, ոչ փոթորիկ։ Իսկ գարնանը և ամառը բարձրագագաթ ծառերի վրա գիշեր-ցերեկ երգում են անթիվ սոխակներ։

Եվ ի՞նչ համեղ մրգեր կան այնտեղ, եթե գիտենաք, ինչ հոտավետ պտուղներ։

Սուտ չի լինի, եթե ասեմ, որ այդ քաղաքը երկրային դրախտ կլիներ, եթե չունենար մի մեծ դժբախտություն, այն է՝ երկրաշարժը։

Գիտե՞ք ինչ ասել է երկրաշարժ։

Օ՜, օ, աստված ոչ անի, որ տեսնեք բնության այդ սարսափելի արհավիրքը։

Ես տեսել եմ երկու անգամ մեծ, շատ մեծ երկրաշարժ։ Ամեն անգամ հենց որ երկիրը սկսում է շարժվել, գետնի տակից լսվում է ինչ-որ խուլ թնդյուն։ Կարծես այնտեղ թընդանոթներ են արձակում։ Պատերը դիպչում են միմյանց, կենդանիները սարսափած սկսում են վազել դեսուդեն, շները ոռնալով, կովերը բառաչելով, ոչխարները մայելով, ձիերը խրխնջալով։ Մարդիկ փախչում են իրենց տներից փոքրիկ երեխաներին գրկած։ Ամեն ինչ քանդվում է, ավերակ դառնում տներ, եկեղեցիներ, ուսումնարաններ, բոլորը, բոլորը։

Այս է պատճառը, որ մի ժամանակվա հարուստ և փարթամ Շամախին, այսօր այնքան աննշան է, խեղճ, աշխարհում մոռացված։

Բայց, չնայելով սրան, մարդիկ այնտեղ էլի ուրախ են, զվարթ։ Նրանք սրախոս են, սիրում են կատակներ անել, զվարճանալ։ Հարուստ չեն, բայց ինչ որ ունեն, նրանով գոհ են և պառավ կանանց պես չեն տրտնջում։ Բարի մարդիկ են, շատ հյուրասեր, շատ բարեկամասեր։ Բայց մեր մեջ ասած, մի քիչ շատախոս են և պարծենկոտ։

Ահա այդ պստիկ և աննշան քաղաքում եմ ծնվել ես։ Դրանից հիսունուերկու և կես տարի առաջ, մի գարնանային գիշեր։

II

Իմ ծնողները

Իմ հոր անունն էր Մինաս։ Նա մի շատ բարձրահասակ մարդ էր, խոժոռ դեմքով, թանձր շիկագույն բեղերով, որ միշտ ծածկած էին պահում նրա սեղմված բերանը։

Օհ, ես այժմ էլ հիշում եմ նրա խորն ընկած կապույտ աչքերը, որոնք թավ ունքերի տակից կայծեր էին արձակում բարկության միջոցներին։

Մորս անունն էր Օվսաննա։

Դա մի միջահասակ, քնքուշ կազմվածքով կին էր, գեղեցիկ դեմքով և թանձր ու գանգուր մազերով։ Քաղաքում նրան անվանում էին «Սիրուն Սոնա»։

Նա ոչ միայն դեմքով էր սիրուն, այլև հոգով, սրտով, վարքով ու բարքով։

Շատ բարի և զգայուն կին էր։ Հիշում եմ նրա դառը հառաչանքները, երբ տեսնում էր մարդկանց ցավն ու տանջանքները։ Հիշում եմ նրա մեղմ, դուրեկան ժպիտները և թույլ ծիծաղը, երբ ուրախ էր։ Նրա կինամոնագույն խոշոր աչքերը նայում էին սիրով ու գուրգուրանքով ոչ միայն իր զավակներին, այլև բոլոր, բոլոր երեխաներին։

Ես նրան պաշտում էի, ինչպես դուք եք պաշտում ձեր մորը, սիրելի մանուկներ։

Որքան մայրս մեղմ էր և հեզ, այնքան հայրս խստաբարո էր և հպարտ։

Այդ մարդը քիչ էր ժպտում, ավելի քիչ ծիծաղում։ Բայց աղնիվ էր, արդարասեր, ճշմարտախոս։ Երբեք սուտ չէր ասում և ատելով ատում էր սուտ խոսողներին։ Ոչ ոքից չէր վախենում և ատում էր վախկոտներին, քանի՞-քանի՞ անգամ նա մեն-մենակ ձիով գիշերներն անցել է մութ անտառներ և ձորեր։ Քանի՞-քանի՞ անգամ ավազակների է հանդիպել և նրանց հետ հրացանաձգություն ունեցել։ Եվ չնայելով իր արկածալի կյանքին, նա ապրեց ութսունհինգ տարի։

Նա ինձ միշտ ասում էր.

— Է՞յ, Ալեքսանդր, կյանքումդ շատ անգամ փորձանքի կհանդիպես, չվհատիս, հույսդ դիր աստծու վրա։ Թշնամիներ կունենաս՝ զգույշ կաց, բայց մի՛ վախենար։ Բարեկամներ կունենաս, հավատարիմ եղիր նրանց, պահանջիր, որ նրանք էլ հավատարիմ լինեն քեզ։ Սուտ չխոսես, չխաբես, բայց տես, որ ստախոսների հետ էլ գործ կունենաս, չխաբվես։

Թե հայրս և թե մայրս գրել-կարդալ չգիտեին։ Բայց երկուսն էլ զգում էին, որ գրել-կարդալը լավ բան է։

Հայրս ժամանակ չուներ ինձնով զբաղվելու։ Տարենը երկու անգամ նա սրբում էր իր չախմախի երկայն հրացանը, արծաթապատ ծուռ կոթանի ատրճանակը, լայն դաշույնը, ձի նստում և գնում Ղուբա քաղաք մի քանի ամիսներով։

Մայրս էր մեծ մասամբ հոգում իմ մասին։ Եվ ես, ուղիղն ասած, նրան եմ պարտական, որ այսօր գրել-կարդալ գիտեմ։

III

Ուսումնարան

Յոթ տարեկան էի, երբ մայրս ինձ տվեց ուսումնարան։

Ես միջակ մանուկ էի, ոչ անշնորհք, ոչ էլ մեծ շնորհքով։ Աշխատասեր չէի, բայց շատ էլ ծույլ չէի։ Էհ, ձեզ նման մի բան էի։ Բայց, ներողություն, կարելի է դուք ինձնից լավ եք։ Տա աստված։

Ես շատ միամիտ տղա էի։ Հա, քանի միտս է, պատմեմ ձեզ իմ միամտության մասին մի զվարճալի բան։

Մի օր ուսուցիչս, որին Սարգիս վարպետ էին կոչում, ինձ վրա բարկացավ։ Դասս լավ չէի պատրաստել։ Նա ականջս մի լավ քաշեց, հետո բաց արավ դասագիրքս և, ցույց տալով դասս, ասաց.

— Տես, էգուց այստեղից մինչև այստեղ ջուր կանես։

— Շատ լավ, վարպետ, ջուր կանեմ,— պատասխանեցի ես։

Մեր փողոցից ոչ հեռու կար մի աղբյուր։ Մյուս օրը դա-

սագիրքս տարա, պահեցի նրա տակ այնքան, որ բոլորովին ջուր դարձավ։

Բերի ուսումնարան և հպարտ-հպարտ ցույց տվեցի վարժապետիս։

Սարգիս վարպետը առաջ մի կուշտ ծիծաղեց։ Բարի մարդ էր։ Բոլոր աշակերտներն էլ ծիծաղեցին։ Ես ապուշ-ապուշ նայում էի սրա նրա երեսին։

Հանկարծ Սարգիս վարպետը կատաղեց։ Նա հրամայեց բաց անել առաջ մի, հետո մյուս ձեռիս ափը և սկսեց քանոնով տուր թե որ կտաս։

Լավ էր, որ քանոնի տափակ կողմովն էր զարկում և ոչ սուր կողմով։ Այնուամենայնիվ, ձեռքերս սաստիկ ցավեցին։ Ես լաց եղա։

— Անիրավ,— ասաց Սարգիս վարպետը,— ես քեզ երեկ ասացի, որ դասդ ջուր անես, այսինքն՝ անգիր անես ջրի պես, իսկ դու տարել ես գիրքդ թրջել ու բերե՞լ։ Դե, լավ, քիչ տրզա՛, դու դասագիրքդ ես ջուր արել, ես էլ քո աչքերը ջուր արի։ Տես, մյուս անգամ ասածս լավ հասկացիր։ Եվ դուրս բերելով գրպանից մի մեծ գույնզգույն թաշկինակ, սրբեց աչքերիս ջուրը, այսինքն՝ արտասուքը։

Երկար, շատ երկար ժամանակ աշակերտները չէին մոռանում իմ արածը և միշտ ծաղրում էին ինձ։

Սարգիս վարպետը բողոքական էր։ Նա մինչև անգամ ինքն էր առաջին անգամ բողոքականություն ընդունել հայերի մեջ։ Իսկ իմ ծնողները լուսավորչականներ էին։

Մեր ծխական քահանան, Տեր-Սահակը, ատելով ատում էր բողոքականներին։ Նա միշտ իմ մորը հանդիմանում էր, որ ինձ տվել է բողոքականների և ոչ լուսավորչականների ուսումնարան։ Իսկ մայրս թեև տգետ կին էր, բայց հասկանում էր, որ բողոքական, լուսավորչական, թե կաթոլիկ միևնույնն է, բոլորն էլ մարդիկ են։

— Միայն թե իմ երեխան ուսում ստանա,— ասում էր նա տեր-հորը։

Բայց և այնպես ես երկար չմնացի Սարգիս վարպետի մոտ։ Մայրս ինձ դուրս բերեց և հանձնեց Տեր-Ավանեսի դպրոցը։

Տեր-Ավանեսը

Հիմա լսեցեք, թե այդ Տեր-Ավանեսն ով էր և ինչ։

Դա մի հասարակ գյուղացի էր եղել, եկել էր մեր քաղաքը, գրել կարդալ սովորել և եկեղեցում տիրացու դարձել։ Թե ինչպես էր քահանա ձեռնադրվել, աստված գիտե։ Գլխավորն այն է, որ ինքը հազիվհազ ավետարանը կարդալ գիտեր, ուսումնարան էր բաց արել և դաս էլ էր տալիս մեզ, ամեն մեկիցս վերցնելով ամիսը մի ռուբլի։

Եվ ի՞նչ դաս, «այբ, բեն, գիմ, դա, բեն, ինի, մեն, սե» և այլն, բայց այն էլ ասեմ, որ մեծ աշակերտները կարդում էին սաղմոսագիրք, ավետարան, ավելի ուսյալները՝ աստվածաշունչ, մինչև անգամ ճարտասանություն։

Ես արդեն ուսյալներից էի։

Մի լղար դեմքով, սև, թանձր և երկայն մորուքով մարդ էր այդ Տեր-Ավանեսը։ Նրա ունքերը միշտ կիտված էին, երեսը թթված, կարծես, միշտ փորը ցավում էր։ Փոշտալիս երեսը խաչակնքում էր և ասում.

— Տեր, դու չարը խափանես։

Երկու բանում նա շատ եռանդուն էր, ուտելում և ծեծելում։

Ամենից ավելի սիրում էր խնձորի տոլմա և փախլավա։ Ընկույզի հալվա էլ էր սիրում, բայց ավելի պակաս, քան ճտով փլավ։

Մեր ծնողները այդ բանը գիտեին, ուստի ով կարող էր տեր-հորը բաժին էր ուղարկում։ Ես այսօր էլ զարմացած եմ, թե ինչու այդ մարդը ուտում էր, ուտում, էլի լղար էր մնում։

Նա ծեծում էր մանավանդ այն աշակերտներին, որոնց ծնողները չէին կարողանում խնձորի տոլմա կամ ընկույզի հալվա ուղարկել նրա համար։

Ամենից շատ ծեծվում էր Շամչիանց Ավետը։ Այն էլ ասեմ, որ դա մի վերին աստիճանի անհանգիստ տղա էր։ Շարունակ թռչկոտում էր, պարում, երգում։ Երբեմն դասա-

միջոցներին կանգնում էր ձեռքերի վրա, գլուխը դուրս էր բերում ոտների արանքով և ասում.

— Փի՛շ, փի՛շ, փիշ, փիշ։

Նա սիրում էր սրան-նրան խաղցնել կամ կմշտել։ Հակառակի պես միշտ իմ կողքին էր նստում և դասի ժամանակ շարունակ կմշտում էր ինձ։ Առանց այդ էլ ով ասես ինձ կմշտում էր, որովհետև մանուկ ժամանակս ես բավական հաստ էի։

Մի օր Ավետը ինձ այնպես պինդ կմշտեց, որ ես գոռացի.

— Վա՛յ, վա՛յ։

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց Տեր-Ավանեսը, երկայն ճիպոտը բարձրացնելով։

— Ճանճը կծեց ականջս,— պատասխանեցի ես։

Բանն այն է, որ ես վախեցա մատնել Ավետին։ Նա կարող էր փողոցով անցնելիս ինձ մի լավ ծեծել, որովհետև ինձնից մեծ էր և ուժեղ։

— Ճանճի կծելով կարելի՞ է արջի պես բղավել,— կատաղեց Տեր-Ավանեսը։

Բարեբախտաբար այդ օրը մենք խնձորի տոլմա ունեինք և տեր-հայրն արդեն յուր բաժինը ստացել էր, նա ինձ չծեծեց։

Երբեմն Տեր-Ավանեսը գալիս էր մեր տուն։ Ամեն անգամ «պահպանիչ» էր ասում։ Հետո գովում էր իմ ժրությունը և աշխատասիրությունը։ Մայրս նրան հյուրասիրում էր ջեջի օղիով և մուրաբաներով։

Միծաղս գալիս էր, երբ Տեր-Ավանեսը մուրաբա էր ուտում։ Շատ անգամ ձմերուկի մեղրոտ կճեպը կամ վարդի տերևները ընկնում էին նրա երկայն մորուքի վրա և հետո սահում դեպի փարաջեն։ Մի անգամ ընկույզի մուրաբայի հետ երկու ճանճ կուլ տվեց առանց իմանալու։ Եվ կարծում եմ այս էր պատճառը, որ մյուս օրը նա մի լավ ծեծեց երկու աշակերտի, որ ճանճերի հետ խաղում էին։

Առհասարակ, հանգուցյալը համ լավ ուտում էր, համ էլ լավ ծեծում։

V

Ավետի քիթը

Պետք է ասեմ ձեզ, որ Շամչիանց Ավետը շատ մեծ քիթ ուներ։ Եվ օր օրի վրա այդ քիթը մեծանում էր։

Աշակերտները շարունակ ծաղրում էին, անվանելով նրան «քիթ Ավետ»։ Նա բարկանում էր, կատաղում, աջ ու ձախ բռունցքով, ոտով, գլխով սրան էր խփում, նրան։ Բայց ո՞ր մեկին հաղթեր։ Չնայելով իր ուժին և քաջությանը, նա օր օրի ընկճվում էր ու խեղճանում իր քթի պատճառով։

Վերջը, տեսնելով, որ հնար չկա ամենքի հետ կռվելու, սկսեց ինքն էլ ծաղրել իր քիթը։ Կարծում էր, որ եթե ինքը ծաղրե, ուրիշները կդադարեն ծաղրելուց։ Բայց չեղավ։ Քանի նա խեղճանում էր, այնքան աշակերտները երես էին առնում։

Մանավանդ կար մի պստիկ տղա Աղալո անունով։ Դա կատարյալ երկնային պատիժ էր Ավետի քթի համար։

Մի օր դասի ժամանակ Աղալոն թղթից շինեց մի կով, գլուխը թանաքով ներկեց և դրեց Ավետի քթի վրա։ Հետո հանգիստ կերպով գլուխը թեքեց դասագրքին, իբր թե դաս է սովորում։

Ավետը, իհարկե, իսկույն կովը քթից դեն գցեց և բռունցքով մի լավ զարկեց Աղալոյի կողքին։

— Վա՜յ մամա,— գոռաց Աղալոն և լաց եղավ։

— Ի՞նչ պատահեց, —ասաց Տեր-Ավանեսը, որ այդ ժամանակ մի մեծ տանձ էր կճպում, որ ուտի։

— Ավետը ինձ կոփեց,— գանգատվեց Աղալոն, հեկեկալով։

— Իժ, օձի զավակ, ես քո քիթը կջարդեմ,— գոչեց Տեր-Ավանեսը մոտենալով Ավետին։— Դե՛ եկ մեջտեղ, եկ տեսնեմ։

Շատ բողոքեց խեղճ Ավետը, որ մեղավորը Աղալոն է, ինձ էլ վկա բերեց, ոչինչ չօգնեց։

Բանն այն է, որ տանձը Աղալոյի հայրն էր ուղարկել

Տեր-Ավանեսի համար։ Ինչպե՞ս կարելի էր նրա որդուն ծեծել գոնե այն օրը։

— Ֆալախկան բերեք,— հրամայեց Տեր-Ավանեսը։

Ֆալախկան բերեցին։ Այդ մի բավական երկայն և հաստ փայտ էր։ Նրա ծայրերից կապած էր մի կաշվե ամուր թոկ։

— Պառկիր,— հրամայեց Տեր-Ավանեսը։

Ավետը պառկեց խսրի վրա երեսն ի վեր։

— Ոտներդ բարձրացրո՛ւ,— շարունակեց Տեր-Ավանեսը։— Այ, այդպես։ Հագցրեք ֆալախկան։ Շուռ տվեք, ա՛յ այդպես։

Երկու աշակերտ բռնեցին ֆալախկայի ծայրը։ Ավետի ոտները ցցվել էին օդի մեջ անշարժ։ Պատառոտված գուլպաների միջից երևում էին նրա մատները։

Տեր-Ավանեսը, ճիպոտը տալով ինձ, հրամայեց.

— Զարկիր։

Ուղիղն ասած, ես խղճացի Ավետին։ Ինչ մեղավոր էր նա, որ մեծ քիթ ուներ։ Մի քանի անգամ ճիպոտը զարկեցի և կանգ առա։

— Զարկիր,— հրամայեց Տեր-Ավանեսը, շարունակելով տանձն ուտել։

Մի քանի թույլ հարվածներ ևս տալով, էլի կանգ առա։ Ավետը բառաչում էր հորթի պես։

Նրա ոտներն արդեն կարմրել էին։ Մատներն այնպես ցցվել էին, որ կարծես, սպառնում էին փորս խրվել։

— Խեղճ է,— ասացի ես,— մեղավոր չէ։

Տեր-Ավանեսը մի ապտակ տվեց ինձ, առավ ճիպոտը և այնքան զարկեց, որ խեղճ Ավետն ուշաթափվեց։

— Ջուր բերեք,— հրամայեց Տեր-Ավանեսը։

Մի կուլա ջուր բերեցին, ածեցին Ավետի գլխին, ուշքի եկավ։ Վեր կացավ և տնքտնքալով ու կաղեկաղ գնաց, նստեց յուր տեղը։

Հետևյալ օրը նա ուսումնարան չեկավ։

Երրորդ օրը եկավ գույնը թռած, լղարած և լուռ նստեց յուր տեղը։ Նա ոչ մի խոսք չարտասանեց մինչև վերջ։

Աշակերտները փորձեցին դարձյալ սրախոսել նրա քթի

վրա, ուշադրություն չդարձրեց։ Ես մի քանի անգամ լսեցի նրա ծանր հառաչանքները։ Որքան էլ փոքր լինեի և միամիտ, հասկացա, որ ընկերս տանջվում է։ Ես խղճացի նրան, կամեցա կարեկցությունս արտահայտել։ Պետք է ասած, որ Տեր-Ավանեսի ուսումնարանում սեղաններ չկային, մենք նստում էինք հատակի վրա, ծալապատիկ։ Ես մի քանի անգամ ծնկովս կամացուկ զարկեցի Ավետի ծնկանը։ Նա չհասկացավ, կարծեց շարություն եմ անում։ Այն ժամանակ ես քրոնեցի նրա ձեռը և ամուր սեղմեցի։

Այս անգամ նա հասկացավ, նայեց ինձ և բարեկամաբար ժպտաց։

— Ալեքսան,— գարձավ նա ինձ, երբ փողոց դուրս եկանք,— ես ուզում եմ քեզ հետ խոսել։

Նրա ձայնը դողում էր, դեմքը լուրջ էր։

— Ասա ինչ որ ուզում ես,— պատասխանեցի ես։

— Մեկէլ օրը դու չէիր ուզում ոտներիս ճիպոտով խփել։ Ես հասկացա, որ խղճում ես ինձ։ Շնորհակալ եմ։ Դու լավ տղա ես, դու մեր հարևանն ես։ Դու չես ծաղրում իմ քիթը։ Ձեռդ տուր, բարեկամներ ենք։

Ես զգացված սեղմեցի ձեռը։

— Գալով Աղալոյին,— շարունակեց նա,— դու կտեսնես այս բոպեին, թե ինչպես կխրատեմ նրան։

Այս ասելով, Ավետը վազեց առաջ, բռնեց Աղալոյի թևերը երկու ձեռքերով և ասաց.

— Այ դու կատվի դունչ, մկան պոչ, խլեզ, քո պատճառով իմ ոտքերը ֆալախկայի մեջ գրին, ծեծեցին, տուգրին։ Հիմա էլ ցավում են։ Դու ծաղրում ես քիթս հա՞։ Դե կեր։

Եվ սկսեց ծնկով արագ-արագ խփել Աղալոյի ծնկներին, փոքին, կրծքին, այնքան, որ տղան բղավեց, մեզ կանչելով օգնության։

Մենք հազիվ կարողացանք Աղալոյին ազատել Ավետի ամուր ճանկերից։

Այդ օրից Ավետը և ես դարձանք բարեկամներ։ Ես կրավում էի ամենքի հետ՝ ով ծաղրում էր նրա քիթը։

VI

Տատիս վերքը

Հայրս աստվածաշունչ շատ էր սիրում և ամեն երեկո ինձ ստիպում էր կարդալ։

Ես նստում էի մինդարի վրա ծալապատիկ և բարձր ձայնով կարդում։

Մայրս, մի կողմ նստած, թոռ էր հյուսում, մեծ մայրս շարունակ քթախոտ էր քաշում և փռշտում։ Իսկ հայրս, ոտները ձգած, երկայն շիբուխը բերնին, աչքերը հատակին մի կետի հառած, ուշադիր լսում էր։

Տեղ-տեղ նա ընդհատում էր ինձ, ասելով.

— Այդ կտորը մեկ էլ կարդա։

Այսպես էին անցնում իմ երեկոները։

Գիշերները քնում էի տատիս հետ։ Եվ ամեն գիշեր նա ինձ պատմում էր հեքիաթներ։ Օհ, ես շատ էի սիրում այդ բարձրահասակ, հաղթանդամ պառավին, ոչ պակաս, քան մորս և ավելի, քան հորս։

Մի գիշեր, երբ նա շապիկը փոխում էր, ես նրա աջ կողքի վրա տեսա մի մեծ սպի, այսինքն՝ վերքի հետք։ Նրա երակայնությունը կլիներ մի մատիտի մեկ ու կեսի չափ։

— Տատ, այդ ինչ է կողքիդ վրա,— հարցրի ես հետաքրքրված։

Տատիս դեմքը մռայլվեց։

— Քո բանը չէ,— ասաց նա։

Ես լռեցի, բայց այնուհետև սպին ինձ ավելի հետաքրքրեց։

Ամեն երեկո հարցնում էի տատիս, թե ինչպե՞ս և որտեղ է ստացել այդ վերքը, նա պատասխանում էր.

— Հետո կպատմեմ, հետո։

Եվ միշտ, երբ այս ասում էր, նրա ձայնը դողում էր, դեմքը մթնում։

— Տեր աստված,— մտածում էի ես,— այդ ի՞նչ է նշանակում։

Հետաքրքրությունից սիրտս թրթռում էր, ես անհամբեր սպասում էի, երբ պիտի տատս պատմի յուր վերքի մասին։ Բայց նա շարունակ հետաձգում էր յուր պատմությունը։ Երբեմն, երբ ես շատ էի թախանձում, բարկանում էր վրես։

Զմոռանամ ասել, որ այդ կինը յուր որդու պես մռայլ էր և խստաբարո։ Նա միշտ տխուր էր։ Ասեմ դրա պատճառը քանի միտս է։ Նա ուներ երկրորդ որդի, որ իմ հորեղբայրն էր։ Այդ մարդը, որի անունն էր Հարություն, շատ սանձարձակ էր, ծույլ, շռայլ և արբեցող։

Ամեն գիշեր նա թափառում էր գինետներում, կռվում սրա ու նրա հետ, ծեծում, ծեծվում։

Տատս նրան սիրում էր անչափ և միշտ աղերսում էր նրան թողնել գինետները, վատ ընկերներին և դառնալ բարի, աշխատասեր մարդ։ Ոչինչ չէր օգնում։

Ամեն գիշեր տատս հատակի վրա դնում էր մի սիսեռ և ասեղի ծայրով մի կլոր շրջանակ գծում նրա շուրջը։

— Տատ, այդ ի՞նչ ես անում,— հարցրի ես մի անգամ։

— Հորեղբորդ պահպանում եմ փորձանքներից։

— Ուրեմն, սիսեռը հորեղբայրս է։

— Այո, իսկ այս շրջանը նրա պահապանը։

Ասաց տատս և սկսեց խաչակնքել ու աղոթել։

Մի երեկո նա, վերջապես, զիջեց իմ թախանձանքին և համաձայնվեց պատմել յուր կողքի վերքի մասին։

— Օհ,— ասաց նա,— քեզնից ազատվել չի կարելի։ Նստիր և ականջ դիր։

Եվ նա, մի պտղունց քթախոտ քաշելով, փռշտաց մի քանի անգամ և ահա թե ինչ պատմեց...

VII

Տատիս պատմությունը

— Սիրելի թոռնիկս,— այսպես սկսեց տատս իր պատմությունը, մաղերս շոյելով յուր շորացած և պողպատի պես ամուր մատներով,— դու գիտես, որ ես բացի երկու որդուց, ունիմ չորս աղջիկ։

— Նուրջի, Ոսկի, Շուշան և Թագուհի հորաքույրներս,— շտապեցի ավելացնել ես արագ-արագ։

— Այո, շարունակեց տատս,— մի անգամ ես քթախոտ քաշելով և փոշտալով։ Ամենից փոքրը Թագուհին է և ամենից հարուստը։ Դեռ սրանից քսան տարի առաջ նրա ամուսինն ամեն ամառ գնում էր Ռուսաստան ապրանք բերելու։ Ահա հենց այդ ժամանակվա մասին է պատմությունս։

Ականջ դիր։

Ես արմունկներս դրի ծնկներիս վրա, գլուխս հենեցի ձեռքերիս ափերին, աչքերս հառեցի տատիս երեսին և սկսեցի ուշադրությամբ լսել։

— Երբ Թագուհու մարդը քաղաքից հեռանում էր, աղջիկս մնում էր մեն-մենակ։ Նա երիտասարդ էր, նոր էր ամուսնացել, դեռ երեխաներ չուներ։ Նրա տունը լիքն էր խուրասանի գորգերով, Քիրմանի շալերով, Չին ու Մաչինի ամաններով, Մոսկովի թանկագին մաշկեղենով, ոսկեղենով, արծաթեղենով։ Այն ժամանակ շաբաթ չէր անցնում, որ մեր քաղաքում սրան-Նրան չկողոպտեին։ Ես աղջկանս մենակ թողնել չէին կարող։ Գիշերներն անց էի կացնում նրա մոտ, որ գողերից և ավազակներից պաշտպանեմ։

Ես խորին պատկառանքով նայեցի տատիս հսկայական թիկունքներին և առնական բազուկներին։ Դեռ երեկ նա ցորենի չուալը մեն-մենակ բարձրացրել էր և դրել մշակի մեջքին։ Ինչ ուժ կունենար քսան տարի առաջ։

— Մի գիշեր ես ու հորաքույրդ քնած էինք տան պատշգամբի վրա,— շարունակեց նա մռայլ ձայնով։— Ամառային գիշեր էր, սենյակում տոթից շունչ քաշել չէր լինում։ Դու գիտես, որ այդ պատշգամբի ծայրում կա մի լուսամուտ, որ նայում է դեպի մի փոքրիկ պարտեզ։ Շատ էի քնել թե քիչ — չգիտեմ, մեկ էլ լսեցի, որ լուսամուտից ինչ-որ ծանր բաներ ընկան պատշգամբի վրա։ Ես զարթնեցի, նստեցի անկողնիս մեջ։ Լռություն. ամեն ինչ հանդարտ էր։ Միայն հեռվից, շատ հեռվից լսվում էին շան հաչոցներ։ Լուսին չկար, բայց երկինքը պարզ էր, աստղերը պսպղում էին ալմաստի պես։

Նայեցի աջ ու ձախ — ոչ ոք և ոչինչ։ Հորաքույրդ հանգիստ քնած էր։ Ես նորից պառկեցի և վերմակը քաշեցի գլխս։ Նոր աչքերս խուփ էի տրել, հանկարծ ոտներիս վրա զգացի մի ինչ-որ ծանրություն և ցավ։ Կարծես մեկն ինձ կոխկրտելով, անցավ...

— Տատ,— գոչեցի ես,— ընդհատելով պառավի խոսքը,— ես վախենում եմ։

Տատս գրկեց ինձ, սեղմեց յուր լայն կրծքին։

— Հիմար, ինչի՞ց ես վախենում, ես այստեղ եմ,— շարունակեց նա, գլուխս համբուրելով։ Ես արագությամբ ոտքի թռա, գոռալով. «Ո՞վ էր նա»։ Աստղերի լուսով պատշգամբի ծայրում նշմարեցի հինգ-վեց մութ պատկերներ։ Մեկը նրանցից կամացուկ մոտեցավ այն սենյակի դռներին, որտեղ գտնվում էին հորաքրոջդ թանկագին իրերը։

Ես իսկույն հասկացա բանի էությունը։ Ավազակներ էին։ Իմ ձայնից հորաքույրդ զարթնել էր և նույնպես ոտքի կանգնել։ Սև պատկերներից երկուսը մոտեցան ինձ։ Կիսախավարի մեջ նկատեցի, որ նրանք զինված են մեծ-մեծ դաշույններով։ Թոռնիկս, մարդ վտանգների ժամանակ չպիտի ուշքը կորցնի։ Սառնությունը հաղթության քույրն է։ Ես չշվարեցի։ Առանց երկար մտածելու վերցրի վերմակս և մի ակնթարթում ձգեցի ինձ մոտեցողների գլխին։ Հորաքույրդ հետևեց իմ օրինակին։

— Անիծվածներ, ես ձեզ կխեղդեմ շան պես,— գոչեցի ես թրքերեն,— և երկուսին միասին գրկելով, բարձրացրի ու գցեցի լուսամուտով դեպի պարտեզ...

Արտասանելով այս խոսքերը, տատս կանգ առավ։ Երկյուղից և ուրախությունից սիրտս թրթռում էր բռնված ծտի պես։

Տատս հանգիստ էր։ Նա քթախոտ էր քաշում։

— Հետո՞, հետո՞,— գոչեցի ես անհամբերությունից շընչասպառ։

— Օհ՜, հորաքույրդ քաջ կին է,— շարունակեց պառավը հիացմամբ։ Նա իմ աղջիկն է իսկ և իսկ։ Նա էլ մեկին շպրտեց դուրս։ Ես վերցրի բարձս և ձգեցի այն մեկի երեսին, որ մոտեցել էր դռներին։

Մնացյալները մոտեցան ինձ։ Բայց ես այլևս վախ չունեի։ Հարձակվեցի նրանց վրա, երկայն մինդարը վերցնելով։

— Օգնություն, օգնություն,— աղաղակում էր հորաքույրդ,— մեզ սպանում են։

Սկսվեց անհավասար կռիվ երկու անզեն կանանց և երեք ավազակների մեջ։ Օհ, եթե ձեռքիս լիներ մի դաշույն, ոչ մեկին կենդանի չէի թողնիլ։

Բակում լսվեցին ձայներ։ Մեկը հրացան արձակեց։ Դրանք մեր հարևաններն էին, որ եկել էին մեզ օգնելու։ Նրանք զինված էին որը հրացանով, որը դաշույնով, որը փայտով։

Հանկարծ կողքիս վրա զգացի ինչ-որ տաքություն, ապա սաստիկ ցավ։ Ձեռս մոտեցրի, զգացի թացություն։

Ինձ վիրավորել էին դաշույնով։ Արյունը հոսում էր աղբյուրի պես։ Ես ուշաթափվեցի ընկա։

Բայց տունն և աղջկաս կյանքը ազատված էին։ Ավազակները փախան, տանելով իրենց հետ ջարդված ընկերներին։

— Ահա իմ վերքի պատմությունը, թոնիկս,— ավարտեց տատս, մի անգամ ևս քթախոտը մոտեցնելով յուր քթի լայն պնչերին։— Հանգստացա՞ր։ Այժմ պառկիր և քնիր։

Բայց ես այնքան ազդվել էի, այնքան հուզվել, որ այդ գիշեր մինչև լույս չկարողացա աչքերս փակել։

VIII

Մեր բթենիները

Մենք ունեինք հինգ թթենի — մեկը բակում, չորսը փողոցում։

Հենց որ թթի ժամանակը գալիս էր, այդ ծառերը դառնում էին իմ պարծանքը և հոգսը։

Ազատ ժամերիս մեծ մասը նրանց էի նվիրում։

Ձարաճճի մանուկները հանգստություն չէին տալիս խեղճերին։ Ով ճարպիկ էր — բարձրանում էր նրանց վրա և կապիկի պես ճյուղից ճյուղ ոստոստալով, ուտում էր համեղ պտուղները։ Ով չէր կարող—ցածից քարեր և փայտեր էր գցում և թուքը թափում գետնին։ Էլ չէին սպասում, որ պտուղը հասունանա, կարգին թափ տանք և բաժանենք ամենքին։

Ձեք կարող երևակայել, թե այդ բանը որքան վշտացնում էր ինձ։ Հազիվ անմեղ պտուղները զարդարում էին կանաչ ճյուղերը, հազիվ ծառերը սկսում էին հպարտ-հպարտ մտիկ անել դեպի վեր — կապույտ երկնքին, դեպի վար — անցորդներին — կողոպուտը սկսվում էր։

Ես ասում էի ամենքին.

— Տղերք, որքան ուզում եք կերեք թուքը, բայց ծառերին մի չարչարեք։ Մեղք է։

Ով էր լսում ինձ։ Ձար ձեռքերը օրը մինչև երեկո քարեր ու փայտեր էին արձակում խեղճերի վրա և նրանց տանջում։ Շատ անգամ մի երկու թթի համար ահագին ոստեր էին կոտրում։

Ես էի միայն նրանց պաշտպանը։ Ախ, այդ կանաչազարդ ոստերը, որպիսի ճչով և աղաղակներով էին պոկվում ճյուղերից և ընկնում գետնի վրա։ Ամեն անգամ, երբ տեսնում էի նրանց սալահատակի վրա սփռված, սիրտս էր մղկտում։ Ինձ թվում էր, որ դրանք իրանց մայրերի կրծքից խլված ու սպանված երեխաներ են, և մայրերը ողբում են նրանց։

Ամենից ավելի կարմիր թթի ծառերն էին չարչարվում, որովհետև նրանց պտուղն ավելի համեղ էր։ Լացս էր գալիս, երբ վայր ընկնող ոստերի հետ ընկնում էին հասունացած հատիկները։ Կարծես դրանք ծառերի արցունքները լինեին։ Կարմիր արցունքներ, արյան արցունքներ։

Օ՜օ, սիրելի ծառեր, մանկությանս սքանչելի ընկերներ, երեսունուհինգ տարի է ձեզ չեմ տեսել։

Ցորացե՞լ եք արդյոք, թե՞ անգութ կացինը կտրել է ձեզ բնից։ Եթե դեռ կենդանի եք, ո՞վ է ձեզ պաշտպանում ձեր ծերության հասակում, ազնիվ բարեկամներ։ Հիշում եմ ձեզ անհուն սիրով և երախտագիտությամբ։ Դուք ինձ շատ եք ուրախացրել, շատ հիացրել, շատ կերակրել։

Եվ քանի՜-քանի՜ անգամ ամառվա շոգ օրերին պատսպարել եք ինձ ձեր հովասուն ճյուղերի տակ ու զովացրել։ Քանի՜-քանի՜ անգամ ես ձեր պատճառով ծեծվել եմ և ծեծել։

Ահ, հիմա էլ գլխիս վրա է մնում այն վերքի տեղը, որ ստացա մի պատանու գցած քարից։

Մնացեք բարև, աղնիվ ընկերներ, ես այլևս ձեզ չեմ տեսնիլ...

IX

Պատերազմ

Մի օր ուսումնարանից նոր վերադարձած, մածունի փրթոշ էի ուտում։ Դարձյալ լսեցի մեր թթենիների աղաղակը։

Նրանք ինձ օգնության էին կանչում։ Վազեցի փողոց և ինչ տեսա, տեր աստված... Թուրք պատանիների մի մեծ խումբ վայրի գազանների նման հարձակվել են բարեկամներիս վրա և անխնա փշրտում են նրանց ոստերը, մինչև անգամ ճյուղերը։

Արյունս գլխովս տվեց, աչքերս մթնեցին։

Գոռալով հարձակվեցի թուրքերի վրա, մեկին ապտակեցի, մյուսին աքացի տվեցի, երրորդին թավալեցի գետնին։ Բայց ո՞ր մեկի հետ կռվեի։ Նրանք տասը հոգուց ավելի էին։

Հեկեկալով վազեցի տուն և տատիս գանգատվեցի։

Պետք է ասեմ, որ վերքի պատմությունը լսելու օրից տատս իմ աչքում դարձել էր հերոսուհի։ Ինձ համար այլևս չկար աշխարհի երեսին ավելի քաջ ոչ միայն կին, այլև տղամարդ։

Տեսնելով արտասուքս, նա կատաղեց վագրի պես։ Այդ ութսունհինգ տարեկան պառավ ոտքի թռավ ինչպես քսան տարեկան աղջիկ։ Գնաց բակը, վերցրեց մի բահ և վազեց փողոց։

Ես հետևեցի նրան, զինվելով մի մեծ փայտով։

— Էյ, լակոտներ, ինչպես եք համարձակվում Բոշանց Ծաղիկի թոռնին լացացնել։

Տեղն է ասել — սիրելի մանուկներ, որ տատիս անվանում էին Բոշանց Ծաղիկ։ Ասում էին, թե իբր նրա պապը եղել է բոշա, այսինքն՝ գնչու։

Թուրք պատանիները առաջ ծիծաղեցին տատիս տեսնելով, հետո հարձակվեցին մեզ վրա, փոքրիկ գայլերի պես։

Ես այսօր էլ լսում եմ տատիս սարսափելի գոռոցը, այսօր էլ տեսնում եմ օդի մեջ նրա զարհուրելի բահը։ Առաջին հարվածը նա տվեց մի չեչոտ հաստավիզ պատանու։

Թուրքերն ավելի կատաղեցին։ Օգնության հասավ Ավետն երեք-չորս ընկերներով, փայտերով զինված և շուխաները կռներին փաթաթված, ինչպես վահան։

Փայտերի հարվածներ էին, որ տեղում էին մեկ և մյուս կողմից կարկտի պես։ Մենք կամ նահանջ էինք տալիս, կամ հարձակվում, նայելով հանգամանքներին։

Ավետ՝, Ավետ, երբեք չեմ մոռանա այդ օրը։ Երբեք քո քիթն այնքան համակրելի չէ եղել ինձ համար, որքան այդ օրը։ Հենց այդ օրն էր, որ ես զգացի, թե մարդ կարող է ունենալ մեծ քիթ, ծուռ աչքեր, կուզ մեջք, կաղ ոտներ, բայց այդ չի խանգարում նրան լինել, միևնույն ժամանակ, քաջ տղա, աղնիվ ընկեր, վեհանձն հոգի։ Հենց այդ օրն էր, որ ես վճռեցի ոչ միայն չծաղրել մարդկանց մարմնավոր թերությունները, այլև ոչ ոքի թույլ չտալ ինձ մոտ ծաղրելու։

Հաղթությունը մենք տարանք, տատիս և քաջ Ավետի շնորհիվ։

Մենք ետ դարձանք հպարտ-հպարտ ինչպես հաղթական պատերազմից վերադարձող զորք։ Տատս գնում էր առջևից, բահը ուսին դրած, մենք հետևում էինք նրան, գոռալով.

— Հափ, հափ, հուռռա՛, ադա, հուռռա՛։

Այդ երեկո ուրախությունից մեր փողոցում վառեցինք մի մեծ խարույկ և սկսեցինք նրա վրայով թռչկոտել ետ ու առաջ։

X

Գասպար վարժապետը

Մի տարի անցած ինձ դուրս բերեցին Տեր-Ավանեսի մոտից և տվեցին Գասպար վարժապետին։

Մինչև հիմա էլ չգիտեմ ինչու համար էր այդ տեղափո-

խությունը։ Ես արդեն ճարտասանությունը ջրի պես էի կարդում, իսկ ավեստարանն ու աստվածաշունչն անգիր գիտեի։

Թե ինչ սովորեցրեց ինձ Գասպար վարժապետը, միտս չէ։

Բայց երբեք չեմ մոռանալ նրա կերպարանքը։ Դա մի հաստավիզ, հաստափոր մարդ էր, մոտ քառասունհինգ տարեկան։ Երեսն ու մեծ-մեծ ականջներն այնքան կարմիր էին, որ բարկանալիս կապտում էին բադրմջանի պես։

Բայց նա շատ քիչ էր բարկանում և իսկի մեզ չէր ծեծում։ Միայն շուտ-շուտ հաղում էր և երբեմն այնպես սաստիկ, որ կարծում էինք, թե պիտի խեղդվի։ Երբ հաղը վերջանում էր, նա յուր խոշոր պլպլող աչքերը տնկում էր մեզ վրա և ժպտում։ Կարծես ասում էր.

— Տեսաք՝, ինչ լավ պրծա։

Մենք սիրում էինք Գասպար վարժապետին։ Նա այնքան բարի էր, որ հաճախ մեզ հետ կատակներ էր անում։

Դասերի ժամանակ ոգևորում էր։ Արագ-արագ անցուդարձ էր անում ետ ու առաջ։ Նրա ոտները կարճ էին և մի քիչ ծուռ, ուստի ման էր գալիս ինչպես բադ — աջ ու ձախ երերալով։ Նրա լայն լաջվերդի գույնի շալվարը շրջազգեստի պես ծալծլվում էր ու ալիքներ գոյացնում։ Նրա դուրս ցցված փորից արծաթե գոտին ստեպ-ստեպ ցած էր իջնում։

Գասպար վարժապետը շատ էր սիրում Մադրասի գինի և խոզի մսի խորոված։ Հաճախ մենք նրան տեսնում էինք գինետներից դուրս գալիս։ Երբեմն նրանից տճկորի հոտ էր փչում։

Մի բան ասելով ասում էր Գասպար վարժապետը— աշակերտների հարցերը։ Երբ նրան թվաբանությունից կամ քերականությունից որևէ բան էինք հարցնում, նա միշտ ասում էր.

— Զահլես մի տարեք, կմեծանաք, կիմանաք։

Իրավ, հենց որ մեծացանք, իմացանք, որ Գասպար վարժապետը ոչինչ չգիտեր։

Բայց ներողություն, սխալվեցի մի փոքր։ Գասպար վարժապետը շատ լավ գիտեր այն բանը, ինչ որ այսօր անվանում են գործնական դասատվություն։ Շաբաթը մի կամ երկու անգամ նա մեզ տանում էր քաղաքից դուրս յուր կնոջ

համար սունկ ժողովելու կամ փիփերթ ու դաղձ քաղելու։ Իսկ տանը մեզ ստիպում էր թափ տալ յուր գորգերն ու խսիրները, հորից ջուր դուրս բերել։ Աշնանը բարձրանում էինք նրա տան տափակ հողյա կտուրը և նրա ճեղքերը հարթում մոխիրով կամ հարդով։ Հետո բանբվով ծեծում էինք, ամրացնում, որ առաստաղը չկաթի անձրևի ժամանակ։ Ձմեռն էլ կտուրը մաքրում էինք ձյունից։

Մի անգամ աշակերտները ապստամբվեցին, ասելով, թե չեն ուզում այդ տեսակ դասերով պարապել։ Գասպար վարժապետը չբարկացավ, բայց շատ խնդրեց, որ «գժություն» չանենք։

— Դուք իմ սիրուն բալաներս եք,— ասաց նա,— խոսքս տափը մի գցեք, թե չէ կնիկս...

Բանն այն է, որ այդ օրը Գասպար վարժապետի կինը լվացք ուներ։ Մենք պետք է լվացած շորերը տանեինք կտուրի վրա փռեինք, որ արևի տակ չորանան։

Շատ խնդրեց, աղաչեց Գասպար վարժապետը, չզիջեցինք։ Դռների առջև երևաց նրա կինը, սապոնաջրից կապտած բազուկներով։

— Հըմ, ինչո՞ւ եք ուշանում,— ասաց նա, ես շորերը քամեցի, վերջացրի։

— Չեն ուզում, ա կնիկ,— պատասխանեց Գասպար վարժապետը մեղավոր եղանակով։

Տիկինը կատաղեց։

— Ֆալախկան մեջտեղ բեր, կուզեն,— ասաց նա,— շատ են երես առել քո թուլությունից։ Դրանց ծեծով միայն կարելի է մարդ դարձնել։ Դեհ, ճիպոտը վերցրու։

— Ա կնիկ, թող, աստված սիրես,— աղերսեց Գասպար վարժապետը,— ես ինքս քո լվացքը կփռեմ արևի տակ։

Տիկինը յուր աջ ձեռի հինգ մատները բաց արավ, թափ տվեց օդի մեջ երեք անգամ դեպի յուր ամուսինն և ասաց խորին արհամարհանքով.

— Առա է՞, առա է՞, տափը մտնի քեզ նման վարժապետը, տափը...

Եվ հեռացավ։

— Այսօր հացս հարամ արիք գլխիս,— դարձավ մեզ

Գասպար վարժապետը հուսահատական եղանակով և թուլացած նստեց մինդարի վրա։

Այս դեպքից մի շաբաթ անց ես տեղափոխվեցի գավառական դպրոց։

XI

Իմ գառնուկը

Ես կենդանիներ շատ էի սիրում։

Հայրս ուներ երկու ձի։ Հիանալի նժույգներ էին—մեկը սևագույն, մյուսը ոսկեգույն։ Լեզգի Մահմադը, մեր հավատարիմ ծառան, ասում էր, թե քաղաքում ոչ ոք չունի այդպիսի ձիեր։

Ես սաստիկ փափագում էի հեծնել նրանց, բայց հայրս թույլ չէր տալիս, վախենում էր, որ ընկնեմ։ Մի անգամ միայն թույլտվություն ստացա ոսկեգույն նժույգը տանել ագբյուր ջուր տալու։ Վերադարձին կամեցա մի քիչ քշել և իսկույն ընկա։

Ոչ մի տեղս չջարդվեց, բայց տունդուզս մի ամիս ցավում էր։ Համոզվեցի, որ ինձանից ձի հեծնող չի դուրս գալ և այնուհետև սիրեցի ուրիշ կենդանիներ։ Մենք ունեինք կովեր, հորթեր, շներ բայց ամենից ավելի գառներ էի սիրում։

Հիշում եմ մի սև գառնուկ, որ հայրս գնել էր ինձ համար մի գատիկ։ Վեց ամիս ես նրան պահեցի, մեծացրի։ Գեղեցիկ գառնուկ էր, սիրուն դունչով։ Ուներ մի զույգ փոքրիկ եղջյուրներ, որոնց ես ամեն օր հավի ճարպ էի քսում, որ փայլեն։

Ես այնքան սիրեցի այդ գառնուկը, որ գիշերներն անգամ չէի ուզում բաժանվել նրանից։ Ամեն օր տանում էի քաղաքից դուրս արածացնելու։ Անունը դրել էի Լեյլի։ Նա վազում էր ետևիցս, ուրախ-ուրախ թռչկոտելով։ Լիզում էր ձեռներս, դնում էր դունչը ծնկներիս վրա և հետո խոշոր, գեղեցիկ աչքերը հառում երեսիս։

Շաբաթը երկու անգամ լվանում էի նրան սապոնով, սանրում։ Նրա եղջյուրները մխանում էին և կամաց-կամաց ծռվում։ Ես երազում էի մի օր տեսնել նրան մեծ խոյ դարձած և երևակայում էի, թե ինչպես պիտի կռվեր ուրիշ խոյերի հետ և հաղթեր նրանց։

Այդ իմ ամենամեծ փափագն էր, որի պատճառով երբեմն դասերս անգամ մոռանում էի։ Վերջը այնքան սիրահարվեցի իմ գառնուկի վրա, որ կյանքս պատրաստ էի զոհել նրա համար։

Սակայն խեղճ բարեկամիս գլխին կուտակվում էին սև ամպեր։ Օդի մեջ զգում էի սարսափելի վտանգ։ Ամեն երեկո հայրս ու մայրս քչփչում էին ինչ-որ։ Ես լսում էի մորս հատհատ խոսքերը. «Չեմ կարող ուտել նրա միսը, մեղք է, մեղք է» և այլն։

Կասկած չկար, որ խոսքը գառնուկիս մասին էր։ Հայրս ուզում էր մորթել նրան, մայրս չէր թողնում։

Բայց այն ժամանակները ընտանիքի օրենքը տան ամենամեծ տղամարդի կամքն էր։ Մի առավոտ, օհ, երբեք, երբե՛ք չեմ մոռանալ այդ դժբախտ օրը, հայրս դուրս բերեց յուր դաշույնի պատյանից դանակը և սկսեց սրել։ Վճռված էր. նա պետք է մորթեր ընկերոջս, բարեկամիս, որի հետ այնքան ուրախ օրեր էի անցկացրել։

Ես ընկա հորս ոտքերը, աղերսեցի, որ խնայի գառնուկիս, լաց եղա, հեկեկացի։ Ոչինչ չօգնեց. հայրս անհողդողդ էր։ Նա գնաց ախոռատուն, բռնեց խեղճ գառնուկիս և տարավ մեր տան ետևի փոքրիկ բակը։ Ես վազեցի, գրկեցի նրա գլուխը, համբուրեցի։ Ես չէի ուզում նրանից բաժանվել։ Հայրս յուր ուժեղ ձեռով հրեց ինձ։ Ես ընկա գետնին, հեկեկալով։

Վերջին անգամ փայլեցին անմեղ բարեկամիս գողտրիկ եղջյուրները արեգակի տակ։ Նա անհետացավ պատի ետևում։

Երբ հայրս մի քանի րոպե անցած երևաց արյունաթաթախ դանակը ձեռքին, ինձ թվաց, որ նա մարդասպան է։ ավելի՞, որդեսպան։

Ես ատեցի նրան։

Ինձ համար սկսվեցին դառն, վշտալի օրեր։ Ես խելա-

գարի պես էի, չգիտեի ինչ անեմ, ինչպես մոռանամ մորթված բարեկամիս։ Ամեն անգամ, երբ հիշում էի նրան, արտասուքը խեղդում էր ինձ։ Իսկ ես նրան հիշում էի ամեն ժամ, ամեն վայրկյան։ Հաճախ երազումս անգամ հալածում էր ինձ բարեկամիս ուրվականը...

Օհ, սիրելի մանուկներ, երբեք-երբեք գառնուկ չպահեք, եթե գիտեք, որ մի օր պիտի մորթեն նրան։

ՍԱՐԳԻՍԻ ՎԻՇՏԸ

Գիշերվա երկու ժամն էր արդեն, երբ Սարգիս Բաղալյանը ժողովարանի սանդղքից ցած իջավ տուն գնալու։ Նա հուզված էր, կատաղած։

— Ուրեմն չո՞րս օր,— հարցրեց նա սանդղքի ստորոտում կանգնած ավագին։

— Այո, չորս օր և չորս գիշեր,— պատասխանեց ավագը։

Սարգիսը մի հուսահատական շարժումն արավ, հագավ սպասավորի ձեռքով վերարկուն, գալոշները, վերցրեց անբաժան անձրևանոցը և դուրս գնաց։

Չորս օր և չորս գիշեր։ Անխիղճներ, անաստվածներ։ Չորս օր և չորս գիշեր կլուբը պիտի փակ մնա։ Ինչո՞ւ։ Որովհետև զատիկ է, եկեղեցի գնալու, աղոթք անելու, ոգի և մեղքեր քավելու օրեր։

— Ո՞ւր պիտի գնամ, ի՞նչ պիտի անեմ,— ասում էր Սարգիսը, բարձրանալով մի նեղ, մութ փողոցով դեպի այն տունը, ուր բնակվում էր։

Այո, ո՞ւր գնա, ի՞նչ անի այդ չորս օրը։ Կլուբը նրա համար ամեն ինչ էր՝ և՛ տուն, և՛ ընտանիք, և՛ թատրոն, և՛ զվարճության ու տխրության վայր։ Միակը աշխարհի երեսին, որ նա ուներ, միայն մեկը։ Երեկոները նա գալիս էր ժողովարան ամենից ուշ, մինչև որ կտային «տուգանքի» նախավերջին զանգակը։ Նա ցերեկներն էլ էր այնտեղ։ Գալիս էր առավոտյան տասը ժամին ծառաների և սպասավորների հետ

և դնում էր երեք ժամին։ Ճաշում էր, ընում, թել խմում և նորից գալիս կլուբ։ Երեսունուհինգ տարի էր նա անդամ էր և ոչ մի երեկո բաց չէր թողել, ոչ մի երեկո այդ երկար ժամանակվա ընթացքում։

Նրան ճանաչում էին ամենքը։ Նա ճանաչում էր ամենքին՝ սկսած կլուբի դռնապանից մինչև ավագների խորհրդի նախագահը։ Նա ճանաչում էր կլուբում ամեն ինչ, սկսած սանդղքի մոտ դրած վաղեմի չորացած ալյանդրից մինչև մեծ դահլիճի բոլոր անկյունները։

Նա թուղթ չէր խաղում, ոչ էլ շախմատ, ոչ էլ բիլիարդ և ոչ նարդի։ Գալիս էր մտնում նախ ընթերցարան, թերթում էր բոլոր լրագրերը։ Չէր կարդում, այլ միայն թերթում էր։ Հետո դանդաղ քայլերով մոտենում էր թուղթ խաղացողների սեղաններին, ամենքին հերթով, նայում էր տխուր, տնտարբեր հայացքով, նայում, հետո հեռանում, նորից մոտենում, նորից հեռանում։

Նա շատ լավ գիտեր, որ թուղթ խաղացողներն իրան չեն սիրում. նրա «ոտը» համարելով անհաջող։ Բայց այնուամենայնիվ մոտենում էր ամենքին, երբեմն նույնիսկ, առանց թույլտվություն խնդրելու, նստում խաղացողների քով և հետևում խաղին։

Այս էր նրա միակ հաճույքը։ Կլուբը իր խաղացողներով, իր բազմաթիվ տեսչություններով, իր քնահարբ ծառաներով, իր հնամաշ կահ-կարասիով։ Դա նրա միակ աշխարհն էր, իր ամբողջ կյանքը, ամբողջ։ Ուրիշ նա ոչինչ չուներ։

Եվ հանկարծ նրան առում են, թե չորս օր ու չորս գիշեր պիտի փակ մնա իր սիրեցյալ, իր պաշտելի ժողովարանը։

— Հանկա՞րծ։— Ոչ։ Ամեն տարի միևնույնը, երեսունուհինգ տարի։ Եվ տարենը չորս օր, մի օր էլ ջրօրհնեքին Սարգսին պատժում էին։ Եվ ի՞նչ պատիժ։ Չորս կամ հինգ օր ու գիշեր գլխիվայր կախված մնալ օդի մեջ։ Անտուն, անտեր։

Օհ, անասնատեսակներ, օհ, անխիղճներ։

Սարգիսը, ամուրի, միայնակ, աղգականներից, բարեկամներից, ծանոթ ընտանիքներից զուրկ Սարգիսը, արտասվեց։ Եվ միայն գիշերային լռությունն ու մթությունն իմացան, թե ո՞րքան մեծ է նրա վիշտը։

ԿՈՍՄՈՊՈԼԻՏԸ

Ինձ վիճակված էր երկու օր ու գիշեր Թիֆլիսից մինչև Ռոստով ճամփորդել նրա հետ և սքանչանալ նրանով։

Վագոն մտավ աննկարագրելի աղմուկով, ինչպես մեկն այն երջանիկներից, որոնք ամենուրեք իրենց համարում են տիեզերքի առանցքը։

Նա ոչ ավելի, քան քառասուն տարեկան տղամարդ էր, տակավին շատ կայտառ, շատ դյուրաշարժ։ Այնքան գեր չէր, որքան սովոր է գիրանալ հայը, երբ նրա ստամոքսը կուշտ է և գիտե կերածը մարսել։ Հասակը միջակ էր, կազմվածքը բավարար, թեև կուրծքը չափից ավելի լայն էր, իրանը երկար, գլուխը մեծ, ծոծրակը տափակ և պարանոցը կարճ։ Բայց ես վստահ եմ, որ Մոսկվայի շիկահեր և հաղթանդամ գեղեցկուհիները նրան կհամարեին եթե ոչ «զմայլելի», գոնե գրավիչ՝ իր ածուխի պես սև մազերի, թավ հոնքերի, թուխ երեսի, մանավանդ սև ու խոշոր աչքերի շնորհիվ։ Նրա հստակ սափրած երեսը, որ ծնոտի կողմում կապտագույն էր, կարճ խուզված և հարթ սանրած մազերը, նորաձև կտրած ընչացքը, մանավանդ անգլիական կտորից և անգլիական ձևով կարված մոխրագույն հագուստը նրան տալիս էին ժամանակակից ջենտլմենի տեսք։

Մի բան ևս, նրա ձայնը խոպոտ էր, ջախջախված։ Մի

ձայն, որ հատուկ էր վատանուն ախտ ունեցողներին կամ ոգելից ըմպելիքները ի չար գործ դնողներին։

Վարձատրելով իր գոռոցներից և հրամաններից շփոթված բեռնակրին մի քանի կոպեկներ ավելի, շիկ համարեց ավելացնել երկու-երեք ռուսական հիշոցներ, որոնք սակայն, շատ էլ թունդերից չէին։ Մարդը սովոր էր, երևի, անպատճառ վիրավորել սոցիալական սանդուղքի վրա իրանից վար կանգնողներին սոսկ այն պատճառով, որ վարձատրում էր նրանց քրտինքը։

Տեղավորելով իրերը, նա բատիստյա թաշկինակով սրբեց նեղ ու մսալի ճակատը և նստեց դիմացի նստարանի վրա։ Ապա գրպանից դուրս բերեց մի մեծ արծաթյա տուփ ծածկված բազմաթիվ ոսկյա և ադամանդյա մենագրերով, վերցրեց մի ծխախոտ, զարկեց տուփին մի քանի անգամ մունդշտուկի կողմով, որպեսզի փոշին դուրս թափի և վառեց մեխանիկական նույնպես արծաթյա հրատուփից։

— Հեռո՞ւ եք բարեհաճում գնալ,— հարցրեց նա ինձ ռուսերեն, ծխախոտի առաջին ծուխն արձակելով իր գլխից վեր, որպեսզի երկրորդն երեսովս տա։

— Մոսկվա։

— Նախանձում եմ։

— Ինչո՞ւ։

— Ես շատ եմ սիրում Մոսկվան, ավելի քան Պետրոգրադը։ Բարի և հյուրասեր քաղաք է։ Այնտեղ կարելի է ապրել քիչ թե շատ մարդավարի։ Եթե գործերս չխանգարեին, կգայի ձեզ հետ, բայց ասացեք խնդրեմ,— շտապեց ավելացնել նա,— այս կուպեում, բացի մեր երկուսից, էլի ճամփորդներ կա՞ն։

Ես ասացի, թե կան երկու ռուս սպաներ։ Նրանք դրսումն են և, երևի, շուտով ներս կգան։

— Ա՛հ,— գոչեց ուղեկիցս ձեռն արհամարհանքով թոթափելով օդի մեջ,— ես զինվորականներին ատելով ատում եմ։ Նրանք սիրում են սկանդալներ անել։ Եթե գիտենայի, ուրիշ կուպե կվերցնեի։ Բայց փույթ չէ, հետևյալ կայարանում կանցնեմ առաջին կլաս, մանավանդ, որ սովոր չեմ երկրորդով ճամփորդելու։

Եվ, մի քանի անգամ ևս ծխի քուլաները բաց թողնելով գլխից վեր, ավելացրեց.

— Բայց ես սկանդալիստներից երկյուղ չունեմ։ Ես գիտեմ նրանց զսպել և հարկը պահանջելիս մի լավ էլ խրատել։ Ես երկու անգամ օֆիցեր եմ ապտակել և մի անգամ էլ մի գեներալի ապուշ եմ անվանել։ Դուք իմ մասին չե՞ք լսել։ Զարմանալի է, թույլ տվեք ներկայանալ՝ Արկադիյ Մարկովիչ Ալթունով...

— Դուք հա՞յ եք։

— Ի՞նչ եք կարծում, ես նմա՞ն եմ հայի։

— Այո, ձեր տիպը հայկական է։

— Սխալվում եք, պարոն, սխալվում եք,— գոչեց ուղեկիցս մի տեսակ վիրավորված,— ինձ ոչ ոք հայ չի համարում։ Ամենը ասում են, որ ես իսպանացու եմ նման կամ իտալացու։

Ներս մտան մեր ուղեկիցները մի-մի հրացան ձեռքներին։ Ըստ երևույթին, նրանք որսի էին գնում։ Արտաքուստ երկու հակատիպարներ էին։ Մեկը երկայնահասակ էր, նիհար, շիկահեր, փոքրիկ քթով, որի վերին մասը տափակ էր, իսկ ծայրը ներկայացնում էր շագանակի պես մի բան։ Նրա երեսը սերկևիլի գույն ուներ։ Մյուսը միջահասակ էր, սև աչքունքով, գեր, առողջ, կարմիր այտերով և հաստ, հյութալի շրթունքներով։

Ես կարծեցի Արկադիյ Մարկովիչ Ալթունովն իսկույն որևէ կերպ կարտահայտի իր արհամարհանքը դեպի զինվորականները կամ գոնե կլռե։ Պատահեց հակառակը։

— Ախ,— գոչեց նա, ոտքի ելնելով,— ներեցեք, գուցե ես ձեր տեղն եմ բռնել։ Բարի եղեք ընտրել ձեր ցանկացած կողմը։

Սևահեր սպան բարեհամբույր ժպտաց և ասաց.

— Մի անհանգստանաք, մենք շատ էլ հեռու չենք գնում, ընդամենը երեք կայարան։

Երկայնահասակ և նիհար սպան, իր հրացանը տեղավորելով իրեն առջև, թշնամական մի հայացք ձգեց նախ ինձ, ապա Արկադիյ Մարկովիչ Ալթունովի վրա։ Նրա աչքերը կլոր

էին, փոքրիկ, ապակենման։ Նա նստեց իմ մոտ և, ոտներն առաջ ձգելով, վեր քաշեց կոշիկների երկայն վզերը։

Ես ամբողջ օրը դեսուդեն վազելով հոգնել էի, ուստի ներողություն խնդրելով, բարձրացրի նստարանի կոնակը, վեր ելա և պառկեցի։

Օրը դեռ ցերեկ էր։ Գնացքն ընթանում էր վերին աստիճանի դանդաղ, ահագին դղրդոցով և հարվածներով, ամենայն բարեխղճությամբ պահպանելով ռուսական երկաթուղիների սրբազան ավանդությունը — երբեք չշտապել և երբեք հանգիստ չթողնել ճամփորդների ոսկորները։

Չանցավ քառորդ ժամ, իմ ուղեկիցներն արդեն բավական ընտելացել էին իրարու։

Առաջին խոսողը դարձյալ Արկադիյ Մարկովիչ Ալթունովն եղավ։ Նա զանգատվեց։

— Կա՞ արդյոք աշխարհի երեսին ավելի ձանձրալի ճամփորդություն, քան մերը։ Գնացքն ընթանում է, ինչպես Բորչալուի ճոճռան սայլ, իսկ փառաբանված կովկասյան բնությունը ձեր աչքի առջևն է։ Նայեցեք, դաշտերն ու ձորերը չոբացած, լեռները մոխրագույն, մռայլ։ Անկյուն չկա, ուր հանգրստանա գեղասեր ճամփորդի հայացքը։ Բայց որ ամենագլխավորն է, գնացքները բուֆետ չունեն, իսկ կայարանների բուֆետներում մի բան ուտել կամ խմել չի կարելի, այնքան կեղտոտ են։ Սակայն ոչինչ, չկա անախորժ դրություն, որ իր ելքը չունենա։

Այս ասելով, նա բարձրացավ, վերցրեց վերին ցանցի վրայից մի գեղեցիկ զամբյուղ, բաց արավ և նրա միջից դուրս բերեց մի քանի շշեր և զանազան ուտելիքներ։

Ես ոչ ախորժակ ունեի և ոչ ցանկություն ջենտլմենի սեղանին մասնակցելու, ուստի ինձ քնած ձևացրի։ Նիհար ու երկայնահասակ սպան, որի անունը Իվան Միրոնովիչ Պաստուխով էր, ինչ-որ մրթմրթաց իր քթի տակ։ Իսկ նրա ընկերոջ՝ Իլարյոն Սիրաֆիմովիչ Տարաշչենկոյի, լայն ու կարմիր երեսն ավելի լայնացավ և փայլեց ներքին հաճույքից։

— Ինչո՞ւ չէ, կարելի է,— ընդունեց նա Ալթունովի հրավերը, իր տեղը շտկելով և ընչացքը շփելով կարճ ու հաստլիկ մատներով։

— Կոնյակը Մարտենի է, բարձրագույն մարկայի,— շարունակեց Ալթունովը, ուտելեղենները տեղավորելով լուսամուտի առջևի ծալովի սեղանիկի վրա։ — Ասում են սովորությունը երկրորդ բնույթ է, ինձ համար նա առաջինն է։ Խմել— արդեն ընտիրը խմել, եթե ոչ— շարժե։ Այնպես չէ՞, գնդապետ,— դարձավ նա Տարաշչենկոյին։

— Իհարկե, —հաստատեց լայներես սպան, հաղալով ու ձեռքերը շփելով իրարու, որպես հաճելի ու սրբազան պարտականություն կատարելու պատրաստվող մեկը։

— Իսկ գինին,— շարունակեց Ալթունովը, ավելի ու ավելի ոգևորվելով,— Ուդելնիյ Վեդոմստվոյի լավագույններից է։ Ճշմարիտ է, շատ էլ հներից չէ, ընդամենը տասնհինգ տարվա, բայց հույսով եմ կհավանեք։ Այս գինին ամեն մարդու չեն տալիս։ Պետք է ասած առանց սարծենալու, որ Ուդելնիյ Վեդոմստվոյի կառավարիչն իմ մտերիմ բարեկամներից մեկն է. երբեմն նա ինձ համար ուղարկում է հատկապես մեծ իշխանների համար պատրաստված գինիներից մի քանի դյուժին։ Ես էլ, իհարկե, պարտքի տակ չեմ մնում։ Ահա խավիար, ռոկֆոր պանիր, անչոուս, կիլկի, զանազան ապխտած ձկներ։ Գնդապետ, առաջին խոսքը ձեզ է տրվում,— դարձավ նա Տարաշչենկոյին։

— Դուք ինձ շարունակ գնդապետ եք անվանում, բայց ես միայն կապիտան եմ,— ուղղեց նրա սխալը Տարաշչենկոն։

Եվ, ընդունելով կոնյակի առաջին բաժակը, իսկույն նեթ դատարկեց։

— Համեցեք, կապիտան,— դարձավ Ալթունովը Պաստուխովին, առաջարկելով նրան երկրորդ բաժակը։

— Ներողություն, ես միայն պորուչիկ եմ,— մռմռաց երկայնահասակը, կարծես բարկանալով, որ կապիտան չէ։

— Ձեր կենացը,— առաջարկեց Տարաշչենկոն և շտապեց դատարկել սքանչելի հեղուկի երկրորդ բաժակը։

— Ո՜չ, պարոններ, ոչ,— ընդհատեց Ալթունովը,— ես համաձայն չեմ։ Մենք մի մեծ պարտք ունինք, որ չպիտի մոռանանք ուր որ լինենք։ Դա հայրենիքի սերն է։ Հանուն այդ սիրո ես առաջարկում եմ խմել նախ և առաջ անհաղթելի ռուս զորքերի կենացը։

— Կարելի է,— արտասանեց պորուչիկ Պաստուխովը, այնպիսի ներողամիտ եղանակով, որ կարծես համայն Ռուսիայի տերն ու հրամանատարն էր։

Եվ երկայն պարանոցն ավելի երկարացնելով, բաժակը բարձրացրեց օդի մեջ, նայեց նրան թափանցիկ և մի կումով դատարկեց։

Ըմպելիքներից հետո Ալթունովը գովեց ուտելիքները, ռոկֆորը Ֆրանսիայից հատկապես նրա համար է բերել տրված, խավիարն ու ապխտած ձկները մասնավորապես նրա համար են պատրաստված Սալյանում։

Կոնյակի բաժակները հաջորդեցին իրարու։ Շուտով ըսպաների գլուխները բավական տաքացան դեռ գինու շշերը բաց չարած։

— Գիտեք, ես զարմանում եմ, որ մարդիկ կարողանում են վագոնում քնել,— ակնարկեց Ալթունովը իմ վերաբերմամբ։

Որ խեղդեք էլ նա չի կարող քնել։ Առհասարակ քունը նրա կարծիքով կես մահ է, ուստի բարվոք է համարում գիշերները լուսացնել կլուբներում կամ հյուրանոցներում։ Կյանքը կարճատև է, պետք է օգտվել նրա ամեն մի վայրկյանից։ Այնպես չէ՞, գնդապետ, ներողություն, կապիտան։

— Բոլորովին ճիշտ եք հրամայում,— շտապեց համաձայնել Տարաշչենկոն, մի շատ նշանակալի հայացք ձգելով գինու փակ շշերի վրա։

Ալթունովը հասկացավ նրա միտքը և շտապեց շշերը բանալ։ Գինու առաջին բաժակը ևս նա պարտք համարեց նվիրել ռուսաց հաղթական զորքերին։

— Դուք սպա՞ եք եղել,— հարցրեց Պաստուխովը, խմելուց հետո սրբելով երկայն ու բարակ ընչացքը, որ գարու հասկերի էր նման։

— Բախտ չեմ ունցել այդ պատիվը վայելելու,— պատասխանեց Ալթունովը, խոր հառաչելով։

Բայց մեղավորը ինքը չէ, այլ հայրը։ Հանգուցյալը միայն մի որդի ունենալով, չկամեցավ նրան ուղարկել պատերազմի դաշտը՝ հայրենիքի պատիվը պաշտպանելու։ Նա բարվոք

համարեց, որ իր որդին էլ մնա հոր պես սոսկ կալվածատեր ու կառավարե տոհմային կալվածքները։

— Ուրեմն դուք կալվածատե՞ր եք,— հարցրեց Պաստուխովը, որ, ըստ երևույթին, շատ անհանգիստ էր իր ուղեկցի սոցիալական դիրքի վերաբերմամբ։

— Այո, ունիմ մի հինգ-տասը կտոր հողեր զանազան տեղերում։

— Հույսով եմ և ազնվական եք։

— Մարդու ծագումը ճանաչվում է նրա վարմունքից ու ձևերից,— պատասխանեց Ալթունովը համեստորեն։

— Ձեր վարմունքն ու ձևերը միանգամայն ազնվական են,— նկատեց Տարաշչենկոն, որ վաղուց էր հափշտակվել Ալթունովի հյուրասիրությամբ։

Բայց, ներեցեք, Արկադիյ Մարկովիչ Ալթունովը համեստ մարդ է։ Նա երբեք չէր խոսիլ իր ազնվական ծագման մասին, եթե չստիպեիք խոսել։ Գիտեք, պարծենալու համար չի ասում, այլ այնպես. նրա մայրը իշխանական տոհմից է, իսկ հայրը հին հայկական թագավորական տոհմից։ Այս մասին նա ունի անվիճելի փաստաթղթեր, բայց ուշադրություն չի դարձնում նրանց վրա, որովհետև...

— Որովհետև հայկական թագավորական ծագումը ոչինչ արժեք չունի Ռուսիայում,— լրացրեց Պաստուխովը մի տեսակ չարախնդությամբ։

— Մի՛ ասեք, պորուչիկ, մի ասեք, արժեք ունի,— շիտակեց ընկերոջ անքաղաքավարությունը բարեսիրտ Տարաշչենկոն, որի առանց այն էլ կակուղ սիրտը բոլորովին փափկել էր ոգելից ըմպելիքներից։— Ինձ հայտնի է, օրինակի համար, որ հայերը հին ազնվական ազգ են և քրիստոնեություն ընդունել են մեզանից ընդամենը հարյուր տարի հետո։ Եթե չեմ սխալվում, Ալեքսանդր Մակեդոնացու մայրն էլ հայ է եղել։

— Բոլորովին ճիշտ է,— հաստատեց Ալթունովը կապիտանի պատմական հմտությունը,— բայց ես չեմ պարծենում ոչ Ալեքսանդր Մակեդոնացու մորով և ոչ ուրիշներով։ Եթե ես պարծենկոտ լինեի, ավելի մոտիկ անցյալով կպարծենայի։ Օրինակի համար, կասեի, որ իմ հոր հայրը վրաց վերջին թագավորի քրոջ որդին է և մի տարի որսի ժամանակ տասնու-

մեկ վագր է սպանել։ Գիտեք, Կովկասի անտառներում վագրեր շատ կային։ Ռուս զորքերն եկան թե չէ, այդ սոսկալի գազանները փախան Հնդկաստանի խորքերը։ Եթե հետաքրքրվում եք, բարեհաճեցեք գալ իմ դղյակը, ես ձեզ ցույց կտամ սպանված առյուծների մորթիները։

Ալթունովը ճիշտ այդպես էլ ասաց՝ «դղյակ»։

— Թողնենք պատմությունը, մեր ժամանակներից խոսենք,— գոչեց Պաստուխովը մի փոքր գրգռված, գուցե այն պատճառով, որ իր պապը թագավորների հետ որսի չի գնացել,— ես կկամենայի գիտենալ՝ այժմ դուք ձեզ ի՞նչ եք զգում։ Հայ, թե՞ ռուս։

— Ես ինձ զգում եմ ծագումով հայ Գրիգորյան-լուսավորչական,— պատասխանեց Ալթունովն անմիջապես,— իսկ ազգով ռուս։

— Այդ ինչպե՞ս, ես չհասկացա։

— Ուզում եմ ասել, որ ես հայ-լուսավորչական ռուս եմ, ուղղափառ...

— Շատ լավ, դուք հեղափոխակա՞ն եք, թե՞ նացիոնալիստ։

— Ի՞նչ, հեղափոխակա՞ն,— գոչեց Ալթունովը միանգամայն վշտացած,— պորուչիկ, ի՞նչ եմ արել ձեզ, որ ինձ վիրավորում եք։

— Ուրեմն նացիոնալիստ եք։

— Ոչ, պարոն պորուչիկ, ես միապետական եմ,— գոչեց Ալթունովը, ձեռը ջերմեռանդորեն կրծքին զարկելով։— Ես պատրաստ եմ առաջին պահանջված դեպքում կյանքս զոհել գահի և կայսեր համար։

— Այդպես էլ հարկավոր է,— խրախուսեց նրան Պաստուխովը և մի մեծ կտոր խավիար դրեց բերանը։

— Իմ կարծիքով, բոլոր ազգերը հավասար են,— ասաց Տարաշչենկոն։

— Ոչ, կապիտան, այդպես չէ,— ժխտեց Պաստուխովը,— նորեն գրգռվելով,— ով Ռուսիայի սահմաններում է ապրում, պարտավոր է իրան ռուս համարել, ռուս զգալ և մտածել ինչպես իսկական ռուս։ Եթե այդպես չլինի, հայրենիքը կարող է կործանվել։

— Այդ բոլորովին ճիշտ է,— գոչեց Ալթունովը,— բայց չկարծեք, պարոնե՛ր, որ ես բախտ չունենալով զորքին ծառայելու, երկչոտ եմ կամ անընդունակ զենք գործածելու։

Օհ՜, ոչ, նա ճանաչված է որպես առաջնակարգ որսորդ։ Նա կարող է հարյուր քայլի վրա ատրճանակից կրակել խնձորի ծառի վրա որ խնձորը կամենաք, կամ թոցնել ծտի կտուցն ու պոչը։

— Եթե կտուցն ու պոչը թոցնես, տակը ի՞նչ կմնա,— նկատեց Պաստուխովը, կես-հեգնորեն, կես-ներողամտաբար ժպտալով։

— Իհարկե, բայց, այնուամենայնիվ, որ տեղին ուզենամ այն տեղին էլ կդարկեմ։

Գալով մարդկանց, դեռ երեք ամիս չկա, որ Ալթունովը մի ինչ-որ գերմանացի բարոնի մենամարտության կանչեց Բաթումում։ «Գարշելին» երկչոտությամբ մերժեց։

— Հետո դուք ի՞նչ արիք այդ անպիտանին,— հետաքրքրվեց Պաստուխովը, նայելով իր երկայն ընչացքի ծայրերին և սրելով նրանց։

— Այն, ինչ որ դուք կանեիք. օրը ցերեկով փողոցում մի լավ ծեծեցի մտրակով։

— Այդպես էլ հարկավոր էր,— տվեց Պաստուխովն իր հեղինակավոր հավանությունը։

— Թույլ տվեք հարցնել. ի՞նչ պատճառով էիք այդ վախկոտին մենամարտության կանչել,— հարցրեց Տարաշչենկոն խավիարի պատառը բերնում։

— Մի դերասանուհու պատճառով։

— Բրավո, ձեր կենացը։

— Կապիտան, ես բրավո չեմ ասիլ,— ասաց Պաստուխովը, ունքերը կիտելով։— դերասանուհիները չարժեն մեր արյան կաթիլներն անգամ։ Նրանք չափազանց շատ են սիրում ծաղիկներ և կոնֆետներ։

— Բայց ես ուրիշ բաների համար էլ եմ ուզեցել մենամարտել,— շարունակեց Ալթունովը, ավելի ոգևորվելով,— օրինակ, սրանից երկու տարի առաջ պապիցս ժառանգած ատրճանակի մի գնդակ խրեցի մեկի կուրծքը։

— Ինչո՞ւ։

— Անասունը հանդգնել էր իմ մոտ յապոնացիների քաջությունը փառաբանել և մերոնց ծաղրել։

— Ռեխը պիտի ջարդեիք,— մոնչաց Պաստուխովը, մի ուժգին շարժումն անելով։

— Կամաց, պորուչիկ, մի՛ տաքանար զուր տեղը,— ասաց Տարաշչենկոն, որի գինու բաժակը Պաստուխովի շարժումից ընկավ ձեռքից։

— Եվ ջարդեցի,— շարունակեց Ալթունովը,— ուրիշ կերպ չէի կարող անել։ Ինչ ուզում են թող ասեն, բայց երբ իմ հայրենասիրական զգացումը վիրավորում են, խելքս կորցնում եմ։ Դուք չգիտեք ես ինչեր եմ կրել ռուս-յապոնական պատերազմի օրերին։

Օհ՜, քանի-քանիսի հետ է վիճել ու կռվել, քանի-քանի անգամ է մենությանմեջ մասները կատաղությունից կրծոտել։ Յուսիմայի և Մուկդենի պարտությունները մի-մի անբուժելի վերք են բաց արել նրա պատրիոտ սրտի վրա։ Օհ՜, նա չի հանգստանալ, մինչև որ հայրենիքի ռազմական վարկը չվերականգնվի, մինչև որ մի սոսկալի վրեժ չառնվի այդ արհամարհելի մակակներից, այդ ճիպոտ կապիկներից։

— Այդ մասին չխոսենք,—խստորեն ընդհատեց Պաստուխովը, կուրծքն ուռցնելով և նայելով իր հրացանին։

— Այո, չխոսենք, այլ գործենք, գործենք,— համաձայնվեց Ալթունովը։

Շուտով գինու շշերը մեկը մյուսի հետևից դատարկվեցին և լուսամուտից դուրս թռան։

Խոսակցության նյութը փոխվեց։ Ալթունովը պատերազմից անցավ դեպի խաղաղ կյանքը Ռուսիայի։ Պարզվեց, որ նա մայրաքաղաքի լրագրներով է հետևում ներքին և արտաքին քաղաքականություններին։ Նա թունդ խոսքերով հեղափոխականներին հայհոյեց, պետական դուման ծաղրեց, հարձակվեց ուսանողության վրա, որ ուսում ստանալու փոխարեն պոլիտիկով են զբաղվում, ապտակեց ազատամիտ պրոֆեսորներին։ Հետո սկսեց հայհոյել նախ հրեաներին, ապա լեհացիներին, այնուհետև ֆինլանդացիներին։

Եվ հանկարծ գոչեց.

— Պարոննե՛ր, ես ուզում եմ ձեզ հետ «բոուտերշաֆթ» խմել, ի՞նչ կասեք։

— Պատրաստ եմ,— գոչեց Տարաշչենկոն։

— Կարելի է, սառն արտասանեց Պաստուխովը։

Այս երջանիկ բարեկամական համբույրը դրոշմվեց այն վայրկյանին, երբ գնացքը կանգ առավ սոսկալի դղրդյունով։ Վագոնների ընդհարումից համբուրվողները դիպան իրար, ապա բաժանվեցին, մեկ էլ դիպան, նորեն բաժանվեցին և ընկան՝ Ալթունովը մեկ, Պաստուխովը մյուս նստարանի վրա։

Տարաշչենկոն ծիծաղից թուլացավ։ Ձեռքերը գնելով կլորիկ փորի վրա, նա շնչասպառ մի քանի անգամ կրկնեց.

— Ահ, մեռա, ահ, մեռա, տեր աստված։

Պաստուխովը մի քանի վայրկյան ապշած նայեց դիմացինի կրծքին, ապա հանկարծ կատաղեց և մի քանի շատ կտրուկ հիշոցներ ուղարկեց մեքենավարի հասցեին։

— Ինձ թվում է, պարոն պորուչիկ, որ այդ լավ նշան էր, —ասաց Ալթունովը, թաշկինակով սրբելով շապիկի կուրծքը, որ թրջել էր գինով,— ասել է, մենք կբաժանվենք իրարուց և նորեն կհանդիպենք։ Այսպես, թե այնպես, թույլ տրվեք, պարոններ, հայտնել իմ անկեղծ գոհունակությունը ձեզ հետ ծանոթանալուս համար։ Զգայիք դուք, ով գիտե ձեր տեղերը պիտի բռնեին ինչ-որ հոտած հայեր կամ թուրքեր, որոնց, ի միջի այլոց ասած, ես արհամարհում եմ։ Ինչպե՞ս, դուք արդեն պատրաստվում եք իջնելո՞ւ։

— Այո, արդեն հասել ենք մեր կայարանը,— ասաց Տարաշչենկոն, հրացանը վերցնելով։

— Գնաք բարով, խնդրեմ վատ հիշատակ չտանեք իմ մասին։

— Օհ՜, ոչ, ընդհակառակը, շատ շնորհակալ ենք,— ասաց Տարաշչենկոն։

— Միայն մի բան ասեմ,— ավելացրեց Պաստուխովը,— Ուդելնոյի Վեդոմստվոյի կառավարիչը ձեզ խաբել է, գինին տասնհինգ տարվա չէր, նույնիսկ հինգ տարվա չէր...

Սպաները դուրս եկան վագոնից, Պաստուխովը խրոխտ քայլերով, Տարաշչենկոն երերվելով։

Մինչ Ալթունովը զբաղված էր ուտելիքների և ըմպելիքնե-

րի մնացորդը զամբյուղի մեջ ժողովելով, ես գլուխս դուրս քաշեցի լուսամուտով, որ կարդամ կայարանի անունը։ Սպաներն անցան լուսամուտի տակով, հաղորդելով միմյանց իրենց տպավորությունները Ալթունովից։

— Բարի մարդ է,— լսեցի Տարաշչենկոյի ձայնը։

— Խորամանկ արմյաշկա է, իր թթված գինով ուզեց մեզ կաշառել,— ասաց Պաստուխովը, հրացանը ուսին ձգելով։

Ես քնից նոր արթնացած ձևանալով իջա ցած։

Ալթունովը երջանիկ տրամադրության մեջ էր։ Մեջքի վրա պառկած, ոտքերը դիմացի պատիկին հենած, ծխում էր ու ինչ-որ քթի տակ մրթմրթում, իբր թե երգում է։ Նրա մուգ գեմքը կարմրել ու կապտել էր, խոշոր աչքերը լցվել էին արյունով, պարանոցի երակները փքվել էին։

— Ա՜հ,— գոչեց նա,— դուք դարթնեցի՞ք։ Վերջապես ազատվեցի այդ սոխերից։ Կերան, խմեցին, կորան։ Ափսոս արթուն չէիք. պետք է տեսնեիք, թե ինչ կատարվեց այստեղ։ Ես այդ խրտվիլակների գլխին մի լավ խաղ խաղացի, երբեք չեն մոռանալ։

Եվ նա պատմեց իր խաղը։ Քանից դուրս եկավ, որ իմ տեսածներն ու լսածները երազ էին։ Հյուրասիրելով սպաներին, նա «բավական քանակությամբ» թույն է ածել ուտելիքների և ըմպելիքների մեջ։ Նա ոչ միայն չի թաքցրել իր ատելությունը դեպի դինվորականությունն առհասարակ, այլև սաստիկ նախատել է նրանց, որ այդքան վայելուչ պաշտոնների ու արհեստների մեջ «աբյան դաշտն են իրանց կյանքի համար ասպարեզ ընտրել»։ Նա պարսավել է Ռուսիայի արտաքին ու ներքին քաղաքականությունները, այժմյան ռեակցիան, փոքր ազգերի հալածանքը և այլն, և այլն։ Նա պաշտպանել է ժողովրդի իրավունքները, պետական դումայի անձեռնմխելիությունը, ժամուկի կատարյալ ազատությունը և հազար ու մի այդպիսի ազատամիտ բաներ։

— Գիտեք,— ավարտեց Ալթունովն իր խոսքը, ոտքի կանգնելով,— երեսակայել չեք կարող, թե նրանք ինչպես ամաչեցին։ Նրանք ոչինչ չկարողացան ասել։ Նրանք մինչև անգամ համաձայնվեցին ինձ հետ և ցավ հայտնեցին որ, լինելով պետական ծառայության մեջ, չեն կարող համարձակ խոսել։

Ես, իհարկե, ձևացրի, թե հավատում եմ Ալթունովի ասածներին։ Չէ՞ որ ես քնած եմ եղել, ոչինչ չեմ լսել ու տեսել։

Հաջորդ կայարանում մեր կուպեն մտան երկու ինչ-որ թուրքեր մի-մի դաշույն մեջքներին կապած։

Մեկը նրանցից շիկահեր երիտասարդ էր սափրած երեսով։ Հագած էր սև ատլասյա արխալուղ, վրեն կարճ պիջակ, ոտքերին երկայնավիզ կոշիկներ։ Գլխին դրած էր Բուխարայի մորթուց կարած փոքրիկ գդակ։

Մյուսը ծեր էր, դեմքը խոշոր կնճիռներով ծածկված, թեև ընչացքը ներկած էր և ծայրերը խնամքով սանրած։ Նա հագած էր երկայն չուխա լայն փեշերով, ուսերի վրա չուխայից կարճ մոխրագույն վերարկու՝ պղնձյա ոսկեփայլ կոճակներով։

Ես նորեն բարձրացա իմ տեղը, որպեսզի չխանգարեմ նոբեկներին միմյանց քով տեղավորվելու վարի նստարանի վրա։

Ալթունովը կարողացավ հարմար վայրկյան որսալ ականջիս շշնջալու։

— Ահա մի զույգ ես ցանկալի հյուրեր— ինչ ասել կուզե։ Չէ՞, ես էլ պիտի պառկեմ քնելու, եթե միայն կարելի է քնել դրանց գարշահոտության մեջ։

Ներս մտավ կոնդուկտորը կուպեի մոմը վառելու։

— Ինչո՞ւ այդպես ուշ,— դիտողություն արավ Ալթունովը, թեև ուշ չէր,— կարծեմ կարող եք ձեր պարտականությունը ժամանակին կատարել։

Կոնդուկտորը, որ կանգնած էր նստարանի վրա, վառ լուցկին ձեռին, նայեց վերից վար մի տեսակ արհամարհանքով և ասաց։

— Ես չգիտեի, որ դուք այստեղ եք։

Նրա հեգնական տոնը Ալթունովի ինքնասիրությունը վիրավորեց։ Ուղեկիցս ձեռքերը դնելով պանթալոնի գրպանները և գլուխը հպարտ բարձրացնելով, գոչեց.

— Կոնդուկտո՛ր, բարեհաճեցեք մարդկանց ճանաչել և համապատասխան տոնով խոսել նրանց հետ։

— Ճանաչում եմ,— պատասխանեց կոնդուկտորը, առանց երեսը Ալթունովին դարձնելու,— առաջին անգամը չէ, որ ձեզ նման ճամփորդ եմ տեսնում։

— Կոնդուկտո՛ր, քաղաքավարի եղեք։

— Համենայն դեպս ձեզնից չպիտի սովորեմ քաղաքավարություն։

Ալթունովը բորբոքվեց։

— Լսում ե՞ք, լսում ե՞ք,— դարձավ նա թուրքերեն,— ահա այդպես են այդ գոեհիկները, միշտ կոպիտ։ Ես հենց առաջին կայարանից կհեռագրեմ երկաթուղու գլխավոր կառավարչին, որ իմ ամենամտերիմ բարեկամն է ու գիտի ես ով եմ։

— Կարող եք հեռագրել, որքան կամենաք,— պատասխանեց կոնդուկտորը, նստարանից իջնելով,— այդ տեսակ սպառնալիքներ մենք ամեն օր լսում ենք։

Եվ, մի հեգնական ժպիտ պարգևելով ուղեկցիս, դուրս գնաց։

— Վայրենի՛,— գոչեց Ալթունովը, մի ոտը հատակին զարկելով և բոունցքն օդի մեջ բարձրացնելով։— Սպասի՛ր, անասուն, երբ քեզ պաշտոնից կզրկեն, այն ժամանակ կիմանաս, թե ով է Արկադիյ Մարկովիչ Ալթունովը։ Ես դեռ երեկ Կովկասյան կառավարչապետի օգնականի հետ «Օրիանտ» հյուրանոցում ճաշելիս խոսում էի երկրի անկարգությունների մասին։ Հարկավոր է միայն չմոռանալ գնացքի համարը և այդ անպիտան կոնդուկտորի անունը հարցնել մեկից։ Ես իսկույն հեռագիր կկազմեմ։

Եվ, ծոցից դուրս բերելով հուշատետրը, ինչ-որ գրեց այնտեղ, արտասանելով,— հանդո՛ւգն, լի՛րբ, անասո՛ւն...

Այսպիսով, բավականաչափ զգալ տալով նորեկներին իր ընկերական դիրքի բարձրությունը (երկաթուղու կառավարչի հետ մտերիմ բարեկամ լինելը և հենց երեկ Կովկասյան կառավարչապետի օգնականի հետ «Օրիանտ» հյուրանոցում ճաշելը), նա պառկեց մեջքի վրա և սկսեց ինչ-որ կտոր երգել «Գեյշա» օպերետից։

Երբ բոլորովին հանգստացավ, դարձյալ գլուխը բարձրացրեց, նստեց և նորեկներին հարցրեց.

— Ո՞րտեղ եք բարեհաճում գնալ։

— Եվլախ,— պատասխանեց երիտասարդ թուրքը։

— Երևի առևտրական գործերով։

— Մենք առևտրով չենք պարապում,— ասաց երիտասարդը մի տեսակ վիրավորված եղանակով։

— Հապա՞։

— Մենք կալվածատերեր ենք։

— Կալվածատերե՞ր,— գոչեց Ալթունովը, կարծես ուրախանալով,— ներեցեք, ձեր ազգանո՞ւնը։

— Բեքիխանով Ռահիմ-բեգ։

Եվ որպեսզի իր բեգությունը ապացուցանե, երիտասարդը մորթու գդակը քաշեց աչքերի վրա, ծոծրակը բանալով, և վիզը քորեց։

— Կարո՞ղ եմ իմանալ ձեր անունն ու ազգանունը,— դարձավ Ալթունովը ծերունի թուրքին, որ մինչև այդ լուռ էր։

— Ալլահյար-բեգ Մյուլքադարով,— պատասխանեց երիտասարդը ծերունու փոխարեն։

— Երևի գնում եք ձեր կալվածքները։

— Այո։

Ալթունովը շտապեց ուրախություն հայտնել, որ հանդիպեց իր «եղբայրակիցներին», վասնզի ինքն էլ կալվածատեր է։ Միևնույն ժամանակ, նա գրպանից դուրս բերեց ոսկյա և ադամանդյա մենագրերով զարդարված արծաթյա տուփն ու ծխախոտ առաջարկեց։

— Ներեցեք, ձեր կալվածքը ո՞րտեղ է գտնվում,— հետաքրքրվեց երիտասարդ Ռահիմ-բեգ Բեքիխանովը, չհրաժարվելով ընդունել սիրալիր առաջարկված ծխախոտը։

— Քութայիսի նահանգում։

— Մե՞ծ է,— քորեց նա իր գլուխը։

— Այնքան էլ չէ, ութ հազար հինգ հարյուր դեսյատին, կեսը վարելահող, կեսը անտառ։ Իսկ ձե՞ր։

— Իմը փոքր է, հազար դեսյատին, իսկ Ալլահյար-բեգ Մյուլքադարովինը մեծ է, շատ մեծ։

— Է՛հ,— հառաչեց Ալթունովը,— մեծ, թե փոքր, ներկայումս կալվածները օգուտ չեն բերում։

Մանավանդ Վրաստանում։ Այդ «անհանգիստ» երկրի գյուղացիները միանգամայն երես են առել, հարկ չեն վճարում։ Ալլահը գիտե ինչ կլիներ Ալթունովի դրությունը, եթե

չունենար, մի չորս-հինգ տներ Թիֆլիսում և մի չորս հազար դեսյատինի չափ հող էլ Բեսարաբիայում։

— Ձեր տները մե՞ծ են,— հետաքրքրվեց Բեքիխանովը։

— Բավական։

— Թիֆլիսի ո՞ր փողոցների վրա են։

— Քուռի ձախ ափերում են, ճշմարիտն ասած, փողոցների անունները չգիտեմ։

— Դուք էլ վերջին անկարգություններից վնաս կրեցի՞ք Վրաստանում,— խոսեց վերջապես Ալլահյար-բեգ Մյուլքադարովը, ուսերը վեր քաշելով, որպեսզի վերարկուն չընկնի։

— Ինչպես չէ, ինչպես չէ,— գոչեց Ալթունովը,— բոլոր անտառներս այրեցին կամ կտրատեցին, այնպես, որ այժմ ես չգիտեմ կաղվածք ունեմ, թե՞ ոչ։ Իսկ դուք, երևի, նույնպես վնասվել եք,— շտապեց հարցնել։

— Տունը քանդվի տունս քանդողների,— հառաչեց Ալլահյար-բեգը։

— Ո՞վքեր էին։

— Ձեր հայերը։

— Հայ-թուրքական ընդհարումների ժամանա՞կ։

— Հենց այդ անիծյալ տարին։ Նրանք սրիկաների և գըլուխ կտրողների փոխարեն ինձ պատժեցին։ Այրեցին տներս, գոմերս, ամբարանոցներս, թալանեցին գույքս... Հարյուր հազար ռուբլու վնաս հասցրին ինձ...

Կարծես Ալթունովն իսկ և իսկ մի այդպիսի առիթի էր սպասում, որ լիովին արտահայտվե։ Անմիջապես բորբոքվեց, կարմրեց ու սկսեց կատաղի խոսքերով պարսավել այդ ընդհարումները։ Նա ասաց, թե Կովկասի «Հերոսական պատմության մեջ 1905 թվականը» կբռնե մի շատ ամոթալի էջ։ Նա պնդեց, թե դա մի սոսկալի վայրենություն էր, որ կատարվեց, մի խայտառակ եղբայրասպանություն, որի համար պիտի ամաչեն ապագա սերունդները և այլն, և այլն, և այլն...

— Բայց, լսեցե՛ք,— շարունակեց նա,— ես ինքս թեև ծագումով հայ եմ, սակայն ճշմարտությունը ամենից ավելի եմ սիրում, մեղավորները հայերն են, այո՛, հայերը։

— Դուք էլ եք մեղավոր, մենք էլ,— ուղղեց երիտասարդ բեգը, ձեռը տանելով արխալուղի տակ, որ մեջքը քորե։

— Ո՛չ, ոչ, դուք մեղավոր չեք, ոչ։

— Ինձ թվում է, որ մեղավորը Շեյթանն է,— ուղղեց ծերունի բեգը, կամենալով փրկել հայրենակցիս ազգայնական ինքնասիրությունը, որ պատրաստ էր անդունդը գլորվել։

— Շեյթանն ինքնըստինքյան,— համառեց Ալթունովը,— բայց ես էլի պնդում եմ, որ հայերն են մեղավոր, պետք է արդարասեր լինել. ինչ անենք, որ ես ծագումով հայ եմ, ճշմարտությունն ամենից առաջ։ Ես կարող եմ թուրքերին ավելի սիրել, քան իմ հայրենակիցներին։ Այնպես չէ՞, Ալլահյար-բեգ, մեկը մյուսին չի խանգարում։

— Չի խանգարում,— պատասխանեց ծերունին ոտները տարակուսանքով վեր քաշելով,— բայց ես կարծում եմ, որ ամեն մարդ պարտավոր է նախ և առաջ իր միլլաթը սիրել, հետո ուրիշներին։ Բացի դրանից, ես կարծում եմ, որ քրիստոնյան մահմեդականին չի կարող սիրել այնպես, ինչպես իր կրոնակցին։

— Ո՛չ, ոչ, սխալվում եք, բեգ,— գոչեց Ալթունովը, միանգամայն հափշտակվելով,— կարող է սիրել և շատ ավելի։ Խոսքս, իհարկե, պատրիոտների մասին չէ, խոսքս օրինավոր մարդկանց մասին է։ Մեկը հենց ես, ձեր խոնարհ ծառան։ Երդվում եմ պատվով, որ ես թուրքերին ավելի համակրելի, ավելի վեհանձն, ավելի ասպետ, ավելի անշահասեր ժողովուրդ եմ համարում, քան հայերին, վրացիներին և ռուսներին։

— Այդ լավ եք խոսում,— դարձյալ համառեց ծերունին,— բայց երբ որ մի թուրք է մեռնում, դուք էլ երևի ձեր հայրենակիցների պես, չեք ասում «մեռավ», այլ «սատկեց»։

— Բե՛գ, աղաչում եմ, մի՛ վիրավորեք իմ զգացումները,— գոչեց Ալթունովը, հանկարծակի միանգամայն հրավառվելով, ինչպես գտված բամբակ,— մի՛ համարեք ինձ մեկն այն տխմարներից, որոնք իրենց քթից հեռու բան չեն տեսնում։ Ձեզ հետ մարդ է խոսում և ոչ անասուն։

— Գիտեմ, որ մարդ եք, իսկական մարդ, այդ երևում է ձեր շիր ու շնորհքից։ Բայց ասացեք խնդրեմ, մի՞թե դուք մեզ կեղտոտ ու հոտած ժողովուրդ չեք համարում։

— Ե՞ս, ձե՞զ, քավ լիցի։ Ես շատ լավ գիտեմ, որ մահմե-

դականներն առհասարակ անհամեմատ ավելի մաքրասեր են, քան բոլոր քրիստոնյա ազգերը։ Ասացե՛ք, խնդրեմ, ո՞ր ազգի կրոնն է պատվիրում ամեն անգամ, գիտեք, այն բանից հետո, բաղանիք գնալ և լվացվել։ Ոչ մի ազգի կրոնը, ոչ մի ազգի։ Իսկ սրբազան ղուրանը հրամայում է։ Բացի դրանից, դուք առավոտ-երեկո նամազ անելիս ձեռքներդ ու ոտքներդ լվանում եք, իսկ մենք քրիստոնյաներս, հազար ու մի կեղտոտ բաների դիպչելով, ձեռքներս ապականում ենք, հետո մտնում ենք եկեղեցի ու երեսներս խաչակնքում, երբեմն էլ նշխարք վերցնում, ուտում ենք։

— Դուք թուրք բարեկամներ ունի՞ք,— ընդհատեց Ալլահյար-բեգը Ալթունովի բարեկամական զգացմունքների զեղումը, կանխապես կոկորդը մաքրելով և թքելով հատակի վրա։

Իհարկե, ունե, այդ ի՞նչ հարց է։ Կովկասի բոլոր խաներն ու նշանավոր բեգերը Ալթունովի մտերիմ բարեկամներն են։ Դեռ երեկ նա Թիֆլիսի «Լոնդոն» հյուրանոցում շամպանիայով և երաժշտությամբ ճաշում էր իշխաններ Ուցմիևի և Աղալարովի հետ։ Նա իր ժամանակի մեծ մասը թուրք արիստոկրատների հետ է անցկացնում։

— Գիտեք,— ավելացրեց նա, ձայնը ցածրացնելով,— ես հայերի ու ռուսների հետ չեմ սիրում նստել, վերկենալ։

— Ինչո՞ւ,— հարցրեց Ռահիմ-բեգը, նույնպես թքելով հատակի վրա և ոտով սրբելով։

— Հենց այնպես, ինքս էլ չգիտեմ, երևի իմ պապերի երակներում թուրքի արյուն է եղել։

— Ճշմարիտ, ձեր ազգանունն էլ կարծես թուրքի է, Ալթունով,— նկատեց Ալլահյար-բեգը։

— Կարծեմ, իսկապես թուրք էլ եղել է իմ պապի հայրը։

— Դուք վրացիների հետ լա՞վ եք,— հետաքրքրվեց Ռահիմ-բեգը։

— Ի՞նչ, ո՞ւմ հետ,— հարցրեց Ալթունովը, իբր թե չհասկանալով դիմացինի հարցը։

— Վրացիների...

Ալթունովը բարձրաձայն հեգնորեն ծիծաղեց։

— Արհամարհո՞ւմ եք նրանց։

— Իհարկե։

— Ինչո՞ւ։

— Թողնենք։

— Ո՛չ, ոչ, հետաքրքրական է,— համառեց երիտասարդ բեգը,— որովհետև ես էլ մի քանի վրացի ծանոթներ ունեմ։

— Գիտեք, ես վրաց ազգի մասին խոսք չունեմ։ Շատ համակրելի, ազնիվ, մաքուր ազգ է, հյուրասեր, աշխատասեր։

— Ուրեմն, ո՞ւմն եք արհամարհում։

— Ազնվականներին։

— Ինչո՞ւ։

— Գոռոզ են, ամբարտավան և ծույլ։ Բացի դրանից, շատ մեծ կարծիք ունեն իրենց գեղեցկության մասին։ Երևակայեցեք, ի՞նչ հանդգնություն, նրանք իրենց թուրքերից էլ ավելի գեղեցիկ են համարում։

— Շարունակեցեք, էլ ո՞ւմ եք արհամարհում։

— Ինտելիգենցիային։ Վրաց ինտելիգենցիային, օհ՜, անտանելի է, շովինիստ, մեծախոս, կովարար։

— Իսկ նրանց օֆիցերնե՞րը, չինովնիկնե՞րը։

— Նրանք էլ իսկի մի բանի նման չեն, օֆիցերները՝ սկանդալիստ, չինովնիկները՝ արբեցող։

— Ուսանողնե՞րը։

— Չեմ ճանաչում, բայց պետք է, որ նրանք էլ մի բանի պիտանի չլինեն։

— Արհեստավորնե՞րը։

— Ճանաչում եմ, չգիտեն իրենց արհեստը, խաբեբաներ են։

— Կանա՞յք։ Գեղեցի՞կ են, չէ՞։

— Հա՜, դրա մասին խոսք չունեմ։ Շատ շատերի հետ եմ բարեկամ։ Բայց այն էլ կասեմ, որ եթե վաղը, մյուս օրը թուրք կանայք իրանց չադրան դեն գցեն, վրացուհիների աստղը կխավարե...

— Դուք գյուղացիների մասին ոչինչ չասացիք, չէ՞ որ կալվածատեր եք, հետաքրքրականը այդ է ձեզ համար,— հարցրեց Ալլահյար-բեգը։

— Ես դիտմամբ չասացի,— գոչեց Ալթունովը, նորեն

գրգռվելով,— որովհետև արյունս պղտորվում է, երբ հիշում եմ վրացի գյուղացիներին։ Այդ տեսակ ըմբոստ տարր աշխարհի ոչ մի կողմում չեք գտնիլ։ Նրանք չե՞ն, որ անտառները կտրատեցին ու այրեցին։ Ատում եմ ամբողջ հոգով։

— Ուրեմն, ոչ ոքի չեք սիրում վրացիների մեջ,— նկատեց Ռահիմ-բեգը։

— Ասացի, որ վրաց ազգը սիրում եմ։

— Բայց...— ուզում էի ես միջամտել, սակայն բարվոք համարեցի լռել, թողնելով, որ հայրենակիցս իր սայլը քշի մինչև վերջը։

Բարեբախտաբար գնացքը հասավ Եվլախ կայարան, ապա թե ոչ համոզված էի, որ Ալթունովը շատ պիտի առաջանար և, պարսավելով աջ ու ձախ բոլորին, դեպի թուրքերն ունեցած իր սիրո ու պաշտամունքի շտեմարանն սպառեր մինչև վերջը։

Բեգերն իրենց նոր բարեկամից բաժանվեցին շատ սիրալիր։

Ռահիմ-բեգը մինչև անգամ հրավիրեց նրան իր կալվածքը հյուր և խոստացավ նրան մի սիրուն նժույգ նվիրել։

— Միայն ոչ այժմ, աշնանը մեզ մոտ ճանապարհները անանցանելի են, եկեք գարնանը կամ ավելի լավ է ամառվա վերջերին,— զգուշացրեց Ալլահյար-բեգը. ավելի քան կես տարով հետաձգելով Ռահիմ-բեգի հյուրընկալությունը։

— Շատ շնորհակալ եմ,— ասաց Ալթունովը, ըստ երևույթին, լավ ըմբռնելով այդ տեսակ հրավերների իսկական արժեքը։— Իսկ եթե դուք էլ բարեհաճեք այցելել իմ համեստ կալվածքը, անտառներս կարգի բերելուց և տներս վերաշինելուց հետո, երջանիկ կլինեմ ձեզ հետ որսի գնալու։ Իմ անտառներում մեծ քանակությամբ փասյաններ և թուրաչներ կան։

Թուրքերը դուրս ելան։

Դարձյալ լուսամուտից նայեցի, այս անգամ ուղղակի հետաքրքրվելով, թե ինչ պիտի խոսեն իմ հայրենակցի մասին։

— Ի՞նչ կասես, Ալլահյար-բեգ,— լսեցի երիտասարդ Թեքիխանովի հարցը։

— Թամիզ մարդու նման չէ,— պատասխանեց Ալլահյար-բեգ Մյուլքադարովը,— ես նրա ոչ մի խոսքին չհավատացի։

— Ես էլ։

Անմիջապես ցած իջա իմ տեղից, որպեսզի Ալթունովն իմանա, որ քնած չէի և ամեն բան լսում էի ու տեսնում։

Բայց նա բնավ չշփոթվեց։

— Տեսա՞ք,— դարձավ նա ինձ, տակավին ոգևորված,— տեսաք ինչպես ոչնչացրի այդ հոտածներին. Ֆիդոն, օդեկոլոն էլ չկա մոտս, որ օդը մի քիչ մաքրեմ։

Այո, նա ուղղակի նրանց ավազակներ անվանեց։ Նա ասաց, որ թուրք տարրը մեր երկրի քաղաքակրթության համար մի մեծ խոչընդոտ է, որ նա գռեհիկ է, ֆանատիկ, հետադեմ, ոչ մաքրասեր և այլն, և այլն, և այլն...

— Բայց ես ձեր ասածները չլսեցի,— համարձակվեցի նկատել, հաղիվ կարողանալով ծիծաղս զսպել։

Ալթունովը, զարմացած ձևանալով, աչքերը լայն բաց արավ և գոչեց.

— Չլսեցի՞ք, անկարելի է, ինչպե՞ս չլսեցիք։

— Այո, չլսեցի։

— Ուրեմն, քնած եք եղել։ Շատ ցավում եմ։ Պետք է տեսնեիք նրանց դեմքերի ապուշ արտահայտությունը, երբ բոլորն ասացի։ Գիտեք, երիտասարդ բեգը համաձայնվեց ինձ հետ։

— Իսկ ծերունի՞ն,— հարցրի ես, թույլ տալով ուղեկցիս ասել՝ ինչ կամենում է։

— Ծերունին կատաղեց։ Նա ձեռը սեղմեց իր դաշույնի դաստակի վրա և գոռաց. «Հայ, լռի՛ր»։

— Ահա ի՞նչ, ուրեմն ընդհարվել եք։

— Ոչ, ծերունին իսկույն գսպեց իրեն, երբ, հանգիստ ձևով դուրս բերեցի նագանս և դրեցի քովս։

Նա ետ արավ պիջակի կուրծքը և, ցույց տալով ինչ-որ ուռուվերի կոթ, շարունակեց.

— Օ՜օ, թող միայն փորձեր, ցույց կտայի նրան, թե ինչ ասել է Ալթունով, երբ նրան կատաղեցնում են։

Դրսից լսվող աղմուկն ընդհատեց ուղեկցիս հոխորտան-

քը, որ, երևի, երկար պիտի շարունակվեր։ Ներս մտավ այն կոնդուկտորը, որի հետ Ալթունովը ընդհարվել էր և որին շուտով պիտի արձակեին պաշտոնից։ Նրա ետևից եկավ մի նոր ճամփորդ, որ ամբողջ կոկորդով գոռում էր.

— Այդ այլանդակություն է, խայտառակություն։ Ոչ մի օրինավոր ճամփորդ չի կարող տանել այդպիսի բաներ։

— Հանգստացեք, իշխա՛ն, դուք առանց տեղի չեք մընալ,— համոզում էր կոնդուկտորը բորբոքված ճամփորդին։

— Չէ՛, ասացեք խնդրեմ, այդ ի՞նչ կարգ ու կանոն է, աա՞, ի՞նչ կարգ ու կանոն,— շարունակեց իշխան կոչվածը, պկանջ չդնելով կոնդուկտորին և ձեռքերն ուժգին թափով շարժելով օդի մեջ,— փող ենք տալիս, տոմսակ գնում, և հանկարծ տեղ չկա։ Աա՞, այդ ինչ կարգ ու կանոն է։

— Բայց դուք ոտքի վրա չեք մնալ, իշխան, հավատացեք, ոչ, չեք մնալ, զուր եք բարկանում։ Ահա այս կուպեում միայն երկու հոգի կա, ուրեմն, երկու ազատ տեղեր կան, կարող եք բռնել։

Իշխան կոչեցյալը մի վիթխարի տղամարդ էր ահագին քթով։ Հագած էր չերքեզի կապա լայն փեշերով ու լայն թևերով։ Ուսերի վրա ուներ չուխայից կարճ տառատոկ ոսկեթել ծոպերով։ Գլխին դրած էր անասելի մեծությամբ մի գդակ, որ նրան լեռնային ավազակի տեսք էր տալիս։

— Անկարգությո՛ւն, այլանդակությո՛ւն, ուրիշ ոչինչ,— չէր հանգստանում իշխանը։

Մեջ մտավ Արկադիյ Մարկովիչ Ալթունովը, որ չէր դադարում ջախջախիչ հայացքներ ձգել հակառակորդ կոնդուկտորի վրա։

— Ձերդ պայծառափայլությունը միանգամայն իրավացի է զայրանում,— ասաց նա,— մի ժամ առաջ այդ միևնույն սուբյեկտը հանդգնեց ինձ էլ կոպիտ ու անվայել պատասխաններ տալ։ Ես այդ մասին արդեն գրել եմ երկաթուղու կառավարչին, որ, ի միջի այլոց ասած, իմ մտերիմ բարեկամն է և որի հետ դեռ երեկ ճաշում էի «Անոննա» ճաշարանում, մի քանի ուրիշ ժեներալների ընկերակցությամբ։

— Աա՞, դուք ո՞վ եք, թույլ տվեք հարցնել,— դարձավ նրան իշխանը։

— Արկադիյ Մարկովիչ Ալթունով։ Կարող եմ ձեզ հավաստիացնել, որ կառավարիչը շատ խստապահանջ է իր ստորադրյալների վերաբերմամբ, միևնույն ժամանակ, սիրալիր է իր բարեկամների հետ։ Հետևաբար, կասկած չունեմ, որ նա, ստանալով իմ նամակը իսկույն եթե գոհացում կտա ինձ, պաշտոնից ազատելով այդ կիսավայրենուն։

Ապա, դառնալով կոնդուկտորին, սպառնաց.

— Սպասեցե՛ք, սպասեցեք, շուտով կիմանաք, թե ով եմ ես։

Այս անգամ նրա սպառնալիքը ազդեց կոնդուկտորի վրա։ Խեղճ մարդը ոչինչ չասաց։ Միայն, դառնալով իշխանին, մեղավոր տոնով հարցրեց.

— Ձերդ պայծառափայլություն, գո՞հ եք ձեր տեղով։

— Գոհ եմ, գոհ եմ, գնացեք։ Իրեղեններս տեղավորեցի՞ք։

— Ահա այստեղ են, մեկ, երկու, երեք։

— Լավ։ Բայց ո՞ւր կորավ բեռնակիրը, ես նրա վարձը չեմ տվել։

— Ձերդ պայծառափայլություն, երբ դուք սկսեցիք գոռալ, նա վախեցավ, իրեղենները թողեց ու փախավ։ Ես եմ ներս բերել։

— Փախավ, հա-հա-հա, փախավ,— քահ-քահ ծիծաղեց իշխանը բարձրաձայն, բաց անելով տերտերի գրպանի չափ բերանը և ցույց տալով սևացած ատամները։— Վախեցավ, որ ծեծեմ, հը՞։

— Այո։

— Եվ կծեծեի, զմերթիմանի, կծեծեի։ Քեզ էլ կծեծեի, եթե տեղ չտայիր։ Դե՛հ, վերցրեք այս և տվեք բեռնակրին։

Սակայն, քսան կոպեկ ստանալով, կոնդուկտորը տատանվեց դուրս գալ կուպեից։

— Ձերդ պայծառափայլություն,— ասաց մի հաշտարար հայացք ձգելով Ալթունովի վրա։

— Հը՛, էլի ի՞նչ ես ուզում, կացո...

— Խնդրեմ միջնորդեք պարոն ճամփորդի մոտ, որ իմ մասին գանգատ չգրե կառավարչին կամ վարչությանը։ Ես գիտեմ, դեռ չի գրել, բայց կարող է գրել։ Ձերդ պայծառա-

փայլություն, առանց այդ էլ ծառայողներիս դրությունը նախանձելի չէ։ Ընտանիքի տեր եմ, եթե հանկարծ զրկվեմ պաշտոնից, ո՞ւր պիտի գնամ։ Թող չդանդաղվի։

Ալթունովի դեմքը փայլեց ներքին հաճույքից։

— Կացո՛, մի գրեք էլի, ի՞նչ է,— ասաց իշխանը, քիթը կնճռոտելով և ձեռքն օդի մեջ շարժելով։

— Եթե ձերդ պայծառափայլությունը խնդրում է, կարող եմ ներել...

— Խնդրում եմ, կացո՛, խնդրում եմ, վա՜...

— Թողեք ինձնից ներողություն խնդրե...

— Էհ,— դարձավ իշխանը կոնդուկտորին, ձեռը զարկելով նրա ուսին,— ներողություն խնդրիր...

— Խնդրում եմ։

— Դե՛հ, վերջացավ, դե գնա...

— Շնորհակալություն հայտնեցեք իշխանին, գնացեք և այսուհետև լավ ճանաչեցեք ճամփորդներին,— ներեց Ալթունովն իսկ և իսկ հրամանատար ժեներալի տոնով։

— Շնորհակալ եմ,— արտասանեց կոնդուկտորը և դուրս գնաց։

Իշխանը վերցրեց ուսի տառատոկը, քաշ արավ պատին, նստեց և իր ահագին ոտները դրեց իմ նստարանի վրա։

Ինձ թվաց, որ նոր պայծառափայլությունը մի տեսակ արհամարհանքով է վերաբերվում դեպի հասարակ մահկանացուները, ուստի, նրա հպարտությունը չգրգռելու համար երեսս դարձրի լուսամուտի կողմ և սկսեցի դիտել շրջակա ամայի դաշտերը և լերկ լեռները։ Բայց շուտով պարզվեց, որ նա վերին աստիճանի պարզ մարդ է և բնավ չի պարծենում իր իշխանական տիտղոսով։

Հայտնվեց նաև, որ նրա ազգանունը Մերկվելիձե է, որ նույնպես կալվածատեր է և որ նրա կալվածքը նույնպես Քութայիսի նահանգումն է։

Ես կարծեցի, որ Ալթունովը, հանգամանքից օգտվելով, անմիջապես կսկսի խոսել իր ութ հազար դեսյատին վարելահողի ու անտառի մասին, մանավանդ որ իշխան Մերկվելիձեի հարևանն է։ Ամենևին. նա այդ մասին բառ անգամ

չարտասանեց, չնայելով, որ «գյուղացիներն այրել էին նրա անտառները»։

Մակայն այդ բնավ նրան չխանգարեց խոսակցության ուրիշ նյութեր գտնելու և գրավելու իշխանի բարեկամությունը։ Սկսեց նա հայտնել իր անսահման սերն ու հարգանքը համայն վրաց ազգին՝ առանց որևէ դասակարգի բացառության։ Ամենից շատ նա գովեց ու գովաբանեց ազնվականությանը, համարելով նրան «ասպետական» դասակարգ։ Շատ անփույթ ձևով հիշեց մի շարք հայտնի իշխանական անուններ, որոնց հետ վաղուց, շատ վաղուց «դու»-ով է խոսում և որոնք ուրիշ կերպ չեն անվանում նրան, եթե ոչ «մեր թանկագին Արշակը»։ Նկարագրեց մի շարք քեֆեր, դուդուկով ու զուռնայով, «Եդեմ» և «Ֆանտազիա» այգիներում։

Պարզվեց ինձ համար, որ իշխան Մերկվելիձեն բացի պարզ մարդ լինելուց, զերծ է ազգայնական տենդենցներից և բոլոր ազգերին ու ազգություններին վերաբերվում է հավասար անտարբերությամբ։

Սակայն անհանգիստ Ալթունովն այնուամենայնիվ չկամեցավ դադարել շոյելու իշխանի ազգայնական ինքնասիրությունն ու ասաց.

— Բայց, ձերդ պայծառափայլություն, ե՛ս դարձյալ կասեմ, որ հայերը մեղավոր են վրացիների առջև։

— Ինչո՞ւ, կացո՛,— հետաքրքրվեց իշխանը, վերցնելով ահագին գգակը և շպրտելով մի կողմ այնպես, որ կարծես այլևս հարկավոր չէր իրեն։

— Խոսքս մեր կապիտալիստների մասին է։ Նրանք կլանում են Վրաստանը, օգտվելով ազնվականների նեղ վիճակից և մեկը մյուսի ետևից գնելով նրանց տոհմական կալվածները։

— Այդ ճիշտ չէ, ճիշտ չէ,— գոչեց իշխանը, հանկարծ տաքանալով,— մեղավորը ոչ հայերն են, ոչ օտարները։ Կացո, հանգամանքներն են մեղավոր, մեկ էլ ինքներս, վրացի ազնվականներս։

— Այդ ինչպե՞ս,— հարցրի ես։

— Այնպես, մենք ծախում ենք, կապիտալիստները գնում են։ Որ չծախենք, ո՞վ կարող է զոռով գնել։

— Բայց ինչո՞ւ են գնում,— ասաց Ալթունովը,— հայերը չպիտի գնեն։

— Խնդրում, աղաչում ենք գնել, վա՜,— ավելի տաքացավ իշխանը,— օրինակ, մեկը ես։ Տասնհինգ տարի է բանկին տոկոսներ եմ վճարում, քանդվեցի, վա՜։ Պարտքերի մեջ ա՜յ, մինչև կոկորդս եմ խրվել։ Վճռեցի, վերջապես, կալվածքս ծախել։ Սատանան տանի, գոնե մի երկու տարի կուշտ կապրեմ ու այդ անպիտան գյուղացիներից կազատվեմ։ Առաջարկեցի բանկին վերցնել իր իսկական գնով — մերժեց։ Առաջարկում եմ գյուղացիներին պակաս գնով — մերժում են։ Փող չունենք, ասում են, վա՜, ես մեղավո՞ր եմ, որ նրանք փող չունեն։ Ինձ էլ հենց փող է հարկավոր ապրելու համար, ազգասիրությունը ինչի՞ս է պետք։ Այժմ ինձ հարցրեք, ո՞րտեղից եմ գալիս և ո՞ւր եմ գնում։

— Երևի Բաքու եք գնում,— ասացի ես։

— Հաա՜, հա, իսկ և իսկ Բաքու։ Ինչո՞ւ եմ գնում, կացո՛, կարո՞տել եմ. նրա մազութի հոտին։ Գնում եմ կալվածքս մեկին առաջարկելու։

— Ո՞վ է այդ մեկը,— հարցրեց Ալթունովը։

— Նավթա-արդյունաբեր Մարալյանցը, նա փող շատ ունեն։ Անցյալ տարի նա Եվլախի մոտ գնեց մի մեծ կալվածք։ Լսեցի, որ այժմ այնտեղ է։ Երեկ Քութայիսից եկա նրան տեսնելու, չկար։ Ասացին՝ գնացել է Բաքու։ Հիմա վազում եմ այնտեղ։ Դե՛հ, ուրեմն, էլ ի՞նչ մեղք ունեն հայերը կամ ուրիշները։ Եթե կամենաք, մենք դեռ շնորհակալ ենք նրանցից, որ չեն թողնում բանկերին մեր կալվածներն աճուրդով կես գնով վաճառելու։

Ալթունովը լուռ էր։

Բայց ինձ համար միանգամայն անհասկանալի էր այն. որ մի ակնարկ անգամ չարավ իր Քութայիսյան կալվածքի մասին։ Այս բանն ինձ այնքան հետաքրքրեց, որ չկարողացա ինձ զսպել և հարցրի.

— Ասա՛, խնդրեմ, պարոն Ալթունով, ձեր կալվածքը, որ

նույնպես Քութայիսի նահանգումն է գտնվում, տոհմակա՞ն է, թե՞ վրացիներից գնված։

Նա թեթև ցնցվեց և նայեց ինձ մի տեսակ կես-կատաղի ու կես-աղերսական հայացքով։

— Ի՞նչ,— գոչեց իշխան Մերկվելիձեն, ձեռը բարեկամաբար դնելով Ալթունովի ուսի վրա,— դուք էլ ե՞ք կալվածատեր։

— Այո,— պատասխանեցի ես հայրենակցիս փոխարեն,— պարոն Ալթունովը Քութայիսի նահանգում ունե ութ հազար դեսյատին մի կալվածք, որի կեսը վարելահող է, մյուս կեսը անտառ։ Թեև անտառները գյուղացիների ձեռքով այրված են ու կտրատված, բայց այնտեղ մեծ քանակությամբ կաքավներ ու փասյաններ կան։

— Ութ հազար դեսյատի՞ն,— գոչեց իշխան Մերկվելիձեն ապշած,— կացո՛, այդ տեսակ մեծ կալվածք Քութայիսի նահանգում ոչ ոք չունե։ Բայց չէ, կարելի է մի քանի կալվածքներ գնել եք ու միացրել։

— Այո՛, ոչինչ, դատարկ բան է,— արտասանեց Ալթունովը անորոշ և դարձյալ նայեց երեսիս։

— Սակայն սպասեցեք,— ուշքը ժողովեց իշխանը,— ես Քութայիսի նահանգի բոլոր կալվածատերերին անձամբ մի առ մի ճանաչում եմ։ Որքան հիշում եմ, այնտեղ Արկադիյ Մարկովիչ Ալթունով անունով կալվածատեր չկա, այն էլ ութ հազար դեսյատին ունեցող։

Այս անգամ ես նայեցի Ալթունովի երեսին, խոստովանում եմ, ոչ առանց նենգության։

Հանկարծ նա գլուխը բարձրացրեց և ականջ դրեց դեպի դուրս։

— Ա՛հ,— գոչեց, արագությամբ ոտքի ելնելով,— այդ ի՞նչ աղմուկ է։ Կարծեմ կանայք օգնության են կանչում։

Ես մի ոստումով դուրս վազեցի կուպեից։

— Օգնությո՛ւն, գալիս եմ, գալի՛ս եմ,— գոչեց իշխանը ահեղ ձայնով և ձեռը տարավ դաշույնին։

Դուրս եկանք նրբանցք։

Ոչինչ չկար։ Այնտեղ երկու դեռահաս օրիորդներ և մի պատանի բարձրաձայն ծիծաղում էին։ Պարզվեց, որ նրանց

ծիծաղի առարկան մի թուրք կին է, որ անցնում էր դաշտով ձի նստած, երկու երեխա գրկում պահած և երրորդին ձիու գավակին կապած։

— Ա՛հ,— ասաց Ալթունովը, ինքն էլ ծիծաղելով,— այնպիսի աղմուկ էր, որ ես կարծեցի ավազակներ են հարձակվել և խեղդում են... կանանց... հասկանո՞ւմ եք, կանանց...

— Կացո, այստեղ ավազակներն ի՞նչ գործ ունեն,— գոչեց իշխան Մերկվելիձեն,— ինձ էլ զուր անհանգստացրիր։

— Գիտե՛ք, ձերդ պայծառափայլություն,— արդարացավ հայրենակիցս,— այս ճանապարհի վրա ամեն բան սպասելի է։ Վերջերս ավազակությունն այնքան է զարգացել, որ սրիկաները երկաթուղու գնացքներն են կանգնեցնում և ճամփորդներին կողոպտում։

— Ճիշտ է,— համաձայնվեց իսկույն իշխանը, չգուշակելով Ալթունովի խորամանկությունը, որ ինձ էլ խաբեց։

Վերադարձանք կուպե, և այլևս խոսք չեղավ Ալթունովի ութ հազար դեսյատին կալվածքի մասին։

Այս անգամ Ալթունովը բարձրացավ կուպեի վերին մասը, իր տեղը սիրալիր զիջելով իշխանին։ Շատ չանցած լսվեց նրա անդորր խռմփոցը։ Նա քնեց, չնայելով, որ քունը համարում էր «կես մահ»...

Իշխանը պառկեց, փաթաթվեց տառատոկի մեջ և նույնպես խռմփացրեց միայն ոչ Ալթունովի պես հանդարտ, այլ անասելի աղմուկով։

Զարթնեցին ուղեկիցներս առավոտյան այն ժամանակ, երբ գնացքն արդեն Բաքու էր հասել։ Իշխանը մեզ ողջերթ մաղթեց և դուրս եկավ վագոնից։

— Մնաք բարով, իշխան, մնաք բարով,— գոչեց Ալթունովը նրա ետևից,— հույսով եմ, որ մեր բարեկամությունը հաստատ կլինի։ Օ՛հ,— դարձավ նա ինձ անմիջապես,— վերջապես ազատվեցինք այդ տխմարի ընկերությունից։ Ա՛յ ստախոս։ Ասում է կալվածք ունիմ Քութայիսի նահանգում։ Ես Մերկվելիձե անունով կալվածատեր չեմ ճանաչում։ Արժե՞ր վիճաբանել այդ ստախոսի հետ։

Բայց ինձ համար արդեն պարզ էր, թե որն է նրանցից ստախոսը։

Երբ գնացքը նորեն շարժվեց, մեր կուպեում երևացին երկու հրեական միմյանցից խիստ տարբեր տիպեր — մեկը հին, մյուսը նոր։ Մեկը նիհար էր, կուրծքը ներս ընկած, արծվաքիթ, խիստ թանձր և խիստ սև մազերով։ Նրա մորուքը սկսվում էր ուղիղ աչքերի տակից և վերջանում էր չգիտեմ ուր։ Մյուսը գեր էր, առողջ կրծքով, կարմիր երեսով, շեկ մազերով, սպիտակ, ինչպես պինդ խաշած ձու։

Ալթունովը մի արհամարհական հայացք ձգեց նորեկների վրա, իհարկե, գաղտնի և ասաց ինձ հայերեն։

— Հիմա էլ Իսրայելի զավակների ձեռքն ընկանք։ Թյու, դրանց հետ չեմ խոսելու։— Եվ իրավ, մոտ կես ժամ նա իրան պահեց ինչպես անմատչելի դալայլամա, հազիվ ինձ ևս մի քանի հատուկտոր խոսքեր ուղղելով։ Միայն չմոռացավ այդ կարճ միջոցում չորս անգամ գրպանից դուրս բերել ոսկյա և աղամանդյա մենագրերով զարդարված արծաթե ծխախոտատուփը այնպես, որ հրեաները տեսնեն։

Հայտնի է, որ հրեաները ճամփորդության ժամանակ տանել չեն կարող լուակյաց ուղեկիցներին և ընդունակ են անգլիացիներին անգամ շատախոս դարձնելու։

— Ինչպես երևում է, Թիֆլիսցի՞ եք գալիս,— դիմեց ինձ շիկահեր հրեան։

Եվ, բավարար պատասխան ստանալով, նա դարձավ Ալթունովին։

— Դուք նո՞ւյնպես։

Հայրենակիցս իսկույն ևթ կակղեց և խոշեց իր լռությունը։ Եվ սկսվեց։ Մի ժամ չանցած նա արդեն բարեկամացել էր երկու տարբեր տիպերի հետ։

Մասնավորից սկսելով, Ալթունովն անցավ հասարակական խնդիրներին։ Թողնելով հասարակականը, վազեց դեպի քաղաքականը, այնտեղից դեպի՝ կրոնականը։ Որոնեց, գտավ և որոշեց նախաքրիստոնեական եբրայեցիների կատարած հսկայական դերը պատմության մեջ, հատկացնելով այդ դերին ամենափայլուն էջեր։ Աստվածաշունչը համարելով գիրք գրոց, Թալմուդը դրեց ավետարանի կողքին ու երկուսին էլ հավասար երկրպագեց։ Զլինիեին նրանք, վռապաշ-

տությունը պիտի թագավորեր մինչև այժմ ամենուրեք և նրա հետ միասին բարբարոսությունը։

Բաց թողնելով պատմության օձիքը, Ալթունովն անցավ դեպի ներկան և մի քանի թեթև վերապահումներով դարձյալ հրեաներին նստեցրեց ազգերի գլխին։ Ինչ ուզում են թող ասեն օբսկուրանտները, ոչ գիտություն, ոչ ճարտարվեստ, ոչ արդյունաբերություն, ոչ առևտուր, ոչ արվեստներ, ոչ գրականություն և ոչ նույնիսկ բարոյականություն չեն կարող գոյություն ունենալ առանց հրեաների։ Նրանք են ամենախելոք, ամենաաշխատասեր, ամենատաղանդավոր, ամենա... և այլն, և այլն, և այլն ազգը։ Դա մի սովորական ազգ չէ, այլ մարմնացած հանճարը մարդկության, այսպես ասած, նրա մտավոր կվինտ էսենցիան։ Սուտ է, թե հրեաները հարստահարիչներ են, վաշխառուներ և այլն։ Դա թուլամորթների նախանձի արդյունք է... Սուտ է, թե նրանք մաքրասեր չեն և ինչ-որ հատկանիշ հոտ ունին. նրանք եվրոպական որ ազգի հետ ասես կարող են մրցել գործածած սապոնի քանակով։

Վերջապես սուտ է, թե նրանք փողասեր են...

— Ներողություն,— ընդհատեց հայրենակցիս ոգևորությունը շիկահեր հրեան,— այդ մեկը սուտ չէ։ Մենք փող սիրում ենք։

— Այո՛, կարելի է, բայց հայերը ձեզանից ավելի փողասեր են։

— Գուցե, ես հայերին լավ չեմ ճանաչում։

— Իսկ ես շատ լավ եմ ճանաչում։

Եվ այսպես մի ամբողջ օր ու երեկո Արկադիյ Մարկովիչ Ալթունովը շոյեց, շողոքորթեց իր ուղեկիցներին։

Մի անգամ երբ նա իջել էր ինչ-որ կայարանում թեյ խմելու, մորուքավոր ու սևահեր հրեան ինձ հարցրեց.

— Ասացեք խնդրեմ, դուք հա՞յ եք։

— Այո։

— Իսկ այդ մա՞րդը։

— Նույնպես հայ է։

— Դուք համաձայն ե՞ք նրա բոլոր գովասանքներին հրեաների վերաբերյալ։

— Ոչ լիովին։

— Ես նույնպես համաձայն չեմ շատ բաների հետ,— ասաց հրեան ժպտալով։

Հասանք վերջապես Ռոստով։

Ալթունովը հրեաների հետ իջավ գնացքից։

Երբ նա ինձ ողջերթ մաղթելով, ձեռս սեղմում էր, ես մի բոպե պահեցի նրան և հարցրի.

— Դուք բոլոր ազգերին գովեցիք, բոլորին էլ պարսավեցիք, ասացեք խնդրեմ, դուք ինքներդ ի՞նչ եք։

— Կոսմոպոլի՛տ,— պատասխանեց Ալթունովը հանգիստ ու հեռացավ։

ԱԿՈՅԻ ՏՈՆԱԾԱՌԸ

Փոքրիկ, աղքատիկ քաղաքում, ուր տները մի հարկանի են, կտուրները խարխուլ, փողոցներն անսալահատակ, աղտոտ, ուր ցնցոտիներն այնքան սովորական են, որ այլևս ոչ ոքի գութը չեն շարժում, չքավորի համար չքավորությունը շատ էլ զգալի չէ։ Այնտեղ բախտերի մեջ անդունդներ չկան, կա միայն գույների տարբերություն, մեկն ավելի գորշ, քան մյուսը։

Բայց երբ քաղաքը մեծ է, հարուստ, ցերեկները խանութներում ցուցադրված փարթամ ապրանքներն են շլացնում անցորդին, գիշերները՝ կլուբների և թատրոնների էլեկտրական լույսերը, չունևորների ներվերը մերկանում են և սոսկալի ցավով են ընդունում կառքերի դղրդյունն ու օվտոմոբիլների սուլոցները։

Վաղուց էին մերկացել բանվոր Գալուստի ներվերը։ Այն օրից, երբ համոզվել էր, որ մինչև կյանքի վերջը պիտի սալին զարկե ծանր մուրճը, որ ահա տասներկու տարի է օրը տասը ժամ զարկում է և որ այնքան նրա մարմինը չի ավրել, որքան հոգին քայքայել։

Որպես բանվոր, որի համար հանգստությունն է երկրային բարձր հաճույքը՝ նա սիրում էր հասարակ տոները, երբ նրա հոգնած մարմինը նիրհում էր ընտանեկան հարկի տակ։ Բայց կային տարվա մեջ երկու մեծ տոներ, որոնց նա ատում

էր հոգու ամբողջ զորությամբ։ Ատում էր ոչ նրանց խորհուրդը, այլ այն բոլորը, որ մարդիկ կապել են այդ տոների հետ — արտաքո կարգի ծախքեր, որ պարտավորական են թե հարստի և թե աղքատի համար։

Ահա չորրորդ անգամն է Գալուստը տարվա միևնույն միջոցին տանջվում է ավելի քան իր երեսուն ու հնգամյա կյանքի ընթացքում։

Նոր տարին մի կերպ անցավ, բայց ծնունդն ու մկրտությունը մնում են. մի՞թե այս անգամ էլ նա չպիտի կարողանա կատարել իր խոստումը — գնել իր մի հատիկ Ակոյի համար տոնածառ և զարդարել ու լուսավորել այնպես, ինչպես անում են բոլոր հայրերն իրենց զավակների համար՝ հենց այս ահագին տան մեջ, որի ներքնահարկում նա ապրում էր խլուրդի պես։

Ո՛չ, այս տարի էլ խաբել երեխային նա չի ուզում և չի կարող։ Դեռ մի ամիս առաջ Ակոն նրան հիշեցրեց.

— Հայրիկ, տոնածառը չմոռանաս, լավը, մեծը...

Եվ հետո ավելացրեց.

— Ես ուզում եմ, որ շաքարե գառնուկներ էլ լինեն, թմբուկ էլ, սուլիչ էլ...

— Լա՛վ, Ակո ջան, այս տարի տոնածառ կունենաս, անպատճառ կունենաս։

— Անպատճա՛ռ,— կրկնեց Գալուստի կինը դառը հեգնությամբ,— երեք տարի է խաբել ես, այդ էլ կլինի չորրորդը։ Գոնե մի՛ խոստանար։

Դյուրին է ասել «մի խոստանար»։ Կարելի՞ է մերժել այդ անմեղ աչքերին։ Նրանք այնպիսի հավատով են նայում նրան։ Այդ փոքրիկ, ճերմակ ձեռքերին։ Նրանք այնպիսի գրգվանքով են փաթաթվում նրա կոշտ պարանոցին։

Բայց ինչպե՞ս։ Անցյալ ամիսների աշխատավարձը ստացել է և արդեն ծախսել, մնում են մի քանի ռուբլիներ։

— Հուռիկ, թաթախման երեկո ձուկ հարկավո՞ր է։

— Դե, ի՛նարկե, հարկավոր է, ի՞նչ հարցնելու բան է։

— Ուզում եմ ասել, որ ձուկն այս տարի թանկ է, կրակի գին։

— Թանկ է, թե էժան՝ պետք է առնել, օրենք է...

— Այդ մի ռուբլի. յուղ, բրինձ, ածուխ, այդ էլ ամենաքիչը մի ռուբլի։ Տերտերն էլ գալու է, իհարկե։

— Տերտերն էլ, տիրացուն էլ։

— Պրծավ։ Գրպանումս մնացել է ուղիղ երեք ռուբլի։ Հերիք է։

Ոչ, պետք է ուրիշ միջոց գտնել, ձուկն էլ անհրաժեշտ է, տերտերն էլ... Մեծ բան չի պահանջվում, դարձյալ մի երեք-չորս ռուբլի։ Գալուստը գիտե որտեղ գնել էժան զարդարանք տոնածառի համար։ Ամեն օր նա երկու անգամ անցնում է մեծ հրապարակի վրա գտնվող փայտյա խանութների մոտով։ Արդեն նա իր մտքում ընտրել է բոլորը, ինչ որ պահանջում է Ակոն։ Ավելի՛։ Արդեն նա ծառը զարդարել է իր ձեռքով և լուսավորել գույնզգույն մոմերով ու լապտերներով։ Ակոն ուրախ-ուրախ թռչկոտում է ծառի շուրջը, ծափ տալով, պարելով, երգելով։ Ինչպե՞ս են վառվել նրա սևորակ աչքերը, ինչպե՞ս են կարմրել նրա գունատ այտերը, ինչպե՞ս է նրա տափակ կուրծքն ուժգին բարձրանում ու իջնում։

Գալուստը սիրտ առավ կառավարչի օգնականից խընդրելու առաջիկա շաբաթվա վարձը։

— Ի՞նչ,— գոչեց օգնականը ծիծաղելով,— չկատարած աշխատանքի վա՞րձ։ Այդ ո՞րտեղ է տեսնված։

— Բայց ես կկատարեմ այդ գործը։

— Ոչ, եթե քեզ տամ, մյուսներն էլ կպահանջեն։ Գնա գործիդ, առանց այդ էլ վերջերս դուք՝ բանվորներդ, շատ եք երես առել։

— Բայց տոնածա՞ռը, Ակոն մաշվում է,— ասաց մրտքում Գալուստը և գլուխը կրծքին թեքելով, դուրս եկավ գրասենյակից։

Հուսահատությունը պաշարել էր նրան։ Նա տեսնում էր, որ այս անգամ էլ պետք է խաբի Ակոյին։ Իսկ այդ ավելի դժվար է, քան առաջ, որովհետև Ակոն վեց տարեկան էր։ Արդեն փոքրիկը մի տեսակ կասկածով ու թերահավատությամբ է նայում իր հոր երեսին և էլ առաջվա պես չի թախանձում։

Այն օրը մանուկը, հորը ճանապարհ դնելով, ասաց.

— Եթե այսօր էլ չբերես, էլ քո խոսքին չեմ հավատալու։

Գալուստը լուռ դուրս եկավ և գնաց գործի։ Երբեք նա այնքան ճնշված չէր եղել։ Նա, որ սովորաբար առավոտները գործի գնալիս երգում կամ շվացնում էր գյուղական երգեր։

Ինչպե՞ս, ո՞րտեղից։ Եվ որքան մտածում էր, այնքան ելքը դժվարանում էր։ Նա մտավ գործարանի գավիթը, առանց սովորական բարևներ տալու աջ ու ձախ հանդիպող ընկերներին...

Հանկարծ նրա հայացքն ընկավ մեկ բանի վրա։ Նա կանգ առավ մի քանի վայրկյան։ Մի միտք անցավ նրա գլխով և անմիջապես պաշարեց նրա հոգին։ Այնտեղ, գործարանի շրջապատի մոտ կար մի գորշ-դեղնագույն բան, որ փայլում էր արեգակի առավոտյան ճառագայթներից։ Օրն երկու անգամ նա անցնում էր այդ առարկայի մոտով, ինչո՞ւ միայն այսօր ուշադրություն դարձրեց նրա վրա։

Գալուստը ժպտաց տարօրինակ ժպիտով։ Նրա մռայլ դեմքի վրա փայլեց անսպասելի հուսո նշան։ Նա մտավ արհեստանոց, պատռված չուխան հանեց, մի կողմ ձգեց և վերցրեց մի փութանոց մուրճը։

Ամբողջ օրը նա գործում էր և մտածում. այն գորշ-դեղնագույն առարկայի մասին, որ երևում էր արհեստանոցի մրոտ լուսամուտից, և որքան շատ էր նայում, այնքան ավելի ու ավելի էր հուզվում։

Նրա հուժկու և հոլանի բազուկները գործում էին առանձին եռանդով, բայց անփույթ, չպահպանելով հարվածների հերթը և ընկերներին խանգարելով։

Ահա, վերջապես, վերջին սուլոցը՝ օրն ավարտված է։

Գալուստը մուրճը դրեց իր սովորական տեղը, սրբեց ճակատը կապտագույն շապկի մրոտ փեշով, չուխան հագավ, սեղմեց գլխին գդակը և արհեստանոցից դուրս եկավ։

Օրն արդեն մթնել էր թեև դեռ վեց ժամն էր։ Գալուստը մի անգամ ևս հիշեց Ակոյի դեմքը, լսեց նրա կեղեքիչ հարցը՝ «էլի՞ չբերեցիր», նրա գլուխը պտտեց։ Այդ երեխան սպասելուց հոգնեց։ Նա կարող է վշտից հիվանդանալ։ Քիչ չեն պատահել նման դեպքեր։ Ակոն կարող է մեռնել, Ակոն չի դիմանալ... Տեր աստված, ազատիր Գալուստին փորձանքից։ Բայց աստված խուլ է աղքատների համար, Գալուստը վաղուց, շատ վաղուց գիտե այդ բանը։ Որ այդպես է, ինչո՞ւ

չարհամարհել նրա օրենքները, ինչո՞ւ չմեղանչել։ Այո, Գալուստը կանե ինչ որ մի անգամ արդեն վճռել է անել. թող լինի ինչ որ լինելու է։

Հասնելով գործարանի շրջապատին, նա քայլերը դանդաղեցրեց։ Թույլ տվեց, որ ընկերները հեռանան։ Դարբասի մոտ երկու պահապանները խուզարկում էին բանվորներին, չլինի թե նրանք գործարանից բան տանեն իրենց հետ։ Այդ կողմից նոր կառավարիչը, որ մի երիտասարդ ինժեներ էր, չափազանց խստապահանջ էր։

Նա ասում էր.

— Ես կարող եմ բանվորին ամեն բան ներել, բացի գողությունից։ Գողի համար ես գութ չունեմ։

Գալուստը մոտեցավ փայլուն առարկային, որ այժմ մի մութ կետ էր առանց ձևի։ Նա մի վճռական շարժումն արավ, թեքվեց և իր ուժեղ ձեռքերով առարկան բարձրացնելով, շրջապատի վրայից ձգեց փողոց։ Ապա նա հանգիստ քայլերով մոտեցավ դարբասին։ Նա վերջինն էր։ Պահապանները նրան սովորաբար չէին խուզարկում։ Տասներկու տարի էր նա աշխատում էր այդ գործարանում, և ոչ ոք նրան չէր կասկածել։ Նա հայտնի էր իր մանկական հեզությամբ և ամոթխածությամբ։

— Գնա՛, Գալո, մենք քեզ ճանաչում ենք,— ասաց պահապաններից մեկը սովորական դարձվածքը, երբ Գալուստը կանգ առավ դարբասի առջև։

Գալոն ցնցվեց այդ խոսքերից և շտապեց դուրս գալ։ Դարբասը փակվեց։ Փողոցում նա սպասեց մինչև որ բանվորների վերջին խումբն անհետացավ։ Նա մոտեցավ այն տեղին, ուր գցել էր առարկան, հանեց չուխան, փաթաթեց նրա մեջ առարկան, վերցրեց կոնատակը ու հեռացավ արագ քայլերով։ Նրա համագյուղացիներից մեկը գործարանից ոչ հեռու պահում էր մանր ապրանքների խանութ։

Գալոն ուղղակի այնտեղ գնաց։ Բարեբախտաբար խանութում ոչ ոք չկար, բացի խանութպանից։

— Օհո՛, Գալո,— հանդիպեց նրան մանրավաճառը, որ մի գվարթ, կատակասեր մարդ էր, կարմիր այտերով ու հաստ

պարանոցով,— ինչպես տեսնում եմ, քեֆդ ներսումդ վառել ես, որ ձյուն-ձմեռ չուխեդ կոնատակդ ես դրել։

Գալոն ոչինչ չասաց։ Աջ ու ձախ նայելով, կապոցը դրեց վար և նայեց խանութպանի երեսին։

— Այդ ի՞նչ է։

— Կռան,— պատասխանեց Գալոն,— ճանապարհի վրա ընկած էր, վերցրի։ Թող քեզ մոտ մնա, Մարուք ջան, էգուց կիմանանք ով է տերը, իրեն կտանք։

— Գտել ես, հա՞ա՞,— արտասանեց Մարուքը մի տեսակ նենգությամբ,— է՛հ, փառք աստծու, որ վերջապես դու էլ մի բան գտար։ Ընկերներիդ շատերը շաբաթ չի անցնում, որ մի բան չգտնեն. թող մնա— կաշխատենք տիրոջը գտնել։

Գալոն ոչինչ չասաց, բայց հասկացավ, որ խանութպանը գուշակել է իր սուտը։ Նա երեսը դարձրեց դուրս գնալու։

— Սպասիր, ա մարդ, ո՞ւր ես վազում,— կանչեց նրան խանութպանը։

Գալոն կանգ առավ։

Խանութպանը բաց արավ դրամարկղը և, այնտեղից դուրս բերելով երեք ռուբլի, առաջարկեց Գալոյին։

— Վերցրու,— ասաց նա։

— Ինչո՞ւ համար։

— Վերցրո՛ւ, փող է, հող չէ։

Գալոն նայեց թղթադրամին, ապա Մարուքի երեսին և վիզը քորեց։

— Վերցրո՛ւ, նազ մի արա, քեզ համար է նորություն, ես սովոր եմ։ Դուքանիս հետևում էլի կա դրանցից մի քանիսը. ընկերներդ են բերել։ Ես բոլորի տերերին պետք է գտնեմ և, հե-հե-հե, պիտի տամ իրենց։ Քո կռանի տիրոջն էլ կգտնեմ, միամիտ կաց, հե-հե-հե, քոնը երեք մանեթից ավելի չարժե։ Վերցրու։ Դե լավ, էս էլ քեզ մի մանեթ, եղավ չորս։ Որ սպանես էլ ավելի տալ չեմ կարող։ Ես գիտեմ, որտեղ ես գտել։ Կառավարիչին էլ եմ ճանաչում, օգնականին էլ, հասկանո՞ւմ ես ինչ եմ ուզում ասել։ Վերցրու, քրիստոսի աչքը կերեքը վկա, ավելի չարժե...

Գալոն առանց մի բառ արտասանելու, խլեց խանութպանի ձեռքից դրամը և, չուխան հագնելով, դուրս գնաց։

Նա վազեց շուկա։ Դրամն այրում էր նրա ձեռը, շտապեց ազատվել նրանից։ Նա գնեց բոլորը, ինչ որ հարկավոր էր Ակոյի համար։ Ավելացան մի քանի տասնյակ կոպեկներ։ Գալոն մտավ գինետուն, իրարու ետևից խմեց չորս բաժակ օղի, առաջին անգամ իր կյանքում։ Զվարթացավ և շտապեց տուն Ակոյին զվարթացնելու։

Տոնածառը դուրս եկավ հրաշալի մի բան, մինչև անգամ ավելի լավ, քան մի քանի հարուստ տներում։ Գոնե այդպես ասացին հարևան կանայք։

Ակոն երջանիկ էր, Ակոն ուրախությունից ոտների տակ երկիր չէր զգում։

Ուրախ էր Ակոյի մայրը, նա շարունակ կրկնում էր.

— Ա՜հ, վերջապես, վերջապես։

Բայց ի՞նչ պատահեց Գալոյին։ Ահա երեք օր է նա դարձել է անճանաչելի։ Ծննդյան երեկոն նա անցկացրեց տխուր, մկրտության օրը նույնպես, հետևյալ օրը դարձյալ։ Նա մեծ մասամբ նստած խոնավ սենյակի մութ անկյունում, լուռ նայում էր մերթ տոնածառին, մերթ Ակոյին, մերթ հատակի մի կետին և գլուխը տարօրինակ շարժում։ Կնոջ հարցերին պատասխանում էր մութ բառերով և ձեռքերի անորոշ շարժումներով։ Ակոյի երախտագետ համբույրներին պատասխանում էր ծանր հառաչանքներով, մինչև անգամ մի տեսակ սառնությամբ։ Մի երկու անգամ նա փոքրիկին իրենից հրեց անսովոր կոպտությամբ։ Մի անգամ էլ կնոջը հայհոյեց — չտեսնված բան։

Տոներն անցան, բայց տոնածառը դեռ ցցված էր սենյակի մեջտեղում։

— Հերիք է, վերցրու, դեն կորցրու,— ասաց Գալոն կնոջն այն առավոտ, երբ տոներից հետո աշխատանքը գործարանում սկսվել էր։

— Չէ՛, մայրիկ, թող մնա, թող մնա,— աղերսեց Ակոն։

— Պահիր ինչքան ուզում ես, բայց ես չտեսնեմ, չտեսնեմ։

Նա շտապեց գործարան։ Ամբողջ օրը նա ինքն իրենը չէր, աշխատում էր արբածի պես։

— Գալո, մուրճդ զգույշ բանեցրու,— կրկնում էր վարպետը շարունակ։

— Զգույշ եմ։

Բայց նա զգույշ չէր։ Երկու անգամ նա զարկելու հերթը փախցրեց։ Երրորդ անգամ նա շտապեց, և նրա մուրճը դիպավ ընկերոջ մուրճին։ Այդ ընդհարումից ընկերը ստացավ զորեղ հարված ու ընկավ գետնի վրա։

— Ի՞նչ արիր, ավանակ, դու հարբած ես,— գոռաց վարպետը։

Առաջին անգամն էր Գալոն լսում այդպիսի բաներ։

— Ես հարբած չեմ,— ասաց նա մուրճի կոթը սեղմելով ձեռքերի մեջ։

— Ուերմն ցնդվել ես։

— Խելքս գլխիս է, վարպետ։

Բարեբախտաբար, հարվածը վտանգավոր չէր և ստացողը բարի մարդ էր։

— Սաքո՜ւ,— ասաց Գալոն, տարօրինակ ժպտալով,— մի ուրիշ անգամ դու կզարկես ինձ, երբ իմ օրին կլինես։

— Բայց ի՞նչ է քո օրը, ասա, որ մենք էլ իմանանք։

— Ոչի՜նչ, ոչի՜նչ։

Արտասանելով այս բառը, նա այնպիսի մի զորեղ հարված տվեց շիկացած երկաթին, որ սպիտակ պեծերը մինչև առաստաղ բարձրացան ու ընկան հեռավոր բանվորների վրա։

Մի քանի պեծեր դիպան վարպետի երեսին։

Բարձրացավ ընդհանուր ծիծաղ։

— Գալոն գիշերը տանը չի քնել,— կատակեցին ոմանք։

Վարպետը կատաղեց։

— Դուրս եկ շարքից, դո՛ւրս,— գոռաց նա,— դու կարող ես մարդ սպանել։

Գալոն մուրճը իջեցրեց, հենվեց նրա կոթի վրա արմունկներով, նայեց աջ ու ձախ և ասաց.

— Վարպետ, ես կյանքումս չեմ մտածել մարդասպանության մասին։ Գողության մասին էլ չեմ մտածել։

— Դու հիվանդ ես, գնա տունդ, պառկիր,— ասացին մի քանիսը,— աչքերդ վառվել են կրակի պես։

— Ես հիվանդ չեմ։

Եվ կամեցավ գործը շարունակել, բայց այդ պահին հանկարծ սկսվեց մի իրարանցում։

— Ի՞նչ, ո՞վ, ե՞րբ,— լսվեցին այս ու այն կողմից։

Բոլոր վարպետներն ու բանվորները դադարեցին գործելուց և շրջապատեցին կառավարչի օգնականին, որ գոռում էր.

— Շո՛ւտ, ամենքդ ժողովվեցե՛ք, իսկույն կգա։

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել,— հարցրեց Գալոյի վարպետը։

— Գողություն,— պատասխանեց մեկը,— կռան են գողացել գործարանից։ Կառավարիչը գալիս է քննություն կատարելու։

Գալոն գունատվեց։ Մուրճը ձեռքում նա դանդաղ քայլերով մոտեցավ խմբվածներին։

Եկավ կառավարիչը գործակատարներով ու պահապաններով շրջապատված։

Տիրեց ընդհանուր լռություն։ Բանվորների կոշտ ու մրոտ դեմքերն արտահայտեցին խորին լրջություն։ Նրանք նայում էին իրարու երեսին հետաքրքրված, երկյուղով։

Գողությո՞ւն, ներկա կառավարչի օրերո՞վ, երբ գողությունը հայտարարված է սպանության հավասար ոճիր։ Ո՞վ պիտի լինի գժբախտը, որ ինքն իրեն կործանում է։

Կառավարիչն ասաց.

— Լսեցեք. գործարանի բակից գողացված է մի մեծ, արժեքավոր կռան։ Թե երբ, հայտնի չէ։ Այս պատճառով ես պահապաններին կենթարկեմ տուգանքի։ Բայց որ գողացողը ձեզնից մեկն է — այս ես հաստատ գիտեմ։ Դե՛հ, թող առաջ գա մեղավորը և գողությունը խոստովանի։ Ես նրան ոստիկանության չեմ հանձնիլ և բանտ չեմ նստեցնիլ։ Ես կարձակեմ առանց հետևանքների։ Լսո՞ւմ եք։

Նորից տիրեց լռություն, նորեն բանվորները նայեցին իրարու երեսին։ Ապա սկսեցին շշուկներ, ենթադրություններ, փոխադարձ կասկածներ։ Կասկածեցին ամենքին, բացի մի քանիսից, որոնց թվում էր Գալոն։ Նրա շիտակությունը հայտնի էր ամենքին։ Ոչ ոք չհիշեց նրա անուն, ոչ ոք չնայեց նրա երեսին։ Իսկ նա կանգնած էր խմբից մի փոքր հեռու, մենամենակ, գունատ, աչքերը գետնին հառած։ Նրա շրթունքները դողում էին, լայն կուրծքը ուժգին բարձրանում էր ու իջնում։

Կառավարիչը մի քանի վայրկյան սպասելուց հետո, շարունակեց.

— Դուք լսո՞ւմ եք, ոչինչ չե՞ք ասում։ Դուք չե՞ք ուզում մատնել ձեր ընկերոջը։ Օգնական, հեռախոսով կանչեցեք պրիստավին և խնդրեցեք, որ հետը ոստիկանական շունքերի։ Շունը դրանցից ավելի է, նա կգտնի գողին։ Պահապաններ, ինչո՞ւ չեք խոսում։ Ո՞ւմ եք կասկածում, ասացեք։

— Սիմոնին, Ավետանց Սիմոնին,— ասացին պահապանները միաձայն։

Բանվորները հառաչեցին, թեթևություն զգալով։ Չէ՞ որ կասկած կարող էր ընկնել նրանցից յուրաքանչյուրի վրա։

Մի քանիսը, որոնց վրա անցյալում մեղքեր կային, ասացին։

— Այո՛, Սիմոնը հայանի է, անկասկած նա է գողացել։

Առաջ եկավ մի նիհար, կուրծքը ներս ընկած երիտասարդ։

— Դո՞ւ ես Սիմոնը,— հարցրեց կառավարիչը։

— Հրամանքս։

— Դո՞ւ ես գողացել կռանը։

— Չէ, աղա. ես գող չեմ։

— Այդ կտեսնենք. պահպաններ, տարեք դրան, պահեցեք մի տեղ, ես իսկույն պրիստավին կկանչեմ հեռախոսով։

Պահապանները բռնեցին Սիմոնի թևերից։

— Թողեք ինձ, թողեք, ես գող չեմ,— պաշտպանվում էր բանվորը։

— Շունը կասե գող ես, թե չէ,— ծիծաղեցին ոմանք։

— Դե՛հ, ցրվեցե՛ք ձեր գործին,— հրամայեց օգնականը և հետևեց կառավարչին, որ գողին գտած համարելով, դիմեց դեպի արհեստանոցի դռները։

Հանկարծ Գալոն, որ մինչև այդ վայրկյան լուռ ու անշարժ կանգնած էր, գոռաց.

— Տղե՛րք, ասացեք կառավարչին, որ սպասե։

Կառավարիչը կանգ առավ։ Ամբոխը նորեն խմբվեց։

Գալոն հանդարտ քայլերով մոտեցավ կառավարչին և գդակը վերցրեց։

— Կռանը ես եմ գողացել,— ասաց նա անհողդողդ ձայնով։— Սիմոնին բաց թողեցեք, նա անմեղ է։

Ամենքը զարմացան։

— Նա գժվել է, նա հարբած է, տելին է տալիս, — լսվեցին այս ու այն կողմից։

— Դո՞ւ, — զարմացավ կառավարիչը։

— Այո՛, ես,— կրկնեց Գալոն։

— Այդ անհավատալի է,— ասաց օգնականը։

— Սուտ է ասում Գալոն, նա չի գողացել։ Նա ազնիվ մարդ է,— լսվեց շատերի բերնից։

— Գալոն ազնիվ էր, տոնածառը նրան գող շինեց,— պատասխանեց Գալոն։

— Տոնածա՞ռը, ի՞նչ է ասում, պարզ խոսիր,— գոչեց կառավարիչը։

— Ես ասում եմ, կռանը ես եմ գողացել։ Մարդ ուղարկեցեք մանրավաճառ Մարուքին հարցնելու։

Կառավարիչը հրամայեց Սիմոնին ազատ թողնել։

Պահապանները մոտեցան Գալոյին։

— Հարկավոր չէ ինձ բռնել,— ասաց Գալոն,— ես ինքս կանեմ, ինչ-որ հարկավոր է։

— Եկ գրասենյակ, ես կկարգադրեմ,— հրամայեց կակոավարիչը։

Գալոն հետևեց նրան։

Նույն երեկո նրան արձակեցին առաջին քննությունից հետո։ Կառավարիչը խնայեց նրա ընտանեկան կացությունը, բայց գործից գրկեց։

Հինգ օր անցած Գալոյի կապտած դիակը գտան ծովի ափին, ավազների մեջ։

ՍՏԱԽՈՍԸ

Նրանք մտերիմ բարեկամներ էին պատանեկան հասակից։ Գուցե այն պատճառով, որ նրանց խառնվածքները տրամագծորեն հակառակ էին իրարու։ Արտաշեսը սակավախոս էր, կարելի է ասել իսկի չէր խոսում, երբ անհրաժեշտը չէր ստիպում նրան խոսելու, Միսակը շատախոս էր, կարելի է ասել—իսկի չէր լռում։ Բացի դրանից, Արտաշեսը երբեք սուտ չէր ասում կամ, ճիշտն ասած, ծուլանում էր ասել, մինչդեռ Միսակի համար փչելը դարձել էր օրգանական պահանջ։

Հարկավ, Արտաշեսը վաղուց գիտեր իր ընկերոջ թերությունը և չէր հանդիմանում նրան։ Ոչ երկյուղից կամ նրբազգացությունից, այլ միայն ծուլությունից։ Չէ՞ որ պիտի խոսեր, մանավանդ գիտեր, որ Միսակի ստախոսությունը միանգամայն անմեղ է, առանց որևէ մեկին խաբելու, մոլորեցնելու կամ պարսավելու ցանկությամբ։ Բայց և այնպես, մի օր հարկավոր էր ճշմարտությունն ասել, և Արտաշեսն ասաց.

— Գիտես, Միսակ, ես եկել եմ այն եզրակացության, որ դու մի քիչ ստախոս ես։

— Ի՞նչ։

— Այո՛, ստախոս ես։

Նկատողությունն այնքան անսպասելի էր, այնքան հանդուգն, որ Միսակն ապշեց։ Ամբողջ մի բոպե նա, աչքերը

լայն բաց արած, նայեց ընկերոջ քթին, հետո կրծքին, այնուհետև ոտքերին, ապա նորեն քթին։

— Երդվում եմ իմ մոր գերեզմանով, որ դու ցնորվել ես,— սկսեց նա, ձեռը զարնելով մարմարյա սեղանին սոսկալի թափով։ Թուրքական սուրճի վաղուց պարպված գավաթներից մինն ընկավ հատակի վրա և փշրվեց։

Արտաշեսը ոչինչ չասաց, միայն բարեկամաբար ժպտաց։

— Ե՞ս, ստախո՞ս,— շարունակեց Միսակը, գլխարկը ճակատից ետ մղելով՝ խոսքն ավելի ազդեցիկ դարձնելու համար,— ե՞ս, ե՞ս, Միսակ Մանուկյա՞նս։ Ե՞ս, որ ճշմարտության համար հալածվել եմ, հալածվում եմ, մինչև գերեզման պիտի հալածվեմ մարդկությունից։ Ե՞ս, ասա, ե՞ս...

Արտաշեսը լուռ էր, ինչպես մի հրացան, որ միայն մի փամփուշտ ուներ, արձակեց ու պրծավ։

— Երդվում եմ պատվովս,— ավելի բորբոքվեց Միսակը,— որ դու կատակ ես անում և շատ հիմար կատակ։ Հապա տեսնենք...

Եվ, գրպանից մի զմելի դուրս բերելով, շարունակեց.

— Տեսնո՞ւմ ես այս դանակը։ Դե՛հ, ասա, որ կատակ չէիր անում։ Երդվի՛ր, և ես իսկույն ևեթ սրանով փորս կպատռեմ, կտոր-կտոր կանեմ ինձ, կձգեմ շների առաջ։ Այո՛, այո, թող նրանք կրծոտեն ինձ ինչպես սատկած ձիու կամ իշի, միևնույն է։ Այո՛, այո՛, այդ ավելի լավ կլինի, քան հրաշակվել ստախոս ու ապրել։ Երդվի՛ր, ասա. կատակ չէի՞ր անում...

— Լա՛վ, երդվում եմ, որ կատակ չեմ անում,— չծուլացավ արտասանել Արտաշեսը։

— Պատվո՞վդ։

— Պատվովս։

— Որ ես ստախո՞ս եմ։

— Մի քիչ։

— Այդ միևնույնն է, քիչ թե շատ, ուրեմն ստախոս եմ, այո՞,— շարունակեց Միսակը և զմելին, որով պիտի պատռեր իր փորը, ծալեց ու գրպանը դրեց։— Որ այդպես է, արի գրագ գանք։ Ես մեջտեղ կդնեմ հիսուն ռուբլի, իսկ դու դիր հինգ ռուբլի։ Քեզ ժամանակ կտամ մի ամիս, մի տարի,

հինգ տարի, տասը, քսան, եթե դու մի անգամ ինձ բռնես սուտ ասելիս, կստանաս հիսուն ռուբլի, իսկ եթե չկարողանաս, ես քո հինգ ռուբլիով բեզ մի լավ կհարբեցնեմ ու հետո կողերդ կջարդեմ։ Գալի՞ս է։

— Գալիս է,— համաձայնվեց Արտաշեսն օձիքն ազատելու համար։

Նույն օրը երեկոյան նրանք հրավիրված էին մի ծանոթ ընտանիք թեյի։ Որովհետև Միսակի երևակայությունն առանձնապես բորբոքվում էր կանանց ներկայությամբ՝ Արտաշեսն ասաց նրան.

— Տես, Միսակ, զգույշ, որ գրազդ հենց այս երեկո տանուլ չտաս։

— Զայնդ կտրիր, անիրավ,— գոչեց Միսակը,— այսօր դու ինձ մի վերք տվեցիր, որ հավիտյանս հավիտենից չի բուժվիլ։ Ես, Միսակ Մանուկյանս, ստախո՞ս, հա, հա, հա...

***

Դժբախտաբար, այս անգամ գայթակղությունը բացառիկ եղավ։ Միսակը հյուրընկալ ընտանիքում, բացի տանտիրուհու երկու երիտասարդ քույրերից, հանդիպեց մի գեղեցիկ տիկնոջ, որի հետ վաղուց փափագում էր ծանոթանալ... Եվ, հակառակի պես, այդ տիկինը մեծ ախորժակ ուներ ամեն տեսակ արկածներ լսելու։ Իսկ Միսակը գիտեր այնպես ոգևորված, այնպես պատկերավոր պատմել, որ շատերը կամա-ակամա գրավվում էին։ Նույնիսկ նրանք, որոնք կասկածով էին ընդունում նրա ասածները։ Նույնիսկ ինքը՝ Միսակը, հաճախ հրապուրվելով իր բարձր բարիտոնային ձայնով, սկսում էր իր ստերին հավատալ։

Պատմելով իր և ուրիշների կյանքից մերթ տխուր, մերթ զվարճալի արկածներ, նա մի քանի անգամ փորձեց դիմել անղուսպ ֆանտազիայի օգնությանը, բայց ամեն անգամ հանդիպեց Արտաշեսի անտարբեր հայացքին ու լեզուն կծեց։ Սակայն այդ երկար չտևեց։ Շուտով նա մոռացավ ամեն ինչ և կծիկի ծայրը բաց թողեց։

Գեղեցիկ տիկինը լսում էր նրան և մերթ ծիծաղում,

մերթ զանազան բացականչություններով արտահայտում իր հրճվանքը, զայրույթը, ուրախությունը, սարսափը, նայելով Միսակի պատմածներին։

Երբ ընկերները, հրաժեշտ տալով, փողոց դուրս եկան, Միսակն արդեն շատ խոսելուց քրտնել էր։ Այնուամենայնիվ, նա չհանգստացավ և տակավին ոգևորված, գոչեց.

— Ահ, ի՜նչ հրաշալի երեկո անցկացրինք, Արտաշ...

Արտաշը իր կոկորդից արձակեց ինչ-որ հնչյուն, որից ոչինչ չէր կարելի հասկանալ։ Միսակը շարունակեց.

— Տիկին Զարմարյանն ուղղակի սքանչելի է։ Տեսա՞ր, ինչպես էր քրքջում, երբ ես պատմում էի ծիծաղելի դեպքեր։ Ինչ մեղքս թաքցնեմ, երբ լսողը գեղեցիկ կին է, չկա ինձ համար ավելի բարձր հաճույք։

— Իհարկե,— արտասանեց Արտաշեսը,— բայց դու գրքաղդ տանուլ ես տվել։

— Ինչպե՞ս։

— Այ, այսպես։ Տե՛ս։

Այս ասելով, Արտաշեսը բռնեց Միսակի թևից և նրան մոտեցրեց փողոցի էլեկտրական լապտերներից մեկին։ Դուրս բերելով գրպանից իր հուշատետրը, բաց արավ և ասաց.

— Կարդա՛։

— Այդ ի՞նչ է։

— Կարդա՛։

Միսակը կարդաց հուշատետրի մեջ։

«Իմ բարեկամ Միսակ Մանուկյանի երկու ժամվա մեջ ասած ստերը...»։

— Աղվե՛ս, աղվես,— գոչեց Միսակը,— դրա համա՞ր էիր անկյունում սուս ու փուս թաղնել շան պես։ Ապա տեսնենք ինչեր ես շարադրել։ Օհո, օհո, սուտ է, սուտ է, ես չեմ ասել, թե Պարիզում ապրել եմ երկու տարի...

— Ասացի՛ր։

— Ես չեմ ասել, թե Մոսկվայի «Ստրելնա» գիշերային ճաշարանում մի գնչուհու համար մի գիշեր հինգ մարդ եմ ծեծել։

— Ասացի՛ր։

— Ես չեմ ասել, Մոսկվայի «Էրմինտաժ» ճաշարանում

կոշիկիս կրունկով հազար ռուբլիանոց հայելի եմ ջարդ ու փշուր արել...

— Ասացի՛ր։

— Եվ քեզ էլ վկա՞ եմ բերել։

— Այո՛։

— Բայց սպասիր, այդ ի՞նչ ես գրել։ Ես ասե՞լ եմ, որ Լենքորանի անտառներում երկու վագր և չորս վարազ եմ սպանել։

— Այո՛, ասացիր ու ինձ էլ վկա բերեցիր։

Միսակի ձեռքերը թուլացան։

— Քրիստոսի առեք կերեքը վկա,— արտասանեց նա անկեղծորեն,— ամենևին չեմ հիշում, որ այդ բոլորն ասել եմ։

Արտաշեսը ծիծաղեց իր կարողության չափ, այսինքն՝ մի անգամ ու շատ կարճ փոթկաց։

— Կեցցե՛ս,— ասաց նա,— վերջապես, կյանքում մի ճշմարիտ խոսք ասացիր...

ՀԱՅՐ ԱՆՈՓՐԻՈՍԻ ՎԻՃՏԸ

— Գոհություն ամենաբարձրյալին, որ հոգևորականները պարտավոր չեն կռվի դաշտ գնալու,— ասաց իր մըտքում 35 տարեկան առողջ, կայտառ վարդապետը, Էջմիածնի նախկին սան, միշտ ճառաբանող, միշտ լրագիրներում բանակռվող, միշտ ազատամիտ և ազատախոս Անոփրիոս հայր-սուրբը, երբ լրագիրներում կարդաց, թե ահեղ պատերազմի դաշտն են կանչվում բոլոր իր հասակակից երիտասարդները։

Չկարծեք թե նա երկչոտ էր կամ փոքրոգի։ Ամենևին։ Ընդհակառակը, տեղը եկած, նույնիսկ չեկած ժամանակ նա միշտ պաշտպանում էր կռվի գաղափարը «իբրև սրբություն սրբոց» հանուն հալածյալների։ Նա չէր վախենում շարունակ կրկնել.

— Եթե մի օր հարկը պահանջե, կվերցնեմ մի ձեռս Քրիստոսի խաչը, մյուս ձեռս սուր, կընկնեմ կամավորների առաջ և կգնամ ազգիս թշնամիների դեմ։

Իսկ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Անոփրիոս հայր-սուրբը երկու անգամ ձի նստեց և Վաղարշապատից Աշտարակ գնաց իմանալու, արդյոք այնտեղի հայերին կոտորած չի՞ սպառնում Դաղստանի կողմերից։ Հետո երկաթուղով շտապեց Ալեքսանդրապոլ տեղեկանալու համար, արդյոք, տեղական ազգաբնակությանը արշավանք չի՞ սպառնում Հնդկաստանից կամ Բելուջիստանից։

Եվ երբ իմացավ, որ թե այստեղ և թե այնտեղ իր սիրելի զավակներն ապահով են վտանգից, ինքը կռվեց տեղական տերտերների հետ։ Այնուհետև մտնելով մայր աստվածածնա եկեղեցին, մի մեծ ռազմական և ռազմագիտական քարոզ ասաց։ Ի միջի այլոց, նա արտասանեց հետևյալ նշանավոր խոսքերը, որ գեղագրության ուսուցիչ Ալթունբաշյանը անմիջապես հաղորդեց «Մարս» անունով լրագրին՝ անկասկած ի գիտություն ապագա պատմագրի.

— Հայ հոգևորականությունը միշտ հայ ժողովրդից անբաժան է եղել նրա վշտի և ուրախության օրերում։ Մենք ենք փրկել ձեզ դարեր շարունակ փորձանքներից։ Մենք էլ կփրկենք այժմ և հավիտյանս հավիտենից։

Եվ «մենք» բառը նա արտասանեց այնպիսի աղաղակող ձայնով, որ ժամհարը քնից զարթնեց։ Ժամերգությունից հետո երկու տիրացու «Մարս» լրագրի թղթակցի և տեղական առևտրական դպրոցի տասնումեկ աշակերտների հետ «Հսկայական մանիֆեստացիա» սարքեցին (այսպես էր գրված լրագրում) նրա համար եկեղեցու գավթում։

Իսկ երեկոյան հայտնի մսավաճառ Սիրական Շորշոփյանը նրան հրավիրեց ընթրիքի, ասելով իր կնոջը.

— Ես սիրում եմ դանակը փառաբանող հոգևորականներին, մանավանդ, երբ նրանք Անոփրիոս հայր-սրբի պես առողջ են, կարմրաթուշ և բավական հաստամարմին։ Նրանք ինձ հիշեցնում են իմ օրհնյալ արհեստը...

Վերադառնալով էջմիածին, հայր Անոփրիոսը պատմեց իր պաշտոնակիցներին, թե ինչպես հայ ժողովուրդը սարսափի մեջ էր, և թե ինքն իր ոգևորիչ քարոզներով քաջալերեց նրան և բարձրացրեց նրա մեջ քաջն Վարդան Մամիկոնյանի ոգին։

— Գոհություն ամենաբարձրյալին,— կրկնեց Անոփրիոս հայր-սուրբը, երբ, լրագիրը մի կողմ ձգելով, մոտեցավ իր սենյակի պատի վրա կախված հայելուն, որի վրա սիրահարված էր մանավանդ այն օրից, երբ լսել էր, որ այլուրավա-

ճառ Մատթեոս Բաբուլյանի կողակից հաստամարմին Գյուլնիզարը նրան համարում է «շատ գեղեցիկ տղամարդ»։

Նա հիացմամբ նայեց իր առողջ թշերին, որոնք կարծես ալիզարինով ներկած լինեին, նայեց խոշոր, վառվռուն աչքերին, շփեց սաթի պես սև և ավելի պես կոշտ մորուքը և երրորդ անգամ մտքում արտասանեց.

— Գոհություն ամենարարձրյալին, որ հոգևորական եմ, ապա թե ոչ այս աստվածային հրաշափառ պատկերը պիտի սրի կամ կրակի կերակուր դառնար։

Եվ այսպես ինքն իրեն հանգստացնելով, պատվարժան հայր-սուրբը կանչեց ծառային և հրամայեց պատրաստել տաճկական սուրճ, որ ամեն օր խմում էր ոչ պակաս, քան հինգ գավաթ։

Սակայն, ավա՜ղ, հոգեկան անդորրությունը աստվածային, հարատև պարգևներից չէ նույնիսկ ամենաառաքինի հոգևոր հայրերի համար։

Շուտով հայր Անոփրիոսը դարձյալ լրագիրներից իմացավ, որ պատերազմը զոհ է պահանջում ոչ միայն կռվի դաշտը գնացողներից, այլև նրանցից, որոնք հանգիստ նստած են իրենց տներում, թեկուզ տունը վարդապետի համեստ խուցը լինի։ Այդ անիրավ լրագիրները շարունակ պնդում են, թե պետք է նյութական զոհաբերություն անել հօգուտ պատերազմ գնացած զինվորների ընտանիքների, նաև հօգուտ վիրավորյալների։

— Արդյոք գիտե՞ն մարդիկ,— մտածեց հայր Անոփրիոսը,— որ ես, մեղավորս, ունիմ մի քանի չնչին բանկային տոմսեր՝ արժողությամբ 18.385 ռուբլու, վաստակած հաջորդության ժամանակ։

Նա մտածեց, մտածեց և գտավ, որ, համենայն դեպս, իր պաշտոնակիցներից ոմանց հայտնի է գաղտնիքը։ Հայտնի է նաև, որ ինքը մի չոր գլուխ է, չունի ոչ մերձավոր և ոչ հեռավոր ազգականներ, որոնց կտակեր այդ աննշան հոգեպահուստը։

Եվ մի հերոսական ճիգն անելով, որոշեց մյուս օրն ևեթ փոստով ուղարկել «Մարս» լրագրի խմբագրությանը 3 ռուբլի հօգուտ վիրավորյալների։ Դրամի հետ նա ուղարկեց և

չորս մեծադիր էջերից բաղկացած մի հոդված, ուր նա փառաբանում էր «ազգերի սրբազան պատերազմը» և այնուհետև կոչ անում իր պաշտոնակիցներին, որ նրանք էլ զոհեն իրենց լուման...

«Մարս» լրագիրը շտապեց ստանալուն պես տպագրել հայր Անոփրիոսի հոդվածը, վասնզի առաջինը՝ այնտեղ մի քանի գովասանական խոսքեր կային իր հասցեին, երկրորդը՝ հեղինակին տողավարձ չպիտի տար։

Աղատվելով այդ պարտքից էլ, հայր Անոփրիոսը դարձյալ հանգստացավ։

Բայց, կրկնում եմ, հոգեկան անդորրությունը աստվածային հարատև պարգևներից չէ։

Մի քանի օր անցած՝ հայր Անոփրիոսն իմացավ կրկին այդ անիրավ լրագիրներից, որ պատերազմը մեծ ազդեցություն ունի բոլոր տեսակի բանկային թղթերի, հետևաբար և իր տոմսերի արժեքի վրա։

Այդ օրից նա դադարեց հետաքրքրվել լրագիրների մյուս բոլոր բաժիններով գոնե այնչափ, որչափ առաջ և իր ամբողջ ուշ ու միտքը նվիրեց բորսային և ֆինանսական բաժնին։

Մի օր նա հաշվեց և տեսավ, որ իր թղթերի արժեքն ընկել է այնչափ, որ նա կորցնում է մոտ 75 ռուբլի, հետո 120 ռուբլի, հետո 180 ռուբլի և այլն։

Նա սարսափեց և սկսեց այնպես անիծել Վիլհելմ Հոհենցոլլերնին, որպես ոչ մի մարդ աշխարհի երեսին դեռ չէր անիծել և չպիտի անիծեր։

Այժմ Անոփրիոս հայր-սուրբը առավոտները զարթնում է թե չէ, աղերսում է ամենարարձրյալին, որ մի կերպ վերջ տա կորստաբեր պատերազմին, քանի որ ինքը չի սնանկացել...

Եվ օր-օրի վրա նրա կարմիր թշերը գունատվում են և վիզը բարակում։

ՀԵՐՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ազգերի ահռելի պատերազմը տակնուվրա արավ Մագդալինա Մաքայանի կյանքը։ Ապրել էր նա մինչև այդ ժամանակ անդորր, անգույն, անարյուն, բայց երջանիկ կյանքով։ Սիրե՞լ էր նա իր ամուսնուն այնպես, ինչպես սիրում է կինը տղամարդուն։ Սիրվե՞լ էր արդյոք նրանից։ Ինքներդ դատեցեք։ Տասնևութ տարեկան մի շատ սովորական, շատ պարզ աղջիկ էր, ոչ հիմար և ոչ էլ շատ խելոք, երբ ամուսնացավ «պոդպորուչիկ» Աբգար Մաքայանի հետ։ Ամուսնացավ առանց երկար մտածելու և երկար տատանվելու, որովհետև արդեն մանուկ հասակից լսել էր, որ երբ ոչ հարուստ մի ընտանիքի աղջիկ դպրոցն ավարտում է, երբ գիտե քիչ թե շատ նվագել դաշնամուր, պարել, զվարճախոսել, պետք է ամուսնանա, եթե չի ուզում իր ծնողների համար ավելորդ բեռ դառնալ։

Այսպես թե այնպես, Մագդալինան իրեն անբախտ չէր զգում, ինչպես չի կարող անբախտ զգալ իրեն մի հավ, որ ունի առատ կուտ և տաք բույն։ Նա նույնիսկ երջանիկ համարեց իրեն այն պահից, երբ ունեցավ առաջին զավակը և երկու տարի չանցած՝ երկրորդը — մեկը տղա, մյուսը աղջիկ։ Եվ իր ամբողջ էությամբ անբաժան նվիրվեց նրանց։ Այնպես, ինչպես կարող է նվիրվել միայն այն էակը, որ կյանքի խորհուրդը պարփակել է ընտանեկան սահմանափակ շրջանակի մեջ։ Նա մոռացավ ամենքին և ամեն ինչ, որ կապ

չուներ իր զավակների ճակատագրի հետ։ Նրա դաշնամուրի կափարիչն օրերով և շաբաթներով չէր բարձրանում։ Հագնվում էր անփույթ, առանց որևէ ուշադրություն դարձնելու իր արտաքինի վրա։ Նույնիսկ ամուսինը դարձավ նրա աչքում մի տեսակ շնչավոր մեքենա, որ ստեղծված է գործելու միայն և միմիայն երեխաների համար և որ չի կարող նրանցից դուրս ունենալ ոչ հոգս, ոչ ցանկություն։

— Գիտե՞ս, Աբգար,— ասում էր նա մայրական անզուսպ և կույր զգացման բուռն գրգռման պահերին, գրկելով մի ձեռով մեծ, մյուսով փոքր զավակին,— եթե, տերը մի՛ արասցե, սրանց մի բան պատահի, ես առանց մի վայրկյան տատանվելու, ինձ կսպանեմ։

— Լավ, հիմար-հիմար մի՛ դուրս տա,— կրկնում էր Աբգարը, հանգիստ ժպտալով այն լայն, պայծառ ժպիտով, որ միայն անկեղծ և բարեսիրտ մարդկանց է պարգևված և որ մի առանձին գրավչություն է տալիս նրանց դեմքերին, որքան ևս տգեղ, որքան ևս այլանդակ լինեն նրանք։

* * *

Այսպես ապրեց Մագդալինան ինը տարի, միշտ հանգիստ, միշտ անվրդով, ինչպես մի անգամ արդեն իր ուղին հարթած դաշտային գետակ։

Մի օր Աբգարը տուն եկավ հուզված և թուրն ուսից վար դնելով, ասաց.

— Ա՜հ, վերջապես։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Մագդալինան, որ այդ ժամանակ զբաղված էր փոքր երեխայի հագուստը փոխելով։

— Զորաժողով է հայտարարված։

— Զորաժողո՞վ,— արտասանեց Մագդալինան անգիտակցաբար, առանց նայելու ամուսնու երեսին։

— Այո, սիրելիս։ Եվ շատ հավանական է, որ մեր գունդն էլ ուղարկեն, հետևաբար և՛ ինձ։

— Ո՞ւր պիտի ուղարկեն,— հարցրեց Մագդալինան, տակավին լավ չըմբռնելով հաղորդված լուրի ամբողջ լրջությունը։— Ի՞նչ ես ուզում ասել։

— Ուզում եմ ասել, որ պատերազմ է լինելու։

— Պատերա՜զմ։

Մագդալինան բաց թողեց երեխային և իր խոշոր, սևորակ աչքերը, որ այնքան գեղեցիկ էին և այնքան միամիտ, հառեց ամուսնու երեսին։ Այն միտքը, թե Աբգարը պիտի գնա պատերազմի դաշտ, թվաց նրան այնքան տարօրինակ, որ նա կարծեց, թե ամուսինը մի չար կատակ է անում։

Նա հարցրեց.

— Այդ ի՞նչ է նշանակում։

— Այդ նշանակում է, սիրելիս, որ ես կամ մի քանի ամսից հետո կվերադառնամ, կամ երբեք չեմ վերադառնա։ Ես չէի ուզում հանկարծակի հայտնել, բայց քանի որ այնքան քաջ եղար, որ առաջին լուրը լսեցիր առանց ուշաթափվելու, կասեմ, արդեն որոշված է մեզ ուղարկել։

— Ո՞ւր։

— Հայտնի չէ։

— Ե՞րբ։

— Տասն օրից հետո։

Մագդալինան գլուխը թեքեց կրծքին, տխուր հառաչեց և մի փոքր անցած, շարունակեց,

— Իսկ երեխանե՞րը...

— Իսկ երեխաները կշարունակեն պատերազմել քեզ հետ,— հեգնեց Աբգարը նույն զվարթ եղանակով։

— Դու կատակ ես անում, բայց իմ հոգին միանգամայն տակնուվրա եղավ։ Չէ՞ որ դու կարող ես վիրավորվել։

— Կարող է պատահել։

— Նույնիսկ սպանվել։

— Այդ էլ մի անսպասելի բան չէ։

— Հետո՞։

— Հետո ի՞նչ։ Դու կլինես երիտասարդ, հետաքրքրական այրի։ Երևակայում եմ, ինչպես սազ կգա քեզ սգազգեստը։ Կարող եմ այժմվանից երաշխավորել, որ դու կունենաս բազմաթիվ երկրպագուներ...

Եվ Աբգարը բարձրաձայն ծիծաղեց, ցույց տալով հաստ շրթունքների տակից սպիտակ, մաքուր, առողջ ատամների շարքերը։

— Լռի՛ր,— գոչեց Մագդալինան, անկեղծ վրդովվելով,— ինձ անհանգստացնում է երեխաների վիճակը։

Աբգարը բացատրեց, թե երեխաները կպահվեն ավելի լավ, քան մինչև այժմ։ Պատերազմի ժամանակ զինվորականների ռոճիկներն ավելացվում են։ Մագդալինան կստանա Աբգարի այժմյան ամսականը, իսկ ավելացումը նրան բավական է։ Պատերազմի վայրում փող ծախսելու համար մեծ պետքեր չկան։ Այնուհետև, չէ՞ որ նրա հայրական երկու զույգ կիսախարխուլ խանութների վարձքն էլ կա Մագդալինայի համար։

— Ես այդ մասին չեմ մտածում,— ընդհատեց Մագդալինան,— այլ... •

— Այլ ի՞նչ։

— Ես երևակայել չեմ կարող, թե ինչպես կարելի է առանց քեզ ապրել։ Երեխաներն առանց իրենց հո՞ր... ոչ, ոչ, դու ամեն բան կատակ ես դարձնում։ Լավ մտածիր։ Նրանք կարող են քո կարոտից հիվանդանալ, կարող են մինչև անգամ...

— Լավ, մի՛ երկարացնի,— ընդհատեց Աբգարը,— երեխաներն առհասարակ շատ հեշտ են ընտելանում իրենց վիճակի փոփոխությանը։ Անցյալի հիշատակը նրանց համար վառոդի ծուխ է, կար և վայրկյան չանցած՝ չքացավ։

Եվ նա շարունակեց համոզել Մագդալինային հաշտվել հանգամանքների հետ։ Կան մարդու համար պարտականություններ, որոնց կատարելը բարձր է, քան ամեն մի երջանկություն, քան նույն ինքը կյանքը։ Նա շատ ուրախ է, որ, վերջապես, թշնամու երես պիտի տեսնե։ Լինել զինվորական ամբողջ 15 տարի և վառոդի հոտ չզգալ, ամոթալի է։ Իսկական զինվորականը նա է, որ հոգին պատերազմի դաշտումն է ավանդում։ Գոնե նրա զավակներն ապագայում պարծանքով կասեն, որ իրենց հայրը մեռավ ինչպես մարդ և ոչ թե սատկեց ինչպես պառավ աքաղաղ հավաբնում։

Մագդալինան հոգու խորքում մի առ մի հերքեց Աբգարի բոլոր առարկությունները, այնքան վայրենի էր նրա համար սպանելու կամ սպանվելու գաղափարը։ Բայց չհակաճառեց։ Նա զգաց, որ ներկա դեպքում հակաճառությունը կլինի ա-

պարդյուն և ոչ պատվաբեր մի տակավին երիտասարդ զինվորականի կնոջ համար։

Հետևյալ առավոտից նա սկսեց զբաղվել Աբգարի ճերմակեղենը կարգի բերելով։ Հետգհետե նա հաշտվեց պատերազմի անհրաժեշտության մտքի հետ, որ այնքան ջերմեռանդ պաշտպանում էր Աբգարը, և այլևս դադարեց բողոքել ճակատագրի դեմ։

* * *

Ուղևորության օրը Մագդալինան երեխաների հետ գնաց երկաթուղու կայարանը Աբգարին ճանապարհ դնելու։ Նա կարողացավ կատարել ամուսնու խիստ պատվերը՝ հրաժեշտի պահին ոչ միայն լաց չլինել կամ տխուր դեմք ցույց չտալ, այլև աշխատել երևալ ուրախ ու զվարթ...

— Դու գիտես, որ ես մի քիչ հայրենասեր եմ,— ասաց Աբգարը կեսլուրջ և կեսկատակով.— չեմ ուզում, որ օտարները կարծեն, թե հայ կինը պակաս քաջ է, քան մյուս ազգերի կանայք։

Եվ նա հիացավ Մագդալինայի սառնասրտությամբ, երբ հասավ հրաժեշտի վերջին րոպեն։

Բայց երբ Մագդալինան տուն վերադարձավ, երբ աղախինը սամովարը ներս բերեց, երբ երեխաները, կարծես բընազդաբար գուշակելով իրենց մոր հոգեկան դրությունը՝ լուռ նստեցին սեղանի քով, երբ այլևս չերևաց Աբգարի միշտ պայծառ, միշտ կենսախինդ, միշտ ժպտուն դեմքը, երբ լսվեց նրա քիչ խուլ, բայց մեղմ, համակրելի բարիտոնը, մի անսովոր, ծանր վիշտ համակեց նրա հոգին։ Թվաց նրան, որ այն, ինչ որ եղել է ինը տարի շարունակ, անցավ, գնաց անվերադառնալի, որ մի ինչ-որ աներևույթ զորություն մի ուժգին հարվածով կտրեց նրա գոյության սովորական ընթացքը, որ այնքան սահուն էր, այնքան անաղմուկ և երջանիկ իր անգունության մեջ։ Թվաց նրան, որ այդ օրից առմիշտ անհետացավ խաղաղության հովանավոր հրեշտակն այս համեստ, անդորր կացարանից, ուր ոչ մի երկպառակություն տեղի չէր ունեցել, ոչ մի կծու, վիրավորական խոսք չէր արտասանվել ինը տարվա ընթացքում։

Անհետացավ, և նրա տեղը եկավ նստեց մի անկոչ հյուր, դաժան, անողոք, զարհուրելի ստվերը պատերազմ կոչված հրեշի՝ պատերազմ տարված զինվորականի որբացյալ ընտանիքում։ Մի սոսկալի մղձավանջ, որ իր լռությամբ իսկ պիտի թունավորի նրա կյանքը և խափանե այդ փոքրիկ, այդ անմեղ էակների բախտը, որ այնքան ապահով, այնքան անձեռնմխելի էր թվում մինչև այժմ։

Եվ նա չկարողանալով իրեն զսպել, թողեց երեխաներին, անցավ սեղանատնից ննջարան, ընկավ երեսն ի վար անկողնակալի վրա և սկսեց դառն հեկեկալ, գլուխը թաղելով բարձի մեջ, որպեսզի ձայնը չհասնի երեխաներին։ Հեկեկալ այնպես, ինչպես հեկեկում էր մանուկ հասակում, երբ խլում էին նրանից իր սիրած խաղալիքը։

* * *

— Մամա, լաց մի լինիր, բավական է,— լսեց նա հանկարծ և անմիջապես գլուխը բարձրացրեց, աչքերը սրբեց, աշխատելով թաքցնել իր վիշտը։

Նրա առջև կանգնած էր վեց տարեկան Գարիկը։ Գեր, առողջ, զվարթ, ժպտուն՝ կատարելապես իր հայրը։

Մայրը գրկեց նրա գլուխը, սեղմեց կրծքին և ջերմագին համբուրեց արագ-արագ արտասանելով.

— Ոչինչ, բալիկս, ոչինչ։ Ես լաց չէի լինում։ Ընդհակառակը, ծիծաղում էի։ Գիտես ինչո՞ւ։ Միտս եկավ այն փոքրահասակ, նիհար կոզակը մեծ մորուքով, մեծ փափախով, որ աշխատում էր իր ընկերների պես մեծ երևալ։ Հիշո՞ւմ ես՝ ինչպես նրա երկար դաշույնը փաթաթվում էր ոտքերին։

Բայց զգայուն մանուկը չհավատաց մոր կեղծիքին և չծիծաղեց։

— Մամա, պապան ո՞րտեղ գնաց,— հարցրեց նա, ձեռիկը դնելով մոր հերարձակ գլխի վրա։

— Չգիտեմ։

— Ինչո՞ւ գնաց։

— Չգիտեմ։

— Հա, հասկանում եմ, դու ինձանից թաքցնում ես։ Ասում ես, երեխա է, թող չիմանա։

— Լավ, մի մտածի, պապան շուտով կվերադառնա։

— Չէ, մամա, նա շուտով չի վերադառնա։ Եթե ուզում ես իմանալ, նա կարող է իսկի էլ չվերադառնալ, գիտե՞ս, իսկի էլ... Մագդալինան ցնցվեց սարսափից։ Մանկան խոսքերը նրան Քվացին ինչ-որ նախազգուշակում։

— Սուս, լեզուդ կկտրեմ,— գոչեց նա, ձեռքով փակելով Գարիկի բերանը։

Կարծես դրանով ուզում էր առաջն առնել մի դժբախտության, որի նախազգացումն ինքն էլ ուներ հոգու խորքում։

Բայց մանուկը չդադարեց իրեն։

— Մամա,— շարունակեց նա,— դու կարծում ես ես հիմա՞ր եմ, ոչինչ չգիտե՞մ։ Դենշչիկը[1] ինձ բոլորն ասել է։

— Ի՞նչ է ասել քեզ այդ հիմարը։

— Իսկի էլ հիմար չէ Գերմոգենը։ Նա ինձանից խելոք է։ Նա ասում էր, որ պապան գնում է գերմանացիների հետ կռվելու։ Կայսրն է հրամայել։ Ասել է՝ կոտորեցեք այդ երշիկ ուտողներին, շատ են երես առել։ Օ՜, իմ պապան քաջ է, ոչ ոքից չի վախենա։ Նա այդ գերմանացիների գլուխները կկտրե իր թրով։ Դու մի անհանգստանա, կտեսնես։

— Այո, իհարկե, պապան քաջ է, ես նրա մասին չեմ վախենում,— քաջալերեց Մագդալինան փոքրիկին։

* * *

Հյուսիսային նահանգական մի քաղաքից ստացվեց հետևյալ հեռագիրը.

«Հասա ողջ-առողջ։ Գնում ենք ավելի հեռու։ Համբուրում եմ։ Գրիր իմ թողած հասցեով։ Աբգար»։

Այս հեռագրին հաջորդեց առաջին նամակը, որին հետևեց երկրորդը, ապա երրորդը, և այնուհետև Աբգարը լռեց...

[1] Սպային ծառայող զինվոր։

* * *

Այդ պահից ահա սկսվեցին Մագդալինայի իսկական տանջանքները։ Մեկը մյուսից չար կասկածներ և ենթադրություններ պաշարեցին նրան որպես թունավոր սողուններ։ Մեկը մյուսից զարհուրելի տեսիլներ պատկերացան նրա առջև որպես գերեզմանային ուրվականներ։

Հանուն զավակների հանգստության նա հեռական ճիգեր էր գործ դնում իր հոգու տառապանքները թաքցնելու համար։ Մերթ այդ հաջողվում էր նրան, բայց հաճախ՝ ոչ։ Եվ քիչ անգամ չէր արտասվել նա, նույնիսկ երեխաների ներկայությամբ։

Ամեն օր պոստ ստացվելու ժամանակին նստում էր լուսամուտի առջև, նայում էր դեպի բակը, սրտի բաբախումով սպասում նամակի։ Գալիս էր պոստաբերը, անցնում էր դեպի հարևանները, և նրա հարցին շարունակ պատասխանում էր սառնարյուն.

— Չկա, տիկին։

Ամեն առավոտ նա աղախնին ուղարկում էր հեռագրեր ու լրագրեր գնելու, կարդում էր ծայրեծայր բոլորը, ինչ որ պատերազմին էր վերաբերում, հուսալով գտնել որևէ տեղեկություն, եթե ոչ Աբգարի, գոնե այն գնդի մասին, որին նա պատկանում էր։ Եվ ոչ մի լուր։ Նա գիտեր, որ պատերազմը մեծ է, անօրինակ, որ միլիոնների բանակներ են դուրս եկել իրարու դեմ, որ մի ինչ-որ գունդ մի բուռ ջուր է վիթխարի հեղեղի մեջ. նա գիտեր, որ մարդիկ սպանվում, վիրավորվում, գերի են վերցվում տասնյակ հազարներով, բայց և այնպես չէր դադարում հուսալ ծովի ավազում գտնել այն միակ հատիկը, որ ամենից փայլունն էր նրա համար, ամենից գնահատելին։

Լրագիրներ կարդալով, հարկավ, այժմ նա գիտեր՝ որտեղից է առաջացել այդ դժոխային ողբերգությունը։ Եվ այն էակը, որի անարատ բերանը մինչև այդ ժամանակ չէր արտասանել մի կոշտ բառ անգամ, այժմ կծու դարձվածքներով անիծում էր նրան, որին անիծում էին անխտիր ամենքը—Վիլհելմ Հոհենցոլլերնին։ Մի անծանոթ մարդու, որի

մասին նա մինչև պատերազմ ոչ մի գաղափար չուներ, վասնզի երբեք չէր հետաքրքրվել քաղաքականությամբ։ Անիծում էր ոչ միայն նրան, այլև նրա զավակներին, կնոջը, ցեղը, ազգը, երկիրը և այն օդը, որ նա շնչում է։

Նրա ատելությունը դեպի Գերմանիան և գերմանացիներն այնտեղ հասավ, որ սկսեց թշնամաբար նայել և այն գաղթական գերմանուհուն, որ ինը տարի անընդհատ ամեն օր կաթ էր բերում նրա համար։ Եվ այսպես, չարությունը ճանապարհ գտավ դեպի մի սիրտ, որ երբեք ոչ ոքի դեմ ոխ և ատելություն չէր ունեցել։ Նա գիշեր-ցերեկ աղերսում էր աստծուն լինել անողոք վրիժառու դեպի մի ազգ, որին չէր ճանաչել ոչ լավ և ոչ վատ կողմից։

***

Այդպես անցկացրեց Մագդալինան պատերազմի առաջին ամիսը։ Այնուհետև փոքր առ փոքր մեղմացավ նրա հոգեկան փոթորիկը, և սովորական առողջ բանականությունը, որից զուրկ չէր, տակավ առ տակավ տիրացավ իր սրբազան իրավունքներին։ Վրեժի, ատելության և անզոր չարության քաոսի մեջ նա կարողացավ գտնել արդարամիտ դատողության թելը և բռնեց նրա ծայրից տկար ձեռքերով։ Ոչ այնքան գիտակցաբար, որքան բնազդաբար։

Նա մտածեց, որ անմտություն և խղճի դեմ դավադրություն է մեկ մարդու կամ մի քանիսի հանցանքը տարածել մի ամբողջ ազգի վրա։ Չէ՞ որ մարդկային անհուն բազմության ճակատագիրն ամենուրեք գտնվում է մի բուռ անհատների ձեռքերում։ Չէ՞ որ երբ իշխաններն ու զորավարները հրամայում են, ծառաներն ու թույլերը ստիպված են կատարել նրանց հրամանը, որքան ևս անմիտ, որքան ևս անհեթեթ լինի այդ հրամանը։

Ամեն օր նա դողդոջուն ձեռքերով բաց անելով տեղական լրագիրը՝ նախ և առաջ աչքի էր անցկացնում սպանվածների և վիրավորվածների անվերջ ցուցակները։ Երբ հասնում էր Մ. տառին, մի պահ կանգ էր առնում. նրա ձեռքերը թուլանում էին ու լրագիրը բաց թողնում ծնկների վրա։ Նրա տա-

ռապող սիրտը սկսում էր այնպես ուժգին բաբախել, որ կարծես, ձգտում էր դուրս սպրդել կրծքի տակից, ինչպես նոր ձերբակալված թռչունը վանդակից։

***

Մի առավոտ աղախինը, որ երխաներին տարել էր իրենց տատի մոտ և նոր վերադարձել էր խոհանոց, հանկարծ լսեց մի բաձր ու սուր ճիչ։

Նա իսկույն վազեց սեղանատուն, որտեղից լսվեց ճիչը։

Այնտեղ, լուսամուտի առջև առավոտյան արեգակի մեղմ ճառագայթների տակ, օրվա լրագիրը ձեռքում՝ ձգված էր Մագդալինան անշնչացած։ Ջարիքը գուշակելով՝ շփոթված աղախինը վազեց պատշգամբ և բարձրաձայն օգնություն կանչեց։ Ապա, վերադառնալով, շոքեց տիրուհու մոտ։

Եկան մի քանի հարևան կանայք, և աղախինը նրանց օգնությամբ ուշքի բերեց Մագդալինային ու նստեցրեց թախտի վրա։ Նա գունատ էր ինչպես ճերմակ կտավ։ Նրա կապտած շրթունքները կպել էին ատամներին և դողդողում էին։

— Ի՞նչ պատահեց,— գոչեցին հարևան կանայք, արդեն լրագրից գուշակելով, թե ինչ կարող է պատահած լինել։

— Նրան սպանել են,— հազիվ կարողացավ արտասանել Մագդալինան և նորից ուշաթափվեց։

Երբ նորից ուշքի բերեցին նրան, սկսեց դառնագին հեկեկալ, արտասանելով.

— Ես նախազգում էի, գիտեի, որ նա սպանվելու է։

Ոչ ոք չխանգարեց նրա հեկեկանքը, զգալով, որ նման դեպքերում մխիթարական խոսքերն անզոր են։ Աղախինը վազեց դժբախտ լուրը Մագդալինայի ծնողներին հայտնելու, պատվեր ստանալով երեխաներին ոչինչ չասել և չբերել տուն։

Եկան ծնողները։ Մայրն իր հեկեկանքը խառնեց դստեր հեկեկանքին։ Իսկ հայրն ասաց, թե լրագիրների ցուցակին հավատալ չի կարելի, թե հարկավոր է շտաբում տեղեկանալ։ Եվ ինքը շտապեց տեղեկանալու։

Կես ժամ անցած նա բերեց դժբախտ լուրի հաստատությունը։ Այո, շտաբում ստացված ցուցակի մեջ կա մի պորու-

չիկ Աբգար Մաքայան անունով։ Սպանված է նա անկասկած Լեմբերգի մոտ տեղի ունեցած ճակատամարտերից մեկում...»

Մագդալինան պահանջեց, որ հեռագրվի այն զորաբանակի հրամանատարին, որին պատկանում էր Աբգարի գունդը։ Երեք օր անցած ստացվեց հետևյալ հեռագիրը։

«Տեղեկացեք կովկասյան շտաբում»։

Այլևս կասկած չմնաց։

Մագդալինան պահանջեց, որ Աբգարի դիակը գտնվի և կովկաս բերվի։ Պահանջը համարվեց անիրագործելի։ Ասացին, որ պորուչիկը սպանված է երկու շաբաթ առաջ, որ անտարակույս նրան թաղել են հենց սպանման օրը, որ զուր կլինի ամեն ջանք նրա դիակը գտնելու և այլն, և այլն...

Մագդալինան համոզվեց, որ, արդարև իր պահանջն անիրագործելի է։ Նա բավականացավ սովորական հոգեհանգստով, հետևելով ուրիշների օրինակին։

***

Այլևս նա դադարեց հետաքրքրվել պատերազմով։ Այլևս հեռագրերն ու լրագրերը կորցրին նրա աչքում իրենց նշանակությունը։ Միակ կենդանի կապը, որ կար նրա և սոսկալի արհավիրքի միջև, կտրվեց։ Չկա այդ կապը, չկա և արհավիրքը։ Իսկ համայնական վիշտ կրելու համար նրա սիրտը տեղ չունի իր մեջ, այնքան խոշոր է անձնականը։

Եվ խորասուզվելով ինքն իր մեջ, նա չգիտեր՝ ինչ է կատարվում դրսի աշխարհում, չէր էլ ուզում իմանալ։ Միակ բանը, որ նրան զբաղեցնում էր, բացի վշտից, երեխաների վիճակն էր։ Հարկավոր էր նրանց ապահովության մասին հոգալ։ Երբ նրա հայրը գնաց ուր հարկն է տեղեկանալու, թե ինչ կարգադրություն կա սպանված օֆիցերների որբացյալ ընտանիքների վերաբերմամբ, պատասխան ստացավ, թե տակավին ոչ մի կարգադրություն չկա և թե բարձրագույն իշխանությունը անշուշտ որևէ հրաման կարձակե շուտով...

Մագդալինան չբողոքեց։ Նա արեց այն, ինչ որ կարող էր անել. կրճատեց իր ծախքերը մինչև մինիմում։

Ով որ նրան ասաց, թե պատերազմում սպանվածների

մերձավորները որոշել են սգազգեստ չհագնել հասարակության տրամադրության վրա չներգործելու համար։ Նա վրդովվեց, ասելով, թե ոչ ոքի վզին չի ուզում փաթաթել իր վիշտը, և թող ոչ ոք էլ չխանգարի նրան իր վիշտը կրելու այնպես, ինչպես ինքն է կամենում։ Եվ իր խոսքին հավատարիմ մնալով նա դադարեց տնից դուրս գալ՝ ծանոթներին չհանդիպելու համար։ Նա դադարեց այցելել նույնիսկ իր ծնողներին և քույրերին, որոնց կարեկցությունը նրան ավելի գրգռում էր, քան սփոփում։ Նա չէր ուզում անգամ ոչ ոքի ընդունել և չէր թաքցնում իր դժգոհությունը, երբ մերձավորներն այցելում էին նրան։

Նա մեծացնել տվեց Աբգարի ամենահաջող լուսանկարը, որ նկարված էր դեռ ամուսնությունից առաջ, դրեց սև շրջանակի մեջ և կախեց պատի վրա, Աբգարի գրասեղանի վերև։ Եվ դա եղավ նրա ամենասիրելի ընկերն ու խոսակիցը։ Երեխաներից թաքուն նա նստում էր այդ լուսանկարի առջև երբեմն ժամերով, նայում էր, նայում, հառաչում, արտասվում մեղմիկ, դարձյալ նայում։ Մերթ ընդ մերթ նկարն այնքան կենդանանում էր, որ, կարծես, շունչ էր առնում և ձգտում էր դուրս գալ շրջանակից։ Այդպիսի րոպեներին Մագդալինայի հոգու խորքից բարձրանում էր կասկածի, թե հուսո նման մի բան և պաշարում նրան։ Թվում էր նրան, որ ինքը և ամենքը մոլորության մեջ են, որ կատարում են հանցանքի հավասար մի սխալ, կարծելով, թե Աբգարը մեռած է, որ խելառություն էր այդպես շուտ, առանց ստուգելու հավատալ նրա սպանմանը։ Բայց անցնում էին րոպեները և ցնորքը չքանում էր՝ տեղի տալով կատարված իրողությանը...

***

Մի անգամ— պատահեց այս հոգեհանգստից մի ամիս ու կես անցած— Մագդալինան ննջարանում կրտսեր երեխայի համար շապիկ էր կարում, երբ Գարիկը սովորական աղմուկով հանկարծ ներս վազեց՝ գոչելով.

— Մամա, այնտեղ մի մարդ ուզում է քեզ տեսնել։

— Ո՞վ է։

— Չհարցրի։

Մագդալինան կարը դրեց մի կողմ, հանդարտ վեր կացավ և դուրս եկավ սենյակից։

Պատշգամբի վրա կանգնած էր մի անծանոթ՝ «կարմիր խաչի» հողագույն համազգեստով. աջ թևի վրա խաչի նշանը։

— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց Մագդալինան։

— Տիկին, դոկտոր Վարազդանովը ձեզ խնդրում է շնորհ բերել իր մոտ։

— Ո՞վ է դոկտոր Վարազդանովը։

— Հիվանդանոցի կառավարիչը։

— Ի՞նչ գործ ունի նա ինձ հետ։

— Չգիտեմ,— պատասխանեց անծանոթը, երեսը մի կողմ դարձնելով և նկատելու աստիճան շփոթվելով։

— Ասացեք դոկտորին, որ ես ժամանակ չունեմ տնից դուրս գալու, մանավանդ որ ծանոթ չեմ նրա հետ։

— Բայց, տիկին, գործը շատ կարևոր է։

Մագդալինան նայեց նրա երեսին խոր հայացքով, զգալով ինչ-որ տարօրինակ կասկած։

— Ինչպես երևում է, դուք գիտեք՝ ինչու համար է ինձ կանչում դոկտորը,— ասաց դրական եղանակով։— Ինչո՞ւ եք թաքցնում, ասացեք։

— Տիկին, գուցե գիտեմ, բայց ինձ իրավունք չէ տրված ասելու։ Եկեք և ինքներդ տեսեք։ Ես արդեն կարք եմ բերել ձեզ համար։ Կես ժամում նա մեզ կհասցնի հիվանդանոց։

— Շատ լավ,— արտասանեց Մագդալինան և շտապով հագնվեց ու դուրս եկավ անծանոթի հետ։

Ճանապարհին նա այլևս ոչ մի հարց չտվեց, վախենալով լսել մի վատ բան...

***

Կես ժամ անց քաղաքի ծայրում կարքը կանգ առավ մի մեծ շինության առջև, որ բաղկացած էր մի քանի մասերից։

Կարմիր խաչ կրողը նրան ընդարձակ բակով առաջնորդեց դեպի մեկը այդ մասերից և հրամայեց ներս մտնել։

Ընդունարանում, ուր նստած էին մի քանի կանայք տրխուր դեմքերով, ձեռներում ունենալով զանազան կապոցներ, նրան դիմավորեց մի բարձրահասակ մարդ շատ նիհար դեմքով և ալեխառն մորուքով։

— Ներեցեք, տիկին,— ասաց նա, որ ինքը դոկտոր Վարազդանովն էր,— որ ես ձեզ նեղություն պատճառեցի, բայց այդ իմ կամքով չէր, այլ...

Դոկտորը մի վայրկյան կանգ առավ, տատանվեց, ապա իր չոր-չոր ու երկայն մատներով ուղղելով ակնոցը՝ ավելացրեց.

— Նախքան մյուս սենյակ անցնելը, պատրաստվեցեք լսելու մի շատ ուրախ լուր... Ձեր ամուսինը, որին սպանված էիք համարում, կենդանի է։

— Կենդանի՞ է,— կրկնեց Մագդալինան իր լսողությանը չհավատալով...

— Այո, տիկին, կենդանի է և գտնվում է հարևան սենյակում։

— Բայց, դոկտոր, դուք այդ ուրախ լուրն այնքան էլ ուրախ եղանակով չեք հաղորդում ինձ...

— Մենք, բժիշկներս, պարտավոր ենք նման դեպքերում թաքցնել և՛ մեր ուրախությունը, և՛ մեր տխրությունը,— խույս տվեց ուղիղ պատասխանից դոկտոր Վարազդանովը։

— Ես ուզում եմ նրան տեսնել իսկույն ևթ,— գոչեց Մագդալինան, քայլերն ուղղելով դեպի դռները։

— Մի րոպե,— արգելեց բժիշկը, բռնելով նրա թևը։

Նա գնաց հարևան սենյակը, դռները ծածկելով իր ետևից։ Մի րոպե չանցած, վերադառնալով, ասաց.

— Այժմ կարող եք գնալ։ Միայն խոսք տվեք, տիկին, որ ինչ էլ որ տեսնեք, պիտի զսպեք ձեզ և աշխատեք չսաստկացնել ձեր ամուսնու հուզմունքը։ Տալի՞ս եք ազնիվ խոսք։

— Տալիս եմ,— ասաց Մագդալինան դրական եղանակով, իրավ որ զսպելով իրեն։

Դոկտորը դռները բաց անելով, ասաց.

— Մտեք։

* * *

Սենյակը, ուր մտավ Մագդալինան, բավական ընդարձակ էր և խիստ լուսավոր։ Երկու լուսամուտներից մեկի առջև, ձյունի նման ճերմակ պատի տակ, դրված էր մի մաքուր անկողնակալ։

Ներս մտնելով, Մագդալինան մի վայրկյան նայեց աջ ու ձախ, առաջին պահ ոչինչ չնկատելով լուսո առատության պատճառով։ Գթության քույրը, որ լուռ կանգնած էր լուսամուտի առջև, գլխի նշանով ցույց տվեց նրան անկողնակալը։

Մագդալինան մոտեցավ։ Այնտեղ պառկած էր Աբգարը, ճերմակ վերմակով ծածկված մինչև կոկորդը։ Նա լուռ ժպտում էր այն վայրկյանից, երբ Մագդալինային տեսավ։ Եթե չլիներ այդ բնորոշ ժպիտը, որ երևան հանեց նրա գեղեցիկ ատամների շարքերը, հազիվ թե Մագդալինան առաջին պահ նրան Աբգարի տեղն ընդուներ, այնքան կերպարանափոխվել էր պորուչիկը։ Նրա մորուքը բավական երկարացել էր և տեղ-տեղ ճերմակել։ Նրա մի ժամանակվա լիք-լիք զվարթ դեմքը նիհարել էր, գունատվել և ծածկվել խոր խորշերով։

Հիշելով դոկտոր Վարազդանովին տված խոսքը, Մագդալինան ճիգն արավ և կարողացավ զսպել այն սուր ճիչը, որ պատրաստ էր դուրս ժայթքելու ամիսուկեսվա տառապանքներից հոգնած կրծքից։

Նա միայն արտասանեց.

— Աբգա՜ր։

Եվ, թեքվելով, համբուրվեց նրա հետ։

— Նստիր,— ասաց Աբգարը առաջվա խոպոտ բարիտոնով, որ սակայն մի փոքր վայրենացած թվաց Մագդալինային։

Գթության քույրն աթոռ մոտեցրեց և ինքը շտապեց դուրս գալ սենյակից։ Մագդալինան նստեց։

— Դեհ, պատմիր, այդ ի՞նչ սոսկալի թյուրիմացություն էր,— արտասանեց նա հուզված ձայնով, հազիվ կարողանալով երևալ արի։— Ես քեզ սպանված էի համարում։

— Գիտեմ, դու մինչև անգամ հոգեհանգիստ ես կատարել և սգազգեստ հագել։ Բայց նախ և առաջ ասա՝ երեխաներն առո՞ղջ են։

Իմ սպանման լուրը,— ասաց Աբգարը, մի քանի վայրկյան լռելուց հետո,— այն հաստարակ սխալներից է, որ շատ սովորական են պատերազմի, մանավանդ այդպիսի պատերազմի ժամանակ։

— Իսկ դու, որ գիտեիր, թե ի՞նչ վիշտ կարող է ինձ պատճառել քո մահվան լուրը, ինչո՞ւ չհերքեցիր։

— Ես իմացա այն ժամանակ, երբ հերքելն ուշ էր, որովհետև իմ հերքումից առաջ ես կարող էի այստեղ գալ։

— Բայց ինչո՞ւ վերջին ժամանակները նամակ չէիր գրում։

— Չէի կարող գրել, որովհետև շարունակ կռիվների մեջ էի։

— Դու ծա՞նր ես վիրավորված։

Աբգարը տատանվեց իսկույն պատասխանել։ Հայացքը հեռացնելով Մագդալինայից՝ նա արտասանեց.

— Իմ վերքերն արդեն բուժվել են։

— Բոլորովի՞ն...

— Բոլորովին,— պատասխանեց Աբգարը ծանր հառաչեով, և նրա աչքերը լցվեցին արցունքով։

— Բայց ինչո՞ւ համար ես այստեղ պառկած։ Ինչո՞ւ ուղղակի տուն չես եկել։ Աբգար, դու արտասվում ես, ի՞նչ գաղտնիք ունես, ասա։

— Ոչինչ, ոչինչ,— պատասխանեց Աբգարը, աշխատելով ժպտալ արցունքի միջից։

— Ոչ, ոչ, ասա։ Կա մի բան, որ ինձանից թաքցնում ես։ Ես զգում եմ այդ։ Դու ինձ խաբել չես կարող։ Ասա, ես ուզում եմ իմանալ՝ ինչ էլ որ լինի, հասկանո՞ւմ ես, ինչ էլ որ լինի։

— Խոսք տուր ինձ, որ դու կզսպես քեզ, եթե հայտնեմ։

— Տալիս եմ։

— Խոսք տուր ինձ, որ չես զզվի ինձանից, ինչ որ էլ տեսնես։

— Լռիր, դու վիրավորում ես քեզ և ինձ։

— Բաց արա մի փոքր կուրծքս։

Մագդալինան զգուշությամբ մի փոքր հեռացրեց Աբգարի

կրծքից վերմակի ծայրը։ Հողագույն կիտելի վրա երևաց մի սպիտակ խաչ։

— Այդ ի՞նչ է,— հարցրեց Մագդալինան։

— Ս. Գևորգի շքանշանը։

— Դու շքանշա՞ն ես ստացել,— ասաց Մագդալինան ուրախանալով,— դրա համար ես քեզ միայն համբուրել կարող եմ։

Եվ, թեքվելով, երկու անգամ համբուրեց Աբգարին, որ աղերսական հայացքով նայում էր նրան։

— Պատմիր։

— Մի փոքր էլ ցած քաշիր վերմակը, և կլսես իմ պատմությունը։

Մագդալինան վերմակն ավելի ցած բերեց, նայեց։ Նույն վայրկյանին մի սուր երկարատև ճիչ դուրս թռավ նրա կրծքից։

Նրա գլուխը անզորացած ընկավ Աբգարի կրծքի վրա։

Կիտելի թևերն ուսերից ցած էին ընկած դատարկ, ինչպես լաթի կտորներ...

Երբ ներս վազեց գթության քույրը և Մագդալինային ուշքի բերեց, Աբգարը հեկեկում էր փոքրիկ մանկան պես։

ՍՐՃԱՐԱՆԻ ՀԱՃԱԽՈՐԴԸ

Նա ամեն օր գալիս էր այն սրճարանը, ուր սովորաբար լինում էի ես։

Ներս էր մտնում ահագին անձրևանոցը կռնատակին, արագ քայլերով, որպես անչափ զբաղված մեկը, և, իբր թե հոգնած, նստում էր կլորիկ սեղաններից մեկի քով։ Խորշոմած ճակատը մեծ թաշկինակով սրբելով, նայում էր աջ ու ձախ, հրպարտ, բայց անհանգիստ նայվածքով։

Ծանոթներ շատ ուներ։ Երբ տեսնում էր նրանց, ներվային շարժումով վեր էր ցատկում տեղից ու մոտենում։ Նստում էր նրանց մոտ առանց կանխապես թույլտվություն խնդրելու, երբեմն առանց բարևելու անգամ։ Սակայն, երբ բարևում էր, ոչ ոք չէր պատասխանում նրա բարևին և ոչ ոք աթոռը չէր շարժում՝ սեղանի քով նրա համար տեղ բանալու։ Բայց նա անվրդով՝ միշտ տեղ էր գտնում, թեկուզ շրջանից դուրս։

Թվում էր, որ այդ մարդն իր ծանոթների աչքում այնքան արժեք ունե, որքան մի ավելորդ աթոռ։ Եվ նա բնավ չէր շփոթվում մարդկանց անուշադիր վարմունքից։ Արտաքուստ ինքն էլ արհամարհանքով էր վերաբերում նրանց։

Անուշադիր էին դեպի նա և սրճարանի սպասուհիները։ Երբ ներս էր մտնում, նրանք նայում էին միմյանց երեսին և հեգնորեն ժպտում։ Երբեմն նույնիսկ ծիծաղում էին այն ան-

պատկառ ծիծաղով, որ հատուկ է հասարակական վայրերի ծառայողներին, երբ գիտեն, որ հաճախորդը լավ վարձատրողներից չէ։ Երկար ժամանակ չէին մոտենում մարդու պատվերն ընդունելու կամ մոտենում էին դժկամությամբ, դանդաղ քայլերով, կարծես, մի ծանր, անախորժ պարտք էին կատարում։

Ինձ շատ էր հետաքրքրում այդ մարդը։ Նրա վրա անողոք ժամանակը վաղաժամ սփռել էր ծերության առաջին փոշին։ Իր կարմիր-կապտագույն երեսով, իր ուռած ու մսալի քթով, որ ծածկված էր բշտիկներով, իր հիվանդոտ ու միշտ ջրակալ աչքերով նա նմանվում էր անուղղելի ալբոհոլիկի։ Սակայն ես երբեք նրան հարբած չէի տեսնում։ Նրա տձև ու հնամաշ սյուրտուկը, որի կուրծքն ու արմունկները փայլում էին պողպատի պես, մատնում էին նրա գրպանի գաղտնիքը։ Բայց նա աշխատում էր իր չքավորությունը շղարշել շինծու արտաքին հպարտությամբ։ Դա զգայուն և ինքնասեր չքավորների հավիտենական զենքն է։ Պարզ էր ինձ համար, որ այդ մարդը մի ժամանակ վայելել է կյանքի բարիքները և այժմ անցյալի սնոտի հիշողություններից չի կարողանում ազատվել։

Խոսում էր նա բարձր, խրոխտ ձայնով, միշտ տալով այդ ձայնին մի տեսակ հրամայողական շեշտ։ Ստեպ-ստեպ արտասանում էր տեղական իշխանավորների ու հարուստների անունները կես-մտերմական, կես-արհամարհական եղանակով, ընդգծելով իր բարեկամությունը կամ ծանոթությունը նրանց հետ։

Մերթ ընդ մերթ, իբր թե մի կարևոր բան մտաբերելով, ձեռը կարկում էր ճակատին ու գոչում.

— Ա՛հ, քիչ էր մնում մոռանայի։

Եվ, արագությամբ ոտքի ելնելով, մոտենում էր տելեֆոնին, երբեք կոնտակից բաց չթողնելով անձրևանոցը։

— Կենտրոնակա՞նն է,— լսվում էր նրա հրամայական ձայնը,— տվեք համար 9—11։ Շնորհակալ եմ։ Ո՞վ է ապարատի մոտ։ Ա՜ա, այդ դո՞ւք եք, իշխան։ Խորին հարգանքներս ձերդ պայծառափայլության։ Ուզում էի խոսել կալվածքի մասին։ Եթե գիտեր մի քիչ պակասեցնեք, կարող եմ գործը գլուխ բերել։ Ինչպե՞ս։ Այսօր գալ ձեզ մո՞տ։ Ցավում եմ, որ չեմ

կարող, ժամանակ չունեմ։ Վաղը կգամ։ Երեխան առողջացա՞վ։ Շատ ուրախ եմ։ Խորին հարգանքներիս հավաստին նորին պայծառափայլություն իշխանուհուն։ Ոչ, ոչ, այսօր զբաղված եմ. թեյի գալ չեմ կարող, թող իշխանուհին ներե։ Վաղը ուղիղ տասնումեկ ժամին։ Ցտեսություն։

Եվ այդպես, նա միշտ խոսում էր մերթ իշխանների, մերթ նշանավոր հարուստների կամ պաշտոնյաների հետ, երբեմն մի ժամվա մեջ հինգ-վեց անգամ։ Երբ մոտենում էր տելեֆոնին, սպասուհիները նայում էին իրար ու ժպտում։ Իսկ նա, տելեֆոնի խոսակցությունից կազդուրված, հպարտ քայլերով նորեն մոտենում էր իր սեղանակիցներին, նորեն նստում, որպեսզի, մի քանի րոպե անցած, նորեն մոտենա տելեֆոնին։ Երբեմն նա հանդիմանում էր տելեֆոնի աղջիկներին։ Անիրավները շուտ չեն պատասխանում նրան։

Առհասարակ նրա քայլվածքը, նրա բոլոր ձևերն ու շարժումները, խոսելու եղանակը, ամեն ինչ արտահայտում էին վերին աստիճանի գործնական, զբաղված մարդու անհամբերություն ու ներվայնություն։ Այսպես էր թվում ինձ այն ժամանակ։

Մի անգամ ես սպասուհիներից մեկին հարցրի.

— Ասացեք, խնդրեմ, ո՞վ է այդ եռանդուն մարդը։

— Աստված գիտե, չեմ ճանաչում,— պատասխանեց սպասուհին,— հարցրեք Նադյային, նա ամենքին ճանաչում է։

Նադյան սրճարանի ամենահին սպասուհին էր և իրավ ճանաչում էր բոլոր հաճախորդներին։

— Ախ, դուք չե՞ք ճանաչում Պյոտր Պետրովիչ Փեփինյանցին,— գոչեց նա զարմացած,— այդ զարմինալի է։ Պյոտրը Պետրովիչն ամենքի խնամին է։ Աստված ինքն է ուղարկել մեր գլխին փորձանքի համար։

— Փորձանքի՞։

— Այո, այդ մարդը պատիժ է մեզ համար, կատարյալ պատիժ։

— Բայց ո՞վ է, ի՞նչ գործի մարդ է։

— Միջնորդ է. կամ, ինչպես ինքն է ասում, կոմիսիոներ։ Իբր թե ուրիշների համար տներ է գնում կամ վաճառում, բնակարաններ է վարձում, ով գիտե, հազար ու մի այդպիսի

բաներ։ Ես միայն զարմանում եմ, որ մեր սրճարանի տերը, այդ կոպիտ ռամիկը, մինչև այժմ նրան չի արտաքսել։ Ամեն օր գալիս է, սուրճ խմում, նազուքները խփշտում ու հայդա... Ահա դարձյալ...

Եվ, խոսքը չավարտած, սպասուհին հեռացավ շտապ քայլերով։ Այդ միջոցին Պյոտր Պետրովիչ Փեփինյանցը, որ մենակ էր նստած սեղանի քով, շտապ-շտապ կերել խմել ու հեռանում էր սովորական արագ քայլերով։

— Պյո՛տր Պետրովիչ,— գոչեց Նադյան, վազելով նրա ետևից,— կացեք, Պյոտր Պետրովիչ, վճարեցեք, հետո...

— Լա՛վ, լավ, հետո, ժամանակ չունեմ,— ասաց Պյոտր Պետրովիչն առանց ետ նայելու։

Եվ վազեց փողոց այնպես արագ, որ նրա անձրևանոցի ձողերից մեկը, դիպչելով դռների շրջանակին, կոտրվեց։

— Անիծվի քեզ նման հաճախորդը,— արտասանեց սպասուհին, կատաղելով,— էլի փախավ գող կատվի պես։ Եվ ինչպես չի ամաչում իր սյուրտուկից ու գլխարկից։

Բոլոր սպասուհիները միաձայն ծիծաղեցին։ Բարեբախտաբար, սրճարանում, բացի ինձնից, հաճախորդներ չկային։

Ես հետաքրքրվեցի այդ տեսարանով։

— Տեսա՞ք ինչ արավ անիրավը,— նորեն մոտեցավ ինձ Նադյան,— քանիերորդ անգամն է այս։ Ամեն օր գալիս է, նստում է պատվավոր պարոնների հետ, պահանջում է, լակում, լափում ու ծլկվում։ Ուրիշներն են վճարում նրա համար։ Իսկ երբ ծանոթներ չկան, էլի պահանջում է։ Երկու անգամ էլ ես եմ վճարել նրա համար։ Ոչ, այլևս նրան ոչինչ չեմ մատուցանելու։ Անամո՛թ, սրիկա՛, թյո՛ւ...

— Ինչպե՞ս եք համարձակվում սրիկա անվանել մի այդպիսի պատվավոր պարոնի,— ասացի ես դիտմամբ, որպեսզի ավելի խոսեցնեմ սպասուհուն։

— Պատվավո՞ր,— կրկնեց Նադյան հեգնորեն,—լսեցի՞ք, Մաշա, Ժենյա, պարոնը Պյոտր Պետրովիչին պատվավոր մարդ անվանեց։ Պարոն, մի՞թե պատվավոր մարդը թույլ կտա, որ ինձ նման մի խեղճ սպասուհի իր փոխարեն վճարե սուրճի փողը։

— Իհարկե Պյոտր Պետրովիչը պատվավոր մարդ է,—

պնդեցի ես,— չե՞ք լսում, ինչպես նա ամեն օր մի քանի անգամ տելեֆոնով զրույց է անում քաղաքի իշխանների ու միլիոնատերերի հետ, իսկ երեկ նա խոսեց նահանգապետի հետ։

Սպասուհին բարձրաձայն ծիծաղեց։

— Նահանգապետի հետ, նահանգապետի հետ,— կրկնեց նա՝ ձեռքերը զարկելով ծնկներին։—Պարո՛ն, այս քաղաքում չկան ո՛չ այդպիսի իշխաններ ու մեծամեծներ և ո՛չ էլ այնպիսի նահանգապետներ, որոնք բարեհաճեին Պյոտր Պետրովիչի հետ տելեֆոնով խոսելու։

— Իսկ նա խոսում է. ես ամեն օր լսում եմ։

— Թող խոսե ինքն իր հետ, ի՞նչ կա, դրա համար հո փող չի վճարում։

— Ինչպե՞ս թե ինքն իր հետ։

Այսինքն՝ այնպես, էլի, ինքն իրեն տելեֆոնի հետ։

— Չեմ հասկանում։

— Չհասկանալու ոչինչ չկա։ Դա ռեկլամ է, ուրիշ ոչինչ։

— Ռեկլա՞մ։

— Այո՛, պարոն ինքը Պյոտր Պետրովիչն է հնարել, ցույց տալու համար, թե տեսեք ես ինչ մեծամեծների հետ գործ ունեմ։ Գիտե՞ք, թեև նա կոմիսիոներ է և այնքան իրեն զբաղված մարդ է ցույց տալիս, բայց մեզ հայտնի է, որ նա անգործ է և ոչ ոք նրան գործեր չի հանձնում։ Հապա՞, որովհետև եթե գործ ունենար, փող էլ կունենար ու իր սուրճի համար էլ ինքը կվճարեր։ Այդպես չէ՞։

Ես հասկացա Պյոտր Պետրովիչի պարզ խորամանկությունը։ Խեղճ մարդ, այդ անմեղ կեղծիքով նա աշխատում է սրճարանի հաճախորդների հավատը գրավել։

— Մենք ամենքս գիտենք Պյոտր Պետրովիչի օյինները,— ավելացրեց Նադյան իր խոսքը,— բայց այնքան ընտելացել ենք, որ այլևս ուշադրություն չենք դարձնում։ Ի՞նչ կա, թող ինքն իր հետ խոսե տելեֆոնով, դրանից ոչ ոք վնաս չունի։

Այդ պահին Պյոտր Պետրովիչը նորեն ներս մտավ, այս անգամ չորս պարոնների հետ տաք-տաք խոսակցելով։

Ես կարծեցի, որ Նադյան կպահանջե նրանից սուրճի փողը, պատրաստ էի ինքս վճարել, միայն թե նա ուրիշների առ-

չև չամաչեցներ այդ մարդուն։ Բայց Նադյան չմոտեցավ նրան։

— Անհարմար է,— ասաց նա,— պարոններն անծանոթ են։ Էլի ինչ որ լինի, մեր Պյոտր Պետրովիչն է, ես նրան ուրիշների մոտ չեմ խայտառակի։

Այդ օրից իմ մեջ ծագեց մի տեսակ կարեկցություն դեպի այդ մարդը։ Ես ցավեցի մինչև անգամ, որ գործեր չունեմ նրան հանձնելու։ Պատրաստ էի հավատալ նրան ամենախոշոր հանձնարարություններ, եթե ունենայի։ Երևի նա ինքն էլ զգում էր, որ չունեմ, որովհետև ինձ վրա բնավ ուշադրություն չէր դարձնում, այնինչ՝ ամբողջ սրճարանում նա էր միայն, որ ինձ հետաքրքրում էր։ Առանց անձնապես հետը ծանոթանալու ու հետը խոսելու, զգում էի պարզորեն, որ օր-օրի վրա նրա հոգին ընկճվում է ձախորդ կյանքի լծի տակ և տեսնում էի, որքան նա շատ է ճգնում մարդկանց խաբել իր կեղծ հրապարտությամբ ու մտացածին կապերով, այնքան քիչ է հաջողվում խաբել, որքան հաճախ է մոտենում տելեֆոնին, այնքան ավելի է գրգռում իր ծանոթների ծաղրը։ Իսկ այդ ծաղրը երբեմն հասնում էր բացարձակ ցինիկության։

— Պյոտր Պետրովիչ,— լսեցի ես մի օր,— վաղը ես ձեզ պիտի հանձնարարեմ գնել ինձ համար հազար տակառ լուծողական։

— Պյոտր Պետրովիչ,— լսեցի մի ուրիշ անգամ,— չե՞ք կարող, արդյոք, փոխարքայի պալատն ինձ համար կապալով վերցնել։

— Պյոտր Պետրովիչ,— ծաղրեց մի երրորդը,— գնեցեք ինձ համար հինգ հարյուր ուղտ, Հնդկաստան ապրանք եմ ուղարկելու։

Եվ այդպես, մեկը մյուսից տխմար կատակներ։

Ես զայրանում էի մինչև հոդուս խորքը։ Երբեմն պատրաստ էի բարձրաձայն բողոքել մարդկային այդ դաժանության դեմ։ Նույնիսկ սրճարանի սպասուհիներն ավելի բարի և մարդասեր ու կիրթ էին, քան այդ ռեդինկոդ ու սմոկինգ հագած պարոնները։ Իսկ Նադյայից ես հաճախ լսում էի անկեղծ կարեկցության խոսքեր Պյոտր Պետրովիչի վերաբերմամբ։

— Ա՛խ, պարոն,— ասում էր նա,— ինչո՞ւ այդ մարդիկ չեն հասկանում, որ ամոթ է ծաղրել անբախտներին։

Եվ չափազանց զղջում էր, որ մի օր ինքը Պյոտր Պետրովիչին իմ ներկայությամբ անվանել է անամոթ, սրիկա։

Ամառվա սկզբին ես գնացի ամառանոց։ Այնտեղ ես չմոռացա Պյոտր Պետրովիչին։ Հիշում էի նրա օր-օրի վրա կորացող մեջքը և ճերմակող մազերն ու մորուքը։ Շարունակ իմ ականջներում հնչում էր նրա խրոխտ ձայնը, որ քանի գնում այնքան թուլանում էր։ Արդյոք ամուրի՞ է նա,— մտածում էի ես,— թե՞ ծանրաբեռնված է ընտանիքով, չքավորի այդ դաժան լուծով...

Աշնան սկզբին, քաղաք վերադառնալով, ես նորեն սկսեցի այցելել նույն սրճարանը։

Պյոտր Պետրովիչը չկար։

— Ո՞ւր է նա,— հարցրեցի ես Նադյային։

— Չգիտեմ։

— Միգուցե խեղճը մեռե՞լ է։

— Ոչ, ծանոթները ասում են, թե դեռ ապրում է։

— Բայց ինչո՞ւ չի գալիս սրճարան։

— Ա՛խ, պարոն, չեք կարող երևակայել, թե այժմ ես որքան եմ խղճում Պյոտր Պետրովիչին,— արտասանեց Նադյան ձայնի անկեղծ հնչյունով,— ահա մոտ երկու ամիս է նա ոտք չի դրել մեր սրճարանը։

— Ինչո՞ւ։

Եվ սպասուհին պատմեց եղելությունը։ Երկու ամիս առաջ մի օր սրճարանի տերը, որ «անպիտաններից անպիտանն էր», հանկարծ Պյոտր Պետրովիչի ձեռից խլում է տելեֆոնի փողը, գոռալով. «Բավական է որքան մաշեցիր իմ ապարատը»։ Պյոտր Պետրովիչը, հարկավ, վիրավորվում է և սրճարանի տիրոջն անվանում է անկիրթ։ Տեղի է ունենում խոշոր ընդհարում։ Սրճարանատերը հրամայում է Պյոտր Պետրովիչին դադարել իր սրճարանը հաճախելուց, ասելով. «Բավական է որքան ձրիաբար լափեցիր իմ նաղուքն ու սուրճը»։ Այն ժամանակ Պյոտր Պետրովիչն, ինքն իրեն կորցնելով, գոռում է. «Քոսոտ շուն, դու ո՞վ ես, որ ինձ անպատվում ես։ Ես քեզ նման շատերին եմ կերակրել, կգա ժամանակ էլի կկերա-

կրեմ»։ Այդ խոսքերի վրա սրճարանի տերը բռնում է Պյոտր Պետրովիչի թևը և դուրս է անում նրան հաճախորդների ներկայությամբ։

— Այն օրից խեղճ մարդը, իհարկե, այլևս չի գալիս մեզ մոտ,—շարունակեց սպասուհին։—Երեկայում եմ նրա դրությունը։ Հավատացեք, պարոն, այժմ մենք, սպասուհիներս, ախորում ենք առանց Պյոտր Պետրովիչի։ Սովորել էինք ամեն օր նրան տեսնել ու հետը զրույց անել։ Երբեմն նա մեզ համար հետաքրքրական բաներ էր պատմում իր երիտասարդությունից։ Գիտե՞ք, նա հարուստ մարդու որդի է եղել, բոլոր փողերը վատնել է ու թղթախաղում տանուլ տվել։ Նա այնպես լավ գիտե պատմել իր արած քեֆերի մասին, որ մարդ ուզում է անվերջ լսել ու լսել։

— Ընտանիքավո՞ր է Պյոտր Պետրովիչը,— հարցրի ես։

— Իհարկե։

— Զավակներ ունի՞։

— Երկու աղջիկ, մեկը յոթ, մյուսը ութ տարեկան։ Երևակայեցեք, քանի որ հարուստ է եղել, չի ամուսնացել, հենց որ աղքատացել է, գնացել է վիզը լծի տակ դրել։ Արի ու հասկացիր այդ տեռակ տղամարդկանց։ Ա՛հ, երանի թե Պյոտր Պետրովիչը մի ուրիշ ավելի բարի սրճարանատեր գտներ, մերը շատ վատ մարդ է, շա՛տ։ Միայն տելեֆոն էլ ունենար ձեռքի տակ. ես գիտեմ, Պյոտր Պետրովիչի համար տելեֆոնը նույնն է, ինչ որ ծխախոտը ձեզ համար։ Այո՛, այո, առանց տելեֆոնի Պյոտր Պետրովիչը չի կարող ապրել...

Անցան դարձյալ մի քանի ամիսներ. ես տակավին չէի հանդիպում Պյոտր Պետրովիչին, նույնիսկ փողոցներում։

Արդեն սկսել էի մոռանալ նրան, երբ մի օր անսպասելի հանդիպեցի... Ահա թե ինչպես...

Իմ բնակած տան ստորին հարկը մի գրեթե գետնափոր խոնավ նկուղ էր։ Ժլատ տանտերը նրան վարձով էր տալիս, որպես բնակարան։ Ոչ ոք չէր վարձում նրան, չնայելով էժանությանը։ Վաղուց արդեն դարբասի վրա կպցրած հայտարարությունն անձրևներից ու արևից խունացել էր, այնպես, որ բառերը դժվարությամբ էին կարդացվում։ Ով գալիս նայում էր այդ մութ հավաքները, իսկույն ևեթ հեռանում էր՝ առանց

գինը հարցնելու։ Բանն այնտեղ էր հասել, որ գավթապահը շատերին բակից էր ճանապարհ դնում, ասելով.

— Ձեք հավանիլ, խոզաբուն է։

Մի երեկո, երբ ես նստած էի բնակարանի պատշգամբի վրա, դղրդալով բակը մտավ մի մեծ սայլ՝ տնային կահկարասիով բեռնավորված։

Սայլի առջևից գալիս էր մի հաղթանդամ կին երկու մանկահասակ աղջիկների հետ. երեքն էլ աղքատ էին հագնված։ Սայլի ետևից քայլում էր մի տղամարդ, լայնեզր գլխարկը աչքերին քաշած, վերարկուի օձիքը բարձրացրած այնպես, որ նրա երեսը չէր կարելի տեսնել։ Նա գալիս էր համրաքայլ, գլուխը կրծքին թեքած, կորամեջք։

Սայլը կանգ առավ դատարկ կացարանի առջև։ Կինը բարձրաձայն կանչեց գավթապահին։ Ոչ ոք չեկավ։ Հետո իմացա, որ գավթապահը թաքնվել էր, աղքատ վարձավորներին օգնելուց փախչելով։

— Պետրոս, շուտ եկ, ի՞նչ ես դանդաղում,— դարձավ կինը սայլի հետևից քայլողին։

— Գալիս եմ, գալիս,— կրկնեց մարդը զրգռված ձայնով։

Ես իսկույն ճանաչեցի այդ ձայնը և նրա տիրոջ մեծ անձրևանոցը։ Դա ինքը Պյոտր Պետրովիչ Փեփինյանցն էր իր ընտանիքով։

Նա սկսեց սայլապանի օգնությամբ իրերը սայլից տեղափոխել բնակարան։ Կինն ու աղջիկները օգնում էին նրան։

Ես զգացի, որ Պյոտր Պետրովիչը, ծանոթ դեմք տեսնելով կարող էր շփոթվել, ուստի քաշվեցի պատշգամբի խորքը, որպեսզի չերևամ։ Արդարև ցավալի էր ինձ համար տեսնել նրա հպարտ ուսերը ծանր սնդուկների ու պահարանների տակ։ Բայց և այնպես ինձ հետաքրքրում էր Պյոտր Պետրովիչի ներկա վիճակը։ Ես ուզում էի լսել ինչ է կատարվում ներքևում։

Տնքալով, տրտնջալով, չգիտեմ ում և ինչու համար հայհոյելով, նա իրերը տեղափոխում էր նոր կացարանը։ Պարզ էր, որ նա անիծում էր իր վիճակը, ինչպես կարող է անիծել մեկը, որին բանտ են ուղարկում իրերը վրեն բարձած։

Կարգադրում էր նրա կինը, բարձր ձայնով հրամաններ արձակելով և գոռալով ամենի վրա որպես բանտապետ։ Այս

ձայնն ինձ թվաց շատ անախորժ, շատ չար։ Ես կրկնակի խղճացի Պյոտր Պետրովիչին։

Վերջապես սայլը դատարկվեց, սայլապանը հեռացավ գոռալով ու հայհոյելով։ Նա իր ստացած վարձով գոհ չէր, ուստի սրտի մաղձը մտրակի զորեղ հարվածներով թափում էր ձիերի վրա։ Վարձ տվողը Պյոտր Պետրովիչը չէր, այլ նրա ամուսինը։

Բնակարանի դռներն ու լուսամուտները բաց էին։ Ոչ միայն ես, այլև բոլոր հարևանները կարող էին լսել ինչ է կատարվում Պյոտր Պետրովիչի ընտանիքում, մանավանդ որ նրա հաղթանդամ կողակիցը չէր քաշվում իր կոկորդին ուժ տալուց։

Ես լսեցի.

— Դու ասում ես ինչպես պիտի ապրես այս հոտած փոսո՞ւմ։ Հա՛, իհարկե, քո տխմար հպարտությունը ո՞նց կարող է դիմանալ։ Բայց ոչինչ, կսովորես։ Վաղուց էր հարկավոր մի այսպիսի անկյուն ընտրել քեզ համար, որ մի քիչ քիթդ քաշանա։

— Չէ, Նատաշ, դու շատ անհամբեր կին ես։ Չէի՞ր կարող մի քիչ էլ սպասել, մինչև որ գործերս դրստվեն։

— Գործե՛րս, գործե՛րս։ Հարցնող լինի, այդ ի՞նչ գործեր են։ Տասը տարի է քեզ հետ ամուսնացել եմ, շարունակ դատարկ հույսերով ես կերակրում ինձ։ «Սպասիր՝ այսինչի կալվածքը ծախեմ, սպասիր՝ այսինչի հանքը ծախեմ, կոմիսիոն կստանամ, կհարստանանք»։ Բայց մինչև այսօր ոչ մի հատիկ գործ էլ չկարողացար գլուխ բերել։ Օրը մինչև երեկո կամ վազվզում ես փողոցներում, կամ նստում ես սրճարաններում, սրա-նրա հետ տաք-տաք վիճաբանում, իսկ տուն վերադառնում ես դատարկ ձեռքերով։ Դու ի՞նչ կոմիսիոներ ես, դու ի՞նչ գործ կատարող ես։ Ոչինչ, ոչի՛նչ։ Դու միայն գիտես մեծ-մեծ մարդկանց անուններ արտասանել ու մեծ-մեծ խոսել քո անցյալի մասին։

— Բայց հասկացիր, կի՛ն, միլիոններ արժեցող կալվածք կամ հանք ծախելը մի զույգ գուլպա ծախել չէ։ Ժամանակ է հարկավոր, համբերություն։

— Համբերությո՞ւն, համբերությո՞ւն, ասա՛, խնդրեմ,

մինչև ե՞րբ։ Աղջիկներդ ոտարոտիկ են շրջում, ես վերջին շապիկս եմ մաշում, դու ինքդ հնավաճառի խանութ ես դարձել, իսկ ապլում ես իշխանների ու միլիոնատերերի անուններով։ Հիմա էլ ասում ես, թե ինչ-որ անգլիացիների, թե բելգիացիների համար պետք է նավթահանքեր գտնես։ Ո՛չ, էլ ես քեզ չեմ հավատում, դու գործ կատարող չես։ Եթե դու խելք ունենայիր, հորդ հարստությունը քամուն չէիր տալ կամ գոնե քամուն տալուց հետո հիմարաբար չէիր ամուսնանալ։

— Ի՞նչ անեմ, սիրահարվեցի քեզ վրա, ամուսնացա։

— Լռի՛ր, աստված սիրես, դու ի՞նչ ես, որ սիրահարվես կամ սիրես։

— Ուրեմն դո՞ւ սիրահարվեցիր ինձ վրա,— փորձեց Պյոտրը Պետրովիչը վիճաբանությունը կատակի վերածել։

— Հապա, ինչպե՞ս չէ, խելքս կորցրի քեզ համար,— հեգնեց հաղթանդամ կինը,— լա՛վ, կարճ կապիր. քաղաքում մարդ չի մնացել, որից ձեռապարտ չինես վերցրած։ Մսավաճառներին պարտական, հացթուխներին պարտական, բնակարանատերերին պարտական։ Բավակա՛ն է, դու խայտառակեցիր քեզ էլ, ինձ էլ։

— Ուրեմն ի՞նչ ես ուզում ինձնից, այն ասա։

— Ես պահանջում եմ, որ թողնես գոռոզությունդ ու գնաս մեկին ծառայես ինչպես հասարակ գործակատար։

— Ի՞նչ,— կատաղեց Պյոտր Պետրովիչը,— Փեփինյանցը գործակատա՞ր։ Քարերը կբողոքեն դրա դեմ։ Իսկ ի՞նչ կասեն իմ անցյալը ճանաչողները, գիտե՞ս...

— Ինչ ուզում են, թող ասեն, միայն թե ընտանիքդ մի կտոր հաց ուտենա։

— Ո՛չ, ես ծառայել չեմ կարող, այն էլ գործակատար։

— Դե լավ, մի՛ ծառայիր։ Ալն ժամանակ ես ինքս կանեմ իմ ուզածը։

— Ի՞նչ կանես։

— Այ, վաղն ևեթ մեր նոր հարևաններին կասեմ, որ ես լվացարարուհի եմ ու կսկսեմ ուրիշների կեղտոտ շորերը լվանալ։

— Դու այդ չե՛ս անիլ։

— Կանե՛մ։

— Դու չես խայտառակիլ Պյոտր Պետրովիչ Փեփինյանցին։

— Կխայտառակեմ, այ, այս խեղճ երեխաներին պահելու համար։

Վիճաբանությունը քանի գնում, այնքան սաստկանում էր և քանի գնում, այնքան Պյոտր Պետրովիչի ձայնը մեղմանում էր։ Ընդհակառակը, քանի գնում, այնքան զորեղանում էր նրա կողակցի ձայնը։ Չգիտեմ ինչ պատահեց, հանկարծ մանկահասակ աղջիկները սկսեցին ալաղակել ու հետո հեկեկալ։

Լսվեցին հատուկտոր հայհոյանքներ. կնոջ կողմից՝ «աղքատ ու հպարտ, սուտ արիստոկրատ, ծույլ ձրիակեր, խաբեբա». Պյոտր Պետրովիչի կողմից՝ «անամոթ, անպատկառ, շան ծնունդ» և այլն, և այլն։ Լսվեցին կահ ու կարասու ուժգին դղրդոց և ինչ-որ խուլ թնդյուն։

Այուհետև տիրեց լռություն։

Փոքր անցած՝ ես դուրս եկա փողոց իմ իրիկնային սովորական զբոսանքը կատարելու։

Հարբասի առջև, գավթապահի նստարանի վրա նստած էր մի մութ պատկեր։ Նա հանդարտ լալիս էր։

Պյոտր Պետրովիչն էր։

Ինձ տեսնելով, նա իսկույն ոտքի ելավ, ձեռքերը դրեց մեջքին, բարձրից հպարտ նայեց ինձ վրա ու սկսեց ինչ-որ օպերետից շվացնել ինչ-որ ուրախ մի եղանակ...

ԱԼԻՆԱ

I

Այս անգամ իմ կովկասյան վաղեմի բարեկամ բժիշկ Տիգրան Ախուրյանը սովորականից ավելի էր տրամադրված զրույց անելու։

Սրճարանը, ուր մենք նստած էինք, լի էր հաճախորդներով, բայց մենք ունեինք մի անկյուն, որ հեռու էր աղմուկներից ու իրարանցումից։ Բացի այդ, երկուսս էլ վաղուց արդեն ընտելացել էինք Փարիզի փոթորկալի կյանքին և այլևս անուշադիր էինք դեպի այն բոլոր ունայնությունները, որ այնքան շփոթեցնում ու ներվայնացնում են յուրաքանչյուր նորեկի, մանավանդ, երբ այդ նորեկը եվրոպացի չէ։ Գիտեինք առանձնապես լատինական արվարձանի ներկված ու շպարված հյուրիների շինծու ժպիտների, հանդուգն քրքիջների և թափանցիկ ակնարկների իսկական արժեքը։ Եվ սիրում էինք նրանց։

— Աղեքսանդր,— ասաց բժիշկը, գարեջրի դատարկ բաժակը հրելով մի կողմ,— ես այսօր տրամադիր եմ գլուխս մի փոքր տաքացնելու։ Կընկերանա՞ս ինձ։

— Հաճույքով,— պատասխանեցի ես, որ նույնպես զգում էի պահանջ մշուշապատ տրամադրություն մի քիչ զվարթացնելու։

Նա հրամայեց անցնող սպասավորին բերել մեզ համար աբսենտ։

— Ասա, խնդրեմ, դու ինչպե՞ս ես ըմբռնում սեր ասված բանը,— հարցրեց նա հանկարծ, իր հուժկու բազուկները դնելով մարմարյա սեղանի վրա և իր խոշոր ու խելացի աչքերի խուզարկու հայացքն ուղղելով ուղիղ իմ աչքերի բիբերին։

Ասում եմ հանկարծ, որովհետև հարցն ինձ համար միանգամայն անսպասելի էր։ Մի մարդու կողմից, որ մեր քսանամյա ծանոթության և այնքան հաճախ հանդիպումների ընթացքում երբեք չէր խոսել սիրո մասին։ Չնայելով, որ նրա կյանքը լի էր արկածներով։ Երբ ընկերական շրջաններում խոսք էր բացվում կանանց վերաբերմամբ, բժիշկ Ախուրյանը լռում էր։ Նա թողնում էր, որ շաղակրատեն ուրիշները, որ նրանից շատ բան կարող էին լսել ու շատ բաներ սովորել։ Երևի, որպես կյանքի փորձառություն ունեցող մեկը, գիտեր, որ սովորաբար այն մարդիկ են շատ խոսում կանանց մասին, որոնք քիչ են արժանացել կամ բնավ չեն արժանացել նրանց ուշադրությանը։

Չեմ հիշում ինչ պատասխանեցի բժշկի հարցին, հիշում եմ միայն, որ նա ներողամտաբար ժպտաց։

— Լսիր,— ասաց նա, մի քանի վայրկյան մտածելուց հետո,— այսօր ես ուզում եմ պատմել քեզ իմ կյանքից մի դեպք, որի նմանը չեմ կարծում, թե պատահած լինի ինձնից մի քիչ ավելի խելոք որևէ մեկի կյանքում։ Կկամենա՞ս լսել։

— Մեծ հաճույքով,— շտապեցի արտասանել ես ամենայն անկեղծությամբ, վասնզի գիտեի, որ, բժիշկ Ախուրյանի պատմվածքը չի կարող լինել անհետաքրքրական, քանի որ նա յուր դիմացինին չձանձրացնելու շատ խելոք է։

Նա համեմեց աբսենտը շաքարով, խառնեց ջրի հետ, խմեց մի քանի ումպ և այսպես սկսեց իր պատմվածքը.

— Անցքը պատահել է վաղուց, այն ժամանակ, երբ ես հազիվ տասնուինը տարեկան էի։ Ես նոր էի ավարտել գիմնազիական դասընթացս և պատրաստվում էի ուղևորվել մայրաքաղաք համալսարան մտնելու։ Գավառացի պատանի էի, մարմնապես առողջ ու կայտառ, ինչպես երկու տարեկան մի

հորթ, ու բարոյապես տակավին անապական, ինչպես գառնուկ։ Չնայելով, որ Թիֆլիսն ու իմ վաղաժամ փչացած դասընկերները բավական զորավոր էին ինձ ևս փչացնելու համար։ Կի՞նն։ Օհ՞, բնավ չէի մտածել նրա մասին։ Սե՞ր կամ սիրահարությո՞ւն։ Դաղափար անգամ չունեի այդ երգերի մասին։

Նախքան Կովկասից հեռանալը ես պարտավոր էի գնալ Գողթան գավառ՝ ծնողներիս հրաժեշտ տալու համար։ Բայց ճակատագրի մի գաղտնի հրամանով ճամփորդությունս հետաձգեցի մինչև օգոստոսի վերջը, երևի, որպեսզի պատահեր իմ կյանքում այն, ինչ որ պատահեց։ Նույն ճակատագրի թելադրությամբ էր, որ որոշեցի կացարանս փոխել։ Փետրեցի և առաջին իսկ օրը գտա մի բավական ընդարձակ, մաքուր և լուսավոր սենյակ, քաղաքի ոչ այնքան հետ ընկած փողոցներից մեկում։ Տանտիրուհիս մի բարեմիտ այրի էր, աղգով ռուս։ Նրա ամուսինը պետական ինչ-որ հիմնարկության մեջ աննշան պաշտոնյա էր եղել և նոր էր մեռել, թողնելով երկու որբեր։

Տեղափոխվելուս հետևյալ օրը մի բան գրավեց ուշադրությունս։ Դա ոչ այնքան մեծ, երկու կամ, ճիշտն ասած, երեք հարկանի մի տուն էր, որի թե՛ վարի ու թե՛ վերի դռներն ու լուսամուտները գոց էին։ Մռայլ ու տխուր էր այդ տան տպավորությունը։ Չնայելով, որ ո՛չ խարխուլ էր և ո՛չ նույնիսկ այնքան հին, որքան աջ ու ձախի տները։ Նրա փակ լուսամուտների փեղկերն ու ապակիները ծածկված էին փոշու թանձր շերտերով։

Այս հանգամանքը ցույց էր տալիս, որ տունը ամայի է և վաղուց։ Վերին հարկի դռներին փակցված էր մի կտոր թուղթ։ Ըստ երևույթին դա հայտագիր էր, թե տունը վարձով էր տրվում։ Ասում եմ ըստ երևույթին, որովհետև անձրևներից և արեգակից նրա գրությունը ջնջվել էր ու անհետացել։ Այդ դռները փողոցի մակերեսից բաժանված էին միայն հինգ, թե վեց աստիճան ունեցող մի քարե սանդղքով։ Օրը մեկ կամ երկու անցորդ բարձրանում էր այդ սանդղքով և փորձում կարդալ հայտագիրը։ Եվ ամենքը հեռանում էին մի տեսակ տարակուսանքով։ Երևի զարմանում էին, որ տան-

տերը նեղություն չի կրում ջնջված հայտագիրը վերանորոգելու։ Միևնույն ժամանակ ես նկատում էի, որ հարևան տան ներքին հարկում արհեստանոց ունեցող կոշկակարը անխուսափելիորեն մոտենում է յուրաքանչյուրին, որ փորձել է կարդալ հայտագիրը, և խորհրդավոր դեմքով ինչ-որ շշնջում նրա ականջին։ Նկատում էի, որ մարդը, կոշկակարին լսելուց հետո, մի տեսակ երկյուղած հայացք էր ձգում տան վրա ու հեռանում, գլուխը երերելով։

Այդ կոշկակարը մի նիհար, փոքրահասակ մարդ էր, ալեխառը, ցանցառ մորուսով և ծխախոտի ծխից դեղնած բեղերով։ Չգիտեմ նա ծո՞ւյլ էր, թե՞ գործ քիչ ուներ, օրվա մեծ մասը նստած էր իր արհեստանոցի առջև և նայում էր անցորդներին կամավոր լրտեսի զննող հայացքով։ Թվում էր, որ ուրիշների կյանքը նրան ավելի է հետաքրքրում, քան իր երեք մանկահասակ զավակների վիճակը։ Չկային ամբողջ փողոցում ավելի աղքատ հագնված և ավելի անմաքուր երեխաներ, քան այդ մանուկները։ Օրը մինչև երեկո նրանք գոռգոռում էին, լալիս, ծիծաղում և անցորդների հետևից քարեր ձգում։

— Պոլինա Նիկոլաևնա,— դարձա ես մի օր տանտիրուհուս,— այդ դիմացի տունն ո՞ւմ է պատկանում։

Այրիի դեմքը մռայլվեց, և նա, հառաչելով, արտասանեց.

— Չեմ ճանաչում, չեմ էլ տեսել։ Ասում են շատ հարուստ մի իշխան է։

— Ինչո՞ւ ամայի է այդ տունը։

— Որովհետև ոչ ոք չի կարող նրան վարձել։

— Պատճա՞ռը։

— Պատճառը, որ նա անիծված է։

— Անիծվա՞ծ,— գոչեցի ես հետաքրքրությամբ։

— Այո, վեց տարի է նա դատարկ է, և ոչ մի մարդ չի համարձակվում այնտեղ ոտք դնել։

Եվ տանտիրուհիս պատմեց հետևյալը.

Ութ տարի առաջ այդ տանը բնակվելիս է եղել իր ընտանիքով մի վաճառական։ Ձմեռը նրա չորս զավակներից երկուսը հիվանդացել են բկացավով ու մեռել։ Վաճառակա-

նը, իր կնոջն ու մյուս զավակներին, տխուր հիշողությունից ազատելու համար, տեղափոխվել է ուրիշ տուն։ Եկել է մի ուրիշ ընտանիք։ Այս անգամ մի հրեա ժամագործ իր կնոջ ու երկու փոքրիկների հետ։ Նույն ձմեռվա վերջին այդ փոքրիկներն էլ հիվանդացել են ու մեռել։ Ճիշտ այդ միջոցին մեռել է նույն տան վարի հարկում կենող մրգավաճառի միակ զավակը,— ինը տարեկան մի սիրուն տղա։ Թե՛ հրեան և թե՛ մրգավաճառը թողել են այդ անբախտ տունը և տեղափոխվել ուրիշ տեղ։ Վերջապես, հետևյալ աշնանը տան վերին հարկը վարձել է մի վրացի քահանա։

— Այդ այն ժամանակ էր,— շարունակեց տանտիրուհիս,— երբ մենք էլ նոր տեղափոխվել էինք այս բնակարանը։ Ամուսինս դեռ կենդանի էր։ Վրացի քահանան ծեր մարդ չէր, բայց այնքան նիհար էր ու այնքան վտիտ, որ կարծես, եթե փչես, վար կընկնի։ Նա ուներ երեք փոքրիկներ, մեկը մյուսից հազիվ մի տարով մեծ։ Արի տես, որ խեղճ երեխաներն էլ հիվանդացան հաջորդ ձմեռը ու նրանը էլ մեռան՝ մեկը մյուսի ետևից, մի շաբաթվա մեջ։ Ա՜հ, պարոն, երբեք չեմ մոռանալ այդ օրը։ Մենք կարծում էինք, որ քահանան ու իր կինն էլ կխելագարվեն, այնքան դառն էր նրանց վիշտը։ Բայց չխելագարվեցին ու չմեռան էլ։ Օհ՜, չեմ մոռանալ մանավանդ այն օրը, երբ նրանք տեղափոխվում էին այդ տնից։ Ես ահա, այն լուսամուտի մոտ կանգնած, մտիկ էի անում։ Բոլոր հարևանները փողոց էին թափվել։ Երբ տան կահ-կարասին բարձեցին սայլի վրա, վերջացրին, դուրս եկավ քահանան իր կնոջ հետ։ Վշտից էր, թե կատաղությունից երկուսի էլ աչքերը վառվել էին կրակի պես։ Քահանան դողդոջուն ոտքերով իջավ սանդուղքից, կանգնեց փողոցի մեջտեղում, երեսը դարձրեց այդ տանը, աջ ձեռը բարձրացրեց վեր ու բարձր ձայնով արտասանեց.

«Անիծվիս դու, ով չար ոգիների բույն, անիծվի քո տերը, անիծվի քո շինողը։ Անիծում եմ քեզ, թող երբեք, երբեք մարդկային ձայն չլսվի քո պատերի մեջ։ Թող քո տերն էլ թշվառանա, ինչպես ես թշվառացա»։

— Ասում են,— շարունակեց տանտիրուհիս, հառաչելով,— նույն ձմեռն իսկ իշխանի կինը և հինգ զավակներից

երկուսը մեռան։ Ահա, պարոն, այդ ժամանակից դես ամայի է այդ տունը և ոչ ոք, ոչ ոք չի ուզում նրան վարձել։ Եվ ով ուզում է վարձել, չգիտենալով, որ տունն անիծված է, ահա այն կոշկակարը նախազգուշացնում է նրան, պատմելով ամեն բան։ Այժմ նա հավատացնում է ամենքին, որ իբր թե գիշերներն ինչ-որ ձայներ է լսում այդ տնից, և իբր թե այնտեղ ինչ-որ չար ոգիներ են ապաստանել... Ո՞վ գիտե...

Երբ տանտիրուհիս հեռացավ, ես զգացի մի տարօրինակ թախիծ։ Այդպես, ուրեմն, այդ թշվառ տան վրա ծանրացած է անեծք։ Եվ ինչո՞ւ։ Գուցե միայն այն պարզ պատճառով, որ վաճառականի զավակները բկացավով մեռնելուց հետո, տգիտաբար մոռացել են տունը ախտահարության ենթարկելու։ Նույնն են արել և հրեա ժամագործի զավակները մեռնելուց հետո։ Ես կարեկցեցի թշվառ տանը՝ որպես մի շնչավոր էակի և այդ օրից իմ սիրտը լեցվում էր դառնությամբ ամեն անգամ, երբ հայացքս ընկնում էր նրա վրա։ Նրա փակ լուսամուտները թվում էին ինձ դագաղի մեջ հանգչող մեռելի կոպեր, այնքան ծանր էր տպավորությունս։

— Բայց մի օր բացվեցին այդ փակ աչքերը, և ահա ինչպես,— շարունակեց բժիշկ Ախուրյանը, խմելով արսենտի վերջին կաթիլները։— Իրիկնադեմ էր։ Ես նստած էի լուսամուտիս առջև և կարդում էի նոր լույս տեսած մի ռուսերեն վեպ։ Գլուխս բարձրացնելով՝ քարե սանդղքի վրա տեսա մի բարձրահասակ մարդ։ Նա աշխատում էր դեղնած թղթի կտորը կարդալ։ Իհարկե, ոչինչ չկարողացավ որոշել և սանդղքից իջավ։ Ես տեսա նրա դեմքը, և հետաքրքրությունս շարժվեց։ Դա տարօրինակորեն դժգույն և տարօրինակորեն անշարժ ու սառը մի կերպարանք էր։ Նրա ուղղագիծ, երկայնաձև քիթը, խնամքով կրճատած շիկավուն և կարծես քիչ ճերմակած ընչացքը, մաքուր սափրած կզակը, նրա քայլվածքը, ձևերը և, վերջապես, անբստգյուտ եվրոպական տարազի հագուստը ոչ մի նմանություն չունեին տեղական տիպերի հետ։ Երևում էր, որ օտարերկրացի է և նորեկ։

Նա նայեց սառը հայացքով աջ ու ձախ, ըստ երևույթին, փնտրելով մեկին, որից տեղեկություններ կարողանար ստանալ այդ տան մասին։ Ճիշտ այդ պահին մոտեցավ նրան ան-

խուսափելի կոշկակարը և հաղորդեց այն, ինչ որ հաղորդում էր ամենքին։ Տունը վարձով է տրվում, բայց անիծված է։

Ես կարծում էի, հարկավ, որ բարձրահասակ անծանոթը անմիջապես կհեռանա անիծյալ տնից մյուսների պես։ Պատահեց հակառակը։ Թվաց ինձ, որ նա հետաքրքրվեց կոշկակարի խոսքերով և պահանջեց մանրամասնություններ։ Հետո նա, վճռական մի շարժում անելով, ինչ-որ պատվիրեց կոշկակարին, որը դժգոհ դեմքով հեռացավ։ Մի քանի վայրկյան անցած բարձրահասակ մարդուն մոտեցավ մեր փողոցի գավթապահներից մեկը, որին հանձնված էր անիծյալ տան հսկողությունը։ Բարձրահասակ մարդը ձեռով մի դրական շարժում արավ։ Գավթապահը առաջնորդեց նրան դեպի քարե սանդուղքը, բաց արավ իր գրպանից դուրս բերած մի բանալիով անիծյալ տան վերին հարկի դռները, և երկուքն էլ մտան այնտեղ։ Մի քանի րոպե անց՝ նրանք դուրս եկան, և ես տեսա, որ բարձրահասակ մարդը տվեց գավթապահին մի բուռ թղթադրամ և ինչ-որ պատվերներ ու հեռացավ հանդարտ քայլերով։

Պարզ էր, որ նա վարձեց բնակարանը։ Արդարև, հետևյալ օրը վաղ առավոտյան վերի լուսամուտները բացվեցին։ Ես նկատեցի, որ գավթապահը մի ուրիշ մարդու հետ սենյակները մաքրում են։ Նույն օրը իրիկնադեմին անիծյալ տան առջև կանգնեցին երկու ծանր բեռնավորված սայլեր։ Կահկարասի էին և խոհանոցի իրեր։ Բոլորն էլ նոր գնված։ Սայլերը դատարկվեցին, իրերը ներս տարվեցին, իրիկնադեմին դռների առջև կանգ առավ մի փակ կառք։ Նրա միջից դուրս եկավ նախ բարձահասակ տղամարդը, հետո պարզ հագնված մի կին, ապա նրանց օգնությամբ երևսը թանձր քողով ծածկված մի ուրիշ կին, որ արագ քայլերով, գրեթե վազելով բարձրացավ քարե սանդուղքով ու մտավ տուն։

Այս բոլորը կատարվում էր այնպիսի լռությամբ ու խորհրդավորությամբ, որ ես հետաքրքրվում էի ավելի ու ավելի։

Հաջորդ առավոտ լուսամուտները մի երկու ժամ ևս բաց մնացին, այնուհետև նորեն փակվեցին ճիշտ այնպես, ինչպես առաջ։ Ես նորեն սկսեցի կարեկցել անիծյալ տանը։

Կարծես դա մի մեռյալ էր, որ մի վայրկյան բաց արավ իր աչքերը, նայեց շուրջը, ծանր հառաչեց և նորեն մտավ իր սավանի մեջ։

II

Բժիշկ Ախուրյանը հառաչեց և սպասավորին հրամայեց մի-մի բաժին ևս արսենտ բերել։ Եվ, մի քանի անգամ ծխախոտի ծուխը ուժգին կլանելով, շարունակեց.

— Երեկոյին տանտիրուհիս մտավ սենյակս ու ասաց.

— Դուք գիտե՞ք, որ անիծյալ տան վերին հարկը վարձել են։

— Գիտեմ։ Ովքե՞ր են վարձողները։

— Չեմ կարող ասել։ Կոշկակարի կինը զարմացած է։ Նա ասում է, որ երբ իր ամուսինը այդ բարձրահասակ մարդուն հայտնել է, թե տունն անիծված է, նա ասել է. «Ինձ էլ իսկ և իսկ մի այդպիսի կացարան է հարկավոր»։ Եվ իսկույն վարձել է, առանց գինը սակարկելու։

— Տարօրինակ է, չէ՞,— հարցրի ես։

— Այո, շատ տարօրինակ է։

— Չե՞ք կարող, արդյոք, իմանալ, թե ով է այդ բարձրահասակ տղամարդը։

— Կոշկակարի կինը, երևի, շուտով կտեղեկանա ու ինձ էլ կասե։ Նա ինքն էլ շատ հետաքրքրված է։

Սպասավորը բերեց արսենտը։ Բժիշկը մի քանի վայրկյան զբաղվեց նրա պատրաստությամբ և, մի փոքր խմելով ասաց.

— Այժմ սկսվում է իմ պատմվածքը։ Բայց թերևս դուարդեն իմ հառաջաբանից ձանձրացել ես։

— Օհ, ոչ, ընդհակառակը, ես պատրաստ եմ լսել քեզ թեկուզ մինչև կեսգիշեր,— գոչեցի ես ամենայն անկեղծությամբ, որովհետև իրավ որ նրա պատմվածքն ինձ հետաքրքրել էր։

— Դյուրին չէ ինձ համար պատմել այդ բոլորը, բայց քանի որ սկսել եմ, պիտի ավարտեմ։ Կաշխատեմ չերկարացնել։ Այդպես, ուրեմն, մեռյալ բնակարանը նորեն մեռավ, մի պահ աչքերը բանալուց հետո։ Ամբողջ մի շաբաթ նայում էի փակ լուսամուտներին, սպասելով, որ ահա-ահա պիտի բացվե մեկն ու մեկը նրանցից։ Ոչ մի շարժում, ոչ մի նշան։ Կարծես այդ բարձրահասակ տղամարդը, այդ սևազգեստ կինը, այդ ծառաները, վերջապես այդ սայլերն ու կահ-կարասին օդերևույթ էին, որ մի վայրկյան հայտնվեցին և չքացան անհետք։ Կարծես քահանայի անեծքը գլորեց նրանց անդունդը։

Վերջապես մի օր, առավոտյան մոտ տասը ժամին, երբ ես հագնվում էի տնից դուրս գալու, դիմացի դռները բացվեցին և փողոց ելավ բարձրահասակ տղամարդը։ Նա նայեց լուսամուտներին և, ըստ երևույթին, գոհ մնաց, որ նրանք փակ են։ Հետո դարձյալ նույն զննող հայացքը ձգեց աջ ու ձախ և համր քայլերով գնաց չգիտեմ ուր։

Առաջին անգամն էր նա մի շաբաթվա ընթացքում տնից դուրս գալիս։ Գոնե ես առաջին անգամն էի նրան տեսնում։

Նույն վայրկյանին, երբ ես ուզում էի սենյակից դուրս գալ, հանկարծ լուսամուտներից մեկի փեղկերը բացվեցին, և այնտեղ հայտնվեց մի երիտասարդ կին սև զգեստով, կրծքի վրա մի խոշոր դեղին վարդ։ Ձեռը հենելով փեղկերից մեկի եղրին, նա ձգեց յուր հայացքը դեպի փողոց և մնաց անշարժ։ Ես ակամա ցնցվեցի, նայելով այդ կնոջը, և մնացի բևեռված իմ տեղում։ Միջահասակ էր նա, նազելի կազմվածքով։ Նրա մութ մազերը թանձր խուրձերով արձակված էին կիսով չափ բաց ուսերի վրա։ Մի բարակ մանիշակագույն ժապավեն հարդարում էր այդ մազերը բարձր ճակատից վեր։ Մի ուրիշ սևագույն ժապավեն գրկել էր նրա կարապյա սպիտակ պարանոցը։ Նրա բաց գույնի խոշոր աչքերը նուրբ ունքերի տակից նայում էին դեպի անորոշ տարածություն։ Նայում էին անշարժ, անթարթ, անկիրք՝ որպես արձան։ Տարօրինակ էր այն աչքերի փայլը։ Թվում էր, որ երբևէ ինչ-որ սարսափելի տեսիլ ահ է ազդել նրանց բիբերի վրա և այդ ահը այն ժամանակից դրոշմվել է այնտեղ առմիշտ, ինչպես լույսը՝ լուսանկարչական ապակու վրա։

Սքանչելի էր լուսամուտի շրջանակում այդ պատկերը

ինձ համար, և այսօր ես կարող եմ նրան համեմատել միայն Մուռիլլոյի ստեղծագործության հետ։ Ես ուրախ էի, որ կինն ինձ չի նկատում և կարող եմ անարգել հիանալ նրանով, ինչպես գեղարվեստական մի անզուգական գործով։ Բայց, ավաղ, տեսարանն երկար չտևեց։ Կինը համր թայլերով հեռացավ լուսամուտից, ինչ-որ կանացի ձեռքեր փակեցին թե՛ ապակյա և թե՛ փայտյա փեղկերը։ Անիծյալ տունը, որ պիտի օրհնվեր այդ վայրկյանից, նորեն կուրացավ։

Տեսարանը կրկնվեց և՛ հետևյալ, և՛ երրորդ, և՛ չորրորդ օրը, գրեթե նույն ժամին և միշտ բարձրահասակ տղամարդը տնից դուրս գալուց հետո։ Եվ ոչ մի անգամ այդ կինը չնայեց իմ կողմը։ Նրա ծովի նման ընդարձակ հայացքը միշտ ուղղված էր դեպի անորոշ տարածություն։ Թվում էր, որ նրա մտքերը հեռու են, շատ հեռու ոչ միայն շրջակայքից, այլև այս աշխարհից։

Այդ պահին արդեն ես զրկվեցի հանգստությունից, քնից, ախորժակից։ Ես կորցրի իմ վաղ երիտասարդական զվարթությունը, մոռացա իմ գրքերը, համալսարանը, ընկերներիս, ծնողներիս անգամ, ամենքին ու ամեն ինչ։

Միակ առարկան իմ խոհերի ու երազների դարձավ այդ խորհրդավոր էակը։ Անկողնից վեր կենալով ես առավոտները վազում էի դեպի լուսամուտ, նստում այնտեղ ժամանակից շատ առաջ և հայացքս ձգում անիծյալ տան լուսամուտներին։ Անիծյալ։ Ոչ, այլևս ինձ համար նա անիծյալ չէր, այլևս ես էի, որ անիծում էի նրա անիծողին։

Մի քանի օր լուսամուտը չբացվեց։ Ես տանջվում էի կատարելապես։ Ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով— չէի մտածում։ Գլուխս չէր գործում։ Զգում էի միայն, որ իմ վարմունքը տղայական է, անմիտ, անհաշիվ, որ ծիծաղելի է այդպես հանկարծակի հափշտակվել մի էակով, որի վայրկենական հայացքին չէի արժանացել տակավին և որի ձայնի մի հընչյունն անգամ չէի լսել։ Ես նմանվում էի այն մոլեռանդ հավատացյալին, որի հոգեկան աչքերի առջև մի վայրկյան բաց էին արել վարագույրի ծայրը, ցույց տվել դրախտը և իսկույն վարագույրն իջեցրել։ Նա տանջվում է և կատաղում,

առանց մտածելու— արժանի՞ էր, արդյոք, այդ դրախտը վայելելու։

Սքանչելի պատկերը դարձել էր ինձ համար մի անխուսափելի ու անխորտակելի ուրվական, որ հալածում էր ինձ ցերեկն արթուն, գիշերը՝ երազումս։ Թվում էր ինձ, որ ես ընկել եմ մի ոսկե օղակի մեջ և զգում էի, որ այդ օղակն օր-օրի և ժամ-ժամի վրա սեղմվում է ավելի ու ավելի և սեղմում կոկորդս ավելի ու ավելի։

Բժիշկը խմեց երկրորդ բաժակի և վերջին կաթիլն ու շարունակեց.

— Մարդու նախազգացումներն երբեմն այնպես ճշտորեն իրականանում են, որ կամա-ակամա ուզում ես հավատալ, թե կա մի գաղտնի ուժ, որ ղեկավարում է մեր ճակատագիրը։ Մի առավոտ լվացվելուց հետո, երբ երեսս սրբում էի, հանկարծ օդի մեջ մի ակնթարթ նկարվեց այդ կինը, ճիշտ այնպես, ինչպես էկրանի վրա մի պատկեր։ Ես զգացի, որ իսկույն ևեթ նա պիտի երևա լուսամուտի մեջ և այս անգամ պիտի նայե ինձ, շտապով հագնվեցի, նստեցի լուսամուտիս քով, առջևս դնելով մի գիրք, ինչպես անում էի միշտ։ Ես չէի տեսել բարձրահասակ տղամարդի դուրս գալը, բայց և այնպես համոզված էի, որ խորհրդավոր էակը պիտի անմիջապես երևա։ Եվ իրավ, նա երևաց դարձյալ նույն հագուստով, դարձյալ դեղին վարդը կրծքի վրա։ Այս անգամ նա վերցրեց մի աթոռ, նստեց, աջ արմունկը դրեց լուսամուտի հատակի վրա, գլուխը հենեց ձեռի վրա և նույն անշարժ հայացքը հառեց հեռու։ Ի՞նչ էր կորցրել նա այնտեղ կամ ի՞նչ էր փնտրում։ Թվում էր շատ բան, թվում էր և ոչինչ, այնքան պարզ էր նրա հայացքը և այնքան, միևնույն ժամանակ, խոր։

Ես այլևս չէի աշխատում որսալ նրա հայացքը, նա ինքը պիտի նայեր ինձ։ Ես այն իքնագոհներից չէի, որոնք այնքան մեծ համարում ունեին իրենց մասին, որ երևակայում են, թե ոչ մի կին չի կարող իրենց մոտով անցնել անտարբեր։ Բայց այնքան էլ տկար չէի, որ ինձ համարեի ոչնչություն։ Ես հավակնություն չունեի արժանանալ այդ կնոջ լուրջ ուշադրությանը։ Արդեն նա այնքան բարձր էր իմ

աչքում, այնքան հեռու ինձնից, որքան մի պայծառ աստղ՝ մի շնչին մոլորակից։ Նայում էի նրան և սքանչանում նրա սքանչելի գեղեցկությամբ։ Եվ օրհնում էի մտքումս բնության հանճարը, որ կարողացել էր ստեղծագործել մի այդպիսի հրաշալիք իմ անիմաստ, խելառ տվայտանքների համար։

Բայց ո՞ւմն է, արդյոք, այդ ստեղծագործությունը, ո՞վ է վայելում այս աստվածային գեղեցկությունը։ Մի՞թե այդ բարձրահասակ տղամարդը ժանտ կերպարանքով։ Եթե այդպես է, եթե նրանք ամուսիններ են, թող անիծվե կյանքը, որ տալիս է այդ տեսակ անարդարություններ...

Երջանիկ և սարսափելի վայրկյան... Նա նայեց ինձ... ժպտաց... բայց ինչ տարօրինակ, ինչ անհասկանալի ու անգուշակելի ժպիտ։ Նա ինձ ուրախացրեց և վախեցրեց։ Դա մի սքանչելի ժպիտ էր, բայց անիմաստ։ Փայլեցին նրա կապտագույն աչքերը, բայց պաղ, ինչպես փիրուզներ։ Ես ցնցվեցի։ Թվաց ինձ, որ՝ այդ կապարյա անշարժ հայացքը թափանցեց ամբողջ էությունս, ինչպես հանկարծակի փչած մի սառն ու սուր հով։ Բայց մի սառնություն էր դա, որ այրեց հոգիս։ Ես այլայլվեցի, չկարողացա իմանալ հարկավո՞ր է ժպիտին ժպիտով պատասխանել, թե՞ ոչ։ Գլուխս թեքեցի կրծքիս ու ձեռքերի, թե կարդում եմ առջևս դրած գիրքը։ Սիրտս ուժգին տրոփում էր, ես զգում էի ինչպես մի վեհերոտ մանուկ, որին բռնել էին գողության միջոցին։ Այլևս ուժ չունեի այն կողմը նայելու։ Իսկ երբ նայեցի, նա արդեն չքացել էր, թեև լուսամուտը դեռ բաց էր...

Իմ պատանեկան անարատ երևակայությունն արդեն բարձրացրել էր այդ խորհրդավոր էակին եթերը, և բոլոր իմ հոգերը, բոլոր զգացումները թռչում էին դեպի նա։ Ես ոչինչ չէի նշմարում շուրջս, ոչինչ չէի զգում, ո՛չ վշտերը մարդկային, ո՛չ ուրախությունները։ Աշխարհը և համայն տիեզերքն ինձ համար ամփոփված էին նրա մեջ։ Նրանով էի միայն ապրում, նրանով շնչում։ Չէի ուզում հանդիպել ոչ ծանոթների և ոչ նույնիսկ ընկերների։ Ես մի ագահ էի, որ հանկարծակի գտել էր մի գաղտնի գանձ և դողում էի նրա մասին։ Նա ինքը չի կարող այդ գանձը վերցնել, բայց չի էլ ուզում, որ մի ուրիշը գիտենա նրա տեղը, վախենալով միգուցե հափշտակեն նրան։

խոսել նրա մասին որևէ մեկի հետ ես համարում էի և՛ հանցանք և՛ տխմարություն։ Հանցանք, որովհետև մարդիկ, մանավանդ իմ մտերիմ ընկերները կարող էին այս կամ այն ակնարկով վիրավորել իմ սրբությունը։ Տխմարություն, որովհետև ես կարող էի դառնալ ծաղրելի հենց միայն այն պարզ պատճառով, որ խելագարի պես սիրահարվել էի մի կնոջ վրա, որի ով և ինչ լինելը տակավին չգիտեի և որի հետ մի բառ անգամ չէի փոխանակել։

Եվ այդպես, ինքս իմ մեջ ամփոփված տառապում էի լուռ, անտրտունջ և անհաշիվ։

— Ի՞նչ է պատահել ձեզ, որ միշտ նստած եք տանը,— հարցնում էր տանտիրուհիս, այդ բարի կինը։

— Զբաղված եմ, դասեր եմ պատրաստում, ասում են համալսարանը շուտով բացվելու է,— ստում էի անամոթաբար ես, որ չէի էլ մտածում ուսման մասին։

Նույն պատասխանն էի տալիս և իմ ընկերներին ու ծանոթներին, երբ պատահում էր, որ սենյակից դուրս էի գալիս որևէ ստիպողական գործով։

III

Իսկ նա ամեն օր երևում էր լուսամուտի առջև սև զգեստով և միշտ մի դեղին վարդ կրծքի վրա։

Մի անգամ ես չկարողացա զսպել ինձ և բարևեցի նրան գլխի թեթև շարժումով, երբ նրա հայացքին հանդիպեցի։ Ոչ մի պատասխան և ոչ մի նշան գոհունակության կամ դժկամության այդ փղոսկրի գույն ունեցող դեմքի վրա, այդ երկնագույն աչքերի մեջ։ Նա միայն նայում էր ինձ իր անշարժ, պաղ հայացքով և, կարծես, չէր տեսնում։

Ես զղջացի հանդգնությանս համար, նախատելով ինքս ինձ, և ամոթահար հեռացա լուսամուտից։ Միևնույն ժամանակ զգացի ինձ չափազանց վիրավորված այնպես, ինչպես կարող էր վիրավորվել իմ հասակի մի պատանի մի կնոջ անուշադրությունից։

Նստած էի գրասեղանիս քով և աշխատում էի զբաղվել

որևէ բանով, գրելով, կարդալով, իմ տխմար զգացումները գեթ մի քանի վայրկյան մոռանալու համար։ Ես չէի կարողանում։ Գրիչս չէր շարժվում գրելու, բառերը կարդալիս խառնվում էին իրարու՝ մրջյունների պես։

Հանկարծ լսեցի դաշնամուրի ձայն։ Նայեցի դեմուդեմ։ Նա չկար լուսամուտի մոտ։ Պարզ էր, որ նվագողը նա է, երեք շաբաթվա ընթացքում առաջին անգամ։ Ի՞նչ էր նվագում— չգիտեմ։ Ամբողջ եղանակը բաղկացած էր երեք անփոփոխ նոտաներից, որ կրկնվում էին մի անգամ բարձր, մյուս անգամ ցածր։ Հիվանդոտ, ներվային, սիրտ մորմոքող նոտաներ, որ այնուհետև կրկնվում էին ամեն օր մի քանի անգամ։ Այսօր էլ հիշում եմ այդ նոտաները և միշտ պիտի հիշեմ, մինչև մահ։ Իմ մեջ հղացավ մի շար կասկած, որ վայրկենաբար տակնուվրա արավ իմ էությունը։ Այդպես չեն նվագում առողջ մարդիկ— լինեն վարպետներ, թե աշակերտներ։ Այդ երեք անփոփոխ նոտաների մեջ կա ինչ-որ անձկություն, անբացատրելի, անըմբռնելի թախիծ հիվանդ հոգու։

Մի օր տանտիրուհիս, եռող սամովարը դնելով սեղանիս վրա, կանգ առավ և, ձեռքերը կրծքի վրա խաչաձև միացնելով, նայեց ինձ մայրական կշտամբանքով։

— Ինչո՞ւ, եք այդպես նայում ինձ, Պոլինա Նիկոլաևնա,— հարցրի ես ժպտալով։— Մի՞թե փոխվել եմ։

— Շատ, դուք անճանաչելի եք դարձել։ Մենակ ես չեմ ասողը, իմ ընկերներն էլ ու հարևաններն էլ նկատել են։

— Բայց ես առողջ եմ, Պոլինա Նիկոլաևնա, բոլորովին առողջ։ Կամենաք, ես մի ձեռով ձեզ կբարձրացնեմ։

Եվ, իրավ, ես պատրաստ էի նրան գրկել ու բարձրացնել, այնքան համակրելի էր, այնքան մայրական այդ կնոջ հայացքը։

— Տա աստված, որ ես սխալվեմ,— ասաց նա հառաչելով,— պահպանեցեք ձեզ ձեր ծնողների համար։

Որպեսզի խոսակցության նյութը փոխեմ, հարցրի.

— Ի՞նչ նորություն կա մեր հարևանության մեջ։

— Նորությունն այն է, որ կոշկակարի կինը գավթապահից իմացել է ովքեր են մեր դեմուդեմի հարևանները։

Ինձ էլ այդ էր հարկավոր։

— Այո՞,— արտասանեցի ես, ձևանալով անտարբեր։

— Այո։

— Ովքե՞ր են։

— Մարդ ու կին, ամուսիններ։

— Մի՞թե,— գոչեցի ես, այլևս չկարողանալով զսպել թե՛ հետաքրքրությունս և թե՛ դառնությունս։

— Այո, և զավակներ չունին։

— Հետո՞։

— Նրանք տեղացիներ չեն։ Եկել են Ղրիմի կողմերից։

— Ինչպե՞ս է նրանց ազգանունը։

— Սպասեք միտս բերեմ. Ազովսկի, այո՛, այո, Ազովսկի...

— Ուրեմն, ռուսնե՞ր են։

— Ոչ, հայեր են։ Գավթապահն ասում է, նրանց անցագրում գրած է «հայ լուսավորչականներ»։

— Ասում եք նո՞ր են եկել Թիֆլիս։

— Մի քանի ամիս է։ Առաջ իջևանել են հյուրանոցում, հետո բնակարան են վարձել։ Կահ-կարասին էլ այստեղ են գնել։

— Էհ, ուրիշ ի՞նչ գիտեք,— հարցրի ես կեղծ հեգնանքով, իբր թե այրիի հաղորդածներն ինձ համար շատ էլ հետաքրքրական չեն։

— Առայժմ ոչինչ։ Բայց դուք ուշադրություն դարձրեք ձեր վրա, այսպես չի կարելի, սիրտս ցավում է ձեր ծնողների համար։

— Շնորհակալ եմ, Պոլինա Նիկոլաևնա, անկեղծ շնորհակալ եմ։ Բայց մի՛ հոգաք իմ մասին. ես երկաթյա առողջություն ունիմ։

Արդարև, տկար էր հոգիս, իսկ մարմնով ես զգում էի ինձ բոլորովին առողջ։

Այրին, գլուխը խորհրդավոր երերելով, հեռացավ։

Պարզ էր ինձ համար, որ նա իբրև ոչ հիմար կին գուշակում էր իմ հոգեկան դրությունը, գիտեր ում համար և ինչու

եմ նստում տանը, և ով է իմ փոփոխության պատճառը։ Պարզ էր նաև, որ դիտմամբ շեշտեց, թե սևազգեստ կինն ամուսնացած է։

Ես չեմ նկարագրիլ, թե այդ լուրն ինչ տպավորություն գործեց ինձ վրա։ Կասեմ միայն, որ դա ինձ համար իսկ որ մի հարված էր։ Մի հարված, որ, սակայն չսթափեցրեց ինձ, այլ ընդհակառակը, ավելի սաստկացերեց իմ ներիքին հուրը։ Այդ վայրկյանից ես ատեցի բարձրահասակ տղամարդին։ Ատեցի իմ պատանեական հոգու ամբողջ թափով։ Ինչո՞ւ, ո՞ր իրավունքով, ո՞վ եմ ես— այս մասին ես չէի մտածում։— Թող այդ մարդը լինի առաքինիների մեջ ամենաառաքինին, արժանավորներից արժանավորագույնը, նա այդ կնոջ ամուսինն էր, ուրեմն և ոխերիմ հակառակորդս, որին պատրաստ էի այդ պահին ոչնչացնել առանց երկար մտածելու։ Անշուշտ այդ մարդը մի ժանտ բռնակալ է, որ գերել է գեղեցիկներից գեղեցկագույնին և պահում է նրան իր իշխանության ներքո գրեթե շղթայակապ։ Անշուշտ ասիական խանդից կուրացած մի եսամոլ է, որ տանջում է նրան հանուն իր եսի։ Այլապես ի՞նչ են նշանակում այդ մշտապես փակ լուսամուտները, որոնցից միայն մեկն է բացվում, այն էլ օրվա մեջ ընդամենը մի քանի ժամ, այն էլ, երբ բռնակալը տանը չէ։ Այլապես ի՞նչ է նշանակում, որ այդ կինն երբեք տնից դուրս չի գալիս և օր-օրի վրա, իմ աչքերի առջև դժգունանում է ու նիհարում և օր-օրի վրա խոշորանում են նրա գեղեցիկ աչքերի բիբերը, և լայնանում նրանց տակերի կապույտները։ Ուրիշ ինչպե՞ս թարգմանել այդ երեք անփոփոխ նոտաները, որ այժմ հնչում են ամեն օր այնքան միապաղաղ, այնքան վշտահար։ Աստված իմ, ես կարող եմ ցնորվել այդ տարօրինակ հնչյուններից։ Նրանք գալիս են մի քայքայված հոգու խորքերից և զարկում են իմ օր-օրի վրա նրբացող ու զգայնացող ներվերին ասեղների պես։ Ախ, գիտե՞ արդյոք այդ կինը, որ եթե ոչինչ էլ չլիներ, միայն այդ խելագար հնչյունները բավական են ինձ տանջելու համար։ Գիտե՞, որ ես երբեմն պատրաստ եմ դուրս բերել գլուխս լուսամուտից և գոռալ.— «բավական է, անողոք էակ, բավական է, ես չեմ կարող լսել այդ խելառ հնչյունները»։

Բժիշկը դարձյալ կանգ առավ, ձեռի ներվային շարժումով տրորեց գլխի թանձր կարճ խուզած ալեխառը մազերը և շրթունքները սեղմեց ատամներով՝ իր հուզմունքը չափավորելու համար։ Այդ պահին նա ամբողջովին ձուլված էր իր անցյալի հետ։ Նա վառեց մի նոր ծխախոտ և շարունակեց.

— Առավոտ էր։ Գրասեղանիս քով նստած նամակ էի գրում ծնողներիս։ Բավական ժամանակ էր մոռացել էի խնդճերին։ Գրում էի, բայց ուշ ու միտքս անիծյալ տան կողմն էր։ Սպասում էի անհամբեր բարձրահասակ մարդու դուրս գալուն։ Քրոնոմետրի ճշտությամբ նա ամեն օր դուրս էր գալիս տնից առավոտյան տասը ժամին և վերադառնում էր երեք ժամին։ Ահա այդ ժամանակամիջոցներին էր, որ լուսամուտը բացվում էր, և այնտեղ երևում էր նրա սևազգեստ կինը։

Այդ օրն էլ տղամարդը դուրս եկավ ճիշտ իր ժամանակին, բայց կինը չերևաց մի ամբողջ ժամ, չերևաց մինչև կեսօր։ Ես սկսեցի անհանգստանալ։ Միգուցե նա հիվա՞նդ է կամ այդ բռնակալը խլել է նրանից այդ շնչին ազատությունն էլ։ Մի՞թե ես այլևս չպիտի տեսնեմ նրան։ Այդ անկարելի է, ես կցնորվեմ։ Եվ, իրավ, եթե մեկն ինձ տեսներ գողտուկ, թե ինչպես հուզված, այլայլված ետ ու առաջ եմ քայլում իմ փոքրիկ սենյակում վանդակ ձգված վագրի պես, անշուշտ, ինձ կհամարեր խելագար։ Կարծես ես արդեն տեսել էի այդ կնոջը և այժմ կատաղում էի, որ նրան խլում են ինձնից։

Վերջապես, սենյակս թվաց ինձ նեղ։ Ես խեղդվում էի օդի պակասությունից։ Վճռեցի դուրս գալ, մանավանդ որ ծնողներիս գրված նամակս պիտի ձգեի պոստարկղ։ Բայց հազիվ դուրս էի եկել փողոց, հանկարծ նվիրական լուսամուտը բացվեց, և տիկինը երևաց այնտեղ մի ծրար ձեռում։ Ես գդակս բնազդաբար վերցրի և բարևեցի նրան, դարձյալ չգիտեմ ինչ իրավունքով։ Այս անգամ նա գլուխը թեթևակի շարժեց և, ով զարմանք, ծրարը մեկնեց դեպի ինձ։ Մինչ ես, անասելի շփոթված, չգիտեի ինչ անել, նա ծրարը ձգեց փողոց և ինքն անհետացավ։

Ես, աջ ու ձախ նայելով, գողովի վազեցի և ծրարը վերցրի։ Բարեբախտաբար, ոչ ոք այդ չնկատեց։ Պարզ էր ինձ

համար, որ ծրարն ինձ է ուղղված։ Բայց նայեցի նրան, անունս չկար վրան։ Շտապով վերադարձա սենյակս, պատռեցի ծրարը։ Սիրտս ուժգին բաբախում էր, ձեռքերս դողում էին ուրախությունից և անհայտությունից։

Ընդամենը մի էջից բաղկացած մի գրություն էր դա՝ ռուսերեն։ Նա ինձ չէր ուղղված, նա ոչ ոքի չէր ուղղված։ Կարդացի, ոչինչ չհասկացա։ Նախ դա մի տարօրինակ ձեռագիր էր, տառերն անհավասար, տողերն անկանոն, մի բառ փոքրիկ, հաղիվ նկատելի տառերով, մյուսը գլխատառերով։

Ապագայում, երբ ես իբրև բժիշկ պարապում էի Մոսկվայի կլինիկայում, այնտեղ, հոգեկան հիվանդների բաժնում շատ եմ տեսել համանման ձեռագիրներ բոլորովին գրագետ և կրթված մարդկանց ձեռքերով գրված։

Երեք տող միայն պարզ էին գրված և, ըստ երևույթին, ունեին իմաստ։ Այսօր էլ հիշում եմ բառ առ բառ այդ տողերը. «Վոլդեմարը սիրեց Ալինային, Ալինան ասաց չի կարելի։ Գազանը տեսավ, կատաղեց, սպանեց, սպանեց, սպանեց»։

Ի՞նչ էին նշանակում այդ տողերը— հարկավ չհասկացա։ Բայց այլևս ինձ համար պարզ էր մի բան. այդ խորհրդավոր կինը հոգեպես հիվանդ է, և ինքս ինձ նախատեցի, որ նոր եմ միայն գուշակում։ Այո, այդ ապակյա հայացքը խոշոր աչքերի, այդ անիմաստ ժպիտները, այդ փակ լուսամուտները, այդ թախծալի միապաղաղ կրկնվող երեք նոտաները, այդ բարձահասակ տղամարդի մոայլությունը— մի՞թե այդքանը բավական չէր։

Ես նամակը թաքցրի գրասեղանիս մեջ և ամեն օր նայում էի նրան։ Այսօր էլ ես նրան պահում եմ, իբրև հիշատակ իմ խելառ տվայտանքների, իմ անքուն գիշերների, անհուն արցունքների։ Ոչ, իբրև մի սրբություն-սրբոց, որովհետև այդպիսի կրակոտ սեր այլևս չպիտի կրկնվեր իմ կյանքում։ Հարկավ, եթե իմ բանականությունը լիներ արթուն, եթե ես ունենայի մտածելու և վերլուծելու ուժ, այդ նամակը կարդալուց հետո իսկույն կսթափվեի իմ ցնորքներից և կաշխատեի հանգցնել կրծքիս տակ օր-օրի վրա ավելի ու ավելի

բորբոքվող հուրը։ Չէ՞ որ ինքնասպանություն է երազել մի կնոջ մասին, որի գոյությունը երազ է։ Մի կնոջ, որ բնության դաժան ձեռքով պոկվել է երկրից և այրվում է ցնորքների բովում։ Բայց, զարմանալի բան, այդ պահից ես այդ կնոջը սիրեցի կրկնակի սիրով։ Գուցե՞ դա մի դեռահաս հոգու կարեկցություն էր դեպի մի թշվառ։ Չգիտեմ։

Հետևյալ օրը տանտիրուհիս եկավ որոշյալ ժամին սենյակս կարգի բերելու։ Ես անքնությունից այնքան թույլ էի, որ խնդրեցի նրան թողնել ինձ այդ օրը հանգիստ։ Նա նայեց ինձ տխուր հայացքով ու ասաց.

— Գիտեմ, որ տկար եք, բայց հետաքրքրական լուր ունեմ ձեզ հայտնելու։

— Ի՞նչ է պատահել։

— Մեր դեմուդեմի կինը ցնորված է։

— Մի՞թե,— արտասանեցի ես, իբր թե անտարբեր։

— Այո՛։ Ուզում եք պատմեմ ինչիցն է ցնորվել։ Կոշկակարի կինն ամեն բան իմացել է Ազովսկիների աղախնից։

— Պատմեցեք,— նույն անտարբերությամբ ասացի ես։

Տանտիրուհիս նստեց գրասեղանիս քով և յուր հագուստի թևերը ցած բերեց, որ ծածկն աշխատանքից կոշտացած և կրակից կարմրած բազուկները։

Եվ պատմեց։

IV

Ութ տարի է, որ Ազովսկիներն ամուսնացած են։ Մարդու անունն է Սրափիոն, կնոջ անունը՝ Ալինա։ Մարդը հարուստ կալվածատեր է, ունե հորից ժառանգած մի քանի հազար դեսյատին վարելահողեր Բեսարաբիայի նահանգում։

Ամուսնանալու ժամանակ նա եղել է դրագունյաց գնդի սպա։ Ալինան հետևակ զորքի մի չքավոր փոխ-գնդապետի աղջիկ է, շատ լավ կրթված։ Սրափիոնը ամուսնացել էր նրա հետ, հափշտակված նրա աննման գեղեցկությունով։ Իսկ Ալինան տվել է իր համաձայնությունը, զիջանելով ծնող-

ներին, որոնք փափագել են անպատճառ հարուստ փեսա ունենալ։ Նրանք ուզեցել են, որ իրենց միակ դուստրը լավ ապրուստ ունենա, անձամբ զգալով, թե ինչ ասել է չքավորություն։ Ալինան չի սիրել Սրափիոնին։ Չի սիրել և ուրիշ ոչ ոքի։

Լավ թե վատ Ազովսկիները չորս տարի ապրել են հաշտ, հանգիստ ու անվրդով։ Ալինան հետզհետե ընտելացել է չսիրած ամուսնու կենակցությանը, ճիշտ այնպես, ինչպես ընտելանում է հարյուրից իննսունինը աշխարհի բոլոր կանանց։ Մարդիկ, որ միշտ ուրիշների կյանքի մասին աչքերով են դատում, կարծել են, թե չկա նրանցից ավելի երջանիկ զույգ։ Եվ շատ կանայք նախանձել են Ալինային, ու շատ տղամարդիկ նախանձել են Սրափիոնին։ Չորս տարվա ընթացքում նրանք ունեցել են առաջին տարին իսկ ծնված մի երեխա։ Նա մեռել է երկուսուկես տարեկան հասակում՝ ուղեղի բորբոքումից։ Ծնողների վիշտն ավելի ամրացրել է ամուսնական կապը, բայց Ալինան դարձյալ չի սիրել ամուսնուն։ Իսկ Սրափիոնը քանի գնացել այնքան ու այնքան ավելի է սիրել Ալինային։ Երեխայի մահն է ազդել, թե ինչ, Ալինան սկսել է ձանձրանալ կյանքից։ Սիրահարված ամուսինն ամեն կերպ աշխատել է փարատել նրա թախիծը, բայց զուր։ Ո՛չ ճանապարհորդությունները Եվրոպայում, ո՛չ թանկարժեք համաշխարհային կուրորտները, ո՛չ թատրոն, ո՛չ երաժշտություն, շքեղ զգեստներ, երեկույթներ, պարահանդեսներ, ոչինչ, ոչինչ չի օգնել։ Ալինան դարձել է օր-օրի վրա ավելի ու ավելի թախծոտ, մռայլ։ Ծնողների հանկարծակի մահը մեկը մյուսից երկու ամիս չանցած՝ կրկնապատկել է նրա վիշտը։

Եվ ահա այդ ժամանակ, այսինքն՝ մի աշնան սկզբին, Պետերբուրգից Ղրիմ է գալիս Սրափիոնի նախկին բարեկամներից մեկի որդին։ Քսանուհինգ տարեկան մի երիտասարդ՝ գանգուր, շիկագույն մազերով, ուրախ ու զվարթ։ Այցելում է Ազովսկիներին, ծանոթանում է Ալինայի հետ. մի քանի անգամ զբոսնում է նրա հետ և ահա նա հափշտակված է։ Հափշտակվո՞ւմ է, արդյոք, Ալինան ևս լրջորեն — մինչև այսօր պարզված չէ։ Բայց նրա թախիծը մեղմանում

է։ Նա հաշտվում է կյանքի հետ։ Նա նորեն մերձենում է աշխարհին։

Սրափիոնը նկատում է այս։ Սկզբում ուրախանում է, տեսնելով կնոջ վերակենդանանալը։ Բայց հետո սկսում է կասկածել ու խանդել և հետևում է Ալինային։ Մի օր նա չի կարողանում իրեն զսպել և իր բարեկամի որդուն ընդունում է ոչ սիրալիր։ Ալինան նրան հանդիմանում է, ասելով, որ իր համար ոչ մի բան այնքան ատելի չէ, որքան կոպտությունը։ Այս հանդիմանությունն ավելի է գրգռում Սրափիոնի կասկածներն ու նա ասում է.

— Այո, ես վաղուց եմ նկատել, որ դու անտարբեր չես դեպի այդ երիտասարդը։

Ալինան ազնվությամբ և համարձակ պատասխանում է.

— Չեմ թաքցնի, Սպիրիդոնովն ինձ դուր է գալիս, բայց ես երբեք չեմ մոռանալ, որ քո ամուսինն եմ։

Սրափիոնը մի պահ հավատում է նրան, մինչև անգամ ներումն է խնդրում Ալինայից։ Բայց միայն մի պահ։ Շուտով շար կասկածները պաշարում են նրան այնպես, որ նա սկսում է կորցնել իր զգացումների ու մտքի հավասարակշռությունը։

Վերջապես, մի օր տուն վերադառնալով, նա տեսնում է, որ Ալինան դաշնամուրի քով նստած նվագում է, իսկ Սպիրիդոնովը երգում է։ Երկուսն էլ այնքան հափշտակված են լինում, որ չեն նկատում նրա սալոն մտնելը։ Նա կատաղում է, բայց կարողանում է զսպել իրեն։ Միայն առանց հյուրին բարևելու, լուռ անցնում է յուր առանձնասենյակը։

Ալինան շարունակում է երգել, կամենալով թե՛ հյուրից թաքցնել ամուսնու խանդոտությունը և թե՛ ամուսնուն ցույց տալ, որ չկա իր արածի մեջ ոչ մի հանցանք, որ դա մի անմեղ զվարճություն է երկու երիտասարդ էակների համար, որ պաշտում են երաժշտությունն ու երգը։

Բայց ամուսինն այլ կերպ է հասկանում Ալինայի վարմունքը։ Նա կարծում է, որ դա մի հանդուգն արհամարհանք է դեպի իր համեմատական ծերությունը։ Արհամարհանք քսանուերեք տարեկան մի կնոջ դեպի քառասունուերկու տարեկան տղամարդը։ Արհամարհանք մի երրորդ անձնավորու-

թյան, այն էլ մի երիտասարդի ներկայությամբ և գուցե նրա պատճառով իսկ։

Նա դուրս է գալիս իր առանձնասենյակից գրգռված ու գունատ։ Նա չի կարողանում յուր խանդը զսպել և հուզված ձայնով ասում է.

— Ալինա, բավական է։

Ալինան ժպտում է, մի փոքր ևս նվագում է և հետո միայն ծածկում է դաշնամուրը հանգիստ, անվրդով։ Իսկ երիտասարդը նույնպես ժպտում է։ Այդ ժպիտը նրա թարմ, գեղեցիկ, գրեթե պատանեկան անմազ երեսի վրա նետի պես ցցվում է Սրափիոնի գրգռված սրտի մեջ։ Բորբոքվում է նրա խանդը։ Նա ասում է անորոշ.

— Ես ուրախ եմ և ցավում եմ, որ դուք իմ բարեկամի որդին եք։

— Ինչո՞ւ համար։

— Հենց այնպես։

— Բայց ես ձեզ հասկանում եմ,— ասում է երիտասարդը,— շատ բարի, ես կկատարեմ ձեր սրտի գաղտնի ցանկությունը։

Եվ, դառնալով Ալինային, ավելացնում է.

— Տիկին, ներեցեք, ես այլևս չեմ կարող անհանգստացնել ձեր հարգելի ամուսնուն, որ իմ հոր բարեկամն է։

Եվ այդ օրից Սպիրիդոնովը դադարում է այցելել Ազովսկիներին։

Այդ բոլորը տեսնում է ու լսում Ազովսկիների աղախինը, որի խոսքերով և պատմում է ինձ տանտիրուհիս։

Սակայն Ալինան չի ընդհատում ծանոթությունը Սպիրիդոնովի հետ. շարունակում է տեսնվել գրսերում։ Սրափիոնը չի բողոքում, խոստովանելով, որ իրոք ինքը կոպիտ վարվեց իր բարեկամի որդու հետ։

Ալինան ասում է.

— Քանի որ գիտեիր քո խանդոտ բնավորությունը՝ չպիտի ամուսնանայիր։

— Ես սիրում եմ քեզ։

— Ես չեմ հավատում այն սիրույն, որ այդպես կասկածոտ է։

— Լավ, հաշտվենք։

— Հաշտվիր առաջ բարեկամիդ որդու հետ, ներողություն խնդրիր, հետո։

— Այդ ես չեմ կարող անել։

— Իսկ ես չեմ կարող քո անտեղի կասկածների համար զրկել ինձ ազատությունից։

Մի օր Սրափիոնը հանդիպում է Ալինային քաղաքի մի զբոսավայրում Սպիրիդոնովի հետ, մի ծառի ստվերի տակ նստած։ Նա չի կարողանում զսպել իր խանդը և կարճատև բացատրության ժամանակ վիրավորում է երիտասարդին։ Սպիրիդոնովը նրան հրավիրում է մենամարտության, մյուս օրն ելթ ուղարկելով Սրափիոնին երկու սպա։ Բայց մենամարտությունից առաջ նա ուղարկում է մի նամակ Ալինային՝ մի փունջ վարդերի հետ։ Նա գրում է.

— Տիկին, ասում են, որ դեղին վարդը ատելության նշան է։ Բայց ես միշտ գերադասել եմ այս գույնը բոլոր գույներից։ Այսօր որոշվում է իմ ճակատագիրը։ Գուցե ես գնամ հավիտենականություն անդառնալի։ Թող այս վարդերը լինեն իմ մաքուր սիրո վերջին նշանը։ Մնացեք բարով...

Նամակը փնջի հետ բերում է մի շքեղ հագնված աղախին և գաղտնի հանձնում է Ալինային։

Իրիկնադեմին Սրափիոնը տուն է վերադառնում անսովոր հուզված։

Ալինան նրա դեմքից արդեն գուշակում է կատարված դրաման։ Նա ոչինչ չի ասում, նայում է լուռ իր ամուսնու երեսին և անցնում իր բուդուարը։ Ամբողջ գիշեր նա չի դուրս գալիս այնտեղից։ Աղախինը մի քանի անգամ մտնում է նրա մոտ զանազան պատրվակներով և ամեն անգամ տեսնում է Ալինային անշարժ նստած ու աչքերը հառած դեղին վարդերի փնջին։

Այդ պահին Ալինան ընդհատում է իր բոլոր կապերն աշխարհի հետ։ Օրը մթնչև երեկո իր սենյակում փակված՝ նա ոչ մի տեղ չի գնում և ոչ ոքի չի ուզում ընդունել։ Ո՛չ ամոթից, այլ վշտից։

Աղախինն ասում է, որ նա մի ամիս շարունակ կրկնում էր.

— Դու սպանեցիր մի անմեղի, դու չունեիր իրավունք ձեռք բարձրացնելու այդ խեղճ տղայի վրա։ Ի՞նչ պատասխան պիտի տաս աստծուն։

— Իմ խիղճը հանգիստ է. մի պատվասեր ամուսին չէր կարող ուրիշ կերպ վարվել,— պատասխանում է ամեն անգամ Սրափիոնը։

— Ոչ, ոչ, քո խիղճը չի կարող հանգիստ լինել, որովհետև ես անմեղ եմ։ Այդ երիտասարդի արյունը գիշեր-ցերեկ աչքերիս առջև է։ Ես նրա մահվան ակամա պատճառն եմ, աստված ինձ է պատժելու։

Եվ զրկվում է Ալինան քնից, հանգստությունից, ախորժակից։ Եվ ատելով ամուսնուն, սկսում է ատել ամենքին։ Եվ դատապարտելով ամուսնուն, դատապարտում է ինքն իրեն էլ։ Գիշերները աղախինը լսում է նրա երկարատև հիսթերիկան, նրա սուր գոռոցները.

— Հեռո՜ւ ինձնից. մի մոտենար, ես քո ձեռքերի վրա անմեղ արյուն եմ տեսնում։

Եվ ոչինչ չի աղդում նրա վրա, ո՛չ բժիշկների խնամքը, ո՛չ ամուսնու աղերսանքները, ո՛չ խանդավառ սերը, ո՛չ զղջումը։ Այո, նա զղջում է գուցե անկեղծ, գուցե հավատալով Ալինայի մաքրությանը, բայց զուր։ Օր-օրի վրա Ալինայի հոգին քայքայվում է...

Փոքրիկ նահանգական քաղաքում, եղելությունն իրարու պատմում են աղավաղած։ Չհաստատված լուրերը հաղորդվում են իբրև փաստեր։ Զրպարտությունը, որ գեղեցիկ կանանց անխուսափելի ուղեկիցն է, հալածում էր Ալինային դեռ մենամարտությունից շատ առաջ։ Այժմ չար լեզուների բոլոր կապանքները լուծվում են, իսկ նա անտարբեր էր դեպի հասարակական կարծիքը։ Նա ամփոփվել է ինքն իր մեջ, նա հեռու է, շատ հեռու դրսի աշխարհից։ Նրա լսելիքին չի հասնում ոչ մի ձայն այնտեղից։ Դեղին վարդերի փունջը վաղուց է թառամել, բայց նա մի գեղեցիկ վազայի մեջ շարունակում է զարդարել Ալինայի դաշնամուրը։ Օրը հարյուր անգամ նա մոտենում է այդ փնջին և յուր քնքուշ մատներով շոշափում է թորշոմած վարդերը, որոնց տերևները մեկիկ-մեկիկ պոկվելով ընկնում են վար և անհետանում։ Վերջը, մի

ժամանակվա սքանչելի ծաղիկներից մնում են նրանց չորացած ձողիկները։ Այն ժամանակ Ալինան հրամայում է իր հավատարիմ աղախնուն, որ սիրում էր նրան լավագույն քրոջ սիրով, ամեն օր, ամեն օր գնել մի-մի դեղին վարդ։ Եվ ահա այդ խորհրդավոր վարդն է, որ այսօր էլ զարդարում է Ալինայի կուրծքը։

Սրափիոնը վճռում է վերցնել Ալինային և հեռանալ անծանոթ երկրներ։ Տունը հանձնում է խոհարարի հսկողությանը, իսկ աղախինը Ալինայի ցանկությամբ ուղեկցում է նրան։ Նրանք գնում են նախ Մոսկվա, ապա Եվրոպա։ Սակայն ոչ մի փոփոխություն Ալինայի հոգեկան կացության մեջ, ոչ մի ժպիտ նրա դեմքի վրա։ Բժիշկները միաձայն ասում են.

— Պարոն, ձեր ամուսնուն անդորրություն է հարկավոր։ Նրա ականջներին չպիտի հասնե ոչ մի աղմուկ։

Մի քանի նշանավոր պրոֆեսորներ խորհուրդ են տալիս Ալինային տեղավորել հոգեկան հիվանդների սանատորիայում։

— Երբեք, երբեք,— ասում է Սրափիոնը, զարմանալի համառությամբ չկամենալով բաժանվել իր սիրեցյալից։

Նրանք վերադառնում են արտասահմանից, և Սրափիոնն ամեն ջանք գործ է դնում տալ Ալինային անպայման հանգստություն։ Եվ դրա համար նա վճռում է տեղափոխվել Թիֆլիս, ուր Ազովսկիները չունեն ոչ մի ծանոթություն։ Նա դեռ հույս ունե, որ Ալինան կառողջանա տանը...

Այս բոլորը պատմեց ինձ տանտիրուհիս այնպես զգացված, որ կարծես ինքը Ալինայի մերձավորներից մեկն էր։ Ես զգացի, որ իմ մեջ զարգանում է այնպիսի ատելություն դեպի այդ բարձրահասակ տղամարդը, որի նմանը կարելի է զգալ միայն դեպի որդեսպանը։ Այլևս նա իմ աչքում մի հրեշ էր, որին կործանելը ես կհամարեի բարություն և արդարություն։ Ինձ համար Ալինան մի մարմնացած տանջանք էր, իսկ այդ մարդը՝ միակ նրա հեղինակը։

Ես սիրեցի Ալինային կրկնակի սիրով։ Ես զգացի, որ այլևս իմ հոգին հավիտյան շաղկապված է այդ հիվանդ հոգու հետ, որ այլևս ոչ մի գերբնական զորություն չի կարող

ինձ բաժանել նրանից՝ առանց իմ սրտից մի արյունաշաղախ կտոր պոկելու։ Զգացի նույնպես, որ իմ դրությունը ողբերգական լինելով հանդերձ, երեխայական է ու ծիծաղելի։ Ողբերգական ինձ համար, ծիծաղելի ուրիշների համար։ Սիրում էի մեկին, որ իրապես գոյություն չուներ այս աշխարհում, որ մի ուրվական էր, մի ծանր երազ։ Տանջվում էի մեկի համար, որ ոչ ոքի տանջանքը հասկանալ ու զգալ չէր կարող, որովհետև նա ինքն էր մարմնացած տանջանք։

Բժիշկ Ախուրյանը մի անգամ ևս լռեց։

Մեր շուրջն այժմ տիրում էր համեմատական հանդարտություն։ Սրճարանը գրեթե դատարկվել էր։ Հաճախորդներն անցել էին սեղանատուն։ Պարիզը ճաշում էր. միակ ժամը օրվա ընթացքում, երբ խլացուցիչ աղմուկը մեղմանում է քիչ թե շատ։

Բժիշկը նայեց ժամացույցին ու ասաց.

— Օհ, արդեն ուշ է։ Կարծես ես շատ երկարացրի։

— Լսում եմ ձեզ ավելի մեծ հետաքրքրությամբ,— ասացի ես առանց կեղծելու։

— Արդեն մոտենում եմ վերջին,— արտասանեց բժիշկը և վառեց մի նոր ծխախոտ։

V

— Այսպես, ուրեմն,— շարունակեց նա,— ես սիրում էի անսահման մի ցնորվածի և ինքս մերձ էի խելագարության։ Աստված իմ, գեթ մի անգամ տեսնեի նրան մոտիկից, գեթ մի անգամ լսեի նրա ձայնը։ Գուցե հիասթափվեի ու արթնանայի մղձավանջից։ Կամ ո՞վ գիտե, գուցե կարողանայի նրա քայքայված հոգու մեջ գտնել մի առողջ թել, շոշափեի նրան իմ սիրո ջերմությամբ։ Ո՞վ գիտե, գուցե դեռ կա միջոց նրան փրկելու։ Ինչո՞ւ այդ բռնակալը չի թողնում ոչ ոքի մոտենալ նրան։ Մի՞թե չի հասկանում եսամոլը, որ իր տեսքն ավելի բարդացնում է Ալինայի վիշտը, ուրեմն և ավելի զորեղացնում նրա հիվանդությունը։ Մի՞թե չի ըմբռնում, որ վիրավորի վերքն ավելի է կսկծում, երբ նրա աչքերի

առջև է դաշույնը։ Չի՞ պատահել, որ տարիներով ցնորվածի բանականությունը վերադարձել է հանկարծակի, անսպասելի մի որևէ երջանիկ պատահարից, հոգեկան մի ցնցումից։ Այո, այո, շատ է պատահել, ես կարդացել եմ բժշկական գրքերում, լսել եմ պսիխիատրներից։

Այս էր միակ առանցքը, որի շուրջը պտտում էին բոլոր իմ խոհերը, բոլոր իմ զգացումները, ոչ միայն արթուն ժամանակ, այլև գիշերային երազներիս մեջ։

Բայց, ավաղ, ճակատագիրն ինձ չէր վիճակել տեսնել նրան մոտիկից, խոսել նրա հետ...

Լսեցե՛ք։ Մի օր բարձրահասակ մարդը տնից դուրս եկավ, բայց լուսամուտը չբացվեց։ Նա չբացվեց և հետևյալ օրը։ Իսկ երրորդ օրն արդեն վաղ առավոտից բացվեցին բոլոր լուսամուտները։

Առաջին անգամ ամբողջ չորս ամսվա ընթացքում, ես նկատեցի անիծյալ բնակարանում ինչ-որ անսովոր իրարանցում։

Աղախինը շտապ-շտապ անցնում էր սենյակից սենյակ։ Մերթ ընդ մերթ այս կամ այն լուսամուտի առջև երևում էր բարձրահասակ տղամարդը իր մշտական մռայլ ու անշարժ դեմքով։ Իսկ Ալինան չէր երևում։

Դռների առջև կանգ առավ մի կառք։

Մի անծանոթ մարդ իջավ կառքից շտապով և մտավ Ազովսկիների բնակարանը։

Իսկ Ալինան չկար։ Ես սկսեցի անհանգստանալ, այնքան արդեն սովորել էի ամեն օր տեսնել նրան և ամեն օր հիանալ նրանով ու ամեն օր օրհնել կյանքը։

Որովհետև տանտիրուհիս արդեն գիտեր ամեն բան և իմ կողմից այլևս տմարդություն ու հիմարություն կլիներ կեղծել այդ բարի ու ազնիվ կնոջ առջև, ուստի, երբ նա մտավ իմ սենյակը, իմ առաջին խոսքը եղավ.

— Պոլինա Նիկոլաևնա, ի՞նչ է պատահել Ազովսկիների բնակարանում։

— Ալինան հիվանդ է,— պատասխանեց այրին հակիրճ։

— Հիվա՞նդ,— գոչեցի ես գրեթե սարսափելով։

— Այո, արդեն երեք օր է։ Աղախինն ասաց։ Չտեսա՞ք, որ բժիշկ եկավ։ Այսօր կոնսուլիում է նշանակված։

Ահա թե ինչ։ Ալինան հիվանդ է։ Նա, իմ երազների առարկան։ Եվ ես չեմ կարող ամեն րոպե, ամեն վայրկյան իմանալ նրա դրությունը։ Չեմ կարող մանավանդ տեսնել նրան։ Եվ նա չպիտի գիտենա, չպիտի զգա, թե կա մեկը, որ պատրաստ է իր տասնուինը տարեկան կյանքը զոհել նրա համար առանց մի վայրկյան տատանվելու և առանց որևէ ակնկալության, ինչպես մի մոլեռանդ հավատացյալ, որ խարույկն է նետվում հանուն իր հավատի։

Ես ասացի տանտիրուհուս.

— Պոլինա Նիկոլաևնա, դուք սիրո՞ւմ եք ինձ։

— Թող վկա լինի ինքն աստված։

— Պոլինա Նիկոլաևնա, ես գիտեմ, որ ձեզ հայտնի է ամեն բան։

— Հայտնի է,— արտասանեց այրին, հառաչելով։

— Գիտեմ, որ ձեզ հայտնի են իմ տանջանքները։

— Քանի՞-քանի անգամ այս պատերի ետևից եմ լսել ձեր դառը հեկեկանքները։ Սիրտս է մորմոքվում, տեսնելով, թե ինչպես եք չորանում ոտքի վրա։

— Այդ թողնենք, Պոլինա Նիկոլաևնա, այդ ոչինչ։ Հարցը Ալինայի մասին է։ Նրա կյանքն է թանկ ինձ համար և ոչ իմը։ Պոլինա Նիկոլաևնա, մի խնդիր ունեմ ձեզ, բարի եղեք կատարելու։

— Հրամայեցե՛ք։

— Գնացեք այս րոպեին Ալինայի մոտ։

— Ինչո՞ւ։

— Մի լուր բերելու ինձ համար։ Ես ուզում եմ իմանալ որքան վտանգավոր է Ալինայի հիվանդությունը։ Պոլինա Նիկոլաևնա, խնդրում եմ։

— Բայց ես ծանոթ չեմ նրանց հետ։ Նրանք կարող են ինձ չընդունել։ Մինչև օրս դեռ ոչ ոք ոտք չի դրել նրանց տունը։

— Ոչինչ, կարելի է։ Հարևաններ եք։ Ասացեք, թե մեզանում ընդունված է։

— Չգիտեմ, կաշխատեմ մի բան իմանալ,— ասաց տանտիրուհիս անորոշ ու դուրս գնաց։

Հինգ կառքեր իրար ետևից, կարճ ընդմիջումներով, կանգնեցին անիծյալ տան առջև։ Բժիշկներն էին, երկուսը ծեր, երեքը երիտասարդ։ Այն ժամանակ ես մեծ հավատ ունեի դեպի բժշկությունը, և յուրաքանչյուր բժիշկ ինձ համար մի տեսակ կախարդ էր ամենազոր։ Ահա ինչու, նայելով այդ մարդկանց լուրջ ու հանգիստ դեմքերին, կազդուրվեցի։ Ահ, մտածեցի ես, նրանք կառողջացնեն Ալինային ինչ հիվանդություն ևս ունենա։ Նրանք կփրկեն նույնիսկ նրա հիվանդ հոգին։ Եվ ես կտեսնեմ իմ սևազգեստին առողջ թե՛ մարմնապես և թե՛ հոգեպես իր ամբողջ գեղեցկությամբ։

Խորհրդակցությունը տևեց երկա՞ր, երկար։ Սրտի ուժգին տրոփյունով էի սպասում բժիշկների դուրս գալուն, հուսալով նրանց դեմքերի արտահայտությունից գուշակել Ալինայի վիճակը։ Եվ մի վայրկյան անգամ չհեռացա իմ լուսամուտից։

Վերջապես նրանք դուրս եկան ամենքը միասին։

Բոլորի դեմքերն ուրախ էին, մանավանդ ծերունի բժիշկների։ Խոսում էին բարձր ձայնով բոլորովին ուրիշ բաների մասին և բարձր ձայնով էլ ծիծաղում։ Ահ, մտածեցի ես, այդ լավ նշան է։ Ալինայի կյանքին վտանգ չի սպառնում, այլապես այդ մարդիկ այդպես ուրախ ու զվարթ չէին դուրս գալ նրա մոտից։ Հետո երբ ես ինքս բժիշկ դարձա, այո, հետո միայն հասկացա, թե մեր արհեստը նույնն է, ինչ որ քահանայի արհեստը։ Ժամանակի ընթացքում նա կոպտացնում մեր սրտերը և դարձնում մեզ անտարբեր դեպի մահը։ Քանի՞-քանի անգամ ես իմ պացիենտների մահճակալներից հեռացել եմ ժպիտն երեսիս, տրամադրությունս անփոփոխ, այն ժամանակ իսկ, երբ զգացել եմ մահվան գարշելի հոտը։

Լուսամուտներից մեկի առջև երևաց Սրափիոն Ազովսկին։ Ոչ մի փոփոխություն նրա մշտական անշարժ դեմքի վրա, ո՛չ ուրախ, ո՛չ տխուր։ Կարծես քար էր այդ մարդը։

Երևաց աղախինը— նույպես ոչ մի փոփոխություն։ Այս ավելի կազդուրեց ինձ։ Ահա ինչու երբ տանտիրուհիս երևաց դռների մեջ, ես ասացի.

— Դատարկ բան է. Ալինան լուրջ հիվանդ չէ։ Տեսա՞ք նրան։

— Գնացի, բայց տեսնել չկարողացա։

— Ինչո՞ւ։

— Ամաչեցի ներս մտնել։ Աղախինին հարցրի, տեղեկացա։

Նա կանգ առավ, հառաչեց։

— Ի՞նչ են որոշել բժիշկները,— գոչեցի ես։

— Աղախինը չգիտե։ Ինչ-որ դեղ են սրսկել Ալինայի մարմնի մեջ։ Նա շատ թույլ է և շուտ-շուտ ուշաթափվում է։ Դարմանող բժշկին պատվիրել են այս գիշեր չհեռանալ հիվանդի մոտից։ Նա գնաց, երեկոյան կգա։ Աղախինը լաց է լինում։ Նա շարունակ կրկնում է. «Չգիտեք, չգիտեք որքան բարի տիրուհի էր նա այդ դժբախտությունից առաջ։ Ոչ որի աշխարհի երեսին այնքան չեմ սիրել, որքան նրան»։

Չքացավ իմ լավատեսությունը, թուլացան իմ հույսերը։ Զգացի, որ Ալինայի դրությունը լուրջ է։ Եվ ուժասպառ ընկա աթոռի վրա։ Արտասուքը վաղուց էր խեղդում կոկորդս։ Այլևս չկարողացա զսպել նրան և տվեցի ազատություն իմ մանկական խելառ հեկեկանքներին։

Քարի, գգայնասիրտ տանտիրուհիս մոտեցավ ինձ հանդարտ քայլերով և սկսեց մխիթարել։

Իմ հեկեկանքների միջից լսում էի նրա հատ-հատ խոսքերը.

— Լավ, Ալինան չի մեռնիլ։ Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, զավակս։ Ահ, խելագար։ Ո՞վ է այդ կինը բեղ համար, քո ի՞նչն է։ Մի անգամ էլ հետը չես խոսել։ Լավ, լավ, երեխա մի՛ լինիր, հանգստացիր։ Ամոթ է, վերջապես, ի՞նչ կասեն, եթե լսեն մարդիկ։ Աստված իմ, նա գժվում է, ես ինչ անեմ։ Այ զարմանալի տղա։

Նա գրկել էր իմ գլուխս ու շոյում էր նրան ձեռքերով։ Ահ, որքան քնքուշ էին, որքան մայրական այդ աշխատավոր կոշտացած ձեռքերն ինձ համար այդ պահին և որքան կփափաքի, որ նրանք անվերջ շոյեին իմ գլուխը։ Զգում էի իմ խելառությունը, զգում էի իմ ծիծաղելի լինելը, բայց չէի ամաչում այդ օտար ու օտարոտի կնոջից։

Նկարագրե՞մ արդյոք, թե ինչպես անցկացրի այդ երեկոն, այդ գիշերը, հետևյալ օրը, հետևյալ գիշերը, ամբողջ

տասնուչորս օր։ Օհ, անմոռանալի օրեր։ Անքուն էի, հարկավ, թեև տանտիրուհուս չանհանգստացնելու համար լամպարս հանգցնում էի։ Տասնուչորս գիշերներ յուրաքանչյուր կես ժամ դուրս էի գալիս փողոց, կանգնում էի փակ լուսամուտի տակ, շունչս զսպած, ականջ էի դնում դեպի Ազովսկիների բնակարանը։ Չէ՞ որ մահը մեծ մասամբ գիշերներն է այցելում մարդկանց։ Ես մտածում էի, եթե Ալինան մեռնե, կլսեմ նրա հավատարիմ աղախնի հեկեկանքները։ Նրա ամուսնուց հեկեկանք չէի սպասում։

Եվ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ անգամ ամբողջ տասնուչորս գիշեր։ Իսկ ցերեկները տանտիրուհուս միապաղաղ կրկնությունը։

— Ալինայի դրությունը անփոփոխ է։

Առանձնապես անհանգիստ էի վերջին գիշերը, որ ամբողջովին անցկացրի փողոցում։ Լուսին չկար. ամառվա, հրատակ երկնակամարի վրա պսպղում էին աստղերն այնքան ուրախ, այնքան զվարթ, որքան տխուր ու մռայլ էր իմ հոգին։ Մի՞թե նրանք բոլորը միասին արժեին Ալինայի կյանքի մի ժամին, մի շնչին անգամ։ Ահ, թող կորչե ամբողջ տիեզերքը, միայն թե ապրե Ալինան։

— Ալինա, Ալինա, Ալինա,— արտասանում էին գիշերային լռության մեջ իմ բորբոքված շրթունքները։

Եվ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ։

Վերջապես, ուժերս դավաճանեցին ինձ։ Լուսադեմին հագուստով պառկեցի անկողնակալիս վրա ու նիրհեցի։ Տասնուչորս գիշեր գրեթե չէի քնել և նիրհեցի այն ժամին, երբ պիտի արթուն լինեի։

— Դուք քնա՞ծ եք,— լսեցի ես հանկարծ տանտիրուհուս ձայնը և աչքերս բաց արի։

Նա կանգնած էր գլխիս մոտ ձեռքերը կրծքի վրա ծալած։

— Ի՞նչ է պատահել,— գոչեցի ես, ոտքի թռչելով։

— Ալինան մեռավ։

Ես ոչինչ չասացի։ Մի թույլ ճիչ ակամա դուրս թռավ իմ կրծքից, և ես ուժասպառ նստեցի անկողնակալիս վրա ու գլուխս թեքեցի կրծքիս։

Տանտիրուհիս ավելացերց։

— Քահանայի անեծքը...

Մի ժամ անցած անիծյալ բնակարանում երևացին անծանոթ դեմքեր։ Այլևս բոլոր լուսամուտները բաց էին։ Խոհարարն ու աղախինը շտապ-շտապ կարգի էին բերում կահկարասին։ Մի ծերունի քահանա դուրս եկավ համր քայլերով ու հեռացավ։ Անշուշտ նա հաղորդություն էր տվել Ալինային։ Աղախինը լալիս էր։ Մի անգամ միայն Ալինայի ամուսինը երևաց լուսամուտներից մեկի առջև, նայեց մի քանի վայրկյան դեպի փողոց ու հեռացավ։ Աստվա՜ծ իմ, ոչ մի փոփոխություն այդ դեղնագույն, անշարժ դեմքի վրա։ Նույն քարացած նայվածքը՝ ոսկրոտ ճակատի տակից։

Բժիշկ Ախուրյանը դարձյալ լռեց։ Ես սպասում էի նրա պատմվածքի վերջին։ Բայց նա լուռ էր և արտասովոր հայացքով նայում էր հեռու ու հեռու։

— Դուք գնացի՞ք նրա թաղմանը,— հարցրի ես նրա ծանրը լռությունը ընդհատելու համար։

— Ալինային չթաղեցին։

— Ինչպե՞ս։

— Այդ մարդը նրա դիակը զմռսել տվեց և տարավ իր ծննդավայրը, Ղրիմ։ Նա մինչև անգամ նրա անշունչ մարմնից չէր ուզում բաժանվել։ Ես գնացի նրա հուղարկավորությանը։ Ոչ ոք չէր ուղեկցում նրա դագաղը, բացի մի քանի քահանաներից, ինձնից, խոհարարից, աղախնից, կոշկակարից՝ իր կնոջ հետ և տանտիրուհուցս։ Ո՞վ էր ճանաչում Ալինային։ Ես տեսա նրան մոտիկից։ Միակ տեսակցությունն իմ առաջին և միակ իսկական սիրո, որ ունեցա։ Ես ձգեցի նրա դագաղի վրա դեղին վարդերի մի փունջ։ Ահ, որքա՜ն նրա դեմքի գույնը նման էր այդ վարդերին։ Նրան հագցրել էին իր մշտական մետաքսյա սև զգեստը։ Ձկար նրա կրծքի վրա սովորական դեղին վարդը։ Ես զգացի, որ ամուսինն է պոկել այդ վարդը նրա կրծքից։ Զգացի, որովհետև երբ ես իմ փունջը ձգեցի դագաղի վրա, նա, կարծես, մի տեսակ ցընցվեց, նայեց ինձ մռայլ հայացքով։ Նա մի շարժում արավ դեպի դագաղը, կարծես, փունջը դեն ձգելու նպատակով, բայց կանգ առավ, երեսը դարձնելով ինձնից։ Իսկ նա, դագաղի

ապակու միջից ժպտաց ինձ։ Այն անշարժ, այն ծով ու հեռավոր ժպիտով, որ ես առաջին անգամ տեսա նրա դեմքի վրա։ Այդ ժպիտն այսօր էլ իմ ընկերն է, իմ երկրորդ էությունը, որ մինչև գերեզման պիտի հետևե ինձ և ո՛վ գիտե, գուցե գերեզմանից էլ դեն։ Գիտե՞ք, ես շատ եմ ապրել, շատ եմ մտածել ու զգացել այս երեսուն տարվա ընթացքում։ Սիրել եմ, սիրվել, ճանաչել եմ կանանց և եկել այն համոզմունքին, որ մի և միմիայն մի անգամ եմ սիրել։ Բարեկա՛մս, սեր չէ այն, ինչ որ մարդիկ սովոր են անվանել սեր, այսինքն՝ շոշափելին, առարկայականը։ Բարեկամս, սեր չէ կինը, որի հետ խոսում ենք, բացատրվում, վիճում, կռվում, հաշտվում, նորեն կռվելու ու նորեն հաշտվելու համար։ Սեր չէ կինը, որին գրկում ենք, համբուրում, պաշտում, որպեսզի վայելենք և վայելում ենք, որպեսզի ապականենք։ Ոչ, դա սեր չէ։ Սերը երազ է և երազ էլ պիտի թողնել նրան։ Սերը հավիտենական է, անջնջելի, անմոռանալի, բայց անճաշակելի։ Նա մի շող է, որ չի մարում, բայց և չի որսվում ինչպես թռչուն, մի գաղափար, որը չի հնանում, բայց և չի գործադրվում ինչպես մարմնավոր վայելքի միջոց, մի միտք, որ չի մաշվում, բայց և չի յուրացվում և մարմնանում։ Սոսկալի է նրա պահանջը, բայց և հաճելի, օհ, անսահման հաճելի և անսահման թունավոր— պայքարել, երբեք չհաղթելու և ձգտել, երբեք չհասնելու համար։ Նա դրամա չէ, որ ունի հանգույց, ընթացք ու վախճան։ Նա մի տրագեդիա է առանց միջարարների ու առանց գագարների։ Նա ունի միայն սկիզբ ու երբեք վախճան, միայն ծնունդ և երբեք մահ...

— Իսկական սերը Ալինա է,— ավարտեց բժիշկ Ախուրյանը և ոտքի կանգնեց։— Ես վերջացրի։

Բովանդակություն

Հրդեհ նավթագործարանում 5
Գործակատարի . . . հիշատակարանից . 18
Խնամատար . . . 83
Օրիորդ Լիկա . . . 143
Նորերից մեկը . . . 184
Ֆաթման և Ասադը . . 197
Թանկագին կապանք . 223
Կրակ 240
Մելանիա 293
Արտիստը 351
Ընկերներ 409
Գաղափարի գերին . . 435
Ջհուդի ականջը . . . 457
Եղբայրասպանը . . 491
Կյանքի ժպիտը . . . 502
Իմ կյանքից . . . 506
Սարգսի վիշտը . . . 529
Կոսմոպոլիտը . . . 531
Ակոյի տոնածառը . . 562
Ստախոսը 573
Հայր Անոփրիոսի վիշտը . 578
Հերոսի վերադարձը . . 582
Սրճարանի . . . . հաճախորդը . . . 599
Ալինա 611

Ալեքսանդր Շիրվանզադե
Երկեր երկու գրքով

Գիրք առաջին

Կազմող՝ Պ. Կ. Բարսեղյան, խմբագիր՝ Ս. Գ. Սահակյան, նկարիչ՝ Ռ. Ս. Բեգրոսյան, գեղ. խմբագիր՝ Աե. Վ. Գասպարյան, տեխ. խմբագիր՝ Վ. Մ. Եգանյան, վերստուգող սրբագրիչ՝ Մ. Ա. Մկրտչյան

Հանձնված է արտադրության 12/II 1970 թ.։ Ստորագրված է տպագրության 29/III 1971 թ.։ Թուղթ տպագր. № 1, 84×108 1/32, տպագր. 40,25 մամ.=33,81 պայմ. մամ.։ Պատվեր 913։ Տպաքանակ 20000։ Գինը 1 ռ. 02 կ.։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության վարչության Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։